Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ **http://www.armin.am**

էլ. փոստ՝ **info@armin.am**

ՌՈՒՍ ԴԱՍԱԿԱՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

БИБЛИОТЕКА РУССКОЙ КЛАССИКИ

Л. Н. Толстой

АННА КАРЕНИНА

В ДВУХ ТОМАХ

ТОМ ПЕРВЫЙ

Перевод Вагана Тер-Аракеляна

ИЗДАТЕЛЬСТВО
«СОВЕТАКАН ГРОХ», ЕРЕВАН—1979

Լ. Ն. Տոլստոյ

ԱՆՆԱ ԿԱՐԵՆԻՆԱ

ԵՐԿՈՒ ՀԱՏՈՐՈՎ

ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ

Թարգմանությունը Վահան Տեր-Հովսեփյանի

«ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ»
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ԵՐԵՎԱՆ—1979

Р 1
S 53

Տ $\frac{70301\ (561)}{705\ (01)\ 79}$ 79 «Տ»

© «Սովետական գրող» հրատարակչություն
Թարգմանված է հայերեն, 1979

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

Իմ է վրեժխնդրությունն,
Եվ ես հատուցից։

I

Բոլոր երջանիկ ընտանիքները նման են իրար, յուրաքանչյուր դժբախտ ընտանիք դժբախտ է յուրովի։

Ամեն ինչ խառնվեց Օբլոնսկիների տանը։ Կինն իմացավ, որ ամուսինը կապված է եղել իրենց տան ֆրանսուհի նախկին դաստիարակչուհու հետ, և հայտարարեց, թե չի կարող ապրել նրա հետ միևնույն տան մեջ։ Այդ վիճակը շարունակվում էր արդեն երրորդ օրը, և տանջալից զգում էին այն թե՛ ամուսինները, թե՛ ընտանիքի բոլոր անդամները, և սպասավորները։ Նրանք բոլորը զգում էին, որ միտք չունի իրենց միասին ապրելը և որ յուրաքանչյուր պանդոկում պատահմամբ իրար հանդիպած մարդիկ ավելի են կապված իրար հետ, քան իրենք, Օբլոնսկիների ընտանիքի անդամներն ու սպասավորները։ Կինը դուրս չէր գալիս իր սենյակներից, ամուսինը երրորդ օրն էր, ինչ տանը չէր։ Երեխաները վազվզում էին տնով մեկ՝ իրենք իրենց թողնված. անգլուհին գժտվեց տնտեսուհու հետ և տոմս գրեց իր ծանոթ բարեկամուհուն, խնդրելով իր համար նոր տեղ գտնել. խոհարարը հեռացավ տանից դեռ երեկ, ճաշի ժամանակ. խոհանոցի աշխատող կինն ու կառապանը խնդրում էին վերջնահաշիվ։

Գժտությունից հետո, երրորդ օրը իշխան Ստեպան Արկադևիչ Օբլոնսկին՝ Ստիվան, ինչպես կանչում էին նրան բարձր հասարակության մեջ, սովորական ժամին, այսինքն՝ առավոտյան ժամը 8-ին, զարթնեց ոչ թե կնոջ ննջարանում, այլ իր առանձնասենյակում, սեկե բազմոցի վրա։ Նա իր գեր, գիրգ մարմնով շուռ եկավ բազմոցի զսպանակների վրա, կարծես կամենալով նորից քնել երկար ժամանակ, մյուս կողմից ամուր

գրկեց բարձը և այտը սեղմեց բարձին, բայց հանկարծ թռավ, նստեց տեղում ու բացեց աչքերը։

«Այո՛, այո՛, ինչպե՞ս էր դա,— մտածում էր նա, մտաբերելով երազը։ — Այո՛, ինչպե՞ս էր դա։ Այո՛։ Ալաբինը ճաշ էր տալիս Դարմշտադտում. ո՛չ, Դարմշտադտում չէր, այլ ինչ-որ ամերիկյան էր։ Այո՛, բայց այնտեղ Դարմշտադտը Ամերիկայում էր։ Այո՛, Ալաբինը ճաշ էր տալիս ապակե սեղանների վրա, այո՛, — և սեղանները երգում էին՝ Il mio tesoro[1], ո՛չ թե Il mio tesoro, այլ ավելի լավ բան, և ինչ-որ փոքրիկ գրաֆիններ, որոնք նաև կանայք էին», մտաբերում էր նա։

Ստեպան Արկադևիչի աչքերն ուրախ փայլեցին, և նա միտք արավ ժպտալով։ «Այո՛, լավ էր, շատ լավ։ Այնտեղ էլի կար հիանալի շատ բան, բայց չես կարող ասել բառերով ու մտքերով, նույնիսկ արթուն ժամանակ չես արտահայտի»։ Եվ նկատելով լույսի շերտը, որ ներս էր թափանցել մահուդե վարագույրներից մեկի կողքից, նա ոտքերն ուրախ իջեցրեց բազմոցից, նրանցով փնտրեց, գտավ կնոջ կարած (անցյալ տարվա ծննդյան օրվա նվերը), ասեղնազարդած ոսկեգույն սեկե տուֆլիները և հին, իննամյա սովորությամբ, առանց տեղից վեր կենալու, ձեռքը մեկնեց դեպի այն կետը, որտեղ ննջարանում կախված էր նրա խալաթը։ Ու այստեղ հիշեց հանկարծ, թե ինչպե՞ս և ինչո՞ւ ինքը քնած է ո՛չ թե կնոջ ննջարանում, այլ իր առանձնասենյակում. ժպիտը չքացավ նրա գեմքից, նա կնճռեց ճակատը։

«Ա՜խ, ա՜խ, ա՜խ։ Ա-ա՜...»— մռնչաց նա, հիշելով այն բոլորը, ինչ եղել էր։ Եվ նրա երևակայության մեջ նորից ներկայացան կնոջ հետ եղած գժտության բոլոր մանրամասները, իր գրության ամբողջ անելանելիությունը, և ամենից ավելի տանջալից՝ իր սեփական հանցանքը։

«Այո՛, նա չի՛ ների և չի՛ կարող ներել։ Ամենից սարսափելին այն է, որ բոլորի պատճառը ես եմ, պատճառը ես եմ, բայց մեղավոր չեմ։ Հենց այդտեղ է ամբողջ դրաման, — մտածում էր նա։ — Ա՜խ, ա՜խ, ա՜խ», կրկնում էր նա հուսահատությամբ, մտաբերելով իր համար ամենածանր տպավորություններն այդ գժտությունից։

[1] Իտալերեն, բառացի՝ իմ գանձ, իմ շնաշխարհիկ էակ։

Ամենից ավելի անհաճոն այն առաջին րոպեն էր, երբ նա, վերադառնալով թատրոնից, ուրախ ու գոհ, ձեռքին մի խոշոր տանձ կնոջ համար, կնոջը չգտավ ընդունարանում, ի զարմանս՝ չգտավ նրան նաև առանձնասենյակում և, վերջապես, տեսավ նրան ննջարանում, ձեռքին՝ ամեն ինչ մերկացնող, չարաբաստ տոմսը։

Դոլլին, այդ միշտ մտահոգ ու հոգնատանջ և կարճամիտ էակը, ինչպես նա համարում էր կնոջը, նստած էր անշարժ, տոմսը ձեռքին, և սարսափի, հուսահատության ու ցասումի արտահայտությամբ նայում էր նրան։

— Ի՞նչ է սա, սա՛, — հարցնում էր կինը, նշելով տոմսը։

Եվ այդ բանը մտաբերելիս, ինչպես պատահում է հաճախ, Ստեպան Արկադևիչին տանջում էր ո՛չ այնքան ինքը՝ դեպքը, որքան այն, թե ինչպե՞ս պատասխանեց նա կնոջ խոսքերին։

Նրա հետ այդ րոպեին պատահեց այն, ինչ պատահում է մարդկանց հետ, երբ նրանք անսպասելի բռնվում են ինչ-որ չափազանց ամոթալի բանի մեջ։ Նա չկարողացավ իր դեմքը պատրաստել այն դրության համար, որի մեջ նա կանգնած էր կնոջ դիմաց՝ հանցանքը բացվելուց հետո։ Փոխանակ վիրավորվելու, ուրանալու, արդարանալու, ներողություն խնդրելու, նույնիսկ անտարբեր մնալու,— ամեն բան ավելի լավ կլիներ, քան այն, ինչ արեց նա,— նրա դեմքը բոլորովին ակամա («գլխի ուղեղի ռեֆլեքս», մտածեց Ստեպան Արկադևիչը, որը սիրում էր բնախոսությունը), բոլորովին ակամա ժպտաց հանկարծ՝ սովորական, բարի, այդ իսկ պատճառով՝ տխմար ժպիտով։

Նա չէր կարող ներել իրեն այդ տխմար ժպիտը։ Տեսնելով այդ ժպիտը, Դոլլին ցնցվեց, կարծես՝ ֆիզիկական ցավից, իրեն հատուկ դյուրաբորբոքությամբ տեղաց կանացի խոսքերի մի ամբողջ տարափ ու դուրս վազեց սենյակից։ Այն օրից նա չէր ուզում տեսնել ամուսնուն։

«Բոլորի պատճառը այդ տխմար ժպիտն է», մտածում էր Ստեպան Արկադևիչը։

«Բայց ի՞նչ պիտի անել. ի՞նչ անել», հուսահատությամբ ասում էր նա ինքն իրեն և պատասխան չէր գտնում։

II

Ստեպան Արկադևիչն արդարամիտ էր իր նկատմամբ։ Նա չէր կարող խաբել իրեն ու հավատացնել, որ ինքը զղջում է իր արարքը։ Նա չէր կարող այժմ զղջալ այն, որ ինքը, երեսուն-չորս տարեկան, գեղեցիկ, սիրահարկոտ մի մարդ, սիրահարված չէր իր կնոջը, որ հինգ ողջ և երկու մեռած երեխաների մայր էր և մի տարով միայն փոքր էր նրանից։ Նա զղջում էր լոկ այն, որ չկարողացավ ավելի լավ թաքցնել կնոջից։ Բայց նա զգում էր իր դրության ամբողջ ծանրությունը և խղճում էր կնոջը, երեխաներին ու իրեն։ Գուցե նա կարողանար ավելի լավ թաքցնել իր մեղքերը կնոջից, եթե մտածեր, որ այդ լուրը կարող է այդպես աղդել նրա վրա։ Նա երբեք պարզ չէր կշռադատել այդ հարցը, սակայն աղոտ պատկերանում էր իրեն, թե կինը կռահում է, որ ամուսինը հավատարիմ չէ իրեն, և մատների արանքով է նայում դրա վրա։ Նրան նույնիսկ թվում էր, որ Դոլլին, հյուծված, ծերացած, գեղեցկությունն արդեն կորցրած ու ոչ մի բանով աչքի չընկնող մի կին, պարզ, ընտանիքի բարի մայր միայն, ըստ արդարության զգացումի, պետք է ներողամիտ լինի։

Դուրս եկավ բոլորովին հակառակը։

«Ա՜խ, սարսափելի է. ա՜յ, ա՜յ, ա՜յ, սարսափելի է,— պնդում էր Ստեպան Արկադևիչը և չէր կարողանում ելք գտնել։ — Ու որքան լավ էր ամեն ինչ դրանից առաջ, ինչպես լավ էինք ապրում մենք։ Դոլլին գոհ էր, բախտավոր էր երեխաներով, ես ոչ մի բանում չէի խանգարում նրան, ազատություն էի տալիս նրան՝ զբաղվելու երեխաներով, տնտեսությամբ, ինչպես կամենում էր նա։ Ճիշտ է, վատ է, որ նա դաստիարակչուհի էր մեր տանը։ Վա՜տ է։ Ինչ-որ գռեհիկ, ցոփ բան կա իր զավակների դաստիարակչուհուն սիրագուրելու մեջ։ Բայց ինչպիսի՜ դաստիարակչուհի։ (Նա վառ կերպով հիշեց m-lle Roland-ի չարաճճի սև աչքերն ու ջերմ ժպիտը)։ Բայց չէ՞ որ ես ոչինչ թույլ չէի տալիս ինձ, քանի նա մեր տանն էր։ Եվ ամենից վատն այն է, որ նա արդեն... Այս բոլորը կարծես եղավ դիտմամբ։ Ա՜յ, ա՜յ, ա՜յ։ Սակայն, ի՜նչ պիտի անել, ի՜նչ պիտի անել»։

Պատասխան չկար, բացի ընդհանուր այն պատասխանից,

որ կյանքը տալիս է բոլոր ամենաբարդ և անլուծելի հարցերին։ Այդ պատասխանն է. պետք է ապրել օրվա պահանջներով, այսինքն՝ մոռացության տրվել։ Քնով մոռացության տրվել այլևս չի կարելի, համենայն դեպս՝ մինչև գիշեր այլևս չի կարելի վերադառնալ այն երաժշտությանը, որ երգում էին փոքրիկ գրաֆին-կանայք, հետևապես, պետք է մոռացության տրվել կյանքի քնով։

«Կտեսնենք, թե ի՜նչ կլինի», ասաց ինքն իրեն Ստեպան Արկադևիչն ու կանգնելով՝ հագավ կապտավուն մետաքսե աստառով գորշ խալաթը, հանգուցեց ծոպավոր գոտին և կուշտ օդ ներշնչելով լայն կրծքի մեջ, իր գեր մարմինն այնպիսի հեշտությամբ կրող ծուռտիկ ոտքերի սովորական աշխույժ քայլով մոտեցավ լուսամուտին, բարձրացրեց վարագույրը և ուժգին զանգահարեց։ Անմիջապես ներս մտավ հին բարեկամ՝ կամերդիներ Մատվեյը, բերելով նրա զգեստը, կոշիկները և մի հեռագիր։ Մատվեյի ետևից մտավ նաև սափրիչը՝ սափրելու պարագաներով։

— Ատյանից գրություններ կա՞ն, — հարցրեց Ստեպան Արկադևիչը, վերցնելով հեռագիրը և նստելով հայելու առաջ։

— Սեղանի վրա են,— պատասխանեց Մատվեյը, նայեց իր պարոնին հարցական, կարեկից հայացքով և մի փոքր սպասելուց հետո ավելացրեց խորամանկ ժպիտով,— տեր-կառապանի կողմից մարդ էր եկել։

Ստեպան Արկադևիչը ոչինչ չպատասխանեց և միայն հայելու մեջ նայեց Մատվեյին. այդ հայացքի մեջ, որով նրանք հանդիպեցին իրար հայելում, երևում էր, թե ինչպես նրանք հասկանում են միմյանց։ Ստեպան Արկադևիչի հայացքը կարծես հարցնում էր. ինչո՞ւ ես այդ բանն ասում, մի՞թե դու չգիտես։

Մատվեյը ձեռքերը դրեց ժակետի գրպանները, ոտքը ոտքից հեռացրեց և լուռ, բարեսրտությամբ, հազիվ նշմարելի ժպիտով նայեց իր պարոնին։

— Ես հրամայեցի գալ մյուս կիրակի, իսկ մինչ այդ՝ չանհանգստացնեն ո՛չ ձեզ, ո՛չ էլ իրենց,— ասաց նա նախապես պատրաստած ֆրազը։

Ստեպան Արկադևիչը հասկացավ, որ Մատվեյն ուզում էր կատակել և ուշադրություն հրավիրել իր վրա։ Բացելով հեռա-

գիրը, նա կարդաց այն, կոահմամբ ուղղելով աղավաղված խոսքերը, ինչպես լինում է միշտ, և նրա դեմքը պայծառացավ։

— Մատվեյ, վաղը գալիս է քույրս՝ Աննա Արկադևնան,— ասաց նա, կանգնեցնելով մի բոպե սափրիչի պլպլան, փամփլիկ ձեռքը, որ մաքրում էր վարդագույն կզակը զանգուր երկար բակենբարդների մեջ։

— Փառք աստծո,— ասաց Մատվեյը, այդ պատասխանով ցույց տալով, որ ինքը հասկանում է, ինչպես և իր պարոնը, այդ գալստյան նշանակությունը, այսինքն՝ որ Աննա Արկադևնան, Ստեպան Արկադևիչի սիրելի քույրը, կարող է աջակցել ամուսինների հաշտությանը։

— Մենա՞կ, թե՞ ամուսնու հետ,— հարցրեց Մատվեյը։

Ստեպան Արկադևիչը չէր կարող խոսել, որովհետև սափրիչն զբաղված էր նրա վերի շրթունքով, և բարձրացրեց մի մատը։ Մատվեյը գլխով արավ հայելու մեջ։

— Մենակ։ Վերևո՞ւմ պատրաստել։

— Զեկուցիր Դարյա Ալեքսանդրովնային, որտեղ կհրամայե։

— Դարյա Ալեքսանդրովնայի՞ն,— կարծես, տարակուսանքով կրկնեց Մատվեյը։

—Այո՛, զեկուցիր։ Եվ ահա վերցրու հեռագիրը, հանձնիր, տես՝ ի՞նչ կասի։

«Ուզում եք փորձել»՝ հասկացավ Մատվեյը, բայց նա ասաց միայն՝ լսում եմ։

Ստեպան Արկադևիչն արդեն լվացվել էր ու սափրվել և պատրաստվում էր հագնվելու, երբ Մատվեյը, դանդաղ քայլերով իր ճռճռացող կոշիկներով, հեռագիրը ձեռքին վերադարձավ սենյակ։ Սափրիչն այլևս չկար։

— Դարյա Ալեքսանդրովնան հրամայեց զեկուցել, որ ինքը մեկնում է։ Թող անի այնպես, ինչպես հաճելի է իրեն, այսինքն՝ ձեզ,— ասաց նա, ծիծաղելով միայն աչքերով և ձեռքերը դնելով գրպանները ու գլուխը ծռելով մի կողմի վրա՝ հայացքը հառեց իր պարոնին։

Ստեպան Արկադևիչը լռեց։ Ապա նրա գեղեցիկ դեմքի վրա երևաց բարի և փոքր-ինչ խղճուկ մի ժպիտ։

— Հը՞, Մատվե՞յ,— ասաց նա, օրորելով գլուխը։

— Ոչինչ, տեր իմ, կարգի կգա,— ասաց Մատվեյը։

— Կարգի՞ կգա։

— Ճիշտ այդպես։

— Դու կարծո՞ւմ ես։ Ո՞վ է այնտեղ,— հարցրեց Ստեպան Արկադևիչը, լսելով դռան ետևում կանացի զգեստի շրշյունը։

— Ես եմ,— պատասխանեց հաստատուն ու հաճելի կանացի մի ձայն, և դռան ետևից դուրս ցցվեց Մատրյոնա Ֆիլիմոնովնայի՝ դայակի չնչոտ խիստ դեմքը։

— Ի՞նչ կա, Մատրյոշա,— հարցրեց Ստեպան Արկադևիչը, ընդառաջելով նրան դեպի դուռը։

Չնայած որ Ստեպան Արկադևիչը գլխովին մեղավոր էր կընոջ առաջ և ինքն զգում էր այդ, բայց համարյա ամենքը տանը, մինչև անգամ դայակը, Դարյա Ալեքսանդրովնայի գլխավոր բարեկամը, նրա կողմն էին։

— Դե, ի՞նչ կա,— ասաց նա տխուր։

— Գնացե՞ք, պարոն, մեկ էլ մեղա ասեք։ Գուցե աստված օգնի ձեզ։ Շատ է տանջվում, մարդ մեղքանում է, նայել չի կարողանում։ Իսկ տան մեջ ամեն բան շուռ եկավ, տակնուվրա եղավ։ Պարոն, պիտի խղճալ երեխաներին։ Մեղա ասեք, պարոն։ Ի՞նչ արած։ Ցոգոլ ուտողի ատամը կառնվի...

— Բայց չէ՞ որ կարող է շընդունել...

— Դուք ձեր պարտքը կատարեք։ Աստված ողորմած է, աղոթեցեք աստծուն, պարոն, աղոթեցեք աստծուն։

— Դե, լավ, գնա՛,— ասաց Ստեպան Արկադևիչը, հանկարծ կարմրելով։ — Հապա՛, տուր հագնվեմ,— դիմեց նա Մատվեյին ու վճռականապես հանեց խալաթը։

Մատվեյն արդեն բռնել էր անուրի ձևով պատրաստ շապիկը, փչելով նրա վրայից աննկատելի ինչ-որ բան, և բացահայտ բավականությամբ հագցրեց այն իր պարոնի գիրգ մարմնին։

III

Ստեպան Արկադևիչը հագնվելուց հետո ցողեց իր վրա անուշաբույր օծանելիք, ուղղեց շապկի թևերը, սովոր շարժումով դրեց զանազան գրպանների մեջ գլանակները, դրամապանակը, լուցկու տուփը, կրկնակի շղթայով ու բրելոկներով ժամացույցը և թաշկինակը թափ տալով ու զգալով իրեն մաքուր,

անուշաբույր, առողջ և ֆիզիկապես ուրախ, չնայած իր դժբախտությանը, դուրս եկավ, թեթև ցատկելով յուրաքանչյուր ոտի վրա, սեղանատուն, որտեղ նրան արդեն սպասում էր սուրճը և սրճի հետ նամակներ ու գրություններ ատյանից։

Նա կարդաց նամակները։ Մեկը շատ անհաճո նամակ էր, ստացված այն վաճառականից, որը գնում էր կնոջ կալվածքում եղած անտառը։ Անհրաժեշտ էր վաճառել այդ անտառը, բայց այժմ, նախքան կնոջ հետ հաշտվելը, խոսք չէր կարող լինել դրա մասին։ Այդտեղ ամենից ավելի անհաճոն այն էր, որ դրամական շահ էր խառնվում կնոջ հետ հաշտվելու գործի մեջ։ Եվ նրան վիրավորում էր այն միտքը, որ ինքը կարող է զեկավարվել այդ շահով, որ ինքը պիտի աշխատի հաշտվել կնոջ հետ՝ այդ անտառը վաճառելու համար։

Նամակները վերջացնելուց հետո Ստեպան Արկադևիչը մոտ քաշեց ատյանից ուղարկված գրությունները, արագ թերթեց երկու գործ, մեծ մատիտով մի քանի նշումներ արեց և գործերը հրելով մի կողմ, անցավ սուրճին. սուրճը խմելիս նա բացեց առավոտվա տակավին թարմ թերթը և սկսեց կարդալ։

Ստեպան Արկադևիչն ստանում ու կարդում էր լիբերալ թերթ, ո՛չ ծայրահեղ, այլ այն ուղղության թերթ, որին կողմնակից էր մեծամասնությունը։ Եվ չնայած որ ո՛չ գիտությունը, ո՛չ արվեստը, ո՛չ քաղաքականությունն իսկապես չէին հետաքրքրում նրան, նա հաստատապես հետևում էր այս բոլոր առարկաների վերաբերյալ այն հայացքներին, որոնց հետևում էր մեծամասնությունը և նրա թերթը, ու փոխում էր իր հայացքներն այն ժամանակ միայն, երբ մեծամասնությունը փոխում էր դրանք, կամ ավելի ճիշտ՝ ինքը չէր փոխում, այլ դրանք էին փոխվում նրա մեջ աննկատելի կերպով։

Ստեպան Արկադևիչը չէր ընտրում ո՛չ ուղղություն, ո՛չ հայացքներ, այլ այդ ուղղություններն ու հայացքներն իրենք էին գալիս նրա մոտ, ճիշտ այնպես, ինչպես նա չէր ընտրում այս կամ այն տարազի գլխարկ, սյուրտուկ, այլ վերցնում էր այն, ինչ հագնում են ուրիշները։ Իսկ ունենալ հայացքներ, ապրելով որոշ հասարակության մեջ, որտեղ պահանջվում էր մտքի որոշ գործունեություն, որ սովորաբար զարգանում էր հասունության տարիներին, նույնքան անհրաժեշտ էր նրա համար, ինչպես անհրաժեշտ էր ունենալ գլխարկ։ Եթե կար պատ-

ճառ, թե ինչո՛ւ նա լիբերալ ուղղությունը գերադասում էր պահպանողական ուղղությունից, որին հետևում էին նրա շրջանից նույնպես շատերը, ապա դա առաջանում էր ո՛չ այն բանից, որ նա լիբերալ ուղղությունը համարում էր ավելի խոհական, այլ այն պատճառով, որ այդ ուղղությունն ավելի մոտ էր նրա կյանքի եղանակին։ Լիբերալ կուսակցությունն ասում էր, որ Ռուսաստանում ամեն ինչ վատ էր, և, իրոք, Ստեպան Արկադևիչն ուներ շատ պարտքեր, իսկ դրամը երբեք չէր բավականացնում։ Լիբերալ կուսակցությունն ասում էր, որ ամուսնությունը հնացած հիմնարկ է և որ անհրաժեշտ է վերակառուցել այն, և, իրոք, ընտանեկան կյանքը քիչ բավականություն էր պատճառում Ստեպան Արկադևիչին ու ստիպում էր նրան ստել և ձևանալ, ինչն այնպես զզվելի էր նրա բնությանը։ Լիբերալ կուսակցությունն ասում էր, կամ ավելի ճիշտ՝ ենթադրում էր, որ կրոնը սանձ է միայն ազգաբնակչության բարբարոս մասի համար, և, իրոք, Ստեպան Արկադևիչը չէր կարողանում դիմանալ, առանց ցավ զգալու ոտքերի մեջ, նույնիսկ ամենակարճ մաղթանքի ժամանակ և չէր կարողանում հասկանալ, թե ինչի՞ համար են հանդերձյալ աշխարհի մասին եղած այս բոլոր սարսափելի ու փքուն խոսքերը, երբ կարելի էր այս աշխարհում էլ ապրել շատ ուրախ։ Դրա հետ միասին, ուրախ կատակներ սիրող Ստեպան Արկադևիչի համար հաճելի էր երբեմն ապշեցնել հեզ մարդուն նրանով, որ եթե պետք է պարծենալ ցեղով, ապա չարժե կանգ առնել Ռյուրիկի վրա և հրաժարվել առաջին նախահորից՝ կապիկից։ Այսպես, լիբերալ ուղղությունը դարձավ Ստեպան Արկադևիչի համար սովորություն, և նա սիրում էր իր թերթը, ինչպես ճաշից հետո սիգարը, այն թեթև մշուշի պատճառով, որ սիգարն առաջացնում էր նրա գլխում։ Նա կարդաց զեկավար այն հոդվածը, որի մեջ բացատրվում էր, թե մեր ժամանակներում բոլորովին զուր են վայնասուն բարձրացնում այն բանի շուրջը, իբր ռադիկալիզմն սպառնում է կլանել բոլոր պահպանողական տարրերը, և իբր կառավարությունը պարտավոր է միջոցներ ձեռք առնել՝ ճնշելու հեղափոխական հիդրան, որ, ընդհակառակը, «մեր կարծիքով, վտանգը գտնվում է ո՛չ թե կարծեցյալ հեղափոխական հիդրայի մեջ, այլ առաջադիմությունն արգելակող ավանդականության համառության մեջ», և այլն։ Նա կարդաց նաև մյուս հոդվածը՝ ֆի-

նանասականը, որտեղ հիշատակություն կար Բենտամի ու Միլլի մասին և կծու ակնարկներ էին արվում մինիստրության հասցեին։ Իրեն հատուկ ըմբռնման արագությամբ նա հասկացավ ամեն մի կծու ակնարկի նշանակությունը. ո՛ւմ կողմից, ո՛ւմ դեմ ու ի՛նչ առիթով էր արված ակնարկը, և ինչպես միշտ, դա նրան պատճառում էր որոշ բավականություն։ Բայց այսօր այդ բավականությունը թունավորվում էր Մատրյոնա Ֆիլիմոնովնայի տված խորհուրդների հիշողությամբ և նրանով, որ տանն այդպես ձախողություն է տիրում։ Նա կարդաց նաև այն բանի մասին, որ կոմս Բեյստը, ինչպես ասում են, անցել է Վիսբադեն, և այն մասին, թե այլևս չկան սպիտակ մազեր, կարդաց մի թեթև կառետ ծախելու և մի ջահել կնոջ առաջարկի մասին, բայց այս տեղեկությունները նրան չէին պատճառում, ինչպես առաջ, խաղաղ, հեգնական բավականություն։

Վերջացնելով թերթը, սուրճի երկրորդ գավաթը և կալաչն ու կարագը, նա կանգնեց, թափ տվեց կալաչի փշրանքները ժիլետի վրայից և ձգվեց, ուղղեց լայն կուրծքը, ուրախ ժպտաց ո՛չ նրա համար, որ սրտի մեջ կար առանձնապես հաճելի մի բան,— ուրախ ժպիտն առաջացավ լավ մարսողությունից։

Բայց այդ ուրախ ժպիտն իսկույն հիշեցրեց նրան ամեն բան, և նա մտասուզվեց։

Մանկական երկու ձայն (Ստեպան Արկադևիչը ճանաչեց Գրիշայի՝ կրտսեր տղայի և Տանյայի՝ ավագ աղջկա ձայները) լսվեցին դռան ետևից։ Նրանք տանում էին ինչ-որ բան ու վայր գցեցին։

— Ես հո ասո՞ւմ էի, որ չի կարելի կտուրի վրա նստեցնել ուղևորներ,— բղավում էր աղջիկն անգլերեն,— դե՛, հավաքի՛ր։

«Ամեն ինչ խառնվել է,— մտածեց Ստեպան Արկադևիչը,— ահա երեխաները վազվզում են մենակ»։ Եվ մոտենալով դռանը, նա կանչեց նրանց։ Նրանք թողին արկղիկը, որ ներկայացնում էր գնացք, ու մտան հոր մոտ։

Աղջիկը, հոր սիրելին, ներս վազեց համարձակ, գրկեց նրան և ծիծաղելով կախվեց նրա վզից, ինչպես միշտ, ուրախանալով անուշահոտ օծանելիքների ծանոթ բույրի համար, որ տարածվում էր նրա բակենբարդներից։ Վերջապես համբուրելով հոր կռացած դրությունից կարմրած ու քնքշությամբ փայլող դեմքը, աղջիկը բացեց, ազատեց թևերը և ուզում էր ետ փախչել, բայց հայրը պահեց նրան։

— Ի՞նչ է անում մայրիկդ,— հարցրեց նա, ձեռքով շոյելով աղջկա ողորկ, քնքուշ պարանոցը։ — Բա՛րև,— ասաց նա, ժպտալով իրեն ողջունող տղային։

Ստեպան Արկադևիչը գիտակցում էր, որ ավելի քիչ էր սիրում տղային և միշտ աշխատում էր մեղմ լինել, բայց երեխան զգում էր այդ և ժպիտով չպատասխանեց հոր սառը ժպտին։

— Մայրի՞կս։ Վեր է կացել,— պատասխանեց աղջիկը։

Ստեպան Արկադևիչը հառաչեց։ «Ուրեմն էլի ամբողջ գիշերը չի քնել», մտածեց նա։

— Ինչպե՞ս է, ուրա՞խ է մայրիկդ։

Աղջիկը գիտեր, որ հոր ու մոր միջև գժտություն է ծագել, որ մայրը չէր կարող ուրախ լինել, որ հայրը պետք է իմանար այդ և որ նա ձևանում է, հարցնելով դրա մասին այդպիսի թեթևությամբ։ Եվ նա կարմրեց հոր փոխարեն։ Հայրն իսկույն հասկացավ այդ և նույնպես կարմրեց։

— Չգիտեմ,— ասաց աղջիկը։ — Մայրիկը պատվիրեց չսովորել, նա պատվիրեց միասս Գուլի հետ զբոսանքի գնալ տատիկի մոտ։

— Դե, գնա՛, իմ Տանչուրոչկա։ Ա՜խ հա, կա՛ց,— ասաց նա, այսուամենայնիվ պահելով նրան ու շոյելով նրա քնքուշ թաթիկը։

Նա վերցրեց բուխարու վրայից, ուր երեկ դրեց, կոնֆետների տուփը, տվեց աղջկան երկու հատ, ընտրելով նրա սիրածները՝ շոկոլադից և պոմադից։

— Գրի՞շային, — ասաց աղջիկը, ցույց տալով շոկոլադե կոնֆետը։

— Այո՛, այո՛։ — Եվ էլի շոյելով աղջկա ուսերը, հայրը համբուրեց նրա մազերի արմատներն ու վիզը և արձակեց նրան։

— Կառեթը պատրաստ է,— ասաց Մատվեյը։ — Հա՜, մի խնդրատու կին կա,— ավելացրեց նա։

— Վաղո՞ւց է այստեղ,— հարցրեց Ստեպան Արկադևիչը։

— Մոտ կես ժամ։

— Քանի՜ անգամ հրամայված է քեզ՝ զեկուցել անմիջապես։

— Հապա չպիտի՞ թողնեն, որ դուք հանգիստ սուրճ խմեք,—

ասաց Մատվեյը բարեկամական-կոպիտ այնպիսի տոնով, որի համար չէր կարելի բարկանալ։

— Դե, շուտ ներս խնդրիր,— ասաց Օբլոնսկին, կնճռոտվելով սրտնեղությունից։

Խնդրարկուն, շտաբս-կապիտանի կին Կալինինան, խնդրում էր մի անկարելի և անմիտ բանի մասին, բայց Ստեպան Արկադևիչն, ըստ իր սովորության, նստեցրեց նրան, ուշադիր, առանց ընդհատելու լսեց նրա պատմածը և մանրամասնորեն խորհուրդ տվեց, թե ո՛ւմ դիմել ու ի՛նչպես, և նույնիսկ իր խոշոր, երկարաձիգ, գեղեցիկ ու պարզ ձեռագրով, աշխույժ ու ներդաշնակ ոճով տոմս գրեց այն անձնավորությանը, որը կարող էր օգնել խնդրարկու կնոջը։ Արձակելով Կալինինային, Ստեպան Արկադևիչը վերցրեց գլխարկը և կանգ առավ, միտք անելով, հո ոչինչ չմոռացա՞վ։ Պարզվեց, որ ոչինչ չէր մոռացել, բացի մի բանից, ինչն ուզում էր մոռանալ,— իր կնոջը։

«Ա՜խ, հա՛»։ Նա գլուխը կախ գցեց, և նրա գեղեցիկ դեմքն ստացավ թախծոտ արտահայտություն։ «Գնա՞լ, թե՞ չգնալ», ասում էր նա ինքն իրեն։ Եվ ներքին մի ձայն ասում էր նրան, որ գնալու կարիք չկա, որ այնտեղ բացի կեղծիքից ոչինչ չի կարող լինել, որ անհնարին է ուղղել, կարկատել իրենց հարաբերությունները, որովհետև անկարելի է կնոջը նորից դարձնել հրապուրիչ ու սիրաբորբոք կամ իրեն դարձնել ծերունի, սիրելու անընդունակ։ Բացի կեղծիքից ու ստից, ոչինչ չէր կարող դուրս գալ այժմ, իսկ կեղծիքն ու սուտը զզվելի էին նրա բնությանը։

«Սակայն երբևիցե պետք է. չէ՞ որ դա չի կարող մնալ այդպես», ասաց նա, աշխատելով համարձակություն ներշնչել իրեն։ Նա ուղղեց կուրծքը, հանեց մի գլանակ, վառեց, քաշեց երկու անգամ, նետեց այն սաղափե խեցի-մոխրամանի մեջ, արագ քայլերով անցավ ընդունարանից ու բացեց մյուս դուռը, որ տանում էր դեպի կնոջ ննջարանը։

IV

Դարյա Ալեքսանդրովնան, հագին բաճկոնակ և ծոծրակին շաշպրած արդեն նոսրացած, մի ժամանակ խիտ ու հիանալի մազերի հյուսերը, ներս ընկած, նիհար դեմքով և դեմքին նի-

հարությունից դուրս ցցված վախլուկ աչքերով, կանգնել էր սենյակում շաղ տված իրերի միջին՝ բաց հանդերձապահարանի առաջ, որի միջից նա ընտրում էր ինչ-որ բան։ Լսելով ամուսնու քայլերը, նա դադարեցրեց իր անելիքը, նայելով դռանը և զուր ջանալով՝ տալ իր դեմքին խիստ ու արհամարհական արտահայտություն։ Նա զգում էր, որ վախենում է ամուսնուց և վախենում է առաջիկա տեսակցությունից։ Նա հենց այս րոպեիս փորձում էր անել այն, ինչն արդեն տասներորդ անգամ փորձել էր անել այդ երեք օրում. զատել-ջոկել իր և երեխաների իրերը, որ պիտի տաներ մոր մոտ, ու դարձյալ սիրտ չէր անում կանգ առնել այդ վճռի վրա, բայց այժմ էլ, ինչպես և առաջներում, նա ասում էր ինքն իրեն, որ դա չի կարող մնալ այդպես, որ ինքը պետք է մի բան ընձեռի, պատժի, խայտառակի ամուսնուն, վրեժ առնի այն ցավի գեթ փոքր մասի համար, որ նա պատճառել է իրեն։ Դարյա Ալեքսանդրովնան դեռ շարունակում էր ասել, որ կհեռանա ամուսնուց, բայց զգում էր, որ դա անհնարին է. դա անհնարին էր այն պատճառով, որ նա չէր կարողանում նրան չհամարել իր ամուսինը և չսիրել։ Բացի դրանից, նա զգում էր, որ եթե այստեղ, իր տանը ինքը հազիվ էր կարողանում խնամել իր հինգ երեխաներին, ապա նրանց բանն ավելի վատ կլինի այնտեղ, ուր կգնա ինքը նրանց բոլորի հետ։ Առանց այդ էլ, այս երեք օրվա մեջ փոքրը հիվանդացավ, որովհետև նրան կերակրել էին վատ մսաջրով, իսկ մյուսները երեկ մնացել էին համարյա առանց ճաշի։ Դարյա Ալեքսանդրովնան զգում էր, որ անհնարին է տանից գնալ, հեռանալ, բայց խաբելով իրեն, նա, այնուամենայնիվ, ջոկում-զատում էր իրերը և ձևանում էր, իբր հեռանում է։

Տեսնելով ամուսնուն, նա ձեռքերը մտցրեց պահարանի արկղի մեջ, իբր թե բան է փնտրում, և նայեց ամուսնուն այն ժամանակ միայն, երբ նա ընդհուպ մոտեցավ իրեն։ Բայց իր դեմքը, որին Դարյա Ալեքսանդրովնան ուզում էր տալ խիստ ու վճռական արտահայտություն, արտահայտում էր շվարածություն ու տառապանք։

— Դո՛ւլի,— ասաց Ստեպան Արկադևիչը ցածր ու երկչոտ ձայնով։ Նա գլուխը ներս քաշեց ուսերի մեջ և ուզում էր ունենալ խեղճ ու հլու տեսք, բայց և այնպես փայլում էր առողջությամբ ու թարմությամբ։ Կինն արագ հայացքով դիտեց

նրա ոտքից-գլուխ թարմությամբ և առողջությամբ փայլող տեսքը։ «Այո՛, նա երջանիկ է ու գոհ,— մտածեց Դարյա Ալեքսանդրովնան,— իսկ ե՞ս... Եվ այդ զվվելի բարությունը, որի համար ամենքն այնպես գովում ու սիրում են նրան. ես ատում եմ նրա այդ բարությունը», մտածեց նա։ Դարյա Ալեքսանդրովնայի բերանը կուչ եկավ, այտի մկանը ցնցվեց գունատ, ջղային դեմքի աջ կողմի վրա։

— Ի՞նչ եք կամենում,— ասաց կինն արագ, ո՛չ իր, կրծքային ձայնով։

— Դո՛լլի,— կրկնեց ամուսինը դողդոջուն ձայնով,— Անն գալիս է այսօր։

— Ի՞նձ ինչ։ Ես չեմ կարող ընդունել նրան,— ճչաց նա։

— Բայց և այնպես պետք է, Դո՛լլի...

— Հեռացե՛ք, հեռացե՛ք, հեռացե՛ք,— առանց նրան նայելու ճչաց կինը, կարծես այդ ճիչն առաջացավ ֆիզիկական ցավից։

Ստեպան Արկադևիչը կարող էր հանգիստ լինել, երբ մտածում էր կնոջ մասին, կարող էր հուսալ, որ ամեն բան կարգի կգա, ըստ Մատվեյի արտահայտության, և կարող էր հանգիստ թերթ կարդալ ու սուրճ խմել, բայց երբ տեսավ կնոջ տանջալից, տառապալից դեմքը. լսեց ձայնի այդ հնչյունը, բախտին հնազանդ ու հուսահատական, նրա շունչը կտրվեց, ինչ-որ բան դեմ ընկավ կոկորդին, և աչքերը փայլեցին արցունքից։

— Աստված իմ, ի՞նչ արի ես։ Դո՛լլի, ի սե՛ր աստծո... Չէ՞ որ... — նա չկարողացավ շարունակել, հեկեկանքը կանգնեց նրա կոկորդում։

Կինն աղմուկով փակեց պահարանը և նայեց ամուսնուն։

— Դո՛լլի, ի՞նչ կարող եմ ասել ես... մի բան միայն՝ ների՛ր... Հիշիր, մի՞թե ինը տարվա մեր կյանքը չի կարող քավել այդ րոպեները, րոպեներ...

Դարյա Ալեքսանդրովնան աչքերը ցած գցեց, սպասելով, թե ի՞նչ կասի նա, կարծես աղերսելով, որ նա մի կերպ խախտի իր համոզմունքը։

— Հրապուրանքի րոպեներ... — ասաց նա և ուզում էր շարունակել, բայց այդ խոսքը լսելիս՝ կարծես ֆիզիկական ցավից նորից սեղմվեցին կնոջ շրթունքները և նորից ցնցվեց այտի մկանը նրա դեմքի աջ կողմի վրա։

— Հեռացե՛ք, հեռացե՛ք այստեղից,— բղավեց Դարյա Ալեքսանդրովնան ավելի սուր,— և ոչինչ մի՛ ասեք ինձ ձեր հրապուրանքների ու ձեր դարշությունների մասին։

Նա ուզում էր հեռանալ, բայց երերաց ու բռնեց աթոռի թիկնատեղից, որ հենվի նրա վրա։ Ստեպան Արկադևիչի դեմքը լայնացավ, շրթունքներն ուռեցին, աչքերը լցվեցին արցունքներով։

— Դո՛լլի,— ասաց նա, արդեն հեկեկալով։— Ի սեր աստծո, մտածի՛ր երեխաների մասին, նրանք մեղավոր չեն։ Մեղավորը ե՛ս եմ և պատժիր ինձ, հրամայիր ինձ քավել իմ հանցանքը։ Ինչով կարող եմ, պատրաստ եմ։ Ես մեղավոր եմ, խոսքեր չկան որոշելու, թե որքա՞ն մեղավոր եմ։ Բայց, Դո՛լլի, ներիր։

Դարյա Ալեքսանդրովնան նստեց։ Ամուսինը լսում էր կնոջ ծանր, բարձրաձայն շնչառությունը և անասելի խղճում էր նրան։ Կինը մի քանի անգամ ուզեց խոսել, բայց չկարողացավ։ Ամուսինը սպասում էր։

— Դու հիշում ես երեխաներին, որպեսզի խաղաս նրանց հետ, իսկ ես հիշում եմ ու գիտեմ, որ նրանք կորած են այժմ,— ասաց Դարյա Ալեքսանդրովնան մեկն այն ֆրազներից, որ այս երեք օրվա ընթացքում հաճախ ասում էր ինքն իրեն։

Նա ամուսնուն ասաց «դու», և վերջինս շնորհակալության զգացումով նայեց կնոջն ու շարժվեց, որ վերցնի նրա ձեռքը, բայց նա զզվանքով ետ քաշվեց։

— Ես հիշում եմ երեխաների մասին, այդ պատճառով ամեն բան կանեմ այս աշխարհում, որպեսզի փրկեմ նրանց, բայց ինքս էլ չգիտեմ, թե ինչո՞վ կարող եմ փրկել. արդյոք նրանո՞վ, որ տանեմ, հեռացնեմ նրանց իրենց հորից, թե՞ նրանով, որ թողնեմ նրանց իրենց անառակ հոր մոտ, այո՛, անառակ հոր մոտ... Դե՛ ասեք, այն բանից հետո... ինչ եղել է, մի՞թե հնարավոր է մեր միասին ապրելը։ Դե՛ ասեք, մի՞թե հնարավոր է դա,— կրկնում էր նա, բարձրացնելով ձայնը։— Այն բանից հետո, երբ իմ ամուսինը, իմ երեխանե-

րի հայրը սիրային կապ է հաստատում իր զավակների դաստիարակչուհու հետ...

— Ի՜նչ արած։ Ի՜նչ արած,— ասում էր Ստեպան Արկադևիչը խղճուկ ձայնով, ինքն էլ չիմանալով, թե ի՜նչ է ասում և ավելի ու ավելի խոնարհելով գլուխը։

— Դուք ինձ համար զարշելի եք, զզվելի,—բղավեց Դարյա Ալեքսանդրովնան, ավելի ու ավելի տաքանալով։ — Ձեր արցունքները ջուր են։ Դուք երբեք չեք սիրել ինձ, ձեր մեջ չկա ո՜չ սիրտ, ո՜չ ազնվություն։ Դուք ինձ համար զզվելի եք, գարշելի, օտար, այո՜, բոլորովին օտար եք,— ցավով ու դառնությամբ արտասանեց նա իր համար սարսափելի այդ օտար բառը։

Ամուսինը նայեց կնոջը, և կնոջ դեմքի վրա արտահայտված զայրույթը վախեցրեց ու զարմացրեց նրան։ Նա չէր հասկանում, որ կնոջ հանդեպ իր խղճալու զգացումը գրգռում էր նրան։ Կինն ամուսնու մեջ տեսնում էր իր նկատմամբ խղճահարություն, բայց ո՜չ սեր։ «Ո՜չ, նա ատում է ինձ։ Նա չի՜ ների», մտածեց ամուսինը։

— Դա սարսափելի է, սարսափելի,— ասաց Ստեպան Արկադևիչը։

Այդ ժամանակ մյուս սենյակում, հավանորեն ընկնելով, բղավեց երեխան. Դարյա Ալեքսանդրովնան ականջ դրեց, և նրա դեմքը հանկարծ մեղմացավ։

Ըստ երևույթին, նա ուշքի եկավ, մի քանի րոպե կարծես չիմանալով, թե որտե՞ղ է ինքը և ի՜նչ պիտի անի. ապա արագ վեր կենալով, շարժվեց դեպի դուռը։

«Չէ՞ որ նա սիրում է իմ երեխային,— մտածեց Ստեպան Արկադևիչը, նկատելով փոփոխությունը կնոջ դեմքին, երբ լսվեց երեխայի ճիչը,— իմ երեխային, ուրեմն, ինչպե՞ս կարող է ատել ինձ»։

— Դո՜ւռի, էլի մի խոսք, — ասաց նա՝ գնալով կնոջ ետևից։

— Եթե դուք գաք իմ ետևից, ես կկանչեմ մարդկանց, երեխաներին, թող ամենքն իմանան, որ դուք սրիկա եք։ Ես գնում, հեռանում եմ այսօր, իսկ դուք ապրեք այստեղ ձեր սիրուհու հետ։

Եվ նա գնաց, շրխկացնելով դուռը։

Ստեպան Արկադևիչը հառաչեց, դեմքը սրբեց ու համբ

քայլերով դուրս գնաց սենյակից։ «Մատվեյն ասում է՝ կարգի կգա, բայց ինչպե՞ս։ Ես չեմ տեսնում նույնիսկ դրա հնարավորությունը։ Ա՜խ, ա՜խ, ինչ սարսափելի բան։ Եվ ինչպե՞ս գռեհկաբար էր բղավում նա,— ասում էր ինքն իրեն Ստիվան, մտաբերելով կնոջ բղավոցն ու խոսքերը՝ սրիկա և սիրուհի։—Կարող է պատահել, աղջիկները լսեցին։ Սոսկալի գռեհիկ, սոսկալի՜»։ Ստեպան Արկադևիչը մի քանի վայրկյան կանգնեց մենակ, տրորեց աչքերը, հառաչեց և կուրծքն ուղղելով, դուրս գնաց սենյակից։

Օրն ուրբաթ էր, և սեղանատանը ժամագործ գերմանացին լարում էր ժամացույցը։ Ստեպան Արկադևիչը հիշեց իր կատակն այդ ճշտապահ ճաղատ գերմանացու մասին, թե գերմանացին «ինքը լարված էր իր ամբողջ կյանքի ընթացքում, որ լարի ժամացույցը», և ժպտաց։ Ստեպան Արկադևիչը սիրում էր լավ կատակներ։ «Գուցե և կարգի կգա։ Լավ արտահայտություն է՝ կարգի կգա,— մտածեց նա։—Դա պետք է պատմել»։

— Մատվե՜յ,— կանչեց նա,— ուրեմն Մարիայի հետ ամեն բան սարքիր բազմոցարանում, Աննա Արկադևնայի համար,— ասաց նա ներս եկած Մատվեյին։

— Լսում եմ ։

Ստեպան Արկադևիչը հագավ մուշտակը և դուրս եկավ նախագավիթ։

— Տա՞ն պիտի հաց ուտեք,— հարցրեց նրան ճանապարհ դնող Մատվեյը։

— Ինչպես կպատահի։ Ահա, վերցրո՛ւ ծախսերի համար,— ասաց նա, տալով դրամապանակից տասը ռուբլի։ — Հերիք կանի՞։

— Հերիք է, թե հերիք չէ, յոլա պիտի գնալ,—ասաց Մատվեյը՝ շրխկոցով փակելով դռնակը և ետ քաշվելով դեպի նախագավիթը։

Մինչ այդ, Դարյա Ալեքսանդրովնան հանգստացնելով երեխային և կառեթի ձայնից հասկանալով, որ ամուսինը գնաց, նորից վերադարձավ ննջարան։ Դա նրա միակ ապաստարանն էր տնային հոգսերից, որոնք շրջապատում էին նրան, հենց որ դուրս էր գալիս ննջարանից։ Հենց այժմ էլ, այն կարճ ժամանակամիջոցին, երբ գնում էր մանկասենյակ, անգլուհին

և Մատրյոնա Ֆիլիմոնովնան մի քանի հարցեր տվին նրան, որոնք չէին կարող հետաձգվել և որոնց նա՛ միայն կարող էր պատասխանել. ի՞նչ տալ երեխաներին զբոսանքի գնալիս։ Արդյոք կաթ տա՞լ։ Չուղարկե՞լ արդյոք ուրիշ խոհարարի ետևից։

— Ա՜խ, թողե՛ք, թողե՛ք ինձ,—ասաց նա և վերադառնալով ննջարան, նստեց նույն տեղը, որտեղ նստած խոսում էր ամուսնու հետ, սեղմած իր լղար ձեռքերը, վրան մատանիներ, որոնք ցած էին սահել ոսկրոտ մատներին, և սկսեց հիշողության մեջ մտմտալ տեղի ունեցած ամբողջ խոսակցությունը։ «Գնա՛ց։ Բայց ինչո՞վ վերջացրեց նրա հետ,— մտածում էր նա։—Մի՞թե տեսակցում է նրան։ Ինչո՞ւ չհարցրի ես։ Ո՛չ, ո՛չ, չի կարելի հաշտվել։ Եթե նույնիսկ մենք մնանք մի տան մեջ, մենք օտարներ ենք։ Ընդմիշտ օտար,—կրկնեց նա նորից առանձին նշանակությամբ՝ իր համար սարսափելի այդ խոսքը։—Իսկ ինչպե՞ս սիրում էի ես, աստված իմ, ինչպես սիրում էի ես նրան... ինչպե՞ս սիրում էի։ Մի՞թե ես այժմ էլ չեմ սիրում նրան։ Մի՞թե ավելի, քան առաջ, չեմ սիրում նրան։ Ամենասոսկալին այն է...» սկսեց նա, բայց չվերջացրեց իր միտքը, որովհետև Մատրյոնա Ֆիլիմոնովնան երևաց դռան մեջ։

— Հրամայեցեք ուղարկել եղբորս ետևից,—ասաց դայակը,— նա ճաշ կպատրաստի, թե չէ, երեկվա պես, երեխաները կմնան մինչև ժամի վեցը առանց ուտելու։

— Լավ, ես հիմա կգամ ու կկարգադրեմ։ Ուղարկեցի՞ք, որ թարմ կաթ բերեն։

Եվ Դարյա Ալեքսանդրովնան թաղվեց օրվա հոգսերի մեջ ու միաժամանակ թաղեց նրանց մեջ նաև իր վիշտը։

V

Ստեպան Արկադևիչը լավ էր սովորում դպրոցում շնորհիվ իր լավ ընդունակությունների, բայց ծույլ էր ու չարաճճի, այդ պատճառով ավարտեց վերջին սաների թվում, սակայն, չնայած իր միշտ խրախճասեր կյանքին, ո՛չ բարձր աստիճաններին ու ո՛չ մեծ տարիքին, գրավում էր Մոսկվայի ատյաններից մեկում պատվավոր և լավ ռոճիկով պետի տեղ։ Այդ

տեղը նա ստացավ իր քույր Աննայի ամուսնու՝ Ալեքսեյ Ալեքսանդրովիչ Կարենինի միջոցով, որ վարում էր կարևորագույն պաշտոններից մեկն այն մինիստրության մեջ, որին պատկանում էր ատյանը։ Բայց եթե Կարենինը չնշանակեր իր աներձագին այդ պաշտոնին, միևնույն է, Ստիվա Օբլոնսկին հարյուրավոր այլ անձերի, եղբայրների, քույրերի, ազգականների, մորեղբոր կամ հորեղբոր տղաների, աղջիկների, հորեղբայրների, մորաքույրների միջոցով կստանար այդ կամ դրա նման մի ուրիշ պաշտոն, վեց հազար ռուբլի ռոճիկով, որը նրան պետք էր, որովհետև նրա գործերը վատացել էին, չնայած կնոջ բավական հարուստ կարողությանը։

Մոսկվայի և Պետերբուրգի կեսը բարեկամ ու ազգական էին Ստեպան Արկադևիչին։ Նա ծնվել էր այն մարդկանց շրջանում, որոնք էին և եղան աշխարհիս հզորները։ Պետական մարդկանց, ծերունիների մի երրորդ մասը նրա հոր ընկերբարեկամներն էին և ճանաչում էին նրան դեռ մանկուց. մյուս երրորդը «դու»-ով էր խոսում նրա հետ, իսկ մնացած երրորդը նրա լավ ծանոթներն էին։ Հետևաբար երկրային բարիքներ՝ շաղ պաշտոններ, վարձակալություններ, կոնցեսիաներ և այն տվողներն ամենքը նրա բարեկամներն էին ու չէին կարող աչքաթող անել, մոռացության տալ նրան. և Օբլոնսկին առանձնապես ջանալու կարիք չուներ, որ շահեկան տեղ ստանա. պետք էր միայն չհրաժարվել, չնախանձել, չվիճել, չվիրավորվել, որ նա երբեք էլ չէր անում՝ իրեն հատուկ բարության շնորհիվ։ Նրան ծիծաղելի կթվար, եթե ասեին, թե նա պաշտոն չի ստանա այն ռոճիկով, որը պետք է իրեն, մանավանդ որ նա արտասովոր ոչինչ չէր պահանջում. նա ուզում էր միայն այն, ինչ ստանում էին նրա հասակակիցները, իսկ այդպիսի պաշտոն նա կկատարեր ո՛չ վատ, քան ուրիշ ամեն ոք։

Ստեպան Արկադևիչին ո՛չ միայն սիրում էին բոլոր նրան ճանաչողները՝ իր բարի, ուրախ բնավորության և, անկասկած, ազնվության համար, այլև նրա մեջ, նրա գեղեցիկ, պայծառ արտաքինի, վառվռուն աչքերի, սև հոնքերի, մազերի, դեմքի սպիտակության ու կարմրության մեջ կար մի բան, որ ֆիզիկապես բարեկամաբար և ուրախ էր ազդում նրան պատահող մարդկանց վրա։ «Ահա՛, Ստիվա՛ն, Օբլոնսկին։ Ահա՛ և նա», համարյա միշտ խնդուն ժպիտով ասում էին մար-

դիկ, հանդիպելով նրան։ Եթե պատահում էր երբեմն, որ նրա հետ ունեցած զրույցից հետո պարզվում էր, թե առանձնապես ուրախալի ոչինչ չի եղել, այնուամենայնիվ, հետևյալ օրը, մյուս օրը նորից ճիշտ այդպես ուրախանում էին նրան հանդիպելիս։

Երրորդ տարին վարելով Մոսկվայում ատյաններից մեկի պետի պաշտոնը, Ստեպան Արկադևիչը ձեռք էր բերել բացի սիրուց նաև իր պաշտոնակիցների, ստորադրյալների, իշխանավորների և իր հետ գործ ունեցող ամենքի հարգանքը։ Ստեպան Արկադևիչի գլխավոր հատկությունները, որոնք այդ ընդհանուր հարգանքն էին ստեղծել նրա համար ծառայության մեջ, հանդիսանում էին. նախ՝ նրա չափազանց ներողամիտ վերաբերմունքը մարդկանց, որ հիմնված էր իր պակասությունների գիտակցության վրա. երկրորդ՝ կատարյալ ազատամտությունը, բայց ո՛չ այն, որի մասին նա կարդում էր թերթերում, այլ այն ազատամտությունը, որ կար նրա արյան մեջ և որով նա միանգամայն հավասար ու միատեսակ էր վերաբերվում բոլոր մարդկանց, ինչ կարողության և կոչման տեր էլ լինեին նրանք. երրորդ,—որ գլխավորն է,— նրա միանգամայն սառնասիրտ վերաբերմունքը այն գործին, որով զբաղված էր նա, ուստի երբեք չէր հրապուրվում և սխալներ չէր անում։

Գալով իր պաշտոնատեղը, Ստեպան Արկադևիչը պորտֆելը տանող հարգալից բարապանի ուղեկցությամբ անցավ իր փոքրիկ առանձնասենյակը, հագավ համազգեստը և մտավ ատյան։ Գրագիրները և ծառայողներն ամենքը կանգնեցին, ուրախ ու հարգալից ողջունելով։ Ստեպան Արկադևիչն շտապ, ինչպես միշտ, մոտեցավ իր տեղին, սեղմեց անդամների ձեռքը և նստեց։ Նա կատակեց ու խոսեց ճիշտ այնքան, որքան վայելուչ էր դա, և սկսեց զբաղմունքները։ Ոչ ոք Ստեպան Արկադևիչից ավելի ստույգ չգիտեր գտնել ազատության, պարզության ու պաշտոնականության այն սահմանը, որը պետք էր՝ գործերով հաճույքամբ զբաղվելու համար։ Քարտուղարն ուրախ ու հարգալից, ինչպես և ամենքը Ստեպան Արկադևիչի ատյանում, մոտեցավ գրությունները ձեռքին և խոսեց այն մտերմական-ազատամիտ տոնով, որ մտցրել էր Ստեպան Արկադևիչը։

— Վերջ ի վերջո մեզ հաջողվեց տեղեկություններ ստանալ Պենզայի նահանգական վարչությունից։ Ահա՛, արդյոք չէի՞ք կամենա...

— Ստացա՞ք վերջապես,— ասաց Ստեպան Արկադևիչը, մատը դնելով գրության վրա։ — Հապա՛, պարոննե՛ր...— Եվ ատյանն սկսվեց։

«Եթե նրանք իմանային,—մտածեց նա, նշանակալից ծռելով գլուխը զեկուցումը լսելիս,— թե ինչպիսի՞ հանցավոր երեխա էր իրենց նախագահը կես ժամ առաջ»։ Եվ նրա աչքերը ծիծաղում էին զեկուցագիրը կարդալիս։ Մինչև ժամի երկուսը պետք է անընդհատ ընթանային պարապմունքները, իսկ ժամը երկուսին ընդմիջում ու նախաճաշ։

Դեռ ժամը երկուսը չկար, երբ ատյանի դահլիճի ապակյա մեծ դուռը հանկարծ բացվեց, և մեկը ներս մտավ։ Բոլոր անդամները դիմանկարների տակից ու հայելիների ետևից նայեցին դռանը, ուրախացած իրենց ուշագրավման համար։ Բայց դռան մոտ կանգնած պահապանն իսկույն դուրս արեց ներս եկողին և ծածկեց ապակյա դուռը։

Երբ գործը կարդացվեց, Ստեպան Արկադևիչը կանգնեց, ձիգ եկավ և, տուրք տալով ժամանակի ազատամտությանը ատյանում, հանեց մի գլանակ ու գնաց իր առանձնասենյակը։ Նրա երկու օգնականները՝ ծերունի պաշտոնյա Նիկիտինը և կամեր-յունկեր Գրինևիչը հետևեցին նրան։

— Նախաճաշից հետո կարող ենք վերջացնել,—ասաց Ստեպան Արկադևիչը։

— Այն էլ ո՞նց,—արձագանքեց Նիկիտինը։

— Պետք է որ կարգին խաբեբա լինի այդ Ֆոմինը,— ասաց Գրինևիչն այն գործին մասնակից անձնավորություններից մեկի մասին, որ քննում էին իրենք։

Ստեպան Արկադևիչը կնճռոտվեց Գրինևիչի խոսքերը լսելիս, դրանով զգալ տալով, թե անվայել բան է նախապես այդպիսի կարծիք հայտնելը, և ոչինչ չպատասխանեց նրան։

— Ո՞վ էր ներս եկողը,— հարցրեց նա պահապանին։

— Մեկը, ձերդ գերազանցություն, առանց հարցնելու ներս ընկավ, հենց որ ես շուռ եկա։ Ձեզ էր հարցնում։ Ես ասացի՝ երբ անդամները դուրս գան, այն ժամանակ...

— Որտե՞ղ է նա։

— Կարծես, դուրս եկավ նախասենյակ, թե չէ ամբողջ ժամանակ քայլում էր այստեղ։ Ա՜յ, հենց նա է,— ասաց պահապանը, ցույց տալով գանգուր մորուքով, ամուր կազմվածքով լայնաթիկունք այն մարդուն, որը առանց հանելու մորթե գլխարկը՝ արագ ու թեթև վազեց վերև քարե սանդուղքի մաշված աստիճաններով։ Ներքև իջնողներից մեկը, պորտֆելավոր նիհար մի չինովնիկ, մի վայրկյան կանգ առնելով, դժկամորեն նայեց վազողի ոտներին և ապա հարցական հայացք գցեց Օբլոնսկու վրա։

Ստեպան Արկադևիչը կանգնել էր սանդուղքի գլխին։ Բարեսրտությամբ փայլող նրա դեմքը համազգեստի ասեղնագործած օձիքի միջից փայլեց է՛լ ավելի, երբ նա ճանաչեց վերը վազողին։

— Այդ է, որ կա, Լևինն է, վերջապե՜ս.— ասաց նա մտերմական, ծաղրական ժպիտով, զննելով իրեն մոտեցող Լևինին։— Ինչպե՞ս դու չխորշեցիր և եկար գտնելու ինձ այս որջում,— ասաց Ստեպան Արկադևիչը, չբավականանալով իր բարեկամի ձեռքը սեղմելով, այլև համբուրելով նրան։— Արդյոք վաղո՞ւց։

— Ես եկա այս րոպեին և շատ էի ուզում տեսնել քեզ,— պատասխանեց Լևինը, քաշվելով, միաժամանակ բարկացած ու անհանդիստ դիտելով շուրջը։

— Դե, գնանք առանձնասենյակ,— ասաց Ստեպան Արկադևիչը, որը գիտեր իր բարեկամի ինքնասեր ու գաղազած ամաչկոտությունը. և բռնելով նրա ձեռքը, տարավ նրան իր ետևից, կարծես անց էր կացնում վտանգների միջից։

Ստեպան Արկադևիչը «դու»-ով էր խոսում համարյա իր բոլոր ծանոթների հետ. վաթսունամյա ծերունիների, քսան տարեկան պատանիների հետ, դերասանների, մինիստրների հետ, վաճառականների և գեներալ-ադյուտանտների հետ, այնպես որ նրա հետ «դու»-ով խոսողներից շատ-շատերը գտնվում էին հասարակական սանդուղքի երկու հակադիր ծայրակետերի վրա և չափազանց կզարմանային, եթե իմանային, որ իրենք Օբլոնսկու միջոցով ընդհանուր մի բան ունեն։ Նա «դու» էր ասում այն ամենքին, որոնց հետ շամպայն էր խմում, իսկ շամպայն էր խմում ամենքի հետ, այդ պատճառով իր ստորադրյալների ներկայությամբ պատահելով իր

ամոթալի «դու»-երին, ինչպես կատակով կանչում էր նա իր բարեկամներից շատերին, իրեն հատուկ տակտով կարողանում էր մեղմել այդ տպավորության անախորժությունն իր ստորադրյալների համար։ Լևինն ամոթալի «դու» չէր, բայց Օբլոնսկին իր տակտով զգաց, որ Լևինը մտածում է, իբր ինքը կարող է շուզենալ իր ստորադրյալների առաջ ցույց տալ իմ մոտիկությունը նրա հետ, ուստի շտապեց ներս տանել նրան առանձնասենյակ։

Լևինը համարյա հասակակից էր Օբլոնսկուն և նրա հետ «դու»-ով էր խոսում ո՛չ միայն շամպայնի պատճառով։ Լևինը նրա առաջին երիտասարդության ընկերն էր ու բարեկամը։ Նրանք իրար սիրում էին, չնայած իրենց բնավորությունների և ճաշակների տարբերությանը, ինչպես սիրում են իրար առաջին երիտասարդության ժամանակ մտերմացած ընկերները։ Սակայն, չնայած դրան, ինչպես հաճախ պատահում է գործունեության տարբեր ասպարեզներ ընտրած մարդկանց միջև, նրանցից յուրաքանչյուրը թեև դատողությամբ արդարացնում էր մյուսի գործունեությունը, բայց իր հոգում արհամարհում էր այն։ Յուրաքանչյուրին թվում էր, թե իսկական կյանքն այն է, որ վարում է ինքը, իսկ այն կյանքը, որ վարում է իր բարեկամը, ցնորք է միայն։ Օբլոնսկին չկարողացավ զսպել իր թեթև, հեգնական ժպիտը, տեսնելով Լևինին։ Արդեն քանի՜ անգամ էր, ինչ տեսնում էր գյուղից Մոսկվա եկած Լևինին, որտեղ ինչ-որ բան էր անում նա, բայց իսկապես ի՛նչ, դա Ստեպան Արկադևիչը երբեք չէր կարողանում լավ հասկանալ, ասենք չէր էլ հետաքրքրվում։ Լևինը գալիս էր Մոսկվա միշտ հուզված, շտապ, մի փոքր ճնշված ու գաղաղած այդ ճնշվածությունից և մեծ մասամբ իրերի նկատմամբ բոլորովին նոր, անսպասելի հայեցակետով։ Ստեպան Արկադևիչը ծիծաղում էր դրա վրա և սիրում էր այդ։ Ճիշտ այդպես, Լևինն էլ իր հոգու մեջ արհամարհում էր իր բարեկամի թե՛ քաղաքային կենցաղը, թե՛ նրա ծառայությունը, որ համարում էր դատարկ բան և ծիծաղում էր դրա վրա։ Բայց տարբերությունն այն էր, որ Օբլոնսկին անելով այն, ինչ անում են ամենքը, ծիծաղում էր ինքնավստահ ու բարեսրտորեն, իսկ Լևինը՝ ո՛չ ինքնավստահ և երբեմն՝ բարկացած։

— Մենք վաղուց էինք սպասում քեզ,— ասաց Ստեպան Արկադևիչը, մտնելով առանձնասենյակ և բաց թողնելով Լևինի ձեռքը, կարծես դրանով ցույց տալով, թե այստեղ վերջացան վտանգները։— Շատ, շատ ուրախ եմ քեզ տեսնելուս,— շարունակեց նա։— Դո՛ւ ի՞նչ ես անում, ինչպե՞ս ես, ե՞րբ եկար։

Լևինը լուռ էր, նայելով Օբլոնսկու երկու օգնականների դեմքին և մանավանդ պերճաշուք Գրինևիչի ձեռքին, այնպիսի սպիտակ ու երկար մատներով, այնպիսի երկար, դեղին ծայրերը կռացած եղունգներով և այնպիսի խոշոր, փայլուն կոճակներով՝ շապկի վրա, որ, ըստ երևույթին, այդ ձեռքերը կլանում էին նրա ամբողջ ուշադրությունը և մտքի ազատություն չէին տալիս նրան։ Օբլոնսկին իսկույն նկատեց այդ ու ժպտաց։

— Ա՜խ, հա՛, թույլ տվեք ծանոթացնել ձեզ,— ասաց նա։ — Իմ օգնականները՝ Ֆիլիպ Իվանիչ Նիկիտին, Միխայիլ Ստանիսլավիչ Գրինևիչ,— և դիմելով Լևինին — զեմստվոյի գործիչ, զեմստվոյի նոր մարդ, գիմնաստ, որ մի ձեռքով բարձրացնում է հինգ փութ, անասնաբույծ ու որսորդ և իմ բարեկամ՝ Կոնստանտին Դմիտրիչ Լևին, Սերգեյ Իվանիչ Կոզնիշևի եղբայրը։

— Շատ հաճելի է,— ասաց ծերուկը։

— Պատիվ ունեմ ճանաչելու ձեր եղբորը, Սերգեյ Իվանիչին,— ասաց Գրինևիչը, տալով իր բարակ, երկար եղունգներով ձեռքը։

Լևինը մռայլվեց, սառը սեղմեց նրա ձեռքը և իսկույն դիմեց Օբլոնսկուն։ Թեև նա մեծ հարգանք էր տածում դեպի իր՝ միևնույն մորից ծնված՝ գրականագետ եղբորը, որ ամբողջ Ռուսաստանին հայտնի էր, սակայն տանել չէր կարողանում, երբ իրեն դիմում էին ո՛չ որպես Կոնստանտին Լևինի, այլ որպես հռչակավոր Կոզնիշևի եղբորը։

— Ո՛չ, այլևս զեմստվոյի գործիչ չեմ։ Ես ամենքի հետ կռվեցի և այլևս ժողովների չեմ գնում,— ասաց նա՝ դիմելով Օբլոնսկուն։

— Այդքան շո՞ւտ,— ժպտալով ասաց Օբլոնսկին։— Բայց ինչպե՞ս, ինչո՞ւ։

— Երկար պատմություն է։ Երբևիցե կպատմեմ,— ասաց

Լևինը, բայց իսկույն ևթ սկսեց պատմել։ — Կարճ ասած, ես համոզվեցի, որ զեմստվոյական ո՛չ մի գործունեություն չկա և չի կարող լինել,— վրա տվեց նա, կարծես մեկն այդ բոպեին վիրավորեց նրան,— մի կողմից՝ խաղալիք է, խաղում են պառլամենտ, իսկ ես բավարար չափով ջահել չեմ, ո՛չ էլ ծեր, որ զվարճանամ խաղալիքներով, իսկ մյուս կողմից (նա կմկմաց), դա գավառական coterie[1]-ի համար դրամ շահելու միջոց է։ Առաջներում կային խնամակալություններ, դատարաններ, իսկ այժմ՝ զեմստվո, ո՛չ թե կաշառքի ձևով, այլ անիրավացի ոռճիկի ձևով,— ասում էր նա տաքացած, կարծես ներկա եղողներից մեկը ժխտում էր նրա կարծիքը։

— Էհե՜։ Ինչպես տեսնում եմ, դու գտնվում ես նոր, պահպանողական փուլի մեջ,— ասաց Ստեպան Արկադևիչը։— Սակայն այդ մասին հետո։

— Այո՛, հետո։ Բայց ես պետք է տեսնեի քեզ,— ասաց Լևինը, ատելությամբ նայելով Գրինևիչի ձեռքին։

Ստեպան Արկադևիչը հազիվ նկատելի ժպտաց։

— Հապա ինչո՞ւ էիր ասում, որ այլևս երբեք չես հագնի Եվրոպական զգեստ,— ասաց Օբլոնսկին, զննելով նրա նոր, ըստ երևույթին, ֆրանսիացի դերձակի կարած զգեստը։— Այսպե՞ս. ես տեսնում եմ նոր փուլ։

Լևինը հանկարծ կարմրեց, բայց ոչ այնպես, ինչպես կարմրում են հասուն մարդիկ,— թեթև, իրենք չնկատելով այն, այլ այնպես, ինչպես կարմրում են մանուկները, զգալով, որ իրենք ծիծաղելի են իրենց ամոթխածությամբ և դրա հետևանքով՝ ամաչելով ու կարմրելով է՛լ ավելի, համարյա արտասվելու աստիճան։ Եվ այնպես տարօրինակ էր տեսնել այդ խելացի, առնական դեմքը այդպիսի մանկական կացությամբ, որ Օբլոնսկին դադարեց նրան նայելուց։

— Հապա որտե՞ղ ենք տեսնվելու։ Ինձ համար շատ, շատ կարևոր է խոսել քեզ հետ,— ասաց Լևինը։

Օբլոնսկին կարծես մտքի մեջ ընկավ։

— Ահա՛ թե ինչ. գնանք Գուրինի մոտ նախաճաշելու, և այնտեղ կխոսենք։ Մինչև ժամը երեքը ես ազատ եմ։

— Ո՛չ,— մտածելուց հետո պատասխանեց Լևինը,— ես դեռ գնալու տեղ ունեմ։

[1] Փարտիայի։

— Լավ, ուրեմն ճաշենք միասին։

— Ճաշե՞նք։ Ես առանձին ոչինչ չունեմ անելու, միայն մի երկու խոսք ասել, հարցնել, իսկ հետո կզրուցենք։

— Այդ երկու խոսքն ասա հենց հիմա, իսկ զրույցը ճաշի ժամանակ։

— Ահա թե ի՞նչ երկու խոսք,— ասաց Լևինը,— թեպետ առանձին ոչինչ։

Նրա դեմքը հանկարծ ստացավ չար արտահայտություն, որ առաջանում էր իր ամոթխածությունը հաղթահարելու ջանքից։

— Ի՞նչ են անում Շչերբացկիները։ Փոփոխություն չկա՞,— հարցրեց նա։

Ստեպան Արկադևիչը, որ վաղուց գիտեր, թե Լևինը սիրահարված է իր քենի Կիտիին, հազիվ նկատելի ժպտաց, և նրա աչքերը ուրախ փայլեցին։

— Դու ասիր երկու խոսք, իսկ ես երկու խոսքով պատասխանել չեմ կարող, որովհետև... ներիր, մի րոպե...

Ներս մտավ քարտուղարը, մտերմական հարգանքով և որոշ, բոլոր քարտուղարներին հատուկ՝ գործերն իմանալու մեջ իր պետին գերազանցելու համեստ գիտակցությամբ, գլուխները ձեռքին մոտեցավ Օբլոնսկուն ու սկսեց հարցի ձևով բացատրել ինչ-որ դժվարություն։ Ստեպան Արկադևիչը, առանց մինչև վերջ լսելու, փաղաքշանքով դրեց իր ձեռքը քարտուղարի թևի վրա։

— Ո՛չ, արեք այնպես, ինչպես ասում էի ես,— ասաց նա, ժպիտով մեղմացնելով նկատողությունը և կարճ բացատրելով, թե ինչպե՛ս է ինքը հասկանում գործը, ետ հրեց գրությունները և ասաց,— այդպես էլ արեք, Զախար Նիկիտիչ, խնդրեմ այդպես։

Ամոթահար եղած քարտուղարը հեռացավ։ Լևինը, որ քարտուղարի հետ տեղի ունեցած խորհրդակցության ժամանակ բոլորովին ուշքի եկավ իր շփոթությունից, կանգնել էր, երկու ձեռքով հենված աթոռին, և նրա դեմքին կար ծաղրական արտահայտություն։

— Չեմ հասկանում, չեմ հասկանում,— ասաց նա։

— Ի՞նչը չես հասկանում,— նույնպես ուրախ ժպտալով և

գլանակը հանելով, հարցրեց Օբլոնսկին։ Նա սպասում էր Լևինի կողմից որևէ տարօրինակ քայլի։

— Չեմ հասկանում, թե ի՞նչ եք անում դուք,— ասաց Լևինը, վեր քաշելով ուսերը։— Ինչպե՞ս կարող ես դու լրջությամբ անել այդ։

— Ինչո՞ւ։

— Որովհետև... անելու բան չկա։

— Դու այդպես ես կարծում, մինչդեռ մենք ծանրաբեռնված ենք գործով։

— Թղթե գործով։ Դե՛, իհարկե, դու դրա համար ձիրք ունես,— ավելացրեց Լևինը։

— Այսինքն՝ դու կարծում ես, որ մի բան պակա՞ս է իմ մեջ։

— Գուցե և այո՛,— ասաց Լևինը։— Բայց և այնպես ես հիանում եմ քո վեհությամբ ու պարծենում եմ, որ իմ բարեկամն այդպիսի մեծ մարդ է։ Սակայն դու չպատասխանեցիր իմ հարցին,— ավելացրեց նա, հուսահատական ջանքով ուղիղ նայելով Օբլոնսկու աչքերին։

— Դե լավ, լավ։ Քիչ էլ սպասիր, դու ևս կհանդես դրան։ Լավ է, քանի որ դու ունես երեք հազար դեսյատին Կարազինի գավառում, հետո այնպիսի մկաններ ու թարմություն, ինչպես տասներկու տարեկան աղջիկը,— սակայն դո՛ւ էլ կգաս մեզ մոտ։ Իսկ այն, ինչի մասին հարցնում էիր դու, փոփոխություն չկա, բայց ափսոս, որ դու այդքան ժամանակ չես եղել։

— Ի՞նչ կա որ,— հարցրեց Լևինը վախեցած։

— Ոչի՛նչ,— պատասխանեց Օբլոնսկին։— Կխոսենք։ Բայց դու իսկապես ինչի՞ համար ես եկել։

— Ա՜խ, դրա մասին նույնպես կխոսենք հետո,— նորից մինչև ականջները կարմրելով ասաց Լևինը։

— Դե լավ։ Հասկանալի է,— ասաց Ստեպան Արկադևիչը։— Գիտես ի՞նչ. ես քեզ կկանչեի ինձ մոտ, բայց կինս այնքան էլ առողջ չէ։ Ահա՛ թե ինչ, եթե ուզում ես նրանց տեսնել, նրանք հավանորեն այսօր ժամը չորսից մինչև հինգը կենդանաբանական այգում կլինեն։ Կիտին սահում է շմուշկներով։ Գնա այնտեղ, իսկ ես կգամ քո ետևից, և միասին կերթանք մի տեղ ճաշելու։

— Հրաշալի։ Ուրեմն ցտեսություն։

— Տե՛ս, չմոռանաս, հա՞, ես հո գիտեմ քեզ, դու կարող ես մոռանալ կամ հանկարծ գյուղ գնալ,— ծիծաղելով ձայնեց Ստեպան Արկադևիչը։

— Ո՛չ, ճիշտ եմ ասում։

Եվ հիշելով, որ ինքը մոռացավ հրաժեշտ տալ Օբլոնսկու օգնականներին, որոնց մասին մտաբերեց միայն այն ժամանակ, երբ արդեն դռան մեջ էր,— Լևինը դուրս գնաց առանձնասենյակից։

— Պետք է շատ եռանդուն պարոն լինի,— ասաց Գրինևիչը, երբ Լևինը հեռացավ։

— Այո՛, սիրելիս,— ասաց Ստեպան Արկադևիչը, օրորելով գլուխը,— ահա՞ երջանիկ մարդ։ Երեք հազար դեսյատին Կարազինի գավառում, ամեն բան դեռ առջևն է, և որքան թարմություն։ Մեզ պես չէ։

Ինչո՞ւ եք գանգատվում, Ստեպան Արկադևիչ։

— Է՞հ, վատ է, վատ,— ասաց Ստեպան Արկադևիչը ծանր հառաչելով։

VI

Երբ Օբլոնսկին հարցրեց Լևինին, թե իսկապես ինչի՞ համար է նա եկել, Լևինը կարմրեց ու բարկացավ իր վրա, որ այդպես կարմրեց, որովհետև չկարողացավ պատասխանել նրան՝ «եկել եմ առաջարկություն անելու քո քեռուն», թեև եկել էր միայն դրա համար։

Լևինների և Շչերբացկիների տները Մոսկվայի հին ազնվական տներ էին ու միշտ մտերիմ և բարեկամական հարաբերություն ունեին իրար հետ։ Այդ կապն ավելի ևս ամրացավ Լևինի ուսանողության ժամանակ։ Նա երիտասարդ իշխան Շչերբացկու՝ Դոլլիի և Կիտիի եղբոր հետ միասին պատրաստվում էր և նրա հետ միասին մտավ համալսարան։ Այդ ժամանակ Լևինը հաճախ էր լինում Շչերբացկիների մոտ և սիրահարվեց նրանց տան վրա։ Որքան էլ դա տարօրինակ թվա, բայց Կոնստանտին Լևինը սիրահարվել էր հենց տանը, ընտանիքին, մանավանդ Շչերբացկիների ընտանիքի կանացի բաժնին։ Ինքը, Լևինը, չէր հիշում իր մորը, իսկ նրա միակ քույրը մեծ էր իրենից, այնպես որ Շչերբացկիների տունը նա առաջին անգամ տեսավ հին ազնվական, կրթված և ազնիվ ընտանիքի այն միջավայրը, որից նա զրկվել էր հոր ու մոր մահվամբ։ Այդ ընտանիքի բոլոր անդամները, մանավանդ կանացի բաժինը, պատկերանում էին նրան ծածկված ինչ-որ խորհրդավորությամբ, բանաստեղծական քողով, և նա ո՛չ միայն չէր տեսնում նրանց մեջ որևէ պակասություն, այլև նրանց ծածկող այդ բանաստեղծական քողի տակ ենթադրում էր ամենավեհ զգացումներ և ամեն տեսակի կատարելություններ։ Ինչի՞ համար այդ երեք օրիորդները պետք է օր ընդ մեջ խոսեին ֆրանսերեն և անգլերեն. ինչի՞ համար նրանք որոշ ժամերի փոխ առ փոխ նվագում էին դաշնամուր, որի հնչյունները լսվում էին վերևում՝ նրանց եղբոր սենյակում, որտեղ պարապում էին ուսանողները. ինչի՞ համար գալիս էին ֆրանսիական գրականության, երաժշտության, նկարչության, պարերի ուսուցիչները. ինչի՞ համար որոշ ժամերի երեք օրիորդները m-lle Linon-ի հետ կառք նստած մոտենում էին Տվերսկոյ բուլվարին, իրենց ատլաս մուշտակներով՝ Դոլլին երկար, Նատալին՝ կիսաերկար, Կիտին բոլորովին կարճ մուշտակով, այնպես որ վայելչակազմ ոտքերը, կիպ ձգված կարմիր չուլկիներով, տեսանելի էին ամենքի համար, ինչի՞ համար նրանք, սպասավորի ուղեկցությամբ, գդակի ճակատին ոսկե կոկարդ, պետք է զբոսնեին Տվերսկոյ բուլվարում. այս բոլորը և ուրիշ շատ բան, որ արվում էր նրանց խորհրդավոր աշխարհում, նա չէր հասկանում, բայց գիտեր, թե ամեն բան, ի՛նչ արվում էր այնտեղ, գեղեցիկ էր, և սիրահարվել էր կատարվածի հենց այդ խորհրդավորությանը։

Իր ուսանողության ժամանակ քիչ մնաց, որ Լևինը սիրահարվեր մեծ քրոջը՝ Դոլլիին, բայց Դոլլիին շուտով ամուսնացրին Օբլոնսկու հետ։ Հետո նա սկսեց սիրահարվել երկրորդին։ Նա, կարծես, զգում էր, թե պետք է, որ ինքը սիրահարվի քույրերից մեկին, բայց չէր կարողանում հասկանալ՝ հատկապես որի՛ն։ Բայց Նատալին էլ, հենց որ սկսեց երևալ բարձր հասարակության մեջ, ամուսնացավ դիվանագետ Լվովի հետ։ Կիտին դեռ երեխա էր, երբ Լևինն ավարտեց համալսարանը։ Երիտասարդ Շչերբացկին նավատորմ մտնելուց հետո խեղդվեց Բալթիկ ծովում, և Լևինի կապը Շչերբացկիների հետ դարձավ ավելի հազվադեպ, չնայած նրա և Օբլոնսկու բարեկամությա-

նը։ Բայց երբ ներկա տարում, ձմեռվա սկզբին գյուղում մի տարի մնալուց հետո Լևինը եկավ Մոսկվա և տեսավ Շչերբացկիներին, նա հասկացավ, թե երեք քույրերից որի՞ն էր վիճակված իրեն իրոք սիրահարվել։

Թվում էր, թե չկար ավելի պարզ բան, քան այն, որ ինքը՝ լավ տոհմից, ավելի շուտ հարուստ, քան աղքատ մարդ, երեսուներկու տարեկան՝ առաջարկություն աներ իշխանազնուհի Շչերբացկայային. ամենայն հավանականությամբ, նրան իսկույն կհամարեին լավ փեսացու։ Բայց Լևինը սիրահարված էր, այդ իսկ պատճառով նրան թվում էր, թե Կիտին այնպիսի կատարելություն է ամեն տեսակետից, այնպիսի գերերկրային էակ է, իսկ ինքը երկրային ստոր արարած, որ մտածել անգամ չէր կարելի, թե ուրիշները և ինքը՝ Կիտին, արժանի կհամարեին նրան։

Մնալով Մոսկվայում, ինչպես խելահեղ տագնապում, երկու ամիս, համարյա ամեն օր տեսնվելով Կիտիի հետ բարձր հասարակության մեջ, ուր սկսեց նա հաճախել, որպեսզի հանդիպի նրան, նա հանկարծ վճռեց, որ դա լինելու բան չէ, և գնաց գյուղ։

Լևինի համոզմունքը, թե գա լինելու բան չէ, հիմնված էր այն ենթադրության վրա, որ ծնողների աչքին ինքը անձեռնտու, անարժան փեսացու է սքանչելի Կիտիի համար, իսկ Կիտին չի կարող սիրել իրեն։ Ծնողների աչքին նա չուներ սովորական, որոշակի ոչ մի գործունեություն ու դիրք բարձր հասարակության մեջ, մինչդեռ նրա ընկերներն այժմ, երբ նա երեսուներկու տարեկան էր, գնդապետներ էին և ֆլիգել-ադյուտանտ, ոմանք պրոֆեսոր, ոմանք բանկի և երկաթուղիների դիրեկտոր կամ ատյանի նախագահ, ինչպես Օբլոնսկին էր, իսկ նա (նա շատ լավ գիտեր, թե ինքն ինչպե՞ս պիտի թվա ուրիշներին) կալվածատեր էր, որ զբաղվում էր կովաբուծությամբ, լոահավեր, կոցարներ սպանելով ու շենքեր կառուցելով, այսինքն՝ ապաշնորհ երիտասարդ, որից բան դուրս չի գա և որն անում է այն, ինչ անում են, հասարակության հասկացողությամբ, բոլորովին անպետք մարդիկ։

Իսկ խորհրդավոր, սքանչելի Կիտին չէր կարող սիրել այդպիսի տգեղ մարդուչ, ինչպիսին նա համարում էր իրեն և, որ գլխավորն է, այդպիսի հասարակ, ոչնչով աչքի չընկնող մարդու։ Բացի դրանից, նրա առաջվա վերաբերմունքը Կիտիին՝ չափահաս մարդու վերաբերմունք երեխային, Կիտիի եղբոր հետ եղած բարեկամության հետևանքով, նրան մի նոր արգելք էր թվում սիրո համար։ Տգեղ, բարի մարդուն, ինչպիսին նա համարում էր իրեն, կարելի է, ենթադրում էր նա, սիրել որպես բարեկամի, բայց որպեսզի անհատը սիրվի այն սիրով, որով նա սիրում էր Կիտիին, պետք է լինի գեղեցիկ տղամարդ, իսկ որ գլխավորն է՝ առանձնահատուկ մարդ։

Լևինը լսել էր, որ կանայք հաճախ սիրում են տգեղ, հասարակ մարդկանց, բայց չէր հավատում դրան, որովհետև դատում էր իր զգացումով, այսինքն՝ ինքը կարող էր սիրել միայն գեղեցիկ, խորհրդավոր և առանձնաշնորհ կանանց։

Բայց երկու ամիս մենակ անցկացնելով գյուղում, Լևինը համոզվեց, որ դա այն սիրահարություններից չէր, ինչ զգացել էր նա առաջին երիտասարդության ժամանակ, որ այդ զգացումը ո՛չ մի բոպե հանդիստ չէր տալիս իրեն, որ ինքը չի կարող ապրել առանց վճռելու այս հարցը. Կիտին կլինի՞, թե չի լինի իր կինը, և որ իր հուսահատությունն առաջանում էր միայն իր երևակայությունից, որ ինքը ոչ մի ապացույց չունի, թե կմերժեն իրեն։ Եվ նա այժմ եկել է Մոսկվա՝ հաստատ որոշումով՝ առաջարկություն անել և ամուսնանալ, եթե ընդունվի իր առաջարկությունը։ Կամ... նա չէր կարողանում մտածել այն մասին, թե ի՞նչ կպատահի իր հետ, եթե մերժեն։

VII

Առավոտյան գնացքով գալով Մոսկվա, Լևինն իջավ մոր կողմից իր մեծ եղբոր՝ Կոզնիշևի մոտ և հագուստը փոխելուց հետո մտավ նրա առանձնասենյակը, մտադրվելով անմիջապես պատմել նրան, թե ինչի՞ համար է եկել ու խնդրել նրա խորհուրդը, բայց եղբայրը մենակ չէր։ Նրա մոտ նստած էր փիլիսոփայության հայտնի պրոֆեսորը, որը եկել էր Խարկովից հատկապես նրա համար, որ պարզաբանի նրանց միջև ծագած թյուրիմացությունը փիլիսոփայական չափազանց կարևոր մի հարցի առթիվ։ Պրոֆեսորը տաք բանակռիվ էր մղում մատերիալիստների դեմ, իսկ Սերգեյ Կոզնիշևը հետաքրքրությամբ հետևում էր այդ բանավեճին և կարդալով պրոֆեսորի

վերջին հոդվածը, նամակով գրեց նրան իր առարկություններ-ը. նա հանդիմանում էր պրոֆեսորին՝ մատերիալիստներին նրա արած խիստ մեծ զիջումների համար։ Եվ պրոֆեսորն անմիջապես եկավ, որպեսզի համաձայնության հանգի։ Խոսքը վերաբերում էր մոդա դարձած մի հարցի. սահման կա՞ արդյոք մարդու գործունեության մեջ հոգեբանական ու բնախոսական երևույթների միջև և ո՞րտեղ է այդ սահմանը։

Սերգեյ Իվանովիչը եղբորն ընդունեց ամենքի համար սովորական իր սիրալիր-սառը ժպիտով և ծանոթացնելով պրոֆեսորի հետ, շարունակեց խոսակցությունը։

Նեղ ճակատով, ակնոցավոր փոքրիկ մարդը մի վայրկյան ընդհատեց խոսակցությունը, որ բարևի, և շարունակեց իր խոսքը, ուշադրություն չդարձնելով Լևինի վրա։ Լևինը նստել էր սպասողական, թե երբ կհեռանա պրոֆեսորը, բայց շուտով հետաքրքրվեց խոսակցության նյութով։

Լևինը ամսագրերում պատահել էր այն հոդվածներին, որոնց մասին խոսվում էր այժմ, և կարդացել էր, հետաքրքրվելով նրանցով, որպես իրեն ծանոթ բնագիտության հիմունքների զարգացումով (նա բնագիտություն էր սովորել համալսարանում)։ Բայց երբեք գիտական այդ հետևությունները մարդու՝ որպես կենդանու ծագման մասին, ռեֆլեքսների, կենսաբանության ու սոցիոլոգիայի մասին, չէր մոտեցել իր համար կյանքի ու մահվան նշանակության վերաբերյալ եղած այն հարցերին, որ վերջերս ավելի ու ավելի հաճախ էին ծագում նրա գլխում։

Լսելով եղբոր խոսակցությունը պրոֆեսորի հետ, Լևինը նկատում էր, որ նրանք գիտական հարցերը կապում էին մտերմական հարցերի հետ, մի քանի անգամ համարյա մոտեցան այդ հարցերին, բայց ամեն անգամ հենց որ մոտենում էին ամենագլխավորին, ինչպես թվում էր նրան. իսկույն շտապ հեռանում էին և նորից խորասուզվում նուրբ ստորաբաժանումների, վերապահումների, մեջբերումների, ակնարկների, հեղինակությունների վկայակոչման բնաշխարհը, և նա դժվարությամբ էր հասկանում, թե ինչի՞ մասին է խոսքը։

— Ես չեմ կարող ընդունել,— ասաց Սերգեյ Իվանովիչը իրեն հատուկ արտահայտության սովորական պարզությամբ ու հստակությամբ և նրբագեղ առոգանությամբ,— ես չեմ կարող ոչ մի դեպքում համաձայնել Կեյսին, որ իմ ամբողջ պատկերացումն արտաքին աշխարհի մասին բխեր տպավորություններից։ Կեցության ամենահիմնական հասկացողությունը ես չեմ ստացել զգացողության միջոցով, որովհետև չկա հատուկ օրգան այդ հասկացողությունը տալու համար։

— Այո՛, բայց նրանք՝ և՛ Վուրստը, և՛ Քնաուստը, և՛ Պրիպասովը ձեզ կպատասխանեն, որ կեցության ձեր գիտակցությունը բխում է բոլոր զգացողությունների համակցությունից, որ կեցության այդ գիտակցությունը հետևանք է զգացողությունների։ Վուրստը նույնիսկ ուղղակի ասում է, թե քանի որ չկա զգացողություն, չկա և կեցության հասկացողություն։

— Ես կասեմ հակառակը,— սկսեց Սերգեյ Իվանովիչը։

Բայց այստեղ Լևինին էլի թվաց, որ նրանք, մոտենալով ամենագլխավորին, նորից հեռանում են, և նա սիրտ արավ առաջարկել պրոֆեսորին մի հարց։

— Ասել կուզի, եթե իմ զգացումները ոչնչացել են, եթե իմ մարմինը մեռնի, ուրեմն ո՛չ մի գոյություն այլևս չի՞ կարող լինել,— հարցրեց նա։

Պրոֆեսորը սրտնեղությամբ և, կարծես, ընդհատումից առաջացած մտավոր ցավով նայեց տարօրինակ հարցատուին, որ ավելի նման էր բուռլակի, քան փիլիսոփայի, և աչքերը գցեց Սերգեյ Իվանովիչի վրա, ասես, հարցնելով. ի՞նչ խոսես այստեղ։ Բայց Սերգեյ Իվանովիչը, որ բնավ այնպիսի ջանքով ու միակողմանիությամբ չէր խոսում, ինչպես խոսում էր պրոֆեսորը, և որի գլխի մեջ ազատ տեղ էր մնում՝ պատասխանելու. և՛ պրոֆեսորին, և՛ միաժամանակ հասկանալու այն պարզ ու բնական հայեցակետը, որով Լևինը հարց տվեց, ժպտաց և ասաց.

— Մենք դեռ իրավունք չունենք լուծելու այդ հարցը...

— Տվյալներ չունենք,— հաստատեց պրոֆեսորը և շարունակեց իր փաստարկները։— Ո՛չ,— ասում էր նա,— ես նշում եմ այն, որ եթե, ինչպես ուղղակի ասում է Պրիպասովը, զգացողության հիմքում դրված է տպավորությունը, ապա մենք պետք է խիստ կերպով տարբերենք իրարից այդ երկու հասկացողությունը։

Լևինն այլևս չէր լսում և սպասում էր, թե ե՞րբ կմեկնի պրոֆեսորը։

VIII

Երբ պրոֆեսորը մեկնեց, Սերգեյ Իվանովիչը դիմեց եղբորը։

— Շատ ուրախ եմ, որ եկել ես։ Երկա՞ր ժամանակով։ Ինչպե՞ս է տնտեսությունը։

Լևինը գիտեր, որ տնտեսությունը շատ չի հետաքրքրում իր մեծ եղբորը և որ նա իրեն լոկ գիջում անելու համար հարցրեց դրա մասին, այդ պատճառով պատասխանեց միայն ցորենը ծախելու և դրամի մասին։

Լևինն ուզում էր եղբորն ասել իր ամուսնանալու դիտավորության մասին և խնդրել նրա խորհուրդը, նա նույնիսկ հաստատ վճռել էր այդ, բայց երբ տեսավ եղբորը, լսեց նրա խոսակցությունը պրոֆեսորի հետ, երբ հետո լսեց նրա այդ ակամա հովանավորական տոնը, որով եղբայրը հարցուփորձ էր անում տնտեսական գործերի մասին (նրանց մայրական կալվածքը բաժանված չէր, և Լևինը կառավարում էր երկու մասերն էլ), Լևինն զգաց, որ չի կարող, չգիտես ինչո՞ւ, պարզ խոսել եղբոր հետ իր ամուսնանալու որոշման մասին։ Նա զգում էր, որ իր եղբայրն այնպես չի նայի դրան, ինչպես կուզենար ինքը։

— Հը, ի՞նչ կա ձեզանում, զեմստվոն ինչպե՞ս է,— հարցրեց Սերգեյ Իվանովիչը, որը շատ հետաքրքրվում էր զեմստվոյով և մեծ նշանակություն էր վերագրում նրան։

— Ճիշտն ասած՝ չգիտեմ...

— Ինչպե՞ս... Չէ՞ որ դու վարչության անդամ ես։

— Ոչ, այլևս անդամ չեմ. ես հեռացա,— ասաց Լևինը,— և այլևս չեմ գնում ժողովների։

— Ափսո՞ս,— մարմաջեց Սերգեյ Իվանովիչը, մռայլվելով։

Լևինն իրեն արդարացնելու նպատակով սկսեց պատմել, թե ի՞նչ էր կատարվում իր գավառում՝ ժողովներին։

— Ահա դա միշտ այդպես է,— ընդհատեց նրան Սերգեյ Իվանովիչը։ — Մենք, ռուսներս, միշտ այդպես ենք։ Գուցե դա մեր լավ գիծն է, մեր թերությունները տեսնելու հատկությունը, բայց մենք չափազանցնում ենք, մենք մխիթարվում ենք այն հեգնանքով, որ միշտ պատրաստ է մեր լեզվի ծայրին։ Ես քեզ կասեմ միայն, տե՛ր այդ իրավունքները, ինչպիսին ունեն մեր զեմստվոյական հիմնարկները, եվրոպական մի ուրիշ ժողովրդի,— գերմանացիք և անգլիացիք դրանցից կմշակեին ազատություն, իսկ մենք ահա ծիծաղում ենք միայն։

— Ի՞նչ արած,— հանցավորի պես ասաց Լևինը։— Դա իմ վերջին փորձն էր։ Եվ ես ամբողջ հոգով ջանում էի։ Չեմ կարող։ Անընդունակ եմ։

— Անընդունակ չես,— ասաց Սերգեյ Իվանովիչը,— այլ այնպես չես նայում գործին։

— Գուցե,— տխուր պատասխանեց Լևինը։

— Գիտե՞ս, Նիկոլայ եղբայրը նորից այստեղ է։

Նիկոլայ եղբայրը Կոնստանտին Լևինի հարազատ ու մեծ եղբայրն էր և Սերգեյ Իվանովիչի եղբայրը՝ մոր կողմից, կործանված, կորած մի մարդ, որ վատնել էր իր կարողության մեծ մասը, շփվում էր ամենատարօրինակ ու վատ հասարակության հետ և գժտվել էր եղբայրների հետ։

— Ի՞նչ ես ասում,— սոսկումով բացականչեց Լևինը։— Որտեղի՞ց գիտես։

— Պրոկոֆին տեսել էր նրան փողոցում։

— Այստե՞ղ, Մոսկվայո՞ւմ։ Որտե՞ղ է նա, գիտե՞ս դու։— Լևինը բարձրացավ աթոռից, կարծես պատրաստվելով անմիջապես գնալ։

— Ափսոսում եմ, որ ասացի քեզ,— ասաց Սերգեյ Իվանովիչը՝ ճոճելով գլուխը փոքր եղբոր հուզմունքի համար։— Ես մարդ ուղարկեցի իմանալու, թե ո՞րտեղ է ապրում նա, ուղարկեցի նրան նաև Տրուբինին տված նրա մուրհակը, որով պահանջվող գումարը վճարել էի։ Ահա թե ի՞նչ պատասխանեց նա ինձ։

Եվ Սերգեյ Իվանովիչը պրես-պապյեի տակից հանեց մի տոմս ու տվեց եղբորը։

Լևինը կարդաց տարօրինակ, իրեն հարազատ ձեռագրով գրվածը. «Խոնարհաբար խնդրում եմ՝ հանգիստ թողնել ինձ։ Դա միակ բանն է, որ ես պահանջում եմ իմ սիրալիր եղբայրներից։ Նիկոլայ Լևին»։

Լևինը կարդաց այդ և, առանց բարձրացնելու գլուխը, տոմսը ձեռքին կանգնել էր Սերգեյ Իվանովիչի դիմաց։

Նրա հոգում պայքարում էին դժբախտ եղբոր մասին այժմ մոռանալու ցանկությունը և այն գիտակցությունը, որ վատ կլիներ դա։

— Հավանորեն նա ուզում է վիրավորել ինձ,— շարունակեց Սերգեյ Իվանովիչը,— բայց ինձ վիրավորել չի կարող, և ես ամբողջ սրտով կուզենայի օգնել նրան, սակայն գիտեմ, որ դա անկարելի է։

— Այո՛, այո՛,— կրկնում էր Լևինը։— Ես հասկանում ու գնահատում եմ քո վերաբերմունքը նրան. ինչ էլ լինի, ես կգնամ նրա մոտ։

— Եթե ուզում ես, գնա՛, բայց ես խորհուրդ չեմ տալիս,— ասաց Սերգեյ Իվանովիչը։— Այսինքն, իմ վերաբերյալ՝ ես դրանից չեմ վախենում. նա քեզ չի գժտեցնի ինձ հետ. սակայն քեզ համար խորհուրդ եմ տալիս՝ լավ է չգնաս։ Չի՛ կարելի օգնել։ Թեպետ արա՝ ինչպես ուզում ես։

— Գուցե և չի կարելի օգնել, բայց ես զգում եմ, մանավանդ այս րոպեին. դա, իհարկե, այլ բան է. ես զգում եմ, որ չեմ կարող հանգիստ լինել։

— Է՛հ, դա ես չեմ հասկանում,— ասաց Սերգեյ Իվանովիչը։— Մի բան միայն հասկանում եմ,— ավելացրեց նա,— որ դա հեզության տված դասն է։ Ես այլ կերպ և ավելի ներողամտաբար սկսեցի նայել այն բանին, որ կոչվում է ստորություն, մանավանդ նրանից հետո, երբ Նիկոլայ եղբայրը դարձավ այն, ինչ է նա այժմ... Դու գիտե՞ս, թե ինչ է արել նա...

— Ա՜խ, դա սոսկալի է, սոսկալի,— կրկնում էր Լևինը։

Սերգեյ Իվանովիչի սպասավորից ստանալով եղբոր հասցեն, Լևինը անմիջապես պատրաստվեց գնալ նրա մոտ, բայց միտք արավ ու վճռեց հետաձգել մինչև երեկո։ Ամենից առաջ, հոգեկան հանգիստ ունենալու համար պետք էր վճռել այն գործը, որի համար նա եկել էր Մոսկվա։ Եղբոր մոտից Լևինը գնաց Օբլոնսկու ատյանը և իմանալով Շչերբացկիների մասին, կառքով սլացավ այնտեղ, որտեղ նա կարող էր գտնել Կիտիին, ինչպես ասացին նրան։

IX

Ժամը չորսին, զգալով իր բաբախուն սիրտը, Լևինը կառքից իջավ կենդանաբանական այգու մոտ և շավիղով գնաց դեպի լեռներն ու սահարանը, հաստատ իմանալով, որ Կիտիին կգտնի այնտեղ, որովհետև Շչերբացկիների կառեթը տեսավ գլխավոր մուտքի մոտ։

Պարզ, ցուրտ օր էր։ Գլխավոր մուտքի մոտ շարեշար կանգնել էին կառեթներ, սահնակներ, հասարակ կառապաններ, ժանդարմներ։ Մաքուր հագնված մարդիկ, պայծառ արևի տակ փայլելով իրենց գլխարկներով, վխտում էին մուտքի մոտ ու մաքրած շավիղների վրա՝ ձեղուններով քանդակած ռուսական տնակների միջև. այգու վաղեմի, գանգրակատար կեչիները, ձյան ծանրությունից կախ ընկած ոստերով, թվում էր, թե պճնվել են տոնական նոր շուրջառներով։

Նա գնում էր շավիղով դեպի սահարանը և ասում էր ինքն իրեն. «Պետք է չհուզվել, պետք է հանգստանալ։ Ինչի՞ մասին։ Ի՞նչ է եղել քեզ։ Լռի՛ր, տխմար»,— դիմում էր նա իր սրտին։ Եվ որքան ավելի էր աշխատում հանգստացնել իրեն, այնքան ավելի էր հուզվում, շունչը կտրվում։ Պատահեց մի ծանոթ և ձայնեց նրան, բայց Լևինը նույնիսկ չճանաչեց, թե ո՞վ էր։ Լևինը մոտեցավ սարերին, որոնց վրա շաչում էին իջնող ու բարձրացող սահնակների շղթաները, դղրդում էին գլորվող սահնակները և հնչում էին ուրախ ձայներ։ Նա էլի մի քանի քայլ արեց, և նրա առաջ բացվեց սահարանը, ու բոլոր սահողների մեջ անմիջապես ճանաչեց Կիտիին։

Սիրտը համակող ուրախությունից ու վախից Լևինն իմացավ, որ Կիտին այդտեղ է։ Կիտին կանգնած խոսում էր մի տիկնոջ հետ՝ սահարանի հակադիր ծայրին։ Կարծես առանձին ոչինչ չկար՝ ո՛չ նրա զգեստի, ո՛չ էլ կեցվածքի մեջ, բայց Լևինի համար հեշտ էր նրան ճանաչել ամբոխի մեջ, ինչպես վարդի թուփը եղինջի մեջ։ Ամեն բան լուսավորվում էր Կիտիով։ Նա մի ժպիտ էր, որ ամեն ինչ լուսաշողում էր շուրջը։ «Մի՞թե ես կարող եմ իջնել այնտեղ՝ սառցի վրա, մոտենալ նրանց», մտածեց Լևինը։ Այն տեղը, որտեղ գտնվում էր Կիտին, թվում էր նրան անմատչելի սրբություն, և կար մի րոպե, երբ նա քիչ մնաց հեռանար, այնպես սարսափեց։ Լևինը պետք է ուժ գործադրեր իր վրա և դատեր, որ Կիտիի շուրջը պտտվում են ամեն տեսակ մարդիկ, որ ինքն էլ կարող է գնալ այնտեղ՝ սահելու չմուշկներով։ Նա իջավ ներքև, խուսափելով Կիտիին երկար նայելուց, ինչպես արևին, բայց առանց նայելու էլ տեսնում էր նրան, ինչպես արևը։

Շաբաթվա այդ օրը և օրվա այդ ժամին սառույցի վրա հավաքվում էին միևնույն շրջանի մարդիկ, ամենքն էլ իրար ծանոթ։ Այստեղ կային և՛ սահելու վարպետներ, որ փայլում էին իրենց արվեստով, և՛ անվաթազմոցներով սովորողներ՝ Երկչոտ, անճարպիկ շարժումներով, և՛ մանուկներ, և՛ ծեր մարդիկ, որ սահում էին առողջապահական նպատակներով։ Ամենքը Լևինին թվում էին ընտրյալ երջանիկներ, որովհետև գտնվում էին այդտեղ՝ Կիտիին մոտիկ։ Թվում էր, թե բոլոր սահողները կատարյալ անտարբերությամբ վազում հասնում էին նրան, անցնում նրանից, նույնիսկ խոսում էին հետը և նրանից բոլորովին անկախ ուրախանում էին, օգտվելով հիանալի սառցից ու լավ եղանակից։

Նիկոլայ Շչերբացկին, Կիտիի հորեղբոր որդին, կարճ ժակետով և նեղ շալվարով, նստել էր նստարանի վրա չմուշկները ոտքերին, և տեսնելով Լևինին, ձայնեց նրան.

— Ա՛, ռուսական առաջին չմշկորդ։ Վաղո՞ւց է։ Հիանալի սառույց է, դե՛, չմուշկներ հագեք։

— Ես չմուշկներ չունեմ,— պատասխանեց Լևինը, զարմացած այս համարձակության ու չքաշվողության վրա՝ Կիտիի ներկայությամբ, ոչ մի վայրկյան աչքից չկորցնելով նրան, թեև չէր նայում վրան։ Նա զգում էր, որ արևը մոտենում է իրեն։ Կիտին անկյունումն էր և բարձր կոշիկներով բարակ փոքրիկ ոտքերը հեռացրած իրարից, հավանորեն վախվրդխելով, սահում էր դեպի Լևինը։ Ձեռքերը սաստիկ թափահարելով ու գետնին կռացած մի տղա, ռուսական զգեստով, վազում էր, որ անցնի նրանից։ Կիտին սահում էր ո՛չ լիովին հաստատուն և ձեռքերը հանած ժապավենով կրծքին ամրացրած փոքրիկ մուֆտայից, պատրաստ էր պահել նրանց ու նայելով Լևինին, որին ճանաչեց, ժպտում էր նրան և իր վախենալու վրա։ Երբ շրջադարձը վերջացավ, Կիտին առաձիգ ոտքով թափ առավ և ուղղակի մոտեցավ Շչերբացկուն ու ձեռքով բռնելով նրան՝ ժպիտը դեմքին ողջունեց Լևինին, գլխի շարժումով։ Կիտին շատ ավելի գեղեցիկ էր, քան երևակայում էր նրան Լևինը։

Երբ Լևինը մտածում էր Կիտիի մասին, վառ պատկերացնում էր նրան ամբողջապես, մանավանդ մանկական պարզության ու բարության արտահայտությամբ և խարտյաշ մա-

զերով այդ սքանչելի փոքրիկ գլուխը, որ այնպես ազատ դրված էր նրա կուսական վայելչագեղ ուսերին։ Կիտիի դեմքի մանկական արտահայտությունը, միացած իրանի նուրբ գեղեցկության հետ, կազմում էին նրա առանձին հմայքը, որ լավ էր հիշում Լևինը, բայց այն, ինչը Կիտիի մեջ զարմանք էր պատճառում, որպես անակնկալ, նրա խոնարհ, հանգիստ ու շիտակ աչքերի արտահայտությունն էր, և մանավանդ նրա ժպիտը, որ Լևինին միշտ տանում էր թովիչ մի աշխարհ, որտեղ իրեն նա զգում էր սիրահուզված ու մեղմացած, որպիսի վիճակում նա հիշում էր իրեն իր վաղ մանկության հազվադեպ օրերին։

— Դուք վաղո՞ւց եք այստեղ,— ասաց Կիտին, ձեռքը տալով նրան։— Շնորհակալություն,— ավելացրեց նա, երբ Լևինը բարձրացրեց նրա թաշկինակը, որ վայր ընկավ մուֆտայից։

— Ե՞ս։ Ես նոր եմ եկել, երեկ... այսինքն՝ այսօր եմ եկել,— պատասխանեց Լևինը, հուզմունքից մեկեն չհասկանալով նրա հարցը։— Ես ուզում էի գալ ձեզ մոտ,— ասաց նա և իսկույն հիշելով, թե ինչպիսի դիտավորությամբ էր ինքը որոնում նրան, շփոթվեց ու կարմրեց։— Ես չգիտեի, որ դուք սահում եք չմուշկներով և սահում եք հիանալի։

Կիտին ուշադրությամբ նայեց Լևինին, կարծես կամենալով հասկանալ նրա հուզմունքի պատճառը։

— Պետք է գնահատել ձեր գովասանքը։ Այստեղ ավանդություն է մնացել այն մասին, որ դուք լավագույն չմշկորդ եք,— ասաց նա, սև ձեռնոցի մեջ սեղմված իր փոքրիկ ձեռքով թափ տալով ասեղնաձև եղյամը, որ ընկել էր մուֆտայի վրա։

— Այո՛, մի ժամանակ ես սահելու մոլություն ունեի. ուզում էի հասնել կատարելության։

— Կարծեմ դուք ամեն ինչ անում եք մոլությամբ,— ասաց Կիտին ժպտալով։ — Ես այնպես ուզում եմ նայել, թե ինչպե՞ս եք սահում դուք։ Դե՛, հագեք չմուշկներ և եկեք միասին սահենք։

«Միասին սահե՞լ։ Մի՞թե հնարավոր է դա», մտածեց Լևինը, նայելով նրան։

— Իսկույն կհագնեմ,— ասաց նա։

Եվ նա գնաց, որ չմուշկներ հագնի։

— Վաղուց է, ինչ չեք եղել մեզ մոտ, պարոն,— ասում

էր սահեցնողը, բռնելով Լևինի ոտքը և պտուտակելով կրունկը։—Ձեզնից հետո ո՛չ ոք չկա վարպետ՝ պարոններից։ Այդպես լա՞վ է,— ասում էր նա, ձիգ տալով փոկը։

— Լա՞վ է, լավ, շուտ արեք խնդրեմ,— պատասխանեց Լևինը, դժվարությամբ պահելով երջանկության ժպիտը, որը ակամա երևաց իր դեմքին։ «Այո՛,— մտածում էր նա,— ահա դա է կյանքը, ահա դա է երջանկությունը։ Միասին, ասաց Կիտին, եկեք, միասին սահենք։ Ասե՞մ նրան այժմ։ Բայց չէ՞ որ ես վախենում եմ ասել հենց այն պատճառով, որ երջանիկ եմ, երջանիկ՝ թեկուզ հույսով... Իսկ հետո՞... Սակայն չէ՞ որ ասել պե՛տք է, պե՛տք է, պե՛տք է։ Հեռո՛ւ թուլություն»։

Լևինը ոտքի կանգնեց, հանեց վերարկուն և վազվզելով խորդուբորդ սառցի վրա՝ տնակի մոտ, վազեց, դուրս եկավ հարթ սառցատեղը և սահեց առանց ջանքի, կարծես իր կամքի ուժով միայն արագացնելով, կրճատելով և ուղղություն տալով վազքին։ Նա մոտեցավ Կիտիին վեհերոտությամբ, բայց վերջինիս ժպիտը նորից հանգստացրեց նրան։

Կիտին ձեռքը տվեց նրան, ու նրանք սահեցին կողք-կողքի, ավելացնելով արագությունը և որքան ավելի արագ էին սահում, այնքան ավելի ամուր էր նա սեղմում Լևինի ձեռքը։

— Ձեզ հետ ես ավելի շուտ կսովորեի, ես մի տեսակ վստահ եմ ձեզ վրա,— ասաց Կիտին նրան։

— Ես էլ եմ վստահ ինձ վրա, երբ դուք հենվում եք ինձ,— պատասխանեց նա, բայց իսկույն վախեցավ իր ասածից ու կարմրեց։ Եվ իրոք, հենց որ նա արտասանեց այդ խոսքերը, հանկարծ, ինչպես արևը թաքնվի ամպերի տակ, Կիտիի դեմքը կորցրեց իր ամբողջ սիրալիրությունը, և Լևինը ճանաչեց նրա դեմքի իրեն ծանոթ խաղը, որ նշանակում էր մտքի ջանք. նրա ողորկ ճակատի վրա ակոսվեց մի կնճիռ։

— Արդյոք, անախորժ ոչի՞նչ չունեք։ Թեպետ ես իրավունք չունեմ հարցնելու,— արագ վրա բերեց Լևինը։

— Ինչո՞ւ... ո՛չ, ես անախորժ ոչինչ չունեմ,— պատասխանեց նա սառը և իսկույն ավելացրեց.— դուք չե՞ք տեսել m-lle Linon-ին։

— Դեռ ոչ։

— Գնացեք նրա մոտ, նա այնպես սիրում է ձեզ։

«Ի՞նչ բան է դա։ Ես վիրավորեցի նրան։ Տեր իմ, օգնի՛ր ինձ», մտածեց Լևինը և վազեց սպիտակ խոպոպիկներով պատավ ֆրանսուհու մոտ, որը նստած էր նստարանին։ Ժպտալով ու ցուցադրելով իր կեղծ ատամները, նա ընդունեց Լևինին, որպես հին բարեկամի։

— Այո՛, ահա աճում ենք,— ասաց նրան ֆրանսուհին, աչքերով նշելով Կիտիին,— և պառավում։ Tiny bear-ն[1] արդեն մեծացել է,— շարունակեց m-lle Linon-ը ժպտալով ու հիշեցրեց նրա կատակը երեք օրիորդների մասին, որոնց նա անվանում էր արջեր՝ անգլիական հեքիաթից։— Հիշո՞ւմ եք, պատահում էր, որ դուք այդպես էիք ասում։

Լևինը ամենևին չէր հիշում այդ, բայց արդեն տասը տարի էր, ինչ ֆրանսուհին ծիծաղում էր այդ կատակից ու սիրում էր այն։

— Դե՛հ, գնացեք, գնացեք սահեք։ Մեր Կիտին սկսել է լավ սահել, այնպես չէ՞։

Երբ Լևինը մոտ վազեց Կիտիին, նրա դեմքն այլևս խիստ չէր, աչքերը նայում էին նույնպես շիտակ ու սիրալիր, բայց Լևինին թվաց, որ նրա սիրալիրության մեջ կար առանձին, դիտավորյալ-հանդիստ տոն։ Եվ Լևինը տխրեց։ Խոսելով իր պառավ դաստիարակչուհու և նրա տարօրինակությունների մասին, Կիտին հետաքրքրվեց Լևինի կյանքով։

— Մի՞թե դուք չեք ձանձրանում ամեռը գյուղում,— հարցրեց նա։

— Ո՛չ, չեմ ձանձրանում, ես շատ զբաղված եմ,— ասաց Լևինը, զգալով, որ Կիտին ենթարկում է նրան իր հանգիստ տոնին, որից ինքն անզոր է դուրս գալու, ճիշտ այնպես, ինչպես էր ձմեռվա սկզբին։

— Դուք եկել եք երկա՞ր ժամանակով,— հարցրեց նրան Կիտին։

— Չգիտեմ,— պատասխանեց նա, առանց մտածելու, թե ի՞նչ է ասում։ Այն միտքը, որ եթե ինքը ենթարկվի Կիտիի խաղաղ բարեկամության այդ տոնին, ապա՝ նորից կմեկնի, ոչինչ չվճռած, անցավ նրա գլխով, և նա վրդովվեց։

— Ինչպե՞ս թե չգիտեք։

[1] Անգլերեն՝ արջուկ։

— Չգիտեմ։ Դա կախված է ձեզանից,— ասաց Լևինը և անմիջապես սարսափեց իր խոսքերից։

Արդյո՞ք Կիտին չլսեց նրա խոսքերը, թե՞ չուզեց լսել, բայց իբր թե սայթաքեց, երկու անգամ դոփեց փոքրիկ ոտքը և շտապ սահեց, հեռացավ նրանից։ Կիտին սահընթաց մոտեցավ m-lle Linon-ին, մի բան ասաց նրան ու դիմեց դեպի տնակը, որտեղ հանում էին չմուշկները։

«Աստված իմ, ի՞նչ արի ես։ Տեր իմ աստված, օգնի՛ր ինձ, ողորմեցրո՛ւ ինձ», ասում էր Լևինը, աղոթելով և միաժամանակ պահանջ զգալով ուժեղ շարժման, թափընթաց վազվզում էր, գծագրելով արտաքին ու ներքին շրջաններ։

Այդ ժամանակ երիտասարդներից մեկը, նոր չմշկորդներից լավագույնը, գլանակը բերանում, չմուշկներ հագած, դուրս եկավ սրճարանից և վազընթաց սլացավ աստիճաններով ներքև, դղրդալով ու ցատկոտելով։ Սրարշավ ցած իջավ նա և, նույնիսկ չփոխելով ձեռքերի ազատ դրությունը, սահեցնեց սառցի վրայով։

— Ա՜խ, դա նոր բան է, —ասաց Լևինը և անմիջապես վազեց վերև, որ անի այդ նոր բանը։

— Չշարդվեք, վարժանք է պետք,— բղավեց նրա ետևից Նիկոլայ Շչերբացկին։

Լևինը բարձրացավ աստիճանների վրա, թափ առավ վերևից որքան կարող էր ու սլացավ ցած, անսովոր շարժման մեջ հավասարակշռությունը պահպանելով ձեռքերով։ Ոտքը դեմ առավ վերջին աստիճանին, բայց ձեռքը թեթևակի դիպավ սառցին, ուժեղ մի շարժում արեց, հաղթահարեց ու ծիծաղելով սահեց հեռուն։

— «Լավն է, հիանալի,— մտածեց Կիտին այդ միջոցին, m-lle Linon-ի հետ դուրս գալով տնակից ու լուռ գուրգուրանքի ժպիտով նայելով Լևինին, որպես իր սիրելի եղբորը։— Եվ մի՞թե մեղավո՛ր եմ ես, մի՞թե ես մի վատ բան արի։ Նրանք ասում են՝ կոկետություն։ Ես գիտեմ, որ սիրում եմ ո՛չ նրան, բայց և այնպես, ես ինձ ուրախ եմ զգում նրա հետ, և նա այնպես լա՜վն է։ Միայն թե ինչո՞ւ նա ասաց այդ բանը»... մտածում էր Կիտին։

Նկատելով այդուց դուրս գնացող Կիտիին ու մորը, որ դիմավորեց աղջկան սանդուղքների վրա, Լևինը, կարմրկտած

արագ շարժումից հետո, կանգ առավ ու մտասուզվեց։ Նա չմուշկները հանեց և այգու դռան մոտ հասավ մորն ու աղջկան։

— Շատ ուրախ եմ ձեզ տեսնելուս,— ասաց իշխանուհին։— Հինգշաբթի օրերը, ինչպես միշտ, մենք ընդունում ենք։

— Ուրեմն, այսո՞ր։

— Շատ ուրախ կլինենք՝ տեսնելու ձեզ,— չոր ասաց իշխանուհին։

Այդ չոր տոնը վշտացրեց Կիտիին, և նա չկարողացավ զսպել իր ցանկությունը՝ մեղմել մոր սառնությունը։ Նա շուռ տվեց գլուխը և ժպտալով ասաց.

— Ցտեսություն։

Այդ ժամանակ Ստեպան Արկադևիչը, գլխարկը թեք դրած, փայլաշող դեմքով և աչքերով, հաղթանակ տարած ուրախ մարդու նման մտնում էր այգի։ Բայց մոտենալով զոքանչին, նա տխուր ու հանցավոր դեմքով ներողություն էր նրա հարցերին՝ Դոլլիի առողջության մասին։ Զոքանչի հետ մեղմ ու տխուր խոսելուց հետո նա կուրծքը դուրս ցցեց, ուղղեց և բռնեց Լևինի թևից։

— Հը՞, ի՞նչ կասես, գնա՞նք,— հարցրեց նա։— Ես ամբողջ ժամանակ մտածում էի քո մասին, և շատ, շատ ուրախ եմ, որ եկել ես,— ասաց նա, նշանակալից նայելով Լևինի աչքերին։

— Գնանք, գնանք,— պատասխանեց երջանիկ Լևինը, որ շարունակում էր անընդհատ լսել այն ձայնի հնչյունը, որն ասաց՝ ցտեսություն, և տեսնել այն ժպիտը, որով ասվեց այդ։

— «Անգլի՞ա», թե՝ «Էրմիտաժ»։

— Ինձ համար միևնույն է։

— Որ այդպես է, «Անգլիա»,— ասաց Ստեպան Արկադևիչը, ընտրելով «Անգլիան» այն պատճառով, որ «Անգլիայում» ավելի շատ էր պարտք, քան «Էրմիտաժում»։ Նա անհարմար էր համարում խուսափել այդ հյուրանոցից։ — Դու կառապան ունե՞ս։ Հրաշալի է, թե չէ՝ ես բաց թողի կառեթը։

Ամբողջ ճանապարհին մտերիմները լուռ էին։ Լևինը մտածում էր, թե ի՞նչ էր նշանակում արտահայտության այն փոփոխությունը Կիտիի դեմքին. մեկ հավատացնում էր իրեն, որ դա հույս է, մեկ հուսահատվում էր ու պարզ տեսնում, որ իր հույսը անմտություն է, ժինչդեռ իրեն զգում էր բոլորովին այլ

մարդ, քան այն, որպիսին էր նա Կիտիի ժպիտից և ցտեսություն խոսքից առաջ։

Ստեպան Արկադևիչը ճանապարհին հորինում էր ճաշի մենյուն։

— Կարծեմ, դու սիրում ես տյուրբո[1], չէ՞, — ասաց նա Լևինին, մոտենալով հյուրանոցին։

— Ի՞նչ,— հարցրեց Լևինը։ — Տյուրբո՞։ Այո՛, ես սաստիկ սիրում եմ տյուրբո։

X

Երբ Լևինը Օբլոնսկու հետ մտավ հյուրանոց, չկարողացավ չնկատել արտահայտության որոշ առանձնահատկություն, մի տեսակ զուսպ փայլ Ստեպան Արկադևիչի դեմքին և նրա ամբողջ կերպարանքի մեջ։ Օբլոնսկին հանեց վերարկուն ու գլխարկը թեք դրած, մտավ սեղանատուն, հրամաններ տալով իրեն ընդհուպ հետևող՝ ֆրակ հագած և անձեռոցիկներով թաթարներին։ Աջ ու ձախ ողջունելով այստեղ ևս, ինչպես և ամենուր իրեն խնդալից դիմավորող ծանոթներին, նա մոտեցավ բուֆետին, խմեց մի գավաթ օղի ձկան հետ և ասաց ժապավեններով, ժանյակներով զարդարված գանգրահեր ֆրանսուհուն, որը նստած էր բարձր սեղանի առաջ, այնպիսի մի բան, որ սրտանց ծիծաղեց նույնիսկ այդ ֆրանսուհին։ Իսկ Լևինը օղի չխմեց հենց այն պատճառով, որ նրա համար վիրավորական էր այդ ֆրանսուհին, կարծես՝ ամբողջովին կազմված ուրիշի մազերից, poudre deriz և vinaigre de toilette[2]։ Նա շտապ հեռացավ ֆրանսուհուց, ինչպես կեղտոտ տեղից։ Նրա ամբողջ հոգին լցված էր Կիտիի մասին հիշողությամբ, և նրա աչքերի մեջ լուսաշողեց հաղթության ու երջանկության ժպիտը։

— Այստեղ համեցեք, ձերդ պայծառափայլություն, այստեղ չեն անհանգստացնի ձերդ պայծառափայլությանը, — ասում էր առանձնապես նրան կպած ծերունի, սպիտակավուն թաթարը, լայն կոնքով և նրա վրա չռված ֆրակի փեշերով։ — Համեցեք, ձերդ պայծառափայլություն,— ասում էր նա Լևինին, գեպի Ստեպան Արկադևիչը տածած հարգանքից սիրաշահելով և նրա հյուրին։

Վայրկենապես նոր սփոցոց գցելով արդեն սփոցով ծածկված կլոր սեղանի վրա՝ բրոնզե աշտանակի տակ, թաթարը մոտ քաշեց թավշյա աթոռները և կանգնեց Ստեպան Արկադևիչի դիմաց, ձեռքին քարտ և անձեռոցիկ, սպասելով հրամանների։

— Եթե հրամայեք, ձերդ պայծառափայլություն, այս րոպեիս կազատվի առանձին կաբինետը. իշխան Գալիցինն է մի տիկնոջ հետ։ Ստացվել են թարմ ոստրեներ։

— Ա՜, ոստրեներ։

Ստեպան Արկադևիչը միտք արավ։

— Արդյոք չփոխե՞նք ծրագիրը, Լևին,— ասաց նա, մատը դնելով քարտի վրա, և նրա դեմքն արտահայտում էր լուրջ տարակուսանք։ — Ոստրեները լա՞վն են, արդյոք։ Տե՛ս, լավը լինեն, հա՞։

— Ֆլենսբուրգյան են, ձերդ պայծառափայլություն, ոստենդյան ոստրեներ չկան։

— Թող լինեն ֆլենսբուրգյան, բայց թա՞րմ են արդյոք։

— Երեկ են ստացվել։

— Ուրեմն ինչպես, չսկսե՞լ արդյոք ոստրեներից, իսկ հետո փոխել և ամբողջ ծրագիրը։ Հա՞։

— Ինձ համար միևնույն է։ Ես ամեն բանից գերադասում եմ շչի և շիլա, բայց այստեղ չի ճարվի դա։

— Շիլան à la ռյո՞սս կհրամայեք,— ասաց թաթարը, կռանալով գեպի Լևինը՝ ինչպես դայակը մանկան վրա։

— Ո՛չ, առանց կատակի, ինչ դու ընտրես՝ լավ է։ Ես չմուշկներով վազեցի և ուտել եմ ուզում։ Դու մի՛ կարծիր,— ավելացրեց նա, նկատելով Օբլոնսկու դեմքին դժգոհ արտահայտություն,— որ ես չեմ գնահատի քո ընտրությունը։ Ես հաճույքով լավ կուտե՛մ։

— Անշո՞ւշտ։ Ինչ կուզես՝ ասա, դա մեկն է կյանքի բավականություններից,— ասաց Ստեպան Արկադևիչը։ — Դե, ուրեմն, տո՛ւր մեզ, եղբայր պատվական, երկու, թե քիչ է դա, երեք տասնյակ ոստրե, արմտիքներով սուպ...

— Պրենտանյեր,— վրա տվեց թաթարը, բայց, ըստ երևույթին, Ստեպան Արկադևիչը չէր ուզում բավականություն

[1] Ազնիվ տեսակի ձուկ։

[2] Բրնձի պուդրայից և տուալետի քացախից։

պատճառել նրան՝ կերակուրներն անվանել ֆրանսերեն։

— Արմատիքներով, գիտե՞ս։ Հետո տյուրբո՝ թանձր սոուսով, ապա... ռոստբիֆ. տե՛ս, որ լավը լինի։ Հետո կտրած ու բտած աքաղաղ, վերջը՝ պահածոներ։

Թաթարը հիշելով Ստեպան Արկադևիչի սովորությունը՝ կերակուրները չանվանել ըստ ֆրանսիական քարտի, չէր կրկնում նրա ետևից, բայց բավականություն պատճառեց իրեն՝ կրկնել ամբողջ պատվերն ըստ քարտի. «սուպ պրենտանյեր, տյուրբո սոս Բոմարշե, պուլարդ ա լեստրագոն, մասեդուան դե ֆերյուի...» և անմիջապես, ասես զսպանակներով, ցած դնելով մի քարտը ու վերցնելով մյուսը՝ գինիների քարտը, մոտեցրեց Ստեպան Արկադևիչին։

— Ի՞նչ ենք խմելու։

— Ես՝ ի՛նչ կուզես, միայն ո՛չ շատ, շամպայն, — ասաց Լևինը։

— Ինչպե՞ս, սկզբի՞ց։ Թեպետ ոչինչ, կարելի է։ Դու սիրում ես սպիտա՞կ կնիքով։

— Կաշե բլան,— վրա տվեց Թաթարը։

— Դե, այդ տեսակը տուր ոստրեների հետ, իսկ հետո կտեսնենք։

— Լսում եմ։ Ճաշի գինիներից ո՞ր տեսակը կհրամայեք։

— Բեր նյուի։ Ո՛չ, ավելի լավ է՝ կլասիկ Շաբլի։

— Լսում եմ։ Կհրամայեք ձեր պանի՞րը։

— Դե՛, իհարկե, պարմեզանու։ Թե՞ դու ուրիշն ես սիրում։

— Ո՛չ, ինձ համար միևնույն է,— ասաց Լևինը, չկարողանալով պահել ժպիտը։

Եվ փողփողուն փեշերով Թաթարը վազեց ու հինգ բոպեից ներս եկավ, սկուտեղը ձեռքին՝ սաղաֆե բաց խեցիների վրա ոստրեներ, մատների միջին մի շիշ։

Ստեպան Արկադևիչը ճմռեց օսլայած անձեռոցիկը, մղտցրեց այն իր ժիլետի տակ և թևերին հանգիստ դիրք տալով, սկսեց ոստրեներից։

— Վատը չեն,— ասում էր նա, արծաթե փոքրիկ պատառաքաղով պոկելով սաղաֆե խեցիներից շփշփուն ոստրեները և կուլ տալով նրանց իրար ետևից։ — Վատը չեն,— կրկնում էր նա՝ դարձնելով իր թաց ու փայլուն աչքերը մերթ Լևինի վրա, մերթ Թաթարի վրա։

Լևինն ուտում էր նաև ոստրեներ, թեև սպիտակ հացն ու պանիրը ավելի դուրեկան էր նրան։ Բայց նա հիանում էր Օբլոնսկով։ Նույնիսկ Թաթարը, որ խցանը հանեց ու փրփրուն գինին լցրեց ձագարաձև բարակ գավաթների մեջ, բավականության նկատելի ժպիտով նայում էր Ստեպան Արկադևիչին, ուղղելով իր սպիտակ փողկապը։

— Դու, կարծես, այնքան էլ չես սիրում ոստրեներ,— հարցրեց Ստեպան Արկադևիչը, պարպելով իր բաժակը,— թե՞ մտահոգ ես։ Հա՞։

Նա ուզում էր, որ Լևինն ուրախ լինի։ Բայց Լևինը ո՛չ թե ուրախ չէր, այլ ճնշված էր։ Սրտի վրա ծանրացած ղղացումով նա իրեն անհարմար ու նեղված էր զգում պանդոկում, առանձին կաբինետների միջև, որտեղ ճաշում էին կանանց հետ, այս վազվզոցի և շարժման մեջ։ Բրոնզի, հայելիների, գազի, թաթարների այս մթնոլորտը վիրավորական էր նրա համար։ Նա փախենում էր, որ կեղտոտի այն, ինչը համակել էր իր հոգին։

— Ե՞ս։ Այո՛, ես մտահոգ եմ. բացի դրանից, այս բոլորը ճնշում է ինձ,— ասաց նա։ — Դու չես կարող երևակայել, թե ինչպե՛ս ինձ՝ գյուղի բնակչիս համար անհեթեթ է այս բոլորը, ինչպես այն պարոնի եղունգները, որին ես տեսա քեզ մոտ...

— Այո՛, ես տեսա, որ խեղճ Գրինևիչի եղունգները շատ հետաքրքրեցին քեզ,— ասաց Ստեպան Արկադևիչը ծիծաղելով։

— Չեմ կարող,— պատասխանեց Լևինը։ — Դու աշխատիր մտնել իմ կաշվի մեջ, կանգնիր գյուղի բնակչիս տեսակետի վրա։ Մենք գյուղում աշխատում ենք մեր ձեռքերը պահել այնպիսի դրության մեջ, որ հարմար լինի նրանցով աշխատել։ Դրա համար կտրում ենք եղունգներս, երբեմն քշտում ենք թևքներս։ Իսկ այստեղ մարդիկ դիտմամբ երկարացնում են իրենց եղունգները, որքան դա հնարավոր է, և թևկապի կոճակների անվան տակ կրում ափսեներ, որ այլևս ձեռքերով ոչինչ անել չկարողանան։

Ստեպան Արկադևիչը ժպտում էր ուրախ։

— Դա նշան է այն բանի, որ կոպիտ աշխատանքը պետք չէ նրան։ Նրա խելքն է աշխատում...

— Գուցե։ Բայց և այնպես ինձ համար անհեթեթ է, ինչ-

պես անհեթեթ է այժմ այն, որ մենք, գյուղի բնակիչներս, աշխատում ենք շուտ կշտանալ, որպեսզի ի վիճակի լինենք կատարելու մեր գործը, իսկ ես ու դու աշխատում ենք չկշտանալ՝ հնար եղածին չափ՝ երկար ժամանակ և դրա համար ուտում ենք ոստրեներ...

— Դե՛, իհարկե, — վրա բերեց Ստեպան Արկադևիչը։ — Դրա մեջ է հենց կրթության նպատակը՝ ամեն բանից ստեղծել վայելք։

— Օ՜, եթե դա նպատակ է, ես կուզենայի վայրի լինել։

— Դու առանց այդ էլ վայրի ես։ Դուք՝ բոլոր Լևիններդ վայրիներ եք։

Լևինը հառաչեց։ Նա հիշեց իր Նիկոլայ եղբոր մասին, և խղճահարվեց ու վշտացավ. նա մոռացվեց։ Բայց Օբլոնսկին խոսք բացեց այնպիսի նյութի մասին, որն անմիջապես գրավեց նրան։

— Դե, ի՞նչ ես մտադիր անել. այսօր երեկոյան կգնա՞ս մերոնց, այսինքն՝ Շչերբացկիների մոտ,— ասաց նա, մեկդի դնելով դատարկ խեցիները, մոտեցնելով իրեն պանիրը և նշանակալից փայլեցնելով աչքերը։

— Այո՛, անպայման կգնամ,— պատասխանեց Լևինը։ — Թեև ինձ թվաց, որ իշխանուհին դժկամությամբ կանչեց ինձ։

— Ինչե՞ր ես ասում։ Ի՞նչ դատարկ բան։ Դա նրա խոսելաձևն է... Դե, բարեկամ, տո՛ւր սուպը... դա նրա խոսելաձևն է, grande dame[1], — ասաց Ստեպան Արկադևիչը։ — Ես էլ կգամ, բայց նախ պիտի գնամ երգեցողության փորձի՝ կոմսուհի Բանինայի մոտ։ Ասա՛, վայրի չես, բա ի՞նչ ես։ Ինչո՞վ բացատրել, որ դու հանկարծ անհայտացար Մոսկվայից։ Շչերբացկիները շարունակ հարցնում էին ինձ քո մասին, կարծես՝ ես պետք է իմանամ։ Իսկ ես գիտեմ մի բան միայն. դու միշտ անում ես այն, ինչ ուրիշ ոչ ոք չի անում։

— Այո՛,— ասաց Լևինը դանդաղ ու հուզված։ — Դու իրավացի ես, վայրի եմ ես։ Բայց իմ վայրիությունն այն չէ, որ ես հեռացա Մոսկվայից, այլ այն է, որ այժմ ՆԿա։ Այժմ ես եկա...

[1] Նշանավոր տիկնոջ։

— Օ՜, ինչ երջանիկ ես դու,— բացականչեց Ստեպան Արկադևիչը, նայելով Լևինի աչքերին։

— Ինչո՞ւ։

— Ճանաչում եմ ես աշխույժ ձիերին իրենց հատուկ նիշերից, սիրահարներին ճանաչում եմ իրենց աչքերից,— արտասանեց Ստեպան Արկադևիչը։ — Ամեն բան քո առջևն է դեռ։

— Իսկ քոնը մի՞թե անցած է։

— Ո՛չ, թեև անցած չէ, բայց քոնը ապագան է, իսկ իմը՝ ներկան, և ներկան՝ այնպես շաղ տված։

— Ի՞նչ կա որ։

— Մի խոսքով՝ լավ չէ։ Ես չեմ ուզում խոսել իմ մասին, բացի այդ, ամեն բան չի կարելի բացատրել,— ասաց Ստեպան Արկադևիչը։ — Դե, ասա՛ տեսնեմ, ինչո՞ւ ես եկել Մոսկվա... է՛յ, ընդունիր,— ձայնեց նա թաթարին։

— Դու գլխի՞ ես ընկնում,— պատասխանեց Լևինը, չհեռացնելով Ստեպան Արկադևիչի վրայից իրենց խորության մեջ լուսաշողուն իր աչքերը։

— Գլխի եմ ընկնում, բայց չեմ կարող խոսել դրա մասին։ Դրանից հենց դու կարող ես տեսնել՝ ճի՞շտ, թե սխալ եմ կռահում ես,— ասաց Ստեպան Արկադևիչը, նուրբ ժպիտով նայելով Լևինին։

— Դե, ի՞նչ կասես ինձ,— ասաց Լևինը դողդոջուն ձայնով ու զգալով, որ իր դեմքին դողում են բոլոր մկանները։ — Ինչպե՞ս ես նայում դու այդ բանին։

Ստեպան Արկադևիչը դանդաղորեն խմեց Շաբլի գինու իր բաժակը, առանց հեռացնելու հայացքը Լևինից։

— Ե՞ս,— հարցրեց Ստեպան Արկադևիչը,— ոչինչ այնպես չէի ցանկանա, ինչպես այդ, ոչի՞նչ։ Դա այն լավագույնն է, որ կարող էր լինել։

— Բայց դու չե՞ս սխալվում։ Դու գիտե՞ս, թե ինչի՞ մասին ենք խոսում մենք,— ասաց Լևինը, հայացքը սևեռելով իր խոսակցի դեմքին։ Դու կարծում ես, որ հնարավո՞ր է դա։

— Կարծում եմ հնարավոր է։ Ինչո՞ւ հնարավոր չէ։

— Ո՛չ, դու իրո՞ք կարծում ես, որ հնարավոր է։ Ոչ, դու ասա՛ այն բոլորը, ինչ մտածում ես։ Իսկ եթե, եթե ինձ սպասում է մերժո՞ւմ... Ես նույնիսկ համոզված եմ...

— Ինչո՞ւ ես դու այդպես կարծում,— ժպտալով նրա հուզմունքի վրա, հարցրեց Ստեպան Արկադևիչը։

— Երբեմն ինձ այդպես է թվում։ Չէ՞ որ դա սոսկալի բան կլինի և՛ ինձ համար, և՛ նրա համար։

— Համենայն դեպս աղջկա համար սարսափելի ոչինչ չկա այստեղ։ Յուրաքանչյուր աղջիկ պարծենում է իրեն արված առաջարկությամբ։

— Այո՛, յուրաքանչյուր աղջիկ, բայց ո՛չ նա։

Ստեպան Արկադևիչը ժպտաց։ Նա այնպես գիտեր Լևինի այդ զգացումը, գիտեր, որ նրա համար աշխարհիս բոլոր աղջիկները բաժանվում են երկու տեսակի. մի տեսակը աշխարհիս բոլոր աղջիկներն էին, բացի նրանից, և այդ աղջիկներն ունեն մարդկային բոլոր թուլությունները, և շատ սովորական աղջիկներ են. մյուս տեսակը նա է մենակ, որ չունի ո՛չ մի թուլություն և բարձր է ամեն մարդկայինից։

— Կա՛ց, սոուս վերցրու,— ասաց նա, բռնելով Լևինի ձեռքը, որը մեկդի էր հրում սոուսն իրենից։

Լևինը հնազանդությամբ վերցրեց սոուսը, բայց չթողեց, որ Ստեպան Արկադևիչն ուտի։

— Ո՛չ, կաց, սպասիր,— ասաց նա։— Հասկացիր, որ դա ինձ համար կյանքի և մահվան խնդիր է։ Ես երբեք ոչ ոքի հետ չեմ խոսել դրա մասին։ Եվ քեզնից բացի ոչ ոքի հետ չեմ կարող խոսել։ Ա՛յ, ահա, ես ու դու ամեն բանով օտար ենք իրարուրիշ ճաշակ, ուրիշ հայացքներ, ամեն ինչ ուրիշ։ Բայց ես գիտեմ, որ դու սիրում ես ինձ ու հասկանում, և դրա համար ես ուստիկ սիրում եմ քեզ։ Սակայն, ի սեր աստծո, եղի՛ր լիովին անկեղծ։

— Ես քեզ ասում եմ այն, ինչ կարծում եմ,— ասաց Ստեպան Արկադևիչը ժպտալով։ Բայց կասեմ քեզ ավելին. իմ կինը զարմանալի կին է...— Ստեպան Արկադևիչը հառաջեց, հիշելով իր ու կնոջ հարաբերությունները և մի բոպե լռելուց հետո շարունակեց։— Դոլլին ունի նախատեսելու ձիրք։ Նա տեսնում է մարդկանց ներքինը, սակայն դա քիչ է, նա գիտե, թե ինչ պիտի լինի, մանավանդ ամուսնությունների վերաբերյալ։ Օրինակ, նա նախազուշակեց, որ Շախովսկայան կամուսնանա Բրենտելևի հետ։ Ոչ ոք չէր ուզում հավատալ դրան; մինչդեռ այդպես էլ եղավ։ Եվ նա քո կողմն է։

— Այսինքն՝ ինչպե՞ս։

— Այնպես. այն դեռ ոչինչ, որ նա սիրում է քեզ, ասում է, թե Կիտին անպայման կլինի քո կինը։

Այդ խոսքերը լսելիս Լևինի դեմքին հանկարծ փայլեց մի ժպիտ, այն ժպիտը, որ մոտ է գորովալից արցունքների։

— Նա ասո՞ւմ է այդ,— գոչեց Լևինը։— Ես միշտ ասում էի, որ սքանչելի էակ է նա, քո կինը։ Դեհ, հերիք է, բա՛վ է խոսել դրա մասին,— ասաց նա, վեր կենալով տեղից։

— Լավ, բայց նստիր, դե՛։

Սակայն Լևինը նստել չէր կարող։ Նա իր հաստատուն քայլերով մի երկու անգամ գնաց-եկավ վանդակ-սենյակում, աչքերը թարթեց, որ չերևան արցունքները, որից հետո միայն նորից նստեց սեղանի առաջ։

— Հասկացի՛ր դու,— ասաց նա,— որ դա սեր չէ։ Ես սիրահարված եմ եղել, բայց դա այն չէ։ Դա իմ զգացումը չէ, այլ արտաքին մի ուժ է համակել ինձ։ Չէ՞ որ ես հեռացա Մոսկվայից, որովհետև վճռեցի, որ դա լինելու բան չէ, հասկանո՞ւմ ես, ինչպես բախտը, որ գոյություն չունի երկրիս վրա, բայց ես պայքարեցի ինքս ինձ հետ և տեսնում եմ, որ առանց դրան կյանք չկա։ Եվ պետք է վճռել...

— Ինչո՞ւ հեռացար Մոսկվայից։

— Ա՜խ, կա՛ց։ Ախ, որքա՜ն մտքեր. որքա՜ն բան պետք է հարցնել։ Լսիր։ Դու երևակայել չես կարող, թե ի՜նչ արիր ինձ համար, որ ասացիր այդ խոսքը։ Ես այնպես երջանիկ եմ, որ նույնիսկ դարձա զզվելի. ես մոռացա ամեն ինչ։ Ես այսօր իմացա, որ իմ Նիկոլայ եղբայրը... գիտե՞ս, նա այստեղ է... ես նրան էլ մոռացա։ Ինձ թվում է, որ նա՛ ևս բախտավոր է։ Դա խելագարության պես բան է։ Բայց մի բան սարսափելի է... ա՛յ, դու ամուսնացել ես, դու գիտես, քեզ ծանոթ է այդ զգացումը... սարսափելի է այն, որ մենք մեծ մարդիկ ենք, արդեն անցյալ ունենք... ո՛չ սեր, այլ մեղքեր... հանկարծ մտերմանում ենք մաքուր անմեղ էակի հետ. դա զզվելի բան է, այդ պատճառով չի կարելի իրեն չզգալ անարժան։

— Դու հո քիչ մեղքեր ունես։

— Ա՜խ, այնուամենայնիվ,— ասաց Լևինը,— այնուամենայնիվ, «ծողկանքով կարդալով կյանքն իմ ես դողում եմ և նզովում, և դառնագին գանգատվում»... Այո՛։

— Ի՞նչ արած, այդպես է աշխարհը,— ասաց Ստեպան Արկադևիչը։

— Կա մի մխիթարություն, ինչպես այդ աղոթքի մեջ է՝ որը ես միշտ սիրել եմ, թե ներիր ինձ՝ ո՛չ ըստ իմ արժանիքների, այլ քո ողորմածությամբ։ Նա ևս կարող է այդպես միայն ներել։

XI

Լևինը խմեց իր բաժակը, և նրանք լռեցին։

— Ես էլի բան պիտի ասեմ քեզ։ Դու ճանաչո՞ւմ ես Վրոնսկուն,— հարցրեց Ստեպան Արկադևիչը Լևինին։

— Ո՛չ, չեմ ճանաչում։ Ինչո՞ւ ես հարցնում։

— Տո՛ւր ուրիշը,— դիմեց Ստեպան Արկադևիչը թաթարին, որ լցնում էր կիսատ բաժակները և պտտվում էր նրանց շուրջը այն ժամանակ, երբ պետք չէր։

— Ինչո՞ւ ես պետք է ճանաչեմ Վրոնսկուն։

— Վրոնսկուն դու պետք է ճանաչես, որովհետև նա մեկն է քո մրցակիցներից։

— Ի՞նչ է Վրոնսկին,— ասաց Լևինը, և նրա դեմքը մանկական-հիասքանչ այն արտահայտությունից, որով հենց այդ բոպեին հիանում էր Օբլոնսկին, փոխվեց հանկարծ, դարձավ չար ու անախորժ։

— Վրոնսկին կոմս Կիրիլ Իվանովիչ Վրոնսկու որդիներից մեկն է և Պետերբուրգի ոսկի երիտասարդության լավագույն նմուշը։ Ես նրան ճանաչեցի Տվերում, երբ ծառայում էի այնտեղ, իսկ նա գալիս էր նորակոչիկների զինվորահավաքի։ Չափազանց հարուստ է, գեղեցիկ, մեծ կապեր ունի, ֆլիգել-ադյուտանտ է և դրա հետ միասին շատ հաճելի, լավ երիտասարդ։ Բայց ավելի քան լավ երիտասարդ է։ Նա և՛ կրթված, և՛ շատ խելոք է, ինչպես ես ճանաչեցի նրան այստեղ։ Դա մի մարդ է, որ կարող է շատ առաջ գնալ։

Լևինը մոայլվեց և լուռ էր։

— Եվ ահա նա հայտնվեց այստեղ քեզանից անմիջապես հետո և, ինչպես ես եմ հասկանում, մինչև ականջները սիրահարված է Կիտիին. դու անշուշտ հասկանում ես, որ մայրը...

— Ների՛ր ինձ, բայց ես ոչինչ չեմ հասկանում,— ասաց Լևինը, մոայլ խոժոռվելով։ Եվ անմիջապես նա հիշեց իր եղբայր Նիկոլայի մասին ու այն, թե ինչպես զզվելի է ինքը, որ կարողացավ մոռանալ նրան։

— Կաց, սպասիր,— ասաց Ստեպան Արկադևիչը, ժպտալով ու ձեռք տալով նրա թևին։ — Ես քեզ ասացի այն, ինչ գիտեմ, և կրկնում եմ, որ այդ նուրբ ու քնքուշ գործում, որքան հնարավոր է կռահել, ինձ թվում է, թե շանսերը քո կողմն են։

Լևինը ետ ընկավ՝ մեջքը տվեց աթոռի թիկնակին, նրա դեմքը դժգույն էր։

— Բայց ես խորհուրդ կտայի քեզ՝ վճռել գործը, որքան հնարավոր է շո՛ւտ,— շարունակեց Օբլոնսկին, լցնելով նրա կիսատ բաժակը։

— Ո՛չ, շնորհակալ եմ, այլևս չեմ կարող խմել,— ասաց Լևինը, հեռացնելով մեկդի իր բաժակը։ Կհարբեմ... Ասա, դո՞ւ ինչպես ես, դո՛ւ,— շարունակեց նա, հավանորեն կամենալով փոխել խոսակցությունը։

— Էլի մի խոսք. համենայն դեպս, ես խորհուրդ եմ տալիս այդ հարցը շուտ վճռել։ Խորհուրդ չեմ տալիս խոսել այսօր,— ասաց Ստեպան Արկադևիչը։— Դնա, վաղն առավոտյան, կլասիկ կերպով առաջարկություն արա, և թող աստված օրհնի քեզ...

— Դու միշտ ասում էիր, որ ուզում ես գալ ինձ մոտ որսի։ Ա՜յ, ե՛կ գարնանը,— ասաց Լևինը։

Այժմ Լևինն ամբողջ հոգով զղջում էր, որ սկսեց այդ խոսակցությունը Ստեպան Արկադևիչի հետ։ Նրա ասածին ըմբռնումը վիրավորվեց պետերբուրգյան ինչ-որ սպայի մրցակցության մասին եղած խոսակցությամբ. Ստեպան Արկադևիչի ենթադրություններով ու խորհուրդներով։

Ստեպան Արկադևիչը ժպտաց։ Նա հասկանում էր, թե ի՛նչ է կատարվում Լևինի հոգում։

— Մի օր կգամ,— ասաց նա։— Այո՛, եղբայր, կինն այն պոռուտակն է, որի վրա պտտվում է ամեն ինչ։ Ահա իմ բանն էլ վատ է, շատ վատ։ Եվ պատճառը կանայք են։ Ասա՛ դու ինձ անկեղծաբար,— շարունակեց նա, հանելով սիգարը և մի ձեռքով բռնած բաժակը,— խորհուրդ տուր ինձ։

— Ի՞նչ բանում։

— Ահա, թե ինչո՛ւմ։ Ենթադրենք, դու ամուսնացած ես,

դու սիրում ես կնոջդ, բայց դու հրապուրվում ես ուրիշ կնոջով...

— Բայց ներիր ինձ, ես վճռականապես չեմ հասկանում այդ, ինչպես... օրինակ՝ չեմ հասկանում, թե ինչպես այժմ ես, կուշտ ուտելուց հետո անցնեմ կալաչի խանութի մոտով և գողանամ կալաչ։

Ստեպան Արկադևիչի աչքերը փայլում էին սովորականից ավելի։

— Ինչո՞ւ չէ։ Կալաչը երբեմն բուրում է այնպես, որ մարդ կարող է չդիմանալ։

Himmlisch ist's, wenn ich bezwungen
Meine irdische Begier;
Aber noch wenn's nicht gelungen,
Hatt'ich auch rech hübsch Plaisir![1]

Այդ ասելով Ստեպան Արկադևիչը նուրբ ժպտում էր։ Լևինը նույնպես չկարողացավ չժպտալ։

— Այո՛, բայց կատակը մի կողմ,— շարունակեց Օբլոնսկին,— հասկացի՛ր, որ այդ կինը՝ համակրելի, հեզ, սիրող էակ, խեղճ ու միայնակ՝ զոհաբերել է ամեն ինչ։ Այժմ, երբ արդեն բանը վերջացել է, հասկացի՛ր, մի՞թե կարելի է գցել նրան։ Ենթադրենք, թե պետք է անջատվել՝ ընտանեկան կյանքը չքայքայելու համար, բայց մի՞թե չպիտի խղճալ նրան, չպիտի կարդավորել, մեղմացնել նրա կյանքը։

— Ների՛ր ինձ։ Դու գիտես, որ ինձ համար բոլոր կանայք բաժանվում են երկու տեսակի... այսինքն՝ ոչ... ավելի ճիշտ՝ կան կանայք և կա... Ես չքնաղ ընկած արարածներ չեմ տեսել և չեմ տեսնի, իսկ այնպիսիները, որպիսին է այն ներկված ֆրանսուհին՝ բարձրադիր սեղանի մոտ, խոպոպիկներով, ինձ համար գարշելի են, և բոլոր անառակներն այդպես են։

— Իսկ ավետարանի կի՞նը։

— Ա՜խ, մի՛ խոսիր։ Քրիստոսը երբեք չէր ասի այդ խոսքերը, եթե իմանար, որ այդպես կշարարկեն դրանք։ Ամբողջ ավետարանից հիշում են միայն այդ խոսքերը։ Սակայն ես

[1] Երկնային է այն, երբ զսպում եմ ես
Երկրային մոլի իմ ցանկերը վեհ.
Սակայն եթե դա ինձ չի հաջողվում,
Ես դարձյալ անուշ հաճույք եմ զգում։

ասում եմ ո՛չ այն, ինչ կարծում եմ, այլ այն, ինչ զգում եմ։ Ես զզվանք եմ տածում դեպի անառակ կանայք։ Դու վախենում ես սարդերից, իսկ ես՝ այդ գարշելիներից։ Դու հո չես ուսումնասիրել սարդերին ու չգիտես նրանց բարքերը, այդպես և ես։

— Դու լավ կարող ես այդ ասել, դա միևնույնն է, ինչպես դիկենսյան այն պարոնը, որ ձախ ձեռքով դեն է նետում աջ ուսի վրայից բոլոր դժվարին հարցերը։ Սակայն փաստի բացատրումը պատասխան չէ։ Դու ինձ ասա, թե ի՞նչ պիտի անել, ի՞նչ անել։ Կինդ պառավում է, իսկ դու լի ես կյանքով։ Դու դեռ չես կարողանում նայել շուրջդ, երբ զգում ես արդեն, որ չես կարող սիրով սիրել կնոջդ, ինչքան էլ հարգում ես նրան։ Իսկ այստեղ հանկարծ քո առաջ բացվում, ծաղկում է սերը, և դու կորար, կորար,— լքված, հուսահատությամբ բացականչեց Ստեպան Արկադևիչը։

Լևինը քմծիծաղեց։

— Այո՛, և կորար դու,— շարունակեց Օբլոնսկին։— Բայց ի՞նչ պիտի անել։

— Կալաչներ չգողանալ։

Ստեպան Արկադևիչը ծիծաղեց։

— Օ՜, մորալիստ։ Բայց դու հասկացիր, կա երկու կին. մեկը պնդում է միայն իր իրավունքները, և այդ իրավունքները քո սերն է, որ դու չես կարող տալ նրան, իսկ մյուս կինը զոհաբերում է քեզ համար ամեն ինչ և չի պահանջում ոչինչ։ Ի՞նչ պիտի անես դու։ Ինչպե՞ս վարվել։ Այստեղ կա սոսկալի դրամա։

— Եթե դու ուզում ես իմ խոստովանությունն այդ առթիվ, ես կասեմ քեզ, թե չեմ հավատում, որ այստեղ դրամա կա։ Եվ ահա թե ինչո՛ւ։ Ըստ իս, սերը... երկու այն սերը, որ հիշո՛ւմ ես, Պլատոնը որոշում է իր Պիրի[1] մեջ, կազմում են փորձաքար մարդկանց համար։ Մարդկանցից ոմանք հասկանում են միայն մեկ սերը, ոմանք՝ մյուսը։ Եվ նրանք, ովքեր հասկանում են միայն ո՛չ պլատոնական սերը, զուր են խոսում դրամայի մասին։ Այդպիսի սիրո դեպքում չի՛ կարող լինել ո՛չ մի դրամա։ «Խորին շնորհակալություն ինձ պատճառած հաճույքի համար, հարգանքներս ձեզ»,— ահա և ամբողջ դրաման։ Իսկ

[1] Հույն փիլիսոփա Պլատոնի երկասիրություններից մեկի անունը։

պլատոնական սիրո համար չի կարող դրամա լինել, որովհետև այդպիսի սիրո մեջ ամեն ինչ պարզ է ու մաքուր, որովհետև...

Այդ րոպեին Լևինը հիշեց իր մեղքերի և ներքին այն պայքարի մասին, որ ապրել էր ինքը։ Եվ նա անսպասելի ավելացրեց.

— Թեպետև, գուցե դու իրավացի ես։ Շատ կարող է պատահել... բայց ես չգիտեմ, վճռականապես չգիտեմ։

— Ա՜յ, տեսնում ես,— ասաց Ստեպան Արկադևիչը,— դու շատ ամբողջական մարդ ես։ Դա քո հատկությունն է և քո պակասությունը։ Դու ինքդ ամբողջական բնավորություն ես և ուզում ես, որ ամբողջ կյանքը կազմվեր ամբողջական երևույթներից։ Բայց այդպես չի լինում։ Դու ահա արհամարհում ես հասարակական պաշտոնական գործունեությունը, որովհետև ուզում ես, որ գործը միշտ համապատասխաներ նպատակին, իսկ դա չի լինում։ Դու ուզում ես նույնպես, որ մի մարդու գործունեությունը միշտ ունենա նպատակ, որ սերը և ընտանեկան կյանքը միշտ մեկ լինեն՝ բայց այդպես չի լինում։ Կյանքի ամբողջ բազմազանությունը, ամբողջ հրապույրը, ամբողջ գեղեցկությունը կազմվում է լույսից ու ստվերից։

Լևինը հառաչեց ու ոչինչ չպատասխանեց։ Նա մտածում էր իր անձնականի մասին ու չէր լսում Օբլոնսկուն։

Եվ հանկարծ նրանք երկուսն էլ զգացին, որ թեև իրենք ընկերներ են, թեև միասին ճաշեցին ու գինի խմեցին, որը պիտի է՛լ ավելի մոտեցներ նրանց, բայց յուրաքանչյուրը մտածում է միայն իր մասին և գործ չունի մյուսի հետ։ Օբլոնսկին բազմիցս արդեն փորձել, զգացել էր այդ ծայրահեղ երկատվելը, մերձեցման փոխարեն, որ պատահում էր ճաշից հետո, և գիտեր, թե ի՛նչ պիտի անել նման դեպքերում։

— Հաշի՛վը,— բղավեց նա ու դուրս եկավ հարևան դահլիճ, որտեղ իսկույն պատահեց իր ծանոթ համհարզին և նրա հետ զրույցի բռնվեց դերասանուհու և նրան պահողի մասին։ Համհարզի հետ սկսված խոսակցության մեջ Օբլոնսկին անմիջապես թեթևություն ու հանգստություն զգաց Լևինի հետ ունեցած խոսակցությունից, որը միշտ հասցնում էր նրան չափազանց մեծ մտավոր ու հոգեկան լարվածության։

Երբ հայտնվեց թաթարը քսանվեց ռուբլու, պլյուս կոպեկներ, և օղու համար լրացուցիչ հաշվով, Լևինը, որին, որպես գյուղի բնակչի, ուրիշ անգամ կսարսափեցներ իր բաժին տասնչորս ռուբլին, այժմ ուշադրություն չդարձրեց դրա վրա, վճարեց և ուղևորվեց տուն, որպեսզի զգեստը փոխի ու գնա Շչերբացկիների մոտ, որտեղ վճռվելու էր նրա բախտը։

XII

Իշխանազնուհի Կիտի Շչերբացկայան տասնութ տարեկան էր։ Առաջին ձմեռն էր, ինչ նա այցելություններ էր անում։ Բարձր հասարակության մեջ նրա հաջողությունն ավելի էր, քան իր երկու մեծ քույրերինը, և ավելի էր, քան այն, ինչ սպասում էր իշխանուհին։ Դեռ ոչինչ, որ Մոսկվայի պարահանդեսներում պարող համարյա բոլոր երիտասարդները սիրահարված էին Կիտիին, արդեն հենց առաջին ձմռանը նրա համար հայտնվեցին երկու լուրջ փեսացուներ. Լևինը և նրա մեկնելուց անմիջապես հետո՝ կոմս Վրոնսկին։

Լևինի հայտնվելը ձմեռվա սկզբին, նրա հաճախակի այցելություններն ու բացահայտ սերը դեպի Կիտին առիթ էին առաջին լուրջ խոսակցությունների համար Կիտիի ծնողների միջև՝ նրա ապագայի մասին և վիճաբանությունների համար՝ իշխանի և իշխանուհու միջև։ Իշխանը Լևինի կողմն էր, և ասում էր, որ ավելի լավ բան չի ուզում Կիտիի համար։ Իսկ իշխանուհին, կանանց հատուկ սովորությամբ, խուսափելով հարցերից, ասում էր, որ Կիտին դեռ չափազանց ջահել է, որ Լևինը ոչնչով ցույց չի տալիս, թե լուրջ դիտավորություններ ունի, որ Կիտին սեր չի տածում դեպի Լևինը, և ուրիշ փաստարկներ. բայց չէր ասում գլխավորը՝ այն, որ ինքն սպասում է իր աղջկա համար ավելի լավ փեսացուի, որ Լևինը համակրելի չէ իրեն, և որ ինքը չի հասկանում նրան։ Իսկ երբ Լևինը հանկարծ մեկնեց Մոսկվայից, իշխանուհին ուրախ էր ու հաղթանակով ասում էր ամուսնուն. «Տեսնո՞ւմ ես, ես իրավացի էի»։ Իսկ երբ հայտնվեց Վրոնսկին, իշխանուհին ավելի ևս ուրախ էր, համոզվելով իր կարծիքի մեջ, որ Կիտին պետք է անի ո՛չ թե սոսկ լավ, այլ փայլուն ընտրություն։

Մոր համար չէր կարող ո՛չ մի համեմատություն լինել Վրոնսկու և Լևինի միջև։ Մորը դուր չէին գալիս Լևինի թե՛ տարօրինակ ու խիստ դատողությունները, թե՛ բարձր հասարա-

կության մեջ նրա անշնորհքությունը, հիմնված հպարտության վրա, ինչպես ենթադրում էր իշխանուհին, թե՛ նրա, իշխանուհու հասկացողությամբ, մի տեսակ վայրենի կյանքը գյուղում՝ զբաղված անասուններով ու գյուղացիներով. շատ դուր չէր գալիս նաև այն, որ Լևինը, սիրահարված իշխանուհու աղջկան, մեկուկես ամիս գնում-գալիս էր նրանց տուն, կարծես սպասում էր ինչ-որ բանի, դիտում-զննում էր, կարծես վախենում էր, արդյոք մեծ պատիվ չի՞ լինի, եթե առաջարկություն անի, և չէր հասկանում, որ գնալ-գալով մի տուն, որտեղ կա հարսնացու աղջիկ, պետք էր բացատրվել։ Եվ հանկարծ թողեց-հեռացավ, առանց բացատրվելու «լավ է, որ նա այնպես անհրապույր է, որ Կիտին չսիրահարվեց նրան», մտածում էր մայրը։

Վռոնսկին բավարարում էր մոր բոլոր ցանկությունները։ Շատ հարուստ, խելո՛ք, տոհմիկ է, կանգնած ռազմատարքունական կարիերայի ուղու վրա և հմայիչ մարդ է։ Չէր կարելի ցանկանալ ավելի լավ բան։

Պարահանդեսներում Վռոնսկին հայտնապես սիրագուրում էր Կիտիին, պարում էր նրա հետ, այցելում էր նրանց տուն, ուրեմն չէր կարելի կասկածել նրա լուրջ դիտավորությունների վրա։ Բայց չնայած դրան, մայրն ամբողջ ձմեռ գտնվում էր սոսկալի անհանգիստ դրության ու հուզմունքի մեջ։

Ինքն՝ իշխանուհին, ամուսնացավ երեսուն տարի առաջ՝ իր մորաքրոջ հաբսնախոսությամբ։ Փեսացուն, որի մասին ամեն բան նախօրոք արդեն հայտնի էր, եկավ, տեսավ հարսնացուին, և նրան տեսան։ Հարսնախոս-մորաքույրն իմացավ ու հաղորդեց փոխադարձաբար գործած տպավորությունը. տպավորությունը լավ էր. ապա նշանակված օրը ծնողներին արվեց սպասելիք առաջարկությունը և ընդունվեց։ Ամեն ինչ տեղի ունեցավ շատ հեշտ ու պարզ կերպով։ Համենայն դեպս՝ այդպես էր թվում իշխանուհուն։ Բայց նա իր աղջիկների վրա փորձեց ու զգաց, որ հեշտ ու պարզ բան չէ սովորական թվացող այդ գործը՝ աղջիկներին պսակելը։ Վախի ինչքա՜ն ապրումներ է ունեցել, որքա՜ն միտք է արել, ինչքա՜ն դրում է ծախսվել, որքա՜ն ընդհարումներ են եղել ամուսնու հետ՝ երկու մեծ աղջիկներին՝ Դարյային ու Նատալյային ամուսնացնելիս։ Այժմ, կրտսեր աղջկան հասարակության մեջ դուրս բերելիս

վերապրում, կրկնվում էին նույն վախը, նույն կասկածները և վիճաբանությունները ամուսնու հետ՝ ավելի հաճախ, քան ավագ դուստրերի պատճառով։ Ծերունի իշխանը, ինչպես բոլոր հայրերը, առանձնապես բծախնդիր էր իր աղջիկների պատվի ու մաքրության համար. նա անիսոհականորեն խանդոտ էր աղջիկների և մասնավորապես Կիտիի նկատմամբ, որը նրա սիրելին էր, ու ամեն քայլափոխում գժտվում էր կնոջ հետ, թե նա վարկաբեկում է աղջկան։ Իշխանուհին վարժվել էր դրան դեռ առաջին աղջիկների փորձից, բայց այժմ զգում էր, որ իշխանի բծախնդրությունն ավելի հիմքեր ունի։ Նա տեսնում էր, որ վերջերս շատ բան է փոխվել հասարակության վարվելակերպի մեջ, որ մոր պարտավորություններն է՛լ ավելի են ծանրացել։ Նա տեսնում էր, որ Կիտիի հասակակիցները կազմում էին ինչ-որ ընկերություններ, հաճախում էին ինչ-որ դասընթացներ, ազատ են վերաբերվում տղամարդկանց հետ, կառքով մենակ երթևեկում փողոցներում, շատերը չէին խոնարհվում և, որ գլխավորն է, ամենքը հաստատ համոզված էին, թե իրենց համար ամուսին ընտրելն իրենց գործն է, ո՛չ թե ծնողների։ «Այժմ այլևս այնպես չեն ամուսնացնում, ինչպես առաջ», մտածում և ասում էին այն բոլոր ջահել աղջիկները, նույնիսկ ծեր մարդիկ։ Բայց թե ինչպես են այժմ ամուսնացնում, իշխանուհին չէր կարողանում իմանալ ոչ ոքից։ Ընդունված չէր, դատապարտվում էր ֆրանսիական սովորույթը, որի համաձայն ծնողներն էին վճռում իրենց զավակների բախտը։ Անգլիական սովորույթը՝ աղջկա կատարյալ ազատությունը՝ նույնպես ընդունված չէր և անհնարին էր ռուսական հասարակության մեջ։ Հարսնախոսության ռուսական սովորույթը համարվում էր մի տեսակ այլանդակություն, որի վրա ծիծաղում էին ամենքը, նույն ինքը՝ իշխանուհին։ Բայց ոչ ոք չգիտեր, թե ինչպես պետք է ամուսնանալ և ամուսնացնել։ Ամենքը, ում հետ պատահում էր խոսել դրա մասին, իշխանուհուն ասում էին մի բան միայն. «Ներեցեք, մեր օրերում ժամանակն է արդեն թողնելու այդ հնամոլությունը։ Չէ՞ որ ամուսնանալ են ուզում ջահելները, ո՛չ թե նրանց ծնողները. ուրեմն ջահելներին էլ պետք է թողնել՝ կատարել գործը, կարգավորել իրենց գիտեցածի պես»։ Սակայն, այդպես խոսելը լավ էր նրանց համար, ովքեր աղջիկներ չունեին, իսկ իշխանուհին հասկանում էր, որ

[illegible] աղջիկը կարող [illegible] հարվել, և [illegible] ուզում ամուսնանալ, [illegible] նրան, ով անպետք է որպես ամուսին։ Եվ ինչքան էլ ներշնչեին իշխանուհուն, թե մեր ժամանակ ջահելներն իրենք պիտի տնօրինեն իրենց բախտը, նա չէր կարող հավատալ դրան, ինչպես չէր կարող հավատալ այն բանին, թե երբևիցե հնգամյա երեխաների համար լավագույն խաղալիք պիտի լինեն լցված ատրճանակները։ Այդ պատճառով իշխանուհին ավելի մտատանջվում էր Կիտիի համար, քան մեծ աղջիկների։

Այժմ իշխանուհին վախենում էր, չլինի թե Վրոնսկին սահմանափակվի իր աղջկան սիրագուրելով միայն։ Նա տեսնում էր, որ աղջիկն արդեն սիրահարված է նրան, բայց իրեն մխիթարում էր նրանով, որ Վրոնսկին ազնիվ մարդ է, ուստի այդպիսի բան չի անի։ Բայց միաժամանակ իշխանուհին գիտեր, թե միմյանց հետ շփվելու այժմյան ազատությամբ որքան հեշտ է գլխահան անել աղջկան և առհասարակ ինչպես թեթև են նայում տղամարդիկ այդ հանցանքի վրա։ Անցյալ շաբաթ Կիտին պատմեց մորը մազուրկայի ժամանակ Վրոնսկու հետ ունեցած իր խոսակցությունը։ Այդ խոսակցությունը մասամբ հանգստացրեց իշխանուհուն, բայց նա չէր կարող [illegible] հանգիստ լինել։ Վրոնսկին ասաց Կիտիին, թե իրենք, երկու եղբայրները, այնպես վարժվել են ամեն բանում ենթարկվելու իրենց մորը, որ երբեք սիրտ չեն անի ձեռնարկել որևէ կարևոր գործ, առանց խորհրդակցելու նրա հետ։ «Եվ այժմ ես սպասում եմ, ինչպես առանձին բախտի, Պետերբուրգից մայրիկիս գալուն», ասաց նա։

Կիտին պատմեց դա, ոչ մի նշանակություն չտալով այդ խոսքերին։ Բայց մայրը հասկացավ այլ կերպ։ Նա գիտեր, որ օրավուր սպասում են պառավին, գիտեր, որ պառավը կուրախանա որդու ընտրության համար, և ինչխանուհուն տարօրինակ էր թվում, որ Վրոնսկին առաջարկություն չի անում, վախենալով վիրավորել մորը։ Սակայն իշխանուհին այնպես ուզում էր թե՛ այդ ամուսնությունը, թե՛ առավել ևս իր տագնապներից ազատվելը, որ հավատում էր դրան։ Ինչքան էլ դառն էր իշխանուհու համար տեսնել այժմ իր ավագ դուստր Դոլլիի դժբախտությունը, որը պատրաստվում էր թողնել ամուսնուն, կրտսեր աղջկա վճռվելիք բախտի հետ կապված հուզմունքը կլանում էր նրա բոլոր զգացումները։ Այսօր, Լևինի երևան գալով, ավելացավ մի նոր անհանգստություն. իշխանուհին վախենում էր, չլինի թե իր աղջիկը, որ, ինչպես թվում էր նրան, մի ժամանակ ջերմ զգացմունք ուներ դեպի Լևինը, մերժի Վրոնսկուն, ավելորդ ազնվությունից, և առհասարակ՝ չլինի թե Լևինի գալը խճճի, ուշացնի այն գործերը, որոնք այնքան մոտ են իրենց վախճանին։

— Ի՞նչ է անում նա, վաղո՞ւց է եկել,— ասաց իշխանուհին Լևինի մասին, երբ նրանք վերադարձան տուն։

— Այսօր, maman։

— Ես ուզում եմ մի բան ասել...— սկսեց իշխանուհին, և նրա լուրջ-աշխույժ դեմքից Կիտին հասկացավ, թե ինչի մասին է խոսք լինելու։

— Մայրիկ,— ասաց նա, բռնկվելով և արագ շուռ գալով դեպի մայրը,— խնդրում եմ, աղաչում, ոչինչ մի խոսեք դրա մասին։ Ես գիտեմ, ես բոլորը գիտեմ։

Կիտին ցանկանում էր միևնույն բանը, ինչ ցանկանում էր և մայրը, բայց մոր ցանկության մոտիվները վիրավորում էին նրան։

— Ես միայն ուզում եմ ասել, որ հույս տալով մեկին...

— Մայրիկ, հոգյակս, ի սեր աստծո, մի՛ խոսեք։ Այնպես սարսափելի է դրա մասին խոսելը։

— Չեմ խոսի,— ասաց մայրը, տեսնելով արցունքներ աղջկա աչքերում.— բայց մի բան, հոգյակս. դու ինձ խոստացել ես, որ գաղտնիք չես պահի ինձնից։ Չե՞ս պահի։

— Երբեք, մայրիկ, ո՛չ մի գաղտնիք,— պատասխանեց Կիտին, կարմրելով և նայելով ուղիղ մոր դեմքին։— Բայց այժմ ես ասելու բան չունեմ։ Ես... ես... եթե ուզենայի, չգիտեմ թե ի՛նչ ասեմ և ինչպես... չգիտեմ...

«Ո՛չ, նա չի կարող սուտ ասել այդպիսի աչքերով», մտածեց մայրը, ժպտալով աղջկա հուզմունքի և բախտի համար։ Իշխանուհին ժպտաց, տեսնելով, թե ինչ հսկայական ու նշանակալից է թվում իր խեղճ դստրիկին այն, որ այժմ կատարվում է նրա հոգում։

XIII

Կիտին ճաշից հետո և մինչև երեկոյի սկիզբը այն զգացումն ուներ, ինչ զգացում ունենում է պատանին ճակատամարտից առաջ։ Նրա սիրտը բաբախում էր ուժգին, և մտքերը չէին կարողանում կանգ առնել ոչ մի բանի վրա։

Նա զգում էր, որ այսօրվա երեկոն, երբ նրանք առաջին անգամ պատահում են իրար, պետք է վճռական լինի իր ճակատագրի համար։ Եվ նա անդադար պատկերացնում էր նրանց՝ մերթ յուրաքանչյուրին առանձին, մերթ երկուսին միասին։ Երբ նա մտածում էր անցյալի մասին, բավականությամբ և քնքշորեն կանգ էր առնում Լևինի հետ ունեցած իր հարաբերությունների հիշողությունների վրա։ Մանկության հուշերը և իր մեռած եղբոր հետ Լևինի բարեկամության հիշողությունները տալիս էին իր և նրա հարաբերություններին բանաստեղծական առանձին գրավչություն։ Դեպի իրեն տածած նրա սերը, որի մեջ համոզված էր, շոյիչ ու բերկրալից էր իր համար։ Եվ Կիտին հեշտ ու թեթև էր հիշել Լևինին։ Իսկ Վրոնսկու մասին հիշողություններին խառնվում էր ինչ-որ անհարմար բան, թեև նա վերին աստիճանի բարեվայելուչ ու հանգիստ մարդ էր, կարծես, ինչ-որ կեղծ բան կար, այն էլ ո՛չ թե Վրոնսկու մեջ,— նա շատ պարզ ու համակրելի էր,— այլ հենց իր մեջ, մինչդեռ Լևինի հետ նա իրեն զգում էր բոլորովին հասարակ ու պայծառ։ Բայց դրա փոխարեն հենց որ նա մտածում էր Վրոնսկու հետ ունենալիք ապագայի մասին, նրա առաջ բացվում էր շողունչանիկ հեռանկար, իսկ Լևինի հետ ապագան պատկերանում էր միգապատ։

Բարձրանալով վերև հագնվելու և նայելով հայելուն, Կիտին ուրախությամբ նկատեց, որ ինքը գտնվում է իր լավ օրերից մեկում և լիովին տիրապետում է իր բոլոր ուժերին, իսկ դա այնքան հարկավոր է իրեն առաջիկայի համար. նա զգում էր իր մեջ արտաքին անդորրություն և շարժումների ազատ նաղանք։

Յոթից կես անց, հենց որ Կիտին իջավ ընդունարան, սպասավորը զեկուցեց. «Կոնստանտին Դմիտրիչ Լևինը»։ Իշխանուհին դեռ գտնվում էր իր սենյակում, իշխանն էլ դուրս չէր գալիս։ «Այդ է, որ կա», մտածեց Կիտին, և նրա ամբողջ արյունը հորդեց դեպի սիրտը։ Նայելով հայելուն՝ նա սարսափեց իր դժգունությունից։

Այժմ Կիտին հաստատ գիտեր, որ Լևինը վաղ է եկել այն նպատակով, որ իրեն մենակ գտնի և առաջարկություն անի։ Ու այստեղ միայն, առաջին անգամ, այդ ամբողջ գործը պատկերացավ նրան մի բոլորովին այլ, նոր կողմից։ Այստեղ միայն նա հասկացավ, որ հարցը վերաբերում է ո՛չ միայն իրեն, ում հետ ինքը բախտավոր կլինի և ում սիրում է, այլ որ այս րոպեին ինքը պիտի վիրավորի այն մարդուն, որին սիրում է։ Եվ վիրավորի խստագույնս... Ինչո՞ւ։ Որովհետև այդ համակրելի մարդը սիրում է իրեն, սիրահարված է իրեն։ Բայց ճար չկա, այդպե՛ս է հարկավոր. այդպե՛ս է պետք։

«Ախտված իմ, մի՞թե դա ես ինքս պիտի ասեմ նրան,— մտածեց Կիտին։— Մի՞թե ես կասեմ, որ չեմ սիրում նրան։ Դա ճիշտ չի լինի։ Հապա ի՞նչ ասեմ։ Ասեմ, որ սիրում եմ ուրիշի՞ն։ Ոչ, անհնար է դա։ Ես դուրս կգնամ, կհեռանամ»։

Կիտին արդեն մոտենում էր դռանը, երբ լսեց նրա քայլերը։ «Ո՛չ, անազնվություն է։ Ինչի՞ց եմ վախենում։ Ես ոչ մի վատ բան չեմ արել։ Ինչ լինելու է, կլինի։ Կասեմ ճշմարտությունը։ Անհարմար չի լինի։ Ահա նա», ասաց Կիտին իրեն, տեսնելով նրա ամբողջ ուժեղ ու վեհերոտ կերպարանքը, իր վրա հառած փայլուն աչքերով։ Կիտին ուզիղ նայեց նրա երեսին, կարծես աղերսելով նրան խնայելու իրեն, և ձեռք տվեց։

— Կարծես ես եկա անժամանակ, չափազանց վաղ,— ասաց Լևինը, դիտելով դատարկ ընդունարանը։ Երբ նա տեսավ, որ արդարացան իր ակնկալությունները, որ ոչինչ չի խանգարում իրեն արտահայտվելու, նրա դեմքը մռայլվեց։

— Օ՛, ոչ,— ասաց Կիտին ու նստեց սեղանի մոտ։

— Բայց ես հենց ուզում էի, որ ձեզ մենակ գտնեմ,— սկսեց Լևինը, առանց նստելու և առանց նայելու նրա վրա, օրպեսզի չկորցնի համարձակությունը։

— Մայրիկը հիմա դուրս կգա։ Նա երեկ շատ հոգնեց։ Երեկ...

Կիտին խոսում էր, ինքն էլ չիմանալով, թե ի՞նչ են ասում իր շրթունքները, և չհեռացնելով նրա վրայից իր աղերսող ու շոյող հայացքը։

Լևինը նայեց նրան. Կիտին կարմրեց ու լռեց։

— Ես ասացի ձեզ, որ չգիտեմ, արդյոք երկա՞ր ժամանակով եմ եկել... որ դա կախված է ձեզանից...

Կիտին ավելի ու ավելի կախ էր գցում գլուխը, ինքն էլ չիմանալով, թե ի՞նչ կպատասխանի մոտեցող հարցին։

— Որ դա կախված է ձեզանից,— կրկնեց նա։— Ես ուզում էի ասել... ես ուզում էի ասել... Ես եկա նրա համար... որ... լինեք իմ կինը,— թոթովեց նա, ինքն էլ չիմանալով, թե ի՞նչ է ասում։ Բայց զգալով, որ արդեն ասված է ամենասարսափելին, կանգ առավ ու նայեց իշխանազնուհուն։

Կիտին ծանր շնչում էր, առանց նրան նայելու։ Կիտին ճիացմունք էր զգում։ Նրա սիրտը լցվել էր երջանկությամբ։ Նա ո՛չ մի կերպ չէր սպասում, որ Լևինի արտահայտած սերը այդպիսի ուժեղ տպավորություն կթողնի իր վրա։ Սակայն դա տևեց միայն մի վայրկյան։ Նա հիշեց Վրոնսկուն։ Իր լուսաշող շիտակ աչքերը բարձրացրեց Լևինի վրա և տեսնելով նրա հուսահատ դեմքը, շտապ պատասխանեց.

— Դա չի կարող լինել... Ներեցեք ինձ։

Մի րոպե առաջ Կիտին ինչպե՞ս մոտիկ էր նրան, ինչպե՞ս կարևոր էր նրա կյանքի համար։ Եվ այժմ դարձավ այնպես օտար ու հեռու։

— Դա այլ կերպ չէր կարող լինել,— ասաց Լևինը, առանց նայելու նրան։ Նա գլուխ տվեց և ուզում էր գնալ։

XIV

Հենց այդ ժամանակ եկավ իշխանուհին։ Նրա դեմքի վրա սարսափ պատկերվեց, երբ տեսավ նրանց երկուսով և նկատեց նրանց հուզված երեսները։ Լևինը գլխով ողջունեց նրան ու ոչինչ չասաց։ Կիտին լուռ էր, չէր բարձրացնում աչքերը։ «Փառք աստծո, մերժել է»,— ասաց մայրը, և նրա դեմքը փայլեց սովորական ժպիտով, որով նա դիմավորում էր հյուրերին հինգշաբթի օրերը։ Նա նստեց և սկսեց հարցուփորձ անել Լևինին գյուղում վարած նրա կյանքի մասին։ Լևինը նստեց նորից, սպասելով հյուրերի գալուն, որ աննկատելի հեռանա։

Հինգ րոպեից ներս մտավ Կիտիի ընկերուհին, կոմսուհի Նորդստոնը, որ անցյալ ձմեռ էր ամուսնացել։

Դա փայլուն սև աչքերով, շոր ու դեղնած, հիվանդոտ և

ջղային կին էր։ Նա սիրում էր Կիտիին, և նրա սերը դեպի իր ընկերուհին, ինչպես միշտ լինում է ամուսնացած կանանց սերը դեպի աղջիկները, արտահայտվում էր իր բախտի իդեալի համաձայն՝ Կիտիին ամուսնացնելու մեջ. նա ուզում էր Կիտիին պսակել Վրոնսկու հետ։ Նրան միշտ տհաճ էր Լևինը, որին ձմեռվա սկզբին նա հաճախ պատահում էր Շչերբացկիների տանը։ Կոմսուհու մշտական ու սիրելի զբաղմունքն էր ծաղրել Լևինին՝ նրան հանդիպելիս։

— Ես սիրում եմ, երբ նա նայում է ինձ իր մեծության բարձրությունից կամ դադարեցնում է իր խելոք խոսակցությունն ինձ հետ, որովհետև ես տխմար եմ, և կամ շնորհ է անում լսելու ինձ։ Ես շատ եմ սիրում այդ՝ շնո՞րհ անելը։ Ես շատ ուրախ եմ, որ նա տանել չի կարող ինձ,— ասում էր կոմսուհին նրա մասին։

Նա իրավացի էր, որովհետև Լևինը տանել չէր կարող կոմսուհուն և արհամարհում էր նրան այն բանի համար, ինչով նա պարծենում էր ու ինչը համարում էր իր արժանիքը,— նրա ջղայնության համար, այլև կոպիտ ու կենցաղային ամեն ինչի նկատմամբ նրա ունեցած նուրբ արհամարհանքի և անտարբերության համար։

Նորդստոնի ու Լևինի միջև հաստատվել էր բարձր հասարակության մեջ հաճախ պատահող այն հարաբերությունը, երբ երկու մարդ, արտաքուստ մնալով բարեկամական հարաբերությունների սահմաններում, արհամարհում են իրար այն աստիճան, որ չեն կարող նույնիսկ լրջորեն վերաբերվել միմյանց և չեն կարող մինչև իսկ իրարից վիրավորվել։

Կոմսուհի Նորդստոնն անմիջապես հարձակվեց Լևինի վրա։

— Ա՜, Կոնստանտին Դմիտրիչ, նորից եկել եք մեր անառակ Բաբելոնը,— ասաց կոմսուհին, տալով նրան իր փոքրիկ դեղին ձեռքը և հիշելով նրա խոսքերը, որ ձմեռվա սկզբին մի անգամ ասել էր նա, թե Մոսկվան Բաբելոն է։— Արդյոք Բաբելո՞նն է ուղղվել, թե՞ դուք եք փչացել,— ավելացրեց նա, քմծիծաղով նայելով Կիտիին։

— Ես շատ շոյված եմ, կոմսուհի, որ դուք այդպես հիշում եք իմ խոսքերը,— պատասխանեց Լևինը, որն արդեն ուշքի էր եկել և անմիջապես, ըստ իր սովորության, վերցնելով ֆշնա-

մական կատակի տոն կոմսուհի Նորդստոնի նկատմամբ։— Հավանորեն, նրանք շատ խիստ են ազդում ձեզ վրա։

— Ա՜խ, ինչպե՜ս չէ։ Ես գրի եմ առնում ձեր խոսքերը։ Ի՞նչ կա, Կիտի, դու էլի սահո՞ւմ էիր չմուշկներով։

Եվ նա սկսեց խոսել Կիտիի հետ։ Որքան էլ անհարմար լիներ Լևինի համար այժմ հեռանալը, այնուամենայնիվ, ավելի հեշտ էր անել այդ անհարմար քայլը, քան մնալ ամբողջ երեկոն ու տեսնել Կիտիին, որը երբեմն-երբեմն նայում էր նրան և խուսափում նրա հայացքից։ Լևինն ուզում էր վեր կենալ, բայց իշխանուհին նկատելով, որ նա լուռ է, դիմեց նրան.

— Դուք երկա՞ր ժամանակով եք եկել Մոսկվա։ Չէ՞ որ դուք, կարծեմ, զբաղվում եք հաշտարար զեմստվոյում և չեք կարող երկար ժամանակով բացակայել։

— Ո՛չ, իշխանուհի, ես այլևս չեմ զբաղվում զեմստվոյով,— ասաց նա։— Ես եկել եմ մի քանի օրով։

«Նրա հետ արտակարգ բան է պատահել,— մտածեց կոմսուհի Նորդստոնը, խորազնին նայելով նրա խիստ, լուրջ դեմքին,— նա ինչ-որ չի խորանում իր դատողությունների մեջ։ Բայց ես համբերությունից կհանեմ նրան։ Սաստիկ սիրում եմ նրան հիմարացնել Կիտիի առաջ և կհիմարացնեմ»...

— Կոնստանտին Դմիտրիչ,— ասաց կոմսուհին,— խնդրեմ, բացատրեք ինձ, թե ի՞նչ է նշանակում, դուք այդ բոլորը գիտեք, որ մեզ մոտ, Կալուգայի գյուղում, բոլոր մուժիկներն ու բոլոր կնիկները ծախել, խմել են իրենց ամբողջ ունեցածը և այժմ մեզ ոչինչ չեն վճարում։ Դա ի՞նչ է նշանակում։ Դուք միշտ այնպես գովում եք մուժիկներին։

Այդ ժամանակ ներս եկավ էլի մի տիկին, և Լևինը կանգնեց։

— Ներեցե՛ք ինձ, կոմսուհի, բայց ես, ճիշտն ասած, այդպիսի բան չգիտեմ ու ոչինչ չեմ կարող ասել ձեզ,— ասաց նա և շուռ եկավ, նայեց տիկնոջ ետևից ներս մտած զինվորականին։

«Դա պետք է Վրոնսկին լինի», մտածեց Լևինը և համոզվելու համար նայեց Կիտիին։ Վերջինս արդեն հասցրել էր նայել Վրոնսկուն ու հայացքը դցեց Լևինի վրա։ Եվ ակամա փայլող նրա աչքերի այդ արտահայտությունից Լևինը հասկացավ, որ նա սիրում է այդ մարդուն, հասկացավ այնպես ճիշտ,

ինչպես եթե նա խոսքերով ասեր իրեն։ Բայց ի՞նչ մարդ է դա։

Այժմ լավ էր դա, թե վատ, Լևինը չէր կարող չմնալ. նա պետք է իմանար, թե ի՞նչ մարդ է դա, որին սիրում է Կիտին։

Կան մարդիկ, որոնք պատահելով որևէ բանով երջանիկ իրենց մրցակցին, պատրաստ են անմիջապես երես դարձնելու այն բոլոր լավից, ինչ որ կա նրա մեջ, և տեսնել նրա մեջ միայն վատը. կան մարդիկ, որոնք, ընդհակառակը, ամենից ավելի ցանկանում են գտնել իրենց այդ երջանիկ մրցակցի մեջ այն հատկությունները, որոնցով նա հաղթել է իրենց և արտամորմոք ցավով որոնում են նրա մեջ միայն լավը։ Լևինը պատկանում էր այս մարդկանց թվին։ Բայց նրա համար դժվար չէր որոնել ու գտնել Վրոնսկու մեջ լավը և հրապուրիչը։ Դա մեկեն ընկավ նրա աչքին։ Վրոնսկին ո՛չ բարձրահասակ, պնդակազմ բրյունետ էր, բարեսիրտ, գեղեցիկ, չափազանց հանգիստ ու հաստատուն դեմքով։ Նրա դեմքի և կերպարանքի մեջ, սկսած կարճ խուզած սև մազերից ու նոր ածիլած կզակից մինչև լայն, նոր կարած շքեղ համազգեստը, ամեն բան պարզ էր և միաժամանակ նրբագեղ։ Ճանապարհ տալով ներս մտած տիկնոջը, Վրոնսկին մոտեցավ իշխանուհուն, ապա Կիտիին։

Այն միջոցին, երբ նա մոտենում էր Կիտիին, նրա գեղեցիկ աչքերը փայլեցին առանձնապես քնքուշ, և հազիվ նկատելի երջանիկ ու համեստ-հաղթական ժպիտով (այդպես թվաց Լևինին), հարգալից ու զգույշ կռանալով դեպի Կիտին, նա մեկնեց իր ո՛չ մեծ, բայց լայն ձեռքը։

Բարևելով ամենքին և ասելով մի քանի խոսք, նստեց, ո՛չ մի անգամ չնայելով աչքերն իր վրայից չհեռացնող Լևինին։

— Թույլ տվեք ծանոթացնել ձեզ,— ասաց իշխանուհին, նշելով Լևինին։ — Կոնստանտին Դմիտրիչ Լևին։ Կոմս Ալեքսեյ Կիրիլլովիչ Վրոնսկի։

Վրոնսկին կանգնեց և, բարեկամաբար նայելով Լևինի աչքերին, սեղմեց նրա ձեռքը։

— Այս ամեռ կարծեմ ես պետք է ճաշեի ձեզ հետ,— ասաց նա, ժպտալով իր պարզ ու բաց ժպիտով,— բայց դուք անակնկալ մեկնեցիք գյուղ։

— Կոնստանտին Դմիտրիչն արհամարհում և ատում է քա-

դաքն ու մեզ՝ քաղաքացիներիս,— ասաց կոմսուհի Նորդ-դրստոնը։

— Երևի իմ խոսքերը խիստ ազդում են ձեզ վրա, որ դուք այդպես հիշում եք դրանք,— ասաց Լևինը և հիշելով, որ արդեն դա ասել էր առաջ, կարմրեց։

Վրոնսկին նայեց Լևինին ու կոմսուհի Նորդստոնին և ժպտաց։

— Դուք միշտ ապրում եք գյուղո՞ւմ,— հարցրեց նա։ Ես կարծում եմ, ձմեռը ձանձրալի է։

— Ձանձրալի չէ, եթե զբաղմունք կա, թեպետ մենակ էլ ձանձրալի չէ,— պատասխանեց Լևինը խիստ։

— Ես սիրում եմ գյուղը,— ասաց Վրոնսկին, նկատելով և ձևանալով, իբր չի նկատում Լևինի տոնը։

— Բայց հուսամ, կոմս, որ դուք չէիք համաձայնվի միշտ ապրել գյուղում,— ասաց կոմսուհի Նորդստոնը։

— Չգիտեմ, չեմ փորձել երկար ժամանակ ապրել։ Ես տարօրինակ զգացում ունեի,— շարունակեց նա։— Ո՛չ մի տեղ այնպես չէի կարոտում գյուղին, ռուսական գյուղին, տրեխներով ու մուժիկներով, ինչպես Նիցցայում, որտեղ անցկացրի մի ձմեռ մայրիկիս հետ։ Դուք գիտեք, որ Նիցցան ինքնին ձանձրալի է։ Ասենք, Նեապոլը, Սորենտոն նույնպես լավ են կարճ ժամանակով միայն։ Եվ հենց առանձնապես վառ այնտեղ է մտաբերվում Ռուսաստանը, և հատկապես գյուղը։ Նրանք կարծես թե...

Նա խոսում էր, դիմելով և՛ Կիտիին, և՛ Լևինին, փոխադրելով իր բարեկամական ու հանգիստ հայացքը մեկից մյուսի վրա. ասում էր պարզապես այն, ինչ միտն էր գալիս։

Նկատելով, որ կոմսուհի Նորդստոնն ուզում է մի բան ասել, նա կանգ առավ, առանց վերջացնելու ասելիքը, և սկսեց ուշադրությամբ լսել նրան։

Խոսակցությունը չէր դադարում ոչ մի րոպե, այնպես որ պառավ իշխանուհին, որը թեմայի պակասության դեպքում պահեստի համար ուներ երկու ծանր թնդանոթ՝ դասական ու ռեալական կրթությունը և ընդհանուր զինապարտությունը, ստիպված չեղավ առաջ քաշել դրանք, իսկ կոմսուհի Նորդ-ստոնն առիթ չունեցավ գրգռելու Լևինին։

Լևինն ուզում էր և չէր կարողանում մասնակցել ընդհանուր խոսակցությանը, ամեն րոպե ասելով ինքն իրեն. «Այժմ պիտի հեռանալ», բայց չէր հեռանում, սպասելով ինչ-որ բանի։

Խոսք բացվեց պտտվող սեղանների ու ոգիների մասին, և կոմսուհի Նորդստոնը, որ հավատում էր սպիրիտիզմին, սկսեց պատմել իր տեսած հրաշքները։

— Ա՜խ, կոմսուհի, անպայման տարեք, ի սեր աստծո, տարեք ինձ նրանց մոտ։ Ես երբեք չեմ տեսել անսովոր ո՛չ մի բան, թեև ամենուր որոնում եմ,— ասաց Վրոնսկին ժպտալով։

— Լավ, եկող շաբաթ օրը,— պատասխանեց կոմսուհի Նորդստոնը։ — Իսկ դուք, Կոնստանտին Դմիտրիչ, հավատո՞ւմ եք,— հարցրեց նա Լևինին։

— Ինչո՞ւ եք հարցնում։ Չէ՞ որ դուք գիտեք, թե ի՞նչ կասեմ ես։

— Ես ուզում եմ լսել ձեր կարծիքը։

— Իմ կարծիքը միայն այն է,— պատասխանեց Լևինը,— թե այդ պտտվող աթոռներն ապացուցում են, որ այսպես կոչված կրթված հասարակությունը բարձր չէ մուժիկներից։ Նրանք հավատում են չար աչքին, հմայության, կախարդության, իսկ մենք...

— Ուրեմն դուք չե՞ք հավատում։

— Չեմ կարող հավատալ, կոմսուհի։

— Իսկ եթե ես ի՛նքս եմ տեսել։

— Գյուղի կնիկները նույնպես պատմում են, թե ինչպես իրենք տեսել են չարքերին։

— Ուրեմն դուք կարծում եք, որ ես ճիշտ չեմ ասում։

Եվ նա անուրախ ծիծաղեց։

— Չէ՛, է՛, Մաշա, Կոնստանտին Դմիտրիչն ասում է, թե ինքը չի կարող հավատալ,— ասաց Կիտին, կարմրելով Լևինի փոխարեն. Լևինը հասկացավ դա և է՛լ ավելի գրգռվելով ուզում էր պատասխանել, բայց Վրոնսկին իր բաց, ուրախ ժպիտով անմիջապես օգնության հասավ խոսակցությանը, որ սպառնում էր դառնալ անախորժ։

— Դուք բոլորովին հնարավոր չեք համարում։ Իսկ ինչո՞ւ։ Մենք ենթադրում ենք էլեկտրականության գոյությունը, որը չգիտենք, իսկ ինչո՞ւ չի կարող լինել մեզ անհայտ մի նոր ուժ, որը...

— Երբ գտնվեց էլեկտրականությունը,— արագ ընդհատեց Լևինը,— դա հայտնաբերված երևույթ էր ու հայտնի չէր, թե որտեղից է այն առաջանում և ի՞նչ է առաջացնում, ու դրանից հետո անցան դարեր, մինչև մտածեցին նրա օգտագործման մասին։ Իսկ սպիրիտներն, ընդհակառակը, սկսեցին նրանից, իբր սեղանները նրանց համար գրում են և ոգիները գալիս են նրանց մոտ, ապա միայն սկսեցին ասել, թե դա անհայտ ուժ է։

Վոռնսկին ուշադիր լսում էր Լևինին, ինչպես նա լսում էր միշտ, հայտնապես հետաքրքրվելով նրա խոսքերով։

— Այո՛, բայց սպիրիտներն ասում են. այժմ մենք չգիտենք, թե ի՞նչ ուժ է դա, բայց ուժը կա, և ահա թե որպիսի՛ պայմաններում է գործում նա։ Իսկ գիտնականները թող հայտնաբերեն, թե ինչումն է կայանում այդ ուժը։ Ո՞չ, ես համաձայն չեմ, թե ինչո՞ւ չի կարող լինել նոր ուժ, եթե նա...

— Այն պատճառով,— նորից ընդհատեց Լևինը,— որ էլեկտրականության դեպքում՝ ամեն անգամ, երբ դուք խնձը շրփում եք բրդին. երևան է գալիս հայտնի երևույթ, իսկ այստեղ՝ ոչ ամեն անգամ, ուրեմն դա բնական երևույթ չէ։

Երևի զգալով, որ խոսակցությունն ընդունում է չափազանց լուրջ բնույթ ընդունարանում եղողների համար, Վոռնսկին չառարկեց, այլ աշխատելով փոխել խոսակցության նյութը, ուրախ ժպտաց ու դարձավ տիկիններին։

— Եկեք հենց այժմ փորձենք, կոմսուհի,— սկսեց նա, բայց Լևինն ուզում էր ասել, վերջացնել այն, ինչ կարծում էր։

— Ես կարծում եմ,— շարունակեց նա,— որ սպիրիտների այդ փորձը՝ իրենց հրաշքները բացատրել ինչ-որ նոր ուժով, ամենաանհաջողն է։ Նրանք ուղղակի ասում են հոգևոր ուժի մասին և ուզում են այն ենթարկել նյութական փորձի։

Բոլորը սպասում էին, թե նա ե՞րբ կվերջացնի, և նա զգում էր այդ։

Իսկ ես կարծում եմ, որ դուք հիանալի մեդիում կլինեք,— ասաց կոմսուհի Նորդստոնը,— ձեր մեջ ինչ-որ զմայլանք կա։

Լևինը բերանը բացեց, ուզում էր մի բան ասել, կարմրեց ու ոչինչ չասաց։

— Իշխանուհի, խնդրեմ, եկեք հենց հիմա փորձենք սե-

դանները,— ասաց Վոռնսկին— Իշխանուհի՛, դուք թույլ կտա՞ք։

Եվ Վոռնսկին կանգնեց, աչքերով սեղան որոնելով։

Կիտին վեր կացավ, որ սեղան բերի և անցնելով Լևինի մոտից, նրանց աչքերը հանդիպեցին իրար։ Կիտին ամբողջ հոգով խղճում էր նրան, խղճում էր մանավանդ այն դժբախտության համար, որի պատճառն ինքն էր։ «Եթե կարելի է ներել ինձ, ներեցեք,— ասաց Կիտիի հայացքը,— ես այնպես բախտավոր եմ»։

«Ատում եմ ամենքին, և՛ ձեզ, և՛ ինձ», ասաց Լևինի հայացքը, և նա վերցրեց գլխարկը։ Բայց նրան վիճակված չէր հեռանալ։ Այն րոպեին, երբ ուզում էին տեղավորվել փոքրիկ սեղանի շուրջը, իսկ Լևինն ուզում էր գնալ, մտավ ծերունի իշխանը և բարևելով տիկիններին, դիմեց Լևինին։

— Ա՜,— սկսեց նա խնդալից,— վաղո՞ւց է։ Ես չգիտեի, որ դու այստեղ ես։ Շատ ուրախ եմ ձեզ տեսնելուս։

Ծերունի իշխանը Լևինին ասում էր երբեմն դու, երբեմն՝ դուք։ Նա գրկեց Լևինին և խոսելով նրա հետ, չէր նկատում Վոռնսկուն, որը կանգնեց ու հանգիստ սպասում էր, մինչև իշխանը կդիմի իրեն։

Կիտին զգում էր, թե որքան ծանր է Լևինի համար հոր սիրալիրությունն այն բանից հետո, ինչ տեղի ունեցավ։ Կիտին տեսավ նույնպես, թե հայրը որքան սառը պատասխանեց Վոռնսկու ողջույնին, և Վոռնսկին ինչպես նայեց հորը բարեկամական տարակուսանքով, աշխատելով հասկանալ, բայց չհասկանալով, թե ինչպե՞ս և ինչի՞ համար կարելի է անբարյացակամ վերաբերվել իրեն, ու Կիտին կարմրեց։

— Իշխա՞ն, տվեք մեզ Կոնստանտին Դմիտրիչին,— ասաց կոմսուհի Նորդստոնը։ — Մենք ուզում ենք փորձ անել։

— Ի՞նչ փորձ. սեղանն՞ը պտտեցնել։ Ներեցեք ինձ, տիկիններ և պարոններ. ըստ իս, մատնիք խաղալն ավելի ուրախ բան է,— ասաց ծերունի իշխանը, նայելով Վոռնսկուն ու զբաղվի ընկնելով, որ դա նրա սարքած բանն է։ — Մատնիքի մեջ դեռ իմաստ կա։

Վոռնսկին զարմանքով նայեց իշխանին իր հաստատուն աչքերով ու հազիվ նկատելի ժպտաց, ապա նա անմիջապես

խոսեց կոմսուհի Նորդստոնի հետ՝ եկող շաբաթ կայանալիք մեծ պարահանդեսի մասին։

— Հուսով եմ, որ դուք կլինեք,— դիմեց նա Կիտիին։

Հենց որ ծերունի իշխանը շուռ եկավ Լևինից, նա աննկատելի դուրս գնաց, և վերջին տպավորությունը, որ տարավ իր հետ այդ երեկոյից, Կիտիի ժպտուն, երջանիկ դեմքն էր, որով իշխանազնուհին պատասխանեց պարահանդեսի մասին Վրոնսկու հարցին։

XV

Երբ երեկոն վերջացավ, Կիտին պատմեց մորն իր խոսակցությունը Լևինի հետ և, չնայած խղճահարության այն զգացումին, որ տածում էր դեպի Լևինը, նրան ուրախացնում էր այն միտքը, որ իրեն առաջարկություն արեցին։ Նա կասկած չուներ, որ վարվեց ինչպես պետք էր։ Բայց անկողնում երկար ժամանակ քնել չէր կարողանում։ Մի տպավորություն աննահանջ հետապնդում էր նրան։ Դա Լևինի դեմքն էր՝ կիտած հոնքերով ու նրանց տակից մռայլ-տխուր նայող բարի աչքերով, երբ կանգնել էր նա, լսելով հորը և նայելով իրեն ու Վրոնսկուն։ Եվ այնպես խղճաց Լևինին, որ աչքերը լցվեցին արցունքով։ Բայց անմիջապես մտածեց այն մասին, թե ումո՞վ փոխարինեց նրան։ Նա վառ պատկերացրեց այդ առնական, ուժեղ դեմքը, այդ ազնիվ հանգստությունը և ամեն ինչում փայլող բարությունը. հիշեց դեպի ինքը տածած սերն այն մարդու, որին սիրում էր, ու նորից ուրախություն ծաղկեց նրա սրտում, և նա երջանկության ժպիտով պառկեց բարձին։ «Խղճում եմ, խղճում, բայց ի՞նչ արած, ես մեղավոր չեմ», ասում էր նա ինքն իրեն, բայց ներքին ձայնն ուրիշ բան էր ասում։ Նա չգիտեր, արդյոք ինքը զղջում է նրա՞ համար, որ հրապուրեց Լևինին, թե՝ որ մերժեց նրան։ Սակայն, նրա բախտավորությունը թունավորված էր կասկածներով։ «Տեր ողորմյա, տեր ողորմյա, տեր ողորմյա», ասում էր նա ինքն իրեն, մինչև քնեց։

Այդ ժամանակ, ներքևում, իշխանի փոքրիկ առանձնասենյակում տեղի ուներ սիրած աղջկա համար ծնողների միջև կրկնվող տեսարաններից մեկը։

— Ի՞նչ։ Ահա, թե ի՞նչ,— բղավում էր իշխանը, թափահարելով թևերը և անմիջապես իրար վրա քաշելով իր սկյուռի մորթուց խալաթի փեշերը,— այն, որ դուք չունեք հպարտություն, արժանապատվություն, որ դուք խայտառակում, կործանում եք ձեր աղջկան այդ ստոր ու տխմար հարսնախոսությամբ։

— Ասա՛, իշխան, ի սեր աստծո, ի՞նչ եմ արել ես,— ասում էր իշխանուհին, համարյա արտասվելով։

Աղջկա հետ խոսակցելուց հետո իշխանուհին երջանիկ, գոհ եկավ իշխանի մոտ՝ ըստ սովորության, գիշեր բարի ասելու նրան և թեև մտադիր չէր բան հայտնելու Լևինի առաջարկության ու Կիտիի մերժման մասին, բայց ակնարկեց ամուսնուն, թե իրեն թվում է, որ բանը բոլորովին վերջացած է Վրոնսկու հետ, որ այդ հարցը կվճռվի, հենց որ գա Վրոնսկու մայրը։ Եվ այստեղ, այս խոսքերի վրա իշխանը հանկարծ բռնկվեց, սկսեց բղավել անվայել խոսքեր։

— Ի՞նչ արիք դուք։ Ահա թե ի՞նչ. նախ՝ դուք գրավում հրապուրում եք փեսացուին, և ամբողջ Մոսկվան կսկսի խոսել ու իրավունք ունի։ Եթե դուք կազմակերպում եք երեկոներ, ուրեմն կանչեցեք ամենքին, և ո՛չ թե ընտրյալ փեսացուիկներին։ Կանչեցեք այդ բոլոր տյուտյուկներին (իշխանն այդպես էր կանչում Մոսկվայի երիտասարդներին), կանչեցեք պարերի դաշնակահարին, թող պարեն, և ոչ թե այնպես ինչպես այսօր, կանչել փեսացուիկների և զուգել։ Ես դա տեսնել չեմ կարող, դա գարշելի է, զզվելի և դուք հասաք ձեր նպատակին, գլխահան արիք աղջկան։ Լևինը հազար անգամ ավելի լավ մարդ է։ Իսկ պետերբուրգյան այդ ֆրանտը,— նրանց պատրաստում են մեքենայով, նրանք ամենքը միևնույն կազմությունն ունեն և ամենքն էլ զիբիլ են։ Եթե արյունով նա լիներ անգամ արքայազն, իմ աղջիկը կարիք չունի ոչ ոքի։

— Իսկ ես ի՞նչ արի, ի՞նչ եմ արել։

— Այն, որ... — ցասումով ճչաց իշխանը։

— Գիտեմ, եթե քեզ լսելու լինենք,— ընդհատեց իշխանուհին,— երբե՛ք չենք ամուսնացնի մեր աղջկան։ — Եթե այդպես է, պետք է գնալ գյուղ։

— Եվ ավելի լավ է գնալ։

— Բայց կաց։ Մի՞թե ես շողոքորթում եմ։ Քա՜վ լիցի։

բնավ երբեք։ Իսկ տղան, այն էլ շատ լավ տղա, սիրահարվել է, թվում է թե Կիտին նույնպես...

— Այո՛, այդ ձեզ թվո՛ւմ է։ Իսկ երբ աղջիկն իսկապես սիրահարվի, մինչդեռ տղան նույնքան է մտածում ամուսնանալ, որքան ես... Օ՜ֆ, երանի չտեսնեին աչքերս... «Ա՜խ, սպիրիտիզմ, ա՜խ, Նիցցա, ա՜խ, պարահանդեսում»...— Եվ իշխանը երևակայելով, թե պատկերացնում է կնոջը. ծունկ էր խոնարհում յուրաքանչյուր բառի հետ։— Իսկ ահա, երբ կդժբախտացնեն Կատինկային, երբ նա իրոք գլուխը կլցնի, թե...

— Բայց ինչո՞ւ ես այդպես կարծում։

— Չեմ կարծում, այլ գիտեմ. դրա համար աչքեր ունենք մենք, և ո՛չ թե կինարմատները։ Ես տեսնում եմ այն մարդուն, որ ունի լուրջ դիտավորություններ. դա Լևինն է. և տեսնում եմ մի լոր, ինչպես այդ թեթևսոլիկն է, որին միայն զվարճություն է պետք։

— Դու որ գլուխդ մի բան մտցրիր...

— Ա՛յ, կհիշես, բայց ուշ կլինի, ինչպես եղավ Դաշինկայի հետ։

— Դե, լավ, լավ, չխոսենք,— կանգնեցրեց նրան իշխանուհին, հիշելով դժբախտ Դոլլիի մասին։

— Հիանալի. դե, բարի գիշեր։

Եվ խաչակնքելով իրար ու համբուրվելով, բայց զգալով, որ յուրաքանչյուրը մնաց իր կարծիքին, ամուսինները բաժանվեցին։

Իշխանուհին սկզբում հաստատ համոզված էր, որ այսօրվա երեկոն վճռեց Կիտիի բախտը և որ ոչ մի կասկած չի կարող լինել Վրոնսկու դիտավորությունների նկատմամբ, բայց ամուսնու խոսքերը շփոթեցրին նրան։ Եվ վերադառնալով իր ննջարանը, նա ճիշտ այնպես, ինչպես Կիտին, համակված սարսափով ապագայի անհայտության հանդեպ, մի քանի անգամ կրկնեց մտքում. «Տեր ողորմյա, տեր ողորմյա, տեր ողորմյա»։

XVI

Վրոնսկին բնավ չգիտեր, թե ի՞նչ է ընտանեկան կյանքը։ Նրա մայրը ջահել ժամանակ նրբակիրթ աշխարհիկ կին էր, որ ամուսնության ժամանակ և մանավանդ նրանից հետո

ունեցել էր բազմաթիվ սիրավեպեր, որոնց մասին գիտեր ամբողջ բարձր հասարակությունը։ Վրոնսկին համարյա չէր հիշում իր հորը և դաստիարակվել էր պաժերի կորպուսում։

Շատ ջահել ավարտելով դպրոցը, փայլուն սպա, նա միանգամից ընկավ Պետերբուրգի հարուստ զինվորականների շրջանը։ Թեև երբեմն լինում էր Պետերբուրգյան բարձր հասարակության մեջ, բայց նրա սիրային հետաքրքրությունները դուրս էին այդ հասարակությունից։

Պետերբուրգյան փարթամ ու կոպիտ կյանքից հետո, Մոսկվայում առաջին անգամ նա զգաց նրբակիրթ, համակրելի և անմեղ աղջկա հետ մտերմանալու հրապույրը, մի աղջկա, որը սիրում էր նրան։ Նրա մտքով անգամ չէր անցնում, թե կարող է որևէ վատ բան լինել իր հարաբերությունների մեջ Կիտիի հանդեպ։ Պարահանդեսներում Վրոնսկին պարում էր առավելապես Կիտիի հետ, հաճախում էր նրանց տուն։ Նա խոսում էր Կիտիի հետ այն բաների մասին, ինչ սովորաբար խոսում էին բարձր հասարակության մեջ. ամեն տեսակ դատարկ բան, բայց այնպիսի դատարկ բան, որին նա ակամայից տալիս էր առանձին իմաստ Կիտիի համար։ Չնայած Վրոնսկին նրան չէր ասել ոչ մի այնպիսի բան, որը չկարողանար ասել ամենքի ներկայությամբ, բայց նա զգում էր, որ Կիտին ավելի ու ավելի է կապվում, ենթարկվում իրեն, և որքան ավելի էր նա զգում դա, այնքան ավելի հաճելի էր նրան, ու ավելի քնքուշ էր դառնում նրա զգացումը դեպի Կիտին։ Նա չգիտեր, որ Կիտիի նկատմամբ իր գործելակերպն ունի որոշակի անուն, որ դա նշանակում է հրապուրել օրիորդներին՝ առանց ամուսնանալու մտադրության և որ այդ հրապուրելը մեկն է այն վատ վարմունքից, որոնք սովորական են փայլուն երիտասարդների համար, որպիսին ինքն էր։ Նրան թվում էր, թե ինքն առաջինն է հայտնաբերել այդ բավականությունը, և հրճվում էր իր գյուտով։

Եթե Վրոնսկին կարողանար լսել, թե ի՞նչ էին ասում Կիտիի ծնողներն այդ երեկո, եթե նա կարողանար կանգնել ընտանիքի հայեցակետի վրա և իմանար, որ Կիտին կդժբախտանա, եթե ինքը չամուսնանա նրա հետ,— շատ կզարմանար ու չէր հավատա դրան։ Նա չէր կարող հավատալ, որ այն, ինչն այնպես մեծ ու իսկական բավականություն էր պատճառում

իրեն, իսկ գլխավորապես՝ Կիտիին, կարող է վատ բան լինել։ Նա ավելի ևս քիչ կարող էր հավատալ այն բանին, որ ինքը պետք է ամուսնանա։

Վրոնսկու համար երբեք հնարավոր չէր թվում ամուսնությունը։ Նա ո՛չ միայն չէր սիրում ընտանեկան կյանքը, այլև ընտանիքում, մանավանդ տղամարդ-ամուսնու դերում,— համաձայն ամուրի այն շրջանի ընդհանուր հայեցակետի, որի մեջ ապրում էր ինքը,— նա իրեն պատկերացնում էր որպես խորթ, թշնամական, առավելապես ծիծաղելի մի բան։ Թեև Վրոնսկու մտքով անգամ չէր անցնում այն, ինչ խոսում էին Կիտիի ծնողները, բայց հեռանալով այդ երեկո Շչերբացկիների մոտից, նա զգաց, թե հոգեկան գաղտնի այն կապը, որը գոյություն ուներ իր ու Կիտիի միջև, ամրապնդվեց այսօրվա երեկոյին այնպես ուժգին, որ հարկավոր էր մի բան ձեռնարկել։ Սակայն նա չէր կարողանում գտնել, թե ի՞նչ կարելի էր և ի՞նչ պետք էր անել։

«Հմայիչն այն է հենց,— մտածում էր Վրոնսկին, վերադառնալով Շչերբացկիներից ու ստանալով նրանցից, ինչպես միշտ, մաքրության ու թարմության հաճելի զգացում, առաջացած մասամբ էլ այն բանից, որ նա չէր ծխել ամբողջ երեկո, և դրա հետ նաև Կիտիի սիրո հանդեպ ունեցած իր խանդաղատանքի նոր զգացումը,— հմայիչն այն է հենց, որ ոչինչ չի ասվել ո՛չ իմ, ո՛չ նրա կողմից, բայց մենք այնպես հասկանում էինք իրար՝ հայացքների և ինտոնացիաների այդ անտեսանելի խոսակցությամբ, որ այսօր ավելի պարզ, քան երբևիցե, նա ասաց ինձ, թե սիրում է։ Եվ ինչ գորովով, պարզությամբ ու, որ գլխավորն է, դյուրահավատորեն։ Ես ինձ զգում եմ ավելի լավ, ավելի մաքուր։ Ես զգում եմ, որ սիրտ ունեմ և, որ իմ մեջ շատ լավ բաներ կան։ Այդ սիրահարված սքանչելի աչքե՛րը։ Երբ նա ասաց՝ և շատ»...

«Ուրեմն էլ ի՞նչ։ Ոչի՛նչ։ Ինձ համար էլ լավ է, նրա համար էլ»։ Եվ նա սկսեց խորհել, թե ո՞րտեղ վերջացնի այսօրվա երեկոն։

Նա երևակայությամբ թվեց այն տեղերը, ուր կարող էր գնալ։ «Ակո՞ւմբ, մի պարտիա բեզի՞կ, Իգնատովի հետ շամպա՞յն։ Ո՛չ, չեմ գնա։ Château des fleurs[1], այնտեղ կգտնեմ

[1] «Ծաղիկների դղյակ»։ Ռեստորանի անուն։

Օբլոնսկուն, կուպլետներ, cancan[2]. ո՛չ զզվել եմ դրանից։ Ա՛յ, հենց դրա համար եմ սիրում Շչերբացկիներին, որ այնտեղ դառնում եմ ավելի լավը։ Գնամ տուն»։ Նա ուղղակի գնաց Դյուսսոյի մոտ վերցրած իր համարը, պատվիրեց ընթրիք տալ իրեն, ապա հանվեց և հենց որ գլուխը դրեց բարձին, քնեց խորը քնով։

XVII

Մյուս օրը, առավոտյան ժամը 11-ին, Վրոնսկին գնաց Պետերբուրգյան երկաթուղու կայարանը՝ դիմավորելու մորը, և առաջին անձնավորությունը, որին նա պատահեց մեծ սանդուղքի աստիճանների վրա, Օբլոնսկին էր, որը հենց այդ գնացքով սպասում էր քրոջը։

— Ա՛, ձերդ պայծառափայլություն,— բացականչեց Օբլոնսկին։— Դո՛ւ ում ես դիմավորում։

— Մայրիկիս,— պատասխանեց Վրոնսկին, ժպտալով այնպես, ինչպես այդ անում էին Օբլոնսկուն պատահողները, և սեղմելով նրա ձեռքը՝ նրա հետ միասին բարձրացավ սանդուղքի վրա։— Մայրիկս այսօր պետք է գա Պետերբուրգից։

— Իսկ ես սպասում էի քեզ մինչև ժամը երկուսը։ Ո՞ւր գնացիր Շչերբացկիների մոտից։

— Տուն,— պատասխանեց Վրոնսկին։— Ճիշտն ասած, ինձ համար այնպես հաճելի էր երեկ՝ Շչերբացկիներից հետո, որ ո՛չ մի տեղ գնալու ցանկություն չունեի։

— Ճանաչում եմ ես նժույգներին իրենց հատուկ նիշերից, սիրահարներին ճանաչում եմ ես իրենց աչքերից,— արտասանեց Ստեպան Արկադևիչը ճիշտ այնպես, ինչպես առաջ՝ Լևինին։

Վրոնսկին ժպտաց այնպիսի արտահայտությամբ, իբր ինքը չի հրաժարվում դրանից, բայց և իսկույն փոխեց խոսակցությունը։

— Իսկ դու ո՞ւմ ես դիմավորում։

— Ե՞ս։ Ես՝ մի լավիկ կնոջ,— ասաց Օբլոնսկին։

— Ահա՛ թե ի՞նչ։

[2] Ֆրանսիական պար՝ անպարկեշտ շարժումներով։

— Honni soit qui mal y pense[1]. իմ քույր Աննային։

— Ա՜խ, Կարենինային,— ասաց Վրոնսկին։

— Դու նրան երևի ճանաչո՞ւմ ես։

— Կարծեմ, ճանաչում եմ։ Թե՞ ոչ... Ճիշտն ասած, չեմ հիշում,— ցրված պատասխանեց Վրոնսկին, աղոտ պատկերացնելով իրեն՝ Կարենինա անունը լսելիս՝ ինչ-որ սեթևեթ ու ձանձրալի բան։

— Բայց Ալեքսեյ Ալեքսանդրովիչին, իմ հռչակավոր փեսային, անշուշտ, ճանաչում ես։ Նրան ճանաչում է ամբողջ աշխարհը։

— Այսինքն՝ ճանաչում եմ իր համբավով ու տեսքով։ Գիտեմ, որ նա խելոք է, գիտնական, աստվածային մի բան... Բայց դու գիտես, որ իմ...not in my line[2] չէ,— ասաց Վրոնսկին։

— Այո՛, նա շատ նշանավոր մարդ է, մի փոքր պահպանողական, բայց հիանալի մարդ է,— նկատեց Ստեպան Արկադևիչը,— հիանալի մարդ է։

— Ավելի լավ իր համար,— ասաց Վրոնսկին ժպտալով։— Ա՜խ, դու այստեղ ես,— դարձավ նա իր մոր բարձրահասակ ծերունի սպասավորին, որ կանգնած էր դռան մոտ,— նե՛րս եկ։

Վրոնսկին վերջին օրերս իրեն կապված էր զգում Ստեպան Արկադևիչի հետ նաև այն բանով, որ Օբլոնսկին ամենքի համար ունեցած իր ընդհանուր դուրեկանությունից զատ, նրա երևակայության մեջ միանում էր Կիտիի հետ։

— Հետո ի՞նչ կասես, կիրակի ընթրիք սարքո՞ւմ ենք զիցուն համար, թե՞ ոչ,— ասաց նա Օբլոնսկուն, ժպտերես բռնելով նրա թևը։

— Անպայման։ Ես ստորագրություններ կհավաքեմ։ Երեկ դու ծանոթացա՞ր իմ բարեկամ Լևինի հետ,— հարցրեց Ստեպան Արկադևիչը։

— Ինչպես չէ։ Բայց նա, չգիտեմ ինչո՞ւ, շուտ գնաց։

— Նա հիանալի տղա է,— շարունակեց Օբլոնսկին։— Այնպես չէ՞։

[1] «Անմոթ այն մարդուն, ով վատ բան կմտածի։

[2] Ճաշակի բանը։

— Ես չգիտեմ, թե ինչո՞ւ,— պատասխանեց Վրոնսկին,— բոլոր այդ մոսկվացիների մեջ, իհարկե, բացառությամբ նրա, ում հետ խոսում եմ,— կատակով ավելացրեց նա,— կա ինչ-որ խիստ գիծ։ Նրանք շարունակ կարծես ծառս են լինում, բարկանում են. կարծես շարունակ ուզում են զգալ տալ մի բան։

— Կա՛ այդ բանը, ճիշտ է, կա...— ուրախ ծիծաղելով ասաց Ստեպան Արկադևիչը։

— Արդյոք շո՞ւտ կգա,— դիմեց Վրոնսկին ծառայողին։

— Գնացքը դուրս եկավ,— պատասխանեց ծառայողը։

Գնացքի մոտենալն ավելի ու ավելի արտահայտվում էր կայարանում պատրաստությունների շարժումով, արտելականների վազվզոցով, ժանդարմների ու ծառայողների հայտնվելով, դիմավորողների կայարան գալով։ Սառը շոգու միջից երևում էին կիսամուշտակներով, թաղիքե փափուկ կոշիկներով բանվորները, որ անցնում էին ոլորադարձ ուղիների ռելսերի վրայով։ Լսվում էր շոգեկաթսայի սուլոցը հեռու ռելսերի վրա և ինչ-որ ծանր բանի տեղաշարժում։

— Ո՛չ,— ասաց Ստեպան Արկադևիչը, որը շատ էր ուզում պատմել Վրոնսկուն՝ Կիտիի նկատմամբ Լևինի մտադրությունների մասին։— Ո՛չ, դու ճիշտ չես գնահատել իմ Լևինին։ Նա շատ ջղային մարդ է և երբեմն լինում է անախորժ, ճիշտ է, բայց գրա փոխարեն երբեմն էլ՝ շատ սիրալիր։ Նա այնպես ազնիվ, արդարասեր բնավորություն է, ոսկի սիրտ ունի։ Սակայն երեկ կային առանձին պատճառներ,— նշանակալից ժպիտով շարունակեց Ստեպան Արկադևիչը, բոլորովին մոռանալով այն անկեղծ կարեկցությունը, որ երեկ ինքը տածում էր դեպի իր բարեկամը, և այժմ տածելով նույնպիսի զգացում, բայց արդեն դեպի Վրոնսկին։— Այո՛, կար պատճառ, որից նա կարող էր լինել կա՛մ առանձնապես բախտավոր, կա՛մ առանձնապես դժբախտ։

Վրոնսկին կանգ առավ և ուղղակի հարցրեց.

— Այսինքն ի՞նչ։ Գուցե նա երեկ առաջարկություն է արել քո belle soeur[1]-ին...

— Կարող է պատահել,— ասաց Ստեպան Արկադևիչը։—

[1] Քենի։

Այդպես թվաց ինձ երեկ։ Այո՛, եթե նա այնտեղից վաղ է հեռացել և վատ տրամադրությամբ, ուրեմն ենթադրությունս ճիշտ է... Նա շատ վաղուց է սիրահարված, և ես սաստիկ խղճում եմ նրան։

— Ահա՛ թե ի՛նչ... Սակայն ես կարծում եմ, որ իշխանազնուհին կարող է ավելի լավ փեսացու ունենալ,— ասաց Վոռնսկին և դուրս ձգելով-ուղղելով կուրծքը, նորից սկսեց քայլել։— Ճիշտն ասած, ես նրան չգիտեմ,— ավելացրեց նա։— Այո՛, դա դժվար կացություն է։ Դրանի՛ց է հենց, որ մեծամասնությունը գերադասում է ծանոթություն պահել Կլարաների հետ։ Այնտեղ անհաջողությունն ապացուցում է միայն, որ դրամդ չբավականացավ, իսկ այստեղ կշեռքի վրա է դրված քո արժանապատվությունը։ Սակայն ահա և գնացքը։

Հիրավի, հեռվում արդեն սուլում էր շոգեքարշը։ Մի քանի բոպեից պլատֆորմը դողաց, և վշշալեն արտաշնչելով սառնամանիքից դեպի ցած տարածվող գոլորշի, անցավ շոգեքարշը, միջին անիվի դանդաղ և համաչափորեն կռացող ու ձգվող լծակով և ողջունող մեքանավարով՝ փաթաթված, եղյամակալած, իսկ տենդերի ետևից, հետզհետե ավելի դանդաղ և ավելի ցնցելով պլատֆորմը, սկսեց անցնել ուղեբեռի վագոնը՝ մեջը վնգստացող մի շուն, վերջապես կանգնելուց առաջ դնգդնգալով մոտեցան մարդատար վագոնները։

Կտրիճի տեսքով վագոնավարը սուլեց շարժընթաց, ցած թռավ, և նրա ետևից սկսեցին մեկ-մեկ իջնել անհամբեր ուղևորները՝ ուղղաձիգ իրանով գվարդիայի սպան, որ նայեց շուրջը. խժվժան առևտրականը, ձեռքին պայուսակ, ուրախ ժպտալով. մուժիկը՝ տոպրակը գցած ուսին։

Վոռնսկին, կանգնած Օբլոնսկու կողքին, դիտում էր վագոններն ու դուրս եկողներին և բոլորովին մոռացավ մորը։ Այն, ինչ նա այս բոպեիս իմացավ Կիտիի մասին, հուզում և ուրախացնում էր նրան։ Նրա կուրծքն ակամա ուղղվեց, և աչքերը փայլեցին։ Նա իրեն հաղթող էր զգում։

— Կոմսուհի Վռոնսկայան այս բաժանմունքումն է,— ասաց կտրիճի տեսքով վագոնավարը, մոտենալով Վռոնսկուն։ Վագոնավարի խոսքերը սթափեցրին նրան ու ստիպեցին հիշել մորը և առաջիկա տեսակցությունը նրա հետ։ Նա իր հոգում չէր հարգում մորը, չէր էլ սիրում նրան, հաշիվ չտալով

Իրեն այդ բանում, թեպետ, իր շրջանի հասկացողություններով, իր դաստիարակությամբ չէր կարող ունենալ դեպի մայրն այլ վերաբերմունք, քան վերին աստիճանի խոնարհ ու հարգալից և, այնքան ավելի խոնարհ ու հարգալից, որքան քիչ էր հարգում ու սիրում նրան իր հոգում։

XVIII

Վոռնսկին վագոնավարի ետևից գնաց վագոն և մոր բաժանմունքը մտնելիս՝ կանգ առավ, որ ճանապարհ տա այնտեղից դուրս եկող տիկնոջը։

Նրբակիրթ մարդու համար սովորական տակտով, այդ տիկնոջ արտաքինի վրա գցած մի հայացքով Վռոնսկին որոշեց, որ տիկինը պատկանում է բարձր հասարակության։ Նա ներողություն խնդրեց և ուզում էր գնալ վագոն, բայց անհրաժեշտություն զգաց մի անգամ էլ նայել նրա վրա՝ ո՛չ այն պատճառով, որ շատ գեղեցիկ էր, ո՛չ էլ այն նրբագեղության ու համեստ նազելիության պատճառով, որ նկատվում էին նրա ամբողջ կերպարանքի մեջ, այլ այն պատճառով, որ գեղատեսիլ դեմքի արտահայտության մեջ կար առանձնապես փաղաքշական ու քնքուշ մի բան, երբ տիկինն անցավ Վռոնսկու մոտով։ Երբ Վռոնսկին ետ նայեց, տիկինը նույնպես շուռ տվեց գլուխը։ Նրա փայլուն, խաժ աչքերը, որ խիտ արտանչունքներից թվում էին սև, բարեկամաբար, ուշադիր կանգ առան Վռոնսկու դեմքի վրա, կարծես տիկինը ճանաչում էր նրան, և անմիջապես տեղափոխվեցին մոտեցող ամբոխի վրա, ասես՝ որոնելով մեկին։ Այդ կարճ հայացքի մեջ Վռոնսկին կարողացավ նկատել զուսպ աշխուժություն, որ խաղում էր տիկնոջ դեմքին ու ճախրում նրա փայլուն աչքերի և կարմիր շուրթերը ծռած հազիվ նկատելի ժպիտի միջև։ Կարծես ինչ-որ բանի առատություն այնպես լցնում էր տիկնոջ ամբողջ էությունը, որ նրա կամքից անկախ՝ արտահայտվում էր մերթ հայացքի փայլի մեջ, մերթ՝ ժպիտի։ Տիկինը դիտմամբ մարեց լույսն իր աչքերում, բայց այն վառվում էր հակառակ նրա կամքի՝ հազիվ նկատելի ժպիտի մեջ։

Վռոնսկին մտավ վագոն։ Մայրը, սև աչքերով ու խոպոպիկներով մի չոր պառավ, կկոցուն հայացքով նայում էր որ-

դուն և թույլ ժպտում իր բարակ շրթունքներով։ Վեր կենալով բազմոցից ու պայուսակը հանձնելով աղախնին, նա իր փոքրիկ չոր ձեռքը տվեց որդուն և բարձրացնելով նրա գլուխն իր ձեռքի վրայից, համբուրեց նրա դեմքը։

— Հեռագիրը ստացա՞ր։ Առո՞ղջ ես։ Փառք աստծո։

— Լա՞վ եկաք,— ասաց որդին, նստելով նրա մոտ և ակամա ականջ դնելով դռան ետևից լսվող կանացի ձայնին։ Նա գիտեր, դա այն տիկնոջ ձայնն էր, որը պատահեց նրան մուտքի մոտ։

— Բայց և այնպես ես համաձայն չեմ ձեզ,— ասում էր տիկնոջ ձայնը։

— Պետերբուրգյան հայեցակետ, տիկին։

— Ո՛չ թե պետերբուրգյան, այլ ուղղակի կանացի,— պատասխանեց տիկինը։

— Դեհ, թո՛ւյլ տվեք համբուրել ձեր ձեռքը։

— Ցտեսություն, Իվան Պետրովիչ։ Տեսնք, արդյոք այնտեղ չէ՞ եղբայրս և ուղարկեցեք նրան ինձ մոտ,— ասաց տիկինը դռան մոտից ու նորից մտավ բաժանմունք։

— Գտա՞ք ձեր եղբորը,— հարցրեց Վրոնսկայան, դիմելով տիկնոջը։

Վրոնսկին այժմ հիշեց, որ դա Կարենինան էր։

— Ձեր եղբայրն այստեղ է,— ասաց նա, վեր կենալով։— Ներեցեք ինձ, ես չճանաչեցի ձեզ, ասենք՝ մեր ծանոթությունն էլ այնպես կարճատև էր,— ավելացրեց Վրոնսկին, գլուխ տալով,— որ դուք, հավանորեն, չեք հիշում ինձ։

— Օ՛, ո՛չ,— ասաց Կարենինան,— ես կճանաչեի ձեզ, որովհետև մենք ձեր մայրիկի հետ կարծեմ ամբողջ ճանապարհին խոսում էինք միայն ձեր մասին,— ասաց նա, թույլ տալով վերջապես, որ դրսևորվել փափագող աշխուժությունը արտահայտվի ժպիտի մեջ։— Իսկ եղբայս, այնուամենայնիվ, չի երևում։

— Կանչիր նրան, Ալյոշա,— ասաց տատավ կոմսուհին։

Վրոնսկին դուրս եկավ պլատֆորմ ու բղավեց.

— Օլոնսկի, այստեղ է։

Բայց Կարենինան չսպասեց եղբորը, այլ տեսնելով նրան, վճռական թեթև քայլով դուրս եկավ վագոնից։ Եվ հենց որ եղբայրը մոտեցավ, նա մի շարժումով, որը զարմացրեց Վրոնսկուն իր վճռականությամբ ու նազելիությամբ, գրկեց ձախ ձեռքով եղբոր պարանոցը, արագ քաշեց դեպի ինքը և պինդ համբուրեց։ Վրոնսկին առանց աչքերը հեռացնելու, նայում էր Կարենինային ու ժպտում։ Ինքն էլ չիմանալով, թե ինչո՛ւ։ Սակայն, հիշելով, որ մայրն սպասում է իրեն, նա նորից մտավ վագոն։

— Շատ համակրելի է, այնպես չէ՞,— ասաց կոմսուհին Կարենինայի մասին։— Ամուսինը նրան նստեցրեց ինձ հետ, և ես շատ ուրախ էի։ Ամբողջ ճանապարհին մենք զրուցում էինք։ Իսկ դու, ասում են... vous filez le parfait amour. Tant mieux, mon cher, tant mieux[1].

— Ես չգիտեմ, թե ի՞նչ եք ակնարկում դուք, maman,— պատասխանեց որդին սառը։— Գնա՞նք, maman.

Կարենինան նորից մտավ վագոն, որ հրաժեշտ տա կոմսուհուն։

— Ահա, կոմսուհի, դուք հանդիպեցիք ձեր որդուն, իսկ ես՝ եղբորս,— ուրախ ասաց Կարենինան։— Եվ սպառվեցին իմ բոլոր պատմությունները. այլևս պատմելու բան չէր լինի։

— Ոչ,— ասաց կոմսուհին, բռնելով նրա ձեռքը,— ես ձեզ հետ կճանապարհորդեի ամբողջ աշխարհի շուրջը և չէի ձանձրանա։ Դուք մեկն եք այն համակրելի կանանցից, որոնց հետ հաճելի է և՛ խոսել, և՛ լռել։ Իսկ ձեր որդու մասին խնդրեմ չմտածեք. հո չի՞ կարելի առանց անջատվելու։

Կարենինան կանգնել էր անշարժ՝ կեցվածքը չափազանց ուղիղ, և աչքերը ժպտում էին։

— Աննա Արկադևնան,— ասաց կոմսուհին, բացատրելով որդուն,— ունի մի տղա, կարծեմ ութ տարեկան, և նա որդուց երբեք անջատված չի եղել ու շարունակ տանջվում է, որ այժմ թողել է նրան։

— Այո՛, մենք ամբողջ ժամանակ խոսում էինք կոմսուհու հետ՝ ես իմ, նա՝ իր որդու մասին,— ասաց Կարենինան, և նորից ժպիտը լուսավորեց նրա դեմքը,— փաղաքշական ժպիտ, որ վերաբերում էր Վրոնսկուն։

— Հավանորեն այդ բանը շատ ձանձրացրեց ձեզ,—

[1] Տակավին շարունակո՞ւմ ես քո ռոմանտիկ սերը։ Ավելի լավ, սիրելիդ իմ, ավելի լավ։

ասաց Վրոնսկին, կարծես օդի մեջ բռնելով կոկետության այն գնդակը, որ Կարենինան նետեց նրան։ Բայց Կարենինան երևի չէր ուզում շարունակել խոսակցությունն այդ տոնով և դիմեց պառավ կոմսուհուն.

— Շատ շնորհակալ եմ ձեզանից։ Ես չզգացի, թե ինչպես անցավ երեկվա օրը։ Ցտեսություն, կոմսուհի։

— Բարով գնաք, իմ սիրելի բարեկամ,— պատասխանեց կոմսուհին։— Թույլ տվեք համբուրել ձեր լավիկ դեմքը։ Ես իբրև պառավ կին, ուզղակի պարզ ասում եմ, որ սիրեցի ձեզ։

Ինչքան էլ պաշտոնական էր այդ ֆրազը, Կարենինան ըստ երևույթին սրտանց հավատաց դրան և ուրախացավ։ Նա կարմրեց, մի փոքր կռացավ, մոտեցրեց իր դեմքը կոմսուհու շրթունքներին, նորից ուղղվեց և նույն այն ժպիտով, որ թըռվրռում էր շրթունքների ու աչքերի միջև, ձեռքը տվեց Վրոնսկուն։ Վերջինս սեղմեց իրեն տրված փոքրիկ ձեռքը և ուրախացավ, որպես առանձնահատուկ մի բանից, եռանդագին այն սեղմումի համար, որով Կարենինան ամուր ու հաստարձակ թոթվեց նրա ձեռքը։ Կարենինան դուրս գնաց արագ քայլվածքով, որն այնպիսի տարօրինակ թեթևությամբ տարավ նրա բավական գեր մարմինը։

— Շատ համակրելի է,— ասաց պառավը։

Միևնույն բանն էր մտածում և կոմսուհու որդին։ Նա աչքերով հետևում էր Կարենինային, մինչև որ չքացավ նրա նազելի ֆիգուրը, և ժպիտը սառեց Վրոնսկու դեմքին։ Պատուհանից նա տեսավ, թե ինչպե՞ս Կարենինան մոտեցավ եղբորը, դրեց ձեռքը նրա ձեռքի վրա և սկսեց աշխուժորեն պատմել նրան, ամենայն հավանականությամբ՝ մի այնպիսի բան որ ընդհանուր ոչինչ չուներ իր հետ՝ այսինքն Վրոնսկու հետ, և դա նրան թվաց ցավալի։

— Դեհ, ինչպե՞ս եք, maman, դուք լիովին առո՞ղջ եք,— կրկնեց նա, դիմելով մորը։

— Ամեն ինչ լավ է, հիանալի։ Alexandre-ը շատ սիրալիր էր։ Marie-ն էլ շատ լավացել է։ Նա շատ հետաքրքրական է։

Եվ կոմսուհին նորից սկսեց պատմել այն, ինչն ամենից ավելի հետաքրքրում էր իրեն, այսինքն՝ թոռան կնունքի մասին, որի համար ինքը գնացել էր Պետերբուրգ, և ավագ որդուն թագավորի ցույց տված առանձնաշնորհի մասին։

— Ահա և Լավրենտին,— ասաց Վրոնսկին, նայելով պատուհանից դուրս,— այժմ գնանք, եթե կամենում եք։

Ներունի ծառայապետը, որը եկել էր կոմսուհու հետ, մբտավ վագոն զեկուցելու, թե ամեն ինչ պատրաստ է, և կոմսուհին վեր կացավ, որպեսզի գնա։

— Գնանք, այժմ մարդ քիչ կա,— ասաց Վրոնսկին։

Աղջիկը վերցրեց տոպրակն ու շնիկը, ծառայապետը և արտելականը՝ մյուս տոպրակները։ Վրոնսկին թևանցուկ արեց մորը, բայց երբ արդեն նրանք դուրս էին գալիս վագոնից, հանկարծ մի քանի մարդիկ վախեցած դեմքերով վազեվազ անցան վագոնի մոտով։ Վազեց և կայարանապետը՝ իր անսովոր գույնի գդակով։ Հայտնապես, պատահել էր արտասովոր մի բան։ Բազմությունը ետ էր փախչում գնացքից։

«Ի՞նչ... ի՞նչ... որտե՞ղ... ընկավ տակը... ճխլեց»... լրսվում էր անցորդների միջից։

Ստեպան Արկադևիչը քրոջ հետ թևանցուկ, նույնպես վախեցած դեմքերով ետ դարձան ու կանգնեցին վագոնի մուտքի մոտ, խուսափելով ժողովրդից։

Տիկինները մտան վագոն, իսկ Վրոնսկին Ստեպան Արկադևիչի հետ գնաց բազմության ետևից՝ իմանալու դժբախտության մանրամասները։

Պահապանը հարբած էր եղել, թե խիստ սառնամանիքի պատճառով չափից ավելի փաթաթված, չէր լսել ետ քաշվող գնացքի ձայնը, և գնացքը ճխլել էր նրան։

Վրոնսկու և Օբլոնսկու վերադառնալուց ավելի շուտ տիկիններն այս մանրամասներն իմացան ծառայապետից։

Օբլոնսկին ու Վրոնսկին տեսել էին այլանդակված դիակը։ Ըստ երևույթին, Օբլոնսկին տանջվում էր։ Նա խոժոռվել էր և թվում էր, թե պատրաստ է արտասվելու։

— Ա՜խ, ինչ սոսկալի բան։ Ա՜խ, Աննա, եթե դու տեսնեիր։ Ա՜խ, ինչ սոսկալի բան,— հառաչում էր նա։

Վրոնսկին լուռ էր, և նրա գեղեցիկ դեմքը լուրջ էր, բայց բոլորովին հանգիստ։

— Ա՜խ, եթե դուք տեսնեիք, կոմսուհի, ասում էր Ստեպան Արկադևիչը։— Այնտեղ էր և նրա կինը... Սարսափելի է նրա տեսքը... Նա ընկավ դիակի վրա։ Ասում են, այդ դժբախտը

մեն-մենակ կերակրում էր մի բազմանդամ ընտանիք։ Ահա զարհուրանք։

— Արդյոք չի՞ կարելի մի բան անել կնոջ համար,— հուզումնալից շշուկով ասաց Կարենինան։

Վրոնսկին նայեց նրան և անմիջապես դուրս գնաց վագոնից։

— Ես իսկույն կգամ, maman,— ավելացրեց նա, շուրջ գալով դռան շեմքին։

Երբ մի քանի րոպեից նա վերադարձավ, Ստեպան Արկադիչն արդեն խոսում էր կոմսուհու հետ նոր երգչուհու մասին, իսկ կոմսուհին անհամբերությամբ նայում էր դռանը, սպասելով որդուն։

— Այժմ գնանք,— ասաց Վրոնսկին, ներս մտնելով։

Նրանք դուրս եկան միասին։ Վրոնսկին գնում էր առջևից՝ մոր հետ։ Ետևից գնում էր Կարենինան՝ եղբոր հետ։ Ելքի մոտ Վրոնսկուն մոտեցավ նրա ետևից հասած կայարանապետը։

— Դուք իմ օգնականին տվիք երկու հարյուր ռուբլի։ Նեղություն կրեք ասելու, թե ո՞ւմ եք հատկացնում այդ գումարը։

— Այլքիին,— ասաց Վրոնսկին, զարմացական վեր քաշելով ուսերը։— Չեմ հասկանում, թե ի՞նչ հարցնելու բան կա այստեղ։

— Դո՞ւք տվիք,— բղավեց ետևից Օբլոնսկին և սեղմելով քրոջ ձեռքը, ավելացրեց,— շատ գովելի, շատ ազնիվ վարմունք։ Հիանալի տղա է, այնպես չէ՞։ Հարգանքներս, կոմսուհի։

Եվ նա կանգնեց քրոջ հետ, որոնելով նրա աղախնին։

Երբ նրանք դուրս եկան, Վրոնսկիների կառքն արդեն գնացել էր։ Վագոնից դուրս եկողները դեռ շարունակում էին իոսել տեղի ունեցած դեպքի մասին։

— Ահա՞, իսկապես սարսափելի մահ,— ասաց մի պարոն, անցնելով նրանց մոտով։— Ասում են, ֆիսել է, երկու կտոր է արել։

— Ընդհակառակը, ես կարծում եմ, ամենաթեթև, փայրկենական մահ,— նկատեց մյուսը։

— Եվ ինչո՞ւ միջոցներ ձեռք չեն առնում,— աւում էր երրորդը։

Կարենինան նստեց կառքը, և Ստեպան Արկադիչը զարմանքով տեսավ, որ նրա շուրթերը դողում են, ու նա դժվարությամբ է զսպում արցունքները։

— Ի՞նչ պատահեց քեզ, Աննա,— հարցրեց եղբայրը, երբ նրանք մի քանի հարյուր սաժեն հեռացել էին կայարանից։

— Զարագուշակ նշան է դա,— ասաց Կարենինան։

— Ի՞նչ գաստարկ բան,— ասաց Ստեպան Արկադիչը։— Դու եկար, գլխավորը դա է։ Դու չես կարող երևակայել, թե որքա՞ն մեծ է հույսս քեզ վրա։

— Դու վաղո՞ւց ես ճանաչում Վրոնսկուն,— հարցրեց Կարենինան։

— Այո, գիտե՞ս, մենք հույս ունենք, որ նա կամուսնանա Կիտիի հետ։

— Մի՞թե,— կամաց ասաց Աննան։— Դե՛հ, այժմ ե՛կ խոսենք քո մասին,— ավելացրեց նա, թափահարելով գլուխը, կարծես ուզում էր ֆիզիկապես վանել իրենից ինչ-որ ավելորդ և իրեն խանգարող միտք։— Ե՛կ խոսենք քո գործերի մասին։ Ես ստացա քո նամակը և ահա եկա։

— Այո՛, ամբողջ հույսս քեզ վրա է,— ասաց Ստեպան Արկադիչը։

— Դե՛հ, պատմիր ինձ բոլորը։

Եվ Ստեպան Արկադիչն սկսեց պատմել։

Հասնելով տուն, Օբլոնսկին քրոջն իջեցրեց, հառաջեց, սեղմեց նրա ձեռքը և գնաց ատյան։

XIX

Երբ Աննան մտավ սենյակ, Դոլլին նստած էր փոքրիկ ընդունարանում շիկահեր թմբլիկ մանկան հետ, որ այժմ արդեն նման էր հորը, և լսում էր ֆրանսերեն ընթերցանության դասը։ Երեխան կարդում էր, պտտեցնելով ձեռքի մեջ և աշխատելով պոկել իր կուրտկայի կոճակը, որ հագիվ կախված էր մի թելից։ Մայրը մի քանի անգամ հեռացրեց նրա ձեռքը, բայց թմբլիկ թաթիկը նորից բռնում էր կոճակը։ Մայրը կտրեց կոճակը և դրեց գրպանը։

— Հանգիստ թող ձեռքերդ, Գրիշա,— ասաց նա և նորից ձեռնամուխ եղավ վերմակին, վաղուցվա աշխատանք, որին դիմում էր նա միշտ ծանր րոպեներին ու այժմ գործում էր

ջղայնորեն, թելը մատով ձգելով քարգահի վրա ու հաշվելով ճարմանդները։ Թեպետև Դոլլին հրամայեց երեկ ասել ամուսնուն, որ ինքը չի հետաքրքրվում, կգա, թե չի գա նրա քույրը, բայց և այնպես ամեն բան պատրաստել էր նրա գալու առթիվ և հուզմունքով սպասում էր տալոջը։

Դոլլին մեռածի պես էր իր վշտից, ամբողջապես կլանված էր նրանով։ Սակայն հիշում էր, որ Աննան՝ իր տալը, Պետերբուրգում խիստ ականավոր մարդկանցից մեկի կինն է ու Պետերբուրգյան grande dame։ Եվ շնորհիվ այդ հանգամանքի, նա չկատարեց ամուսնու ասածը, այսինքն՝ չմոռացավ, որ տալը պիտի գա։ «Եվ վերջապես, Աննան ոչ մի բանում մեղավոր չէ,— մտածում էր Դոլլին։— Ես նրա մասին ոչինչ չգիտեմ, բացի լավից, և իմ նկատմամբ նրա կողմից տեսել եմ գուրգուրանք ու բարեկամություն։ Ճիշտ է, որքան նա կարող էր մտաբերել Կարենիններից ստացած իր տպավորությունը Պետերբուրգում, նրան դուր չէր գալիս նրանց տունը. ինչ-որ կեղծ բան կար նրանց ընտանեկան կենցաղում։ «Բայց ինչո՞ւ ես չպետք է ընդունեմ Աննային։ Միայն թե նա չփորձի մխիթարել ինձ,— մտածում էր Դոլլին։— Ամեն մխիթարանք, և՛ հորդորանք, և՛ ներումն քրիստոնեական— ես արդեն հազար անգամ դատել-կշռադատել եմ, և այս բոլորն անօգուտ է, անպետք»։

Այդ բոլոր օրերը Դոլլին մենակ էր երեխաների հետ։ Նա չէր ուզում խոսել իր վշտի մասին, իսկ հոգում ունենալով այդ վիշտը, չէր կարող խոսել կողմնակի բանի մասին։ Նա գիտեր, որ այսպես թե այնպես, Աննային կասի ամեն ինչ, և մերթ ուրախացնում էր նրան այն միտքը, որ կասի, կարտահայտվի, մերթ չարացնում էր իր նվաստացման մասին խոսելու անհրաժեշտությունը Աննայի հետ, նրա քրոջ հետ և լսելու նրանից հորդորանքի ու մխիթարանքի պատրաստի ֆրազներ։

Նա, ինչպես հաճախ լինում է, նայելով ժամացույցին, սպասում էր տալոջն ամեն րոպե և բաց թողեց հենց այն րոպեն, երբ հյուրը եկավ, այնպես որ չլսեց զանգի ձայնը։

Լսելով զգեստի և թեթև քայլերի աղմուկ արդեն դռան մեջ, նա ետ նայեց, ու նրա տանջված դեմքին ակամա արտահայտվեց ո՛չ թե ուրախություն, այլ զարմանք։ Նա կանգնեց ու գրկեց տալոջը։

— Ինչպե՞ս, արդեն եկա՞ր,— ասաց Դոլլին, համբուրելով նրան։

— Դոլլի, որքա՜ն ուրախ եմ քեզ տեսնելուս։

— Ես էլ եմ ուրախ,— ասաց Դոլլին, թույլ ժպտալով և աշխատելով Աննայի դեմքի արտահայտությունից իմանալ, արդյոք գիտե՞ նա... «Հավանորեն գիտեմ, մտածեց նա, նկատելով ցավակցություն Աննայի դեմքին։— Դեհ, գնանք, քեզ տանեմ քո սենյակը,— շարունակեց նա, աշխատելով որքան հնարավոր է հեռացնել բացատրության րոպեն։

— Սա Գրիշա՞ն է։ Աստված իմ, ի՜նչ մեծացել է,— ասաց Աննան և համբուրելով նրան ու աչքը չհեռացնելով Դոլլիից, կանգնեց և կարմրեց։— Ո՜չ, թույլ տուր ո՛չ մի տեղ չգնալ։

Նա հանեց շարֆը, գլխարկը և նրանով կարթկելով իր սև, ամենուր գանգրահյուսվող մազերի մի փունջ, գլուխը թափահարելով ազատեց մազերը։

— Օ՜, դու աչք ես շլացնում քո բախտավորությամբ ու առողջությամբ,— ասաց Դոլլին, համարյա նախանձով։

— Ե՞ս... Այո՜,— ասաց Աննան։— Աստված իմ, Տանյան։ Իմ Սերյոժայի հասակակիցը,— ավելացրեց նա, դիմելով ներս վազող աղջկան։ Աննան վերցրեց նրան ձեռքերի վրա ու համբուրեց։— Հիանալի աղջիկ է, հրաշալիք։ Հապա՜, ցույց տուր ինձ ամենքին։

Նա երեխաներին կանչում էր իրենց անուններով և հիշում էր ո՛չ միայն անունները, այլև՝ տարիքը, ամիսները, նրանց բոլորի հիվանդությունները, բնավորությունը, և Դոլլին չէր կարող չգնահատել այդ։

— Դեհ, ե՛կ գնանք նրանց մոտ,— ասաց նա։— Վասյան քնած է, մեղք է արթնացնել։

Երեխաներին նայելուց հետո նրանք նստեցին, այժմ արդեն ընդունարանում, մենակ, սուրճի առաջ։ Աննան վերցրեց մատուցարանը, ապա մեկդի դրեց այն։

— Դոլլի,— ասաց Աննան,— նա պատմեց ինձ։

Դոլլին սառը նայեց Աննային։ Նա սպասում էր այժմ կեղծ կարեկցական ֆրազների, բայց Աննան այդպիսի ոչինչ չասաց։

— Դոլլի, սիրելիս,— ասաց նա,— ես չեմ ուզում նրա փո-

խարեն բան ասել քեզ, ո՛չ էլ մխիթարել. դա չի կարելի։ Բայց՝ հոգյակս, ես ուզղակի խղճում, խղճում եմ քեզ ամբողջ հոգով։

Նրա վառ աչքերի խիտ արտևանունքների միջից հանկարծ արցունքներ գլորվեցին։ Նա նստեց հարսին ավելի մոտիկ և իր եռանդուն փոքրիկ ձեռքով վերցրեց նրա ձեռքը։ Դոլլին ետ շքաշվեց, բայց նրա դեմքը չփոխեց իր շոր արտահայտությունը։ Նա ասաց։

— Ինձ մխիթարել չի կարելի, ամեն ինչ կորած է այն բանից հետո, ինչ եղավ, ամեն բան կորած է։

Այդ ասելուց հետո նրա դեմքի արտահայտությունը հանկարծ մեղմացավ։ Աննան բարձրացրեց Դոլլիի նիհար, շոր ձեռքը, համբուրեց և ասաց.

— Բայց, Դոլլի, ի՞նչ պիտի անել, ի՞նչ անել։ Ո՞րը կլինի լավագույն վարմունքը այս սոսկալի զրության մեջ,— ահա թե ինչի մասին պետք է մտածել։

— Ամեն բան վերջացած է, և ուրիշ ոչինչ,— ասաց Դոլլին։ — Ամենից վատն այն է, հասկացիր, որ ես չեմ կարող թողնել նրան. երեխաների հարցը, ես կապված եմ։ Մինչդեռ, ես նրա հետ ապրել չեմ կարող, ես տանջվում եմ նրան տեսնելիս։

— Դոլլի, աղավնյակս, նա պատմեց ինձ, բայց ես ուզում եմ լսել քե՛զնից, ասա ինձ բոլորը։

Դոլլին նայեց նրան հարցական հայացքով։

Աննայի դեմքի վրա նկատվում էր կարեկցություն և անկեղծ սեր։

— Թույլ տուր,— ասաց Դոլլին հանկարծ։— Բայց ես կասեմ սկզբից։ Դու գիտես, թե ինչպե՛ս ես ամուսնացա maman-ի դաստիարակությամբ. ես ո՛չ միայն անմեղ էի, այլև տխմար։ Ես ոչինչ չգիտեի։ Ասում են, այդ ես գիտեմ, որ տղամարդիկ իրենց կանանց պատմում են իրենց անցած կյանքը, բայց Ստիվան...,— Նա ուղղեց իր սխալը,— Ստեպան Արկադեիչը ոչինչ չասաց ինձ։ Դու չես հավատա, բայց ես մինչ այսօր կարծում էի, թե ես միակ կինն եմ, որին ունեցել է նա։ Այդպես ես ապրում էի ութ տարի։ Հասկացիր, որ ես ո՛չ միայն չէի ենթադրում անհավատարմություն, այլև անհնարին էի համարում դա, և ահա՝, երևակայիր, այսպիսի հասկացություններով հանկարծ իմանալ ամբողջ արհավիրքը, ամբողջ գարշությունը... դու հասկացիր ինձ։ Լիովին հավատացած լինել իր բախտավորության մեջ, և հանկարծ...— շարունակեց Դոլլին, զսպելով հեկեկանքը,— ստանալ նամակ... նրա նամակը, ուղղված իր սիրուհուն, իմ երեխաների դաստիարակչուհուն։ Ո՛չ, դա շափազանց սոսկալի է։— Նա շտապ հանեց թաշկինակը և նրանով ծածկեց երեսը։— Ես հասկանում եմ, եթե դա լիներ հրապուրանք,— շարունակեց նա կարճ դադարից հետո,— բայց մտածված ձևով, խորամանկորեն խաբել ինձ... և ո՞ւմ հետ... Լինել այսուհետև իմ ամուսինը և նրա հետ... սոսկալի բան է դա։ Դու չես կարող հասկանալ։

— Օ՜, ո՛չ, ես հասկանում եմ, հասկանում եմ, սիրելի Դոլլի, հասկանում եմ,— ասում էր Աննան, սեղմելով նրա ձեռքը։

— Եվ դու կարծում ես, որ նա հասկանո՞ւմ է իմ այդքան սոսկալի դրությունը,— շարունակեց Դոլլին։ Բնա՜վ երբեք։ Նա գոհ է և բախտավոր։

— Օ՜, ո՛չ,— արագ ընդհատեց Աննան։ — Նա խղճալի է, նա ղղջում է ու տանջվում...

— Մի՞թե նա ընդունակ է ղղջալու,— ընդհատեց Դոլլին, ուշադիր նայելով տալոջ դեմքին։

— Այո՛, ես ճանաչում եմ նրան։ Ես չէի կարող առանց խղճահարության նայել նրան։ Մենք երկուսս էլ ճանաչում ենք նրան։ Նա բարի է, բայց հպարտ, իսկ այժմ այնպես նվաստացած է։ Գլխավոր բանը, որ ինձ հուզեց... (և այստեղ Աննան ըմբռնեց այն գլխավորը, ինչը կարող էր հուզել Դոլլիին), նրան տանջում է երկու բան, այն, որ նա ամաչում է երեխաներից, և այն, որ սիրելով քեզ... այո՛, այո՛, սիրելով քեզ աշխարհում ամեն բանից ավելի,— շտապ ընդհատեց նա իրեն առարկել ուզող Դոլլիին,— վիշտ պատճառեց քեզ, սպանեց քեզ։ «Ո՛չ, ո՛չ, Դոլլին չի ների», ասում էր նա անընդհատ։

Դոլլին մտազբաղ նայում էր տալոջ կողքով մի կետի, լսելով նրա ասածը։

— Այո՛, ես հասկանում եմ, որ նրա դրությունը սոսկալի է. մեղավորի կացությունն ավելի վատ է, քան անմեղինը,— ասաց Դոլլին,— եթե նա զղում է, որ ամբողջ դժբախտությունն առաջացել է իր մեղքից։ Բայց ինչպե՞ս ներել, ինչպե՞ս կարող եմ նորից լինել նրա կինը՝ գրանից հետո։ Նրա հետ ապրելն ինձ համար այժմ կլինի լոկ տանջանք, մանավանդ

այն պատճառով, որ ես սիրում եմ դեպի նա ունեցած իմ անցյալ սերը...

Եվ հեկեկանքն ընդհատեց նրա խոսքերը։

Բայց ամեն անգամ կարծես դիտմամբ, երբ մեղմանում էր Դոլլին, նորից սկսում էր խոսել այն բանի մասին, ինչը գրգռում էր իրեն։

— Չէ՞ որ այն կինը ջահել է, չէ՞ որ նա գեղեցիկ է,— շարունակեց Դոլլին։— Արդյոք հասկանո՞ւմ ես դու, Աննա, որ ինձնից վերցված է իմ ջահելությունը, գեղեցկությունը... և ո՞վ է վերցրել։ Նա և իր երեխաները։ Ես ծառայեցի նրան ու վերջացրի իմ ծառայությունը, և այդ ծառայության մեջ ես կորցրի այն ամենը, ինչ ունեի, և նրան այժմ, իհարկե, ավելի հաճելի է թարմ ու գեղեցիկ էակը։ Նրանք անշուշտ խոսում էին իրենց մեջ իմ մասին, կամ, որ ավելի վատ է, լռություն էին մատնում ինձ... հասկանո՞ւմ ես,— նրա աչքերը նորից բոցավառվեցին ատելությամբ,— ու դրանից հետո նա կսկսի ասել ինձ... Եվ ի՞նչ, ես պիտի հավատա՞մ նրան։ Երբե՞ք։ Ո՛չ, արդեն վերջացավ այն բոլորը, բոլորը, որ կազմում էր իմ աշխատանքի, իմ տանջանքների մխիթարությունը... Արդյոք կհավատա՞ս դու. ես այս բոպեիս սովորեցնում էի Գրիշային, առաջ դա ուրախություն էր ինձ համար, իսկ այժմ՝ տանջանք։ Ինչո՞ւ եմ ես ջանք թափում, աշխատում։ Ինչի՞ս են պետք հրեխաները։ Սարսափելին այն է, որ իմ հոգին կարծես շուռ եկավ,, և սիրո, քնքշության փոխարեն ես տածում եմ դեպի նա քեն, այո՛, քեն։ Ես կարող էի սպանել նրան և...

— Դոլլի, հոգյակս, ես հասկանում եմ, բայց մի տանջիր քեզ։ Դու այնպես վիրավորված ես, այնպես գրգռված, որ շատ բան տեսնում ես ո՛չ այնպես, ինչպես կա։

Դոլլին հանդարտվեց, և նրանք մի երկու բոպե լուռ էին։

— Ի՞նչ պիտի անել, մտածի՛ր, Աննա, օգնի՛ր։ Ես բոլորը դատել, կշռել եմ և ոչինչ չեմ տեսնում։

Աննան ոչինչ մտածել չէր կարող, բայց նրա սիրտն ուղղակի արձագանքում էր հարսի յուրաքանչյուր խոսքին, դեմքի յուրաքանչյուր արտահայտությանը։

— Ես կասեմ մի բան,— սկսեց Աննան,— ես նրա քույրն եմ, ես գիտեմ նրա բնավորությունը, նրա ընդունակությունը՝ մոռանալ բոլորը, բոլորը (նա ձեռքով համապատասխան շարժում արեց ճակատի առաջ), գիտեմ գլխովին հրապուրվելու, բայց և լիովին զղջալու նրա այդ ընդունակությունը։ Նա չի հավատում, չի հասկանում այժմ, թե ինչպե՞ս կարող էր ինքն անել այն, ինչ արել է։

— Ո՛չ, նա հասկանում է, նա հասկանում է,— ընդհատեց Դոլլին։— Բայց ես... դու մոռանում ես ինձ... Մի՞թե ինձ համար հեշտ է։

— Կա՛ց։ Երբ նա ասում էր ինձ, խոստովանում եմ, ես դեռ չէի հասկանում քո ծանր դրության ամբողջ արհավիրքը։ Ես տեսնում էի միայն նրան և այն, որ քայքայվել է ձեր ընտանիքը։ Ես խղճում էի նրան, բայց խոսելով քեզ հետ, ես, որպես կին, տեսնում եմ այլ բան. ես տեսնում եմ քո տառապանքները, և ես ասել չեմ կարող, թե որքա՞ն եմ խղճում քեզ։ Սակայն, Դոլլի, հոգյակս, ես լիովին հասկանում եմ քո տառապանքները, միայն մի բան չգիտեմ. ես չգիտեմ... Ես չգիտեմ, թե քո հոգում դեռ որքա՞ն սիրո զգացում կա դեպի նա։ Այդ բանը գիտես դո՛ւ,— արդյոք կա՞ այնքան, որ կարելի լիներ ներել։ Եթե կա, ապա ների՛ր։

— Ո՛չ,— սկսեց Դոլլին, բայց Աննան ընդհատեց նրան, մի անգամ էլ համբուրելով նրա ձեռքը։

— Ես քեզանից ավելի եմ ճանաչում բարձր հասարակությունը,— ասաց նա։ Ես ճանաչում եմ Ստիվայի նման մարդկանց և գիտեմ, թե ինչպե՞ս են նայում նրանք դրա վրա։ Դու ասում ես, որ Ստիվան խոսել է նրա հետ քո մասին։ Այդպիսի բան չի եղել։ Այդ մարդիկ անում են անհավատարմություն, բայց իրենց ընտանեկան օջախն ու կինը սրբություն է նրանց համար։ Այդ կանայք մնում են նրանց արհամարհանքի մեջ ու չեն խանդարում ընտանիքին։ Դրանք ինչ-որ անանցանելի գիծ են քաշում ընտանիքի ու նրանց միջև։ Ես այդ բանը չեմ հասկանում, բայց դա այդպես է։

— Այո՛, բայց նա համբուրել է նրան...

— Դոլլի, կա՛ց, հոգյակս։ Ես տեսել եմ Ստիվային, երբ նա սիրահարված էր քեզ։ Ես հիշում եմ այդ ժամանակը, երբ նա դալիս էր ինձ մոտ և արտասվում էր՝ խոսելով քո մասին, և ինչպիսի՞ պոեզիա ու բարձրություն էիր դու նրա համար, և ես գիտեմ, որքան ավելի էր նա ապրում քեզ հետ, այնքան ավելի էիր դու բարձրանում նրա աչքին։ Միտս է, մենք ծիծաղում էինք

նրա վրա, երբ նա ամեն խոսքից հետո ավելացնում էր. «Դոլլին զարմանալի կին է»։ Դու նրա համար միշտ եղել ես ու մնացել ես աստվածություն, իսկ այդ հրապուրվելը նրա հոգուց չի բխում...

— Բայց եթե կրկնվի՞ այդ հրապուրանքը։

— Չի՛ կարող, որքան ես եմ հասկանում։

— Այո՛, բայց դու կներեի՞ր։

— Չգիտեմ, դատել չեմ կարող... Ո՛չ, կարող եմ,— ասաց Աննան քիչ մտածելուց հետո. ու մտքով որսալով դրությունը և կշռելով այն ներքին կշեռքով, ավելացրեց,— ո՛չ, կարող եմ, կարող եմ, կարող եմ։ Այո՛, ես կներեի։ Ես չէի լինի առաջվանը, բայց կներեի և կներեի այնպես, իբրև թե այդ բանը չի եղել, բնավ չի եղել։

— Դե՜, իհարկե,— արագ ընդհատեց Դոլլին, կարծես նա ասում էր այն, ինչի մասին բազմիցս մտածել էր,— այլապես՝ դա ներում չի լինի։ Եթե պիտի ներել, ապա՝ բոլորովին, բոլորովին։ Դեհ, գնանք, ես քեզ տանեմ քո սենյակը,— ասաց նա վեր կենալով, և ճանապարհին գրկեց Աննային։— Սիրելի իմ Աննա, որքան, որքան ուրախ եմ, որ եկար։ Սիրտս թեթևացավ, շատ թեթևացավ։

XX

Այդ ամբողջ օրն Աննան անցկացրեց տանը, այսինքն՝ Օբլոնսկիների մոտ, և ոչ ոքի չէր ընդունում, որովհետև նրա ծանոթներից մի քանիսը, որ արդեն իմացել էին նրա գալու մասին, գալիս էին այցի հենց այդ օրը։ Աննան ամբողջ առավոտն անցկացրեց Դոլլիի և երեխաների հետ։ Նա միայն տոմս ուղարկեց եղբորը, որպեսզի անպատճառ տանը ճաշի։ «Արի, աստված ողորմած է», գրում էր նա։

Օբլոնսկին ճաշում էր տանը, խոսակցությունն ընդհանուր էր, և կինը խոսում էր նրա հետ, անվանելով նրան «դու», որ առաջ չէր պատահում։ Ամուսնու և կնոջ հարաբերությունների մեջ մնում էր նույն օտարությունը, բայց արդեն խոսք չկար անջատման մասին, ու Ստեպան Արկադևիչը տեսնում էր բացատրվելու և հաշտվելու հնարավորություն։

Ճաշից անմիջապես հետո եկավ Կիտին։ Նա ճանաչում էր

Աննա Արկադենային, բայց շատ քիչ, և գնում էր այժմ քրոջ մոտ ո՛չ առանց երկյուղի զգացումի, թե ինչպես կընդունի իրեն պետերբուրգյան այդ նրբակիրթ տիկինը, որին այնպես գովում էին ամենքը։ Բայց Աննա Արկադենան հավանեց նրան. Կիտին իսկույն նկատեց այդ։ Աննան հայտնապես հիանում էր նրա գեղեցկությամբ ու ջահելությամբ, իսկ Կիտին դեռ չսթափված, արդեն զգում էր իրեն ո՛չ միայն նրա ազդեցության տակ, այլև սիրահարված նրան, ինչպես ընդունակ են սիրահարվելու ջահել աղջիկները ամուսնացած և իրենցից մեծ տիկիններին։ Աննան նման չէր բարձր հասարակության պատկանող տիկնոջ կամ ութամյա որդու մոր, նա ավելի շուտ նման էր քսանամյա աղջկա՝ իր շարժումների ճկունությամբ, թարմությամբ ու դեմքի վրա տպավորված աշխուժությամբ, որ արտահայտվում էր մերթ ժպիտի մեջ, մերթ հայացքի, եթե չլիներ նրա աչքերի լուրջ, երբեմն տխուր արտահայտությունը, որը Կիտին զարմացնում ու ձգում էր դեպի ինքը։ Կիտին զգում էր, որ Աննան պարզ կին է ու ոչինչ չի թաքցնում, բայց որ նրա մեջ կա մի այլ աշխարհ, իր համար անմատչելի, բարդ ու բանաստեղծական հետաքրքրությունների բարձր աշխարհ։

Ճաշից հետո, երբ Դոլլին անցավ իր սենյակը, Աննան արագ վեր կացավ ու մոտեցավ եղբորը, որ սիգար էր ծխում։

— Ստիվա,— ասաց Աննան ուրախ, աչքով անելով, խաչակնքելով եղբորը և աչքերով նշելով դուռը։— Գնա՛, և թող աստված օգնի քեզ։

Նա գցեց սիգարը, հասկանալով քրոջը, և անհայտացավ դռան ետևում։

Երբ Ստեպան Արկադևիչը հեռացավ, Աննան ետ դարձավ դեպի բազմոցը, ուր երեխաներով շրջապատված նստած էր։ Նրանի՞ց էր արդյոք, որ երեխաները տեսնում էին, որ իրենց մայրիկը սիրում է այս հորաքրոջը, թե՝ որ իրենք առանձին հիացմունք էին զգում դեպի նա, բայց երկու մեծերը, իսկ նրանց ետևից նաև փոքրերը, ինչպես դա հաճախ պատահում է երեխաների հետ, դեռ ճաշից առաջ կպան այս նոր հորաքրոջը և չէին հեռանում նրանից։ Ու նրանց միջև կազմվեց խաղի պես մի բան, որ կայանում էր նրանում, թե ո՛վ ավելի մոտիկ նստի հորաքրոջ կողքին, դիպչի նրան, բռնի նրա փոքրիկ ձեռքը, համ-

բուրի նրան, խաղա նրա մատանու հետ կամ գեթ ձեռք տա նրա զգեստի ծալքին։

— Ապա՛, ապա՛, ինչպես էինք նստել առաջ,— ասաց Աննա Արկադևնան՝ նստելով իր տեղը։

Եվ նորից Գրիշան գլուխը մտցրեց հորաքրոջ թևի տակ, գրկով հենվեց նրա զգեստին և շողաց հպարտությամբ ու երջանկությամբ։

— Ուրեմն ե՞րբ է պարահանդեսը,— դիմեց Աննա Արկադևնան Կիտիին։

— Եկող շաբաթ, և հիանալի պարահանդես։ Մեկն այն պարահանդեսներից, որը միշտ ուրախ է անցնում։

— Մի՞թե կան այդպիսիք, որտեղ միշտ ուրախ է լինում,— նուրբ քմծիծաղով ասաց Աննան։

— Տարօրինակ է, բայց կան։ Բորբրիշչևների մոտ միշտ ուրախ է, Նիկիտինների մոտ նույնպես, իսկ Մեժկովների մոտ՝ միշտ ձանձրալի։ Մի՞թե դուք չեք նկատել։

— Ո՛չ, հոգիս, ինձ համար արդեն չկան այնպիսի պարահանդեսներ, որ ուրախ լինեին,— ասաց Աննան, և Կիտին տեսավ նրա աչքերում այն առանձին աշխարհը, որը փակ էր իր համար։— Ինձ համար կան այնպիսիները, որտեղ ավելի պակաս ծանր է ու ձանձրալի։

— Ինչպե՞ս կարող է ձեզ համար ձանձրալի լինել պարահանդեսում։

— Իսկ ինչո՞ւ չի կարող ինձ համար ձանձրալի լինել պարահանդեսում,— հարցրեց Աննան։

Կիտին նկատեց, որ Աննան գիտե, թե ի՞նչ պատասխան կտրվի իրեն։

— Որովհետև դուք միշտ ամենքից լավն եք։

Աննան կարմրելու ընդունակություն ուներ։ Նա կարմրեց և ասաց.

— Նախ՝ երբեք, իսկ երկրորդ՝ եթե այդպես էլ լիներ, իմ ինչի՞ն է պետք դա։

— Դուք կգնա՞ք այդ պարահանդեսին,— հարցրեց Կիտին։

— Ես կարծում եմ, չի կարելի չգնալ։ Վերցրու սա,— ասաց նա Տանյային, որը հանում էր նրա սպիտակ, ծայրը բարակ, մատից հեշտությամբ հանվող մատանին։

— Ես շատ ուրախ կլինեմ, եթե դուք գնաք։ Ես այսպես կուզենայի տեսնել ձեզ պարահանդեսում։

— Համենայն դեպս, եթե ստիպված լինեմ գնալու, ես ինձ կմխիթարեմ այն մտքով, որ դա բավականություն կպատճառի ձեզ... Գրիշա, խնդրեմ, մի քաշքշիր, նրանք առանց այդ էլ զզզվել են,— ասաց նա, ուղղելով մազերի այն փունջը, որի հետ խաղում էր Գրիշան։

Ես պարահանդեսին ձեզ պատկերացնում եմ մանուշակագույն զգեստով։

— Իսկ ինչո՞ւ անպատճառ մանուշակագույն,— ժպտալով հարցրեց Աննան։— Դեհ, երեխաներ, գնացե՛ք, գնացե՛ք։ Լրսո՞ւմ եք։ Միսս Գուլը կանչում է թեյ խմելու,— ասաց նա, պոկելով իրենից երեխաներին և ուղարկելով նրանց սեղանատուն։

— Ես գիտեմ, թե ինչո՞ւ եք դուք ինձ կանչում պարահանդես։ Դուք շատ բան եք սպասում այդ պարահանդեսից և ուզում եք, որ ամենքը լինեն այնտեղ, ամենքը մասնակցություն ունենան։

— Որտեղի՞ց գիտեք։ Այո՛։

— Օ՜, ի՜նչ լավ է ձեր ժամանակը,— շարունակեց Աննան։— Հիշում եմ ու գիտեմ այդ կապտավուն մեգը, որ լինում է Շվեյցարիայի լեռներում։ Գիտեմ այդ մեգը, որ ամեն բան ծածկում է այն երջանիկ օրերին, երբ վերջանալու մոտ է մանկությունը, և այդ երջանիկ, ուրախ, վիթխարի շրջանից ուղին սկսում է դառնալ ավելի ու ավելի նեղ, և ուրախալի ու հոգեսարսուռ է մուտքը դեպի այդ անֆիլադը, թեև նա թվում է և՛ լուսավոր, և՛ գեղեցիկ... Ո՞վ չի անցել այդ ուղին։

Կիտին լուռ ժպտում էր։ «Բայց ինչպե՞ս է նա անցել այդ ուղին, ինչպե՞ս կուզենայի ես իմանալ նրա ամբողջ սիրավեպը», մտածեց Կիտին, հիշելով Ալեքսեյ Ալեքսանդրովիչի՝ նրա ամուսնու, ո՛չ բանաստեղծական արտաքինը։

— Այդ մասին մի քիչ գիտեմ։ Ստիվան ասաց ինձ, և ես շնորհավորում եմ ձեզ, նա ինձ դուր է գալիս շատ,— շարունակեց Աննան.— ես Վրոնսկուն պատահեցի երկաթուղում։

— Ա՜խ, նա այնտե՞ղ էր,— հարցրեց Կիտին կարմրելով։— Իսկ ի՞նչ ասաց ձեզ Ստիվան։

— Ստիվան շաղակրատեց ամեն բան։ Ես շատ ուրախ կլի-

նեի... Երեկ ես գալիս էի Վոռնսկու մոր հետ,— շարունակեց Կարենինան,— և մայրն առանց լռելու, անդադար խոսում էր նրա մասին,— նա մոր սիրելին է. ես գիտեմ, թե ինչպե՛ս աշառու են մայրերը, բայց...

— Իսկ ի՞նչ էր պատմում մայրը ձեզ։

— Ա՜խ, շատ բան։ Գիտեմ, որ նա մոր սիրելին է, բայց երևում է, նա ասպետ է... Օրինակ, մայրը պատմում էր, որ նա, Վոռնսկին, ուզում է իր ամբողջ կարողությունը տալ եղբորը, որ նա դեռ մանուկ հասակում արել է ինչ-որ անսովոր բան, ջրից ազատել է մի կնոջ։ Մի խոսքով հերոս է,— ասաց Աննան ժպտալով և հիշելով այն երկու հարյուր ռուբլու մասին, որ նա տվեց կայարանում։

Բայց Աննան չպատմեց այդ երկու հարյուր ռուբլու մասին։ Ինչ-որ պատճառով նրա համար անախորժ էր հիշել դրա մասին։ Նա զգում էր, որ դրա մեջ կար մի բան՝ իրեն վերաբերող և այնպիսի բան, որ չպետք է լիներ։

— Կոմսուհին շատ էր խնդրում ինձ այցելել իրեն,— շարունակեց Աննան,— և ես շատ ուրախ կլինեմ նրան տեսնելու. վաղը կգնամ նրա մոտ։ Փառք աստծո, Ստիվան երկար մնաց Դոլլիի առանձնասենյակում,— ավելացրեց Աննան, փոխելով խոսակցությունը և վեր կենալով, մի բանից դժգոհ, ինչպես թվաց Կիտիին։

— Ո՛չ, առաջ ես, ո՛չ, ես,— բղավում էին երեխաները, վերջացնելով թեյը և վազելով դեպի հորաքույր Աննան։

— Բոլորդ միասին,— ասաց Աննան ու ծիծաղելով վազեց նրանց ընդառաջ և գրկեց ու ցած գլորեց վխտացող և հիացմունքից ճվճվացող երեխաների այդ ամբողջ կույտը։

XXI

Մեծերի թեյի ժամանակ Դոլլին դուրս եկավ իր սենյակից։ Ստեպան Արկադևիչը դուրս չէր գալիս։ Նա, երևի, դուրս էր եկել կնոջ սենյակից ետևի դռնով։

— Վախենում եմ, վերևում ցուրտ լինի քեզ համար,— նկատեց Դոլլին, դիմելով Աննային,— ես ուզում եմ քեզ ցած բերել, և մենք մոտ կլինենք իրար։

— Ա՜խ, խնդրում եմ իմ մասին չմտահոգվել,— պատասխանեց Աննան, խորազնին նայելով Դոլլիի դեմքին և աշխատելով հասկանալ՝ արդյոք հաշտություն կայացե՞լ է, թե ոչ։

— Քեզ համար լուսավոր կլինի այստեղ,— պատասխանեց Հարսը։

— Պիտի ասեմ քեզ, որ ամեն տեղ և միշտ էլ ես քնում եմ արջամկան պես։

— Ինչի՞ մասին է խոսքը,— հարցրեց Ստեպան Արկադևիչը, ներս գալով առանձնասենյակից ու դիմելով կնոջը։

Նրա տոնից և՛ Կիտին, և՛ Աննան իսկույն հասկացան, որ հաշտությունը կայացել է։

— Ես ուզում եմ Աննային բերել ներքև, բայց պետք է վարագույրները տեղափոխել։ Ոչ ոք չի կարող այդ անել, ինքս պիտի անեմ,— պատասխանեց Դոլլին, դիմելով ամուսնուն։

«Աստված գիտե, արդյոք բոլորովի՞ն են հաշտվել, թե ոչ»,— մտածեց Աննան, լսելով Դոլլիի տոնը՝ սառը և հանգիստ։

— Ա՜խ, բավ է, Դոլլի, ամեն ինչ դժվարացնել,— ասաց ամուսինը։— Եթե ուզում ես, ես կանեմ բոլորը...

«Այո՛, պետք է որ հաշտված լինեն»,— մտածեց Աննան։

— Գիտեմ, թե ո՛նց կանես դու բոլորը,— պատասխանեց Դոլլին,— կասես Մատվեյին անի այն, ինչ չի կարելի անել, ինքդ կգնաս, իսկ նա ամեն բան կխառնի իրար,— և սովորական հեգնական ժպիտը կնճռոտեց Դոլլիի շրթունքների ծայրերը, երբ նա ասում էր դա։

«Լրիվ, լրիվ հաշտություն, լրիվ,— մտածեց Աննան,— փառք աստծո», և ուրախանալով, որ ինքն եղավ դրա պատճառը, նա մոտեցավ Դոլլիին ու համբուրեց նրան։

— Բոլորովին ո՛չ, ինչո՞ւ ես դու այդպես արհամարհում ինձ ու Մատվեյին,— ասաց Ստեպան Արկադևիչը, ժպտալով հազիվ նկատելի կերպով և դիմելով կնոջը։

Ամբողջ երեկո, ինչպես միշտ, Դոլլին մի փոքր հեգնորեն էր վերաբերվում ամուսնուն, իսկ Ստեպան Արկադևիչը գոհ էր և ուրախ, բայց այնքան, որ ցույց չտա, թե ինքը, ներումն ստանալով, մոռացել է իր մեղքը։

Տասից կես պակաս, երեկոյան, առանձնապես ուրախալի և հաճելի ընտանեկան զրույցը թեյի սեղանի շուրջը՝ Օբ-

լոնսկիների մոտ խախտվեց, ըստ երևույթին, ամենահասարակ մի դեպքից, բայց այդ հասարակ դեպքը, չգիտես թե ինչո՛ւ, ամենքին տարօրինակ թվաց։ Խոսելով Պետերբուրգի ընդհանուր ծանոթների մասին, Աննան արագ վեր կացավ։

— Լուսանկարը կա ալբոմիս մեջ,— ասաց նա,— ի դեպ, ես ցույց կտամ ձեզ իմ Սերյոժային,— ավելացրեց նա մայրական հպարտ ժպիտով։

Ժամը տասի մոտ, երբ Աննան սովորաբար հրաժեշտ էր տալիս որդուն և հաճախ, պարահանդես գնալուց առաջ ինքն էլ պառկեցնում նրան, նա տխրեց, որ այնքան հեռու է հիմա նրանից. և ինչի մասին էլ խոսելիս լինեին, ակամա վերադառնում էր մտքով դեպի իր գանգրահեր Սերյոժան։ Նա ուզում էր նայել որդու լուսանկարին ու խոսել նրա մասին։ Օգտվելով առաջին պատրվակից, նա կանգնեց և իր թեթև, վճռական քայլվածքով գնաց, որ բերի ալբոմը։ Վերև՝ դեպի նրա սենյակը տանող աստիճանները դուրս էին գալիս գլխավոր մուտքի դռան տաք սանդուղքի սրահը։

Այն միջոցին, երբ նա դուրս էր գալիս ընդունարանից, նախասենյակում լսվեց զանգի ձայն։

— Ո՞վ կարող է լինել,— ասաց Դոլլին։

— Իմ ետևից գալու համար դեռ վաղ է, իսկ եթե ուրիշ մարդ է՝ ուշ է,— նկատեց Կիտին։

— Հավանորեն, գրություններ են բերել,— ավելացրեց Ստեպան Արկադևիչը, և երբ Աննան անցնում էր սանդուղքի մոտով, ծառան վազեց վեր, որ զեկուցի եկողի մասին, իսկ ինքը՝ եկողը, կանգնել էր լամպի մոտ, և Աննան, նայելով ներքև, իսկույն ճանաչեց Վրոնսկուն, ու հանկարծ նրա սրտի մեջ շարժվեց բավականության և միաժամանակ անորոշ վախի զգացում։ Վրոնսկին կանգնել էր, առանց հանելու վերարկուն, և ինչ-որ բան էր հանում գրպանից։ Այն րոպեին, երբ Աննան հասավ սանդուղքի մեջտեղը, Վրոնսկին բարձրացրեց աչքերը, տեսավ Աննային, և նրա դեմքի արտահայտության մեջ առաջացավ ամոթահար եղածի ու վախեցածի պես մի բան։ Աննան գլուխը փոքր-ինչ ծռած անցավ, իսկ նրա ետևից լսվեց Ստեպան Արկադևիչի բարձր ձայնը, որ կանչում էր Վրոնսկուն՝ ներս մտնել, և հրաժարվող Վրոնսկու ո՛չ բարձր, փափուկ ու հանգիստ ձայնը։

Երբ Աննան վերադարձավ ալբոմի հետ, Վրոնսկին այլևս չկար, և Ստեպան Արկադևիչը պատմում էր, թե նա եկել էր իմանալու այն ճաշի մասին, որ նրանք վաղը տալիս էին մի եկվոր հոչակավոր անձի։

Կիտին կարմրեց։ Նա մտածում էր, որ միայն ինքը հասկացավ, թե ինչո՛ւ էր Վրոնսկին եկել և ինչո՛ւ ներս չեկավ։ «Նա եղել է մեզ մոտ,— մտածում էր Կիտին,— և ինձ տանը չի գտել ու մտածել է, որ այստեղ եմ, բայց ներս չմտավ, որովհետև մտածում էր, որ ուշ է, և Աննան այստեղ է»։

Բոլորն իրար նայեցին, առանց որևէ բան ասելու, և սկսեցին դիտել Աննայի ալբոմը։

Ոչինչ չկար՝ ո՛չ անսովոր, ո՛չ էլ տարօրինակ այն բանում, որ մարդը ժամը տասից կես պակաս եկավ իր բարեկամի մոտ՝ իմանալու տրվելիք ճաշի մանրամասները և ներս չմտավ, բայց ամենքին դա թվաց տարօրինակ։ Ամենքից ավելի Աննային թվաց դա տարօրինակ ու վատ։

XXII

Պարահանդեսը նոր էր սկսվել, երբ Կիտին մոր հետ մտնում էր պուդրայած ու կարմիր բաճկոններ հագած սպասավորներով և ծաղիկներով զարդարուն, լույսով հեղեղված մեծ սանդուղքը։ Դահլիճներից լսվում էր այնտեղ տիրող համաչափ, ինչպես մեղվի փեթակում, շարժման շրշյունը, և մինչ նրանք ծառերի միջև եղած սրահակում ուղղում էին հայելու առաջ իրենց սանրվածքն ու զգեստը, դահլիճից լսվեցին առաջին վալսն սկսած նվագախմբի ջութակների զգույշ հատորոշ հընչյունները։ Աշխարհիկ զգեստով պճնված մի ծերուկ, որ ուղղում էր իր սպիտակահեր քունքերը մյուս հայելու մոտ և զեղում էր շուրջը անուշահոտ օծանելիքների բույր, հանդիպեց նրանց սանդուղքի վրա և մի կողմ քաշվելով, ճանապարհ տվեց, հավանորեն հիանալով իրեն անծանոթ Կիտիով։ Անմորուք մի պատանի, մեկը նրբակիրթ այն պատանիներից, որոնց ծերունի Շչերբացկին անվանում էր այուտյուկներ, չափազանց բաց ժիլետով, քայլընթաց ուղղելով իր սպիտակ փողկապը, ողջունեց նրանց և, առաջ վազելով նրանց կողքից, ետ դարձավ,

հրավիրելով Կիտիին կադրիլի։ Առաջին կադրիլն արդեն տրված էր Վոռնսկուն. Կիտին պետք է այդ պատանուն տար երկրորդ կադրիլը։ Զինվորականը, կոճկելով ձեռնոցը, մեկդի քաշվեց դռան մոտ և, շոյելով բեղերը, զմայլվում էր վարդագույն Կիտիով։

Չնայած, որ պարահանդեսի համար տուալետը, սանրվածքը և բոլոր պատրաստությունները Կիտիին պատճառել էին մեծ աշխատանք ու խոհեր, այժմ նա, վարդագույն չեխոլով իր բարդ տյուլե զգեստի մեջ, պարահանդես էր մտնում այնքան ազատ և անբռնազբոսիկ, կարծես, այս բոլոր վարդադրվագները, ժանյակները, տուալետի բոլոր մանրամասները նրա և տանեցիների համար ոչ մի բոպե ուշադրության առարկա չէին եղել, կարծես նա ծնվել էր այդ զգեստի, ժանյակների մեջ, այդ բարձր սանրվածքով, վարդով ու նրանից վերև՝ երկու տերևով։

Երբ պառավ իշխանուհին, դահլիճ մտնելուց առաջ, ուզում էր ուղղել աղջկա գոտու փաթ ընկած ժապավենը, Կիտին թեթևակի խուսափեց։ Նա զգում էր, որ ամեն ինչ ինքնին պետք է լավ ու նազելի լինի իր վրա և որ պետք չէ ոչինչ ուղղել։

Կիտին գտնվում էր իր երջանիկ օրերից մեկում։ Զգեստը ոչ մի տեղ չէր սեղմում, ոչ մի տեղ կախ չէր ընկնում ժանյակե բերտան[1]։ Վարդադրվագները չէին ճխլվել ու չէին պոկվել։ վարդագույն մաշիկները, բարձր, կորամեջ կրունկներով, չէին սեղմում, այլ ուրախացնում էին փոքրիկ ոտքը։ Խարտյաշ մազերի խիտ ապարոշներն անխախտ մնում էին փոքրիկ գլխի վրա, ասես, բնական լինեին։ Բոլոր երեք կոճակներն առանց պոկվելու կոճկվեցին բարձրադիր ձեռնոցի վրա, որ շուրջբոլոր գրկել էր նրա թևը, շաղճատելով ձեռքի ձևը։ Մեդալիոնի սև թավշյա ժապավենն առանձնահատուկ քընքշությամբ շրջագծել էր վիզը։ Թավշյա այդ ժապավենը զմայլանք էր, և տանը, հայելու մեջ նայելով իր պարանոցին, Կիտին զգում էր, որ այդ ժապավենը խոսում է։ Մյուս բոլոր բաների վերաբերյալ դեռ կարող էր կասկած լինել, բայց այդ ժապավենը հիացք էր։ Կիտին ժպտաց այստեղ ևս՝ պարահանդեսում, նայելով նրան՝ հայելու մեջ։ Մերկացրած ուսերի ու թևերի մեջ Կիտին զգում էր պաղ մարմարիոնություն, մի զգացում, որ նա առանձնապես սիրում էր։ Աչքերը փայլում էին, ու վարդագույն շուրթերը չէին կարող չժպտալ իր գրավչության գիտակցությունից։ Տակավին չմտած դահլիճ ու չհասած պարելու հրավերի սպասող տյուլե-ժապավենյա-ժանյակե-ծաղկյա տիկինների ամբոխին (Կիտին երբեք չէր հալվում այդ ամբոխի մեջ), նրան հրավիրեցին վալսի, և հրավիրեց լավագույն կավալերը, պարահանդեսային հիերարխիայի գլխավոր կավալերը, պարահանդեսների հռչակավոր դիրիժոր, ցերեմոնիմեյստեր, ամուսնացած, գեղեցիկ ու վայելչակազմ մի տղամարդ, Ծգորուշկա Կորսունսկին։ Հենց նոր թողնելով կոմսուհի Բանինային, որի հետ պարեց վալսի առաջին տուրը, նա շուրջանակի դիտելով իր տնտեսությունը, այսինքն՝ պարաշրջան մտած մի քանի զույգերը, տեսավ ներս եկած Կիտիին և մոտ վազեց նրան այն առանձին, միայն պարահանդեսների դիրիժորներին հատուկ, բաց-համարձակ շորերով և գլուխ տալով, նույնիսկ չհարցնելով, արդյոք ուզո՞ւմ է նա, տարավ ձեռքը, որ գրկի նրա բարակ իրանը։ Կիտին նայեց շուրջը, թե ո՛ւմ հանձնի հովհարը, և տանտիրուհին վերցրեց այն, ժպտալով նրան։

— Ի՜նչ լավ է, որ դուք եկաք ժամանակին,— ասաց Կորսունսկին Կիտիին, գրկելով նրա իրանը,— թե չէ ինչի՛ է նման ուշանալը։

Կիտին մի փոքր կռացած՝ դրեց իր ձախ ձեռքը նրա ուսին, և փոքրիկ ոտքերը, վարդագույն մաշիկների մեջ, արագ, թեթև ու համաչափ շարժվում էին երաժշտության տակտի հետ՝ ողորկ պարկետի վրայով։

— Մարդ հանգստանում է ձեզ հետ վալս պարելով,— ասաց նա Կիտիին, անելով վալսի առաջին դանդաղ քայլերը։

Ի՜նչ սքանչելի թեթևություն, précision[1],— ասում էր նա Կիտիին այն, ինչ ասում էր համարյա բոլոր իր լավ ծանոթներին։

[1] Կանանց շքեղ ուսնոց, որ խաչաձևելով կուրծքը, կոճկվում էր իրանի վրա։

[1] Ճշտություն։

Կիտին ժպտաց նրա գովասանքի համար և նրա ուսի վրայից շարունակում էր դիտել դահլիճը։ Կիտին հասարակության մեջ նոր երևացող կին չէր, որի աչքին պարահանդեսում բոլոր դեմքերը միանում են իրար ու կազմում մի թովիչ տպավորություն. նա պարահանդեսներում մաշված աղջիկ էլ չէր, որին պարահանդեսի բոլոր դեմքերն այնպես ծանոթ են, որ ձանձրացրել են. նա միջին տեղ էր բռնում այդ երկուսի մեջ,— նա հուզված էր, դրա հետ միասին այնքան տիրապետում էր իրեն, որ կարող էր դիտել։ Դահլիճի ձախ անկյունում նա տեսնում էր համախմբված հասարակության ծաղիկը։ Այնտեղ էր անտանելի չափերով մերկացած գեղեցկուհի Լիդին, Կորսունսկու կինը, այնտեղ էր տանտիրուհին, այնտեղ փայլում էր իր ճաղատությամբ Կրիվինը, միշտ այնտեղ, որտեղ և հասարակության ծաղիկը. դեպի այնտեղ էին նայում պատանիները, չհամարձակվելով մոտենալ, և այնտեղ Կիտին աչքերով գտավ Ստիվային, ապա տեսավ Աննայի սքանչելի ֆիգուրն ու գլուխը՝ սև թավշյա զգեստով։ Նա էլ էր այնտեղ։ Կիտին չէր տեսել նրան այն երեկոյից հետո, երբ ինքը մերժեց Լևինին։ Կիտին իր հեռատես աչքերով իսկույն ճանաչեց նրան և նույնիսկ նկատեց, որ նա նայում է իրեն։

— Ի՞նչ կասեք, էլի՞ մի քիչ։ Չհոգնեցի՞ք,— ասաց Կորսունսկին, թեթև հևալով։

— Ոչ, շնորհակալ եմ։

— Իսկ ո՞ւր տանել ձեզ։

— Կարծեմ, Կարենինան այստեղ է... տարեք ինձ նրա մոտ։

— Ուր կհրամայեք։

Եվ Կորսունսկին վալսեց, շափավորելով քայլը, ուղիղ դեպի դահլիճի ձախ անկյունում կուտակված ամբոխը, բարձրաձայն ասելով. „pardon, mesdames, pardon, pardon, mes dames[1], և, խուսանավելով ժանյակների, տյուլի ու ժապավենների ծովում ու առանց կարթկելու մի փետուր անգամ, զառիթափ թեքեց իր դամային, այնպես որ բացվեցին նրա բարակ ոտքերը ցանցկեն չուլկիների մեջ, իսկ փեշատուտը հողմահար տարվեց ու ծածկեց Կրիվինի ծնկերը։ Կորսունսկին գլուխ տվեց, ուղղեց բաց կուրծքը և բռնեց Կիտիի ձեռքը,

[1] Ներողություն, տիկիններ։

որ տանի նրան Աննա Արկադևնայի մոտ։ Կիտին կարմրած բարձրացրեց փեշատուտը Կրիվինի ծնկներից և, մի փոքր շշմած, նայեց շուրջը, որոնելով Աննային։ Աննան հագած ուներ ո՛չ թե մանուշակագույն, ինչպես անպայման ուզում էր Կիտին, այլ սև, խորը կտրած. թավշյա զգեստ, որ բացել էր նրա հղկուն, ինչպես հին փղոսկր, գեր ուսերն ու կուրծքը և կլոր թևերը՝ բարակ փոքրիկ ձեռքերով։ Ամբողջ զգեստը ժանյակազարդած էր վենետիկյան գիպյուրով։ Գլխին, սև մազերի մեջ, սեփական՝ առանց խառնուրդի, կար հնգաթև մանուշակներից փոքրիկ ծաղկեշղթա և մի այդպիսին էլ գոտու սև ժապավենի վրա՝ սպիտակ ժանյակների միջև։ Նրա սանրվածքն աննկատելի էր։ Նկատելի էին միայն նրան գեղազարդող, գանգուր մազերի անձնիշխան այդ կարճ խոպոպիկները, միշտ դուրս պրծած՝ քունքերի և ծոծրակի վրա։ Հղկուն, ամուր պարանոցին կար մի թել մարգարիտ։

Կիտին ամեն օր տեսնում էր Աննային, սիրահարված էր նրան և պատկերացնում էր նրան անպայման մանուշակագույն զգեստով։ Բայց այժմ, տեսնելով նրան սև հագուստով, զգաց, որ չէր հասկանում նրա ամբողջ հրապույրը։ Նա այժմ տեսնում էր նրան, որպես իր համար բոլորովին նոր և անսպասելի մի գրավչություն։ Այժմ Կիտին հասկացավ, որ Աննան չէր կարող լինել մանուշակագույն զգեստով, և որ նրա հիացքը հենց այն էր, որ նա միշտ դուրս էր գալիս իր տուալետի միջից, որ տուալետը երբեք չէր կարող երևալ նրա վրա։ Շքեղ ժանյակներով սև զգեստն էլ չէր երևում նրա վրա. դա շրջանակ էր միայն և երևում էր միայն նա ինքը՝ պարզ, բնական, նրբագեղ և միաժամանակ ուրախ ու աշխույժ։

Աննան կանգնել էր, ինչպես միշտ, չափազանց ուղիղ կեցվածքով, և երբ Կիտին մոտեցավ այդ մարդակույտին, խոսում էր տանտիրոջ հետ, գլուխը մի փոքր դարձրած դեպի նա։

— Ո՛չ, ես քար չեմ նետի,— պատասխանեց Աննան նրան ինչ-որ հարցի առթիվ,— թեև չեմ հասկանում,— շարունակեց նա ուսերը վեր քաշելով, ու հովանավորության նուրբ ժպիտով անմիջապես դարձավ Կիտիին։ Կանացի թռուցիկ հայացքով զննելով նրա տուալետը, Աննան արավ հագիվ նկատելի, բայց Կիտիի համար հասկանալի, նրա տուալետին ու գեղեցկությա-

ներ հավանություն տվող գլխի շարժում։— Դուք դահլիճ էլ մըտնում եք պարելով,— ավելացրեց նա։

— Կիտին իմ ամենահավատարիմ օգնականներից մեկն է,— ասաց Կորսունսկին, ողջունելով Աննա Արկադևնային, որին դեռ չէր տեսել։— Իշխանազնուհին օգնում է դարձնելու պարահանդեսը ուրախ ու գեղեցիկ։ Աննա Արկադևնա. մի տուր վալս,— ասաց նա գլուխ խոնարհելով։

— Դուք ծանո՞թ եք,— հարցրեց տանտերը։

— Ո՞ւմ հետ մենք ծանոթ չենք։ Ես ու իմ կինը նման ենք սպիտակ գայլի, մեզ ամենքը ճանաչում են,— պատասխանեց Կորսունսկին։— Մի տուր վալս, Աննա Արկադևնա։

— Ես չեմ պարում, երբ կարելի է չպարել,— ասաց Աննան։

— Բայց այսօր չի կարելի,— պատասխանեց Կորսունսկին։

Այդ միջոցին մոտենում էր Վրոնսկին։

— Դեհ, եթե այսօր չի կարելի չպարել, ուրեմն գնանք,— ասաց Աննան, չնկատելով Վրոնսկու գլխաողջույնը, և արագ բարձրացրեց ձեռքն ու դրեց Կորսունսկու ուսին։

«Ինչո՞ւ է Աննան դժգոհ նրանից», մտածեց Կիտին, նկատելով, որ Կարենինան դիտմամբ չպատասխանեց Վրոնսկու ողջույնին։ Վրոնսկին մոտեցավ Կիտիին, հիշեցնելով նրան առաջին կադրիլի մասին և ափսոսալով, որ այդ ամբողջ ժամանակ բավականություն չի ունեցել նրան տեսնելու։ Կիտին հիացմունքով նայում էր վալս պարող Աննային ու լսում էր Վրոնսկուն։ Կիտին սպասում էր, որ նա իրեն կհրավիրի վալսի, բայց չհրավիրեց, և Կիտին զարմացած նայեց նրան։ Վրոնսկին կարմրեց ու շտապ հրավիրեց վալսելու, բայց հենց որ գրկեց Կիտիի բարակ իրանը և արեց առաջին քայլը, հանկարծ երաժշտությունը լռեց։ Կիտին նայեց նրա դեմքին, որ այնքան մոտիկ էր իրեն, և երկար ժամանակ հետո, մի քանի տարի անց, այդ սիրազեղուն հայացքը, որով ինքն այն րոպեին նայեց նրան և որին նա չպատասխանեց, տանջալից ամոթով կտրատում էր Կիտիի սիրտը։

— Pardon, pardon! Վա՛լս, վա՛լս,— բղավեց դահլիճի մյուս կողմից Կորսունսկին և գրկելով առաջին պատահած օրիորդին, սկսեց պարել։

XXIII

Վրոնսկին Կիտիի հետ արեց վալսի մի քանի տուր։ Վալսից հետո Կիտին մոտեցավ մորը և հազիվ կարողացավ մի երկու խոսք ասել Նորդստոնին, երբ արդեն եկավ Վրոնսկին նրա ետևից՝ առաջին կադրիլի համար։ Կադրիլի ժամանակ չասվեց նշանակալից ոչինչ, տեղի ունեցավ կցկտուր խոսակցություն՝ մերթ Կորսունսկիների մասին՝ ամուսնու և կնոջ, որոնց Վրոնսկին նկարագրում էր շատ զվարճալիորեն, որպես քառասնամյա համակրելի երեխաների, մերթ ապագա հասարակական թատրոնի մասին, և մի անգամ միայն խոսակցությունը դիպավ Կիտիի զգայուն թելերին, երբ Վրոնսկին հարցրեց Լևինի մասին, թե արդյոք այստե՞ղ է նա, և ավելացրեց, որ շատ հավանեց նրան։ Բայց Կիտին ավելի բան չէր էլ սպասում կադրիլից։ Նա սրտատրոփ սպասում էր մազուրկային։ Նրան թվում էր, որ մազուրկայի մեջ կվճռվի ամեն ինչ։ Այն հանգամանքը, որ կադրիլի ժամանակ Վրոնսկին նրան չհրավիրեց մազուրկայի, չէր մտահոգում Կիտիին։ Նա համոզված էր, որ ինքը մազուրկան կպարի Վրոնսկու հետ, ինչպես և առաջվա պարահանդեսներում, ու հինգ հոգու մերժեց, ասելով, թե պարում է։ Ամբողջ պարահանդեսը՝ մինչև վերջին կադրիլը, խնդագին ծաղիկների, հնչյունների և շարժումների թովիչ երազ էր Կիտիի համար։ Նա չէր պարում միայն այն ժամանակ, երբ իրեն զգում էր չափազանց հոգնած ու հանգիստ էր խնդրում։ Բայց վերջին կադրիլը պարելով ձանձրալի պատանիներից մեկի հետ, որին չէր կարելի մերժել, այնպես պատահեց, որ նա vis-à-vis[1] եղավ Վրոնսկուն և Աննային։ Նա չէր հանդիպել Աննային՝ նրա գալու առաջին օրից հետո և այստեղ հանկարծ տեսավ նրան, որպես բոլորովին նոր ու անսպասելի էակի։ Նա տեսավ նրա մեջ հաջողությունից առաջացած գրգռվածության՝ իրեն այնքան ծանոթ գիծը։ Նա տեսնում էր, որ Աննան արբեցած է իր առաջացրած հիացմունքի գինով։ Նա ճանաչում էր, գիտեր այդ զգացումը և գիտեր նրա հատկանիշները, ու տեսնում էր դրանք Աննայի վրա, տեսնում էր թրթռացող, բոցավառվող փայլը նրա աչ-

[1] Դեմ առ դեմ։

քերում և երջանկության ու հուզմունքի ժպիտը, որ ակամա ծռում էր նրա շուրթերը, և նրա շարժումների հատորոշ նազանքը, ճշտությունն ու թեթևությունը։

«Ո՞վ է,— հարցրեց Կիտին ինքն իրեն։— Բոլո՞ր, թե՞ մեկը»։ Եվ, առանց օգնելու իր հետ պարող ու տանջվող պատանուն խոսակցության մեջ, որի թելը նա ձեռքից բաց թողեց ու չէր կարողանում վերցնել, և արտաքուստ ենթարկվելով Կորսունսկու ուրախ-բարձրաձայն հրամայական կանչերին, որոնք ամենքին մերթ նետում էին grand rond-ի[1] մեջ, մերթ՝ chaine-ի[2], Կիտին դիտում էր, և նրա սիրտը ճմլվում էր ավելի ու ավելի։ «Ո՛չ, ամբոխի հիացումը չէ, որ տրբեցրել է Աննային, այլ մեկի հիացքն է, և այդ մեկը մի՞թե Վրոնսկին է»։ Ամեն անգամ, երբ Վրոնսկին խոսում էր Աննայի հետ, Աննայի աչքերում բոցավառվում էր խնդագին մի փայլ, և երջանկության ժպիտը ծռում էր նրա կարմիր շուրթերը։ Աննան կարծես ուժ էր գործ դնում իր վրա, որ ցույց չտա ուրախության այդ նշանները, բայց նրանք իրենք իրենց արտացոլվում էին նրա դեմքին։ «Բայց ինչպե՞ս է Վրոնսկին»։ Կիտին նայեց նրան ու սարսափեց։ Այն, ինչ այնպես պարզ պատկերանում էր Կիտիին Աննայի դեմքի հայելու մեջ, Կիտին տեսավ Վրոնսկու վրա։ Ի՞նչ եղավ նրա միշտ հանգիստ, հաստատուն վարվելաձևը և դեմքի անփույթ խաղաղ արտահայտությունը։ Ո՛չ, Վրոնսկին այժմ, ամեն անգամ, երբ դիմում էր Աննային, մի փոքր խոնարհում էր գլուխը, կարծես ուզում էր ծունկ չոքել նրա դիմաց, և Վրոնսկու հայացքի մեջ կար հնազանդության ու վախի արտահայտություն միայն։ «Ես ո՛չ թե վիրավորել եմ ուզում,— ամեն անգամ կարծես ասում էր նրա հայացքը,— այլ ինձ փրկել եմ ուզում, և չգիտեմ, թե ինչպե՛ս»։ Վրոնսկու դեմքին կար այնպիսի արտահայտություն, որի նմանը Կիտին երբեք չէր տեսել առաջ։

Նրանք խոսում էին ընդհանուր ծանոթների մասին, նրանց մեջ տեղի ուներ ամենադատարկ խոսակցություն, բայց Կիտիին թվում էր, որ նրանց ասած յուրաքանչյուր խոսք վճռում է թե՛ նրանց և թե՛ իր բախտը։ Ու տարօրինակն այն է,

[1] Մեծ շրջան։
[2] Շղթա։

որ թեև նրանք իրոք խոսում էին այն մասին, թե ինչպե՛ս ծիծաղելի է Իվան Իվանովիչն իր ֆրանսերեն լեզվով, այն մասին, թե Ելեցկայայի համար կարելի էր գտնել ավելի լավ փեսացու, բայց և այնպես՝ այդ խոսքերը նշանակություն ունեին նրանց համար, և նրանք զգում էին դա նույնպես, ինչպես և Կիտին։ Ամբողջ պարահանդեսը, ամբողջ աշխարհը ծածկվեց մառախուղով Կիտիի հոգում։ Նրա անցած դաստիարակության խիստ դպրոցն էր միայն պահում նրան և ստիպում էր անել այն, ինչ պահանջում էին նրանից, այսինքն՝ պարել, պատասխանել հարցերին, խոսել, նույնիսկ ժպտալ։ Բայց մազուրկան սկսվելուց առաջ, երբ արքայադուստրը տեղավորել աթոռները և մի քանի զույգեր փոքր դահլիճներից շարժվեցին դեպի մեծը, Կիտին ապրեց հուսահատության ու սարսափի րոպե։ Նա մերժել էր հինգ հոգու և այժմ չէր պարում մազուրկա։ Նույնիսկ հույս չկար, որ նրան կհրավիրեն, այն պատճառով հենց, որ նա չափազանց մեծ հաջողություն ուներ բարձր հասարակության մեջ, և ոչ ոքի մտքով չէր անցնի, թե նա հրավիրված չէր մինչ այդ։ Գնալ էր ասել մորը, թե հիվանդ է և գնալ տուն, բայց նա այդ անելու ուժ չուներ։ Նա իրեն զգում էր սպանված։

Կիտին մտավ փոքրիկ ընդունարանի խորքը և ընկավ բազկաթոռի վրա։ Եթերային շրջազգեստի փեշերը ամպի պես բարձրացան նրա բարակ իրանի շուրջը. մերկ, նիհար, քնքուշ կուսական մի ձեռք անզոր ցած գցած, թաղվեց վարդագույն շրջազգեստի ծալքերի մեջ, մյուսում նա բռնած ուներ հովհարը և արագ, կարճ շարժումներով զովացնում էր տաքացած դեմքը։ Բայց հակառակ թիթեռնիկի այդ տեսքին, թիթեռնիկի, որ հենց նոր կարթկեց խոտին, և ա՛յ, ահա պատրաստ է վեր ճախրելով բացել ծիածանային իր թևերը,— սոսկալի հուսահատությունը ճմլում էր նրա սիրտը։

«Գուցե ես սխալվում եմ, գուցե այդպիսի բան չկա»։ Եվ նա նորից հիշեց այն բոլորը, ինչ տեսավ։

— Կիտի, ի՞նչ բան է դա,— ասաց կոմսուհի Նորդստոնը, գորգի վրայով անլսելի մոտենալով նրան։— Ես չեմ հասկանում։

Կիտիի վարի շրթունքը ցնցվեց, նա արագ կանգնեց։

— Կիտի, դու մազուրկա չե՞ս պարում։

— Ո՛չ, ո՛չ,— ասաց Կիտին արցունքներից դողացող ձայնով։

— Նա իմ ներկայությամբ նրան կանչում էր մազուրկայի,— ասաց Նորդստոնը, իմանալով, որ Կիտին կհասկանա, թե ո՞վքեր են նա և նրան։— Նա ասաց՝ մի՞թե դուք չեք պարում իշխանազնուհի Շչերբացկայայի հետ։

— Ա՛խ, ինձ համար միևնույնն է,— պատասխանեց Կիտին։

Ոչ ոք, բացի Կիտիից, չէր հասկանում նրա դրությունը, ոչ ոք չգիտեր, որ նա երեկ մերժեց մի մարդու, որին գուցե սիրում էր, և մերժեց այն պատճառով, որովհետև հավատում էր ուրիշին։

Կոմսուհի Նորդստոնը գտավ Կորսունսկուն, որի հետ պարում էր մազուրկա, և հրամայեց նրան հրավիրել Կիտիին։

Կիտին պարում էր առաջին զույգը, և իր բախտից առիթ չուներ խոսելու, որովհետև Կորսունսկին ամբողջ ժամանակ վազվզում էր, կարգադրություններ անելով իր տնտեսության վերաբերյալ։ Վրոնսկին Աննայի հետ նստել էր համարյա Կիտիի դիմաց։ Նա տեսնում էր նրանց իր հեռատես աչքերով, տեսնում էր նրանց նաև մոտիկից, երբ իրենք խոնվում էին զույգերի մեջ, և որքան ավելի էր տեսնում նրանց, այնքան ավելի էր համոզվում, որ իր դժբախտությունը կատարված փաստ է։ Նա տեսնում էր, որ նրանք իրենց մենակ էին զգում այդ լեցուն դահլիճում։ Եվ Վրոնսկու դեմքին միշտ այնքան ուժեղ ու անկախ, նա տեսնում էր կորածության և հնազանդության իրեն ապշեցնող այն արտահայտությունը, որ նման է խելոք շան արտահայտությանը, երբ նա իրեն մեղավոր է զգում։

Աննան ժպտում էր, և ժպիտը հաղորդվում էր Վրոնսկուն։ Աննան մտասուզվում էր, և Վրոնսկին դառնում էր լուրջ։ Գերբնական մի ուժ ձգում էր Կիտիի աչքերը դեպի Աննայի դեմքը։ Նա սքանչելի էր իր պարզ սև զգեստով, սքանչելի էին նրա գեր ձեռքերը՝ ապարանջաններով, սքանչելի էր պիրկ պարանոցը՝ մարգարտաշար թելով, սքանչելի էին խանգարված սանրվածքի գանգրահյուս մազերը, սքանչելի էին փոքրիկ ոտքերի ու ձեռքերի նազելի թեթև շարժումները, սքանչելի էր այդ գեղեցիկ դեմքն իր աշխուժությամբ, բայց

ինչ-որ սարսափելի և դաժան բան կար նրա սքանչելիության մեջ։

Կիտին հիանում էր Աննայով է՛լ ավելի, քան առաջ, և ավելի ու ավելի էր տանջվում։ Կիտին իրեն տրորված էր զգում, և նրա դեմքն արտահայտում էր այդ։ Երբ Վրոնսկին տեսավ Կիտիին, հանդիպելով նրան մազուրկայի մեջ, իսկույն չճանաչեց նրան,— այնպես փոխվել էր նա։

— Հիանալի պարահանդես է,— ասաց Վրոնսկին նրան, մի բան ասած լինելու համար։

— Այո՛,— պատասխանեց Կիտին։

Մազուրկայի կեսին, կրկնելով մի բարդ ֆիգուր, որ նոր հնարել էր Կորսունսկին, Աննան դուրս եկավ շրջանի մեջտեղը, վերցրեց երկու կավալերի և կանչեց իր մոտ մի տիկնոջ ու Կիտիին։ Կիտին վախեցած նայում էր Աննային, մոտենալով։ Աննան կկոցուն աչքերով նայում էր Կիտիին ու ժպտաց, սեղմելով նրա ձեռքը։ Բայց նկատելով, որ Կիտիի դեմքը միայն հուսահատության ու զարմանքի արտահայտությամբ պատասխանեց իր ժպիտին, Աննան շուռ եկավ նրանից և ուրախ խոսեց մյուս տիկնոջ հետ։

«Այո՛, ինչ-որ խորթ, դիվային ու սքանչելի բան կա նրա մեջ», ասաց Կիտին ինքն իրեն։

Աննան չէր ուզում մնալ ընթրիքի, բայց տանտերն սկսեց խնդրել նրան։

— Բա՞վ է, Աննա Արկադևնա,— խոսեց Կորսունսկին, վերցնելով նրա մերկ թևը իր ֆրակի թևի տակ։ Կոտիլյոնի ինչպիսի՞ իդեա ունեմ ես. Un bijou[1]!

Եվ նա կամաց-կամաց շարժվում էր, աշխատելով հրապուրել, տանել Աննային։ Տանտերը ժպտում էր հավանության ժպիտով։

— Ո՛չ, ես չեմ մնա,— պատասխանեց Աննան ժպտալով, բայց չնայած այդ ժպիտին, և՛ Կորսունսկին, և՛ տանտերը հասկացան նրա պատասխանի վճռական տոնից, որ նա չի մնա։— Ո՛չ, առանց այդ էլ ես Մոսկվայում միայն ձեր պարահանդեսում պարեցի շատ ավելի, քան ամբողջ ձմեռը՝ Պետերբուրգում,— ասաց Աննան, նայելով իր մոտ կանգնած

[1] Բառացի՝ խաղալիք։ Փոխաբերաբար՝ սքանչելի բան։

Վռոնսկուն։— Պետք է հանգստանալ ճանապարհվելուց առաջ։

— Մի՞թե դուք վաղը գնում եք վճռականապես,— հարցրեց Վռոնսկին։

— Այո՛, կարծում եմ,— պատասխանեց Աննան, ասես զարմանալով նրա հարցի համարձակության վրա, բայց աչքերի և ժպիտի անզուսպ թրթռուն փայլն այրեց Վռոնսկուն, երբ Աննան ասում էր այդ։

Աննա Արկադենան չմնաց ընթրիքի և գնաց։

XXIV

«Այո՛, իմ մեջ կա ինչ-որ զզվելի ու վանող բան,— մտածում էր Լևինը, դուրս գալով Շչերբացկիների տնից և ոտքով ուղևորվելով եղբոր մոտ։— Եվ անպե՛տք եմ ես ուրիշ մարդկանց համար։ Հպարտություն է, ասում են։ Ո՛չ, ես հպարտություն էլ չունեմ։ Եթե հպարտություն ունենայի, ես ինձ չէի դնի այդպիսի դրության մեջ»։ Եվ նա պատկերացնում էր Վռոնսկուն, երջանիկ, բարի, խելոք ու հանգիստ, որը, հավանաբար, երբեք չէր եղել այն սարսափելի դրության մեջ, որ ինքն էր այսօր երեկոյան։ «Այո՛, նա պետք է ընտրեր Վռոնսկուն։ Այդպե՛ս է պետք, և ես ոչ ոքից ու ո՛չ մի բանից գանգատվել չեմ կարող։ Մեղավորը ես ինքս եմ։ Ի՞նչ իրավունք ունեի կարծելու, որ նա կուզենա իր կյանքը կապել ինձ հետ։ Ո՞վ եմ ես։ Եվ ի՞նչ եմ ես։ Ոչինչ մարդ, ոչ ոքի և ո՛չ մի բանի համար պիտանի»։ Ու նա հիշեց իր Նիկոլայ եղբորը և ուրախությամբ կանգ առավ այդ հիշողության վրա։ «Արդյոք, իրավացի չէ՞ նա, որ աշխարհում ամեն ինչ վատ է ու գարշելի։ Եվ դժվար թե մենք արդարացի կերպով ենք դատում ու դատում էինք Նիկոլայ եղբոր մասին։ Իհարկե, Պրոկոֆիի հայեցակետով, որ տեսել էր նրան պատառոտված մուշտակով ու հարբած, նա արհամարհելի մարդ է, բայց ես ճանաչում եմ նրան այլ կերպ։ Ես ճանաչում եմ նրա հոգին ու գիտեմ, որ մենք նման ենք իրար։ Իսկ ես, փոխանակ գնալու և գտնելու նրան, գնացի ճաշելու և եկա այստեղ»։ Լևինը մոտեցավ լապտերին, կարդաց եղբոր հասցեն, որ գրած ուներ մի թղթի վրա ու կառք կանչեց։ Եղբոր տունը տանող ամբողջ երկար ճանապարհին Լևինը վառ կերպով մտաբերում

էր Նիկոլայ եղբոր կյանքից իրեն հայտնի դեպքերը։ Մտաբերում էր, թե ինչպե՛ս եղբայրը համալսարանում և համալսարանից մի տարի հետո, չնայած ընկերների ծաղրին, ապրում էր վանականի պես, ամենայն խստությամբ կատարելով կրոնական բոլոր ծեսերը, արարողությունները, պահքերը և խուսափելով ամեն տեսակ բավականությունից, մանավանդ կանանցից։ և ապա թե ինչպե՛ս հանկարծ փոխվեց նա, մտերմացավ ամենագարշելի մարդկանց հետ և անձնատուր եղավ ամենացոփ խրախճանքի։ Հետո մտաբերում էր այն մանկան պատմությունը, որին նա վերցրեց գյուղից, որպեսզի դաստիարակի և շարության մոլեգնահար պահին այնպես ջարդեց նրան, որ գործ սկսվեց նրա դեմ՝ խեղումներ պատճառելու մեղադրանքով։ Ապա մտաբերում էր շուկերի պատմությունը, որին նա տարվեց իր կանխիկ դրամը, մուրհակ տվեց և որի դեմ գանգատ բացեց, ապացուցելով, թե նա խաբեց իրեն։ (Դա այն դրամն էր, որ վճարել էր Սերգեյ Իվանովիչը)։ Հետո մտաբերում էր, թե ինչպե՛ս նա գիշերեց ոստիկանատանը՝ աղմկարարության համար։ Մտաբերում էր Սերգեյ Իվանովիչի դեմ նրա սկսած ամոթալի դատն այն բանի համար, իբր եղբայրը չէր վճարել մայրական կալվածքից նրան հասանելիք բաժինը. և վերջին գործը, երբ նա գնաց Արևմտյան երկրամաս և այնտեղ ընկավ դատի տակ՝ մեծավորին ծեծելու համար... Այս բոլորը սարսափելի զզվելի բաներ էին, բայց դրանք Լևինին պատկերանում էին բնավ ո՛չ այնպես զզվելի, ինչպես պետք է պատկերանար այն մարդկանց, ովքեր չէին ճանաչում Նիկոլայ Լևինին, չգիտեին նրա ամբողջ պատմությունը, չէին ճանաչում նրա սիրտը։

Լևինը հիշում էր, թե ինչպես այն ժամանակ, երբ Նիկոլայը գտնվում էր բարեպաշտության, պահքի, վանականների. եկեղեցական ժամասացության շրջանում, երբ նա կրոնի մեջ փնտրում էր օգնություն, սանձահարումն իր կրքոտ բնավորության, ոչ ոք ո՛չ միայն չէր օգնում նրան, այլև ամենքը և ինքը ծիծաղում էին նրա վրա։ Նրան գրգռում էին, կանչում էին Նոյ, վանական, իսկ երբ ընկավ, ոչ ոք չօգնեց նրան, այլ ամենքը սարսափով և նողկանքով երես դարձրին նրանից։

Լևինին զգում էր, որ Նիկոլայ եղբայրն իր հոգում հենց հոգու խորքում, չնայած իր կյանքի բոլոր այլանդակություն-

ներին, ավելի անարդար չէր, քան այն մարդիկ, որոնք արհամարհում էին նրան։ Նա մեղավոր չէր, որ ծնվել էր անզուսպ բնավորությամբ ու ինչ-որ բանով ճնշված խելքով։ Բայց նա միշտ ուզում էր լավը լինել։ «Ամեն ինչ կասեմ նրան, կստիպեմ նրան ամեն բան ասել և ցույց կտամ, որ ես սիրում եմ, ուրեմն և հասկանում եմ իրեն», վճռեց ինքն իրեն Լևինը, մոտենալով տասնմեկերորդ ժամին այն հյուրանոցին, որ նշված էր հասցեում։

— Վերևում 12-րդ և 13-րդն է,— պատասխանեց բարապանը Լևինի հարցին։

— Տա՞նն է։

— Պետք է որ տանը լինի։

12-րդ համարի դուռը կիսաբաց էր, և այնտեղից լույսի շերտի մեջ դուրս էր գալիս վատ ու թույլ ծխածոտի թանձր ծուխ, և լսվում էր Լևինին անծանոթ մի ձայն, բայց Լևինն իսկույն իմացավ, որ եղբայրն այդտեղ է. նա լսեց նրա հազալու ձայնը։

Երբ նա ներս էր մտնում դռնից, անծանոթ ձայնն ասում էր.

— Ամեն ինչ կախված է նրանից, թե որքա՛ն խելացի կերպով ու գիտակցաբար կտարվի գործը։

Կոնստանտին Լևինը նայեց դռնից ներս ու տեսավ, որ խոսողը մի երիտասարդ է, խիտ, հարուստ մազերով, հագին անթև ներքնազգեստ, իսկ մասնակի չեչոտ ջահել մի կին, առանց թևերի և օձիքի բրդե հագուստով, նստած է բազմոցի վրա։ Եղբայրը չէր երևում։ Կոնստանտինի սիրտը ցավագին ճմլվեց, երբ մտածեց, թե ինչպիսի՛ օտար մարդկանց շրջանում է ապրում իր եղբայրը։ Ոչ ոք չլսեց նրա ներս մտնելու ձայնը, և Կոնստանտինը հանելով կրկնակոշիկները, ականջ էր դնում, թե ի՛նչ էր ասում ներքնազգեստով պարոնը։ Նա խոսում էր ինչ-որ ձեռնարկության մասին։

— Է՛հ, սատանան տանի, արտոնյալ դասակարգեր են,— հազալով ասաց եղբոր ձայնը։ — Մաշա, մեզ համար ընթրելու բան ճարիր և գինի տուր, եթե մնացել է, թե չէ ուղարկիր, բերել տուր։

Կինը վեր կացավ, նայեց միջնորմի ետևը և տեսավ Կոնստանտինին։

— Ինչ-որ պարոն, Նիկոլայ Դմիտրիչ,— ասաց նա։

— Ո՞ւմ եք ուզում,— բարկացած հարցրեց Նիկոլայ Լևինի ձայնը։

— Ես եմ,— պատասխանեց Կոնստանտին Լևինը, դուրս գալով դեպի լույսը։

— Ո՞վ է ասը,— է՛լ ավելի բարկացած կրկնեց Նիկոլայի ձայնը։ Լսվեց, թե ինչպե՛ս արագ վեր կացավ նա, կարթկելով ինչ-որ բան, և Լևինը տեսավ իր դիմաց, դռան մեջ եղբոր իրեն այնքան ծանոթ, բայց և այնպես իր վայրենությամբ ու հիվանդությամբ ապշեցնող վիթխարի, նիհար, կորամեջք կերպարանքը, վախեցած մեծ աչքերով։

Նա է՛լ ավելի նիհար էր, քան երեք տարի առաջ, երբ Կոնստանտին Լևինը տեսավ նրան վերջին անգամ։ Նա հագել էր կարճ սյուրտուկ։ Ե՛վ ձեռքերը, և՛ լայն ոսկորները թվում էին է՛լ ավելի հսկայական։ Մազերը նոսրացել էին, միևնույն ուղիղ բեղերը կախված էին շրթունքների վրա, միևնույն աչքերը տարօրինակ ու միամտաբար նայում էին ներս մտածին։

— Ա՜, Կոստյա,— հանկարծ բացականչեց նա, ճանաչելով եղբորը, և նրա աչքերը լուսավառվեցին ուրախությամբ։ Բայց հենց նույն վայրկյանին նա գլուխը շուռ տվեց, նայեց երիտասարդին և գլխով ու վզով արեց Կոնստանտինին այնքան ծանոթ ցնցումնալից շարժումը, կարծես փողկապը խեղդում էր նրան. և բոլորովին այլ, վայրենի, տառապալից ու դաժան մի արտահայտություն տպավորվեց նրա դեմքին։

— Ես գրել էի և՛ ձեզ, և՛ Սերգեյ Իվանիչին, որ ես ձեզ չեմ ճանաչում ու չեմ էլ ուզում ճանաչել։ Ի՞նչ ես ուզում, ի՞նչ եք ուզում։

Նա բոլորովին այնպես չէր, ինչպես պատկերացնում էր նրան Կոնստանտինը։ Նրա բնավորության մեջ ամենածանրն ու վատը, այն, ինչն այնքան դժվարացնում էր հարաբերությունը նրա հետ, մոռացել էր Կոնստանտին Լևինը, երբ մտածում էր նրա մասին. և այժմ, երբ տեսավ նրա դեմքը, մանավանդ գլխի այդ ցնցումոտ շարժումը, նա հիշեց բոլորը։

— Ես պետք չունեմ քեզ տեսնելու ոչ մի բանի համար,— քաշվելով պատասխանեց Կոնստանտին Դմիտրիչը։— Ես ուղղակի եկա քե՛զ տեսնելու։

Եղբոր վեհերոտությունն, ըստ երևույթին, մեղմացրեց Նիկոլային։ Նրա շրթունքները ցնցվեցին։

— Ա՛, դու այդպե՞ս,— ասաց նա։— Այն ժամանակ մտիր, նստիր։ Ուզո՞ւմ ես ընթրել։— Մաշա, բեր երեք բաժին։ Ո՛չ, կա՛ց։ Դու գիտե՞ս, թե ով է դա,— դիմեց նա եղբորը, նշելով ներքնազգեստով պարոնին. դա պարոն Կրիցկին է, իմ բարեկամը՝ դեռ Կիևում եղածս ժամանակից. շատ ուշագրավ մարդ է։ Նրան, իհարկե, հետամտում է ոստիկանությունը, որովհետև նա սրիկա չէ։

Եվ նա իր սովորությամբ նայեց սենյակում գտնվողներին։ Տեսնելով, որ դռան մեջ կանգնած կինը շարժվեց, որ գնա, նա բղավեց. «կա՛ց, ասի ես»։ Եվ նույն անշնորհքությամբ, կցկտուր խոսելու նույն սովորությամբ, որ այնպես ծանոթ էին Կոնստանտինին, նորից նայելով ամենքին, նա սկսեց պատմել եղբորը Կրիցկու պատմությունը. թե ինչպե՛ս նրան վռնդեցին համալսարանից, որովհետև նա կազմեց չքավոր ուսանողներին օգնելու ընկերություն ու հիմնեց կիրակնօրյա դպրոցներ, թե ինչպե՛ս հետո ուսուցչի պաշտոնով մտավ գյուղական դպրոց, թե ինչպե՛ս նրան այնտեղից էլ վռնդեցին, թե ինչպե՛ս հետո դատում էին ինչ-որ բանի համար։

— Դուք Կիևի համալսարանի՞ց եք,— հարցրեց Կոնստանտին Լևինը Կրիցկուն, որ խախտի տիրող անհարմար լռությունը։

— Այո՛, Կիևի համալսարանից էի,— խոժոռված, բարկացած ասաց Կրիցկին։

— Իսկ այդ կինը,— ընդհատեց նրան Նիկոլայ Լևինը, նշելով ջահել կնոջը,— իմ կյանքի ընկերուհին է, Մարիա Նիկոլաևնա։ Ես վերցրի նրան հասարակաց տանից,— և նա ընցեց վիզը, ասելով այդ։— Բայց սիրում եմ ու հարգում նրան, և ամենքին, ովքեր ուզում են ճանաչել, ընդունել ինձ,— ավելացրեց նա, բարձրացնելով ձայնն ու խոժոռվելով, խնդրում եմ՝ սիրել և հարգել նրան։ Նա համարյա իմ կինն է, այո՛։ Այսպես ահա, դու գիտես, թե ո՛ւմ հետ գործ ունես։ Եվ եթե կարծում ես, որ նվաստանում ես, ճամփեդ բաց է։

Եվ նորից նրա աչքերը հարցական հայացքով թռան, անցան ներկաների վրայով։

— Ես ինչո՞ւ պիտի նվաստանամ, չեմ հասկանում։

— Այսպես, ուրեմն, Մաշա, հրամայի՛ր, թող ընթրիք բերեն. երեք բաժին, օղի և գինի... ո՛չ, կա՛ց... ոչ, պետք չէ... գնա՛։

XXV

— Այսպես, տեսնում ես,— շարունակեց Նիկոլայ Լևինը, կնճռելով ճակատը և ցնցվելով։

Ըստ երևույթին, նրա համար դժվար էր կողմնորոշվել, թե ի՛նչ ասի և անի։

— Ահա՛, տեսնո՞ւմ ես...— նա նշեց սենյակի անկյունում դրած ինչ-որ երկաթյա ձողիկներ, պարանով կապված։— Տեսնո՞ւմ ես այդ։ Դա սկիզբն է այն նոր գործի, որին ձեռնամուխ ենք լինում մենք։ Այդ գործը արտադրողական արտել է...

Կոնստանտինը համարյա չէր լսում։ Նա նայում էր եղբոր հիվանդոտ թոքախտավոր դեմքին և, ավելի ու ավելի էր խրճում նրան. և չէր կարողանում ստիպել իրեն՝ լսելու այն, ինչ պատմում էր եղբայրը արտելի մասին։ Նա տեսնում էր, որ այդ արտելը եղբոր համար փրկության խարիսխ էր՝ ինքն իր հանդեպ տածած արհամարհանքից։ Նիկոլայ Լևինը շարունակեց խոսել.

— Դու գիտես, որ կապիտալը ճնշում է աշխատավորին,— աշխատավորները մեզ մոտ, մուժիկները, կրում են աշխատանքի ամբողջ ծանրությունը և դրված են այնպիսի պայմանների մեջ, որ ինչքան էլ աշխատելու լինեն, չեն կարող դուրս գալ իրենց անասնական կացությունից։ Աշխատավարձի տված ամբողջ օգուտը, որով նրանք կարող էին բարելավել իրենց դրությունը, ստեղծել իրենց համար ազատ ժամանակ ու դրա հետևանքով ձեռք բերել կրթություն, խլում են նրանցից կապիտալիստները։ Եվ այնպես է կազմվել հասարակությունը, որ ինչքան ավելի աշխատեն նրանք, այնքան ավելի պիտի հարստանան վաճառականները, հողատերերը, իսկ բանվորները միշտ էլ կմնան անասուն։ Եվ այդ կարգը պետք է փոխել,— վերջացրեց նա ու հարցական նայեց եղբորը։

— Այո՛, իհարկե,— ասաց Կոնստանտինը, խորազնին նայելով այն կարմրությանը, որ դուրս էր տվել եղբոր ցցուն այտոսկրերով թշերին։

— Եվ ահա մենք կազմում ենք փականագործների ար-

ել, որտեղ ամբողջ արտադրությունը՝ և՛ օգուտը, և՛ արտադրության գլխավոր գործիքները, բոլորը կլինեն ընդհանուր։

— Իսկ որտե՞ղ է լինելու արտելը,— հարցրեց Կոնստանտին Լևինը։

— Կաղանի նահանգի Ոզդրեմա գյուղում։

— Բայց ինչո՞ւ գյուղում։ Ինձ թվում է, գյուղերում առանց այդ էլ գործ շատ կա։ Ի՞նչ պիտի անի գյուղում փականագործական արտելը։

— Նրա համար, որ մուժիկներն այժմ նույնպիսի ստրուկներ են, ինչպիսին էին առաջ, և քեզ ու Սերգեյ Իվանիչի համար գա անախորժ բան է, որ ուզում են մուժիկներին հանել այդ ստրկությունից,— ասաց Նիկոլայ Լևինը, առարկությունից ջղայնացած։

Կոնստանտին Լևինը հառաչեց, այդ միջոցին զննելով սենյակը՝ մռայլ ու կեղտոտ։ Այդ հառաչանքը, թվում էր, թե է՛լ ավելի գրգռեց Նիկոլային։

— Ես գիտեմ ձեր՝ քո և Սերգեյ Իվանիչի արիստոկրատական հայացքները։ Գիտեմ, նա իր խելքի ամբողջ ուժը գործ է դնում, որպեսզի արդարացնի գոյություն ունեցող չարիքը։

— Բայց ինչի՞ համար ես դու խոսում Սերգեյ Իվանիչի մասին,— ասաց Լևինը ժպտալով։

— Սերգեյ Իվանի՞չը։ Ահա թե ինչի՛ համար,— հանկարծ բղավեց Նիկոլայ Լևինը՝ Սերգեյ Իվանիչի անունը լսելիս,— ահա թե ինչի՛ համար... Բայց ի՞նչ խոսել։ Մի բան միայն... Ինչի՞ համար դու եկար ինձ մոտ։ Դու արհամարհում ես այդ, և լավ ես անում, ու գնա, աստված քեզ հետ, գնա,— բղավում էր նա, վեր կենալով աթոռից,— ու գնա՛, գնա՛։

— Ես բնավ չեմ արհամարհում,— երկչոտությամբ ասաց Կոնստանտին Լևինը։— Ես նույնիսկ չեմ վիճում։

Այդ միջոցին վերադարձավ Մարիա Նիկոլաևնան։ Նիկոլայ Լևինը շուռ եկավ ու բարկացած նայեց նրան։ Մաշան արագ մոտեցավ նրան և ինչ-որ բան փսփսաց։

— Ես առողջ չեմ, ես դյուրաբորբոք եմ դարձել,— ասաց Նիկոլայ Լևինը, հանգստանալով ու ծանր շնչելով,— և հետո դու ինձ ասում ես Սերգեյ Իվանիչի ու նրա հոդվածի մասին։ Դա այնպիսի դատարկ բա՛ն է, այնպիսի փչոց, այնպիսի

ինքնախաբեություն։ Ի՞նչ կարող է գրել արդարության մասին մի մարդ, որ չգիտե, թե ի՛նչ բան է արդարությունը։ Դուք կարդացե՞լ եք նրա հոդվածը,— դիմեց նա Կրիցկուն, նորից նստելով սեղանի մոտ և տեղ բացելու համար, մի կողմ քաշելով գլանակները, որ բռնել էին սեղանի կեսը։

— Ես չեմ կարդացել,— մռայլ ասաց Կրիցկին, հավանորեն չուզենալով մասնակցել խոսակցությանը։

— Ինչո՞ւ—գրգռված դիմեց այժմ Կրիցկուն Նիկոլայ Լևինը։

— Որովհետև ես կարևոր չեմ համարում ժամանակ կորցնել դրա վրա։

— Այսինքն, ներողություն, ո՞րտեղից դուք գիտեք, որ ժամանակ կկորցնեք։ Շատերին այդ հոդվածը մատչելի չէ, այսինքն՝ բարձր է նրանցից։ Բայց ես, իմ բանն ուրիշ է, ես ամբողջովին տեսնում եմ նրա մտքերը և գիտեմ, թե ինչու հոդվածը թույլ է։

Բոլորը լռեցին։ Կրիցկին դանդաղ վեր կացավ ու վերցրեց գլխարկը։

— Ձե՞ք ուզում ընթրել։ Դեհ, գնաք բարով։ Վաղը եկեք փականագործի հետ։

Հենց որ Կրիցկին դուրս գնաց, Նիկոլայ Լևինը ժպտաց և աչքով արեց։

— Սա էլ վատ է,— ասաց նա,— տեսնում եմ չէ՞։

Բայց այդ ժամանակ Կրիցկին դռան միջից կանչեց նրան։

— Ուրիշ ի՞նչ է պետք,— ասաց Նիկոլայը և Կրիցկու հետ դուրս գնաց միջանցք, Լևինը մենակ մնալով Մարիա Նիկոլաևնայի հետ, դիմեց նրան.

— Դուք վաղո՞ւց եք եղբորս հետ,— հարցրեց նա։

— Արդեն երկրորդ տարին է։ Նրա առողջությունը շատ վատ է։ Շատ է խմում,— ասաց Մարիան։

— Այսինքն՝ ինչպե՞ս է խմում։

— Խմում է օղի, իսկ նրան դա վնաս է։

— Մի՞թե շատ է խմում,— շշնջաց Լևինը։

— Այո՛,— պատասխանեց նա, երկչոտությամբ նայելով դռանը, որտեղ երևաց Նիկոլայ Լևինը։

— Ինչի՞ մասին էիք խոսում,— ասաց նա, մռայլվելով ու

վախեցած աչքերը գցելով մեկից մյուսի վրա։— Ինչի՞ մասին։

— Ո՛չ մի բանի մասին,— շփոթվելով պատասխանեց Կոնստանտինը։

— Չեք ուզում ասել. ինչպե՛ս կուզեք։ Բայց դու նրա հետ խոսելու բան չունես։ Նա փողոցային կին է, դու պարոն,— ասաց նա, ցնցելով վիզը։— Չէ՞ որ տեսնում եմ, ինչպես դու ամեն ինչ հասկացար ու գնահատեցիր և ափսոսանքով ես վերաբերվում իմ մոլորություններին,— խոսեց նա, նորից բարձրացնելով ձայնը։

— Նիկոլայ Դմիտրիչ, Նիկոլայ Դմիտրիչ,— շշնջաց նորից Մարիա Նիկոլաևնան, մոտենալով նրան։

— Դե՛, լավ, լավ... Իսկ ինչ եղավ ընթրիքը։ Ա՛, ահա և նա,— բացականչեց Նիկոլայ Լևինը, տեսնելով սպասավորին մատուցարանով։

— Այստեղ դիր, այստեղ,— ասաց նա բարկացած և խստությամբ վերցրեց օղին, լցրեց մի բաժակ և ագահությամբ խմեց,— խմիր, ուզո՞ւմ ես,— դիմեց նա եղբորը, անմիջապես ուրախացած։— Բայց հերիք է Սերգեյ Իվանիչի մասին։ Այսուամենայնիվ, ես ուրախ եմ քեզ տեսնելու։ Ի՞նչ ուզում ես արա, բայց և այնպես օտար չենք։ Դե՛, խմի՛ր։ Պատմիր, դո՛ւ ի՞նչ ես անում,— շարունակեց նա, ագահաբար ծամելով հացի պատառը և լցնելով երկրորդ բաժակը։— Ո՞նց ես ապրում։

— Ապրում եմ գյուղում, մենակ, ինչպես ապրում էի առաջ, զբաղվում եմ տնտեսությամբ,— պատասխանեց Կոնստանտինը, սարսափած դիտելով այն ագահությունը, որով եղբայրը խմում և ուտում էր, ու աշխատելով թաքցնել իր ուշադրությունը։

— Ինչու՞ չես ամուսնանում։

— Չի ստացվում,— կարմրելով պատասխանեց Լևինը։

— Ինչո՞ւ։ Իմ բանը պրծած է։ Ես փչացրի իմ կյանքը։ Դա ասել եմ ու կասեմ, որ եթե այն ժամանակ ինձ տային իմ մասը, երբ ինձ պետք էր այն, իմ ամբողջ կյանքն ուրիշ կլիներ։

Կոնստանտին Դմիտրիչը շտապեց փոխել խոսակցությունը։

— Դու գիտե՞ս, որ քո Վանյուշկան ինձ մոտ գրասենյակային հաշվետար է Պոկրովսկում,— ասաց նա։

Նիկոլայը ցնցեց վիզը և մտասուզվեց։

— Պատմիր, պատմիր ինձ, թե ի՞նչ է կատարվում Պոկրովսկում։ Տունը դեռ կանգո՞ւն է, և՛ կեչինե՞րը, և՛ մեր դասասենյա՞կը։ Իսկ այդեպան Ֆիլիպը դեռ ո՞ղջ է։ Ինչպե՞ս հիշում եմ ես տաղավարն ու բազմոցը... Տե՛ս, ոչինչ մի փոխիր տանը, բայց շուտ ամուսնացիր և նորից հաստատիր այն, ինչ կար առաջ։ Ես այն ժամանակ կգամ քեզ մոտ, եթե քո կինը լավը լինի։

— Եկ ինձ մոտ հենց այժմ,— ասաց Լևինը։— Էնքա՞ն լավ կապրենք միասին։

— Ես կգայի քեզ մոտ, եթե իմանայի, որ Սերգեյ Իվանիչը այնտեղ չի լինի։

— Նա այնտեղ չի լինի։ Ես ապրում եմ նրանից լիովին անկախ։

— Այո՛, բայց ի՞նչ ուզում ես ասա, դու պիտի ընտրություն կատարես իմ ու նրա միջև,— ասաց նա, երկչոտությամբ նայելով եղբոր աչքերին։ Այդ երկչոտությունը հուզեց Կոնստանտինին։

— Եթե ուզում ես իմանալ իմ ամբողջ խոստովանանքն այդ մասին, կասեմ քեզ, որ քո և Սերգեյ Իվանիչի վեճում ես ո՛չ մեկիդ կողմը չեմ պահում։ Դուք երկուսդ էլ իրավացի չեք։ Դու իրավացի չես ավելի արտաքնապես, նա՝ ավելի ներքնապես։

— Ա՛, ա՛։ Դու հասկացել ես այդ, դու հասկացար այդ,— ցնծագին բղավեց Նիկոլայը։

— Բայց ես, անձամբ, եթե ուզում ես իմանալ, ավելի բարձր եմ գնահատում բարեկամությունը քեզ հետ, որովհետև...

— Ինչո՞ւ, ինչու։

Կոնստանտինը չէր կարող ասել, որ բարձր է գնահատում այն պատճառով, որովհետև Նիկոլայը դժբախտ է և նրան պետք է բարեկամություն։ Բայց Նիկոլայը հասկացավ, որ նա ուզում է հենց այդ ասել, և մթագնելով, կրկին ձեռքը մեկնեց օղուն...

— Հերի՛ք է, Նիկոլայ Դմիտրիչ,— ասաց Մարիա Նիկո-

լանան, մեկնելով իր փափլիկ հոլանի ձեռքը դեպի գրաֆինը։

— Թո՛ղ։ Զահլես մի՛ տանիր։ Կշարդեմ,— բղավեց նա։

Մարիա Նիկոլաևնան ժպտաց խոնարհ ու բարի ժպիտով, որը հաղորդվեց նաև Նիկոլային, և վերցրեց օդին։

— Դու կարծում ես, որ նա ոչինչ չի՞ հասկանում,— ասաց Նիկոլայը։— Մաշան այս բոլորը մեզանից լավ է հասկանում։ Իսկապես, որ նրա մեջ կա ինչ-որ լավ, համակրելի բան, այնպես չէ՞։

— Դուք առաջ երբեք չե՞ք եղել Մոսկվայում,— ասաց Մարիային Կոնստանտինը, մի բան ասած լինելու համար։

— Է՛հ, նրան դուք մի՛ ասիր։ Նա վախենում է դրանից։ Նրան ոչ ոք, բացի հաշտարար դատավորից, երբ նրան դատում էին այն բանի համար, որ ուզում էր հեռանալ անառակատնից, դուք չի ասել։ Աստված իմ, ի՛նչ անիմաստ բան է դա աշխարհում,— հանկարծ բացականչեց նա։— Այդ նոր հիմնարկները, այդ հաշտարար դատավորները, զեմստվոն, ի՞նչ անիմաստ, անմիտ բաներ են։

Եվ նա սկսեց պատմել իր ընդհարումները նոր հիմնարկների հետ։

Կոնստանտին Լևինը լսում էր նրան. և հասարակական բոլոր հիմնարկների մեջ իմաստի այն բացասումը, որով նա համամիտ էր եղբորը ու որը հաճախ շեշտում էր ինքը, այժմ անախորժ էր իր համար լսել եղբոր բերանից։

— Այն աշխարհում կհասկանանք այս բոլորը,— ասաց նա կատակով։

— Այն աշխարհո՞ւմ։ Օֆ, ես չեմ սիրում այն աշխարհը։ Չեմ սիրում,— ասաց Նիկոլայը, իր վախեցած աչքերը հառելով եղբոր դեմքին։— Ա՛յ, ահա, թվում է, թե լավ կլիներ հեռանալ այս ամբողջ գարշելիությունից, խառնափնթորությունից՝ և՛ ուրիշների, և՛ իր սեփական, բայց ես վախենում եմ մահից. սաստիկ վախենում եմ մահից։— Նա ցնցվեց, դողաց։— Դե՞, մի բան խմիր։ Ուզո՞ւմ ես շամպայն։ Թե գնանք մի տեղ։ Գնանք գնչուների մոտ։ Գիտե՞ս, ես շատ սիրեցի գնչուներին և ռուսական երգերը։

Նրա լեզուն սկսեց փաթ ընկնել, և նա սկսեց թռչկոտել մի նյութից մյուսը։ Կոնստանտինը Մաշայի օգնությամբ հաջողեց նրան ո՛չ մի տեղ չգնալ և պառկեցրեց քնելու՝ բոլորովին հարբած։

Մաշան խոստացավ կարիքի դեպքում գրել Կոնստանտինին, և համոզել Նիկոլայ Լևինին, որ գնա եղբոր մոտ և ապրի նրա հետ։

XXVI

Առավոտյան Կոնստանտին Լևինը դուրս եկավ Մոսկվայից և երեկոյան դեմ հասավ տուն։ Ճանապարհին՝ վագոնում, նա զրուցում էր հարևանների հետ քաղաքականության, նոր երկաթուղիների մասին և այնպես, ինչպես Մոսկվայում, նրան համակում էր հասկացողությունների շփոթը, ինքն իրենից դժգոհությունը, ամոթի զգացումը մի ինչ-որ բանից։ Բայց երբ նա իջավ իրենց կայարանում, ճանաչեց շիլ կառապան Իգնատին, կաֆտանի օձիքը բարձրացրած, երբ տեսավ կայարանի պատուհաններից ընկած աղոտ լույսի մեջ իր գորգապատ սահնակը, իր ձիերը՝ հանդուցած պոչերով, օղակակապ և ծոպաղարդ լծասարքով, երբ կառապան Իգնատը, տակավին այն միջոցին, մինչ տեղավորում ու տեղավորվում էին, պատմում էր նրան գյուղական նորությունները, բանվորական գալու և այն մասին, թե Պավա կովը ծնել է,— նա զգաց, որ շփոթը կամաց-կամաց պարզվում է ու անցնում ինքն իրենից դժգոհ լինելու և ամոթի զգացումը։ Նա այդ բանն զգաց, հենց որ տեսավ Իգնատին ու ձիերը, բայց երբ հագավ իր համար բերած մուշտակը, փաթաթված նստեց սահնակն ու գնաց, մտածելով առաջիկա կարգադրությունների մասին գյուղում և նայելով կողքից լծած, նախկին հեծնելու, ուժ տալուց վնասված Դոնի խիզախ ձիուն, նա սկսեց բոլորովին այլ կերպ հասկանալ այն, ինչ պատահեց իր հետ։ Նա զգում էր իրեն այնպես, ինչպես ինքը կար, և չէր ուզում լինել ուրիշ։ Նա այժմ ուզում էր միայն լինել ավելի լավ, քան առաջ էր։ Նախ՝ այդ օրվանից նա վճռեց այլևս հույս չդնել բացառիկ երջանկության վրա, որ նրան պիտի տար ամուսնությունը և դրա հետևանքով չանտեսել, չարհամարհել ներկան։ Երկրորդ՝ նա այլևս երբեք թույլ չի տա իրեն տարվելու գարշելի կրքով, որի հիշողությունն այնպես տանջում էր նրան, երբ պատրաստվում էր առաջարկություն անելու։ Հետո, հիշելով Նիկոլայ

եղբորը, նա վճռեց, որ այսուհետև երբեք թույլ չի տա իրեն մոռանալ նրան, կհետևի եղբորը և տեսադաշտից չի կորցնի, որպեսզի պատրաստ լինի օգնության, երբ նրա դրությունը վատանա։ Իսկ դա շուտով կլինի, նա զգում էր այդ։ Հետո՝ եղբոր խոսակցությունը կոմունիզմի մասին, որին նա այն ժամանակ վերաբերվեց այնպես թեթև, այժմ ստիպեց նրան մտասուզվել։ Տնտեսական պայմանների վերակառուցումը նա համարում էր դատարկ բան, բայց միշտ զգում էր իր լիության անարդարությունը ժողովրդի չքավորության համեմատությամբ և այժմ յուրովի վճռեց, որ իրեն լիովին արդար զգալու համար ինքն այժմ կաշխատի ավելի շատ, թեև առաջ էլ շատ էր աշխատում ու չքեղ չէր ապրում, և ավելի քիչ չքեղություն թույլ կտա իրեն։ Ու նրան թվում էր, թե ինքը կարող է այս բոլորն այնպես հեշտությամբ անել, որ ամբողջ ճանապարհն անցկացրեց ամենահաճելի մտորումների մեջ։ Նոր և ավելի լավ կյանքի հույսի առույգ զգացումով գիշերվա ժամը ինին նա մոտեցավ իր տանը։

Կոնստանտին Լևինի տանը տնտեսուհու դեր կատարող Ագաֆիա Միխայլովնայի՝ պառավ դայակի, սենյակի պատուհաններից լույս էր ընկնում տան առաջ եղած փոքրիկ հրապարակի ձյան վրա։ Պառավը դեռ քնած չէր։ Կուզման, որին արթնացրեց Միխայլովնան, ոտաբոբիկ ու քնկոտ վազեց դավիթ։ Որսի էդ շուն Լասկան, որը քիչ մնաց գետին տապալեր Կուզմային, նույնպես դուրս վազեց ու վնգստում էր, քսվում էր Լևինի ծնկներին, բարձրանում, ուզում էր և չէր համարձակվում դնել իր առաջին թաթերը նրա կրծքին։

— Ի՞նչ շուտ վերադարձաք, սիրելիս,— ասաց Ագաֆիա Միխայլովնան։

— Կարոտեցի, Ագաֆիա Միխայլովնա։ Հյուրատեղում լավ է, բայց տանն ավելի լավ է,— պատասխանեց նա և անցավ իր առանձնասենյակը։

Առանձնասենյակը դանդաղ լուսավորվեց բերած մոմով, դրսևորվեցին ծանոթ մանրամասները. եղնիկի եղջյուրները, գրքերով զբաղցները, հայելին, ջերմանցքով վառարանը, որը վաղուց պետք էր նորոգել, հայրական բազմոցը, մեծ սեղանը, սեղանին դրված բաց գիրքը, կոտրված մոխրամանը, ձեռագիր տետրակը։ Երբ Լևինը տեսավ այս բոլորը, մի բոպե նրան

համակեց կասկածն այն նոր կյանքն ստեղծելու հնարավորության վերաբերյալ, որի մասին երազում էր ճանապարհին։ Իր կյանքի այս բոլոր հետքերը կարծես բոլորակի համակեցին նրան և ասում էին, «ո՛չ, դու մեր ձեռքից չես պրծնի և ուրիշ կերպ, ուրիշ մարդ չես դառնա, այլ կլինես այնպես, ինչպես եղել ես. կմնաս քո կասկածներով, ինքդ քեզանից մշտական դժգոհ, ուղղվելու ապարդյուն փորձերով և անկումներով ու մշտական սպասումով այն բախտին, որը չհաջողվեց քեզ և անհնարին է քեզ համար»։

Բայց դա ասում էին նրա իրե՛րը, իսկ մի այլ ձայն նրա հոգում ասում էր, որ պետք չէ՛ ենթարկվել անցյալին և որ մարդ կարող է ամեն բան անել իր հետ։ Եվ ունկնդրելով այդ ձայնին, նա մոտեցավ անկյունին, որտեղ դանվում էին փթանոց երկու կշռաքարերն ու սկսեց մարմնամարզորեն բարձրացնել դրանք, աշխատելով իրեն հասցնել կայտառ կացության։ Դռան ետևից լսվեց քայլերի ճռճռոցի նայն։ Նա շտապ վայր դրեց կշռաքարերը։

Մտավ գործակատարը և ասաց, որ, փառք աստծո, ամեն ինչ բարեհաջող է, բայց հաղորդեց, թե արինջը մի փոքր այրվել է նոր չորանոցում։ Այդ տեղեկությունը գրգռեց Լևինին։ Նոր չորանոցը կառուցել և մասամբ հնարել էր Լևինը։ Կառավարիչը միշտ դեմ էր այդ նոր չորանոցին ու այժմ քողարկված հաղթանակով հայտարարում էր, որ արինջը մի փոքր այրվել է։ Իսկ Լևինը հաստատ համոզված էր, որ եթե արինջն այրվել է, ապա միայն այն պատճառով, որ ձեռք չեն առնվել այն միջոցները, որոնց մասին ինքը հարյուր անգամ հրամայել էր։ Նա վրդովվեց ու հանդիմանեց գործակատարին։ Բայց կար մի կարևոր և ուրախալի դեպք. ծնել էր Պավան, ցուցահանդեսում գնված լավագույն, թանկարժեք կովը։

— Կուզմա, տուր ինձ մուշտակս։ Իսկ դուք հրամայեք վերցնել լապտերը, ես գնամ, նայեմ,— ասաց նա գործակատարին։

Թանկարժեք կովերի գոմը գտնվում էր տան հենց ետևը։ Անցնելով բակի միջով՝ շեփորուկի մոտ եղած ձնակույտի կողքով, նա մոտեցավ գոմին։ Երբ բացվեց սառած դուռը, փչեց գոմաղբի գոլորշին, և կովերը, զարմացած լապտերի անսովոր լույսից, շարժվեցին թարմ ծղոտի վրա։ Նշմար-

վեց հոլանդական կովի սնաճարտուկ կոկ, լայն մեջքը։ Բերա-կուտ ցուլը պառկած էր օղը շրթունքին և ուզում էր վեր կենալ, բայց միտքը փոխեց և միայն բռնչաց մի երկու անգամ, երբ անցնում էին իր մոտով։ Կարմիր գեղեցկուհի Պավան, հսկայական, ինչպես գետաձի, գավակով շուռ եկած, ծածկում էր հորթուկին ներս մտնողներից ու հոտոտում էր նրան։

Լևինը մտավ գոմի ծնանոցը, նայեց, զննեց Պավային և կարմրաճարտուկ հորթուկին բարձրացրեց, կանդնեցրեց երեքուն ոտքերի վրա։ Վրդովված Պավան ուզում էր բառաչել, բայց հանդստացավ, երբ Լևինը մոտեցրեց նրան հորթը, և ծանր հառաչելով, սկսեց լիզել հորթուկին իր անհարթ լեզվով։ Հորթը, փնտրելով, քթահարում էր մոր կուրծքը և ուզում պոչը։

— Այստե՞ղ լուսավորիր, Ֆյոդոր, բե՛ր այստեղ բռնտերը,— ասում էր Լևինը, շորս կողմից զննելով հորթը։— Մո՞ր է քաշել։ Ոչի՞նչ, որ գույնը հորն է։ Շատ լավն է։ Երկար է և աճուկավոր։ Վասիլի Ֆյոդորովիչ, իսկապես լավն է, չէ՞,— դիմեց նա գործակատարին, հորթի սպառճառով ուրախության ազդեցության տակ բոլորովին հաշտվելով նրա հետ, մոռացած արինջի մասին։

— Ո՞ւմ պիտի քաշեր, որ վատ լիներ։ Ձեր գնալու հետևյալ օրը եկավ Սեմյոն բանվորակալը։ Պետք է կապվել նրա հետ, Կոնստանտին Դմիտրիչ,— ասաց կառավարիչը։— Ես առաջ զեկուցել եմ ձեզ մեքենայի մասին։

Հենց միայն այդ հարցը Լևինին մոցրեց տնտեսության բոլոր մանրամասների մեջ, որը մեծ էր ու բարդ, և նա կովանոցից գնաց գրասենյակ ու խոսելով գործակատարի և բանվորակալ Սեմյոնի հետ, վերադարձավ տուն և ուղղակի բարձրացավ վերև՝ ընդունարան։

XXVII

Տունը մեծ էր, հին, և թեպետ Լևինն ապրում էր մենակ, բայց տաքացնում ու գրավում էր ամբողջ տունը։ Նա գիտեր, որ դա անհեթեթ բան է, որ դա միանգամ լավ չէ ու հակառակ է իր ապագա նոր ծրագրերին, սակայն այդ տունը մի ամբողջ աշխարհ էր իր համար։ Գա այն աշխարհն էր, որտեղ ապրել էին ու մեռել նրա հայրը և մայրը։ Նրանք ապրել էին այն կյանքով, որը Լևինին թվում էր կատարելության իդեալ և որը նա երազում էր վերականգնել իր կնոջ հետ, իր ընտանիքի հետ։

Լևինը հազիվ էր հիշում իր մորը։ Մոր մասին հասկացողությունը նրա համար նվիրական հիշողություն էր, և իր ապագա կինը պետք է նրա երևակայության մեջ լիներ կնոջ այն սքանչելի, սրբազան իդեալի կրկնությունը, ինչպիսին էր իր մայրը։

Սերը գեպի կինը նա ո՛չ միայն չէր կարողանում պատկերացնել առանց ամուսնության, այլև նախ պատկերացնում էր ընտանիքը, իսկ հետո միայն այն կնոջը, որը կտար նրան ընտանիք։ Այդ պատճառով ամուսնության մասին նրա հասկացողությունները նման չէին իր ծանոթներից մեծամասնության հասկացողություններին, որոնց համար ամուսնությունն ընդհանուր գենցաղային բազմաթիվ գործերից մեկն էր. Լևինի համար դա կյանքի գլխավոր գործն էր, որից կախված էր նրա ամբողջ երջանկությունը։ Եվ այժմ պետք էր հրաժարվել դրանից։

Երբ նա մտավ փոքրիկ ընդունարանը, որտեղ միշտ թել էր խմում, և նստեց իր բազկաթոռի մեջ, գիրքը ձեռքին, իսկ Ագաֆիա Միխայլովնան թել բերից ու կրկնելով իր սովորական ֆրազը՝ «իսկ ես գնամ», նստեց աթոռին, պատուհանի մոտ, այն ժամանակ նա զգաց, որքան էլ տարօրինակ էր այդ, որ ինքը չի անջատվել իր հրազանքներից և որ չի կարող ապրել առանց նրանց։ Նրա հետ, թե մի այլ կնոջ հետ, բայց դա պետք է լինի։ Նա կարդում էր գիրքը, մտածում էր կարդացածի մասին, երբեմն կանգ առնելով, որ լսի Ագաֆիա Միխայլովնային, որը անդադար շաղակրատում էր. և դրա հետ միասին սնտեսության ու ապագա ընտանեկան կյանքի զանազան պատկերներ անկապ կերպով գծագրվում էին նրա երևակայության մեջ։ Նա զգում էր, որ իր հոգու խորքում մի բան հաստատվում էր, չափավորվում ու ամփոփվում։

Նա բռնած էր Ագաֆիա Միխայլովնայի խոսակցությունն այն մասին, թե ինչպե՞ս Պրոխորը մոռացել է աստծուն, և այն դրամով, որ Լևինը նվիրել էր նրան ձի գնելու համար, խմում է օր ու գիշեր և կնոջն անողորմաբար ծեծում։ Նա լսում էր ու կարդում գիրքը և հիշում էր ընթերցանությամբ

հարուցված իր մտքերի ամբողջ ընթացքը։ Դա Տինդալի գիրքն էր ջերմության մասին։ Նա հիշում էր իր կշտամբանքները Տինդալին՝ փորձեր կատարելու ճարպկության մեջ արտահայտած նրա ինքնարավականության, նաև այն բանի համար, որ նրա մոտ պակասում է փիլիսոփայական հայեցակետը։ Ու հանկարծ հայտնվեց ուրախալի մի միտք. «Երկու տարուց հետո իմ նախրի մեջ կլինեն հոլանդական երկու կովեր, ինքը՝ Պավան, կարող է դեռ ողջ լինել, բերկուտյան տասներկու մատղաշ երինջներ և ցուցադրելու համար ավելացնել այս երեքը — հրաշալիք է»։ Նա նորից սկսեց կարդալ։

— Դեհ լա՜վ, էլեկտրականությունն ու ջերմությունը միևնույնն է. բայց մի՞թե հնարավոր է հարցը լուծելու համար հավասարության մեջ դնել մի մեծության փոխարեն մի ուրիշը։ Ո՛չ։ Ուրեմն ի՞նչ։ Բնության ուժերի միջև կապը առանց այն էլ զգացվում է բնազդով... Առանձնապես հաճելի է, որ Պավայի հորթը արդեն կլինի կարմրաճարտուկ կով, և ամբողջ նախիրը, որի մեջ կխառնենք այդ երեքին... Հիանալի բան կլինի։ Կնոջ և հյուրերի հետ դուրս գալ՝ դիմավորելու նախիրը... Կինս կասի. ես ու Կոստյան խնամել ենք այս հորթը երեխայի պես։ Ինչպե՞ս կարող է դա այդպես հետաքրքրել ձեզ,— կասի հյուրը։ Այն բոլորը, ինչ հետաքրքրում է ամուսնուս, հետաքրքրում է և ինձ։ Բայց ո՞վ է նա՝ կինս։ Եվ Լևինը հիշեց այն, ինչ կատարվեց Մոսկվայում... «Էհ, ի՜նչ արած... Ես մեղավոր չեմ։ Սակայն այժմ ամեն ինչ կընթանա նոր ձևով։ Դատարկ բան է այն, թե թույլ չի տա կյա՜նքը, թե անցյա՜լը թույլ չի տա։ Պետք է պայքարել ավելի լավ, շատ ավելի լավ ապրելու համար»... Նա բարձրացրեց գլուխը և մտասուզվեց։ Պառավ Լասկան, որ դեռ լիովին չէր մարսել իր տիրոջ վերադարձի ուրախությունը և վազել էր բակ՝ հաչելու համար, վերադարձավ, պոչն օրորելով ու բերելով իր հետ օդի բույրը, մոտեցավ Լևինին, գլուխը մտցրեց նրա թևի տակ, լալագին վնգստալով ու պահանջելով, որ նա շոյի իրեն։

— Միայն չի՛ խոսում,— ասաց Ագաֆիա Միխայլովնան,— թեպետ շուն է... բայց հասկանում է, որ տերը եկել է և ձանձրանում է։

— Ինչո՞ւ ես կարծում, որ ձանձրանում եմ։

— Է՜հ, մե՞թե չեմ տեսնում ես, պատվելի՛ս։ Ժամանակն

է, որ ես ճանաչեմ իմ պարոններին։ Փոքր հասակից ես մեծացել եմ պարոնների մեջ։ Ոչի՜նչ, պատվելի՛ս։ Միայն թե մարդս առողջ լինի և խիղճը՝ մաքուր։

Լևինն աչքերը հառած նայում էր նրան, զարմանալով, որ պառավը հասկացավ իր մտքերը։

— Ի՞նչ կասեք, էլի՞ թեյ բերեմ,— ասաց նա և վերցնելով գավաթը, դուրս գնաց։

Լասկան դեռ շարունակում էր գլուխը մտցնել նրա թևի տակ։ Լևինը շոյեց նրան, և նա հենց այդտեղ՝ տիրոջ ոտքերի տակ օղաձև կուչ եկավ, գլուխը դնելով ետևի մեկնած թաթի վրա։ Եվ ի նշան այն բանի, որ այժմ ամեն ինչ լավ է ու բարեհաջող, նա մի փոքր բացեց բերանը, շմշմփացրեց շրթունքները և ավելի հարմար դասավորելով պառավ առամների մոտ լպրծուն շրթունքները, լռեց երջանիկ հանգստության գրկում։ Լևինն ուշադրությամբ հետևում էր շան այդ վերջին շարժումին։

— Այդպես նաև ես,— ասաց նա ինքն իրեն,— այդպես նաև ես։ Ոչի՜նչ... Ամեն ինչ լավ է։

XXVIII

Պարահանդեսից հետո՝ վաղ առավոտյան, Աննա Արկադևնան հեռագիր ուղարկեց ամուսնուն հենց նույն օրը Մոսկվայից իր մեկնելու մասին։

— Ո՛չ, ես պետք է, պետք է գնամ,— բացատրում էր նա հարսին իր մտադրությունը փոխելն այնպիսի տոնով, կարծես հիշեց այնքան գործեր, որ անկարելի էր թվել.— ո՛չ, ավելի լավ է՝ հենց այսօր։

Ստեպան Արկադևիչը տանը չէր ճաշում, բայց խոստացավ ժամը յոթին գալ, քրոջը ճանապարհ դնելու։

Կիտին նույնպես չեկավ, ուղարկելով մի տոմս, թե գլուխը ցավում է։ Դոլլին և Աննան ճաշեցին մենակ՝ երեխաների ու անգլուհու հետ։ Արդյոք պատճառն ա՞յն էր, որ երեխաները փոփոխամիտ կամ շատ նրբազգաց են, և զգացին, որ Աննան այդ օրը բոլորովին այնպես չէր, ինչպես այն օրը, երբ իրենք սիրեցին նրան, որ նա այժմ զբաղված չէ իրենցով,— բայց հանկարծ նրանք դադարեցրին իրենց խաղը հորաքրոջ հետ ու նրա հանդեպ տածած իրենց սերը. նրանց բնավ չէր զբաղեցնում այն, որ նա դնում է։ Աննան ամբողջ առավոտ

զբաղված էր մեկնելու պատրաստություններով։ Նա տոմսեր էր գրում Մոսկվայի իր ծանոթներին, գրանցում էր իր հաշիվները և տեղավորում իրերը։ Առհասարակ Դոլլին թվում էր, որ նա հոգեկան հանգիստ գրության մեջ չէ, այլ մահոգված է մի կացությամբ, որ Դոլլին ծանոթ էր իր կյանքի փորձից ու որն առաջանում է ո՛չ առանց պատճառի և մեծ մասամբ քողարկում է մարդու ինքն իրենից դժգոհ լինելը։ Ճաշից հետո Աննան գնաց իր սենյակը՝ հագնվելու, և Դոլլին հետևեց նրան։

— Դու ինչ-որ տարօրինակ ես այսօր,— ասաց նրան Դոլլին։

— Ե՞ս։ Դու կարծո՞ւմ ես։ Ես տարօրինակ չեմ, ես խենթ եմ։ Դա պատահում է ինձ հետ։ Շատ տարօրինակ ուզում եմ բաց լիներ։ Դա շատ հիմար բան է, բայց անցնում է,— ասաց Աննան արագ ու կարմրած, և գնդակը խոնարհեց նրբակոթ տուգրակի վրա, որի մեջ դարսում էր գիշերվա շապիկը և բատիստե թաշկինակները։ Նրա աչքերն արտակարգ փայլում էին ու անդադար ցնցվում արցունքներով։— Ես այնպես չէի ուզում հեռանալ Պետերբուրգից, իսկ հիմա չեմ ուզում հեռանալ այստեղից։

— Դու եկար այստեղ և բարի գործ արիր,— ասաց Դոլլին, ուշադիր զննելով նրան։

Աննան նայեց հարսին արցունքից թաց աչքերով։

— Մի՛ ասա այդ բանը, Դոլլի։ Ես ոչինչ չարի և չէի կարող անել։ Ես հաճախ զարմանում եմ, թե ինչո՞ւ մարդիկ խոսքները մեկ են արել, որ ինձ փչացնեն։ Ի՞նչ արի ես և ի՞նչ կարող էի անել։ Քո սրտում գոնվեց այնքան տեղ, որ դու ներեցիր...

— Առանց քեզ, աստված գիտե, թե ի՞նչ կարող էր լիներ։ Ի՞նչ բախտավոր ես դու, Աննա,— ասաց Դոլլին։ Քո հոգում ամեն բան պարզ է ու լավ։

— Յուրաքանչյուր մարդ իր հոգում ունի իր skeletons[1]-ը, ինչպես ասում են անգլիացիները։

— Ի՞նչ skeletons ունես դու։ Քո ամեն ինչը այնպես պարզ է։

— Ուրեմն,— հանկարծ ասաց Աննան, և արցունքներից հետո խորամանկ, ծիծաղկոտ ժպիտը անսպասելի կերպով կնճռոտեց նրա շուրթերը։

— Դեհ, ասածն ծիծաղելի են քո skeletons, և ո՛չ թե մբոստաց,— ժպտալով ասաց Դոլլին։

1 Հոգու գաղտնիքները։

— Ո՛չ, մոայլ են։ Դու գիտե՞ս, թե ինչո՞ւ ես գնում եմ այսօր, և ո՛չ թե վաղը։ Դա խոստովանանք էր, որ ճնշում էր ինձ, և ես ուզում եմ խոստովանել քեզ,— ասաց Աննան, վճռակամապես ետ ընկնելով բազկաթոռի մեջ և ուղիղ նայելով Դոլլիի աչքերին։

Եվ, ի զարմանս իր, Դոլլին տեսավ, որ Աննան կարմրեց մինչև ականջները, մինչև վզի վրայի սև խոպոպիկները։

— Այո՛,— շարունակեց Աննան։— Դու գիտե՞ս արդյոք, թե ինչո՞ւ Կիտին չեկավ ճաշելու։ Նա խանդով է վերաբերվում ինձ։ Ես փչացրի... Ես էի պատճառը, որ այդ պարահանդեսը նրա համար տանջանք էր, ո՛չ թե ուրախություն։ Բայց իրոք՝ ես մեղավոր չեմ, կամ մեղավոր եմ մի քիչ,— ասաց նա, բարակ ձայնով երկարացնելով «մի քիչ» խոսքը։

— Օ՜, Ստիվային ինչքան նման տոնով ասիր դա,— ասաց Դոլլին ծիծաղելով։

Աննան վիրավորվեց։

— Օ՜, ո՛չ, օ՜, ո՛չ,— ես Ստիվա չեմ,— բացականչեց նա մոայլվելով։— Ես նրա համար եմ ասում քեզ, որ ո՛չ մի րոպե թույլ չեմ տա ինձ վստահ չլինելու ինքս իմ վերաբերյալ,— ասաց Աննան։

Բայց այն րոպեին, երբ նա արտասանում էր այդ խոսքերը, զգում էր, որ դրանք անիրավացի են, նա ո՛չ միայն կասկած ուներ իր նկատմամբ, նա նույնիսկ հուզվում էր Վրոնսկու մասին մտածելիս և գնում էր ավելի շուտ, քան ուզում էր, միմիայն այն պատճառով, որ այլևս չպատահի Վրոնսկուն։

— Այո՛, Ստիվան ինձ ասում էր, որ դու Վրոնսկու հետ պարել ես մազուրկա, և որ նա...

— Դու չես կարող երևակայել, թե ինչպե՛ս ծիծաղելի տարվեց դա։ Ես մտածում էի միայն խնամախոսելու մասին, և հանկարծ բոլորովին ուրիշ բան։ Դուցե ես կամքիս հակառակ...

Աննան կարմրեց ու կանգ առավ։

— Օ՜, նրանք դա անմիջապես զգում են,— ասաց Դոլլին։

— Բայց հուսահատությունը կհամակեր ինձ, եթե այստեղ նրա կողմից որևէ լուրջ բան լիներ,— ընդհատեց հարսին Աննան։— Եվ ես հավատացած եմ, որ այս բոլորը կմոռացվի, ու Կիտին կդադարի ինձ ատելուց։

— Սակայն, Աննա, ճիշտն ասած, ես շատ էլ չեմ ուզում

այդ ամուսնությունը Կիտիի համար։ Եվ ավելի լավ կլիներ դա քայքայվեր, եթե նա, Վրոնսկին, կարող էր մի օրվա մեջ սիրահարվել քեզ։

— Ա՜խ, աստված իմ, դա հիմար բան կլիներ,— ասաց Աննան, և նորից բավականության թանձր կարմրությունը դուրս տվեց նրա դեմքին, երբ նա լսեց իրեն զբաղեցնող միտքը, արտասանված բառերով։— Այսպես ահա ես դնում եմ, ինձ հետ թշնամացրած Կիտիին, որին այնպես սիրեցի։ Ա՜խ, ի՜նչ համակրելի է նա։ Բայց դու կուզես այդ բանը։ Դոլլի, այնպես չէ՞։

Դոլլին հազիվ կարողացավ զսպել ժպիտը։ Նա սիրում էր Աննային, բայց նրա համար հաճելի էր տեսնել, որ իր տալն էլ թուլություններ ունի։

— Թշնամացրա՞ծ։ Չի կարող պատահել։

— Ես այնպես կկամենայի, որ դուք ամենքդ սիրեիք ինձ, ինչպես ես եմ սիրում ձեզ, իսկ այժմ ես է՛լ ավելի սիրեցի ձեզ,— ասաց Աննան, աչքերին արցունքներ։— Ա՜խ, ի՜նչ տրխմարն եմ այսօր։

Նա թաշկինակով սրբեց դեմքը և սկսեց հագնվել։

Մեկնելու պահից առաջ եկավ Ստեպան Արկադևիչը, կարմրած, ուրախ դեմքով և գինու, սիգարի հոտով։

Աննայի զգայականությունը հաղորդվեց նաև Դոլլիին, և երբ նա վերջին անգամ զրկեց տալին, շշնջաց.

— Հիշիր, Աննա, թե ի՜նչ արիր դու ինձ համար, ես երբեք չեմ մոռանա, և հիշիր, որ ես սիրել եմ քեզ ու միշտ կսիրեմ, որպես լավագույն բարեկամի։

— Ես չեմ հասկանում, թե ինչի՛ համար,— ասում էր Աննան, համբուրելով հարսին ու թաքցնելով արցունքները։

— Դու ինձ հասկացար և հասկանում ես։ Գնաս բարով, դու իմ չքնաղ։

XXIX

«Դեհ, ամեն ինչ վերջացավ, և փառք աստծո»,— դա Աննա Արկադևնայի գլխով անցած առաջին միտքն էր, երբ նա վերջին անգամ հրաժեշտ տվեց եղբորը, որը մինչև վերջին զանգը փակում էր իրենով վագոնի մուտքի դուռը։ Աննան

նստեց իր փոքրիկ բազկաթոռին, Աննուշկայի կողքին, և նայեց շուրջը՝ վագոն-ննջարանի կիսալույսի մեջ։ «Փառք աստծո, վաղը կտեսնեմ Սերյոժային ու Ալեքսեյ Ալեքսանդրովիչին, և առաջվա պես կընթանա իմ կյանքը, լավ ու սովորական»։

Տակավին մտահոգության միևնույն ոգով, որի մեջ նա գտնվում էր այդ ամբողջ օրը, Աննան բավականությամբ ու պարզորոշությամբ հավաքվեց ճանապարհի համար. իր փոքրիկ, ճարպիկ ձեռքերով նա բացեց ու փակեց կարմիր տոպրակը, հանեց բարձիկը, դրեց ծնկներին և կանոնավոր փաթթելով ոտքերը, հանգիստ նստեց։ Հիվանդ տիկինն արդեն տեղավորվում էր քնելու։ Երկու ուրիշ տիկիններ խոսեցին Աննայի հետ, և հաստ պառավը փաթթում էր ոտքերն ու նկատողություններ անում վագոնները տաքացնելու մասին։ Աննան մի քանի խոսք պատասխանեց տիկիններին, բայց խոսակցությունից հետաքրքրություն չնախատեսելով, խնդրեց Աննուշկային՝ հանել փոքրիկ լապտերը, վառեց, ամրացրեց բազկաթոռի թիկնակին ու պայուսակից հանեց թղթահատ դանակը և անգլիական վեպը։ Սկզբում կարդալու տրամադրություն չուներ։ Նախ՝ խանգարում էր աղմուկը և անցուդարձը. հետո, երբ գնացքը շարժվեց, չէր կարելի ականջ չդնել ձայներին. ապա՝ ձյունը, որ ծեծում էր ձախ լուսամուտը և կպչում ապակուն. և իրենց մոտով անցնող, փաթթված ու մի կողմից ձյունով ծեփված կոնդուկտորի տեսքը, և խոսակցություններն այն մասին, թե ի՜նչ սոսկալի փոթորիկ է այժմ դրսում, գրավում էին նրա ուշադրությունը։ Այնուհետև ամեն ինչ նույնն էր ու նույնը. նույն ցնցումը թխկթխկոցի հետ, լուսամուտը ծեծող նույն ձյունը, նույն արագ անցումները շոգեքարշից դեպի ցուրտը, ապա նորից դեպի տաքը, միևնույն դեմքերի նշմարվելը կիսախավարի մեջ ու միևնույն ձայները, և Աննան սկսեց կարդալ ու հասկանալ կարդացածը։ Աննուշկան արդեն նիրհում էր, ծնկներին դրած կարմիր տոպրակը բռնել էր ձեռքերով, հագել էր ձեռնոցներ, որոնցից մեկը պատռված։ Աննա Արկադևնան կարդում էր ու հասկանում, բայց նրա համար անախորժ էր կարդալ, այսինքն՝ հետևել ուրիշ մարդկանց կյանքի արտացոլումին։ Նա ինքն ապրելու մեծ ցանկություն ուներ։ Կարդալով, թե ինչպե՛ս վեպի հերոսուհին խնամում էր հիվանդին, ինքն էլ ուզում էր լռիկ քայլերով գնալ-գալ հիվանդի

սենյակում. կարդալով այն մասին, թե ինչպե՞ս էր ճառում պառլամենտի անդամը, նա ուզում էր, որ այդ ճառն ինքն ասի. կարդալով այն մասին, թե ինչպե՞ս Լեդի Մերին գնում էր ոհմակի ետևից ու զայրացնում հարսին և զարմացնում ամենքին իր ճարպկությամբ, նա ուզում էր, որ դա ինքն անի։ Բայց անելու բան չկար, և նա իր փոքրիկ ձեռքերով շոշափելով ողորկ դանակը, ջանում էր կարդալ։

Վեպի հերոսն արդեն սկսում էր հասնել անգլիացու իր երջանկությանը՝ բարոնության ու կալվածքի, և Աննան ուզում էր նրա հետ միասին գնալ այդ կալվածքը, երբ հանկարծ զգաց, որ նրա համար պետք է որ ամոթ լինի ու ինքն էլ ամաչեց այդ բանից։ Բայց ինչի՞ց է նա ամաչում։ «Իսկ ինչի՞ց եմ ես ամաչում», հարցրեց ինքն իրեն Աննան վիրավորված զարմանքով։ Աննան թողեց գիրքը և ետ ընկավ բազկաթոռի թիկունքին, ամուր սեղմելով երկու ձեռքերի մեջ թղթահատ դանակը։ Ամաչելու ոչինչ չկար։ Նա մեկ առ մեկ մտաբերեց Մոսկվայի իր հիշողությունները։ Բոլորը լավն էին, հաճելի։ Հիշեց պարահանդեսը, հիշեց իր ամբողջ հարաբերությունները Վրոնսկու հետ. ամոթալի ոչինչ չկար։ Իսկ դրա հետ միասին հիշողությունների հենց այդ տեղում ամոթի զգացումն ուժեղանում էր, կարծես ներքին մի ձայն հատկապես այստեղ, երբ ինքը հիշեց Վրոնսկուն, ասում էր. «տաք է, շատ տաք, սաստիկ տաք»։ «Է՛հ, հետո ի՞նչ,— ասաց նա ինքն իրեն վճռականապես, դիրքը փոխելով բազկաթոռի մեջ։— Ի՞նչ է նշանակում դա։ Մի՞թե իրոք ես վախենում եմ դրա վրա ուղղակի նայելուց։ Է՞, հետո՞։ Մի՞թե իմ և այդ սպա-երեխայի միջև գոյություն ունեն ու կարող են գոյություն ունենալ որևէ ուրիշ հարաբերություններ, բացի նրանցից, որ լինում են ամեն մի ծանոթի հետ»։ Աննան արհամարհալից ծիծաղեց ու նորից սկսեց կարդալ, բայց այժմ արդեն վճռականապես չէր կարողանում հասկանալ այն, ինչ կարդում էր։ Նա թղթահատ դանակը քսեց ապակուն, ապա նրա ողորկ ու պաղ երեսը դրեց իր այտին և ջղեղ մնաց, ծիծաղեր ուրախությունից, որ հանկարծ առանց պատճառի համակեց իրեն։ Նա զգում էր, որ ջղերը լարերի պես ձգվում են ավելի ու ավելի պիրկ՝ ինչ-որ պտուտաշարժ ձողիկների վրա։ Նա զգում էր, որ աչքերը բացվում են ավելի ու ավելի, որ ձեռքերի ու ոտքերի մատները շարժվում են ջղայ-

նորեն, որ ներսում մի բան խեղդում է շնչառությունը և որ բոլոր կերպարանքներն ու հնչյուններն այդ երեկուն կիսախավարում զարմացնում են իրեն անսովոր պայծառությամբ։ Նա անընդհատ ամեն րոպե կասկածում էր, արդյոք վագոնը գնում է առա՞ջ, թե՞ ետ, գուցե կանգնած է անշարժ։ Արդյոք, Աննուշկա՞ն է իր կողքին. թե՞ օտար մի կին։ «Ի՞նչ է կախված այնտեղ կարթից. մուշտա՞կ է արդյոք, թե՞ գազան։ Եվ ի՞նչ եմ ես այստեղ, ի՞նքս եմ արդյոք, թե՞ մի ուրիշը»։ Նա սարսափում էր իրազգացումից զուրկ այս կացությանն անձնատուր լինելուց։ Բայց մի ինչ-որ բան քաշում էր նրան դեպի այդ դրությունը, և նա ըստ իր բարեհաճության կարող էր անձնատուր լինել դրան կամ հրաժարվել։ Նա վեր կացավ, որ ուշքի գա։ Վրայից դեն գցեց պլեդը և հանեց տաք հագուստի շրջաթիկնոցը։ Մի րոպե ուշքի եկավ, սթափվեց ու հասկացավ, որ ներս մտնող նիհար մուժիկը նանկինե երկար վերարկուով, որի մի կոճակը չկար, վառարան վառողն էր և նայում էր ջերմաչափը։ Հասկացավ նաև, որ մուժիկի ետևից վագոնը խուժեցին բամին ու ձյունը, բայց հետո նորից ամեն բան խառնվեց իրար... Երկար իրանով այդ մուժիկն սկսեց մի բան կրծել պատի մեջ, պառավն սկսեց ոտները ձգել վագոնի ամբողջ լայնությամբ և լցրեց այն սև ամպով. հետո մի բան սոսկալի կերպով ճռնչաց ու թխկաց, կարծես, մեկին ծվատում էին, ապա կարմիր կրակը շլացրեց աչքերը, և հետո ամեն ինչ ծածկվեց պատով։ Աննան դողաց, որ ինքը վայր գլորվեց։ Բայց այս բոլորը սարսափելի չէր, այլ ուրախալի։ Փաթաթված և ձյունակոլոլ մարդու ձայնը նրա ականջի տակ բղավեց ինչ-որ բան։ Աննան վեր կացավ ու սթափվեց. նա հասկացավ, որ մոտենում էին կայարանին և որ դա կոնդուկտորն էր։ Նա խնդրեց Աննուշկային՝ տալ իրեն հանած շրջաթիկնոցը և շարֆը, հագավ ու դիմեց դեպի դուռը։

— Կամենում եք դո՞ւրս գնալ,— հարցրեց Աննուշկան։

— Այո՛, ուզում եմ թարմ օդ շնչել։ Այստեղ շատ տոթ է։

Եվ նա բացեց դուռը։ Մրրիկն ու քամին վազեցին նրան ընդառաջ և դժվարացրին դուռը բանալ։ Դա ևս նրան թվաց ուրախալի։ Նա դուռը բացեց ու դուրս գնաց։ Քամին կարծես հենց նրան էր սպասում, խնդաղին սուլեց և ուզում էր վերցնել նրան ու տանել, բայց նա ձեռքը գցեց վագոնի աստիճանների

ձողին և բռնելով զգեստը, իջավ պլատֆորմ ու անցավ վագոնի ետևը։ Քամին ուժեղ էր արտաքին սանդուղքի կողմը, իսկ պլատֆորմի վրա՝ վագոնների ետևում, խաղաղ էր։ Հաճույքով, ամբողջ կրծքով նա ներշնչում էր ձյան պաղ օդը ու, կանգնած վագոնի մոտ, դիտում էր պլատֆորմը և լուսավորված կայարանը։

XXX

Կայարանի անկյունից սոսկալի փոթորիկը մոլեգնում ու սուրում էր վագոնների անիվների միջև, սյուների արանքում։ Վագոնները, սյուները, մարդիկ, այն բոլորը, ինչ երևում էր, պատած էր ձյունով և ավելի ու ավելի ձյունակոլոլ էր դառնում։ Մի վայրկյան փոթորիկը հանդարտվեց, բայց հետո էլի վրա պրծավ այնպիսի թափով, որ թվում էր, թե չի կարելի դեմ կանգնել նրան։ Մինչդեռ ինչ-որ մարդիկ վազվզում էին, ուրախ խոսելով իրար հետ, ճոնչացնելով պլատֆորմի տախտակներն իրենց ոտքերի տակ և անդադար բացելով ու փակելով մեծ դռները։ Մի մարդու կռացած ստվերն անցավ Աննայի ոտքերի տակով, և լսվեցին երկաթին հարվածող մուրճի ձայներ։ «Հեռագիրը տուր», լսվեց մեկի բարկացկոտ ձայնը մրրկածուփ խավարի մյուս կողմից։ «Համեցեք այստեղ, № 28», բզզվում էին էլի զանազան ձայներ, և ձյունակոլոլ՝ վազեցին փաթաթված մարդիկ։ Ինչ-որ երկու պարոններ, բերաններին վառած գլանակ, անցան Աննայի մոտով։ Նա մի անգամ խոր շունչ քաշեց, որ կշտանա, և արդեն ձեռքը հանեց մուֆթայից, որ բռնի վագոնի սանդուղքի ձողից ու մտնի վագոն, երբ զինվորական վերարկուով մի մարդ, նրան շատ մոտիկ կանգնած, փակեց լապտերի երերուն լույսը նրա դիմաց։ Նա նայեց և նույն րոպեին ճանաչեց Վրոնսկու դեմքը։ Ձեռքը դնելով գըլխարկի հովարին, Վրոնսկին կռացավ Աննայի դիմաց ու հարցրեց, թե որևէ բանի կարիք չունի՞, թե կարո՞ղ է ինքը ծառայություն մատուցել նրան։ Աննան բավական երկար ժամանակ ոչինչ չպատասխանելով, դիտում էր Վրոնսկուն և չնայած ստվերին, որի մեջ կանգնած էր ինքը, տեսնում էր, կամ թվում էր իրեն, թե տեսնում է նրան, և նրա դեմքի ու աչքերի արտահայտությունը։ Դա էլի հարգալից հիացքի այն արտահայտությունն էր, որն այնպես ազդեց իր վրա երեկ։ Այս վերջին օրերս ի՞նչ այժմ էլ նա հաճախ էր ասում ինքն իրեն, որ Վրոնսկին իր համար մեկն է ամենուր պատահող միշտ միևնույն հարյուրավոր երիտասարդներից, որ ինքը երբեք թույլ չի տա իրեն անգամ մտածելու նրա մասին, բայց հիմա, նրա հետ հանդիպման առաջին վայրկյանին Աննային համակեց խնդագին պարծանքի զգացումը։ Աննան կարիք չուներ հարցնելու, թե ինչո՞ւ է նա այստեղ։ Աննան այդ բանը գիտեր նույնքան ստույգ, ինչպես եթե Վրոնսկին ասեր, թե ինքն այստեղ է նրա համար, որ լինի այնտեղ, որտեղ Աննան է։

— Ես չգիտեի, որ դուք գնում եք։ Ինչի՞ համար եք գնում,— ասաց Աննան, ցած գցելով այն ձեռքը, որով ուզում էր բռնել սանդուղքի ձողը։ Եվ նրա դեմքի վրա փայլում էին անդուսպ ուրախություն ու աշխուժություն։

— Ինչի՞ համար եմ գնում,— կրկնեց Վրոնսկին, ուղիղ նայելով նրա աչքերին։ —Դուք գիտեք, ես գնում եմ, որ լինեմ այնտեղ, որտեղ դուք եք,— ասաց նա,— ես չեմ կարող այլ կերպ։

Եվ հենց այդ րոպեին, կարծես՝ հաղթահարելով արգելքները, քամին վագոնների կտուրից շաղեց ձյունը, ցնցեց-գրնդացրեց պոկ եկած ինչ-որ երկաթաթիթեղ, և առջևում ողբագին ու մռայլ ոռնաց շոգեքարշի թանձր սուլոցը։ Փոթորկի ամբողջ սարսափն Աննային թվում էր այժմ է՛լ ավելի գեղեցիկ։ Վրոնսկին ասաց հիշտ այն, ինչ ցանկանում էր Աննայի հոգին, բայց ինչից նա վախենում էր բանականությամբ, նա ոչինչ չէր պատասխանում, և նրա դեմքին Վրոնսկին տեսնում էր պայքար։

— Ներեցեք ինձ, եթե ձեզ համար անախորժ է այն, ինչ ասացի ես,— խոսեց Վրոնսկին հլու։

Նա խոսում էր քաղաքավարի, հարգալից, բայց այնպես հաստատամիտ ու համառորեն, որ Աննան երկար ժամանակ չէր կարողանում ոչինչ պատասխանել։

— Վատ բան է այն, ինչ ասում եք դուք, և ես խնդրում եմ ձեզ, եթե դուք լավ մարդ եք, մոռացեք ձեր ասածը, ինչպես կմոռանամ նաև ես,— ասաց Աննան վերջապես։

— Ձեր ո՛չ մի խոսքը, ձեր ո՛չ մի շարժումը ես երբեք չեմ մոռանա և չեմ կարող...

— Բավական է, բավական է,— բացականչեց Աննան, իզուր աշխատելով խիստ արտահայտություն տալ դեմքին, որին ագահաբար նայում էր Վրոնսկին։ Եվ բռնելով սանդուղքի պաղ ձողից, նա բարձրացավ աստիճանների վրա ու արագ մտավ վագոնի նախասրահը։ Բայց այս փոքրիկ նախասրահում նա կանգ առավ, կշռադատելով իր երևակայության մեջ այն, ինչ պատահեց։ Չմտաբերելով ո՛չ իր, ո՛չ էլ Վրոնսկու խոսքերը, նա զգացումով հասկացավ, որ այդ բոպեական խռովակցությունը սաստիկ մոտեցրեց իրենց. և նա վախեցած ու երջանիկ էր դրանով։ Մի քանի վայրկյան կանգնելուց հետո նա մտավ վագոն և նստեց իր տեղը։ Այն լարված դրությունը, որը տանջում էր նրան սկզբում, ո՛չ միայն նորոգվեց, այլև ուժեղացավ մինչ այն աստիճան, որ նա վախենում էր, թե ամեն բոպե կարող է իր ներսում կտրվել չափազանց ձգված ինչ-որ բան։ Ամբողջ գիշեր նա չքնեց։ Բայց ոչինչ չկար անախորժ ու մռայլ՝ այն լարվածության և այն երազանքների մեջ, որոնք պարուրել էին նրա երևակայությունը. ընդհակառակը, կար ուրախալի, այրող ու զրդռիչ մի բան։ Առավոտյան դեմ Աննան նիրհեց բազկաթոռի մեջ նստած, և երբ արթնացավ, արդեն լուսացել էր, և գնացքը մոտենում էր Պետերբուրգին։ Անմիջապես պաշարեցին նրան տան, ամուսնու, որդու մասին մտքերը և առաջիկա ու հետագա օրերի հոգսերը։

Պետերբուրգում, հենց որ գնացքը կանգնեց և Աննան դուրս եկավ վագոնից, առաջին դեմքը, որ գրավեց նրա ուշադրությունը, ամուսնու դեմքն էր։ «Ա՜խ, աստված իմ։ Ինչի՞ց են այդպե՛ս դարձել նրա ականջները»,— մտածեց Աննան, նայելով ամուսնու պարթև ու սառը կերպարանքին և մանավանդ իրեն այնպես զարմացնող ականջների կոճիկներին, որ նեցուկի պես պահում էին կլոր գլխարկի ափերը։ Տեսնելով կնոջը, նա ընդառաջ գնաց նրան, շրթունքների վրա գծագրելով իր համար սովորական, հեգնական ժպիտ և ուղիղ նայելով նրան իր հոգնած մեծ աչքերով։ Մի անախորժ զգացում մորմոքեց Աննայի սիրտը, երբ նա տեսավ ամուսնու համառ ու հաստատած հայացքը, կարծես թե ոչառում էր նրան տեսնել այլ տեսքով։ Աննային առանձնապես ապշեցրեց ինքն իրենից դժգոհ լինելու զգացումը, որ ունեցավ ինքը նրան հանդիպելուց։ Դա վաղուց ծանոթ զգացում էր, կեղծելու, ձևանալու

կացության պես մի զգացում, որ կար ամուսնու հետ ունեցած իր հարաբերությունների մեջ, բայց առաջ նա չէր նկատում այդ զգացումը, այժմ պարզ ու ցավագին գիտակցեց այն։

— Այո՛, ինչպես տեսնում ես, քնքուշ ամուսին եմ, քնքուշ։ Ինչպես ամուսնության հետևյալ տարին. վտանգում էի քեզ տեսնելու ցանկությամբ,— ասաց նա իր դանդաղկոտ բարակ ձայնով և այն տոնով, որ համարյա միշտ բանեցնում էր կնոջ հետ խոսելիս, այն մարդուն ծաղրելու տոնով, որն իսկապես այդպես կասեր։

— Սերյոժան առո՞ղջ է,— հարցրեց Աննան։

— Եվ դա՞ է իմ սիրո ավյունի ամբողջ պարգևը,— ասաց նա։ — Առողջ է, առողջ...

XXXI

Վրոնսկին նույնիսկ չփորձեց քնել այդ ամբողջ գիշեր։ Նստել էր նա բազկաթոռին, մերթ աչքերն ուղիղ հառած իր դիմաց, մերթ դիտելով դուրսուներս անողներին, և եթե առաջ էլ նա զարմացնում ու հուզում էր անծանոթ մարդկանց իր անսասան հանդստությամբ, իր անվրդով տեսքով, ապա այժմ թվում էր է՛լ ավելի հպարտ և ինքնագոհ։ Նա մարդկանց նայում էր որպես իրերի վրա։ Ջղային մի երիտասարդ, շրջանային դատարանի ծառայող, որ նստել էր նրա դիմաց, ատեց նրան այդ տեսքի պատճառով։ Երիտասարդը և՛ վառում էր ծխախոտը նրա կրակով, և՛ խոսում էր նրա հետ, և՛ նույնիսկ բռթում էր նրան, որ զգալ տա, թե ինքն իր չէ, մարդ է, բայց Վրոնսկին նայում էր նրա վրա որպես լապտերի, և երիտասարդը ծամածռվում էր, զգալով, որ կորցնում է ինքնազսպումը՝ իրեն մարդու տեղ չդնելու ազդեցության տակ։

Վրոնսկին ոչինչ ու ոչ ոքի չէր տեսնում։ Նա իրեն զգում էր արքա, ո՛չ այն պատճառով, որ հավատում էր, թե տպավորություն է թողել Աննայի վրա,— նա դեռ չէր հավատում դրան,— այլ այն պատճառով, որ Աննայի՝ իր վրա թողած տպավորությունը երջանկություն ու հպարտություն էր տալիս իրեն։

Թե ի՞նչ դուրս կգար այս բոլորից, նա չգիտեր, նույնիսկ չէր մտածում դրա մասին։ Նա զգում էր, որ մինչ այդ իր

սանձարձակ ցրիվ տված բոլոր ուժերը հավաքվել են ի մի և ահռելի թափով ուղղված են մի երանելի նպատակի։ Ու նա երջանիկ էր դրանով։ Վրոնսկին գիտեր միայն, որ Աննային ճիշտ ասաց, թե գնում է այնտեղ, որտեղ նա է, թե կյանքի ամբողջ երջանկությունը, կյանքի միակ իմաստն այժմ ինքը դառնում է այն բանում, որ տեսնի ու լսի նրան։ Եվ երբ Բոլոգովո կայարանում Վրոնսկին դուրս եկավ վագոնից, զելտերյան ջուր խմելու, և տեսավ Աննային, իր առաջին խոսքն ակամա ասաց նրան ճիշտ այն, ինչ մտածում էր ինքը։ Եվ Վրոնսկին ուրախ էր, որ ասաց Աննային այդ և որ նա այժմ դիտե այդ ու մտածում է դրա մասին։ Վրոնսկին շքնեց ամբողջ գիշեր։ Վերադառնալով իր վագոնը, նա անդադար մի առ մի մտաբերում էր բոլոր դրությունները, որոնց մեջ տեսել էր Աննային, մտաբերում էր Աննայի բոլոր խոսքերը, և նրա երևակայության մեջ դալիս-անցնում էին հնարավոր ապագայի պատկերները, որոնցից մարում էր նրա սիրտը։

Երբ Պետերբուրգում Վրոնսկին դուրս եկավ վագոնից, նա անքուն գիշերից հետո իրեն զգում էր աշխուժացած ու թարմ, ինչպես սառը լոգանքից հետո։ Նա կանգնեց իր վագոնի մոտ, սպասելով Աննայի դուրս գալուն։ «Մի անգամ էլ տեսնեմ,— ասում էր նա ինքն իրեն, ակամա ժպտալով,— նրա քայլվածքը, նրա դեմքը, գուցե, մի բան ասի, գլուխը շուռ տա, նայի, ժպտա»։ Բայց նախքան նա կտեսներ Աննային, տեսավ նրա ամուսնուն, որին կայարանապետը հարգալից առաջնորդում էր ամբոխի միջով։ «Ա՜խ, հա՜, ամուսինը»։ Այժմ միայն առաջին անգամ Վրոնսկին պարզ հասկացավ այն, որ ամուսինը Աննայի հետ կապված դեմք է։ Նա գիտեր, որ Աննան ամուսին ունի, բայց չէր հավատում նրա գոյությանը և հավատաց լիովին այն ժամանակ միայն, երբ տեսավ նրան՝ գլխով, ուսերով ու սև շալվարով մանավանդ երբ նա տեսավ, որ այդ ամուսինը, սեփականության գիտակցությամբ, հանդիստ բռնեց Աննայի թևը։

Տեսնելով Ալեքսեյ Ալեքսանդրովիչին՝ իր պետերբուրգյան թարմ դեմքով ու խիստ ինքնավստահ կերպարանքով, գլխին կլոր գլխարկ, մի փոքր դուրս պրծած թիկունքով, Վրոնսկին հավատաց նրա գոյությանը և զգաց անախորժ մի բան, ինչպիսին կզգար ծարավից տանջվող ու աղբյուրին հասած մարդը, գտնելով այդ աղբյուրի մեջ շուն, ոչխար կամ խոզ, որը և՛ խըմել, և՛ պղտորել էր ջուրը։ Վրոնսկուն առանձնապես վիրավորում էր Ալեքսեյ Ալեքսանդրովիչի քայլվածքը, որ շորորում էր ամբողջ կոնքն ու բութ ոտքերը։ Վրոնսկին միայն իր աներկբա իրավունքն էր համարում սիրել Աննային։ Բայց Աննան էլի նունն էր. և նրա տեսքն առաջվա պես, էլի ֆիզիկապես աշխուժացնելով, գրգռելով ու երջանկությամբ լցնելով Վրոնսկու հոգին, կրկին ազդեց նրա վրա։ Նա հրամայեց երկրորդ կարգի վագոնից վազելով իր մոտ եկած գերմանացի ծառային՝ վերցնել իրերն ու գնալ, իսկ ինքը մոտեցավ Աննային։ Վրոնսկին տեսավ ամուսնու առաջին հանդիպումը կրնոջ հետ և սիրահարի նրբամտությամբ նկատեց հատկանիշը թեթև ճնշվածության, որով Աննան խոսում էր ամուսնու հետ։ «Ո՜չ, Աննան չի սիրում և չի կարող սիրել նրան», վճռեց նա ինքն իրեն։

Դեռ այն ժամանակ, մինչ Վրոնսկին մոտենում էր Աննա Արկադիևնային՝ ետևից, նա ուրախությամբ նկատեց, որ Աննան զգաց իր մոտենալը և ուզում էր ետ նայել, ու ճանաչելով Վրոնսկուն, նորից դիմեց ամուսնուն։

— Ինչպե՞ս անցկացրիք գիշերը,— ասաց Վրոնսկին, գլուխը խոնարհելով միաժամանակ Աննայի ու ամուսնու առաջ և Ալեքսեյ Ալեքսանդրովիչին թողնելով՝ ընդունել թե չընդունել այդ ողջույնն իր հաշվին ու ճանաչել կամ չճանաչել ողջունողին, ինչպես հաճելի կլինի իրեն։

— Շնորհակալություն, շատ լավ,— պատասխանեց Աննան։

Աննայի դեմքը հոգնած էր երևում, ու նրա վրա չէր նկատվում աշխուժության այն խաղը, որ մերթ ուզում էր ծաղկել ժպիտի մեջ, մերթ փայլել աչքերում, բայց մի վայրկյան՝ Վրոնսկու վրա նայելիս՝ մի բան առկայծեց Աննայի աչքերում. և չնայած, որ այդ հուրն անմիջապես մարվեց, Վրոնսկին երջանիկ էր այդ վայրկյանով։ Աննան նայեց ամուսնուն, որ իմանա, արդյոք նա ճանաչո՞ւմ է Վրոնսկուն։ Ալեքսեյ Ալեքսանդրովիչը նայում էր Վրոնսկուն տհաճությամբ, ցրվածորեն մտաբերելով, թե ով է նա։ Վրոնսկու հանդգնությունն ու ինքնավստահությունն այստեղ դեմ առավ Ալեքսեյ Ալեքսանդրովիչի սառն ինքնավստահությանը, ինչպես վեմը՝ ապառաժին։

— Կոմս Վրոնսկի,— ասաց Աննան։

— Ա՛, Մենք ծանոթ ենք, կարծեմ,— անտարբեր ասաց Ալեքսեյ Ալեքսանդրովիչը, ձեռք մեկնելով։ — Մոսկվա գընացիր մոր հետ, իսկ ետ եկար որդու հետ,— ասաց նա, հատորոշ արտասանելով յուրաքանչյուր խոսքը։ կարծես շնորհ էր անում։— Հավանորեն, դուք վերադառնում եք արձակուրդի՞ց,— ասաց նա և առանց սպասելու պատասխանի, դիմեց կնոջը՝ իր կատակի տոնով,— արդյոք շա՞տ արցունք թափվեց Մոսկվայում՝ անջատման ժամին։

Կնոչն արած այդ դիմումով նա զգալ էր տալիս Վրոնսկուն, որ ուզում է մնալ մենակ, և շուտ գալով դեպի նա, ձեռքը դիպցրեց գլխարկին, բայց Վրոնսկին դիմեց Աննա Արկադևնային.

— Հուսով եմ, պատիվ կունենամ լինելու ձեզ մոտ,— ասաց նա։

Ալեքսեյ Ալեքսանդրովիչը հոգնած աչքերով նայեց Վրոնսկուն։

— Շատ ուրախ կլինեմ,— ասաց Կարենինը սառը,— մենք ընդունում ենք երկուշաբթի օրերը։— Ապա բոլորովին թողնելով Վրոնսկուն, նա ասաց կնոջը։ — Ի՞նչ լավ է, որ ես ճիշտ կես ժամ ազատ ժամանակ ունեի, որ դիմավորեի քեզ և կարողացա ցույց տալ քեզ իմ քնքշությունը,— շարունակեց նա նույն կատակի տոնով։

— Դու արդեն չափազանց շատ ես շեշտում քո քնքշությունը, որպեսզի ես շատ գնահատեմ դա,— ասաց Աննան միևնույն կատակի տոնով, ակամա ականջ դնելով իրենց ետևից եկող Վրոնսկու քայլերին։ «Բայց իմ ի՞նչ բանն է դա», մտածեց նա և սկսեց հարցնել ամուսնուն, թե ինչպե՞ս էր ժամանակ անցկացնում Սերյոժան առանց իրեն։

— Օ՜, հիանալի։ Mariette-ն ասում է, որ նա շատ լավ էր պահում իրեն և... ես պետք է վշտացնեմ քեզ... քո կարոտը չէր քաշում, այնպես չէր, ինչպես քո ամուսինն է։ Բայց մեկ անգամ ևս mersi, սիրելիս, որ ինձ պարգևեցիր մի օր։ Մեր սիրելի ինքնաեռը կհիանա։ (Նա ինքնաեռ էր կանչում հրուշակավոր կոմսուհի Լիդիա Իվանովնային այն բանի համար, որ կոմսուհին միշտ և ամեն ինչի առթիվ վրդովվում ու տաքանում էր)։ Կոմսուհին հարցնում էր քո մասին։ Եվ դիտե՞ս ինչ. եթե ես համարձակվեմ խորհուրդ տալ քեզ, կառաջարկեի, որ դու հենց այսօր գնայիր նրա մոտ։ Չէ՞ որ նրա սիրտը ցավում է ամեն բանի համար։ Այժմ, իր բոլոր հոգսերից զատ, զբաղված է Օբլոնսկիների հաշտությամբ։

Կոմսուհի Լիդիա Իվանովնան Աննայի ամուսնու բարեկամն էր և Պետերբուրգի բարձր հասարակության այն խմբակներից մեկի կենտրոնը, որի հետ ամուսնու կողմից ամենից ավելի էր կապված Աննան։

— Բայց չէ՞ որ ես գրել եմ նրան։

— Սակայն նրան ամեն բան պետք է մանրամասնորեն։ Գնա, եթե հոգնած չես, սիրելիս։ Դե՛հ, կառեթը քեզ կտա Կոնդրատին, իսկ ես գնում եմ կոմիտե։ Նորից կհաշեմ ո՛չ մենակ,— շարունակեց Ալեքսեյ Ալեքսանդրովիչն այժմ արդեն կատակի տոնով։ — Դու չես հավատա, թե ինչպես վարժվել եմ...

Եվ նա երկար սեղմելով կնոջ ձեռքը, առանձին ժպիտով նրան կառք նստեցրեց։

XXXII

Առաջինը, որ դիմավորեց Աննային տանը, որդին էր։ Նա նանդուղքով վազեց թռավ դեպի մայրը, չնայած դաստիարակչուհու ճիչին, և հիացմունքով բղավում էր. «Մայրի՛կ, մայրի՛կ»։ Վազեվազ հասնելով մորը, կախվեց նրա վզից։

— Ես ասում էի ձեզ, որ մայրիկս է,— բղավում էր նա դաստիարակչուհուն։ Ես գիտեի։

Որդին էլ, ինչպես և ամուսինը, Աննայի մեջ հարուցեց մի զգացում, որ նման էր հիասթափության։ Նա որդուն պատկերացնում էր ավելի լավ, քան է՛ր իսկապես։ Մայրն ստիպված էր իջնել, հասնել իրականության, որպեսզի կարողանա հրճվել որդով, ինչպես նա կար։ Բայց այնպես էլ, ինչպես նա կար, ոքանչելի էր նա՝ խարտյաշ գանգուրներով, կապույտ աչիկներով ու գեր վայելչակազմ տոտիկներով՝ կիպ ձգված գուլպաների մեջ։ Աննան համարյա ֆիզիկական հրճվանք էր ըզգում նրա մոտիկության ու զգվանքի զգացողության մեջ և բարոյական հանգիստ, երբ տեսնում էր նրա բարեսիրտ, դյուրահավատ ու սիրող հայացքը և լսում էր նրա միամիտ հարցերը։ Աննան հանեց այն նվերները, որ ուղարկել էին Դոլիի նրբեխաները, և պատմում էր որդուն, թե ինչպիսի՛ մի աղջիկ

կա Մոսկվայում Տանյա անունով և ինչպե՞ս է այդ Տանյան կարդում ու նույնիսկ սովորեցնում ուրիշ երեխաների։

— Է՞, ինչ, ես նրանից վա՞տն եմ,— հարցրեց Սերյոժան։

— Ինձ համար աշխարհում ամենից լավն ես դու։

— Այդ ես գիտեմ,— ասաց Սերյոժան ժպտալով։

Աննան դեռ չէր վերջացրել իր սուրճը, երբ զեկուցեցին կոմսուհի Լիդիա Իվանովնայի մասին։ Կոմսուհի Լիդիա Իվանովնան բարձրահասակ, դեր կին էր, վառոտող դեղնագույն դեմքով և մտախոհ գեղեցիկ սև աչքերով։ Աննան սիրում էր նրան, բայց այսօր՝ կարծես առաջին անգամ տեսավ նրան՝ իր բոլոր թերություններով։

— Ի՞նչ կա, բարեկա՛մս, ձիթենու ո՞ստ տարաք,— հարցրեց կոմսուհի Լիդիա Իվանովնան, հենց որ մտավ սենյակ։

— Այո՛, այս բոլորը վերջացավ, բայց այս բոլորն այնքան էլ կարևոր չէր, ինչպես մենք կարծում էինք,— պատասխանեց Աննան։ — Առհասարակ, իմ belle soeur չափազանց վճռական է։

Բայց կոմսուհի Լիդիա Իվանովնան, որ հետաքրքրվում էր իրեն չվերաբերվող ամեն բանով, սովորություն ուներ երբեք չլսել այն, ինչ հետաքրքրում էր իրեն, նա ընդհատեց Աննային։

— Այո՛, աշխարհիս երեսին կա շատ վիշտ ու չարիք, իսկ ես այնպես տանջված եմ այսօր։

— Ի՞նչ է պատահել,— հարցրեց Աննան, աշխատելով գլխել ժպիտը։

— Ես սկսում եմ հոգնել արդարության համար իզուր նիզակներ ջարդելուց և երբեմն բոլորովին քայքայվում եմ։ Քույրերի գործը (դա մարդասիրական, կրոնահայրենասիրական մի հիմնարկ էր) կարծես պիտի կարգին առաջ գնար, բայց այդ պարոնների հետ հնարավոր չէ ոչինչ անել,— ավելացրեց կոմսուհի Լիդիա Իվանովնան, ճակատագրին հլու-հնազանդ ենթարկվելու հեգնաքով։ — Նրանք վրա ընկան դաղափարին, այլանդակեցին այն և հիմա քննարկում են այնպես երեսանց ու ողորմելի կերպով։ Երկու-երեք մարդ, այդ թվում և ձեր ամուսինը, հասկանում են այդ գործի ամբողջ նշանակությունը, իսկ մյուսները միայն վարկաբեկում են։ Երեկ ինձ գրում է Պրավդինը...

Պրավդինը հայտնի պանսլավիստ էր արտասահմանում, և կոմսուհի Լիդիա Իվանովնան պատմեց նրա նամակի բովանդակությունը։

Հետո կոմսուհին պատմեց նաև եկեղեցիների միացման դեմ եղած անախորժություններն ու դավերը և շտապ հեռացավ, որովհետև այդ օրը նա պետք է մասնակցեր մի բնկերության նիստին ու լիներ սլավոնական կոմիտեում։

«Չէ՞ որ այս բոլորը կար և առաջ, հապա ինչո՞ւ ես դա չէի նկատում,— ասաց ինքն իրեն Աննան։— Թե՞ նա շատ զբաղված է այսօր։ Իսկապես ծիծաղելի է։ Նրա նպատակն է բարերարություն։ Նա քրիստոնյա կին է, բայց շարունակ բարկանում է, և միշտ թշնամիներ ունի, և մշտական թշնամիներ քրիստոնեության ու բարերարության գծով»։

Կոմսուհի Լիդիա Իվանովնայից հետո եկավ ընկերուհին, դիրեկտորի կինը, և պատմեց քաղաքի բոլոր նորությունները։ Ժամը երեքին նա ևս գնաց, խոստանալով ճաշին գալ։ Ալեքսեյ Ալեքսանդրովիչը մինիստրությունում էր։ Մնալով մենակ, Աննան մինչև ճաշ մնացած ժամանակը զբաղեցրեց այնպես, որ ներկա եղավ որդու ճաշին (նա ճաշում էր առանձին), կարդի բերեց իր իրերը, կարդաց ու պատասխանեց այն տոմսերին և նամակներին, որոնք կուտակվել էին իր սեղանի վրա։

Իսպառ չքացավ հուզմունքը և պատճառաբանված ամոթի այն զգացումը, որ Աննան ուներ ճանապարհին։ Կյանքի սովորական պայմաններում նա նորից իրեն զգում էր հասարակական և անբասիր։

Նա զարմանքով էր հիշում իր երեկվա կացությունը։ «Ի՞նչ կար որ։ Ոչինչ։ Վրոնսկին հիմարություններ ասաց, որին հեշտ է վերջ տալ, և ես պատասխանեցի այնպես, ինչպես պետք էր։ Այդ մասին ամուսնուս ասել պետք չէ և չի կարելի։ Խոսել դրա մասին, նշանակում է կարևորություն տալ, որից զուրկ է դա»։ Նա հիշեց, թե ինչպե՞ս ինքը պատմեց համարյա սիրային այն խոստովանությունը, որ Պետերբուրգում իրեն արավ ամուսնու ստորադրյալ երիտասարդներից մեկը, և թե ինչպե՞ս Ալեքսեյ Ալեքսանդրովիչը պատասխանեց, որ ապրելով բարձր հասարակության մեջ, յուրաքանչյուր կին կարող է ենթակա լինել նման բանի, բայց որ ինքը լիովին վստահում է իր կնոջ

տակտին և երբեք թույլ չի տա խանդով նվաստացնելու կնոջն ու ինքն իրեն։ «Ուրեմն, ասելու կարիք չկա։ Փառք աստծո, ասելու բան էլ չկա», ասաց նա ինքն իրեն։

XXXIII

Ալեքսեյ Ալեքսանդրովիչը վերադարձավ մինիստրությունից ժամը չորսին, բայց, ինչպես դա հաճախ էր պատահում, չկարողացավ մտնել կնոջ մոտ։ Նա անցավ իր առանձնասենյակը՝ ընդունելու իրեն սպասող խնդրատուներին և ստորագրելու մի քանի գրություններ, որ բերել էր գործավարը։ Ճաշին (Կարենինների մոտ միշտ ճաշում էր մի երեք մարդ) եկան Ալեքսեյ Ալեքսանդրովիչի պառավ քեռաղջիկը, դեպարտամենտի գրեկտորն իր կնոջ հետ և մի երիտասարդ, որին լավ էին ներկայացրել Ալեքսեյ Ալեքսանդրովիչին պաշտոնավայրում։ Աննան դուրս եկավ ընդունարան, որ զբաղեցնի նրանց։ Ճիշտ ժամը հինգին, Պյոտր Ի-ի բրոնզե ժամացույցը դեռ հինգերորդ զարկը չխփած դուրս եկավ Ալեքսեյ Ալեքսանդրովիչը՝ ֆրակով, սպիտակ փողկապով, կրծքին երկու աստղ, որովհետև ճաշից անմիջապես հետո նա պետք է գնար։ Ալեքսեյ Ալեքսանդրովիչի կյանքի յուրաքանչյուր րոպեն զբաղված էր ու բաշխված։ Եվ որպեսզի ժամանակ լիներ կատարելու այն, ինչ պետք էր անել յուրաքանչյուր օր, նա հետևում էր ամենախիստ ճշտապահության։ «Առանց շտապողականության և առանց հանգստի», սա նրա դևիզն էր։ Նա մտավ դահլիճ, գլխով ողջունեց ամենքին ու շտապ նստեց՝ ժպտալով կնոջը։

— Այո՛,— վերջացավ իմ մենությունը։ — Դու չես հավատա, թե ինչ տհաճ բան է (նա շեշտեց տհաճ բառը) մենակ ճաշելը։

Ճաշի ժամանակ նա խոսեց կնոջ հետ մոսկովյան գործերի մասին, հեռանալից ժպիտով հարցնում էր Ստեպան Արկադևիչի մասին։ Բայց խոսակցությունը գլխավորապես կրում էր ընդհանուր բնույթ, պետերբուրգյան պաշտոնական ու հասարակական գործերի մասին։ Ճաշից հետո նա կես ժամ անցկացրեց հյուրերի հետ, և նորից ժպտադեմ սեղմելով կնոջ ձեռքը, դուրս եկավ ու գնաց խորհուրդ։ Աննան այս անգամ չգնաց ո՛չ իշխանուհի Բետսի Տվերսկայայի մոտ, որն իմանալով նրա վերադարձի մասին, կանչել էր նրան երեկոյան, ո՛չ

էլ թատրոն, որտեղ այսօր նա օթյակ ուներ։ Նա չգնաց գլխավորապես այն պատճառով, որ դեռ պատրաստ չէր այն զգեստը, որի վրա հույս էր դրել։ Առհասարակ, հյուրերի հեռանալուց հետո զբաղվելով իր տուալետով, Աննան շատ սրտնեղեց։ Մոսկվա գնալուց առաջ նա, ընդհանրապես ո՛չ շատ թանկ հագնվելու գործում մեծ վարպետուհի, երեք զգեստ տվեց մոդիստուհուն՝ վերակարելու։ Բանից դուրս եկավ, որ երկու զգեստը բոլորովին պատրաստ չէր, իսկ մեկը վերակարված էր ո՛չ այնպես, ինչպես ուզում էր Աննան։ Մոդիստուհին եկավ բացատրվելու, պնդելով, թե այդպես ավելի լավ կլինի, և Աննան այնպես տաքացավ, որ հետո խիղճը տանջում էր։ Բոլորովին հանդստանալու համար նա գնաց մանկասենյակ և ամբողջ երեկոն անցկացրեց որդու հետ, ինքը պառկեցրեց նրան քնելու, խաչակնքեց ու ծածկեց վերմակով։ Նա ուրախ էր, որ ո՛չ մի տեղ չգնաց և այդպես լավ անցկացրեց այդ երեկոն։ Նա իրեն զգում էր այնպես թեթև ու հանգիստ, այնպես պարզ տեսնում էր, որ այն բոլորը, ինչ թվում էր իրեն երկաթուղու ճանապարհին այնքան նշանակալից, բարձր աշխարհիկ կյանքի սովորական չնչին դեպքերից մեկն էր և որ ինքն ամաչելու ոչինչ չուներ՝ ո՛չ իր առջև, ո՛չ էլ ուրիշի։ Աննան նստեց բուխարու մոտ, ձեռքին անգլիական վեպ, և սպասում էր ամուսնուն։ Ժամը ճիշտ իններից կես անց լսվեց նրա զանգի ձայնը, և նա մտավ սենյակ։

— Վերջապես եկար,— ասաց Աննան, ձեռք մեկնելով նրան։

Նա համբուրեց կնոջ ձեռքը և նստեց նրա մոտ։

— Առհասարակ տեսնում եմ, որ քո ուղևորությունը հաջող է,— ասաց նա Աննային։

— Այո՛, շատ հաջող,— պատասխանեց Աննան ու սկսեց պատմել նրան բոլորը սկզբից, իր ճանապարհորդությունը Վրոնսկայայի հետ, Մոսկվա հասնելը, կայարանում պատահած դժբախտ դեպքը։ Ապա պատմեց իր խղճահարության տպավորությունը՝ նախ եղբոր նկատմամբ, հետո՝ Դոլլիի։

— Ես չեմ կարծում, թե կարելի էր ներել այդպիսի մարդուն, թեպետ նա քո եղբայրն է,— ասաց Ալեքսեյ Ալեքսանդրովիչը խիստ շեշտով։

Աննան ժպտաց։ Աննան հասկացավ, որ նա այդ ասաց

այն նպատակով, որ ցույց տա, թե աղգակցության նկատառումները չեն կարող փականք դնել իր բերանին և արգելել՝ արտահայտելու իր անկեղծ կարծիքը։ Աննան գիտեր իր ամուսնու մեջ այդ գիծը և սիրում էր այն։

— Ես ուրախ եմ, որ ամեն ինչ վերջացավ բարեհաջող և որ դու եկար,— շարունակեց նա։— Ի՞նչ են խոսում այնտեղ նոր կանոնադրության մասին, որ ես անցկացրի խորհրդում։

Աննան ոչինչ չէր լսել այդ կանոնադրության մասին, և անհարմար զգաց, որ ինքը կարող էր այդպես հեշտությամբ մոռանալ այն հարցը, ինչն այնպես կարևոր էր իր ամուսնու համար։

— Այստեղ, ընդհակառակը, դա մեծ աղմուկ հանեց,— ասաց Ալեքսեյ Ալեքսանդրովիչն ինքնագոհ ժպիտով։

Աննան զգաց, որ Ալեքսեյ Ալեքսանդրովիչն ուզում էր այդ գործի մասին իրեն հաղորդել հաճելի մի բան, և հարցեր տալով նրան հակեց պատմելու։ Ամուսինը նույն ինքնագոհ ժպիտով պատմեց այն օվացիաների մասին, որ սարքեցին նրան այդ ընդունված կանոնադրության հետևանքով։

— Ես շատ ուրախ եմ, շատ։ Դա ապացուցում է, որ վերջապես մեզանում սկսվում է այդ գործի վերաբերյալ հաստատվել խոհամիտ և ամուր հայեցակետ։

Սերի և հացի հետ խմելով թեյի իր երկրորդ բաժակը, Ալեքսեյ Ալեքսանդրովիչը վեր կացավ ու գնաց իր առանձնասենյակը։

— Իսկ դու ո՞չ մի տեղ չգնացի՞ր, երևի ձանձրալի էր քեզ համար, չէ՞,— ասաց նա։

— Օ՜, ո՜չ,— պատասխանեց Աննան, վեր կենալով նրա հետևից և առաջնորդելով նրան դահլիճից առանձնասենյակ։— Դու ի՞նչ ես կարդում այժմ,— հարցրեց նա։

— Այժմ ես կարդում եմ Duc de Lille, Poèsie dse onfers[1],—պատասխանեց Ալեքսեյ Ալեքսանդրովիչը։— Շատ լավ գիրք է։

Աննան ժպտաց, ինչպես ժպտում են սիրելի մարդկանց թուլությունների վրա և ձեռքը դնելով ամուսնու թևի տակ, ուղեկցեց նրան մինչև առանձնասենյակի դուռը։ Նա գիտեր երեկոները ամուսնու կարդալու սովորությունը, որ գարձել էր անհրաժեշտություն։ Նա գիտեր, որ Ալեքսեյ Ալեքսանդրովիչն իր պարտքն էր համարում հետևել մտավոր աշխարհում երևան եկած ամեն ուշագրավ բանի, չնայած պաշտոնական պարտավորությունները կլանում էին նրա համարյա ամբողջ ժամանակը։ Նա գիտեր նույնպես, որ ամուսնուն հետաքրքրում էին քաղաքական, փիլիսոփայական, աստվածաբանական գրքերը, որ արվեստը բոլորովին խորթ էր նրա բնավորությանը, սակայն չնայած դրան կամ ավելի ճիշտ՝ դրա հետևանքով, Ալեքսեյ Ալեքսանդրովիչը բաց չէր թողնում ո՛չ մի բան, որ աղմուկ էր հանում այդ բնագավառում, և իր պարտքն էր համարում կարդալ բոլորը։ Նա գիտեր, որ քաղաքականության, փիլիսոփայության, աստվածաբանության բնաշխարհում Ալեքսեյ Ալեքսանդրովիչը կասկածում էր կամ որոնում, բայց արվեստի և բանաստեղծության հարցերում, մանավանդ երաժշտության մեջ, որը հասկանալու ընդունակությունից նա բոլորովին զուրկ էր, ուներ որոշակի ու հաստատ կարծիքներ։ Կարենինը սիրում էր խոսել Շեքսպիրի, Ռաֆայելի, Բեթհովենի մասին, բանաստեղծության ու երաժշտության այն նոր դպրոցների նշանակության մասին, որոնք բոլորը նրա մոտ դասավորված էին շատ պարզ հետևողականությամբ։

— Դեհ, աստված քեզ հետ,— ասաց Աննան առանձնասենյակի դռան մոտ, որտեղ բազկաթոռի կողքին ամուսնու համար արդեն պատրաստ դրված էր լուսամփոփով մոմը և ջրով գրաֆինը։— Իսկ ես նամակ գրեմ Մոսկվա։

Նա սեղմեց կնոջ ձեռքը և նորից համբուրեց այն։

«Այնուամենայնիվ, նա լավ մարդ է, ճշմարտասեր, բարի և իր շրջանում նշանավոր,— ասում էր Աննան ինքն իրեն, իր սենյակը վերադառնալուց հետո, կարծես, պաշտպանելով նրան մեկի առաջ, որը մեղադրում էր նրան ու ասում, թե չի կարելի սիրել այդ մարդուն։— Բայց ինչո՞ւ են նրա ականջները այդպես տարօրինակորեն դուրս ցցվում։ Գուցե, մազերն է խուզելը։

Ճիշտ ժամը տասներկուսին, երբ Աննան դեռ նստած էր գրասեղանի առաջ ու վերջացնում էր Դոլլիին ուղարկելիք նամակը, լսվեցին մաշիկներով ոտքերի հավասար քայլեր, և

[1] Հերցոգ դը Լիլի «Դժոխքի պոեզիան»։

Ալեքսեյ Ալեքսանդրովիչը, լվացված ու սանրված, գիրքը թևի տակ, մոտեցավ նրան։

— Ժամանակ է, ժամանակ,— ասաց նա առանձնահատուկ ժպտալով և անցավ ննջարան։

«Եվ ի՜նչ իրավունք ուներ նա այդպես նայելու նրան»,— մտածեց Աննան, հիշելով Ալեքսեյ Ալեքսանդրովիչի վրա Վրոնսկու գցած հայացքը։

Հանվելով, Աննան մտավ ննջարան, բայց նրա դեմքին ո՛չ միայն չկար այն աշխուժությունը, որ Մոսկվայում եկած ժամանակ այնպես արտացոլում էր նրա աչքերից ու ժպիտից, ընդհակառակը, այժմ հուրը նրա մեջ թվում էր մարած կամ թաքցրած հեռավոր մի տեղում։

XXXIV

Մեկնելով Պետերբուրգից, Վրոնսկին Մոսկվայա փողոցում տանեցած իր մեծ բնակարանը թողեց իր սիրելի ընկերբարեկամ Պետրիցկուն։

Պետրիցկին երիտասարդ պոռուշիկ էր, ո՛չ առանձնապես տոնմիկ և ոչ միայն ո՛չ ճարտուտ, այլ գլխովին թաղված պարտքերի մեջ, երևկոները միշտ հարբած և հաճախ զանազան ծիծաղելի ու կեղտոտ պատմություններ համար պահանոց ընկնող, բայց և՛ ընկերների, և՛ իշխանավորների կողմից սիրված տղա։ Երկաթուղու կայարանից տասներկուերորդ ժամին մոտենալով իր բնակարանին, Վրոնսկին գլխավոր մուտքի մոտ տեսավ իրեն ծանոթ կառապանական կառեթը։ Որպես սրձաքանք իր տված զանգի, դեռ դռան ետևից նա լսեց տղամարդկանց քրքիջ ու կանացի ձայնի թոթովանք և Պետրիցկու ճիչը. «Եթե չարագործներից մեկն ու մեկն է, ներս չթողնել»։ Վրոնսկին ապասյակին հրամայեց չզեկուցել իր դալու մասին ու կամաց մտավ առաջին սենյակը։ Բարոնուհի Շիլտոնը, Պետրիցկու բարեկամուհին, փայլելով իր զգեստի մանուշակագույն տպասով ու վարդախարտյաշ դեմքով և դեղձանիկի պես, ամբողջ սենյակը լցնելով իր փարիզյան բարբառով, նստել էր դյուր սեղանի առաջ և սուրճ էր եփում։ Պետրիցկին վերարկուավ և ռոստիստր Կամերովսկին ամբողջ տարազով, հավանաբար, եկել էր ծառայությունից, նստել էին բարոնուհու ջուրջը։

— Բռավո՛ Վրոնսկին,— բղավեց Պետրիցկին, վեր թռչելով ու դղրդացնելով աթոռը։— Ինքը տանտե՛րը։ Բարոնուհի, սուրճ նրան՝ նոր սրճամանից։ Բոլորովին չէինք սպասում։ Հուսան, որ դու գոհ ես քո առանձնասենյակի նոր զարդից,— ասաց նա, նշելով բարոնուհուն։— Կարծեմ, դուք ծանո՞թ եք։

— Իհա՛րկե,— ասաց Վրոնսկին, ուրախ ժպիտով ու սեղմելով բարոնուհու փոքրիկ ձեռքը։— Ինչպե՞ս չէ, հին բարեկամներ ենք։

— Դուք ճանապարհից ուղղակի տո՞ւն,— ասաց բարոնուհին,— ուրեմն, ես թռա։ Ա՜խ, ես կգնամ հենց այս րոպեիս, եթե խանգարում եմ։

— Դուք տանն եք այնտեղ, որտեղ գտնվում եք,— ասաց Վրոնսկին։— Բարև, Կամերովսկի,— ավելացրեց նա, սառը սեղմելով Կամերովսկու ձեռքը։

— Ա՜յ, տեսեք, դուք երբեք չեք կարողանում ասել այդպիսի լավ բաներ,— դիմեց բարոնուհին Պետրիցկուն։

— Ինչո՞ւ չէ։ Ճաշից հետո ես էլ դրանից պակասը չեմ ասի։

— Սակայն ճաշից հետո դա արժանիք չէ։ Այսպես, ուրեմն ես ձեզ սուրճ կտամ, գնացեք լվացվեք ու զուգվեք,— ասաց բարոնուհին, նորից նստելով ու խնամքով շուռ տալով սրճամանի նոր պտուտակը։— Պյեր, տվե՛ք սուրճը,— դիմեց նա Պետրիցկուն, որին կանչում էր Պյեր, Պետրիցկի ազգանվան արմատուի չծածկելով իր հարաբերությունները նրա հետ։— Ես սուրճ ավելացնեմ։

— Գլուխս ցնեք։

— Ո՛չ, չեմ փչացնի։ Իսկ ձեր կի՞նը,— ասաց հանկարծ բարոնուհին, ընդհատելով Վրոնսկու խոսակցությունն ընկերոջ հետ։— Մենք այստեղ ամուսնացրինք ձեզ։ Թերի՞ք ձեր կնոջը։

— Ո՛չ, բարոնուհի։ Ես ծնված եմ գնչու և կմեռնեմ գնչու։

— Ավելի լավ, ավելի լավ։ Տվե՛ք ձեր ձեռքը։

Եվ բարոնուհին, բաց չթողնելով Վրոնսկուն, սկսեց պատմել նրան, կատակներով համեմելով, կյանքի իր վերջին ծրագրերը և հարցրեց նրա խորհուրդը։

— Նա ո՛չ մի կերպ չի ուզում ապահարզան տալ ինձ, դեհ, ի՞նչ պիտի անեմ ես։ (Նա-ն բարոնուհու ամուսինն էր)։ Այժմ

ես ուզում եմ դատ բաց անել։ Ի՞նչ խորհուրդ կտաք դուք։ Կամերովսկի, աչք ունեցեք սուրճի վրա՝ թափվեց, տեսնում եք, ես զբաղված եմ գործերով։ Ես ուզում եմ դատ բաց անել, որովհետև ինձ հարկավոր է իմ կարողությունը։ Արդյոք դուք հասկանո՞ւմ եք այս տխմարությունը, իբր ես հավատարիմ չեմ նրան,— արհամարհանքով ասաց բարոնուհին,— և դրա հիման վրա նա ուզում է օգտվել իմ կալվածքից։

Վոռնսկին բավականությամբ լսում էր սիրունիկ կնոջ այդ ուրախ թոթովանքը, հավանության խոսքեր էր ասում, տալիս էր կես լուրջ, կես կատակով խորհուրդներ և ընդունեց այդ կարգի կանանց հետ վարվելու իր սովորական տոնը։ Պետերբուրգյան իր շրջանի մարդիկ նրա կարծիքով բաժանվում էին երկու, իրար բոլորովին հակադիր, տեսակի։ Մեկը ստորին տեսակն էր. գռեհիկ, տխմար և, որ գլխավորն է, ծիծաղելի մարդիկ, որոնք հավատում են այն բանին, թե մի տղամարդը պիտի ապրի մի կնոջ հետ, որի հետ պսակվել է, թե աղջիկը պիտի լինի անմեղ, կինը՝ ամոթխած, տղամարդը՝ առնական, ժուժկալ ու հաստատակամ. պիտի դաստիարակել երեխաներին, վաստակել իր հացը, վճարել պարտքերը և դրա պես զանազան այլ տխմարություններ։ Դա հնապաշտ ու ծիծաղելի մարդկանց տեսակն էր։ Բայց կար մարդկանց, իսկական մարդկանց մի տեսակը, որին պատկանում էին իրենք ամենքը, որի մեջ պետք է լինել,— սա գլխավորն է,— էլեգանտ, մեծահոգի, վեհանձն, համարձակ, ուրախ, անձնատուր լինել ամեն կրքի, առանց կարմրելու, և ծիծաղել մնացած ամեն ինչի վրա։ Վոռնսկին միայն առաջին բոպեին շշմեց բոլորովին մի այլ աշխարհի տպավորություններից, որ նա բերել էր իր հետ Մոսկվայից, բայց անմիջապես, ասես ոտքերը մտցներ հին կոշիկների մեջ, նա մտավ իր առաջվա ուրախ ու հաճելի աշխարհը։

Սուրճն այդպես էլ չեփվեց, այլ ցայտցրեց ամենքի վրա ու թափվեց և առաջ բերեց հենց այն, ինչ պետք էր, այսինքն՝ առիթ տվեց աղմուկի ու ծիծաղի և ներկեց Բանկագին գորգն ու բարոնուհու զգեստը։

— Դեհ, այժմ մնաք բարի, թե չէ դուք երբեք չեք լվացվի, և իմ խղճի վրա կծանրանա կարդին մարդու գլխավոր հանցանքը՝ անմաքրասիրությունը։ Ուրեմն, դուք խորհուրդ եք տալիս դանակը դնել բկին։

— Անպայման, և այնպես, որ ձեր ձեռքը մոտ լինի նրա շրթունքներին։ Նա կհամբուրի ձեր ձեռքը, և ամեն ինչ կվերջանա բարեհաջող,— պատասխանեց Վոռնսկին։

— Այդպես ուրեմն, այսօր ֆրանսիական թատրոնում,— և բարոնուհին անհայտացավ, խշշացնելով զգեստը։

Կամերովսկին նույնպես վեր կացավ, իսկ Վոռնսկին, առանց սպասելու նրա դուրս գնալուն, ձեռք տվեց նրան ու գիմեց դեպի զուգարան։ Մինչ նա լվացվում էր, Պետրիցկին համառոտակի նկարագրեց նրան իր գրությունը, թե որքան փոխվել էր այն Վոռնսկու հեռանալուց հետո։ Դրամ չկա։ Հայրն ասել էր, որ ոչինչ չի տա և չի վճարի պարտքերը։ Դերձակն ուզում է բանտ դնել, իսկ մյուսը նույնպես սպառնում է նստեցնելու հեռանկարով։ Գնդի հրամանատարը հայտարարել է, որ եթե այդ սկանդալները չվերջանան պետք է հեռանալ գնդից։ Բարոնուհին ձանձրացրել, հոգին բերանն է հասցրել. մանավանդ նրանով, որ ամբողջ ժամանակ դրամ է առաջարկում։ Մինչդեռ. կա մի կին, նա ցույց կտա Վոռնսկուն, հրաշալիք է, սքանչելիք, զուտ արևելյան ոճով, «genre ստրկուհի Ռեբեկա, հասկանո՞ւմ ես»։ Բերկոշևի հետ ինքը նույնպես կռվել է, և նա ուղել է մենամարտի միջնորդներ ուղարկել։ բայց իհարկե, դրանից բան դուրս չի գա։ Իսկ առհասարակ ամեն ինչ սքանչելի է և չափազանց ուրախ։ Ու թույլ չտալով, որ ընկերը խորանա իր գրության մանրամասների մեջ, Պետրիցկին սկսեց պատմել բոլոր հետաքրքրական նորությունները։ Լսելով Պետրիցկու այնքան ծանոթ պատմությունները իր եռամյա բնակարանի այնքան ծանոթ պարագայի մեջ, Վոռնսկին ապրում էր սովորական և անհոգ պետերբուրգյան կյանքին վերադառնալու հաճելի զգացում։

— Չի՛ կարող պատահել,— բղավեց Վոռնսկին, բաց թողնելով լվացարանի ծորակը, որտեղից ջուր էր ծորացնում իր կարմիր առողջ վզի վրա։ — Չի՛ կարող պատահել,— բղավեց նա, լսելով այն տեղեկությունը, իբր Լորան թողել է Ֆերտինհոֆին ու կապվել Միլեևի հետ։ Իմ նա առաջվա պես էլի՞ տրիմար է ու դժգոհ։ Իսկ Բուզուլուկո՞վն ինչ է անում։

— Ա՜խ, Բուզուլուկովի հետ մի բան է պատահել, հրաշա-

լի բան,— բղավեց Պետրիցկին։ — Դու գիտես, որ պարահանդեսների համար նա գժված է և պալատական ոչ մի պարահանդես բաց չի թողնում։ Գնում է մեծ պարահանդես՝ նոր սաղավարտով։ Դու տեսե՞լ ես նոր սաղավարտները։ Շատ լավն են, ավելի թեթև։ Այսպես ուրեմն, կանգնած է նա... Ո՛չ, գու լսիր։

— Լսում եմ, լսում,— սրբվելով փափուկ երեսսրբիչով, պատասխանեց Վռոնսկին։

— Նրա մասով գալիս-անցնում է մեծ իշխանուհին՝ ինչոր գեսպանի հետ, և Բուզուլուկովի կույր բախտից՝ նրանք սկսում են խոսել նոր սաղավարտների մասին։ Մեծ իշխանուհին ուզում է ցույց տալ նոր սաղավարտը... Տեսնում են, կանգնած է մեր ագավնյակը։ (Պետրիցկին ներկայացրեց, թե ինչպե՛ս է նա կանգնած եղել սաղավարտով)։ Մեծ իշխանուհին խնդրում է տալ իրեն սաղավարտը, նա չի տալիս։ Ի՞նչ բան է գա։ Ամեն կողմից նրան այջով-գլխով են անում, մոայլվում են։ Տո՛ւր։ Չի տալիս։ Քարացել է։ Կարող ես երևակայել, թե ի՛նչ... Հենց որ նա... ինչպե՛ս է նրա անունը... ուզում է վերցնել սաղավարտը... սա չի տալիս... բայց նա գլխից թոցնում է և տալիս մեծ իշխանուհուն։ Ահա՛ նոր սաղավարտը, ասում է մեծ իշխանուհին։ Շուռ է տալիս սաղավարտը, և ի՞նչ, կարո՞ղ ես երևակայել, այնտեղից չլի՞մի — թափվում են տանձ, կոնֆետներ, երկու ֆունտ կոնֆետ... Հավաքած է եղել, աղավնյակը։

Վռոնսկին թուլացավ ծիծաղից։ Հետո էլ երկար ժամանակ, խոսելով սրդեն ուրիշ բանի մասին, բռնկվում էր իր առողջ ծիծաղով, ցուցադրելով ամուր, խիտ ատամները, երբ հիշում էր սաղավարտի պատմությունը։

Բոլոր նորությունները իմանալուց հետո Վռոնսկին սպասավորի օգնությամբ հագավ համազգեստը և գնաց ներկայանալու։ Ներկայանալուց հետո նա մտադիր էր գնալ եղբոր մոտ, Բետսիի մոտ, և անել մի քանի այցեր այն հաշվով, որ սկսեր հաճախել այն բարձր հասարակությունը, որտեղ կարող էր հանդիպել Կարենինային։ Ինչպես միշտ լինում է Պետերբուրգում, նա տնից դուրս գնաց այն հաշվով, որ չվերադառնա մինչև ուշ գիշեր։

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

I

Զմեռվա վերջին Շչերբացկիների տանը տեղի ունեցավ կոնսիլիում, որը պիտի որոշեր, թե ի՛նչ դրության մեջ է Կիտիի առողջությունը և ի՛նչ պետք է անել նրա թուլացող ուժերը վերականգնելու համար։ Կիտին հիվանդ էր, և գարունը մոտենալու հետ նրա առողջությունն ավելի վատթարանում էր։ Տեղային բժիշկը տալիս էր նրան Ական յուղ, հետո երկաթափթիլներ, ապա դժոխաքար, բայց որովհետև ո՛չ մեկը, ո՛չ մյուսը, ո՛չ երրորդը չօգնեց, և որովհետև նա խորհուրդ էր տալիս գարունը բացվելիս գնալ արտասահման, ուստի հրավիրել էին հոչակավոր բժշկին։ Հոչակավոր բժիշկը, տակավին երիտասարդ, շատ գեղեցիկ տղամարդ, պահանջեց քննել հիվանդին։ Թվում էր, նա առանձին բավականությամբ էր ասում, թե կուսական ամոթիածությունը բարբարոսության մնացորդ է միայն, և թե չկա ավելի բնական բան, քան այն, որ տակավին չպառաված տղամարդը շոշափի մերկացած ջահել աղջկան։ Նրա կարծիքով, դա բնական էր, որովհետև ինքն այդ բանն անում էր ամեն օր և այդ անելիս ոչինչ վատ բան չէր զգում ու մտածում, ինչպես թվում էր նրան, այդ պատճառով ամոթխածությունն աղջկա մեջ նա ո՛չ միայն համարում էր բարբարոսության մնացորդ, այլև վիրավորանք իր համար։

Պետք է հնազանդվել, որովհետև, չնայած որ բոլոր բժիշկները սովորել էին միևնույն դպրոցում, ծեռք էին բերել միևնույն դիպլոմները միևնույն գրքերից, և չնայած որ ասում էին, թե այդ հոչակավոր բժիշկը վատ բժիշկ է, բայց իշխանուհու տանը և նրա շրջանում ընդունված էր, հայտնի չէ,

թե ինչո՞ւ, իբր այդ հռչակավոր բժիշկը գիտե ինչ-որ առանձնահատուկ բան և նա՛ միայն կարող է փրկել Կիտիին։ Ամոթից շշմած ու գլուխը կորցրած հիվանդին ուշադրությամբ քննելուց և թխկթխկացնելուց հետո հռչակավոր բժիշկը ինամքով ձեռքերը լվաց ու կանգնած ընդունարանում, խոսում էր իշխանի հետ։ Իշխանը մոայլվում էր, թեթև հազում, լսելով բժշկին։ Նա, որպես կյանքի բովից անցած, ո՛չ տխմար ու ո՛չ հիվանդ մարդ, չէր հավատում բժշկությանը և իր հոգում չարանում էր այս ամբողջ կոմեդիայի պատճառով, մանավանդ որ նա համարյա միակ մարդն էր, որ լիովին հասկանում էր Կիտիի հիվանդության պատճառը։ «Իսկական փչան», մտածում էր նա, իր մտքում կպցնելով այդ անունը հռչակավոր բժշկին որսորդական բառարանից, և լսելով նրա շաղակրատանքը աղջկա հիվանդության հատկանիշների մասին։ Մինչդեռ, բժիշկը հաղիվ էր զսպում իր արհամարանքի արտահայտությունն այդ պառավ աղնվականի նկատմամբ և դժվարությամբ էր իշնում մինչև նրա հասկացողության ցածր մակարդակը։ Նա հասկանում էր, որ ծերուկի հետ խոսելու կարիք չկա և որ այս տան գլուխը մայրն է։ Նա մտադիր էր մոր առաջ շաղ տալ իր մարգարիտները։ Այդ ժամանակ իշխանուհին տնային բժշկի հետ մտավ ընդունարան։ Իշխանը հեռացավ, աշխատելով, որ չնկատվի, թե իր համար որքան ծիծաղելի էր այս ամբողջ կոմեդիան։ Իշխանուհին շփոթված էր և չգիտեր, թե ի՛նչ անի։ Նա իրեն մեղավոր էր զգում Կիտիի առաջ։

— Դե՛հ, բժիշկ, վճռեք մեր բախտը,— ասաց իշխանուհին։— Ասեք ինձ բոլորը։— «Արդյոք հույս կա՞», ուզում էր հարցնել նա, բայց շրթունքները դողացին, և նա չկարողացավ արտասանել այդ հարցը։— Ի՞նչ, բժիշկ։

— Այժմ, իշխանուհի, կխորհրդակցեմ իմ կոլեգիայի հետ և ապա պատիվ կունենամ զեկուցելու ձեզ իմ կարծիքը։

— Ուրեմն մենք հեռանա՞նք։

— Ինչպես հաճելի է ձեզ։

Իշխանուհին հառաչեց ու դուրս գնաց։

Երբ բժիշկները մնացին մենակ, տնային բժիշկն սկսեց երկչոտությամբ հայտնել իր կարծիքը, որ հանգում էր այն ընդհանրին, թե սկսվում է թոքախտ, բայց... և այլն։ Հռչակավոր

բժիշկը լսում էր նրան ու նրա խոսքի կեսին նայեց իր ոսկե, խոշոր ժամացույցին։

— Այսպե՞ս,— ասաց նա։— Սակայն...

Տնային բժիշկը հարգալից լռեց իր խոսքի կեսին։

— Ինչպես դուք գիտեք, մենք չենք կարող որոշել թոքախտի սկիզբը. որոշակի ոչինչ չկա՝ մինչև երևան չգան պալարներ։ Բայց կարող ենք ենթադրել, կասկածել։ Եվ ցուցանիշներ կան, վատ սնունդ, ջղերի գրգռվածություն և այլն։ Հարցը դրված է այսպես, թոքախտի կասկած ունենալու դեպքում ի՛նչ պետք է անել, որպեսզի կարելի լինի պահպանել սնունդը։

— Բայց չէ՞ որ դուք գիտեք, այստեղ միշտ թաքնված են լինում բարոյական, հոգեկան պատճառներ,— նուրբ ժպիտով թույլ տվեց առարկել տնային բժիշկը։

— Այո՛, դա հասկանալի է ինքնին,— պատասխանեց հռչակավոր բժիշկը, նորից նայելով ժամացույցին։— Ներողություն. արդյոք, պատրա՞ստ է Յաուզի կամուրջը, թե՞ պետք է դեռ պտույտ տալ,— հարցրեց նա։ Ա՛, պատրաստ է։ Դե՛, ուրեմն՝ ես քսան րոպեից կարող եմ լինել այնտեղ։ Այսպես ահա, մենք ասում էինք, որ հարցը դրված է այսպես. պահպանել սնունդը և կարգի բերել ջղերը։ Մեկը կապված է մյուսի հետ, պետք է գործել շրջանի երկու կողմերի վրա։

— Իսկ արտասահման գնա՞լը,— հարցրեց տնային բժիշկը։

— Ես թշնամի եմ արտասահման գնալուն։ Բարեհաճեցեք տեսնել. եթե սկսվում է թոքախտ, որը մենք չենք կարող իմանալ, ուրեմն արտասահման գնալը չի օգնի։ Անհրաժեշտ է այնպիսի միջոց, որը պահպաներ սնունդը և չվնասեր։

Ու հռչակավոր բժիշկը սկսեց նկարագրել Սոդենի ջրերով բուժելու իր պլանը, որոնք նշանակելիս՝ գլխավոր նպատակը բացահայտորեն այն է, որ նրանք վնասել չեն կարող։

Տնային բժիշկը լսեց ուշադիր ու հարգալից։

— Բայց արտասահման գնալու օգտին ես առաջ կքաշեի սովորությունների փոփոխությունը, այն պայմաններից հեռանալը, որոնք հիշողություններ են առաջ բերում, և հետո՝ մա՛յրն է ուզում,— ասաց նա։

— Ա՛։ Այդ դեպքում՝ ի՞նչ արած, թող գնան. միայն կվնաս-

սեն այդ գերմանացի շառլատանները... Հարկավոր է, որ լըսեն... Ուրեմն թող գնան։

Ու նորից նայեց ժամացույցին։

— Օ՜, արդեն ժամանակն է,— և քայլեց դեպի դուռը։

Հռչակավոր բժիշկը հայտարարեց իշխանուհուն (վայելչությանն զգացումը թելադրեց այդ), որ ինքը մի անգամ էլ պիտի տեսնի հիվանդին։

— Ինչպե՞ս, էլի մի անգամ քննե՞լ,— սարսափով բացականչեց մայրը։

— Օ՜, ո՜չ, ինձ պետք են մի քանի մանրամասներ, իշխանուհի։

— Խնդրեմ։

Եվ մայրը, բժշկի ուղեկցությամբ, մտավ Կիտիի ընդունարանը։ Նիհարած ու կարմրած, իր կրած ամոթի հետևանքով՝ աչքերի մեջ մի առանձին փայլ, Կիտին կանգնած էր սենյակի մեջտեղում։ Երբ մտավ բժիշկը, Կիտին բորբոքվեց և նրա աչքերը լցվեցին արցունքով։ Նրա ամբողջ հիվանդությունը և բժշկությունը նրան թվում էին այնպես տխմար, նույնիսկ ծիծաղելի բան։ Իր բժշկությունը Կիտիին թվում էր նույնքան ծիծաղելի, ինչպես ջարդված սկահակի կտորների ամբողջացումը։ Նրա սի՜րտն էր փշրվել։ Իսկ նրանք ուզում էին իրեն բժշկել հաբերով ու դեղափոշիներո՞վ։ Բայց չէր կարելի վիրավորել մորը, մանավանդ որ մայրը մեղավոր էր համարում իրեն։

— Նեղություն քաշեք նստելու, իշանազնուհի,— ասաց հռչակավոր բժիշկը։

Նա ժպտադեմ նստեց Կիտիի դիմաց, բռնեց զարկերակը և կրկին սկսեց տալ ձանձրալի հարցեր։ Կիտին պատասխանում էր նրան ու հանկարծ բարկանալով վեր կացավ։

— Ներեցեք ինձ, բժիշկ, բայց դա իսկապես ոչնչի չի հանգի, և դուք երեքակուն անգամ ինձ հարցնում եք միևնույն բաների մասին։

Հռչակավոր բժիշկը չվիրավորվեց։

— Հիվանդոտ զրգռվածություն,— ասաց նա իշխանուհուն, երբ Կիտին դուրս գնաց։— Սակայն, ես վերջացրի...

Եվ բժիշկն իշխանուհու՝ որպես բացառիկ խելոք կնոջ առաջ, գիտականորեն որոշեց իշխանազնուհու դրությունը և եզրափակեց հրահանգով, թե ինչպե՜ս խմել այն ջրերը, որոնք

պետք չէին։ Այն հարցին,— գնա՞լ, արդյոք, արտասահման,— բժիշկը պատասխանեց, խորասուզվելով մտքերի մեջ, կարծես, վճռում էր դժվարին խնդիր։ Վերջապես կայացավ այսպիսի որոշում. գնալ, բայց չհավատալ շառլատաններին և ամեն բանում դիմել իրեն։

Կարծես, ուրախալի մի բան պատահեց բժշկի հեռանալուց հետո։ Մայրն ուրախացավ, վերադառնալով աղջկա մոտ, և Կիտին ձևացավ, իբր ինքն էլ ուրախացավ։ Նա հաճախ, համարյա միշտ, ստիպված էր այժմ ձևանալ։

— Ճիշտ եմ ասում, ես առողջ եմ, maman։ Բայց եթե դուք ուզում եք գնալ,— ասաց նա և աշխատելով ցույց տալ իբր հետաքրքրվում է առաջիկա ուղևորությամբ, սկսեց խոսել մեկնելու համար նախապատրաստությունների մասին։

II

Բժշկից անմիջապես հետո եկավ Դոլլին։ Նա գիտեր, որ այդ օրը պիտի կոնսիլիում լիներ և չնայած, որ ինքը նոր էր վեր կացել ծննդաբերությունից (ամեուվա վերջին նա ծնեց մի աղջիկ), չնայած, որ նա ինքն ուներ իր սեփական շատ հոգսերն ու վիշտը, եկավ իմանալու Կիտիի վիճակի մասին, որը վճռվելու էր այսօր, թողնելով տանը ծծկեր երեխային և հիվանդացած աղջկան։

— Հը՜, ի՞նչ կա,— ասաց նա, մտնելով ընդունարան և չըհանելով դլխարկը։— Բոլորդ ուրախ եք։ Հավանորեն ամեն ինչ լա՞վ է։

Փորձեցին նրան պատմել այն, ինչ ասաց բժիշկը, բայց բանից դուրս եկավ, որ ո՜չ մի կերպ չի կարելի հաղորդել բըժշկի ասածը, թեև նա խոսում էր շատ սահուն ու երկար։ Հետաքրքրական էր միայն այն, որ վճռված էր գնալ արտասահման։

Դոլլին ակամա հառաչեց։ Նրա լավագույն բարեկամը՝ քույրը, գնում է։ Իսկ նրա կյանքն ուրախ չէր։ Ստեպան Արկադևիչի հետ հաշտվելուց հետո հարաբերությունները դարձան նվաստացուցիչ։ Աննայի կատարած զողումը դուրս եկավ ո՜չ ամուր, և ընտանեկան համաձայնությունը նորից խախտվեց, խզվեց նույն տեղում։ Որոշակի ոչինչ չկար, բայց Ստեպան

Արկադևիչը համարյա երբեք տանը չէր լինում, երբեմն էլ համարյա երբեք չէր լինում տանը, և անհավատարմության կասկածները մշտապես տանջում էին Դոլլիին, ու նա դրանք վանում էր իրենից հեռու, վախենալով խանդի փորձած տառապանքից։ Արդեն մի անգամ ապրած խանդի առաջին պոռթկումն այլևս չէր կարող կրկնվել նույնիսկ անհավատարմության բացվելը չէր կարող այլևս այնպես ազդել նրա վրա, ինչպես առաջին անգամ։ Այդպիսի հայտնաբերումն այժմ կարող էր միայն զրկել նրան ընտանեկան սովորություններից, և Դոլլին թույլ էր տալիս խաբել իրեն, արհամարհելով այդ թուլության համար մարդուն ու ամենից ավելի՝ իրեն։ Դրանից զատ, մեծ ընտանիքի հոգսերը շարունակ տանջում էին նրան. մեկ՝ կարգին առաջ չէր գնում ծծկեր երեխային կերակրելու գործը, մեկ՝ դայակը հեռացավ, մեկ էլ, ինչպես այժմ, հիվանդացավ երեխաներից մեկը։

— Է՛, ինչպե՞ս են ձերոնք,— հարցրեց մայրը։

— Ա՛խ, maman, առանց այդ էլ դուք վիշտ շատ ունեք։ Լիլին հիվանդացել է, վախենում եմ, որ քութեշ լինի։ Ես հիմա եկա իմանալու, թե չէ ոտս կապած կնստեմ տանը, եթե,— աստված չանի,— քութեշ լինի։

Բժշկի գնալուց հետո ծերունի իշխանը նույնպես դուրս եկավ իր առանձնասենյակից և այտը դեմ անելով Դոլլիին ու խոսելով նրա հետ՝ դիմեց կնոջը։

— Ի՞նչ վճռեցիք, գնո՞ւմ եք։ Իսկ ի՞նչ եք ուզում անել ի՛նձ հետ։

— Ես կարծում եմ, դու պիտի մնաս, Ալեքսանդր,— ասաց կինը։

— Ինչպես կուզեք։

— Maman, իսկ ինչո՞ւ հայրիկն էլ չգա մեզ հետ,— հարցրեց Կիտին։— Ավելի ուրախ կլինի և՛ նրա, և՛ մեզ համար։

Ծերունի իշխանը կանգնեց ու ձեռքով շոյեց Կիտիի մազերը։ Աղջիկը բարձրացրեց դեմքը և, բռնի ժպտալով, նայում էր հորը։ Կիտին միշտ թվում էր, որ ընտանիքում ամենից ավելի լավ հայրն է հասկանում իրեն, թեև քիչ էր խոսում իր մասին։ Կիտին, որպես ամենափոքրը, հոր սիրելին էր, և նրան թվում էր, որ հոր սերը դեպի ինքը ծերունուն դարձնում

էր ավելի թափանցող։ Երբ Կիտիի հայացքը հանդիպեց այժմ հոր կապույտ, բարի աչքերին, որոնք շեշտակի նայում էին իրեն, նրան թվաց, որ հայրն ամբողջովին տեսնում է իրեն և հասկանում է այն վատ բանը, որ կատարվում է իր մեջ։ Կիտին, կարմրելով, ձգվեց դեպի հայրը, սպասելով համբույրի, բայց հայրը ցնցեց միայն նրա մազերը և ասաց։

— Է՛հ, այդ անմիտ շինյոնները։ Ձեռքդ չի էլ հասնում սեփական աղջկադ, և դու գուրգուրում ես սատկած կանանց մազերը։ Դե՛հ, ի՞նչ կա, Դոլլինկա,— դիմեց նա ավագ աղջկան,— ի՞նչ է անում քո կոզիրը։

— Ոչինչ, հայրիկ,— պատասխանեց Դոլլին, հասկանալով, որ խոսքն իր ամուսնու մասին է։— Շարունակ գնում է այստեղ-այնտեղ, ես համարյա չեմ տեսնում նրան,— չկարողացավ չավելացնել նա հեգնական ժպիտով։

— Նա դեռ չի՞ գնացել գյուղ՝ անտառը ծախելու։

— Ո՛չ, պատրաստվում է գնալու։

— Ահա՛ թե ի՛նչ,— ասաց իշխանը։— Ուրեմն, ե՞ս էլ պատրաստվեմ։ Լսում եմ,— դիմեց նա կնոջը, նստելով։— Իսկ դու, Կատյա, ա՛յ թե ի՛նչ արա,— ավելացրեց նա, դառնալով կրտսեր աղջկան,— մի օր, մի գեղեցիկ օր, զարթնիր ու անա ինքդ քեզ. չէ՞ որ ես բոլորովին առողջ եմ և ուրախ, ու վաղ առավոտյան ցրտին նորից գնանք հայրիկի հետ զբոսնելու։ Հա՞։

Թվում էր, թե շատ հասարակ բան էր այն, ինչ ասաց հայրը, բայց Կիտին այդ խոսքերը լսելիս շփոթվեց ու իրեն կորցրեց, ինչպես բռնված հանցագործ։ «Այո՛, նա բոլորը գիտե, բոլորը հասկանում է և այդ խոսքերով ասում է ինձ, որ թեպետ և ամոթ է, բայց պետք է մոռացության տալ իր ամոթը»։ Կիտին սիրտ չարեց որևէ բան պատասխանելու հորը. կարծես ուզում էր պատասխանել, սակայն հանկարծ լաց եղավ ու դուրս փախավ սենյակից։

— Ահա քո կատակները,— հարձակվեց իշխանուհին ամուսնու վրա։— Դու միշտ...— սկսեց նա իր կշտամբական խոսքը։

Իշխանը բավական երկար ժամանակ լսում էր կնոջ կշտամբանքներն ու լուռ էր, բայց նրա դեմքն ավելի ու ավելի մռայլվում էր։

— Նա այնպես մեղք է, խղճուկը, այնպես թշվառ, իսկ դու չես զգում, որ նա տանջվում է պատճառը հիշեցնող ամեն ակնարկից։ Ախ, այդպես սխալվել մարդկանց նկատմամբ,— ասաց իշխանուհին, և նրա տոնի փոփոխությունից հասկացան՝ թե Դոլլին, թե՛ իշխանը, որ նա խոսում է Վրոնսկու մասին։— Ես չեմ հասկանում, թե ինչո՞ւ օրենք չկա այդպիսի գարշելի, անազնիվ մարդկանց դեմ։

— Ա՜խ, երանի չլսեի այդ խոսքերը,— մռայլ բացականչեց իշխանը, վեր կենալով բազկաթոռից ու կարծես ուզենալով դուրս գնալ, բայց կանգ առնելով դռան մեջ։— Օրենք կա, անուշիկս, և քանի որ դու ինձ ստիպեցիր արտահայտվել, ես կասեմ քեզ, թե ո՞վ է մեղավոր այս ամբողջ պատմության մեջ. դո՛ւ և դո՛ւ, միայն դո՛ւ։ Այդպիսի սխրագործների դեմ օրենքներ եղել են միշտ ու կան։ Այո՛, եթե չլիներ այն, ինչ չպիտի լիներ. ես ծեր եմ, բայց ես կկանգնեցնեի նրան, այդ ֆրանտին, բարիերի առաջ։ Այո՛, իսկ հիմա բժշկեք, կանչեք ձեզ մոտ այդ շառլատաններին։

Թվում էր, թե իշխանն էլի շատ բան ուներ ասելու, բայց հենց որ իշխանուհին լսեց նրա տոնը, նա, ինչպես դա միշտ պատահում էր լուրջ հարցերում, իսկույն փափկեց ու զղջաց։

— Alexandre, Alexandre,— շշնջում էր իշխանուհին, մոտենալով ամուսնուն և հեկեկում։

Հենց որ նա արտասվեց, իշխանն էլ հանդարտեց։ Նա մոտեցավ կնոջը։

— Դե՛, լավ, հերիք է։ Գիտեմ, քեզ համար էլ ծանր է։ Ի՞նչ արած։ Մեծ դժբախտություն չէ։ Աստված ողորմած է... շնորհակալ եղիր...— ասում էր նա, արդեն ինքն էլ չիմանալով, թե ի՞նչ է ասում, և պատասխանելով իշխանուհու թաց համբույրին, որն զգաց իր ձեռքին։ Եվ իշխանը դուրս գնաց սենյակից։

Դեռ այն ժամանակ, հենց որ Կիտին լայակոմած դուրս եկավ սենյակից, Դոլլին իր մայրական, ընտանեկան սովորությամբ իսկույն տեսավ, որ այստեղ իրեն սպասում է կանացի գործ, և պարտաստվեց կատարելու այն։ Նա հանեց գլխարկը և բարոյապես թևերը քշտելով, պատրաստվեց գործելուն։ Երբ մայրը հարձակվեց հոր վրա, նա փորձում էր պահել, զրաստել մորը, որչափով թույլ էր տալիս դա դստերական հարգանքը։ Իշխանի պոռթկումի ժամանակ նա լուռ էր. նա ամաչում էր մոր փոխարեն ու քնքշություն էր զգում դեպի հայրը՝ նրա անմիջապես դրսևորած բարության համար. բայց երբ հայրը հեռացավ, Դոլլին պատրաստվում էր անել գլխավորը, ինչ պետք էր, այսինքն՝ գնալ Կիտիի մոտ ու հանգստացնել նրան։

— Ես վաղուց էի ուզում ասել ձեզ, maman, արդյոք դուք գիտե՞ք, որ Լևինն ուզում էր առաջարկություն անել Կիտիին, երբ նա այստեղ էր վերջին անգամ։ Նա ասել էր Ստիվային։

— Հետո՞ ինչ։ Ես չեմ հասկանում...

— Այնպես որ, կարող է պատահել, Կիտին մերժել է նրան... Կիտին ոչինչ չի՞ ասել ձեզ։

— Ոչ, նա ոչինչ չի ասել ո՛չ մեկի, ո՛չ մյուսի մասին. նա չափազանց հպարտ է, բայց ես գիտեմ, որ այս բոլորը դրանից է...

— Այո՛, երևակայեցեք, եթե Կիտին մերժել է Լևինին,— նա երբեք չէր մերժի, եթե չլիներ մյուսը, ես գիտեմ... Եվ հետո այդ մյուսը ի՞նչ սոսկալի խաբեց Կիտիին։

Իշխանուհու համար չափազանց սարսափելի էր այն միտքը, որ ինքը անչափ մեղավոր է աղջկա առաջ, ուստի բարկացավ։

— Ա՜խ, ես ոչինչ չեմ հասկանում։ Ներկայումս ամեն քայլափոխում ուզում են իրենց խելքով ապրել, մորը ոչինչ չեն ասում, իսկ հետո ահա թե...

— Maman, ես գնամ նրա մոտ։

— Գնա։ Մի՞թե ես արգելում եմ քեզ,— ասաց մայրը։

III

Մտնելով Կիտիի փոքրիկ առանձնասենյակը, vieux saxe[1] տիկնիկներով զարդարված վարդագույն, սիրունիկ սենյակը, նույնպես դեռափթիթ, վարդաբույր և ուրախ, ինչպես ինքը Կիտին էր դեռ երկու ամիս առաջ, Դոլլին հիշեց թե ինչպե՛ս հարդարում էին նրանք միասին անցյալ տարի այդ սենյակը, համակված ուրախությամբ ու սիրով։ Նրա սիրտը սառեց, երբ տեսավ Կիտիին, նստած դռանը մոտիկ ցածր աթոռին և անշարժ աչքերը հառած գորգի անկյունին։ Կիտին նայեց քրոջը,

[1] Հին սաքսոնական ճենապակուց։

և նրա դեմքի պաղ, մի փոքր խիստ արտահայտությունը չփոխվեց։

— Ես այժմ կգնամ ու կփակվեմ տանը, դու էլ չես կարողանա ինձ մոտ գալ,— ասաց Դարիա Ալեքսանդրովնան, նստելով քրոջ մոտ։— Ես ուզում եմ խոսել քեզ հետ։

— Ինչի՞ մասին,— վախեցած բարձրացնելով գլուխը, արագ հարցրեց Կիտին։

— Էլ ինչի՞ մասին, եթե ոչ քո վշտի։

— Ես վիշտ չունեմ։

— Հերի՛ք է, Կիտի։ Մի՞թե դու կարծում ես, որ ես կարող եմ չիմանալ։ Ես գիտեմ բոլորը։ Եվ հավատա ինձ, դա այնպես չնչին բան է... Մենք ամենքս անցել ենք այդ ուղին։

Կիտին լուռ էր, և նրա դեմքն ուներ խիստ արտահայտություն։

— Նա արժանի չէ, որ դու նրա պատճառով տանջվես,— շարունակեց Դարիա Ալեքսանդրովնան, իսկույն անցնելով բուն խնդրին։

— Այո՛, որովհետև նա արհամարհեց ինձ,— դողդոջուն ձայնով ասաց Կիտին։— Մի՛ խոսիր։ Խնդրեմ, մի՛ խոսիր։

— Ո՞վ ասաց քեզ այդ բանը։ Ո՛չ ոք այդպիսի բան չի ասել։ Ես համոզված եմ, որ նա սիրահարված էր քեզ և մնում է սիրահարված, բայց...

— Ա՜խ, ինձ համար ամենից ավելի սարսափելին այդ ցավակցություններն են,— ճչաց Կիտին, հանկարծ բարկանալով։ Նա շուռ եկավ աթոռի վրա, կարմրեց և արագ շարժեց մատները, սեղմելով մերթ մեկ, մերթ մյուս ձեռքով դոտու ճարմանդը։ Դոլլին գիտեր իրը մի ձեռքից մյուսը տալու քրոջ այդ սովորությունը, երբ նա սկսում էր տաքանալ։ Նա գիտեր, որ Կիտին ընդունակ է բորբոքման րոպեին մոռանալ ինքն իրեն և ասել շատ ավելորդ ու անախորժ բաներ, և Դոլլին ուզում էր հանգստացնել նրան, բայց արդեն ուշ էր։

— Ի՞նչ, ի՞նչ ես ուզում դու զգալ տալ ինձ, ի՞նչ,— ասում էր Կիտին արագ։— Այն, որ ես սիրահարված էի մի մարդու, որն ինձ ճանաչել չէր ուզում, և որ ես մեռնում եմ դեպի նա տածած իմ սիրո՞ւց։ Ու դա ասում է ինձ քույրս, որը կարծում է, թե... թե... թե ցավակցո՞ւմ է... Չեմ ուզում ես այդ ցավակցությունն ու ձևացումը։

— Կիտի, դու իրավացի չես։

— Ինչո՞ւ ես տանջում ինձ։

— Ընդհակառակը... ես տեսնում եմ, որ դու վշտացած ես...

Բայց Կիտին, տարված վրդովմունքով, չէր լսում քրոջը։

— Ես վշտաբեկվելու և մխիթարվելու բան չունեմ։ Ես այնքան հպարտ եմ, որ երբեք թույլ չեմ տա ինձ սիրել մի մարդու, որը չի սիրում ինձ։

— Ես չեմ էլ ասում... Մի բան. ասա՛ ինձ ճիշտը,— թոթովեց Դարիա Ալեքսանդրովնան, վերցնելով քրոջ ձեռքը,— ասա՛ ինձ, Լևինն ասե՞լ է քեզ...

Լևինի մասին հիշատակությունը, թվում էր, զրկեց Կիտիին վերջին ինքնազսպումից։ Նա վեր թռավ աթոռից և նետելով ճարմանդը հատակին ու ձեռքերով արագ շարժումներ անելով, խոսեց.

— Ինչո՞ւ հիշատակեցիր այստեղ Լևինին։ Չեմ հասկանում, ինչի՞ համար ես դու ուզում տանջել ինձ։ Ես ասացի և կրկնում եմ, որ ես հպարտ եմ ու երբեք, երբեք չեմ անի այն, ինչ անում ես դու, վերադառնալու այն մարդու մոտ, որը դավաճանել է քեզ, որը սիրել է ուրիշ կնոջ։ Ես այդ բանը չեմ հասկանում։ Դու կարող ես, բայց ես չեմ կարող։

Սակայն, այդ խոսքերն ասելուց հետո, նա նայեց քրոջն ու տեսնելով, որ Դոլլին լուռ էր, գլուխը տխուր կախ գցած, Կիտին, փոխանակ սենյակից դուրս գնալու, ինչպես մտադիր էր, նստեց դռան մոտ և դեմքը ծածկելով թաշկինակով, քաշ գցեց գլուխը։

Լռությունը շարունակվեց մոտ երկու րոպե։ Դոլլին մտածում էր իր մասին։ Իր այն նվաստացումը, որ միշտ զգում էր, առանձնապես ուժեղ կերպով շարժվեց նրա մեջ, երբ դրա մասին հիշեցրեց քույրը։ Նա այդպիսի դաժանություն չէր սպասում քրոջից և բարկանում էր նրա վրա։ Բայց հանկարծ նա լսեց զգեստի շրշյուն ու դրա հետ միասին պայթած, զուսպ հեկեկանքի ձայն. և մեկի ձեռքերը ցածրից գրկեցին նրա վիզը։ Կիտին ծունկ էր չոքել նրա դիմաց։

— Դոլլինկա, ես այնպես, այնպես դժբախտ եմ,— մեղադրեց շշնջաց նա։

Եվ արցունքներով պատած դեղունի դեմքը թաքնվեց Դարիա Ալեքսանդրովնայի շրջազգեստի մեջ։

Կարծես, արցունքներն այն անհրաժեշտ քսուքն էին, առանց որի չէր կարող հաջողությամբ առաջ գնալ փոխադարձ հարակցության մեքենան երկու քույրերի միջև.— արցունքներից հետո քույրերը չխոսեցին այն բանի մասին, ինչն զբաղեցնում էր նրանց, բայց կողմնակի հարցերի մասին խոսելով էլ, նրանք հասկացան իրար։ Կիտին հասկացավ, որ բարկացած բոպեին ամուսնու անհավատարմության ու քրոջ նվաստացման մասին ասած խոսքը վիրավորեց խեղճ Դոլլիին մինչև սրտի խորքը, բայց որ նա ներում է իրեն։ Դոլլին իր կողմից հասկացավ այն բոլորը, ինչ ուզում էր իմանալ ինքը։ Նա համոզվեց, որ իր ենթադրությունները ճիշտ էին, որ Կիտիի վիշտը, անբուժելի վիշտը, հենց այն էր, որ Լևինն առաջարկություն էր արել ու մերժում ստացել, իսկ Վրոնսկին խաբել էր Կիտիին, և որ քույրը պատրաստ էր սիրելու Լևինին ու ատելու Վրոնսկուն։ Կիտին ո՛չ մի խոսք չասաց դրա մասին. նա խոսում էր միայն իր հոգեկան կացության մասին։

— Ես ո՛չ մի վիշտ չունեմ,— ասում էր նա հանգստացած,— բայց կարո՞ղ ես արդյոք դու հասկանալ, որ ամեն ինչ ինձ համար դարձավ գարշելի, զզվելի, կոպիտ և ամենից առաջ՝ ես ինքս ինձ։ Դու չես կարող երևակայել, թե ինչպիսի՞ գարշելի մտքեր ունեմ ես ամեն բանի մասին։

— Ի՞նչ գարշելի մտքեր պիտի ունենաս դու,— հարցրեց Դոլլին ժպտալով։

— Ամենագարշելի ու կոպիտ մտքերը. չե՛մ կարող ասել քեզ։ Դա ո՛չ կարոտ է, ո՛չ թախիծ, այլ ավելի վատ բան։ Կարծես, բոլոր այն լավը, որ կար իմ մեջ, թաքնվեց, և մնաց միայն գարշելին։ Ինչպե՛ս ասեմ քեզ,— շարունակեց նա, տեսնելով քրոջ աչքերում տարակուսանք։— Հայրիկը նոր սկսեց ասել...— ինձ թվում է, թե նա մտածում է միայն այն մասին, որ ես պետք է ամուսնանամ։ Մայրիկն ինձ տանում է պարահանդես. ինձ թվում է, թե նրա համար է միայն տանում, որ շուտով պսակի և ազատվի ինձնից։ Ես գիտեմ, որ դա ճիշտ չէ, բայց չեմ կարողանում վանել այդ մտքերը։ Ես տեսնել չեմ կարող այսպես կոչված փեսացուներին։ Ինձ թվում է, որ նրանք իմ չափն են հանում։ Առաջ պարահանդեսի հագուստով

որևէ տեղ գնալն ինձ համար պարզ բավականություն էր, ես ինքս հիանում էի ինձնով. այժմ ես ամաչում եմ, անհարմար եմ զգում ինձ։ Դե, էլ ի՞նչ ես ուզում։ Բժիշկը... է՜հ...

Կիտին շփոթվեց, կմկմաց. նա ուզում էր այնուհետև ասել, որ այն օրից, երբ իր հետ կատարվեց այդ փոփոխությունը, Ստեպան Արկադևիչը դարձավ անտանելի անախորժ և որ ինքը չի կարող տեսնել նրան առանց ամենակոպիտ ու խայտառակ պատկերացումների։

— Իրոք որ, ամեն բան պատկերանում է ինձ ամենակոպիտ, գարշելի տեսքով,— շարունակեց նա։— Դա իմ հիվանդությունն է։ Գուցե անցնի...

— Իսկ դու մի՛ մտածիր...

— Չեմ կարող։ Ես ինձ լավ եմ զգում միայն երեխաների հետ, միայն քեզ մոտ։

— Ափսո՜ս, որ դու չես կարող լինել ինձ մոտ։

— Ո՛չ, ես կգամ։ Ես քութեշ ունեցել եմ, և ես կխնդրեմ, կհամոզեմ maman-ին։

Կիտին պնդեց իր ուզածը և տեղափոխվեց քրոջ մոտ ու քութեշի ամբողջ ընթացքում, որն իսկապես հաստատվեց, խնամում էր երեխաներին։ Երկու քույրերն էլ բարեհաջող խնամատարությամբ հիվանդությունից ազատեցին բոլոր վեց երեխաներին, բայց Կիտիի առողջությունը չվերականգնվեց, և մեծ պասին Շչերբացկիները գնացին արտասահման։

IV

Պետերբուրգի բարձր շրջանն իսկապես մեկ է, բոլորը ճանաչում են իրար, նույնիսկ գնում-գալիս են իրար մոտ։ Բայց այդ բարձր շրջանն ունի իր ստորաբաժանումները։ Աննա Արկադևնա Կարենինան ուներ բարեկամներ ու սերտ կապեր երեք տարբեր շրջաններում։ Մի շրջանը նրա ամուսնու պաշտոնական, պաշտոնական շրջանն էր, կազմված նրա պաշտոնակիցներից ու ստորադրյալներից, որոնք ամենաբազմապիսի կերպով և քմահաճորեն կապված էին իրար հետ ու բաժանված իրարից՝ հասարակական պայմաններում։ Աննան այժմ դժվարությամբ կարող էր հիշել համարյա բարեպաշտ հարգանքի այն զգացումը, որ սկզբներում տածում էր դեպի այդ մարդիկ։

Այժմ նա ճանաչում է նրանց ամենքին, ինչպես ճանաչում են իրար գավառական քաղաքում. գիտեր, թե ով ի՛նչ սովորություններ և թուլություններ ունի, ում ո՛ր կոշիկն է ոտը սեղմում. գիտեր նրանց վերաբերմունքն իրար ու դեպի կենտրոնը. գիտեր, թե ո՛վ ում կողմնակիցն է, և ինչպե՛ս ու ինչո՛վ է մնում իր տեղում, և ո՛վ ում հետ ու ի՛նչ բանում համամիտ է կամ տարակարծիք. բայց կառավարչական, տղամարդկային շահերի այդ շրջանը երբեք, չնայած կոմսուհի Լիդիա Իվանովնայի ներշնչումներին, չէր կարող հետաքրքրել նրան, և նա խուսափում էր այդ շրջանից։

Աննային մոտիկ մյուս շրջանն այն էր, որի միջոցով Ալեքսեյ Ալեքսանդրովիչն ստեղծեց իր կարիերան։ Այդ շրջանի կենտրոնն էր կոմսուհի Լիդիա Իվանովնան։ Դա պառավ, տգեղ, առաքինի ու աստվածավախ կանանց և խելոք, դիտնական, փառասեր տղամարդկանց շրջանն էր։ Այդ շրջանին պատկանող խելոք մարդկանցից մեկը նրան անվանում էր «Պետերբուրգի հասարակության խիղճը»։ Ալեքսեյ Ալեքսանդրովիչը շատ բարձր էր գնահատում այդ շրջանը, և Աննան, որ այնպես կարողանում էր համակերպվել ամենքին, բարեկամներ գտավ նաև այդ շրջանում՝ պետերբուրգյան իր կյանքի առաջին տարիներին։ Իսկ այժմ, Մոսկվայից վերադառնալուց հետո, այդ շրջանը նրա համար դարձավ անտանելի։ Նրան թվում էր, որ և՛ ինքը, և՛ նրանք ամենքը ձևանում են, կեղծում, ու նա այդ հասարակության մեջ իրեն զգում էր այնպես տաղտկալի և անհարմար, որ, հնարավորին չափ սակավ էր գնում կոմսուհի Լիդիա Իվանովնայի մոտ։

Վերջապես, երրորդ շրջանը, որտեղ Աննան կապեր ուներ, իսկապես բարձր հասարակությունն էր՝ պարահանդեսների, ճաշերի, շքեղ տուալետների հասարակությունը. սա մի ձեռքով բռնել էր արքունիքից, որպեսզի ինքը չիջնի մինչև կիսաբարձր հասարակությունը, որին այդ շրջանի անդամները կարծում էին, թե արհամարհում են, բայց որի հետ նրանց ճաշակը ո՛չ միայն նման էր, այլև նույնը։ Աննայի կապն այդ շրջանի հետ պահպանվում էր իշխանուհի Տվերսկայա Բետսիի՝ Աննայի մորաքրոջ տղայի կնոջ միջոցով, որն ուներ հարյուր քսան հազար եկամուտ և որը բարձր հասարակության մեջ Աննայի երևան գալու առաջին օրից սիրեց նրան,

սիրագուրում էր նրան ու ներգրավում իր շրջանի մեջ, ծիծաղելով կոմսուհի Լիդիա Իվանովնայի շրջանի վրա։

— Երբ պառավեմ ու տգեղանամ, ես էլ այդպես կդառնամ, — ասում էր Բետսին, — բայց ձեզ համար, ջահել, լավիկ կընոջ համար, դեռ վաղ է մտնել այդ անկելանոցը։

Աննան սկզբներում խուսափում էր, որքան կարող էր, իշխանուհի Տվերսկայայի այդ միջավայրից, որովհետև դա պահանջում էր նրա միջոցներից բարձր ծախսեր, բացի այդ, հոգով էլ Աննան ավելի գերադասում էր առաջինը. բայց Մոսկվա գնալուց հետո հակառակն եղավ։ Նա խուսափում էր իր բարեբարո բարեկամներից և լինում էր բարձր հասարակության մեջ։ Այնտեղ նա հանդիպում էր Վրոնսկուն և հուզալից ուրախություն էր զգում այդ հանդիպումների ժամանակ։ Առանձնապես հաճախ նա պատահում էր Վրոնսկուն Բետսիի մոտ, որը ծագումով Վրոնսկայա էր և նրա հորեղբոր աղջիկը։ Վրոնսկին լինում էր ամենուր, որտեղ կարող էր հանդիպել Աննային և երբ հնարավոր էր, ասում էր նրան իր սիրո մասին։ Աննան ո՛չ մի առիթ չէր տալիս Վրոնսկուն, բայց ամեն անգամ հանդիպելիս՝ նրա հոգու մեջ բոցավառվում էր աշխուժության նույն այն զգացումը, որը համակեց իրեն, երբ առաջին անգամ վագոնում տեսավ Վրոնսկուն։ Ինքն Աննան զգում էր, որ նրան տեսնելիս խնդություն էր փայլում իր աչքերում ու ժպիտ էր ծաղկում շուրթերին և ինքը չէր կարող հանդցնել այդ ուրախության արտահայտությունը։

Սկզբում Աննան անկեղծորեն համոզված էր, իրը դժգոհ է Վրոնսկուց այն բանի համար, որ վերջինս իրավունք է համարում հետամտելու իրեն. բայց շուտով, Մոսկվայից վերադառնալուց հետո, գալով այն երեկույթին, որտեղ կարծում էր, թե կպատահի նրան, մինչդեռ, նա այնտեղ չէր, իրեն համակող թախծից Աննան պարզ հասկացավ, որ ինքը իրեն խաբում է, որ այդ հետապնդումը ո՛չ միայն անախորժ չէ իր համար, այլև կազմում է իր կյանքի ամբողջ հետաքրքրությունը։

Հոչակավոր երգչուհին երգում էր երկրորդ անգամ, և ամբողջ բարձր հասարակությունը թատրոնում էր։ Վրոնսկին առաջին շարքի իր բազկաթոռից տեսնելով հորեղբոր աղջկան, ընաց նրա օթյակը՝ առանց դադարելու ընդմիջումին։

— Ինչո՞ւ չեկաք ճաշին, —ասաց Բետսին նրան։ —Զարմանում եմ սիրահարների այդ պարզատեսության վրա,— ավելացրեց իշխանուհին ժպիտով, այնպես ցածր, որ միայն Վռոնսկին լսեր, — նա չկար։ Բայց օպերայից հետո եկեք։

Վռոնսկին հարցական հայացքով նայեց նրան։ Իշխանուհին գլուխը կախ գցեց։ Վռոնսկին ժպիտով շնորհակալություն հայտնեց ու նստեց նրա կողքին։

— Իսկ երբ մտաբերում եմ ես ձեր ծաղրն ու ծանա՜կը, — շարունակեց իշխանուհի Բետսին, որն առանձին բավականություն էր գտնում այդ կրքի հաջողությանը հետամուտ լինելու մեջ։ —Ի՞նչ եղավ այդ բոլորը։ Դուք բռնված եք, սիրելիս։

— Իմ ուզածն էլ հենց այդ է, որ բռնված լինեմ, —պատասխանեց Վռոնսկին իր հանգիստ, բարեսիրտ ժպիտով։— Եթե ես գանգատվում եմ, ապա միայն այն բանից, որ շատ քիչ եմ բռնված, եթե ճիշտն ասելու լինենք։ Ես սկսում եմ հույս կորցնել։

— Ի՞նչ հույս կարող եք ունենալ, —հարցրեց Բետսին, վիրավորվելով իր բարեկամի փոխարեն, — entendons nous[1].. — Բայց նրա աչքերի մեջ ցայլկտում էին կրակներ, որոնք ասում էին, որ ինքը շատ լավ ու ճիշտ այնպես, ինչպես և նա, հասկանում է, թե ի՞նչ հույս կարող էր ունենալ նա։

— Ո՞չ մի հույս, —ծիծաղելով ու ցուցադրելով իր խիտ ատամները, ասաց Վռոնսկին։ —Ներողություն, —ավելացրեց նա, վերցնելով իշխանուհու ձեռքից հեռադիտակը և սկսելով գիտել նրա մերկացած ուսի վրայով՝ հակադիր օթյակների շարքը։ —Ես վախենում եմ, որ մնամ ծիծաղելի դրության մեջ։

Վռոնսկին շատ լավ գիտեր, որ Բետսիի և բոլոր նրբակիրթ մարդկանց աչքին ինքը ծիծաղելի լինելու ռիսկ չէր անում։ Նա շատ լավ գիտեր, որ այդ մարդկանց աչքին ծիծաղելի կարող է լինել աղջկա և առհասարակ ազատ կնոջ դժբախտ սիրեկանի դերը. բայց ամուսնացած կնոջը հետամտող այն մարդու դերը, որն իր կյանքի նպատակն է դարձրել, ինչպես էլ լինի, գայթակղեցնել նրան, ունի իր մեջ ինչ-որ գեղեցիկ, վեհ բան ու երբեք չի կարող լինել ծիծաղելի, այդ իսկ պատճառով Վռոնսկին իր բեղերի տակ թովացող հպարտ և ուրախ ժպիտով քաշ գցեց հեռադիտակն ու նայեց հորեղբոր աղջկան։

— Իսկ ինչո՞ւ չեկաք ճաշելու, —ասաց իշխանուհի Բետսին, հիացած նրանով։

— Դա պետք է պատմել ձեզ։ Ես զբաղված էի, և գիտե՞ք ինչո՜վ։ Տալիս եմ ձեզ հարյուր, հազար դեպք... միևնույնն է, չեք գուշակի։ Ես հաշտեցնում էի մարդուն՝ նրա կնոջը վիրավորողի հետ։ Այո՛, ճիշտ եմ ասում։

— Եվ ի՞նչ, հաշտեցրի՞ք։

— Համարյա։

— Դուք պետք է այդ բանը պատմեք ինձ, —ասաց իշխանուհին, վեր կենալով։— Եկեք հետևյալ ընդմիջումին։

— Չեմ կարող. գնում եմ ֆրանսիական թատրոն։

— Նիլսոնին թողնում, գնո՞ւմ եք,— սարսափով հարցրեց Բետսին, որը ո՞չ մի կերպ Նիլսոնին չէր զատի, չէր գերադասի խմբի սովորական երգչուհուց։

— Ի՞նչ արած։ Ես այնտեղ տեսակցություն ունեմ իմ հաշտարարության այդ գործի առթիվ։

— Երանելի են հաշտարարները, նրանք կփրկվեն,— ասաց Բետսին, մտաբերելով սրա նման մի բան, որ լսել էր մեկից։— Դեհ, ուրեմն նստեք, պատմեք, թե ի՞նչ բան է։

Եվ իշխանուհին նորից նստեց։

V

— Դա մի փոքր անհամեստ, բայց այնքան զվարճալի բան է, որ անպատճառ ուզում եմ պատմել,— ասաց Վռոնսկին, նայելով իշխանուհուն ծիծաղկոտ աչքերով։— Ես ազգանուններ չեմ տա։

— Ես կգուշակեմ, այդպես ավելի լավ է։

—Լսեք ուրեմն. կառքով գնում են երկու ուրախ երիտասարդներ...

— Հասկանալի է, որ ձեր գնդի սպաներ են։

— Ես չասի սպաներ, այլ սոսկ երկու երիտասարդներ՝ նախաճաշած։

— Թարգմանեցեք՝ խմած։

— Կարող է պատահել։ Գնում են իրենց ընկերոջ մոտ՝

[1] Համաձայնության կգանք։

ճաշի, ամենաուրախ տրամադրությամբ։ Եվ տեսնում են կառք նստած մի լավիկ կին գալիս, անցնում է իրենցից, ետ է նայում ու, համենայն դեպս, նրանց թվում է, որ գլխով ողջունում է իրենց և ծիծաղում։ Հասկանալի է, նրանք էլ սկսում են հետապնդել նրան։ Քշում են ամբողջ թափով։ Ի մեծ զարմանս նրանց, գեղեցկուհին կանգ է առնում այն տան գլխավոր մուտքի առջև, ուր գնում էին իրենք։ Գեղեցկուհին վազելով բարձրանում է վերին հարկը։ Նրանք տեսնում են միայն նրա կարմիր շուրթերը կարճ դիմաքողի տակից և գողտրիկ, փոքրիկ ոտները։

— Դուք դա պատմում եք այնպիսի զգացումով, որ ինձ թվում է, թե այդ երկուսից մեկը դուք եք։

— Իսկ քիչ առաջ դուք ի՞նչ էիք ասում ինձ։ Երիտասարդները մտնում են իրենց ընկերոջ մոտ, որտեղ հրաժեշտի ճաշ է։ Այստեղ իրոք նրանք խմում են, գուցե չափից ավելի, ինչպես միշտ լինում է հրաժեշտի ճաշերին։ Եվ ճաշի ժամանակ հարցուփորձ են անում, թե ո՞վ է ապրում այս տան վերին հարկում։ Ոչ ոք չգիտե. տան տիրոջ լակեյը միայն՝ իրեն տրված հարցին՝ արդյոք, վերևում ապրո՞ւմ են մամզելներ, պատասխանում է, թե այստեղ նրանք չափազանց շատ են։ Ճաշից հետո երիտասարդները գնում են տան տիրոջ առանձնասենյակը և նամակ են գրում անծանոթ կնոջը։ Գրում են կրքոտ նամակ, սիրո խոստովանություն ու իրենք էլ նամակը տանում են վերև, որպեսզի պարզաբանեն այն, ինչը նամակում կարող էր թվալ ո՛չ բոլորովին պարզ։

— Ինչո՞ւ եք ինձ պատմում այսպիսի զզվելի բաներ։ Հետո՞։

— Զանգահարում են։ Դուրս է գալիս մի աղջիկ, նրանք տալիս են նամակը և հավատացնում աղջկան, թե երկուսն էլ այնպես սիրահարված են, որ այս րոպեիս կմեռնեն այստեղ՝ դռան մոտ։ Տարակուսած աղջիկը բանակցություններ է վարում։ Հանկարծ հայտնվում է երշիկանման բակենբարդներով մի պարոն, կարմիր՝ ինչպես եփած խեցգետին, հայտարարում է, որ այդ բնակարանում ոչ ոք չի ապրում բացի իր կնոջից, և վռնդում է երկուսին էլ։

— Ո՞րտեղից գիտեք, որ նրա բակենբարդները, ինչպես դուք եք ասում, երշիկանման են։

— Ա՜յ, լսեք, կիմանաք։ Այսօր ես գնացել էի հաշտեցնելու նրանց։

— Հետո ի՞նչ։

— Ամենահետաքրքրականը հենց այդ է։ Բանից դուրս է գալիս, որ այդ երշանիկ զույգը տիտղոսավոր խորհրդատուն է և իր տիտղոսավոր կինը։ Տիտղոսավոր խորհրդատուն գանգատ է տալիս, ու ես դառնում եմ հաշտարար, այն էլ ինչպիսի՞... Հավատացնում եմ ձեզ, Տալեյրանը ոչինչ է իմ համեմատությամբ։

— Ինչու՞մն է դժվարությունը։

— Ա՜յ, լսե՛ք, ահա... Մենք ներողություն խնդրեցինք, ինչպես հարկն է. «մենք հուսահատ դրության մեջ ենք, մենք խնդրում ենք ներել դժբախտ թյուրիմացությունը»։ Երշիկամորուք տիտղոսավոր խորհրդատուն սկսում է հալվել, բայց ուզում է նույնպես արտահայտել իր զգացումները, և հենց որ սկսում է արտահայտել, բորբոքվում է, տաքանում և ասում է կոպիտ խոսքեր, ու նորից ես պետք է գործի դնեմ իմ դիվանագիտական ամբողջ տաղանդը։ «Ես համաձայն եմ, որ նրանց վարմունքը տգեղ է, բայց խնդրում եմ ձեզ՝ ուշադրության առնել թյուրիմացությունը, ջահելությունը. հետո՝ երիտասարդները հենց նոր են նախաճաշած եղել։ Հասկանո՞ւմ եք դուք։ Նրանք զղջում են ամբողջ հոգով, խնդրում են ներել իրենց հանցանքը»։ Տիտղոսավոր խորհրդատուն կրկին մեղմանում է. «Ես համաձայն եմ, կոմս, ու պատրաստ եմ ներելու, սակայն հասկանո՞ւմ եք, որ իմ կինը, իմ տիկինը, ազնիվ մի կին, ենթարկվում է ինչ-որ լակոտների, սրիկ... հետամտության, կոպտությունների ու հանդգնության»։ Իսկ դուք հասկանում եք, այդ լակոտն այստեղ է, ու ես պետք է հաշտեցնեմ նրանց։ Նորից ես առաջ եմ քաշում դիվանագիտությունը, և նորից, հենց որ պետք է փակել հարցը, իմ տիտղոսավոր խորհրդատուն տաքանում է, կարմրում, բակենբարդները բարձրանում են, և նորից ես զեղում եմ իմ դիվանագիտական նրբությունները։

— Ա՜խ, դա պետք է պատմել ձեզ,— ծիծաղելով դիմեց Բետսին իր օթյակը մտած տիկնոջը։— Նա այնպես ծիծաղեցրեց ինձ։ Դեհ, bonne chance[1],— ավելացրեց իշխանու-

[1] Բարեբախտություն—հաջողություն։

հին, տալով Վոռնսկուն իր այն մատը, որ ազատ էր հովհարը բռնելուց և ուսերի շարժումով իջեցնելով զգեստի բարձրացրած լիֆը, այն նպատակով, որպեսզի ինչպես հարկն է, լիովին մերկ լինի, երբ առաջ կերթա դեպի ռամպան, գազի լույսի մեջ և ի տես բոլոր աչքերի։

Վոռնսկին գնաց ֆրանսիական թատրոն, որտեղ նա իսկապես պիտի տեսներ գնդի հրամանատարին, որը ո՛չ մի ներկայացում բաց չէր թողնում ֆրանսիական թատրոնում, որպեսզի խոսի նրա հետ իր հաշտարարության մասին. վերջինս արդեն երեք օր էր զբաղեցնում ու զվարճացնում էր նրան։ Այդ գործի մեջ խառնված էր Պետրիցկին, որին նա սիրում էր, և նորերս գունդ մտած մի ուրիշ սպա, համակրելի տղա, լավ ընկեր, երիտասարդ իշխան Կեդրովը։ Իսկ որ գլխավորն է՝ այստեղ խառնված էին գնդի շահերը։

Երկուսն էլ Վոռնսկու էսկադրոնումն էին։ Գնդի հրամանատարի մոտ էր եկել չինովնիկ, տիտղոսավոր խորհրդատու Վենդենը, գանգատվելու նրա սպաներից, որոնք վիրավորել էին իր կնոջը։ Նրա ջահել կինը, ինչպես պատմում էր Վենդենը,— կես տարի է, ինչ ամուսնացել էր նա,— մոր հետ եղել է եկեղեցում և, հանկարծ զգալով, որ ինքը հիվանդ է, որ առաջանում է հայտնի դրությունից, չկարողանալով այլևս կանգնել եկեղեցում, վերցնում է առաջին պատահած արագարշավ կառքը և գնում տուն։ Այստեղ նրա ետևից են ընկնում սպաները, նա վախենում է, հիվանդությունն ավելի է սաստկանում, և նա սանդուղքներից վազելով բարձրանում, մտնում է տուն։ Ինքը՝ Վենդենը, վերադառնալով ատյանից, լսում է զանգի հնչյուն և ինչ-որ ձայներ, դուրս է գալիս ու, տեսնելով հարբած սպաներ՝ նամակի հետ, դուրս է ձգում նրանց։ Նա խնդրում էր խիստ պատժել նրանց։

— Ո՛չ, ինչպես կուզեք,— ասաց գնդի հրամանատարը Վոռնսկուն, հրավիրելով նրան իր մոտ,— բայց Պետրիցկին դառնում է անտանելի։ Չի անցնում մի շաբաթ առանց անախորժ դեպքի։ Այդ չինովնիկը գործն այդպես չի թողնի, նա կերթա ավելի հեռուն։

Վոռնսկին տեսնում էր այդ գործի ամբողջ անբարեհուսությունը և այն, որ այստեղ մենամարտ չի կարող լինել, որ պետք է ամեն բան անել՝ տիտղոսավոր խորհրդատուին մեղ-

մելու և գործը կոծկելու համար։ Գնդի հրամանատարը Վոռնսկուն կանչել էր հենց այն պատճառով, որ նրան ճանաչում էր որպես ազնիվ ու խելոք մարդու, և որ գլխավորն է, որպես գնդի պատիվը բարձր գնահատող մարդու։ Նրանք դատեցին ու վրճռեցին, որ Պետրիցկին և Կեդրովը Վոռնսկու հետ պիտի գնան այդ տիտղոսավոր խորհրդատուի մոտ՝ ներողություն խնդրելու։ Գնդի հրամանատարը և Վոռնսկին հասկանում էին, որ Վոռնսկու անունը և ֆլիգել-ադյուտանտի վենդելը պետք է մեծապես նպաստեն տիտղոսավոր խորհրդատուի մեղմանալուն, եվ իրոք, այդ երկու միջոցը դուրս եկավ մասամբ իրական. բայց հաշտության հետևանքը մնաց կասկածելի, ինչպես և պատմում էր Վոռնսկին։

Գալով ֆրանսիական թատրոն, Վոռնսկին գնդի հրամանատարի հետ առանձնացավ ֆոյեում ու պատմեց նրան իր հաջողությունը կամ անհաջողությունը։ Կշռադատելով ամեն բան, գնդի հրամանատարը վճռեց՝ գործը թողնել առանց հետևանքի, բայց հետո, բավականության համար, սկսեց հարցուփորձ անել Վոռնսկուն՝ նրա տեսակցության մանրամասների մասին և երկար ժամանակ չէր կարողանում իրեն պահել ու չծիծաղել, լսելով Վոռնսկու պատմածը, թե ինչպե՛ս հանդարտված տիտղոսավոր խորհրդատուն հանկարծ նորից բորբոքվում էր, մտաբերելով գործի մանրամասնությունները, և թե ինչպե՛ս Վոռնսկին խուսանավելով հաշտության վերջին խոսքի կեսին, նահանջում էր, առաջ հրելով Պետրիցկուն։

— Անախորժ բան է, բայց չափազանց ծիծաղելի։ Հո չի կարող Կեդրովը մենամարտել այդ պարոնի հետ։ Ուրեմն, այդպես խիստ տաքանում էր, հա՞,— ծիծաղելով հարցրեց նա կրկին։— Իսկ ինչպե՞ս է այսօր Կլերը. հրաշալի՞ք,— ասաց նա ֆրանսիական նոր դերասանուհու մասին։— Ինչքան ուզում ես նայիր, ամեն օր նոր է։ Միայն ֆրանսիացիք կարող են այդպես։

VI

Իշխանուհի Բետսին, առանց սպասելու վերջին արարի ավարտման, դուրս գնաց թատրոնից։ Հազիվ կարողացավ մտնել իր զարդասենյակը, ոսել իր երկար դժգույն դեմքին

պուդրա, սրբել այն, կարգի բերել իրեն ու հրամայել, որ թեյ պատրաստեն մեծ ընդունարանում, երբ իրար ետևից սկսեցին կառեթները մոտենալ նրա հսկայական տանը՝ Բոլշայա Մոսկայա փողոցում։ Հյուրերը դուրս էին գալիս լայն գլխավոր մուտքի մոտ, և հաղթանդամ բարապանը, որ առավոտները ապակյա դռան ետևում թերթեր էր կարդում՝ ի խրատընկալություն անցորդների, լրիվ բացում էր այդ վիթխարի դուռը, թողնելով, որ իր մոտից անցնեն եկողները։

Համարյա միաժամանակ ներս մտան տանտիրուհին՝ թարմացրած սանրվածքով ու թարմացրած դեմքով՝ մի դռնից, և հյուրերը՝ մյուսից, մեծ ընդունարան՝ մութ պատերով, խավոտ գորգերով և պայծառ լուսավորված սեղանով, որ մոմերի հուրհրանքի տակ փայլում էր սփոռոցի սպիտակությամբ, ինքնաեռի արծաթով ու թեյի պարագաների թափանցիկ ճենապակով։

Տանտիրուհին նստեց ինքնաեռի մոտ և հանեց ձեռնոցները։ Աննկատելի, սպասավորների օգնությամբ տեղաշարժելով աթոռները, հասարակությունը տեղավորվեց, բաժանվելով երկու մասի. ինքնաեռի մոտ՝ տանտիրուհու հետ և ընդունարանի հակադիր ծայրին՝ դեսպանի գեղեցիկ կնոջ մոտ, որն ուներ սև, բարակ հոնքեր ու սև թավշյա ղգեստ։ Խոսակցությունը երկու կենտրոններում ևս, ինչպես լինում է միշտ առաջին րոպեներին, տատանվում էր, ընդհատվելով դիմավորումներով, ողջույններով, թեյի առաջարկությամբ, կարծես՝ որոնումների մեջ, թե ինչի վրա կանգ առնի։

— Նա արտակարգ լավ է, որպես դերասանուհի. երևում է, որ ուսումնասիրել է Կաուլբախին,— ասում էր դիվանագետը դեսպանի կնոջ շրջանում,— նկատեցի՞ք, թե ինչպես ընկավ նա...

— Ա՜խ, ի սեր աստծո, չխոսենք Նիլսոնի մասին։ Նրա մասին չի կարելի ասել նոր ոչինչ,— ասաց հաստ, կարմիր, առանց հոնքերի և առանց շինյոնի, խարտյաշ մազերով մի տիկին, մետաքսե հին զգեստով։ Դա Մյագկայա իշխանուհին էր, հայտնի իր պարզությամբ, վարվեցողության կոպտությամբ և enfant terrible[1] իր մականունով։ Իշխանուհի

[1] Սոսկալի երեխա։

Մյագկայան նստել էր երկու շրջանների միջտեղն ու ականջ դնելով, մասնակցում էր մերթ մեկ, մերթ մյուս շրջանին։— Ինձ այսօր երեք հոգի ասին այդ նույն ֆրազը Կաուլբախի մասին, կարծես պայմանավորված են եղել։ Եվ չգիտեմ, թե ինչո՞վ այդ ֆրազն այդպես դուր է եկել նրանց։

Խոսակցությունն ընդհատվեց այդ նկատողությամբ, և պետք էր մտածել, գտնել նոր թեմա։

— Պատմեցեք մեզ որևէ ծիծաղելի, բայց ոչ չար բան,— ասաց դեսպանի կինը, մեծ վարպետուհի նուրբ խոսակցության, որ անգլերեն կոչվում է small-talk[1], դիմելով դիվանագետին. սա նույնպես չգիտեր, ինչի՞ց այժմ սկսեր։

— Ասում են, որ դա շատ դժվարին գործ է, որ ծիծաղելի է միայն չար բանը,— սկսեց նա ժպտալով։— Բայց ես կփորձեմ։ Տվեք ինձ թեմա։ Ամբողջ բանը թեման է։ Եթե թեման տրված է, հեշտ է նրա վրա ասեղնագործելը։ Ես հաճախ մտածում եմ, որ անցյալ դարի հռչակավոր շատախոսները դժվար կացության մեջ կլինեին այժմ՝ խելոք խոսելու տեսակետից։ Ամեն խելոք բան այնպես ձանձրացրել է...

— Դա վաղուց արդեն ասված է,— ծիծաղելով ընդհատեց նրան դեսպանի կինը։

Խոսակցությունն սկսվեց շատ քաղցր, բայց հենց այն պատճառով, որ չափազանց քաղցր էր, նորից կանգ առավ։ Պետք էր դիմել ստույգ, երբեք չդավաճանող միջոցին՝ չարախոսությանը, բամբասանքին։

— Արդյոք, ճիշտ չէ՞, որ Տուշկևիչի մեջ կա Louis XV-ին հիշեցնող մի բան, ասաց նա, աչքերով նշելով սեղանի մոտ կանգնած շիկահեր գեղեցիկ երիտասարդին։

— Օ՜, իհա՜րկե։ Նա և ընդունարանը միևնույն ոճի են, այդ պատճառով էլ նա այնպես հաճախ է լինում այստեղ։

Այդ խոսակցությունը պահպանվեց, որովհետև ակնարկներով խոսվում էր հենց այն բանի մասին, ինչն ասել չէր կարելի այս ընդունարանում, այսինքն Տուշկևիչի ու տանտիրուհու հարաբերությունների մասին։

Ինքնաեռի ու տանտիրուհու մոտ խոսակցությունը ճիշտ նույն կերպ որոշ ժամանակ տատանվելով երեք անխուսափե-

[1] Պարապ զրույց։

լի թեմաների՝ վերջին հասարակական նորության, թատրոնի և մերձավորին դատապարտելու միջև, նույնպես կանգ առավ վերջին թեմայի, այսինքն՝ չարախոսության վրա։

— Լսե՞լ եք, Մալտիշչևան էլ, ո՛չ թե աղջիկը, այլ մայրը, կարում է իր համար diable rose[1] զգեստ։

— Չի կարող պատահել։ Ա՛յ, սքանչելի բան։

— Ես զարմանում եմ, ինչպե՞ս կարող է նա խելոք լինելով,— նա տխմար չէ,— չտեսնել, որ ինքը ծիծաղելի է։

Դժբախտ Մալտիշչևային դատապարտելու և ծաղրելու համար յուրաքանչյուրն ասելու բան ուներ, ու խոսակցությունն ուրախ ճթճթաց, ինչպես բոցավառված խարույկ։

Իշխանուհի Բետսիի ամուսինը, բարեսիրտ, հաստլիկ մի մարդ, գրավյուրների մոլի հավաքող, իմանալով, որ կինը հյուրեր ունի, ակումբ գնալուց առաջ մտավ ընդունարան։ Համբը քայլերով, փափուկ գորգի վրայով նա մոտեցավ իշխանուհի Մյագկայային։

— Հավանեցի՞ք Նիլսոնին,— հարցրեց նա։

— Ա՛խ, մի՞թե կարելի է այդպես գողունի մոտենալ։ Ինչպե՞ս վախեցրիք ինձ,— պատասխանեց իշխանուհին։— Խնդրեմ, ինձ հետ չխոսեք օպերայի մասին, դուք ոչինչ չեք հասկանում երաժշտությունից։ Ավելի լավ է՝ ես իջնեմ, հասնեմ ու խոսեմ ձեզ հետ ձեր մայոլիկաների և գրավյուրների մասին։ Հապա ասեք, ի՞նչ հազվագյուտ բան եք գտել նորերս հրնոտիների շուկայում։

— Կուզե՞ք ցույց տամ ձեզ։ Բայց դուք դրանից բան չեք հասկանում։

— Ցույց տվեք։ Ես սովորեցի այդ, ինչպե՞ս են անվանում նրանց... բանկիրներ... սովորեցի նրանցից. նրանք ունեն հրաշալի գրավյուրներ։ Նրանք ցույց են տվել մեզ։

— Ինչպե՞ս, դուք եղել եք Շյուցբուրգի մոտ,— հարցրեց տանտիրուհին ինքնաեռի մոտից։

— Եղանք, ma chère. Նրանք մեզ, ինձ ու ամուսնուս, կանչեցին ճաշի, և ինձ ասում էին, իբր այդ ճաշին սոուսն արժեր հազար ռուբլի,— բարձրաձայն խոսում էր իշխանուհի Մյագկայան, զգալով, որ բոլորը լսում են իրեն,— և շատ զզվելի սոուս, ինչ-որ կանաչ բան։ Պետք էր նրանց հրավիրել, և ես ութսունհինգ կոպեկով սոուս պատրաստեցի, ու ամենքը շատ գոհ էին։ Ես չեմ կարող հազար ռուբլիանոց սոուսներ պատրաստել։

— Նա միակն է,— ասաց տանտիրուհին։

— Զարմանալի է,— ասաց մեկը։

Մյագկայա իշխանուհու խոսքերի թողած տպավորությունը միշտ միատեսակ էր, և այդ տպավորության գաղտնիքն այն էր, որ նա ասում էր իմաստ ունեցող հասարակ բաներ, թեպետ և ո՛չ բոլորովին պատեհ, ինչպես այժմ։ Այդպիսի խոսքերն ամենասրամիտ կատակի տպավորություն էին թողնում այն հասարակության մեջ, որտեղ ապրում էր նա։ Իշխանուհի Մյագկայան չէր կարողանում հասկանալ, թե ինչո՞ւ էր դա այդպես ներազդում, բայց գիտեր, որ դա այդպես ազդում էր, և նա օգտվում էր դրանից։

Որովհետև Մյագկայա իշխանուհու խոսելու ժամանակ ամենքը լսում էին նրան, և խոսակցությունը դադարեց դեսպանի կնոջ մոտ, տանտիրուհին ուզեց ամբողջ հասարակությունը միավորել, ուստի դիմեց դեսպանի կնոջը.

— Դուք վճռականապե՞ս չեք ուզում թեյ։ Կխնդրեի անցնել մեզ մոտ։

— Ո՛չ։ Մեզ համար շատ լավ է այստեղ,— ժպտալով պատասխանեց դեսպանի կինը և շարունակեց սկսած խոսակցությունը։

Խոսակցությունը շատ հաճելի էր։ Դատափետում էին Կարենիններին, կնոջն ու ամուսնուն։

— Աննան շատ փոխվել է Մոսկվա գնալ-գալուց հետո։ Նրա մեջ ինչ-որ տարօրինակ բան կա,— ասում էր նրա բարեկամուհին։

— Գլխավոր փոփոխությունն այն է, որ նա իր հետ բերեց Ալեքսեյ Վրոնսկու ստվերը,— ասաց դեսպանի կինը։

— Ինչ կա որ, Գրիմմը մը առակ ունի. անստվեր մարդը՝ ստվերից զուրկ մարդ է։ Եվ դա նրա համար պատիժ է ինչ-որ բանի պատճառով։ Ես երբեք չէի կարողանում հասկանալ, թե ինչո՞ւմն է պատիժը։ Բայց կնոջ համար պետք է որ անախորժ լինի անստվեր մնալը։

[1] «Վարդագույն սատանա»։

— Այո՛, բայց ստվեր ունեցող կանայք սովորաբար վատ են վերջացնում,— ասաց Աննայի բարեկամուհին։

— Ջորանա ձեր լեզուն,— ասաց հանկարծ իշխանուհի Մյագկայան, լսելով այդ խոսքերը։— Կարենինան սքանչելի կին է։ Նրա ամուսնուն չեմ սիրում, բայց իրեն շատ եմ սիրում։

— Իսկ ինչո՞ւ ամուսնուն չեք սիրում։ Նա այնպես նշանավոր մարդ է,— ասաց դեսպանի կինը։— Ամուսինս ասում է, որ պետական այդպիսի մարդիկ քիչ կան Եվրոպայում։

— Ինձ էլ իմ ամուսինն է ասում, բայց ես չեմ հավատում,— ասաց իշխանուհի Մյագկայան։— Եթե մեր ամուսինները չաւեին, մենք կտեսնեինք այն, ինչ որ կա. իսկ Ալեքսեյ Ալեքսանդրովիչն, ըստ իս, ուղղակի տխմար է։ Ես դա ասում եմ շշուկով... Տեսնո՞ւմ եք, ամեն բան ինչ պարզ է դառնում։ Առաջ, երբ ինձ հրամայում էին համարել նրան խելոք, ես շարունակ փնտրում էի և նրա խելքը չգտնելով, ինքս ինձ էի համարում տխմար. իսկ հենց որ ես ասացի, որ նա տխմար է, ասացի շշուկով, ամեն ինչ պարզվեց. այդպես չէ՞ միթե։

— Այսօր ի՞նչ շարն եք դուք։

— Բնավ։ Ես ուրիշ ելք չունեմ։ Մեր երկուսից մեկը տխմար է։ Իսկ դուք գիտեք, որ մարդ իր համար երբեք չի ասի այդպիսի բան։

— Ոչ ոք գոհ չէ իր դրությունից, բայց ամեն ոք գոհ է իր խելքից,— ասաց դիվանագետը ֆրանսիական ոտանավորը։

— Այո՛, այո՛, իսկապես,— շտապ դիմեց նրան իշխանուհի Մյագկայան։— Բայց բանն այն է, որ Աննային դատափետել թույլ չեմ տա ձեզ։ Նա այնպես լավն է, համակրելի։ Ի՞նչ անի նա, որ բոլորը սիրահարված են նրան և ստվերի պես էլ հետևվում են։

— Քավ լիցի, իմ մտքով անգամ չի անցնում դատապարտել,— արդարացավ Աննայի բարեկամուհին։

— Եթե ոչ ոք մեր ետևից չի գալիս ստվերի նման, դա չի ապացուցում, որ մենք իրավունք ունենք դատապարտելու։

Եվ շշուկելով Աննայի բարեկամուհուն ինչպես պետք էր, իշխանուհի Մյագկայան վեր կացավ ու դեսպանի կնոջ հետ հարեց այն սեղանին, որտեղ ընդհանուր խոսակցությունը պտտվում էր պրուսական թագավորի շուրջը։

— Ինչի՞ մասին էիք դուք այնպես չարախոսում,— հարցրեց Բետսին։

— Կարենինների։ Իշխանուհին բնութագրում էր Ալեքսեյ Ալեքսանդրովիչին,— պատասխանեց դեսպանի կինը, ժպտադեմ նստելով սեղանի մոտ։

— Ափսո՛ս, մենք չլսեցինք,— ասաց տանտիրուհին, նայելով մուտքի դռանը։ Ահա՛ և դուք, վերջապես,— ժպտալով դիմեց նա ներս մտնող Վրոնսկուն։

Վրոնսկին ո՛չ միայն ծանոթ էր բոլորին, այլ ամեն օր տեսնում էր նրանց, որոնց հաղիպեց այստեղ, այդ պատճառով ներս եկավ այն հանգիստ ձևով, որ մտնում են սենյակ այն մարդկանց մոտ, որոնցից հենց նոր բաժանվեցին։

— Ո՞րտեղից եմ գալիս,— պատասխանեց նա դեսպանի կնոջ հարցին։— Ի՞նչ արած, պետք է խոստովանել։ Բուֆֆից։ Կարծեմ, արդեն հարյուրերորդ անգամ, բայց միշտ նոր բովանդակությամբ։ Հրաշալի՞ք։ Ես գիտեմ, որ ամոթ բան է, սակայն, փաստ է՝ օպերայում քունս տանում է, իսկ բուֆֆում նստում եմ մինչև վերջին րոպեն, և ուրախ է։ Այսօր...

Նա տվեց ֆրանսիացի դերասանուհու անունը և ուզում էր մի բան պատմել նրա մասին. բայց դեսպանի կինը կատակ սոսկումով ընդհատեց նրան.

— Ի սեր աստծո, ոչինչ մի ասեք այդ սոսկանքի մասին։

— Լավ, չեմ ասի, մանավանդ որ ամենքին հայտնի են այդ սոսկանքները։

— Եվ ամենքն էլ կգնային այնտեղ, եթե դա նույնպես դուրեկան լիներ, ինչպես օպերան է,— վրա բերեց իշխանուհի Մյագկայան։

VII

Մուտքի դռան մոտ լսվեցին քայլերի ձայներ, և իշխանուհի Բետսին իմանալով, որ դա Կարենինան է, նայեց Վրոնսկուն։ Վերջինս նայում էր դռանը, և նրա դեմքն ուներ տարօրինակ նոր արտահայտություն։ Նա ցնծագին, շեշտակի և դրա հետ միասին վեհերոտությամբ նայում էր ներս մտնողին ու դանդաղ բառնալով իր տեղից։ Ընդունարան էր մտնում Աննան։ Ինչպես միշտ, կեցվածքը շափազանց ուղիղ և չփոխելով հայացքի

ուղղությունը, նա իր արագ, հաստատ ու թեթև քայլվածքով, որ տարբերում էր նրան բարձր հասարակության ուրիշ կանանց քայլվածքից, արավ այն մի քանի քայլը, որոնք նրան բաժանում էին տանտիրուհուց, ու սեղմեց նրա ձեռքը, ժպտաց և այդ ժպիտով նայեց Վրոնսկուն։ Վրոնսկին խորը գլուխ տվեց ու աթոռը մոտեցրեց նրան։

Աննան պատասխանեց միայն գլուխը խոնարհելով, կարմրեց ու մռայլվեց։ Բայց անմիջապես, արագ գլուխ տալով ծանոթներին և սեղմելով իրեն պարզած ձեռքերը, դիմեց տանտիրուհուն.

— Ես կոմսուհի Լիդիայի մոտ էի և ուզում էի ավելի վաղ գալ, բայց ակամա երկար նստեցի։ Կոմսուհու մոտ էր սըր Ջոնը։ Նա շատ հետաքրքիր է։

— Ա՜խ, այն միսիոնե՞րը։

— Այո՛, նա շատ հետաքրքիր պատմում էր հնդկական կյանքի մասին։

Աննայի գալով ընդհատված խոսակցությունը նորից երեբաց, տատանվեց, ինչպես հողմահալած լամպի կրակը։

— Սըր Ջոն։ Այո՛, սըր Ջոն։ Ես տեսել եմ նրան։ Նա լավ է խոսում։ Վլասևան բոլորովին սիրահարվել է նրան։

— Ճի՞շտ է արդյոք, որ կրտսեր Վլասևան ամուսնանում է Տոպովի հետ։

— Այո՛, ասում են, որ դա վճռված բան է։

— Ես զարմանում եմ ծնողների վրա։ Ասում են, այդ ամուսնությունը հետևանք է կրքի։

— Կրքի՞։ Անդրջրհեղեղային ինչպիսի մտքեր ունեք դուք։ Ո՞վ է այսօր խոսում կրքի մասին,— ասաց դեսպանի կինը։

— Ի՞նչ արած։ Այդ տխմար հին մոդան տակավին չի վերացվում,— ասաց Վրոնսկին։

— Ավելի վատ նրանց համար, ովքեր հետևում են այդ մոդային։ Ես գիտեմ միայն բանականությամբ կատարված բախտավոր ամուսնություններ։

— Այո՛, բայց դրա փոխարեն որքա՞ն հաճախ բանականությամբ կատարված ամուսնությունների բախտը չքանում է փոշու նման, և հատկապես այն պատճառով, որ երևան է գալիս հենց այն կիրքը, որն առաջ չէին ընդունում,— ասաց Վրոնսկին։

— Բայց բանականությամբ կատարված ամուսնություն ենք

անվանում այն ամուսնությունը, երբ երկու կողմերն էլ արդեն դիվոտել են։ Դա նման է քութեշի, այդ ուղին պիտի անցնել։

— Այդ դեպքում՝ պետք է սովորել արհեստականորեն պատվաստել սերը, ինչպես պատվաստում են ծաղիկ հիվանդությունը։

— Ջահել ժամանակ ես սիրահարվեցի մի դպրի վրա,— ասաց իշխանուհի Մյագկայան։— Չգիտեմ, արդյոք դա օգնե՞ց ինձ։

— Ո՛չ, կատակը մի կողմ, ես կարծում եմ, սերը ճանաչելու համար պետք է նախ սխալվել և ապա ուղղվել,— ասաց իշխանուհի Բետսին։

— Նույնիսկ ամուսնությունից հետո՞,— կատակով ասաց դեսպանի կինը։

— Երբեք ուշ չէ զղջալը,— մեջ բերեց դիվանագետն անգլիական առածը։

— Իրոք որ,— արձագանքեց Բետսին,— պետք է սխալվել և ուղղվել։ Ի՞նչ կարծիք ունեք դրա մասին դուք,— դիմեց նա Աննային, որը լուռ լսում էր այդ խոսակցությունը, շուրթերին դրոշմված հազիվ նկատելի հաստատուն ժպիտով։

— Ես կարծում եմ,— ասաց Աննան, խաղացնելով հանած ձեռնոցը,— ես կարծում եմ... եթե՝ որքան գլուխ, այնքան խելք, ապա՝ որքան սիրտ, այնքան էլ սիրո տեսակ։

Վրոնսկին նայում էր Աննային ու մարվող սրտով սպասում էր, թե ի՞նչ կասի նա։ Վրոնսկին հառաչեց՝ կարծես վտանգն անցնելուց հետո, երբ Աննան արտասանեց այդ խոսքերը։

Աննան հանկարծ դիմեց Վրոնսկուն.

— Ես նամակ ստացա Մոսկվայից։ Ինձ գրում են, որ Կիտի Շչերբացկայան շատ հիվանդ է։

— Մի՞թե,— խոժոռվելով ասաց Վրոնսկին։

Աննան նայեց նրան խիստ հայացքով։

— Ձեզ չի՞ հետաքրքրում դա։

— Ընդհակառակը, շատ։ Հատկապես ի՞նչ են գրում ձեզ, եթե կարելի է իմանալ,— հարցրեց նա։

Աննան վեր կացավ ու մոտեցավ Բետսիին։

— Տվեք ինձ մի գավաթ թեյ,— ասաց նա, կանգնելով նրա աթոռի ետևը։

Մինչ Բետսին թեյ էր լցնում Աննայի համար, Վրոնսկին մոտեցավ նրան։

— Ի՞նչ են գրում ձեզ,— կրկնեց նա։

— Ես հաճախ կարծում եմ, տղամարդիկ չեն հասկանում այն, ինչն անազնիվ է, մինչդեռ շարունակ խոսում են դրա մասին,— ասաց Աննան, չպատասխանելով նրան։— Ես վաղուց էի ուզում ասել ձեզ այդ,— ավելացրեց նա, և անելով մի քանի քայլ, նստեց անկյունի սեղանի մոտ, որի վրա կային ալբոմներ։

— Ես լավ չեմ հասկանում ձեր խոսքերի իմաստը,— ասաց Վրոնսկին, գավաթը տալով Աննային։

Նա նայեց իր կողքի բազմոցին, և Վրոնսկին իսկույն նստեց։

— Այո՛, ես ուզում էի ասել ձեզ,— սկսեց Աննան, առանց նայելու նրան,— դուք վատ վարվեցիք, վատ, շա՜տ վատ։

— Մի՞թե ես չգիտեմ, որ վատ վարվեցի։ Բայց ո՞վ է իմ այդ վարմունքի պատճառը։

— Ինչո՞ւ եք ասում ինձ այդ,— հարցրեց Աննան, խիստ նայելով նրան։

— Դուք գիտեք, թե ինչո՛ւ,— պատասխանեց նա համարձակ ու ցնծագին, հանդիպելով Աննայի հայացքին և ցած չգցելով աչքերը։

Շփոթվեց ո՛չ թե նա, այլ Աննան։

— Դա ապացուցում է միայն այն, որ դուք սիրտ չունեք,— ասաց Աննան։ Բայց նրա հայացքն ասում էր, թե ինքը գիտե, որ Վրոնսկին սիրտ ունի, և այդ պատճառով՝ վախենում է նրանից։

— Այն, ինչի մասին դուք այս րոպեիս ասում էիք, սխալմունք էր և ո՛չ թե սեր։

— Հիշո՞ւմ եք, ես արգելեցի ձեզ արտասանել այդ բառը, այդ անպիտան բառը,— ցնցվելով ասաց Աննան. բայց հենց այստեղ էլ նա զգաց, որ այս արգելեցի բառով հենց ցույց է տալիս, թե ինքը նրա նկատմամբ վերապահում է իրեն որոշ իրավունքներ և դրանով քաջալերում նրան՝ խոսելու սիրո մասին։— Ես վաղուց էի ուզում այդ բանն ասել ձեզ,— շարունակեց Աննան, վճռական նայելով նրա աչքերին և ամբողջապես բոցավառվելով իր երես այրող կարմրությունից,— իսկ ես այսօր դիտմամբ եկա, գիտենալով, որ ձեզ կպատահեմ

այստեղ։ Ես եկա ասելու ձեզ, որ պետք է վերջ տրվի դրան։ Ես երբեք ոչ ոքի առաջ չէի կարմրում, իսկ դուք ստիպում եք ինձ հանցավոր զգալ ինչ-որ բանում։

Վրոնսկին նայում էր Աննային և ապշել էր նրա դեմքին դրսևորված հոգեկան նոր գեղեցկությամբ։

— Ի՞նչ եք ուզում ինձանից,— ասաց Վրոնսկին պարզ ու լուրջ։

— Ես ուզում եմ, որ դուք գնայիք Մոսկվա և ներողություն խնդրեիք Կիտիից,— ասաց նա։

— Դուք այդ չեք ուզում,— ասաց Վրոնսկին։

Նա տեսնում էր, որ Աննան ասում է այն, ինչ հարկադրված է ասել, բայց ո՛չ այն, ինչ ուզում է ասել։

— Եթե դուք սիրում եք ինձ, ինչպես ասում եք ինքներդ,— շշնջաց Աննան,— արեք այդ, որ ես հանգիստ լինեմ։

Վրոնսկու դեմքը պայծառացավ, փայլեց։

— Մի՞թե չգիտեք, որ ամբողջ կյանքս ինձ համար դուք եք, բայց ես ձեզ հանգիստ տալ չեմ կարող, ինքս էլ հանգիստ չունեմ։ Ես ինձ ամբողջովին, իմ սերը... կտամ։ Ես չեմ կարող մտածել ձեր մասին ու իմ մասին զատ-զատ։ Ինձ համար դուք և ես մեկ ենք։ Եվ ես առջևում չեմ տեսնում հանգստի հնարավորություն ո՛չ ինձ, ո՛չ էլ ձեզ համար։ Ես տեսնում եմ հուսահատության, դժբախտության հնարավորություն... կամ տեսնում եմ երջանկության հնարավորություն, այն էլ ինչպիսի՜ երջանկության... Մի՞թե հնարավոր չէ երջանկությունը,— ավելացրեց նա շրթունքներով միայն, բայց Աննան լսեց։

Աննան լարեց իր խելքի ամբողջ ուժը, որպեսզի ասի այն, ինչ պետք էր ասել. բայց դրա փոխարեն նա հառեց Վրոնսկու վրա իր սիրով լի հայացքը և ոչինչ չպատասխանեց։

«Ահա՛ վերջապես,— հիացմունքով մտածում էր Վրոնսկին։— Այն ժամանակ, մինչ ես արդեն հուսալքվում էի և թվում էր, թե կմնա ապարդյուն,— ահա՛ վերջապես։ Նա սիրում է ինձ։ Նա խոստովանում է այդ»։

— Ուրեմն արեք այդ բանն ինձ համար, էլ մի ասեք ինձ այդ բառերը, և մենք կլինենք լավ բարեկամներ,— ասաց Աննան բառերով, այնինչ բոլորովին ուրիշ բան էր արտահայտում նրա հայացքը։

— Բարեկամներ չենք լինի մենք, այդ գիտեք դուք ինք-

ներդ։ Իսկ կլինե՞նք արդյոք մարդկանցից ամենաբախտավորը, թե՞ ամենադժբախտը, դա արդեն ձեզանից է կախված։

Աննան ուզում էր մի բան ասել, բայց Վրոնսկին ընդհատեց նրան։

— Չէ՞ որ ես խնդրում եմ միայն մի բան, խնդրում եմ իրավունք՝ հուսալու, տանջվելու, ինչպես այժմ, իսկ եթե այդ էլ չի կարելի, հրամայիք ինձ, որ ես անհայտանամ, և ես կանհայտանամ։ Դուք այլևս չեք տեսնի ինձ, եթե իմ ներկայությունը ծանր է ձեզ համար։

— Ես չեմ ուզում վռնդել ձեզ։

— Միայն ոչինչ մի փոխեք։ Թողեք բոլորն այնպես, ինչպես կա,— ասաց Վրոնսկին դողդոջուն ձայնով։— Ահա՛ ձեր ամուսինը։

Հիրավի այդ րոպեին Ալեքսեյ Ալեքսանդրովիչը մտնում էր ընդունարան իր հանգիստ, անճոռնի քայլվածքով։

Զննելով կնոջն ու Վրոնսկուն, Կարենինը մոտեցավ տանտիրուհուն և նստելով մի գավաթ թեյի առաջ, սկսեց խոսել իր անշտապ, միշտ լսելի ձայնով, մեկին հեգնելու իր սովորական կատակի տոնով։

— Ձեր Ռամբուլյեն հավաքված է ամբողջ կազմով,— ասաց նա, դիտելով ամբողջ հասարակությունը.— գեղուհիներ և մուսաներ։

Բայց իշխանուհի Բետսին տանել չէր կարող նրա այդ տոնը, sneering[1], ինչպես դա անվանում էր նա, և որպես խելոք տանտիրուհի, իսկույն հակեց նրան լուրջ խոսակցության՝ ընդհանուր զինապարտության մասին։ Ալեքսեյ Ալեքսանդրովիչն անմիջապես տարվեց խոսակցությամբ ու սկսեց արդեն լրջորեն պաշտպանել նոր հրովարտակը իշխանուհի Բետսիի առաջ, որը քննադատորեն էր վերաբերում նրան։

Վրոնսկին և Աննան առաջվա պես նստած էին փոքրիկ սեղանի մոտ։

— Դա դառնում է անպարկեշտ բան,— շշնջաց մի տիկին, աչքերով նշելով Վրոնսկուն, Կարենինային և նրա ամուսնուն։

[1] Ծաղրական։

— Ո՞նց է, ես ձեզ չէի՞ ասում,— պատասխանեց Աննայի բարեկամուհին։

Բայց ո՛չ միայն այդ տիկինները, այլև գրեթե ընդունարանում բոլոր դտնվողները, նույնիսկ իշխանուհի Մյագկայան և ինքը Բետսին, մի քանի անգամ նայեցին ընդհանուր շրջանից հեռացածներին, կարծես դա նրանց խանգարում էր։ Միմիայն Ալեքսեյ Ալեքսանդրովիչը ո՛չ մի անգամ չնայեց այն կողմը և չկտրվեց սկսված հետաքրքրական խոսակցությունից։

Նկատելով ամենքի վրա գործող անախորժ տպավորությունը, իշխանուհի Բետսին մեկին աննկատելի նստեցրեց իր տեղը՝ լսելու Ալեքսեյ Ալեքսանդրովիչին և մոտեցավ Աննային։

— Ես միշտ զարմանում եմ ձեր ամուսնու արտահայտությունների պարզության ու ճշտության վրա,— ասաց նա։— Ամենագերզգայական հասկացողությունները մատչելի են դառնում ինձ, երբ նա է խոսում։

— Օ՛, իհա՛րկե,— ասաց Աննան, փայլելով երջանկության ժպիտով և չհասկանալով Բետսիի ասածից ո՛չ մի խոսք։ Նա տեղափոխվեց մեծ սեղանի մոտ ու սկսեց մասնակցել ընդհանուր խոսակցությանը։

Ալեքսեյ Ալեքսանդրովիչը, կես ժամ նստելուց հետո, մոտեցավ կնոջը և առաջարկեց միասին գնալ տուն, բայց Աննան, առանց նայելու նրան պատասխանեց, որ կմնա ընթրիքի։ Ալեքսեյ Ալեքսանդրովիչը հրաժեշտ տվեց ու դուրս գնաց։

Ծերունի հաստ թաթարը, Կարենինայի կառապանը, հագին փայլուն կաշվե բաճկոն, դժվարությամբ էր զսպում ձախի մրսած դորշ ձին, որ ծառս էր լինում գլխավոր մուտքի դռանը։ Ծառան կանգնել էր, կառքի դռնակը բացելուց հետո։ Բարապանը կանգնել էր, բռնած արտաքին դուռը։ Աննա Արկադևնան իր փոքրիկ, արագաշարժ ձեռքով ազատում էր թևի ժանյակը մուշտակի ճարմանդից և գլուխը քաշ, հիացքով լսում էր այն, ինչ ասում էր Վրոնսկին, ճանապարհելով նրան։

— Դուք ոչինչ չասացիք, թեպետ ես ոչինչ էլ չեմ պահանջում,— ասում էր նա,— բայց դուք գիտեք, որ ինձ պետք է ո՛չ թե բարեկամություն. ինձ համար կյանքում հնարավոր է մի

երջանկություն, և դա այն բառն է, որ դուք այնպես չեք սիրում... այո՛, սերը...

— Սե՛ր... —կրկնեց Աննան դանդաղ, ներքին ձայնով և երբ ազատեց ժանյակը, հանկարծ ավելացրեց. —ես հենց այն պատճառով չեմ սիրում այդ բառը, որ ինձ համար նա չափազանց շատ բան է նշանակում, անհամեմատ ավելի, քան կարող եք հասկանալ դուք,— և նա նայեց Վրոնսկու դեմքին։ — Ցտեսություն։

Աննան ձեռք տվեց նրան և արագ, առաձիգ քայլով անցավ բարապանի կողքից ու ծածկվեց կառքի մեջ։

Աննայի հայացքը, ձեռքի հպումն այրեցին նրան,— նա համբուրեց իր ափի այն տեղը, որտեղ դիպել էր Աննայի ձեռքը, և գնաց տուն, երջանիկ այն գիտակցությամբ, որ այսօր երեկոյան մոտեցավ իր նպատակի իրագործմանն ավելի, քան վերջին երկու ամսվա ընթացքում։

VIII

Ալեքսեյ Ալեքսանդրովիչը ոչինչ առանձին և անվայելուչ չտեսավ այն բանի մեջ, որ իր կինը Վրոնսկու հետ նստել էր առանձին սեղանի մոտ ու կենսաշխույժ զրուցում էր ինչ-որ նյութի մասին. բայց նա նկատեց, որ ընդունարանում ուրիշներին դա թվաց մի տեսակ առանձին բան ու անվայելուչ, այդ իսկ պատճառով իրեն էլ դա թվաց անվայելուչ։ Եվ նա վճռեց, որ դրա մասին հարկավոր է ասել կնոջը։

Վերադառնալով տուն, Ալեքսեյ Ալեքսանդրովիչն անցավ իր առանձնասենյակը, ինչպես անում էր սովորաբար, և նստեց բազկաթոռի մեջ, բացելով թղթահատ դանակով նշանած գիրքը պապականության մասին, և կարդում էր մինչև ժամը մեկը, ինչպես անում էր սովորաբար. երբեմն միայն նա տրորում էր իր լայն ճակատը և ցնցում էր գլուխը, կարծես վանելով ինչ-որ միտք։ Սովորական ժամին նա վերկացավ ու կատարեց իր գիշերային տուալետը։ Աննա Արկադիևնան դեռ չէր եկել։ Դիրքը թևի տակ՝ նա բարձրացավ վերև. բայց այս երեկո, պաշտոնական գործերի հետ կապված սովորական մտքերի ու նկատառումների փոխարեն, նրա մտքերը համակված էին կնոջով և կնոջ հետ պատահած ինչ-որ անախորժ բանով։ Նա,

հակառակ իր սովորության, չմտավ անկողին, այլ իրար կցած ձեռքերը դնելով մեջքին, սկսեց ետ ու առաջ քայլել սենյակներում։ Նա չէր կարող պառկել, զգալով, որ անհրաժեշտ է նախ կշռադատել նոր առաջացած հանգամանքը։

Երբ Ալեքսեյ Ալեքսանդրովիչն ինքն իրեն վճռեց, թե պետք է խոսել կնոջ հետ, դա նրան թվում էր շատ թեթև ու հասարակ բան, բայց այժմ, երբ նա սկսեց կշռադատել այդ նոր առաջացած հանգամանքը, վերջինս նրան թվաց շատ բարդ ու դժվարին։

Ալեքսեյ Ալեքսանդրովիչը խանդոտ չէր։ Նրա համոզմունքով, խանդը վիրավորում է կնոջը, և պետք է վստահություն տածել դեպի կինը։ Նա հարց չէր տալիս իրեն, թե ինչո՞ւ պետք է վստահություն ունենալ, այսինքն՝ լիովին հավատացած լինել այն բանում, որ իր ջահել կինը պետք է միշտ սիրի իրեն, բայց նա անվստահություն չէր զգացել, ուստի վստահ էր և ասում էր ինքն իրեն, թե պետք է վստահություն տածել։ Իսկ այժմ, թեպետ խորտակված չէր նրա համոզմունքն այն մասին, թե խանդն ամոթալի զգացում է և թե պետք է վստահություն ունենալ, բայց նա զգում էր, որ ինքը դեմ առ դեմ կանգնած է անտրամաբանական ու անմիտ մի բանի առաջ, և չգիտեր, թե ի՞նչ պետք է անել։ Ալեքսեյ Ալեքսանդրովիչը դեմ առ դեմ կանգնել էր կյանքի առաջ, կանգնել էր իրենից բացի, մեկ ուրիշին իր կնոջ սիրելու հնարավորության առաջ, և դա թվում էր նրան շատ անմիտ ու անհասկանալի բան, որովհետև դա ինքը կյանքն էր։ Ալեքսեյ Ալեքսանդրովիչն իր ամբողջ կյանքն անց էր կացրել և աշխատել էր պաշտոնական շրջաններում, որոնք զուրկ էին կյանքի արտացոլումների հետ։ Եվ ամեն անգամ, երբ նա դիմահարվում էր կյանքին, տեղի էր տալիս նրան։ Այժմ նա ուներ այնպիսի զգացում, ինչպիսին կունենար այն մարդը, որ հանգիստ անցել էր անդունդի վրա ձգված կամրջից ու հանկարծ տեսել, որ այդ կամուրջը քանդվել է և որ այնտեղ մոլեգնալուտ հորձանուտ է։ Այդ հորձանուտը ինքը կյանքն էր, կամուրջը՝ այն արհեստական կյանքը, որ ապրել, անց էր կացրել Ալեքսեյ Ալեքսանդրովիչը։ Առաջին անգամ նրա մտքով անցավ այն հարցը, թե հնարավոր է, որ իր կինը սիրի մեկ ուրիշին, և նա սարսափեց դրանից։

Առանց հանվելու, հավասար քայլով նա դնում-գալիս էր

ետ ու առաջ՝ մի լամպով լուսավորված սեղանատան հնչուն պարկետի և գորգի վրա՝ մութ ընդունարանում, որտեղ լույս ընկնում էր միայն նորերս նկարած ու բաղմոցի գլխավերևում կախած նրա մեծ դիմանկարին,— անցնելով Աննայի առանձնասենյակով, որտեղ վառվում էր երկու մոմ, լուսավորելով նրա հարազատների ու բարեկամ կանանց դիմանկարները և նրա գրասեղանի գեղեցիկ մանրազարդերը, որոնք վաղուց այնքա՜ն մոռ ծանոթ էին Ալեքսեյ Ալեքսանդրովիչին։ Աննայի սենյակի միջով նա հասնում էր ննջարանի դռանը և նորից ետ դառնում։

Իր զբոսանքի տարածության, իսկ մեծ մասամբ լուսավոր սեղանատան պարկետի վրա, նա կանգ էր առնում և ասում ինքը իրեն «Այո՛, անհրաժեշտ է դա վճռել ու վերջ տալ դրան, հայտնել իմ տեսակետը այդ մասին և իմ վճիռը»։ Եվ նա ետ էր դառնում։ «Բայց ի՞նչ հայտնել. ի՞նչ վճիռ»,— ասում էր նա ինքն իրեն ընդունարանում և պատասխան չէր գտնում։ «Եվ վերջապես,— հարցնում էր նա իրեն՝ դեպի առանձնասենյակ շուռ գալուց առաջ,— ի՞նչ է պատահել որ։ Ոչինչ։ Աննան խոսում էր նրա հետ երկար։ է՞, ի՞նչ կա որ։ Չէ՞ որ կինը ում հետ ասես՝ կարող է խոսել բարձր հասարակության մեջ։ Եվ հետո՝ խանդել, նշանակում է նվաստացնել թե՛ իրեն, թե՛ կնոջը»,— ասում էր նա ինքն իրեն, մտնելով կնոջ առանձնասենյակը. բայց այդ դատողությունը, որ առաջ այնպիսի կշիռ ուներ նրա աչքում, այժմ ոչինչ չէր կշռում ու ոչինչ չարժեր։ Եվ նա ննջարանի դռնից նորից շուռ էր գալիս դեպի դահլիճ. բայց հենց որ մտնում էր մութ ընդունարանը, մի ձայն ասում էր նրան, որ դա այդպես չէ և, որ, եթե ուրիշները նկատեցին դա, ուրեմն, նշանակում է, մի բան կա։ Եվ նա նորից ասում էր իրեն սեղանատանը. «Այո՛, անհրաժեշտ է դա վճռել ու վերջ տալ դրան և հայտնել իմ տեսակետը... Եվ նորից ընդունարանում շուռ գալուց առաջ նա հարցնում էր իրեն. ինչպե՞ս վճռել։ Ու հետո հարցնում էր իրեն, թե ի՞նչ է պատահել։ Եվ պատասխանում էր. ոչի՛նչ, ու հիշում էր, թե խանդը մի զգացում է, որ նվաստացնում է կնոջը. բայց ընդունարանում էլի համոզվում էր, որ մի բան պատահել է։ Նրա մտքերը, ինչպես և մարմինը, կատարում էին լրիվ շրջան, չհանդիպելով ո՛չ մի

նոր բանի։ Նա նկատեց այդ, տրորեց ճակատը և նստեց կնոջ առանձնասենյակում։

Այստեղ, նայելով Աննայի սեղանին, որի վրա դրված էին մալաթիտի բյուվար ու կիսավարտ տոմս, հանկարծ նրա մտքերը փոխվեցին։ Նա սկսեց մտածել կնոջ մասին, այն մասին, թե ի՛նչ է մտածում ու զգում կինը։ Նա առաջին անգամ վառ երևակայությամբ պատկերացրեց իրեն կնոջ անձնական կյանքը, նրա մտքերը, նրա ցանկությունները, և այն միտքը, թե կինը կարող է ու պետք է ունենա իր սեփական կյանքը, թվաց նրան այնքան սարսափելի, որ նա շտապեց վանել այդ միտքը։ Դա այն մոլեգնապատույտ հորձանուտն էր, ուր նայելիս՝ սոսկում էր նա։ Մտքով ու զգացումով տեղափոխվել ուրիշ էակի մեջ՝ հոգեկան գործողություն էր, որ խորթ էր Ալեքսեյ Ալեքսանդրովիչի համար։ Հոգեկան այդ գործողությունը նա համարում էր վնասակար ու վտանգավոր մտապատրանք։

«Եվ ամենից սարսափելին այն է,— մտածում էր նա,— որ հենց այժմ, երբ իմ գործը մոտենում է իր վախճանին (նա մտածում էր այն նախագծի մասին, որ անց էր կացնում այժմ), երբ ինձ պետք են հոգուս բոլոր ուժերն ու լիարժեք հանգստություն,— այժմ իմ գլխին պայթում է այս անմիտ տագնապը։ Բայց ի՞նչ անել։ Ես այն մարդկանցից չեմ, որոնք կրում են վրդովմունք ու տագնապներ և ուժ չունեն նայելու նրանց երեսին»։

— Ես պետք է կշռադատեմ, վճռեմ ու դեն նետեմ,— առաջ նա բարձրաձայն։

«Կնոջս զգացումների հարցերը, այն, թե ի՞նչ է կատարվել ու ի՞նչ կարող է կատարվել նրա հոգում, իմ բանը չէ, դա նրա խղճի բանն է և ենթակա է կրոնին»,— մտածեց նա, թեթևություն զգալով այն գիտակցությունից, թե գտնված է օրենքների այն կետը, որին ենթակա է առաջ եկած այս հանգամանքը։

«Այսպես,— խորհեց Ալեքսեյ Ալեքսանդրովիչը,— կնոջս զգացումների հարցը և այն նրա խղճի հարցն է, որի հետ ես գործ չունեմ։ Իսկ իմ պարտավորությունը պարզ որոշվում է։ Որպես ընտանիքի գլուխ, ես մի անձնավորություն եմ, որ պարտավոր է ղեկավարել իր կնոջը, ուստի ես մասամբ պատասխանատու դեմք եմ. ես պարտավոր եմ նշել այն վտանգը, որ

տեսնում եմ, պարտավոր եմ նախազգուշացնել և նույնիսկ իշխանություն գործ դնել։ Ես պետք է բոլորն ասեմ նրանց։

Եվ Ալեքսեյ Ալեքսանդրովիչի գլխում պարզ ձևավորվեց այն բոլորը, ինչ նա այժմ պիտի ասի կնոջը։ Կշռադատելով, թե ի՞նչ է ասելու, նա ափսոսաց, որ տնային գործադրության համար, այդպես աննկատելի կերպով ինքը պիտի սպառի իր ժամանակը և իր խելքի ուժը. բայց, չնայած դրան, նրա գլխում պարզ ու որոշակի, ինչպես զեկույց, կազմվեց առաջիկա հառի ձևն ու հետևողականությունը։ «Ես պետք է ասեմ ու հայտնեմ հետևյալը. նախ՝ հասարակական կարծիքի և վայելչության նշանակության բացատրությունը. երկրորդ, ամուսնության նշանակության կրոնական բացատրությունը. երրորդ, եթե պետք է, նշել որդու համար հնարավոր դժբախտությունը. չորրորդ, նշել նրա սեփական դժբախտությունը»։ Եվ մատները հաղցնելով իրար, ափերով դեպի ներքև, Ալեքսեյ Ալեքսանդրովիչը ձգեց, ու մատները ճրճրթացին իրենց հոդերում։

Այդ շարժումը, մի վատ սովորություն,— այսինքն՝ ձեռքերն իրար կցելն ու մատները ճրճրթացնելը,— միշտ հանգստացնում էր նրան ու տրամադրում ճշտապահության, որն այժմ այնպես հարկավոր էր։ Գլխավոր մուտքի դռան մոտ լսվեց մոտեցող կառքի ձայնը։ Ալեքսեյ Ալեքսանդրովիչը կանգ առավ դահլիճի մեջտեղում։

Սանդուղքով բարձրանում էին կանացի քայլեր։ Ալեքսեյ Ալեքսանդրովիչը, պատրաստ իր ճառին, կանգնել էր, սեղմելով իրար կցած մատները և սպասելով, արդյոք չի՞ ճրճրթա էլի մի տեղ։ Մի հոդը ճրթաց։

Սանդուղքի վրա թեթև քայլերի ձայնից դեռ նա զգաց կնոջ մոտենալը, և թեպետ գոհ էր իր ճառից, բայց սարսափեց առաջիկա բացատրությունից։

IX

Աննան քայլում էր, գլուխը կախ և խաղալով բաշլուղի ծոպերի հետ։ Նրա դեմքը փայլում էր պայծառ փայլով. բայց այդ փայլն ուրախ չէր,— նա հիշեցնում էր մութ գիշերին հրդեհի սոսկալի փայլ։ Տեսնելով ամուսնուն, Աննան բարձրացրեց գլուխը և, կարծես զարթնելով, ժպտաց։

— Դու անկողնում չե՞ս։ Ա՛յ քեզ հրաշք,— ասաց նա, հանեց բաշլուղը և կանգ չառնելով, առաջ գնաց դեպի վարդասենյակ։— Ժամանակն է, Ալեքսեյ Ալեքսանդրովիչ,— ասաց նա դռան ետևից։

— Աննա, ես խոսելիք ունեմ քեզ հետ։

— Ի՞նձ հետ,— ասաց նա զարմացած, դուրս եկավ դռնից և նայեց ամուսնուն։— Իսկ ի՞նչ կա որ։ Ինչի՞ մասին,— հարցրեց նա նստելով։— Դե՛հ, ե՛կ խոսենք, եթե այդքան պետք է։ Իսկ ավելի լավ է՝ քնենք։

Աննան ասում էր այն, ինչ գալիս էր բերանը, և ինքն էլ, ունկնդրելով իրեն, զարմանում էր կեղծելու իր ընդունակության վրա։ Ի՞նչ պարզ ու բնական էին նրա խոսքերը և ի՞նչ ճշմարտանման էր այն, որ իբր նա ուզում է քնել։ Նա զգում էր, որ ինքը հագել է կեղծության անթափանց զրահ։ Զգում էր, որ աներևույթ մի ուժ օգնում ու պաշտպանում է իրեն։

— Աննա, ես պետք է նախազգուշացնեմ քեզ,— ասաց նա։

— Նախազգուշացնե՞լ,— ասաց Աննան։— Ինչի՞ց։

Նա նայում էր այնպես պարզահայաց, այնպես ուրախ, որ ամեն ոք, ով չէր ճանաչում նրան այնպես, ինչպես ամուսինն էր ճանաչում, չէր կարող նկատել անբնական ո՛չ մի բան՝ ո՛չ նրա ձայնի, ո՛չ էլ խոսքերի իմաստի մեջ։ Բայց Ալեքսեյ Ալեքսանդրովիչի համար, որը ճանաչում էր նրան և գիտեր, որ երբ ինքը պառկում էր քնելու մի հինգ րոպե ավելի ուշ, կինը նկատում էր այդ և հարցնում պատճառը. Ալեքսեյ Ալեքսանդրովիչի համար, որը գիտեր, որ կինն իր ամեն մի ցնծության, ուրախության, վշտի մասին անմիջապես հայտնում էր իրեն,— շատ շատ էր նշանակում այն, որ Աննան չէր ուզում նկատել նրա կաց ելությունը, չէր ուզում ո՛չ մի խոսք ասել իր մասին։ Նա տեսնում էր, որ առաջներում իր առջև միշտ բաց կնոջ հոգու խորությունը այժմ փակ էր։ Ավելին. կնոջ խոսելու տոնից ամուսինը տեսնում էր, որ նա չէր էլ քաշվում, շփոթվում դրանից, այլ կարծես ուղղակի ասում էր. այո՛, փակ է, և դա պետք է այդպես լինի ու կլինի այսուհետև։ Ալեքսեյ Ալեքսանդրովիչն այժմ ուներ այնպիսի զգացում, ինչպիսին կունենար այն մարդը, որը վերադառնում է տուն և տեսնում, որ իր տունը փակ է։ «Բայց գուցե բանալին գտնվի դեռ», — մտածում էր նա։

— Ես ուզում եմ նախազգուշացնել քեզ այն բանից,—

ասաց նա ցածր ձայնով,— որ դու քո անշրջահայացությամբ ու թեթևամտությամբ կարող ես առիթ տալ քո մասին խոսելու բարձր հասարակության մեջ։ Քո չափազանց աշխույժ գրույցը այսօր կոմս Վոռոնսկու հետ (նա հաստատապես ու հանգիստ արտասանեց այդ անունը) ուշադրություն դրավեց։

Նա խոսում ու նայում էր կնոջ ծիծաղուն, իրենց անթափանցությամբ իր համար այժմ սարսափելի աչքերին և զգում էր, որ իր խոսքերը բոլորովին անօգուտ են ու ապարդյուն։

— Դու միշտ այդպես ես,— պատասխանեց Աննան, կարծես՝ բնավ չհասկանալով նրան և նրա ամբողջ ասածից դիտմամբ հասկանալով միայն վերջինը։— Մերթ անախորժ է քեզ, որ ես տխուր եմ, մերթ անախորժ, որ ուրախ եմ։ Ինձ համար տխուր չէր։ Դա վիրավորո՞ւմ է քեզ։

Ալեքսեյ Ալեքսանդրովիչը ցնցվեց ու ծալեց ձեռքերի մատները, որ ճրճրթացնի։

— Ա՜խ, ի սեր աստծո, մի՛ ճրթացրու, ես այնպես չեմ սիրում,— ասաց կինը։

— Աննա, մի՞թե դո՛ւ ես դա,— ասաց Ալեքսեյ Ալեքսանդրովիչը կամաց, ուժ գործ դնելով իր վրա ու զսպելով ձեռքերի շարժումը։

— Իսկ ի՞նչ է պատահել,— ասաց Աննան այնպիսի անկեղծ և կոմիկական զարմանքով։— Ի՞նչ ես ուզում ինձանից։

Ալեքսեյ Ալեքսանդրովիչը լռեց և ձեռքով տրորեց հակատն ու աչքերը։ Նա տեսնում էր, որ փոխանակ այն բանի, ինչ ուզում էր ինքն անել, այսինքն՝ նախազգուշացնել իր կնոջը սրախալմունքից՝ բարձր հասարակության աչքում, ակամա հուզվում էր այն բանից, ինչը վերաբերում էր կնոջ խղճին, և պայքարում էր ինչ-որ երևակայական պատնեշի դեմ։

— Ես ահա թե ի՞նչ եմ մտադիր ասելու,— շարունակեց նա սառն ու հանգիստ,— և կխնդրեի քեզ լսել։ Ինչպես հայտնի է քեզ, ես խանդը համարում եմ վիրավորական ու նվաստացուցիչ զգացում և երբեք թույլ չեմ տա ինձ ղեկավարվելու այդ զգացումով. բայց կան վայելչության որոշ օրենքներ, որ չի կարելի զանց առնել անպատիժ։ Այսօր ո՛չ թե ես, այլ, դատելով հասարակության վրա թողած տպավորությունից, ամենքը նկատեցին, որ դու քեզ պահում էիր ո՛չ բնավ այնպես, ինչպես ցանկալի էր։

— Վճռականապես ոչինչ չեմ հասկանում,— ասաց Աննան, ուսերը վեր քաշելով։ «Նրա համար միևնույն է,— մտածեց Աննան։— Բայց հասարակության մեջ նկատեցին, և դա վրդովում է նրան»։— Դու տկար ես, Ալեքսեյ Ալեքսանդրովիչ,— ավելացրեց նա, վեր կացավ և ուզում էր գնալ դեպի դուռը, բայց ամուսինն առաջ շարժվեց, կարծես կամենալով կանգնեցնել նրան։

Նրա դեմքը տգեղ էր ու մռայլ, և այդպես երբեք չէր տեսել նրան Աննան։ Վերջինս կանգ առավ ու գլուխը ետ թեքած, սկսեց իր արագաշարժ ձեռքով հանել վարսակալ շիղերը։

— Դե՜հ, ես լսում եմ, ի՞նչ է լինելու,— ասաց Աննան հանգիստ ու քմծիծաղ։— Ես լսում եմ նույնիսկ հետաքրքրությամբ, որովհետև կուզենայի իմանալ, թե բանն ի՞նչ է։

Նա խոսում էր և զարմանում այն բնական-հանգիստ, վրստահ տոնի վրա, որով խոսում էր ինքը, զարմանում էր նաև իր գործածած խոսքերի ընտրության վրա։

— Ես իրավունք չունեմ մտնելու քո զգացումների բոլոր մանրամասների մեջ և առհասարակ դա համարում եմ անօգուտ, նույնիսկ վնասակար,— սկսեց Ալեքսեյ Ալեքսանդրովիչը։— Փորփրելով մեր հոգին, մենք հաճախ փորում, հանում ենք այնպիսի բան, որ այնտեղ ընկած կմնար աննկատելի։ Քո զգացումները քո խղճի բանն են. բայց ես պարտավոր եմ քո հանդեպ, իմ հանդեպ և աստծո հանդեպ նշել քեզ քո պարտավորությունները։ Մեր կյանքը կապված է իրար հետ, և կապված է ո՛չ թե մարդկանց ձեռքով, այլ աստծով։ Քանդել այդ կապը կարող է միայն հանցագործությունը, և այդ կարգի հանցագործությանը կհետևի ծանր պատիժը։

— Ոչինչ չեմ հասկանում։ Ա՜խ, աստված իմ, և հակառակի պես՝ ինչպե՞ս քնել եմ ուզում,— ասաց Աննան, արագ պրպտելով մազերը և որոնելով մնացած վարսակալ շիղերը։

— Աննա, ի սեր աստծո, մի՛ խոսիր այդպես,— ասաց նա հեզաբար։— Գուցե ես սխալվում եմ, բայց հավատա, որ այն, ինչ ասում եմ ես, ասում եմ որքան ինձ համար, նույնքան և քեզ համար։ Ես քո ամուսինն եմ և սիրում եմ քեզ։

Մի վայրկյան Աննայի դեմքը տրտմեց և, մարեց հեգնական կայծը հայացքի մեջ. բայց «սիրում եմ» խոսքը նորից վրդովեց նրան։ Նա մտածեց. «Սիրո՞ւմ է։ Մի՞թե նա կարող է

սիրել։ Եթե նա լսած չլիներ, որ լինում է սեր, երբեք էլ չէր գործածի այդ բառը։ Նա չգիտե էլ, թե ի՞նչ բան է սերը»։

— Ալեքսեյ Ալեքսանդրովիչ, իրոք, ես չեմ հասկանում,— ասաց Աննան։— Պարզիր, թե ի՞նչը քո կարծիքով...

— Թույլ տուր, թող վերջացնեմ ասելիքս։ Ես սիրում եմ քեզ։ Բայց ես խոսում եմ ո՞չ իմ մասին. գլխավոր դեմքերն այստեղ դուք եք՝ մեր որդին է և դու ինքդ։ Շատ կարող է պատահել, կրկնում եմ, քեզ բոլորովին զուր և անտեղի թվան իմ խոսքերը։ Կարող է պատահել, որ նրանք իմ մոլորության արդյունքն են։ Այն դեպքում, ես խնդրում եմ քեզ, ներիլ ինձ։ Բայց եթե դու ինքդ զգում ես, որ կա դեթ չնչին հիմք, ես խնդրում եմ քեզ՝ մտածել և, եթե սիրտդ թելադրում է, ապա ասել ինձ...

Ալեքսեյ Ալեքսանդրովիչը, ինքն էլ չնկատելով, ասում էր բնավ ոչ այն, ի՞նչ պատրաստել էր։

— Ես ասելու բան չունեմ։ Եվ հետո...— հանկարծ արագ ասաց Աննան, հազիվ զսպելով ժպիտը,— իսկապես ժամանակ է քնելու։

Ալեքսեյ Ալեքսանդրովիչը հառաչեց և, այլևս ոչինչ չասելով, գնաց ննջարան։

Երբ Աննան մտավ ննջարան, ամուսինն արդեն պառկած էր։ Նրա շրթունքները խիստ սեղմված էին, և աչքերը չէին նայում կնոջ վրա։ Աննան պառկեց իր անկողնում և ամեն բոպե սպասում էր, որ նա մի անգամ էլ կխոսի։ Աննան և՛ վախենում էր, որ նա խոսք կբացի, և՛ ուզում էր այդ։ Բայց նա լուռ էր։ Աննան երկար սպասում էր անշարժ և արդեն մոռացել էր նրա գոյության մասին։ Աննան մտածում էր ուրիշի մասին։ Նա տեսնում էր նրան ու զգում, թե ինչպե՞ս իր սիրտն այդ մտքի հետ լցվում է հուզմունքով և հանցավոր ուրախությամբ։ Հանկարծ նա լսեց քթի հավասար ու հանգիստ սուլոց։ Առաջին բոպեին Ալեքսեյ Ալեքսանդրովիչը կարծես վախեցավ իր սուլոցից ու կանգ առավ. բայց երկու շնչառ սպասելուց հետո, սուլոցը լսվեց նոր, հանգիստ հավասարությամբ։

— Ուշ է, ուշ, արդեն ուշ է,— շշնջաց Աննան ժպտալով։ Նա երկար ժամանակ պառկած էր անշարժ՝ բաց աչքերով, որոնց փայլը, թվում էր, թե ինքը տեսնում էր մթության մեջ։

X

Այդ երեկոյից սկսվեց մի նոր կյանք Ալեքսեյ Ալեքսանդրովիչի և նրա կնոջ համար։ Առանձին ոչինչ չէր պատահել։ Աննան, ինչպես միշտ, հաճախում էր բարձր հասարակությունը, առանձնապես հաճախ էր լինում իշխանուհի Բետսիի մոտ և ամենուր հանդիպում էր Վրոնսկուն։ Ալեքսեյ Ալեքսանդրովիչը տեսնում էր այդ, բայց ոչինչ անել չէր կարող։ Նրա բոլոր փորձերին՝ բացատրության հակել կնոջը, վերջինս հակադրում էր ինչ-որ ուրախ տարակուսանքի անթափանց պատ։ Արտաքուստ ամեն ինչ նույնն էր, բայց բոլորովին փոխվել էին նրանց ներքին հարաբերությունները։ Ալեքսեյ Ալեքսանդրովիչը, որ այնքա՞ն ուժեղ մարդ էր պետական գործունեության մեջ, այստեղ իրեն զգում էր անզոր։ Եզան նման, գլուխը հնազանդ կախ գցած, նա սպասում էր թակոցի, որը, զգում էր նա, բարձրացրած էր իր գլխին։ Ամեն անգամ, երբ սկսում էր մտածել այդ մասին, զգում էր, որ պետք է մի անգամ ևս փորձել, որ բարությամբ, քնքշությամբ համոզելով դեռ հույս կա փրկելու կնոջը, ստիպելու նրան, որ ուշքի գա, և նա ամեն օր պատրաստվում էր խոսելու նրա հետ։ Բայց ամեն անգամ, երբ նա սկսում էր խոսել, զգում էր, որ շարի ու խաբեության այն ոգին, որով համակված էր կինը, համակում էր նաև իրեն, և նա ասում էր կնոջը բնավ ո՞չ այն, ու խոսում էր հետը ո՞չ այն տոնով, որով ուզում էր խոսել։ Նա կնոջ հետ-ակամա խոսում էր մեկին ծաղրելու իր սովորական տոնով։ Իսկ այդ տոնով չէր կարելի ասել այն, ինչ ցանկանում էր ասել կնոջը։

. . . . . .

. . . . . .

XI

Այն, ինչը համարյա ամբողջ տարի Վրոնսկու համար բացառապես կազմում էր նրա կյանքի միակ տենչը, որ փոխարինում էր նրա առաջվա բոլոր ցանկություններին,— այն, ինչը Աննայի համար երջանկության անհնարին, սարսափելի ու ավելի ևս հմայիչ բաղձանք էր, այդ ցանկությունը բավարար-

վել էր։ Վարի դողդոջուն ծնոտով, դժգույն, կանգնել էր Վոռնոսկին Աննայի դիմաց և աղերսում էր նրան հանդարտանալ, ինքն էլ չիմանալով, թե ինչպե՛ս ու ինչի՛ց։

— Ա՜ննա, Ա՜ննա,— ասում էր նա դողդոջուն ձայնով։— Ա՜ննա, ի սեր աստծո...

Բայց որքան ավելի բարձր էր նա խոսում, այնքան ավելի էր խոնարհում Աննան իր երբեմնի հպարտ, ուրախ, իսկ այժմ ամոթահար գլուխն ու ամբողջ մարմնով կորանում և ուզում էր վայր ընկնել բազմոցից, որի վրա նստած էր, ընկնել նրա ոտների տակ. և Աննան կընկներ գորգի վրա, եթե Վոռնոսկին չպահեր նրան։

— Աստվա՜ծ իմ, ների՛ր ինձ,— հեկեկալով ասում էր նա, սեղմելով իր կրծքին Վոռնոսկու ձեռքերը։

Նա իրեն զգում էր այնքան հանցավոր ու մեղապարտ, որ նրան մնում էր միայն նվաստանալ ու ներողություն խնդրել, իսկ կյանքում այժմ, կոմս Վոռնոսկուց բացի, նա ոչ ոք չուներ, այնպես որ նրան էլ ուզղում էր ներման մասին իր աղերսը։ Նայելով Վոռնոսկուն, նա ֆիզիկապես զգում էր իր նվաստացումը և չէր կարող այլևս ոչինչ ասել։ Իսկ Վոռնոսկին զգում էր այն, ինչ պետք է զգա մարդասպանը, երբ տեսնում է իր ձեռքով կյանքից զրկված մարմինը։ Կյանքից զրկված այդ մարմինը նրանց սերն էր, նրանց սիրո առաջին շրջանը։ Կար մի սոսկալի ու զզվելի բան հիշողությունների մեջ՝ այն բանի մասին, որի համար վճարված էր ամոթի այդ սարսափելի գինը։ Ամոթն իր հոգեկան մերկության առաջ ճնշում էր Աննային և հաղորդվում Վոռնոսկուն։ Բայց չնայած սպանվածի հանդեպ մարդասպանի ունեցած ամբողջ սոսկանքին, պետք է կտոր-կտոր անել այդ մարմինը, պետք է թաքցնել այդ դիակը, պետք է օգտվել այն բանից, ինչը մարդասպանը ձեռք էր բերել սպանությամբ։

Եվ գազազանքով, կարծես կրքոտությամբ, մարդասպանը վրա է ընկնում այդ մարմնին, և՛ քաշքշում, և՛ կտրատում է այն. այդպես էլ նա, Վոռնոսկին, համբույրներով ծածկում էր նրա ուսերն ու դեմքը։ Աննան բռնել էր նրա ձեռքը և անշարժ էր։ Այո՛, այդ համբույրներն այն էին, ինչը զնված էր ամոթով։ Այո՛, և այս մի ձեռքը, որ միշտ կլինի իմը,— իմ մեղսակցի ձեռքն է։ Աննան բարձրացրեց այդ ձեռքն ու համբուրեց։ Վոռնոսկին ծունկ չոքեց և ուզում էր տեսնել նրա դեմքը, բայց նա թաքցրեց այն ու ոչինչ չէր ասում։ Վերջապես, կարծես ջանք գործ դնելով իր վրա, Աննան կանգնեց ու ետ վանեց նրան։ Աննայի դեմքը դարձյալ գեղեցիկ էր, բայց ավելի ևս նկուն էր։

— Ամեն ինչ վերջացավ,— ասաց նա։— Ես ոչինչ չունեմ բացի քեզանից։ Հիշի՛ր այդ։

— Ես չեմ կարող չհիշել այն, ինչը իմ կյանքն է։ Այդ երջանկության մի բոպեի համար...

— Ի՜նչ երջանկություն,— զզվանքով ու սոսկումով ասաց Աննան, և սոսկումն ակամա հաղորդվեց Վոռնոսկուն։— Ի սեր աստծո, այլևս ո՛չ մի խոսք, ո՛չ մի խոսք։

Նա արագ կանգնեց և մի կողմ քաշվեց Վոռնոսկուց։

— Ո՛չ մի խոսք այլևս,— կրկնեց նա և բաժանվեց Վոռնոսկուց, վերջինիս համար տարօրինակ սառը հուսահատության արտահայտություն դեմքին։ Աննան զգում էր, որ այդ բոպեին չէր կարող բառերով արտահայտել ամոթի, ուրախության ու սարսափի զգացումը՝ նոր կյանքի մեջ մտնելու այդ փաստի հանդեպ և չէր ուզում խոսել դրա մասին. չէր ուզում գոնեկացնել այդ զգացումը անճիշտ բառերով։ Բայց հետո ևս, ո՛չ հաջորդ, ո՛չ էլ հետևյալ օրը, նա ո՛չ միայն չգտավ հարմար խոսքեր, որոնցով կարողանար արտահայտել այդ զգացումների ամբողջ բարդությունը, այլև մտքեր էլ չէր գտնում, որոնցով կարողանար ինքն իր մեջ կշռադատել այն բոլորը, ինչ կար իր հոգում։

Նա ասում էր իրեն. «Ո՛չ, այժմ ես չեմ կարող մտածել դրա մասին. հետո, երբ ավելի հանգիստ կլինեմ»։ Բայց մտքերի համար անհրաժեշտ այդ հանգիստը երբեք չէր գալիս. ամեն անգամ, երբ նրա գլխում միտք էր ծագում այն մասին, թե ի՛նչ արեց ինքը և ի՛նչ է լինելու իրեն, ու ի՛նչ պիտի անի ինքը, նրան համակում էր սարսափ, և նա վանում էր իրենից այդ մտքերը։

— Հետո՛, հետո՛,— ասում էր նա— հետո, երբ ավելի հանգիստ կլինեմ։

Դրա փոխարեն, քնի մեջ, երբ նա իշխանություն չուներ իր մտքերի վրա, նրա գրությունը պատկերանում էր իր ամբողջ այլանդակ մերկությամբ։ Մի երազ, համարյա ամեն գիշեր, այցելում էր նրան։ Աննան երազում տեսնում էր, որ նրանք

երկուսն էլ իր ամուսիններն էին, որ նրանք երկուսն էլ շոայլաբար շոյում, գուրգուրում էին իրեն։ Ալեքսեյ Ալեքսանդրովիչը լաց էր լինում, համբուրելով կնոջ ձեռքերը, և ասում էր՝ ի՞նչ լավ է այժմ։ Եվ Ալեքսեյ Վրոնսկին էլ այդտեղ էր, նա նույնպես Աննայի ամուսինն էր։ Ու Աննան, զարմանալով այն բանի համար, որ առաջ դա իրեն թվում էր անհնարին, բացատրում էր նրանց, ծիծաղելով, որ դա շատ պարզ բան է և որ նրանք երկուսն էլ այժմ գոհ են ու երջանիկ։ Բայց այդ երազը, մղձավանջի պես, ճնշում, խեղդում էր նրան, և նա արթնանում էր սոսկումով։

XII

Մոսկվայից վերադառնալուց հետո դեռ սկզբներում, երբ Լևինն ամեն անգամ ցնցվում ու կարմրում էր, մտաբերելով մերժման խայտառակությունը, ասում էր ինքն իրեն. «Այդպես կարմրում ու ցնցվում էի ես, համարելով ամեն ինչ կորած, երբ ֆիզիկայից ստացա մեկ ու մնացի երկրորդ կուրսում. այդպես կորած էի համարում ինձ այն բանից հետո, երբ փչացրի քրոջս գործը, որ հանձնված էր ինձ։ Եվ ի՞նչ. այժմ, երբ անցել են տարիներ, ես մտաբերում ու զարմանում եմ, թե ինչպե՞ս դա կարող էր վշտացնել ինձ։ Նույնը կլինի նաև այս վշտի հետ։ Կանցնի ժամանակ, և ես անտարբեր կլինեմ դրան»։

Բայց անցավ երեք ամիս, և նա անտարբեր չդարձավ, ու նրան նույնքան, ինչպես և առաջ, ցավ էր պատճառում, երբ մտաբերում էր այդ։ Նա չէր կարողանում հանգստանալ, որովհետև ինքը, որ այնքան երկար ժամանակ երազում էր ընտանեկան կյանքի մասին և, որ դրա համար իրեն զգում էր այնպես հասունացած, այսուամենայնիվ ամուսնացած չէր և ամուսնությունից հեռու էր շատ ավելի, քան երբևիցե։ Նա ինքը, ցավով զգում էր, ինչպես զգում էին իրեն շրջապատող ամենքը, որ միայնակ լինելը լավ չէ իր տարիքն ունեցող մարդու համար։ Նա հիշում էր, թե ինչպե՞ս Մոսկվա գնալուց առաջ մի անգամ ասաց իր անասնապահ Նիկոլային, միամիտ մուժիկին, որի հետ նա սիրում էր երբեմն զրուցել. «Ի՞նչ կասես, Նիկոլայ, ուզում եմ ամուսնանալ», և թե ինչպե՞ս Նիկոլայը շտապ պատասխանեց, ինչպես պատասխանում են մի գործի մասին, որի վերաբերյալ չի կարող ո՛չ մի կասկած լինել. «Վաղուց ժամանակն է, Կոնստանտին Դմիտրիչ»։ Բայց ամուսնությունն այժմ նրանից հեռացավ ավելի, քան երբևիցե։ Տեղը գրավված էր, և երբ այժմ նա երևակայությամբ պատկերացնում էր այդ տեղում իր ծանոթ աղջիկներից մեկին ու մեկին, զգում էր, որ դա բոլորովին անհնարին բան է։ Բացի դրանից, հիշողությունը մերժման և այն դերի մասին, որ ինքը խաղաց այն ժամանակ, տանջում էր նրան ամոթի զգացումով։ Որքան էլ նա ասում էր իրեն, որ ինքն այդ բանում մեղավոր չէ, այսուամենայնիվ այդ հիշողությունը, դրա նման այլ հիշողությունների հետ համահավասար, ստիպում էր նրան ցնցվել ու կարմրել։ Ինչպես յուրաքանչյուր մարդու, այնպես էլ նրա անցյալում կային իր կողմից գիտակցված վատ արարքներ, որոնց համար խիղճը պետք է տանջեր նրան. բայց ուրիշ վատ վարմունքների մասին հիշողությունը բնավ այնպես չէր տանջում նրան, ինչպես տանջում էին այդ չնչին, սակայն ամոթալի հիշողությունները։ Այդ վերքերը երբեք չէին փակվում։ Եվ այդ հիշողություններին հավասար կերպով կանգնած էին այժմ մերժումն ու այն խղճալի դրությունը, որի մեջ նա պիտի պատկերանար ուրիշներին այդ երեկո։ Բայց ժամանակը և աշխատանքն անում էին իրենցը։ Ծանր հիշողություններն ավելի ու ավելի ծածկվում էին նրա համար աննկատելի, սակայն կարևոր, գյուղական կյանքի նշանակալից դեպքերով։ Շաբաթ առ շաբաթ նա ավելի ուշ-ուշ էր մտաբերում Կիտիին։ Նա անհամբերությամբ սպասում էր այն լուրին, թե Կիտին արդեն ամուսնացել է, կամ մոտ օրերս կամուսնանա, հուսալով, որ այդպիսի լուրը, ինչպես ատամ հանելը, բոլորովին կբժշկի իրեն։

Մինչ այդ, եկավ գարունը, գեղանի, միահամուռ, առանց դարնան պատրանքների ու սպասումի, մեկն այն գարուններից, որոնց գալուն ուրախ են բույսերը, կենդանիներն ու մարդիկ։ Այդ գեղատեսիլ գարունն է՛լ ավելի հուզեց Լևինին և հաստատուն դարձրեց նրա դիտավորությունը՝ հրաժարվելու առաջվա բոլոր բաներից, իր մենավոր կյանքը հաստատապես ու անկախորեն կարգավորելու պայմանով։ Թեպետ չէին կենսագործված նրա ծրագրերից շատերը, որոնցով նա վերադար-

ձավ գյուղ, սակայն նա կատարել, իրագործել էր ամենագլխավորը՝ կյանքի մաքրությունը։ Նա չուներ ամոթի այն զգացումը, որ սովորաբար տանջում էր նրան անկումից հետո. և նա կարող էր համարձակ նայել մարդկանց աչքերին։ Դեռ փետրվարին նամակ ստացավ Մարիա Նիկոլաևնայից այն մասին, թե Նիկոլայ եղբոր առողջությունն ավելի վատանում է, բայց նա չի ուզում բժշկվել, և այդ նամակի հետևանքով Լևինը գընաց Մոսկվա եղբոր մոտ ու կարողացավ համոզել նրան խորհրդակցել բժշկի հետ ու գնալ արտասահման՝ հանքային ջրեր։ Նրան այնպես լավ հաջողվեց համոզել եղբորը ու փոխարինաբար դրամ տալ այդ ուղևորության համար, առանց զրգռելու եղբորը, որ Լևինն այդ տեսակետից զոհ էր իրենից։ Բացի տնտեսությունից, որ առանձին ուշադրություն էր պահանջում գարնանը, բացի ընթերցանությունից, Լևինն այս ամեռ սկսեց գրել տնտեսության մասին մի երկ, որի ծրագիրը կայանում էր նրանում, որպեսզի բանվորի բնույթը տնտեսության մեջ ընդունվեր իբրև բացարձակ տվյալ, ինչպես կլիման ու հողը, և որպեսզի, հետևաբար, տնտեսության մասին գիտության բոլոր սկզբունքները հանվեին ո՛չ միայն հողի ու կլիմայի տվյալներից, այլ հողի, կլիմայի և բանվորի որոշակի անփոփոխ բնույթի տվյալներից։ Այնպես որ, չնայած իր մեկուսացմանը, կամ իր մեկուսացման հետևանքով, նրա կյանքը չափազանց լեցուն էր. հազվագյուտ դեպքերում էր միայն նա ունենում չբավարարված ցանկություն՝ հաղորդելու իր ղլխում պտտվող մտքերը մեկն ու մեկին, բացի Ագաֆիա Միխայլովնայից, թեպետ պատահում էր, որ սրա հետ ևս հաճախ զրուցում էր ու դատում ֆիզիկայի, տնտեսության, տեսության ու մանավանդ փիլիսոփայության մասին. փիլիսոփայությունը Ագաֆիա Միխայլովնայի սիրած առարկան էր։

Գարունը երկար ժամանակ չէր բացվում։ Պասի վերջին շաբաթներին եղանակը պարզ էր, ցուրտ։ Ցերեկը ձյունը հալվում էր արևից, իսկ գիշերը ցուրտը հասնում էր յոթ աստիճանի. սառցաձյունն այնպես էր, որ սայլերով գնում էին առանց ճանապարհի։ Զատիկը ձյունով էր։ Հետո հանկարծ, զատկի երկրորդ օրը, փչեց տաք քամի, կուտակվեցին ամպերը, և երեք օր ու գիշեր տեղաց ուժգին ու տաք անձրև։ Հինգշաբթի քամին հանդարտվեց, բարձրացավ թանձր, զորշ մառախուղ, կարծես քողարկելով բնության մեջ կատարվող փոփոխությունների գաղտնիքները։ Մառախուղի մեջ հոսեցին ջրերը. ճաթճըթեցին ու շարժվեցին սառցակույտերը, ավելի սրընթաց վազեցին պղտոր, փրփրած գետակները. և Կրասնայա Գորկայի վրա երեկոյան դեմ պայթեց մուժը, ամպերը ցրիվ եկան գառների պես, երկինքը պարզվեց ու բացվեց իսկական գարունը։ Առավոտյան բարձրացած պայծառ արևն արագ կլանեց ջրի երեսը պատած բարակ սառույցը, և ամբողջ տաք օրը դողդողաց կենդանացած երկրի գոլորշիացումներից, որով հագեցած էր օդը։ Կանաչեց հին ու փշաձև ծիլեր արձակող նոր խոտը, լցվեցին փոնչենու, հաղարջենու և կոչուն կեչի պտուկները, ու ոսկեգույն փոշով պատած ուռենու վրա տպտզած դուրս հանած փեթակից թռած մեղուն։ Գեղգեղեցին անտեսանելի արտույտները կանաչների թավշի և սառցակալած խոզանների վրա, արտասվեցին եղտյուրիկները գորշ կարմրագույն ջրով հեղեղված տափաստանների ու ճահիճների վրա, և բարձրից թռան-անցան գարնանային կոնչյունով կռունկներն ու սագերը։ Բառաչեց արոտավայրերում բուրդը տված, տեղ-տեղ միայն մազը դեռ չփոխած անասունը, թռչկոտեցին ծուռոտիկ գառներն իրենց բառաչող մայրերի շուրջը, վազեցին արագոտն երեխաները շավիղներով, որոնց վրա երևում էին բորիկ ոտների չորացող հետքերը. ճթճթացին արհեստական լճակի վրա կտավագգեստ կնիկների ուրախ ձայները, և բակերում թխթխկացին կացինները մուժիկների, որոնք կարգի էին բերում արորներն ու տավանները։ Եկավ իսկական գարունը։

XIII

Լևինը հագավ մեծ սապոգներ և առաջին անգամ ո՛չ թե մուշտակ, այլ մահուդի թեթև վերնազգեստը ու գնաց շրջելու տնտեսության մեջ, թռչելով առվակների վրայից, որոնք արևի տակ աչք էին ծակում իրենց փայլով, ոտը դնելով մերթ փոքրիկ սառցակոշտի վրա, մերթ կպչուն ցեխի մեջ։

Գարունը ծրագրերի ու ենթադրությունների ժամանակ է։ Եվ դուրս գալով բակ, Լևինը, ինչպես ծառը գարնան, որ չգիտե դեռ, թե դեպի ո՛ւր և ինչպե՞ս կաճեն ուռճացած պտուկների

մեջ պահված իր նոր ճյուղերն ու ոստերը, ինքն էլ լավ չգիտեր, թե այժմ ինչի՛ կձեռնարկի իր սիրած տնտեսության մեջ, բայց զգում էր, որ լցված է ամենալավ ծրագրերով ու ենթադրություններով։ Ամենից առաջ նա գնաց անասունների մոտ։ Կովերը դուրս էին բերվել ետևի բակ և փայլում էին իրենց նորաբույս, կոկ մազերով ու արևի տակ տաքացած, բառաչում էին, ասես խնդրում, որ թույլ տան դաշտ գնալու։ Հաճույալից դիտելով ու հիանալով կովերով, որոնց բոլոր մանրամասնությունները ծանոթ էին իրեն, Լևինը հրամայեց քշել նրանց դեպի դաշտ, իսկ հորթերը դուրս բերել բակ։ Նախրապանն ուրախ վազեց, որ պատրաստվի դաշտ գնալու։ Անասնապահ կնիկները բարձրացնելով շրջազգեստի փեշերը, բոբիկ, դեռ սպիտակ, արևից դեռ չթխացած ոտներով ճպճպացնելով ցեխը, ձեռքերին ճիպոտներ, վազում էին գարնանային ուրախությունից շշմած բառաչող հորթերի ետևից, քշելով նրանց դեպի բակ։

Հաճույալից դիտելով ներկա տարվա բուծածը, որ անսովոր լավ էր,— վաղածին հորթերը մուժիկների կովի չափ էին, Պավայի երինջը, երեք ամսական, ասես՝ մի տարեկան լիներ,— Լևինը հրամայեց դուրս բերել տաշտը և հորթերին խոտ տալ վանդակապատների ետևում։ Բայց պարզվեց, որ ձմեռս չզորձածվող ետևի բակում ջարդվել էին աշունքվանից շինված վանդակապատները։ Նա ուղարկեց ատաղձագործի ետևից, որը կարգադրով պետք է պատրաստեր կալսիչը։ Սակայն պարզվեց, որ հյուսնը նորոգում էր տափանները, որոնք պետք է պատրաստ լինեին դեռ բարեկենդանին։ Դա շատ վրդովեց Լևինին։ Վրդովեցուցիչ էր, որ կրկնվում էր տնտեսության այդ մշտական փնթիությունը, որի դեմ նա այնքան տարիներ մաքառում էր ամբողջ ուժով։ Ձմեռն անգործածական վանդակապատները, ինչպես նա իմացավ, տարել էին աշխատանքային ձիագոմը, որտեղ կոտրատվել էին նրանք, որովհետև շինված լինելով հորթերի համար, բարակ էին։ Բացի այդ, հենց դրանից էլ պարզվեց, որ տափանները և երկրագործական գործիքները, որոնք հրամայված էր նայել ու նորոգել դեռ ձմեռը և որոնց համար հատկապես վերցրել էին երեք ատաղձագործ,— չէին նորոգվել, ու տափանները նորոգում էին այժմ, երբ պետք էր գնալ ցաքանելու։ Լևինն

ուղարկեց կառավարչի ետևից, բայց անմիջապես ինքն էլ գնաց նրան որոնելու։ Կառավարիչը փայլելով նույնպես, ինչպես ամեն բան այդ օրը, գառան մորթիներից մուշտակ հագած, գալիս էր կալից, ձեռքերի մեջ կոտրատելով մի ծղոտ։

— Ինչո՞ւ ատաղձագործը չի բանում կալսիչի վրա։

— Ես ուզում էի երեկ զեկուցել ձեզ. պետք է նորոգել տափանները։ Շուտով կսկսվի հերկը։

— Իսկ ձմե՞ռն ի՛նչ էիք անում։

— Ձեզ ինչի՞ համար է պետք հյուսնը։

— Ո՞րտեղ են հորթանոցի վանդակապատները։

— Հրամայեցի տանել իրենց տեղը։ Բայց ի՞նչ կարելի է անել այդ մարդկանց հետ,— ասաց կառավարիչը, թափահարելով ձեռքը։

— Ո՛չ թե այդ մարդկանց, այլ այդ կառավարչի հետ,— ասաց Լևինը բորբոքվելով։— Էլ ինչի՞ համար եմ ես պահում ձեզ,— բղավեց նա։ Բայց հիշելով, որ դա անօգուտ է, կանգ առավ խոսքի կեսին ու միայն հառաչեց։— Ինչպե՛ս է, կարելի՞ է ցանել,— հարցրեց նա քիչ լռելուց հետո։

— Տուրկինից այն կողմ վաղը կամ մյուս օրը կարելի է։

— Իսկ առվո՞ւյտը։

— Ուղարկեցի Վասիլիին Միշկայի հետ, ցանում են։ Չգիտեմ միայն, արդյոք կարո՞ղ են անցնել, ճահճուտ է։

— Քանի՞ դեսյատին։

— Վեց։

— Ինչո՞ւ ո՛չ ամբողջը,— ճչաց Լևինը։

Ավելի ևս վրդովեցուցիչ էր, որ առվույտը ցանում էին միայն վեց և ո՛չ քսան դեսյատին։ Առվույտի ցանքը՝ թե՛ ըստ տեսության, թե՛ նրա սեփական փորձով, լավ էր լինում միայն այն ժամանակ, երբ արվում էր հնարավորին չափ վաղ, համարյա ձյան մեջ։ Բայց դա երբեք չէր հաջողվում Լևինին։

— Մարդ չկա։ Ի՞նչ կարելի է անել այդ մարդկանց հետ։ Երեք հոգի չեկան։ Ահա և Սեմյոնը...

— Դե՛հ վերցնեիք ծղոտի վրա աշխատողներից։

— Ես էդպես էլ արել եմ։

— Հապա ո՞րտեղ են մարդիկ։

— Հինգ հոգի կոմպոտ են պատրաստում (դա նշանակում էր կոմպոտ)։ Չորս հոգի վարսակն են տեղաթափում, չլինի թե փչանա, Կոնստանտին Դմիտրիչ։

Լենինը շատ լավ գիտեր՝ «չլինի թե փչանա» նշանակում էր, որ անգլիական սերմացու վարսակն արդեն փչացրել էին,— նորից չէին արել այն, ինչ հրամայել էր ինքը։

— Չէ՞ որ ես ասում էի դեռ պասին, փո՛ւչ մարդիկ...— ճչաց նա։

— Մի՛ անհանգստանաք, ամեն բան կանենք իր ժամանակին։

Լենինը բարկացած թափահարեց ձեռքը, գնաց ամբարները՝ նայելու վարսակը և վերադարձավ դեպի գոմը։ Վարսակը դեռ չէր փչացել։ Բայց բանվորները տեղաթափում էին այն թիերով, մինչդեռ կարելի էր այն ուղղակի իջեցնել վարի ամբարը. կարգադրելով դա և ազատելով այստեղից երկու բանվոր առվույտ ցանելու համար, Լենինը հանգստացավ կառավարչի հանդեպ ունեցած վրդովմունքից։ Ասենք, օրն էլ այնպես լավ էր, որ չէր կարելի բարկանալ։

— Իզնա՞տ,— ձայնեց նա կառապանին, որ թևքերը ծալած, ջրհորի մոտ լվանում էր կալյասկան,— թամբի՛ր ինձ համար...

— Ո՞րը կհրամայեք։

— Թեկուզ Կոլպիկին։

— Լսում եմ։

Մինչ կթամբեին ձին, Լենինը կանչեց իր աջի առաջ պրոտույտ եկող կառավարչին, որ հաշտվի հետը, և սկսեց ասել նրան առաջիկա գարնանային աշխատանքների ու տնտեսական ծրագրերի մասին։

Գոմաղբի կրելն սկսել վաղ, սրպեսզի մինչև վաղահաս խոտհարքն ամեն բան վերջացած լինի։ Դութաններով հերկել առանց ընդմիջումների հեռավոր արտը և հանգիստ թողնել մինչև աշնանացանը։ Ամբողջ խոտհարքը կատարել ո՛չ թե կիսարարի կարգով, այլ վարձու աշխատավորներով։

Կառավարիչը լսում էր ուշադիր և, ըստ երևույթին, ջանք էր թափում, որ հավանություն տա իր տիրոջ ենթադրություններին. բայց այսուամենայնիվ նա ուներ Լենինին շատ լավ ծանոթ և նրան միշտ վրդովեցնող անհուսալի ու լքված տեսք։

Այդ տեսքն ասում էր. այս բոլորը լավ է, տեսնենք, աստված ի՞նչ կտա։

Ոչինչ այնպես չէր վշտացնում Լենինին, ինչպես խոսելու այդ տոնը։ Բայց այդ տոնը ընդհանուր էր նրա մոտ ծառայած բոլոր կառավարիչների համար։ Նրանք ամենքն էլ միևնույն կերպով էին վերաբերվում նրա ենթադրություններին, այդ իսկ պատճառով նա այժմ այլևս չէր բարկանում, այլ վշտանում էր և իրեն ավելի գրգռված էր զգում պայքարելու համար այս յուրատեսակ տարերային ուժի դեմ, որը նա այլ կերպ չէր անվանում, բայց եթե՝ «աստված ի՞նչ կտա», և որը շարունակ հակադրվում էր իրեն։

— Թե որ հասցնենք, Կոնստանտին Դմիտրիչ,— ասաց կառավարիչը։

— Իսկ ինչո՞ւ չպիտի հասցնեք։

— Պետք է անպայման վարձել էլի տասնհինգ բանվոր։ Չեն գալիս։ Այսօր եկել էին, և յուրաքանչյուրը յոթանասուն ռուբլի էր խնդրում ամառվա համար։

Լենինը լռեց։ Նորից հակադրվում էր այդ ուժը։ Նա գիտեր, ինչքան էլ իրենք աշխատեին, չէին կարող ընդունված գնով վարձել քառասուն, երեսունյոթ, երեսունութ բանվորներից ավելի. քառասուն հոգի վարձվում էր, բայց դրանից ո՛չ ավելի։ Սակայն, այսուհանդերձ, նա չէր կարող չպայքարել։

— Եթե չեն գա, ուղարկեցեք Սուրի, Չեֆիրովկա։ Պետք է փնտրել։

— Ուղարկելը՝ կուղարկեմ,— տխուր ասաց Վասիլի Ֆյոդորովիչը։— Բայց ձիանիքն էլ թուլացել են։

— Կառնենք նորերը։ Ես գիտեմ, չէ՞,— ավելացրեց նա ծիծաղելով,— ձեր սիստեմն է՝ ավելի քիչ և ավելի վատ. բայց այս տարի թույլ չեմ տա, որ դուք ձեր ուզածն անեք։ Ամեն բան ինքս կանեմ։

— Առանց այդ էլ դուք, կարծեմ, քիչ եք քնում։ Մեզ ի՞նչ կա, մեզ համար ավելի ուրախալի է աշխատել մեր տիրոջ աչքի առաջ...

— Ուրեմն կեչու հովտի այն կողմը առվո՞ւյտ են ցանում։ Գնամ, տեսնեմ,— ասաց նա, նստելով բաց գույնի փոքրիկ Կոլպիկը, որ բերեց կառապանը։

— Գետակից անցնել չեք կարող, Կոնստանտին Դմիտրիչ,— բղավեց կառապանը։

— Կերթամ անտառով։

Եվ երկար ժամանակ խամ կապած, լճացած ջրերից խորդացող ու սանձը բաց թողնելու մասին խնդրող ընտիր փոքրիկ ձիու աշխույժ շորորով Լևինը գնաց բակի ցեխի միջով, դուրս եկավ դարպասից դեպի դաշտ։

Եթե Լևինի համար ուրախ էր անասնանոցում ու հացահատիկների բակում, ապա ավելի ուրախ էր դաշտում։ Համաչափորեն օրորվելով ընտիր ձիու շորորի տակտով, շնչելով ձյան և օդի զովախառն տաք հոտը, երբ անտառի միջով անցնում էր փխրուն ձյան վրայով, նա հիանում էր իր յուրաքանչյուր ծառով, նրա կեղևի վրա կենդանացած մամռով և լցված պտուկներով։ Երբ նա դուրս եկավ անտառից, նրա դիմաց, հսկայական տարածության վրա, բացվեց կանաչի թավշյա հավասար գորգը, առանց բացուտի կամ խոնավությունից փտած կետի. միայն տեղ-տեղ սպիտակին էին տալիս հալվող ձյան մնացորդները։ Նրան չբարկացրին ո՛չ գյուղացու ձին ու բաշը խուզած այն քուռակը, որ տրորում էին նրա կանաչը (նա հրամայեց պատահած գյուղացուն՝ դուրս քշել նրանց), ո՛չ էլ Իպատ անունով այն մուժիկի հեգնական ու տխմար պատասխանը, որին նա պատահեց ու հարցրեց. «Մենք է, Իպատ, շո՞ւտ կսկսվի ցանքը»։ «Նախ պետք է վարել, Կոնստանտին Դմիտրիչ», պատասխանեց Իպատը։ Ինչքան ավելի հեռու էր գնում, այնքան ավելանում էր նրա ուրախությունը, և տնտեսական ծրագրերը պատկերանում էին նրան մեկը մյուսից ավելի լավ. բոլոր արտերի հարավային ափերին տնկել շիվացու ուռիներ, այնպես որ նրանց տակ երկար չմնա ձյունը. խոտ ցանելու համար հատկացնել գոմաղբով պարարտացվող վեց արտ և երեքն էլ՝ պահեստի. դաշտի հեռավոր ծայրին կառուցել անասնանոց ու փորել, շինել արհեստական լճակ, իսկ հողը պարարտացնելու նպատակով շինել անասունների համար շարժական ցանկապատներ։ Եվ այն ժամանակ՝ 300 դեսյատին ցորեն, 100 դեսյատին կարտոֆիլ ու 150 դեսյատին առվույտ, և ո՛չ մի ուժասպառ դեսյատին։

Այդպիսի երազներով, զգուշությամբ թեքելով ձին արտերի մարգերի գծով, որ չտրորի իր կանաչը, նա մոտեցավ առվույտ ցանող աշխատավորներին։ Սերմացուով սայլը կանգնել էր ո՛չ թե մարգի վրա, այլ արտի մեջ, և աշնանացան ցորենն ակոսված էր անիվներով ու փորփրված ձիու սմբակներով։ Երկու բանվորներն էլ նստած էին մարգին, հավանորեն, ծխում էին միևնույն ծխամորճը։ Սայլի մեջ եղած հողը, որի հետ խառնված էին սերմերը, տրորած չէր, այլ երկար մնալուց կոշտացել կամ սառել էր գուղձ-գուղձ։ Տեսնելով տնտեսատիրոջը, բանվոր Վասիլին գնաց դեպի սայլը, իսկ Միշկան սկսեց ցանել։ Դե լավ չէր, բայց Լևինը հազվագյուտ դեպքերում էր բարկանում բանվորների վրա։ Երբ Վասիլին մոտեցավ, Լևինը հրամայեց նրան ձին տանել մարգը։

— Ոչի՛նչ, պարոն, էլի ձիգ կգա, կբարձրանա,— ասաց Վասիլին։

— Խնդրեմ, առանց դատողությունների,— ասաց Լևինը։— Արա՛, ինչ ասում են քեզ։

— Լսում եմ,— պատասխանեց Վասիլին. և բռնեց ձիու գլխից։— Բա ցա՞նքսը, Կոնստանտին Դմիտրիչ,— ասաց նա շողոքորթելով,— առաջնակարգ ցանքս է։ Միայն ման գալը դժվար է։ Ամեն մի տրեխի վրա մի փթանոց ցեխի գունդ է հավաքվում։

— Իսկ ինչո՞ւ չեք մաղել հողը,— հարցրեց Լևինը։

— Մենք տրորում ենք,— պատասխանեց Վասիլին, վերցնելով սերմերը և ափերի մեջ տրորելով հողը։

Վասիլին մեղավոր չէր, որ նրան տվել էին հողը չմաղած սերմացու, բայց և այնպես վրդովեցուցիչ էր։

Բազմիցս արդեն շահեկանորեն փորձած լինելով սրտնեղությունը խեղդելու և վատ թվացող ամեն բան նորից լավ դարձնելու իրեն հայտնի միջոցը, Լևինն այժմ էլ փորձեց այդ միջոցը։ Նա տեսավ, թե ինչպե՛ս էր քայլում Միշկան, սլքատեցնելով իր յուրաքանչյուր ոտքին կպած ցեխի վիթխարի գուղձերը, իջավ ձիուց, վերցրեց Վասիլիից սերմացուի կոտը և գնաց ցանելու։

— Ո՞ւրտեղ կանգնեցիր դու։

Վասիլին ցույց տվեց ոտքով արած նշանը, և Լևինն սկսեց շաղել սերմերը հողի հետ։ Քայլելը դժվար էր, ինչպես ճահճուտում, ու Լևինն անցնելով մի ածու, քրտնեց և կանգ առնելով, հանձնեց կոտը։

— Դեհ, պարոն, ամառս էլ ինձ չհայհոյեք այս ածուի համար,— ասաց Վասիլին։

— Ինչ կա որ,— ուրախ ասաց Լևինը, զգալով աբդեն իր գործադրած միջոցի իրական ներազդեցությունը։

— Ա՛յ, հրեն կտեսնենք ամառը։ Աչքի կընկնի։ Հապա մի նայեք, որտեղ ես ցանել եմ անցյալ գարնան։ Ասես՝ տնկել եմ։ Չէ՞ որ ես, Կոնստանտին Դմիտրիչ, աշխատում եմ էնպես, ոնց որ հարազատ հորս համար։ Ես ինքս էլ չեմ սիրում վատ գործ անել, ուրիշներին էլ չեմ թողնում։ Տիրոջ համար լավ է՝ ուրեմն մեզ համար էլ լավ է։ Երբ մտիկ ես անում,— ասաց Վասիլին, նշելով դաշտը,— սիրտդ ուրախանում է։

— Լա՛վ գարուն է, Վասիլի։

— Հա՛, էսպիսի գարուն պառավ մարդիկ չեն հիշում։ Ա՛յ, ես տանն էի, էնտեղ մեր ծերուկը նույնպես ցանել է երեք քառորդ դեսյատին ցորեն։ Նա ասում է, որ հաճարից չես ջոկի։

— Իսկ դուք վաղո՞ւց եք սկսել ցորեն ցանել։

— Դո՛ւք սովորեցրիք՝ հերու չէ մյուս տարի, գուք ինձ պարգև տվիք երկու չափ։ Մի քառորդը ծախեցինք, երեք քառորդը ցանեցինք։

— Տե՛ս, կոշտերը տրորիր,— ասաց Լևինը, մոտենալով ձիուն,— և աչքդ Միշկայի վրա պահիր։ Իսկ եթե լավ ծլի, դեսյատինից կստանաս հիսուն կոպեկ։

— Սրտանց շնորհակալ ենք։ Առանց դրան էլ, մենք ձեզնից շատ գոհ ենք։

Լևինը նստեց ձին ու գնաց այն դաշտը, որտեղ գտնվում էր անցյալ տարվա առվույտը, և այն արտը, որ գութանով վարած էր գարնանացան ցորենի համար։

Առվույտի ծիլերն անցյալ տարվա խոզանում հրաշալի էին։ Նրանք արդեն կենդանացել էին և հաստատապես կանաչին էին տալիս անցյալ տարվա ցորենի ջարդված ցողունների ետևից։ Ձին մինչև ծունկը թաղվում էր ցեխի մեջ, և նրա յուրաքանչյուր ոտքը ճպճպում էր, դուրս գալով կիսահալ հողի միջից։ Գութանահերկի միջով բնավ չէր կարելի գնալ, ոտքը չէր թաղվում միայն այնտեղ, որտեղ սառույց կար, իսկ հալված ակոսներում խրվում էր ծնկներից էլ բարձր։ Հերկը սքանչելի էր. երկու օրից կարելի էր տափանել ու

ցանել։ Ամեն ինչ հրաշալի էր, ամեն բան ուրախալի։ Վերադարձին Լևինը գնաց գետակով, այն հույսով, որ ջուրը պակասած կլինի։ Եվ իրոք, նա անցավ գետակից ու վախեցրեց երկու բադերի։ «Պետք է լինեն նաև կոցարներ», մտածեց նա և դեպի տուն թեքվելիս պատահեց անտառապահին, որը հաստատեց նրա ենթադրությունը կոցարների մասին։

Լևինը վարգընթաց գնաց տուն, որ ճաշի և հրացանը պատրաստի երեկոյան համար։

XIV

Ամենաուրախ տրամադրությամբ մոտենալով տանը, Լևինը տան ղլխավոր մուտքի դռան կողմից զանգուլակների ձայն լսեց։

«Դա երկաթուղու կայարանից է,— մտածեց նա,— ճիշտ Մոսկվայի գնացքի ժամանակն է... ո՞վ պիտի լինի։ Ինչ, եթե Նիկոլայ եղբայրը լինի։ Չէ՞ որ նա ասաց. գուցե, գնամ հանքային ջրեր, գուցե և գամ քեզ մոտ»։ Առաջին րոպեին նրան սարսափելի և անախորժ թվաց, որ Նիկոլայ եղբոր ներկայությունը կարող է խանգարել իր գարնանային երջանիկ հոգեկան կացությունը։ Բայց նա ամաչեց իր այդ զգացումից և անմիջապես կարծես բացեց իր հոգու գիրկը և հուզումնալից ուրախությամբ սպասում ու այժմ ամբողջ հոգով ցանկանում էր, որ դա լիներ եղբայրը։ Նա խթանեց ձին և դուրս գալով ակացիայի ետևը, տեսավ երկաթուղու կայարանից եկող փոստային եռանիվակը, մեջը մուշտակով մի պարոն։ Դա եղբայրը չէր։ «Ա՜խ, եթե հաճելի մի մարդ լիներ, որի հետ կարողանայի զրուցել»,— մտածեց նա։

— Ա՜,— խնդագին բղավեց Լևինը, վեր բարձրացնելով երկու ձեռքը։— Ահա՜ ուրախալի հյուր։ Ա՜խ, ի՜նչ ուրախ եմ ես քո գալու համար,— ճչաց նա, ճանաչելով Ստեպան Արկադևիչին։

«Կիմանամ ստույգ՝ ամուսնացե՞լ է կամ ե՞րբ է ամուսնանում»,— մտածեց նա։

Եվ գարնանային այդ գեղեցիկ օրը նա զգաց, որ նրա մասին հիշողությունը բնավ վիշտ չի պատճառում իրեն։

— Հը՞, չէի՞ր սպասում,— ասաց Ստեպան Արկադևիչը,

դուրս գալով սահնակից, ցեխի գուղձեր քթարմատին, այտին ու հոնքերին, բայց փայլելով ուրախությամբ և առողջությամբ։— Եկա, որ քեզ տեսնեմ՝ մեկ,— ասաց նա, գրկելով ու համբուրելով նրան,— որսի գնամ՝ երկու, և Երգուշովոյի անտառը ծախեմ՝ երեք։

— Հիանալի՜։ Իսկ ի՞նչ գարուն է։ Ինչպե՞ս կարողացար դու սահնակով տեղ հասնել։

— Սայլով ավելի վատ է, Կոնստանտին Դմիտրիչ,— ասաց ծանոթ կառապանը։

— Ես շատ, շատ ուրախ եմ քեզ տեսնելուս,— սրտանց ժպտալով մանկական խնդագին ժպիտով, ասաց Լևինը։

Լևինը իր հյուրին առաջնորդեց եկվորների համար հատկացված սենյակը, ուր բերին նաև Ստեպան Արկադևիչի իրերը՝ պայուսակը, չեխոլով հրացանը, սիգարների փոքրիկ տոպրակը, և, թողնելով նրան, որ լվացվի ու հագուստը փոխի, ինքը գնաց գրասենյակ, որպեսզի ասի վարի և առվույտի մասին։ Ագաֆիա Միխայլովնան, որ միշտ սաստիկ մտահոգված էր տան պատվով, նախասենյակում դիմավորեց նրան ճաշին վերաբերող հարցերով։

— Ինչպես կուզեք՝ արեք, միայն շուտ,— ասաց Լևինը և գնաց կառավարչի մոտ։

Երբ նա վերադարձավ, Ստեպան Արկադևիչը, լվացված, սանրված ու ժպտերես փայլելով, դուրս էր գալիս իր դռնից, և նրանք միասին դնացին վերև։

— Ի՞նչ ուրախ եմ ես, որ եկա-հասա քեզ։ Այժմ ես կհասկանամ այն խորհրդավոր բաները, որ դու կատարում ես այստեղ։ Բայց չէ, իրոք, ես նախանձում եմ քեզ։ Ի՞նչ հրաշալի տուն է, ի՞նչ լավ է այստեղ ամեն բան։ Լուսատո՜ւ, ուրա՜խ,— ասում էր Ստեպան Արկադևիչը, մոռանալով, որ միշտ գարուն ու պարզ օրեր չեն լինում, ինչպես այժմ։— Ի՞նչ հրաշալիք է նաև քո դայակը։ Ավելի ցանկալի էր մի լավիկ նաժիշտ՝ գոգնոցով, բայց նկատի ունենալով քո վանական կենցաղն ու խիստ ոճը,— դա շատ լավ է։

Ստեպան Արկադևիչը պատմեց հետաքրքրական շատ նորություններ և մանավանդ Լևինի համար հետաքրքիր մի նորություն, որ նրա եղբայր Սերգեյ Իվանովիչը պատրաստվում է ամառս գալ գյուղ՝ նրա մոտ։

Ստեպան Արկադևիչը ո՛չ մի խոսք չասաց Կիտիի և առհասարակ Շչերբացկիների մասին. հաղորդեց միայն իր կնոջ ողջույնը։ Լևինը շնորհակալ էր նրանից նրա նրբավարության համար ու շատ ուրախ էր իր հյուրի ներկայությանը։ Ինչպես միշտ, իր մենավոր առանձնության ընթացքում կուտակվել էին անհամար մտքեր ու զգացումներ, որ նա չէր կարող հաղորդել իրեն շրջապատողներին, և այժմ տեղում էր Ստեպան Արկադևիչի վրա՝ թե՛ գարնան բանաստեղծական խնդությունը, թե՛ տնտեսության ծրագրերն ու անհաջողությունները, թե՛ իր մտքերն ու դիտողություններն այն գրքերի մասին, որ կարդացել էր, և թե՛ մանավանդ իր այն երկի գաղափարը, որի հիմքն էր կազմում, թեպետ նա այդ բանը չէր նկատում, տնտեսության մասին գրված բոլոր հին երկերի քննադատությունը։ Ստեպան Արկադևիչը միշտ սիրալիր, ամեն ինչ թեթև, մի ակնարկից հասկացող, առանձնապես սիրալիր էր այս անգամ, և Լևինը նկատեց նրա մեջ մի նոր, իրեն սիրաշոյող գիծ՝ հարգանք ու կարծես քնքշություն դեպի ինքը։

Ագաֆիա Միխայլովնայի և խոհարարի առանձնապես լավ հաշ պատրաստելու ջանքերի հետևանքն եղավ միայն այն, որ սոված երկու ընկեր-բարեկամները նստելով նախուտեստի առաջ, կուշտ կերան հաց ու կարագ, չորացրած ձկնեղեն ու թրթու դրած սունկ,— և հետո այն, որ Լևինը հրամայեց՝ սուպը տալ առանց կարկանդակների, որոնցով խոհարարն ուզում էր առանձնապես զարմացնել հյուրին։ Բայց Ստեպան Արկադևիչը, որը թեպետ սովոր էր ուրիշ ճաշերի, այն կարծիքին էր, թե ամեն բան սքանչելի է. և՛ համեմներով պատրաստած սղին, և՛ հացը, և՛ կարագը, և՛ մանավանդ չորացրած ձկնեղենը, և՛ սունկը, և՛ եղինջով շչին, և՛ սպիտակ սոուսով հավը, և՛ Ղրիմի սպիտակ գինին — բոլորը, բոլորը շատ լավ էր ու հրաշալի։

— Սքանչելի է, սքանչելի՜,— ասում էր նա, տապակածից հետո վառելով հաստ գլանակը։— Իմ քեզ մոտ գալը նման է շոգենավի աղմուկից ու ցնցումներից հետո խաղաղ ափ իջնելուն։ Ուրեմն դու ասում ես, որ բանվորական տարրը ինքնին պետք է ուսումնասիրվի և ղեկավարի տնտեսության եղանակների ընտրության գործը։ Չէ որ ես տգետ եմ այդ հարցում, բայց ինձ թվում է, որ տեսությունը և նրա կիրառումը պիտի աղդեն նաև բանվորի վրա։

— Այո՛, բայց կա՛ց. ես ասում եմ ո՛չ թե քաղաքական տնտեսության մասին, այլ ասում եմ տնտեսության գիտության մասին։ Նա պետք է լինի բնական գիտությունների նման և դիտի տվյալ երևույթներն ու բանվորին՝ նրա տնտեսական, ազգագրական...

Այդ ժամանակ մտավ Ագաֆիա Միխայլովնան, բերելով մուրաբա։

— Օ՛, Ագաֆիա Միխայլովնա,— ասաց նրան Ստեպան Արկադևիչը, համբուրելով իր փափուկ մատների ծայրը,— ի՜նչ հրաշալի չորացրած ձկնեղեն ունեք դուք, ի՜նչ համեմած անուշաբույր օդի...— ժամանակը չէ՞ արդյոք, Կոստյա, հա՞,— ավելացրեց նա։

Լևինը պատուհանից նայեց արևին, որ իջնում էր անտառի մերկ կատարի ետևը։

— Ժամանա՜կն է, ժամանակը,—ասաց նա։—Կո՛ւզմա, լծե՛ք լինեյկան,— և վազեց ներքև։

Ստեպան Արկադևիչը իջնելով ներքև, ինքը խնամքով հանեց լաքած արկղի վրայից պարուսինե շեխոլը և բացելով արկղը, սկսեց հավաքել իր թանկագին, նոր ձևի հրացանը։ Կուզման, որ արդեն զգացել էր, թե կստանա մեծ պարգևադրամ, չէր հեռանում Ստեպան Արկադևիչից ու հաղցնում էր նրա թե՛ գուլպաները, թե՛ կոշիկները, և Ստեպան Արկադևիչը սիրով թույլ էր տալիս նրան անել այդ բոլորը։

— Հրամայիր, Կոստյա, եթե կգա Ռյաբինին վաճառականը, ես հրամայեցի նրան գալ այսօր, թող ընդունեն ու գնեցեն...

— Մի՞թե դու անտառը ծախում ես Ռյաբինինին։

— Այո։ Մի՞թե դու ճանաչում ես նրան։

— Ինչպե՞ս չէ, ճանաչում եմ։ Ես նրա հետ գործ եմ ունեցել՝ «դրականապես ու վերջնականապես»։

Ստեպան Արկադևիչը ծիծաղեց։ «Դրականապես ու վերջնականապես» վաճառականի սիրած խոսքերն էին։

— Այո՛, նա զարմանալիորեն ծիծաղելի է խոսում։ Հասկացավ, թե ո՛ւր է գնում իր տերը,— ավելացրեց նա, ձեռքով շոյելով Լասկային, որը վնգստալով, պտտվում էր Լևինի շուրջը և լիզում մերթ նրա ձեռքը, մերթ կոշիկներն ու հրացանը։

Լինեյկան արդեն կանգնած էր գավթի մոտ, երբ նրանք դուրս եկան։

— Ես հրամայեցի լծել, թեև հեռու չէ, կուզե՞ս ոտով գնանք։

— Ո՛չ, ավելի լավ է կառքով,— ասաց Ստեպան Արկադևիչը, մոտենալով լինեյկային։ Նա նստեց ծնկները փաթաթեց վագրի պլեդով ու վառեց սիգարը։— Ինչպե՞ս կարող ես դու չծխել։ Սիգարը ո՛չ թե սոսկ բավականություն է, այլ բավականության հատկանիշն է ու պսակը։ Ա՛յ, դա է կյանքը։ Ի՜նչ լավ է։ Ահա, թե ինչպե՞ս կուզենայի ես ապրել։

— Իսկ ո՞վ է խանգարում քեզ,— ժպտալով ասաց Լևինը։

— Ո՛չ, դու բախտավոր մարդ ես։ Դու ունես այն բոլորը, ինչ սիրում ես։ Ձիեր սիրում ես՝ կան, շներ կան, որսորդություն կա, տնտեսություն կա։

— Գուցե դա նրանից է, որ ես ուրախ եմ իմ ունեցածով և չեմ վշտանում նրա համար, ինչ չկա,— ասաց Լևինը, մոտաբերելով Կիտիին։

Ստեպան Արկադևիչը հասկացավ, նայեց նրան, բայց ոչինչ չասաց։

Լևինը շնորհակալ էր Օբլոնսկուց այն բանի համար, որ նա ոչինչ չէր ասում Շչերբացկիների մասին, իրեն հատուկ մշտական տակտով նկատելով, որ Լևինը վախենում էր նրանց մասին խոսելուց, բայց այժմ Լևինն արդեն ուզում էր իմանալ այն, ինչը նրան այնպես տանջում էր, սակայն չէր համարձակվում խոսք բացել։

— Դե՛հ, ասա, ինչպե՞ս են քո գործերը,— հարցրեց Լևինը, մտածելով, թե ինչ վատ բան է անում ինքը, որ մտածում է միայն իր մասին։

Ստեպան Արկադևիչի աչքերը փայլեցին ուրախ։

— Չէ՞ որ դու չես ընդունում, որ կարելի է սիրել կալաշներ, երբ կա բաժնեհաց, քո կարծիքով դա հանցագործություն է։ Իսկ ես չեմ ընդունում կյանքն առանց սիրո,—ասաց նա, իր տեսակետից հասկանալով Լևինի հարցը։— Ի՜նչ արած, ես այդպե՞ս եմ ստեղծված։ Եվ իրոք, որքա՜ն քիչ չարիք է պատճառում դա մեկին, իսկ ինձ՝ ինչքա՜ն բավականություն...

— Չը՞, չիմի՞թե մի նոր բան կա,— հարցրեց Լևինը։

— Կա՛, բարեկամ։ Ա՛յ, տեսնո՞ւմ ես, դու գիտես Օսսիանի նկարագրած տիպի կանանց... կանայք, որոնց տեսնում ես երազում... Այդ կանայք լինում են նաև արթուն ժամանակ... և այդ կանայք սարսափելի են։ Կինը, գիտե՞ս ինչ, այնպիսի մի առարկա է, որ ինչքան էլ ուսումնասիրես նրան, միշտ բոլորովին նոր բան կգտնես նրա մեջ։

— Այդ դեպքում՝ ավելի լավ է չուսումնասիրել։

— Ո՛չ։ Մի մաթեմատիկոս ասել է, թե վայելքը ոչ թե ճշմարտություն գտնելն է, այլ ճշմարտություն որոնելը։

Լևինը լուռ լսում էր և, չնայած իր վրա գործ դրած բոլոր ջանքերին, ոչ մի կերպ չէր կարողանում տեղափոխվել իր բարեկամի հոգու մեջ ու հասկանալ նրա զգացումը և այդպիսի կանանց ուսումնասիրելու հրապույրը։

XV

Որսի տեղը բարդենու մատղաշ անտառն էր՝ գետակի ափից մոտիկ։ Հասնելով անտառին, Լևինն իջավ կառքից և Օբլոնսկուն տարավ մամոտ ու ճահճային բացատի անկյունը, որտեղ արդեն հավվել էր ձյունը։ Ինքը վերադարձավ մյուս ծայրը դեպի երկարուն կեչին և հենելով հրացանը ներքևի չոր եղանձև հեղբված ճյուղին, հանեց բաճկոնը, վերադոտեորվեց ու փորձեց ձեռքերի շարժումների ազատությունը։

Պառավ, ճերմակած Լասկան, որ քայլ առ քայլ հետևում էր նրան, զգույշ նստեց նրա դիմաց ու սրեց ականջները։ Արևն իջնում էր խոշոր անտառի ետևը, և մայրամուտի լույսի տակ, բարդենու պուրակի մեջ շաղ ընկած կեչիները որոշակի գծագրվում էին իրենց կախ ընկած ճյուղերով, ուռճացած, պայթելու պատրաստ պտուկներով։

Անտառի խիտ մասից, որտեղ դեռ մնում էր ձյունը, հալիվ լսելի քչքչոցով տակավին հոսում էր ջուրը՝ գալարուն բարակ առվակների միջով։ Փոքրիկ թռչունները ծլվլում էին և երբեմն թռչում մի ծառից մյուսի վրա։

Բացարձակ խաղաղ վայրկյաններին լսվում էր շրշյունն անցյալ տարվա տերևների, որ խշշում էին ձյունապատ գետնի հալվելուց և խոտերի աճից։

«Ի՞նչ հրաշալիք։ Լսվում ու տեսնվում է, թե ինչպես աճում է խոտը»,— ասաց ինքն իրեն Լևինը, նկատելով բարդենու թաց, քարագրչի գույնի տերևը, որ շարժվում էր նոր խոտի ասեղի մոտ։ Նա կանգնել էր, լսում ու նայում էր մերթ ներքև, խոնավ մամռապատ գետնին, մերթ լուռ ականջ դնող Լասկային, մերթ իր դիմաց՝ լեռան տակ տարածված անտառի մերկ կատարների ծովին, մերթ ամպերի սպիտակ շերտերով պատած աղոտացող երկնքին։ Բաղեն, առանց շտապելու շարժեց թևերը ու թռավ-անցավ հեռավոր անտառի վրայից. մի ուրիշը նույնպես թռավ նույն ուղղությամբ ու չքացավ։ Թռչուններն ավելի ու ավելի բարձրաձայն և անհանգիստ ճողողում էին պուրակում։ Ո՛չ հեռու վույվույեց բուն, և Լասկան, ցնցվելով, զգուշությամբ մի քանի քայլ արեց ու գլուխը թեքելով կողքի վրա, սկսեց ականջ դնել։ Գետակի այն կողմից լսվեց կկվի ձայնը։ Նա երկու անգամ կվկվացրեց իր սովորական ճիչը, ապա խռխռաց, շտապեց ու շփոթվեց։

— Տեսնո՞ւմ ես։ Ա՛յ քեզ կկո՛ւ,— ասաց Ստեպան Արկադևիչը, դուրս գալով թփի ետևից։

— Այո՛, լսում եմ ես, —պատասխանեց Լևինը, դժկամությամբ խախտելով անտառի խաղաղությունը իրեն իսկ անախորժ՝ իր ձայնով։— Հիմա շուտով կսկսվի։

Ստեպան Արկադևիչի ֆիգուրը նորից մտավ թփի ետևը, և Լևինը տեսավ միայն լուցկու պայծառ կրակը, որին հետո փոխարինեց գլանակի կարմիր ածուխը և կապույտ ծուխը։

Չը՞խկ, չը՞խկ, ճթճթացին Ստեպան Արկադևիչի հրացանի քաշած հրահանները։

— Այդ ի՞նչն է բղավում,— հարցրեց Ստեպան Արկադևիչը, Լևինի ուշադրությունը հրավիրելով ծորուն այդ զրվզրվոցի վրա, կարծես բարակ ձայնով չարաճճորեն վրնջում էր քուռակը։

— Ա՛, մի՞թե չգիտես։ Դա որձ նապաստակն է։ Հերիք խոսենք։ Լսիր, թռչո՛ւմ է,— համարյա ճչաց Լևինը, բարձրացնելով հրահանները։

Լսվեց հեռավոր, բարակ սուլոց և ճիշտ այն սովորական տակտով, որ այնքան ծանոթ է որսորդին, երկու վայրկյանից հնչեց երկրորդ, երրորդ սուլոցը, ու երրորդից հետո արդեն լսվեց խորթկոցը։

Լենինը հայացքը գցեց դեպի աջ, դեպի ձախ, և ապա նըրա դիմաց՝ աղոտակապույտ երկնքում, բարդենիների կատարների իրար միացած գալար ոստերի վրա օդի մեջ երևաց մի թռչուն։ Նա թռչում էր ուղիղ դեպի Լենինը. խորթկոցի մոտիկ հնչյունները, որ նման էին պինդ գործվածքը համաչափորեն պատռելու ձայնին, լսվեցին նրա ականջին մոտիկ. արդեն երևում էր թռչունի երկար քիթն ու վիզը, և այն րոպեին, երբ Լենինը նշան էր բռնում, թփի ետևից, որտեղ կանգնած էր Օբլոնսկին, փայլկտեց կարմիր կայծակը, թռչունը սլաքի պես իջավ ու նորից խոյացավ վեր։ Նորից փայլեց կայծակը, և լսվեց հարվածի ձայն. ու թպրտալով, կարծես աշխատելով մնալ օդի մեջ, թռչունը կանգ առավ, մընաց մի ակնթարթ և ծանր շրմփաց ծպծպան գետնին։

— Մի՞թե վրիպեցի,— բղավեց Ստեպան Արկադևիչը, որը չէր նկատում ծխի պատճառով։

— Ահա՜ նա,— ասաց Լենինը, նշելով Լասկային, որը բարձրացնելով մի ականջը և բարձր թափահարելով թավ պոչի ծայրը, փոքր քայլերով, կարծես կամենալով երկարացնել բավականությունն ու կարծես՝ ժպտալով, բերում էր սպանված թռչունը տիրոջը։— Դեհ, ուրախ եմ, որ քեզ հաջողվեց,— ասաց Լենինը, միաժամանակ զգալով և նախանձ, որ այդ կտցարն սպանելը հաջողվեց ո՛չ իրեն։

— Աջ փողից խայտառակ կերպով վրիպեցի,— պատասխանեց Ստեպան Արկադևիչը, լցնելով հրացանը։— Սը՜սա... թռչում է։

Իրոք, լսվեցին սուր, իրար արագ հաջորդող սուլոցներ։ Երկու կտցարներ, խաղալով իրար հետ ու իրար ետևից չափ ընկնելով, և սուլելով միայն, ո՛չ թե խորթկելով, թռան որսորդների ճիշտ գլխավերևով։ Լսվեց չորս հրազարկ, և ծիծեռնակների պես, կտցարներն արագ շուռ եկան ու կորան տեսողությունից։

. . . . . .

Որսը շատ լավ էր։ Ստեպան Արկադևիչը սպանեց էլի երկու հատ, Լենին էլ երկու, որից մեկը չգտավ։ Սկսեց մթնել։ Պարզ, արծաթագույն Արուսյակն արևմուտքում արդեն փայլում էր փոքրիկ կեչիների ետևից ցածում՝ իր նուրբ քայլով, և արևելքում՝ բարձրում, արդեն փայլկտում էր իր կարմիր

կրակներով մոայլ Արկտուր համաստեղությունը։ Իր գլխավերևում Լենինը գտնում ու կորցնում էր Արջ համաստեղության աստղերը։ Կտցարներ այլևս չէին թռչում. բայց Լենինը վճռեց էլի սպասել, երբ կեչու ճյուղից ներքև իր համար տեսանելի Արուսյակը կբարձրանա ճյուղից ավելի վեր և երբ Արջ համաստեղության աստղերը պարզ կերևան ամենուրեք։ Արուսյակն արդեն բարձրացավ ճյուղից ավելի վեր, Արջ համաստեղության կառքն իր քեզիով արդեն ամբողջովին երևում էր մութ-կապտագույն երկնքում, բայց նա տակավին սպասում էր։

— Արդյոք, ժամանակը չէ՞,— ասաց Ստեպան Արկադևիչը։

Անտառում արդեն տիրում էր լռություն, և ո՛չ մի թռչնակ չէր շարժվում։

— Դեռ մի փոքր սպասենք,— պատասխանեց Լենինը։

— Ինչպես կուզես։

Նրանք այժմ կանգնած էին իրարից մոտ տասնհինգ քայլի վրա։

— Ստիվա,— հանկարծ անսպասելի ասաց Լենինը,— դու ինչո՞ւ, ինձ ոչինչ չես ասում, ամուսնացա՞վ կամ ե՞րբ է ամուսնանում քո քենին։

Լենին իրեն զգում էր այնքան ամուր ու հանգիստ, որ ո՛չ մի պատասխան, մտածում էր նա, չէր կարող հուզել իրեն։ Բայց նա երբեք չէր սպասում այն բանին, ինչ պատասխանեց Ստեպան Արկադևիչը։

— Մտադիր չէր և մտադիր էլ չէ ամուսնանալ. նա լուրջ հիվանդ է, և բժիշկները նրան ուղարկեցին արտասահման։ Նույնիսկ վախենում են նրա կյանքի համար։

— Ի՜նչ ես ասում,— ճչաց Լենինը։ — Շա՞տ է հիվանդ։ Ի՞նչ է պատահել նրան։ Ինչպե՜ս է նա...

Այն միջոցին, մինչ նրանք ասում էին այդ, Լասկան, ականջները սրելով, նայում էր վերև՝ երկնքին և կշտամբանքով՝ նրանց։

«Հոսելու ժամանակ են գտել,— մտածում էր նա։ — Մինչդեռ, նա թռչում է... Ահա, այդպես է, որ կա։ Աչքաթող կանեն...»,— մտածում էր Լասկան։

Բայց հենց այդ ժամանակ նրանք երկուսն էլ լսեցին խլա-

ցուցիչ մի սուլոց, որը կարծես մտրակեց նրանց ականջը, և երկուսն էլ հանկարծ բռնեցին հրացանները, փայլեց երկու կայծակ ու միևնույն վայրկյանին որոտաց երկու հրազարկ։ Բարձրից թռչող կտցարը թևերը ծալեց վայրկենապես և ընկավ թավուտի մեջ, ծռելով բարակ ոստերը։

— Ա՜յ քեզ հիանալի բան։ Դա ընդհանուր է,— ճչաց Լեվինը և Լասկայի հետ վազեց թավուտը, որ գտնի կտցարը։ «Ախ հա՜, ինչի՞ մասին էր անախորժ զգացումը,— հիշեց նա։— Այդպես, Կիտին հիվանդ է... է՜հ, ի՜նչ արած, շատ ափսոս»,— մտածում էր նա։

— Ա՜, գտա՜ր։ Ա՜յ դու, խելոքս,— ասաց նա, հանելով Լասկայի բերանից տաք թռչունը և դնելով որսորդական պայուսակի մեջ, որ համարյա լիքն էր։ — Գտա, Ստիվա,— բղավեց նա։

XVI

Տուն վերադառնալով, Լևինը հարցրեց բոլոր մանրամասները Կիտիի հիվանդության ու Շչերբացկիների ծրագրերի մասին և, թեպետ ամաչում էր խոստովանել, բայց նրան հաճելի էր այն, ինչ իմացավ։ Հաճելի էր նաև այն պատճառով, որ դեռ հույս կար, ավելի ևս հաճելի էր, որ իրեն ցավ պատճառող կինը ինքն էլ ցավ էր զգացել։ Բայց երբ Ստեպան Արկադևիչն սկսեց խոսել Կիտիի հիվանդության պատճառների մասին ու հիշատակեց Վրոնսկու անունը, Լևինն ընդհատեց նրան։

— Ես ո՜չ մի իրավունք չունեմ իմանալու ընտանեկան մանրամասները, ճիշտն ասած՝ շահագրգռված էլ չեմ։

Ստեպան Արկադևիչը ժպտաց հաղիվ նկատելի, որսալով վայրկենական ու իրեն այնքան ծանոթ փոփոխությունը Լևինի դեմքին։ Լևինը մռայլվեց նույնքան, որքան ուրախ էր մի րոպե առաջ։

— Դու արդեն բոլորովին վերջացրե՞լ ես անտառի հարցը Ռյաբինինի հետ,— հարցրեց Լևինը։

— Այո՛, վերջացրի։ Լա՜վ գին է, երեսունութ հազար։ Ութը սկզբից, իսկ մնացածը՝ վեց տարվա ընթացքում։ Ես շատ չարչարվեցի այդ հարցով։ Ո՜չ ոք ավելի չէր տալիս։

— Դա նշանակում է, որ դու ձրի տվիր անտառը,— ասաց Լևինը մռայլ։

— Այսինքն՝ ինչո՞ւ ձրի,— բարեսիրտ ժպիտով ասաց Ստեպան Արկադևիչը, իմանալով, որ այժմ ամեն բան վատ կթվա Լևինին։

— Որովհետև այդ անտառի մի դեսյատինն արժե ո՜չ սակաս, քան հինգ հարյուր ռուբլի,— պատասխանեց Լևինը։

— Ա՜խ, գյուղական այդ տնտեսատերերը,— կատակով ասաց Ստեպան Արկադևիչը։— Ձեր արհամարհական այդ տոնը քաղաքացիներիս նկատմամբ... Իսկ երբ պետք է գործ անել, մենք կանենք ձեզնից ավելի լավ։ Հավատա՜ ինձ, ես ամեն բան հաշվել եմ,— ասաց նա,— և անտառը ծախված է շատ շահեկան կերպով, այնպես որ վախենում եմ, չլինի թե նա նույնիսկ հրաժարվի։ Չէ՞ որ դա հեցացու անտառ չէ,— ասաց Ստեպան Արկադևիչը, կամենալով հեցացու[1] բառով բոլորովին համոզել Լևինին, որ իրավացի չեն նրա կասկածները,— այլ մեծ մասամբ վառելափայտի անտառ է։ Եվ դեսյատինից դուրս կգա երեսուն սաժենից ոչ ավելի, իսկ նա ինձ տվեց երկու հարյուրական ռուբլի։

Լևինը ժպտաց արհամարհանքով։ «Գիտեմ,— մտածեց նա,— այդ խոսելաձևը, որ ո՜չ թե միայն նրանն է, այլ քաղաքի բոլոր բնակիչներինը, որոնք տասը տարին մեկ-երկու անգամ գալով գյուղ և սովորելով գյուղական երկու-երեք խոսք, գործածում են դրանք տեղի-անտեղի, հաստատ համոզված, որ արդեն ամեն բան գիտեն։ Հեցացու դուրս կգա 30 սաժեն։ Բառեր է ասում, իսկ ինքը ոչինչ չի հասկանում»։

— Ես չեմ սկսի սովորեցնել քեզ այն, ինչ դու գրում ես այնտեղ՝ ատյանում,— ասաց նա,— իսկ եթե պետք լինի, կհարցնեմ քեզանից։ Մինչդեռ դու այնպես համոզված ես, որ ձեռք ես բերել բոլոր գիտելիքները անտառի մասին։ Դժվար է այդ գիտությունը։ Արդյոք, հաշվե՞լ ես ծառերը։

— Ինչպե՞ս հաշվել ծառերը,— ծիծաղելով ասաց Ստեպան Արկադևիչը, կամենալով իր բարեկամին հանել վատ տրամադրությունից։— Բարձր խելքը գուցե կարողանար հաշվել ավազը, մոլորակների ճառագայթները...

— Դե՜, իհարկե, Ռյաբինինի բարձր խելքը կարող է։ Ո՜չ մի վաճառական չի գնի առանց հաշվելու, եթե նրան ձրի չեն

[1] Հեցացու կոչվում է գլխավորապես կաղնու փայտանյութը, որը գործադրվում է մեծ մասամբ անիվների արդյունաբերության մեջ։

տալիս, ինչպես դու։ Ես գիտեմ քո անտառը։ Ես ամեն տարի գնում եմ այնտեղ որսի, և քո անտառն արժե հինգ հարյուր ռուբլի կանխիկ դրամով, իսկ նա քեզ տվել է երկու հարյուր՝ տարկետումով։ Նշանակում է դու նրան նվիրել ես մոտ երեսուն հազար։

— Է՜հ, բավ է հրապուրվես,— խեղճացած ասաց Ստեպան Արկադևիչը,— հապա ինչո՞ւ ոչ ոք չէր տալիս։

— Որովհետև նա գաղտնի համաձայնության է եկել վաճառականների հետ. նա տվել է նրանց հրաժարագին։ Ես նրանց ամենքի հետ գործ ունեցել եմ, ես ճանաչում եմ նրանց։ Դրանք հո վաճառականներ չեն, շահադետներ են։ Նա չի մոտենա այնպիսի գործի, որից շահելու է տասը, տասնհինգ տոկոս, այլ սպասում է, որ քսան կոպեկով գնի ռուբլին։

— Դեհ, հերիք է։ Տրամադրությունդ տեղը չէ։

— Բնավ ոչ,— ասաց Լևինը մռայլ, երբ նրանք մոտենում էին տանը։

Գավթի մոտ արդեն կանգնել էր երկաթով ու կաշվով ձիգ պատած սայլակը, լայն մերակներով պիրկ լծած չաղ ձիու հետ։ Սայլակի մեջ նստած էր խիստ արնեթթոշ և պինդ գոտևորված կառավարիչը, որ կառապանի դեր էր կատարում Ռյաբինինի մոտ։ Ինքը՝ Ռյաբինինը, տանն էր արդեն և ընկեր-բարեկամներին դիմավորեց նախասենյակում։ Ռյաբինինը միջին տարիքի, բարձրահասակ, նիհար մարդ էր, բեղերով և ածիլած ցցուն ծնոտով ու պղտոր ուռուցիկ աչքերով։ Նա հագել էր երկարափեշ, կապույտ սյուրտուկ, գավակից ցած կոճակներով, երկարաճիտ կոշիկներ, կոճերի վրա ծալածալ, իսկ սրունքների վրա՝ ուղիղ. կոշիկների վրայից հագել էր մեծ կրկնակոշիկներ։ Նա բոլորակի սրբեց դեմքը թաշկինակով և սյուրտուկի ափերը վրա բերելով, որն առանց այդ էլ լավ էր նստել նրա վրա, ժպիտով ողջունում էր ներս մտնողներին, ձեռքը մեկնելով Ստեպան Արկադևիչին, կարծես կամենալով մի բան բռնել։

— Ա՜հ ահա և դուք,— ասաց Ստեպան Արկադևիչը, ձեռքը տալով նրան։— Հիանալի՜ է։

— Չհամարձակվեցի չկատարել ձեր պայծառափայլության հրամանները, թեպետ ճանապարհը շատ վատ է։ Համարյա ամբողջ ճանապարհը ոտով եկա, բայց ժամանակին ներկայացա։ Կոնստանտին Դմիտրիչ. հարգանքներս,— դիմեց նա Լևինին, աշխատելով բռնել նաև նրա ձեռքը։ Բայց Լևինը մռայլվելով, ձևացավ, իբր չի նկատում նրա ձեռքը, և հանում էր կոցարները։— Շնորհ եք արել զվարճանալու որսորդությա՞մբ։ Դա ի՞նչ թռչուն պիտի լինի,— ավելացրեց Ռյաբինինը, արհամարհալից նայելով կոցարներին,— երևի համեղ է։— Եվ նա բացասաբար շարժեց գլուխը, կարծես թե խորապես կասկածում է, որ կատարված գործն արժե թափած աշխատանքին։

— Ուզո՞ւմ ես գնալ առանձնասենյակ,— խոժոռաղեմ ու մռայլ ասաց Լևինը Ստեպան Արկադևիչին ֆրանսերեն։— Անցեք առանձնասենյակ և խոսեք այնտեղ։

— Շատ բարի, ուր կհրամայեք,— արհամարհական արժանապատվությամբ ասաց Ռյաբինինը, կարծես կամենալով զգալ տալ, որ ուրիշների համար կարող են դժվարություններ լինել, ո՛ւմ հետ և ինչպե՛ս վարվել, բայց իր համար երբեք ու ո՛չ մի բանում դժվարություններ լինել չեն կարող։

Մտնելով առանձնասենյակ, Ռյաբինինը ըստ սովորության, նայեց չորս կողմը, կարծես որոնելով սրբանկար, բայց դանելով այն, երեսը չխաչակնքեց։ Նա դիտեց գրքերով լի պահարաններն ու դարակները և նույնպիսի կասկածով, որով վերաբերվեց կոցարներին, արհամարհալից ժպտաց ու բացասաբար շարժեց գլուխը, ո՛չ մի կերպ չընդունելով, որ այդ գործն արժե կատարված աշխատանքին։

— Հը՜, ինչպե՞ս է, դրամ բերի՞ք,— հարցրեց Օբլոնսկին։— Նստեցեք։

— Փողի համար միամիտ եղեք։ Եկա, որ տեսնվենք, խորհրդակցենք, խոսենք։

— Ինչի՞ մասին խոսել։ Ի՞նչ եք կանգնել, նստեցե՛ք։

— Դա կարելի է,— ասաց Ռյաբինինը նստելով և իր համար ամենատանջալից կերպով հենվելով բազկաթոռի թիկունքին։ — Պետք է զիջել, իշխա՜ն։ Մեղք բան է։ Իսկ փողը պատրաստ է վերջնականապես, մինչև վերջին կոպեկը։ Փողի համար միամիտ եղեք։

Լևինը, որ մինչ այդ հրացանը դրեց պահարանը և արդեն դուրս էր գնում դռնից, լսելով վաճառականի խոսքերը, կանգ առավ։

— Առանց այդ էլ անտառը վերցրել եք ձրի,— ասաց նա։— Ափսո՜ս, նա ուշ եկավ ինձ մոտ. թե չէ գինը ե՛ս կնշանակեի։

Ռյաբինինը կանգնեց և լուռ, ժպտադեմ նայեց Լևինին ոտից գլուխ։

— Շատ ժլատն է Կոնստանտին Դմիտրիչը,— ասաց նա ժպտերես, դիմելով Ստեպան Արկադևիչին,— վերջնականապես մարդ ոչինչ առնել չի կարող։ Ուզում էի ցորեն առնել, լավ փող էի տալիս։

— Ինչո՞ւ պիտի ես իմը ձրի տամ ձեզ։ Ես հո չեմ գտել, ո՛չ էլ գողացել։

— Տե՛ր փրկի, մեր օրերում գողություն անելը ուղղակի հնարավոր չէ։ Մեր օրերում ամեն տեղ վերջնականապես հրապարակական դատավարություն է, այժմ ամեն ինչ ազնիվ կերպով է լինում, ի՞նչ գողություն, ի՞նչ բան։ Մենք խոսում էինք պատվով։ Թանկ է նշանակում անտառի համար, դժվար է ծայրը ծայրին հասցնել։ Խնդրում եմ մի փոքր զիջել։

— Չեմ հասկանում, դուք գործը վերջացրի՞լ եք, թե ոչ։ Եթե վերջացած է, սակարկելու կարիք չկա, իսկ եթե վերջացած չէ,— ասաց Լևինը,— ե՛ս եմ գնում անտա՞ռը։

Ժպիտը հանկարծ չքվեց Ռյաբինինի դեմքից։ Նրա վրա գրծագրվեց բազեի գիշատիչ ու խիստ արտահայտություն։ Նա ոսկրոտ մատներով արագ արձակեց սյուրտուկը, բացելով շալվարի վրայից բաց թողած շապիկը, ժիլետի պղնձե կոճակները, ժամացույցի շղթան և արագ հանեց հնամաշ հաստ դրամապանակը։

— Համեցեք, անտառն ի՞մն է,— ասաց նա արագ խաչակնքելով երեսը ու մեկնելով ձեռքը։ — Վերցրու փողը, ի՞մն է անտառը։ Ահա թե ոնց է առուտուր անում Ռյաբինինը, նա գոռշներ չի հաշվում,— ասաց վաճառականը, կնճռոտվելով և թափահարելով դրամապանակը։

— Եթե քո տեղը ես լինեի, չէի շտապի,— ասաց Լևինը։

— Ի՞նչ ես խոսում,— զարմանքով ասաց Օբլոնսկին,— չէ՞ որ ես խոսք եմ տվել։

Լևինը դուրս գնաց սենյակից, շրխկացնելով դուռը։ Ռյաբինինը նայելով դռանը, ժպտադեմ ճմռթեց գլուխը։

— Ջահելություն, վերջնականապես տղայություն միայն։ Երդվում եմ պատվով, որ գնում եմ հենց էնպես, անվան համար միայն, այսինքն՝ թե Օբլոնսկու անտառը գնել է Ռյաբինինը, ո՛չ թե մի ուրիշը։ Տեսնենք, թե աստված ի՞նչ կտա,

հաշիվների տակից կարո՞ղ ենք դուրս գալ։ Աստծո անունը վկա։ Համեցեք։ Հիմա գրենք պայմանը...

Մեկ ժամ հետո վաճառականը խնամքով իրար վրա քաշելով խալաթի ափերը և կոճկելով սյուրտուկը, պայմանագիրը գրպանում, նստեց պիրկ կաշեպատած իր սայլակը և գնաց տուն։

— Օ՜ֆ, էդ պարոնները,— ասաց նա կառավարչին.— ամենքն էլ մի սանրի կտավ են։

— Էդպես է, որ կա,— պատասխանեց կառավարիչը, հանձնելով երասանը նրան ու կոճկելով կաշվե գոգնոցը։— Իսկ մաղարի՞չը, Միխայիլ Իգնատիչ։

— Դե՛, դե՛...

XVII

Ստեպան Արկադևիչը, գրպանն ուռցրած այն տոկոսաբեր թղթերով, որ վաճառականը տվեց նրան երեք ամսյա կանխավճարով, բարձրացավ վերև։ Անտառը ծախվեց, դրամը գրպանում, որսը հիանալի, ուստի Ստեպան Արկադևիչն ամենաուրախ տրամադրության էր, այդ պատճառով նա առանձնապես ուզում էր ցրել այն վատ տրամադրությունը, որ համակեց Լևինին։ Նա ուզում էր ընթրիքի սեղանի առաջ օրը վերջացնել նույնպես հաճելի, ինչպես սկսվել էր այն։

Իսկապես, Լևինի տրամադրությունը վատ էր, և չնայած իր ամբողջ ցանկությանը՝ սիրալիր ու գուրգուրանքով վերաբերվել իր սիրելի հյուրին, չէր կարողանում հաղթահարել իրեն։ Կամաց-կամաց սկսում էր համակել նրան այն լուրի գինովությունը, որ Կիտին չի ամուսնացել։

Կիտին չի ամուսնացել և հիվանդ է, հիվանդ է դեպի այն մարդը տածած սիրուց, որն անտեսեց, արհամարհեց նրան։ Այդ վիրավորանքը կարծես թե ընկնում էր Լևինի վրա։ Վրոնսկին արհամարհեց Կիտիին, իսկ Կիտին արհամարհեց Լևինին։ Հետևաբար, Վրոնսկին իրավունք ուներ արհամարհելու Լևինին, այդ իսկ պատճառով նա Լևինի թշնամին էր։ Բայց այս բոլորի մասին Լևինը չէր մտածում։ Նա աղոտ կերպով զգում էր, որ դրա մեջ կա իր համար վիրավորական մի բան. և այժմ բարկանում էր ո՛չ թե այն բանի վրա, ինչը փչացրեց իր տրա-

մագրությունը, այլ բծախնդրությամբ էր վերաբերվում այն բոլորին, ինչ պատկերանում էր իրեն։ Նրան վրդովում, գրգռում էր անտառի տխմար վաճառքը, այն խաբեբայությունը, որին զոհ դարձավ Օբլոնսկին և որը կատարվեց իր տանը։

— Վերջացրի՞ր,— ասաց նա, հանդիպելով վերևում Ստեպան Արկադևիչին։— Ուզո՞ւմ ես ընթրել։

— Այո՛, չեմ հրաժարվի։ Ի՞նչ զարմանալի ախորժակ ունեմ գյուղում։ Հրաշալիք։ Ինչո՞ւ Ռյաբինինին չառաջարկեցիր, որ մի բան ուտի։

— Է՛հ, թող կորչի՛։

— Բայց ինչպե՞ս ես վերաբերվում նրան,— ասաց Օբլոնսկին։— Դու ձեռք էլ չտվիր։ Ինչո՞ւ չպիտի ձեռք տալ նրան։

— Որովհետև ես լակեյին ձեռք չեմ տա, իսկ լակեյը հազար անգամ լավ է նրանից։

— Ի՞նչ հետադեմ ես դու։ Հապա դասերի ձուլվե՞լը,— ասաց Օբլոնսկին։

— Ում դուրեկան է ձուլվելը, բարով ձուլվի, իսկ ինձ համար զզվելի է։

— Ինչպես տեսնում եմ, դու վճռականապես հետադիմական ես։

— Ճիշտն ասած, ես երբեք չեմ մտածել, թե ո՛վ եմ։ Ես Կոնստանտին Լևինն եմ, ուրիշ ոչինչ։

— Կոնստանտին Լևինը, որի տրամադրությունը շատ վատ է,— ժպտալով ասաց Ստեպան Արկադևիչը։

— Այո՛, իմ տրամադրությունը վատ է, և դու գիտես, թե ինչո՛ւ։ Դրա պատճառը, ներիր ինձ, քո տխմար վաճառքն է...

Ստեպան Արկադևիչը բարեսրտորեն կնճռոտվեց, որպես մի մարդ, որին անմեղ տեղը վիրավորում են ու վշտացնում։

— Դեհ, հեքի՛ք է,— ասաց նա։— Ե՞րբ է պատահել, որ մեկը մի բան ծախի և նրան իսկույն չասեն վաճառքից հետո. «դա արժեր շատ ավելի»։ Իսկ քանի դեռ ծախում են, ո՛չ ոք ավելին չի տալիս... Ո՛չ, ես տեսնում եմ, դու ատամ ունես այդ դժբախտ Ռյաբինինի դեմ։

— Գուցե և ունեմ։ Իսկ դու գիտե՞ս, թե ինչի՛ համար։ Դու դարձյալ կասես, որ ես ռետրոգրադ եմ կամ դրանից ավելի սարսափելի խոսք. բայց և այնպես, ես ցավում ու վշտանում եմ, երբ ամենուրեք տեսնում եմ այս աղքատացումն ազնվա-

կանության, որին ես պատկանում եմ և, չնայած գասերի իրար հետ ձուլմանը, շատ ուրախ եմ, որ պատկանում եմ... ու աղքատացումը փարթամության հետևանք չէ. դա դեռ ոչի՞նչ, եթե այդպես լիներ. ճոխ ապրելը ազնվականների գործն է, այդպես կարողանում են ապրել միայն ազնվականները։ Այժմ մուժիկները հողեր են գնում մեր շուրջը։ Դա չի վիրավորում ինձ։ Պարոնը ոչինչ չի անում, մուժիկն աշխատում է ու հրապարակից դուրս է մղում պարապ մարդուն։ Այդպես պետք է լինի։ Եվ ես շատ ուրախ եմ մուժիկի համար։ Բայց ես չեմ կարող առանց սրտնեղության տեսնել, որ այդ աղքատացումն առաջանում է, չգիտեմ ինչպես անվանեմ, ինչ-որ անմեղությունից։ Այստեղ վարձակալ մի լեհ կես գնով գնեց ազնվական մի կնոջից, որն ապրում է Նիցցայում, նրա սքանչելի կալվածքը։ Այստեղ վաճառականին դեսյատինը մի ռուբլով վարձու հող են տալիս, որն արժե տասը ռուբլի։ Այստեղ դու առանց որևէ պատճառի նվիրեցիր այդ խաբեբային երեսուն հազար։

— Ուրեմն ի՞նչ, հաշվել յուրաքանչյուր ծա՞ռը։

— Անպայման հաշվել։ Ա՜յ, ահա դու չես հաշվել, իսկ Ռյաբինինը հաշվել է։ Ռյաբինինի երեխաները միջոցներ կունենան ապրուստի և կրթության համար, իսկ քո զավակները, թերևս, չունենան։

— Ներիր դու ինձ, բայց այդպիսի հաշիվ անելու մեջ կա ինչ-որ խղճուկ, չնչին բան։ Մենք մեր զբաղմունքներն ունենք, նրանք՝ իրենցը, նրանց էլ օգուտ է պետք։ Սակայն գործը կատարվել է, և վե՜րջ։ Ահա և մխլուն, իմ ամենասիրած ձվածեղը։ Եվ Ագաֆիա Միխայլովնան մեզ կտա համեմներով պատրաստած այդ սքանչելի օղին...

Ստեպան Արկադևիչը նստեց սեղանի առաջ և սկսեց կատակել Ագաֆիա Միխայլովնայի հետ, հավատացնելով նրան, որ այդպիսի ճաշ ու ընթրիք վաղուց չէր կերել։

— Ա՜յ, դուք գոնե գովում եք,— ասաց Ագաֆիա Միխայլովնան,— իսկ Կոնստանտին Դմիտրիչը, ինչ-որ տաս, թեկուզ հացի չոր կեղև, կուտի ու կերթա։

Որքան էլ Լևինն աշխատում էր հաղթահարել իրեն, բայց չէր հաջողվում, նա մռայլ էր և լուռ։ Նա պետք է մի հարց տար Ստեպան Արկադևիչին, բայց սիրտ չէր անում և չէր գտնում

ո՛չ համապատասխան ձև, ոչ էլ ժամանակ, թե ի՛նչպես ու ե՛րբ տա այդ հարցը։ Ստեպան Արկադևիչն արդեն գնաց ներքև՝ իր սենյակը, հանվեց, նորից լվացվեց, հագավ գիշերվա իր ծալազարդ շապիկը և պառկեց, իսկ Լևինը դեռ ոտքը կախ էր գցում նրա սենյակում, խոսելով ամեն տեսակ դատարկ բաների մասին ու չկարողանալով հարցնել այն, ինչ ուզում էր։

— Ի՞նչ զարմանալի կերպով օճառ են պատրաստում,— ասաց նա, նայելով և շուռումուռ տալով այն մի կտոր օճառը, որ Ագաֆիա Միխայլովնան պատրաստել էր հյուրի համար, և որը չէր գործածել Օբլոնսկին։— Մի նայիր, չէ՞ որ սա արվեստի գործ է։

— Այո՛, այժմ ամեն բանի մեջ հասել են ամեն տեսակ կատարելագործության,— ասաց Ստեպան Արկադևիչը, հյուծեղ ու երանելիությամբ հորանջելով։— Օրինակ թատրոնները և այդ զվարճանքները... ա՛-ա՛-ա՛,— հորանջում էր նա։— Ամենուր էլեկտրական լույս... ա՛-ա՛։

— Այո՛, էլեկտրական լույս,— ասաց Լևինը։— Այո՛։ Հը՞մ, իսկ ո՞րտեղ է այժմ Վրոնսկին,— հարցրեց նա հանկարծ, ցած դնելով օճառը։

— Վրո՞նսկին,— ասաց Ստեպան Արկադևիչը, դադարեցնելով հորանջը.—Պետերբուրգում է։ Քեզանից անմիջապես հետո գնաց և այլևս ո՛չ մի անգամ չվերադարձավ Մոսկվա։ Գիտե՞ս, Կոստյա, ես ճիշտը կասեմ քեզ,— շարունակեց նա, հենվելով աթոռին և դնելով ձեռքի վրա իր գեղեցիկ վարդագույն դեմքը, որից աստղերի պես առկայծում էին նրա ցանկասեր, բարի ու քնկոտ աչքերը։— Մեղավորը դու ինքդ էիր։ Դու վախեցար մրցակցից։ Իսկ ես, ինչպես ասում էի քեզ և այն ժամանակ, չգիտեմ, թե ո՞ր կողմն ավելի շանսեր ուներ։ Ինչո՞ւ դու չդիմեցիր վճռական քայլի։ Ես ասում էի քեզ այն ժամանակ, որ...— Նա հորանջեց միայն ծնոտներով, առանց բացելու բերանը։

«Նա գիտե՞, արդյոք, թե՞ չգիտե, որ ես առաջարկություն արի,— մտածեց Լևինը, նայելով նրան։— Այո՛, նրա դեմքի մեջ կա ինչ-որ խորամանկ, դիվանագիտական բան», և զգալով, որ կարմրում է, նա լուռ նայում էր ուղիղ Ստեպան Արկադևիչի աչքերին։

— Եթե այն ժամանակ իմ քենու կողմից որևէ բան կար,

դա արտաքինով հրապուրվելն էր,— շարունակեց Օբլոնսկին։— Գիտես է՛լի, այդ կատարյալ արիստոկրատիզմը և ապագայի դիրքը բարձր հասարակության մեջ ազդեցին ո՛չ թե նրա վրա, այլ մոր վրա։

Լևինը մռայլվեց։ Մերժման վիրավորանքը, որից նա անցել էր, կարծես թարմ, հենց նոր ստացած վերքի կսկիծով այրեց նրա սիրտը։ Բայց նա տանն էր, իսկ տանը պատերն օգնում են։

— Կա՛ց, կա՛ց,— խոսեց նա, ընդհատելով Օբլոնսկուն։— Դու ասում ես արիստոկրատիզմ։ Թույլ տուր հարցնել քեզ՝ ո՞րն է Վրոնսկու, կամ մեկ ուրիշի, ով էլ լինի նա, այդ արիստոկրատիզմը, այնպիսի արիստոկրատիզմ, հանուն որի կարելի լիներ արհամարհել ինձ։ Դու Վրոնսկուն համարում ես արիստոկրատ, իսկ ես՝ ոչ։ Մի մարդ, որի հայրը ոչնչությունից դուրս է եկել խարդախությամբ, որի մայրը ում հետ ասես կապեր է ունեցել... ո՛չ, ներիր դու, բայց ես արիստոկրատ եմ համարում ի՛նձ և ի՛նձ նման մարդկանց, որոնք կարող են անցյալում ցույց տալ ընտանիքների երեք-չորս ազնիվ սերունդ, որ եղել են կրթության բարձր աստիճանի վրա (ձիրք ու խելք՝ այլ բան է դա), և որոնք երբեք ոչ ոքի հանդեպ ստորություն չեն արել, երբեք ոչ ոքի կարիքը չեն ունեցել, ինչպես ապրել են իմ պապը, իմ հայրը։ Եվ ես այդպես շատերին գիտեմ։ Քեզ նվաստացուցիչ բան է թվում, որ ես հաշվում եմ, համրում եմ ծառերն անտառում, իսկ դու երեսուն հազար նվիրում ես Ռյաբինինին. բայց դու կստանաս վարձագին և չգիտեմ, թե էլի ի՞նչ, իսկ ես չեմ ստանա, այդ պատճառով էլ բարձր եմ գնահատում տոհմականն ու աշխատանքայինը... Արիստոկրատը մե՛նք ենք, ո՛չ թե նրանք, որոնք կարող են գոյություն ունենալ, ապրել աշխարհիս հզորների տված ողորմությամբ միայն, և որոնց կարելի է գնել քսան կոպեկանոցով։

— Ո՞ւմ վրա ես այդպես հարձակվում։ Ես համաձայն եմ քեզ հետ,— ասաց Ստեպան Արկադևիչն անկեղծաբար և ուրախ, թեև զգում էր, որ Լևինը նրանց անվան տակ, որոնց կարելի է քսան կոպեկանոցով գնել, ենթադրում էր և իրեն։ Լևինի աշխուժացումը սրտանց դուր էր գալիս նրան։— Այդ ո՞ւմ վրա այդպես։ Թեպետ Վրոնսկու մասին քո ասածներից շատը ճիշտ

չէ, բայց դրա մասին չեմ ասում։ Ես ուղղակի ասում եմ քեզ. քո տեղը որ ե՛ս լինեի՝ ինձ հետ կերթայի Մոսկվա և...

— Ո՛չ. ես չգիտեմ, դու գիտե՞ս, թե ոչ, բայց ինձ համար միևնույն է։ Եվ ես կասեմ քեզ. ես առաջարկություն արի ու մերժում ստացա, և Կատերինա Ալեքսանդրովնան ինձ համար այժմ ծանր ու ամոթալի հիշողություն է։

— Ինչո՞ւ։ Ա՜յ քեզ դատարկ բան։

— Բայց էլ չխոսենք։ Ներիր ինձ, խնդրեմ, եթե ես կոպիտ եղա քո հանդեպ,— ասաց Լևինը։ Այժմ, բոլորն ասելուց հետո, նա նորից դարձավ այն, ինչ էր առավոտյան։— Դու հո չե՞ս բարկանում ինձ վրա, Ստիվա, խնդրում եմ, չբարկանաս,— ասաց նա և ժպտալով, վերցրեց նրա ձեռքը։

— Ո՛չ, բնա՛վ, բարկանալու բան էլ չկա։ Ես ուրախ եմ, որ մենք բացատրվեցինք։ Գիտես ի՞նչ, առավոտյան որսը լավ է լինում։ Չգնա՞նք։ Ես չէի քնի, և որսից ուղղակի՝ կայարան։

— Գեղեցիկ։

XVIII

Չնայած, որ Վրոնսկու ներքին ամբողջ կյանքը լցված էր իր կրքով, նրա արտաքին կյանքն անփոփոխ ու անզսպորեն գլորվում էր բարձր հասարակության ու գնդի կապերի և շահերի առաջվա սովորական ռելսերով։ Գնդի շահերը կարևոր տեղ էին բռնում Վրոնսկու կյանքում՝ թե՛ այն պատճառով, որ նա սիրում էր գունդը և թե՛ ավելի ևս այն պատճառով, որ նրան սիրում էին գնդում։ Գնդում ո՛չ միայն սիրում էին Վրոնսկուն, այլև հարգում ու պարծենում էին նրանով, պարծենում էին այն բանով, որ այդ մարդը, մեծապես հարուստ, հիանալի կրթության և ընդունակությունների տեր, առաջը բաց ճանապարհ դեպի հաջողություն ու փառասիրություն, դեպի սնափառություն,— արհամարհում էր այս բոլորը և կյանքի բոլոր շահերից իր սրտին ավելի մոտ էր ընդունում գնդի ու ընկերակցության շահերը։ Վրոնսկին զիտակցում էր ընկերների այդ տեսակետն իր նկատմամբ և, բացի այն, որ սիրում էր այդ կյանքը, պարտավոր էր զգում իրեն՝ պահպանել իր նկատմամբ հաստատված հայեցակետը։

Ինքնին հասկանալի է, որ ընկերներից ոչ ոքի հետ չէր խոսում իր սիրո մասին, բերանից խոսք չէր թռցնում ամենաթունդ կերուխումի ժամանակ (ասենք, նա երբեք այնպես հարբած չէր լինում, որ կորցներ ինքնիշխումը) և փակում էր թեթևամիտ այն ընկերների բերանը, որոնք փորձում էին ակնարկներ անել նրա կապի մասին։ Սակայն, չնայած դրան, նրա սերը հայտնի էր ամբողջ քաղաքին. ամենքն էլ ավելի կամ պակաս ճշտությամբ կռահում էին Կարենինայի հետ նրա ունեցած հարաբերությունների մասին. երիտասարդության մեծ մասը նախանձում էր նրան հատկապես այն բանի համար, ինչն ամենածանր բանն էր նրա սիրո մեջ—Կարենինայի բարձր դիրքը, ուստի և այդ կապի ցուցադրելիությունը բարձր հասարակության համար։

Երիտասարդ կանանց մեծ մասը, որոնք նախանձում էին Աննային, որոնց արդեն վաղուց ձանձրացրել էր այն, որ Աննային անվանում են արդարամիտ, ուրախանում էին այն բանի համար, ինչը ենթադրում էին, և սպասում էին միայն հասարակական կարծիքի շրջադարձին, որպեսզի հարձակվեն Աննայի վրա իրենց ատելության ամբողջ ծանրությամբ։ Նրանք արդեն պատրաստում էին ցեխի այն գուղձերը, որ պիտի նետեին նրա վրա, հենց որ գար ժամանակը։ Հասակավոր մարդկանց մեծ մասը և բարձրաստիճան մարդիկ դժգոհ էին պատրաստվող հասարակական այդ սկանդալից։

Վրոնսկու մայրը, իմանալով նրա կապի մասին, սկզբում գոհ էր, և՛ այն պատճառով, որ ո՛չ մի բան, կոմսուհու հասկացողությամբ, չէր տալիս փայլուն երիտասարդին վերջին այն դրվագը, ինչպես կապը բարձր հասարակության մեջ, և՛ այն պատճառով, որ իրեն այնքան դուր եկած, իր որդու մասին այնքան շատ խոսող Կարենինան, այսուամենայնիվ նույնպիսի կին էր, ինչպես էին բոլոր գեղեցիկ ու բարոյական կանայք՝ կոմսուհի Վրոնսկայայի հասկացողությամբ։ Բայց վերջերս նա իմացավ, որ որդին հրաժարվել էր իրեն արված, իր կարիերայի համար կարևոր առաջարկից այն նկատառումով միայն, որպեսզի մնա գնդում, որտեղ կարող էր տեսնվել Կարենինայի հետ, իմացավ, որ բարձրաստիճան մարդիկ դժգոհ են իր որդուց դրա համար, և նա փոխեց իր կարծիքը։ Կոմսուհուն դուր չէր գալիս նաև այն, որ համաձայն այն բոլորի, ինչ նա իմացավ այդ կապի մասին, դա այն փայլուն, նազե-

լի, բարձր հասարակության սազական կապը չէր, որին ինքը հավանություն կտար, այլ մի տեսակ վերթերյան հուսահատական կիրք էր, ինչպես պատմում էին նրան, որը կարող էր իր որդուն գցել հիմարությունների մեջ։ Նա չէր տեսել որդուն Մոսկվայից նրա անսպասելի կերպով հեռանալուց հետո և մեծ որդու միջոցով պահանջում էր, որ գար իր մոտ։

Մեծ եղբայրը նույնպես դժգոհ էր փոքրից։ Նա չէր հասկանում, թե ինչպիսի սեր է դա. մե՞ծ, թե փոքր, կրքո՞տ, թե անկիրք, արատավո՞ր, թե անարատ (նա ինքը, ունենալով երեխաներ, պահում էր պարուհի, ուստի ներողամիտ էր դրա հանդեպ), բայց նա գիտեր, դա այնպիսի սեր էր, որ դուր չէր գալիս նրանց, ում պետք էր դուր գալ, այս իսկ պատճառով, հավանություն չէր տալիս եղբոր վարքագծին։

Բացի ծառայության զբաղմունքներից ու բարձր հասարակությունից, Վրոնսկին ուներ էլի մի զբաղմունք՝ ձիեր, որոնց մեծ սիրահար էր։

Այս տարի նշանակված էր սպայական ձիարշավ՝ արգելքներով։ Վրոնսկին գրվեց՝ մասնակցելու ձիարշավին, գնեց անգլիական ազնվացեղ մի զամբիկ ու, չնայած իր սիրույն, սաստիկ, թեպետ և զուսպ, տարված էր առաջիկա ձիարշավով...

Այդ երկու կրքերը չէին խանգարում իրար։ Ընդհակառակը, նրան պետք էր իր սիրուց անկախ զբաղմունք ու հրապույր, որով նա թարմանում ու հանգստանում էր իրեն չափազանց հուզող տպավորություններից։

XIX

Կրասնոսելսկու ձիարշավների օրը Վրոնսկին սովորականից վաղ եկավ գնդի արտելի ընդհանուր դահլիճը՝ ուտելու բիֆշտեքս։ Նա կարիք չուներ խիստ պահեցողության, որովհետև նրա քաշը ճիշտ համապատասխան էր պահանջված չորս ու կես փթին. բայց պետք չէր նաև շաղանալ, այդ իսկ պատճառով, խուսափում էր խմորեղենից ու քաղցրից։ Նա նստել էր կուրծքը բաց սյուրտուկով, որի տակից երևում էր սպիտակ ժիլետը, երկու ձեռքով հենված սեղանին, և սպասելով պատվիրած բիֆշտեքսին, նայում էր ափսեի վրա դրված

ֆրանսիական վեպը։ Նա գիրքը նայում էր նրա համար միայն, որ չխոսի դուրս ու ներս անող սպաների հետ, և մտածում էր։

Նա մտածում էր այն մասին, որ Աննան խոստացել էր այսօր տեսակցություն տալ իրեն՝ ձիարշավից հետո։ Բայց նա Աննային չէր տեսել երեք օր և, ամուսնու արտասահմանից վերադառնալու պատճառով, չգիտեր, արդյոք այսօր դա հնարավո՞ր է, թե ոչ, ու չգիտեր, թե ինչպե՞ս իմանա այդ։ Նա տեսնվել էր Աննայի հետ վերջին անգամ ամառանոցում՝ իր հորեղբոր աղջկա՝ Բետսիի մոտ։ Իսկ Կարենինների ամառանոցը գնում էր ըստ հնարավորին ուշ-ուշ։ Այժմ նա ուզում էր գնալ այնտեղ և կշռադատում էր այդ հարցը. «Ինչպե՞ս անել»։

«Հասկանալի է, ես կասեմ, որ ինձ ուղարկել է Բետսին՝ հարցնելու, թե արդյոք կգնա՞ նա ձիարշավի։ Իհարկե, կգնամ», վճռեց նա ինքն իրեն, բարձրացնելով գլուխը գրքից։ Եվ վառ պատկերացնելով նրան տեսնելու երջանկությունը, նրա դեմքը փայլեց։

— Մարդ ուղարկիր ինձ մոտ տուն, թող շուտ լծեն եռաձի կալյասկան,— ասաց նա ծառային, որը բիֆշտեքս բերեց նրան արծաթե տաք ափսեով, և մոտ քաշելով ափսեն, սկսեց ուտել։

Հարևան բիլյարդարանում լսվում էին գնդակների հարվածների ձայներ, խոսակցություն ու ծիծաղ։ Մուտքի դռան մեջ երևացին երկու սպա. մեկը երիտասարդ, թույլ, նուրբ դեմքով, որ նորերս մտել էր իրենց գունդը պաժերի դպրոցից. մյուսը շաղլիկ. մի ծեր սպա էր. ձեռքին ապարանջան, ուռած փոքրիկ աչքերով։

Վրոնսկին նայեց նրան, խոժոռվեց և, կարծես չնկատելով նրանց, շեղակի հայացքը գցեց գրքին, սկսեց ուտել և միաժամանակ կարդալ։

— Հը՞, կազդուրվո՞ւմ ես աշխատանքի համար,— ասաց շաղլիկ սպան, նստելով նրա մոտ։

— Տեսնում ես,— ասաց Վրոնսկին խոժոռվելով, սրբելով բերանը և առանց նայելու նրան։

— Հաստանալուց չե՞ս վախենում,— ասաց նա, շուռ տալով աթոռը երիտասարդ սպայի համար։

— Ի՞նչ,— բարկացած ասաց Վրոնսկին, դեմքը ծամածռելով զզվանքից և ցուցադրելով իր խիտ ատամները։

— Հաստանալուց չե՞ս վախենում։

— Սպասարկու, խերես բե՛ր,— ասաց Վոռնսկին, առանց պատասխանելու, և գիրքը դնելով մյուս կողմը, շարունակեց կարդալ։

Թխլիկ սպան վերցրեց գինիների քարտը ու դիմեց երիտասարդ սպային.

— Ընտրիր ինքդ, ինչ խմենք,— ասաց նա, տալով նրան քարտը և նայելով նրան։

— Թերևս ռեյնվեյն,— ասաց երիտասարդ սպան, վեհերոտությամբ շեղակի նայելով Վոռնսկուն և աշխատելով մատներով բռնել իր հազիվ բուսած բեղիկները։ Տեսնելով, որ Վոռնսկին շուռ չի գալիս, երիտասարդ սպան վեր կացավ։

— Գնանք բիլյարդարան,— ասաց նա։

Թխլիկ սպան հլու ոտքի կանգնեց, և նրանք գնացին դեպի դուռը։

Այդ ժամանակ սենյակ մտավ բարձրահասակ ու թիկնեղ ռոտմիստր Յաշվինը և գլխի վարից վեր արած շարժումով արհամարհալից ողջունելով երկու սպաներին, մոտեցավ Վոռնսկուն։

— Ա՜, ահա՛ և նա,— բղավեց նա, իր մեծ ձեռքով ամուր խփելով նրա ուսադիրին։ Վոռնսկին բարկացած ետ նայեց, բայց անմիջապես նրա դեմքը փայլեց իրեն հատուկ հանգիստ ու հաստատուն գուրգուրանքով։

— Խելոք բան ես անում, Ալյոշա,— ասաց ռոտմիստրը բարձր բարիտոնով։— Այժմ կե՛ր ու խմիր մի բաժակ։

— Ուտելու ցանկություն չկա։

— Ահա անբաժան զույգ,— ավելացրեց Յաշվինը, հեգնաբար նայելով երկու սպաներին, որոնք այդ ժամանակ դուրս էին գնում սենյակից։ Եվ նա նստեց Վոռնսկու մոտ, սուր անկյունով ծալելով իր, աթոռների բարձրության համեմատ չափազանց երկար սրունքներն ու զիստերը՝ նեղ ռեյտուզի մեջ։— Ինչո՞ւ երեկ չեկար Կրասնինի թատրոն։ Նումերովան վատ չէր։ Ո՞րտեղ էիր։

— Տվերսկոյների մոտ երկար նստեցի, ուշացա, —ասաց Վոռնսկին։

— Ա՜,— արձագանքեց Յաշվինը։

Յաշվինը, թուղթ խաղացող, քեֆ անող և ո՛չ միայն առանց որևէ սկզբունքի, այլ անբարոյական սկզբունքների տեր մարդ,— Յաշվինը գնդում Վոռնսկու լավագույն ընկերն էր։ Վոռնսկին սիրում էր նրան և՛ նրա արտասովոր ֆիզիկական ուժի համար, որը նա մեծ մասամբ ցույց էր տալիս նրանով, որ կարող էր խմել ինչպես տակառ, չքնել և միշտ լինել այդպես, և՛ նրա բարոյական մեծ ուժի համար, որը նա ցույց էր տալիս իշխանավորների ու ընկերների նկատմամբ, ներշնչելով նրանց վախ ու հարգանք դեպի ինքը. Յաշվինն իր ուժը ցույց էր տալիս նաև թղթախաղի մեջ, տասնյակ հազարների ծավալով, և միշտ, չնայած իր խմած լինելուն, խաղում էր այնքան նուրբ ու հետևողականորեն, որ համարվում էր առաջին խաղացողը անգլիական ակումբում։ Վոռնսկին հարգում ու սիրում էր նրան մանավանդ այն բանի համար, որ զգում էր, թե Յաշվինը սիրում է իրեն ո՛չ թե իր անվան ու հարստության պատճառով, այլ սոսկ որպես Վոռնսկու։ Եվ բոլոր մարդկանցից նրա հետ միայն Վոռնսկին կուզենար խոսել իր սիրո մասին։ Նա զգում էր, որ միայն Յաշվինը, թեպետ և թվում էր, թե նա արհամարհում է ամեն զգացում,— նա միայն, թվում էր Վոռնսկուն, կարող էր հասկանալ այն ուժեղ կիրքը, որով այժմ համակված էր իր ամբողջ կյանքը։ Բացի դրանից, նա հավատացած էր, որ Յաշվինը հավանորեն այլևս բավականություն չի գտնում բամբասանքի ու սկանդալի մեջ, այլ հասկանում է այդ զգացումն ինչպես պետք է, այսինքն՝ գիտե և հավատում է, որ սերը կատակ չէ, զվարճալիք չէ, այլ մի ինչ-որ լուրջ ու կարևոր բան է։

Վոռնսկին չէր խոսում նրա հետ իր սիրո մասին, բայց գիտեր, որ նա ամեն բանի իրազեկ է, ամեն ինչ հասկանում է, ինչպես պետք է, և Վոռնսկու համար հաճելի էր տեսնել այդ բանը նրա աչքերում։

— Ա՜, այո՜,— ասաց նա, որպես արձագանք Վոռնսկու ասածի, որ նա եղել է Տվերսկոյների մոտ, ու փայլեցնելով իր սև աչքերը՝ բռնեց ձախ բեղը և սկսեց, ըստ իր վատ սովորության, ուղղել այն դեպի բերանը։

— Իսկ դո՞ւ ինչ արիր երեկ։ Տարա՞ր,— հարցրեց Վոռնսկին։

— Ութ հազար։ Բայց երեքը հուսալի չէ, դժվար թե վճարեն։

— Դե, որ այդպես է, կարող ես ինձ համար տարվել,—

ասաց Վրոնսկին ծիծաղելով։ (Յաշվինը մեծ գրազ էր բռնել Վրոնսկու համար)։

— Երբեք չեմ տարվի։ Վտանգավոր է միայն Մախոտինը։

Եվ խոսակցությունը փոխվեց այսօրվա ձիարշավի հետ կապված սպասելիքների վրա, որի մասին միայն կարող էր մտածել այժմ Վրոնսկին։

— Գնանք, ես վերջացրի,— ասաց Վրոնսկին ու վեր կենալով, գնաց դեպի դուռը։ Յաշվինը նույնպես վեր կացավ, ձիգ տալով իր վիթխարի ոտներն ու երկար մեջքը։

— Ճաշելու համար դեռ վաղ է, իսկ խմել պետք է։ Ես հիմա կգամ։ Է՛յ, գինի՛,— բղավեց նա հրամանարկելու իր հռչակավոր, թավ և ապակիները ցնցող ձայնով։— Ո՛չ, պետք չէ.— անմիջապես բղավեց նա նորից։— Դու գնում ես տուն, ուրեմն, ես էլ քեզ հետ։

Եվ նա գնաց Վրոնսկու հետ։

XX

Վրոնսկին կենում էր ընդարձակ ու մաքուր, երկու մասի բաժանված չուխոնական խրճիթում։ Պետրիցկին ապրում էր նրա հետ նաև ճամբարում։ Պետրիցկին քնած էր, երբ Վրոնսկին ու Յաշվինը մտան խրճիթ։

— Վե՛ր կաց, հերիք քնես,— ասաց Յաշվինը, անցնելով միջնորմի ետևը և բռթելով քիթը բարձի մեջ խրած, մազերը գզգզված Պետրիցկու ուսը։

Պետրիցկին հանկարծ վեր թռավ, նստեց ծնկների վրա և նայեց շուրջը։

— Քո եղբայրն այստեղ էր,— ասաց նա Վրոնսկուն։— Արթնացրեց ինձ, գրողը տանի նրան, ասաց, որ էլի կգա։— Եվ նա նորից, վերմակը քաշելով վրան, ընկավ բարձին։— Թո՛ղ, է՛, Յաշվին,— ասում էր նա, բարկանալով Յաշվինի վրա, որը քաշում էր վերմակը նրա վրայից։ — Թո՛ղ։ — Նա շուռ եկավ ու բացեց աչքերը։— Ավելի լավ է, դու ասա, թե ի՛նչ խմեմ. բերանումս այնպիսի գարշելի համ կա, որ...

— Ամենից լավը օղին է,— թավախոսեց Յաշվինը։— Տիրեշչենկո, պարոնիդ օղի և վարունգ,— բղավեց նա, երևի, իր ձայնը լսելուն սիրահար։

— Քո կարծիքով օղի՞։ Հա՞,— հարցրեց Պետրիցկին, կրնճռոտելով ու տրորելով աչքերը։— Դու էլ կխմե՞ս։ Եթե միասին, ուրեմն խմենք։ Վրոնսկի, կխմե՞ս,— ասաց Պետրիցկին, վեր կենալով ու թևերից ներքև փաթաթվելով վագրի վերմակի մեջ։ Նա դուրս եկավ միջնորմի դռնից, ձեռքերը բարձրացրեց և երգեց ֆրանսերեն. «Արքան Տու-լա-ա-յում էր»։— Վրո՛նսկի, կխմե՞ս։

— Կորի՛ր,— ասաց Վրոնսկին, ծառայի օգնությամբ հագնելով սյուրտուկը։

— Այդ ո՞ւր,— հարցրեց նրան Յաշվինը։— Ահա և եռանդակը,— ավելացրեց նա, տեսնելով մոտեցող [illegible]։

— Ջիախոռ, հետո պիտի տեսնեմ նաև Բրյանսկուն, ձիերի համար,— ասաց Վրոնսկին։

Վրոնսկին իսկապես խոստացել էր Բրյանսկուն՝ լինել նրա մոտ, Պետերգոֆից տասը վերստի վրա, և տանել նրան ձիերի համար պահանջված դրամը. նա ուզում էր հասցնել այնտեղ էլ գնալ։ Եվ ընկերներն իսկույն հասկացան, որ նա միայն Բրյանսկու մոտ չի գնում։

Պետրիցկին շարունակելով երգել, աչքով արեց ու փքեց շրթունքները, կարծես ուզենալով ասել. գիտենք, թե ի՞նչ Բրյանսկի է դա։

— Տե՛ս, որ չուշանաս,— միայն ասաց Յաշվինը և, խոսակցությունը փոխելու նպատակով ավելացրեց.— Ո՞նց է, իմ բաց խարտյաշը լա՞վ է ծառայում,— հարցրեց նա, նայելով պատուհանից դուրս, մեջտեղի ձիու մասին, որը ինքն էր վաճառել։

— Կա՛ց,— բղավեց Պետրիցկին արդեն դուրս գնացող Վրոնսկու ետևից։— Եղբայրդ թողեց քեզ համար մի նամակ և տոմս։ Կա՛ց, ո՞րտեղ են նրանք։

Վրոնսկին կանգ առավ։

— Հը՞, ո՞րտեղ են։

— Ո՞րտեղ են։ Հարցը հենց դա է,— հանդիսավորությամբ ասաց Պետրիցկին, ցուցամատը քթից տանելով դեպի վեր։

— Դե՞, ասա, է՞, հիմարություն մի՛ անիր,— ժպտալով ասաց Վրոնսկին։

— Բուխարին չեմ վառել։ Այստեղ կլինի։

— Օ՞հ, հերիք փչես. ո՞րտեղ է նամակը։

— Ո՛չ, իսկապես, մոռացել եմ։ Թե՞ երազիս տեսա։ Կա՛ց,

կա՛ց։ Ի՞նչ ես բարկանում։ Եթե դու էլ ինձ պես երեկ խմած լի-նեիր չորս շիշ, կմոռանայիր, թե ո՞րտեղ ես պառկած։ Կա՛ց, իսկույն կհիշեմ։

Պետրիցկին անցավ միջնորմի ետևը և պառկեց իր մահ-ճակալին։

— Կա՛ց։ Այսպես ես պառկած էի, այդպես նա կանգնած էր։ Այո՛-յո-յո... Ահա՛,— և Պետրիցկին հանեց նամակը ներքնակի տակից, որտեղ պահել էր։

Վոռնսկին վերցրեց եղբոր տոմսն ու նամակը։ Դա այն էր, որ սպասում էր նա,— մորից ստացված նամակը՝ հանդիմա-նություններով լի, թե նա չէր այցելում մորը, իսկ տոմսը եղ-բորից էր, ուր գրված էր, որ պետք է իրար հետ խոսել։ Վոռն-սկին գիտեր, որ այս բոլորը նույն հարցի շուրջն է։ «Ի՞նչ գործ ունեն նրանք», մտածեց Վոռնսկին և, նամակները ճմռթելով, խրեց կոճակների արանքը։ Խրճիթի նախասրահում նրան պա-տահեցին երկու սպաներ. մեկն իրենց գնդից, մյուսը՝ ուրիշ։

Վոռնսկու բնակարանը բոլոր սպաների ապաստարանն էր միշտ։

— Ո՞ւր։

— Պետք է, Պետերգոֆ։

— Իսկ ձին բերի՞ն Ցարսկոյից։

— Եկել է, բայց ես դեռ չեմ տեսել։

— Ասում են, Մախոտինի Գլադիատորը կաղում է։

— Դատա՞րկ բան։ Սակայն ո՞նց եք արշավելու դուք այս ցեխով,— ասաց մյուսը։

— Ահա՞ իմ փրկիչները,— բղավեց, տեսնելով ներս եկած-ներին, Պետրիցկին, որի առաջ կանգնել էր սպասյակը, մա-տուցարանի վրա օղի և թթու դրած վարունգ։— Ցաշվինը հրա-մայում է խմել՝ թարմանալու համար։

— Երեկ դուք մեր գլխին լավ խաղ խաղացիք,— ասաց եկվորներից մեկը,— ամբողջ գիշեր քուն չտվիք մեզ։

— Դա ոչինչ, բայց գիտեք, թե ինչո՞վ վերջացրինք,— պատմում էր Պետրիցկին։— Վոլկովը բարձրացավ կտուրը և ասում է, որ ինքը տխուր է։ Ես ասացի, երաժշտությո՞ւն, թաղ-ման մա՞րշ։ Նա հենց այդպես էլ քնեց կտուրին՝ թաղման մար-շի տակ։

— Խմի՛ր, անպատճառ օղի՞ խմիր, իսկ հետո սելտերյան

ջուր և շատ լիմոն,— ասում էր Ցաշվինը, կանգնած Պետրիցկու գլխին, մոր պես, որ ստիպում է երեխային՝ դեղ ընդունել,— իսկ ապա՝ մի քիչ շամպայն, այսպես՝ մի շիշ։

— Ա՜յ, խելոք բան։ Կաց, Վոռնսկի, խմենք։

— Ո՛չ, մնաք բարով, պարոններ, այսօր ես չեմ խմում։

— Վախենում ես ծանրանա՞ս։— Դեհ, ուրեմն, մենակ մենք։ Բեր սելտերյան ջուր և լիմոն։

— Վոռնսկի,— բղավեց մեկը, երբ նա արդեն դուրս էր գա-լիս նախասրահ։

— Ի՞նչ։

— Վատ չէր լինի, որ մաղերդ խուզերիր, թե չէ նրանք շատ ծանր են, մանավանդ գլխիդ ճաղատ տեղում։

Վոռնսկին իրոք սկսում էր ճաղատանալ վաղաժամ։ Նա ուրախ ծիծաղեց, ցուցադրելով իր խիտ ատամները և գդակը քաշելով գլխի հերաթափ տեղը, դուրս գնաց ու նստեց կալյաս-կան։

— Դեպի ձիախոռ,— ասաց նա և ուզեց նամակները հա-նել ու կարդալ, բայց հետո միտքը փոխեց, որ ոչ մի բանով չտարվի՝ ձին դիտելուց առաջ։— «Հետո»...

XXI

Ժամանակավոր ձիախոռը, տախտակներից բալագան, շին-ված էր հենց ձիարշավարանի մոտ, և այնտեղ պետք է երեկ բերեին Վոռնսկու ձին։ Նա դեռ չէր տեսել այն։ Վերջին օրերս նա ինքը չէր ձիավարում վարժությունների ժամանակ, այլ հանձնարարել էր մարզիչին, և այժմ կտրականապես ոչինչ չգիտեր, թե ի՞նչ կացության մեջ էր իր ձին։ Հենց որ նա դուրս եկավ կալյասկայից, նրա ձիապանը (գրումը), այսպես կոչ-ված՝ մանչուկը, դեռ հեռվից ճանաչելով նրա կալյասկան, կանչեց մարզիչին։ Չոր անգլիացին երկարաճիտ կոշիկներով ու կարճ բաճկոնով, ծնոտի տակ միայն թողած մի փունջ մա-զով, ժոկեյների անճոռնի քայլվածքով, արմունկները չռելով և օրորվելով, ընդառաջեց նրան։

— Հապա՞, ինչպե՞ս է Ֆռու-Ֆռուն,— հարցրեց Վոռնսկին անգլերեն։

— All right, sir —ամեն բան կարգին է, պարոն,— կո-կորդի մեջ՝ ինչ-որ տեղում ասաց անգլիացու ձայնը։— Ավելի

լավ է, մի՛ գնաք,— ավելացրեց նա, բարձրացնելով գլխարկը։— Ես գնչական հաղորդի և ձին զրոված է։ Ավելի լավ է, չգնաք, դա կվնասվի ձիուն։

— Ո՛չ, կերթամ։ Ուզում եմ տեսնել։

— Գնանք,— առաջվա պես առանց բերանը բաց անելու, մռայլվելով ասաց անգլիացին և թափահարելով արմունկները, առաջ գնաց իր թափթփված քայլվածքով։

Նրանք մտան հեղակի դիմացի փոքրիկ բակը։ Օրապահը, մաքուր կուրտկայով, զուգված, արիատեսիլ մի տղա, ավելը ձեռքին, դիմավորեց ներս մտածներին ու հետևեց նրանց։ Հեղակում կանգնել էին հինգ ձի ցանկափակերի մեջ, և Վոռնսկին գիտեր, որ այդտեղ այսօր պետք է բերած լիներին ու կանգնած էր գլխավոր մրցակիցը՝ Մախոտինի հինգ վերշոկանոց շեկ Գլադիատորը։ Վոռնսկին իր ձիուց ավելի ուզում էր տեսնել Գլադիատորին, որին չէր տեսել, բայց ձիարշավի վայելչության կանոններից գիտեր, որ ո՛չ միայն չի կարելի տեսնել նրան, այլև անվայել բան է նրա մասին հարցնելը։ Բայց այն ժամանակ, երբ նա գնում էր միջանցքով, մանչուկը բացեց ձախ կողմի երկրորդ ցանկափակը, և Վոռնսկին տեսավ մի շեկ, խոշոր ձի ու սպիտակ ոտներ։ Նա գիտեր, որ դա Գլադիատորն էր, սակայն, ուրիշի բաց նամակից երեսը շուռ տվող մարդու զգացումով նա շուռ եկավ ու մոտեցավ Ֆոու-Ֆոուի ցանկափակին։

— Այստեղ նրա ձին է, պարոն Մա-կ.. Մա-կ... ոչ մի կերպ չեմ կարող արտասանել այդ անունը,— ասաց անգլիացին ուսի վրայով, կեղտոտ եղունգով իր մեծ մատով պարզելով դեպի Գլադիատորի ցանկափակը։

— Մախո՞տինի։ Այո՛, դա իմ լուրջ մրցակիցն է,— ասաց Վոռնսկին։

— Եթե այդ ձիով արշավեիք դո՛ւք,— ասաց անգլիացին,— ես գրազ կգայի ձե՛զ համար։

— Ֆոու-Ֆոուն ավելի ջղային է, Գլադիատորը՝ ավելի ուժեղ,— ասաց Վոռնսկին, ժպտալով իր ձիավարելու մասին արված գովեստի համար։

— Արգելքներով ձիարշավի ժամանակ էականը միայն ձիավարելն է և pluck,—ասաց անգլիացին։

Pluck, այսինքն՝ եռանդ ու համարձակություն, Վոռնսկին

զգում էր իր մեջ ո՛չ միայն բավարար չափով, այլև որ շատ ավելի կարևոր է, նա հաստատ համոզված էր, որ աշխարհում իրենից զատ՝ ոչ ոք այդքան շատ pluck չէր ունենա։

— Իսկ դուք հաստա՞տ գիտեք, որ պետք չէր ավելի Ֆրոնամխում։

— Պետք չէ,— պատասխանեց անգլիացին։— Բարձր շրխոսեք խնդրեմ։ Ձին հուզվում է,— ավելացրեց նա, գլխով նշելով կողպած ցանկափակը, որի առաջ կանգնել էին իրենք, և որտեղ լսվում էր ոտների տեղաշարժում ծղոտի վրա։

Նա բացեց դուռը, և Վոռնսկին մտավ ցանկափակը, որ թույլ լուսավորված էր միակ փոքրիկ պատուհանից ներս ընկած լույսով։ Ցանկափակում, թարմ ծղոտի վրա, ոտները փոխառ փոխ բարձրացնելով ու դնելով, կանգնել էր մուգ շագանակագույն մի ձի՝ դնչակալով։ Ցանկափակի կիսախավարում նայելով չորս բոլորը, Վոռնսկին նորից ակամա մի ընդհանուր հայացքով ընդգրկեց իր սիրելի ձիու կազմվածքի բոլոր տրվյալները։ Ֆոու-Ֆոուն միջին հասակի ձի էր և ո՛չ անթերի կազմվածքով։ Իր ամբողջ կմախքով նա բարակ էր. նրա կրծոսկրը թեև խիստ ցցուն էր, առաջ ընկած, բայց կուրծքը նեղ էր... Գավակը մի փոքր կախ էր ընկած, և առջևի ոտները, մանավանդ ետևի ոտները, բավական ծուռ էին։ Ետևի և առջևի ոտների մկաններն առանձնապես խոշոր չէին. բայց դրա փոխարեն, ձին փորքաշի տեղում արտասովոր լայն էր, որ առանձնապես զարմացնում էր այժմ, նկատի ունենալով փորի նիհարությունը և վերջին օրերի կերի ժուժկալությունը։ Նրա ոտների ոսկրերը ծնկերից ներքև մի մատից ավելի հաստ չէին թվում՝ առջևից նայելիս, դրա փոխարեն, նրանք արտասովոր լայն էին՝ ետևից նայելիս։ Նա ամբողջապես, բացի կողերից, կարծես թե սեղմված էր կողքերից ու ձգված էր երկարությամբ։ Բայց ուներ վերին աստիճանի բարձր մի հատկություն, որ ստիպում էր մոռանալ բոլոր թերությունները. այդ հատկությունը նրա արյունն էր, այն արյունը, որ դրսևորվում է, ինչպես ասում են անգլիացիք։ Բարակ, շարժուն ու ողորկ, ինչպես ատլաս, կաշու մեջ ձիգ եկած ջլերի ցանցի տակից պարզորոշ երևացող մկանները թվում էին ոսկրի պես ամուր։ Ուռուցիկ, փայլուն, ուրախ աչքերով չոր գլուխը լայնանում էր քթի միջին մասի մոտ դեպի ցայտուն քթածակերը, ներսի կող-

մից արյունով լցված թաղանթով։ Նրա ամբողջ կերպարանքի և մանավանդ գլխի մեջ կար որոշակի, եռանդացունց ու միաժամանակ քնքուշ մի արտահայտություն։ Նա մեկն էր այն կենդանիներից, որոնք չեն խոսում այն պատճառով միայն, որ նրանց բերանի մեքենական կազմը թույլ չի տալիս այդ։

Համենայնդեպս, Վոռնսկուն թվաց, որ ձին հասկացավ այն բոլորը, ինչ զգում էր այժմ ինքը՝ Վոռնսկին, նայելով նրան։

Հենց որ Վոռնսկին մտավ ձիու մոտ, ձին խորապես օդ ներս քաշելով իր մեջ և ծռելով ուռուցիկ աչքը, այնպես որ սպիտակուցը լցվեց արյունով, հակառակ կողմից նայում էր ներս մտածներին, ցնցելով դնչակալը և առուձգորեն հենվելով մերթ մեկ, մերթ մյուս ոտին։

— Ա՜յ, տեսնո՛ւմ եք, թե ինչպե՞ս հուզվեց նա,— ասաց անգլիացին։

— Օ՜, սիրելիս, օ՜,— ասում էր Վոռնսկին, մոտենալով ձիուն ու հորդորելով նրան։

Բայց որքան ավելի էր նա մոտենում, այնքան ավելի էր ձին հուզվում։ Այն ժամանակ միայն, երբ նա մոտեցավ ձիու գլխին, Ֆոու-Ֆոուն հանկարծ հանդարտվեց, և նրա մկանները ճռճռացին բարակ, նուրբ մազերի տակ։ Վոռնսկին շոյեց նրա ամուր վիզը, սուր ծոծրակի վրա ուղղեց մյուս կողմն ընկած բաշի փունջը և երեսը մոտեցրեց նրա ձիգ եկած, շղթիկի թևերի նման նուրբ քթածակերին։ Նա ձայնով ներս քաշեց ու դուրս թողեց օդն իր լարված քթածակերից, ցնցվելով, սեղմեց սրածայր ականջը և ամուր սև շրթունքը երկարացրեց, պարզեց դեպի Վոռնսկին, կարծես՝ կամենալով բռնել նրա թևից։ Բայց հիշելով դնչակալի մասին, նա ցնցեց այն, և նորից սկսեց փոխ առ փոխ բարձրացնել ու դնել իր հզկուն ոտները։

— Հանգստացի՛ր, սիրելիս, հանգստացի՛ր,— ասաց Վոռնսկին, ձեռքով շոյելով նրա գավակը և դուրս եկավ ցանկափակից այն ուրախ գիտակցությամբ, որ ձին լավ կացության մեջ է։

Ձիու հուզմունքը հաղորդվեց նաև Վոռնսկուն. նա զգում էր, որ արյունը հորդում է դեպի սիրտը և որ ինքն էլ, ձիու պես, ուզում է շարժվել, կծել. և՛ սարսափելի էր, և՛ ուրախ։

— Դե, ուրեմն ես վստահ եմ ձեզ վրա,— ասաց նա անգլիացուն,— վեցից կես անց լինել տեղում։

— Ամեն բան կարդին է,— ասաց անգլիացին։— Իսկ դուք ո՞ւր եք գնում, միլորդ,— հարցրեց նա անսպասելի, գործածելով my Lord դիմումը, որ համարյա երբեք չէր գործածում։

Վոռնսկին զարմանքով բարձրացրեց գլուխը և նայեց, ինչպես գիտեր նայել, ոչ թե աչքերին, այլ անգլիացու ճակատին, զարմանալով նրա հարցի համարձակության վրա։ Բայց հասկանալով, որ անգլիացին այդ հարցը տալով, գիտում էր իրեն ոչ թե որպես տիրոջ, այլ՝ ժոկեյի, պատասխանեց նրան.

— Ես սլետք է գնամ Բրյանսկու մոտ, մի ժամից տանը կլինեմ։

«Այս քանի՞երորդ անգամ է, այսօր տալիս են ինձ այդ հարցը»,— ասաց նա ինքն իրեն ու կարմրեց, մի բան, որ քիչ էր պատահում նրա հետ։ Անգլիացին ուշադիր նայեց նրան։ Եվ կարծես թե գիտեր՝ ուր է գնում Վոռնսկին, ավելացրեց.

— Կարևորը՝ հանգիստ լինել ձիավարելուց առաջ,— ասաց նա,— վատ տրամադրություն չունենաք և ոչնչով չհուզեք ձեզ։

— All right,— ժպտալով պատասխանեց Վոռնսկին և թռչելով կալյասկայի մեջ, հրամայեց գնալ Պետերգոֆ։

Հազիվ նա հեռացավ մի քանի քայլ, երբ վրա հասավ սև ամպը, որ առավոտվանից սպառնում էր անձրևով, ու թափվեց հորդ տեղատարափ։

«Վատ է,— մտածեց Վոռնսկին, բարձրացնելով կալյասկայի ծածկոցը։— Առանց այդ էլ ցեխ էր, իսկ հիմա բոլորովին կդառնա ճահիճ»։ Առանձնացած-նստած փակ կալյասկայի մեջ, նա հանեց մոր նամակն ու եղբոր տոմսը և կարդաց։

Այո՜, այս բոլորը նույնն էր ու նույնը։ Ամենքը, նրա մայրը, նրա եղբայրը՝ հարկավոր էին համարում խառնվելու նրա սրտի գործերին։ Այդ միջամտությունը նրա մեջ զայրույթ էր հարուցում, մի զգացում, որ սակավ դեպքերում էր ունենում։ «Նրանց ինչ բանն է։ Ինչո՞ւ ամեն ոք իր պարտքն է համարում հոգ տանել իմ մասին։ Եվ ինչո՞ւ են նրանք բռնել իմ օձիքից։ Որովհետև նրանք տեսնում են, որ դա այնպիսի բան է, որ իրենք հասկանալ չեն կարող։ Եթե դա լիներ սովորական ցոփ աշխարհիկ կապ, նրանք հանգիստ կթողնեին ինձ։ Նրանք

զգում են, որ դա մի ուրիշ բան է, որ դա խաղալիք չէ, այդ կինն ինձ համար թանկ է կյանքից։ Անհասկանալին հենց դա է, և դա զայրացնում է նրանց։ Ինչպիսի՞ն է և ինչպե՞ս էլ լինի մեր ճակատագիրը, մեր վիճակը, մենք ենք ստեղծել այն և մենք չենք գանգատվում նրանից,— ասում էր նա, մենք բառի մեջ փնտրելով իրեն Աննայի հետ։— Ո՛չ, նրանց հարկավոր է, որ սովորեցնեն մեզ, թե ինչպես պետք է ապրել։ Նրանք գաղափար անգամ չունեն, թե ինչ բան է երջանկությունը, նրանք չգիտեն, որ առանց այդ սիրո մեզ համար չկա ոչ երջանկություն, ոչ դժբախտություն՝ մեզ համար կյանք չկա»,— մտածում էր նա։

Միջամտության համար նա բարկանում էր ամենքի վրա հենց այն պատճառով, որովհետև զգում էր իր հոգում, որ իրավացի էին նրանք, այդ ամենքը։ Նա զգում էր, որ իրեն Աննայի հետ կապող սերը բոպեական հրապույր չէր, որը կանցներ, ինչպես անցնում են աշխարհիկ կապերը, շթողնելով մեկ և մյուս կողմի կյանքի մեջ ուրիշ հետքեր, բացի հաճելի կամ անախորժ հիշողություններից։ Նա զգում էր իրենց սերը թաքցնելու, ստելու և խաբելու ամբողջ դժվարությունը՝ բարձր հասարակության աչքի առաջ ցուցադրված լինելու պայմաններում, որի մեջ գտնվում էին իրենք. դժվար էր ստել, խաբել, խորամանկել ու շարունակ մտածել ուրիշների մասին այն ժամանակ, երբ իրենց միացնող կիրքն այնքան ուժեղ էր, որ նրանք երկուսն էլ մոռանում էին ուրիշ ամեն ինչի մասին, բացի իրենց սիրուց։

Նա վառ կերպով մտաբերեց ստի ու խաբեության անհրաժեշտության հաճախ կրկնվող այն բոլոր դեպքերը, որ այնպես ատելի էին նրա բնավորությանը. առանձնապես վառ կերպով հիշեց Աննայի մեջ բազմիցս նկատված ամոթի զգացումը՝ խաբեության ու ստի այդ անհրաժեշտության համար։ Եվ Վրոնսկուն համակեց այն տարօրինակ զգացումը, որ երբեմն շարժվում էր նրա մեջ՝ Աննայի հետ կապվելուց հետո։ Դա գարշանքի զգացում էր դեպի մի ինչ-որ բան. արդյոք դեպի Ալեքսեյ Ալեքսանդրովի՞չը, դեպի ի՞նքը, թե՞ դեպի ամբողջ բարձր հասարակությունը,— նա լավ չգիտեր, չէր հասկանում։ Բայց միշտ վանում էր իրենից այդ տարօրինակ զգացումը։ Եվ այժմ սթափվելով, շարունակեց իր մտքերի ընթացքը։

«Այո՛, Աննան առաջ դժբախտ էր, բայց հպարտ էր ու հանգիստ. իսկ այժմ նա չի կարող լինել հանգիստ և արժանապատվալից, թեպետ ցույց չի տալիս այդ։ Այո՛, պետք է վերջ տալ»,— վճռեց նա ինքն իրեն։

Եվ առաջին անգամ նրա գլուխն եկավ մի պարզ միտք այն մասին, թե անհրաժեշտ է վերջ տալ այդ ստին, ու որքան շուտ, այնքան լավ։ «Ես ու նա պիտի թողնենք ամեն ինչ և հեռանանք մի տեղ մեր սիրո հետ»,— ասաց նա ինքն իրեն։

XXII

Տեղատարափ անձրևը երկարատև չէր և, երբ Վրոնսկին տեղ էր հասնում մեջտեղի ձիու սրընթաց վազքով, որը քաշում էր ցեխի միջով արդեն առանց երասանի վազող կողքի ձիերին, արևը նորից դուրս նայեց, և ամառանոցների կտուրները. գլխավոր փողոցի երկու կողմում ընկած այգիների հին լորիները փայլում էին թաց փայլով, ու ոստերից ուրախ կաթկթում, իսկ տանիքներից վազում էր ջուրը։ Նա այլևս չէր մտածում այն մասին, թե ինչպե՞ս այս տեղատարափը կփոշացնի ձիարշավարանը, այլ այժմ ուրախանում էր այն բանի համար, որ շնորհիվ այդ անձրևի, հավանորեն, Աննային կգտնի տանը և մենակ, որովհետև գիտեր, որ նորերս հանքային ջրերից վերադարձած Ալեքսեյ Ալեքսանդրովիչը չէր եկել Պետերբուրգից։

Հույս ունենալով Աննային տանը մենակ գտնել, Վրոնսկին, ինչպես միշտ էր անում, որպեսզի շատ ուշադրություն չգրավի, իջավ դեռ կամուրջը չանցած ու գնաց ոտքով։ Նա չանցավ դեպի փողոցի սանդուղքները, այլ մտավ բակը։

— Պարոնը եկե՞լ է,— հարցրեց այգեպանին։

— Բնավ ո՛չ։ Տիկինն է։ Համեցեք, գնացեք սանդուղքներով, այնտեղ մարդ կա, դուռը կբացի,— պատասխանեց այգեպանը։

— Ո՛չ, ես կերթամ այգով։

Ու համոզվելով, որ Աննան մենակ է, կամենալով նրան հանկարծակի բերել, որովհետև ինքն այսօր գալու խոստում չէր արել, և նա հավանորեն չէր կարծում, թե ինքը կգա ձիարշավից առաջ, Վրոնսկին գնաց, թուրը բռնած կողքին ու զգույշ քայլելով երկու կողմից ծաղկաշար ճանապարհի ավազի մի-

ջով գեղի տեռասը, որ բացվում էր այգու վրա։ Վոռնսկին այժմ մոռացավ այն բոլորը, ինչ մտածում էր ճանապարհին իր դրության դժվարության ու ծանրության մասին։ Նա մտածում էր մի բանի մասին. որ հիմա կտեսնի նրան ո՛չ միայն երևակայությամբ, այլ իրապես, ամբողջությամբ, ինչպես նա կա կյանքում։ Վոռնսկին արդեն ներս էր մտնում, ոտների ամբողջ թաթը դնելով տեռասի թեք աստիճանների վրա, որպեսզի աղմուկ չհանի, երբ հանկարծ հիշեց այն, ինչը նա մոռանում էր միշտ, և այն, ինչը կազմում էր իրենց հարաբերությունների ամենատանջալից կողմը,— հիշեց Աննայի որդուն, իր հարցական, զզվելի հայացքով, ինչպես թվում էր նրան։

Ամենքից ավելի հաճախ այդ երեխան էր արգելք լինում նրանց հարաբերություններին։ Երբ նա ներկա էր, ո՛չ Վոռնսկին, ո՛չ էլ Աննան ոչ միայն թույլ չէին տալիս իրենց խոսելու այնպիսի բանի մասին, որը նրանք չէին կարող կրկնել ուրիշների մոտ, այլև թույլ չէին տալիս իրենց՝ նույնիսկ ակնարկներով ասելու այն, ինչը երեխան կարող էր չհասկանալ։ Նրանք դրա մասին չէին պայմանավորվել, դա հաստատվել էր ինքն իրեն։ Նրանք իրենց համար վիրավորական կհամարեին խաբել այդ երեխային։ Նրա ներկայությամբ նրանք խոսում էին իրար հետ, որպես ծանոթներ։ Բայց, չնայած այդ զգուշությանը, Վոռնսկին հաճախ տեսնում էր երեխայի ուշադիր ու տարակուսալից հայացքը, ուղղված իր վրա, և իր նկատմամբ այդ մանկան տարօրինակ քաշվողությունը, փոփոխականությունը՝ մերթ գուրգուրանք, մերթ սառնություն ու ամաչկոտություն։ Կարծես երեխան զգում էր, որ այդ մարդու և իր մոր միջև կա ինչ-որ կարևոր հարաբերություն, որի նշանակությունն ինքը չի կարողանում հասկանալ։

Իսկապես երեխան զգում էր, որ ինքը չի կարող հասկանալ այդ հարաբերությունը, և ջանք էր թափում ու չէր կարողանում պարզել իր համար այն զգացումը, որ ինքը պիտի տածեր դեպի այդ մարդը։ Զգացմունքի արտահայտության նկատմամբ ունեցած մանկական նրբազգացությամբ նա պարզ տեսնում էր, որ իր հայրը, դաստիարակչուհին, դայակը՝ ընդանք ամենքը ո՛չ միայն չէին սիրում, այլ զզվանքով ու երկյուղով էին նայում Վոռնսկուն, թեև ոչինչ չէին ասում նրա

մասին, մինչդեռ մայրը նայում էր նրա վրա, որպես իր լավագույն բարեկամի։

«Ի՞նչ է նշանակում դա։ Ո՞վ է նա։ Ինչպե՞ս պիտք է սիրել նրան։ Եթե ես չեմ հասկանում, ես մեղավոր եմ, գուցե ես տխմար կամ վատ տղա եմ»,— մտածում էր երեխան, և դրանից առաջանում էր նրա փորձարկող, հարցական, մասամբ թշնամական արտահայտությունը, և այն քաշվողությունն ու փոփոխականությունը, որոնք այնպես ճնշում էին Վոռնսկուն։ Այդ երեխայի ներկայությունը միշտ և անփոփոխաբար հարուցում էր Վոռնսկու մեջ անհիմն զզվանքի այն տարօրինակ զգացումը, որ ունենում էր նա վերջերս։ Այդ մանկան ներկայությունը Վոռնսկու և Աննայի մեջ հարուցում էր մի զգացում, նման այն նավագնացի զգացումին, որը կողմնացույցով տեսնում է այն ուղղությունը, որով ինքն արագ շարժվում է, սաստիկ հեռանում է հարկավոր ուղղությունից, բայց անզոր է կանգնեցնելու այդ շարժումը, և յուրաքանչյուր րոպեն նրան ավելի ու ավելի հեռացնում է անհրաժեշտ ուղղությունից, սակայն ընդունել, որ պետք է նահանջել, միևնույն է, թե խոստովանել իր կորուստը։

Այդ երեխան կյանքի վրա ունեցած իր միամիտ հայացքով նման էր կողմնացույցի, որը ցույց էր տալիս նրանց իրենց խոտորման աստիճանն այն բանից, ինչը գիտեին նրանք, բայց չէին ուզում գիտենալ։

Այս անգամ Սերյոժան տանը չէր, և Աննան բոլորովին մենակ էր ու նստած էր տերրասում, սպասելով որդու վերադարձին, որը գնացել էր զբոսնելու և ընկել էր անձրևի տակ։ Նա սպասավորին ու աղախնուն ուղարկել էր որոնելու որդուն և նստած սպասում էր։ Հագած լայնակար սպիտակ զգեստ, նա նստել էր տերրասի անկյունում՝ ծաղիկների ետևում և լսեց Վոռնսկու գալը։ Թեքած իր սևագանգուր գլուխը, նա ճակատը սեղմել էր ճաղերի վրա դրած պաղ ցնցուղին, և իր երկու գեղեցիկ ձեռներով, զարդարված Վոռնսկուն այնքան ծանոթ մատանիներով, բռնել էր ցնցուղը։ Նրա ամբողջ ֆիգուրի, գլխի, պարանոցի, ձեռքերի գեղեցկությունն ամեն անգամ, որպես անակնկալ, զարմացնում էր Վոռնսկուն։ Նա կանգ առավ, հիացմունքով նայելով Աննային։ Բայց հենց որ ուզեց մի քայլ անել, որպեսզի մոտենա Աննային, սա արդեն զգաց նրա մո-

տենալը, հրեց մեկդի ցնցուղը և իր կարմրած դեմքը դարձրեց դեպի նա։

— Ի՞նչ է պատահել ձեզ։ Դուք տկա՞ր եք,— ասաց Վրոնսկին ֆրանսերեն, մոտենալով նրան։ Նա ուզեց մոտ վազել Աննային. բայց հիշելով, որ կարող են լինել կողմնակի մարդիկ, նայեց պատշգամբի դռանը ու կարմրեց, ինչպես կարմրում էր ամեն անգամ, զգալով, թե պետք է ինքը վախենա և նայի չորս բոլորը։

— Ո՛չ, ես առողջ եմ,— ասաց Աննան, վեր կենալով և ամուր սեղմելով իրեն մեկնած նրա ձեռքը։— Ես չէի սպասում... քեզ։

— Աստվա՞ծ իմ, ի՞նչ սառը ձեռքեր,— ասաց նա։

— Դու վախեցրիր ինձ,— ասաց Աննան։ — Ես մենակ եմ և սպասում եմ Սերյոժային, որը գնաց զբոսնելու. նրանք այստեղից կգան։

Բայց Աննայի շրթունքները դողում էին, չնայած աշխատում էր հանգիստ լինել։

— Ներեցեք ինձ, որ եկա, սակայն ես չէի կարող անցկացնել օրը՝ առանց ձեզ տեսնելու,— շարունակեց նա ֆրանսերեն, ինչպես խոսում էր միշտ, խուսափելով իրենց միջև սոսկալի սառը դուռ-ից և ռուսերեն վտանգավոր դու-ից։

— Ի՞նչը ներել։ Ես այնպես ուրախ եմ։

— Բայց դուք տկար եք կամ վշտացած,— շարունակեց Վրոնսկին, բաց չթողնելով նրա ձեռքը և կռանալով դեպի նա։ — Ինչի՞ մասին էիք մտածում։

— Շարունակ միևնույն բանի մասին,— ասաց Աննան ժպտերես։

Նա ճիշտ էր ասում։ Ե՛րբ, ո՞ր րոպեին էլ որ հարցնեին նրան, թե ինչի՞ մասին է մտածում, նա առանց սխալվելու կարող էր պատասխանել. մի բանի մասին միայն — իմ երջանկության և իմ դժբախտության մասին։ Ահա՞, թե ինչի՞ մասին էր մտածում նա հատկապես այժմ, երբ եկավ Վրոնսկին. նա մտածում էր, ինչո՞ւ ուրիշների, օրինակ՝ Բետսիի համար (Աննան գիտեր բարձր հասարակությունից գաղտնի նրա կապը Տուշկևիչի հետ) այս բոլորը հեշտ էր, իսկ իր համար այդքան տանջալից։ Այսօր այդ միտքը, որոշ նկատառումներով, առանձնապես տանջում էր նրան։ Նա հարցրեց Վրոնսկուն

ձիարշավի մասին։ Վրոնսկին պատասխանեց նրան և տեսնելով, որ նա հուզված է, սկսեց ամենահասարակ տոնով պատմել ձիարշավի համար արվող պատրաստությունների մանրամասները, կամենալով զբաղեցնել նրան։

«Ասե՞լ, թե՞ չասել,— մտածում էր Աննան, նայելով նրա հանգիստ, սիրալիր աչքերին։— Նա այնպես երջանիկ է, այնպես զբաղված է իր ձիարշավով, որ չի հասկանա այնպես, ինչպես պետք է, չի հասկանա այդ դեպքի ամբողջ նշանակությունը մեզ համար»։

— Բայց դուք չասացիք, թե ինչի՞ մասին էիք մտածում, երբ ես ներս մտա,— ասաց Վրոնսկին, ընդհատելով և պատմությունը,— խնդրում եմ՝ ասե՞ք։

Աննան չէր պատասխանում և, գլուխը մի փոքր թեքած, շեղակի նայում էր նրան իր երկար արտևանունքներից փայլուն աչքերի հարցական հայացքով։ Աննայի ձեռքը, որ խաղում էր պոկած տերևի հետ, դողում էր։ Վրոնսկին տեսավ այդ, և նրա դեմքն արտահայտեց այն հնազանդությունը, ստրկական անձնվիրությունը, որ այնպես շլացնում էր Աննային։

— Ես տեսնում եմ, որ մի բան է պատահել։ Մի՞թե ես կարող եմ գեթ մի րոպե հանգիստ լինել, իմանալով, որ դուք վիշտ ունեք, և ես վշտակից չեմ ձեզ։ Ասեք, ի սեր աստծո,— աղերսագին կրկնեց Վրոնսկին։

«Այո՛, ես չեմ ների նրան, եթե նա չհասկանա դրա ամբողջ նշանակությունը։ Ավելի լավ է չասել, ինչո՛ւ փորձել»,— մտածում էր Աննան, առաջվա պես նայելով նրան ու զգալով, որ իր ձեռքը տերևի հետ դողում է ավելի ու ավելի։

— Ի սե՞ր աստծո,— կրկնեց Վրոնսկին, վերցնելով նրա ձեռքը։

— Ասե՞մ։

— Այո՛, այո՛, այո՛...

— Ես հղի եմ,— ասաց Աննան կամաց ու դանդաղ։

Նրա ձեռքի տերևը դողաց է՛լ ավելի ուժգին, բայց նա աչքերը չէր հեռացնում Վրոնսկուց, որ տեսնի, թե ինչպե՞ս կընդունի նա այդ լուրը։ Վրոնսկին դժգունեց, ուզում էր մի բան ասել, սակայն կանգ առավ, բաց թողեց Աննայի ձեռքը և կախ գցեց գլուխը։ «Այո՛, նա հասկացավ այդ դեպքի ամբողջ նը-

շանակությունը», մտածեց Աննան ու երախտագիտությամբ սեղմեց նրա ձեռքը։

Բայց Աննան սխալվում էր, իբր նա հասկացավ այդ լուրի նշանակությունն այնպես, ինչպես հասկանում էր ինքը, կին էակը։ Այդ լուրը լսելիս՝ նա տասնապատիկ ուժով զգաց դեպի մեկը տածած իր զգվանքի այն տարօրինակ զգացողության պոռթկումը, որ պատահում էր իր հետ։ Բայց միաժամանակ հասկացավ, թե այն ճգնաժամը, որ ինքն ուզում էր, հասավ այժմ, թե չի կարելի այլևս թաքցնել ամուսնուց և անհրաժեշտ է այսպես կամ այնպես շուտափույթ վերջ տալ այդ անբնական դրությանը։ Սակայն, բացի դրանից, Աննայի հուզումը ֆիզիկապես հաղորդվում էր նրան։ Վրոնսկին նայեց նրան դորովալից հլու հայացքով, համբուրեց նրա ձեռքը, կանգնեց ու լուռ քայլեց տերրասում։

— Այո՛,— ասաց նա, վճռականորեն մոտենալով Աննային։ — Ո՛չ դուք, ո՛չ ես մեր հարաբերությունների վրա չէինք նայում, որպես խաղալիքի վրա, իսկ այժմ վճռված է մեր բախտը։ Անհրաժեշտ է վերջ տալ այն կեղծ դրությանը, որի մեջ ապրում ենք մենք,— ասաց նա, նայելով շուրջը։

— Վե՞րջ տալ։ իսկ ինչպե՞ս, Ալեքսեյ,— ասաց նա կամաց։

Նա հանգստացավ, և նրա դեմքը փայլում էր քնքուշ ժպիտով։

— Թողնել ամուսնուդ ու միացնել մեր կյանքը։

— Այն միացած է առանց այդ էլ,— հազիվ լսելի պատասխանեց նա։

— Այո՛, բայց ամբողջովին, բոլորովին։

— Սակայն ինչպե՞ս, Ալեքսեյ, սովորեցրու ինձ, թե ինչպես,— ասաց նա թախծոտ քմծիծաղով, որ վերաբերում էր իր դրության անելանելիությանը։ Մի՞թե ելք կա այս դրությունից։ Մի՞թե ես իմ ամուսնու կինը չեմ։

— Ելք կա ամեն դրությունից։ Պետք է դուրս գալու վճիռ հանել,— ասաց Վրոնսկին։— Ինչ էլ լինի, ավելի լավ կլինի, քան այն դրությունը, որի մեջ ապրում ես դու։ Չէ՞ որ ես տեսնում եմ, թե ինչպե՛ս ամեն բան տանջում է քեզ՝ և՛ բարձր հասարակությունը, և՛ որդիդ, և՛ ամուսինդ։

— Ա՜խ, միայն թե ո՛չ ամուսինս,— պարզ քմծիծաղով

ասաց նա։— Ես չգիտեմ, ես չեմ մտածում նրա մասին։ Նա չկա։

— Դու անկեղծ չես ասում։ Ես գիտեմ քեզ։ Դու տանջվում ես նաև նրա համար։

— Նա չի էլ իմանում,— ասաց Աննան. և հանկարծ վառ կարմրությունը պատեց նրա դեմքը. նրա այտերը, ճակատը, պարանոցը կարմրեցին, և ամոթի արցունքներ երևացին նրա աչքերում։— Սակայն չխոսենք նրա մասին։

XXIII

Վրոնսկին արդեն մի քանի անգամ փորձել էր, թեև ո՛չ այնպիսի վճռականությամբ, ինչպես այժմ, միտք հղացնել Աննայի մեջ՝ քննարկելու իր դրությունը և ամեն անգամ դեմ էր առնում դատողությունների այն մակերեսայնությանն ու թեթևությանը, որով Աննան այժմ պատասխանեց նրա առաջարկին։ Կարծես դրա մեջ կար մի այնպիսի բան, որը նա չէր կարող կամ չէր ուզում պարզել իր համար, կարծես հենց որ նա սկսում էր խոսել դրա մասին, նա՝ իսկական Աննան, հեռանում, թաքնվում էր իր մեջ և հանդես էր գալիս մի ուրիշ, տարօրինակ, Վրոնսկուն խորթ կին, որին նա չէր սիրում, որից վախենում էր, և որը դիմահարված էր տալիս նրան։ Բայց այսօր Վրոնսկին վճռեց ասել ամեն բան։

— Գիտե՞ նա, թե ո՛չ,— ասաց Վրոնսկին իր սովորական հաստատ ու հանգիստ տոնով,— գիտե՞ նա, թե ո՛չ, մենք գործ չունենք դրա հետ։ Մենք չենք կարող... դուք չեք կարող մնալ այդպես, մանավանդ այժմ։

— Ձեր կարծիքով՝ ի՞նչ պետք է անել,— հարցրեց Աննան նույն թեթև հեգնությամբ։ Աննան, որն այնպես վախենում էր, թե Վրոնսկին կարող է թեթևամտորեն ընդունել հղիության լուրը, այժմ վշտանում էր այն բանի համար, որ նա դրանից հետևեցնում էր, թե անհրաժեշտ է ձեռնամուխ լինել մի բանի։

— Հայտնել ամեն ինչ ու թողնել նրան։

— Շատ լավ, ենթադրենք, թե ես կանեմ այդ,— ասաց Աննան։— Դուք գիտե՞ք արդյոք, թե ի՞նչ դուրս կգա դրանից։ Ես առաջուց կարող եմ բոլորն ասել,— և մի շար լույս վառվեց նրա՝ դրանից մի բոպե առաջ քնքուշ աչքերում։ — «Ա՜,

դուք սիրում եք ուրիշին և հանցավոր կա՞ս եք հաստատել նրա հետ։ (Նա, պատկերելով ամուսնուն, անում էր ճիշտ այնպես, ինչպես կաներ Ալեքսեյ Ալեքսանդրովիչը,— շեշտելով հանցավոր բառը)։ Ես ձեզ նախազգուշացնում էի հետևանքների մասին՝ կրոնական, քաղաքացիական և ընտանեկան տեսակետներից։ Դուք չլսեցիք ինձ։ Այժմ ես չեմ կարող նախատինքի առարկա դարձնել իմ անունը... և իմ որդուն, ուզում էր ասել նա, բայց որդու հետ կատակել չէր կարող... — նախատինքի առարկա դարձնել իմ անունը»,— և սրա պես էլի մի այլ բան,— ավելացրեց նա։— Առհասարակ, Ալեքսեյ Ալեքսանդրովիչը կասի իր պետական խոսելաձևով և ամենայն պարզությամբ ու ճշտությամբ, որ չի կարող արձակել ինձ, բայց ձեռք կառնի իրենից կախված միջոցները՝ կանգնեցնելու սկանդալը։ Եվ հանգիստ, ճշտապահությամբ կանի այն, ինչ կասի։ Ահա թե ի՞նչ կլինի։ Նա մարդ չէ, մեքենա է և շար մեքենա, երբ բարկանա,— ավելացրեց Աննան, ընդսմին, մտաբերելով Ալեքսեյ Ալեքսանդրովիչին իր կերպարանքի բոլոր մանրամասներով, խոսելու եղանակով և մեղադրելով այն ամենի մեջ, ինչ վատ բան միայն կարող էր գտնել նրա մեջ, ոչինչ չներելով այն սոսկալի հանցանքի համար, որով ինքը մեղավոր էր նրա առաջ։

— Բայց, Աննա,— ասաց Վրոնսկին համոզող, մեղմ ձայնով, աշխատելով հանգստացնել նրան,— այսուամենայնիվ, անհրաժեշտ է ասել Ալեքսեյ Ալեքսանդրովիչին, և հետո արդեն ղեկավարվել այն բանով, ինչ կձեռնարկի նա։

— Ի՞նչ, ուրեմն փախչե՞լ։

— Եվ ինչո՞ւ չփախչել։ Ես տեսնում եմ, հնարավոր չէ շարունակել այդպես։ Եվ դա ո՞չ ինձ համար,— ես տեսնում եմ, որ դուք տանջվում եք։

— Այո՛, փախչել և դառնալ ձեր սիրուհին,— շարությամբ ասաց նա։

— Ա՜ննա,— քնքուշ կշտամբանքով վրա բերեց Վրոնսկին։

— Այո՛,— շարունակեց նա,— դառնալ ձեր սիրուհին և կործանել ամեն ինչ...

Նա դարձյալ ուզում էր ասել՝ որդուս, բայց չկարողացավ արտասանել այդ բառը։

Վրոնսկին չէր կարողանում հասկանալ, թե ինչպե՞ս կարող էր Աննան իր ուժեղ, ազնիվ բնավորությամբ տանել այդ կեղծ դրությունը և չուզենալ դուրս գալ դրանից. բայց նա չէր կռահում, որ դրա գլխավոր պատճառը որդի բառն էր, որ Աննան չէր կարողանում արտասանել։ Երբ նա մտածում էր որդու և նրա ապագա վերաբերմունքի մասին՝ իր հորը լքած մոր հանդեպ, այնպես սոսկում էր իր արածից, որ չէր զատում, այլ, որպես կին, աշխատում էր միայն հանգստացնել իրեն կեղծ դատողություններով ու խոսքերով, որպեսզի ամեն բան մնար անփոփոխ և որպեսզի կարելի լիներ մոռանալ այն սարսափելի հարցի մասին, թե ի՞նչ կլինի որդու հետ։

— Ես խնդրում եմ քեզ, ես աղաչում եմ քեզ,— բոլորովին այլ, անկեղծ ու քնքուշ տոնով ասաց Աննան, վերցնելով նրա ձեռքը,— երբեք մի՛ խոսիր ինձ հետ դրա մասին։

— Բայց, Աննա...

— Երբե՛ք։ Այդ հարցը թող ի՞նձ։ Ես գիտեմ իմ դրության ամբողջ ստորությունը, ամբողջ սոսկանքը. բայց դա այնպես հեշտ լուծելու բան չէ, ինչպես կարծում ես դու։ Դա թող ի՞նձ, և լսիր ինձ։ Երբեք մի՛ խոսիր ինձ հետ դրա մասին։ Խոստանո՞ւմ ես... Ո՛չ, ո՛չ, խոստացի՛ր...

— Խոստանում եմ, բայց ես չեմ կարող հանգիստ լինել, մանավանդ այն բանից հետո, ինչ ասացիր դու։ Ես չեմ կարող հանգիստ լինել, երբ դո՛ւ անկարող ես հանգիստ լինել...

— Ե՞ս,— կրկնեց Աննան։— Այո՛, ես տանջվում եմ երբեմն. բայց դա կանցնի, եթե դու երբեք չխոսես ինձ հետ դրա մասին։ Երբ դու խոսում ես ինձ հետ դրա մասին, այն ժամանակ միայն դա տանջում է ինձ։

— Ես չեմ հասկանում,— ասաց Վրոնսկին։

— Ես գիտեմ,— ընդհատեց Աննան նրան,— թե որքա՜ն դժվար է քո ազնիվ բնավորության համար ստելը, և ես խրդճում եմ քեզ։ Ես հաճախ մտածում եմ, թե ինչպե՛ս դու ինձ համար կործանեցիր քո կյանքը։

— Ես էլ հենց այդ էի մտածում այս րոպեիս,— ասաց նա.— ինչպե՛ս կարող էիր դու իմ պատճառով զոհաբերել ամեն ինչ։ Ես չեմ կարող ներել ինձ այն, որ դու դժբախտ ես։

— Ես դժբա՞խտ եմ,— ասաց Աննան, մոտենալով նրան և սիրո հիացքանչ ժպիտով նայելով նրա դեմքին,— ես նման եմ սոված մարդու, որին ուտելու բան տվին։ Գուցե նա մըր-

սում է, և նրա հագուստը պատատոտված է, և ամաչում է նա՞, բայց նա դժբախտ չէ։ Ես դժբա՞խտ եմ։ Ո՛չ, ահա՛ իմ բախտավորությունը...

Նա լսեց վերադարձող որդու ձայնը և արագ մի հայացք գցելով տերրասի վրա, թափով կանգնեց։ Նրա հայացքը բռնցավանվեց Վռոնսկուն ծանոթ կրակով, նա արագ շարժումով բարձրացրեց իր գեղեցիկ, մատանիներով պատած ձեռքերը, բռնեց Վռոնսկու գլուխը, նայեց նրան տեսական հայացքով ու մոտեցնելով ժպտուն, բաց շուրթերով իր դեմքը, արագ համբուրեց նրա բերանը, երկու աչքերը և ետ հրեց։ Նա ուզում էր գնալ, բայց Վռոնսկին պահեց նրան.

— Ե՞րբ,— թոթովեց նա շշուկով, խանդաղատանքով նայելով նրան։

— Այսօր, ժամը մեկին,— շշնջաց Աննան և, ծանր հառաչելով, ընդառաջ գնաց որդուն՝ իր արագ ու թեթև քայլով։

Անձրևը վրա էր հասել Սերյոժային մեծ այդում, և նա դայակի հետ պատսպարվել էր տաղավարում։

— Դեհ, ցտեսություն,— ասաց Աննան Վռոնսկուն։— Շուտով պիտի գնալ ձիարշավի, Բետսին խոստացավ, որ կգա իմ ետևից։

Վռոնսկին նայեց ժամացույցին և արագ գնաց։

XXIV

Երբ Վռոնսկին Կարենինների պատշգամբում նայեց ժամացույցին, այնպես հուզված ու տարված էր իր մտքերով, որ տեսավ միայն ալաքները թվաքարի վրա, բայց չկարողացավ հասկանալ, թե ժամը քանի՞սն է։ Նա դուրս եկավ խճուղին և գնաց գեպի իր կալյասկան, զգուշությամբ քայլելով ցեխի միջով։ Նա այն աստիճան համակված էր դեպի Աննան տածած իր զգացումով, որ չէր էլ մտածում, թե ժամը քանի՞սն է և ժամանակ ունի՞ արդյոք գնալու Բրյանսկու մոտ։ Նրա մեջ գործում էր, ինչպես հաճախ լինում է այդ, հիշողության միայն արտաքին ընդունակությունը, որը նշում է, թե ինչի՞ց հետո ի՞նչ է վճռված անել։ Նա մոտեցավ իր կառապանին, որը նիրհում էր նստիքի վրա՝ սաղարթախիտ լորենու արդեն շեղոգիր ստվերում, հիացմունքով գիտեց ջազդան սյունաշարեր կազմած մժղուկներին, որ վիտում էին քրտնած ձիերի վրա, և արթնացնելով կառապանին, թռավ կալյասկայի մեջ ու հրամայեց գնալ Բրյանսկու մոտ։ Յոթ վերստ գնալուց հետո միայն նա այնքան ուշքի եկավ, որ նայեց ժամացույցին ու հասկացավ, որ վեցից պակաս էր կես և՝ որ ուշացել է։

Այդ օրը կար մի քանի ձիարշավ. ուղեկցորդայինների ձիարշավ, երկու վերստանոց սպայական, չորս վերստանոց և ապա այն ձիարշավը, որին մասնակցում էր նա ինքը։ Իր ձիարշավին նա կարող էր հասնել, բայց եթե գնար Բրյանսկու մոտ, կարող էր հազիվհազ գալ, տեղ հասնել, երբ արդեն հավաքված կլիներ ամբողջ արքունիքը։ Բայց նա խոսք էր տվել Բրյանսկուն, որ կլինի նրա մոտ, այդ պատճառով վրճռեց շարունակել ճանապարհը, հրամայելով կառապանին՝ չխնայել եռաձին։

Նա եկավ Բրյանսկու մոտ, մնաց հինգ րոպե միայն ու արարշավ ետ դարձավ։ Այդ արագ կառարշավը հանգստացրեց նրան։ Ամբողջ այն ծանր բանը, որ կար նրա և Աննայի հարաբերությունների մեջ, ամբողջ այն անորոշությունը, որ մնացել էր նրանց խոսակցությունից հետո, դուրս թռավ նրա գլխից, նա հրճվանքով ու հուզմունքով մտածում էր այժմ ձիարշավի մասին, այն մասին, որ ինքը, այսուամենայնիվ, կհասնի, և այս գիշերվա երջանիկ տեսակցության սպասումը երբեմն բռնկվում էր նրա երևակայության մեջ՝ պայծառ լույսի պես։

Առաջիկա ձիարշավի զգացումն ավելի ու ավելի համակում էր նրան այն չափով, որ չափով նա առաջ գնում, խորանում էր ձիարշավների մթնոլորտի մեջ, հասնելով և առաջ անցնելով այն կառքերից, որոնք ամառանոցներից ու Պետերբուրգից գնում էին ձիարշավի։

Նրա բնակարանում արդեն ոչ ոք տանը չէր, բոլորը ձիարշավի տեղում էին, և լակեյը սպասում էր նրան դարպասի մոտ։ Մինչ նա հագուստը փոխում էր, լակեյը հաղորդեց նրան, որ արդեն սկսվեց երկրորդ ձիարշավը, որ շատ պարոններ եկել, հարցնում էին նրա մասին ու ձիախոռից երկու անգամ վազեվազ եկել է մանչուկը։

Առանց շտապելու, Վռոնսկին փոխեց հագուստը (նա երբեք չէր շտապում ու չէր կորցնում ինքնիշխումը) և հրամայեց գը-

նալ դեպի հեղակները։ Հեղակների մոտից նա արդեն նկատում էր կառքերի, հետիոտների, ձիարշավարանը շրջապակող զինվորների ծովը և հասարակությամբ եռուն տաղավարները։ Հավանորեն տեղի էր ունենում երկրորդ ձիարշավը, որովհետև այդ միջոցին, երբ նա մանում էր հեղակը, լսեց զանգի ձայն։ Մոտենալով ձիախոռին, նա պատահեց Մախոտինի սպիտակոտն, շեկ Գլադիատորին, որին տանում էին դեպի ձիարշավարան, վրան քաշած կապտախառն նարնջագույն տապճակ, երիզավորված ականջակալներով, որից նրա ականջները հսկայական էին թվում։

— Ո՞րտեղ է Կորդը,— հարցրեց նա ձիապանին։

— Ձիախոռում, թամբում է։

Դուռը բաց ցանկափակում կանգնած էր Ֆոու-Ֆուն՝ արդեն թամբած։ Պատրաստվում էին դուրս բերել նրան։

— Ջուշացա՞։

— All right! All right! Ամեն բան կարգին է,— ասաց անգլիացին,— մի՛ անհանգստանաք, մի՛ հուզվեք։

Վոռնսկին մի անգամ էլ աչք գցեց ամբողջ մարմնով դողացող ձիու կազմվածքի գեղեցիկ, իրեն սիրելի ձևերի վրա և դժվարությամբ բաժանվելով այդ տեսարանից, դուրս եկավ հեղակից։ Նա մոտեցավ տաղավարներին ամենահարմար ժամանակ, որպեսզի ոչ ոքի ուշադրությունը չդրավի իր վրա։ Հենց այդ րոպեին վերջացավ երկու վերստանոց ձիարշավը, և ամենքի աչքերը հառած էին մի կավալերգարդի վրա՝ առջևում ու մի լեյբհուսարի վրա՝ ետևում, որոնք սպառելով ձիերի վերջին ուժերը, մոտենում էին սյունին։ Եվ շրջանի մեջտեղից ու դրսի կողմից խռնվեցին դեպի սյունը, իսկ կավալերգարդ զինվորների ու սպաների խումբը բարձրաձայն բացականչություններով արտահայտում էր իր սպային և ընկերոջն սպասվող հաղթանակի ուրախությունը։ Վոռնսկին անկատելի մտավ ամբոխի մեջտեղը համարյա այն ժամանակ, երբ լսվեց ձիարշավի վերջանալն ազդարարող զանգը, և ցեխոտված, բարձրահասակ կավալերգարդը, որ եկավ առաջինը, ընկնելով թամբի մեջ, սկսեց արձակել քրտինքի մեջ սևացած, ծանր շնչող իր գորշ հովատակի երասանը։

Հովատակը դժվարությամբ շարժելով ոտները, կարճեց իր մեծ մարմնի արագ քայլքը, և կավալերգարդ սպան, ինչպես

ծանր քնից արթնացած մարդ, նայեց շուրջն ու դժվարությամբ ժպտաց։ Յուրայինների և օտարների ամբոխը շրջապատեց նրան։

Վոռնսկին դիտմամբ խուսափում էր այն ընտիր, բարձր հասարակության պատկանող ամբոխից, որը զուսպ և աղատ շարժվում ու խոսում էր տաղավարների առաջ։ Նա գիտեր, որ այնտեղ է և՛ Կարենինան, և՛ Բետսին, և՛ իր եղբոր կինը, բայց դիտմամբ չէր մոտենում նրանց, որպեսզի ուշադրությունը չգրվի։ Սակայն անընդհատ պատահող ծանոթները կանգնեցնում էին նրան, պատմելով նախկին ձիարշավների մանրամասները և հարցուփորձ անելով, թե ինչո՞ւ նա ուշացավ։

Այն միջոցին, մինչ ձիարշավին մասնակցողներին կանչեցին տաղավար, մրցապարգևներ ստանալու համար, ու նրանք դիմեցին այնտեղ, Վոռնսկու մեծ եղբայր Ալեքսանդրը, աքսելբանտներով գնդապետ, ո՛չ բարձրահասակ, Ալեքսեյի նման ջլապինդ, բայց ավելի գեղեցիկ ու վարդերես, կարմիր քթով և հարբած, բաց դեմքով, մոտեցավ նրան։

— Դու ստացա՞ր իմ տոմսը,— ասաց նա։— Քեզ երբեք չի կարելի տանը գտնել։

Ալեքսանդր Վոռնսկին, չնայած իր խրախճասեր, հարբեցողական կյանքին, որով նա հայտնի էր, լիովին պալատական մարդ էր։

Նա այժմ, խոսելով եղբոր հետ իր համար չափազանց անախորժ բանի մասին, գիտենալով, որ շատերի աչքերը հառած են իրենց վրա, ժպտուն տեսք ուներ, կարծես՝ անարժեք մի հարցի առթիվ կատակում էր եղբոր հետ։

— Ստացա և, ճիշտն ասած, չեմ հասկանում, թե ի՛նչն է մտահոգում քեզ,— ասաց Ալեքսեյը։

— Ինձ մտահոգում է այն բանը, որ այս րոպեիս ինձ նկատել տվին, թե դու չկաս, թե երկուշաբթի քեզ տեսել են Պետերգոֆում։

— Կան գործեր, որ ենթակա են միայն նրա՛նց քննարկմանը, ովքեր շահագրգռված են դրանցում, և այն գործը, որի մասին դու այդպես հոգ ես տանում, ա՛յդ կարգի գործ է...

— Այո՛, բայց այդ դեպքում չեն ծառայում, չեն...

— Ես քեզ խնդրում եմ չմիջամտել, ուրիշ ոչինչ։

Ալեքսեյ Վոռնսկու խոժոռված դեմքը դժգունեց, և նրա

վարի ծնոտը դողաց, որ քիչ էր պատահում նրա հետ։ Նա, որպես շատ բարի սիրտ ունեցող մարդ, բարկանում էր սակավ դեպքերում, բայց երբ բարկանում էր, և երբ դողում էր նրա ծնոտը, վտանգավոր էր, ինչպես գիտեր այդ Ալեքսանդր Վռոնսկին։ Ալեքսանդր Վռոնսկին ուրախ ժպտաց։

— Ես ուզում էի միայն հանձնել մայրիկի նամակը։ Պատասխանիր նրան և տրամադրությունդ մի փչացրու ձիավարելուց առաջ։ Bonne chance[1],— ավելացրեց նա ժպտալով ու հեռացավ նրանից։

Բայց նրանից անմիջապես հետո Վռոնսկուն կանգնեցրեց բարեկամական ողջույնի մի բացականչություն։

— Չե՞ս ուզում ճանաչել բարեկամներիդ։ Ողջույն, mon cher! — ասաց Ստեպան Արկադևիչը, այստեղ էլ, պետերբուրգյան այդ փարթամության մեջ, ո՛չ պակաս, քան Մոսկվայում, փայլելով իր վարդագույն դեմքով և երկճյուղ շողուն բակենբարդներով։— Երեկ եկա և շատ ուրախ եմ, որ կտեսնեմ քո հաղթանակը։ Ե՞րբ կտեսնվենք։

— Վաղը եկ արտել,— ասաց Վռոնսկին ու սեղմելով նրա վերարկուի թևը, ներողություն խնդրեց, գնաց դեպի ձիարշավարանի մեջտեղը, ուր արդեն բերում էին ձիերը՝ արգելքներով մեծ ձիարշավի համար։

Քրտնած, տանջված, արշաված ձիերը ձիապանների ձեռքով դուրս էին տարվում դեպի տուն, և մեկը մյուսի ետևից հայտնվում էին նորերը՝ առաջիկա ձիարշավի համար, թարմ, մեծ մասամբ անգլիական ձիեր, կապորներով, իրենց ներս քաշած փորերով, նման տարօրինակ վիթխարի թռչուններին։ Աչից տանում էին նիհար գեղեցկուհի Ֆռու-Ֆռուին, որը քայլում էր իր առաձգական ու բավական երկար կոճերի վրա, ինչպես զսպանակների վրա։ Նրանից ոչ հեռու կախականջ Գլադիատորի վրայից հանում էին տապճակը։ Հովատակի խաշոր, գեղեցիկ, լիովին կանոնավոր ձևերը՝ հիանալի գավակով և արտասովոր կարճ, անմիջապես սմբակների վրա նստած կոճերով, ակամա գրավում էին Վռոնսկու ուշադրությունը։ Նա ուզում էր մոտենալ իր ձիուն, բայց նրան նորից կանգնեցրեց մի ծանոթ։

[1] Հաջողություն

— Ա՛հ, ահա Կարենինը,— ասաց նրան ծանոթը, որի հետ խոսում էր նա։— Կնոջն է փնտրում, իսկ կինը տաղավարի մեջտեղում է։ Դուք չե՞ք տեսել նրան։

— Ո՛չ, չեմ տեսել,— պատասխանեց Վռոնսկին ու մինչև անգամ չնայելով այն տաղավարին, որի մեջ նշեցին Կարենինային, մոտեցավ իր ձիուն։

Վռոնսկին դեռ չկարողացավ նայել թամբը, որի մասին պետք էր կարգադրություն անել, երբ արշավողներին կանչեցին տաղավարի մոտ՝ համարներ հանելու և ապա ձիարշավն սկսելու համար։ Տասնյոթ սպա, լուրջ, խիստ, շատերը դժգույն դեմքերով հավաքվեցին տաղավարի մոտ ու հանեցին համարները։ Վռոնսկուն ընկավ 7-րդ համարը։ Լսվեց «նստել» հրամանը։

Զգալով, որ մյուս արշավողների հետ միասին ինքը կաղմում է այն կենտրոնը, ուր հառած են ամենքի աչքերը, Վռոնսկին լարված դրությամբ, որի մեջ նա սովորաբար դառնում էր դանդաղկոտ ու շարժումներով հանգիստ, մոտեցավ իր ձիուն։ Կորդը ձիարշավի հանդիսավորության համար հագել էր իր տոնական զգեստը. սև կոճկած սյուրտուկ, խիստ օսլայած օձիք, որ նեցուկի պես պահում էր նրա այտերը, և կլոր, սև գլխարկ ու բոտֆորտներ։ Նա, ինչպես միշտ, հանգիստ էր ու ծանրակշիռ և ինքն էր բռնել ձիու երկու երասանը, կանգնած նրա առաջ։ Ֆռու-Ֆռուն շարունակում էր դողալ, ասես՝ տենդի մեջ լիներ։ Կրակով լի նրա աչքը խեթ նայում էր մոտեցող Վռոնսկուն։ Վռոնսկին մատը կոխեց փորքաշի տակ։ Ձին նայեց ավելի խեթ, ատամները կրճտեց ու սեղմեց ականջը։ Անգլիացին շրթունքները ծռմռեց, կամենալով արտահայտել իր ժպիտը նրա համար, որ ստուգում են իր թամբելու վարպետությունը։

— Նստեք, այդպես ավելի քիչ կհուզվեք։

Վռոնսկին նայեց վերջին անգամ իր մրցակիցներին։ Նա գիտեր, որ արշավի ընթացքում այլևս չի տեսնի նրանց։ Երկու հոգի արդեն առաջ գնացին դեպի այն կետը, որտեղից պետք է բաց թողնեին արշավողներին։ Գալցինը, Վռոնսկու վտանգավոր ախոյաններից մեկն, ու նրա բարեկամը, պտտվում էր աշխետ հովատակի շուրջը, որը չէր թողնում նստել։ Նեղ ռեյտուզով փոքրիկ լեյբ-հուսարն արշավում էր քառա-

սրով, կռացած, ինչպես կատուն ձիու գավակին, անգլիացի-ներին նմանվելու ցանկությամբ։ Իշխան Կուզովլևը նստած էր իր ազնվացեղ, Գրոբովսկու ձիաբուծարանից վերցրած գամբիկը, և անգլիացին տանում էր ձին բռնած երասանից։ Վռոնսկին և իր ընկերները ճանաչում էին Կուզովլևին ու գիտեին նրա «թույլ» ջղերի և սոսկալի ինքնասիրության առանձնահատկությունը։ Նրանք գիտեին, որ նա վախենում է ամեն բանից, վախենում էր ֆրոնտային ձիով արշավելուց. իսկ այժմ, այն պատճառով հենց՝ որ դա սարսափելի էր, այն պատճառով, որ մարդիկ կարող էին կոտրել իրենց վիզը և որ ամեն արգելքի մոտ կանգնել էին՝ բժիշկ, գթության քույր և լազարեթի սայլ, վրան կարած կարմիր խաչ, նա սիրտ արավ արշավելու։ Նրանց հայացքները հանդիպեցին իրար, ու Վռոնսկին սիրալիր և հավանությամբ աչքով արավ նրան։ Վռոնսկին չտեսավ միայն մեկին՝ իր գլխավոր ախոյանին, Մախոտինին՝ Գլադիատորի վրա։

— Մի՛ շտապեք,— ասաց Կորդը Վռոնսկուն,— և հիշեք մի բան. արգելքների մոտ մի՛ պահեք ու մի՛ առաջ մղեք ձին, թող նա ինքն ընտրի, ինչպես ուզում է։

— Լա՜վ, լա՜վ,— ասաց Վռոնսկին, բռնելով երասանը։

— Եթե կարելի է, վարեք ձիարշավը. բայց մի՛ հուսահատվեք մինչև վերջին րոպեն, եթե նույնիսկ դուք լինեք ետևից։

Ձին դեռ չկարողացավ շարժվել, երբ Վռոնսկին ճկուն և ուղիղ շարժումով կանգնեց պողպատե ատամնավոր ասպանդակի մեջ և իր ամրակազմ մարմինը թեթևությամբ ու հաստատապես դրեց կաշին ճռճռացող թամբին։ Աջ ոտքը դնելով ասպանդակի մեջ, նա սովոր շարժումով հավասարեցնում էր կրկնակի երասանը մատների միջին, և Կորդը բաց թողեց իր ձեռքերը։ Կարծես չիմանալով, թե առաջ ո՞ր ոտքից սկսի գնալ, Ֆոու-Ֆոուն, իր երկար վզով ձիգ տալով երասանը, շարժվեց, ասես՝ զսպանակների վրա, օրորելով հեծյալին իր ճկուն մեջքին։ Կորդն ավելացնելով քայլերը, գնում էր նրա ետևից։ Հուզված ձին, մերթ մեկ, մերթ մյուս կողմից, աշխատելով խաբել հեծյալին, ձիգ էր տալիս երասանը, և Վռոնսկին զուր էր աշխատում ձայնով ու ձեռքով հանգստացնել նրան։

Նրանք արդեն մոտենում էին պատվարված գետին, դիմելով դեպի այն կետը, որտեղից պետք է բաց թողնեին նրանց։

Արշավողներից շատերն առջևում էին, շատերը ետևում, երբ հանկարծ Վռոնսկին լսեց իր ետևից ճանապարհի ցեխի մեջ ձիու քառատրոփ վազքի ձայն, և նրանից անցավ Մախոտինը՝ իր սպիտակոտն, կախականջ Գլադիատորով։ Մախոտինը ժպտաց, ցուցադրելով իր երկար ատամները, բայց Վռոնսկին բարկացած նայեց նրան։ Նա առհասարակ չէր սիրում նրան, իսկ այժմ նրան համարում էր իր ամենավտանգավոր ախոյանը, և զայրացավ նրա վրա, որ սրարշավ անցնելով մոտից, տաքացրեց նրա ձիուն։ Ֆոու-Ֆոուն ձախ ոտն առաջ ձգեց՝ քառատրոփի համար, արավ երկու ոստյուն և, բարկանալով ձիգ տված երասանի վրա անցավ ցնցուն վազքի, որ տնկտնկացնում է հեծյալին։ Կորդը նույնպես խոժոռվեց և համարյա շորորավազ հետևում էր Վռոնսկուն։

XXV

Արշավում էին ընդամենը տասնյոթ սպա։ Ձիարշավը պետք է տեղի ունենար չորս վերստանոց էլիպսաձև մեծ շրջանում՝ տաղավարի առաջ։ Այդ շրջանի վրա շինված էր ինն արգելք. գետ, երկու արշին բարձրությամբ, խուլ, մեծ բարիեր տաղավարի դիմացը. չոր խրամատ, ջրով լի խրամատ, զառիվայր, իռլանդական պատնեշ՝ բաղկացած (ամենադժվար արգելքներից մեկը) թումբից, մեջը տնկած չոր խոիվ, որի ետևին կար ձիու համար անտեսանելի էլի մի խրամատ, այնպես որ ձին պետք է միաժամանակ թռչեր երկու արգելքի վրայից կամ ջարդվեր. հետո էլի երկու խրամատ՝ մեկը ջրով լի, մյուսը՝ չոր, և վերջ ձիարշավին՝ տաղավարի դիմաց։ Բայց ձիարշավն սկսվում էր ոչ թե շրջանից, այլ նրանից մեկդի հարյուր սաժեն հեռավորությունից, և այդ տարածության վրա էր առաջին արգելքը՝ երեք արշին լայնությամբ պատվարված գետը, որից հեծյալները կարող էին թռչել կամ վազեվազ անցնել, ինչպես կամենային։

Հեծյալները երեք անգամ հավասարվեցին, բայց ամեն անգամ դուրս էր պրծնում մեկն ու մեկի ձին, և պետք էր նորից ետ դառնալ ու գալ։ Բացթողի գիտակ՝ գնդապետ Սեստրինն արդեն սկսում էր բարկանալ, երբ վերջապես չորրորդ անգամ բղավեց. «Գնա՛»,— և հեծյալները շարժվեցին։

Ամենքի աչքերը, ամենքի հեռադիտակներն ուղղված էին հեծյալների խայտաբղետ խմբակի վրա այն միջոցին, երբ հավասարվում էին նրանք։

«Բա՛ց թողին։ Արշավո՛ւմ են», լսվեց ամեն կողմից՝ սպասողական լռությունից հետո։

Ե՛վ խումբ-խումբ մարդիկ, և՛ մենավոր հետիոտներն սկսեցին վազել մի տեղից մյուսը, որ ավելի լավ տեսնեն։ Հենց առաջին րոպեին հեծյալների հավաքուն խմբակը ձգվեց, ու երևում էր, թե ինչպես նրանք երկու-երկու, երեքերեք և մեկը մյուսի ետևից մոտենում են գետին։ Դիտողներին թվում էր, թե նրանք բոլորը արշավում են միասին. բայց հեծյալների համար կար վայրկյանների տարբերություն, որ մեծ նշանակություն ուներ։

Հուզված ու չափազանց ջղային Ֆոու-Ֆոուն կորցրեց առաջին պահը, և մի քանի ձիեր տեղից շարժվեցին նրանից առաջ, բայց, տակավին չհասած գետին, Վոռնսկին, ամբողջ ուժով պահելով երասանը ձիգ տվող ձին, հեշտությամբ անցավ երեքից, և նրա առջևում մնում էր միայն Մախոտինի շեկ Գլադիատորը, որ համաչափորեն ու թեթևությամբ, տքնկտքնկացնում էր ուղղակի Վոռնսկու դիմաց իր գավակը, իսկ ամենքից առաջ հիանալի Դիանան էր, որ տանում էր ոչ ողջ, ոչ մեռած Կուզովլևին։

Առաջին րոպեներին Վոռնսկին գեռ չէր տիրապետում ո՛չ իրեն, ո՛չ էլ ձիուն։ Մինչև առաջին արգելքը, մինչև գետը, նա չէր կարողանում ղեկավարել ձիու շարժումները։

Դիանան ու Գլադիատորը մոտենում էին միասին և համարյա միևնույն պահին՝ իրար ետևից բարձրացան գետի վրա ու թռան մյուս կողմը. աննկատելի, կարծես թռչելով, վերասլացավ նրանց ետևից Ֆոու-Ֆոուն. բայց ճիշտ այն միջոցին, երբ Վռոնսկին զգաց իրեն օդի մեջ, հանկարծ տեսավ, համարյա իր ձիու ոտների տակ, Կուզովլևին, որ Դիանայի հետ թպրտում էր գետի մյուս ափին։ (Կուզովլևը թռիչքից հետո բաց թողեց երասանը, և ձին նրա հետ միասին գլորվեց գլխի վրա)։ Այս մանրամասները Վռոնսկին իմացավ հետո արդեն, իսկ այժմ նա միայն տեսավ, որ այնտեղ, ուր Ֆոու-Ֆոուն պիտի կանգնի, կարող է ընկնել Դիանայի ոտը կամ գլուխը։ Սակայն Ֆոու-Ֆոուն, ինչպես վայր ընկնող կատու,

թռիչքի վայրկյանին ջանք թափեց ոտներով ու մեջքով և, մեկդի թողնելով Դիանային, սլացավ առաջ։

«Օ՜, սիրելիս», մտածեց Վռոնսկին։

Գետից հետո Վռոնսկին լիովին տիրապետեց ձիուն ու սկսեց պահել նրան, մտադրվելով մեծ բարիերն անցնել Մախոտինի ետևից և հետո արդեն երկու հարյուր սաժենանոց ու անարգելք հետևյալ տարածության վրա փորձել նրանից անցնել։

Մեծ բարիերը գտնվում էր ցարական տաղավարի ճիշտ դիմացը։ Թագավորը, և՛ ամբողջ արքունիքը, և՛ ամբոխած ժողովուրդը նայում էին նրանց, նրան ու մի ձիու հեռակայությամբ նրանից առաջ գտնվող Մախոտինին, երբ նրանք մոտենում էին սատանային (այդպես էր կոչվում խուլ բարիերը)։ Վռոնսկին զգում էր ամեն կողմից իր վրա սևեռած այդ հայացքները, բայց ոչինչ չէր տեսնում, բացի իր ձիու ականջներից, վզից, իրեն ընդառաջ վազող գետնից և Գլադիատորի գավակից ու սպիտակ ոտներից, որոնք արագ տակտ էին խփում իր և տակավին միևնույն տարածության վրա մնացածների առջևում։ Գլադիատորը բարձրացավ, առանց թիկոց հանելու, թափահարեց կարճ պոչը և անհայտացավ Վռոնսկու աչքից։

— Բռա՛վո,— ասաց մեկի ձայնը։

Այդ նույն վայրկյանին Վռոնսկու աչքերի առաջ, հենց իր իսկ դիմաց աղոտ կերպով երևացին բարիերի տախտակները։ Մազաչափ անգամ չփոխելով իր շարժումը, ձին վերասլացավ նրանց վրա. տախտակները չքվեցին աչքից, և ետևից միայն թրխկաց ինչ-որ բան։ Տաքացած առջևից գնացող Գլադիատորից. Ֆոու-Ֆոուն չափազանց վաղ բարձրացավ բարիերի դիմաց ու ետևի սմբակով դիպավ նրան։ Բայց ձիու քայլը չփոխվեց, և Վռոնսկին ստանալով իր երեսին մի զուլա ցեխ, հասկացավ, որ ինքը նորից գտնվում է Գլադիատորից նույն հեռավորության վրա։ Նա նորից տեսավ իր առջևում նրա գավակը, կարճ պոչը և նորից նույն չհեռացող, արագ շարժվող սպիտակ ոտները։

Ճիշտ այն վայրկյանին, երբ Վռոնսկին մտածեց, թե պետք է այժմ անցնել Մախոտինից, ինքը Ֆոու-Ֆոուն, արդեն հասկանալով այն, ինչ մտածեց նա, առանց որևէ խրախու-

սանքի՝ ավելացրեց վազքը և սկսեց մոտենալ Մախոտինին ամենանպաստավոր կողմից՝ պարանի կողմից։ Մախոտինը չէր տալիս պարանը։ Վոռնսկին միայն մտածեց այն մասին, թե կարելի է շրջանցել նաև դրսի կողմից, երբ Ֆռու-Ֆռուն փոխեց ոտքը և սկսեց շրջանցել հենց այդպես։ Ֆռու-Ֆռուի քրտինքից արդեն սևանալ սկսող ուսը հավասարվեց Գլադիատորի գավակին։ Մի քանի ոստյուն նրանք արին կողք-կողքի։ Բայց արգելքի առաջ, որին մոտենում էին նրանք, Վոռնսկին, որպեսզի մեծ շրջան չանի, սկսեց աշխատել երասանով և արագ՝ հենց զառիվայրում անցավ Մախոտինից։ Նա տեսավ նրա ցեխոտված դեմքը։ Նրան նույնիսկ թվաց, որ նա ժրպտաց։ Վոռնսկին անցավ Մախոտինից, բայց անմիջապես իր ետևում զգում էր նրան և անընդհատ լսում էր իր թիկունքում Գլադիատորի համաչափ վազքը ու նրա քթածակերի ընդհատուն, դեռ բոլորովին թարմ շնչառությունը։

Հետևյալ երկու արգելքից՝ խրամատից ու բարիերից Ֆռու-Ֆռուն անցավ հեշտությամբ, բայց Վոռնսկին սկսեց ավելի մոտիկից լսել Գլադիատորի փնչոցը և վազքը։ Նա քշեց ձին և ուրախությամբ զգաց, որ Ֆռու-Ֆռուն հեշտությամբ ավելացրեց քայլքը, և Գլադիատորի սմբակների ձայնը նորից սկսեց լսվել նույն տարածությունից։

Վոռնսկին վարում էր ձիարշավը,— հենց այն բանը, ինչ ուզում էր նա անել և ինչ խորհուրդ էր տալիս նրան Կորդը,— ու այժմ նա վստահ էր հաջողության մեջ։ Նրա հուզմունքը, ուրախությունն ու քնքշությունը դեպի Ֆռու-Ֆռուն անընդհատ ուժեղանում էին։ Նա ուզում էր ետ նայել, բայց չէր համարձակվում և աշխատում էր հանգստացնել իրեն ու չքշել ձին, որպեսզի պահպանի նրա մեջ ուժի այնքան պաշար, ինչքան պաշար, զգում էր նա, մնում էր Գլադիատորի մեջ։ Մնում էր մի, և ամենադժվար արգելքը. եթե նա անցնի դա մյուսներից առաջ, կգա՝ տեղ կհասնի առաջինը։ Նա մոտենում էր իռլանդական պատնեշին։ Ֆռու-Ֆռուի հետ միասին նա դեռ հեռվից տեսավ այդ պատնեշը և երկուսն էլ՝ և՛ ինքը, և՛ ձին, վայրկենապես լարվեցին։ Նա ձիու ականջներում նկատեց անվրդովականություն ու բարձրացրեց մտրակը, բայց անմիջապես զգաց, որ կասկածն անհիմն էր. ձին դիտեր, թե ի՞նչ է պետք։ Ձին վազքն ավելացրեց և համաչափորեն, ճիշտ այնպես, ինչպես ենթադրում էր նա, վերսլացավ ու, կտրվելով գետնից, անձնատուր եղավ իներցիայի ուժին, որը նրան թույլ չտվեց խրամատից հեռու այն կողմ. և հենց միևնույն տակտով, առանց ջանքի, միևնույն ոտքից Ֆռու-Ֆռուն շարունակեց արշավը։

— Բռա՜վո, Վոռնսկի,— լսեց նա մի խումբ մարդկանց ձայներ,— նա գիտեր, դրանք իր գնդից էին և իր բարեկամները, որոնք կանգնել էին այդ արգելքի մոտ. նա չէր կարող չճանաչել Յաշվինի ձայնը, բայց չտեսավ նրան։

«Օ՜, սքանչելիք իմ», մտածում էր նա Ֆռու-Ֆռուի մասին, ականջ դնելով, թե ի՞նչ է կատարվում ետևում։ «Բռա՜վ»։ Մտածեց նա, լսելով ետևից Գլադիատորի վազքը։ Մնում էր երկու արշին լայնությամբ վերջին խրամատը՝ ջրով լի։ Վոռնսկին շնչեց էլ այդ արգելքի վրա, այլ, կամենալով շատ ավելի շուտ գալ առաջինը, սկսեց շրջանաձև աշխատել երասանով, վազքի տակտի համեմատ բարձրացնելով և իջեցնելով ձիու գլուխը։ Նա զգում էր, որ ձին գնում է, ծախսելով իր ուժերի վերջին պաշարը. թաց էին նրա ո՛չ միայն վիզը և ուսերը, այլև կաթիլ-կաթիլ քրտինք էր դուրս տալիս նրա ծոծրակին, գլխին, սրածայր ականջներին, և նա շնչում էր խիստ ու ընդհատ։ Բայց Վոռնսկին գիտեր, որ այդ պաշարը լիովին հերիք էր մնացած 200 սաժենի համար։ Շարժման առանձնահատուկ փափկությունից և շնորհիվ այն բանի, որ Վոռնսկին իրեն ավելի մոտ էր զգում գետնին, նա գիտեր, թե որքան շատ է ավելացրել իր ձին արագությունը։ Ֆռու-Ֆռուն ցատկեց խրամատից. կարծես չնկատելով այն։ Նա այդ արգելքի վրայից թռավ-անցավ թռչնի պես. բայց հենց այդ ժամանակ Վոռնսկին. իրեն համակող սոսկումով զգաց, որ ետ մնալով ձիու շարժումից, ինքն էլ չհասկանալով, թե ինչպե՜ս, արավ մի վատ, աններելի շարժում, իջնելով թամբի վրա։ Հանկարծ նրա դիրքը փոխվեց, և նա հասկացավ, որ կատարվեց մի սարսափելի բան։ Նա դեռ չկարողացավ հաշիվ տալ իրեն, թե ի՞նչ պատահեց, երբ արդեն նրա մոտ վայրկենապես երևացին շեկ հովատակի սպիտակ ոտները, և Մախոտինը արագությամբ ու արագ անցավ նրա մոտից։ Վոռնսկին մի ոտքով դիպավ գետնին, և նրա ձին գլորվեց այդ ոտքի վրա։ Նա հազիվ կարողացավ ազատել ոտքը, երբ Ֆռու-Ֆռուն ընկավ մի կողքի և ծանր խռխռալով, կուր ջանքեր էր թափում իր բա-

բակ, քրտնած վզով, որպեսզի բարձրանա կանգնի. նա թրպրտում էր գետնի վրա, իր տիրոջ ոտների տակ, ինչպես գընդակահար թռչուն։ Վոռնսկու արած անհարմար շարժումը կոտրեց ձիու մեջքը։ Բայց դա նա հասկացավ հետո միայն։ Իսկ այժմ նա տեսնում էր լոկ այն, որ Մախոտինն արագ հեռանում էր, մինչդեռ ինքը, օրորվելով, կանգնել էր մենակ՝ ցեխոտ ու անշարժ գետնին, ու իր դիմաց, ծանր շնչելով, պառկած էր Ֆոու-Ֆոուն և, գլուխը ծռած դեպի նա, նայում էր նրան իր սքանչելի աչքերով։ Տակավին չհասկանալով այն, ինչ կատարվեց, Վոռնսկին ձգում էր ձիու սանձը։ Ձին նորից թպրտաց, ինչպես ձուկ, ճռճռացնելով թամբի թևերը, ազատեց առջևի ոտները, բայց անկարող լինելով բարձրացնելու գավակը, անմիջապես ճռճվեց ու նորից ընկավ կողքի վրա։ Սարսափից այլանդակված դեմքով, գունատ և դողացող վարի ծնոտով, Վոռնսկին կրունկով խփեց ձիու փորին ու նորից սկսեց ձիգ տալ սանձը։ Բայց Ֆոու-Ֆոուն չէր շարժվում, այլ, քիթը տնկած գետնին, իր խոսուն հայացքով նայում էր միայն տիրոջը։

— Ա՜ա՜ա՜,— բառաչեց Վոռնսկին, ձեռքով բռնելով գլուխը։ — Ա՜ա՜ա՜, ի՜նչ արի ես,— ճչաց նա։ — Ե՜վ ձիարշավը տանուլ տված։ Ե՜վ իմ հանցանքը՝ ամոթալի, աններելի։ Ե՜վ այդ դժբախտ, սիրելի, կորած ձին։ — Ա՜ա՜ա՜, ի՜նչ արի ես։

Մարդիկ, բժիշկն ու բուժակը, նրա գնդի սպաները վազեցին դեպի նա։ Իր համար դժբախտաբար, նա զգում էր, որ ինքը ողջ է և անվնաս։ Ձիու մեջքը կոտրվել էր, ու վճռեցին գնդակահարել նրան։ Վոռնսկին չէր կարող պատասխանել իրեն տրված հարցերին, չէր կարող խոսել ոչ ոքի հետ։ Նա շուտ եկավ, և առանց բարձրացնելու գլխից ընկած գդակը, դուրս գնաց ձիարշավարանից, ինքն էլ չիմանալով, թե ո՞ւր։ Նա իրեն զգում էր դժբախտ։ Կյանքում առաջին անգամ նա զգաց ամենածանր դժբախտությունը, անուղղելի և այնպիսի դժբախտություն, որի պատճառն ինքն էր։

Ցաշվինը, գդակը ձեռքին, հասավ Վոռնսկուն, ուղեկցեց նրան մինչև տուն, և կես ժամից Վոռնսկին ուշքի եկավ։ Բայց այդ ձիարշավի հիշողությունը երկար ժամանակ մնաց նրա հոգում, որպես իր կյանքի ամենածանր ու տանջալից հիշողություն։

XXVI

Ալեքսեյ Ալեքսանդրովիչի հարաբերությունները կնոջ հետ արտաքուստ նույնն էին, ինչպես և առաջ։ Միակ տարբերությունն այն էր, որ նա այժմ զբաղված էր շատ ավելի, քան առաջ։ Ինչպես և առաջին տարիներին, գարնան սկզբին նա գնաց արտասահման՝ հանքային ջրեր, վերականգնելու իր առողջությունը, որ յուրաքանչյուր տարի քայքայվում էր ձմեռային լարված աշխատանքից։ Ու սովորականի պես նա վերադարձավ հուլիսին և անմիջապես կրկնապատկված եռանդով ձեռնամուխ եղավ իր սովորական աշխատանքին։ Սովորականի պես նրա կինը գնաց ամառանոց, իսկ ինքը մնաց Պետերբուրգում։

Սկսած այն խոսակցության օրից, որ տեղի ունեցավ իշխանուհի Տվերսկայայի մոտ եղած երեկոյից հետո, նա չէր խոսում Աննայի հետ իր կասկածների ու խանդի մասին, և ուրիշին պատկերելու նրա սովորական տոնը հիմա ավելի քան հարմար էր դեպի կնոջն ունեցած նրա այժմյան վերաբերմունքի համար։ Նա մի փոքր ավելի սառն էր կնոջ նկատմամբ։ Նա կարծես միայն մի քիչ դժգոհ էր կնոջից գիշերային առաջին այն խոսակցության համար, որից խուսափեց Աննան։ Կնոջ հետ նրա հարաբերությունների մեջ կար սրտնեղության նրբերանգ, ավելի ոչինչ։ «Դու չուզեցիր բացատրվել ինձ հետ,— կարծես ասում էր նա, մտովին դիմելով կնոջը,— ավելի վատ քեզ համար։ Այժմ դու կխնդրես ինձ, բայց ե՛ս չեմ կամենա բացատրվել։ Ավելի վատ քե՛զ համար»,— ասում էր նա իր մտքում, որպես մի մարդ, որը զուր կփորձեր հանգցնելու հրդեհը, կբարկանար իր ապարդյուն ջանքերի վրա ու կասեր. «ա՜ռ, ահա քեզ. դրա համար դու կայրվե՛ս»։

Նա, այդ խելոք ու պաշտոնական գործերում նրբամիտ մարդը, չէր հասկանում կնոջն այդպես վերաբերվելու իր ամբողջ խելահեղությունը։ Նա չէր հասկանում դա, որովհետև նրա համար չափազանց սարսափելի բան էր իր ներկա դրության հասկանալը, և նա իր հոգում փակեց, կողպեց ու կնքեց այն արկղը, որի մեջ գտնվում էին նրա զգացումները դեպի ընտանիքը, այսինքն՝ դեպի կինն ու որդին։ Նա, ուշադիր հայրը, այս ձմեռվա վերջերից առանձնապես

սառեց որդուց և նրան վերաբերվում էր նույնպիսի թեթև ծաղրական տոնով, ինչպես և կնոջը։ «Ա՜, երիտասարդ», դիմում էր նա որդուն։

Ալեքսեյ Ալեքսանդրովիչը կարծում էր և ասում, որ ո՛չ մի տարի այդքան շատ պաշտոնական գործեր չի ունեցել, ինչպես այս տարի. բայց նա չէր գիտակցում այն, որ այս տարի նա ի՛նքն էր հնարում իր համար գործեր, որպեսզի դա լինի այն արկղը չբացելու միջոցներից մեկը, որտեղ դրված էին նրա զգացումները դեպի կինն ու ընտանիքը և նրանց մասին եղած մտքերը, որոնք դառնում էին այնքան ավելի սոսկալի, որքան ավելի երկար էին մնում այնտեղ փակված։ Եթե մեկն իրավունք ունենար հարցնելու Ալեքսեյ Ալեքսանդրովիչին, թե ի՞նչ է մտածում նա իր կնոջ վարքագծի մասին, հեղ. հանդարտ Ալեքսեյ Ալեքսանդրովիչը ոչինչ չէր պատասխանի և շատ կբարկանար այդ մարդու վրա, որը կհարցներ դրա մասին։ Այս իսկ պատճառով, Ալեքսեյ Ալեքսանդրովիչի դեմքի արտահայտության մեջ կար ինչ-որ հպարտ ու խիստ բան, երբ հարցնում էին նրան կնոջ առողջության մասին։ Ալեքսեյ Ալեքսանդրովիչը չէր ուզում ոչինչ մտածել իր կնոջ վարքագծի ու զգացմունքների մասին և իրոք ոչինչ չէր մտածում։

Ալեքսեյ Ալեքսանդրովիչի մշտական ամառանոցը գտնվում էր Պետերգոֆում, և սովորաբար կոմսուհի Լիդիա Իվանովնան ամառն ապրում էր այնտեղ, Աննայի հարևանությամբ ու նրա հետ մշտական հարակցությամբ։ Այս տարի կոմսուհի Լիդիա Իվանովնան հրաժարվեց Պետերգոֆում ապրելուց, ո՛չ մի անգամ չեղավ Աննա Արկադևնայի մոտ և ակնարկեց Ալեքսեյ Ալեքսանդրովիչին, թե անհարմար է Աննայի մոտիկությունը Բետսիի և Վրոնսկու հետ։ Ալեքսեյ Ալեքսանդրովիչը խիստ կերպով կանգնեցրեց նրան, այն միտքը հայտնելով, թե իր կինը բարձր է կասկածներից, ու այն օրից սկսեց խուսափել կոմսուհի Լիդիա Իվանովնայից։ Նա չէր ուզում տեսնել և չէր տեսնում, որ բարձր հասարակության մեջ շատերն արդեն խեթ աչքով են նայում իր կնոջը. չէր ուզում հասկանալ և չէր հասկանում, թե ինչո՛ւ կինն առանձնապես պնդում էր Ցարսկոյե Սելո տեղափոխվելու մասին, որտեղ ապրում էր Բետսին, և որտեղից մոտիկ էր Վրոնսկու գնդի ճամբարը։ Նա թույլ չէր տալիս իրեն մտածելու դրա մասին ու չէր մտածում, բայց դրա հետ միասին նա, իր հոգու խորքում երբեք դա ցույց չտալով իրեն և դրա համար չունենալով ո՛չ միայն ո՛չ մի ապացույց, այլև կասկած, գիտեր աներկբայորեն, որ ինքը խաբված ամուսին է, այդ իսկ պատճառով՝ խորապես դժբախտ։

Քանի՜-քանի անգամ կնոջ հետ ապրած իր ութամյա երջանիկ կյանքի ընթացքում, նայելով ուրիշների անհավատարիմ կանանց ու խաբված ամուսիններին, ասում էր ինքն իրեն Ալեքսեյ Ալեքսանդրովիչը. «Ինչպե՜ս կարելի է թույլ տալ մինչ այդ աստիճան, ինչպե՜ս կարելի է վերջ չդնել այդ այլանդակ դրությանը»։ Բայց այժմ, երբ այդ դժբախտությունն եկավ իր գլխին, նա ո՛չ միայն չէր մտածում այն մասին, թե ինչպե՜ս վերջ դնել այդ դրությանը, այլև բնավ չէր ուզում իմանալ այն, չէր ուզում իմանալ հենց այն պատճառով, որ այդ դրությունը չափազանց սարսափելի էր, չափազանց անբնական։

Արտասահմանից վերադառնալուց հետո Ալեքսեյ Ալեքսանդրովիչը երկու անգամ էր եղել ամառանոցում։ Մի անգամ ճաշից, մի անգամ երեկոն անցկացրեց հյուրերի հետ, բայց ո՛չ մի անգամ չգիշերեց, ինչն անելու սովորություն ուներ նախորդ տարիներին։

Ձիարշավի օրը շատ զբաղված օր էր Ալեքսեյ Ալեքսանդրովիչի համար. բայց դեռ առավոտվանից, կազմելով իր օրակարգը, նա վճռեց, որ վաղաժամ ճաշից անմիջապես հետո կգնա ամառանոց՝ կնոջ մոտ և այնտեղից՝ Ձիարշավի, որտեղ կլինի ամբողջ արքունիքը և որտեղ պետք է ինքն էլ լինի։ Կնոջը կայցելի, որովհետև նա վճռել էր ինքն իրեն՝ շաբաթը մի անգամ լինել նրա մոտ՝ պատշաճավորության համար։ Բացի դրանից, այդ օրը նա պետք է կնոջը տար՝ ամսի տասնհինգին, ըստ սահմանված կարգի, ծախսերի համար դրամ։

Իր մտքերի վրա իշխելու սովորական կարողությամբ կշռադատելով այս բոլորը կնոջ մասին, նա թույլ չտվեց մտքերին՝ դրանից ավելի հեռու տարածվելու կնոջ վերաբերյալ։

Այդ առավոտ շատ զբաղված առավոտ էր Ալեքսեյ Ալեք-

սանդրովիչի համար։ Նախորդ օրը կոմսուհի Լիդիա Իվանովնան ուղարկել էր նրան Չինաստանում ճանապարհորդած ու ներկայումս Պետերբուրգում գտնվող հռչակավոր ճանապարհորդի բրոշյուրը մի նամակի հետ, խնդրելով ընդունել այդ ճանապարհորդին, որը զանազան նկատառումներով չափազանց հետաքրքրական ու պետքական մարդ էր։ Ալեքսեյ Ալեքսանդրովիչը չկարողացավ բրոշյուրը կարդալ երեկոյան ու կարդում էր առավոտյան։ Հետո եկան խնդրարկուները. սկսվեցին զեկույցները, ընդունելությունները, նշանակումները, հեռացումները, շքանշանների, պարգևների, կենսաթոշակների, ռոնիկների բաշխումը, գրագրությունները,— առօրյա այն գործը, ինչպես անվանում էր Ալեքսեյ Ալեքսանդրովիչը, որ խլում էր այնքան շատ ժամանակ։ Հետո կար անձնական մի գործ՝ այցելել բժշկին ու գործերի կառավարչին։ Գործերի կառավարիչը շատ ժամանակ չխլեց։ Նա միայն հանձնեց Ալեքսեյ Ալեքսանդրովիչի համար հարկավոր գրամը և համառոտակի հաշիվ տվեց գործերի կացության մասին, որոնք այնքան էլ չավ չէին, որովհետև այնպես պատահեց, որ այս տարի, հաճախակի շրջապտույտների հետևանքով, ծախսվել էր ավելի և գեֆիցիտ կար։ Բայց բժիշկը, Պետերբուրգի հռչակավոր բժիշկը, որ բարեկամական հարաբերություններ ուներ Ալեքսեյ Ալեքսանդրովիչի հետ, շատ ժամանակ խլեց։ Ալեքսեյ Ալեքսանդրովիչը նրան չէր էլ սպասում այսօր և զարմացավ նրա գալու համար, իսկ ավելի ևս նրա համար, որ բժիշկը շատ ուշադիր հարցուփորձ արեց Ալեքսեյ Ալեքսանդրովիչին իր կացության մասին, լսեց նրա կուրծքը, տմբամբացրեց ու շոշափեց լյարդը։ Ալեքսեյ Ալեքսանդրովիչը չգիտեր, որ իր բարեկամը, Լիդիա Իվանովնան, նկատելով, որ Ալեքսեյ Ալեքսանդրովիչի առողջությունն այս տարի լավ չէ, խնդրել էր բժշկին՝ գնալ ու նայել հիվանդին։ «Այդ բանն արեք ինձ համար», ասաց նրան կոմսուհի Լիդիա Իվանովնան։

— Ես այդ կանեմ Ռուսաստանի համար, կոմսուհի,— պատասխանեց բժիշկը։

— Անգին մարդ է,— ասաց կոմսուհի Լիդիա Իվանովնան։

Բժիշկը շատ զարմանք մնաց Ալեքսեյ Ալեքսանդրովիչի կա-

ցությունից։ Նրա կարծիքով՝ լյարդն զգալի կերպով մեծացել էր, սնունդը պակասել և հանքային ջրերը ո՛չ մի ազդեցություն չէին ունեցել։ Նա հրահանգեց՝ որքան հնարավոր է ավելի շատ ֆիզիկական շարժում և ինչքան կարելի է՝ ավելի քիչ մտավոր լարվածություն, իսկ որ գլխավորն է՝ ո՛չ մի վիշտ, հոգեկան հոգս, այսինքն՝ հենց այն, ինչն Ալեքսեյ Ալեքսանդրովիչի համար նույնքան անհնարին էր, ինչպես անհնարին էր չշնչելը, և բժիշկը հեռացավ, թողնելով Ալեքսեյ Ալեքսանդրովիչի մեջ անախորժ մի գիտակցություն այն մասին, որ իր մեջ կա մի վատ բան և որ դա ուղղել չի կարելի։

Դուրս գալով Ալեքսեյ Ալեքսանդրովիչի մոտից, բժիշկը դրսի սանդուղքների վրա պատահեց իր լավ ծանոթ Սլյուդինին, Ալեքսեյ Ալեքսանդրովիչի գործերի կառավարչին։ Նրանք համալսարանական ընկերներ էին և թեպետ քիչ էին հանդիպում իրար, բայց հարգում էին միմյանց ու լավ բարեկամներ էին, այդ իսկ պատճառով ուրիշ ոչ ոքի, բացի Սլյուդինից, բժիշկը չէր հայտնի իր անկեղծ կարծիքը հիվանդի մասին։

— Որքան ուրախ եմ, որ դուք եղաք նրա մոտ,— ասաց Սլյուդինը։— Նա լավ չէ, և ինձ թվում է... է՞, ի՞նչ կա՛։

— Ահա, թե ի՞նչ,— ասաց բժիշկը, Սլյուդինի գլխի վրայով նշան տալով իր կառապանին, որ մոտ բերի կառքը,— ահա թե ի՞նչ,— ասաց բժիշկը, իր սպիտակ ձեռքերով բռնելով իր լայքե ձեռնոցի մատը ու հագցնելով։— Ձիգ մի՛ տվեք լարը և փորձեցեք կտրել այն,— շատ դժվար է, բայց ձիգ տվեք այն ծայրաստիճան ու մատի ամբողջ ծանրությամբ հուպ տվեք ձգված լարը,— և կկտրվի այն։ Իսկ նա աշխատանքի նկատմամբ ունեցած իր բարեխղճությամբ, տոկունությամբ ձգված է, լարված ծայրաստիճան. հետո՝ կոմունակի ճնշում կա, և ծանր ճնշում,— եզրափակեց բժիշկը, նշանակալից բարձրացնելով հոնքերը։— Կլինե՞ք ձիարշավին,— ավելացրեց նա, իջնելով դեպի մոտ բերած կառեթը։— Այո՛, ա՛յո, իհարկե, շատ ժամանակ է կլանում,— անորոշ պատասխանեց բժիշկը Սլյուդինի ասածին, որը լավ չլսեց։

Բժշկից անմիջապես հետո, որն այնքան շատ ժամանակ

խլեց, եկավ հռչակավոր ճանապարհորդը, և Ալիքսեյ Ալեքսանդրովիչը, օգտվելով հենց նոր կարդացած բրոշյուրից ու այդ առարկայի մասին իր ունեցած նախկին գիտելիքից, զարմացրեց ճանապարհորդին իր իմացության խորությամբ և լուսավոր հայեցակետի լայնությամբ։

Ճանապարհորդի հետ միասին նրան զեկուցեցին ազնվականության նահանգական պարագլխի գալու մասին, որ եկել էր Պետերբուրգ և որի հետ պետք էր խոսել։ Նրա հեռանալուց հետո պետք էր վերջացնել առօրյա զբաղմունքները գործերի կառավարչի հետ և պետք էր մի լուրջ ու կարևոր գործով գնալ մի նշանավոր անձնավորության մոտ։ Ալեքսեյ Ալեքսանդրովիչը կարողացավ վերադառնալ տուն ժամը հինգին մոտ՝ իր ճաշի ժամին, և ճաշելով գործերի կառավարչի հետ, հրավիրեց նրան միասին գնալ ամառանոց ու այնտեղից էլ՝ ձիարշավի։

Հաշիվ չտալով իրեն այդ բանում, Ալեքսեյ Ալեքսանդրովիչն այժմ առիթ էր փնտրում, որ երրորդ մի անձնավորություն ներկա լիներ կնոջ հետ իր տեսակցությունների ժամանակ։

XXVII

Աննան կանգնել էր վերևում հայելու առաջ, Աննուշկայի օգնությամբ ամրացնելով վերջին ժապավենն զգեստի վրա, երբ լսեց գլխավոր մուտքի դռան մոտ խիճը տրորող անիվների ձայնը։

«Բետսիի համար դեռ վաղ է», մտածեց նա և նայելով պատուհանից դուրս, տեսավ կառեթը ու նրա միջից դուրս ցցված Ալեքսեյ Ալեքսանդրովիչի սև գլխարկը և իրեն այնքան ծանոթ ականջները։ «Որքա՞ն անժամանակ, մի՞թե գիշերելու է», մտածեց Աննան, և նրան այնքան սարսափելի ու սոսկալի թվաց այն ամենը, ինչ կարող էր առաջ գալ դրանից, որ նա, մի րոպե անգամ չմտասուզվելով, ուրախ ու պայծառ դեմքով գնաց ընդառաջելու նրանց և, զգալով իր մեջ ստի ու խաբեության իրեն ծանոթ ոգու ներկայությունը, անմիջապես անձնատուր եղավ այդ ոգուն և սկսեց խոսել, ինքն էլ չիմանալով, թե ի՞նչ կասի։

— Ա՜, ի՞նչ հաճելի բան,— ասաց նա, ձեռքը տալով ամուսնուն և ժպիտով ողջունելով տանու մարդուն՝ Սլյուդինին։— Հուսամ, դու գիշերելու ես,— եղավ այն առաջին խոսքը, որ թելադրեց նրան խաբեության ոգին,— իսկ այժմ գնանք միասին։ Ափսո՜ս միայն, որ ես խոստացա Բետսիին։ Նա կգա իմ ետևից։

Ալեքսեյ Ալեքսանդրովիչը կնճռոտվեց, լսելով Բետսիի անունը։

— Օ՜, ես չեմ բաժանի անբաժաններին,— ասաց Կարենինը կատակի իր սովորական տոնով։— Մենք կերթանք Միխայիլ Վասիլևիչի հետ։ Ինձ բժիշկները պատվիրում են ոտքով մանգալ։ Ես կերթամ ճանապարհով և կերևակայեմ, որ հանքային ջրերում եմ։

— Շտապելու կարիք չկա,— ասաց Աննան։— Թեյ ուզո՞ւմ եք։— Նա զանգահարեց։

— Թեյ տվեք և ասեք Սերյոժային, որ Ալեքսեյ Ալեքսանդրովիչը եկել է։ Հետո, ի՞նչ կա, ինչպե՞ս է քո առողջությունը։ Միխայիլ Վասիլևիչ, դուք չեք եղել ինձ մոտ, տեսեք, թե ինչքան լա՜վ է իմ պատշգամբում,— ասում էր Աննան, դիմելով մերթ մեկին, մերթ մյուսին։

Նա խոսում էր շատ հասարակ ու բնական, բայց չափազանց շատ և չափազանց արագ։ Նա ինքն էլ զգում էր այդ, մանավանդ այն ուշադիր հայացքից, որով նայեց նրան Միխայիլ Վասիլևիչը, Աննան նկատեց, որ կարծես թե նա զննում էր իրեն։

Միխայիլ Վասիլևիչն անմիջապես դուրս գնաց տերրաս։

Աննան նստեց ամուսնու մոտ։

— Քո տեսքն այնքան էլ լավ չէ,— ասաց նա։

— Այո՛,— ասաց ամուսինը,— բժիշկն այսօր ինձ մոտ էր ու խլեց ինձնից մի ամբողջ ժամ։ Ես զգում եմ, որ նրան ուղարկել էր իմ բարեկամներից մեկն ու մեկը. այնքա՜ն թանկարժեք է իմ առողջությունը...

Աննան հարցնում էր նրա առողջության ու գործերի մասին, հորդորում էր հանգստանալ և տեղափոխվել իր մոտ։

Այս բոլորը նա ասում էր ուրախ, արագ և աչքերի առանձին փայլով, բայց Ալեքսեյ Ալեքսանդրովիչն այժմ ո՛չ մի նշանակություն չէր վերագրում նրա այդ տոնին։ Նա լսում էր միայն կնոջ խոսքերը և տալիս էր նրանց սոսկ այն ուղ-

դակի իմաստը, որ ունեին նրանք։ Եվ նա պատասխանում էր Աննային պարզորեն, թեպետև կատակով։ Առանձին ոչինչ չկար այս ամբողջ խոսակցության մեջ, բայց հետագայում Աննան երբեք չէր կարողանում առանց ամոթի տանջող ցավի մտաբերել այս ամբողջ կարճ տեսիլը։

Մտավ Սերյոժան, դաստիարակչուհու ուղեկցությամբ։ Եթե Ալեքսեյ Ալեքսանդրովիչը թույլ տար իրեն դիտելու, նա կնկատեր այն երկչոտ, շվարած հայացքը, որով Սերյոժան նայեց հորը, ապա՝ մորը։ Բայց հայրը ոչինչ չէր ուզում տեսնել և չէր տեսնում։

— Ա՜, երիտասարդ։ Նա մեծացել է։ Ճշմարիտ, դառնում է իսկական տղամարդ։ Բարև, երիտասարդ։

Եվ նա ձեռքը տվեց վախեցած Սերյոժային։

Սերյոժան, որ առաջ էլ հոր հանդեպ երկչոտ էր, այժմ, սկսած այն օրից, երբ Ալեքսեյ Ալեքսանդրովիչն սկսեց նրան կանչել երիտասարդ և երբ նրա գլուխը մտավ այն հանելուկը, արդյոք Վրոնսկին բարեկա՞մ է, թե թշնամի, խուսափում էր հորից։ Նա, կարծես պաշտպանություն խնդրելով, նայեց մորը։ Միայն մո՛ր հետ էր նա լավ զգում իրեն։ Մինչ այդ Ալեքսեյ Ալեքսանդրովիչը խոսելով դաստիարակչուհու հետ, բռնել էր որդու ուսից, և Սերյոժան այնպես տանջալից անհարմար էր զգում իրեն, որ Աննան տեսավ, ինչպես նա պատրաստվում է արտասվելու։

Աննան, կարմրելով այն րոպեին, երբ ներս եկավ որդին, ու նկատելով, որ Սերյոժան անհարմար է զգում իրեն, արագ վեր թռավ տեղից, բարձրացրեց որդու ուսից Ալեքսեյ Ալեքսանդրովիչի ձեռքը և, համբուրելով որդուն, տարավ նրան տերրաս ու անմիջապես վերադարձավ։

— Սակայն ժամանակն է արդեն,— ասաց նա, նայելով իր ժամացույցին,— ինչո՞ւ Բետսին չի գալիս...

— Այո՛,— ասաց Ալեքսեյ Ալեքսանդրովիչը և վեր կենալով, ձեռքերը շաղակցեց իրար ու ճրթճրթացրեց։— Ես եկա նաև, որ դրամ բերեմ քեզ, սրտովհան ծախսերով չեն կերակրում,— ասա նա։— Կարծում եմ, քեզ պետք է։

— Ո՛չ, պետք չէ... այո՛, պետք է,— ասաց Աննան, շնչելով նրան ու կարմրելով մինչև մազերի արմատը։— Ես կարծում եմ, որ դու կգաս այստեղ ձիարշավից հետո։

— Օ՜, իհա՜րկե,— պատասխանեց Ալեքսեյ Ալեքսանդրովիչը։— Ահա և Պետերգոֆի զարդը՝ իշխանուհի Տվերսկայան,— ավելացրեց նա, նայելով պատուհանից դուրս և տեսնելով մոտեցող անգլիական կառքը, կաշեսարքով, շափազանց բարձր շինած փոքրիկ նստիքով։— Որպիսի՜ պճնամոլություն։ Հրաշալի՜ք է։ Է՜հ, մենք էլ գնանք։

Իշխանուհի Տվերսկայան դուրս չեկավ կառքից, այլ գրքավոր մուտքի դռան մոտ ցած թռավ միայն նրա լակեյը, շոքլեռներով, ուսապարկով ու սև գլխարկով։

— Ես գնացի, մնա՛ք բարի,— ասաց Աննան և, համբուրելով որդուն, մոտեցավ Ալեքսեյ Ալեքսանդրովիչին ու ձեռքը մեկնեց նրան։— Դու շատ սիրալիր ես, որ եկար։

Ալեքսեյ Ալեքսանդրովիչը համբուրեց նրա ձեռքը։

— Ուրեմն՝ ցտեսություն։ Վերադարձին կգաս թեյի. հիանալի,— ասաց Աննան ու դուրս գնաց, շողուն և ուրախ։ Բայց հենց որ հեռացավ ու այլևս չէր տեսնում ամուսնուն, զգաց ձեռքի այն տեղը, որին դիպան նրա շրթունքները, և զզվանքով ցնցվեց։

XXVIII

Երբ Ալեքսեյ Ալեքսանդրովիչը եկավ ձիարշավի տեղը, Աննան արդեն նստել էր տաղավարում Բետսիի կողքին, այն տաղավարում, որտեղ հավաքվում էր ամբողջ բարձր հասարակությունը։ Նա ամուսնուն տեսավ դեռ հեռվից։ Երկու անձնավորություն, ամուսինն ու սիրեկանը, նրա համար կյանքի երկու կենտրոնն էին, և առանց արտաքին զգացումների օգնության նա զգում էր նրանց մոտիկությունը։ Աննան դեռ հեռվից զգաց ամուսնու մոտենալը և ակամա հետևում էր նրան ամբոխի այն ալիքներում, որոնց մեջ շարժվում էր նա։ Աննան տեսնում էր, թե ինչպե՞ս նա մոտենում էր տաղավարին, մերթ ներողամտաբար պատասխանելով քծնի ողջույններին, մերթ բարեկամաբար ու ցրված բարևելով իրեն հավասարներին, մերթ փութաջանորեն սպասելով աշխարհի հզորների հայացքին և հանելով իր կլոր, մեծ գլխարկը, որը սեղմում էր նրա ականջների ծայրերը։

Աննան դիտեր այս բոլոր վարվելաձևերը, և զրանք բոլո-

ը զզվելի էին նրա համար։ «Միայն փառասիրություն, միայն հաջողություն ունենալու ցանկություն, ահա այն բոլորը, ինչ կա նրա սրտում,— մտածում էր Աննան,— իսկ բարձր նկատառումներ, լուսավորության սեր, կրոն, այս բոլորը զենք է միայն նրա համար, որպեսզի հաջողություն ձեռք բերվի»։

Կանանց տաղավարի վրա գցած Ալեքսեյ Ալեքսանդրովիչի հայացքից (նա ուղղակի նայում էր կնոջը, բայց չէր ճանաչում նրան մուսլինի, ժապավենների, փետուրների, հովանոցների ու ծաղիկների ծովում) Աննան հասկացավ, որ ամուսինը որոնում է իրեն, բայց ինքը դիտմամբ չէր նկատում ամուսնուն։

— Ալեքսեյ Ալեքսանդրովիչ,— ձայնեց նրան իշխանուհի Բետսին,— դուք երևի չեք տեսնում ձեր կնոջը. ահա նա։

Կարենինը ժպտաց իր սառը ժպիտով։

— Այստեղ այնքան շուք ու փայլ կա, որ աչքերս շաղվեցին,— ասաց նա և մտավ տաղավարը։ Նա ժպտաց կնոջը, ինչպես պետք է ժպտա ամուսինը, հանդիպելով կնոջը, որի հետ տեսնվել էր քիչ առաջ, ու բարևեց իշխանուհուն և իր այլ ծանոթներին, յուրաքանչյուրին տալով այն, ինչ պետք էր, այսինքն՝ կատակելով կանանց հետ ու ողջույնի փոխանակություն անելով տղամարդկանց հետ։ Ներքևում, տաղավարի մոտ, կանգնել էր Ալեքսեյ Ալեքսանդրովիչի համար հարգելի, իր խելքով ու կրթությամբ հայտնի մի գեներալ-ադյուտանտ։ Ալեքսեյ Ալեքսանդրովիչն սկսեց խոսել նրա հետ։

Ընդմիջում էր ձիարշավների միջև, ուստի ոչինչ չէր խանգարում խոսակցությանը։ Գեներալ-ադյուտանտը դատապարտում էր ձիարշավը։ Ալեքսեյ Ալեքսանդրովիչն առարկում էր, պաշտպանելով այն։ Աննան լսում էր նրա բարակ, մեղմ ձայնը, բաց չթողնելով ոչ մի խոսք, և նրա յուրաքանչյուր բառը թվում էր Աննային կեղծ ու ծակում էր նրա ականջը։

Երբ սկսվեց չորս վերստանոց ձիարշավը՝ արդելքներով, Աննան թեքվեց առաջ և առանց աչք հեռացնելու, նայում էր ձիուն մոտեցող ու ձին նստող Վրոնսկուն և միաժամանակ լսում էր ամուսնու այդ անլռելի, զզվելի ձայնը։ Աննան

տանջվում էր Վրոնսկու համար ունեցած իր վախից, բայց ավելի ևս տանջվում էր ամուսնու՝ ծանոթ ինտոնացիաներով բարակ ձայնի անլռելի հնչյունից, ինչպես թվում էր Աննային։

«Ես վատ կին եմ, ես կորած կին եմ,— մտածում էր Աննան,— բայց ես չեմ սիրում ստել, ես տանել չեմ կարող սուտը, իսկ նրա (ամուսնու) կերակուրը սուտն է։ Նա ամեն բան գիտե, ամեն բան տեսնում է. իսկ ի՞նչ է զգում նա, եթե կարող է այդպես հանգիստ խոսել։ Եթե նա սպաներ ինձ, սպաներ Վրոնսկուն, ես կհարգեի նրան։ Բայց չէ՛, նրան պետք են միայն սուտն ու պատշաճությունը,— ասում էր ինքն իրեն Աննան, չմտածելով այն բանի մասին, թե իսկապես ի՞նչ էր ուզում ինքը ամուսնուց, ինչպե՞ս կուզենար տեսնել նրան։ Աննան չէր հասկանում այն, որ Ալեքսեյ Ալեքսանդրովիչի այսօրվա այս առանձին շատախոսությունը, որն այնպես գրգռում էր իրեն, նրա ներքին տագնապի և անհանգստության արտահայտությունն էր միայն։ Ինչպես ջարդված երեխան, ոստնելով, շարժման մեջ է դնում իր մկանները, որպեսզի խլացնի ցավը, այդպես էլ Ալեքսեյ Ալեքսանդրովիչի համար անհրաժեշտ էր մտավոր շարժումը, որպեսզի խլացնի այն մտքերը կնոջ մասին, որոնք կնոջ ու Վրոնսկու ներկայությամբ և իր անունը մշտապես կրկնելու կապակցությամբ ուշադրություն էին պահանջում դեպի իրենք։ Իսկ ինչպես երեխայի համար բնական էր ոստնելը, այնպես էլ նրա համար բնական էր լավ ու խելոք խոսելը։ Նա ասում էր.

— Վտանգն անհրաժեշտ պայման է ռազմական, հեծելազորի ձիարշավներում։ Եթե Անգլիան կարող է ռազմական պատմության մեջ նշել հեծելազորի ամենափայլուն կռիվներ, դա եղել է շնորհիվ այն բանի միայն, որ նա պատմականորեն զարգացնում էր թե՛ կենդանիների, թե՛ մարդկանց այդ ուժը։ Իմ կարծիքով, սպորտը խոշոր նշանակություն ունի, և ինչպես միշտ, մենք տեսնում ենք նրա ամենամակերեսային նշանակությունը միայն։

— Մակերեսային չէ,— ասաց իշխանուհի Տվերսկայան։ — Ասում են, որ մի սպա ջարդել է իր երկու կողը։

Ալեքսեյ Ալեքսանդրովիչը ժպտաց յուրահատուկ, և այդ

Ժպիտը բացեց նրա ատամները միայն, չասելով ուրիշ ոչինչ։

— Ինթրիգենք, իշխանուհի, թե դա մակերեսային չէ,— ասաց նա,— այլ ներքին է։ Բայց բանն այդ չէ,— և նա նորից դիմեց գեներալին, որի հետ լուրջ էր խոսում.— մի՛ մոռանաք, որ արշավում են զինվորականներ, որոնք ընտրել են իրենց համար ա՛յդ գործունեությունը, և համաձայնեցեք, որ ամեն կոչում ունի մեդալի իր հակառակ կողմը։ Դա ուղղակի մտնում է զինվորականի պարտավորության մեջ։ Բորնքամարտի կամ իսպանական տորեադորների այլանդակ սպորտը բարբարոսության նշան է։ Սակայն մասնագիտացված սպորտը զարգացման նշան է։

— Ո՛չ, մյուս անգամ ես չեմ գա, դա ինձ չափազանց հուզում է,— ասաց իշխանուհի Բետսին։— Այնպես չէ՞, Աննա։

— Հուզում է, բայց հնարավոր չէ աչք հեռացնել,— ասաց մի ուրիշ տիկին։— Եթե ես լինեի հռոմեացի, բաց չէի թողնի ո՛չ մի կրկես։

Աննան ոչինչ չէր ասում և, առանց իշեցնելու հեռադիտակը, նայում էր մի կետի։

Այդ միջոցին տաղավարով անցնում էր բարձրահասակ մի գեներալ։ Ընդհատելով իր խոսքը, Ալեքսեյ Ալեքսանդրովիչն շտապ, բայց արժանապատվությամբ կանգնեց ու խորը գլուխ տվեց անցնող զինվորականին։

— Դուք չե՞ք արշավում,— կատակով դիմեց նրան զինվորականը։

— Իմ արշավն ավելի դժվար է,— հարգալից պատասխանեց Ալեքսեյ Ալեքսանդրովիչը։

Թեպետև այդ պատասխանը ոչինչ չէր նշանակում, բայց զինվորականը ձևացրեց, իբր խելոք խոսք լսեց խելոք մարդուց և լիովին հասկանում է la pointe de la sauce[1]։

— Կա՛ երկու կողմ,— շարունակեց նորից Ալեքսեյ Ալեքսանդրովիչը.— կատարողների ու հանդիսատեսների. և դեպի նման տեսարանները տածած սերը ամենաճիշտ հատկանիշն է հանդիսատեսների ցածր զարգացման, ես համաձայն եմ, բայց...

— Իշխանուհի, գրա՞ղ,— լսվեց ներքևից Ստեպան Արկադեիչի ձայնը, ուղղված Բետսիին։— Դուք ո՞ւմ համար։

— Ես ու Աննան իշխան Կուզովլևի,— պատասխանեց Բետսին։

— Ես Վրոնսկու համար։ Մի ղույգ ձեռնոց։

— Համաձայն եմ։

— Իսկ ի՞նչ գեղեցիկ է, այնպես չէ՞։

Ալեքսեյ Ալեքսանդրովիչը լռեց, մինչ խոսում էին նրա մոտ, բայց անմիջապես էլի սկսեց.

— Ես համաձայն եմ, բայց առնական խաղերը...— ուզում էր շարունակել նա։

Սակայն այդ ժամանակ բաց էին թողնում հեծյալներին, և բոլոր խոսակցությունները գադարեցին։ Ալեքսեյ Ալեքսանդրովիչը նույնպես լռեց, և ամենքը կանգնեցին ու շուտ եկան դեպի գետը։ Ալեքսեյ Ալեքսանդրովիչը չէր հետաքրքրվում ձիարշավով, ուստի, չէր նայում արշավողներին, այլ ցրված սկսեց հոգնած աչքերով դիտել հանդիսատեսներին։ Նրա հայացքը կանգ առավ Աննայի վրա։

Աննայի դեմքը գունատ էր ու խիստ։ Նա հայտնապես ոչինչ ու ոչ ոքի չէր տեսնում, բացի մեկից։ Նրա ձեռքը գողացունց սեղմում էր հովհարը, և նա չէր շնչում։ Ալեքսեյ Ալեքսանդրովիչը նայեց նրան և արագ շուռ եկավ, դիտելով ուրիշ դեմքեր։

«Ահա, այս տիկինն էլ, ուրիշները նույնպես շատ հուզված են, դա շատ բնական է», ասաց ինքն իրեն Ալեքսեյ Ալեքսանդրովիչը։ Նա ուզում էր շնչել կնոջը, բայց հայացքն ակամա ձգում էր նրան դեպի կինը։ Նա նորից խորացնելով նայեց այդ դեմքին, աշխատելով չկարդալ այն ինչն այնպես պարզ գրված էր նրա վրա, և իր կամքի հակառակ սոսկումով կարդում էր այնտեղ այն, ինչը նա չէր ուզում իմանալ։

Կուզովլևի առաջին անկումը գետի վրա հուզեց ամենքին, բայց Ալեքսեյ Ալեքսանդրովիչը պարզ տեսնում էր Աննայի դժգույն հաղթական դեմքից, որ չընկավ նա, ում նայում էր իր կինը։ Հետո, երբ Վրոնսկին ու Մախոտինը թռան մեծ բարիերից և գլխիվայր ընկավ հեծյալ սպան ու չարդվեց ան-

[1] Բառացի՝ սոուսի ամբողջ նրբությունը, փոխաբերաբար՝ խոսքի խորիմաստությունը։

շնչացած վիճակում և սարսափի շրշյուն անցավ ամբողջ հասարակության միջով.— Ալեքսեյ Ալեքսանդրովիչը տեսավ, որ Աննան նույնիսկ չնկատեց այդ ու դժվարությամբ հասկացավ, թե ինչի՞ մասին խոսեցին ամենքն իր շուրջը։ Բայց նա ավելի ու ավելի հաճախ և ավելի մեծ համառությամբ էր նայում կնոջը։ Աննան, ամբողջապես կլանված արշավող Վրոնսկով, զգաց կողքից իր վրա սևեռած՝ ամուսնու աչքերի հայացքը։

Աննան մի վայրկյան երեսը դարձրեց դեպի ամուսինը, հարցական նայեց նրան ու թեթև խոժոռվելով, նորից շուռ եկավ։

«Ա՛խ, ինձ համար միևնույն է», կարծես ասաց նա ամուսնուն ու այլևս ո՛չ մի անգամ չնայեց նրան։

Ձիարշավն անհաջող էր, և տասնյոթ սպաներից կեսից ավելին ընկավ ու ջարդվեց։ Ձիարշավի վերջում բոլորը հուզված էին, և հուզմունքն ավելի սաստկացավ այն հանդամանքից, որ թագավորը դժգոհ էր։

XXIX

Ամենքը բարձրաձայն արտահայտում էին իրենց անհավանությունը, բոլորը կրկնում էին ինչ-որ մեկի ասած ֆրազը. «պակասում է միայն կրկեսը՝ առյուծների հետ», և սարսափը համակել էր ամենքին, այնպես որ, երբ Վրոնսկին ընկավ ու Աննան բարձրաձայն ա՛խ քաշեց, անսովոր ոչինչ չկար դրա մեջ։ Բայց դրանից հետո Աննայի դեմքին առաջացավ այնպիսի փոփոխություն, որն արդեն անպայման անպատշաճ էր։ Աննան բոլորովին կորցրեց իրեն։ Նա սկսեց թպրտալ, ինչպես բռնված թռչուն, մեկ ուզում էր վեր կենալ ու գնալ, հայտնի չէ՝ թե ո՛ւր, մեկ դիմում էր Բետսիին։

— Գնա՞նք, գնա՞նք,— ասում էր նա։

Բայց Բետսին չէր լսում նրան։ Իշխանուհին խոսում էր իրեն մոտեցած գեներալի հետ, թեքված դեպի ներքև։

Ալեքսեյ Ալեքսանդրովիչը մոտեցավ Աննային ու հարգալից մեկնեց ձեռքը նրան։

— Գնանք, եթե կամենում եք,— ասաց նա ֆրանսերեն,

բայց Աննան ականջ էր դնում, թե ի՞նչ էր ասում գեներալը, ուստի չնկատեց ամուսնուն։

— Ասում են, նույնպես կոտրել է ոտքը,— ասում էր գեներալը։— Դա արդեն բանի նման չէ։

Աննան, չպատասխանելով ամուսնուն, բարձրացրեց հեռադիտակը և նայեց այն տեղը, ուր ընկավ Վրոնսկին, բայց այնպես հեռու էր ու այնտեղ հավաքվեց այնքան մեծ ամբոխ, որ չէր կարելի ոչինչ հասկանալ։ Նա իջեցրեց հեռադիտակը և ուզում էր գնալ, սակայն, այդ միջոցին սրարշավ եկավ մի սպա և զեկուցում էր թագավորին ինչ-որ բան։ Աննան գլուխը մեկնեց առաջ, ականջ դնելով։

— Ստի՞վա, Ստի՞վա,— ձայնեց նա եղբորը։

Բայց եղբայրը չլսեց քրոջը։ Աննան նորից ուզում էր դուրս գնալ։

— Ես մի անգամ էլ առաջարկում եմ ձեզ իմ ձեռքը, եթե դուք ուզում եք գնալ,— ասաց Ալեքսեյ Ալեքսանդրովիչը, դիպչելով նրա թևին։

Աննան զզվանքով ետ քաշվեց նրանից և, առանց նայելու նրա դեմքին, պատասխանեց.

— Օ՛չ, ո՛չ, թողեք ինձ, ես մնում եմ։

Աննան տեսնում էր այժմ, որ Վրոնսկու ընկած տեղից շրջանի միջով վազում էր մի սպա դեպի տաղավարը։ Բետսին թաշկինակը թափահարում, կանչում էր նրան։ Սպան հաղորդեց, որ հեծյալն անվնաս է, իսկ ձին կոտրել է իր մեջքը։

Լսելով այդ, Աննան արագ նստեց ու դեմքը ծածկեց հովհարով։ Ալեքսեյ Ալեքսանդրովիչը տեսավ, որ կինը լաց է լինում և չի կարողանում զսպել ո՛չ միայն արցունքները, այլև հեկեկանքը, որոնցից ցնցվում էր նրա կուրծքը։ Ալեքսեյ Ալեքսանդրովիչն իր ֆիգուրով ծածկեց կնոջը, ժամանակ տալով նրան շտկվելու։

— Երրորդ անգամ առաջարկում եմ ձեզ իմ ձեռքը,— ասաց նա, որոշ ժամանակ անցնելուց հետո, դիմելով կնոջը։ Աննան նայում էր նրան և չգիտեր, թե ի՞նչ ասի։ Իշխանուհի Բետսին օգնության հասավ.

— Ո՛չ, Ալեքսեյ Ալեքսանդրովիչ, Աննային ե՛ս բերի, ես էլ խոստանում եմ ետ տանել,— միջամտեց Բետսին։

— Ներեցեք ինձ, իշխանուհի,— ասաց Կարենինը, հարգալից ժպտալով, սակայն հաստատակամորեն նայելով նրա աչքերին,— բայց ես տեսնում եմ, որ Աննան այնքան էլ առողջ չէ, և ես կամենում եմ, որպեսզի նա գնա ի՛նձ հետ։

Աննան վախեցած ետ նայեց, հնազանդորեն կանգնեց ու ձեռքը դրեց ամուսնու ձեռքին։

— Ես մարդ կուղարկեմ նրա մոտ, կիմանամ և իմաց կանեմ,— շշնջաց Աննայի ականջին Բետսին։

Տաղավարից դուրս գալիս Ալեքսեյ Ալեքսանդրովիչը, այնպես ինչպես միշտ, խոսում էր պատահողների հետ, և Աննան ստիպված էր, ինչպես լինում էր միշտ, պատասխանել ու խոսել, բայց նա նման չէր ինքն իրեն և քայլում էր, կարծես երազի մեջ, ամուսնու հետ թևանցուկ։

«Ջարդվե՞ց, թե ոչ։ Ճի՞շտ է, արդյոք։ Կգա՞, թե ոչ։ Արդյոք այսօր ես կտեսնե՞մ նրան», մտածում էր Աննան։

Նա լուռ նստեց Ալեքսեյ Ալեքսանդրովիչի կառքը և լուռ դուրս գնաց կառքերի ժխորի միջից։ Չնայած այն բոլորին, որ տեսավ Ալեքսեյ Ալեքսանդրովիչը, այսուամենայնիվ նա թույլ չտվեց իրեն մտածելու իր կնոջ իսկական դրության մասին։ Նա տեսավ միայն արտաքին հատկանիշները։ Նա տեսավ, որ կինը պահում էր իրեն անվայելուչ, և իր պարտքն էր համարում՝ ասել այդ նրան։ Բայց Ալեքսեյ Ալեքսանդրովիչի համար շատ դժվար էր չասել ավելին, այլ ասել միայն այդ։ Նա բերանը բացեց, որ կնոջն ասի, թե ինչպես անպատշաճ էր պահում նա իրեն, բայց ակամա ասաց բոլորովին այլ բան.

— Սակայն որքա՞ն մենք ամենքս հակամետ ենք այդ դաժան տեսարաններին,— ասաց նա։— Ես նկատում եմ...

— Ի՞նչ։ Ես չեմ հասկանում,— արհամարհանքով ասաց Աննան։

Ալեքսեյ Ալեքսանդրովիչը վիրավորվեց և անմիջապես սկսեց ասել այն, ինչ ուզում էր։

— Ես պետք է ասեմ ձեզ...— խոսեց նա։

«Ահա՞, սկսվում է բացատրությունը», մտածեց Աննան, և սարսափը համակեց նրան։

— Ես պետք է ասեմ, որ դուք անվայելուչ էիք պահում ձեզ այսօր,— ասաց նա կնոջը ֆրանսերեն։

— Ինչո՞վ էի ես անվայելուչ պահում ինձ,— բարձրաձայն ասաց Աննան, գլուխն արագ շրջելով դեպի նա և ուղիղ նայելով նրա աչքերին, բայց արդեն ո՛չ թե մի բան քողարկող առաջվա ուրախությամբ, այլ վճռական տեսքով, որի տակ դժվարությամբ էր թաքցնում իր զգացած վախը։

— Մի՛ մոռանաք,— ասաց Կարենինը կնոջը, նշելով բաց լուսամուտը՝ կառապանի ետևին։

Նա քիչ բարձրացավ ու բարձրացրեց ապակին։

— Ի՞նչ տեսաք դուք անվայելուչ,— կրկնեց Աննան։

— Այն հուսահատությունը, որ դուք թաքցնել չկարողացաք, երբ ընկավ հեծյալներից մեկը։

Ալեքսեյ Ալեքսանդրովիչն ասպասում էր, որ կինը կառարկի, բայց Աննան լուռ էր, նայելով իր դիմացը։

— Ես արդեն խնդրել եմ ձեզ, որ դուք բարձր հասարակության մեջ ձեզ պահեք այնպես, որպեսզի չար լեզուներն էլ չկարողանան ոչինչ ասել ձեր դեմ։ Կար ժամանակ, երբ ես խոսում էի ներքին հարաբերությունների մասին. այժմ չեմ խոսում դրանց մասին։ Այժմ իմ խոսքը վերաբերում է արտաքին հարաբերություններին։ Դուք անպարկեշտ էիք պահում ձեզ, և ես կուզենայի, որ դա չկրկնվեր։

Աննան չէր լսում նրա ասած խոսքերի կեսը, նա զգում էր, որ վախենում է ամուսնուց և մտածում էր այն մասին, արդյոք, իսկապե՞ս Վրոնսկին չի՞ ջարդվել։ Արդյոք նրա՞ մասին էին ասում, որ ողջ է, իսկ ձին կոտրել է մեջքը։ Աննան կեղծ-հեգնալից ժպտաց միայն, երբ ամուսինը վերջացրեց, և ոչինչ չպատասխանեց, որովհետև չէր լսում, թե ի՞նչ էր ասում նա։ Ալեքսեյ Ալեքսանդրովիչն սկսեց խոսել համարձակ, սակայն երբ պարզ հասկացավ այն, ինչի մասին խոսում էր ինքը, իրեն էլ հաղորդվեց այն վախը, որ զգում էր կինը։ Նա տեսավ այդ ժպիտը, և տարօրինակ մի մոլորություն եկավ նրա վրա։

«Աննան ժպտում է իմ կասկածների առթիվ։ Այո՛, նա հիմա կասի այն, ինչ ասում էր ինձ այն անգամ, այսինքն՝ որ հիմք չունեն իմ կասկածները, որ ծիծաղելի է դա»։

Այժմ, երբ նրա գլխին կախված էր ամբողջ կատարվածի հայտնաբերումը, նա ոչինչ այնպես չէր ցանկանում, քան այն, որպեսզի Աննան, այնպես, ինչպես առաջ, հեղնանքով

պատասխաններ իրեն, որ իր կասկածները ծիծաղելի են ու ո՛չ մի հիմք չունեն։ Այնքան սարսափելի էր այն, ինչ գիտեր նա, որ այժմ պատրաստ էր հավատալու ամեն բանի։ Բայց Աննայի վախեցած ու մռայլ դեմքի արտահայտությունն այժմ չէր խոստանում նույնիսկ խաբեություն։

— Գուցե, ես սխալվում եմ,—ասաց նա։—Այդ դեպքում ես խնդրում եմ՝ ներել ինձ։

— Ո՛չ, դուք չսխալվեցիք,—ասաց Աննան դանդաղ, հուսահատությամբ նայելով նրա սառը դեմքին։—Դուք չսխալվեցիք։ Ես հուսահատված էի և չէի կարող չհուսահատվել։ Ես լսում եմ ձեզ ու մտածում եմ նրա մասին։ Ես սիրում եմ նրան, ես նրա սիրուհին եմ, ես չեմ կարող տանել ձեզ, ես վախենում եմ ձեզանից, ես ատում եմ ձեզ... Արե՛ք ինձ ի՛նչ ուզում եք։

Եվ նա ընկնելով կառքի անկյունը, նա հեկեկաց, դեմքը ծածկելով ձեռքերով։ Ալեքսեյ Ալեքսանդրովիչը մնաց անշարժ ու չփոխեց իր ուղիղ հայացքի ուղղությունը։ Բայց նրա ամբողջ դեմքը հանկարծ ընդունեց մեռածի հանդիսավոր անշարժություն, և այդ արտահայտությունը չփոխվեց ամբողջ ժամանակ՝ մինչև կհասնեին ամառանոց։ Մոտենալով տանը, նա գլուխը ծռեց դեպի Աննան՝ էլի միևնույն արտահայտությամբ։

— Այսպե՛ս։ Բայց ես պահանջում եմ պահպանել վայելչության արտաքին պայմաններն այնքան ժամանակ,— նրա ձայնը դողաց,—մինչև ես ձեռք կառնեմ իմ պատիվն ապահովող միջոցները և դրանք կհայտնեմ ձեզ։

Նա դուրս եկավ առաջ և իջեցրեց կնոջը։ Սպասավորի ներկայությամբ նա սեղմեց Աննայի ձեռքը, նստեց կառքը ու գնաց Պետերբուրգ։

Նրանից անմիջապես հետո եկավ իշխանուհի Բետսիի լակեյը և բերեց Աննային մի տոմս.

«Ես մարդ ուղարկեցի Ալեքսեյի մոտ՝ իմանալու նրա առողջության մասին, և նա գրում է ինձ, որ ողջ ու առողջ է, բայց հուսահատ»։

«Ուրեմն, նա կգա,— մտածեց Աննան։— Ի՞նչ լավ արի ես, որ ամեն բան ասացի նրան»։

Աննան նայեց ժամացույցին։ Մնում էր դեռ երեք ժամ, ու

վերջին տեսակցության բոլոր մանրամասները հրդեհեցին նրա արյունը։

«Աստվա՛ծ իմ, ինչ լո՛ւյս է։ Դա սարսափելի է, բայց ես սիրում եմ տեսնել նրա դեմքը և սիրում եմ այս ֆանտաստիկ լույսը... Ամուսինս. ա՛խ, հա... է՛հ, փառք աստծո, որ նրա հետ վերջացավ ամեն բան»։

XXX

Ինչպես ամեն տեղ, ուր հավաքվում են մարդիկ, նույնպես և գերմանական փոքրիկ հանքային ջրերում, ուր եկել էին Շչերբացկիները, կատարվեց հասարակության սովորական այն բյուրեղացումը, որը նրա յուրաքանչյուր անդամի համար սահմանում է որոշակի ու անփոփոխ տեղ։ Ինչպես ջրի մասնիկը որոշակի և անփոփոխ կերպով ցրտին ստանում է ձյան բյուրեղի որոշ ձև, ճիշտ այդպես էլ հանքային ջրեր եկած յուրաքանչյուր նոր դեմք անմիջապես զետեղվում, հաստատվում է իրեն հատուկ տեղում։

Ֆյուրստ Շչերբացկին զամբ գեմալին ունդ թոխթեր թե՛ ըստ այն բնակարանի, որ զբաղեցրին, թե՛ ըստ անունի, թե՛ ըստ այն ծանոթների, որոնց նրանք գտան, անմիջապես բյուրեղացան իրենց որոշակի և իրենց հատկացված տեղում։

Հանքային ջրերում այդ տարի կար գերմանական մի իսկական ֆյուրստին, այդ պատճառով հասարակության բյուրեղացումը կատարվեց է՛լ ավելի եռանդուն կերպով։ Իշխանուհին անպայման կամեցավ ներկայացնել արքայազնուհուն իր աղջկան և հենց երկրորդ օրն իրագործեց այս ծիսակատարությունը։ Կիտին Փարիզից բերել տված իր շատ հասարակ, այսինքն՝ շատ շքեղ, ամառային զգեստով ցածր ու նազելիորեն ուներանս արեց։ Արքայազնուհին ասաց. «Հուսամ, որ վարդերը շուտով կվերադառնան այս լավիկ դեմքի վրա», և Շչերբացկիների համար անմիջապես հաստատուն կերպով սահմանվեցին կյանքի որոշակի ուղիներ, որոնցից չէր կարելի այլևս դուրս գալ։ Շչերբացկիները ծանոթացան և՛ անգլիական լեդիի ընտանիքի հետ, և՛ գերմանացի կոմ-

[1] Իշխան Շչերբացկին իր տիկնոջ և դստեր հետ։

սուհու հետ, և՛ վերջին պատերազմում վիրավորված նրա որդու հետ, և՛ շվեդացի գիտնականի հետ, և՛ M. Canut-ի ու նրա քրոջ հետ։ Բայց Շչերբացկիների գլխավոր հասարակությունն ակամա կազմվեց մոսկվացի մի տիկնոջից՝ Մարիա Եվգենևնա Ռտիշչևան իր աղջկա հետ, Կիտիի համար անհաճո, որովհետև նա ևս, ինչպես Կիտին, հիվանդացել էր սիրուց, ու մոսկվացի մի գնդապետից, որին Կիտին տեսել էր մանկությունից և ճանաչում էր մունդիրով ու էպոլետներով, և որն այստեղ իր փոքրիկ աչքերով ու բաց վզով, վրան գունավոր փողկապ, անսովոր ծիծաղելի էր և ձանձրալի նրանով, որ անկարելի էր օձիք աղատել նրանից։ Երբ այս բոլորն այդպես ամուր կերպով հաստատվեց, Կիտին սկսեց սաստիկ ձանձրանալ, մանավանդ որ իշխանը գնաց Կարլսբադ, և նա մնաց մենակ մոր հետ։ Նա չէր հետաքրքրվում նրանցով, որոնց ճանաչում էր, զգալով, որ նրանցից այլևս նոր ոչինչ սպասելի չէ։ Իսկ նրա հոգեկան գլխավոր հետաքրքրությունն այժմ հանքային ջրերում կազմում էին նրա դիտողություններն ու կռահումները այն մարդկանց մասին, որոնց չէր ճանաչում։ Իր բնավորության հատկությամբ Կիտին միշտ ենթադրում էր մարդկանց մեջ ամենագեղեցիկ գծեր, մանավանդ նրանց մեջ, որոնց չէր ճանաչում։ Եվ այժմ, ենթադրություններ անելով, թե ով՝ ո՛վ է, ի՛նչ հարաբերություններ կան նրանց միջև, ինչպիսի՛ մարդիկ են, Կիտին երևակայում էր իրեն ամենազարմանալի ու գեղեցիկ բնավորություններ և գտնում էր իր դիտողությունները հաստատող հատկանիշներ։

Այդ տեսակ մարդկանցից առանձնապես զբաղեցնում էր նրան մի ռուս աղջիկ, որ եկել էր հանքային ջրեր մի ռուս հիվանդ տիկնոջ հետ, մադամ Շտալ, ինչպես կանչում էին նրան ամենքը։ Մադամ Շտալը պատկանում էր բարձր հասարակության, բայց այնպես հիվանդ էր, որ մահ գալ չէր կարողանում և միայն բացառիկ լավ օրերին հայտնվում էր հանքային աղբյուրների մոտ, ձեռնասայլակով։ Բայց մադամ Շտալը ծանոթ չէր ռուսներից ո՛չ ոքի հետ՝ ո՛չ այնքան հիվանդության, որքան հպարտության պատճառով, ինչպես բացատրում էր իշխանուհին։ Ռուս աղջիկը խնամում էր մադամ Շտալին և, բացի դրանից, ինչպես նկատում էր Կիտին, մտերմանում էր բոլոր ծանր հիվանդների հետ, որոնք բավական շատ էին հանքային ջրերում, և ամենաբնական կերպով հոգ էր տանում նրանց մասին։ Այդ ռուս աղջիկը, Կիտիի դիտողություններով, մադամ Շտալի ազգականը չէր և միաժամանակ նրա վարձու օգնականը չէր։ Մադամ Շտալը նրան կանչում էր «Վարենկա», իսկ ուրիշները՝ m-lle Վարենկա»։ Էլ չխոսելով այն մասին, որ Կիտիին հետաքրքրում էին տիկին Շտալին և անծանոթ ուրիշ մարդկանց այդ աղջկա ցույց տված վերաբերմունքի հետ կապված դիտողությունները, Կիտին, ինչպես հաճախ պատահում է դա, անբացատրելի համակրանք էր տածում դեպի m-lle Վարենկան և զգում էր հանդիպական հայացքներից, որ ինքն էլ է դուր գալիս։

M-lle Վարենկան մի տեսակ՝ ո՛չ թե առաջին ջահելությունն անցած, այլ կարծես՝ ջահելություն չունեցող էակ էր. նրան կարելի էր տալ և՛ տասնինը, և՛ երեսուն տարի։ Եթե քննելու լինեիր նրա դիմագծերը, չնայած երեսի հիվանդոտ գույնին, նա ավելի շուտ գեղեցիկ էր, քան տգեղ։ Նա կլիներ նաև բարեկազմ, եթե չլիներ մարմնի չափազանց չորությունը և միջին հասակի համար անհամապատասխան մեծ գլուխը. բայց նա պիտի գրավիչ չլիներ տղամարդկանց համար։ Նա նման էր գեղեցիկ, թեև թերթիկներով դեռ լեցուն, բայց արդեն թոշնած, անհոտ ծաղկի։ Բացի դրանից, նա չէր կարող գրավիչ լինել տղամարդկանց համար նաև այն պատճառով, որ նրա մեջ պակասում էր այն, ինչ չափազանց շատ էր Կիտիի մեջ՝ կյանքի զուսպ կրակը և իր գրավչության գիտակցությունը։

Կարծես, նա միշտ զբաղված էր գործով, որի մասին կասկած լինել չէր կարող, այդ իսկ պատճառով թվում էր, թե չէր կարող հետաքրքրվել կողմնակի ո՛չ մի բանով։ Կիտիին նա առանձնապես գրավում էր իր այս հակադրությամբ։ Կիտին զգում էր, որ նրա մեջ, նրա կյանքի եղանակի մեջ ինքը կգտնի այն բանի նմուշը, որն այժմ որոնում էր տանջալից. կյանքի շահերի, կյանքի արժեքի նմուշը՝ տղամարդկանց նկատմամբ աղջկա նրբակիրթ, բայց Կիտիի համար զզվելի այն հարաբերությունից դուրս, որոնք այժմ պատկերանում էին նրան որպես գնորդների սպասող ապրանքի նողկալի ցուցահանդես։ Որքան ավելի էր դիտում Կիտին իր անծանոթ բարեկամուհուն, այնքան ավելի էր համոզվում, որ այդ աղջիկն

այն կատարյալ էակն է, ինչպես ինքը պատկերացնում էր նը-
րան, և այնքան ավելի էր ուզում ծանոթանալ նրա հետ։

Երկու աղջիկներն էլ օրը մի քանի անգամ պատահում
էին իրար, և ամեն հանդիպումին Կիտիի աչքերն ասում էին.
«Ո՞վ եք դուք, ի՞նչ եք դուք։ Չէ՞ որ իրոք դուք հիանալի էակ եք,
ինչպես ես երևակայում եմ ձեզ։ Բայց, ի սեր աստծո, մի՛
մտածեք,— ավելացնում էր նրա հայացքը,— որ ես թույլ
կտամ ինձ՝ զոռով ծանոթանալու ձեզ հետ։ Ես ուղղակի հիա-
նում եմ ձեզանով ու սիրում եմ ձեզ»։— «Ես էլ սիրում եմ ձեզ,
և դուք շատ, շատ լա՞վն եք։ Եվ է՛լ ավելի կսիրեի ձեզ, եթե
ժամանակ ունենայի»,— պատասխանում էր անծանոթ աղջկա
հայացքը։ Եվ իսկապես, Կիտին տեսնում էր, որ նա միշտ զբ-
աղված է. կամ ուղեկցում է ռուս ընտանիքի երեխաներին
հանքային ջրերից դեպի տուն, կամ պլեդ է տանում հիվանդ
կնոջ համար ու փաթաթում նրան, կամ աշխատում է զբա-
ղեցնել գրգռված հիվանդին, կամ մեկի հանձնարարությամբ
թխվածքներ է ընտրում և առնում սուրճի համար։

Շուտով, Շչերբացկիների գալուց հետո, առավոտները
հանքային ջրերում երևացին էլի երկու անձնավորություն, որ
իրենց վրա գարձրին ամենքի ո՛չ բարեկամական ուշադրու-
թյունը։ Դրանք էին՝ շատ բարձրահասակ, կորամեջք մի տղա-
մարդ, հսկայական ձեռքերով, իր հասակին անհամաչափ,
կարճ ու հնամաշ վերարկուով, սև, պարզամիտ ու միաժամա-
նակ սարսափելի աչքերով, և ծաղկահատ բարետեսիլ մի կին,
շատ վատ ու անճաշակ հագնված։ Կիտին հանձինս նրանց ճա-
նաչելով ռուսների, սկսեց արդեն իր երևակայության մեջ
կազմել նրանց մասին գեղեցիկ ու սրտառուչ սիրավեպ։ Բայց
իշխանուհին Kurliste-ից[1] իմանալով, որ դա Լևին Նիկոլայն
էր և Մարիա Նիկոլաևնան, բացատրեց Կիտիին, թե ինչպի-
սի՛ վատ մարդ էր այդ Լևինը, և չքացան բոլոր երազներն
երկու անձնավորության մասին։ Կիտիին այդ մարդիկ հան-
կարծ թվացին վերին աստիճանի անհաճո՝ ո՛չ այնքան այն
պատճառով, որ մայրն ասաց այդ, որքան այն պատճառով,
որ դա Կոնստանտինի եղբայրն էր։ Այդ Լևինը գլուխը ցնցելու

[1] Հանքային ջրեր եկած հիվանդների և այցելուների ցուցակը։

իր սովորությամբ, այժմ հարուցում էր նրա մեջ զզվանքի
անհաղթահարելի զգացում։

Կիտիին թվում էր, որ Նիկոլայ Լևինի մեծ, սարսափելի
աչքերում, որոնք համառորեն հետևում էին իրեն, արտահայտ-
վում էր ատելության ու ծաղրի զգացում, և Կիտին աշխատում
էր խուսափել նրան հանդիպելուց։

XXXI

Այդ օրը եղանակը վատ էր. ամբողջ առավոտ անձրև էր
գալիս, և հիվանդները հովանոցներով խոնվել էին ճեմասրա-
հում։

Կիտին քայլում էր մոր ու մոսկվացի գնդապետի հետ, որն
ուրախ պճնամոլում էր Ֆրանկֆուրտում գնված իր եվրոպա-
կան սյուրտուկով։ Նրանք քայլում էին ճեմասրահի մի կող-
մով, աշխատելով խուսափել Լևինից, որը քայլում էր մյուս
կողմում։ Վարենկան իր մութ գույնի զգեստով, ափերը ներքև
ծռած սև գլխարկով, քայլում էր կույր ֆրանսուհու հետ ճե-
մասրահի ամբողջ երկայնությամբ, և ամեն անգամ, երբ հան-
դիպում էր Կիտիին, նրանք նայում էին իրար բարեկամական
հայացքով։

— Մայրիկ, կարո՞ղ եմ խոսել նրա հետ,— ասաց Կիտին,
հետևելով իր անծանոթ բարեկամին ու նկատելով, որ նա մո-
տենում է աղբյուրին, և իրենք կարող են այնտեղ պատահել
իրար։

— Այո՛, եթե դու այդքան ուզում ես, ես նախ կիմանամ
նրա մասին և ինքս կմոտենամ,— պատասխանեց մայրը։—
Առանձին ի՞նչ ես գտել նրա մեջ։ Երևի, կոմպանյոնուհի է,
եթե ուզում ես, ես կծանոթանամ մադամ Շտալի հետ։ Ես
ճանաչում եմ նրա belle-soeur-ին[1],— ավելացրեց իշխանու-
հին, հպարտորեն բարձրացնելով գլուխը։

Կիտին գիտեր, իշխանուհին վիրավորված էր այն հանգա-
մանքից, որ տիկին Շտալը կարծես խուսափում էր նրա հետ
ծանոթանալուց։ Կիտին չէր պնդում։

[1] Բառացի նշանակում է լավ քույր։ Ֆրանսիացիներն այդպես են կո-
չում քենուն և հարսին։

— Ի՞նչ հիանալի, ի՞նչ հաճելի աղջիկ է,— ասաց Կիտին, նայելով Վարենկային այն ժամանակ, երբ նա բաժակը տալիս էր ֆրանսուհուն։— Տեսեք, թե ինչպե՞ս ամեն բան պարզ է, սիրագեղ։

— Ինձ համար շատ ծիծաղելի են քո engouements[1],— ո՛չ, ավելի լավ է՝ ետ դառնանք,— ավելացրեց նա, նկատելով իրենց ընդառաջ եկող Լևինին՝ իր տիկնոջ և գերմանացի բժշկի հետ, որին Լևինն ինչ-որ բան էր ասում բարձրաձայն ու բարկացած։

Նրանք շուռ էին գալիս, որ ետ գնան, երբ հանկարծ լսեցին ո՛չ թե բարձր խոսակցություն, այլ արդեն բղավոց։ Լևինը կանգ առած՝ գոռում էր, և բժիշկը նույնպես բորբոքվում էր։ Ամբոխը հավաքվում էր նրանց շուրջը։ Իշխանուհին Կիտիի հետ շտապ հեռացավ, իսկ գնդապետը միացավ ամբոխին, որ իմանա, թե ի՞նչ է պատահել։

Մի քանի րոպեից գնդապետը հասավ նրանց։

— Ի՞նչ կար այնտեղ,— հարցրեց իշխանուհին։

— Ամոթ ու խայտառակություն,— պատասխանեց գընդապետը։— Մարդ ուղղակի վախենում է արտասահմանում ռուսների պատահելուց։ Այդ բարձրահասակ պարոնը կռվեց բժշկի հետ, հանդուգն խոսքեր ասաց նրան, իբր նա այնպես չի բուժում, ինչպես պետք է, և սպառնաց փայտով։ Ուղղակի խայտառակություն։

— Ա՜խ, ի՞նչ անախորժ բան,— ասաց իշխանուհին։— Իսկ ինչո՞վ վերջացավ։

— Լավ է, որ միջամտեց այդ... այդ սնկաձև գլխարկով աղջիկը։ Ռուս է, կարծեմ,— ասաց գնդապետը։

— M-lle Վա՞րենկան,— ցնծագին հարցրեց Կիտին։

— Այո՛, այո՛։ Նա ամենքից ավելի շուտ մոտեցավ, բռնեց այդ պարոնին թևանցուկ ու տարավ։

— Ահա, մայրիկ,— ասաց Կիտին մորը,— դուք զարմանում եք, որ ես հիանում եմ նրանով։

Հետևյալ օրվանից, հետևելով իր անհայտ բարեկամուհուն, Կիտին նկատեց, որ m-lle Վարենկան Լևինի և նրա կնոջ հետ էլ արդեն գտնվում է այն հարաբերությունների մեջ, ինչպես իր մյուս protégés-ի[1]։ Նա մոտենում էր նրանց, խոսում էր, թարգմանչի դեր կատարում կնոջ համար, որը չգիտեր ո՛չ մի օտար լեզու։

Կիտին է՛լ ավելի սկսեց աղաչել մորը՝ թույլ տալ իրեն ծանոթանալու Վարենկայի հետ։ Եվ ինչքան էլ անհաճո էր իշխանուհու համար՝ տիկին Շտալի հետ կարծես ծանոթանալու ցանկությամբ անել առաջին քայլը, Շտալի, որը թույլ էր տալիս իրեն՝ հպարտանալու ինչ-որ բանով,— նա տեղեկություններ հավաքեց Վարենկայի մասին և իմանալով նրա մասին բոլոր մանրամասները, եզրակացրեց, որ այդ ծանոթության մեջ վատ ոչինչ չկար, թեպետ լավ բան էլ քիչ կար,— ինքն առաջինը մոտեցավ Վարենկային ու ծանոթացավ նրա հետ։

Ընտրելով այնպիսի պահ, երբ Կիտին գնաց դեպի աղբյուրը, իսկ Վարենկան կանգ առավ բուլկեգործի դիմաց, իշխանուհին մոտեցավ նրան։

— Թույլ տվեք՝ ծանոթանալու ձեզ հետ,— ասաց նա իր արժանավայել ժպիտով։— Իմ աղջիկը սիրահարված է ձեզ,— ասաց իշխանուհին։— Դուք երևի, չեք ճանաչում ինձ։ Ես...

— Դա ավելի քան փոխադարձ է, իշխանուհի,— շտապ պատասխանեց Վարենկան։

— Ի՞նչ բարի գործ արիք դուք երեկ մեր ողորմելի հայրենակցի համար,— ասաց իշխանուհին։

Վարենկան կարմրեց։

— Չեմ հիշում. կարծեմ, ես ոչինչ չարի,— ասաց նա։

— Ինչպե՞ս չէ, դուք ազատեցիք այդ Լևինին անախորժությունից։

— Այո՛, sa compagne-ն[2] կանչեց ինձ և, ես աշխատեցի հանգստացնել նրան. նա շատ հիվանդ է ու դժգոհ էր բժշկից։ Իսկ ես սովորություն ունեմ խնամք տանելու այդ հիվանդների վրա։

— Այո՛, ես լսել եմ, որ դուք ապրում եք Մենտոնում՝ ձեր մորաքրոջ, կարծեմ, m-me Շտալի հետ։ Ես ճանաչում եմ նրա belle-soeur-ին։

---

1 Հրապուրանք։

1 Հովանավորյալ։

2 Նրա ուղեկցուհին։

— Ո՛չ, նա իմ մորաքույրը չէ։ Ես կանչում եմ նրան maman, բայց ես նրան ազգական չեմ։ Նա դաստիարակել է ինձ,— նորից կարմրելով պատասխանեց Վարենկան։

Դա ասվեց այնպես հասարակ ձևով, այնպես համակրելի էր նրա դեմքի ճշմարտափայլ ու բաց արտահայտությունը, որ իշխանուհին հասկացավ, թե ինչո՛ւ իր Կիտին սիրել է այդ Վարենկային։

— Բայց ի՞նչ է ուզում անել այդ Լևինը,— հարցրեց իշխանուհին։

— Նա գնում է այստեղից,— պատասխանեց Վարենկան։

Այդ ժամանակ աղբյուրից գալիս էր Կիտին, փայլելով ուրախությունից, որ մայրը ծանոթացել է իր անհայտ բարեկամուհու հետ։

— Ահա, Կիտի, իրագործվեց քո մեծ ցանկությունը՝ ծանոթանալ m-lle...

— «Վարենկայի» հետ,— ժպտալով թելադրեց Վարենկան,— ինձ ամենքն այդպես են կանչում։

Կիտին կարմրեց ուրախությունից ու երկար ժամանակ լուռ սեղմում էր իր բարեկամուհու ձեռքը, որ չէր պատասխանում նրա սեղմումին, այլ անշարժ մնում էր նրա ափի մեջ։ Վարենկայի ձեռքը չէր պատասխանում, բայց դեմքը փայլում էր խաղաղ, ցնծագին, թեպետ և մի փոքր թախծոտ ժպիտով, որ բացում էր նրա մեծ, սակայն գեղեցիկ ատամները։

— Ես ինքս վազուց էի ուզում այդ,— ասաց նա։

— Բայց դուք այնպես զբաղվա՞ծ եք...

— Ա՜խ, ընդհակառակը, ես ոչնչով զբաղված չեմ,— պատասխանեց Վարենկան։ Սակայն հենց այդ րոպեին նա ստիպված էր թողնել իր նոր ծանոթներին, որովհետև երկու փոքրիկ ռուս աղջիկներ, մի հիվանդ մարդու դստրիկներ, վազում էին դեպի նա։

— Վարենկա, մայրիկը կանչում է,— բղավում էին նրանք։

Եվ Վարենկան գնաց նրանց ետևից։

XXXII

Այն մանրամասները, որ իշխանուհին իմացավ Վարենկայի անցյալի ու մադամ Շտալի հետ նրա հարաբերությունների, նաև մադամ Շտալի մասին, հետևյալն էին։

Մադամ Շտալը, որի համար ոմանք ասում էին, թե տանջել է իր ամուսնուն, իսկ ոմանք էլ ասում էին, իբր ամուսինն է տանջել նրան իր անբարոյական վարքուբարքով, միշտ հիվանդոտ և հիացմունքով լցված կին էր։ Երբ նա, ամուսնուց բաժանվելուց հետո, ծնեց իր առաջին երեխային, երեխան անմիջապես մեռավ, և տիկին Շտալի ազգականները, իմանալով նրա զգայունությունն ու վախենալով, չլինի թե այդ լուրն սպանի նրան, մեռած նորածնի տեղը դրին ուրիշ երեխա, վերցնելով արքունական խոհարարի աղջկան, որ ծնվել էր հենց նույն գիշեր, միևնույն տան մեջ՝ Պետերբուրգում։ Դա Վարենկան էր։ Հետագայում մադամ Շտալն իմացավ, որ Վարենկան իր աղջիկը չէ, բայց շարունակում էր դաստիարակել նրան, մանավանդ որ դրանից հետո շատ չանցած՝ վախճանվեցին Վարենկայի ազգականները։

Մադամ Շտալն արդեն տասը տարի էր, ինչ մշտապես ապրում էր արտասահմանում՝ հարավում, երբեք վեր չկենալով անկողնուց։ Եվ ոմանք ասում էին, որ մադամ Շտալն իր համար ստեղծել է բարեգործ, վերին աստիճանի կրոնասեր կնոջ հասարակական դիրք. ոմանք էլ ասում էին, թե նա իր հոգով այն բարձր-բարոյական էակն է, որ ապրում է մերձավորին բարիք անելու համար միայն, ինչպես ներկայանում էր ինքը։ Ոչ ոք չգիտեր, թե ի՞նչ դավանանքի է նա՝ կաթոլի՞կ, բողոքակա՞ն, թե՝ ուղղափառ. բայց մի բան անկասկած էր՝ նա բարեկամական կապեր ուներ բոլոր եկեղեցիների և դավանանքների ամենաբարձր ներկայացուցիչների հետ։

Վարենկան մշտապես ապրում էր նրա հետ արտասահմանում. և ամենքը, որ ճանաչում էին մադամ Շտալին, ճանաչում ու սիրում էին m-lle Վարենկային, ինչպես կանչում էին նրան։

Իմանալով այս բոլոր մանրամասները, իշխանուհին դատապարտելի ոչինչ չգտավ այն բանում, որ իր աղջիկը և Վարենկան մոտիկանան իրար. մանավանդ որ Վարենկայի դաստիարակությունը և շարժուձևերը շատ լավն էին. նա հիանալի խոսում էր ֆրանսերեն ու անգլերեն, իսկ որ գլխավորն է՝ հայտնեց տիկին Շտալի ափսոսանքը, թե հիվանդության պատճառով նա զրկված է իշխանուհու հետ ծանոթանալու հաճույքից։

Ծանոթանալով Վարենկայի հետ, Կիտին ավելի ու ավելի էր հրապուրվում իր բարեկամով և օրեցօր նոր արժանիքներ էր գտնում նրա մեջ։

Իշխանուհին, լսելով, որ Վարենկան լավ երգում է, խնդրեց նրան՝ գալ իրենց մոտ երեկոյան ու երգել։

— Կիտին նվագում է, մենք դաշնամուր ունենք. ճիշտ է, լավը չէ, բայց դուք մեզ մեծ բավականություն կպատճառեք,— ասաց իշխանուհին իր շինծու ժպիտով, որն այժմ առանձնապես անախորժ էր Կիտիի համար, որովհետև նա նկատեց, որ Վարենկան երգելու ցանկություն չուներ։ Սակայն, Վարենկան երեկոյան եկավ և բերեց իր հետ նոտաների մի տետր։ Իշխանուհին հրավիրեց Մարիա Եվգենիևնային աղջկա հետ ու գնդապետին։

Վարենկան կարծես բոլորովին անտարբեր էր այն հանգամանքի նկատմամբ, որ այդտեղ կային իրեն անծանոթ անձնավորությունները, և իսկույն մոտեցավ դաշնամուրին։ Նա չէր կարողանում նվագակցել իրեն, բայց շատ լավ կարդում էր նոտաները՝ երգելով։ Կիտին, որ լավ նվագում էր, կատարում էր դաշնամուրի բաժինը։

— Դուք արտասովոր տաղանդ ունեք,— ասաց նրան իշխանուհին, երբ Վարենկան հիանալի երգեց առաջին պիեսը։

Մարիա Եվգենիևնան աղջկա հետ շնորհակալություն էր հայտնում ու գովում նրան։

— Տեսեք,— ասաց գնդապետը, նայելով լուսամուտից դուրս,— ինչքա՞ն մարդ է հավաքվել ձեզ լսելու։

Իրոք, պատուհանի տակ հավաքվել էր բավական մեծ ամբոխ։

— Ես շատ ուրախ եմ, որ դա բավականություն է պատճառում ձեզ,— պարզորեն պատասխանեց Վարենկան։

Կիտին պարծանքով նայում էր իր բարեկամուհուն։ Նա հիանում էր և՛ նրա երգելու վարպետությամբ, և՛ ձայնով, և՛ նրա դեմքով, բայց ամենից ավելի հիանում էր նրա վարվելաձևով, որովհետև Վարենկան հայտնապես ոչինչ չէր մտածում իր երգելու մասին և բոլորովին անտարբեր էր գովեստների նկատմամբ. նա կարծես հարցնում էր միայն. արդյոք, պետք է էլի՞ երգել, թե՞ բավական է։

«Եթե նրա փոխարեն ես լինեի,— մտածում էր ինքն իրեն

Կիտին,— ինչպե՞ս կպարծենայի դրանով։ Ինչպե՞ս կուրախանայի, նայելով պատուհանների տակ կուտակված այդ ամբոխին։ Իսկ նրա համար բոլորովին միևնույն է։ Նրան դրդում է չմերժելու և maman-ին հաճույք պատճառելու ցանկությունը միայն։ Ի՞նչ կա նրա ներսում։ Ի՞նչն է ուժ տալիս նրան անտեսել, արհամարհել ամեն բան, լինել անկախ, հանգիստ։ Ինչպե՞ս կուզենայի ես իմանալ այդ և սովորել նրանից»,— մտածում էր Կիտին, զննելով այդ հանգիստ դեմքը։ Իշխանուհին խնդրեց Վարենկային՝ էլի երգել, և Վարենկան մի պիես էլ երգեց նույնպես անդորր, որոշակի ու գեղեցիկ, ուղիղ կանգնած դաշնամուրի մոտ և նրա վրա չափ տալով իր նիհար, թուխ ձեռքերով։

Տետրի մեջ հետևյալ պիեսը իտալական երգ էր։ Կիտին նվագեց նախաբանը և նայեց Վարենկային։

— Բաց թողեք այդ,— ասաց Վարենկան կարմրելով։

Կիտին վախեցած ու հարցական հառեց իր աչքերը Վարենկայի երեսին։

— Լավ, ուրիշը,— շտապ ասաց նա, շուռ տալով թերթերը և անմիջապես հասկանալով, որ այդ երգի հետ մի բան էր կապված։

— Ո՛չ,—պատասխանեց Վարենկան, ձեռքը դնելով նոտաների վրա և ժպտալով,—ո՛չ, երգենք այդ,— ու նա դա ևս երգեց նույնպես հանգիստ, սառնասրտորեն և լավ, ինչպես առաջինները։

Երբ նա վերջացրեց, ամենքը կրկին շնորհակալություն հայտնեցին նրան և գնացին թեյ խմելու։ Կիտին Վարենկայի հետ դուրս եկավ տան մոտ գտնվող այգին։

— Ճի՞շտ է, որ ձեր սրտում մի հիշողություն է կապված այդ երգի հետ,— ասաց Կիտին։— Մի՛ ասեք, թե ի՛նչ է,— շտապ ավելացրեց նա,— ասեք միայն, ճի՞շտ է։

— Ո՛չ, ինչո՞ւ։ Կասեմ,— պարզորեն ասաց Վարենկան և առանց սպասելու պատասխանի շարունակեց.— այո՛, դա հիշողություն է և մի ժամանակ ծանր հիշողություն։ Ես սիրում էի մի մարդու և այդ ռոմանսը երգում էի նրա համար։

Կիտին բաց, մեծ աչքերով, լուռ զորովանքով նայում էր Վարենկային։

— Ես սիրում էի նրան, նա էլ սիրում էր ինձ. բայց նրա

մայրը դեմ էր, և նա ամուսնացավ ուրիշի հետ։ Այժմ նա ապրում է մեզանից ո՛չ հեռու, և ես երբեմն տեսնում եմ նրան։ Դուք չէ՞ք կարծում, որ ես նույնպես ունեցել եմ սիրավեպ,— ասաց նա, ու նրա գեղեցիկ դեմքին հազիվ ցալքտեց այն կըրակը, որը, Կիտին զգում էր, մի ժամանակ լուսաշողում էր նրան ամբողջապես։

— Ինչպե՞ս չէի կարծում։ Եթե ես տղամարդ լինեի, ոչ ոքի չէի կարող սիրել՝ ձեզ ճանաչելուց հետո։ Ես չեմ հասկանում միայն, թե ինչպե՞ս կարող էր նա մորը գոհացնելու համար մոռանալ և դժբախտացնել ձեզ։ Նա սիրտ չի ունեցել։

— Օ՜, ո՛չ. նա շատ լավ մարդ է, և ես դժբախտ չեմ. ընդհակառակը, ես շատ երջանիկ եմ։ Ուրեմն, այսօր այլևս չենք երգի,— ավելացրեց նա, դիմելով դեպի տուն։

— Ի՜նչ լավն եք դուք, ի՜նչ լավն եք դուք,— բացականչեց Կիտին և կանգնեցնելով նրան, համբուրեց։— Եթե ես կարողանայի գեթ մի փո՜քր նմանվել ձեզ։

— Ի՜նչ կարիք ունեք դուք նմանվելու որևէ մեկին։ Դուք լավ եք այնպես, ինչպես կաք,— ժպտալով իր հեզ ու հոգնած ժպիտով, ասաց Վարենկան։

— Ո՛չ, ես բոլորովին լավը չեմ։ Ասեք ինձ... Կացեք, եկեք նստենք,— ասաց Կիտին, նստեցնելով նրան նստարանին՝ իր կողքին։—Ասեք, մի՞թե վիրավորական չէ, որ մարդն արհամարհեց ձեր սերը, չուզեց...

— Նա չարհամարհեց. ես հավատում եմ, որ նա սիրում էր ինձ, բայց նա հնազանդ որդի էր...

— Այո՛, բայց եթե նա ո՛չ թե մոր կամքով, այլ ուղղակի ի՞նքը...—ասում էր Կիտին, զգալով, որ մատնեց իր գաղտնիքը, և որ ամոթի կարմրությունից վառվող իր դեմքն արդեն մերկացրեց իրեն։

— Այդ դեպքում՝ նա վատ վարված կլիներ, և ես չէի խղճա նրան,— պատասխանեց Վարենկան, պարզ հասկանալով, որ խոսքը վերաբերում է ո՛չ թե իրեն, այլ Կիտիին։

— Բայց վիրավորա՜նքը,— ասաց Կիտին։— Վիրավորանքը չի՛ կարելի մոռանալ, չի՛ կարելի մոռանալ,— ասում էր նա, հիշելով իր հայացքը վերջին պարահանդեսում, երբ դադարեց երաժշտությունը։

— Ի՜նչ վիրավորանք, չէ՞ որ դուք վատ չվարվեցիք։

— Վատից ավելի վատ,— ամոթ է։

Վարենկան գլուխը շարժեց և ձեռքը դրեց Կիտիի ձեռքին։

— Իսկ ի՞նչն է ամոթ,— ասաց նա։— Չէ՞ որ դուք չէիք կարող ասած լինել այն մարդուն, որն անտարբեր է դեպի ձեզ, թե սիրում եք նրան։

— Իհարկե, ոչ. ես երբեք չեմ ասել ո՛չ մի խոսք. բայց նա գիտեր։ Ո՛չ, ո՛չ. կան հայացքներ, կան շարժուձևեր։ Եթե ես ապրեմ հարյուր տարի, չեմ մոռանա։

— Հապա էլ ի՞նչ։ Ես չեմ հասկանում։ Էականն այն է, արդյոք սիրո՞ւմ եք դուք նրան այժմ, թե ոչ,— ասաց Վարենկան, ամեն բան անվանելով իր անունով։

— Ես ատում եմ նրան։ Ես չեմ կարող ներել ինձ։

— Սակայն ի՞նչը։

— Ամոթը, վիրավորանքը։

— Ա՜խ, եթե ամենքն այնպես լինեին, ինչպես դուք, դյուրազգաց,— ասաց Վարենկան։— Չկա աղջիկ, որ այդ բանն զգացած չլինի։ Եվ այս բոլորն այնպես կարևոր չէ։

— Հապա ի՞նչն է կարևորը,— հարցրեց Կիտին, հետաքրքիր զարմանքով դիտելով նրա դեմքը։

— Ա՜խ, շատ բան կա կարևոր,—ժպտալով ասաց Վարենկան։

— Այսինքն՝ ի՞նչը։

— Ա՜խ, շատ բան կա ավելի կարևոր,— պատասխանեց Վարենկան, չիմանալով թե ի՞նչ ասի։ Բայց այդ ժամանակ պատուհանից լսվեց իշխանուհու ձայնը.

— Կիտի, ցուրտ է. կա՛մ վերցրու շալը, կա՛մ եկ սենյակ։

— Իսկապես, ժամանակն է,—ասաց Վարենկան, կանգնելով։—Ես դեռ պիտի գնամ m-me Berthe-ի մոտ. նա խընդրել է ինձ։

Կիտին բռնել էր նրա ձեռքը և բուռն հետաքրքրությամբ ու աղերսանքով հարցնում էր նրան իր հայացքով. «Հապա ի՞նչն է, ի՞նչն է այդ ամենակարևորը, որ տալիս է այդպիսի հանգստություն։ Դուք գիտեք, ասե՛ք ինձ»։ Բայց Վարենկան չէր հասկանում նույնիսկ այն, ինչի մասին հարցնում էր նրան Կիտիի հայացքը։ Նա հիշում էր միայն այն, որ ինքն այսօր դեռ պիտի գնա m-me Berthe-ի մոտ և տուն հասնի maman-ի թեյի ժամանակ, ժամը 12-ի մոտերը։ Նա մտավ սենյակ,

հավաքեց նոտաները և հրաժեշտ տալով ամենքին, պատրաստվում էր գուրս գնալ։

— Թույլ տվեք ուղեկցել ձեզ,— ասաց գնդապետը։

— Հա, իհա՞րկե, ինչպե՞ս կարելի է այժմ՝ գիշեր ժամանակ մենակ գնալ,— հաստատեց իշխանուհին— Ես կուղարկեմ ձեզ հետ Թեկուզ Գարաշային։

Կիտին տեսնում էր, որ Վարենկան դժվարությամբ է զսպում իր ծպիտը, լսելով, թե իրեն պետք է ուղեկցել։

— Ո՛չ, ես միշտ մենակ եմ գնում և երբեք ինձ հետ ոչինչ չի պատահում,— ասաց նա, վերցնելով գլխարկը։ Եվ մեկ էլ համբուրելով Կիտիին ու այդպես էլ չասելով, թե ի՞նչն է կարևորը, արագ քայլերով, նոտաների տետրը թևի տակ, նա անհայտացավ ամառային գիշերվա կիսախավարի մեջ, տանելով իր հետ իր գաղտնիքը, թե ինչն է կարևոր և ինչն է տալիս նրան այդ նախանձելի հանգստությունն ու արժանապատվությունը։

XXXIII

Կիտին ծանոթացավ նաև տիկին Շտալի հետ, և այդ ծանոթությունը, Վարենկայի բարեկամության հետ միասին, ո՛չ միայն մեծ ազդեցություն ունեցավ նրա վրա, այլև սփոփում էր նրա վիշտը։ Այդ սփոփանքը նա գտավ այն բանում, որ շնորհիվ այդ ծանոթության, նրա առաջ բացվեց մի բոլորովին նոր աշխարհ, նրա անցյալի հետ ո՛չ մի կապ չունեցող, վսեմ ու գեղեցիկ աշխարհ, որի բարձրությունից կարելի էր հանգիստ նայել այդ անցյալին։ Նրա համար հայտնաբերվեց այն, որ բացի բնազդային կյանքից, որին մինչև այդ անձնատուր էր լինում Կիտին, կար նաև հոգևոր կյանք։ Այդ կյանքը հայտնաբերվում էր կրոնի միջոցով, բայց այնպիսի կրոնի, որին ամենևին նման չէր մանկուց Կիտիի իմացած այն կրոնը, որն արտահայտվում էր քահանայի հետ սլավոնական տեքստերն անգիր անելու և պատարագի ու երեկոյան ժամերգության մեջ՝ այրիանոցում, որտեղ կարելի էր հանդիպել ծանոթների. դա մի շարք գեղեցիկ մտքերի ու զգացումների հետ կապված վսեմ, խորհրդավոր կրոն էր, որին ո՛չ միայն կարելի էր

հավատալ, որովհետև այդպես հրամայված է, այլ, որը կարելի էր սիրել։

Կիտին այս բոլորն իմացավ ո՛չ խոսքերից։ Մադամ Շտալը խոսում էր Կիտիի հետ, որպես սիրելի երեխայի, որով մարդ հիանում է, ինչպես իր երիտասարդության հիշողությամբ, և մի անգամ միայն հիշատակեց այն մասին, որ մարդկային բոլոր դառնությունների մեջ սփոփանք տալիս է սերն ու հավատը միայն և որ դեպի մեզ Քրիստոսի տածած կարեկցության համար չկան չնչին, աննշան դառնություններ, և անմիջապես խոսքը փոխեց, սկսեց խոսել ուրիշ բանի մասին։ Բայց Կիտին նրա յուրաքանչյուր խոսքի մեջ, յուրաքանչյուր շարժման մեջ, նրա յուրաքանչյուր երկնային, ի՛նչպես ասում էր Կիտին, հայացքի մեջ, մանավանդ նրա կյանքի ամբողջ պատմության մեջ, որը գիտեր Վարենկայի միջոցով,— իմանում էր այն, «ինչը կարևորն էր» և ինչը մինչ այդ չգիտեր նա։

Բայց որքան էլ վեհ էր տիկին Շտալի բնավորությունը, որքան էլ հուզիչ էր նրա ամբողջ պատմությունը, որքան էլ վսեմ ու քնքուշ էր նրա խոսվածքը, Կիտին ակամա նկատեց նրա մեջ այնպիսի գծեր, որ շփոթեցնում էին իրեն։ Նա նկատեց, որ հարցնելով իր (Կիտիի) ազգականների մասին, մադամ Շտալը ժպտաց արհամարհալից, մի բան, որ հակառակ էր քրիստոնեական բարությանը։ Նկատեց նույնպես, որ երբ ինքը տեսավ նրա մոտ կաթոլիկ քահանային, մադամ Շտալը խնամքով պահում էր իր դեմքը լուսամփոփի ստվերի մեջ ու ժպտում էր առանձնահատուկ կերպով։ Ինչքան էլ չնչին էին այդ երկու դիտողությունները, այնուամենայնիվ շփոթեցնում էին նրան, և նա կասկած ուներ մադամ Շտալի նկատմամբ։ Բայց դրա փոխարեն Վարենկան, միայնակ, առանց ազգականների, առանց բարեկամների, սրտում տխուր հիասթափություն, ոչ մի բան չուզող, ոչ մի բան չխնայող, այն կատարելությունն էր, որի մասին Կիտին թույլ էր տալիս իրեն երազել միայն։ Վարենկայի օրինակով նա հասկացավ, որ հերիք էր միայն մոռանալ ինքն իրեն ու սիրել ուրիշներին, և կլիներ հանգիստ, երջանիկ ու հիասքանչ։ Եվ Կիտին ուզում էր լինել այդպես։ Այժմ պարզ հասկանալով, թե ի՞նչն էր ամենակարևորը, Կիտին ոչ միայն հիանում էր դրանով, այլ

անմիջապես ամբողջ հոգով անձնատուր եղավ այդ նոր, իր համար հայտնաբերված կյանքին։ Վարենկայի պատմածների համեմատ, թե ի՞նչ էին անում մադամ Շտալը և ուրիշները, որոնց անունը տալիս էր նա, Կիտին արդեն կազմեց իր համար իր ապագա կյանքի ծրագիրը։ Կիտին նույնպես, ինչպես մադամ Շտալի քրոջ աղջիկը՝ Aline-ը, որի մասին շատ բան էր պատմել Վարենկան, որտեղ էլ լինի, կորոնի-կգտնի դժբախտներին, կօգնի նրանց հնարավորին չափով, կբաժանի նրանց ավետարան, հիվանդների, հանցագործների և մեռնողների համար կկարդա ավետարան։ Հանցագործների համար ավետարան կարդալու միտքը, ինչպես անում էր Aline-ը, առանձնապես հրապուրում էր Կիտիին։ Սակայն այս բոլորը գաղտնի տենչանք էր, երազ, որի մասին Կիտին ոչինչ չէր ասում ո՛չ մորը, ո՛չ Վարենկային։

Բայց, սպասելով իր ծրագրերը մեծ չափերով կատարելու ժամանակին, Կիտին այժմ էլ՝ հանքային ջրերում, որտեղ կային այնքան հիվանդներ ու դժբախտ մարդիկ, հեշտությամբ գտավ իր նոր կանոնները կիրառելու առիթ, նմանվելով Վարենկային։

Սկզբում իշխանուհին նկատում էր միայն, որ Կիտին գտնվում է իր engouement-ի ուժեղ ազդեցության տակ, ինչպես անվանում էր նա, նկատի ունենալով տիկին Շտալին ու մանավանդ Վարենկային։ Նա տեսնում էր, որ Կիտին ոչ միայն հետևում, նմանվում է Վարենկային՝ նրա գործունեության մեջ, այլև ակամա նմանվում է նրան քայլելու, խոսելու և աչքերը կկոցելու եղանակով։ Բայց հետո իշխանուհին նկատեց, որ իր աղջկա մեջ, այդ հիացմունքից անկախ, կատարվում է ինչ-որ լուրջ հոգեկան հեղաշրջում։

Իշխանուհին տեսնում էր, որ Կիտին երեկոները կարդում է մադամ Շտալից նվեր ստացած ֆրանսերեն ավետարան, մի բան, որ առաջ չէր անում. տեսնում էր, որ Կիտին խուսափում է աշխարհիկ ծանոթություններից ու մոտիկանում է Վարենկայի հովանավորության տակ գտնվող հիվանդներին, և մանավանդ հիվանդ նկարիչ Պետրովի աղքատ ընտանիքին։ Կիտին, ըստ երևույթին, պարծենում էր նրանով, որ այդ ընտանիքում կատարում էր գթության քրոջ պարտավորություններ։ Այս բոլորը լավ էր. և իշխանուհին ոչինչ դեմ չու-

ներ, մանավանդ որ Պետրովի կինը միանգամայն կարգին կին էր, և որ արքայազնուհին նկատելով Կիտիի գործունեությունը՝ գովում էր նրան, անվանելով մխիթարիչ հրեշտակ։ Այս բոլորը կլիներ շատ լավ, եթե չլիներ չափազանցությունը։ Իսկ իշխանուհին տեսնում էր, որ իր աղջիկն ընկնում է ծայրահեղության մեջ, և նա ասում էր նրան այդ։

— Il ne faut jamais rien outrer[1], — ասում էր նա նրան։

Բայց աղջիկը ոչինչ չէր պատասխանում. նա միայն մտածում էր իր հոգու խորքում, որ չի կարելի խոսել ավելորդության մասին քրիստոնեության գործում։ Ի՞նչ ավելորդություն կարող է լինել այն ուսմունքին հետևելու մեջ, որը հրամայում է դեմ անել մյուս այտը, երբ խփում են մեկին, և տալ շապիկը, երբ հանում են բաճկոնը։ Բայց իշխանուհուն դուր չէր գալիս այդ ավելորդությունը, ավելի ևս դուր չէր գալիս այն, որ նա զգում էր, Կիտին չէր ուզում բացել նրա առաջ իր ամբողջ հոգին։ Իրոք, Կիտին թաքցնում էր մորից իր նոր հայացքներն ու զգացումները։ Նա թաքցնում էր դրանք ո՛չ այն պատճառով, որ չէր հարգում, չէր սիրում մորը, այլ միայն այն պատճառով, որ դա իր մայրն էր։ Նա ամեն մարդու առաջ բաց կաներ իր զգացումներն ավելի շուտ, քան մորը։

— Վաղուց է, ինչ Աննա Պավլովնան չի եղել մեզ մոտ,— ասաց իշխանուհին մի անգամ Պետրովայի մասին։— Ես հրավիրեցի նրան։ Իսկ նա կարծես մի բանից դժգոհ է։

— Ո՛չ, ես չեմ նկատել, maman,— բռնկվելով ասաց Կիտին։

— Վաղո՞ւց է, որ դու չես եղել նրանց մոտ։

— Մենք պատրաստվում ենք վաղը գնալ լեռներն զբոսանքի,— պատասխանեց Կիտին։

— Ի՞նչ կա որ, գնացեք, —ասաց իշխանուհին, զննելով աղջկա շփոթված դեմքը և աշխատելով հասկանալ նրա շփոթվելու պատճառը։

Հենց այդ օրը Վարենկան եկավ ճաշի ու հաղորդեց, որ Աննա Պավլովնան փոխել է վաղը լեռներ գնալու միտքը։ Եվ իշխանուհին նկատեց, որ Կիտին նորից կարմրեց։

[1] Երբեք պետք չէ ո՛չ մի բան չափազանցել։

— Կիտի, քո և Պետրովների մեջ, արդյոք, անախորժություն չի՞ պատահել,— հարցրեց իշխանուհին, երբ նրանք մնացին մենակ։— Ինչո՞ւ նա այլևս երեխաներին չի ուղարկում այստեղ և չի գալիս մեզ մոտ։

Կիտին պատասխանեց, որ իրենց մեջ ոչինչ չի եղել և որ ինքը բացարձակապես չի հասկանում, թե ինչո՞ւ Աննա Պավլովնան կարծես դժգոհ է իրենից։ Կիտիի ասածը միանգամայն ճիշտ էր։ Նա չգիտեր իր նկատմամբ Աննա Պավլովնայի փոխվելու պատճառը, բայց կռահում էր։ Նա ենթադրում էր այնպիսի բան, որը չէր կարող ասել մորը, որը չէր ասում և իրեն։ Դա մեկն էր այն բաներից, որ մարդ գիտե, սակայն չի կարող ասել նույնիսկ ինքն իրեն. այնպես սոսկալի և ամոթալի է, եթե մարդ սխալվի։

Նորից ու նորից Կիտին մտմտում էր իր հիշողության մեջ իր վերաբերմունքը, իր հարաբերությունն այդ ընտանիքի հետ։ Նա մտաբերում էր այն միամիտ ուրախությունը, որ արտահայտվում էր Աննա Պավլովնայի բարեհամբույր կլոր դեմքին՝ իրենց հանդիպումների ընդեներին. մտաբերում էր իրենց գաղտնի խոսակցությունները հիվանդի մասին, իրենց «դավադրությունները»՝ ետ պահելու նրան այն աշխատանքից, որն արգելված էր նրան և տանելու նրան ըզբոսանքի. մտաբերում էր կրտսեր երեխայի մտերմական կապը, թե ինչպես նա իրեն կանչում էր «իմ Կիտի» և չէր ուզում պառկել քնելու առանց իրեն։ Ինչպես լա՞վ էր ամեն ինչ։ Հետո նա մտաբերեց Պետրովի լղար-նիհար կերպարանքը, երկար վզով, շագանակագույն սյուրտուկով, նրա գանգրվող նոսր մազերը, նրա հարցական, Կիտիի համար սկզբներում սարսափելի՝ կապույտ աչքերը և նրա հիվանդագին ջանքերը՝ առույգ ու աշխույժ երևալու Կիտիի ներկայությամբ։ Նա մտաբերում էր իր ջանքերն սկզբներում՝ հաղթահարելու այն զարշանքը, որ տածում էր դեպի Պետրովը, ինչպես նաև դեպի բոլոր թոքախտավորները, հիշում էր, ինչպես աշխատում էր ինքը մտածել, թե ի՞նչ ասի նրան։ Կիտին մտաբերում էր այն վարանոտ, գորովալից հայացքը, որով նա նայում էր իրեն, մտաբերում էր կարեկցության ու անհարմարության այն տարօրինակ զգացումը և հետո իր բարերարության՝ գիտակցությունը, որ համակում էր իրեն այդ պահերին։ Ինչպես լա՞վ էր այդ բոլորը։ Բայց այդ բոլորն սկզբներումն էր։ Իսկ այժմ, մի քանի օր առաջ, ամեն ինչ հանկարծ փչացավ։ Աննա Պավլովնան կեղծապատիր դիմավորում էր Կիտիին և անընդհատ դիտում էր նրան ու իր ամուսնուն։

Մի՞թե Կիտիին տեսնելիս Պետրովի արտահայտած այդ հուզիչ ուրախությունն էր Աննա Պետրովնայի սառնության պատճառը։

«Այո՛,— մտաբերում էր Կիտին,— Աննա Պավլովնայի մեջ կար անբնական մի բան և բոլորովին նման չէր նրա բարությանը, երբ երեք օր առաջ նա ասաց սրտնեղությամբ։

— Ամբողջ ժամանակ սպասում էր ձեզ, չէր ուզում առանց ձեզ սուրճ խմել, թեպետ սաստիկ թուլացել էր»։

«Այո՛, գուցե Աննա Պավլովնայի համար անախորժ էր և այն, որ ես պլեդը տվի ամուսնուն։ Այս բոլորն այնպես հասարակ է, պարզ. բայց նա դա ընդունեց այնպես շփոթված և այնքան երկար ժամանակ շնորհակալություն էր հայտնում, որ ես էլ անհարմար զգացի։ Եվ հետո իմ այդ պորտրեն, որ այնպես լավ նկարեց նա։ Իսկ որ գլխավորն է՝ այդ հայացքը, շփոթված ու քնքո՞ւշ... Այո՛, այո՛, դա այդպե՞ս է,— սոսկումով կրկնում էր Կիտին։— Ո՛չ, դա չի կարող լինել, չպետք է լինի։ Նա այնպես խեղճ է», ասում էր դրանից հետո Կիտին ինքն իրեն։

Այդ կասկածը թունավորում էր նրա նոր կյանքի հրապույրը։

XXXIV

Իշխան Շչերբացկին, որ Կարլսբադից հետո գնացել էր Բադեն և Կիսսինգեն՝ ռուս ծանոթների մոտ՝ լցվելու ռուսական ոգով, ինչպես ինքն էր ասում, վերադարձավ յուրայինների մոտ հանքային ջրերի կուրսը վերջանալուց առաջ։

Իշխանի և իշխանուհու հայացքները բոլորովին հակառակ էին իրար՝ արտասահմանյան կյանքի վերաբերյալ։ Իշխանուհու տեսակետով, ամեն բան հիանալի էր և, չնայած իր կայուն դիրքին ռուս հասարակության մեջ, արտասահմանում աշխատում էր նմանվել եվրոպացի տիկնոջ, որ այդ-

պես չէր,— որովհետև նա ռուս տոմիկ կին էր,— ուստի, ձևանում էր, և դրանից մասամբ անհարմար էր զգում իրեն։ Իսկ իշխանի հայեցակետով, ընդհակառակն, արտասահմանում ամեն բան վատ էր. եվրոպական կյանքը ճնշում էր նրան, նա պահում էր իր ռուսական սովորությունները և դիտմամբ աշխատում էր ցույց տալ իրեն արտասահմանում ավելի պակաս եվրոպացի, քան է՛ր իրապես։

Իշխանը վերադարձավ նիհարած, այտերի վրա կաշու կախ ընկած պարկեր, բայց շատ լավ, ուրախ տրամադրությամբ։ Նրա տրամադրությունն ավելի ևս բարձրացավ, երբ տեսավ Կիտիին բոլորովին կազդուրված։ Տիկին Շտալի ու Վարենկայի հետ Կիտիի բարեկամության լուրը և իշխանուհու հաղորդած դիտողությունները Կիտիի մեջ տեղի ունեցած ինչ-որ փոփոխության մասին, շփոթեցրին իշխանին ու հարուցին նրա մեջ խանդի սովորական զգացում այն ամենի նկատմամբ, ինչը հրապուրում էր իր աղջկան, առանց իր գիտության, և երկյուղ պատճառեցին նրան, չլինի թե աղջիկը դուրս գա իր ազդեցությունից ու ընկնի իրեն անմատչելի ինչ-որ շրջան։ Բայց այդ անհաճո տեղեկությունները սուղվեցին այն բարեսրտության և ուրախության ծովում, որ միշտ կային նրա մեջ ու առանձնապես ուժեղացել էին Կարլսբադի ջրերի շնորհիվ։

Իր գալու հետևյալ օրը իշխանն իր երկար վերարկուով, իր ռուսական կնճիռներով ու փոքր-ինչ ուռած այտերով, որոնց նեցուկ էր օսլայած օձիքը,— ամենաուրախ տրամադրությամբ գնաց աղջկա հետ դեպի հանքաջրերը։

Հրաշագեղ առավոտ էր. մաքուր, պարտեզներով ուրախ տները, կարմրաթուշ, կարմրաձեռք, գարեջրից գիրացած խինդ ու խնդումով աշխատող գերմանացի սպասուհիների տեսքը և պայծառ արևը սիրտ էին ուրախացնում։ Բայց որքան ավելի էին մոտենում նրանք հանքաջրերին, այնքան ավելի հաճախ էին պատահում հիվանդներ, որոնց տեսքը թվում էր է՛լ ավելի ողբալի գերմանական բարեկարգ կյանքի սովորական պայմաններում։ Կիտիին այլևս չէր զարմացնում այդ հակադրությունը։ Պայծառ արևը, կանաչի ուրախ փայլը, երաժշտության հնչյունները նրա համար բնական շրջանակն էին այս բոլոր ծանոթ դեմքերի ու դեպի

լավը կամ վատը փոփոխությունների, որոնց հետևում էր նա. բայց իշխանի համար հունիսյան առավոտվա լույսն ու փայլը և մոդա դարձած ուրախ վալսը նվագող նվագախմբի հնչյունները, ու մանավանդ քաջառողջ սպասուհիների տեսքը, թվում էին մի տեսակ անվայել և անճոռնի բան՝ Եվրոպայի բոլոր ծայրերից հավաքված ու տխուր շարժվող այս մեռելների կողքին։

Չնայած իր զգացած հպարտության ու կարծես թե իր երիտասարդության վերադարձին, երբ իր սիրելի դուստրը գնում էր իր հետ թևանցուկ, նա այժմ կարծես անհարմար էր զգում իրեն և ամաչում էր իր ուժեղ քայլվածքի համար, իր խոշոր, ճարպակալած մարմնի անդամների համար։ Նա իրեն համարյա զգում էր այնպես, ինչպես մերկ մարդը հասարակության մեջ։

— Ներկայացրու, ներկայացրու ինձ քո նոր բարեկամներին,— ասում էր նա աղջկան, արմունկով սեղմելով նրա ձեռքը։— Ես սիրեցի նաև քո այս գարշելի Սոդենը նրա համար, որ նա այդպես ապաքինեց քեզ։ Միայն տխո՞ւր է, տխուր է ձեզ մոտ։ Ո՞վ է դա։

Կիտին անվանում էր այն ծանոթ և անծանոթ դեմքերը, որոնց պատահում էին։ Այգու մուտքի մոտ նրանք պատահեցին կույր m-me Berthe-ին՝ իր ուղեկցուհու հետ, և իշխանն ուրախացավ, տեսնելով պառավ ֆրանսուհու գորովալից արտահայտությունը, երբ նա լսեց Կիտիի ձայնը։ Նա անմիջապես, ֆրանսիական չափազանց սիրալիրությամբ խոսեց իշխանի հետ, գովելով նրան, որ այդպիսի լավ աղջիկ ունի, և Կիտիի երեսին նրան երկինք հանելով՝ անվանեց նրան գանձ, գոհար ու մխիթարիչ-հրեշտակ։

— Ուրեմն՝ սա երկրորդ հրեշտակն է,— ասաց իշխանը ժպտալով։— Համար առաջին հրեշտակ Կիտին անվանում է m-lle Վարենկային։

— Oh! m-lle Վարենկան իսկական հրեշտակ է, allez[1],— վրա բերեց m-me Berthe-ը։

Ճեմասրահում նրանք պատահեցին նաև Վարենկային։ Նա շտապ ընդառաջ էր գալիս նրանց, ձեռքին մի էլեգանտ կարմիր պայուսակ։

[1] Ի՞նչ խոսք։

— Ահա եկավ և հայրիկս,— ասաց նրան Կիտին։

Վարենկան արեց, ինչպես անում էր ամեն բան պարզ ու բնական կերպով, մի շարժում, որ միջին տեղ էր բռնում գլխաողջույնի և ռեverանսի միջև, ու անմիջապես սկսեց խոսել իշխանի հետ, ինչպես խոսում էր ամենքի հետ, առանց քաշվելու և պարզ։

— Իհարկե, ես գիտեմ ձեզ, լավ գիտեմ,— ասաց նրան իշխանը ժպտալով, որից Կիտին ուրախությամբ իմացավ, որ իր բարեկամուհին դուր եկավ հորը։— Ո՞ւր եք այդպես շտապում։

— Maman այստեղ է,— ասաց Վարենկան, դիմելով Կիտիին։— Նա ամբողջ գիշեր չի քնել, և բժիշկը խորհուրդ տվեց նրան՝ հեռանալ այստեղից։ Ես աշխատանք եմ տանում նրա համար։

— Ուրեմն սա համար առաջին հրեշտակն է,— ասաց իշխանը, երբ Վարենկան հեռացավ։

Կիտին տեսավ, որ կարծես հայրն ուզում է ծիծաղել Վարենկայի վրա, բայց նա չէր կարող այդ անել, որովհետև Վարենկան դուր եկավ նրան։

— Ահա կտեսնենք քո բոլոր բարեկամներին,— ավելացրեց նա,— նաև մադամ Շտալին, եթե շնորհ անի ճանաչելու ինձ։

— Իսկ մի՞թե դու ճանաչում էիր նրան,— հարցրեց Կիտին վախի զգացումով, նկատելով իշխանի աչքերում վառվող հեգնանքի հուրը, երբ խոսք եղավ մադամ Շտալի մասին։

— Ճանաչում էի նրա ամուսնուն և մի քիչ էլ իրեն, մինչ նրա պիետիստուհի գրվելը։

— Ի՞նչ բան է պիետիստուհի, հայրիկ,— հարցրեց Կիտին, արդեն վախեցած այն բանից, որ անուն ուներ այն, ինչը նա այնպես բարձր էր գնահատում տիկին Շտալի մեջ։

— Ես ինքս էլ լավ չգիտեմ։ Գիտեմ միայն, որ նա ամեն բանի համար գոհունակություն է հայտնում աստծուն. գոհունակություն՝ դժբախտության համար, գոհունակություն՝ որ մեռավ իր ամուսինը։ Եվ ծիծաղելի է ստացվում, որովհետև նրանք հաշտ չէին ապրում։ Ո՞վ է դա։ Ի՞նչ ողորմելի դեմք,— հարցրեց իշխանը, նկատելով նստարանին նստած գարձրահասակ հիվանդ մի տղամարդու, շաղոնակապույն վերարկուով և ապիտակ շալվարով, որ տարօրինակ ծալքեր էր կազմել մսից զուրկ նրա ոտքերի վրա։ Այդ պարոնը բարձրացրեց իր ծռոտած գլխարկը գանգրվող նոսր մազերից վեր, բացելով իր լայն, գլխարկից հիվանդագին կարմրած ճակատը։

— Դա Պետրովն է, նկարիչ է,— պատասխանեց Կիտին կարմրելով։— Իսկ այն էլ նրա կինն է,— ավելացրեց նա, ձշելով Աննա Պավլովնային. սա կարծես՝ դիտմամբ, ճիշտ այն ժամանակ, երբ նրանք մոտենում էին, գնաց երեխայի ետևից, որը փախչում էր ճանապարհով։

— Ի՞նչ ողորմելին է, և ի՞նչ համակրելի դեմք ունի,— ասաց իշխանը։— Հապա ինչո՞ւ չմոտեցար։ Նա կարծես բան էր ուզում ասել քեզ։

— Ուրեմն, մոտենանք,— ասաց Կիտին, վճռականապես ետ դառնալով։— Ինչպե՞ս է ձեր առողջությունն այսօր,— հարցրեց նա Պետրովին։

Պետրովը կանգնեց, հենվելով ձեռնափայտին ու վեհերոտ նայեց իշխանին։

— Սա իմ աղջիկն է,— ասաց իշխանը։— Թույլ տվեք ծանոթանալ։

Նկարիչը գլուխ տվեց ու ժպտաց, մերկացնելով տարօրինակորեն փայլող սպիտակ առամները։

— Մենք երեկ սպասում էինք ձեզ, իշխանազնուհի,— ասաց նա Կիտիին։

Նա օրորվեց այդ ասելիս և կրկնելով այդ շարժումը, աշխատում էր ցույց տալ, իբր դիտմամբ արեց։

— Ես ուզում էի գալ, բայց Վարենկան ասաց, թե Աննա Պավլովնան ուղարկել է իրեն ասելու, որ չեք գնալու։

— Ինչպե՞ս թե չենք գնալու,— կարմրելով ու անմիջապես հոգալով ասաց Պետրովը, աչքերով որոնելով կնոջը։— Աննետա, Աննե՛տա,— ձայնեց նա բարձր, և նրա բարակ սպիտակ պարանոցի վրա ձգվեցին հաստ ջղերը, պարանի պես։

Աննա Պավլովնան մոտեցավ։

— Դու ինչո՞ւ ես ուղարկել ասելու իշխանազնուհուն, որ մենք չենք գնա,— ձայնը կորցնելով, գրգռված շշնջաց նա կնոջը։

— Բարև ձեզ, իշխանազնուհի,— ասաց Աննա Պավլովնան շինծու ժպիտով, որ բոլորովին նման չէր նրա նախկին դիմումին։— Շատ հաճելի է ձեզ հետ ծանոթանալ,— դիմեց նա իշխանին։— Ձեզ վաղուց էին սպասում, իշխան։

— Դու ինչո՞ւ ես ուղարկել ասելու իշխանազնուհուն, որ մենք չենք գնալու,— խոպոտ ձայնով մի անգամ էլ շշնջաց նկարիչը՝ է՛լ ավելի բարկացած, հայտնապես ավելի ևս գրգռվելով այն բանից, որ ձայնը դավաճանում է իրեն, և ինքը չի կարող տալ իր խոսքին այն արտահայտությունը, ինչ կուզենար։

— Ա՜խ, աստված իմ։ Ես կարծում էի, որ չենք գնա,— սրտնեղությամբ պատասխանեց կինը։

— Ինչպե՞ս թե, ե՞րբ...— Պետրովը հազաց ու հուսահատորեն թափահարեց ձեռքը։

Իշխանը մի փոքր բարձրացրեց գլխարկը և հեռացավ աղջկա հետ։

— Օ՜ֆ, օ՜ֆ,— ծանր հառաչեց նա,— օ՜, թշվառներ։

— Այո՛, հայրիկ,— պատասխանեց Կիտին։— Բայց պիտի իմանաս, որ նրանք ունեն երեք երեխա, աղախին չունեն, համարյա միջոցներ էլ չունեն։ Նա ինչ-որ գումար է ստանում ակադեմիայից,— աշխույժ պատմում էր Կիտին, աշխատելով խեղդել իրեն համակած այն հուզմունքը, որի պատճառը Աննա Պավլովնայի վերաբերմունքի տարօրինակ փոփոխությունն էր։

— Ահա և մադամ Շտալը,— ասաց Կիտին, նշելով այն ձեռնասայլակը, որի մեջ, ամեն կողմից շրջապատված բարձերով, ինչ-որ գորշ ու կապույտ հագուստով, հովանոցի տակ կար մի բան։

Դա տիկին Շտալն էր։ Նրա ետևին կանգնել էր հաղթանդամ մի բանվոր-գերմանացի, որ ման էր ածում նրան։ Կողքից կանգնած էր շիկահեր շվեդացի կոմսը, որին անունով ճանաչում էր Կիտին։ Մի քանի հիվանդներ ոտքերը կախ էին գցում այս ձեռնասայլակի մոտ, նայելով այդ տիկնոջը, որպես արտասովոր բանի։

Իշխանը մոտեցավ նրան։ Եվ հոր աչքերի մեջ Կիտին անմիջապես նկատեց իրեն շփոթեցնող ծաղրի թույն։ Իշխանը մոտեցավ տիկին Շտալին ու չափազանց քաղաքավարի և

սիրալիր խոսեց այն հիանալի ֆրանսերեն լեզվով, որով այնքան քչերն են խոսում այժմ։

— Չգիտեմ, արդյոք, կհիշե՞ք դուք ինձ, բայց ես պետք է հիշեցնեմ իմ մասին, որպեսզի կարողանամ շնորհակալություն հայտնել ձեզ իմ աղջկան ցույց տված ձեր բարության համար,— ասաց իշխանը նրան, հանելով գլխարկը և շծածկելով այն։

— Իշխան Ալեքսանդր Շչերբացկի,— ասաց մադամ Շտալը, բարձրացնելով նրա վրա իր երկնագույն աչքերը, որոնց մեջ Կիտին նկատեց անբավականություն։— Շատ ուրախ եմ։ Ես այնպե՞ս սիրեցի ձեր աղջկան։

— Ձեր առողջությունն էլի լավ չէ՞։

— Այո՛, ես արդեն վարժվել եմ,— ասաց մադամ Շտալը և ծանոթացրեց իշխանին շվեդացի կոմսի հետ։

— Դուք շատ քիչ եք փոխվել,— ասաց իշխանը տիկնոջը։— Ես պատիվ չեմ ունեցել ձեզ տեսնելու տասը, թե տասնմեկ տարի։

— Այո՛, աստված մարդուն տալիս է խաչ, տալիս է նաև ուժ՝ տանելու այն։ Հաճախ զարմանում ես, թե ինչի՞ համար է ձգձգվում այս կյանքը... Մյո՛ւս կողմից,— սրտնեղությամբ դիմեց նա Վարենկային, որն այնպես չէր փաթաթում պլեդը նրա ոտներին։

— Երևի, բարություն անելու համար,— ասաց իշխանը, ծիծաղելով աչքերով։

— Դա մեր դատողության բանը չէ,— ասաց տիկին Շտալը, նկատելով իշխանի դեմքի արտահայտության նրբերանգը։— Ուրեմն, դուք կուզարկե՞ք ինձ այդ գիրքը, սիրելի կոմս։ Անչափ շնորհակալություն ձեզ,— դիմեց նա երիտասարդ շվեդացուն։

— Ա՜,— բացականչեց իշխանը, տեսնելով իր մոտ կանգնած մոսկվացի գնդապետին և գլուխ տալով տիկին Շտալին, հեռացավ աղջկա ու իրենց միացած մոսկվացի գնդապետի հետ։

— Դա մեր արիստոկրա՜տիան է, իշխա՜ն,— ծաղրական տոնով ասաց մոսկվացի գնդապետը, որովհետև դժգոհ էր տիկին Շտալից այն պատճառով, որ նա ծանոթ չէր իրեն։

— Էլի նույնն է,— պատասխանեց իշխանը։

— Դուք նրան ճանաչում էիք հիվանդությունից առաջ, իշխա՛ն, այսինքն՝ նախքան նրա անկողին ընկնելը։

— Այո՛, նա անկողին ընկավ իմ օրոք,— ասաց իշխանը։

— Ասում են, տասը տարի է, որ չի՛ վեր կենում...

— Չի վեր կենում, որովհետև կարճատ է։ Նա շատ տգեղ կազմվածք ունի...

— Հայրիկ, չի կարող պատահել,— բացականչեց Կիտին։

— Չար լեզուներն այդպես են ասում, սիրելիս։ Իսկ քո Վարենկան, այսուամենայնիվ, բշտոց է ուտում,— ավելացրեց նա։— Օ՜ֆ, այդ հիվանդ խանում տիկինները։

— Օ՜, ո՛չ, հայրիկ,— ջերմորեն առարկեց Կիտին,— Վարենկան պաշտում է նրան։ Եվ հետո նա այնքան բարություններ է անում։ Ում ուզում ես՝ հարցրու։ Նրան և Aline Շտալին ամենքը ճանաչում են։

— Կարող է պատահել,— ասաց իշխանը, արմունկով սեղմելով աղջկա ձեռքը։— Բայց ավելի արժեքավորն այն է, երբ անում են այնպես, որ ում էլ հարցնես, ո՛չ ոք ոչինչ չգիտե։

Կիտին լռեց, ո՛չ այն պատճառով, որ ասելիք չուներ, այլ նա հորն էլ չէր ուզում բացել իր գաղտնի մտքերը։ Սակայն, տարօրինակ բան, չնայած նա այնպես պատրաստվում էր, որ չենթարկվի հոր հայացքներին, որ թույլ չտա նրան՝ մուտք գործելու իր սրբությունը, այնուամենայնիվ զգաց, որ տիկին Շտալի աստվածային այն պատկերը, որ Կիտին ամբողջ ամիս կրում էր իր հոգում, անհետ կորավ, ինչպես կորչում է մի տեղ գցած զգեստից կազմված ֆիգուրը, երբ մարդ հասկանում է, թե ի՛նչ դիրքով է ընկած այդ զգեստը։ Մնաց միայն մի կարճատ կին, որը պառկած է այն պատճառով, որ կազմվածքը վատ է, և տանջում է լուռ Վարենկային նրա համար, որովհետև այնպես չի փաթաթում պլեդը։ Եվ երևակայության ո՛չ մի ջանքով այլևս չէր կարելի վերադարձնել առաջվա մադամ Շտալին։

XXXV

Իշխանն իր ուրախ տրամադրությամբ վարակեց թե՛ իր տնեցիներին, թե՛ ծանոթներին, թե՛ նույնիսկ գերմանացի տանտիրոջը, որի մոտ ապրում էին Շչերբացկիները։

Կիտիի հետ վերադառնալով հանքաջրերից ու հրավիրելով իր մոտ սուրճի և գնդապետին, և Մարիա Եվգենևնային, և Վարենկային, իշխանը հրամայեց սեղանն ու բազկաթոռները դուրս տանել պարտեզ, շագանակի ծառի տակ, և այնտեղ պատրաստել նախաճաշի սեղան։ Ի՛վ տանտերը, և՛ սպասավորներն աշխուժացան նրա ուրախության ազդեցության տակ։ Նրանք գիտեին նրա առատաձեռնությունը, և կես ժամ հետո համբուրգյան հիվանդ բժիշկը, որ ապրում էր վերևում, նախանձի զգացումով նայում էր պատուհանից առողջ մարդկանցից բաղկացած ռուսական այդ ուրախ խմբին, հավաքված շագանակի տակ։ Տերևների շուքին, որ կազմում էր դողդղոջուն շրջաններ, սպիտակ սփռոցով պատած սեղանի մոտ, վրան դրած սրճամաններ, հաց, կարագ, պանիր, սառը թռչնեղեն, նստել էր իշխանուհին՝ գլխին ապարոշ, մանիշակագույն ժապավեններով, բաշխում էր գավաթներն ու տարտինները։ Սեղանի մյուս ծայրին նստել էր իշխանը, կուշտ ուտելով ու բարձրաձայն և ուրախ զրուցելով։ Իշխանը բացել, դարսել էր իր մոտ իր գնումները, փորագրած փոքրիկ սնդուկներ, շվիներ, ամեն տեսակ թղթահատ դանակներ, որ մեծ քանակությամբ գնել էր բոլոր հանքաջրերում և նվիրում էր ամենքին, այդ թվում նաև Լիսխենին՝ աղախնին ու տանտիրոջը, որի հետ նա կատակում էր իր կոմիկական վատ գերմաներենով, հավատացնելով նրան, որ Կիտիին բժշկեցին ո՛չ թե հանքաջրերը, այլ նրա հիանալի կերակուրները, մանավանդ սև շլորով սուպը։ Իշխանուհին ծիծաղում էր ամուսնու վրա նրա ռուսական սովորությունների համար, բայց շատ ուրախ էր ու աշխույժ, ինչպես երբեք չէր եղել իր կյանքում՝ հանքաջրերում։ Գնդապետն, ինչպես միշտ, ժպտում էր իշխանի կատակներից. բայց Եվրոպայի վերաբերյալ, որը նա ուշադրությամբ ուսումնասիրել էր, ինչպես կարծում էր ինքը, կողմնակից էր իշխանուհուն։ Բարեսիրտ Մարիա Եվգենևնան ծիծաղից թուլանում էր իշխանի ասած ամեն ծիծաղելի բանի համար, Վարենկան էլ, որին այդպես դեռ երբեք չէր տեսել Կիտին, նույնպես թլկվում էր թույլ, բայց վարակիչ ծիծաղից, որ հարուցում էին նրա մեջ իշխանի կատակները։

Այս բոլորն ուրախացնում էր Կիտիին բայց նա չէր կարող մտահոգ չլինել։ Նա չէր կարողանում լուծել այն խնդիրը,

որ ակամա տվեց նրան հայրը՝ իր ուրախ հայեցակետով նրա բարեկամների և այն կյանքի վերաբերյալ, որն այնպես սիրեց Կիտին։ Այդ խնդրին միացավ նույնպես Պետրովների հետ ունեցած նրա հարաբերությունների փոփոխությունը, որ այսօր արտահայտվեց այնպես ակնհայտ և անախորժ կերպով։ Ամենքն ուրախ էին, բայց Կիտին չէր կարող ուրախ լինել, և դա ավելի ևս տանջում էր նրան։ Նա համակված էր այնպիսի զգացումով, ինչպիսին ունենում էր մանկության օրերին, երբ պատժված, փակված էր լինում իր սենյակում և լսում էր քույրերի ուրախ ծիծաղը։

— Ինչի՞ համար ես այդքան բան գնել,— ասում էր իշխանուհին ժպտալով ու տալով ամուսնուն սուրճով լի գավաթը։

— Գնում ես ման գալու, է՞հ, մոտենում ես այս կամ այն կրպակին, խնդրում են գնել. «էրլաուխտ, էքսցելենս, դուրխլաուխտ»[1]։ Հենց որ ասում են «դուրխլաուխտ», պրծած բան է, ես այլևս չեմ կարող. չարժե նույնիսկ տասը տալեր։

— Դա ձանձրույթի հետևանք է միայն,— ասաց իշխանուհին։

— Իհա՛րկե ձանձրույթի։ Այնպիսի ձանձրույթ, սիրելիս, որ չես իմանում, թե ի՞նչ անես։

— Ինչպե՞ս կարելի է ձանձրանալ, իշխա՛ն։ Այնքան շատ հետաքրքրական բան կա այժմ Գերմանիայում, —ասաց Մարիա Եվգենենան։

— Հետաքրքրական բոլոր բաները ես գիտեմ. սև շլորով սուպը ես գիտեմ, սիսեռով երշիկը գիտեմ։ Բոլորը գիտեմ։

— Ո՛չ, ինչպես կուզեք, իշխա՛ն, բայց նրանց հիմնարկները հետաքրքրական են,— ասաց դնդապետը։

— Այսինքն՝ ի՞նչ կա հետաքրքրական։ Նրանք ամենքը գոհ են, ինչպես պղնձե գոռոններ. ամենքին հաղթել են։ Իսկ ես ինչի՞ց պիտի գոհ լինեմ։ Ես ոչ ոքի չեմ հաղթել, այլ ստիպված եմ դեռ կոշիկներս ինքս հանել և ինքս էլ դրանք դնել դռան ետևը։ Առավոտյան վեր կացար, իսկույն հագնվիր, գնա սալոն՝ անպիտան թեյ խմելու։ Ա՛յ, ի՞նչ եմ ասել տանը։ Կզարթնես առանց շտապելու, կբարկանաս որևէ բանի վրա, կքրթմնջաս։ Լավ ուշքի կգաս, ամեն ինչ կկշռադատես, շտապելու բան չունես։

[1] «Հիանալի, սքանչելի բան, (ձերդ) պայծառափայլություն»։

— Ժամանակը ոսկի է, մի՛ մոռանաք այդ,— ասաց դընդապետը։

— Ի՞նչ ժամանակ։ Լինում է այնպիսի ժամանակ, երբ ամբողջ ամիսը հիսուն կոպեկով կտաս, երբեմն էլ կես ժամը ո՛չ մի գումարով չես գիջի։ Այնպես չէ՞, Կատենկա։ Ի՞նչ է եղել քեզ, դու այնպես տխուր ես։

— Ե՞ս, ոչինչ։

— Ո՞ւր եք գնում։ Մի քիչ էլ նստեք,— դիմեց իշխանը Վարենկային։

— Ես պետք է գնամ տուն,— ասաց Վարենկան կանգնելով և նորից բռնկվեց ծիծաղից։ Ուշքի գալով, նա հրաժեշտ տվեց ու գնաց տուն, որ վերցնի գլխարկը։

Կիտին հետևեց նրան։ Նույնիսկ Վարենկան նրան պատկերանում էր այժմ ուրիշ։ Նա վատ չէր, բայց ուրիշ էր, քան այն, ինչպես առաջ երևակայում էր նրան։

— Ա՜խ, վաղուց ես այդպես չէի ծիծաղել,— ասաց Վարենկան, վերցնելով հովանոցն ու պայուսակը։— Ի՞նչ դուրեկան մարդ է ձեր հայրիկը։

Կիտին լուռ էր։

— Ե՞րբ կտեսնվենք,— հարցրեց Վարենկան։

— Maman ուզում էր գնալ Պետրովների մոտ։ Դուք չե՞ք լինի այնտեղ,— ասաց Կիտին, փորձելով Վարենկային։

— Կլինեմ,— պատասխանեց Վարենկան։— Նրանք պատրաստվում են մեկնելու այստեղից, ես խոստացա, որ կօգնեմ իրերը դասավորելու։

— Ես էլ կգամ։

— Ո՛չ, ի՞նչ գործ ունեք դուք։

— Ինչո՞ւ, ինչո՞ւ, ինչո՞ւ,— աչքերը լայն բացելով, խոսեց Կիտին, և որպեսզի բաց չթողնի Վարենկային, բռնեց նրա հովանոցից։— Ո՛չ, կացեք, ինչո՞ւ։

— Այնպես. ձեր հայրիկը եկել է, և հետո ձեզ հետ նրանք ճնշվում են։

— Ոչ, դուք ասեք ինձ, թե ինչո՞ւ չեք ուզում, որ ես հաճախ լինեմ Պետրովների մոտ։ Չէ՞ որ դուք չեք ուզում։ Ինչո՞ւ։

— Ես այդպիսի բան չեմ ասել,— հանդիստ առարկեց Վարենկան։

— Ո՛չ, խնդրեմ, ասեք։

— Բոլո՞ր ասեմ,— հարցրեց Վարենկան։

— Բոլորը, բոլորը,— վրա տվեց Կիտին։

— Առանձին ոչինչ չկա, բանն այն է միայն, որ Միխայիլ Ալեքսեևիչն (այդպես էին կանչում նկարչին) առաջ ուզում էր ժամանակից ավելի վաղ մեկնել այստեղից, իսկ այժմ չի ուզում,— ժպտալով ասաց Վարենկան։

— Հետո՞, հետո՞,— շտապեցնում էր Կիտին, մռայլորեն նայելով Վարենկային։

— Եվ չգիտեմ ինչո՞ւ, Աննա Պավլովնան ասաց, որ ամուսինը չի ուզում գնալ, որովհետև դուք այստեղ եք։ Իհարկե, դա անտեղի բան էր, բայց դրա համար, ձեր պատճառով վեճ ծագեց։ Իսկ դուք գիտեք, թե ինչպես դյուրագրգիռ են այդ հիվանդները։

Կիտին ավելի ու ավելի մռայլվելով, լուռ էր. խոսում էր միայն Վարենկան, աշխատելով մեղմել ու հանգստացնել նրան և տեսնելով պատրաստվող պոռթկումը՝ բառերի՞, թե՞ արցունքների,— չգիտեր նա։

— Այնպես որ, ավելի լավ է, եթե չգնաք... Դուք հասկանում եք, մի՛ նեղանաք...

— Ես արժանի եմ, արժանի եմ,— արագ ասաց Կիտին, քաշելով հովանոցը Վարենկայի ձեռքից և իր բարեկամուհու աչքերի կողքից նայելով մի կետի։

Վարենկան ուզում էր ժպտալ, դիտելով իր բարեկամուհու մանկական ցասումը, բայց վախենում էր վիրավորել նրան։

— Ինչպե՞ս թե «ես արժանի եմ»։ Ես չեմ հասկանում,— ասաց նա։

— Ես արժանի եմ նրա համար, որ այդ բոլորը կեղծարարություն էր, որովհետև այդ բոլորը մտացածին բան է, ո՛չ թե սրտից բխող։ Ի՞նչ գործ ունեմ ես օտար մարդու հետ։ Եվ ահա, բանից դուրս եկավ, որ ես դարձա վեճի պատճառ և որ ես անում էի այն, ինչ ոչ ոք չէր խնդրում ինձնից։ Որովհետև կեղծարարություն է, կեղծարարություն, կեղծարարություն...

— Ի՞նչ նպատակ կար կեղծելու,— կամաց ասաց Վարենկան։

— Ա՜խ, ի՞նչ տխմար, զզվելի բան է։ Ո՛չ մի կարիք չունեի ես... Բոլորը կեղծիք է,— ասում էր նա, բացելով ու փակելով հովանոցը։

— Սակայն ի՞նչ նպատակով։

— Որպեսզի ավելի լավ երևամ մարդկանց առաջ, ինքս իմ առաջ, աստծու առաջ. ամենքին խաբեմ։ Ո՛չ, այժմ արդեն ես անձնատուր չեմ լինի, չեմ ենթարկվի դրան։ Թող ես լինեմ վատ, բայց, համենայն դեպս, ո՛չ կեղծարար և խաբեբա։

— Ինչե՛ր եք ասում, ո՞վ է խաբեբա,— ասում էր Վարենկան կշտամբանքով։— Դուք ասում եք, որպես թե...

Բայց Կիտին գտնվում էր իր դյուրաբորբոքության պոռթկումի մեջ։ Նա չթողեց, որ Վարենկան վերջացնի խոսքը։

— Ես ասում եմ ոչ թե ձեր մասին, ես բնավ չեմ ասում ձեր մասին։ Դուք կատարելություն եք։ Այո՛, այո՛, ես գիտեմ, որ դուք լիովին կատարելություն եք. բայց ի՞նչ արած, որ ես վատն եմ։ Դա չէր պատահի, եթե ես վատը չլինեի։ Ուրեմն, թող ես լինեմ այնպես, ինչպես կամ, բայց չեմ կեղծի ու ձևանա։ Ի՞նչ գործ ունեմ ես Աննա Պավլովնայի հետ։ Թող ապրեն նրանք այնպես, ինչպես ուզում են, ես էլ ինչպես ուզում եմ ինքս։ Ես չեմ կարող լինել այլ կերպ... Եվ այս բոլորն ա՛յն չէ, ա՛յն չէ...

— Իսկ ի՞նչն այն չէ,— տարակուսանքով ասում էր Վարենկան։

— Բոլորը։ Ես այլ կերպ չեմ կարող ապրել՝ եթե ոչ սրտիս թելադրանքով, մինչդեռ դուք ապրում եք կանոններով։ Ես ձեզ սիրեցի պարզորեն, իսկ դուք, հավանորեն, միայն նրա համար, որ փրկեք ինձ, որ սովորեցնեք ինձ։

— Դուք իրավացի չեք,— ասաց Վարենկան։

— Ես ոչինչ չեմ ասում ուրիշների մասին, ես ասում եմ իմ մասին։

— Կիտի,— լսվեց մոր ձայնը,— ե՛կ այստեղ, ցո՛ւց տուր հայրիկիդ քո մարջանները։

Կիտին հպարտ տեսքով, առանց հաշտվելու իր բարեկամուհու հետ, վերցրեց սեղանի վրայից մարջաններով տուփը և գնաց մոր մոտ։

— Ի՞նչ է պատահել քեզ։ Ինչո՞ւ ես այդպես կարմրել,— ասացին նրան մայրն ու հայրը միաբերան։

— Ոչի՛նչ,— պատասխանեց նա,— ես իսկույն կգամ,— ու ետ վազեց։

«Նա դեռ այստե՛ղ է,— մտածեց Կիտին։— Ի՞նչ ասեմ նրա-

բան, աստված իմ։ Այդ ի՞նչ արի ես, ի՞նչ ասացի ես։ Ինչի՞ համար ես վիրավորեցի նրան։ Ի՞նչ պետք է անեմ ես։ Ի՞նչ ասեմ նրան», մտածում էր Կիտին ու կանգ առավ դռան մոտ։

Վարենկան, գլխարկով և հովանոցը ձեռքին, նստել էր սեղանի մոտ, նայում էր զսպանակը, որ կոտրել էր Կիտին։ Նա բարձրացրեց գլուխը։

— Վարենկա, ներեցեք ինձ, ներեցեք,— շշնջաց Կիտին, մոտենալով նրան։— Ես չեմ հիշում, թե ի՞նչ էի ասում։ Ես...

— Ես, ճշմարիտ, չէի ուզում վշտացնել ձեզ,— ասաց Վարենկան ժպտալով։

Հաշտությունը կայացավ։ Բայց հոր գալով Կիտիի համար փոխվեց այն ամբողջ աշխարհը, որի մեջ ապրում էր նա։ Նա չհրաժարվեց այն բոլորից, ինչ իմացավ, բայց հասկացավ, որ խաբում էր ինքն իրեն, կարծելով, թե կարող է լինել իր ուզածի պես։ Նա կարծես ուշքի եկավ. զգաց, թե որքան դժվար է առանց կեղծիքի ու պարծենկոտության մնալ այն բարձրության վրա, ուր ուզում էր հասնել ինքը. բացի դրանից, նա զգաց ամբողջ ծանրությունը վշտի, հիվանդությունների, մեռնողների այդ աշխարհում, որտեղ ապրում էր ինքը. նրան տանջալից էին թվում այն ջանքերը, որ նա գործ էր դնում իր վրա, որպեսզի կարողանա սիրել այդ, և ուզում էր ժամ առաջ դուրս գալ Թարմ օդի, գնալ Ռուսաստան, երգուշովո, ուր, ինչպես նա իմացավ նամակից, արդեն գնացել էր իր քույր Դոլլին՝ երեխաների հետ։

Բայց նրա սերը դեպի Վարենկան չթուլացավ։ Հրաժեշտ տալով իր բարեկամուհուն, Կիտին թախանձագին խնդրում էր նրան՝ գալ իրենց մոտ Ռուսաստան։

— Ես կգամ, երբ դուք ամուսնանաք,— ասաց Վարենկան։

— Ես երբեք չեմ ամուսնանա։

— Ուրեմն՝ ես էլ երբեք չեմ գա։

— Որ այդպես է, ես միայն դրա համար կամուսնանամ։

ԵՐՐՈՐԴ ՄԱՍ

I

Սերգեյ Իվանովիչ Կոզնիշևն ուզում էր հանգստանալ մտավոր աշխատանքից և, փոխանակ գնալու արտասահման, ինչպես անում էր սովորաբար, մայիսի վերջերին եկավ գյուղ՝ եղբոր մոտ։ Նրա համոզմունքով, ամենալավ կյանքը գյուղական կյանքն էր։ Նա այժմ եկավ եղբոր մոտ՝ հրճվելու այդ կյանքով։ Կոնստանտին Լևինը շատ ուրախ էր, մանավանդ որ այս ամառ այլևս չէր սպասում Նիկոլայ եղբորը։ Բայց չնայած դեպի Սերգեյ Իվանովիչը տածած իր սիրո և հարգանքի զգացումին, Կոնստանտին Լևինն իրեն անհարմար էր զգում եղբոր հետ գյուղում։ Նրա համար անհարմար, նույնիսկ անախորժ էր տեսնել եղբոր վերաբերմունքը գյուղին։ Կոնստանտին Լևինի համար գյուղը կյանքի վայր էր, այսինքն՝ ուրախությունների, տառապանքների, աշխատանքի վայր. Սերգեյ Իվանովիչի համար գյուղը մի կողմից աշխատանքից հանգստանալու միջոց էր, մյուս կողմից փչացման դեմ օգտակար հակաթույն էր, որ նա ընդունում էր բավականությամբ ու նրա օգտակարության գիտակցությամբ։ Կոնստանտին Լևինի համար գյուղը լավ էր նրանով, որ հանդիսանում էր աշխատանքի, անկասկած օգտակար աշխատանքի ասպարեզ. Սերգեյ Իվանովիչի համար գյուղն առանձնապես լավ էր նրանով, որ այնտեղ կարելի է և պետք է ոչինչ չանել։ Բացի դրանից, ժողովրդի նկատմամբ Սերգեյ Իվանովիչի վերաբերմունքն էլ մի փոքր դիպչում էր Կոնստանտինի սրտին. Սերգեյ Իվանովիչն ասում էր, որ ինքը սիրում ու ճանաչում է ժողովրդին և հաճախ զրուցում էր մուժիկների հետ.

այդ նա կարողանում էր անել շատ լավ. առանց ձևանալու և առանց կոտրատվելու, և յուրաքանչյուր այդպիսի զրույցից հանում էր ընդհանուր տվյալներ հօգուտ ժողովրդի ու ապացույց այն բանի, որ ճանաչում էր նրանց։ Այդպիսի վերաբերմունքը դեպի ժողովուրդը դուր չէր գալիս Կոնստանտին Լևինին։ Կոնստանտինի համար ժողովուրդը միայն գլխավոր մասնակցորդ էր ընդհանուր աշխատանքին և, չնայած դեպի մուժիկը տածած իր հարգանքին ու մի տեսակ արյունակցական սիրույն, որ ներծծված էր իր մեջ, ինչպես ինքն էր ասում, գեղջկուհի-ծծմոր կաթի հետ, նա, որպես մուժիկի հետ մասնակից ընդհանուր գործին, երբեմն լցվում էր հիացքով այդ մարդկանց ուժից, հեզությունից, արդարամտությունից, իսկ շատ հաճախ, երբ ընդհանուր գործի մեջ պահանջվում էին ուրիշ հատկություններ, գազազում, չարանում էր ժողովրդի դեմ՝ նրա անփութության, անմաքրասիրության, հարբեցողության, ստախոսության համար։ Կոնստանտին Լևինը, եթե նրան հարցնեին, արդյոք, նա սիրո՞ւմ է ժողովրդին, բացարձակապես չէր իմանա, թե ինչպե՞ս պատասխանի այդ հարցին։ Նա և՛ սիրում էր, և՛ չէր սիրում ժողովրդին. ինչպես և առհասարակ մարդկանց։ Հասկանալի է, որպես բարի մարդ, նա ավելի սիրում էր, քան չէր սիրում մարդկանց՝ ուրեմն և՝ ժողովրդին։ Բայց սիրել կամ չսիրել ժողովրդին որպես առանձնահատուկ մի բան, նա չէր կարող, որովհետև նա ո՛չ միայն ապրում էր ժողովրդի հետ, ո՛չ միայն նրա բոլոր շահերը կապված էին ժողովրդի հետ, այլև նա իրեն համարում էր ժողովրդի մի մասնիկը, չէր տեսնում իր և ժողովրդի մեջ ո՛չ մի առանձին հատկություն ու թերություն և չէր կարող իրեն հակադրել ժողովրդին։ Բացի դրանից, թեպետ նա երկար ժամանակ ապրում էր մուժիկների հետ ամենամոտիկ կապերով, որպես տնտեսատեր ու միջնորդ, իսկ որ գլխավորն է՝ որպես խորհրդատու (մուժիկները հավատում էին նրան և քառասուն վերստ հեռավորությունից գալիս էին նրա մոտ խորհրդակցելու), նա ո՛չ մի որոշակի դատողություն չուներ ժողովրդի մասին և ինչպես կդժվարանար պատասխանել այն հարցին՝ ճանաչո՞ւմ է, արդյոք, ժողովրդին, նույնպես և՝ այն հարցին, արդյոք սիրո՞ւմ է ժողովրդին։ Ասել, թե ինքը ճանաչում է ժողովրդին, նրա համար կլիներ նույնը, եթե ասեր,

որ ճանաչում է մարդկանց։ Նա շարունակ դիտում էր և օրավուր ճանաչում էր մարդկանց, այդ թվում՝ նաև մուժիկ-մարդկանց, որոնց համարում էր լավ ու հետաքրքրական մարդիկ, և անդադար նկատում էր նրանց մեջ նոր գծեր, փոխում էր նրանց մասին ունեցած իր նախկին դատողությունները և կազմում էր նորերը։ Սերգեյ Իվանովիչը ընդհակառակն էր։ Ճիշտ այնպես, ինչպես նա սիրում ու գովում էր գյուղական կյանքը, որպես հակադրություն այն կյանքի, որը նա չէր սիրում, ճիշտ այդպես էլ նա սիրում էր ժողովրդին, որպես հակադրություն մարդկանց այն դասակարգի, որը նա չէր սիրում, ճիշտ այդպես էլ նա ճանաչում էր ժողովրդին, որպես առհասարակ հակադիր բան մյուս մարդկանց։ Նրա մեթոդիկ ուղեղի մեջ կազմվել էին ժողովրդական կյանքի որոշակի ձևեր, մասամբ հանված ժողովրդական կյանքից, բայց առավելապես՝ հակադրությունից։ Նա երբեք չէր փոխում ժողովրդի մասին իր կարծիքը և նրանց ցույց տված իր կարեկից վերաբերմունքը։

Ժողովրդի մասին դատելիս՝ եղբայրների միջև պատահած տարաձայնություններում Սերգեյ Իվանովիչը միշտ հաղթում էր եղբորը հենց նրանով, որ Սերգեյ Իվանովիչն ուներ որոշ հասկացողություններ ժողովրդի մասին, նրա բնավորության, հատկությունների և ճաշակի մասին, իսկ Կոնստանտին Լևինը չուներ որոշակի ու անփոփոխ ո՛չ մի հասկացողություն, այնպես որ այդ վեճերում Կոնստանտինը բռնվում էր ինքն իրեն հակասելու մեջ։

Սերգեյ Իվանովիչի համար իր փոքր եղբայրը հիանալի տղա էր, լավ դրված սրտի տեր (ինչպես արտահայտվում էր նա ֆրանսերեն), բայց այնպիսի ուղեղով, որը թեպետ գործում էր արագ, սակայն ենթակա էր բոպեի ազդեցություններին, այդ իսկ պատճառով, լի էր հակասություններով։ Ավագ եղբոր ներողամտությամբ նա երբեմն բացատրում էր նրան իրերի նշանակությունը, բայց չէր կարող բավականություն գտնել նրա հետ վիճելու մեջ, որովհետև չափազանց հեշտությամբ ջախջախում էր նրան։

Կոնստանտին Լևինը նայում էր եղբոր վրա, որպես վիթխարի խելքի ու կրթության տեր մարդու վրա, որն ազնիվ է՝ այդ բառի ամենաբարձր իմաստով և օժտված է ընդհանուր բարիքի համար գործելու ընդունակությամբ։ Բայց իր հոգու

խորքում, որքան ավելի տարիք էր առնում ինքը և ավելի մոտիկ էր ճանաչում եղբորը, այնքան ավելի շուտ-շուտ էր նրա գլխում միտք ծագում, թե ընդհանուր բարիքի համար գործելու այդ ընդունակությունը, որից նա իրեն զգում էր բոլորովին զուրկ, գուցե ո՛չ թե առավելություն է, այլ, ընդհակառակը, ինչ-որ պակասություն, ոչ թե բարի, մաքուր, ազնիվ զգացումների ու ճաշակի պակասություն, այլ պակասություն է կյանքի ուժի, այն բանի, որ կոչվում է սիրտ, այն ձգտումի, որը ստիպում է մարդուն՝ ընտրել կյանքը ներկայացնող անհամար բոլոր ուղիներից մեկը և ցանկանալ այդ մեկը։ Որքան ավելի էր նա ճանաչում եղբորը, այնքան ավելի էր նկատում Լևինը, որ և՛ Սերգեյ Իվանովիչը, և՛ ընդհանուր բարիքի համար գործող ուրիշ շատերը ո՛չ թե սրտի դրդումով էին հանգել ընդհանուր բարիքին վերաբերող այդ սիրույն, այլ դատել էին ուղեղով, թե դրանով պարապելը լավ է, և միայն այդ պատճառով էին զբաղվում դրանով։ Լևինին այս ենթադրության մեջ հաստատեց նաև այն դիտողությունը, որ եղբայրը ընդհանուր բարիքի և հոգու անմահության հարցերը երբեք ավելի մոտ չէր ընդունում իր սրտին, քան շախմատի խաղի կամ նոր մեքենայի սրամիտ կառուցվածքի խնդիրները։

Բացի դրանից, Կոնստանտին Լևինը գյուղում իրեն անհարմար էր զգում եղբոր հետ նաև այն պատճառով, որ գյուղում, մանավանդ ամռանը, Լևինը միշտ զբաղված էր լինում տնտեսությամբ, և նրան չէր բավականանում ամառվա երկար օրը, որպեսզի նա վերակառուցի այն բոլորը, ինչ պետք է,— իսկ Սերգեյ Իվանովիչը հանգստանում էր։ Բայց թեպետև նա այժմ հանգստանում էր, այսինքն՝ չէր աշխատում իր երկի վրա, սակայն այնպես վարժվել էր մտավոր աշխատանքի, որ սիրում էր գեղեցիկ, սեղմ ձևով արտահայտել իր գլուխն եկած մտքերը և սիրում էր, որ իրեն լսող լինի։ Իսկ նրա ամենասովորական ու բնական ունկնդիրը եղբայրն էր։ Այդ պատճառով, չնայած նրանց հարաբերությունների ընկերական պարզությանը, Կոնստանտինի համար անհարմար էր նրան թողնել մենակ։ Սերգեյ Իվանովիչը սիրում էր պառկել կանաչ խոտերի մեջ, արևի տակ ու այդպես պառկած՝ այրվել և ալարկոտ զրուցել։

— Դու չես հավատա,— ասում էր նա եղբորը,— թե որ-

պիսի՞ բավականություն, վայելք է ինձ համար խախոլական այդ ալարկոտությունը։ Գլխումս ո՛չ մի միտք, բացարձակ դատարկություն։

Բայց Կոնստանտին Լևինի համար ձանձրալի էր նստել ու լսել նրան, մանավանդ այն պատճառով, որ գիտեր, առանց իրեն դոմաղը են կրում ածուների չբաժանված արտը և, եթե ինքը չնայի՝ կթափեն այն, ասված գիտե, թե ինչպե՛ս. գութանների ձևիչները չէն ամրացնի, այլ կհանեն ու հետո կանեն, թե գութանը դատարկ բան է, ի՞նչը կհասնի Անդրեևնա արորին և այլն։

— Հերիք ման գաս այս շոգ-կրակին,— ասում էր նրան Սերգեյ Իվանովիչը։

— Ո՛չ, ես մի բոպեով միայն վազ տամ գրասենյակ,— ասում էր Լևինը և վազում էր դաշտ։

II

Հունիսի սկզբներին այնպես պատահեց, որ դայակ և տնտեսուհի Ագաֆիա Միխայլովնան նկուղ տարավ իր հենց նոր թթու դրած սունկերով լի կճուճը, սայթաքեց, ընկավ ու ձեռքի թաթը դուրս ընկավ։ Եկավ երիտասարդ, շատախոս, հենց նոր կուրսն ավարտած ուսանող՝ զեմստվոյի բժիշկը։ Նա ձեռքը նայեց, ասաց, որ դուրս չի ընկել, կոմպրես դրեց և մնալով ճաշի, ըստ երևույթին, հրճվում էր, զրուցելով հռչակավոր Սերգեյ Իվանովիչ Կոզնիշևի հետ ու որպեսզի արտահայտի իր լուսավոր հայացքը իրերի նկատմամբ, պատմում էր գավառական բոլոր ասեկոսները, գանգատվելով զեմստվոյի գործի վատ կացությունից։ Սերգեյ Իվանովիչն ուշադրությամբ լսում էր, հարցափորձ էր անում և ոգևորված նոր ունկնդրով, բացվեց, հայտնեց մի քանի դիպուկ ու ծանրակշիռ դիտողություններ, որոնք արժանացան երիտասարդ բժշկի հարգալից գնահատականին, և հասավ իր, եղբորը ծանոթ, աշխույժ հոգեկան այն կացությանը, որին նա հասնում էր սովորաբար փայլուն ու աշխույժ խոսակցությունից հետո։ Բժշկի գնալուց հետո նա ցանկացավ գնալ գետը՝ կարթով ձուկ որսալու։ Սերգեյ Իվանովիչը սիրում էր կարթով ձուկ որսալ և կարծես Ոչ պարծենում էր, որ կարող է սիրել այդպիսի տխմար զբաղմունք։

Կոնստանտին Լևինը, որը պիտի գնար հերկի և մարգագետինները, ցանկություն հայտնեց եղբորը տանել կաբրիոլետով։

Տարվա այն ժամանակն էր, ամառվա թունդ պահին, երբ ընթացիկ տարվա բերքն արդեն որոշվել էր. երբ սկսվում են եկող տարվա ցանքսի հետ կապված հոգսերը ու մոտեցել է խոտհարքը, երբ հաճարն ամբողջովին հասակակալել է և, գորշ-կանաչ, տակավին չլցված թեթև հասկը տարուբերվում է քամուց. երբ կանաչ վարսակը, մեջը շաղ ընկած գեղին խոտի թփեր, անհավասարորեն դուրս է ցցվում ուշ կատարած ցանքերի միջից. երբ վաղահաս արինջն արդեն թեփաթափ է լինում, ծածկելով հողը. երբ անասնի ոտքի տակ քարացած խոզանները, որոնց հաղթահարել չի կարողանում արորը, արդեն կիսով չափ հերկված են. երբ արտերի մեջ թափված գոմաղբի չորացած կույտերը բուրում են արշալույսին, մեղրախոտերի հետ միասին, և ցած տեղերում, սպասելով գերանդիների, կանգնած են համատարած ծովի նման, խնամքով պահպանված մարգագետինները, խանձված թրթնջուկի սեին տվող ցողունների կույտերով։

Տարվա այն ժամանակն էր, երբ գյուղական աշխատանքների մեջ տեղի է ունենում կարճատև դադար՝ ամեն տարի կրկնվող և ամեն տարի ժողովրդի բոլոր ուժերը գործի կանչող բերքահավաքից առաջ։ Բերքը սքանչելի էր, և պայծառ, տաք ամառային հիանալի օրեր էին շաղոտ կարճ գիշերներով։

Եղբայրները պիտի անցնեին անտառով, որպեսզի մոտենային մարգագետիններին։ Սերգեյ Իվանովիչն ամբողջ ժամանակ հրճվում էր սաղարթախիտ, արևազուրկ անտառի գեղեցկությամբ, նշելով եղբորը՝ մերթ ստվերի կողմից մթին, գեղին տերևաթաղանթներով խայտաբղետ, ծաղկելու պատրաստվող հին լորենին, մերթ ծառերի այս տարվա մատաղ ոստերը, որ փայլում էին զմրուխտի պես։ Կոնստանտին Լևինը չէր սիրում ո՛չ լսել, ո՛չ էլ խոսել բնության գեղեցկության մասին։ Նրա համար բառերը հանում էին գեղեցկությունն այն բանի վրայից, ինչ տեսնում էր նա։ Նա հաստատում էր եղբոր ասածները, բայց ակամա սկսեց մտածել ուրիշ բանի մասին։ Երբ նրանք դուրս եկան անտառից, նրա ամբողջ ուշադրությունը կլանեց բլրի վրա խամ թողնված արտը, որ տեղ-տեղ դեղնին էր տալիս հասած խոտից, տեղ-տեղ փոքրիկ ու կորատված էր քառակներով, տեղ-տեղ պատած էր կույտերով, տեղ-տեղ էլ վարած էր։ Դաշտի միջով գնում էին շարան-շարան սայլեր։ Լևինը համրեց սայլերը և գոհ մնաց, որ դուրս կտանեն այն բոլորը, ինչ պետք է, և տեսնելով մարգագետինները, նրա մտքերն անցան խոտհարքի հետ կապված հարցին։ Խոտհնձի մեջ նա միշտ զգում էր մի ինչ-որ առանձնապես հուզիչ բան։ Մոտենալով մարգագետնին, Լևինը կանգնեցրեց ձին։

Առավոտյան ցողը գեռ մնացել էր խիտ խոտի ցածրի մասում, և Սերգեյ Իվանովիչը, որպեսզի ոտքերը չթրջվեն, խնդրեց կաբրիոլետով իրեն տանել մարգագետնի միջից մինչև ոլոռի թուփը, որտեղ բռնվում էին պերկես ձկներ։ Թեպետև Կոնստանտին Լևինն ափսոսում էր կոխկրտել իր խոտը, այնուամենայնիվ՝ քշեց մարգագետնի մեջ։ Բարձր խոտը փափկորեն փաթաթվում էր անիվների և ձիու ոտքերի շուրջը, թողնելով իր սերմերը թաց ճաղերի ու անվագնդերի վրա։

Եղբայրը նստեց թփի տակ, բացեց կարթերը, իսկ Լևինը մի կողմ քաշեց ձին, կապեց և մտավ ո՛չ հողմերերուն, անշարժ մարգագետնի հսկայական, գորշ-կանաչ ծովի մեջ։ Հասունացող սերմերով մետաքսանման խոտը ջրաղող տեղում հասնում էր համարյա գոտկատեղին։

Լայնությամբ անցնելով մարգագետնից, Կոնստանտին Լևինը գուրս եկավ ճանապարհը և պատահեց ուռած աչքով մի ծերունու, որ տանում էր մեղուներով պարսակողովը։

— Հը՞, չլինի թե բռնել ես, Ֆոմիչ,— հարցրեց նա։

— Ի՞նչ բռնել, ի՞նչ բան, Կոնստանտին Միտրիչ։ Երնե՛կ կարողանամ իմը պահեմ։ Ա՜յ, երկրորդ անգամ է, ինչ փախչում է երկրորդ ձագը... Շնորհակալ եմ, տղերքը հասան, բռնեցին։ Ձեզ մոտ վար են անում։ Ձին արձակեցին, չափ ընկան ետևից, հասան...

— Է՜, ի՞նչ կասես, Ֆոմիչ. հնձե՞լ, թե՞ սպասել։

— Է՜հ, ի՞նչ ասեմ։ Մեր իմանալով, պիտի սպասել մինչև Պողոս-Պետրոսի տոնը։ Դուք միշտ ավելի վաղ եք հնձում։ Ոչի՞նչ, աստված տա, լավ խոտ է։ Անասնի կերը բոլ կլինի։

— Իսկ եղանա՞կը, ի՞նչ ես կարծում։

— Աստծո բանն է։ Կարող է լավ լինի։

Լևինը մոտեցավ եղբորը։

Ոչինչ չէր բռնվում, բայց Սերգեյ Իվանովիչը չէր ձանձրանում և ամենաուրախ տրամադրության մեջ էր։ Լևինը տեսավ, որ բժշկի հետ ունեցած խոսակցությամբ աշխուժացած, նա ուզում էր խոսել։ Իսկ ինքն, ընդհակառակը, ուզում էր ժամ առաջ գնալ տուն, որ կարգադրի խոտհարներ կանչել վաղվա համար և փարատի իր կասկածը խոտհարքի վերաբերյալ, որը սաստիկ զբաղեցնում էր նրան։

— Դե՛հ, գնանք,— ասաց նա։

— Ի՞նչ կա շտապելու։ Նստենք։ Սակայն ինչպե՞ս ես թրջվել դու։ Թեև ոչինչ չի բռնվում, բայց լավ է։ Ամեն որս լավ է նրանով, որ մարդ գործ ունի բնության հետ։ Հապա տես՝ ի՞նչ հրաշալիք է այս պողպատե ջուրը,— ասաց նա։— Այս թավշագեղ ափերը միշտ ինձ հանելուկ են հիշեցնում, գիտե՞ս։ Խոտն ասում է ջրին՝ իսկ մենք կերերանք, կերերանք։

— Ես չգիտեմ այդ հանելուկը,— տրտում պատասխանեց Լևինը։

III

— Գիտե՞ս, ես քո մասին էի մտածում,— ասաց Սերգեյ Իվանովիչը։— Բանի նման չէ այն, ինչ կատարվում է ձեզ մոտ՝ գավառում, ինչպես պատմեց ինձ այդ բժիշկը. նա բավական խելոք տղա է։ Ես քեզ ասել եմ և ասում եմ. լավ չէ, որ դու չես գնում ժողովների ու առհասարակ ետ քաշվեցիր զեմստվոյի գործերից։ Եթե կարգին մարդիկ սկսեն ետ քաշվել, հասկանալի է, որ բանը կընթանա, աստված գիտե, թե ինչպե՞ս։ Դրամը մենք վճարում ենք, դրամը ծախսվում է ոռճիկների վրա, իսկ մեջտեղում չկան ո՛չ դպրոցներ, ո՛չ բուժակներ, ո՛չ մանկաբարձուհիներ, ո՛չ դեղատներ, ոչինչ չկա։

— Չէ՞ որ ես փորձեցի,— կամաց ու ո՛չ սիրահոժար պատասխանեց Լևինը,— չեմ կարող. է՛հ, ի՞նչ արած։

— Ի՞նչը չես կարող։ Ես, ճիշտն ասած, չեմ հասկանում։ Անտարբերություն, անկարողություն՝ չեմ կարծում. մի՞թե պարզապես ծուլություն։

— Ո՛չ մեկը, ո՛չ մյուսը, ո՛չ երրորդը։ Ես փորձում էի և տեսնում եմ, որ ոչինչ չեմ կարող անել,— ասաց Լևինը։

Նա քիչ էր խորամուխ լինում այն բանի մեջ, ինչ ասում

էր եղբայրը։ Զննելով գետից այն կողմի արտը, նա նշմարում էր այնտեղ ինչ-որ սև բան. բայց չէր կարողանում տարբերել, արդյոք ձի՞ էր այն, թե՞ ձի նստած կառավարիչն էր։

— Ինչո՞ւ չես կարող ոչինչ անել։ Դու փորձ արիր, և քո կարծիքով չհաջողվեց, ու հնազանդվում ես։ Ինչպե՞ս կարելի է ինքնասիրություն չունենալ։

— Ինքնասիրությո՞ւն,— ասաց Լևինը, սաստիկ առնված եղբոր խոսքերից,— ես չեմ հասկանում։ Եթե համալսարանում ինձ ասեին, որ ուրիշները հասկանում են ինտեգրալ հաշվարկումը, իսկ ես չեմ հասկանում, այդտեղ կա ինքնասիրություն։ Բայց այստեղ պետք է համոզված լինել նախ, որ այդ գործերի համար պիտի ունենալ որոշակի ընդունակություններ, և ապա, որ գլխավորն է, համոզված լինել, որ այս բոլոր գործերը կարևոր են շատ։

— Ուրեմն ի՞նչ, մի՞թե դա կարևոր չէ,— ասաց Սերգեյ Իվանովիչը, խորապես առնված այն բանից, որ եղբայրը կարևոր չի համարում այն, ինչն զբաղեցնում է նրան, և մանավանդ այն հանգամանքից, որ Լևինը, հայտնապես, համարյա չէր լսում նրան։

— Ինձ կարևոր չի թվում, չի համակում ինձ, ի՞նչ ես ուզում...— պատասխանեց Լևինը, պարզելով, որ այն, ինչ տեսնում էր ինքը, կառավարիչն էր, և որ կառավարիչն արձակեց մուժիկներին հերկից։ Նրանք շուռ էին տալիս արորները։ «Մի՞թե արդեն վարել, վերջացրել են», մտածեց նա։

— Լսի՛ր, սակայն,— խոժոռելով իր գեղեցիկ, խելոք դեմքը, ասաց ավագ եղբայրը,— ամեն բան չափ ու սահման ունի։ Լավ բան է լինել տարօրինակ և անկեղծ մարդ ու չհանդուրժել կեղծիք. ես այդ բոլորը գիտեմ. բայց այն, ինչ ասում ես դու, կամ իմաստ չունի, կամ ունի շատ վատ իմաստ։ Ինչպե՞ս դու կարևոր չես համարում, որ այն ժողովուրդը, որին սիրում ես, ինչպես հավատացնում ես դու...

«Ես երբեք չեմ հավատացրել», մտածեց Կոնստանտին Լևինը։

—... կոտորվում է առանց օգնության, գոհիկ տատամայրերն սպանում են երեխաներին. և ժողովուրդը քարանում է տգիտության մեջ ու մնում է զանազան գրագիրների իշխա-

նաքյան տակ, իսկ քեզ միջոց է տրված՝ դարմանելու այն, և դու չես օգնում, որովհետև քո կարծիքով, դա կարևոր չէ։

Եվ Սերգեյ Իվանովիչը գրեց նրա առաջ դիլեմա. կամ դու այնպես անզարգացած ես, որ չես կարողանում տեսնել այն բոլորը, ինչը կարող ես անել, կամ դու չես ուզում հրաժարվել քո հանգստից, սնափառությունից ու, չգիտեմ՝ էլ ինչից, որպեսզի այդ անես։

Կոնստանտին Լևինն զգում էր, որ իրեն մնում է միայն հնազանդվել կամ խոստովանել, որ իր մեջ պակասում է սերը դեպի ընդհանուր գործը։ Եվ դա նրան վիրավորեց ու վշտացրեց։

— Ե՛վ մեկը, և՛ մյուսը,— ասաց նա վճռականորեն,— ու ես չեմ տեսնում, որ կարելի է...

— Ինչպե՞ս։ Մ՞իթե չի կարելի, լավ գործադրելով դրամը, բժշկական օգնություն հասցնել։

— Չի՛ կարելի, ինչպես թվում է ինձ... Մեր գավառի չորս հազար քառակուսի վերստ տարածության վրա, նկատի ունենալով մեր սառցակույտերը, փոթորիկները, աշխատանքի ժամանակը, ես հնարավոր չեմ համարում բժշկական օգնություն հասցնել ամենուր։ Եվ առհասարակ ես չեմ հավատում բժշկությանը։

— Է՛հ, ներիր ինձ, դա արդարացի չէ... Ես հազարավոր օրինակներ կբերեմ քեզ... Իսկ դպրոցնե՞րը։

— Ինչի՞ համար են դպրոցները։

— Ինչե՞ր ես ասում։ Մի՞թե կասկած կարող է լինել կրթության օգտակարության մասին։ Եթե կրթությունն օգտակար է քեզ համար, ուրեմն՝ և ամեն մեկի համար։

Կոնստանտին Լևինն զգում էր իրեն բարոյապես նեղն ընկած, հաղթահարված, ուստի տաքացավ և ակամա ասաց ընդհանուր գործի նկատմամբ իր անտարբերության գլխավոր պատճառը։

— Գուցե, այս բոլորը լավ է. բայց ես ինչո՞ւ պիտի հոգ տանեմ բժշկական կետեր հիմնելու մասին, որոնցից ես երբեք չեմ օգտվում, կամ դպրոցների մասին, ուր չեմ ուղարկի ես իմ երեխաներին, ուր գյուղացիներն էլ չեն ուզում ուղարկել իրենց երեխաներին, և ես դեռ հաստատ համոզված չեմ, թե պե՞տք է արդյոք ուղարկել նրանց,— ասաց նա։

Սերգեյ Իվանովիչին մի բոպե զարմացրեց գործի նկատմամբ արտահայտված այդ անսպասելի տեսակետը. բայց նա անմիջապես կազմեց գրոհի նոր ծրագիր։

Նա լռեց, հանեց մի կարթ, գցեց ուրիշ տեղ և ժպտալով դիմեց եղբորը.

— Դե՞հ, թույլ տուր... նախ՝ բժշկական կետը պետք եկավ։ Տեսա՞ր, որ Ագաֆիա Միխայլովնայի համար մենք ուղարկեցինք զեմստվոյի բժշկի ետևից։

— Է՞հ, ես կարծում եմ, որ ձեռքը ծուռ կմնա։

— Դա դեռ հարց է... Հետո՝ գրագետ մուժիկը, բանվորը հենց քե՛զ ավելի պետքական է և ավելի արժեքավոր։

— Ո՛չ ում կուզես հարցրու,— վճռականապես պատասխանեց Կոնստանտին Լևինը,— գրագետը, որպես աշխատող ձեռք, շատ ավելի վատ է։ Ճանապարհներն էլ չի կարելի նորոգել. իսկ կամուրջները, հենց որ շինեն, կգողանան։

— Սակայն,— խոժոռվելով ասաց Սերգեյ Իվանովիչը, որ հակաճառություններ չէր սիրում, մանավանդ այնպիսի, որոնք անընդհատ թռչում էին մի բանից մյուսին և առանց որևէ կապի բերում էին նոր փաստարկներ, այնպես որ մարդ չէր իմանում, թե ինչին պատասխանի,— սակայն, բանն այդ չէ։ Թույլ տուր։ Արդյոք ընդունո՞ւմ ես, որ կրթությունը բարիք է ժողովրդի համար։

— Ընդունում եմ,— ասաց Լևինն անսպասելի և իսկույն մտածեց, որ ասաց ո՛չ այն, ինչ կարծում է։ Նա զգում էր, որ եթե ինքն ընդունի այդ, կապացուցեն, որ ինքն ասում է ո՛չ մի իմաստ չունեցող դատարկ բաներ։ Թե ինչպե՛ս կապացուցեն, նա չգիտեր, բայց գիտեր, որ դա անպայման կապացուցվի տրամաբանորեն, և սպասում էր այդ ապացույցին։

Փաստարկը դուրս եկավ շատ ավելի պարզ, քան սպասում էր Կոնստանտին Լևինը։

— Եթե դու այդ բանը համարում ես բարիք,— ասաց Սերգեյ Իվանովիչը,— ապա, որպես ազնիվ մարդ, չես կարող չսիրել ու չհամակրել այդ գործը և այդ իսկ պատճառով չուզենալ աշխատել նրա համար։

— Բայց ես այդ գործը դեռ չեմ համարում լավ գործ,— ասաց Կոնստանտին Լևինը կարմրելով։

— Ինչպե՞ս։ Չէ՞ որ դու այս բոպեիս ասացիր...

— Այսինքն՝ ես այդ համարում եմ ո՞չ լավ, ո՞չ էլ հնարավոր։

— Դա դու չես կարող իմանալ, առանց ջանք թափելու։

— Լա՜վ, ենթադրենք,— ասաց Լևինը, թեև բնավ չէր ենթադրում այդ,— ենթադրենք, որ այդ այդպես է. այսուամենայնիվ ես չեմ տեսնում, թե ինչո՞ւ դրա մասին ես պիտի հոգ տանեմ։

— Այսինքն՝ ինչպե՞ս։

— Ո՞չ, քանի որ մենք խոսքի բռնվեցինք, ապա բացատրիր ինձ փիլիսոփայական տեսակետից,— ասաց Լևինը։

— Ես չեմ հասկանում, թե ի՞նչ գործ ունի այստեղ փիլիսոփայությունը,— ասաց Սերգեյ Իվանովիչն այնպիսի տոնով, ինչպես թվաց Լևինին, կարծես նա չէր ընդունում եղբոր իրավունքը՝ դատելու փիլիսոփայության մասին։ Եվ դա գրգռեց Լևինին։

— Ահա թե ինչո՞ւ,— տաքանալով խոսեց նա։— Ես կարծում եմ, որ այսուամենայնիվ մեր բոլոր գործողությունների շարժիչ ուժը անհատական երջանկությունն է։ Այժմ զեմստվոյի հիմնարկներում ես, որպես ազնվական, չեմ տեսնում ո՞չ մի բան, որը նպաստեր իմ բարեկեցությանը։ Ճանապարհներն ավելի լավ չեն և չեն կարող լինել. իմ ձիերն ինձ տանում են նաև վատ ճանապարհներով։ Բժիշկ ու բժշկական կետ պետք չեն ինձ, հաշտարար դատավոր պետք չէ ինձ,— ես երբեք չեմ դիմում նրան և չեմ դիմի։ Դպրոցները ո՞չ միայն պետք չեն ինձ, այլ նույնիսկ վնասակար են, ինչպես ասում էի քեզ։ Ինձ համար զեմստվոյի հիմնարկներն ուղղակի պարտիք են՝ վճարելու դեսյատինից տասնութ կոպեկ, գնալու քաղաք, գիշերելու փայտոջիլների հետ և լսելու ամեն տեսակ դատարկ ու զզվելի բաներ, իսկ անձնական շահը չի՛ դրդում ինձ։

— Թույլ տուր,— ընդհատեց Սերգեյ Իվանովիչը ժպտալով,— անձնական շահը մեզ չէր դրդում աշխատել գյուղացիների ազատագրման համար, մինչդեռ մենք աշխատում էինք։

— Ո՞չ,— ավելի ու ավելի տաքանալով, ընդհատեց Կոնստանտինը։— Գյուղացիների ազատագրումն ա՛յլ բան էր։ Այդտեղ կար անձնական շահ։ Ուզում էինք մեր վրայից դեն գցել

այդ լուծը, որ ճնշում էր մեզ, բոլոր լավ անհատներիս։ Բայց լինել իրավասու, դատել այն մասին, թե որքա՜ն արտաքնոց մաքրող է պետք և ինչպե՜ս անցկացնել կոյուղու խողովակներն այն քաղաքում, որտեղ ես չեմ ապրում. լինել երդվյալ հավատարմատար ու դատել ապուխտ գողացած մուժիկին և վեց ժամ լսել ամեն տեսակ դատարկաբանություն, որ դուրս են տալիս պաշտպաններն ու դատախազները, լսել, թե ինչպե՜ս նախագահը հարց է տալիս իմ ծերուկ տխմար Ալյոշկային. «արդյոք ընդունո՞ւմ եք դուք, պարոն մեղադրյալ, ապուխտ հափշտակելու փաստը»։— «Հը՞»։

Կոնստանտին Լևինն արդեն շեղվեց բուն խնդրից, սկսեց ներկայացնել նախահագին և տխմար Ալյոշկային. նրան թվում էր, որ այս բոլորը վերաբերում է գործին։

Բայց Սերգեյ Իվանովիչը տարակուսանքով վեր քաշեց ուսերը։

— Է՜, դրանով ի՞նչ ես ուզում ասել։

— Ես ուզում եմ միայն ասել, որ այն իրավունքները, որոնք ինձ... իմ շահերն են շոշափում, ես միշտ կպաշտպանեմ բոլոր ուժերով, որ երբ մեզ մոտ, ուսանողներիս մոտ, խուզարկություն էին անում և ժանդարմները կարդում էին մեր նամակները, ես պատրաստ էի իմ բոլոր ուժերով պաշտպանելու այդ իրավունքները, պաշտպանելու կրթության, ազատության իմ իրավունքները։ Ես հասկանում եմ զինապարտությունը, որ շոշափում է իմ երեխաների, եղբայրների շահերը և ինձ. ես պատրաստ եմ քննարկելու այն, ինչ վերաբերում է հենց ինձ. բայց դատել, թե ինչպե՜ս բաշխել զեմստվոյի քառասուն հազար ռուբլու դրամը, կամ դատել տխմար-Ալյոշկային՝ ես չեմ հասկանում և չեմ կարող։

Կոնստանտին Լևինը խոսում էր այնպես, կարծես փուլ էր եկել նրա բառերի դեմ քաշած պատնեշը։ Սերգեյ Իվանովիչը ժպտաց։

— Իսկ եթե վաղը դու դա՞տ ունենաս. մի՞թե քեզ համար ավելի հաճելի կլինի, որ քեզ դատեին հին քրեական պալատում։

— Ես դատ չեմ ունենա։ Ես ոչ ոքի չեմ մորթի, և դա պետք չէ ինձ։ Է՜հ,— շարունակեց նա և նորից թռավ գործին բնավ չվերաբերող խնդրին,— մեր զեմստվոյի հիմնարկները և այս

բոլորը նման են այն կեչիներին, որ մենք խցկել ենք ամենուր, ինչպես խցկում ենք հոգեգալստի օրը, որպեսզի նմանվի անտառի, որը Եվրոպայում աճում է ինքն իրեն, և ես չեմ կարող սրտանց ջրել այդ կեչիները ու հավատալ դրանց։

Սերգեյ Իվանովիչը վեր քաշեց միայն ուսերը, կամենալով այդ շարժումով արտահայտել իր զարմանքը, թե ո՞րտեղից այժմ հրապարակ եկան իրենց վեճի մեջ այդ կեչիները, թեև նա անմիջապես հասկացավ այն, ինչ ուզում էր ասել դրանով իր եղբայրը։

— Կաց, չէ՞ որ չի կարելի այդպես դատել,— նկատեց նա։ Բայց Կոնստանտին Լևինն ուզում էր արդարանալ այն թերության մեջ, որ ընդունում էր իր նկատմամբ, այսինքն՝ դեպի ընդհանուր բարիքը ցուցաբերած իր անտարբերության մեջ, և նա շարունակեց.

— Ես կարծում եմ,— ասաց Կոնստանտինը,— որ ո՛չ մի գործունեություն չի կարող լինել հաստատուն, եթե չի հիմնված անձնական շահի վրա։ Դա ընդհանուր ճշմարտություն է, փիլիսոփայական ճշմարտություն,— ասաց նա, վճռականորեն կրկնելով փիլիսոփայական բառը, կարծես կամենալով ցույց տալ, որ ինքն էլ իրավունք ունի, ինչպես ամեն ոք, խոսելու փիլիսոփայության մասին։

Սերգեյ Իվանովիչն էլի ժպտաց։ «Նա նույնիսկ իր հակումներն սպասարկող ինչ-որ փիլիսոփայություն ունի», մտածեց նա։

— Է՛, փիլիսոփայության մասին արդեն թող, — ասաց նա։ — Բոլոր դարերի փիլիսոփայության գլխավոր խնդիրը հենց այն է, որ գտնի անձնական շահի և ընդհանուրի միջև գոյություն ունեցող անհրաժեշտ կապը։ Բայց դա գործին չի վերաբերում, գործին վերաբերում է այն, որ ես պետք է միայն ուղղեմ քո համեմատությունը։ Կեչիները խցկած չեն, այլ ոմանք տնկված են, ոմանք ցանված, և նրանց պետք է վերաբերվել զգույշ։ Այն ժողովուրդները միայն ապագա ունեն, այն ժողովուրդներին միայն կարելի է անվանել պատմական, որոնք նրբազգաց են այն բանի հանդեպ, ինչը կարևոր ու նշանակալից է իրենց հիմնարկներում, և բարձր են գնահատում դրանք։

Եվ Սերգեյ Իվանովիչը հարցը փոխադրեց պատմափիլիսոփայական բնագավառը, որ մատչելի չէր Կոնստանտին Լևինին, ու ցույց տվեց նրա հայացքի անիրավացի լինելը։

— Ինչ վերաբերում է այն բանին, որ դա դուր չի գալիս քեզ, ներիր ինձ, դա մեր ռուսական ծուլությունն ու աղայությունն է, իսկ ես համոզված եմ, որ այդ քո ժամանակավոր մոլորությունն է և կանցնի։

Կոնստանտինը լուռ էր։ Նա զգում էր, որ ինքը ջախջախված է ամեն կողմից, բայց միաժամանակ նա զգում էր, որ եղբայրը չհասկացավ այն, ինչ ուզում էր ինքն ասել։ Նա չգիտեր, թե ինչո՞ւ դա չհասկացվեց. արդյո՞ք պատճառն այն էր, որ ինքը չէր կարողանում պարզ ասել այն, ինչ ուզում էր ասել, թե՞ այն, որ եղբայրը չէր ուզում կամ չէր կարողանում հասկանալ իրեն։ Բայց նա չսկսեց խորանալ այդ մտքերի մեջ, առանց առարկելու եղբորը մտաուզվեց բոլորովին այլ բանի մեջ՝ իր անձնական գործերի մեջ։

Սերգեյ Իվանովիչը փաթաթեց վերջին կարթը, արձակեց ձին, և նրանք գնացին։

IV

Անձնական գործը, որ զբաղեցնում էր Լևինին՝ եղբոր հետ տեղի ունեցած զրույցի ժամանակ, հետևյալն էր. անցյալ տարի, գալով մի անգամ խոտհարքի տեղը և բարկանալով կառավարչի վրա, Լևինը գործադրեց հանդարտվելու իր միջոցը՝ առավ մուժիկից գերանդին ու սկսեց հնձել։

Այդ աշխատանքն այնպես դուր եկավ նրան, որ նա մի քանի անգամ սկսեց հնձել. հնձեց տան առաջ եղած ամբողջ մարգագետինը և այս տարի դարձանից կազմեց իր համար ծրագիր՝ հնձել մուժիկների հետ ամբողջ օրերով։ Եղբոր գալու օրից նա մտածմունքի մեջ էր. հնձի՞ թե՞ չհնձի։ Խիղճը տանջում էր նրան՝ ամբողջ օրերով մենակ թողնել եղբորը, և վախենում էր, չլինի թե դրա համար եղբայրը ծիծաղի իր վրա։ Բայց անցնելով մարգագետնի միջով, մտաբերելով հնձի տրպավորությունը, նա համարյա վճռեց, որ կհնձի։ Իսկ եղբոր հետ ունեցած գրգռիչ խոսակցությունից հետո նա նորից հիշեց իր այդ մտադրությունը։

«Հարկավոր է ֆիզիկական շարժում, թե չէ իմ բնավորու-

թյունը բացարձակապես փչանում է», մտածեց նա ու վճռեց հնձել, ինչքան էլ անհարմար լիներ դա եղբոր և մարդկանց առաջ։

Երեկոյան դեմ Կոնստանտին Լևինը գնաց գրասենյակ, կարգադրություններ արեց աշխատանքների մասին ու մարդ ուղարկեց գյուղերը՝ խոտհարներ կանչելու վաղվա համար, որպեսզի հնձեն Կալինովյան մարգագետինը՝ ամենամեծն ու լավագույնը։

— Հետո՝ խնդրեմ իմ գերանդին ուղարկեք Տիտին, որ բերանը ծեծի-սրի և վաղը տանի հետը. կարող է պատահել, որ ես էլ հնձեմ,— ասաց նա, աշխատելով չշփոթվել, չամաչել։

Կառավարիչը ժպտաց և ասաց.

— Լսում եմ։

Երեկոյան թեյի ժամանակ նա ասաց նաև եղբորը։

— Կարծեմ եղանակը լավացավ,— ասաց նա։— Վաղը ես սկսում եմ հնձել։

— Ես շատ եմ սիրում այդ աշխատանքը,— ասաց Սերգեյ Իվանովիչը։

— Ես սաստիկ սիրում եմ։ Ես էլ երբեմն հնձել եմ մուժիկների հետ և վաղն ուզում եմ ամբողջ օրը հնձել։

Սերգեյ Իվանովիչը բարձրացրեց գլուխը և հետաքրքրությամբ նայեց եղբորը։

— Այսինքն՝ ինչպե՞ս։ Մուժիկների հետ հավասա՞ր, ամբողջ օ՞րը։

— Այո՛, դա շատ հաճելի է,— ասաց Լևինը։

— Դա հիանալի բան է, որպես ֆիզիկական վարժություն, միայն դժվար թե դու կարողանաս դիմանալ,— առանց հեգնանքի ասաց Սերգեյ Իվանովիչը։

— Ես փորձել եմ։ Սկզբում դժվար է, հետո մարդ վարժվում է։ Կարծում եմ, որ նրանցից ետ չեմ մնա...

— Ահա թե ինչ։ Բայց ասա, թե մուժիկներն ինչպե՞ս են նայում դրա վրա։ Երևի ծիծաղում են, թե խենթություն է անում պարոնը։

— Ո՛չ, չեմ կարծում։ Սակայն դա այնպիսի ուրախ, միաժամանակ դժվար աշխատանք է, որ մտածելու ժամանակ չկա։

— Է՛, հապա ո՞նց ես ճաշելու դու նրանց հետ։ Արդեն

անհարմար բան կլինի՝ ուղարկել այնտեղ քեզ համար լաֆիթ, գինի և տապակած հնդկահավ։

— Ո՛չ, նրանց հանգստի ժամին ես կգամ տուն։

Հետևյալ առավոտ Կոնստանտին Լևինը վեր կացավ սովորականից ավելի վաղ, բայց տնտեսական կարգադրությունները կասեցրին նրան, և երբ եկավ խոտհարքի տեղը, խոտհարներն արդեն հնձում էին երկրորդ շարքը։

Դեռ լեռան վրայից նրա դիմաց բացվեց սարի տակ ընկած մարգագետնի արդեն հնձած, ստվերոտ մասը, գորշաթույր շարքերով ու բաճկոնների սև կույտերով, որ խոտհարները հանել էին այնտեղ, որտեղից սկսել էին առաջին շարքը։

Քանի մոտենում էր նա, իր առջև տեսնում էր իրար ետևից շարեշար ձգված և գերանդիները տարբեր ձևով թափահարող մուժիկներին, ոմանք բաճկոններով, ոմանք միայն շապիկներով։ Նա հաշվեց քառասուներկու մարդ։

Նրանք դանդաղ շարժվում էին մարգագետնի անհավասար ցած տեղով, որտեղ հին ջրաթումբն էր։ Իր գյուղացիներից ոմանց Լևինը ճանաչեց։ Այնտեղ էր ծերունի Երմիլը, շատ երկար սպիտակ շապիկով, կռացած թափահարում էր գերանդին. այնտեղ էր ջահել կտրիճ Վասկան, որը կառապան էր եղել Լևինի մոտ, և որը յուրաքանչյուր շարքը վերցնում էր ձեռքի ամբողջ թափով։ Այդտեղ էր նաև Տիտը, հնձելու գործում Լևինի մարզիչը, փոքրիկ, նիհար մի մուժիկ։ Նա առանց կռանալու, գնում էր մյուսների առջևից, ասես՝ խաղալով գերանդու հետ, կտրելով իր լայն շարքը։

Լևինն իջավ ձիուց ու կապելով նրան ճանապարհի մոտ, մոտեցավ Տիտին, որը թփի միջից հանելով երկրորդ գերանդին, տվեց նրան։

— Պատրաստ է, պարոն, ածիլում է։ Ինքն իրեն հնձում է,— ասաց Տիտը, ժպտադեմ հանելով գդակը և գերանդին հանձնելով Լևինին։

Լևինը վերցրեց գերանդին ու սկսեց այն հարմարեցնել իրեն։ Իրենց շարքերը վերջացրած, քրտնած և ուրախ խոտհարները դուրս էին գալիս իրար ետևից ճանապարհի վրա ու ծիծաղկոտ բարևում էին պարոնին։ Նրանք բոլորը նայում էին նրան, բայց ոչ ոք ոչինչ չէր ասում, մինչև նրան չդիմեց ճանապարհ դուրս եկած բարձրահասակ ծերունին, կնճռոտ-

ված և անմորուք դեմքով, հագին ոչխարի մորթուց կուրտկա։

— Տե՛ս, պարո՛ն, ետ չմնաս, քանի որ սկսում ես,— ասաց նա, և Լևինը զուսպ ծիծաղ լսեց խոտհարների միջև։

— Կաշխատեմ ետ չմնալ,— ասաց, կանգնելով Տիտի ետևից ու սպասելով սկսելու պահին։

— Տես հա՛,— կրկնեց ծերունին։

Տիտը տեղ բացեց, և Լևինը գնաց նրա ետևից։ Ճանապարհամերձ ցածր խոտ էր, և Լևինը, որ վաղուց չէր հնձել ու շփոթվում էր իր վրա դարձրած հայացքներից, առաջին բոպիներին վատ էր հնձում, թեպետ թափահարում էր ուժեղ։ Նրա ետևից լսվեցին ձայներ.

— Լավ չի կոթած, բռնակը բարձր է, տե՛ս՝ ո՛նց է կռանում,— ասաց մեկը։

— Ավելի զոռ տուր ետևի մասին,— ասաց մյուսը։

— Ոչի՛նչ, լա՛վ կվարժվի,— շարունակեց ծերունին։— Տես՝ գնաց... Լայն շարք ես վերցնում, կբեզարես... Տերն է, ուրիշ կերպ չի լինի, իր համար է աշխատում։ Մտիկ արեք՝ ի՞նչ աքլորներ է թողել։ Դրա համար քոթակում էին մեր մեջքը։

Հասան ավելի փափուկ խոտով տեղին, և Լևինը լսելով, բայց չպատասխանելով ու աշխատելով որքան կարող էր լավ հնձել, գնում էր Տիտի ետևից։ Նրանք անցան մոտ հարյուր քայլ։ Տիտը անընդհատ առաջ էր գնում, կանգ չառնելով և ցույց չտալով հոգնածության նշույլ անգամ, բայց Լևինն արդեն սկսում էր սարսափել, որ չի դիմանա, այնպես հոգնել էր։

Նա զգում էր, որ թևահարում է, լարելով իր վերջին ուժերը, և վճռեց խնդրել Տիտին, որ կանգ առնի։ Բայց հենց այդ ժամանակ ինքը Տիտը կանգնեց ու կռանալով, վերցրեց մի փունջ խոտ, սրբեց գերանդին ու սկսեց սրել։ Լևինն ուղղեց մեջքը և խորը շունչ առնելով, նայեց շուրջը։ Նրա ետևից գալիս էր մի մուժիկ և ըստ երևույթին նույնպես հոգնել էր, որովհետև իսկույն, դեռ չհասած Լևինին, կանգնեց ու սկսեց սրել։ Տիտը սրեց իր և Լևինի գերանդիները, ու առաջ գնացին։

Երկրորդ նվագին նույնն էր։ Տիտը գնում էր զարկ զարկի վրա, կանգ չառնելով ու չհոգնելով։ Լևինը գնում էր նրա ետևից, աշխատելով ետ չմնալ, և ավելի ու ավելի դժվար էր դառնում նրա համար. լինում էր րոպե, երբ նա զգում էր, որ

այլևս ուժ չունի, բայց հենց այդ ժամանակ Տիտը կանգ էր առնում ու սրում։

Այդպես նրանք անցան առաջին շարքը։ Եվ այդ երկար շարքը Լևինին թվաց առանձնապես դժվար. բայց դրա փոխարեն, երբ դուրս եկան շարքի ծայրը և Տիտը, գերանդին դրած ուսին, դանդաղ քայլով ետ դարձավ հնձած լասում իր կրունկների թողած հետքերով, և Լևինը ճիշտ նույն ձևով գնաց իր հնձած լասով, չնայած որ քրտինքը կարկտի պես թափվում էր նրա դեմքից ու կաթում էր քթի վրայից և նրա ամբողջ մեջքը թաց էր, ասես՝ թրջված լիներ ջրի մեջ, նա շատ լավ էր զգում իրեն։ Առանձնապես ուրախացնում էր նրան այն, որ այժմ գիտեր, որ կդիմանա։

Նրա բավականությունը թունավորվեց միայն նրանով, որ իր լասը լավ չէր։ «Կթևահարեմ ավելի քիչ, ավելի շատ կթափահարեմ ամբողջ իրանով»,— մտածում էր նա, համեմատելով իր ցրիվ տված ու անհավասար լասի հետ Տիտի լասը, որ կարծես կտրած էր՝ ձգած թելի գծով։

Առաջին լասը, ինչպես նկատեց Լևինը, Տիտը գնում էր առանձնապես արագ, հավանորեն, կամենալով փորձել պարոնին, և լասը երկար էր։ Հետևյալ լասերն արդեն ավելի թեթև էին, բայց և այնպես Լևինը պետք է լարեր իր բոլոր ուժերը, որ ետ չմնար մուժիկներից։

Նա ոչինչ չէր ուզում, ո՛չ մի բանի մասին չէր մտածում, բացի մի բանից, որ ետ չմնա մուժիկներից և որքան կարելի է լավ գործ անի։ Նա լսում էր միայն գերանդիների զնգոցը և տեսնում էր իր դիմաց Տիտի հեռացող ուղիղ ֆիգուրը, հնձած լասի կորնթարդ կիսաշրջանը, իր գերանդու բերանի մոտ դանդաղ ու ալիքաձև պառկող խոտերը, ծաղիկների գլուխները և իր առջևում լասի ծայրը, որտեղ հանգիստ էր սպասում իրեն։

Չհասկանալով, թե ի՞նչ է այդ և ո՞րտեղից, աշխատանքի կեսին նա հանկարծ իր քրտնած, տաք ուսերին զգաց հաճելի պաղություն։ Նա նայեց երկնքին՝ գերանդին սրելու ժամանակ։ Վրա հասավ ցածր, ծանր մի ամպ, և տեղաց խոշոր կաթիլներով անձրև։ Մի քանի մուժիկներ գնացին բաճկոնների մոտ ու հագան, մյուսները ճիշտ այնպես, ինչպես Լևինը, միայն ցնծագին վեր էին քաշում ուսերը, հաճելի թարմության տակ։

Հնձեցին անցան էլի և էլի լասեր։ Անցնում էին լասեր՝ երկար ու կարճ, լավ ու վատ խոտով։ Լևինը կորցրել էր ժամանակի ամեն գիտակցություն ու բոլորովին չգիտեր՝ հիմա ո՞ւշ է, թե՝ վաղ։ Նրա աշխատանքի մեջ այժմ սկսեց կատարվել փոփոխություն, որ հսկայական հրճվանք էր պատճառում Նրան։ Աշխատանքի կեսին լինում էին րոպեներ, որոնց ընթացքում նա մոռանում էր այն, ինչ անում էր, նա թեթևություն էր զգում, և հենց այդ րոպեներին նրա լասը դուրս էր գալիս համարյա նույնիսկ հավասար ու լավ, ինչպես Տիտի լասը։ Բայց հենց որ հիշում էր, թե ի՞նչ է անում ինքը, սկսում էր աշխատել ավելի լավ անելու համար, անմիջապես զգում էր աշխատանքի ամբողջ ծանրությունը, և լասը դուրս էր գալիս վատ։

Անցնելով էլի մի լաս, նա ուզում էր նորից ետ դառնալ, բայց Տիտը կանգ առավ և մոտենալով ծերունուն, մի բան ասաց նրան կամաց։ Նրանք երկուսն էլ նայեցին արևին։ «Ինչի՞ մասին են նրանք խոսում, և ինչո՞ւ նա նոր լաս չի սկսում», մտածեց Լևինը, գլխի չընկնելով, որ մուժիկներն առանց դադարի արդեն հնձում էին չորս ժամից ո՞չ պակաս և նրանց նախաճաշի ժամանակն է։

— Նախաճաշել, պարոն,— ասաց ծերունին։

— Մի՞թե ժամանակն է։ Դե՜հ, նախաճաշել։

Լևինը գերանդին տվեց Տիտին և մուժիկների հետ միասին, որոնք անձրևից թեթև շաղոտված հնձած երկար տարածության լասերի միջով գնում էին բաճկոնների մոտ՝ հացի, գնաց դեպի ձին։ Այդտեղ միայն նա հասկացավ, որ չնախատեսեց եղանակը, և անձրևը թրջեց խոտը։

— Կփչացնի խոտը,— ասաց նա։

— Ոչինչ, պարոն, անձրևին հնձիր, լավ եղանակին փոցխիր,— ասաց ծերունին։

Լևինը ձին արձակեց և գնաց տուն՝ սուրճ խմելու։

Սերգեյ Իվանովիչը նոր էր վեր կացել։ Մինչև նա կհագնվեր ու դուրս կգար սեղանատուն, Լևինը սուրճ խմեց, նորից գնաց խոտհարքի։

V

Նախաճաշից հետո Լևինն ընկավ շարքի մեջ ո՞չ թե իր առաջվա տեղը, այլ կատակասեր ծերունու, որը նրան կանչեց իրեն հարևան, և երիտասարդ այն մուժիկի միջև, որ ամուսնացել էր աշնանը և առաջին ամառն էր, ինչ եկել էր հնձելու։

Ծերունին, ուղիղ կեցվածքով, գնում էր առջևից, հավասար ու լայն քայլով տեղաշարժելով ծուռտիկ ոտքերը և ճըշգրիտ ու համաչափ շարժումով, որը նրան, ըստ երևույթին, ավելի ջանք չէր պատճառում, քան քայլելու ժամանակ թևերի թափահարումը, կարծես խաղալով, դարսում էր խոտի միակերպ, բարձր շարք։ Ասես՝ ո՞չ թե նա, այլ սուր գերանդին ինքն իրեն զնգում էր հյութալի խոտի մեջ։

Լևինի ետևից գնում էր երիտասարդ Միշկան։ Նրա հաճելի, երիտասարդ դեմքը, մազերի վրայով շուրջանակի կապված թարմ խոտի կեմով, շարունակ աշխատում էր լարվածությունից։ Բայց հենց որ նայում էին նրան, նա ժպտում էր։ Ինչպես երևում է, նա պատրաստ էր ավելի շուտ մեռնել, քան խոստովանել, որ դժվար է իր համար։

Լևինը գնում էր նրանց արանքում։ Ամենաշոգ ժամանակ հունձը նրան թվաց ո՞չ այնպես դժվար։ Նրա վրայից թափվող քրտինքը զովացնում էր նրան, իսկ արևը, որ այրում էր մեջքը, գլուխը և մինչև արմունկը քշտած թևը, տալիս էր նրան տոկունություն և համառություն աշխատանքի մեջ և ավելի շուտ-շուտ էին գալիս անգիտակից կացության այն րոպեները, երբ մարդ կարող էր չմտածել, թե ի՞նչ է անում։ Գերանդին կտրում էր ինքն իրեն։ Դրանք երջանիկ րոպեներ էին։ Ավելի ուրախալի էին այն րոպեները, երբ մոտենալով գետին, որի ափով վերջանում էին լասերը, ծերունին թաց, խիտ խոտով սրբում էր գերանդին, նրա պողպատը ողողում էր գետի թարմ ջրի մեջ, հեսանանոցով ջուր էր վերցնում և հյուրասիրում Լևինին։

— Հապա մի փորձիր իմ կվասը։ Հը՞, լա՞վն է,— ասում էր նա, աչքով անելով։

Եվ իրոք, Լևինը երբեք չէր խմել այնպիսի խմիչք, ինչպիսին էր այդ տաք ջուրը, որի մեջ լողում էր կանաչը և որը ժանգի համ էր տալիս թիթեղյա հեսանանոցից։ Ու դրանից անմիջա-

պես հետո դալիս էր երջանիկ, համրաքայլ զբոսանքը, ձեռքը գերանդու վրա, որի ժամանակ կարելի էր սրբել տեղատարափ քրտինքը, շունչ քաշել ամբողջ կրծքով ու դիտել խոտհարների ձիգ եկած շարքը և այն, ինչ կատարվում էր շուրջը, անտառում ու դաշտում։

Որքան ավելի էր հնձում Լևինը, այնքան ավելի ու ավելի հաճախ էր զգում մոռացության րոպեներ, երբ արդեն ո՞չ թե ձեռքերն էին տանում-բերում գերանդին, այլ ինքը գերանդին էր շարժում, տանում իր ետևից նրա գիտակցող, կյանքով լի ամբողջ մարմինը, և կարծես թռվչանքով, առանց մտածելու աշխատանքի մասին, ինքն իրեն կատարվում էր աշխատանքը՝ ճիշտ ու հատորոշ։ Դրանք ամենաերջանիկ րոպեներն էին։

Դժվար էր միայն այն ժամանակ, երբ պետք էր ընդհատել այդ, անգիտակցական դարձած շարժումը և մտածել. երբ պետք էր հնձել մամռապատ կոճղի շուրջը կամ չքաղհանած թրթնջուկանոցը։ Ծերունին դա անում էր հեշտությամբ։ Կոճղ պատահելիս նա փոխում էր շարժումը և մի տեղ գերանդու ետևի մասով, մի տեղ ծայրով փրչատում էր կոճղը երկու կողմից՝ կարճ հարվածներով։ Եվ այդ անելով, նա միշտ զննում ու դիտում էր, թե ի՞նչ էր բացվում իր առաջ. մերթ նա կտրում էր թրթնջուկի զոխը, ուտում էր կամ հյուրասիրում Լևինին, մերթ գերանդու քթով դեն էր գցում ոստը, մերթ նայում էր լորի բունը, որի միջից՝ գերանդու բերնի տակից դուրս էր թռչում էգը, մերթ որսում էր ճանապարհին պատահած օձը, և բարձրացնելով նրան գերանդով, ասես պատառաքաղով, ցույց էր տալիս Լևինին ու դեն շպրտում։

Թե՛ Լևինի, թե՛ նրա ետևից գնացող երիտասարդ տղայի համար դժվար էին շարժումների այդ փոփոխումները։ Նրանք երկուսն էլ կանոնավորելով իրենց մի լարված շարժումը, գտնվում էին աշխատանքի ազարտի մեջ և անկարող էին փոխելու շարժումն ու միաժամանակ դիտելու, թե ի՞նչ կար իրենց դիմաց։

Լևինը չէր նկատում, թե ինչպե՞ս է անցնում ժամանակը։ Եթե հարցնեին նրան, ինչքա՞ն ժամանակ է, որ նա հնձում էր, կասեր՝ կես ժամ, մինչդեռ, արդեն հասել էր ճաշի ժամը։ Սկսելով շարքը, ծերունին Լևինի ուշադրությունը հրավիրեց

այն աղջիկների և տղաների վրա, որ զանազան կողմերից, հագիվ նկատելի, բարձր խոտի միջով ու ճանապարհով գալիս էին դեպի խոտհարները, բերելով հացի կապոցներ և բերանը լաթերով խցկած կվասով լի փոքր կժեր, որոնք ձիգ էին տվել նրանց մանկական ձեռքերը։

— Հրե՛ն, սողում են բլոճները,— ասաց նա, նշելով նրանց և ձեռքի տակով նայեց արևին։

Անցան էլի երկու լաս, ծերունին կանգ առավ։

— Է՛հ, պարոն, պիտի ճաշեմ,— ասաց նա վճռականապես։ Եվ հասնելով գետին, խոտհարները լասերի միջով գնացին դեպի բաճկոնները, որոնց մոտ նստել էին ճաշը բերած երեխաները, սպասելով նրանց։ Մուժիկները հավաքվեցին՝ հեռավորները՝ սայլի տակ, մոտիկները՝ ոլորի թփի տակ, որի վրա խոտ գցեցին։

Լևինը նստեց նրանց մոտ. նա չէր ուզում գնալ տուն։

Պարոնից քաշվելու ամեն զգացում վաղուց արդեն չքացել էր։ Մուժիկները պատրաստվում էին ճաշելու։ Ոմանք լվացվում էին, երիտասարդ տղաները լողանում էին գետում, մյուսները տեղ էին սարքում հանգստի համար, արձակում էին հացի կապոցները և բացում կվասի կժերի բերանը։ Ծերունին հացը բրդեց գավաթի մեջ, գդալի պոչով տրորեց, փափկացրեց այն, հեսանանոցից ջուր լցրեց վրան, էլի հաց կտրեց և աղ անելուց հետո, կանգնեց դեպի արևելք՝ աղոթելու։

— Հապա, պարոն, փորձիր իմ բրդոշը,— ասաց նա, ծընկաչոք նստելով գավաթի առաջ։

Բրդոշն այնպես համեղ էր, որ Լևինը փոխեց ճաշին տուն գնալու իր միտքը։ Նա ճաշեց ծերունու հետ և խոսեց նրա տնային գործերի մասին, ջերմ հետաքրքրություն ցույց տալով նրանց նկատմամբ, և հաղորդեց նրան իր բոլոր գործերն ու հանգամանքները, որոնք կարող էին հետաքրքրել ծերունուն։ Նա իրեն ավելի մոտ էր զգում նրան, քան եղբորը, և ակամա ժպտում էր այն քնքշությունից, որ տածում էր դեպի այդ մարդը։ Երբ ծերունին նորից վեր կացավ, աղոթեց ու պառկեց այդտեղ եղած թփի շվաքում, գլխի տակ դնելով խոտ, Լևինն արեց նույն բանը և, չնայած արևի տակ կպչուն, համառ ճանճերին ու բլոճներին, որ խուտուտում էին նրա քրտնած երեսն ու մարմինը, քնեց անմիջապես և զարթնեց միայն այն ժամա-

նակ, երբ արևն անցավ թփի հակառակ կողմն ու սկսեց հասնել նրան։ Ծերունին վաղուց արդեն քնից վեր կացել, նստել էր և ծեծելով սրում էր ջահել տղաների գերանդիները։

Լևինը նայեց շուրջը և չճանաչեց տեղը։ Այդքան փոխվել էր ամեն ինչ։ Մարգագետնի հսկայական տարածությունը հնձված էր ու փայլում էր առանձնահատուկ նոր փայլով, իր լաստերով, որոնք արդեն բուրում էին արևի երեկոյան շեղ ճառագայթների տակ։ Ե՛վ շուրջբոլորը հնձած թփերը գետափին, և՛ հենց գետը. որ առաջ չէր երևում, իսկ այժմ պողպատի պես փայլում էր ոլորաններում, և՛ շարժվող ու վեր կացող մարդիկ, և՛ խոտի ուղղաձիգ պատը մարգագետնի չհնձած տեղում, և՛ բազեները, որ ճախրում էին մերկացած մարգագետնի վրա. այս բոլորը կատարյալ նորություն էր։ Ուշքի գալով, Լևինը սկսեց կշռադատել, թե որքա՞ն է հնձված ու դեռ ինչքան կարելի է հնձել այսօր։

Չափազանց շատ բան էր արված քառասուներկու մարդու համար։ Արդեն հնձված էր ամբողջ մեծ մարգագետինը, որ կռռի ժամանակ հնձում էին երեսուն հնձվորներ՝ երկու օրում։ Հնձված չէին միայն անկյունները՝ կարճ շարքերով։ Բայց Լևինն ուզում էր որքան կարելի է ավելի շատ հնձել այդ օրը և սրտնեղում էր արևից, որն այդպես արագ իջնում էր դեպի մայրամուտ։ Նա չէր զգում ո՛չ մի հոգնածություն. նա միայն ուզում էր է՛լ ավելի արագ և որքան հնարավոր է՝ ավելի շատ գործ կատարել։

— Ի՞նչ ես կարծում, կարո՞ղ ենք Մաշկին-Վերխն էլ հընձել, հա՞,— ասաց նա ծերունուն։

— Թե աստված տա. արևն իջել է։ Տղերքին օղի կլինի՞։

Իրիկնահացին, երբ նորից նստեցին և ծխողներն սկսեցին ծխել, ծերունին հայտարարեց տղերքին, որ «օղի կլինի, եթե Մաշկին-Վերխը հնձենն»։

— Ինչի չենք հնձի։ Սկսի՛ր, Տիտ։ Ձեռաց կխուզենք. կկըշտանաս գիշերը։ Սկսի՛ր,— լսվեցին ձայներ, և ուտելով հացի վերջին պատառը՝ խոտհարները գնացին գերանդի քաշելու։

— Դեհ, տղերք, ձե՛զ տեսնեմ,— ասաց Տիտը և համարյա վազելով առաջ ընկավ ամենքից։

— Գնա՛, գնա՛— ասում էր ծերունին, հասնելով նրա ետևից ու մի փոքր անցնելով,— կկտրեմ։ Զգո՛ւյշ։

Ե՛վ ջահելները, և՛ ծերունիները հնձում էին, կարծես մրցության մտած։ Բայց ինչքան էլ շտապում էին, չէին փչացնում խոտը, և շարքերը դարսվում էին նույնպես մաքուր ու հատորոշ։ Ծայրափին մնացած անկյունը հնձվեց հինգ բոպեում։ Վերջին խոտհարներն իրենց լասն ավարտելու վրա էին, երբ առջևինները բաճկոնները գցեցին ուսերին ու ճանապարհով գնացին դեպի Մաշկին-Վերխը։

Արևն արդեն իջնում էր դեպի ծառերը, երբ նրանք, հեսանանոցները շրխկացնելով, մտան Մաշկին-Վերխի անտառոտ ձորակը։ Հովտի մեջտեղում խոտը հասնում էր մինչև գոտկատեղ, նուրբ էր ու փափուկ, լայնատերև, տեղ-տեղ անտառում խայտում էր լորահատիկը։

Կարճ խորհրդակցությունից հետո՝ գնալ երկայնքո՞վ, թե՞ լայնքով՝ Պրոխոր Երմիլինը, նույնպես հայտնի խոտհար, վիթխարի, սևաթուխ մի մուժիկ, առաջ ընկավ մյուսներից։ Նա մի շարք առաջ գնաց, ետ դարձավ ու թևահարեց, և ամենքն սկսեցին հավասարվել նրա ետևից՝ գնալով սարի տակի հովտով ու դեպի սարը՝ անտառի ծայրափով։ Արևն անցավ անտառի ետևը։ Ցողն արդեն ընկավ. խոտհարները բլրի գլխին միայն արևի տակ էին, իսկ ցածրում, որտեղից գոլորշի էր բարձրանում, և այն կողմում գնում էին զով, շաղոտ ստվերի միջով։ Աշխատանքը եռում էր։

Հյութեղ հնչյունով կտրվող և համեմաբույր խոտը պառկում էր բարձր շարքերով։ Կարճ շարքերում ամեն կողմից իրար սեղմված խոտհարները, շրխկացնելով հեսանանոցները և համակված մերթ իրար դիպչող գերանդիների զնգոցով, մերթ սրվող գերանդու բերնին քսվող հեսանի սուլոցով, մերթ ուրախ կանչերով, առաջ էին մղում իրար։

Լևինն առաջվա պես գնում էր երիտասարդ տղայի և ծերունու արանքում։ Ծերունին, որ հագել էր ոչխարի մորթուց կուրտկա, դարձյալ ուրախ էր, կատակասեր և շարժումների մեջ ազատ։ Անտառում անընդհատ պատահում էին հյութալի խոտի մեջ ուռած կեչու սունկեր, որ կտրտվում էին գերանդիներով։ Բայց ծերունին, պատահելով սնկի, ամեն անգամ կռանում, վերցնում էր ու դնում ծոցը։ «Էլի պառավիս նվեր», ասում էր նա։

Որքան էլ հեշտ էր հնձել թաց և թույլ խոտը, բայց դժվար էր իջնել ու բարձրանալ ձորի զառիթափ ափերով։ Սակայն այդ բանը չէր ճնշում ծերունուն։ Առաջվա պես թափահարելով գերանդին, նա մեծ տրեխներ հագած իր ոտքերի փոքրիկ, հաստատուն քայլերով բարձրանում էր զառիթափն ի վեր և, թեպետ ցնցվում էր ամբողջ մարմնով ու շապիկից վար կախված վարտիքով, բայց չէր թողնում իր ճանապարհին ո՛չ մի խոտ, ո՛չ մի սունկ և դարձյալ կատակում էր մուժիկների ու Լևինի հետ։ Լևինը գնում էր նրա ետևից և հաճախ մտածում էր, որ նա անպատճառ կընկնի, բարձրանալով գերանդիով այնպիսի ուղղաձիգ բլրակ, ուր դժվար է բարձրանալ նույնիսկ առանց գերանդու. բայց նա բարձրանում և անում էր, ինչ պետք է։ Լևինն զգում էր, որ նրան շարժում է ինչ-որ արտաքին ուժ։

VI

Մաշկին-Վերխը հնձեցին, ավարտեցին վերջին շարքերը, հագան բաճկոնները և ուրախ գնացին դեպի տուն։ Լևինը նստեց ձին ու, ափսոսանքով բաժանվելով մուժիկներից, գնաց տուն։ Լեռան վրայից նա ետ նայեց. նրանք չէին երևում ցածրից բարձրացող մուժի մեջ. լսվում էին միայն ուրախ, կոպիտ ձայներ, քրքիջ և իրար ընդհարվող գերանդիների զնգոց։

Սերգեյ Իվանովիչը վաղուց արդեն ճաշած, լիմոնով և սառցով ջուր էր խմում իր սենյակում, նայելով փոստից հենց նոր ստացված թերթերն ու ամսագրերը, երբ Լևինը, քրտինքից ճակատին կպած խճճված մազերով և սևացած թաց մեջքով ու կրծքով, ուրախ զրույցով ներս խուժեց նրա սենյակը։

— Իսկ մենք հնձեցինք ամբողջ մարգագետինը։ Ա՜խ, ինչ լա՜վ է, զարմանալի լավ։ Իսկ դու ի՞նչ էիր անում,— ասում էր Լևինը, բոլորովին մոռացած երեկվա անախորժ խոսակցությունը։

— Տեր իմ աստված։ Ինչի՞ նման ես դու,— ասաց Սերգեյ Իվանովիչը, առաջին բոպեին զժգոհ նայելով եղբորը։— Դա՞ուռը, դուռը փակիր,— ճչաց նա։— Անպայման ներս թողիր մի ամբողջ տասնյակ։

Սերգեյ Իվանովիչը տանել չէր կարող ճանճերին և իր սենյակի լուսամուտները բացում էր միայն գիշերը ու խնամքով փակում դռները։

— Աստված վկա, ո՛չ մի հատ։ Իսկ եթե ներս թողի, կբռնեմ։ Դու չես հավատա, թե ինչպիսի՛ հաճույք է։ Դո՞ւ ինչպես անցկացրիր օրը։

— Ես՝ լավ, բայց մի՞թե ամբողջ օրը դու հնձում էիր։ Ես կարծում եմ, դու սոված ես գայլի պես։ Կուզման ամեն բան պատրաստել է քեզ համար։

— Ո՛չ, ես ուտել չեմ ուզում։ Այնտեղ կերա։ Գնամ, լվացվեմ։

— Դե՜, գնա, գնա, ես էլ իսկույն կգամ քեզ մոտ,— ասաց Սերգեյ Իվանովիչը, օրորելով գլուխը և նայելով եղբորը։— Դե՜ գնա, գնա շուտ,— ավելացրեց նա ժպտալով ու հավաքելով իր գրքերը, պատրաստվեց գնալու։ Հանկարծ նա ինքն էլ համակվեց ուրախությամբ, և չէր ուզում բաժանվել եղբորից։— Իսկ անձրևի ժամանակ ո՞րտեղ էիր։

— Ի՜նչ անձրև, մի քանի կաթիլ։ Ուրեմն ես իսկույն կգամ։ Ուրեմն դու լա՞վ անցկացրիր օրը։ Հիանալի։— Եվ Լևինը գնաց հագնվելու։

Հինգ բոպեից եղբայրները հանդիպեցին իրար սեղանատանը։ Թեպետ Լևինին թվում էր, որ ինքը ուտել չի ուզում, և ճաշի նստեց միայն նրա համար, որպեսզի չվիրավորի Կուզմային, բայց երբ սկսեց ուտել, ճաշը նրան թվաց չափազանց համեղ։ Սերգեյ Իվանովիչը ժպտալով նայում էր նրան։

— Ա՜խ, հա, նամակ ունես,— ասաց նա։— Կուզմա, խնդրեմ բերես ներքևից։ Տե՜ս միայն, դուռը ծածկիր։

Նամակը Օբլոնսկուց էր։ Լևինը բարձրաձայն կարդաց այն։ Օբլոնսկին գրում էր Պետերբուրգից. «Ես նամակ ստացա Դոլլիից, նա Երգուշովոյում է, և նրա մոտ դրությունը կարգի չի ընկնում։ Խնդրում եմ, գնա նրա մոտ, օգնիր քո խորհուրդներով, դու ամեն բան գիտես։ Նա շատ կուրախանա քեզ տեսնելով։ Բոլորովին մենակ է խեղճը։ Զոքանչս ամենքի հետ դեռ արտասահմանում է»։

Ա՜յ, հրաշալի բան։ Անպայման կերթամ նրանց մոտ,— ասաց Լևինը։— Կուզե՞ս միասին գնանք։ Նա այնպես համակրելի կին է։ Ճիշտ չէ՞։

— Իսկ նրանք մո՞տ են այստեղից։

— Երեսուն վերստ։ Սակայն կարող է և քառասուն լինել։ Բայց հիանալի ճանապարհ է։ Շատ լավ կերթանք։

— Շատ ուրախ եմ,—շարունակ ժպտալով, ասաց Սերգեյ Իվանովիչը։

Փոքր եղբոր տեսքն անմիջականորեն տրամադրում էր նրան ուրախության։

— Օ՜, ի՜նչ ախորժակ ունես,— ասաց նա, նայելով ափսեի վրա կուտացած նրա մուգ-կարմիր-արևավառ դեմքին ու վզին։

— Հրաշալի՜։ Դու չես հավատա, թե դա ինչպիսի օգտակար ռեժիմ է ամեն կարգի հիմարությունների դեմ։ Ես ուզում եմ բժշկությունը հարստացնել նոր տերմինով. Arbeitscur[1].

— Կարծեմ, դա քեզ պետք չէ։

— Այո՜, բայց զանազան ջղային հիվանդների պետք է։

— Այո՜, դա պետք է փորձել։ Իսկ ես ուզում էի գալ խոտհարքի տեղը, նայել քեզ, բայց այնպիսի անտանելի շոգ էր, որ անտառից ավելի հեռու չկարողացա գնալ։ Մի քիչ նստեցի անտառում և գնացի Սլոբոդա, տեսա քո ծծմորը և նրա միջոցով փորձեցի իմանալ, թե ի՜նչ հայեցակետ ունեն մուժիկները քո նկատմամբ։ Որքան կարողացա հասկանալ, նրանք չեն հավանում դա։ Նա ասաց. «Դա աղայի բան չէ»։ Առհասարակ ինձ թվում է, որ ժողովրդական հասկացողության մեջ շատ հաստատ ձևով որոշվել են «աղաների», ինչպես նրանք են ասում, գործունեության վերաբերող պահանջները։ Եվ նրանք չեն ընդունում, որ «աղաները» դուրս գան նրանց հասկացողության մեջ որոշված շրջանակներից։

— Կարող է պատահել. բայց դա այնպիսի բավականություն է, որի նմանը ես չեմ զգացել իմ կյանքում։ Իվ չէ՞ որ վատ բան էլ չկա դրա մեջ։ Ճիշտ չէ՞ արդյոք,— ասաց Լևինը։— Ի՜նչ արած, եթե նրանց դուր չի գալիս։ Բայց և այնպես, ես կարծում եմ, որ ոչինչ։ Հա՞։

— Առհասարակ,— շարունակեց Սերգեյ Իվանովիչը,— դու, ինչպես տեսնում եմ, գոհ ես քո օրից։

[1] Աշխատանքով բուժում։

— Շատ եմ գոհ։ Մենք հնձեցինք ամբողջ մարգագետինը։ Եվ ինչպիսի՜ ծերունու հետ ես բարեկամացա։ Դու չես կարող երևակայել, թե նա ի՜նչ հրաշալի մարդ է։

— Ուրեմն գոհ ես քո օրից։ Ես նույնպես։ Նախ՝ ես վճռեցի շախմատի երկու խնդիրը, մեկը շատ հետաքրքրական է, սկսվում է զինվորով։ Ես ցույց կտամ քեզ։ Հետո՝ մտածում էի մեր երեկվա խոսակցության մասին։

— Ի՞նչ։ Երեկվա խոսակցության մասի՞ն,— ասաց Լևինը, երանավետ կկոցելով աչքերը ու հևալով վերջացրած ճաշից հետո և վճռակտնապես անկարող լինելով հիշելու, թե ի՜նչ էր երեկվա խոսակցությունը։

— Ես կարծում եմ, դու մասամբ իրավացի ես։ Մեր տարաձայնությունն այն է, որ դու շարժիչ ես համարում անձնական շահը, իսկ ես կարծում եմ, որ կրթության որոշ աստիճանի վրա կանգնած յուրաքանչյուր մարդ պետք է ունենա ընդհանուր բարիքի շահագրգռություն։ Գուցե դու իրավացի ես, թե ավելի ցանկալի է նույնպես շահագրգռված գործունեությունը։ Առհասարակ դու չափազանց primesautière[1] բնավորություն ես, ինչպես ասում են ֆրանսիացիք. դու ուզում ես մոլեգին, եռանդուն գործունեություն կամ՝ ոչինչ։

Լևինը լսում էր եղբորը և բացարձակապես ոչինչ չէր հասկանում ու չէր ուզում հասկանալ։ Նա վախենում էր միայն, չլինի թե եղբայրն այնպիսի հարց տա, որից երևա, որ ինքը ոչինչ չի լսել։

— Այսպես, ահա, սիրելի բարեկամ,— ասաց Սերգեյ Իվանովիչը, ձեռքը դնելով նրա ուսին։

— Այո՜, հասկանալի է։ Է՜հ, ի՜նչ։ Ես չեմ պնդում իմը,— պատասխանեց Լևինը մանկական, հանցավոր ժպիտով։ «Հա՜, ինչի՞ մասին էի ես վիճում,— մտածում էր նա։— Իհա՜րկե, ես էլ եմ իրավացի, նա էլ, և ամեն ինչ հրաշալի է։ Պետք է միայն գնալ գրասենյակ ու կարգադրություններ անել»։ Նա կանգնեց, ձգվելով և ժպտալով։

Սերգեյ Իվանովիչը նույնպես ժպտաց։

— Ուզո՞ւմ ես քայլել, գնանք միասին,— ասաց նա, շու-

[1] Վճռական, առաջին տպավորության տակ գործող մարդ։

զենալով բաժանվել եղբորից, որից այնպես թարմություն ու կայտառություն էր բուրում։— Գնանք, կմտնենք նաև գրասենյակ, եթե պետք է քեզ։

— Ա՜խ, աստված իմ,— բացականչեց Լևինն այնպես բարձր, որ Սերգեյ Իվանովիչը վախեցավ։

— Ի՞նչ եղավ, ի՞նչ։

— Ինչպե՞ս է Ագաֆիա Միխայլովնայի ձեռքը,— ասաց Լևինը, խփելով գլխին։— Ես մոռացա նրա մասին։

— Լավ է ավելի։

— Բայց այնուամենայնիվ, մի ես վազեմ նրա մոտ։ Դու գեռ գլխարկդ չծածկած, ես կվերադառնամ։

Եվ նա ճռռանի պես աղմկեց կրունկներով, սանդուղքներից վազելով ցած։

VII

Այն ժամանակ, մինչ Ստեպան Արկադևիչը գնաց Պետերբուրգ՝ կատարելու ամենաբնական, բոլոր ծառայողներին հայտնի, թեպետ և ոչ ծառայողների համար անհասկանալի, կարևորագույն մի պարտականություն, առանց որի հնարավոր չէ ծառայել, այսինքն՝ հիշեցնել իր մասին մինիստրությունում, և այդ պարտականությունը կատարելիս ուրախ ու հաճույալից ժամանակ էր անցկացնում և ձիարշավներում, և ամառանոցներում, տնից վերցնելով համարյա ամբողջ դրամը, Դոլլին երեխաների հետ գնաց գյուղ, որպեսզի որքան հնարավոր է՝ կրճատի ծախսերը։ Նա գնաց իրեն օժիտ տրված Երգուշովո գյուղը, նույն այն գյուղը, որտեղ գարնանը վաճառվեց անտառը, և որը գտնվում էր Լևինի Պոկրովսկոյե գյուղից հիսուն վերստի վրա։

Երգուշովոյում հին մեծ տունը վաղուց քանդել էին, և դեռ իշխանի ձեռքով մեծացվել ու կարգի էր բերվել կողաշենքը։ Այն, քսան տարի առաջ, երբ Դոլլին երեխա էր, ընդարձակ ու հարմար էր, թեպետ կողքով նայում էր, ինչպես բոլոր կողաշենքերը, դեպի հարավ և դեպի կառքերի երթևեկության ծառուղին։ Բայց այժմ այն հին էր ու փտած։ Երբ դեռ գարնանը Ստեպան Արկադևիչը գնում էր վաճառելու անտառը, Դոլլին խնդրել էր նրան՝ նայել տունը և հրամայել, որ կարգի

բերեն ինչ պետք է։ Ստեպան Արկադևիչը, ինչպես և բոլոր մեղավոր ամուսինները, որ շատ հոգս էր տանում կնոջ հարմարությունների մասին, ինքը նայեց, զննեց տունը և կարգադրություններ արեց այն ամենի մասին, ինչը նրա հասկացողությամբ կարևոր էր։ Նրա կարծիքով պետք էր կրետոնե նոր երես քաշել ամբողջ կահույքին, կախել վարագույրները, մաքրել այգին, կամրջիկ շինել լճակի մոտ ու ծաղիկներ ցանել։ Բայց նա մոռացավ ուրիշ շատ անհրաժեշտ բաներ, որոնց պակասը հետո տանջեց Դարիա Ալեքսանդրովնային։

Ստեպան Արկադևիչը որքան էլ աշխատում էր լինել հոգատար ամուսին ու հայր, ո՛չ մի կերպ չէր կարողանում հիշել, որ ունի կին ու երեխաներ։ Նա ուներ ամուրի մարդու ճաշակ և համակերպվում էր միայն դրան։ Վերադառնալով Մոսկվա, նա պարծանքով հայտարարեց կնոջը, որ ամեն բան պատրաստ է, որ տունը խաղալիքի պես ակնահաճ է, և որ խորհուրդ է տալիս նրան գնալ։ Ստեպան Արկադևիչի համար կնոջ գյուղ գնալը շատ հաճելի էր ամեն տեսակետից. դա և՛ երեխաների համար առողջարար էր, և՛ ծախսերը կկրճատվեին, և՛ ինքն ավելի ազատ կլիներ։ Իսկ Դարիա Ալեքսանդրովնան ամառը գյուղ գնալն անհրաժեշտ էր համարում երեխաների համար, մանավանդ աղջկա համար, որը չէր կազդուրվում քութեշից հետո, ու վերջապես ուզում էր ազատվել մանր նվաստացումներից, բակապանի, ձկնավաճառի, կոշկակարի մանր պարտքերից, որոնք տանջում էին նրան։ Բացի դրանից, գյուղ գնալը հաճելի էր նրան նաև այն պատճառով, որ փափագում էր հրապուրել, գյուղ բերել Կիտիին, որը պետք է արտասահմանից վերադառնար ամառվա կեսին և որին պատվիրել էին լողանալ։ Կիտին հանքային ջրերից գրում էր, որ ոչինչ այնպես հաճելի չէ իրեն, ինչպես ամառը լինել Դոլլիի հետ Երգուշովոյում, լի մանկական հիշողություններով իրենց երկուսի համար էլ։

Սկզբներում գյուղական կյանքը շատ դժվար էր Դոլլիի համար։ Մանկության տարիներին նա ապրել էր գյուղում, և նրա մեջ մնացել էր այն տպավորությունը, որ գյուղը փրկություն է քաղաքային բոլոր անախորժություններից, որ թեպետ կյանքն այնտեղ գեղեցիկ չէ (դրա հետ Դոլլին հեշտությամբ հաշտվում էր), բայց դրա փոխարեն՝ էժան է և հար-

մար. ամեն բան կա, ամեն ինչ լժան է, ամեն բան կարելի է ճարել, և երեխաների համար լավ է։ Բայց այժմ, գալով գյուղ, որպես տանտիկին, նա տեսավ, որ դա բնավ այն չէ, ինչ պատկերացնում էր ինքը։

Նրանց գալու հետևյալ օրը տեղատարափ անձրև եկավ, ու գիշերը կաթեց առաստաղից միջանցքում, մանկասենյակում, այնպես որ մահճակալները տեղափոխեցին ընդունարան։ Ծառայանոցում խոհարարուհի չկար. պարզվեց, որ ինը կովերից, անասնապահ կնոջ ասելով, որը հղի է, որը ծնել է առաջին անգամ, մի քանիսը պառավ են, մյուսները կոշտապտուկ են. ո՛չ կարագը, ո՛չ կաթը, հերիք չէր անում նույնիսկ երեխաներին։ Ձու չկար։ Հավ չէր ճարվում. տապակում ու եփում էին պառավ, մանուշակագույն, ջլուտ աքաղաղներ։ Չէր կարելի գտնել մի կին, որը լվանար հատակները, բոլորը զբաղված էին գետնախնձորի մշակույթով։ Ջիով զբոսնել չէր կարելի, որովհետև ձիերից մեկը գժություն էր անում, փոկերը կտրատում էր լծելիս։ Լողանալու տեղ չկար, գետի ամբողջ ափը ոտնահարել էին անասունները և բաց էր ճանապարհի կողմից. նույնիսկ ոտքով չէր կարելի զբոսանքի գնալ, որովհետև անասունը ջարդված ցանկապատից մտնում էր այգի, և կար մի սարսափելի ցուլ, որը մռնչում էր, այդ պատճառով, երևի, պոզահարում էր։ Պահարաններ չկային զգեստի համար։ Եղածները չէին փակվում և իրենք իրենց բացվում էին, երբ մարդ էր անցնում նրանց մոտով։ Ջուգունե ամաններ և կավե կճուճներ չկային. կաթսա չկար լվացքարանի համար, նույնիսկ արդուկելու տախտակ չկար աղախնանոցի համար։

Սկզբներում հանգստի ու անդորրության փոխարեն, ընկնելով այդ սարսափելի, Դոլլիի հայեցակետով, աղետների մեջ, Դարիա Ալեքսանդրովնան հուսահատվել էր. նա աշխատում էր բոլոր ուժերով, զգում էր դրության անելանելիությունը և ամեն րոպե զսպում էր իր աչքերին երևացող արցունքները։ Կառավարիչը, նախկին վախմիստր, հետո՝ բարապան, որին Ստեպան Արկադիչը սիրեց ու նշանակեց այդ պաշտոնում նրա գեղեցիկ ու պատկառելի արտաքինի պատճառով, ո՛չ մի մասնակցություն ցույց չէր տալիս Դարիա Ալեքսանդրովնայի դժբախտություններին, ասում էր հարդանքով. «Ոչ մի կերպ

հնարավոր չէ, այնպես զզվելի մարդիկ են», և ոչ մի բանում չէր օգնում։

Դրությունը թվում էր անելանելի։ Սակայն Օբլոնսկիների տանը, ինչպես բոլոր ընտանիքավոր տներում, կար աչքի չընկնող, բայց շատ կարևոր և շատ օգտակար մի դեմք՝ Մատրյոնա Ֆիլիմոնովնան։ Նա հանգստացնում էր իր տիրուհուն, հավատացնում էր նրան, որ ամեն բան կարգի կգա (դա նրա արտահայտությունն էր, որ նրանից վերցրել էր Մատվեյը), ինքն էլ առանց շտապելու և հուզվելու գործում էր։

Նա անմիջապես մոտիկացավ կառավարչի կնոջը և հենց առաջին օրը նրա ու կառավարչի հետ թեյ էր խմում ակացիաների տակ ու քննարկում բոլոր գործերը։ Շուտով ակացիաների տակ հիմնվեց Մատրյոնա Ֆիլիմոնովնայի ակումբը, և այստեղ, այս ակումբի միջոցով, կազմված կառավարչի կնոջից, տանուտերից ու գրասենյակի վարիչից, սկսեցին կամաց-կամաց հարթվել կյանքի դժվարությունները, և իրոք մի շաբաթից ամեն բան կարգի եկավ։ Կտուրը նորոգեցին, խոհարարուհի գտան՝ տանուտերի սանամորը, հավեր գնեցին, կովերն սկսեցին կաթ տալ, պարտեզը ցանկապատեցին ձողերով, հյուսնը շինեց գլանիչ, պահարանների դռներին շինեցին ճարմանդներ, ու դրանք այլևս ինքնաբերաբար չէին բացվում, և արդուկելու տախտակը, փաթաթված զինվորական մահուդի մեջ, դրվեց բազկաթոռի կռնատեղի ու կամոդի վրա, և աղախնանոցում զգացվեց արդուկի հոտ։

— Այ, ահա՛. իսկ դուք հուսահատվում էիք,— ասաց Մատրյոնա Ֆիլիմոնովնան, ցույց տալով արդուկելու տախտակը։

Նույնիսկ շինեցին լողարան՝ ծղոտե վահաններից։ Լիլին սկսեց լողանալ, և Դարիա Ալեքսանդրովնայի համար կենսագործվեցին թեպետ մասամբ՝ նրա ակնկալությունները գյուղական կյանքի անհանգիստ, բայց հարմար պայմաններում։ Իր վեց երեխաների հետ Դարիա Ալեքսանդրովնան չէր կարող հանգիստ լինել։ Մեկը հիվանդանում էր, մյուսը կարող էր հիվանդանալ, երրորդին պակասում էր որևէ բան, չորրորդը ցույց էր տալիս վատ բնավորության հատկանիշներ և այլն, և այլն։ Հազվադեպ, շատ հազվադեպ էին կարճատև հանգիստ ժամանակաշրջանները։ Բայց այդ հոգսերը և անհանգստությունները Դարիա Ալեքսանդրովնայի համար միակ հնարա-

վոր երջանկությունն էին։ Եթե դրանք չլինեին, նա մենակ կմնար իր մտքերի հետ ամուսնու մասին, որը չէր սիրում նրան։ Բայց, բացի դրանից, որքան էլ ծանր էին մոր համար հիվանդությունների վախը, հենց հիվանդությունները և երեխաների վատ հակումների հատկանիշների հետ կապված վիշտը, իրենք երեխաները հենց այժմ պատճառում էին նրան փոքր ուրախություններ նրա կրած դառնությունների հանդեպ։ Այդ ուրախություններն այնքան փոքրիկ էին, որ չէին նկատվում, ինչպես ոսկու հատիկը ավազի մեջ, և վատ րոպեներին նա տեսնում էր միայն դառնությունները, միայն ավազը. սակայն լինում էին նաև լա՛վ րոպեներ, երբ նա տեսնում էր միայն ուրախությունները, միայն ոսկու հատիկը։

Այժմ, գյուղի մենության մեջ, նա ավելի ու ավելի հաճախ սկսեց գիտակցել այդ ուրախությունները։ Հաճախ նայելով նրանց, նա գործ էր դնում ամեն ջանք, որպեսզի համոզի իրեն, որ ինքը մոլորվում է, որ ինքը, ինչպես մայր, աշառու է իր երեխաների նկատմամբ. այսուամենայնիվ, նա չէր կարող չասել ինքն իրեն, որ իր երեխաները հիանալի երեխաներ են, բոլոր վեցն էլ, ամենքն էլ տարբեր տեսակի, բայց այնպիսի երեխաներ, որոնց նմանը քիչ է լինում, և երջանիկ էր նրանցով ու պարծենում էր նրանցով։

VIII

Մայիսի վերջին, երբ արդեն ամեն բան քիչ թե շատ կարգավորվեց, Դոլլին ստացավ ամուսնու պատասխանը՝ գյուղական անհարմարությունների մասին արած իր գանգատների առթիվ։ Ստեպան Արկադիչը գրում էր նրան, ներողություն խնդրելով, որ ամեն ինչ չի կշռադատել և խոստանում էր գալ առաջին հնարավորության դեպքում։ Այդ հնարավորությունը չներկայացավ, և մինչև հունիսի սկիզբը Դարիա Ալեքսանդրովնան ապրում էր գյուղում՝ մենակ։

Պողոս-Պետրոսի պահքին, կիրակի, Դարիա Ալեքսանդրովնան գնաց պատարագի՝ հաղորդելու իր բոլոր երեխաներին։ Դարիա Ալեքսանդրովնան քրոջ, մոր, բարեկամների հետ ունեցած իր մտերմական, փիլիսոփայական խոսակցությունների մեջ շատ հաճախ զարմացնում էր նրանց՝ կրոնի հանդեպ

ունեցած իր ազատամտությամբ։ Նա ուներ հոգեփոխության իր տարօրինակ կրոնը, որին հաստատ հավատում էր, քիչ հոգ տանելով եկեղեցու դոգմաների մասին։ Բայց ընտանիքի մեջ,— ոչ թե միայն նրա համար, որ օրինակ տա, այլ ամբողջ հոգով,— նա խստությամբ կատարում էր եկեղեցական բոլոր պահանջները, և այն հանգամանքը, որ երեխաները մոտ մի տարի չէին հաղորդվել, սաստիկ անհանգստացնում էր նրան, ուստի Մատրյոնա Ֆիլիմոնովնայի կատարյալ հավանությամբ ու համակիր վերաբերմունքով վճռեց այդ բանը կատարել այժմ, ամառը։

Դարիա Ալեքսանդրովնան մի քանի օր առաջ մտածեց ու որոշեց, թե ինչպե՛ս հագցնի բոլոր երեխաներին։ Կարեցին, ձկափոխեցին ու լվացին հագուստները, բացին նրանց ափերն ու ծալքերը, կպցրին կոճակները և պատրաստեցին ժապավենները։ Տանյայի մի զգեստը, որ կամեցավ կարել անգլուհին, շատ պղտորեց Դարիա Ալեքսանդրովնայի արյունը։ Անգլուհին, վերակարելով այն, պրկուկները չարեց պահանջված տեղում, չափազանց խորը կտրեց թևերի տեղը և քիչ մնաց, որ բոլորովին փչացներ զգեստը։ Ուսատեղերն էլ այնպես նեղ էր արել, որ մարդու սիրտը ցավում էր Տանյային նայելիս։ Բայց Մատրյոնա Ֆիլիմոնովնան մտածեց, որ կարելի է սեպաձև կտորներ դնել և ուսարկ շինել։ Շորը շտկվեց, բայց անգլուհու հետ համարյա կռիվ ծագեց։ Սակայն առավոտվա համար ամեն ինչ սարքվեց, և ժամը իններին մոտ, ժամկետ, մինչև որը խնդրել էին քահանային չսկսել պատարագը, ուրախությունից փայլփլուն, զուգված, զարդարված երեխաները կանգնել էին դրսի սանդուղքի մոտ, կալյասկայի առաջ, սպասելով իրենց մորը։

Կալյասկային, գժություն անող Վորոն ձիու փոխարեն լծեցին, Մատրյոնա Ֆիլիմոնովնայի հովանավորությամբ, կառավարչի Բուռիյ կոչվող ձին, և Դարիա Ալեքսանդրովնան, որ ուշացավ իր հարդարվելու հետ կապված հոգսերով, հագած իր սպիտակ մուսլինե զգեստը, դուրս եկավ կառք նստելու։

Դարիա Ալեքսանդրովնան սանրվում ու հագնվում էր խնամքով և հուզմունքով։ Առաջներում նա հագնվում էր իր համար, որ գեղեցիկ լինի և դուր գա. հետո, որքան ավելի էր ծերանում, այնքան ավելի անախորժ էր դառնում նրա համար

հագնվելը. նա տեսավ, թե ինչպե՞ս տգեղացել է ինքը։ Բայց այժմ նա նորից հագնվում էր բավականությամբ ու հուզմունքով։ Այժմ նա հագնվում էր ո՞չ թե իր համար, ո՞չ թե իր գեղեցկության համար, այլ նրա համար, որպեսզի նա, իբրև այդ սքանչելի երեխաների մայր, չփչացնի ընդհանուր տպավորությունը։ Եվ վերջին անգամ նայելով հայելու մեջ, գոհ մնաց իրենից։ Նա լավիկն էր։ Ոչ այնպես լավիկ, ինչպես ուզում էր լինել պարահանդեսում, այլ լավիկն էր այն նպատակի համար, որ նկատի ուներ այժմ։

Եկեղեցում ոչ ոք չկար բացի մուժիկներից, բակապաններից ու նրանց կնիկներից։ Բայց Դարիա Ալեքսանդրովնան տեսնում էր, կամ նրան թվում էր, թե տեսնում է այն հիացմունքը, որ հարուցում էին իր երեխաները և ինքը։ Երեխաները ո՞չ միայն ինքնին գեղեցիկ էին իրենց պճրուն զգեստներով, այլ սիրունատես էին նրանով, որ լավ էին պահում իրենց։ Ճիշտ է, Ալյոշան կանգնել էր ոչ այնքան լավ. նա շարունակ շուռ էր գալիս և ուզում էր ետևից տեսնել իր կուրտկան. բայց և այնպես նա անսովոր սիրունատես էր։ Տանյան կանգնել էր մեծի պես և հսկում էր փոքրերին։ Սակայն ավելի փոքրը, Լիլին, սքանչելի էր իր միամիտ զարմանքով շուրջը կատարվող ամեն բանի հանդեպ, և դժվար էր չժպտալ, երբ հաղորդվելուց հետո նա ասաց. „please, some more“[1]։

Վերադառնալով տուն, երեխաներն զգում էին, որ կատարվեց խորհրդավոր մի բան, և շատ հանգիստ էին։

Ամեն ինչ լավ էր գնում նաև տանը, բայց նախաճաշի ժամանակ Գրիշան սկսեց սուլել և, որ ամենից վատթարն էր, չլսեց անգլուհուն, ու մնաց առանց քաղցր կարկանդակի։ Դարիա Ալեքսանդրովնան թույլ չէր տա, որ այդպիսի օր բանը հասներ պատժի, եթե ինքն այդտեղ լիներ, բայց պետք էր պաշտպանել անգլուհու կարգադրությունը, և նա հաստատեց նրա վճիռը, որ Գրիշան քաղցր կարկանդակ չի ստանա։ Դա մի փոքր փչացրեց ընդհանուր ուրախությունը։

Գրիշան լալիս էր, ասելով, որ սուլում էր նաև Նիկոլենկան, բայց, ա՜յ, նրան չպատժեցին, և որ ինքը լալիս է ո՞չ թե կարկանդակի համար,— իր համար միևնույն է,— այլ այն

[1] Անգլերեն՝ «Խնդրեմ, էլի՛ մի փոքր»։

պատճառով, որ իր նկատմամբ անարդար են։ Դա արդեն չափազանց տխուր բան էր, և Դարիա Ալեքսանդրովնան վճռեց անգլուհու հետ խոսելուց հետո ներել Գրիշային, ու գնաց անգլուհու մոտ։ Սակայն այստեղ, անցնելով դահլիճից, նա տեսավ մի պատկեր, նրա սիրտն այնպես ուրախությամբ լցնող, որ արցունքներ երևացին աչքերում, և նա ինքը ներեց մեղավորին։

Պատժվածը նստել էր դահլիճում անկյունի պատուհանին. նրա մոտ կանգնել էր Տանյան, ձեռքին ափսե։ Տիկնիկների համար ճաշի պատրվակով նա թույլտվություն խնդրեց անգլուհուց՝ տանել իր բաժին կարկանդակը մանկասենյակ, բայց բերեց եղբորը։ Շարունակելով արտասվել իր ստացած պատժի անարդարության համար, նա ուտում էր քրոջ բերած կարկանդակը և հեկեկանքների միջից ասում էր. «Ինքդ կեր, միասին ուտենք... միասին»։

Սկզբում Տանյայի վրա ազդեց Գրիշային խղճալու զգացումը, հետո իր բարեգործական վարմունքի դիտակցությունը, և նրա աչքերում ևս արցունքներ կային, բայց նա չհրաժարվեց և ուտում էր իր բաժինը։

Տեսնելով իրենց մորը, նրանք վախեցան, սակայն նայելով նրա դեմքին, հասկացան, որ իրենք լավ բան են անում, ծիծաղեցին ու, բերանները կարկանդակով լեցուն, սկսեցին ձեռներով սրբել շուրթերը և արցունքներով ու մուրաբայով քսմսեցին իրենց խնդաշող երեսները։

— Աստվա՜ծ իմ։ Նո՜ր, սպիտակ հագուստ։ Տա՜նյա։ Գրի՛շա,— ասում էր մայրը, աշխատելով փրկել զգեստը, բայց աչքերին արցունքներ, դեմքին երջանիկ, հիասքանչ ժպիտ։

Նոր զգեստները հանեցին, հրամայեցին, որ աղջիկները հագնեն բլուզներ, իսկ տղաները՝ հին կուրտկաները և հրամայեցին լծել լինեյկան, ի դժբախտություն կառավարչի, Բուռիյ ձին նորից առեղում, որպեսզի գնան սունկի և լողարան։ Խանդավառ ճիչերի աղմուկ բարձրացավ մանկասենյակում ու չէր լռում մինչև լողարան մեկնելու պահը։

Հավաքեցին մի ամբողջ զամբյուղ սունկ, նույնիսկ Լիլին գտավ կեչու սունկ։ Առաջ այնպես էր լինում, որ միսս Գուլը գտնում և ցույց էր տալիս նրան, բայց այժմ Լիլին ինքը

գտավ կեչու մեծ «շլյուպիկ», և ամենքը հիացմունքով բղավեցին. «Վիլին գտավ շլյուպիկ»։

Ապա մոտեցան կետին։ Ձիերը քաշեցին կեչիների տակ ու գնացին լողարան։ Կառապան Տերենտին, բոռերից պոչով պաշտպանվող ձիերը կապելով ծառից, պառկեց կեչու շվաքում, ճխլելով խոտը, և թութուն էր ծխում, իսկ լողարանից նրա ականջին հասնում էր մանկական անլռելի, ուրախ ծվծվոցը։

Թեպետև հոգնատանջ բան էր հետևել բոլոր երեխաներին ու կասեցնել նրանց չարաճճիությունները, թեպետև դժվար էր հիշել ու չշփոթել այս բոլոր գուլպաները, վարտիքները, տարբեր ոտքերի կոշիկները և արձակել, բացել ու կապել երիզներն ու կոճակները, այսուամենայնիվ, Դարիա Ալեքսանդրովնան, որ ինքն էլ միշտ սիրում էր լողանալ, երեխաների համար օգտակար համարելով այն, ոչնչով այնպես չէր հրճվում, ինչպես հրճվում էր՝ լողանալով բոլոր երեխաների հետ միասին։ Նրա համար մեծ հրճվանք էր մեկ-մեկ շոշափել այդ բոլոր փամփլիկ ոտիկները, հագցնելով գուլպաները, բարձրացնել ձեռքի վրա ու սուզել ջրի մեջ այդ մերկ մարմնիկները և լսել մերթ խնդագին, մերթ վախեցած ճիչերը, տեսնել այդ հևաշունչ, բայց վախեցած և ուրախ աչքերով դեմքերը, դիտել իրար վրա ջուր շաղող իր փոքրիկ հրեշտակներին։

Երբ երեխաների կեսն արդեն հագնվել էր, լողարանին մոտեցան ու երկչոտությամբ կանգնեցին զուգված կնիկներ, որ գնացել էին այծախոտ ու սինձ քաղելու։ Մատրյոնա Ֆիլիմոնովնան կանչեց նրանցից մեկին, որպեսզի չորացնել տա նրան ջուրն ընկած սավանն ու շապիկը. Դարիա Ալեքսանդրովնան խոսքի բռնվեց կնիկների հետ։ Կնիկները, որ ըսկզբում ծիծաղում էին ափի մեջ ու չէին հասկանում իրենց տրված հարցը, շուտով դարձան համարձակ և խոսեցին, իսկույն սիրաշահելով Դարիա Ալեքսանդրովնային՝ երեխաների հանդեպ արտահայտած իրենց անկեղծ հիացմունքով։

— Ա՜յ դու, սիրունիկ աղջիկ, շաքարի պես սպիտակ է,— ասում էր մեկը, հիանալով Տանյայով և օրորելով գլուխը։

— Բայց նիհար է...

— Այո, հիվանդ էր։

— Բա սա, երևում է, սրան էլ են լողացրել,— ասում էր մյուսը ծծկերի մասին։

— Ո՛չ, նա ընդամենը երեք ամսական է,— ասում էր պարծանքով Դարիա Ալեքսանդրովնան։

— Ա՜յ, դու։

— Իսկ դու երեխաներ ունե՞ս։

— Չորսն էին, մնացին երկուսը, տղա և աղջիկ։ Անցած ուտիքին ծծից կտրեցի։

— Իսկ քանի՞ տարեկան է։

— Երկրորդի մեջ է։

— Ինչո՞ւ էիր այդքան երկար ծիծ տալիս։

— Մեր սովորությունն է՝ երեք պահք կերակրել...

Եվ խոսակցությունը դարձավ չափազանց հետաքրքրական Դարիա Ալեքսանդրովնայի համար. ինչպե՞ս է ծնել, ինչո՞վ է հիվանդացել, որտե՞ղ է ամուսինը, արդյոք հաճա՞խ է լինում տանը։

Դարիա Ալեքսանդրովնան չէր ուզում հեռանալ կնիկներից, այնպես հետաքրքրական էր նրա համար խոսակցությունը նրանց հետ, այնքան նման էին նրանց շահերը։ Իսկ Դարիա Ալեքսանդրովնայի համար ամենահաճելին այն էր, որ նա պարզ տեսնում էր, թե ինչպե՛ս այդ բոլոր կանայք հիանում էին ամենից ավելի այն բանով, որ ինքն այդքան շատ երեխաներ ունի և որ ինչքան լա՜վն են նրանք։ Կնիկները ծիծաղեցրին Դարիա Ալեքսանդրովնային և դրանով վիրավորեցին անգլուհուն, որովհետև անգլուհին էր իր համար անհասկանալի այդ ծիծաղի պատճառը։ Ջահել կնիկներից մեկը դիտում էր անգլուհուն, որը հագնվում էր ամենքից հետո, և երբ նա հագավ երրորդ յուբկան, չկարողանալով իրեն զսպել, նկատեց. «Տե՛ս, է՛, հագնում է, հագնում, չի պրծնում»,— ասաց նա, և ամենքը քրքջացին։

IX

Շրջապատված բոլոր լողացրած, գլուխները թաց երեխաներով, Դարիա Ալեքսանդրովնան, գլխին աղլուխ, արդեն մոտենում էր տանը, երբ կառապանն ասաց. «Մի պարոն է գալիս. կարծեմ, Պոկրովսկոյի պարոնն է»։

Դարիա Ալեքսանդրովնան նայեց առաջ և ուրախացավ, տեսնելով գորշ գլխարկով ու գորշ վերարկուով Լևինի ծանոթ

ֆիգուրը, որ ընդառաջում էր նրանց։ Լևինի ներկայությունը միշտ էլ ուրախություն էր պատճառում Դոլլիին, բայց սա այժմ առանձնապես ուրախ էր, որ Լևինը տեսնում էր իրեն իր ամբողջ փառքով։ Ոչ ոք Լևինից ավելի լավ չէր կարող հասկանալ նրա վեհությունը։

Տեսնելով նրան, Լևինը իրեն կգաց մի ժամանակ իր երևակայած ընտանեկան կենցաղի պատկերներից մեկի առաջ։

— Դուք ոնց որ թուխս, Դարիա Ալեքսանդրովնա։

— Ա՜խ, որքան ուրախ եմ ես,— ասաց Դոլլին, ձեռքը մեկնելով նրան։

— Ուրախ եք, բայց իմաց չտվիք։ Ինձ մոտ ապրում է եղբայրս։ Ես Ստիվայից տոմս ստացա, որ դուք այստեղ եք։

— Ստի՞վայից,— զարմանքով հարցրեց Դարիա Ալեքսանդրովնան։

— Այո՛, նա գրում է, որ դուք եկել եք գյուղ, և կարծում է, որ թույլ կտաք ինձ որևէ բանով օգնելու ձեզ,— ասաց Լևինը և, ասելով այդ, հանկարծ շփոթվեց ու ընդհատելով խոսքը, լուռ շարունակեց քայլել գծակառքի կողքից, պոկելով լորենու ընձյուղները և կծելով դրանք։ Նա շփոթվեց, ենթադրելով, թե Դարիա Ալեքսանդրովնայի համար անախորժ կլինի կողմնակի մարդու օգնությունը մի գործի մեջ, որը պետք է արած լիներ նրա ամուսինը։ Դարիա Ալեքսանդրովնային իրոք դուր չէր գալիս Ստեպան Արկադևիչի՝ ուրիշների վզին իր ընտանեկան գործերը փաթաթելու այդ վարվելաձևը։ Եվ նա իսկույն հասկացավ, որ Լևինը հասկանում է դա։ Հասկանալու հենց այդ նրբամտության, այդ նրբավարության համար Դարիա Ալեքսանդրովնան սիրում էր Լևինին։

— Ես հասկացա, իհարկե,— ասաց Լևինը,— որ դա նշանակում է միայն այն, որ դուք ուզում եք ինձ տեսնել, և շատ ուրախ եմ։ Իհարկե, ես հասկանում եմ, որ ձեզ, քաղաքին սովոր տանտիկնոջ համար այստեղ օտարոտի է, և եթե ձեզ մի բան հարկավոր է, ես ամբողջ սրտով պատրաստ եմ ծառայելու։

— Օ՜, ո՛չ,— ասաց Դոլլին։— Սկզբում անհարմար էր, բայց այժմ ամեն բան լավ սարքի ընկավ՝ շնորհիվ իմ պառավ դայակի,— ասաց նա, նշելով Մատրյոնա Ֆիլիմոնովնային, որը հասկացավ, որ խոսում են իր մասին, և ուրախ ու

բարեկամաբար ժպտաց Լևինին։ Ֆիլիմոնովնան ճանաչում էր նրան և գիտեր, որ նա լավ փեսացու է օրիորդի համար, ու ցանկանում էր, որ գլուխ գար այդ գործը։

— Շնորհ արեք նստել, մենք կքաշվենք այս կողմը,— ասաց նա Լևինին։

— Ո՛չ, ես կգնամ ոտով։ Երեխաներ, ո՞վ կուզենա ինձ հետ միասին վազելով մրցել ձիերի հետ։

Երեխաները շատ քիչ էին ճանաչում Լևինին, չէին հիշում, թե երբ են տեսել նրան, սակայն նրա նկատմամբ չէին ցույց տալիս քաշվելու և արհամարհանքի այն տարօրինակ զգացումը, որ երեխաներն այնպես հաճախ տածում են դեպի ձևացող հասակավոր մարդիկ, և որի համար նրանք այնպես հաճախ ու խստագույնս պատժվում են։ Ձևանալը, ինչ բանում էլ արտահայտվի այն, կարող է խաբել ամենախելոք, նրբամիտ մարդուն. բայց ամենասահմանափակ երեխան,— ինչքան էլ վարպետորեն քողարկվի ձևանալը,— իմանում է դա և երես դարձնում։ Ինչ պակասություններ էլ ունենար Լևինը, համենայն դեպս ձևանալու նշույլ անգամ չկար նրա մեջ, այդ պատճառով երեխաները ցույց տվին նրան այնպիսի սիրալիրություն, որպիսին տեսան իրենց մոր դեմքին։ Լսելով նրա հրավերը, երկու մեծերն անմիջապես ցած թռան և վազեցին նրա հետ նույնպիսի պարզությամբ, ինչպես կվազեին դայակի հետ, միսս Գուլի կամ իրենց մոր հետ։ Լիլին նույնպես սկսեց խնդրել՝ գնալ նրա մոտ, և մայրը Լիլիին տվեց Լևինին. նա փոքրիկին նստեցրեց իր ուսերին ու վազեց նրա հետ։

— Մի՛ վախենաք, մի՛ վախենաք, Դարիա Ալեքսանդրովնա,— ասում էր նա, ուրախ ժպտալով մորը,— անկարելի է, որ ես վնասեմ կամ վայր գցեմ։

Եվ նայելով նրա ճարպիկ, ուժեղ, զգուշորեն հոգատար ու չափազանց լարված շարժումներին, մայրը հանգստացավ և ուրախ ու հավանությամբ ժպտաց նրան։

Այստեղ՝ գյուղում, երեխաների ու իրեն համակրելի Դարիա Ալեքսանդրովնայի հետ Լևինը տարվեց հաճախ իրեն համակող մանկական այն ուրախ տրամադրությամբ, որը Դարիա Ալեքսանդրովնան առանձնապես սիրում էր նրա մեջ։ Վազելով երեխաների հետ, Լևինը սովորեցնում էր նրանց

մարմնամարզություն, ծիծաղեցնում էր միսս Դուլին իր վատ անգլերենով և պատմում էր Դարիա Ալեքսանդրովնային իր զբաղմունքների մասին գյուղում։

Ճաշից հետո Դարիա Ալեքսանդրովնան՝ նստած նրա հետ պատշգամբում, խոսեց Կիտիի մասին։

— Գիտե՞ք. Կիտին գալու է այստեղ և ամառը կանցկացնի ինձ հետ։

— Իսկապե՞ս,— ասաց նա բռնկված և անմիջապես, խոսակցությունը փոխելու համար, ասաց.— Ուրեմն ուղարկե՞մ ձեզ երկու կով։ Եթե դուք ուզում եք հաշիվ տեսնել, բարեհաճեցեք վճարել ինձ ամսական հնգական ռուբլի, եթե թույլ կտաք ձեզ այդպիսի բան։

— Ո՛չ, շնորհակալ եմ։ Մեզ մոտ դա կարգավորվեց։

— Է՛հ, այդ դեպքում ես ձեր կովերը կնայեմ և, եթե թույլ կտաք, կկարգադրեմ, թե ինչպե՛ս պետք է կերակրել նրանց։ Էականը կերն է։

Եվ Լևինը, որպեսզի միայն խոսակցությունը հեռացնի Կիտիից, նկարագրեց Դարիա Ալեքսանդրովնային կաթնատնտեսության տեսությունը, որը հանգում էր այն բանին, թե կովը սոսկ մեքենա է՝ կերը կաթի վերածելու համար և այլն։

Նա ասում էր այդ և սաստիկ ցանկանում էր լսել մանրամասնություններ Կիտիի մասին ու միաժամանակ վախենում էր դրանից։ Նա սարսափում էր, որ կարող է խախտվել այնպիսի դժվարությամբ ձեռք բերած իր հանգիստը։

— Այո՛, բայց այս բոլորին պետք է հետևել, իսկ ո՞վ պիտի հետևի,— դժկամորեն պատասխանեց Դարիա Ալեքսանդրովնան։

Նա այժմ այնպես կարգի բերեց իր տնտեսությունը Մատրյոնա Ֆիլիմոնովնայի միջոցով, որ չէր ուզում ոչինչ փոփոխել. ասենք, նա չէր էլ հավատում Լևինի գիտությանը գյուղատնտեսության մեջ։ Նրա համար կասկածելի էին այն դատողությունները, իբր կովը մեքենա է կաթ շինելու համար։ Նրան թվում էր, որ այդ կարգի դատողությունները կարող են միայն խանգարել տնտեսությանը։ Այս բոլորը նրան թվում էր անհամեմատ ավելի պարզ. այսինքն՝ պետք էր միայն, ինչպես բացատրում էր Մատրյոնա Ֆիլիմոնովնան, Պետրուխային և Բելոպախային տալ ավելի կեր ու լակ, և պետք էր,

որ խոհարարը դուրս չտաներ կեղտաջրերը խոհանոցից լվացարարուհու կովի համար։ Դա պարզ էր։ Իսկ ալյուրի և խոտի կերի մասին դատողությունները կասկածելի էին ու անորոշ։ Բայց, որ գլխավորն է՝ Դոլլին ուզում էր խոսել Կիտիի մասին։

X

— Կիտին գրում է ինձ, որ ոչինչ այնպես չի ցանկանում, ինչպես առանձնանալն ու հանգիստը,— ասաց Դոլլին տիրող լռությունից հետո։

— Իսկ ինչպե՞ս է նրա առողջությունը, լա՞վ է,— հուզմունքով հարցրեց Լևինը։

— Փառք աստծո, նա բոլորովին ապաքինվել է։ Ես երբեք չէի հավատում, որ նա այդ հիվանդությունն ունի։

— Ա՜խ, ես շատ ուրախ եմ,— ասաց Լևինը, և Դոլլին ինչ-որ հուզիչ, անճարակ մի բան նկատեց նրա դեմքին այն ժամանակ, երբ նա ասաց դա, և լուռ նայում էր Դոլլիին։

— Լսե՛ք, Կոնստանտին Դմիտրիչ,— ասաց Դոլլին, ժըպտալով իր բարի ու փոքր-ինչ հեգնական ժպիտով,— ինչի՞ համար եք դուք բարկանում Կիտիի վրա։

— Ե՞ս։ Ես չեմ բարկանում,— ասաց Լևինը։

— Ո՛չ, դուք բարկանում եք։ Ինչո՞ւ դուք չգնացիք ո՛չ նրաց մոտ, ո՛չ էլ եկաք մեզ մոտ, երբ Մոսկվայում էիք։

— Դարիա Ալեքսանդրովնա,— ասաց նա, կարմրելով մինչև մազերի արմատները,— ես զարմանում եմ նույնիսկ, որ դուք ձեր բարությամբ չեք զգում այդ բանը։ Ինչպե՞ս դուք պարզապես չեք խղճում ինձ, երբ գիտեք...

— Ի՞նչ գիտեմ։

— Գիտեք, որ ես առաջարկություն արի և մերժում ստացա,— ասաց Լևինը, և ամբողջ այն քնքշությունը, որ մի րոպե առաջ նա տածում էր դեպի Կիտին, փոխարինվեց նրա հոգում զայրույթի զղացումով՝ կրած վիրավորանքի համար։

— Իսկ ինչո՞ւ եք կարծում, որ ես գիտեմ։

— Որովհետև ամենքը գիտեն դա։

— Ա՜յ, դրանում ահա սխալվում եք դուք. ես չգիտեի այդ, թեպետ գլխի էի ընկնում։

— Ա՜։ Իսկ այժմ ուրեմն գիտեք։

— Ես գիտեի միայն այն, որ եղել է մի բան, ինչը Կիտիին սաստիկ տանջում էր, և որ նա խնդրում էր ինձ երբեք չխոսել դրա մասին։ Իսկ եթե նա չասաց ինձ, ուրեմն ոչ ոքի չի ասել։ Բայց իսկապես ի՞նչ էր եղել ձեր մեջ։ Ասե՞ք ինձ։

— Ես ասացի ձեզ, թե ի՞նչ էր։

— Ե՞րբ։

— Երբ ես ձեզ մոտ էի վերջին անգամ։

— Գիտե՞ք ինչ պիտի ասեմ ձեզ,— ասաց Դարիա Ալեքսանդրովնան,— ես սաստիկ, սաստիկ խղճում եմ Կիտիին։ Դուք տանջվում եք հպարտությունից միայն։

— Կարող է պատահել,— ասաց Լևինը,— բայց...

Դոլլին ընդհատեց նրան։

— Բայց նրան, խեղճ Կիտիին, ես սաստիկ ու սաստիկ խղճում եմ։ Այժմ ես հասկանում եմ ամեն ինչ։

— Է՛հ, Դարիա Ալեքսանդրովնա, ներեցեք ինձ,— ասաց Լևինը կանգնելով։— Մնաք բարով, Դարիա Ալեքսանդրովնա, ցտեսություն։

— Ո՛չ, կացեք,— ասաց Դոլլին, բռնելով նրա զգեստի թեվից։— Կացեք, նստեցեք։

— Խնդրում եմ, խնդրում եմ չխոսենք դրա մասին,— ասաց Լևինը, նստելով ու միաժամանակ զգալով, որ իր սրտում բարձրանում և շարժվում է այն հույսը, որը իրեն թվում էր թաղված։

— Եթե ես չսիրեի ձեզ,— ասաց Դարիա Ալեքսանդրովնան, և արցունքներ շողացին նրա աչքերում։— Եթե ես չճանաչեի ձեզ, ինչպես ճանաչում եմ...

Մեռած թվացող զգացումը կենդանանում էր ավելի ու ավելի, բարձրանում և տիրում էր Լևինի սրտին։

— Այո՛, ես այժմ հասկացա բոլորը,— շարունակեց Դարիա Ալեքսանդրովնան։— Դուք այդ բանը չեք կարող հասկանալ. ձեզ համար, ազատ և ընտրություն անող տղամարդկանց համար, միշտ պարզ է, թե ո՞ւմ եք սիրում դուք։ Բայց սպասողական դրության մեջ գտնվող աղջիկը, այդ կանացի, կուսական ամոթով աղջիկը, որը տեսնում է ձեզ, այսինքն՝ տղամարդկանց, միայն հեռվից, որը հավատում է ձեր խոսքին,— այդ աղջիկն ունենում է, և կարո՞ղ է ունենալ այնպիսի զգացում, որ չգիտե, թե ի՞նչ ասի։

— Այո՛, եթե սիրտը չի խոսում...

— Ո՛չ, սիրտը խոսում է, բայց մտածեցեք. դուք, տղամարդիկդ, աչք ունեք աղջկա վրա, դուք հաճախում եք նրանց տուն, դուք մտերմանում եք, դիտում, սպասում եք, թե արդյոք կգտնե՞ք այն, ինչը դուք սիրում եք, և ապա միայն, երբ համոզվում եք, որ սիրում եք, առաջարկություն եք անում։

— Է՛, դա լիովին այդպես չէ։

— Միևնույն է, դուք առաջարկություն եք անում, երբ ձեր սերը հասունացել է, կամ երբ ձեր մեջ գերակշիռ տեղ է բռնել ընտրելի օբյեկտներից մեկը։ Իսկ աղջկան չեն հարցնում։ Ուզում են, որ նա ինքն ընտրի, մինչդեռ նա չի կարող ընտրել և միայն պատասխանում է. «այո» կամ «ո՛չ»։

«Այո՛, ընտրություն իմ ու Վրոնսկու միջև», մտածեց Լևինը, և նրա հոգում կենդանացող մեռածը նորից մեռավ ու միայն տանջալից ճնշում էր նրա սիրտը։

— Դարիա Ալեքսանդրովնա,— ասաց նա,— այդպես ընտրում են զգեստը կամ, չգիտեմ՝ ուրիշ ի՞նչ ապրանք, բայց ո՛չ սերը։ Ընտրությունն արված է, ավելի լավ... Ու կրկնվել չի կարող։

— Ա՜խ, հպարտությո՛ւն և հպարտությո՛ւն,— ասաց Դարիա Ալեքսանդրովնան, կարծես ատելով նրան այդ զգացման ստորության համար՝ համեմատությամբ այն ուրիշ զգացումի, որը ծանոթ է միայն կանանց։— Այն ժամանակ, երբ դուք առաջարկություն արիք Կիտիին, նա գտնվում էր հենց այն դրության մեջ, երբ չէր կարող պատասխանել։ Նա տատանման մեջ էր։ Տատանում՝ դո՞ւք, թե՞ Վրոնսկին։ Նրան Կիտին տեսնում էր ամեն օր, ձեզ վաղուց չէր տեսել։ Ասենք, եթե նա ավելի մեծ լիներ... Ինձ համար, օրինակ, եթե ես լինեի նրա տեղը, տատանում չէր կարող լինել։ Վրոնսկին միշտ զզվելի էր ինձ համար, և այնպես էլ վերջացավ։

Լևինը հիշեց Կիտիի պատասխանը։ Նա ասաց. ո՛չ, դա չի կարող լինել...

— Դարիա Ալեքսանդրովնա,— ասաց նա շոր,— ես գնահատում եմ ձեր վստահությունն իմ նկատմամբ. ես կարծում եմ, դուք սխալվում եք։ Բայց իրավացի՞ եմ ես, թե՞ անիրավացի, այդ հպարտությունը, որն այնպես ատում եք դուք, ասում է այն, որ ինձ համար անհնարին է ամեն միտք կա-

տերինա Ալեքսանդրովնայի մասին... հասկանո՞ւմ եք, բոլորովին անհնարին։

— Ես կասեմ միայն էլի՛ մի բան. դուք հասկանում եք, ես խոսում եմ քրոջս մասին, որին սիրում եմ, ինչպես իմ երեխաներին։ Ես չեմ ասում, որ նա սիրել է ձեզ, ես միայն ուզում եմ ասել, որ նրա մերժումն այն բոպեին ոչինչ չի ապացուցում։

— Չգիտեմ,— տեղից վեր թռչելով ասաց Լևինը։— Եթե դուք գիտենայիք, թե ո՛րպիսի ցավ եք պատճառում ինձ։ Դա միևնույնն է, եթե ձեր երեխան մեռներ, իսկ ձեզ ասեին. «Նա կլիներ այսպես, այնպես, և կարող էր ապրել, և դուք կուրախանայիք նրանով։ Այնինչ նա մեռավ, մեռավ, մեռավ»...

— Ի՜նչ ծիծաղելի եք դուք,— չնայած Լևինի հուզմունքին, թախծոտ հեգնանքով ասաց Դարիա Ալեքսանդրովնան։— Այո՛, այժմ ես ավելի ու ավելի եմ հասկանում,— շարունակեց նա մտածկոտ։— Ուրեմն, դուք չե՞ք գա մեզ մոտ, երբ Կիտին լինի այստեղ։

— Ո՛չ, չեմ գա։ Իհարկե, ես չեմ խուսափի Կատերինա Ալեքսանդրովնայից, բայց, որտեղ կարող եմ, կաշխատեմ ազատել նրան իմ ներկայության անախորժությունից։

— Շատ, շատ ծիծաղելի եք դուք,— կրկնեց Դարիա Ալեքսանդրովնան, քնքշությամբ դիտելով նրա դեմքը։— Է՛հ, լավ, համարեք թե մենք դրա մասին ոչինչ չենք խոսել։ Ինչո՞ւ եկար, Տանյա,— ասաց Դոլլին ֆրանսերեն՝ ներս եկած աղջկան։

— Ո՞րտեղ է իմ թին, մայրիկ։

— Ես խոսում եմ ֆրանսերեն, դու էլ նույնպես ասա։

Աղջիկն ուզում էր ասել, բայց մոռացավ, թե ֆրանսերեն ինչպե՞ս է թի. մայրը հուշեց ու հետո ֆրանսերեն էլ ասաց, թե ո՞րտեղ կարող է գտնել թին։ Եվ դա Լևինին թվաց անախորժ։

Այժմ ամեն բան Դարիա Ալեքսանդրովնայի տանը և նրա երեխաների մեջ թվում էր Լևինին արդեն ո՞չ այնպես համակրելի, ինչպես առաջ։

«Եվ ինչի՞ համար է նա ֆրանսերեն խոսում երեխաների հետ,— մտածեց Լևինը։— Ինչպես անբնական ու կեղծ է դա։ Երեխաներն էլ զգում են այդ։ Սովորեցնել ֆրանսերեն և հեռացնել անկեղծությունից», մտածում էր նա ինքն իրեն, չիմանալով, որ Դարիա Ալեքսանդրովնան այս բոլորը քսան անգամ արդեն դատել-կշռադատել էր և այսուամենայնիվ, թեպետև ի վնաս անկեղծության, հանգել էր այն եզրակացության, թե անհրաժեշտ է այդ ձևով սովորեցնել իր երեխաներին։

— Բայց ո՞ւր եք գնում։ Նստեցե՛ք։

Լևինը մնաց մինչև թեյ, բայց նրա ուրախությունն ամբողջովին չքացավ, և նա անհարմար էր զգում իրեն։

Թեյից հետո նա դուրս եկավ նախասենյակ՝ հրամայելու, որ ձիերը բերեն, և երբ վերադարձավ, գտավ Դարիա Ալեքսանդրովնային հուզված, այլայլված դեմքով և աչքերում արցունքներ։ Այն ժամանակ, երբ դուրս էր գնում Լևինը, պատահեց Դարիա Ալեքսանդրովնայի համար մի դեպք, որը հանկարծ խորտակեց նրա այսօրվա ամբողջ երջանկությունը և երեխաներով պարծենալու զգացումը. Գրիշան ու Տանյան կռվեցին գնդակի համար։ Դարիա Ալեքսանդրովնան մանկասենյակից ճիչ լսելով վազեց այնտեղ ու տեսավ նրանց սոսկալի դրությամբ։ Տանյան բռնել էր Գրիշկայի մազերից. իսկ Գրիշան, չարությունից այլայլված դեմքով, ծեծում էր քրոջը բռունցքներով, խփելով՝ ուր պատահեր։ Մի բան պակ եկավ Դարիա Ալեքսանդրովնայի սրտում, երբ նա տեսավ այդ։ Կարծես խավարը եկավ ու պատեց նրա կյանքը. նա հասկացավ, որ իր երեխաները, որոնցով ինքն այնպես պարծենում էր, ո՞չ միայն ամենասովորական, այլ նույնիսկ վատ դաստիարակված երեխաներ են, կռվաբեր, գայլանային հակումներով, չար երեխաներ։

Նա այլևս ուրիշ ո՞չ մի բանի մասին չէր կարող խոսել ու մտածել և չէր կարող չպատմել Լևինին իր դժբախտությունը։

Լևինը տեսնում էր, որ նա դժբախտ է, և աշխատեց մխիթարել նրան, ասելով, թե դա ոչ մի վատ բանի ապացույց չէ, թե բոլոր երեխաները կռվում են. բայց ասելով այդ, Լևինն իր մեջ մտածում էր. «Ո՛չ, ես չեմ կոտրատվի և ֆրանսերեն չեմ խոսի իմ երեխաների հետ. բայց իմ երեխաներն այդպիսի երեխաներ չեն լինի. պետք է միայն չփչացնել, չայլանդա-

կել երեխաներին, և նրանք կլինեն սքանչելի։ Այո՛, իմ երեխաներն այդպիսի երեխաներ չեն լինի»։

Նա հրաժեշտ տվեց ու մեկնեց, և Դոլլին չպահեց նրան։

XI

Հուլիսի կեսերին Լևինի մոտ եկավ Պոկրովսկուց քսան վերստ հեռավորության վրա գտնվող քրոջ գյուղի տանուտերը, հաշիվ տալու գործերի ընթացքի և խոտհարքի մասին։ Քրոջ կալվածքի գլխավոր եկամուտը ստացվում էր ողողվող մարգագետիններից։ Առաջվա տարիներին մուժիկները վերցնում էին խոտհարքի դաշտերը, վճարելով դեսյատինի համար քսան ռուբլի։ Երբ Լևինը կալվածքը վերցրեց կառավարելու, խոտհարքի տեղերը տեսնելուց հետո նա եկավ այն եզրակացության, որ նրանք արժեն ավելի թանկ, և դեսյատինը գնահատեց քսանհինգ ռուբլի։ Մուժիկները չտվին այդ գինը և, ինչպես կասկածում էր Լևինը, ուրիշ գնորդների էլ չթողին մոտ գալու։ Այն ժամանակ Լևինն ինքը գնաց այնտեղ և կարգադրեց խոտը հնձել մի մասը վարձու ձեռքերով, մյուսը՝ խոտից բաժին ստանալու կարգով։ Տեղական մուժիկներն ամեն միջոցներով արգելք էին լինում այդ նորամուծությանը, բայց գործը գլուխ եկավ, և հենց առաջին տարին մարգագետինները համարյա կրկնակի արդյունք տվին։ Նախանցյալ և անցյալ տարի շարունակվում էր մուժիկների նույն հակազդեցությունը, և խոտի բերքահավաքը կատարվում էր նույն կարգով։ Այս տարի մուժիկները վերցրին բոլոր խոտհարքի դաշտերը մի երրորդ մասի պայմանով, և այժմ տանուտերը եկել էր հայտարարելու, որ խոտը հնձված է և որ նա վախենալով անձրևից, կանչել է գրասենյակի վարիչին, նրա ներկայությամբ բաժանել ու դրել է արդեն կալվածատիրոջ տասնմեկ դեզը։ Իր հարցին, թե ինչքա՛ն խոտ է ստացվել գլխավոր մարգագետնից, տանուտերի տված անորոշ պատասխանից, առանց Թուլլովության խոտն շտապողաբար բաժանելուց և մուժիկի ամբողջ խոսելու եղանակից Լևինը հասկացավ, որ խոտի այդ բաժանման մեջ ինչ-որ մութ, անմաքուր բան կա, ուստի վճռեց անձամբ գնալ ու ստուգել այդ գործը։

Ճաշի ժամին գալով գյուղ և ձին թողնելով իր բարեկամ-

ծերունու՝ եղբոր ծծմոր ամուսնու մոտ, Լևինը գնաց ծերունու մոտ մեղվանոց, կամենալով նրանից իմանալ խոտհարքի մանրամասները։ Զրուցասեր, բարետես ծերունի Պարմենիչը Լևինին ընդունեց ցնծությամբ, ցույց տվեց նրան իր ամբողջ տնտեսությունը, պատմեց բոլոր մանրամասնություններն իր մեղուների և այս տարվա պարսավորման մասին։ Բայց խոտհարքի մասին Լևինի տված հարցերին պատասխանում էր անորոշ ու դժկամությամբ։ Դա ավելի ևս հաստատեց Լևինի ենթադրությունները։ Նա գնաց խոտհարքի տեղերը և նայեց դեզերը։ Դեզերի մեջ չէր կարող լինել հիսնական սայլ, ուստի մուժիկների կեղծիքը մերկացնելու նպատակով, Լևինը հրամայեց կանչել խոտը կրող սայլեր, քանդել դեզերից մեկը և փոխադրել սարայ։ Դեզից ստացվեց միայն երեսուներկու սայլ։ Չնայած տանուտերի հավաստիացումներին, թե խոտը փափուկ է եղել կրելիս և նստել է դիզելուց հետո, չնայած նրա երդումներին, որ ամեն բան արվել է խղճմտանքով, Լևինը պնդեց, որ խոտը բաժանել են առանց իր հրամանի և որ այդ պատճառով ինքը յուրաքանչյուր դեզի մեջ հիսուն սայլ խոտ չի ընդունում։ Երկար վիճաբանություններից հետո հարցը վճռեցին այսպես. մուժիկներն այդ տասնմեկ դեզերն ընդունում են, որպես իրենց բաժին, յուրաքանչյուր դեզը համարելով հիսուն սայլ, իսկ կալվածատիրոջ բաժինը գատում են նորից։ Այդ բանակցությունները և դեզերի բաժանումը շարունակվեցին մինչև իրիկնահացը։ Երբ ավարտվեց վերջին խոտի բաժանումը, Լևինը մնացած հսկողությունը հանձնարարելով գրասենյակի վարիչին, նստեց ոլորի բրդվ նշանած բարդոցի վրա ու հիացքով դիտում էր մարդկանցով եռուն մարգագետինը։

Նրա դիմաց, ճահճուտից այն կողմ, գետի ոլորանում, ուրախ ճղրտալով զնգուն ձայներով, շարժվում էր կնիկների խայտաբղետ շարանը, և շաղ տված խոտից արագ ձգվում էին հնձած բաց-կանաչ խոտնոցներում գորշ ոլորուն ալիքներ։ Կնիկների ետևից գնում էին մուժիկները՝ եղաններով, և ալիքներից աճում, կազմվում էին լայն, բարձր, փամփլիկ բարգեր։ Զախից՝ խոտն արդեն հավաքած մարգագետնում դղրդում էին սայլերը, և մեկը մյուսի ետևից չքանում էին բարդերը, որոնք տրվում էին բարձողներին—հակայական թափուլներով,

ու նրանց տեղում բարձրանում էին անուշաբույր խոտի բարձած ծանր սայլերը, որ կախվում էին ձիերի գավակների վրա։

— Հավաքել, քանի եղանակը լավ է։ Ինչ խոտ է լինելու,— ասաց ծերունին, նստելով Լևինի մոտ։— Չա՛յ է, հո խոտ չի։ Ասես՝ բաղերի առաջ կուտ են շաղել, այնպես են հավաքում,— ավելացրեց նա, նշելով սայլերի վրա բարձվող բարդերը։— Ճաշից դեսը ուղիղ կեսը կրեցին։

— Վերջի՞նն է, հա՞,— ձայնեց նա այն տղային, որը կանգնած սայլի արկղի առաջի մասում և թափահարելով կանեփե երասանների ծայրերը, գնում էր նրանց մոտով։

— Վերջինն է, հայրիկ,— բղավեց երիտասարդը, քաշելով ձիու սանձը և ժպտալով նայեց ուրախ, նույնպես ժպտացող իր կարմրաթուշ կնկան, որը նստած էր սայլի արկղի վրա,— ու քշեց, անցավ։

— Ո՞վ է դա, որդի՞դ է,— հարցրեց Լևինը։

— Իմ պստիկն է,— փաղաքշական ժպտալով ասաց ծերունին։

— Ի՞նչ կտրիճն է։

— Վատ տղա չէ։

— Արդեն պսակվա՞ծ է։

— Այո՛, ջրօրհնեքի պասից երրորդ տարին է։

— Իսկ երեխաներ ունի՞։

— Ի՞նչ երեխաներ։ Մի ամբողջ տարի բան չէր հասկանում, ու քաշվում էլ էր,— պատասխանեց ծերունին։— Համա խոտ եմ ասել հա՞։ Իսկական չայ է,— կրկնեց նա, կամենալով փոխել խոսակցությունը։

Լևինն ուշադրությամբ դիտում էր Վանկա Պարմենովին ու նրա կնոջը։ Նրանք նրանից ո՛չ հեռու բարձում էին բարդը։ Իվան Պարմենովը կանգնել էր սայլի վրա, ընդունելով, հավասարեցնելով ու կիսճորելով խոտի հսկայական թափուները, որ սկզբում խտիտներով, իսկ հետո եղանով ճարպկորեն տալիս էր նրան իր ջահել դեղեցկուհի կինը։ Երիտասարդ կնիկն աշխատում էր թեթև, ուրախ ու վարպետորեն։ Նստած խոշոր խոտը մեկեն չէր վերցվում եղանով։ Նա սկզբում փոքրիկացնում էր խոտը, խրում էր եղանը, ապա առաձիգ ու արագ շարժումով հուպ սեղմում էր նրա վրա իր մարմնի ամբողջ ծանրությամբ, և անմիջապես, կորացնելով կարմիր գոտիով կապած մեջքը, ուղղվում էր ու ցուցադրելով ուսն ի վար սպիտակ կրծկալի տակից լիքը կուրծքը, ճարպկորեն բռնում էր ձեռներով եղանը և թափուլը բարձր նետում սայլի վրա։ Իվանը շտապողաբար, երևի աշխատելով ազատել նրան ավելորդ աշխատանքի ամեն մի րոպեից, որսում էր տրված խտիտը, լայն բացելով ձեռքերը և դարսում, ուղղում էր այն սայլի վրա։ Վերջին խտիտը փոցխով տալուց հետո, թափ տալով վզի ետևը թափված փսրունքը և ուղղելով արևից դեռ չայրված, սպիտակ ճակատին ծռված կարմիր թաշկինակը, կինը մտավ սայլի տակ, որ կապի այն։ Իվանը սովորեցնում էր նրան, թե ինչպե՛ս պետք է կապել սռնակալից, և բարձրաձայն քրքջաց կնոջ ասած ինչ- որ խոսքի վրա։ Երկու դեմքերի արտահայտության մեջ երևում էր նորերս զարթնած ուժգին, ջահել սերը։

XII

Սայլը կապեցին։ Իվանը ցած թռավ և երասանից քաշեց ընտիր, կեր ձին։ Կնիկը նետեց փոցխը սայլի վրա և առույգ քայլերով, թափահարելով ձեռքերը, գնաց իրար խռնված կնիկների մոտ։ Իվանը դուրս գալով ճանապարհ, մտավ դուռակի մեջ մյուս սայլերի հետ։ Կնիկները, փոցխերն ուսերին, փայլելով գունագեղ հագուստներով ու կչկչալով զնդուն, ուրախ ձայներով, գնում էին սայլերի ետևից։ Կոպիտ, վայրենի կանացի մի ձայն սկսեց մի երգ ու երգեց այն մինչև կրկնակը, և միաբերան մեկեն նորից սկզբից հնչեցրին նույն երգը մոտ հիսուն զանազան, հաստ ու բարակ առողջ ձայներ։

Կնիկները երգելով մոտենում էին Լևինին, և նրան թվում էր, թե ուրախության որոտով ամպ է գալիս իր վրա։ Ամպը շարժվեց, պարփակեց նրան. և՛ այն բարդը, որի վրա նա պառկել էր, և՛ մյուս բարդերն ու սայլերը, և՛ ամբողջ մարգագետինը հեռավոր դաշտի հետ՝ ամեն ինչ շարժվում և օրորվում էր զանազան բացականչություններով, սուլոցներով ու ճչոցներով համեմված այդ վայրենի խնդուն երգի չափի տակ։ Լևինի նախանձը շարժեց այդ առողջ ուրախությունը, նա ուզեց մասնակցել կյանքի այդ ցնծության արտահայտությանը։ Բայց նա ոչինչ անել չէր կարող և պետք է պառկեր ու լսեր միայն։ Երբ ժողովուրդը երգելով հեռացավ տեսողությունից ու լսողությունից, Լևինին համակեց թախծի մի

ծանր զգացում՝ իր միայնակության, իր մարմնավոր դատարկության համար, այդ աշխարհի հանդեպ իր ունեցած թշնամանքի համար։

Մի քանիսը մուժիկներից, որոնք ամենքից ավելի էին վիճում նրա հետ խոտի համար, նրանք, որոնց նա վշտացրեց, կամ նրանք, որոնք ուզում էին խաբել Լևինին,— այդ նույն մուժիկներն ուրախ ողջունում էին նրան և հայտնապես չար զգացում չունեին ու չէին կարող ունենալ նրա դեմ, և ո՛չ միայն զղջման, այլև հիշողության նշույլ անգամ չկար այն մասին, որ իրենք ուզում էին խաբել նրան։ Այս բոլորը թաղվեց, սուզվեց ընդհանուր ուրախ աշխատանքի ծովի մեջ։ Աստված տվեց օր, աստված տվեց ուժ։ Ե՛վ օրը, և՛ ուժը նվիրված են աշխատանքին, ու հենց դրանում է վարձատրությունը։ Իսկ ո՞ւմ համար է աշխատանքը։ Ինչպիսի՞ պտուղ կտա աշխատանքը։ Այս խոհերը երկրորդական են ու չնչին։

Լևինը հաճախ էր հիանում այդ կյանքով, հաճախ նախանձի զգացում էր ունենում այն մարդկանց նկատմամբ, ովքեր ապրում էին այդ կյանքով, բայց այսօր առաջին անգամ, մանավանդ այն բանի տպավորության տակ, ինչ նա տեսավ Իվան Պարմենովի վերաբերմունքի մեջ դեպի իր երիտասարդ կինը, Լևինի գլուխն եկավ առաջին անգամ պարզորեն մի միտք, թե իրենից է կախված փոխելու իր այնքան ծանր, պարապ ու դատարկ, արհեստական ու անձնական կյանքը, որով ապրում էր ինքը, վերածելով այն աշխատավորական, ազնիվ և ընդհանուր գեղեցիկ կյանքի։

Մերունին, որ նստած էր նրա հետ, վազուց արդեն գնացել էր տուն. բոլոր մարդիկ տեղուտեղ եղան։ Գյուղից մուժիկները գնացին տուն, իսկ հեռուները հավաքվեցին ընթրիքի և մարգագետնի վրա գիշերելու։ Լևինը, մարդկանցից աննկատելի՝ պառկած էր բարդի վրա և շարունակում էր նայել, լսել ու մտածել։ Մարգագետնում գիշերելու մնացած մարդիկ համարյա չքնեցին ամառային կարճատև գիշերվա ընթացքում։ Սկզբում լսվում էր ընդհանուր ուրախ զրույց ու քրքիջ ընթրիքի ժամանակ, ապա նորից երգ ու ծիծաղ։

Աշխատավորական ամբողջ երկար օրը նրանց մեջ ուրիշ հետք չէր թողել բացի ուրախությունից։ Արշալույսի դեմ ամեն ինչ հանդարտվեց։ Լսվում էին միայն գիշերային անլռելի հնչյունները ճահճում կոկոացող գորտերի և ձիերի, որոնք ֆռնչում էին մարգագետնում առավոտյան դեմ բարձրացող մեգի մեջ։ Ուշքի գալով, Լևինը բարձրացավ բարդից և նայելով աստղերին, հասկացավ, որ գիշերն անցել է։

«Է՜հ, ուրեմն ի՞նչ եմ անելու ես, ինչպե՞ս եմ անելու»,— ասաց նա ինքն իրեն, աշխատելով արտահայտել իր համար այն բոլորը, ինչ վերամտածել ու վերազգացել էր այդ կարճ գիշերը։ Այն բոլորը, ինչ նա վերամտածել և վերազգացել էր, բաժանվում էր մտքի երեք առանձին ընթացքի։ Առաջինը՝ հրաժարվել իր հին կյանքից, իր անօգուտ գիտելիքներից, ոչ մի բանի համար պիտանի իր կրթությունից։ Այդ հրաժարումը պատճառում էր նրան հրճվանք և նրա համար հեշտ ու պարզ բան էր։ Մյուս մտքերն ու պատկերացումները վերաբերում էին այն կյանքին, որով նա ցանկանում էր ապրել այժմ։ Նա հայտնապես զգում էր այդ կյանքի պարզությունը, մաքրությունը, օրինականությունը և համոզված էր, որ նրա մեջ կգտնի այն բավարարությունը, հանգիստն ու արժանապատվությունը, որոնց բացակայությունն զգում էր նա այնպես հիվանդագին։ Բայց մտքերի երրորդ շարքը պտտվում էր այն հարցի շուրջը, թե ինչպես կատարել այդ անցումը հին կյանքից դեպի նորը։ Եվ այստեղ պարզ ու որոշակի ոչինչ չէր պատկերանում նրան։ «Ունենալ կին։ Ունենալ աշխատանք և աշխատանքի անհրաժեշտություն։ Թողնե՞լ Պոկրովսկոյեն։ Հո՞ղ գնել։ Գրվել համայնքի անդա՞մ։ Ամուսնանալ գեղջկուհու հե՞տ։ Իսկ ինչպե՞ս եմ անելու այդ,— նորից հարցնում էր նա ինքն իրեն և պատասխան չէր գտնում։— Սակայն ամբողջ գիշեր չեմ քնել ես ու չեմ կարող պարզ պատասխան տալ,— մտածեց նա։— Ես դա կպարզեմ հետո։ Մի բան հաստատ է, որ այսօրվա գիշերը վճռեց իմ բախտը։ Ընտանեկան կյանքի մասին իմ առաջվա բոլոր տեսչերը դատարկ բան են, այն չէ,— ասաց նա ինքն իրեն։— Այս բոլորը շատ ավելի պարզ է ու լավ»...

«Ի՞նչ գեղեցիկ է,— մտածեց նա, դիտելով սպիտակ գանգրամազ գառներ հիշեցնող ամպերից կազմված տարօրինակ, ասես՝ սադափե, այն խեցին, որ կանգնել էր ուղիղ նրա գլխի վրա՝ երկնքի մեջտեղում։ Ի՞նչ հրաշագեղ է ամեն բան այս սքանչելի գիշերին։ Եվ ե՞րբ կարողացավ կազմվել այդ

խեցին։ Քիչ առաջ ես նայում էի երկնքին, և այնտեղ ոչինչ չկար բացի սպիտակ երկու շերտերից։ Այո՛, այսպես ահա աննկատելիորեն փոխվեցին նաև իմ հայացքները կյանքի նկատմամբ»։

Նա դուրս եկավ մարգագետնից ու մեծ ճանապարհով գնաց դեպի գյուղը։ Բարձրանում էր բարակ քամի, և օրը դարձավ գորշ, մռայլ։ Հասավ մառախլոտ այն բոպեն, որը սովորաբար նախորդում է այգաբացին, լի՝ խավարի դեմ լույսի հաղթանակով։

Ցրտից կծկվելով, Լևինը գնում էր արագ, նայելով գետնին։ «Ի՞նչ է դա. մեկը գալիս է կառքով», մտածեց նա, լսելով զանգակների ձայն ու բարձրացրեց գլուխը։ Նրանից քառասուն քայլ հեռավորության վրա, նրան ընդառաջ, այն մեծ կանաչապատ ճանապարհով, որով գնում էր ինքը, գալիս էր քառաձի մի կառեթ՝ լծակներով։ Առեղի ձիերը սեղմվում էին կողքի փոկերից դեպի առեղը, բայց ճարպիկ կառապանը, թեք նստած նստիքին, առեղը պահում էր աղուրի գծով, այնպես որ անիվները գլորվում էին ողորկ հունով։

Այդ միայն նկատեց Լևինը և չմտածելով այն մասին, թե ո՛վ կարող է լինել գնացողը, ցրված նայեց կառեթին։

Կառեթի մեջ անկյունում նիրհում էր մի պառավ, իսկ լուսամուտի մոտ, երևի, հենց նոր արթնացած, նստել էր մի ջահել աղջիկ, երկու ձեռքով բռնած սպիտակ չեպչիկի ժապավեններից։ Լուսաշող ու մտածկոտ, ամբողջովին համակված՝ նրբագեղ ու բարդ ներքին, Լևինի համար խորթ կյանքով, աղջիկը նայում էր լուսամուտից արևածագի արշալույսին։

Հենց այն վայրկյանին, երբ այդ տեսիլը չքանում էր, ճշմարտաշող մի զույգ աչքեր նայեցին Լևինին։ Նա ճանաչեց Լևինին, և զարմանքի ուրախությունից պայծառացավ աղջկա դեմքը։

Լևինը չէր կարող սխալվել։ Աշխարհում միակն էին այդ աչքերը։ Աշխարհում միայն մի էակ կար, որ ընդունակ էր կենտրոնացնել նրա համար կյանքի ամբողջ լույսը և իմաստը։ Դա նա էր։ Դա Կիտին էր։ Լևինը հասկացավ, որ նա երկաթուղու կայարանից գնում էր Երգուշովո։ Եվ այն բոլորը, ինչ հուզում էր Լևինին այդ անքուն գիշերը, բոլոր այն որոշումները, որ հանել էր նա,— բոլորը, բոլորը հանկարծ չքացան։ Նա զզվանքով հիշեց իր տենչերը՝ գեղջկուհու հետ ամուսնանալու մասին։ Այնտեղ միայն, արագ հեռացող ու ճանապարհի մյուս կողմն անցած այն կառեթի մեջ,— այնտեղ միայն հնարավորություն կար լուծելու վերջերս այնպես տանջալից կերպով իր վրա ծանրացած կյանքի առեղծվածը։

Կիտին այլևս դուրս չնայեց։ Անիվների զսպանակների ձայնը չէր լսվում այլևս, հազիվ լսվում էին միայն զանգակները։ Շների հաչոցը ցույց տվեց, որ կառեթն անցավ նաև գյուղից,— և շուրջը մնացին դատարկ դաշտերը, առջևում գյուղը ու նա ինքը, միայնակ և օտար ամենքին, որ մեն-մենակ գնում էր խուլ մեծ ճանապարհով։

Նա նայեց երկնքին, հուսալով գտնել այնտեղ այն խեցին, որով հրճվում էր ինքը և որն անձնավորում էր նրա համար այս գիշերվա մտքերի ու զգացումների ամբողջ ընթացքը։ Երկնքում այլևս ոչինչ չկար խեցիի նման։ Այնտեղ, անհասանելի բարձրության մեջ, կատարվել էր արդեն խորհրդավոր փոփոխություն։ Խեցիի հետքն անգամ չկար, այնտեղ կար երկնքի ամբողջ կես երեսին փռված, շարունակ մանրացող ու մանրացող գառնանման ամպերի հավասար գորգը։ Երկինքը կապտեց ու փայլեց և միևնույն քնքշությամբ, բայց և միևնույն անհասանելիությամբ պատասխանում էր նրա հարցական հայացքին։

«Ո՛չ,— ասաց նա ինքն իրեն,— որքան էլ գեղեցիկ է այդ կյանքը, պարզ և աշխատավորական կյանքը, ես չեմ կարող վերադառնալ դեպի այն։ Ես սիրում եմ Նրան»։

XIII

Ո՛չ ոք, բացի Ալեքսեյ Ալեքսանդրովիչին ամենամոտիկ մարդկանցից, չգիտեր, որ արտաքուստ ամենասառնասիրտ ու լրջմիտ այդ մարդն ուներ մի, իր բնավորության ընդհանուր խառնվածքին հակասող, թուլություն։ Ալեքսեյ Ալեքսանդրովիչը չէր կարող սառնասրտությամբ լսել և տեսնել Նրեխայի կամ կնոջ արցունք։ Արցունքի տեսքը զցում էր նրան ցրված կացության մեջ, և նա բոլորովին կորցնում էր դատողության ընդունակությունը։ Նրա գրասենյակի կառավարիչն ու քարտուղարը գիտեին այդ և նախազգուշացնում էին խնդրարկու կանանց, որ նրանք բնավ չարտասվեն, եթե

չեն ուզում փչացնել իրենց գործը։ «Նա կբարկանա և այլևս չի լսի ձեզ», ասում էին նրանք։ Եվ իսկապես, այդպիսի դեպքերում հոգեկան այլայլված կացությունը, որի մեջ Ալեքսեյ Ալեքսանդրովիչն ընկնում էր արցունքների հետևանքով, արտահայտվում էր շտապողական ցասումով։ «Ես չեմ կարող, չեմ կարող ոչինչ անել։ բարեհաճացեք դուրս գնալ այստեղից», բղավում էր նա սովորաբար նման դեպքերում։

Երբ վերադառնալով ձիարշավից, Աննան հայտարարեց նրան Վրոնսկու հետ ունեցած իր հարաբերությունների մասին և դրանից անմիջապես հետո արտասվեց, դեմքը ծածկելով ձեռքերով, Ալեքսեյ Ալեքսանդրովիչը, չնայած իր մեջ նրա դեմ բարձրացած զայրույթին, զգաց միաժամանակ հոգեկան այն այլայլված կացության վրահասը, որի դրդապատճառն էին միշտ արցունքները։ Գիտենալով այդ և իմանալով նաև այն, որ այդ րոպեին իր զգացմունքների արտահայտությունն անբնական կլիներ ստեղծված դրության համար, նա աշխատում էր զսպել իր մեջ կյանքի ամեն նշույլ, ուստի չէր շարժվում ու չէր նայում կնոջը։ Հենց դրանից էլ առաջանում էր նրա դեմքին մեռելայնության այն տարօրինակ արտահայտությունը, որն այնպես զարմացրեց Աննային։

Երբ նրանք մոտեցան տանը, նա կնոջն իջեցրեց կառքից և ուժ գործ դնելով իր վրա, սովորական քաղաքավարությամբ հրաժեշտ տվեց նրան ու արտասանեց այն խոսքերը, որոնք ոչ մի բանով չէին պարտավորեցնում նրան. նա ասաց, որ վաղը կհաղորդի իր որոշումը Աննային։

Կնոջ խոսքերը, որոնք հաստատեցին նրա վատթարագույն կասկածները, խորին ցավ պատճառեցին Ալեքսեյ Ալեքսանդրովիչի սրտին։ Այդ ցավն ավելի ուժեղացավ կնոջը ֆիզիկապես խղճալու այն տարօրինակ զգացումով, որ հայտնաբերեցին նրա մեջ Աննայի արցունքները։ Սակայն, մնալով կառքում մենակ, Ալեքսեյ Ալեքսանդրովիչը, ի զարմանս և հուրախություն իր, զգաց, որ ինքը լիովին ազատվեց թե՛ այդ խղճահարությունից, թե՛ վերջերս իրեն տանջող կասկածներից ու խանդի տառապանքներից։

Նա ուներ այն մարդու զգացումը, որ հանել էր երկար ժամանակ ցավող իր ատամը, երբ սոսկալի ցավի և ծնոտի միջից հանվող, գլխից ավելի մեծ ինչ-որ հսկայական բանի

զգացողությունից հետո, հիվանդը հանկարծ, տակավին չհավատալով իր երջանկությանը, զգում է, որ այլևս գոյություն չունի այն, ինչն այնքան երկար թունավորում էր իր կյանքը, գամում էր իր ամբողջ ուշադրությունը, և որ այժմ ինքը նորից կարող է ապրել, մտածել ու հետաքրքրվել ո՛չ միմիայն իր ատամով։ Այդ զգացումն ուներ Ալեքսեյ Ալեքսանդրովիչը։ Ցավը տարօրինակ էր ու սոսկալի, բայց այժմ անցավ. նա զգում էր, որ կարող է նորից ապրել ու մտածել ո՛չ միմիայն կնոջ մասին։

«Անպատիվ, անսիրտ, անկրոն, փչացած կի՛ն։ Դա ես միշտ գիտեի և տեսնում էի, թեպետև աշխատում էի խաբել ինքս ինձ, խղճալով նրան»,— ասաց նա ինքն իրեն։ Եվ իրոք, թվում էր նրան, ու ինքը միշտ տեսնում էր. նա մտաբերում էր իրենց անցած կյանքի մանրամասները, որոնք առաջ նրան ոչ մի բանով վատ չէին թվում,— այժմ այդ մանրամասները պարզ ցույց էին տալիս, որ Աննան միշտ էլ փչացած էր։ «Ես սխալվեցի, կապելով իմ կյանքը նրա հետ, բայց իմ սխալի մեջ ոչ մի վատ բան չկա, այդ իսկ պատճառով ես չեմ կարող դժբախտ լինել։ Մեղավորը ե՛ս չեմ,— ասաց նա ինքն իրեն,— մեղավորը նա է։ Բայց ես գործ չունեմ նրա հետ։ Նա գոյություն չունի ինձ համար»։

Ալեքսեյ Ալեքսանդրովիչն այլևս չէր հետաքրքրվում այն ամենով, ինչ պիտի վիճակվեր կնոջը և որդուն, դեպի որը, ճիշտ այնպես, ինչպես դեպի կինը, փոխվեցին նրա զգացումները։ Միակ բանը, ինչն այժմ զբաղեցնում էր նրան, այն հարցն էր, թե ի՛նչպես իր համար ամենալավ, ամենավայելուչ, ամենահարմար կերպով, ուրեմն և ամենաարդարացի ձևով թոթափել իրենից այն կեղտը, որ կինը շպրտեց նրա վրա իր անկումով, ու շարունակել իր գործունյա, ազնիվ և օգտակար կյանքի ուղին։

«Ես չեմ կարող դժբախտ լինել այն բանից, որ անարգ կինը հանցանք է գործել, ես պետք է միայն լավագույն ելք գտնեմ դուրս գալու այն ծանր կացությունից, որի մեջ նա դնում էր ինձ։ Եվ ես կգտնեմ այդ ելքը,— մտածում էր Ալեքսեյ Ալեքսանդրովիչը, ավելի ու ավելի խոժոռվելով։— Ես ո՛չ առաջինն եմ, ո՛չ էլ վերջինը»։ Եվ մի կողմ թողած պատմական օրինակները, սկսած ամենքի հիշողության մեջ թարմացած

Մենելայոսի զեղեցիկ Հեղինեից, Ալեքսեյ Ալեքսանդրովիչի երևակայության մեջ ծագեց բարձր հասարակության պատկանող ամուսիններին, կանանց արդի անհավատարմության մի ամբողջ շարք։ «Դարյալով, Պոլտավսկի, իշխան Կարիբանով, կոմս Պասկուդին, Դոամ... Այո՛, Դոամ... այնպիսի ազնիվ, գործունյա մարդ... Սեմյոնով, Զագին, Սագոնին,— հիշեց Ալեքսեյ Ալեքսանդրովիչը։— Թեպետ և այդ մարդիկ ենթարկվում են ինչ-որ անմիտ ridicule-ի (ծաղրի), բայց ես երբեք դրա մեջ ոչինչ չէի տեսնում բացի դժբախտությունից, ու միշտ ցավակցում էի դրան»,— ասաց ինքն իրեն Ալեքսեյ Աեքլսանդրովիչը, թեև դա ճիշտ չէր և նա երբեք չէր ցավակցում այդ կարգի դժբախտություններին, այլ այնքան ավելի բարձր էր գնահատում իրեն, որքան ավելի հաճախ էին պատահում իրենց ամուսիններին դավաճանող կանանց օրինակներ։ «Դա դժբախտություն է, որ կարող է վիճակվել ամեն մարդու։ Եվ այդ դժբախտությունը եկավ իմ գլխին։ Բանն այն է միայն, թե ինչպե՛ս լավագույն կերպով դիմանալ այդ դրությանը»։ Եվ նա սկսեց կշռադատել այն մարդկանց գործողությունների եղանակի մանրամասները, որոնք եղել էին այնպիսի դրության մեջ, ինչպես ինքը։

«Դարյալովը մենամարտեց»...

Մենամարտը պատանեկան հասակում առանձնապես գրավում էր Ալեքսեյ Ալեքսանդրովիչի ուշադրությունն այն պատճառով, որ նա ֆիզիկապես վեհերոտ մարդ էր ու լավ գիտեր այդ բանը։ Ալեքսեյ Ալեքսանդրովիչը չէր կարող առանց սարսափի մտածել իր վրա ուղղված ատրճանակի մասին, և իր կյանքում երբեք չէր գործածել ո՛չ մի զենք։ Այդ սարսափը մանկությունից սկսած հաճախ ստիպում էր նրան մտածել մենամարտի մասին և իրեն հարմարեցնել այն դրությանը, որի մեջ պետք է իր կյանքը ենթարկել վտանգի։ Հասնելով կյանքի մեջ հաջողության ու կայուն դրության, նա վաղուց մոռացել էր այդ զգացման մասին. բայց զգացման սովորությունը հաղթահարեց, և իր թուլամորթության համար վախը դուրս եկավ այժմ էլ այնքան ուժեղ, որ Ալեքսեյ Ալեքսանդրովիչը երկար և ամեն կողմից կշռադատում ու մտքով գուրգուրում էր մենամարտի հարցը, թեպետև առաջուց դիտեր, որ ինքը ո՛չ մի դեպքում չի մենամարտի։

«Անկասկած, մեր հասարակությունը դեռ այնքան վայրենի է (հո Անգլիայի պես չէ՛), որ շատ շատերը,— և այդ շատերի թվում էին նրանք, որոնց կարծիքն Ալեքսեյ Ալեքսանդրովիչն առանձնապես բարձր է գնահատում,— մենամարտին կնայեն լավ կողմից. բայց հետևանքն ի՞նչ կլինի։ Ենթադրենք, ես կկանչեմ մենամարտի,— շարունակեց ինքն իրեն Ալեքսեյ Ալեքսանդրովիչը, և վառ կերպով պատկերացնելով իրեն այն դիշերը, որ կանցկացնի մարտակոչից հետո, պատկերացնելով իր վրա ուղղված ատրճանակը, նա ցնցվեց ու հասկացավ, որ ինքը երբեք չի անի այդ բանը,— ենթադրենք, ես կկանչեմ նրան մենամարտի։ Ենթադրենք, ինձ կսովորեցնեն,— շարունակեց նա իր մտածումները,— կկանգնեցնեն, ես կքաշեմ ատրճանակի ոտը,— մտածում էր նա, փակելով աչքերը,— և կպարզվի, որ ես սպանեցի նրան,— ասաց ինքն իրեն Ալեքսեյ Ալեքսանդրովիչը ու թափահարեց գլուխը, որպեսզի վանի իրենից այդ տխմար մտքերը։ Ի՞նչ իմաստ ունի մարդու սպանությունը լոկ նրա համար, որ մարդ որոշի իր վերաբերմունքը դեպի հանցավոր կինը և որդին։ Ճիշտ այդպես էլ ես պետք է վճռեմ, թե ի՛նչ պիտի անեմ կնոջս հետ։ Բայց ավելի հավանական է այն, և դա անպայման կլինի, որ ես սպանվեմ կամ վիրավորվեմ։ Ես, անմեղ մարդ, զոհ, սպանված կամ վիրավորված։ Դա ավելի անմիտ բան է։ Սակայն այդ դեռ քիչ է. մենամարտի կանչելն իմ կողմից կլինի անաղնիվ վարմունք։ Մի՞թե ես չգիտեմ, որ իմ բարեկամները երբեք թույլ չեն տա ինձ՝ գնալ մենամարտի,— թույլ չեն տա, որ պետական մարդու, Ռուսաստանին պետական մարդու կյանքը ենթարկվի վտանգի։ Հապա ի՞նչ կլինի։ Կլինի այն, որ ես նախօրոք իմանալով, որ երբեք բանը չի հասնի վտանգի, կամեցա միայն այդ մարտակոչով ինձ որոշ կեղծ վայել տալ։ Դա անազնիվ, դա կեղծ բան է, դա ուրիշներին և ինքն իրեն խաբել է։ Մենամարտն անկարելի է, և ոչ ոք չի սպասում ինձանից այդ։ Իմ նպատակն է ապահովել իմ բարի համբավը, որը պե՛տք է ինձ՝ իմ գործունեությունն անարգել շարունակելու համար»։ Պաշտոնական գործունեությունը, որ առաջ էլ մեծ նշանակություն ուներ Ալեքսեյ Ալեքսանդրովիչի աչքին, այժմ նրան թվում էր առանձնապես կարևոր։

Կշռադատելով ու մերժելով մենամարտը, Ալեքսեյ Ալեքսանդրովիչը դիմեց ապահարզանին՝ մյուս ելքին, որ ընտրել էին իր մտաբերած ամուսիններից ոմանք։ Հիշողությամբ վերլուծելով ապահարզանների իրեն հայտնի բոլոր դեպքերը (դրանք չափազանց շատ էին իրեն քաջ ծանոթ ամենաբարձր հասարակության մեջ), Ալեքսեյ Ալեքսանդրովիչը չգտավ ոչ մեկը, որտեղ ապահարզանի նպատակը լիներ այն, որ նկատի ուներ ինքը։ Այդ բոլոր դեպքերում մարդը զիջում էր կամ ծախում էր իր անհավատարիմ կնոջը, և այն կողմը, որ հանցանքի պատճառով իրավունք չուներ նորից ամուսնանալու, նոր ամուսնու հետ հաստատում էր մտացածին, երևութաբար օրինականացված կապեր։ Իսկ իր դեպքում Ալեքսեյ Ալեքսանդրովիչը տեսնում էր, որ անհնարին է հասնել օրինական, այսինքն՝ այնպիսի ապահարզանի, որտեղ մերժված լիներ միայն հանցավոր կինը։ Նա տեսնում էր, որ կյանքի բարդ պայմանները, որոնց մեջ գտնվում էր ինքը, անհնարին էին դարձնում այն կոպիտ ապացույցները, որոնք պահանջում էր օրենքը՝ կնոջ հանցավորությունը հաստատելու համար. տեսնում էր այն, որ կյանքի որոշ նրբությունը թույլ չէր տալիս կիրառելու այդ ապացույցները, եթե անգամ լիներ դրանք, որ այդ ապացույցների կիրառումը հասարակական կարծիքի տեսանկյունով ավելի կձգեր իրե՛ն, քան իր կնոջը։

Ապահարզանի փորձը կարող էր հասցնել միայն խայտառակ պրոցեսի, որը գյուտ կլիներ թշնամիների համար, զրպարտության և իր բարձր դիրքը բարձր հասարակության մեջ նվաստացնելու համար։ Իսկ գլխավոր նպատակը, այսինքն՝ պարզել դրությունը, նվազագույն չափով խախտելով իր հոգեկան հավասարակշռությունը, չէր իրագործվում նաև ապահարզանի միջոցով։ Բացի դրանից, ապահարզանի դեպքում, նույնիսկ ապահարզանի փորձի դեպքում, բացահայտ էր դառնում, որ կինը խզում էր հարաբերությունները ամուսնու հետ և կապվում իր սիրեկանի հետ։ Իսկ Ալեքսեյ Ալեքսանդրովիչի հոգում, չնայած այժմ իր լիովին, ինչպես թվում էր նրան, արհամարհական անտարբերությանը դեպի կինը, մնում էր նրա նկատմամբ մի զգացում՝ չկամություն այն բանի, որ կինը կարողանար անարգել կապվել Վրոնսկու հետ, որ կնոջ հանցանքը շահեկան լինի իր համար։ Այդ միտքն

ինքնին այնպես գրգռում էր Ալեքսեյ Ալեքսանդրովիչին, որ նա, միայն պատկերացնելով այդ բանը, բառաչեց ներքին ցավից և բարձրացավ ու փոխեց տեղը կառքի մեջ, և դրանից հետո երկար ժամանակ, խոժոռված, փաթաթում էր իր մրսկան ու ոսկրոտ ոտքերը խավոտ պլեդով։

«Բացի ձևական ապահարզանից, կարելի էր վարվել և այնպես, ինչպես Կարիբանովը, Պասկուդինը և այդ բարի Դոմը, այսինքն՝ ուղղակի բաժանվել կնոջից»,— շարունակում էր մտածել Ալեքսեյ Ալեքսանդրովիչը հանդարտվելուց հետո. բայց այդ միջոցը ևս ուներ խայտառակության նույն անհարմարությունները, ինչպես և ապահարզանի դեպքում, իսկ որ գլխավորն է՝ դա ճիշտ այնպես, ինչպես ձևական ապահարզանը, նեղում էր նրա կնոջը Վրոնսկու գիրկը։— Ո՛չ, դա անհնարին է, անհնարի՛ն,— բարձրաձայն ասաց նա, նորից սկսելով փաթաթել իր պլեդը։— Ես չեմ կարող դժբախտ լինել, բայց կինս ու Վրոնսկին էլ չպետք է բախտավոր լինեն։

Խանդի զգացումը, որ տանջում էր նրան, երբ դրությունն անհայտ էր, անցավ այն րոպեին, երբ կնոջ խոսքերով ցավով հանվեց նրա ատամը։ Բայց այդ զգացումին փոխարինեց մի ուրիշ զգացում՝ ցանկություն, որ կինը ո՛չ միայն չհաղթանակեր, այլև հատուցում ստանար իր հանցանքի համար։ Նա չէր ընդունում այդ զգացումը, բայց իր հոգու խորքում ուզում էր, որ կինը տուժեր, տանջվեր նրա հանգիստն ու պատիվը խախտելու համար։ Եվ նորից կշռադատելով մենամարտի, ապահարզանի, բաժանման պայմանները ու նորից մերժելով դրանք, Ալեքսեյ Ալեքսանդրովիչը համոզվեց, որ կար միայն մի ելք. կնոջը պահել իր մոտ, ծածկելով բարձր հասարակությունից պատահածը և գործադրելով իրենից կախված բոլոր միջոցները՝ կապին վերջ տալու համար ու, որ գլխավորն է, այդ բանը նա ինքն իրեն չէր խոստովանում՝ կնոջը պատժելու համար։ «Ես պետք է հայտարարեմ իմ վճիռը, որ կշռադատելով այն ծանր դրությունը, որի մեջ նա (Աննան) դրեց ընտանիքը, ուրիշ ամեն ելք երկու կողմերի համար կլինի ավելի վատ, քան արտաքուստ status quo[1]-ն, և որ դա ևս համաձայն եմ պահպանելու, բայց իմ կամքը նրա (Աննայի) կողմից խստու-

[1] Գոյություն ունեցող դրություն։

թյամբ կատարելու պայմանով, այսինքն՝ խզել հարաբերությունները սիրեկանի հետ»։ Ի հաստատումն այդ վճռի, երբ այն վերջնականապես արդեն ընդունված էր, Ալեքսեյ Ալեքսանդրովիչի գլուխն եկավ էլի մի կարևոր նկատառում։ «Այդպիսի վճռի դեպքում միայն ես վարվում եմ համաձայն կրոնի,— ասաց նա ինքն իրեն,— միայն այդ վճռի դեպքում ես չեմ մերժում, ինձանից չեմ վանում հանցավոր կնոջը, այլ հնարավորություն եմ տալիս նրան ուղղվելու և նույնիսկ, ինչքան էլ ծանր լինի դա ինձ համար, նվիրում եմ իմ ուժերի մի մասը նրա փրկության և ուղղվելու գործին»։ Թեպետ Ալեքսեյ Ալեքսանդրովիչը գիտեր, որ ինքը չի կարող բարոյական ազդեցություն ունենալ կնոջ վրա, որ ոչինչ դուրս չի գա նրան ուղղելու այս ամբողջ փորձից, բացի ստից, թեպետ, ապրելով այդ ծանր րոպեները, նա ոչ մի անգամ չմտածեց այն մասին, թե պետք է ղեկավարություն փնտրել կրոնի մեջ,— այժմ, երբ նրա վճիռը զուգադիպում էր, ինչպես թվում էր նրան, կրոնի պահանջներին, նրա վճռի այդ կրոնական սանկցիան տալիս էր նրան լիովին բավարարում ու մասամբ հանգիստ։ Նրա համար ուրախալի էր մտածել, որ կենսական այդքան կարևոր գործում էլ ո՛չ ոք չի կարող ասել, թե ինքը չվարվեց այն կրոնի կանոնների համեմատ, որի դրոշը նա միշտ բարձր էր պահում ընդհանուր սառնության և անտարբերության մեջ։ Խորհելով հետագա մանրամասները, Ալեքսեյ Ալեքսանդրովիչը նույնիսկ չէր տեսնում, թե ինչո՛ւ իր և կնոջ հարաբերությունները չէին կարող մնալ համարյա այնպես, ինչպես առաջ էին։ Անկասկած ինքը երբեք ի վիճակի չի լինի նորից հարգանքով վերաբերվելու կնոջը. բայց իր համար չկար և չէր կարող լինել ո՛չ մի պատճառ՝ խափանելու իր կյանքը և տառապելու այն բանի պատճառով, որ կինն անհավատարիմ ու վատ կին էր։ «Այո՛, կանցնի ժամանակ, ամեն ինչ կարգավորող ժամանակ, և կվերականգնվեն առաջվա հարաբերությունները,— մտածեց Ալեքսեյ Ալեքսանդրովիչը,— այսինքն կվերականգնվեն այն աստիճան, որ ես խանգարում չեմ զգա իմ կյանքի ընթացքի մեջ։ Նա պետք է դժբախտ լինի, բայց ես հանցավոր չեմ, այդ իսկ պատճառով՝ չեմ կարող դժբախտ լինել»։

XIV

Մոտենալով Պետերբուրգին, Ալեքսեյ Ալեքսանդրովիչը ո՛չ միայն լիովին կանգ առավ իր այդ վճռի վրա, այլև իր գլխում կազմեց այն նամակը, որ գրելու էր կնոջը։ Մտնելով բարապանի սենյակը, Ալեքսեյ Ալեքսանդրովիչը նայեց նամակներն ու մինիստրությունից բերված գրությունները և հրամայեց բերել դրանք իր ետևից՝ առանձնասենյակ։

— Դնել մի կողմ և ոչ ոքի չընդունել,— ասաց նա, որպես պատասխան բարապանի հարցին, շեշտելով «չընդունել» բառը որոշ բավականությամբ, որ հատկանիշ էր նրա լավ տրամադրության։

Առանձնասենյակում Ալեքսեյ Ալեքսանդրովիչը երկու անգամ գնաց-եկավ ետ ու առաջ և կանգնեց հսկայական գրասեղանի մոտ, որի վրա մինչ այդ ներս եկած սենեկապապասավորը վառել էր վեց մոմ, մատները ճրթճրթացրեց և նստեց, տեղաշարժելով գրենական պիտույքները։ Արմունկները դնելով սեղանին, նա գլուխը թեքեց մի կողքի, մի րոպե մտածեց ու սկսեց գրել, կանգ չառնելով ոչ մի վայրկյան։ Նա գրում էր կնոջը առանց դիմումի և ֆրանսերեն, գործածելով «դուք» դերանունը, որը չունի սառնության այն բնույթը, ինչ ունի ռուսերեն լեզվում։

«Մեր վերջին խոսակցության ժամանակ ես հայտնեցի ձեզ իմ դիտավորությունը՝ հաղորդել իմ վճիռը՝ հիշյալ խոսակցության նյութի վերաբերյալ։ Ուշադրությամբ խորհելով բոլորը, ես այժմ գրում եմ խոստումս կատարելու նպատակով։ Իմ վճիռը հետևյալն է. ինչպես էլ լինեն ձեր վարմունքները, ես իրավունք չեմ համարում ինձ՝ խզելու այն կապերը, որոնցով մենք կապված ենք վերին իշխանությամբ։ Ընտանիքը չի կարող քայքայվել ամուսիններից մեկի քմահաճույքով, կամայականությամբ կամ նույնիսկ հանցագործությամբ, և մեր կյանքը պիտի ընթանա այնպես, ինչպես ընթանում էր առաջ։ Դա անհրաժեշտ է ինձ համար, ձեզ համար, մեր որդու համար։ Ես լիովին վստահ եմ, որ դուք ղղջացել և ղղջում եք այն բանում, ինչն առիթ է տալիս այս նամակին, և որ դուք կաջակցեք ինձ, որպեսզի կարելի լինի արմատախիլ անել մեր երկպառակության պատճառը և

մոռանալ անցյալը։ Հակառակ դեպքում՝ դուք ինքներդ կարող եք ենթադրել այն, ինչ սպասում է ձեզ ու ձեր որդուն։ Հուսամ, այս բոլորի մասին ավելի մանրամասնորեն խոսել անձամբ տեսնվելիս։ Որովհետև ամառանոցի սեզոնը վերջանում է, ես կխնդրեի ձեզ վերադառնալ Պետերբուրգ ըստ կարելույն շուտ, երեքշաբթվանից ո՛չ ուշ։ Ձեր գալու համար կարվեն բոլոր անհրաժեշտ կարգադրությունները։ Խնդրում եմ ձեզ՝ նկատի ունենալ, որ ես առանձին նշանակություն եմ տալիս այս խնդրի իրագործմանը։

Ա. Կարենին։

Հ. Գ. Այս նամակին կից ուղարկում եմ դրամ, որը կարող է հարկավոր լինել ձեր ծախսերի համար»։

Նա կարդաց նամակը և գոհ մնաց, մանավանդ այն բանից, որ չմոռացավ դրամ կցելը. չկար ո՛չ դաժան խոսք, ո՛չ հանդիմանություն, բայց չկար նաև ներողամտություն։ Իսկ որ գլխավորն է, կար վերադարձի համար ոսկե կամուրջ։ Ծալելով նամակը և կոկելով այն փղոսկրյա մեծ դանակով ու դրամի հետ դնելով ծրարի մեջ, նա զանգահարեց բավականությամբ, որ միշտ առաջ էր գալիս նրա մեջ իր լավ սարքավորված դրենական պիտույքների գործածությամբ։

— Կհանձնես սուրհանդակին, որ վաղը հասցնի Աննա Արկադևնային ամառանոցում,— ասաց նա և վեր կացավ։

— Լսում եմ, ձերդ գերազանցություն. կհրամայեք թեյը բերել առանձնասենյա՞կ։

Ալեքսեյ Ալեքսանդրովիչը հրամայեց թեյ բերել առանձնասենյակ և, խաղալով ծավալուն դանակի հետ, գնաց դեպի բազկաթոռը, որի մոտ պատրաստված էր լամպը և սկսած ֆրանսերեն գիրքը՝ եվգյուբիական արձանագրությունների մասին։ Բազկաթոռի գլխին օվալաձև ոսկե շրջանակի մեջ կախված էր հռչակավոր նկարչի սքանչելի վրձնած Աննայի դիմանկարը։ Ալեքսեյ Ալեքսանդրովիչը նայեց դիմանկարին։ Անթափանցելի աչքերը ծաղրալից ու հանդուգն նայում էին նրան, ինչպես նրանց բացատրության այն վերջին երեկոն։ Անտանելի լկտիաբար ու հանդգնաբար ազդեց Ալեքսեյ Ալեքսանդրովիչի վրա նկարչի հիանալի վրձնած գրիչ ու ժանյակների և սև մազերի ու գեղեցիկ

ձեռքի տեսքը, որի մատնեմատը պատած էր մատանիներով։ Մի բոպեի չափ պորտրեն դիտելուց հետո Ալեքսեյ Ալեքսանդրովիչը ցնցվեց այնպես, որ շրթունքները դողդողացին ու արձակեցին «բը՞ռռ» հնչյունը, և նա շուտ եկավ։ Շտապ նստելով բազկաթոռի մեջ, նա բացեց գիրքը։ Փորձեց կարդալ, բայց ո՛չ մի կերպ չկարողացավ վերականգնել իր մեջ այն չափազանց վառ հետաքրքրությունը, որով առաջ կարդում էր եվգյուբիական արձանագրությունները։ Նա նայում էր գրքին և մտածում էր այլ բանի մասին։ Նա մտածում էր ո՛չ թե կնոջ, այլ վերջերս իր պետական գործունեության մեջ ծագած մի խճճված գործի մասին, որն այդ ժամանակ կազմում էր նրա ծառայության գլխավոր հետաքրքրությունը։ Նա զգում էր, որ այժմ ավելի խորը կերպով, քան երբևիցե, թափանցում էր այդ խճճվածքի ներսը և որ իր գլխում հղացել էր,— նա կարող է ասել առանց ինքնախաբեության,— հիմնական մի միտք, որը պետք է բացեր, պարզեր այդ ամբողջ գործը, բարձրացներ նրան իր ծառայության կարիերայի մեջ, զցեր նրա թշնամիներին, այս իսկ պատճառով՝ մեծագույն օգուտ բերեր պետությանը։ Հենց որ սպասավորը թեյը դնելուց հետո դուրս գնաց սենյակից, Ալեքսեյ Ալեքսանդրովիչը կանգնեց ու դիմեց դեպի գրասեղանը։ Ընթացիկ գործերով լի պորտֆելը քաշելով սեղանի մեջտեղը, նա ինքնաբավականության հազիվ նկատելի ժպիտով վերցրեց գրչակոթերի բաժակից մատիտը և խորասուզվեց իր պահանջած այն բարդ գործի ընթերցման մեջ, որ վերաբերում էր հիշյալ գործի առաջիկայում ավելի խճճվելուն, բարդվելուն։ Բարդացումն այսպես էր. Ալեքսեյ Ալեքսանդրովիչի, որպես պետական մարդու, առանձնահատկությունն այն բնորոշ գիծն էր, նրան միայն հատուկ, որ ունենում է առաջ գնացած յուրաքանչյուր մարդ, մի գիծ, որը միացած նրա համառ փառասիրության, զգուշության, ազնվության ու ինքնավստահության հետ, կարիերա ստեղծեց նրա համար և հանգում էր թղթե պաշտոնականությունը արհամարհելուն, գրագրությունը կրճատելուն, որքան հնարավոր է, կենդանի գործի հետ ուղղակի կապ հաստատելուն և խնայողությանը։ Իսկ պատահեց, որ հունիսի 2-ի հռչակավոր հանձնաժողովում դրվեց Զարայսկի նահանգի դաշ-

տերը ոռոգելու գործը, որը մտել էր Ալեքսեյ Ալեքսանդրո-
վիչի մինիստրության մեջ և ցայտուն օրինակ էր ապարդյուն
ծախսերի ու գործին թղթե վերաբերմունք ցույց տալու։ Ալեք-
սեյ Ալեքսանդրովիչը գիտեր, որ դա արդարացի էր։ Զա-
րայսկի նահանգի դաշտերի ոռոգման գործն սկսել էր Ալեք-
սեյ Ալեքսանդրովիչի նախորդի նախորդը։ Եվ իրոք, այդ
գործի վրա ծախսվել էր ու ծախսվում էր չափազանց շատ
դրամ և բոլորովին ապարդյուն, ու այդ ամբողջ գործը հայտ-
նապես ոչնչի չէր կարող հասցնել։ Ալեքսեյ Ալեքսանդրովիչը
պաշտոնի անցնելուց հետո անմիջապես հասկացավ դա և
ուզեց ձեռքը դնել այդ գործի վրա. բայց սկզբներում, երբ
նա դեռ ամուր չէր զգում իրեն, գիտեր, որ դա շոշափում է
չափազանց շատ շահեր և անխոհեմություն կլիներ. իսկ հե-
տո, զբաղված ուրիշ գործերով, մոռացավ այդ գործը։ Վեր-
ջինս, ինչպես և բոլոր գործերը, գնում էր ինքն իրեն, իներ-
ցիայի ուժով։ (Շատ մարդիկ էին կերակրվում այդ գործով,
մանավանդ մի շատ բարոյական ու երաժշտական ընտա-
նիք. բոլոր աղջիկները նվագում էին լարային գործիքներ։
Ալեքսեյ Ալեքսանդրովիչը ճանաչում էր այդ ընտանիքը և
ավագ աղջիկներից մեկի հարսանեհայրն էր)։ Թշնամի մինիս-
տրության կողմից այդ հարցի հարուցումը, Ալեքսեյ Ալեք-
սանդրովիչի կարծիքով, անաղնվություն էր, որովհետև յու-
րաքանչյուր մինիստրության մեջ կային դրանից վատթար
գործեր, որոնց ոչ ոք, պաշտոնական որոշ պատճառներով,
չէր բարձրանում։ Իսկ այժմ, քանի որ նրան մենամարտի
ձեռնոց էին նետել, նա համարձակ վերցնում էր այն և պա-
հանջում էր նշանակել հատուկ հանձնաժողով՝ ուսումնա-
սիրելու և ստուգելու Զարայսկի նահանգի դաշտերի ոռոգ-
ման հանձնաժողովի աշխատանքները, բայց դրա փոխարեն
նա այժմ արդեն ներողամտություն չուներ այդ պարոնների
նկատմամբ։ Նա պահանջում էր նույնպես՝ նշանակել հա-
տուկ հանձնաժողով այլազգիների կարգուսարքավորման
գործի մասին։ Այլազգիների կարգուսարքավորման գործը պա-
տահմամբ բարձրացել էր հունիսի 2-ի կոմիտեում և եռանդով
պաշտպանվում էր Ալեքսեյ Ալեքսանդրովիչի կողմից, որպես
այլազգիների ողբալի կացությանը վերաբերող անհետաձգելի
գործ։ Կոմիտեում այդ գործն առիթ տվեց վիճաբանության՝

մի քանի մինիստրությունների միջև։ Ալեքսեյ Ալեքսանդրո-
վիչին թշնամի մինիստրությունն ապացուցում էր, որ այլազ-
գիները գտնվում էին չափազանց ծաղկած վիճակում և որ ենթ-
ադրվող վերակառուցումը կարող է կործանել նրանց ծաղ-
կումը, իսկ եթե կա վատ բան, դա առաջանում է նրանից, որ
Ալեքսեյ Ալեքսանդրովիչի մինիստրությունը չի կատարում
օրենքով հրամանագրված միջոցառումները։ Այժմ Ալեքսեյ
Ալեքսանդրովիչը մտադիր էր պահանջել. առաջին. որպեսզի
կազմվեր նոր հանձնաժողով, որին առաջադրվեր տեղում հե-
տազոտել այլազգիների կացությունը. երկրորդ, եթե պարզվի,
որ այլազգիների դրությունն իրոք այնպես է, ինչպես դա երե-
վում է կոմիտեի ձեռքի տակ եղած պաշտոնական տվյալնե-
րից, ապա՝ նշանակվի էլի մի ուրիշ՝ նոր գիտական հանձնա-
ժողով՝ հետազոտելու համար այլազգիների այդ անմխիթար
կացության պատճառները՝ ա) քաղաքական, բ) վարչական,
գ) տնտեսական, դ) ազգագրական, ե) նյութական և զ) կրո-
նական հայեցակետերով. երրորդ, որպեսզի թշնամի մինիս-
տրությունից տեղեկություններ պահանջվեին այն միջոցների
մասին, որ այդ մինիստրությունը ձեռք էր առել վերջին տաս-
նամյակում վերացնելու աննպաստ այն պայմանները, որոնց
մեջ գտնվում են ներկայումս այլազգիները, և չորրորդ, վեր-
ջապես, որպեսզի բացատրություն պահանջվի մինիստրու-
թյունից այն մասին, թե ինչո՞ւ այդ մինիստրությունը, ինչ-
պես դա երևում է կոմիտեին ներկայացրած՝ 1863 թվի դեկ-
տեմբերի 5-ի և 1864 թվի հունիսի 7-ի № № 17015 ու 18308
տեղեկություններից, գործելիս է եղել միանգամայն հակա-
ռակ արմատական և օրգանական օրենքի իմաստին,
հ... հոդվ. 18, ու 36-րդ հոդվածի ծանոթություն։ Աշխուժու-
թյունից կարմրեց Ալեքսեյ Ալեքսանդրովիչի դեմքը, երբ նա
արագ գրում էր այս մտքերի կոնսպեկտը։ Գրելով մի ամ-
բողջ թերթ, նա կանգնեց, զանգահարեց և հրամայեց հանձ-
նել տոմսը գրասենյակի կառավարչին՝ ուղարկելու իրեն հար-
կավոր տեղեկանքները։ Վեր կենալով ու քայլելով սենյակում,
նա նորից նայեց պորտրեին, մոայլվեց և արհամարհալից
ժպտաց։ Մի քիչ էլ կարդալով եվգյուբիական արձանագրու-
թյունների մասին գիրքը ու վերականգնելով իր հետաքրքրու-
թյունը դրանց նկատմամբ, Ալեքսեյ Ալեքսանդրովիչը ժամը

11-ին գնաց քնելու, և երբ նա, պառկած անկողնում, հիշեց կնոջ հետ պատահած դեպքի մասին, այն նրան թվաց արդեն բոլորովին ո՛չ այնպես մռայլ։

XV

Թեև Աննան համառորեն ու զայրացած հակաճառում էր Վրոնսկուն, երբ սա ասում էր, որ նրա դրությունն անտանելի է, և համոզում էր ամեն ինչ հայտնել ամուսնուն, Աննան հոգու խորքում իր դրությունը համարում էր կեղծ, անազնիվ ու ամբողջ սրտով ուզում էր փոխել այն։ Ամուսնու հետ վերադառնալով ձիարշավից, հուզված բոպեին Աննան ասաց նրան բոլորը, և չնայած այն ժամանակ իր զգացած ցավին, ուրախ էր, որ ասաց։ Ամուսնու գնալուց հետո նա մտածում էր, թե ինքն ուրախ է, որ այժմ ամեն ինչ կպարզվի և համենայն դեպս՝ վերջ կտրվի ստին ու խաբեությանը։ Նրան թվում էր անկասկած, որ այժմ իր դրությունը մեկընդմիշտ կորոշվի։ Գուցե վատ լինի այդ նոր դրությունը. բայց կլինի որոշ, նրա մեջ չի լինի անորոշություն և սուտ։ Այն ցավը, որ նա պատճառեց իրեն ու իր ամուսնուն, ասելով այդ խոսքերը, կվարձատրվի այժմ նրանով, որ ամեն բան կպարզվի, մտածում էր նա։ Հենց այդ երեկո նա տեսնվեց Վրոնսկու հետ, բայց ոչինչ չասաց նրան, թե ինչ տեղի ունեցավ իր ու ամուսնու միջև, թեև, որպեսզի դրությունը պարզվեր, պետք էր այդ ասել նրան։

Երբ Աննան արթնացավ հետևյալ առավոտ, առաջին բանը, որ պատկերացավ նրան, ամուսնուն ասած նրա խոսքերն էին, և այդ խոսքերն Աննային թվացին այնպես սոսկալի, որ նա չէր կարողանում հասկանալ այժմ, թե ինչպես կարող էր ինքը սիրտ անել արտասանելու այդ տարօրինակ կոպիտ խոսքերը, և չէր կարողանում պատկերացնել, թե ի՛նչ դուրս կգա դրանից։ Բայց խոսքերն ասվել էին, և Ալեքսեյ Ալեքսանդրովիչը գնաց, առանց ոչինչ ասելու։ «Ես տեսա Վրոնսկուն ու չասացի նրան։ Դեռ այն բոպեին, երբ նա հեռանում էր, ես ուզում էի ետ կանչել նրան ու ասել, բայց միտքս փոխեցի, որովհետև տարօրինակ էր, թե ինչո՛ւ չասացի նրան հենց առաջին բոպեին։ Ինչո՞ւ ես ուզում էի և չասացի»։ Ու որպես պատասխան այդ հարցի, ամոթի տաք կարմրությունը պատեց նրա դեմքը։ Աննան հասկացավ այն, ինչը պահում էր իրենց այդ քայլն անելուց. նա հասկացավ, որ ինքն ամաչում էր։ Իր դրությունը, որ երեկ երեկոյան թվում էր պարզված, հանկարծ պատկերացավ ո՛չ միայն չպարզված, այլև անելանելի։ Նա սարսափեց այն խայտառակությունից, որի մասին առաջ չէր էլ մտածում։ Հենց որ նա մտածում էր այն մասին, թե ի՛նչ կանի ամուսինը, նրա գլուխն էին գալիս ամենասարսափելի մտքեր։ Նրա գլուխն էր գալիս, թե այս բոպեիս կգա կառավարիչը՝ դուրս գցելու իրեն տանից, թե իր խայտառակությունը կհայտարարվի ամբողջ աշխարհին։ Նա հարցնում էր ինքն իրեն, թե ո՛ւր պիտի գնա ինքը, երբ տանից դուրս գցեն իրեն, և պատասխան չէր գտնում։

Երբ Աննան մտածում էր Վրոնսկու մասին, նրան պատկերանում էր, որ նա չի սիրում իրեն, որ նա արդեն սկսում է նեղվել իրենից, որ ինքը չի կարող իրեն առաջարկել նրան և դրա համար Աննան թշնամանք էր զգում դեպի նա։ Աննային թվում էր, թե այն խոսքերը, որ ինքն ասաց ամուսնուն և որոնք նա անընդհատ կրկնում էր իր երևակայության մեջ, ասել է ամենքին, և ամենքը լսել են այդ խոսքերը։ Նա սիրտ չէր անում նայելու այն մարդկանց աչքերին, որոնց հետ ապրում էր ինքը։ Նա սիրտ չէր անում կանչելու աղախնին, ավելի ևս սիրտ չէր անում իջնելու ներքև ու տեսնելու որդուն և դաստիարակչուհուն։

Աղախինը, որ վաղուց արդեն ականջը սրել, սպասում էր Աննայի դռան մոտ, սենյակ մտավ ինքնագլուխ։ Աննան հարցական հայացքով նայեց նրա աչքերին ու վախեցած կարմրեց։ Աղախինը ներողություն խնդրեց, որ ներս մտավ, ասաց, թե իրեն թվաց, իբր զանգահարեցին։ Նա բերել էր Աննայի զգեստը և մի տոմս։ Տոմսը Բետսիից էր։ Բետսին հիշեցնում էր նրան, որ այսօր առավոտյան իր մոտ կգան Լիզա Մերկալովան ու բարոնուհի Շտոլցը՝ իրենց երկրպագուները՝ Կալուժսկու և ծերունի Ստրեմովի հետ, մի պարտիա կրոկետ խաղալու։ «Եկեք թիկուզ նայելու, որպես բարքերի ուսումնասիրություն։ Ես սպասում եմ ձեզ», վերջացնում էր նա։

Աննան կարդաց տոմսը և ծանր հառաչեց։

— Պետք չէ, ոչինչ պետք չէ,— ասաց նա Աննուշկային, որ վերադասավորում էր սրվակներն ու խոզանակները զուգասեղանի վրա։— Գնա՛, ես իսկույն կհագնվեմ և դուրս կգամ։ Ոչինչ, ոչինչ պետք չէ։

Աննուշկան դուրս գնաց, բայց Աննան չէր հագնվում, այլ նստել էր նույն դրությամբ, գլուխն ու ձեռքերը քաշ գցած, և երբեմն ցնցվում էր ամբողջ մարմնով, կամենալով անել ինչ-որ շարժում, ասել որևէ բան ու նորից մարվում էր։ Նա անդադար կրկնում էր. «Աստված իմ, աստված իմ»։ Բայց ո՛չ «աստված», ո՛չ «իմ»-ը ո՛չ մի իմաստ չունեին նրա համար։ Իր դրությունից դուրս գալու նպատակով, Աննայի համար կրոնի մեջ օգնություն փնտրելու միտքը,—չնայած, նա երբեք չէր կասկածում կրոնի նկատմամբ, որի ոգով դաստիարակվել էր ինքը,— նույնպես խորթ էր, ինչպես խորթ էր օգնություն փնտրելը հենց իր՝ Ալեքսեյ Ալեքսանդրովիչի մոտ։ Նա նախապես գիտեր, որ կրոնից օգնություն հնարավոր է միայն այն բանից հրաժարվելու պայմանով, որն իր համար կազմում էր կյանքի ամբողջ իմաստը։ Նրա համար ոչ միայն ծանր էր, այլև նա սկսում էր վախ զգալ հոգեկան այդ նոր, իրեն անծանոթ կացության առաջ։ Նա զգում էր, որ իր հոգում ամեն բան երկատվում է, ինչպես երբեմն երկատվում են առարկաները հոգնած աչքերի առաջ։ Երբեմն նա չէր իմանում, թե ինչի՞ց է վախենում, ի՞նչ է ցանկանում ինքը։ Նա չգիտեր, արդյոք վախենո՞ւմ է այն բանից և կամենո՞ւմ է այն, ինչ արդեն կար, թե՞ այն, ինչ պիտի լինի, և ի՞նչ է ուզում հատկապես։

«Ա՜խ, ի՞նչ եմ անում ես»,— ասաց նա ինքն իրեն, հանկարծ ցավ զգալով գլխի երկու կողմերում։ Երբ նա ուշքի եկավ, տեսավ, որ երկու ձեռքով բռնել է մազերը քունքերի մոտ ու սեղմում է քունքերը։ Նա վեր թռավ տեղից և սկսեց քայլել։

— Սուրճը պատրաստ է, և մամզելն ու Սերյոժան սպասում են,— ասաց Աննուշկան, նորից ետ գալով և Աննային տեսնելով նույն դրության մեջ։

— Սերյո՞ժան։ Սերյոժան ի՞նչ,— հանկարծ աշխուժանալով, հարցրեց Աննան, առաջին անգամ այս ամբողջ առավոտվա ընթացքում հիշելով իր որդու գոյության մասին։

— Կարծեմ, նա հանցանք է գործել,— պատասխանեց Աննուշկան ժպտալով։

— Ինչպե՞ս թե հանցանք է գործել։

— Դուք դեղձեր էիք դրել անկյունի սենյակում, այնպես որ, կարծեմ, նա սուսուփուս կերել է մի հատը։

Որդու մասին հիշեցումը հանկարծ հանեց Աննային այն անելանելի դրությունից, որի մեջ գտնվում էր նա։ Նա հիշեց որդու համար ապրող մոր, մասամբ անկեղծ, թեպետև շատ չափազանցրած այն դերը, որ ինքը վերցրել էր իր վրա վերջին տարիներս, և ուրախությամբ զգաց, թե այն կացությամբ, որի մեջ գտնվում էր ինքը, ունի մի տերություն, անկախ այն դրությունից, ուր կկանգնի ինքը ամուսնու և Վրոնսկու դիմաց։ Այդ տերությունը որդին էր։ Ինչ դրության մեջ էլ ինքը հայտնվի, չի կարող լքել որդուն։ Թող ամուսինը խայտառակի և վռնդի նրան, թող Վրոնսկին սառի նրանից ու շարունակի վարել իր անկախ կյանքը (Աննան նորից մաղձով և կշտամբանքով մտածեց նրա մասին), նա չի կարող լքել որդուն։ Նա ունի կյանքի նպատակ։ Եվ նա պիտի գործի, գործի, որպեսզի ապահովի այդ դրությունն իր որդու հետ, որպեսզի նրան չխլեն իրենից։ Մինչև անգամ պետք է գործել շուտ, որքան կարելի է շուտ, քանի նրան չեն խլել իրենից։ Պետք է վերցնել որդուն և մեկնել, հեռանալ։ Ահա միակ բանը, որ պետք է հիմա անի նա։ Հարկավոր էր, որ նա հանգստանար ու դուրս գար այդ տանջալի դրությունից։ Որդու հետ կապված անմիջական գործի ու այժմ ևեթ նրա հետ որևէ տեղ մեկնելու միտքը տվեց Աննային այդ հանգիստը։

Նա արագ հագնվեց, իջավ ներքև ու վճռական քայլերով մտավ ընդունարան, որտեղ, սովորաբար, սպասում էր նրան սուրճը՝ Սերյոժայի և դաստիարակչուհու հետ։ Սերյոժան, ոտից գլուխ սպիտակ հագած, կանգնել էր սեղանի մոտ, հայելու տակ և, մեջքն ու գլուխը կորացրած, լարված ուշադրության արտահայտությամբ, որ ծանոթ էր մորը և որով նա նման էր հորը, ինչ-որ բան էր անում իր բերած ծաղիկների հետ։

Դաստիարակչուհու տեսքն առանձնապես խիստ էր։ Սերյոժան սուր ճչոցով, ինչպես դա հաճախ պատահում էր նրա

հետ, բացականչեց. «Ա՜, մայրի՜կ» և կանգ առավ անվրդովականությամբ. արդյոք, թողնի ծաղիկները և մոտենա՞ մորը ողջունելու, թե՞ պսակը կազմի, վերջացնի ու ծաղիկներով մոտենա։

Դաստիարակչուհին բարևելուց հետո երկար ու հանգամանորեն սկսեց պատմել Սերյոժայի գործած հանցանքը, բայց Աննան չէր լսում նրան. նա մտածում էր, արդյոք կվերցնի՞ դաստիարակչուհուն իր հետ, թե ոչ։ «Ո՜չ, չեմ վերցնի,— վճռեց նա։— Ես կերթամ մենակ, որդուս հետ»։

— Այո՛, դա շատ վատ է,— ասաց Աննան և բռնելով որդուն ուսից, ո՛չ խիստ, այլ վարանոտ հայացքով, որ շփոթեցրեց և ուրախացրեց երեխային, նայեց նրան ու համբուրեց։ — Թողեք նրան ինձ հետ,— ասաց նա զարմացած դաստիարակչուհուն և բաց չթողնելով որդու ձեռքերը, նստեց սուրճի սեղանի առաջ։

— Մայրի՜կ, ես... ես... չէի...— ասաց նա, աշխատելով հասկանալ մոր արտահայտությունից, թե ի՞նչ է սպասում իրեն դեղձի համար։

— Սերյոժա,— ասաց Աննան, հենց որ դաստիարակչուհին դուրս գնաց սենյակից,— դա վատ է, բայց դու այլևս այդպիսի բան չես անի... Դու սիրո՞ւմ ես ինձ։

Աննան զգում էր, որ իր աչքերը լցվում են արցունքներով։ «Մի՞թե ես կարող եմ չսիրել նրան,— մտածում էր նա, թափանցելով որդու վախեցած, միաժամանակ և ուրախացած հայացքի մեջ։— Ու մի՞թե նա կմիանա հորը, որ մահապատժի ինձ։ Մի՞թե չի խղճա ինձ»։ Արցունքներն արդեն հոսում էին Աննայի դեմքի վրայով և դրանք ծածկելու նպատակով, նա թափով կանգնեց ու համարյա դուրս վազեց դեպի տերրաս։

Վերջին օրերի մրրկաբեր անձրևներից հետո սկսվեց ցուրտ, պայծառ եղանակ։ Օդը ցուրտ էր վառ արևի տակ, որի շողերն անցնում էին մաքրված տերևների արանքից։

Աննան ցնցվեց թե՛ ցրտից, թե՛ ներքին սարսափից, որը նոր ուժով համակեց նրան մաքուր օդի մեջ։

— Գնա, գնա Mariette-ի մոտ,— ասաց նա Սերյոժային, որն ուզում էր դուրս գալ մոր ետևից, և սկսեց քայլել տերրասի ծղոտե գորգի վրա։ «Մի՞թե նրանք չեն նե-

ղրի ինձ, չեն հասկանա, որ այդ բոլորն այլ կերպ լինել չէր կարող», մտածեց նա։

Կանգ առնելով և նայելով քամուց օրորվող բարդու կատարին, մաքրված, պաղ արևի տակ շողափայլ տերևներով, Աննան հասկացավ, որ նրանք չեն ների, որ ամեն ինչ և ամենքը այժմ անողոք կլինեն իր նկատմամբ, ինչպես այդ երկինքը, ինչպես այդ կանաչը։ Եվ նորից նա զգաց, որ իր հոգու մեջ սկսվում էր երկփեղկում։ «Պետք չէ, պետք չէ մտածել,— ասաց նա իրեն։— Պետք է հավաքվել։ Ո՞ւր։ Ե՞րբ։ Ո՞ւմ վերցնեմ հետս։ Այո՛, դեպի Մոսկվա, երեկոյան գնացքով։ Աննուշկան ու Սերյոժան, և ամենաանհրաժեշտ իրերը միայն։ Բայց նախ պետք է գրել նրանց երկուսին էլ»։ Նա արագ գնաց տուն, մտավ իր առանձնասենյակը, նստեց սեղանի առաջ և գրեց ամուսնուն.

«Այն բանից հետո, ինչ տեղի ունեցավ, ես չեմ կարող այլևս մնալ ձեր տանը։ Ես հեռանում եմ այստեղից և վերցնում եմ ինձ հետ որդուս։ Ես օրենքներ չգիտեմ, այդ պատճառով էլ չգիտեմ, թե ծնողներից ո՞ւմ հետ պիտի լինի որդին, բայց ես նրան վերցնում եմ հետս, որովհետև չեմ կարող ապրել առանց նրա։ Եղեք մեծահոգի, թողեք նրան ինձ»։

Մինչև այժմ Աննան գրում էր արագ ու բնական, բայց ամուսնուն արած մեծահոգության կոչը, մեծահոգություն, որն Աննան չէր ընդունում նրա մեջ, և նամակը հուզիչ արտահայտությամբ եզրափակելու անհրաժեշտությունը կանգնեցրին նրան։

«Խոսել իմ հանցանքի և իմ զղջման մասին ես չեմ կարող, որովհետև»...

Նա նորից կանգ առավ, կապ չգտնելով իր մտքերի մեջ։ «Ո՜չ,— ասաց ինքն իրեն,— ոչինչ պետք չէ», և պատռելով նամակը, արտագրեց այն, դուրս գցելով մեծահոգության մասին հիշատակությունն ու փակեց։

Մյուս նամակը պետք էր գրել Վռոնսկուն։ «Ես հայտարարեցի ամուսնուս», գրում էր նա և նստած էր երկար, ի վիճակի չլինելով շարունակելու։ Դա այնպես կոպիտ էր, այնպես ո՛չ կանացի։ «Եվ հետո՞, ի՞նչ կարող եմ գրել նրան, մտածեց նա։ Նորից ամոթի զգացումից շիկնեց նրա դեմքը, հիշեց Վռոնսկու անդորրությունը, և նրա հան-

դեպ ունեցած սրտնեղության հույզն ստիպեց Աննային մանրակտոր պատռել թերթիկը՝ գրված ֆրազի հետ։ «Ոչինչ պետք չէ», ասաց նա ինքն իրեն և ծալելով բյուվարը, բարձրացավ վերև, հայտարարեց դաստիարակչուհուն ու սպասավորներին, որ այսօր գնում է Մոսկվա և անմիջապես սկսեց դարսել իրերը։

Ամառանոցի տան բոլոր սենյակներում գնում-գալիս էին բակապանները, պարտիզպաններն ու ծառաները, դուրս տանելով իրերը։ Պահարանները և կամոդները բաց էին. երկու անգամ վազեցին կրպակ թոկ բերելու. հատակին թափված էր լրագրաթուղթ։ Երկու սնդուկ, տոպրակներն ու կապկըպած պլեդները տարան նախասենյակ։ Կառեթը և երկու կառք կանգնած էին դրսի սանդուղքների մոտ։ Աննան, դարսելու աշխատանքի պրոցեսում մոռացած իր ներքին տագնապը, տեղավորում էր ճանապարհորդական պայուսակը, կանգնած սեղանի առաջ իր առանձնասենյակում, երբ Անուշկան նրա ուշադրությունը հրավիրեց մոտեցող կառքի թիկթիկոցի վրա։ Աննան նայեց պատուհանից դուրս և տեսավ սանդուղքների մոտ Ալեքսեյ Ալեքսանդրովիչի սուրհանդակին, որը զանգահարում էր մուտքի դուռը։

— Գնա, տե՛ս, ի՞նչ կա,— ասաց Աննան և ամեն բան ընդունելու հանգիստ պատրաստակամությամբ նստեց բազկաթոռի մեջ, ձեռքերը դնելով ծնկներին։ Սպասավորը բերեց մի հաստ ծրար, մակագրված Ալեքսեյ Ալեքսանդրովիչի ձեռքով։

— Սուրհանդակին հրամայված է պատասխան տանել,— ասաց նա։

— Լավ,— ասաց Աննան և, հենց որ նա դուրս գնաց, դողդոջուն մատներով բացեց ծրարը։ Խաչկապ կպցրած մի կապոց չծալած թղթադրամ դուրս ընկավ այնտեղից։ Նա հանեց նամակը և սկսեց կարդալ վերջից։ «Ես պատրաստություններ եմ տեսել վերադարձի համար, ես նշանակություն եմ տալիս իմ խնդիրը կատարելուն»,— կարդաց նա։ Նա աչքի անցկացրեց շարունակությունը, ետ դարձավ բոլորը կարդաց և ամբողջ նամակը մեկ էլ կարդաց սկզբից։ Երբ վերջացրեց, զգաց, որ մրսում է և, որ իր գլխին պայթեց այնպիսի սոսկալի դժբախտություն, որին չէր սպասում։

Առավոտյան նա զզջում էր, որ ասաց ամուսնուն, և ցանկանում էր միայն մի բան, որպեսզի այդ խոսքերն ասված չլինեին։ Եվ ահա այս նամակը, համարում էր խոսքերը չասված ու տալիս էր նրան այն, ինչ ցանկանում էր նա։ Բայց այժմ այդ նամակը նրան թվում էր ավելի սոսկալի, քան այն բոլորը, ինչ կարող էր պատկերացնել նա։

«Իրավացի՞ է, իրավացի՞,— ասաց Աննան։— Հասկանալի է, որ նա միշտ իրավացի է, նա քրիստոնյա է, նա մեծահոգի է։ Այո՛, ստոր, զարշելի մարդ։ Եվ այդ բանը ոչ ոք, բացի ինձնից, չի հասկանում ու չի հասկանա. և ես չեմ կարող բացատրել։ Նրանք ասում են. կրոնասեր, բարեյական, ազնիվ, խելոք մարդ. բայց նրանք չեն տեսնում այն, ինչ տեսել եմ ես։ Նրանք չգիտեն, թե ինչպե՛ս ութ տարի նա խեղդում էր իմ կյանքը, խեղդում էր իմ մեջ այն ամենը, ինչ կենդանի էր, որ նա ո՛չ մի անգամ չի էլ մտածել այն մասին, թե ես կենդանի կին եմ, որին տեր է պետք։ Զգիտեն, թե ինչպես նա յուրաքանչյուր քայլափոխում վիրավորում էր ինձ և զոհ էր մնում ինքն իրենից։ Մի՞թե ես չէի աշխատում. աշխատում էի բոլոր ուժերով՝ գտնելու իմ կյանքի արդարացումը։ Մի՞թե ես չէի փորձում սիրել նրան, սիրել որդուս, երբ այլևս չէր կարելի սիրել ամուսնուս։ Բայց եկավ ժամանակը, ես հասկացա, որ չեմ կարող այլևս խաբել ինքս ինձ, որ ես կենդանի էակ եմ, որ ես մեղավոր չեմ, եթե աստված ինձ ստեղծել է այնպես, որ ինձ պետք է սեր ու կյանք։ Եվ այժմ ի՞նչ։ Եթե նա սպաներ ինձ, սպաներ նրան, ես բոլորը կտանեի, ես բոլորը կներեի, բայց ո՛չ, նա»...

«Ինչպե՞ս ես չգուշակեցի այն, ինչ կանի նա։ Նա կանի այն, ինչը հատուկ է իր ստոր բնավորությանը։ Նա կմնա իրավացի, իսկ ինձ, կորածիս, ավելի վատ, ավելի ստորաբար կկործանեն»... «Դուք ինքներդ կարող եք ենթադրել այն, ինչ սպասում է ձեզ և ձեր որդուն», մտաբերեց Աննան նամակի խոսքերը։ «Դա սպառնալիք է, որ նա կխլի որդուս, և հավանորեն, նրանց տխմար օրենքով դա հնարավոր է։ Բայց մի՞թե ես չգիտեմ, թե ինչո՛ւ է նա ասում այդ։ Նա չի հավատում նաև դեպի որդիս տածած իմ սիրուն, կամ արհամարհում է (ինչպես և միշտ ծաղրում էր), արհամարհում է իմ այդ զգացումը, սակայն նա գիտե, որ ես որդուս չեմ

լքի, չեմ կարող լքել որդուս, որ առանց որդուս չի կարող ինձ համար կյանք լինել նույնիսկ այն մարդու հետ, որին ես սիրում եմ։ Բայց որ գցելով որդուս ու փախչելով նրանից, ես կվարվեմ որպես ամենաանարգ, գարշելի կին, նա գիտե այդ և գիտե, որ ես անկարող եմ այդ անելու»։

«Մեր կյանքը պետք է ընթանա այնպես, ինչպես առաջ», մտաբերեց Աննան նամակի մյուս ֆրազը։ «Այդ կյանքը տանջալից էր դեռ առաջ, այդ կյանքը սոսկալի էր վերջերս։ Իսկ ի՞նչ կլինի այժմ։ Եվ նա գիտե այս բոլորը, գիտե, որ ես չեմ կարող զղջալ այն բանում, որ շնչում եմ, որ սիրում եմ. գիտե, որ ստից ու խաբեությունից զատ ոչինչ դուրս չի գա դրանից, բայց նրան պետք է, որ շարունակի տանջել ինձ։ Ես ճանաչում եմ նրան, ես գիտեմ, որ նա, ինչպես ձուկը ջրում, լող է տալիս ստի մեջ ու հրճվում է։ Սակայն ո՛չ, ես նրան այդպիսի բավականություն չեմ պատճառի, ես կպատռեմ նրա ստի այդ ոստայնը, որի մեջ նա ուզում է ինձ խճճել. թող լինի այն, ինչ լինելու է։ Ինչ էլ անեմ՝ ստից ու խաբեությունից լավ է»։

«Բայց ինչպե՞ս։ Աստվա՜ծ իմ։ Աստվա՜ծ իմ։ Եղե՞լ է արդյոք երբևիցե մի կին այնպես դժբախտ, ինչպես ես եմ»...

— Ո՛չ, կխզեմ, կխզեմ,— ճչաց Աննան, վեր թռչելով տեղից ու զսպելով արցունքները։ Եվ նա մոտեցավ գրասեղանին, որ ուրիշ նամակ գրի ամուսնուն։ Բայց հոգու խորքում արդեն զգում էր, որ անկարող է որևէ բան խզելու, անկարող է դուրս գալու առաջվա այդ դրությունից, որքան էլ դա կեղծ է և անպատիվ։

Աննան նստեց գրասեղանի մոտ, բայց փոխանակ գրելու, ձեռքերը փռեց սեղանին, գլուխը դրեց նրանց վրա և լաց եղավ, հեկեկալով ու ցնցվելով ամբողջ կրծքով, ինչպես լալիս են երեխաները։ Նա լալիս էր այն բանի համար, որ ընդմիշտ խորտակվել է իր դրությունը պարզելու, որոշելու տենչանքը։ Նա նախապես գիտեր, որ ամեն բան կմնա առաջվա պես և նույնիսկ ավելի կվատանա, քան առաջ էր։ Նա զգում էր, որ բարձրը հասարակության եղած այն դիրքը, որից օգտվում էր ինքը և որն առավոտյան իրեն թվում էր այնքան չնչին, թանկ է իր համար, որ ինքն անզոր է փոխարինելու այդ դրությունը մի կնոջ խայտառակ դրությամբ, որը թողել է ամուսնուն ու որդուն և միացել է սիրեկանին. որ ինչքան էլ աշխատի ինքը,

չի կարող ավելի ուժեղ լինել, քան է ինքը էապես։ Նա երբեք չի զգա սիրո ազատությունը, այլ ընդմիշտ կմնա հանցավոր կին, ամեն րոպե բռնվելու սպառնալիքի տակ ամուսնուն խաբող կին, որը հանցավոր կապ է հաստատել օտար, անկախ մարդու հետ, որի հետ չի կարող ապրել մի կյանքով։ Նա գիտեր, որ դա այդպես էլ կլինի, և միաժամանակ դա այնպես սարսափելի էր, որ նույնիսկ չէր կարող պատկերացնել, թե ինչո՞վ կվերջանա այդ։ Եվ նա լալիս էր, չզսպելով իրեն, ինչպես լալիս են պատժված երեխաները։

Սպասավորի ոտնաձայնն ստիպեց Աննային ուշքի գալ և ծածկելով նրանից իր դեմքը, նա ձևացավ, իբր գրում է։

— Սուրհանդակը պատասխան է խնդրում,— զեկուցեց սպասավորը։

— Պատասխա՞ն։ Այո՛,— ասաց Աննան,— թող սպասի։ Ես կզանգահարեմ։

«Ի՞նչ կարող եմ ես գրել,— մտածում էր նա։— Ի՞նչ կարող եմ վճռել մենակ. ի՞նչ գիտեմ ես. ի՞նչ եմ ուզում ես, ի՞նչ եմ սիրում ես»։ Նորից նա զգաց, որ իր հոգում սկսվում է երկատում։ Նա նորից վախեցավ այդ զգացումից և ձեռք զարկեց գործունեության առաջին պատահած առիթին, որը կարող էր նրան հեռացնել իր մասին եղած մտքերից։ «Ես պետք է տեսնեմ Ալեքսեյին (նա այդպես էր կանչում Վրոնսկուն մտքով), նա՛ միայն կարող է ասել ինձ, թե ի՛նչ պետք է անեմ ես։ Գնամ Բետսիի մոտ, գուցե այնտեղ տեսնեմ նրան», մտածեց Աննան, բոլորովին մոռանալով, որ դեռ երեկ, երբ ինքը հայտնեց նրան, թե չի գնա իշխանուհի Տվերսկայայի մոտ, Վրոնսկին ասաց, որ այդ իսկ պատճառով ինքն էլ չի գնա այնտեղ։ Նա մոտեցավ սեղանին, գրեց ամուսնուն. «Ստացա ձեր նամակը։ Ա.»— և զանգահարելով՝ տվեց սպասավորին։

— Մենք չենք գնում,— ասաց նա ներս եկած Աննուշկային։

— Բոլորովի՞ն չենք գնում։

— Ո՛չ, մինչև առավոտ ոչինչ բաց չանեք, և ասեք, որ Կառեթը մնա։ Ես կգնամ իշխանուհու մոտ։

— Իսկ ո՞ր զգեստը պատրաստեմ։

Կրոկետ խաղալու հասարակությունը, ուր հրավիրում էր իշխանուհի Տվերսկայան Աննային, պետք է կազմվեր երկու տիկիններից ու նրանց երկրպագուներից։ Այդ երկու տիկինները գլխավոր ներկայացուցիչներն էին Պետերբուրգի ընտիր նոր շրջանի, որը, ի նմանակումն ինչ-որ նմանակության, կոչվում էր les sept merveilles du monde[1]։ Այդ տիկինները, ճիշտ է, պատկանում էին բարձրագույն շրջանին, բայց միանգամայն թշնամի այն շրջանին, ուր հաճախում էր Աննան։ Բացի դրանից, ծերունի Ստրեմովը, Պետերբուրգի ազդեցիկ մարդկանցից մեկը, Լիզա Մերկալովայի երկրպագուն, պաշտոնի գծով Ալեքսեյ Ալեքսանդրովիչի թշնամին էր։ Այս բոլոր նկատառումներով Աննան չէր ուզում գնալ, և նրա այդ մերժմանն էին վերաբերում իշխանուհի Տվերսկայայի ակնարկները։ Իսկ այժմ, Վռոնսկուն տեսնելու հույսով, Աննան կամեցավ գնալ։

Աննան եկավ իշխանուհի Տվերսկայայի մոտ մյուս հյուրերից ավելի վաղ։

Այն միջոցին, երբ Աննան ներս էր մտնում, Վռոնսկու սպասավորը, երկճյուղ սանրած բակենբարդներով, կամերյունկերի նման, նույնպես ներս էր մտնում։ Նա կանգ առավ դռան մոտ և հանելով գդակը, առաջ թողեց Աննային։ Աննան ճանաչեց նրան ու այստեղ միայն հիշեց, որ Վռոնսկին երեկ ասաց, թե չի գա։ Երևի նա դրա մասին տոմս էր ուղարկել։

Աննան լսեց, հանելով վերարկուն նախասենյակում, թե ինչպես սպասավորը, որ n տառն արտասանում էր նույնպես, ինչպես կամեր-յունկերը, ասաց. «Կոմսից իշխանուհուն», և հանձնեց տոմսը։

Աննան ուզում էր հարցնել, թե որտեղ է նրա պարոնը։ Աննան ուզում էր ետ դառնալ ու նամակ գրել նրան, որպեսզի նա գար իր մոտ, կամ ինքը գնար նրա մոտ։ Բայց ո՛չ մեկը, ո՛չ մյուսը, ո՛չ երրորդը չէր կարելի անել. արդեն առջևում լսվեցին Աննայի գալու մասին հայտարարող զանգերը, և իշխանուհի Տվերսկայայի սպասավորն արդեն կիսադարձ կանգ-

[1] Աշխարհի յոթ հրաշալիքներ։

նել էր բաց դռան մոտ, սպասելով, որ նա անցնի ներսի սենյակները։

— Իշխանուհին պարտեզում է, իսկույն կզեկուցեն։ Չէի՞ք կամենա հրամմել պարտեզ,— զեկուցեց մյուս սպասավորը մյուս սենյակում։

Նույն անվճռական, անորոշ վիճակն էր, ինչ որ տանը. դեռ ավելի վատ, որովհետև չէր կարելի ոչինչ ձեռնարկել, չէր կարելի տեսնել Վռոնսկուն, այլ պետք էր մնալ այստեղ, իր տրամադրությանն այնքան հակադիր և օտար հասարակության մեջ. բայց Աննան այնպիսի տուալետով էր, որը, նա գիտեր, որ սազում էր իրեն. նա մենակ չէր. շուրջը տիրում էր պարապության այդ սովորական հանդիսավոր մթնոլորտը, և նրա համար այստեղ ավելի թեթև էր, քան տանը. նա չպետք է մտածեր, թե ի՞նչ պիտի անի ինքը։ Ամեն բան արվում էր ինքն իրեն։ Հանդիպելով ընդառաջ եկող Բետսիին՝ սպիտակ, իր վայելչագեղությամբ իրեն զարմացնող տուալետով, Աննան ժպտաց նրան, ինչպես միշտ։ Իշխանուհի Տվերսկայան գալիս էր Տուշկևիչի և իրենց ազգական մի օրիորդի հետ, որ ամառն անց էր կացնում հռչակավոր իշխանուհու մոտ՝ ի մեծ երջանկություն իր գավառացի ծնողների։

Հավանորեն Աննայի մեջ կար առանձնահատուկ մի բան, որովհետև Բետսին անմիջապես նկատեց այդ։

— Ես վատ եմ քնել,— ասաց Աննան, ուշադիր նայելով սպասավորին, որը գալիս էր նրանց ընդառաջ և, Աննայի կարծիքով, բերում էր Վռոնսկու տոմսը։

— Ինչպես ուրախ եմ, որ դուք եկաք,— ասաց Բետսին։— Ես հոգնած եմ և հենց նոր ուզում էի խմել մի գավաթ թեյ, մինչև կգան նրանք։ Լավ կլիներ, եթե դուք գնայիք Մաշայի հետ,— դիմեց նա Տուշկևիչին,— և փորձեիք կրոկետ-գրունդը այնտեղ, որտեղ խուզել են։ Մենք ձեզ հետ կկարողանանք սրտանց խոսել թեյի ժամանակ, we'll have a cosy chat[1], այնպես չէ՞,— դիմեց նա Աննային ժպտալով, սեղմելով նրա ձեռքը, որով բռնել էր հովանոցը։

— Մանավանդ որ ես երկար չեմ կարող մնալ ձեզ մոտ, ինձ անհրաժեշտ է գնալ պառավ Վռեդեի մոտ։ Արդեն հար-

[1] Մենք կունենանք հաճելի զրույց։

յուր տարի է, ինչ խոստացել եմ,— ասաց Աննան, որի համար սուտը, նրա բնությանը խորթ սուտը, դարձել էր ո՛չ միայն պարզ ու բնական բան հասարակության մեջ, այլև բավականություն էր պատճառում նրան։ Թե ինչի՞ համար ասաց այդ, որի մասին մի վայրկյան առաջ չէր էլ մտածում, նա չէր կարող ո՛չ մի կերպ բացատրել։ Նա ասաց դա միայն այն նկատառումով, որպեսզի, քանի որ Վռոնսկին չէր լինելու, ապահովի իր ազատությունը և փորձի մի կերպ տեսնել նրան։ Բայց թե ինչո՞ւ ասաց հատկապես պառավ Ֆրեյլին Վռեդեի մասին, որի մոտ գնալու նույնքան պետք ուներ, ինչպես և ուրիշ շատերի, չէր կարողանա բացատրել, մինչդեռ, ինչպես հետո պարզվեց, հնարելով Վռոնսկու հետ տեսնվելու համար ամենախորամանկ միջոցներ, նա չէր կարող հնարել դրանից ավելի լավ բան։

— Ո՛չ, ես ոչ մի կերպ բաց չեմ թողնի ձեզ,— պատասխանեց Բետսին, ուշադրությամբ զննելով Աննայի դեմքը։— Ճիշտ եմ ասում, ես կնեղանայի, եթե չսիրեի ձեզ։ Կարծես դուք վախենում եք, որ իմ հասարակությունը կվարկաբեկի ձեզ։ Խնդրեմ մեզ թեյ տվեք փոքրիկ ընդունարանում,— ասաց նա, ինչպես միշտ՝ կկոցելով աչքերը՝ սպասավորին դիմելիս։

Վերցնելով տոմսը սպասավորից, Բետսին կարդաց այն։

— Ալեքսեյը մեզ համար կեղծ թուղթ արեց,— ասաց նա ֆրանսերեն.— գրում է, որ գալ չի կարող,— ավելացրեց այնպիսի բնական, պարզ տոնով, կարծես երբեք մտքովը չէր անցնի, որ Վռոնսկին Աննայի համար ուրիշ որևէ նշանակություն ունենար, քան՝ կրոկետի խաղակցի։ Աննան գիտեր, որ Բետսին ամեն բան գիտի, բայց լսելով, թե ինչպես է նա խոսում Վռոնսկու մասին իր ներկայությամբ, միշտ մի բոպե համոզվում էր, որ նա ոչինչ չգիտի։

— Ա՜,— անտարբեր ասաց Աննան, կարծես դրանով քիչ է հետաքրքրվում, և շարունակեց ժպտալով.— ինչպե՞ս կարող է ձեր հասարակությունը վարկաբեկել մեկին։ — Այդ բառախաղը, գաղտնիքի այդպես քողարկումը, ինչպես բոլոր կանանց համար, այնպես էլ Աննայի համար ուներ իր մեծ հաճույքը։ Եվ նրան հրապուրում էր ո՛չ թե քողարկելու անհրաժեշտությունը, ոչ թե այն նպատակը, հանուն որի կատարվում էր քողարկումը, այլ ինքնին այդ պրոցեսը։— Ես չեմ կարող լինել ավելի կաթոլիկ, քան Հռոմի պապը,— ասաց նա։— Ստրեմովը և Լիզա Մերկալովան բարձր հասարակության սերուցքի սերուցքն են։ Հետո՝ նրանք ընդունված են ամեն տեղ, և ես,— նա առանձնապես շեշտեց ես-ը,— անհանդուրժողական ու խիստ չեմ եղել, ես ուղղակի ժամանակ չունեմ։

— Ո՛չ, գուցե դուք չե՞ք ուզում հանդիպել Ստրեմովին։ Թող նրանք Ալեքսեյ Ալեքսանդրովիչի հետ տեգեր ջարդեն կոմիտեում, դա մեզ չի վերաբերում։ Բայց բարձր հասարակության մեջ դա իմ գիտցած ամենասիրալիր մարդն է և մոլի կրոկետ խաղացող։ Ա՜յ, կտեսնեք։ Եվ չնայած Լիզայի հին սիրահարը լինելու իր ծիծաղելի դրությանը, պետք է տեսնել, թե ինչպե՞ս է նա դուրս պրծնում այդ ծիծաղելի դրությունից։ Նա շատ համակրելի է։ Սաֆո Շտոլցին դուք չե՞ք ճանաչում։ Դա նոր, բոլորովին նոր ոճ է։

Բետսին ասում էր այս բոլորը, իսկ Աննան նրա ուրախ, խելոք հայացքից զգում էր, որ նա մասամբ հասկանում է իր դրությունը և ինչ-որ բան է սարքում։ Նրանք փոքրիկ առանձնասենյակում էին։

— Բայց պետք է գրել Ալեքսեյին.— և Բետսին նստեց սեղանի առաջ, գրեց մի քանի տող, դրեց ծրարի մեջ։— Ես գրում եմ, որ նա գա ճաշի։ Ինձ մոտ տիկիններից մեկը մնում է առանց տղամարդի։ Տեսե՛ք, արդյոք համոզի՞չ է։ Ներողություն, ես մի բոպե պիտի մենակ թողնեմ ձեզ։ Խնդրեմ, կնքեք և ուղարկեք,— ասաց նա դռան մոտից,— իսկ ես պետք է կարգադրություններ անեմ։

Առանց մի բոպե մտածելու, Աննան նստեց Բետսիի սեղանի առաջ և առանց կարդալու, տոմսի տակը գրեց. «Ինձ համար անհրաժեշտ է տեսնել ձեզ։ Եկեք Վռեդեի այգու մոտ։ Ես այնտեղ կլինեմ ժամը 6-ին»։ Նա ծրարը փակեց, և Բետսին վերադառնալով, նրա ներկայությամբ հանձնեց նամակը։

Հիրավի, թեյի միջոցին, որը բերին նրանց սեղան-մատուցարանի վրա փոքրիկ զով ընդունարանում, երկու կանանց միջև սկսվեց a cosy chat[1], ինչպես և խոստացավ իշխանուհի Տվերսկայան հյուրերի գալուց առաջ։ Նրանք դատափետում էին

[1] Հաճելի զրույց։

նրանց, որոնց սպասում էին և խոսակցությունը կանգ առավ Լիզա Մերկալովայի վրա։

— Նա շատ սիրահաճո կին է և ինձ համար միշտ համակրելի,— ասաց Աննան։

— Դուք պետք է սիրեք նրան։ Նա զառանցում է ձեր մասին։ Երեկ ձիարշավից հետո նա մոտեցավ ինձ և հուսալքվեց, որ ձեզ չգտավ։ Նա ասում է, որ դուք վեպի իսկական հերոսուհի եք և որ եթե ինքը տղամարդ լիներ, հազար ու մի հիմարություններ կաներ ձեր պատճառով։ Ստրեմովը նրան ասում է, որ նա առանց այդ էլ անում է։

— Բայց ասեք, խնդրեմ, ես երբեք չէի կարողանում հասկանալ,— ասաց Աննան կարճ լռությունից հետո և այնպիսի տոնով, որը պարզ ցույց էր տալիս, որ նա պարապ հարց չի տալիս, այլ այն, ինչ հարցնում է, ավելի կարևոր է նրա համար, քան պետք էր սպասել,— ասեք, խնդրեմ, ի՞նչ է նշանակում նրա հարաբերությունը իշխան Կալուժսկու, այսպես կոչված՝ Միշկայի հետ։ Ես քիչ եմ հանդիպել նրանց։ Ի՞նչ բան է դա։

Բետսին ժպտաց աչքերով և ուշադիր նայեց Աննային։

— Նոր վարվելաձև,— ասաց նա։ — Նրանք ամենքն ընտրել են այդ վարվելաձևը։ Նրանք կեղտոտ լաթը դեն են շպրտել։ Սակայն կան դեն շպրտելու տարբեր ձևեր, նայած թե ինչպե՞ս են դեն շպրտում։

— Այո՛, բայց ի՞նչ հարաբերության մեջ է նա Կալուժսկու հետ։

Բետսին անսպասելի ուրախ և անզսպորեն ծիծաղեց, որ սակավ էր պատահում նրա հետ։

— Դուք մտնում եք իշխանուհի Մյագկայայի բնագավառը։ Դա սոսկալի երեխայի հարց է,— և Բետսին, երևի, ուզում էր, բայց չկարողացավ իրեն զսպել ու փոթկաց այն վարակիչ ծիծաղից, որով ծիծաղում են սակավ ծիծաղող մարդիկ։ — Պետք է հարցնել նրանց,— ասաց նա ծիծաղի արցունքների միջից։

— Ո՛չ, դուք ծիծաղում եք,— ասաց Աննան, նույնպես ակամա վարակվելով ծիծաղով,— բայց ես երբեք չէի կարողանում հասկանալ։ Ես չեմ հասկանում այդտեղ ամուսնու դերը։

— Ամուսի՞նը։ Լիզա Մերկալովայի ամուսինը տանում է կնոջ ետևից պլեղը և միշտ պատրաստ է ծառայելու նրան։ Իսկ

թե դրանից ավելի ի՞նչ կա այնտեղ, ոչ ոք չի ուզում իմանալ։ Գիտե՞ք, որ լավ հասարակության մեջ չեն մտածում ու չեն խոսում նույնիսկ տուալետի որոշ մանրամասների մասին։ Այդպես է և սա։

— Դուք կլինե՞ք ռոլանդակիի տոնախմբությանը,— հարցրեց Աննան, որ փոխի խոսակցությունը։

— Չեմ կարծում,— պատասխանեց Բետսին և առանց նայելու իր բարեկամուհուն, զգուշությամբ սկսեց անուշաբույր թեյը լցնել փոքրիկ թափանցիկ գավաթների մեջ։ Գավաթը մոտեցնելով Աննային, նա հանեց պախիտոսը և մտցնելով այն արծաթե բռնակի մեջ, վառեց։ — Ա՜յ, տեսնո՞ւմ եք, ես բախտավոր վիճակում եմ,— սկսեց նա այժմ արդեն առանց ծիծաղի, ձեռքն առնելով գավաթը։ — Ես հասկանում եմ ձեզ և հասկանում եմ Լիզային։ Լիզան մեկն է միամիտ այն բնավորություններից, որոնք, ինչպես երեխաները, չեն հասկանում, թե ի՛նչն է լավ և ի՛նչն է վատ։ Համենյան դեպք, նա չէր հասկանում, երբ դեռ շատ ջահել էր։ Եվ հիմա նա գիտե, որ այդ չհասկանալը սազում է իրեն։ Այժմ նա գուցե դիտմամբ չի հասկանում,— ասում էր Բետսին նուրբ ժպիտով։

— Բայց և այնպես դա սազում է նրան։ Գիտեք ի՛նչ, միևնույն բանի վրա կարելի է նայել ողբերգորեն ու այն դարձնել տանջանքի աղբյուր, և նայել պարզ, նույնիսկ ուրախ աչքերով։ Գուցե դուք հակամետ եք՝ իրերին նայելու չափազանց ողբերգորեն։

— Ինչպե՞ս կուզենայի ես ուրիշներին ճանաչել այնպես, ինչպես ճանաչում եմ ինձ,— ասաց Աննան լուրջ ու մտաղբաղ։— Արդյոք, ես վա՞տ եմ ուրիշներից, թե՞ լավ։ Կարծում եմ, վատ եմ։

— Սոսկալի երեխա՜, սոսկալի երեխա՜,— կրկնեց Բետսին։ — Բայց ահա՜ և նրանք։

XVIII

Լսվեցին քայլեր և տղամարդու ձայն, ապա կանացի ձայն ու ծիծաղ, և դրանից հետո ներս մտան սպասվող հյուրերը։ Սաֆո Շտոլցը և լիառատ առողջությամբ փայլող մի երիտասարդ, այսպես կոչված՝ Վասկան։ Իրևում էր, որ նրան օգտա-

կար էր եղել տավարի արյունալի մսով, տրյուֆլյաններով և բուրգոնյան գինով սնվելը։ Վասկան ողջունեց տիկիններին ու նայեց նրանց, բայց միայն մի վայրկյան։ Նա մտավ Սաֆոյի ետևից ընդունարան և ընդունարանում գնաց նրա ետևից, կարծես կապված լիներ նրա հետ ու չէր հեռացնում նրանից իր փայլուն աչքերը, ասես՝ ուզում էր ուտել նրան։ Սաֆո Շտոլցը շիկահեր էր՝ սև աչքերով։ Նա ներս մտավ ուղղաձիգ կրունկներով տուֆլիների փոքրիկ, կայտառ, մանր քայլերով և տղամարդու պես ամուր սեղմեց տիկինների ձեռքը։

Աննան դեռ ո՛չ մի անգամ չէր պատահել այդ նոր հռչակավոր տիկնոջը և զարմացած էր թե՛ նրա գեղեցկությամբ, թե՛ այն ծայրահեղությամբ, որին հասցրած էր նրա տուալետը, և թե՛ նրա ձևերի համարձակությամբ։ Նրա գլխին իր սեփական և ուրիշների նուրբ-ոսկեգույն մազերից շինված էր սանրվածքի այնպիսի էշաֆոդաժ, որ գլուխն իր մեծությամբ հավասարվում էր ներդաշնակ ուռուցիկ և առջևի կողմից շատ բաց կիսանդրիի։ Իսկ առաջ անցնելու շեշտակիությունն այնպես էր, որ ամեն շարժումի դեպքում գծագրվում էին զգեստի տակից ծնկների ձևն ու ոտների վերին մասերը, և ակամա հարց էր ծագում, թե այդ սարքած տարուբերվող լեռան մեջ ետևի կողմից իսկապես ո՞րտեղ է վերջանում նրա իսկական, փոքրիկ ու վայելչակազմ մարմինը՝ վերևում այնքա՞ն մերկացրած և ետևից ու ցածրում այնքա՞ն թաքցրած։

Բետսին շտապեց ծանոթացնել նրան Աննայի հետ։

— Կարո՞ղ եք երևակայել, քիչ մնաց մենք ճխլեինք երկու զինվորի,— անմիջապես սկսեց պատմել նա, աչքով անելով, ժպտալով և ետ գցելով իր զգեստի փեշը, որ մեկեն չափից ավելի շուռ տվեց մի կողմի վրա։— Ես կառքով դալիս էի Վասկայի հետ... Ա՜խ, հա, դուք ծանոթ չեք։— Եվ նա, տալով նրա աղգանունը, ներկայացրեց երիտասարդին ու կարմրելով, բարձրահնչուն ծիծաղեց իր սխալի, այսինքն՝ այն բանի համար, որ անծանոթ կնոջ մոտ նրան կանչեց Վասկա։ Վասկան մի անգամ էլ գլխով ողջունեց Աննային, բայց ոչինչ չասաց նրան։ Նա դիմեց Սաֆոյին։— Գրազը տարվեցիք։ Մենք եկանք առաջ։ Վճարեցեք,— ասաց նա ժպտալով։

Սաֆոն ծիծաղեց ավելի ուրախ։

— Բայց ո՛չ այժմ,— ասաց նա։

— Միևնույն է, ես կտանամ հետս։

— Լա՜վ, լա՜վ։ Ախ, հա,— հանկարծ դիմեց տանտիրուհուն Սաֆոն,— օ՜, լա՜վ եմ... Ես բոլորովին մոռացա... Ես հյուր եմ բերել ձեզ։ Ահա՜ և նա։

Անսպասելի երիտասարդ հյուրը, որին բերել էր Սաֆոն ու որին մոռացել էր, այնպիսի նշանավոր հյուր էր սակայն, որ չնայած նրա երիտասարդությանը, երկու տիկիններն էլ ոտքի ելան, դիմավորելով նրան։

Դա Սաֆոյի նոր երկրպագուն էր։ Նա այժմ, ինչպես և Վասկան, կրնկակոխ հետևում էր Սաֆոյին։

Շուտով եկան իշխան Կալուժսկին և Լիզա Մերկալովան Ստրեմովի հետ։ Լիզա Մերկալովան թխահեր նիհար կին էր, արևելյան ծույլ տիպի դեմքով ու սքանչելի, անբացատրելի, ինչպես ասում էին ամենքը, աչքերով։ Նրա մութ գույնի տուալետի բնույթը (Աննան անմիջապես նկատեց այդ և գնահատեց) լիովին համապատասխանում էր իր գեղեցկությանը։ Որքան Սաֆոն պիրկ էր ու ինքնազուսպ, այնքան Լիզան փափուկ էր ու սանձարձակ։

Բայց Աննայի կարծիքով Լիզան շատ ավելի գրավիչ էր։ Բետսին նրա մասին ասում էր Աննային, իբր նա իր վրա վերցրել է անգիտակ երեխայի պահվածք։ Սակայն երբ Աննան տեսավ նրան, զգաց, որ դա ճիշտ չէր։ Նա իսկապես անգիտակ, փչացած, բայց հաճելի և անչար կին էր։ Ճիշտ է, որ նրա պահվածքը նույնն էր, ինչ որ Սաֆոյինը, ինչպես Սաֆոյի, այնպես և նրա ետևից քարշ էին գալիս,— կարծես կարած լինեին նրա հետ,— և աչքերով ուտում էին նրան իր երկու երկրրպագուները, մեկը երիտասարդ, մյուսը ծերունի, բայց նրա մեջ կար մի բան, որ բարձր էր այն ամենից, ինչ շրջապատում էր նրան, նրա մեջ կար ապակիների միջից զատվող ադամանդի հստակաշող փայլ։ Այդ փայլը լուսաշողում էր նրա սքանչելի, իսկապես անբացատրելի աչքերից։ Մութ շրջանով պատած այդ աչքերի հոգնած ու միաժամանակ կրքոտ հայացքը զարմացնում էր իր կատարյալ անկեղծությամբ։ Նայելով այդ աչքերին, յուրաքանչյուր մարդու թվում էր, թե ճանաչեց նրան ամբողջապես և ճանաչելուց հետո չէր կարող չսիրել։ Տեսնելով Աննային, նրա դեմքը հանկարծ լուսավորվեց ուրախության ժպիտով։

— Ախ, որքան ուրախ եմ ձեզ տեսնելուս,— ասաց նա, մոտենալով Աննային։ — Երեկ ձիարշավի ժամանակ հենց այն է, ուզում էի մոտենալ ձեզ, իսկ դուք գնացիք։ Ես այնպես ուզում էի տեսնել ձեզ հատկապես երեկ։ Սարսափելի բան էր, այդպես չէ՞,— ասաց նա, նայելով Աննային իր հայացքով, որը կարծես բացում էր նրա ամբողջ հոգին։

— Այո՛, ես երբեք չէի կարծում, որ դա այդպես հուզում է,— ասաց Աննան կարմրելով։

Հասարակությունն այդ ժամանակ կանգնեց, որ գնա այդի։

— Ես չեմ գնա,— ասաց Լիզան, ժպտալով ու նստելով Աննայի մոտ։— Դուք էլ չեք գնա։ Ի՞նչ մի հաճույք է կրոկետ խաղալը։

— Ո՛չ, ես սիրում եմ,— ասաց Աննան։

— Այդ ինչպե՞ս եք անում դուք, որ չեք ձանձրանում։ Երբ մարդ նայում է ձեզ, ուրախություն է զգում։ Դուք ապրում եք, իսկ ես ձանձրանում եմ։

— Ինչպե՞ս թե ձանձրանում եք։ Դուք Պետերբուրգի ամենաուրախ հասարակությունն եք,— ասաց Աննան։

— Կարող է պատահել, որ մեր հասարակությանը չպատկանողները ավելի են ձանձրանում, բայց մեզ համար, ինձ համար հաստատապես ուրախ չէ, այլ սարսափելի, սարսափելի ձանձրալի է։

Սաֆոն ծխախոտը վառելուց հետո գնաց պարտեզ երկու երիտասարդների հետ։ Բետսին և Ստրեմովը մնացին թեյի սեղանի առաջ։

— Ինչպե՞ս թե ձանձրալի է,— ասաց Բետսին։— Սաֆոն ասում է, որ երեկ իրենք շատ ուրախ ժամանակ են անցկացրել ձեզ մոտ։

— Ախ, այնպես տխո՞ւր էր,— ասաց Լիզա Մերկալովան։— Ձիարշավից հետո բոլորս գնացինք մեր տուն։ Նվ շարունակ նույն դեմքերը, և միշտ նույն մարդիկ։ Անընդհատ միևնույն բանը։ Ամբողջ երեկո ընկած էինք բազմոցների վրա։ Ի՞նչ կա այստեղ ուրախալի։ Ոչ, ասացեք, ինչպե՞ս եք անում դուք, որ ձանձրալի չլինի ձեզ համար,—նորից դիմեց նա Աննային։— Հերիք է՝ մարդ նայի ձեզ և կասի՝ ահա մի կին, որը կարող է լինել երջանիկ, դժբախտ, բայց որը չի ձանձրանում։ Սովորեցրեք՝ ինչպե՞ս եք անում դուք այդ։

— Ո՛չ մի կերպ չեմ անում,— պատասխանեց Աննան, կարմրելով այդ համառաշունչ հարցերից։

— Դա լավագույն վարվելաձևն է,— միջամտեց խոսակցությանը Ստրեմովը։

Ստրեմովը մոտ հիսուն տարեկան մարդ էր, ալեխառն մազերով, տակավին թարմ, շատ տգեղ, բայց առանձնահատուկ ու խելոք դեմքով։ Լիզա Մերկալովան նրա կնոջ մորաքրոջ աղջիկն էր, և նա իր ամբողջ ազատ ժամերն անց էր կացնում Լիզայի հետ։ Պատահելով Աննա Կարենինային, նա՝ ծառայության գծով Ալեքսեյ Ալեքսանդրովիչի թշնամին, որպես նրբակիրթ ու խելոք մարդ, աշխատեց առանձնապես սիրալիր լինել իր թշնամու կնոջ հետ։

— «Ո՛չ մի կերպ»,— ընկալեց նա, նուրբ ժպիտով,— դա լավագույն միջոցն է։ Ես վաղուց եմ ասում ձեզ,— դիմեց նա Լիզա Մերկալովային,— թե որպեսզի ձանձրալի չլինի, պետք է չմտածել, որ ձանձրալի կլինի։ Դա նույնն է, որ չպիտի վախենաս, թե չես քնի, եթե վախենում ես անքնությունից։ Այդ նույն բանն ասաց ձեզ և Աննա Արկադևնան։

— Ես շատ ուրախ կլինեի, եթե ասեի այդ, որովհետև դա ո՛չ միայն խելոք բան է, այլև՝ ճիշտ,— ժպտալով ասաց Աննան։

— Ո՛չ, ասեք ինձ, թե ինչո՞ւ չի կարելի քնել և չի կարելի չձանձրանալ։

— Որպեսզի մարդ քնի, պետք է աշխատի, և որպեսզի ուրախանա, պետք է նույնպես աշխատի։

— Իսկ ինչո՞ւ պիտի ես աշխատեմ, երբ իմ աշխատանքը ոչ ոքի պետք չէ, իսկ ձևանալ ես չեմ կարողանում և չեմ ուզում։

— Դուք անուղղելի եք,— ասաց Ստրեմովը, առանց նայելու նրան և նորից դիմելով Աննային։

Սակավ հանդիպելով Աննային, Ստրեմովը չէր կարող նրան ոչինչ ասել բացի տափակություններից, բայց այդ տափակությունները պտտվում էին այն բանի շուրջը, թե Աննան ե՛րբ է վերադառնում Պետերբուրգ, թե ինչպե՞ս սիրում է նրան կոմսուհի Լիդիա Իվանովնան, և դրանք նա ասում էր այնպիսի արտահայտությամբ, որը ցույց էր տալիս, որ ամբողջ հո-

գով ուզում է հաճելի լինել Աննային ու արտահայտել իր հարգանքը և նույնիսկ ավելին։

Ներս մտավ Տուշկևիչը, հայտարարելով, որ ամբողջ հասարակությունը սպասում է կրոկետ խաղացողներին։

— Ո՛չ, խնդրեմ, չգնաք,— ասում էր Լիզա Մերկալովան, խմանալով, որ Աննան գնում է։ Ստրեմովը միացավ Լիզային։

— Կոնտրաստը չափազանց մեծ է,— ասաց Ստրեմովը,— այս հասարակությունից հետո գնալ պառավ Վռեդեի մոտ։— Բացի դրանից, նրա համար դուք առիթ կլինեք չարախոսելու, մինչդեռ այստեղ դուք հարուցում եք ուրիշ, ամենալավ և չարախոսելուն հակառակ զգացումներ,— ասաց նա Աննային։

Աննան մի բոպե մտքի մեջ ընկավ անվճռականության մեջ։ Այդ խելոք մարդու գովասանական խոսքերը, միամիտ, մանկական այն համակրանքը, որ արտահայտում էր նրա նկատմամբ Լիզա Մերկալովան, և այդ ամբողջ սովորական, բարձր հասարակության հատուկ մթնոլորտը,— այս բոլորն այնպես թեթև էր, մինչդեռ սպասում էր նրան այնպիսի ծանր բան, և Աննան մի բոպե տատանման մեջ էր. չմնա՞լ արդյոք, չհեռացնե՞լ արդյոք բացատրության ծանր բոպեն։ Բայց հիշելով, թե ի՞նչ է սպասում իրեն տանը, եթե ինքը ո՛չ մի վճիռ չընդունի, մտաբերելով իր համար հիշողության մեջ անգամ սոսկալի այն շարժումը, երբ ինքը երկու ձեռքով բռնեց գլխի մազերը, Աննան հրաժեշտ տվեց ու գնաց։

XIX

Վռոնսկին, չնայած արտաքուստ իր թեթևամիտ աշխարհիկ կյանքին, այնպիսի մարդ էր, որ ատում էր անկարգությունը։ Դեռ պատանեկությունից, դպրոցում եղած ժամանակ նա զգաց մերժման նվաստացումը, երբ խճճված, փոխարինաբար դրամ խնդրեց, և այն օրից ո՛չ մի անգամ իրեն չէր դնում այդպիսի դրության մեջ։

Որպեսզի կարողանա իր գործերը վարել կարգուկանոնով, նա, նայած հանգամանքներին, շուտ-շուտ կամ ուշ-ուշ տարվա մեջ հինգ անգամ առանձնանում էր և պարզում իր բոլոր գործերը։ Նա դա անվանում էր հաշվեհարդար կամ faire la lessive[1]։

[1] Մաքրել, մաքրագործել։

Զիարշավին հաջորդող օրը զարթնելով ուշ, Վռոնսկին, առանց ածիլվելու և լողանալու, հագավ կիտելը և դարսելով սեղանին իր դրամը, հաշիվները, նամակները, ձեռնամուխ եղավ աշխատանքի։ Պետրիցկին իմանալով, որ այդ դրությամբ նա բարկացած էր լինում, զարթնելով ու տեսնելով ընկերոջը գրասեղանի առաջ, կամաց հագնվեց և դուրս գնաց առանց խանգարելու նրան։

Յուրաքանչյուր մարդ, ամենափոքրիկ մանրամասներով իմանալով իրեն շրջապատող պայմանների ամբողջ բարդությունը, ակամա ենթադրում է, թե այդ պայմանների բարդությունը և դրանք պարզելու դժվարությունը միայն իր անձնական, պատահական առանձնահատկությունն է, և ո՛չ մի կերպ չի կարծում, որ ուրիշներն էլ շրջապատված են իրենց անհատական պայմանների այդպիսի բարդությամբ, ինչպես ինքը։ Այդպես էր թվում Վռոնսկուն։ Ու նա ո՛չ առանց ներքին հպարտության և ո՛չ անհիմն կերպով կարծում էր, թե ուրիշ ամեն ոք վաղուց խճճված ու ստիպված կլիներ վատ վարվելու, եթե գտնվեր այդպիսի դժվար պայմաններում։ Բայց Վռոնսկին զգում էր, որ հատկապես այժմ իր համար անհրաժեշտ է հաշվետես անել ու պարզել իր դրությունը, որպեսզի չխճճվի։

Առաջին բանը, որ ձեռնարկեց Վռոնսկին, որպես ամենահեշտը, դրամական գործերն էին։ Փոստի թղթի վրա իր մանր ձեռագրով գրելով իր բոլոր պարտքերը, նա կազմեց դրանց հանրագումարը և տեսավ, որ ինքը պարտք է տասնյոթ հազար ու հարյուրներ, վերջիններս դեն գցելով՝ պարզության համար։ Հաշվելով դրամը և բանկային գրքույկը, նա տեսավ, որ իրեն մնում է 1 800 ռուբլի, իսկ ստանալիք չէր նախատեսվում մինչև նոր տարի։ Վերակարդալով պարտքերի ցանկը, Վռոնսկին արտագրեց այն, բաժանելով երեք կարգի։ Առաջին կարգին վերաբերում էին այն պարտքերը, որ պետք էր անմիջապես վճարել կամ, համենայն դեպս, վճարման համար դրամն ունենալ պատրաստի, որպեսզի պահանջի դեպքում ո՛չ մի բոպե ուշացում չլիներ։ Այդ պարտքերը կազմում էին մոտ չորս հազար ռուբլի. 1 500՝ ձիու համար և 2 500՝ երաշխավորություն իր երիտասարդ ընկեր Վենևսկու համար, որը Վռոնսկու ներկայությամբ այդ գումարը տարվեց շուլերին։ Վռոնսկին

ուղում էր հենց այն ժամանակ վճարել (նա դրամ ուներ մոտը), բայց Վեննսկին ու Յաշվինը պնդեցին, որ կվճարեն իրենք և ո՛չ Վոռնսկին, որը չէր էլ խաղում։ Այս բոլորը շատ լավ էր, բայց Վոռնսկին գիտեր, որ այդ կեղտոտ գործի մեջ, որին ինքը թեև մասնակցեց միայն նրանով, որ խոսքով երաշխավորեց Վեննսկու փոխարեն,— իրեն անհրաժեշտ էր ունենալ այդ 2 500 ռուբլին, որպեսզի նետի խարդախի երեսին ու նրա հետ այլևս չունենա ո՛չ մի խոսակցություն։ Այսպես ուրեմն, վորեց Վեննսկու փոխարեն, իրեն անհրաժեշտ էր ունենալ 4000։ Երկրորդ բաժնում՝ ութ հազար՝ ավելի պակաս կարևոր պարտքեր էին։ Դրանք գլխավորապես ձիարշավի ախոռի հետ կապված պարտքեր էին, վարսակ ու խոտ մատակարարողին, անգլիացուն, սարքագործին և այլն։ Այդ պարտքերի գծով նույնպես պետք էր տալ մոտ երկու հազար, բոլորովին հանգիստ լինելու համար։ Պարտքերի վերջին բաժինը՝ խանութներին, հյուրանոցներին և դերձակին՝ այնպիսի պարտքեր էին, որոնց մասին մտածելու կարիք չկար։ Այնպես որ պետք էր գոնե 6000, իսկ կար միայն 1800՝ ընթացիկ ծախսերի համար։ 100 000 եկամուտ ունեցող մարդու համար, ինչպես համարում էին ամենքը Վոռնսկու կարողությունը, այդպիսի պարտքերը, թվում էր, թե չէին կարող դժվարություն ստեղծել. բայց բանն այն էր, որ նա ամենևին էլ չուներ այդ 100 000-ը։ Հայրական վիթխարի կալվածքը, որը մենակ բերում էր տարեկան 200 000 եկամուտ, բաժանված չէր եղբայրների միջև։ Այն ժամանակ, երբ ավագ եղբայրն ամուսնացավ, ունենալով անհամար պարտքեր, իշխանազնուհի Վարյա Չիրկովի՝ որևէ կարողությունից զուրկ դեկաբրիստի աղջկա հետ, Ալեքսեյը զիջեց ավագ եղբորը հայրական կալվածքի բերած ամբողջ եկամուտը, թողնելով իրեն տարեկան միայն 25 000։ Ալեքսեյն այն ժամանակ ասաց եղբորը. թե այդ դումարն իրեն հերիք է, մինչև կամուսնանա, որ հավանորեն երբեք չի լինի։ Եվ եղբայրը, լինելով ամենաթանկ գնդերից մեկի հրամանատարը ու հենց նոր ամուսնացած, չէր կարող չընդունել այդ նվերը։ Մայրը, որ ուներ իր առանձին գույքը, բացի պայմանավորված 25 000-ից յուրաքանչյուր տարի տալիս էր Ալեքսեյին էլի մոտ 20 հազար, և Ալեքսեյը ծախսում էր այս բոլորը։ Վերջերս մայրը զրժվելով որդու հետ նրա օիրո կապի և Մոսկվայից հեռանալու

պատճառով, դադարեց նրան այդ գումարն ուղարկելուց։ Այդ պատճառով Վոռնսկին, արդեն սովորած լինելով ապրել 45 000-ով և ստանալով այս տարի միայն 25 000, գտնվում էր այժմ դժվարության մեջ։ Այդ դժվար կացությունից դուրս գալու համար նա չէր կարող դրամ խնդրել մորից։ Մոր վերջին նամակը, ստացված նախորդ օրը, հատկապես զրգռում էր նրան այն հանգամանքով, որ նրա մեջ ակնարկներ կային, թե մայրը պատրաստ է օգնելու նրան՝ բարձր հասարակության ու ծառայության մեջ հաջողություն ունենալու համար, բայց ո՛չ այն կյանքի համար, որը խայտառակել է ամբողջ լավ հասարակությունը։ Որդուն դրամով գնելու մոր ցանկությունը վիրավորեց նրան մինչև իր հոգու խորքը և է՛լ ավելի սառեցրեց նրան դեպի մայրը։ Բայց նա չէր կարող հրաժարվել իր մեծահոգի խոստումից, թեպետև զգում էր այժմ, աղոտորեն նախատեսելով Կարենինայի հետ իր կապի որոշ պատահականություններ, որ մեծահոգության այդ խոսքն ասված էր եղել թեթևամտորեն և որ իրեն, ամուրիին, կարող է պետք գալ հարյուր հազարանոց այդ ամբողջ եկամուտը։ Սակայն հրաժարվել չէր կարելի։ Նրա համար հերիք էր միայն հիշել եղբոր կնոջը, հիշել, թե ինչպե՛ս այդ սիրահաճո, համակրելի Վարյան ամեն հարմար դեպքում հիշեցնում էր նրան, որ ինքը չի մոռանում նրա մեծահոգությունը և գնահատում է այն,— որպեսզի հասկանալի դառնար տվածը ետ վերցնելու անհնարինությունը։ Դա նույնքան անհնարին էր, ինչպես կին էակին ծեծելը, գողությունը կամ ստելը։ Հնարավոր էր և անհրաժեշտ էր մի բան, որը Վոռնսկին վճռեց անել, առանց մի բոպե տատանվելու. դրամ վերցնել վաշխառուից, տասը հազար, որի համար դժվարություն լինել չի կարող, կրճատել առհասարակ իր ծախսերը ու վճռել արշավաձիերը։ Վճռելով այդ, նա անմիջապես նամակ գրեց Ռոլանդոսկիին, որը բազմիցս մարդ էր ուղարկել ձիերը գնելու առաջարկությամբ։ Ապա ուղարկեց անգլիացու և վաշխառուի ետևից ու ըստ հաշիվների դարսեց իր ունեցած դրամը։ Վերջացնելով այդ գործերը, նա մորը գրեց սառը և խիստ պատասխան։ Ապա դրամապանակից հանելով Աննայի գրած երեք տոմսը, կարդաց, այրեց և հիշելով երեկվա իր խոսակցությունը նրա հետ, մտասուզվեց։

XX

Վոռնսկու կյանքն առանձնապես երջանիկ էր նրանով, որ նա ուներ կանոնների ժողովածու, որոնք աներկբայորեն որոշում էին այն բոլորը, ինչ պետք էր անել և ինչ պետք չէր անել։ Այդ կանոնների ժողովածուն ընդգրկում էր պայմանների շատ փոքրիկ մի շրջան, բայց դրա փոխարեն, այդ կանոններն աներկբա էին, և Վոռնսկին երբեք դուրս չէր գալիս այդ շրջանակից, երբեք ո՛չ մի րոպե չէր տատանվում՝ կատարելու այն, ինչ պետք էր։ Այդ կանոններն աներկբայորեն որոշում էին, որ պետք է վճարել շուլերին, իսկ դերձակին պետք չէ, որ տղամարդիկ չպիտի ստեն, իսկ կանայք կարող են, որ ոչ ոքի չի կարելի խաբել, իսկ ամուսնուն կարելի է, որ չի կարելի ներել վիրավորանքը և կարելի է վիրավորել և այլն։ Այս բոլոր կանոնները կարող էին լինել ո՛չ խոհական, ո՛չ լավ, բայց նրանք աներկբա էին, և կատարելով դրանք, Վոռնսկին զգում էր, որ ինքը հանգիստ է ու կարող է բարձր պահել գլուխը։ Ամենավերջին ժամանակներս միայն, Աննայի հետ իր հարաբերությունների առթիվ, Վոռնսկին սկսում էր զգալ, որ իր կանոնների ժողովածուն ո՛չ լիովին կերպով էր որոշում բոլոր պայմանները, և ապագայում պատկերանում էին դժվարություններ ու կասկածներ, որոնց մեջ Վոռնսկին այլևս չէր գտնում ղեկավար թել։

Վոռնսկու այժմյան վերաբերմունքը Աննային և նրա ամուսնուն պարզ ու որոշ էին իր համար։ Այդ վերաբերմունքը պարզ ու ճիշտ որոշված էր այն կանոնների ժողովածուի մեջ, որոնցով ղեկավարվում էր նա։

Աննան բարոյական կին էր, որ նվիրել էր Վոռնսկուն իր սերը, և Վոռնսկին սիրում էր նրան, այդ պատճառով, Աննան նրա համար մի կին էր, արժանի նույնպիսի և է՛լ ավելի հարգանքի, քան օրինական կինը։ Վոռնսկին ավելի շուտ կտրել կտար իր ձեռքը, քան թույլ կտար իրեն՝ խոսքով, ակնարկով ո՛չ միայն վիրավորելու նրան, այլև ցուցադրելու նրա նկատմամբ այն ամբողջ հարգանքը, որի հույսն ունենալ կարող է կին էակը։

Վերաբերմունքը հասարակության հանդեպ նույնպես պարզ էր։ Ամենքը կարող էին իմանալ, կասկածել այդ, բայց ոչ ոք չպիտի համարձակվեր խոսել։ Հակառակ դեպքում՝ նա պատրաստ էր ստիպելու խոսողներին լռել ու հարգել այն կնոջ գոյություն չունեցող պատիվը, որին սիրում էր նա։

Վերաբերմունքն Աննայի ամուսնու հանդեպ ամենից ավելի պարզ էր։ Այն րոպեից, երբ Աննան սիրեց Վոռնսկուն, վերջինս անկապտելի էր համարում միայն իր իրավունքը նրա վրա։ Ամուսինը խանգարիչ և ավելորդ դեմք էր միայն։ Անկասկած, ամուսինը ողորմելի դրության մեջ էր, բայց ի՞նչ արած։ Միակ բանը, ինչի իրավունքն ուներ ամուսինը, դա այն էր, որ զենքը ձեռքին բավարարություն պահանջեր, և դրան Վոռնսկին պատրաստ էր առաջին րոպեից։

Բայց վերջերս երևան էին գալիս նոր, ներքին հարաբերություններ Վոռնսկու և Աննայի միջև, որոնք վախեցնում էին Վոռնսկուն իրենց անորոշությամբ։ Երեկ միայն Աննան հայտարարեց նրան, որ հղի է։ Եվ նա զգաց, որ այդ լուրը և այն, ինչ սպասում էր Աննան նրանից, պահանջում էին մի այնպիսի բան, որ չի որոշված լիովին այն կանոնների օրենսգրքով, որոնցով ղեկավարվում էր ինքը կյանքում։ Եվ իրոք, նա հանկարծակիի եկավ ու առաջին րոպեին, երբ Աննան հայտարարեց իր հղիության մասին, սիրտը թելադրեց Վոռնսկուն՝ պահանջել, որ Աննան թողնի ամուսնուն։ Նա ասաց դա, բայց այժմ, կշռադատելով, պարզապես տեսնում էր, որ ավելի լավ կլիներ կենսավարվել առանց դրան. և միաժամանակ, մտածելով այդ, վախենում էր. հո վատ բան չէ՞ դա։

«Եթե ես ասացի, որ Աննան թողնի ամուսնուն, դա նշանակում է, որ կապվի ինձ հետ. արդյոք ես պատրաստ եմ դրան։ Ես ինչպե՞ս կարող եմ այժմ տանել նրան, երբ դրամ չունեմ։ Սակայն ես կարող էի դա կարգավորել... բայց ինչպե՞ս կարող եմ ես տանել նրան երբ ծառայության մեջ եմ։ Եթե ես այդ բանն ասացի, ուրեմն՝ պետք է պատրաստ լինեմ դրան, այսինքն՝ պետք է դրամ ունենալ ու հրաժարական տալ»։

Եվ նա մտասուզվեց։ Այն հարցը՝ հրաժարական տա՞լ, թե՞ չտալ, նրան հասցրեց մի այլ, գաղտնի, միայն իրեն հայտնի շահի, որը նրա ամբողջ կյանքի գրեթե միակ գլխավոր, թաքցրած շահն էր։

Փառասիրությունը նրա մանկության ու պատանեկության վաղեմի բաղձանքն էր, վաղեմի տենչը, որը նա չէր խոստո-

վանում անգամ ինքն իրեն, բայց որն այնքան զորեղ էր, որ այժմ էլ այդ բուռն ցանկությունը պայքարում էր նրա սիրտ դեմ։ Նրա առաջին քայլերը բարձր հասարակության ու ծառայության մեջ հաջող էին, բայց երկու տարի առաջ նա կոպիտ սխալ թույլ տվեց։ Կամենալով ցույց տալ իր անկախությունը և միաժամանակ ուզենալով առաջ գնալ, նա հրաժարվեց իրեն առաջարկված դիրքից, հույս ունենալով, որ այդ հրաժարումը իրեն ավելի արժեք կտա, սակայն բանից դուրս եկավ, որ նա չափից ավելի համարձակ էր, ու նրան թողին. և կամ-ակամա ստեղծելով իր համար անկախ մարդու դիրք, նա կրում էր այն, իրեն պահելով չափազանց նրբին ու խելոք կերպով, այնպես, որպես թե նա ո՛չ ոքի վրա չէր բարկանում, իրեն վիրավորված չէր համարում ոչ ոքի կողմից և ցանկանում է միայն մի բան, որպեսզի իրեն հանգիստ թողնեն, որովհետև իր համար ուրախ է։ Իսկ էապես, դեռ անցյալ տարվանից, երբ նա գնաց Մոսկվա, այլևս ուրախ չէր զգում իրեն։ Նա զգում էր, որ արդեն սկսվում է եղծվել այդ անկախ դիրքն այն մարդու, որն ամեն բան կարող էր, բայց ոչինչ չի ուզում, որ շատերն սկսում են մտածել, թե նա ոչինչ չէր կարող անել, ազնիվ ու բարի երիտասարդ լինելուց զատ։ Այդքան աղմուկ հանած և ընդհանուր ուշադրություն գրաված նրա սիրային կապը Կարենինայի հետ, նոր փայլ տալով նրան, առժամ հանդստացրեց նրա սիրտը կրծող փառասիրության որդը, բայց մի շաբաթ առաջ այդ որդը վարթնեց նոր ուժով։ Նրա մանկության և դպրոցական ընկերը, Սերպուխովսկո՛յը, նույն շրջանից, նույն հասարակությունից, նրա թվի շրջանավարտ, որի հետ նա մրցում էր և՛ դասարանում, և՛ մարմնամարզության մեջ, և՛ չարաճճիությունների մեջ, և՛ փառասիրական տենչերի մեջ, մոտ օրերս վերադարձավ Միջին Ասիայից, ստանալով այնտեղ երկու աստիճան ու շքանշան, որ սակավ դեպքերում է տրվում այդքան երիտասարդ գեներալներին։

Հենց որ նա եկավ Պետերբուրգ, սկսեցին խոսել նրա մասին, որպես առաջին կարգի մեծության նոր բարձրացող աստղի մասին։ Վրոնսկուն հասակակից ու ուսումնակից, նա արդեն գեներալ էր և սպասում էր պաշտոնի, որը կարող էր ազդեցություն ունենալ պետական գործերի ընթացքի վրա, իսկ Վրոնսկին թեպետ և՛ անկախ էր, և՛ փայլուն, և՛ սքանչելի

կնոջից սիրված, բայց ռոտմիստր էր, որին թույլ էին տալիս լինել անկախ՝ որքան հաճելի էր իրեն։ «Հասկանալի է, ես չեմ նախանձում և չեմ կարող նախանձել Սերպուխովսկոյին, բայց նրա բարձրանալը ցույց է տալիս ինձ, որ արժե սպասել հարմար ժամանակի, և ինձ նման մարդու կարիերան կարող է ստեղծվել շատ շուտով։ Երեք տարի առաջ նա նույն դրության մեջ էր, ինչպես և ես։ Հրաժարական տալով, ես կայրեմ իմ նավերը։ Մնալով ծառայության մեջ, ես ոչինչ չեմ կորցնում։ Աննան ինքն ասաց, որ չի ուզում փոխել իր դրությունը։ Իսկ ես, վայելելով նրա սերը, չեմ կարող նախանձել Սերպուխովսկոյին»։ Ու, դանդաղ շարժումով ոլորելով բեղերը, նա վեր կացավ և քայլեց սենյակում։ Նրա աչքերը փայլում էին առանձնապես պայծառ, և նա լցված էր այն կայուն, հանգիստ ու խնդուն տրամադրությամբ, որ համակում էր նրան միշտ իր դրությունը պարզելուց հետո։ Ամեն ինչ պարզ ու մաքուր էր, ինչպես և առաջվա հաշիվներից հետո։ Նա ածիլվեց, սառը լոգանք ընդունեց, հագնվեց ու դուրս գնաց։

XXI

— Ես եկա քո ետևից։ Լվացքդ այսօր երկար տևեց,— ասաց Պետրիցկին։— Ինչպե՞ս է, վերջացա՞վ։

— Վերջացավ,— պատասխանեց Վրոնսկին, ժպտալով միայն աչքերով և բեղերի ծայրերը ոլորելով այնպես զգույշ, կարծես թե իր գործերը կարգի բերելուց հետո ամեն մի արագ ու համարձակ շարժում կարող էր խախտել այդ կարգը։

— Դրանից հետո միշտ դու կարծես, բաղնիքից եկած լինես,— ասաց Պետրիցկին։— Ես գալիս եմ Գրիցկայի կողմից (այդպես էին կանչում նրանք գնդի հրամանատարին), քեզ են սպասում։

Վրոնսկին առանց պատասխանելու նայում էր ընկերոջը, մտածելով այլ բանի մասին։

— Ուրեմն այդ երաժշտությունը նրա՞ մոտ է,— ասաց նա, ականջ դնելով իրեն հասած շեփորների բասերի, պոլկաների և վալսերի ծանոթ հնչյուններին։— Ի՞նչ տոն է։

— Սերպուխովսկոյն է եկել։

— Ա՜-ա՜,— ասաց Վրոնսկին,— ես չեմ էլ իմացել։

Նրա աչքերի ժպիտը փայլեց է՛լ ավելի պայծառ։

Ինքն իրեն վճռելով, որ երջանիկ է իր սիրով, նա զոհաբերեց իր փառասիրությունը,— համենայն դեպս իր վրա վերցնելով այդպիսի դեր,— Վռոնսկին այլևս չէր կարող տածել ո՛չ նախանձի զգացում դեպի Սերպուխովսկոյը, ո՛չ էլ սրտնեղել, որ նա գալով գունդ, առաջինը չէր եկել իր մոտ։ Սերպուխովսկոյը լավ ընկեր-բարեկամ էր, և Վռոնսկին ուրախ էր նրա համար։

— Ա՜, ես շատ ուրախ եմ։

Գնդի հրամանատար Դեմինն ապրում էր կալվածատիրոջ մեծ տան մեջ։ Ամբողջ հասարակությունը գտնվում էր վարի ընդարձակ պատշգամբում։ Բակում առաջինը, որ ընկավ Վռոնսկու աչքին, կիտելներով երգասացներն էին, կանգնած օղիով լի փոքրիկ տակառի մոտ, և գնդի հրամանատարի հաղթ ուրախ ֆիգուրը, շրջապատված սպաներով. դուրս գալով ու կանգնելով պատշգամբի առաջին աստիճանի վրա, ձայնախեղդ անելով Օֆենբախի կադրիլը նվագող երաժշտախումբը, նա հրամայում էր ինչ-որ բան և ձեռքով էր անում մի կողմի վրա կանգնած զինվորներին։ Մի խումբ զինվորներ, վախմիստրը ու մի քանի ենթասպաներ Վռոնսկու հետ մոտեցան պատշգամբին։ Նա գալով սեղանի մոտ, գնդի հրամանատարը, բաժակը ձեռքին, նորից դուրս եկավ սանդուղքների վրա և կենաց առաջարկեց. «Մեր նախկին ընկերոջ ու քաջ գեներալ իշխան Սերպուխովսկոյի կենացը։ Ուռռա՜»։

Գնդի հրամանատարի ետևից, բաժակը ձեռքին՝ ժպտալով դուրս եկավ նաև Սերպուխովսկոյը։

— Դու շարունակ ջահելանում ես, Բոնդարենկո,— դիմեց նա ուղիղ իր դիմացը կանգնած, երկրորդ ծառայությունը կատարող, կարմրաթուշ վախմիստրին։

Վռոնսկին երեք տարի չէր տեսել Սերպուխովսկոյին։ Նա առնականացել էր, թողնելով բակենբարդներ, բայց առաջվա պես վայելչակազմ էր, որ զարմացնում էր ո՛չ այնքան իր գեղեցկությամբ, որքան իր դեմքի և կազմվածքի քնքշությամբ ու ազնվությամբ։ Մի փոփոխություն, որ Վռոնսկին նկատեց նրա մեջ, այն խաղաղ, մշտական փայլն էր, որ հաստատվում է այն մարդկանց դեմքին, որոնք հաջողություն ունեն և համոզված են, որ այդ հաջողությունն ընդունում են ամենքը։

Վռոնսկին գիտեր, թե ի՛նչ փայլ է դա, և անմիջապես նկատեց այն Սերպուխովսկոյի վրա։

Իջնելով սանդուղքներից, Սերպուխովսկոյը տեսավ Վռոնսկուն։ Ուրախության ժպիտը լուսաշողեց Սերպուխովսկոյի դեմքը։ Նա գլխով արեց վերամբարձ շարժում, բարձրացրեց բաժակը, ողջունելով Վռոնսկուն ու ցույց տալով այդ շարժումով, թե չի կարող նախ չմոտենալ վախմիստրին, որը ձիգ եկած, արդեն շրթունքները պատրաստել էր համբույրի համար։

— Ահա՛ և նա,— բղավեց գնդի հրամանատարը։ — Իսկ ինձ Յաշվինն ասաց, որ դու քո մռայլ տրամադրության մեջ ես։

Սերպուխովսկոյը համբուրեց կորովատես վախմիստրի թաց ու թարմ շրթունքները և բերանը սրբելով թաշկինակով, մոտեցավ Վռոնսկուն։

— Է՜հ, շատ ուրախ եմ,— ասաց նա, սեղմելով նրա ձեռքը և տանելով նրան մի կողմ։

— Զբաղվեցեք նրանով,— ձայնեց Յաշվինին գնդի հրամանատարը, նշելով Վռոնսկուն, և իջավ ցած՝ զինվորների մոտ։

— Ինչո՞ւ դու երեկ չկայիր ձիարշավին։ Ես կարծում էի, որ քեզ կտեսնեմ այնտեղ,— ասաց Վռոնսկին, նայելով Սերպուխովսկոյին։

— Ես եկա, բայց ուշ։ Ներողություն,— ավելացրեց նա և դիմեց համհարզին.— խնդրեմ, հրամայեք իմ կողմից բաժանել, ինչքան կհասնի յուրաքանչյուրին։

Եվ նա շտապ հանեց դրամապանակից երեք հատ հարյուր ռուբլիանոց ու կարմրեց։

— Վռոնսկի, որևէ բան կուտե՞ս, թե՞ կխմես,— հարցրեց Յաշվինը։— է՜յ, ուտելու բան բեր կոմսին։ Իսկ սա խմի՛ր։

Խնջույքը գնդի հրամանատարի մոտ շարունակվում էր երկար։

Խմում էին շափազանց շատ։ Ձեռքի վրա ճոճում ու վեր էին թռցնում Սերպուխովսկոյին։ Ապա ճոճում էին գնդի հրամանատարին։ Հետո երգասացների առաջ պարում էր ինքը՝ հրամանատարը, Պետրիցկու հետ։ Ապա գնդի հրամանատարը, արդեն մի փոքր թուլացած, նստեց բակում նստարանի վրա և ապացուցում էր Յաշվինին Ռուսաստանի առավելությունը Պրուսիայի հանդեպ, մանավանդ հեծելական զրոհում, ու

խրախճանքը մի բոպե դադարեց։ Սերպուխովսկոյը մտավ տուն, զուգարան, որ ձեռքերը լվանա, և տեսավ այնտեղ Վոռնսկուն. Վոռնսկին ջրաշաղ էր լինում։ Նա կիտելը հանել և մազակալած կարմիր վիզը դեմ արած լվացարանի ծորակին, ձեռքերով շփում էր վիզն ու գլուխը։ Վերջացնելով լվացվելը, Վոռնսկին նստեց Սերպուխովսկոյի մոտ։ Նրանք երկուսն էլ նստեցին հենց այդտեղ, փոքրիկ բազմոցի վրա, և նրանց մեջ սկսվեց մի խոսակցություն, շատ հետաքրքրական երկուսի համար։

— Ես քո մասին ամեն բան գիտեի կնոջս միջոցով,— ասաց Սերպուխովսկոյը։— Ես ուրախ եմ, որ դու տեսնում էիր նրան հաճախ։

— Նա ու Վարյան մտերիմ են, և դրանք Պետերբուրգում այն միակ կանայք են, որոնց հետ տեսնվելը հաճելի է ինձ համար,— ժպտալով պատասխանեց Վոռնսկին։ Նա ժպտում էր, նախատեսելով այն թեման, որի շուրջը պտտվելու էր խոսակցությունը, և դա հաճելի էր նրան։

— Միա՞կն են,— ժպտալով հարցրեց Սերպուխովսկոյը։

— Այո՛, ես էլ քո մասին գիտեի, բայց ո՛չ միայն քո կնոջ միջոցով,— ասաց Վոռնսկին, դեմքի խիստ արտահայտությամբ արգելելով այդ ակնարկը։— Ես շատ ուրախ էի քո հաջողության համար և ամենևին զարմացած չեմ։ Ես սպասում էի էլ ավելին։

Սերպուխովսկոյը ժպտաց։ Նրան, ըստ երևույթին, հաճելի էր այդ կարծիքն իր մասին, և նա հարկ չէր համարում թաքցնել այդ։

— Ես, ընդհակառակը, անկեղծաբար խոստովանում եմ, ավելի քիչ բան էի սպասում։ Բայց ուրախ եմ, շատ ուրախ։ Ես փառասեր եմ, դա իմ թուլությունն է, և խոստովանում եմ այդ։

— Գուցե, դու չխոստովանեիր, եթե հաջողություն չունենայիր,— ասաց Վոռնսկին։

— Չեմ կարծում,— նորից ժպտալով, ասաց Սերպուխովսկոյը։— Չեմ ասի, որ չարժեր ապրել առանց դրան, բայց ձանձրալի կլիներ։ Հասկանալի է, թերևս սխալվում եմ ես, սակայն, ինձ թվում է, ես որոշ ընդունակություններ ունեմ գործունեության այն շրջանի համար, որ ընտրել եմ, և որ իմ

ձեռքում իշխանությունը, ինչպիսին էլ լինի այն, ավելի լավ կլինի, քան ինձ հայտնի անհատներից շատերի ձեռքին,— ասաց Սերպուխովսկոյը հաջողության շողուն գիտակցությամբ։— Այս իսկ պատճառով, որքան ավելի մոտենում եմ դրան, այնքան ավելի գոհ եմ։

— Գուցե, դա այդպես է քե՛զ համար, բայց ո՛չ ամենքի համար։ Ես նույնպես այդ կարծիքին էի, բայց ահա ապրում եմ ու տեսնում, որ չարժե ապրել միայն դրա համար,— ասաց Վոռնսկին։

— Ահա՜ թե ինչ, ահա՜ թե ինչ,— ծիծաղելով ասաց Սերպուխովսկոյը։— Ես արդեն սկսեցի այն բանից, ինչ լսել էի քո մասին, քո մերժման մասին... Հասկանալի է, որ ես հավանություն էի տալիս քեզ։ Սակայն ամեն բանի համար կա վարվելաձև։ Եվ ես կարծում եմ, քո վարմունքն ինքնին լավ է, բայց դու այն արիր ո՛չ այնպես, ինչպես պետք է։

— Ինչ արվել է, արվել է. իսկ դու գիտե՞ս, որ ես երբեք չեմ հրաժարվում այն բանից, ինչ արել եմ։ Եվ հետո՝ ես ինձ շատ լավ եմ զգում։

— Շատ լավ ես զգում ժամանակավորապես։ Բայց դու չես բավարարվի դրանով։ Ես քո եղբոր մասին չեմ խոսում։ Նա էլ սիրահաճո մանուկ է, ինչպես մեր այս տանտերը։ Ահա՛ նա,— ավելացրեց Սերպուխովսկոյը, ականջ դնելով «ուռռա» բացականչությանը,— և նա ուրախ է, իսկ քեզ բավարարում է ո՛չ այդ։

— Ես չեմ էլ ասում, որ բավարարում է։

— Եվ միայն դա չէ։ Քեզ նման մարդիկ հարկավոր են։

— Ո՞ւմ։

— Ո՞ւմ։ Հասարակությանը։ Ռուսաստանին։ Ռուսաստանին հարկավոր են մարդիկ, հարկավոր է կուսակցություն, այլապես ամեն բան անցնում է և կանցնի շների ձեռքը։

— Այսինքն՝ ի՞նչ։ Բերտենևի կուսակցությունը ռուս կոմունիստների՞ դեմ։

— Ո՛չ,— կնճռոտվելով սրտնեղությունից, որ իրեն կասկածում են այդպիսի հիմարության մեջ, ասաց Սերպուխովսկոյը։ Fout ca est blague[1]։ Դա միշտ եղել է ու կլինի։ Ո՛չ մի

[1] Այս բոլորը անամեջ բան է։

կոմունիստ չկա։ Բայց ինտրիգա սիրող մարդիկ միշտ պիտի հնարեն վնասակար, վտանգավոր կուսակցություն։ Դա հին բան է։ Ո՛չ, պետք է անկախ մարդկանց իշխանության կուսակցություն, ինչպես ես ու դու ենք։

— Սակայն ինչո՞ւ։— Վոռնսկին թվեց իշխանություն ունեցող մի քանի մարդիկ։— Բայց ինչո՞ւ նրանք անկախ մարդիկ չեն։

— Միայն այն պատճառով, որ նրանք չունեն կամ ի ծնե չեն ունեցել կացության անկախություն, չեն ունեցել անուն, չեն ունեցել այն մոտիկությունն արևին, որի մեջ մենք ծնվել ենք։ Նրանց կարելի է գնել կամ դրամով, կամ գուրգուրանքով։ Եվ որպեսզի նրանք կարողանան մնալ իրենց դիրքում, պետք է հնարեն ուղղություն։ Եվ նրանք անց են կացնում որևէ միտք, ուղղություն, որին իրենք չեն հավատում, որը շարիք է գործում. և այդ ամբողջ ուղղությունը միջոց է միայն՝ ունենալ պետական տուն ու այսքան ռոճիկ։ Cela n'est pas plus fin que ca[2]. երբ նայես նրանց խաղաթղթերը։ Գուցե ես նրանցից ավելի վատ եմ, ավելի տխմար, թեպետ, չեմ տեսնում, թե ինչո՞ւ պետք է լինեմ նրանցից ավելի վատ։ Բայց թե՛ ես, թե՛ դու արդեն ունենք հաստատապես մի կարևոր առավելություն՝ այն, որ մեզ ավելի դժվար է գնել։ Եվ այդպիսի մարդիկ ավելի քան երբևիցե հարկավոր են։

Վոռնսկին լսում էր ուշադիր, բայց նրան զբաղեցնում էր ո՛չ այնքան Սերպուխովսկոյի խոսքերի բովանդակությունը, որքան նրա վերաբերմունքը դեպի գործը և այն, որ նա արդեն մտածում էր պայքարել իշխանության դեմ և արդեն ուներ այս իրականության մեջ իր համակրություններն ու հակակրությունները, մինչդեռ, Վոռնսկու համար ծառայության գծով գոյություն ունեին միայն էսկադրոնի շահերը։ Վոռնսկին հասկացավ նույնպես, թե ինչպես կարող էր ուժեղ լինել Սերպուխովսկոյը՝ իրերը կշռադատելու, հասկանալու իր աներկբա ընդունակությամբ, իր խելքով և խոսելու ձիրքով, որ այնպես սակավ է պատահում այն միջավայրում, որտեղ ապրում էր նա։ Եվ ամաչելով հանդերձ, Վոռնսկին, այնուամենայնիվ՝ նախանձում էր նրան։

[2] Դա այլ կերպ չէ, քան եթե այդպես։

— Ինչ էլ լինի, դրա համար ինձ պակասում է մի գլխավոր բան,— պատասխանեց նա,— պակասում է իշխանություն ունենալու ցանկությունը։ Դա կար, բայց անցավ։

— Ների՛ր ինձ, դա ճիշտ չէ,— ժպտալով ասաց Սերպուխովսկոյը։

— Ո՛չ, ճիշտ է, ճիշտ... այժմ, կասեմ ես, անկեղծ լինելու համար,— ավելացրեց Վոռնսկին։

— Այո՛, ճիշտ է այժմ, դա արդեն այլ բան է. բայց այդ այժմը միշտ չի լինի։

— Կարող է պատահել,— պատասխանեց Վոռնսկին։

— Դու ասում ես, կարող է պատահել,—շարունակեց Սերպուխովսկոյը, կարծես գուշակելով նրա մտքերը,— իսկ ես ասում եմ քեզ հաստատապես։ Եվ դրա համար ես ուզում էի տեսնել քեզ։ Դու վարվել ես այնպես, ինչպես պետք էր։ Դա ես հասկանում եմ, բայց դու չպետք է համառես։ Ես քեզանից խնդրում եմ միայն carte blanche[1]։ Ես չեմ հովանավորում քեզ... թեպետ, ինչո՞ւ պիտի չհովանավորեմ քեզ, դու այնքա՜ն անգամ հովանավորել ես ինձ։ Հուսամ, որ մեր բարեկամությունը բարձր է կանգնած դրանից։ Այո՛,— ասաց նա կնոջ պես քնքշաբար, ժպտալով Վոռնսկուն։— Տո՛ւր ինձ carte blanche, դո՛ւրս եկ գնդից, և ես աննկատելի կերպով կներգրավեմ քեզ։

— Բայց հասկացիր, որ ինձ ոչինչ պետք չէ,— ասաց Վոռնսկին,— բացի նրանից միայն, որ ամեն բան լիներ այնպես, ինչպես կար։

Սերպուխովսկոյը վեր կացավ ու կանգնեց նրա դիմաց։

— Դու ասացիր, որ ամեն բան լիներ այնպես, ինչպես կար։ Ես հասկանում եմ, թե ի՛նչ է նշանակում դա։ Բայց լսիր. մենք հասակակիցներ ենք, գուցե դու թվով ավելի շատ կանանց հետ ես եղել, քան ես։— Սերպուխովսկոյի ժպիտը և շարժումներն ասում էին, որ Վոռնսկին չպիտի վախենա, եթե նա քնքշությամբ ու զգուշությամբ ձեռք տա նրա հիվանդոտ տեղին։— Բայց ես ամուսնացած եմ, և հավատա, որ մարդ ճանաչելով միայն իր կնոջը (ինչպես գրել է մեկը), որին սի-

[1] Բառացի՝ սպիտակ, մաքուր թերթ, փոխաբերաբար՝ գործողության կատարյալ ազատություն։

բում է, ավելի լավ է ճանաչում բոլոր կանանց, քան նրա եղած լիներ հազարավորների հետ։

— Հիմա կգանք,— ձայնեց Վռոնսկին դռնից ներս նայող և իրենց գնդի հրամանատարի մոտ կանչող սպային։

Վռոնսկին ուզում էր այժմ մինչև վերջ լսել և իմանալ, թե ի՞նչ կասի իրեն Սերպուխովսկոյը։

— Եվ ահա իմ կարծիքը։ Մարդու գործունեության մեջ կանայք գայթակղության գլխավոր քարն են։ Դժվար է սիրել կին-էակին և նվիրվել որևէ գործի։ Դրա համար կա միայն մի միջոց, այսինքն՝ սիրել առանց արդելքի, սիրել հարմարություններով, և դա՝ ամուսնությունն է։ Ինչպե՞ս, ի՞նչ կերպ ասեմ քեզ այն, ինչ մտածում եմ,— ասում էր Սերպուխովսկոյը, որ սիրում էր համեմատություններ.— կա՛ց, կա՛ց։ Օրինակ. fardeau[1] *տանող մարդը կարող է ձեռքերով մի բան անել միայն այն ժամանակ, երբ* fardeau-*ն կապված է նրա մեջքին, հենց դա ամուսնությունն է։ Եվ այդ բանը ես զգացի ամուսնանալով։ Իմ ձեռքերը հանկարծ ազատվեցին։ Բայց առանց ամուսնության քարշ տալ իր ետևից այդ* fardeau-*ն,— ձեռքերդ այնպես լիքը կլինեն, որ ոչինչ չես կարող անել։ Վերցրու Մազանկովին, Կրուպովին. նրանք կործանեցին իրենց կարիերան կանանց պատճառով։*

— Ինչպիսի՞ կանայք,— ասաց Վռոնսկին, հիշելով այն ֆրանսուհուն և դերասանուհուն, որոնց հետ սիրային կապ ունեին հիշյալ երկու անձնավորությունները։

— Որքան կայուն է կնոջ դիրքը բարձր հասարակության մեջ, այնքան ավելի վատ, շատ ավելի վատ։ Դա միևնույնն է, թե մեկը ոչ թե ձեռքերով քարշ է տալիս fardeau, *այլ խլում է այն ուրիշի ձեռքից։*

— Դու երբեք չես սիրել,— կամաց ասաց Վռոնսկին, նայելով իր դիմացը և մտածելով Աննայի մասին։

— Կարող է պատահել։ Բայց դու հիշիր այն, ինչ ես ասացի քեզ։ Մի բան էլ. կանայք միշտ ավելի նյութական են տղամարդկանցից։ Մենք սիրուց ստեղծում ենք ինչ-որ վիթխարի բան, իսկ նրանք միշտ terre-à-terre[2]*։*

[1] *Կապոց։*

[2] *Մոտ են երկրին։*

— Իսկույն, իսկույն,— դիմեց նա ներս եկած սպասավորին։ Բայց սպասավորը չէր եկել նորից կանչելու նրանց, ինչպես կարծում էր նա։ Սպասավորը տոմս էր բերել Վռոնսկուն։

— Մի մարդ բերեց ձեզ իշխանուհի Տվերսկայայից։

Վռոնսկին բացեց նամակը և բոցավառվեց։

— Գլուխս ցավեց, ես պիտի գնամ տուն,— ասաց նա Սերպուխովսկոյին։

— Դե՞, ուրեմն գնաս բարի։ Տալի՞ս ես carte blanche*։*

— Հետո կխոսենք, ես քեզ կգտնեմ Պետերբուրգում։

XXII

Արդեն վեցերորդ ժամն էր, ուստի, որպեսզի ժամանակին հասնի և այսուհանդերձ՝ չգնա իր ձիերով, որ բոլորը ճանաչում էին, Վռոնսկին նստեց Յաշվինի կառապանական կառեթը և հրամայեց քշել՝ որքան հնարավոր է արագ։ Կառապանական շորս տեղանի հին կառեթն ընդարձակ էր։ Նա նստեց անկյունում, ձգեց ոտներն առջևի տեղի վրա և մտասուզվեց։

Աղոտ գիտակցությունն այն պարզության, որի հայտարարի տակ էին բերվել Վռոնսկու գործերը, աղոտ հիշողությունը Սերպուխովսկոյի բարեկամության ու շողոմախոսության մասին, որը նրան համարում էր պետքական մարդ, և՝ որ գլխավորն է, տեսակցության սպասողականությունը՝ բոլորը միանում, կազմում էին կյանքի ուրախ զգացմունքի մի ընդհանուր տպավորություն։ Այդ զգացումն այնքան զորեղ էր, որ նա ակամա ժպտում էր։ Նա իջեցրեց ոտքերը, դրեց մեկը մյուսի ծնկին և վերցնելով այն ձեռքի մեջ, շոշափեց ոտքի առաձիգ սրունքը, որ ճմլվել էր երեկ ընկնելիս, ու մեջքը տալով թիկնատեղին, մի քանի անգամ խորը շունչ քաշեց ամբողջ կրծքով։

«Լավ է, շատ լավ է»,— ասաց նա ինքն իրեն։ Նա առաջ էլ հաճախ ունենում էր իր մարմնի զգացողության ուրախ գիտակցություն, բայց երբեք այնպես չէր սիրել իրեն, իր մարմինը, ինչպես այժմ։ Նրա համար դուրեկան էր զգալ այդ թեթև ցավն իր ուժեղ ոտքի մեջ, հաճելի էր իր կրծքի շարժումների մկանային զգացողությունը շնչառության միջոցին։

Օգոստոսյան այն պայծառ, ցուրտ օրը, որ Աննայի վրա ազդում էր այնպես անհուսալիորեն, Վռոնսկուն թվում էր գերգերեղի-աշխուժացնող և զովացնում էր ջրաշաղ լինելուց տաքացած նրա վիզն ու երեսը։ Բեղերին քսած բրիլիանտինի հոտը նրան թվում էր առանձնապես դուրեկան այդ թարմ օդի մեջ։ Բոլորը, ինչ տեսնում էր նա կառքի լուսամուտից, բոլորը այդ պաղ մաքուր օդում, մայրամուտի այդ դժգույն լույսի մեջ նույնպես թարմ էր, ուրախ և ուժեղ, ինչպես նա ինքը. և՛ տների կտուրները, որ փայլում էին մայր մտնող արևի շողերի տակ, և՛ ցանկապատների ու շենքերի անկյունների սուր գծագրությունները, և՛ երբեմն-երբեմն պատահող հետիոտների ու կառքերի ֆիգուրները, և՛ ծառերի ու խոտերի անշարժ կանաչը, և՛ դաշտերը՝ գետնախնձորի կանոնավոր դծած ակոսներով, և՛ շեղ ստվերները, որ ընկել էին տներից ու ծառերից, թփերից ու գետնախնձորների ակոսներից։ Ամեն ինչ գեղեցիկ էր, ինչպես լավ դաշտանկար, նոր միայն ավարտած ու լաքով պատած։

— Քշի՛ր, քշի՛ր,— ասաց նա կառապանին, գլուխը դուրս ցցած լուսամուտից և, հանելով գրպանից մի երեք ռուբլիանոց, կոխեց ետ նայող կառապանի բուռը։ Կառապանի ձեռքը լապտերի մոտ շոշափեց ինչ-որ բան, լսվեց մտրակի շաչյունը, և կառեթն արագ գլորվեց հարթ խճուղով։

«Ոչինչ, ոչինչ պետք չէ ինձ, բացի այդ երջանկությունից,— մտածում էր նա, նայելով զանգի ոսկրե ելունդին երկու լուսամուտների միջև ու երևակայելով Աննային այնպես, ինչպես տեսել էր նրան վերջին անգամ։ «Քանի գնում, այնքան ավելի եմ սիրում նրան։ Ահա և Վռնդեի պետական ամառանոցի այգին։ Որտե՞ղ է հապա Աննան։ Որտե՞ղ է։ Ինչպե՞ս։ Ինչո՞ւ նա այստեղ է նշանակել տեսակցություն և գրում է Բետսիի նամակում», մտածեց նա ա՛յժմ միայն. բայց այլևս մտածելու ժամանակ չկար։ Ծառուղուն չհասած, նա կանգնեցրեց կառապանին և բացելով դռնակը, շարժընթաց դուրս թռավ կառեթից ու գնաց դեպի տուն տանող ծառուղով։ Ծառուղում ոչ ոք չկար. բայց նայելով դեպի աջ, նա տեսավ Աննային։ Վերջինիս դեմքը ծածկված էր քողով, բայց Վռոնսկին ընդգրկեց խնդուն հայացքով առանձնորոշ, Աննային միայն հատուկ քայլվածքի, ուսերի թեքվածքի և գլխի դրվածքի շարժումը,

ու անմիջապես կարծես էլեկտրական մի հոսանք անցավ նրա մարմնով։ Նա նոր ուժով զգաց ինքն իրեն, ոտքերի առաձիգ շարժումներից սկսած մինչև թոքերի շարժումը շնչառության միջոցին, և մի բան խտուտ տվեց նրա շրթունքները։

Հանդիպելով նրան, Աննան ամուր սեղմեց նրա ձեռքը։

— Դու չե՞ս բարկանում, որ ես կանչեցի քեզ։ Ինձ անհրաժեշտ էր տեսնել քեզ,— ասաց Աննան, և շուրթերի այն լուրջ ու խիստ գծագիրը, որ Վռոնսկին տեսավ քողի տակից, մեկեն փոխեց նրա հոգեկան կացությունը։

— Ե՞ս, բարկանա՞մ։ Բայց ինչպե՞ս դու եկար, ո՞ւր եկար։

— Դա միևնույն է,— ասաց Աննան, ձեռքը դնելով նրա ձեռքին,— գնանք, ես խոսելիք ունեմ։

Վռոնսկին հասկացավ, որ մի բան է պատահել և որ այդ տեսակցությունը չի լինի ուրախ տեսակցություն։ Աննայի ներկայությամբ նա չուներ իր կամքը. չիմանալով նրա տագնապի պատճառը, նա զգում էր, որ նույն տագնապն ակամա հաղորդվում էր և իրեն։

— Ի՞նչ է պատահել, ի՞նչ,— հարցնում էր նա, արմունկով սեղմելով Աննայի ձեռքը և աշխատելով կարդալ նրա դեմքին նրա մտքերը։

Աննան լուռ անցավ մի քանի քայլ, սրտապնդվելով ու հանկարծ կանգ առավ։

— Երեկ ես չասացի քեզ,— սկսեց նա, արագ ու ծանր շնչելով,— որ Ալեքսեյ Ալեքսանդրովիչի հետ տուն վերադառնալիս ես հայտնեցի նրան բոլորը... ասացի, որ չեմ կարող լինել նրա կինը, որ... և բոլորն ասացի։

Վռոնսկին լսում էր նրան, ակամա կռացած ամբողջ իրանով, կարծես թե կամենալով դրանով մեղմացնել նրա վիճակի ծանրությունը։ Բայց հենց որ Աննան ասաց դա, Վռոնսկին հանկարծ ուղղվեց, և նրա դեմքն ընդունեց հպարտ ու խիստ արտահայտություն։

— Այո՛, այո՛, դա ավելի լավ է, հազար անգամ ավելի լավ։ Ես հասկանում եմ, թե որքան ծանր է այդ,— ասաց նա։ Բայց Աննան չէր լսում նրա խոսքերը. նա կարդում էր նրա մտքերը դեմքի արտահայտության մեջ։ Աննան չէր կարող իմանալ, որ նրա դեմքի արտահայտությունը վերաբերում էր նրա գլուխն եկած առաջին մտքին՝ մենամարտի անխուսափե-

լիությանն այժմ։ Աննայի գլխով երբեք չէր անցնում մենամարտի միտքը, այդ պատճառով խստության այս թռուցիկ արտահայտությունը նա բացատրեց այլ կերպ։

Ստանալով ամուսնու նամակը, Աննան արդեն գիտեր իր հոգու խորքում, որ ամեն բան կմնա առաջվա պես, որ ինքն անկարող կլինի արհամարհելու իր դիրքը, լքելու որդուն ու միանալու սիրեկանին։ Իշխանուհի Տվերսկայայի մոտ անցկացրած առավոտը էլ ավելի հաստատեց նրան այդ բանում։ Բայց և այնպես այս տեսակցությունը չափազանց կարևոր էր նրա համար։ Նա հույս ուներ, որ տեսակցությունը կփոխի այդ դրությունը և կփրկի իրեն։ Եթե Վրոնսկին այդ լուրը լսելով վճռականապես, բուռն կերպով, առանց մի բոպե տատանվելու կասի. թո՛ղ ամեն ինչ ու փախիր ինձ հետ, նա կլքի որդուն և կգնա նրա հետ։ Բայց այդ լուրը Վրոնսկու մեջ չառաջացրեց այն, ինչ սպասում էր Աննան. Վրոնսկին կարծես միայն վիրավորվեց մի բանից։

— Ինձ համար բնավ ծանր չէր։ Դա կատարվեց ինքն իրեն,— ասաց Աննան գրգռված,— և ահա... — նա հանեց ամուսնու նամակը ձեռնոցի միջից։

— Ես հասկանում եմ, հասկանում,— ընդհատեց Վրոնսկին նրան, վերցնելով նամակը, բայց չկարդալով և աշխատելով հանգստացնել նրան.— ես մի բան էի ցանկանում, ես մի բան էի խնդրում՝ վերջ տալ այդ դրությանը, որպեսզի կարողանամ ամբողջ կյանքս նվիրել քո երջանկությանը։

— Ինչո՞ւ ես ասում ինձ այդ բանը,— ասաց Աննան։— Մի՞թե ես կարո՞ղ եմ կասկածել։ Եթե ես կասկածեի...

— Այդ ո՞վ է գալիս,— ասաց հանկարծ Վրոնսկին, նշելով իրենց ընդառաջ եկող երկու տիկինների,— գուցե ճանաչում են մեզ,— և նա արագ շարժվեց, տանելով Աննային իր ետևից դեպի կողքի ծառուղին։

— Ախ, ինձ համար միևնույն է,— ասաց Աննան։ Նրա շուրթերը դողացին։ Եվ Վրոնսկուն թվաց, որ նրա աչքերը տարօրինակ զայրույթով նայում էին իրեն՝ քողի տակից։— Ես ասում եմ, որ բանն այդ չէ, ես չեմ կարող կասկածել դրանում. բայց ահա թե ինչ է գրում նա ինձ։ Կարդա։— Աննան նորից կանգ առավ։

Նորից այնպես, ինչպես և ամուսնու հետ Աննայի հարաբերությունների խզման լուրը լսելու առաջին բոպեին, Վրոնսկին, կարդալով նամակը, ակամա անձնատուր եղավ այն բնական տպավորությանը, որ առաջ էր գալիս նրա մեջ՝ վիրավորված ամուսնու հանդեպ ունեցած վերաբերմունքից։ Այժմ, երբ նա բռնել էր ձեռքին նրա նամակը, ակամա պատկերացնում էր իրեն այն մարտականը, որը հավանորեն հենց այսօր կամ վաղը կգտնի իր բնակարանում, պատկերացնում էր նաև մենամարտը, որի ժամանակ ինքը նույն այն սառը և հպարտ արտահայտությամբ, որն այժմ էլ գծագրվել էր նրա դեմքին, կրակելով օդի մեջ, կկանգնի վիրավորված ամուսնու հրազարկի տակ։ Ու հենց այստեղ նրա գլխով անցավ այն միտքը, ինչի մասին քիչ առաջ ասում էր նրան Սերպուխովսկոյը և ինչի մասին մտածում էր ինքն առավոտյան, թե ավելի լավ է չկապվել, բայց նա գիտեր, որ այդ միտքը չի կարող հայտնել Աննային։

Կարդալով նամակը, Վրոնսկին աչքերը բարձրացրեց Աննայի վրա, և նրա հայացքի մեջ հաստատակամություն չկար։ Աննան անմիջապես հասկացավ, որ Վրոնսկին առաջ արդեն մտածել է դրա մասին։ Աննան գիտեր, որ ինչ էլ ասեր նա իրեն, չի ասի բոլորը, ինչ մտածում է։ Եվ Աննան հասկացավ, որ իր վերջին հույսը չարդարացավ։ Դա այն չէր, ինչ սպասում էր Աննան։

— Տեսնո՞ւմ ես, թե ինչ տեսակ մարդ է նա,— ասաց Աննան դողդոջուն ձայնով,— նա...

— Ներիր ինձ, բայց ես ուրախ եմ դրա համար,— ընդհատեց Վրոնսկին։— Ի սեր աստծո, թող վերջացնեմ խոսքս,— ավելացրեց նա, հայացքով աղերսելով Աննային, որ ժամանակ տա իրեն՝ բացատրելու իր խոսքերը։— Ես ուրախ եմ, որովհետև դա չի կարող, ոչ մի կերպ չի կարող մնալ այնպես, ինչպես ենթադրում է նա։

— Իսկ ինչո՞ւ չի կարող,— զսպելով արցունքները, ասաց Աննան, հավանորեն, այլևս ո՛չ մի նշանակություն չտալով նրա ասելիքին։ Աննան զգում էր, որ իր բախտը վճռված է։

Վրոսկին ուզում էր ասել, որ իր կարծիքով, անխուսափելի մենամարտից հետո, դա չէր կարող շարունակվել, բայց ասաց ուրիշ բան։

— Չի կարող շարունակվել։ Ես հույս ունեմ, որ այժմ

դու կթողնես նրան։ Ես հույս ունեմ,—նա շփոթվեց ու կարմրեց,—որ դու թույլ կտաս ինձ ծրագրել և կարգավորել մեր կյանքը։ Վաղը...—ուզում էր ասել նա։

Աննան չթողեց, որ նա վերջացնի։

— Հապա որդի՞ս,—ճչաց Աննան։—Դու տեսնում ես, թե ի՞նչ է գրում նա. պետք է լքել որդուս, իսկ ես չեմ կարող և չեմ ուզում անել այդ։

— Բայց ասա, խնդրեմ, ի՞նչ է ավելի լավ. լքել որդո՞ւն, թե՞ շարունակել այդ նվաստացուցիչ դրությունը։

— Ո՞ւմ համար նվաստացուցիչ։

— Ամենքիս համար և բոլորից ավելի՝ քեզ համար։

— Դու ասում ես նվաստացուցիչ... մի՛ ասա այդ։ Ինձ համար իմաստ չունեն այդ խոսքերը,—ասաց Աննան դողդոջուն ձայնով։ Նա չէր ուզում այժմ, որ Վրոնսկին սուտ ասեր։ Նրան մնում էր միայն Վրոնսկու սերը, և նա ուզում էր սիրել նրան։—Հասկացիր, որ ինձ համար ամեն բան փոխվեց այն օրից, երբ ես սիրեցի քեզ։ Ինձ համար միակ, միակ բանը քո սերն է միայն։ Եթե իմն է այն, ես ինձ զգում եմ այնպես բարձր, այնպես կայուն, որ ոչինչ չի կարող նվաստացուցիչ լինել ինձ համար։ Ես հպարտ եմ իմ դրությամբ, որովհետև... հպարտ եմ նրանով... հպարտ եմ...—Նա չվերջացրեց խոսքը, թե ինչո՞վ էր հպարտ ինքը։ Ամոթի և հուսահատության արցունքները խեղդեցին նրա ձայնը։ Նա կանգ առավ ու հեկեկաց։

Վրոնսկին նույնպես զգաց, որ մի բան բարձրանում է դեպի իր կոկորդը, ծակծկում է քիթը, և նա առաջին անգամ իր կյանքում զգաց, որ պատրաստ է արտասվելու։ Նա չէր կարող ասել, թե ի՞նչը հատկապես այդպես հուզեց իրեն. նա խղճում էր Աննային և զգում էր, որ չի կարող օգնել նրան, ու միաժամանակ գիտեր, որ ինքն է նրա դժբախտության պատճառը, որ ինքն արել է մի վատ բան։

— Մի՞թե հնարավոր չէ ապահարզան,—ասաց նա թույլ ձայնով։ Աննան առանց պատասխանելու, օրորեց գլուխը։— Մի՞թե չի կարելի որդուն վերցնել և այսուամենայնիվ՝ թողնել ամուսնուն։

— Այո՛. բայց այս բոլորը կախված է նրանից։ Այժմ ես պետք է գնամ նրա մոտ,—ասաց Աննան շոր տոնով։ Նրան

չխաբեց իր նախազգացումը, որ ամեն բան կմնա այնպես, ինչպես առաջ էր։

— Երեքշաբթի ես կլինեմ Պետերբուրգում, և ամեն ինչ կվճռվի...

— Այո՛,—ասաց Աննան։—Բայց այլևս չխոսենք դրա մասին։

Աննայի կառեթը, որը նա ետ ուղարկեց ու հրամայեց գալ Վռեդեի այգու ցանկապատի մոտ, եկավ։ Աննան հրաժեշտ տվեց Վրոնսկուն և գնաց տուն։

XXIII

Երկուշաբթի հունիսի 2-ի հանձնաժողովի սովորական նիստն էր։ Ալեքսեյ Ալեքսանդրովիչը մտավ նիստի դահլիճը, ողջունեց անդամներին ու նախագահին, ինչպես անում էր սովորաբար, ու նստեց իր տեղը, ձեռքը դնելով իր դիմացը պատրաստի դարսած գրությունների վրա։ Այդ թղթերի մեջ էին նաև նրան հարկավոր տեղեկանքները և այն հայտարարության սևագիր կոնսպեկտը, որ նա մտադիր էր անել։ Սակայն տեղեկանքները նրան պետք էլ չէին։ Նա բոլորը հիշում էր ու պետք չէր համարում մտքում կրկնել այն, ինչ պիտի ասեր։ Նա գիտեր, որ երբ ժամանակը գա և երբ ինքը տեսնի իր առաջ հակառակորդի դեմքը, իրեն անտարբեր արտահայտություն տալու զուր ջանքեր թափող դեմքը, իր խոսքն ինքնին կհոսի ավելի լավ, քան կարող էր այժմ պատրաստվել։ Նա զգում էր, իր ճառի բովանդակությունն այնքան խոշոր էր, որ ամեն մի խոսքը նշանակություն կունենա։ Մինչ այդ, լսելով սովորական զեկույցը, նա ուներ ամենաանմեղ, անշառ մարդու տեսք։ Ոչ ոք չէր կարծում, նայելով նրա ուռած երակներով սպիտակ ձեռքերին, որոնք երկար մատներով այնպես քնքշությամբ շոշափում էին նրա դիմաց դրված սպիտակ թղթի թերթի երկու եզրերը, և նայելով նրա՝ հոգնածության արտահայտությամբ մի կողքի վրա թեքած գլխին, որ այս րոպեին նրա շրթունքներից կտեղան այնպիսի խոսքեր, որոնք սոսկալի փոթորիկ կբարձրացնեն, կստիպեն անդամներին գոռգոռալ, ընդհատելով իրար, և կհարկադրեն նախագահին պահանջել, որ կարգ պահպանվի։ Երբ զեկուցումը վերջացավ,

Ալեքսեյ Ալեքսանդրովիչն իր ցածր, բարակ ձայնով հայտարարեց, թե ինքն ուզում է հաղորդել իր մի քանի նկատառումները այլազգիների կարգուսարքավորման գործի առթիվ։ Ուշադրությունը կենտրոնացավ նրա վրա։ Ալեքսեյ Ալեքսանդրովիչը հազաց և առանց նայելու իր հակառակորդին, բայց ընտրելով, ինչպես միշտ անում էր իր ճառերն արտասանելիս իր դիմաց նստած առաջին անձնավորությանը՝ փոքրիկ, հանգիստ մի ծերունու, որը երբեք ո՛չ մի կարծիք չուներ հանձնաժողովի մեջ, սկսեց նկարագրել իր նկատառումները։ Երբ բանը հասավ արմատական և օրգանական օրենքին, հակառակորդը թռավ-կանգնեց ու սկսեց առարկել։ Ստրեմովը, նույնպես հանձնաժողովի անդամ ու նույնպես խիստ վիրավորված, սկսեց արդարանալ, և առհասարակ տեղի ունեցավ աղմկալի նիստ. բայց Ալեքսեյ Ալեքսանդրովիչը հաղթանակեց ու նրա առաջարկն ընդունվեց. նշանակվեցին երեք նոր հանձնաժողովներ, և հետևյալ օրը Պետերբուրգի հայտնի շրջանում ամբողջ խոսքն ու զրույցը այդ նիստի մասին էր։ Ալեքսեյ Ալեքսանդրովիչի հաջողությունն ավելի մեծ էր, քան սպասում էր նա ինքը։

Հետևյալ առավոտ, երեքշաբթի, Ալեքսեյ Ալեքսանդրովիչն արթնանալով, բավականությամբ հիշեց երեկվա իր հաղթանակը և չկարողացավ չժպտալ, թեպետև ուզում էր անտարբեր երևալ, երբ գրասենյակի կառավարիչը, կամենալով շողոքորթել նրան, հայտնեց հանձնաժողովում տեղի ունեցածի մասին իրեն հասած լուրերը։

Զբաղվելով գրասենյակի կառավարչի հետ, Ալեքսեյ Ալեքսանդրովիչը բոլորովին մոռացավ, որ այսօր երեքշաբթի է, այն օրը, որ նշանակված էր Աննա Արկադիևնայի գալու համար, և զարմացավ ու անախորժ զգացում ունեցավ, երբ սպասավորը եկավ զեկուցելու նրա գալու մասին։

Աննան եկավ Պետերբուրգ վաղ առավոտյան. նրա ետևից ուղարկվել էր կառեթ՝ համաձայն նրա հեռագրի, այդ պատճառով Ալեքսեյ Ալեքսանդրովիչը կարող էր իմանալ նրա գալու մասին։ Բայց երբ նա եկավ, ամուսինը չդիմավորեց նրան։ Աննային ասացին, որ ամուսինը դեռ դուրս չի եկել և զբաղված է գրասենյակի կառավարչի հետ։ Աննան հրամայեց ասել ամուսնուն, որ ինքը եկել է. անցավ իր ադամանդագույ-

յակը և սկսեց բացել իրերը, սպասելով, որ նա կգա իր մոտ։ Բայց անցավ մի ժամ, նա չէր գալիս։ Աննան դուրս եկավ սեղանատուն կարգադրություններ անելու պատրվակով ու դիտմամբ խոսում էր բարձր, սպասելով, որ նա կգա այստեղ. բայց նա դուրս չեկավ, թեև Աննան լսեց, որ նա մոտեցավ առանձնասենյակի դռանը, ճանապարհ դնելով գրասենյակի կառավարչին։ Աննան գիտեր, որ նա, սովորականի պես, շուտով կգնա ծառայության, ուստի ուզում էր մինչ այդ տեսնել նրան, որպեսզի որոշվեին իրենց հարաբերությունները։

Աննան անցավ դահլիճով ու վճռականապես դիմեց դեպի նա։ Երբ Աննան մտավ նրա առանձնասենյակը, նա փոխ-համազգեստով, ըստ երևույթին՝ գնալու պատրաստ, նստել էր փոքրիկ սեղանի մոտ, որին հենել էր թևերը և տխուր նայում էր իր դիմաց։ Աննան տեսավ նրան ավելի շուտ, քան նա Աննային, ուստի հասկացավ, որ նա մտածում է իր մասին։

Տեսնելով Աննային, նա ուզեց կանգնել, բայց փոխեց մտադրությունը, հետո նրա դեմքը բռնկվեց, որպիսի բան Աննան առաջ երբեք չէր տեսել, և նա արագ կանգնեց ու գնաց կնոջն ընդառաջ, նայելով ո՛չ թե նրա աչքերին, այլ ավելի բարձր՝ նրա ճակատին ու սանրվածքին։ Նա մոտեցավ կնոջը, բռնեց նրա ձեռքը և խնդրեց նստել։

— Ես շատ ուրախ եմ, որ դուք եկաք,— ասաց նա, նրստելով կնոջ մոտ և, հավանորեն, կամենալով մի բան ասել, բայց դեմ ընկավ։ Մի քանի անգամ նա ուզում էր խոսել, սակայն կանգ էր առնում։ Չնայած, որ պատրաստվելով այս տեսակցությանը, Աննան վարժում էր իրեն՝ արհամարհելու և մեղադրելու ամուսնուն, այժմ չգիտեր՝ ի՛նչ ասի ու խղճում էր նրան։ Եվ այսպես լռությունը շարունակվեց բավական երկար։— Սերյոժան առո՞ղջ է,— ասաց նա և առանց սպասելու պատասխանի, ավելացրեց,— ես այսօր տանը չեմ ճաշելու, իսկ հիմա պիտի գնամ։

— Ես ուզում էի գնալ Մոսկվա,— ասաց Աննան։

— Ո՛չ, դուք շատ, շատ լավ արիք, որ եկաք,— ասաց նա և նորից լռեց։

Տեսնելով, որ նա չի կարողանում սկսել խոսակցությունը, Աննան սկսեց ինքը.

— Ալեքսեյ Ալեքսանդրովիչ,— ասաց նա, նայելով ամուս-

գուն և աչքերը կախ չգցելով իր սանրվածքին սևեռած նրա հայացքի տակ,— ես հանցավոր կին եմ, ես վատ կին եմ, բայց ես նույնն եմ, ինչ էի, ինչ ասացի ձեզ այն ժամանակ, և եկա ասելու ձեզ, որ ես չեմ կարող ոչինչ փոխել։

— Ես ձեզ չեմ հարցնում դրա մասին,— ասաց Կարենինը, հանկարծ վճռականորեն և ատելությամբ նայելով ուղիղ կնոջ աչքերին,— ես այդպես էլ ենթադրում էի։— Ցասման ազդեցության տակ նա, ինչպես երևում է, նորից լիովին տիրապետեց իր բոլոր ընդունակություններին։— Բայց, ինչպես ես ասել եմ ձեզ այն ժամանակ և ինչպես գրել եմ,— խոսեց նա խիստ, բարակ ձայնով,— ես կրկնում եմ այժմ, որ պարտավոր չեմ իմանալ այդ։ Ես անտեսում եմ դա։ Բոլոր կանայք հո այնպես բարի չեն, ինչպես դուք եք, որ շտապեն հաղորդելու իրենց ամուսիններին այդքան հաճելի լուրը։— Նա առանձնապես շեշտեց «հաճելի» բառը։— Ես կանտեսեմ այնքան ժամանակ, քանի դեռ բարձր հասարակությունը չգիտե դրա մասին, քանի դեռ արատավորված չէ իմ անունը։ Այդ պատճառով ես միայն նախազգուշացնում եմ ձեզ, որ մեր հարաբերությունները պետք է լինեն այնպես, ինչպես եղել են միշտ, և որ այն դեպքում միայն, երբ դուք վարկաբեկեք ձեզ, ես ստիպված կլինեմ միջոցներ ձեռք առնել, որպեսզի պաշտպանեմ իմ պատիվը։

— Բայց մեր հարաբերությունները չեն կարող լինել այնպես, ինչպես էին,— երկչոտ ձայնով ասաց Աննան, երկյուղով նայելով Ալեքսեյ Ալեքսանդրովիչին։

Երբ Աննան նորից տեսավ այդ հանգիստ շարժումները, լսեց այդ ականջ ծակող, այդ մանկական ու ծաղրական ձայնը, զզվանքը դեպի նա ոչնչացրեց Աննայի մեջ առաջվա խղճահարությունը, և նա միայն վախենում էր, բայց ի՞նչ էլ լինի, ուզում էր պարզել իր դրությունը։

— Ես չեմ կարող լինել ձեր կինը, երբ ես...— սկսեց նա։

Ալեքսեյ Ալեքսանդրովիչը ծիծաղեց չար ու սառն ծիծաղով։

— Երևի, կյանքի այն եղանակը, որ ընտրել եք դուք, անդրադարձել է ձեր հասկացողությունների վրա։ Ես այնքան հարգում կամ արհամարհում եմ թե՛ մեկը, թե՛ մյուսը... ես հարգում եմ անցյալը ձեր և արհամարհում եմ ներկան... որ ես հեռու էի այն մեկնաբանությունից, ինչ դուք տվիք իմ խոսքերին։

Աննան հառաչեց ու կախ գցեց գլուխը։

— Սակայն ես չեմ հասկանում, դուք ինչպե՞ս ունենալով այդքան անկախություն,— շարունակեց Ալեքսեյ Ալեքսանդրովիչը տաքանալով,— և ուղղակի հայտարարելով ձեր ամուսնուն ձեր անհավատարմության մասին ու չտեսնելով դրանում դատապարտելի ոչինչ, ինչպես թվում է, դուք դատապարտելի եք համարում ամուսնու նկատմամբ կնոջ պարտավորությունների կատարումը։

— Ալեքսեյ Ալեքսանդրովիչ, ի՞նչ եք ուզում ինձանից։

— Ես ուզում եմ, որ չհանդիպեք այստեղ այդ մարդուն և որ դուք ձեզ պահեք այնպես, որպեսզի ո՛չ բարձր հասարակությունը, ո՛չ էլ սպասավորները չկարողանան մեղադրել ձեզ... որ դուք չտեսնվեք նրա հետ։ Կարծեմ դա շատ բան չէ։ Եվ դրա համար դուք կօգտվեք ազնիվ կնոջ իրավունքներով, առանց կատարելու նրա պարտավորությունները։ Ահա՛ այն բոլորը, որ ես կուզեի ասել ձեզ։ Այժմ իմ գնալու ժամանակն է։ Ես տանը չեմ ճաշելու։ Եվ նա վեր կացավ ու դիմեց դեպի դուռը։

Աննան նույնպես վեր կացավ։ Ալեքսեյ Ալեքսանդրովիչը, լուռ գլուխ գալով, առաջ թողեց նրան։

XXIV

Լևինի համար զուր չանցավ այն գիշերը, որ նա անցկացրեց բարդի վրա. այն տնտեսությունը, որ վարում էր նա, զզվեցրել էր նրան և կորցրել էր նրա աչքում ամեն հետաքրքրություն։ Չնայած գերաղանց բերքին, երբեք չէր եղել, կամ համենայն դեպս նրան թվում էր, որ երբեք չէր եղել այդքան անհաջողություն ու թշնամական հարաբերություն իր և մուժիկների միջև, ինչպես այս տարի, և այս անհաջողությունների ու այս թշնամանքի պատճառն այժմ բոլորովին պարզ էր նրա համար։ Աշխատանքի մեջ զգացած հաճույքը, որ առաջանում էր մուժիկների հետ նրա մոտիկանալուց, նախանձի զգացումը, որ նա տածում էր դեպի նրանց, դեպի նրանց կյանքը, այդ կյանքին անցնելու նրա

ցանկությունը, որն այն գիշեր նրա համար այլևս բաղձանք չէր, այլ դիտավորություն, որի իրագործման մանրամասնները նա կշռադատում էր, այս բոլորն այնպես փոխեց նրա հայեցակետը տնտեսության վերաբերյալ, որ նա այլևս չէր կարողանում ո՛չ մի կերպ գտնել նրա մեջ առաջվա հետաքրքրությունը և չէր կարող շտեսնել իր այն անախորժ վերաբերմունքը դեպի բանվորները, որը կազմում էր ամբողջ գոր. Ч հիմքը։ Պավայի նման ազնվացրած կովերի նախիրը, պարարտացրած, գութաններով հերկած ամբողջ հողը, ինը հարթ-հավասար արտերը, շուրջ բոլորը տնկած ուռիներ, իննսուն դեսյատին խորունկ վարած գոմաղբը, շարային սերմնացանները և այլն,— այս բոլորը կլիներ հիանալի, եթե դա աներ նա ինքը կամ ընկերների հետ, իրեն համակրող մարդկանց հետ։ Բայց այժմ նա պարզ տեսնում էր (գյուղատնտեսության մասին գրքի վրա գործ դրած նրա աշխատանքը, որտեղ տնտեսության գլխավոր տարրը պետք է լիներ բանվորը, շատ օգնեց նրան այդ բանում), բայց այժմ նա պարզ տեսնում էր, թե այն տնտեսությունը, որ վարում էր ինքը, դաժան ու համառ պայքար էր իր և բանվորների միջև, պայքար, որտեղ մի կողմում, իր կողմում կար մշտական լարված ձգտում՝ վերափոխել բոլորը լավագույն համարված եղանակի, իսկ մյուս կողմում՝ իրերի բնական կարգը։ Եվ այդ պայքարում նա տեսնում էր, որ ուժերի ծայրահեղ լարվածությամբ իր կողմից ու առանց որևէ ջանքի, նույնիսկ առանց դիտավորության, մյուս կողմից ստացվում էր այն, որ տնտեսությունը տարվում էր հենց այնպես և բոլորովին զուր տեղը փչանում էին հիանալի գործիքները, հիանալի անասունն ու հողը։ Իսկ որ գլխավորն է՝ ո՛չ միայն բոլորովին իզուր էր կորչում այդ գործի վրա թափած եռանդը, այլև նա չէր կարող չզգալ այժմ, երբ իր տնտեսության իմաստը մերկացավ իր համար, որ իր եռանդի նպատակը ամենաստոր նպատակն էր։ Ըստ էության, ի՞նչն էր կազմում պայքարի հիմքը։ Նա պաշտպանում էր իր յուրաքանչյուր գոռշը (և չէր էլ կարող չպաշտպանել, որովհետև բավական էր, եթե նա թուլացներ իր եռանդը, և նա դրամ չէր ունենա բանվորներին վճարելու համար), իսկ նրանք պաշտպանում էին այն, որ աշխատեն հանգիստ ու

հանգիստ, այսինքն՝ այնպես, ինչպես սովոր էին։ Նրա շահերը պահանջում էին, որ յուրաքանչյուր բանվոր աշխատեր որքան կարելի է շատ, միաժամանակ որպեսզի ուշքն ու միտքը չկորցներ, որպեսզի աշխատեր չկոտրել քամհար մեքենաները, ձիաքարշ փոցխերը, կալսիչները, որպեսզի նա կշռադատեր այն, ինչ անում է. իսկ բանվորն ուզում էր աշխատել, որքան կարելի է՝ հանգիստով, հանգիստ առնելով, և որ գլխավորն է՝ անհոգ ու ինքն իրեն մոռացած, առանց մտածելու։ Այս ամառ Լևինը տեսնում էր այդ յուրաքանչյուր քայլափոխում։ Նա ուղարկում էր հնձելու առվույտը խոտի համար, ընտրելով վատ, սերմացուի համար անպետք, մալախոտերով ու օշինդրով պատած դեսյատիններ,— հնձում էին իրար ետևից սերմացուի լավագույն դեսյատիններ, արգարանալով նրանով, իբր այդպես հրամայեց կառավարիչը, և մխիթարում էին նրան այն բանով, որ հիանալի խոտ կստացվի. բայց նա գիտեր, որ դա առաջանում էր նրանից, որ ավելի հեշտ էր հնձել այդ դեսյատիններ։ Նա ուղարկում էր խոտաշրջիչ մեքենան՝ ցրցկելու խոտը,— մեքենան ջարդում էին առաջին շարքերը շուռ տալիս, որովհետև մուժիկի համար ձանձրալի էր նստել մեքենայի նստիքին՝ իր գլխին թափահարող թևերի տակ։ Եվ նրան ասում էին. «Դարդ մի՛ անեք, կնիկները մի շնչում կցրցկեն»։ Գութանները դուրս էին գալիս անպետք, որովհետև բանվորի գլխով չէր անցնում իջեցնել բարձրացրած ձևիչը, և զուռով շուռ տալով տանջում էր ձիերին ու փչացնում հողը, և Լևինին խնդրում էին հանգիստ լինել։ Ձիերը թողնում էին ցորենի արտը, որովհետև ո՛չ մի բանվոր չէր ուզում լինել գիշերային պահապան, և չնայած այդ բանը չանելու հրամանին, բանվորները հերթով հսկում էին գիշերը, և Վանկան, ամբողջ օրը աշխատելով, քնեց ու զրոցում էր իր հանցանքը, ասելով. «ձեր կամքն է»։ Լավագույն հորթերից երեքը թունավորեցին, որովհետև առանց ջրելու նրանց թողին առվույտի նորականաչ արտը, և ո՛չ մի կերպ չէին ուզում հավատալ, որ հորթերն ուտեցին առվույտից, այլ պատմում էին ի մխիթարություն, թե ինչպես հարևանի հարյուր տասներկու գլուխ անասունը կոտորվեց երեք օրում։ Այս բոլորն արվում էր ո՛չ այն պատճառով, որ

մեկն ու մեկը չարիք էր ուզում Լևինի կամ նրա տնտեսության համար, ընդհակառակը, նա գիտեր, որ իրեն սիրում էին, համարում էին հասարակ պարոն (դա բարձրագույն գովասանք էր), այլ արվում էր այն պատճառով միայն, որ ուզում էին ուրախ ու անհոգ աշխատել, և նրա շահերը ո՛չ միայն խորթ ու անհասկանալի էին նրանց համար, այլ շարաբաստիկորեն հակառակ էին նրանց ամենաարդարացի շահերին։ Լևինը վաղուց արդեն դժգոհություն էր զգում իր վերաբերմունքից դեպի տնտեսությունը։ Լևինը տեսնում էր, որ նավակը ծակվել է, ջուր է լցվում մեջը, բայց նա չէր գտնում և չէր որոնում ծակը, գուցե դիտմամբ խաբելով իրեն։ Սակայն այժմ նա չէր կարող այլևս խաբել իրեն։ Իր վարած տնտեսությունը դարձավ նրա համար ո՛չ միայն անհետաքրքրական, այլև գարշելի, և նա չէր կարող այլևս զբաղվել նրանով։

Դրան միացավ նույնպես Կիտի Շչերբացկայայի ներկայությունը Լևինից երեսուն վերստ հեռավորության վրա, որին նա ուզում էր և չէր կարող տեսնել։ Դարիա Ալեքսանդրովնա Օբլոնսկայան հրավիրել էր Լևինին, երբ սա նրա մոտ էր, գալ ու կրկին առաջարկություն անել իր քրոջը, որը, ինչպես զգալ է տալիս Դոլլին, այժմ կընդունի այդ առաջարկությունը։ Ինքը՝ Լևինը, տեսնելով Կիտի Շչերբացկայային, հասկացավ, որ շարունակում է սիրել նրան, բայց չէր կարող գնալ Օբլոնսկիների մոտ, իմանալով, որ նա այնտեղ է։ Այն հանգամանքը, որ Լևինն առաջարկություն արեց նրան, և նա մերժեց, դնում էր նրանց միջև անանցանելի պատնեշ։ «Ես չեմ կարող խնդրել նրան լինել իմ կինն այն պատճառով միայն, որ նա չի կարող լինել այն մարդու կինը, ում ուզում էր նա,— ասում էր Լևինն ինքն իրեն։ Այդ միտքը նրան սառեցնում ու թշնամացնում էր Կիտիի նկատմամբ։— Ես անզոր կլինեմ խոսելու նրա հետ առանց կըշտամբանքի զգացման, նայելու նրան առանց զայրույթի, և նա ավելի ևս կատի ինձ, ինչպես և պետք է լինի։ Ու հետո՝ ինչպե՞ս կարող եմ ես այժմ գնալ նրանց մոտ այն բանից հետո, ինչ ասաց ինձ Դարիա Ալեքսանդրովնան։ Մի՞թե ես կարող եմ ցույց չտալ, որ գիտեմ այն, ինչ ասաց նա ինձ։ Եվ ես կգամ այնտեղ մեծահոգությամբ՝ ներելու,

շնորհ անելու նրան։ Ես նրա առաջ ներողի և նրան իմ սիրույն արժանացնողի դերում եմ... Ինչո՞ւ Դարիա Ալեքսանդրովնան ասաց ինձ այդ։ Ես կարող էի պատահմամբ տեսնել նրան, և այն ժամանակ ամեն բան կարվեր ինքնաբերաբար, բայց այժմ դա անհնարին է, անհնարին»։

Դարիա Ալեքսանդրովնան տոմս էր ուղարկել Լևինին, խնդրելով նրանից կանացի թամբ՝ Կիտիի համար։ «Ինձ ասացին, որ դուք թամբ ունեք,— գրում էր նա։— Հուսով եմ, որ դուք ինքներդ կբերեք այն»։

Դա արդեն տանել չէր կարող Լևինը։ Ինչպես կարող էր խելոք, նրբազգաց կինն այդպես նվաստացնել իր քրոջը։ Նա գրեց տասը տոմս և բոլորն էլ պատռեց ու թամբն ուղարկեց առանց պատասխանի։ Գրել, թե կգամ, չի կարելի, որովհետև գնալ չի կարող. գրել, թե չեմ կարող գալ, որովհետև այսինչ հանգամանքը խանգարում է, կամ ուրիշ տեղ եմ գնում, ավելի վատ։ Նա թամբն ուղարկեց առանց պատասխանի և ամոթալի բան արած լինելու գիտակցությամբ, հենց հետևյալ օրը, հանձնելով կառավարչին այլևս զզվելի դարձած ամբողջ տնտեսությունը, գնաց հեռավոր մի գավառ՝ իր ընկեր-բարեկամ Սվիյաժսկու մոտ, որից ո՛չ հեռու կային կոցարների հիանալի ճահճուտներ, և որը նորերս գրել էր նրան, խնդրելով կատարել իր վաղուցվա մտադրությունը՝ այցելել իրեն։ Կոցարների ճահճուտները Սուրովսկու գավառում վաղուց հրապուրում էին Լևինին, բայց տնտեսական գործերի պատճառով նա հետաձգում էր իր այնտեղ գնալը։ Իսկ այժմ նա ուրախ էր գնալ-հեռանալ և Շչերբացկիների հարևանությունից, և որ գլխավորն է, տնտեսությունից, գնալ հատկապես որսի, որ բոլոր դառնությունների մեջ լավագույն սփոփիչն էր նրա համար։

XXV

Դեպի Սուրովսկու գավառը չկար ո՛չ երկաթուղի, ո՛չ էլ փոստային ճանապարհ, և Լևինը գնում էր իր ձիերով՝ տարանտասով։

Ճանապարհի կեսին նա կանգ առավ հարուստ մուժիկի մոտ՝ ձիերը կերակրելու համար։ Ճաղատ, թարմ մի ծերու-

նի, լայն, շեկ մորուքով, այտերի մոտ սպիտակած, բացեց դարպասը, սեղմվելով դարպասայնին։ որպեսզի ներս թողնի եռանդակը։ Կառապանին շվաքարանի տակ տեղ ցույց տալով՝ հավաքած ու մաքուր, երկճյուղի այրած սյուներով ընդարձակ բակում, ծերունին խնդրեց Լևինին՝ գնալ հյուրասենյակ։ Մաքուր հագնված դեռատի մի կին, մերկ ոտքերին կրկնակոշիկներ, կռացած լաթով սրբում էր նորաշեն սենյակների հատակը։ Նա վախեցավ Լևինի ետևից վազելով ներս մտած շնից ու ճչաց, բայց անմիջապես ծիծաղեց իր վախի վրա, իմանալով, որ շունը չի դիպչի իրեն։ Թևը քաշած ձեռքով նշելով Լևինին հյուրասենյակի դուռը, նա կռանալով նորից ծածկեց իր գեղեցիկ դեմքը և շարունակեց լվանալ հատակը։

— Ինքնաեռ պե՞տք է, հա՞,— հարցրեց նա։

— Այո՛, խնդրեմ։

Հյուրասենյակը մեծ էր, հոլանդական վառարանով և միջնորմով։ Սրբանկարների տակ դրված էր ներկանախշ մի սեղան, նստարան և երկու աթոռ։ Մուտքի դռան մոտ կար ամաններով պահարան։ Փեղկերը փակած էին, ճանճ քիչ կար և այնքան մաքուր էր, որ Լևինը հոգ տարավ, որպեսզի Լասկան, որ վազել էր ճանապարհով ու լողացել լճացած ջրերում, ոտներով չաղտոտեր հատակը, և տեղ ցույց տվեց նրան անկյունում՝ դռան մոտ։ Դիտելով հյուրասենյակը, Լևինը դուրս եկավ ետևի բակը։ Բարետես դեռատի կինը, ոտքերին կրկնակոշիկներ, ճոճելով ուսալծակից կախված գույլերը, վազեց նրա առաջից դեպի ջրհորը՝ ջրի։

— Շո՛ւտ արա,— ուրախ բղավեց դեռատի կնոջ վրա ծերունին և մոտեցավ Լևինին։— Նիկոլայ Իվանովիչ Սվիյաժսկու մո՞տ եք գնում, հա՞, պարոն։ Նա էլ մեզ մոտ է իջնում,— ասող-խոսողի տրամադրությամբ սկսեց նա, հենվելով արտաքին սանդուղքների ճաղերին։ Սվիյաժսկու հետ ծանոթանալու մասին ծերունու պատմության կեսում դարպասը նորից ճռնչաց, և բակ մտան դաշտից եկող բանվորները՝ արորներով ու տափաններով։ Արորներին և տափաններին լծած ձիերը գեր էին ու խոշոր։ Բանվորները հայտնապես ընտանիքի անդամներն էին. երկուսը երիտասարդ, չթե շա-

պիկներով ու կարտուզներով, մյուս երկուսը վարձու բանվորներ՝ կանեփե շապիկներով, մեկը՝ ծեր, մյուսը՝ ջահել։

Հեռանալով սանդուղքներից, ծերունին մոտեցավ ձիերին ու սկսեց արձակել։

— Ի՞նչ էիք վարում,— հարցրեց Լևինը։

— Կարտոֆիլի արտում ակոսներ էինք քաշում։ Մենք մի քիչ հող ունենք։ Ֆեդո՛տ, այդրը բաց չթողնես, կապիր կոճղի մոտ, ուրիշը կլծենք։

— Ի՞նչ եղավ, հայրիկ, ես հրամայեցի, որ խոփերը բերեն, բերի՞ն, թե չէ,— հարցրեց բարձրահասակ, հաղթանդամ երիտասարդը, հավանորեն, ծերունու որդին։

— Հրե՛ն... սահնակի մեջ է,— պատասխանեց ծերունին, շրջանաձև փաթաթելով հանած երասանները և գցելով գետին։— Սարքի՛ր, մինչև կճաշեն։

Բարետես դեռատի կինը՝ ուսերը ցած քաշող լիքը դույլերով անցավ-մտավ նախասենյակ։ Հայտնի չէ, թե ո՛ր-տեղից հայտնվեցին էլի կնիկներ՝ ջահելները՝ գեղեցիկ, միջին տարիքիներն ու պառավները՝ տգեղ, երեխաներով և առանց երեխաների։

Ինքնաեռը շչաց խողովակի մեջ. ձիերը տեղավորելուց հետո բանվորները և ընտանիքի անդամները գնացին ճաշելու։ Հանելով կառքից իր պարեանը, Լևինը հրավիրեց ծերունուն միասին թեյ խմելու։

— Ի՞նչ նեղություն, այսօր արդեն խմել ենք,— ասաց ծերունին, ակնհայտ բավականությամբ ընդունելով առաջարկը։— Ընկերություն անելու համար կարելի է։

Թեյի ժամանակ Լևինն իմացավ ծերունու տնտեսության ամբողջ պատմությունը։ Ծերունին տասը տարի առաջ կալվածատիրոջից վարձով վերցրել էր հարյուր քսան դեսյատին, իսկ անցյալ տարի գնել էր այդ հողերը և վերցրել էր էլի երեք հարյուր՝ հարևան կալվածատիրոջից։ Այդ հողերի քիչ մասը, ամենավատ մասը, նա տալիս էր վարձով, իսկ մոտ քառասուն դեսյատին հերկում էր ինքն իր ընտանիքի և երկու վարձու բանվորների ձեռքով։ Ծերունին գանգատվում էր, որ գործը լավ չի գնում։ Բայց Լևինը հասկանում էր, որ նա գանգատվում է քաղաքավարության համար միայն, մինչդեռ նրա տնտեսությունը ծաղկում էր։ Եթե վատ

լիներ, նա դեսյատինը հարյուր հինգ ռուբլով հող չէր գնի, չէր ամուսնացնի իր երեք որդիներին և եղբոր տղային, երկու անգամ տուն չէր շինի հրդեհներից հետո, և ամեն անգամ՝ առաջվանից ավելի լավը։ Չնայած ծերունու գանգատին, երևում էր, որ նա իրոք հպարտ էր իր բարեկեցությամբ, հպարտ էր իր որդիներով, եղբոր տղայով, հարսներով, ձիերով, կովերով և մանավանդ նրանով, որ պահպանվում էր այս ամբողջ տնտեսությունը։ Ծերունու հետ եղած խոսակցությունից Լևինն իմացավ, որ նա դեմ չէր նորամուծություններին։ Նա ցանում էր շատ գետնախնձոր, և նրա գետնախնձորը, որ տեսավ Լևինը մոտենալով ծերունու տանը, արդեն ծաղիկը թողել ու գլուխ էր բռնել, մինչդեռ Լևինի մոտ միայն ծաղկել էր։ Գետնախնձորի արտերը նա հերկում էր կուտանով, ինչպես նա անվանում էր գութանը, որ վերցնում էր կալվածատիրոջից։ Նա ցանում էր ցորեն։ Փոքրիկ մի մանրամասնություն առանձնապես զարմացրեց Լևինին. ծերունին քաղհանում էր հաճարը և քաղհանած հաճարով կերակրում էր ձիերը։ Քանի՞-քանի՞ անգամ Լևինը, տեսնելով, թե ինչպես կորչում է այդ հիանալի կերը, ուզում էր հավաքել այն, բայց դա միշտ դառնում էր անհնարին բան։ Իսկ մուժիկի մոտ այդ բանն արվում էր, և նա խոսք չէր գտնում գովելու այդ կերը։

— Հապա ուրիշ էլ ի՞նչ անեն կնիկները։ Կապոց-կապոց դուրս են բերում ճանապարհի վրա, սայլը գալիս, վերցնում է։

— Մեզ մոտ, կալվածատերերիս մոտ, վատ է գնում գործը բանվորների հետ,— ասաց Լևինը, տալով նրան թեյով լցրած բաժակը։

— Շնորհակալ ենք,— ասաց ծերունին, վերցրեց բաժակը, բայց հրաժարվեց շաքարից, նշելով իր կրծած կտորի մնացորդը։— Ո՞նց կարելի է գործ անել բանվորների հետ, — ասաց նա։— Տնաքանդություն է, ուրիշ ոչինչ։ Ա՛յ, վերցնենք օրինակ՝ Սվիյաժսկիներին։ Մենք գիտենք, թե ինչպիսի՛ հող է՝ ոսկի, բայց նրանք էլ շատ պարծենալ չեն կարող բերքով։ Պատճառը աչքաթող անելն է։

— Բայց չէ՞ որ դու աշխատում ես բանվորներով։

— Մերը մուժիկի բան է։ Ամեն բան մենք ինքներս ենք անում։ Վատ է բանվորը՝ կորչի-գնա, ինքներս կանենք։

— Հայրի՛կ, Ֆինոգենը հրամայեց կուպր հանել,— ասաց ներս եկած կնիկը՝ կրկնակոշիկներով։

— Այսպե՞ս է, պարոն,— ասաց ծերունին վեր կենալով, երկար խաչակնքեց երեսը, շնորհակալություն հայտնեց Լևինին և դուրս գնաց։

Երբ Լևինը մտավ ծխախոտիթը, որ կանչի իր կառապանին, տեսավ սեղանի շուրջը նստած բոլոր տղամարդկանց։ Կնիկներն սպասարկում էին հոտնկայս։ Երիտասարդ հաղթանդամ որդին, բերանը լիքը շիլա, ինչ-որ ծիծաղելի բան էր պատմում, և ամենքը քրքջում էին, մանավանդ ուրախ հոհոում էր կրկնակոշիկով կնիկը, շչի լցնելով թասի մեջ։

Շատ կարող է պատահել, կրկնակոշիկով դեռատի կնոջ բարեսիրտ դեմքը մեծապես նպաստեց բարեկեցության այն տպավորությանը, որ թողեց Լևինի վրա գյուղական այդ տունը, բայց այդ տպավորությունն այնպես զորեղ էր, որ Լևինը ո՛չ մի կերպ չէր կարողանում ազատվել նրանից։ Եվ ամբողջ ճանապարհին, ծերունուց մինչև Սվիյաժսկին, նա մերթ-մերթ նորից հիշում էր այդ տնտեսության մասին, կարծես ինչ-որ բան այդ տնտեսության մեջ գրավում էր նրա հատուկ ուշադրությունը։

XXVI

Սվիյաժսկին ազնվականների պարագլուխն էր իրենց գավառում։ Նա հինգ տարով մեծ էր Լևինից ու վաղուց ամուսնացած։ Նրա տանն ապրում էր իր ջահել քենին, Լևինի համար շատ համակրելի մի աղջիկ։ Եվ Լևինը գիտեր, որ Սվիյաժսկին ու նրա կինը շատ էին ուզում այդ աղջկան ամուսնացնել իր հետ։ Նա գիտեր այդ բանը աներկբայորեն, ինչպես իմանում են դա երիտասարդները, այսպես կոչված՝ փեսացուները, թեև երբեք սիրտ չէր անի որևէ մեկին ասելու այդ. գիտեր նույնպես և այն, որ թեպետ ինքն ուզում էր ամուսնանալ, թեպետ բոլոր տվյալներով չափազանց համակրելի այդ աղջիկը պետք է որ հիանալի կին լիներ, բայց ինչպես նա չէր կարող թռչել երկինք, այնպես էլ չէր կարող ամուսնանալ այդ աղջկա հետ, եթե նույնիսկ սիրահարված չլիներ Կիտի Շչերբացկայային։ Եվ այդ գիտենալը թունավորում էր նրա համար այն բավա-

ֆաութիւնը, որ նա հույս ուներ ստանալու Սվիյաժսկու մոտ գնալուց։

Ստանալով Սվիյաժսկու նամակը՝ որսի գնալու հրավերով, Լևինն անմիջապես մտածեց դրա մասին, բայց չնայելով դրան, վճռեց, որ Սվիյաժսկու այդպիսի ակնկալությունն իրենից ոչնչի վրա չհիմնված իր ենթադրությունն է միայն, ուստի, այնուամենայնիվ, որոշեց գնալ։ Բացի դրանից, նա իր հոգու խորքում ուզում էր փորձել իրեն, նորից կշռարկել իրեն այդ աղջկա հետ։ Սվիյաժսկիների ընտանեկան կյանքը վերին աստիճանի հաճելի էր, և ինքը՝ Սվիյաժսկին, զեմստվոյի գործչի ամենալավ տիպը, որ գիտեր Լևինը, միշտ չափազանց հետաքրքրական էր Լևինի համար։

Սվիյաժսկին Լևինի համար միշտ զարմանք շարժող այն մարդկանցից էր, որոնց շատ հետևողական, բայց երբեք ինքնուրույն դատողությունն ընթանում է ինքն իրեն, իսկ կյանքը՝ իր ուղղությամբ չափազանց որոշակի ու հաստատուն, ընթանում է ինքն իրեն և միանգամայն անկախ ու համարյա միշտ հակառակ այդ դատողություններին։ Սվիյաժսկին վերին աստիճանի ազատամիտ մարդ էր։ Նա արհամարհում էր ազնվականությունը և ազնվականների մեծամասնությունը համարում էր ճորտության գաղտնի կողմնակից ու երկչոտության պատճառով միայն չարտահայտվող։ Նա Ռուսաստանը համարում էր կորած երկիր, Թուրքիայի նման, և Ռուսաստանի կառավարությունն այնքան վատ, որ երբեք թույլ չէր տալիս իրեն լրջորեն քննադատելու նրա գործողությունները և միաժամանակ ծառայում էր ու ազնվականների օրինակելի պարագլուխ էր և ճանապարհ գնալիս միշտ դնում էր կարմիր բոլորքով ու կոկարդով գլխարկ։ Նա այն կարծիքին էր, որ մարդավայել կյանքը հնարավոր է միայն արտասահմանում, ուր և գնում էր նա ապրելու առաջին հնարավորության դեպքում, իսկ դրա հետ միասին վարում էր Ռուսաստանում շատ բարդ ու կատարելագործված տնտեսություն և ամենամեծ հետաքրքրությամբ հետևում էր ամեն բանի ու գիտեր այն բոլորը, ինչ կատարվում էր Ռուսաստանում։ Ռուս մուժիկին իր զարգացմամբ նա համարում էր կանգնած կապիկից մարդու փոխվելու անցողիկ աստիճանի վրա, իսկ այսուհանդերձ՝ զեմստվոյի ընտրություններին ամենից ավելի սիրով սեղմում

էր մուժիկների ձեռքը և լսում նրանց կարծիքները։ Նա չէր հավատում ո՛չ փոշտոցի, ո՛չ մահվան, բայց շատ մտահոգված էր հոգևորականության կենցաղը բարելավելու և ծախսերը կրճատելու հարցով, ըստ որում առանձնապես աշխատում էր, որ եկեղեցին մնա իրենց գյուղում։

Կանանց հարցում Սվիյաժսկին համակարծիք էր կանանց լիովին ազատության և մանավանդ նրանց աշխատանքի իրավունքների ծայրահեղ կողմնակիցներին. բայց իր կնոջ հետ ապրում էր այնպես, որ ամենքը հիանում էին նրանց անզուգակ համերաշխ ընտանեկան կյանքով, և իր կնոջ կյանքը դասավորել էր այնպես, որ նա ոչինչ չէր անում ու չէր կարող անել, բացի ամուսնու հետ ընդհանուր հոգսից, թե ինչպե՞ս ավելի լավ և ավելի ուրախ ժամանակ անցկացնեն։

Եթե Լևինը չունենար մարդկանց լավագույն կողմից բնորոշելու հատկություն, Սվիյաժսկու բնավորությունը ո՛չ մի դժվարություն ու հարց չէր ներկայացնի նրա համար. նա կասեր իրեն. «հիմար կամ անպետք մարդ է», և ամեն ինչ պարզ կլիներ։ Բայց նա չէր կարող ասել հիմար, որովհետև Սվիյաժսկին անկասկած ո՛չ միայն շատ խելոք, այլև շատ կրթված և իր կրթությունն անօրինակ պարզությամբ կրող մարդ էր։ Չկար մի առարկա, որ նա չիմանար. սակայն, իր գիտելիքը ցույց էր տալիս միայն այն դեպքում, երբ ստիպված էր լինում այդ անելու։ Ավելի ևս քիչ հիմք ուներ Լևինն ասելու, որ նա անպետք էր, որովհետև Սվիյաժսկին անպայման ազնիվ, բարի, խելոք մարդ էր, որ մշտապես ուրախ, աշխույժ գործ էր անում, ու այդ գործը բարձր էին գնահատում բոլոր նրան շրջապատողները, և իրավամբ արդեն՝ նա գիտակցաբար ոչինչ վատ բան չէր անում ու չէր կարող անել։

Լևինն աշխատում էր հասկանալ նրան ու չէր հասկանում և միշտ նայում էր նրան ու նրա կյանքի վրա, որպես կենդանի հանելուկի։

Նա ու Լևինը բարեկամներ էին, այդ պատճառով Լևինը թույլ էր տալիս իրեն հարցուփորձել Սվիյաժսկուն, հասնել կյանքի նկատմամբ նրա ունեցած հայեցակետի անմիջական հիմքին, բայց դա միշտ լինում էր ապարդյուն։ Ամեն անգամ, երբ Լևինը փորձում էր ավելի խորը, հեռու գնալ ամենքի համար բաց՝ Սվիյաժսկու խելքի ընդունարանի դռնից, նկատում

էր, որ Սվիյաժսկին մի թեթև շփոթվում էր, հազիվ նկատելի վախ էր արտահայտվում նրա հայացքի մեջ, կարծես վախենում էր, որ Լևինը կհասկանա իրեն, նա տալիս էր ուրախ ու բարեսիրտ դիմաղարկ։

Այժմ, տնտեսության հանդեպ իր հիասթափությունից հետո, Լևինի համար առանձնապես հաճելի էր լինել Սվիյաժսկու մոտ։ Էլ չխոսած այն մասին, որ նրան ուղղակի ուրախություն էր պատճառում այդ երջանիկ, իրենցից ու ամեն բանից գոհ աղավնիների և նրանց բարեկարգ բնի տեսքը, նա ուզում էր այժմ, իրեն այնչափ դժգոհ զգալով իր կյանքից, հասնել Սվիյաժսկու այն գաղտնիքին, որը կյանքում տալիս էր նրան այդպիսի պարզություն, որոշակիություն և ուրախություն։ Բացի դրանից, Լևինը գիտեր, որ Սվիյաժսկու մոտ կտեսնի նրա հարևան-կալվածատերերին, և Լևինի համար այժմ առանձնապես հետաքրքրական էր խոսել, լսել տնտեսության մասին նույն այն խոսակցությունները բերքի, բանվորներ վարձելու շուրջը և այլն, որոնք, Լևինը գիտեր, ընդունված է համարել մի տեսակ ստոր բան, բայց որոնք այժմ Լևինին թվում էին միակ կարևոր բանը։ «Դա գուցե կարևոր չէր ճորտատիրական իրավունքի ժամանակ կամ կարևոր չէ Անգլիայում։ Երկու դեպքում էլ պայմանները որոշված են. բայց մեզանում այժմ, երբ այս բոլորը շուտ է եկել ու նոր միայն դասավորվում է, այն հարցը, թե ինչպե՞ս կդասավորվեն այդ պայմանները, միակ կարևոր հարցն է Ռուսաստանում», մտածում էր Լևինը։

Որսն ավելի վատ դուրս եկավ, քան սպասում էր Լևինը։ Ճահիճը չորացել էր, և կտցարներ բոլորովին չկային։ Նա ամբողջ օրը թափառեց ու բերեց միայն երեք հատ, բայց դրա փոխարեն բերեց, ինչպես միշտ որսորդությունից վերադառնալիս, հիանալի ախորժակ, հիանալի տրամադրություն և մտավոր այն գրգռված կացությունը, որ նրա մեջ զուգակցում էր ուժեղ ֆիզիկական շարժմանը։ Որսորդության միջոցին ևս, այն ժամանակ, երբ թվում էր, թե նա ոչնչի մասին չէր մտածում, հանկարծ, որտեղից որտեղ, մտաբերում էր ծերունուն իր ընտանիքի հետ, և այդ տպավորությունը կարծես թե պահանջում էր դեպի ինքը, ո՛չ միայն ուշադրություն, այլև իր հետ կապված մի բանի լուծում։

Երեկոյան, թեյի ժամանակ, երկու կալվածատերերի ներկայությամբ, որոնք եկել էին խնամակալության ինչ-որ գործերով, սկսվեց հենց այն հետաքրքրական խոսակցությունը, որին և սպասում էր Լևինը։

Լևինը նստած էր տանտիկնոջ կողքին՝ թեյի սեղանի մոտ և պետք է զրուցեր նրա ու քենու հետ, որը նստել էր Լևինի դիմաց։ Տանտիկինը կլորադեմ, խարտյաշահեր ու ո՛չ բարձրահասակ մի կին էր, որ ամբողջապես փայլում էր ժպիտներով և այտերին գոյացող փոսիկներով։ Լևինն աշխատում էր կնոջ միջոցով խորամանկորեն իմանալ իր համար կարևոր այն հանելուկի լուծումը, որ հանդիսանում էր նրա ամուսինը. բայց Լևինը չուներ մտքերի լիովին ազատություն, որովհետև նա սոսկալի անհարմար էր զգում իրեն։ Նա իրեն անչափ անհարմար էր զգում այն պատճառով, որ նրա դիմաց նստել էր քենին՝ նրա համար հագած հատուկ զգեստով՝ ինչպես թվում էր նրան, սպիտակ կրծքին երկզուգահեռակողմ քառանկյունու ձև ունեցող հատուկ բացվածքով. այդ քառանկյունաձև բացվածքը,— չնայած, որ կուրծքը շատ սպիտակ էր, կամ թե մանավանդ այն պատճառով, որ ինքը՝ քենին շատ սպիտակ էր,— զրկեց Լևինին մտքի ազատությունից։ Նա երևակայում էր, հավանորեն, սխալմամբ, որ այդ բացվածքն արված է իր համար, և իրավունք չէր համարում նայելու դրան, ու աշխատում էր չնայել։ Բայց զգում էր, իբր ինքն արդեն մեղավոր է հենց միայն նրա համար, որ բացվածքն արված է։ Լևինին թվում էր, թե ինքը խաբում է մեկին, թե հարկավոր է ինչ-որ բան բացատրել, բայց որ այդ բանը ո՛չ մի կերպ բացատրել չի կարելի, ուստի նա անընդհատ կարմրում էր, անհանգիստ էր և անհարմար էր զգում իրեն։ Նրա անհարմարության զգացումը հաղորդվում էր նաև լավիկ քենուն։ Բայց տանտիկինը կարծես չէր նկատում այդ և դիտմամբ քրոջը քաշում էր խոսակցության մեջ։

— Դուք ասում եք,— շարունակեց տանտիկինը սկսված խոսակցությունը,— որ իմ ամուսնուն չի կարող հետաքրքրել այն ամենը, ինչ ռուսական է։ Ընդհակառակը, նա ուրախ է լինում արտասահմանում, բայց երբեք ո՛չ այնպես, ինչպես այստեղ։ Այստեղ նա իրեն զգում է հարազատ մթնոլորտում։ Նա ունի այնքան շատ գործ և միաժամանակ ամեն բա-

նով հետաքրքրվելու ձիրք։ Ա՜խ, դուք չե՞ք եղել մեր դրոշ-
բոցում։

— Ես տեսա... բաղեղով պատած այն տնա՞կը։

— Այո՛, դա Նաստիայի գործն է,— ասաց տանտիկինը, նշելով քրոջը։

— Դուք ինքնե՞րդ եք սովորեցնում,— հարցրեց Լևինը, աշխատելով նայել բացվածքի մոտով, բայց զգալով, որ ուր էլ նայելու լինի այդ ուղղությամբ, կտեսնի բացվածքը։

— Այո՛, ես ինքս էի սովորեցնում և սովորեցնում եմ, բայց մենք ունենք հիանալի վարժուհի։ Մենք մտցրինք նաև մարմնամարզություն։

— Ո՛չ, շնորհակալ եմ, ես այլևս թեյ չեմ ուզում,— ասաց Լևինը և զգալով, որ անքաղաքավարություն է անում, սակայն այլևս անկարող շարունակելու այս խոսակցությունը, վեր կացավ կարմրելով։— Ես լսում եմ շատ հետաքրքրական խոսակցություն,— ավելացրեց նա ու մոտեցավ սեղանի մյուս ծայրին, որտեղ նստել էր տանտերը երկու կալվածատերերի հետ։ Սվիյաժսկին նստել էր կողքով դեպի սեղանը, սեղանին հենած ձեռքով խառնելով գավաթը, մյուսով բռունցքի մեջ հավաքելով իր մորուքը և այն մոտեցնելով քթին ու նորից բաց թողնելով, կարծես հոտոտելով։ Իր փայլուն սև աչքերով նա ուղիղ նայում էր տաքացած կալվածատիրոջը՝ սպիտակած բեղերով և, ըստ երևույթին, զվարճալի բան էր տեսնում նրա ասածների մեջ։ Կալվածատերը գանգատվում էր ժողովրդից։ Լևինի համար պարզ էր, որ Սվիյաժսկին գիտե կալվածատիրոջ գանգատի դեմ այնպիսի պատասխան, որը մեկին կոչնչացնի նրա ասածի ամբողջ իմաստը, բայց որ իր դիրքի պատճառով նա չի կարող ասել այդ և լսում է կալվածատիրոջ կոմիկական ճառը՝ ո՛չ առանց բավականության։

Սպիտակ բեղերով կալվածատերը հայտնապես ճորտության մոլի կողմնակից էր և գյուղի հին բնակիչ, թնդեռանդ գյուղական սեփականատեր։ Այդ հատկանիշները Լևինը տեսնում էր նաև նրա զգեստի՝ հնաձև, մաշված սյուրտուկի մեջ, որը հավանորեն անսովոր բան էր կալվածատիրոջ համար, և՛ նրա խելոք, խոժոռոտված աչքերի, և՛ գողտրիկ ռուսական խոսելաձևի մեջ, այլև, հավանորեն, երկար փորձով

յուրացրած՝ հրամայական տոնի ու վճռական շարժումների մեջ մեծ, գեղեցիկ, արևաթուխ ձեռքերի՝ մատնեմատին նշանդրեքի հին մատանի։

XXVII

— Եթե միայն մարդ չափսոսար այն, ինչ արված է... շատ աշխատանք է թափված... ձեռք կվերցնեի բոլորից, կծախեի, կերթայի, ինչպես Նիկոլայ Իվանովիչը... լսելու Հեղինեն,— ասաց կալվածատերը հաճելի ժպիտով, որ պայծառացրեց նրա ծեր խելոք դեմքը։

— Բայց և այնպես չեք թողնում,— ասաց Նիկոլայ Իվանովիչ Սվիյաժսկին,— հետևաբար, ձեռնտու է, հաշիվ կա։

— Հաշիվն այն է միայն, որ ապրում եմ իմ տանը, ո՛չ մի բան գնովի չէ, վարձովի չէ։ Բացի դրանից, միշտ այն հույսը կա, որ ուշքի կգա ժողովուրդը։ Թե չէ, կհավատաք արդյոք, այդ հարբեցողությունը, անբարոյականությունը... Ամենքը բաժան-բաժան են եղել, ո՛չ ձի ունեն, ո՛չ կով։ Քաղցից սատկում է, իսկ փորձեք նրան վարձելու որպես բանվոր,— նա հենց առիթ կփնտրի փչացնելու ձեր գործը և ինքն էլ վազ կտա հաշտարար դատավորի մոտ։

— Դուք ևս կգանգատվեք հաշտարար դատավորին,— ասաց Սվիյաժսկին։

— Ես գանգատվե՞մ։ Ո՛չ մի կերպ, թեկուզ աշխարհը տան ինձ։ Այնպիսի խոսք ու զրույց բարձրանա, որ ինքդ էլ փոշմանես գանգատից։ Լավ օրինակ, ձեր գործարանը՝ կանխավճար վերցրին, թողին-հեռացան։ Ի՞նչ արավ հաշտարար դատավորը։ Արդարացրեց։ Եթե ամեն բան քարուքանդ չի լինում, ապա միայն շնորհիվ վոլոստի դատարանի և տանուտերի։ Սա հին սովորությամբ կքոթակի նրան։ Իսկ եթե դա չլինի՝ գցիր բոլորը, փախիր թեկուզ աշխարհի ծայրը։

Երևի, կալվածատերը գրգռում էր Սվիյաժսկուն, բայց Սվիյաժսկին ո՛չ միայն չէր բարկանում, այլ, ըստ երևույթին, զվարճանում էր դրանով։

— Մենք հո մեր տնտեսությունը վարում ենք առանց այդ միջոցների,— ասաց նա ժպտալով,— ես, Լևինը, նրանք։

Նա նշեց մյուս կալվածատիրոջը։

— Այո՛, Միխայիլ Պետրովիչի գործը առաջ է գնում, բայց, հապա մեկ հարցրեք՝ ինչպե՞ս։ Մի՞թե դա ռացիոնալ տնտեսություն է,— ասաց կալվածատերը, ակնհայտորեն պարծենալով «ռացիոնալ» բառի գործածությամբ։

— Իմ տնտեսությունը հասարակ տնտեսություն է,— ասաց Միխայիլ Պետրովիչը։— Գոհություն աստծու։ Իմ տնտեսության ամբողջ գաղտնիքն այն է, որ դրամ պատրաստ լինի աշնան հարկերի համար։ Գալիս են ինձ մոտ մուժիկները. մեր ծնող, մեր հայր, ձեռք բռնիր, փրկիր մեզ։ Դե՛, բոլորն էլ իմ դուռուդրկից մուժիկներն են, մեղք են։ Է՛, տալիս եմ առաջին քառամյակի համար և ասում. տեսեք, տղերք, ես ձեզ օգնեցի, դուք էլ ինձ օգնեք, երբ կարիք լինի՝ վարսակի ցանքս, խոտհարք, հունձ, և պայմանավորվում ենք, թե յուրաքանչյուր ծուխ ի՛նչ պիտի տա։ Սակայն նրանց մեջ էլ լինում են անխիղճ մարդիկ, դա ճիշտ է։

Լևինը, որ վաղուց գիտեր այդ նահապետական ձևերը, աչքով արեց Սվիյաժսկուն և ընդհատեց Միխայիլ Պետրովիչին, դիմելով նորից սպիտակած բեղերով կալվածատիրոջը.

— Ուրեմն դուք ի՞նչ եք կարծում,— հարցրեց Լևինը,— ձեր կարծիքով, ինչպե՞ս պետք է այժմ վարել տնտեսությունը։

— Վարել այնպես, ինչպես Միխայիլ Պետրովիչը. կամ կիսարար կամ վարձով տալ մուժիկներին. դա կարելի է, բայց դրանով ոչնչանում է պետության ընդհանուր հարստությունը։ Ճորտատիրական աշխատանքի և լավ տնտեսավարության պայմաններում, որտեղ իմ հողը տալիս էր մեկի դիմաց ինը, կիսարար տալու դեպքում նա կբերի մեկին՝ երեք։ Էմանսիպացիան կործանեց Ռուսաստանը։

Սվիյաժսկին ժպտուն աչքերով նայեց Լևինին և նույնիսկ նրան արեց աննկատելի ծաղրական նշան. բայց Լևինի կարծիքով, կալվածատիրոջ խոսքերը ծիծաղելի չէին,— նա դրանք հասկանում էր ավելի, քան հասկանում էր Սվիյաժսկուն։ Իսկ շատ բան այն ամենից, ինչ ասում էր այնուհետև կալվածատերը, ապացուցելով, թե ինչո՛ւ էմանսիպացիան կործանեց Ռուսաստանը, թվում էր նրան նույնիսկ շատ ճիշտ, նրա համար դա նորություն էր և անհերքելի։ Կալվածատերը ակնհայտորեն հայտնում էր իր սեփական միտքը,— որ այնպես սակավ է պատահում,— և այնպիսի միտք, որին նա

հանգել էր ո՛չ թե պարապ ուղեղը մի որևէ բանով զբաղեցնելու ցանկությամբ, այլ մի միտք էր դա, որն աճել, առաջացել էր նրա կյանքի պայմաններից, որը նա հանել էր իր գյուղական մենության մեջ և կշռադատել ամեն կողմից։

— Բանն այն է, ինչպես ինքներդ եք տեսնում, որ ամեն հառաջադիմություն կատարվում է միայն իշխանության միջոցով,— ասում էր նա, ըստ երևույթին, կամենալով ցույց տալ, որ կրթությունը խորթ բան չէ իր համար։— Վերցրեք Պյոտրի, Եկատերինայի, Ալեքսանդրի բարեփոխումները։ Վերցրեք եվրոպական պատմությունը։ Առավել ևս հառաջադիմությունը երկրագործական կենցաղում։ Գետնախնձորն անգամ մուտք է գործել մեզ մոտ զորով։ Չէ՞ որ արորով նույնպես միշտ հերկելիս չեն եղել։ Կարող է պատահել, որ այն էլ մտցրել են իշխանական հողատիրության ժամանակ, և մտցրել են, ամենայն հավանականությամբ, նույնպես զորով։ Այժմ, մեր ժամանակ, մենք՝ կալվածատերերս, ճորտատիրական իրավունքի օրոք, վարում ենք մեր տնտեսությունը կատարելագործություններով. և՛ չորանոցներ, և՛ քամհարներ, և՛ գոմաղբով պարարտացում, և՛ ամեն տեսակ գործիքներ. ամենը մենք մտցնում էինք մեր իշխանությամբ, և մուժիկներն սկզբում հակառակում էին՝ մեր օրինակին։ Այժմ, ճորտատիրական իրավունքը ոչնչացնելիս, մեզանից խլեցին իշխանությունը, հետևապես մեր տնտեսությունը, որտեղ նա հասցված է բարձր մակարդակի, պետք է ընկնի մինչև ամենավայրենի նախնական կացության մեջ։ Այդպես եմ հասկանում ես։

— Բայց ինչո՞ւ։ Եթե տնտեսությունը ռացիոնալ է, ուրեմն դուք կարող եք վարձով վարել այն,— ասաց Սվիյաժսկին։

— Իշխանություն չկա, չէ։ Ո՛ւմ միջոցով պիտի վարեմ, թույլ տվեք հարցնել։

«Ահա՝ բանուժը, տնտեսության գլխավոր տարրը», մտածեց Լևինը։

— Բանվորների։

— Բանվորները չեն ուզում լավ աշխատել և աշխատել լավ գործիքներով։ Մեր բանվորը միայն մի բան գիտե՝ խոզավարի խմել, հարբել և փչացնել այն ամենը, ինչ որ կտաք նրա ձեռքը։ Ձին քրտնած կշրի, կվնասի, լավ լծասարքը

29. «Աննա Կարենինա», հ. 1

կկտրատի, երկաթե դողավոր անիվը կփոխի, կսեղմի, կալսիչի մեջ սամի կգցի, որ կոտրի այն։ Նա տեսնել չի կարող այն ամենը, ինչ նրա գիտցածի պես չէ։ Դրանից էլ իջել է տնտեսության ամբողջ մակարդակը։ Հողերը մնացել են անմշակ, ծածկվել են եղևնախոտով կամ տրված են մուժիկներին, և որտեղ արտադրում էին միլիոններ, արտադրում են հարյուր հազար քառորդական սոմար. ընդհանուր հարստությունը պակասել է։ Եթե միայն նույն այդ բանն անեին, բայց հաշվով...

Եվ նա սկսեց նկարագրել, զարգացնել ազատագրության իր ծրագիրը, որի դեպքում վերացված կլինեին այդ անհարմարությունները։

Լևինին չէր հետաքրքրում դա, բայց երբ նա վերջացրեց, Լևինը վերադարձավ նրա առաջին դրույթին և ասաց, դիմելով Սվիյաժսկուն ու աշխատելով դրդել նրան արտահայտելու իր լուրջ կարծիքը.

— Միանգամայն իրավացի է այն,— ասաց նա,— որ տնտեսության մակարդակն իջնում է և որ բանվորների հանդեպ մեր վերաբերմունքի պայմաններում հնարավորություն չկա վարելու շահեկան ռացիոնալ տնտեսություն։

— Ես այդ կարծիքին չեմ,— արդեն լրջորեն առարկեց Սվիյաժսկին,— ես տեսնում եմ միայն այն, որ մենք չենք կարողանում վարել տնտեսությունը և որ, ընդհակառակը, այն տնտեսությունը, ինչ մենք վարում էինք ճորտատիրական իրավունքի ժամանակ, ո՛չ միայն չափազանց բարձր չէր, այլ չափազանց ցածր էր։ Մենք չունենք ո՛չ մեքենաներ, ո՛չ լավ լծկան անասուն, ո՛չ իսկական կառավարչություն, ո՛չ էլ հաշիվ գիտենք։ Հարցրեք տնտեսատիրոջը և կտեսնեք, որ նա չգիտե, թե ի՞նչն է իրեն ձեռնտու, ի՞նչը ձեռնտու չէ։

— Իտալական հաշվապահությունը,— ասաց հեգնորեն կալվածատերը։— Մեզ մոտ ինչքան ուզում ես հաշվիր, այնպես ամեն բան կփչացնեն, որ ո՛չ մի օգուտ։

— Ինչո՞ւ պիտի փչացնեն։ Անպետք կալսիչը, ռուսական ձեր տոփիչ մեքենան կջարդեն, իսկ իմ շոգեզնացը չեն կոտրի։ Ռուսական ձեր ձիուկը՝ ինչպե՞ս ասեմ, պոչքաշյան ցեղից, այսինքն՝ որ պոչից քաշում են,— կփչացնեն, իսկ եթե ձեռք բերեք պերշերոններ կամ թեկուզ բիտյուկներ, նրանց

չեն փչացնի։ Այդպես էլ ամեն բան։ Մենք պետք է ավելի բարձրացնենք տնտեսությունը։

— Ինչո՞վ, ինչպե՞ս բարձրացնենք, Նիկոլայ Իվանովիչ։ Ձեր բանը հեշտ է, իսկ ես որդուս պիտի պահեմ համալսարանում, փոքրերին դաստիարակեմ գիմնազիայում,— այս պայմաններում ես պերշերոններ գնել չեմ կարող։

— Դրա համար կան բանկեր։

— Որպեսզի վերջին ունեցածս աճուրդով ծախեն, հա՞։ Ո՛չ, շնորհակալ եմ։

— Ես համաձայն չեմ, որ պետք է և կարելի է ավելի բարձրացնել տնտեսության մակարդակը,— ասաց Լևինը։— Ես զբաղվում եմ դրանով ու միջոցներ ունեմ, բայց ոչինչ անել չեմ կարող։ Չգիտեմ, թե բանկերն ո՛ւմ համար են օգտակար։ Համենայն դեպս՝ ինչի վրա որ ես դրամ եմ ծախսում տնտեսության մեջ, վնաս է բերում միշտ. անասունը՝ վնաս է, մեքենան՝ վնաս։

— Ա՛յ, դա ճիշտ է,— բավականությունից նույնիսկ ծիծաղելով, հաստատեց սպիտակած բեղերով կալվածատերը։

— Եվ մենակ ե՛ս չեմ,— շարունակեց Լևինը,— ես կարող եմ հիմնվել բոլոր այն տնտեսատերերի վրա, որոնք ռացիոնալ կերպով են վարում գործը. բոլորը, հազվադեպ բացառությամբ, գործը վարում են վնասով։ Դե՞, հապա դուք ասեք, արդյոք ձեր տնտեսությունը շահաբե՞ր է,— ասաց Լևինը, և անմիջապես նկատեց Սվիյաժսկու հայացքից վախի այն վայրկենական արտահայտությունը, որ նա նկատում էր միշտ, երբ ուզում էր ավելի հեռու, ավելի խորը թափանցել Սվիյաժսկու խելքի ընդունարանը։

Բացի դրանից, այդ հարցը Լևինի կողմից այնքան էլ բարեխիղճ հարց չէր։ Քիչ առաջ տանտիկինը թեյի ժամանակ ասում էր, որ այս ամառ իրենք հրավիրեցին Մոսկվայից հաշվապահության գիտակ մի գերմանացի, որը հինգ հարյուր ռուբլի վարձատրությամբ հաշվեց իրենց տնտեսությունը և գտավ, որ այն բերում է 3000 ռուբլուց ավելի վնաս։ Տանտիկինը չէր հիշում, թե ստույգ ինչքա՞ն, բայց կարծեմ գերմանացին հաշվել էր մինչև քառորդ կոպեկի ճշտությամբ։

Սվիյաժսկու տնտեսության շահութաբերության մասին հիշատակելիս կալվածատերը ժպտաց, երևի, իմանալով, թե

ի՞նչ օգուտ կարող էր ունենալ իր հարևանը և ազնվականության պարագլուխը։

— Կարող է պատահել, որ շահաբեր չէ,— պատասխանեց Սվիյաժսկին։— Դա ապացուցում է միայն, որ կամ ես վատ տնտեսավար եմ, կամ իմ կապիտալը ծախսում եմ ռենտան ավելացնելու վրա։

— Ա՛խ, ռենտա,— սարսափով բացականչեց Լևինը։— Գուցե ռենտա կա Եվրոպայում, որտեղ հողն ավելի լավացել է իր վրա թափած աշխատանքից, բայց մեզանում ամբողջ հողը վատանում է է՛լ ավելի՝ իր վրա գործ դրած աշխատանքից, այսինքն՝ ուժասպառ է լինում շարունակ հերկելուց,— հետևաբար ռենտա չկա։

— Ինչպե՞ս թե ռենտա չկա։ Դա օրենք է։

— Ուրեմն մենք օրենքից դուրս ենք. ռենտան մեզ համար ոչինչ չի պարզի, այլ. ընդհակառակը, կխճճի։ Ո՛չ, դուք ասեք, թե ինչպե՛ս կարող է ռենտայի մասին եղած գիտությունը...

— Կկամենա՞ք մածուն։ Մաշա, ուղարկիր մեզ այստեղ մածուն կամ մորի,— դիմեց նա կնոջը։— Այս տարի մորին զարմանալի երկար է դիմանում։

Եվ շատ լավ տրամադրությամբ Սվիյաժսկին վեր կացավ ու հեռացավ. երևի, ենթադրելով, թե խոսակցությունը վերջացավ հենց այնտեղ, որտեղ Լևինին թվում էր, թե այն նոր սկսվում է։

Զրկվելով իր զրուցակցից, Լևինը շարունակեց խոսակցությունը կալվածատիրոջ հետ, աշխատելով ապացուցել նրան, թե ամբողջ դժվարությունը ծագում է այն բանից, որ մենք չենք ուզում իմանալ մեր բանվորի սովորույթների հատկությունները. բայց կալվածատերը, ինչպես և ինքնուրույն ու առանձնացած մտածող բոլոր մարդիկ, բութ էր ուրիշի միտքը հասկանալու համար և աշառու էր իր մտքի հանդեպ։ Նա պնդում էր, որ ռուս մուժիկը խոզ է ու սիրում է խոզություն, և նրան խոզությունից դուրս բերելու համար պետք է իշխանություն, իսկ իշխանություն չկա, պետք է գավազան, իսկ մենք այնքան ազատամիտ ենք դարձել, որ հազարամյա գավազանը հանկարծ փոխարինեցինք ինչ-որ փաստաբաններով ու կալանքներով, որտեղ անպետք գար-

շահոտ մուժիկներին կերակրում են լավ սուպով ու հաշվում նրանց համար օդի խորանարդ ոտնաչափեր։

— Ինչո՞ւ եք կարծում,— ասում էր Լևինը, աշխատելով վերադառնալ բուն հարցին,— թե չի կարելի գտնել այնպիսի վերաբերմունք դեպի բանուժը, որի դեպքում աշխատանքը ավելի արդյունավետ լիներ։

— Դա ռուս ժողովրդի կյանքում գլուխ գալու բան չէ երբեք։ Իշխանություն չկա,— պատասխանեց կալվածատերը։

— Իսկ ի՞նչ նոր պայմաններ կարող են գտնվել,— ասաց Սվիյաժսկին, ուտելով մածունը, վառելով գլանակը և նորից մոտենալով վիճաբանողներին։— Հնարավոր բոլոր վերաբերմունքները բանուժին արդեն որոշվել և ուսումնասիրվել են,— ասաց նա։— Բարբարոսության մնացորդը՝ նախնական համայնքը համապարտ պատասխանատվությամբ քայքայվում է ինքն իրեն, ճորտատիրական օրենքը ոչնչացավ, մնում է միայն ազատ աշխատանքը, և նրա ձևերը որոշված ու պատրաստ են, և պետք է վերցնել դրանք։ Բատրակ, օրամշակ, ֆերմեր՝ դրանցից դուք չեք ազատվի։

— Բայց Եվրոպան դժգոհ է այդ ձևերից։

— Դժգոհ է ու որոնում է նորերը։ Եվ կգտնի երևի։

— Ես հենց դրա մասին եմ մտածում,— պատասխանեց Լևինը։— Իսկ ինչո՞ւ մենք էլ մեր կողմից չպիտի որոնենք։

— Որովհետև դա միևնույն բանն է, եթե մարդ մտածի գտնել նոր եղանակներ երկաթուղի շինելու համար։ Նրանք պատրաստ են, արդեն մտածված են։

— Բայց եթե նրանք հարմար չեն մեզ համա՞ր, եթե նրանք տխմար բան են,— ասաց Լևինը։

Եվ նորից նա նկատեց վախի արտահայտություն Սվիյաժսկու աչքերի մեջ։

— Դե իհա՞րկե. մեզ համար չկա անհնարին ո՛չ մի բան. մենք գտել ենք այն, ինչը որոնում է Եվրոպան։ Այս բոլորը ես գիտեմ, բայց ներեցեք ինձ, արդյոք դուք գիտե՞ք այն բոլորը, ինչ արված է Եվրոպայում՝ բանվորական ուժի կարգավորման հարցի առթիվ։

— Ո՛չ, լավ չգիտեմ։

— Այդ հարցն այժմ զբաղեցնում է Եվրոպայի լավագույն գլուխները։ Շուլցե-դելիչևյան ուղղություն... Հետո բան-

վորական հարցին վերաբերող այդ վիթխարի գրականությունը, լասսալյան ամենալիբերալ ուղղության գրականությունը... Միլհաուզենյան կարգավորումն արդեն փաստ է, հավանորեն դուք գիտեք։

— Ես պատկերացում ունեմ, բայց շատ աղոտ։

— Ո՛չ, դուք ասում եք հենց այնպես, դուք երևի այս բոլորը գիտեք ինձանից ո՛չ պակաս լավ։ Ես, իհարկե, սոցիալական պրոֆեսոր չեմ, սակայն այդ խնդիրն ինձ հետաքրքրում էր, և եթե իրոք դուք հետաքրքրվում եք, զբաղվեցեք դրանով։

— Բայց ինչի՞ հանգեցին նրանք։

— Ներողություն...

Կալվածատերերը վեր կացան, և Սվիյաժսկին, նորից կանգնեցնելով Լևինին նրա անախորժ սովորության մեջ՝ ծածուկ նայել, թե ի՛նչ կար իր խելքի ընդունարանի ետևում, գնաց ճանապարհ դնելու իր հյուրերին։

XXVIII

Լևինն անտանելի ձանձրանում էր այդ երեկո կանանց հետ։ Ավելի քան երբևիցե նրան հուզում էր մի միտք, թե այն դժգոհությունն իր տնտեսությունից, որ այժմ նա ուներ, բացառապես իր դրությունը չէ, այլ ընդհանուր կացություն է, որի մեջ գտնվում է գործն Ռուսաստանում,— թե ստեղծել բանվորների այնպիսի վերաբերմունք, որտեղ նրանք աշխատեին այնպես, ինչպես աշխատում էին ճանապարհի կեսին ապրող մուժիկի մոտ,— ոչ թե բաղձանք է, այլ խնդիր, որն անհրաժեշտ է լուծել։ Եվ նրան թվում էր, թե այդ խնդիրը կարելի է վճռել ու պետք է փորձել այդ անել։

Հրաժեշտ տալով կանանց և խոստանալով մնալ ամբողջ վաղվա օրն էլ, որպեսզի միասին ձիերով գնան նայելու պետական անտառում հետաքրքրական փլուզումը, Լևինը քնելուց առաջ մտավ տանտիրոջ առանձնասենյակը՝ վերցնելու բանվորական հարցին վերաբերող գրքերը, որ Սվիյաժսկին խոստացավ նրան։ Սվիյաժսկու կաբինետը հսկայական սենյակ էր, որտեղ կային գրքերով լի պահարաններ ու երկու սեղան՝ մեկը հոծ գրասեղան էր, դրված սենյակի մեջտեղը,

իսկ մյուսը կլոր, որտեղ լամպի շուրջը աստղաձև դարսած էին զանազան լեզուներով թերթերի ու ամսագրերի վերջին համարները։ Գրասեղանի մոտ դրված էր հաշվեսեղանը՝ ոսկե պիտակներով ստորաբաժանած արկղներ՝ տարբեր գործերի համար։

Սվիյաժսկին հանեց գրքերը և նստեց ճոճուն բազկաթոռի մեջ։

— Այդ ի՞նչ եք նայում,— ասաց նա Լևինին, որը կանգնած կլոր սեղանի մոտ, դիտում էր ամսագրերը։— Ա՜խ, հա, այդտեղ մի շատ հետաքրքրարկան հոդված կա,— ասաց Սվիյաժսկին այն ամսագրի մասին, որ Լևինը բռնել էր ձեռքին։— Բանից դուրս է գալիս,— ավելացրեց նա ուրախ աշխուժությամբ,— որ Լեհաստանի բաժանման գլխավոր նախապատճառը բնավ Ֆրիդրիխը չէ։ Բանից դուրս է գալիս...

Եվ նա իրեն հատուկ պարզությամբ համառոտակի պատմեց այդ նոր, շատ կարևոր ու հետաքրքրական հայտնաբերումները։ Չնայած որ Լևինին այժմ ամենից ավելի զբաղեցնում էր տնտեսության հարցը, լսելով տանտիրոջը, նա հարցնում էր իրեն. «Ի՞նչ կա նստած նրա մեջ։ Եվ ինչո՞ւ, ինչո՞ւ նրա համար հետաքրքրական է Լեհաստանի բաժանումը»։ Երբ Սվիյաժսկին վերջացրեց, Լևինն ակամա հարցրեց.— Է՜հ, ուրեմն ի՞նչ։— Բայց ոչինչ չկար։ Հետաքրքրական էր միայն այն, որ «բանից դուրս էր գալիս»։ Սակայն Սվիյաժսկին չբացատրեց ու հարկ չհամարեց բացատրելու, թե ինչո՞ւ դա հետաքրքրական էր իր համար։

— Այո՜, բայց ինձ շատ հետաքրքրեց բարկացկոտ կալվածատերը,— հառաչելով ասաց Լևինը։— Նա խելոք մարդ է և շատ ճիշտ բաներ էր ասում։

— Ա՜խ, թողե՛ք։ Ճորտության մոլի գաղտնի կողմնակից է, ինչպես նրանք ամենքը,— ասաց Սվիյաժսկին։

— Որոնց առաջնորդը դո՛ւք եք...

— Այո՛, բայց ես նրանց առաջնորդում եմ ուրիշ կողմ,— ծիծաղելով ասաց Սվիյաժսկին։

— Ինձ սաստիկ զբաղեցնում է ահա՛ թե ինչ,— ասաց Լևինը։— Նա իրավացի է, որ մեր գործը, այսինքն՝ ռացիոնալ տնտեսության գործը, առաջ չի գնում, որ առաջ է գնում միայն վաշխառուական տնտեսությունը, ինչպես այն սուսլի-

կի մոտ է, կամ ամենապարզ տնտեսությունը։ Ո՞վ է այդ բանում հանցավոր։

— Հասկանալի է՝ մենք ինքներս։ Եվ հետո՝ ճիշտ չէ՛, իրր առաջ չի գնում։ Վասիլչեկովինը գնում է։

— Գործարանը...

— Բայց այսուամենայնիվ՝ ես չգիտեմ, թե ինչն է զարմացնում ձեզ։ Ժողովուրդը կանգնած է թե՛ նյութական, թե՛ բարոյական զարգացման այնպիսի ցածր աստիճանի վրա, որ, ըստ երևույթին, պիտի հակազդի այն բոլորին, ինչը օտար է իրեն։ Եվրոպայում ռացիոնալ տնտեսությունն առաջ է գնում այն պատճառով, որ ժողովուրդը կրթված է։ Հետևաբար, մեզ մոտ էլ պետք է կրթել ժողովրդին,— ահա՛ բոլորը։

— Բայց ինչպե՞ս կրթել ժողովրդին։

— Ժողովրդին կրթելու համար հարկավոր է երեք բան. դպրոցներ, դպրոցներ և դպրոցներ։

— Սակայն դուք ինքներդ ասացիք, որ ժողովուրդը կանգնած է նյութական զարգացման ցածր աստիճանի վրա. ինչո՞վ կարող են օգնել այստեղ դպրոցները։

— Գիտեք, դուք ինձ հիշեցնում եք հիվանդին խորհուրդներ տալու անեկդոտը. «Փորձեցեք լուծողական ընդունել։ Տվել են. ավելի վատացա։ Փորձեցեք տզրուկներ։ Փորձել ենք, ավելի վատացա։ Է՛հ, մնում է միայն աղոթել աստծուն։ Փորձել ենք. ավելի վատացա»։ Այդպես էլ ես և դուք։ Ես ասում եմ քաղաքատնտեսություն, դուք ասում եք՝ ավելի վատ։ Ես ասում եմ սոցիալիզմ՝ ավելի վատ։ Կրթություն՝ ավելի վատ։

— Ինչո՞վ, ինչպե՞ս կօգնեն դպրոցները։

— Նրա մեջ կառաջացնեն ուրիշ պահանջներ։

— Այդ բանը հենց ես երբեք չէի հասկանում,— դառնությամբ առարկեց Լևինը։— Ինչպե՞ս կարող են դպրոցներն օգնել ժողովրդին՝ բարելավելու նրա նյութական կացությունը։ Դուք ասում եք դպրոցները, կրթությունը նրա մեջ կառաջացնեն նոր պահանջներ։ Ավելի վատ, որովհետև նա անկարող կլինի բավարարելու դրանք։ Բայց թե ինչպե՛ս գումարումը, հանումն ու հավատի հանգանակի ուսուցումը պիտի օգնեն նրան բարելավելու իր նյութական կացությունը, դա երբեք չկարողացա հասկանալ։ Երեկ չէ մյուս օրը երեկոյան ես պատահեցի մի կնկա՝ ծծկեր երեխայի հետ ու հարցրի

նրան, թե ո՛ւր է գնում։ Նա ասում է. «Գնացել էի տատմոր մոտ, երեխան ծղրտում է, տարա որ բժշկի»։ Ես հարցրի. «Ինչպես է տատմայրը բժշկում ծղրտացը»։— «Երեխին տանում է հավաքուն, նստեցնում է թառին ու ինչ-որ բաներ է ասում»։

— Ա՛յ, տեսնո՞ւմ եք, ինքներդ եք ասում։ Որպեսզի նա ծղրտացող երեխային չտանի հավերի թառի վրա բժշկելու, դրա համար հարկավոր է...— ուրախ ժպտալով ասաց Սվիյաժսկին։

— Ախ, ո՛չ,— սրտնեղությամբ ասաց Լևինը,— ինձ համար այդ բժշկությունը նման է դպրոցներով ժողովրդին բժշկելուն։ Ժողովուրդը չքավոր է ու անկիրթ, դա մենք տեսնում ենք ճիշտ այնպես, ինչպես կնիկը տեսնում է ծղրտացողին, որովհետև երեխան ճչում է։ Բայց թե ինչո՛ւ չքավորության և անկիրթության այդ դժբախտությանը պիտի օգնեն դպրոցները. դա նույնքան անհասկանալի է, որքան անհասկանալի է, թե ինչո՛ւ ծղրտոցին պիտի օգնեն հավերը թառի վրա։ Պետք է օգնել այն բանին, որի պատճառով նա աղքատ է։

— Այդ բանում դուք, համենայնդեպս, համամիտ եք Սպենսերին, որին այնպես չեք սիրում. նա նույնպես ասում է, թե կրթությունը կարող է լինել կյանքի հարմարության ու մեծ բարեկեցության, հաճախակի լվացումների հետևանք, ինչպես նա է ասում, բայց ոչ կարդալ և հաշվել իմանալու արդյունք...

— Ահա՛, ես շատ ուրախ եմ կամ, ընդհակառակը, շատ դժգոհ, որ համամիտ դուրս եկա Սպենսերին. միայն դա ես վաղուց գիտեմ։ Դպրոցները չեն օգնի, այլ կօգնեն տնտեսական այն կարգերը, որոնց շնորհիվ ժողովուրդը կլինի ավելի հարուստ, կունենա ավելի ազատ ժամեր, և այն ժամանակ էլ կլինեն դպրոցներ։

— Բայց ամբողջ Եվրոպայում այժմ դպրոցները պարտադիր են։

— Հապա ինչպե՞ս է, որ այդ բանում դուք ինքներդ համաձայն եք Սպենսերին,— հարցրեց Լևինը։

Բայց Սվիյաժսկու աչքերում երևաց վախի արտահայտություն և նա ժպտալով ասաց.

— Ոչ, այդ ծղրտոցը հիանալի է։ Մի՞թե դուք, ինքներդ եք լսել այդ։

Լևինը տեսավ, որ այդպես էլ չի գտնելու այդ մարդու կյանքի և նրա մտքերի միջև եղած կապը։ Ըստ երևույթին, նրա համար բոլորովին միևնույն էր, թե ուր կհասցնի իր դատողությունը, նրան պետք էր միայն դատողության պրոցեսը։ Եվ նրա համար անախորժ էր, երբ դատողության պրոցեսը նրան բերում, մտցնում էր փակուղի։ Ա՛յդ բանը միայն չէր սիրում նա և խուսափում էր, փոխելով խոսակցությունը որևէ հաճելի-ուրախ բանի։

Այդ օրվա բոլոր տպավորությունները, սկսած ճանապարհի կեսին պատահած մուժիկից, որը կարծես հանդիսանում էր այսօրվա բոլոր տպավորությունների ու մտքերի գլխավոր հիմքը, սաստիկ հուզեցին Լևինին։ Այդ համակրելի Սվիյաժսկին, որ իր մտքերն իրեն էր պահում՝ հասարակական գործածության համար միայն և որը, հավանորեն, ուներ կյանքի ինչ-որ ուրիշ՝ Լևինի համար գաղտնի հիմունքներ,— միաժամանակ նա, ամբոխի հետ, որի անունը լեգիոն է, ղեկավարում էր հասարակական կարծիքը Լևինին խորթ մտքերի միջոցով, այդ գաղաղած կալվածատերը, միանգամայն իրավացի կյանքից շորթած իր դատողություններով, բայց անիրավացի իր գազազանքով՝ մի ամբողջ դասակարգի և Ռուսաստանի ամենալավ դասակարգի հանդեպ. սեփական զժգոհությունն իր գործունեությունից և աղոտ հույսը, թե կարելի է գտնել այդ բոլորն ուղղելու միջոց,— այս ամենը ձուլվում միանում էր իրար ներքին տագնապի և մոտավոր լուծման սպասումի զգացողության մեջ։

Մնալով իրեն հատկացրած սենյակում, պառկած զսպանակավոր ներքնակի վրա, որը ամեն շարժման ժամանակ անսպասելիորեն վեր է գցում նրա ձեռքերն ու ոտքերը, Լևինը երկար ժամանակ չէր կարողանում քնել։ Սվիյաժսկու հետ ունեցած իր ո՛չ մի զրույցը չէր հետաքրքրում Լևինին, թեպետ նա ասաց շատ խելոք բաներ. բայց կալվածատիրոջ փաստարկումները պահանջում էին քննարկում։ Լևինն ակամա հիշում էր նրա բոլոր խոսքերը և ուղղում էր երևակայության մեջ իր տված պատասխանները նրան։

«Այո՛, ես պետք է ասեի նրան. դուք ասում եք, թե մեր տնտեսությունն առաջ չի գնում այն պատճառով, որ մուժիկն ատում է բոլոր կատարելագործությունները և որ դրանք պետք է մտցնել իշխանության ուժով. բայց եթե տնտեսությունը բնավ առաջ չգնար առանց այդ կատարելագործությունների, դուք իրավացի կլինեիք. սակայն տնտեսությունն առաջ է գնում միայն այնտեղ, որտեղ բանվորը գործում է իր սովորույթների համեմատ, ինչպես ծերունու մոտ՝ կես ճանապարհին։ Ձեր և մեր ընդհանուր զժգոհությունը տնտեսությունից ապացուցում է, որ հանցավոր ենք մենք կամ բանվորները։ Վաղուց արդեն մենք հեղաբեկում ենք մեր գիտցածի պես, եվրոպականի պես, առանց մտածելու բանուժի հատկությունների մասին։ Փորձենք բանուժը համարել ո՛չ իդեալական բանվորական ուժ, այլ ռուսական մուժիկին իր բնազդներով և դրա համեմատ կառուցենք տնտեսությունը։ Երևակայեցեք, պետք է ասեի ես նրան, որ ձեր տնտեսությունը առաջ է տարվում այնպես, ինչպես ծերունու մոտ, որ դուք գտել եք միջոց՝ շահագրգռելու բանվորներին աշխատանքի հաջողության մեջ ու գտել եք նույն ոսկե միջուկը կատարելագործությունների բնադավառում, որը նրանք ընդունում են, և դուք, առանց ուժասպառ անելու հողը, կստանաք առաջվանի հանդեպ կրկնակի, եռակի ավելի։ Բաժանեցեք երկուսի, կեսը տվեք բանուժին. այն տարբերությունը, որ կմնա ձեզ, կլինի ավելի, բանուժին էլ կհասնի ավելի։ Իսկ այդ անելու համար պետք է իջեցնել տնտեսության մակարդակը և շահագրգռել բանվորներին տնտեսության հաջողության մեջ։ Թե ինչպե՛ս պետք է անել այդ, դա արդեն մանրամասնությունների խնդիր է. բայց անկասկած դա հնարավոր է»։

Այդ միտքը խորապես հուզեց Լևինին։ Գիշերվա կեսը նա չքնեց, կշռադատելով այդ միտքը կենսագործելու մանրամասները։ Նա մտադիր չէր տուն վերադառնալ հետևյալ օրը, բայց այժմ վճռեց, որ վաղ առավոտյան կգնա տուն։ Բացի այդ՝ քնին իր հագուստի բացվածքով նրա մեջ առաջ էր բերում այնպիսի զգացում, որ նման էր վատ վարմունքի համար զղջալու և ամոթի զգացողության։ Իսկ որ գլխավորն է՝ նա պետք է գնար առանց հետաձգելու, որովհետև պետք էր մուժիկներին առաջարկել նոր նախագիծը, նախքան կսկսվեր

աշնանացանը, և որովհետև աշնանացանը պետք էր սերմել նոր հիմունքներով։ Նա վճռեց հեղաշրջել առաջվա ամբողջ տնտեսությունը։

XXIX

Լևինի ծրագրի իրագործման հետ կապված էին շատ դժվարություններ. բայց նա պայքարում էր, որքան ուժ ուներ, ու հասավ թեպետև ո՛չ այն բանին, ինչ կամենում էր, այլ այն բանին, ինչ կարող էր, այսինքն՝ առանց իրեն խաբելու հավատալ, որ այդ գործն արժանի է աշխատանքի։ Գլխավոր դժվարություններից մեկն այն էր, որ տնտեսությունն արդեն առաջ էր գնում, որ չէր կարելի կանգնեցնել ամեն ինչ և սկսել սկզբից, այլ պետք էր շարժընթաց վերասարքավորել մեքենան։

Երբ նա հենց նույն գիշերը եկավ տուն, հայտնեց կառավարչին իր ծրագրերը, կառավարիչն ակնթարթ բավականությամբ համաձայնեց նրա ճառի այն մասին, որը ցույց էր տալիս, թե մինչև այժմվա բոլոր ձեռնարկումները դատարկ և անօգուտ բան էին։ Կառավարիչն ասաց, որ ինքը վաղուց էր ասում այդ, բայց որ իրեն չէին ուզում լսել։ Ինչ վերաբերում էր Լևինի առաջարկին՝ մասնակցել որպես փայատեր բոլոր բանվորների հետ տնտեսության բոլոր ձեռնարկություններին, կառավարիչն այդ առթիվ խորապես տխրեց և որոշակի ո՛չ մի կարծիք չհայտնեց, այլ անմիջապես խոսք արեց, թե անհրաժեշտ է վաղը կրել հաճարի մնացած խրձերը և մարդ ուղարկել կրկնահերկի համար, ուստի Լևինն զգաց, որ այժմ դրա ժամանակը չէ։

Խոսելով մուժիկների հետ դրա մասին և հողերը նոր պայմաններով նրանց տալու առաջարկ անելով, Լևինը նույնպես դեմ էր ընկնում այն գլխավոր դժվարությանը, թե նրանք սաստիկ զբաղված են օրվա ընթացիկ աշխատանքով և ժամանակ չունեն կշռելու ձեռնարկության օգուտներն ու վնասները։

Միամիտ մուժիկ անասնապահ Իվանը, թվում էր, թե լիովին հասկացավ Լևինի առաջարկը՝ իր ընտանիքով մասնակցելու անասնանոցի տված օգուտին և միանգամայն համակրում էր այդ ձեռնարկությանը։ Բայց երբ Լևինը ներշնչում էր նրան

ապագա օգուտները, Իվանի դեմքին արտահայտվում էր տագնապ և ափսոսանք, որ չի կարող բոլորը լսել մինչև վերջ, և նա շտապ գտնում էր իր համար որևէ անհետաձգելի գործ կամ վերցնում էր եղանը՝ դուրս գցելու համար խոտը գոմի ցանկապակից, կամ ջուր էր լցնում, կամ մաքրում գոմաղբը։

Մյուս դժվարությունը գյուղացիների այն անհաղթահարելի անվստահությունն էր, թե կալվածատերը կարող է ունենալ գյուղացիներից որքան կարելի է պոկելու ցանկությունից զատ, որևէ այլ նպատակ։ Նրանք հաստատ համոզված էին, որ նրա իսկական նպատակը (ինչ էլ ասի նա իրենց) կլինի միշտ այն, ինչը նա երբեք չի ասի իրենց։ Եվ նրանք իրենք էլ արտահայտվելով, ասում էին շատ բան, բայց երբեք չէին ասում այն, ինչը կազմում էր նրանց իսկական նպատակը։ Բացի դրանից (Լևինն զգում էր, որ իրավացի էր մաղձոտ կալվածատերը), գյուղացիներն ամեն մի համաձայնության համար իբրև առաջին և անխուսափելի պայման դնում էին այն, որ չստիպեն իրենց գործածել տնտեսության նոր եղանակներ ու նոր գործիքներ։ Նրանք համաձայն էին, որ գութանը վարում է ավելի լավ, որ արագահերկ մեքենան աշխատում է ավելի հաջող, բայց նրանք գտնում էին հազար ու մի պատճառ, թե ինչո՛ւ չի կարելի գործածել ո՛չ մեկը, ո՛չ մյուսը, և թեպետ Լևինը համոզված էր, որ պետք է իջեցնել տնտեսության մակարդակը, բայց նա ափսոսում էր հրաժարվել այն կատարելագործություններից, որոնց օգուտն այնքան բացահայտ էր։ Սակայն չնայած այս բոլոր դժվարություններին, նա հասավ իր նպատակին, և աշնան դեմ գործը հաջող դնաց, կամ համենայնդեպս՝ նրան այդպես էր թվում։

Սկզբում Լևինն ուզում էր ամբողջ տնտեսությունը, ինչպես կար, հանձնել մուժիկներին, բանվորներին ու կառավարչին՝ ընկերական նոր պայմաններով, բայց շատ շուտով համոզվեց, որ դա հնարավոր չէ, և վճռեց ստորաբաժանել տնտեսությունը։ Անասնանոցը, պարտեզը, բանջարանոցը, խոտհարքները, դաշտերը, զատված մի քանի բաժինների, պետք է կազմեին առանձին հոդվածներ։ Միամիտ անասնապահ Իվանը, որ, ինչպես թվում էր Լևինին, ամենքից ավելի լավ էր հասկացել գործը, դարձավ անասնանոցի մասնակիցը, կազմելով իր համար արտել, առավելապես իր ընտանիքի անդամներից։ Հեռավոր

դաշտը, որ ութ տարի անմշակ ընկած էր որպես արոտատեղի, վերցրին նոր համայնական հիմունքներով մուժիկների վեց ընտանիքներ՝ խելացի ատաղձագործ Ֆյոդոր Ռեզունովի օգնությամբ, իսկ մուժիկ Շուրաևը նույն պայմաններով վերցրեց բոլոր բանջարանոցները։ Մնացածը դեռ առաջվա պես էր, բայց այս երեք հոդվածները կազմեցին սկիզբը նոր կառուցվածքի և ըստ ամենայնի հետաքրքրում էին Լևինին։

Ճիշտ է, անասնանոցում գործն այժմ ավելի լավ չէր գնում, քան առաջ, և Իվանը սաստիկ հակազդում էր կովերի տաք շենքին ու կաբազին, պնդելով, իբր կովը ցուրտ տեղում կպահանջի ավելի քիչ կեր և իբր հում-սերի յուղն ավելի շահավետ է, ու ոռճիկ էր պահանջում, ինչպես առաջ, և բնավ չէր հետաքրքրվում այն բանով, որ իր ստացած դրամը ո՛չ թե ոռճիկ է, այլ նախօրոք տրված իր բաժին շահը։

Ճիշտ է, որ Ֆյոդոր Ռեզունովի ընկերությունը գութաններով կրկնահերկ չէր կատարել ցանքսի համար, ինչպես պայմանավորված էր, արդարանալով, իբր ժամանակը կարճ է։ Ճիշտ է, այս ընկերության մուժիկները թեպետև պայմանավորվել էին այդ գործը տանել նոր հիմունքներով, բայց այդ հողը նրանք անվանում էին ո՛չ թե հանրային, այլ կիսարար, և հաճախ թե՛ այդ արտելի մուժիկները, թե՛ ինքը Ռեզունովն ասում էին Լևինին. «Եթե դրամ ստանայիք հողի համար, թե՛ ձեզ համար հանգիստ կլիներ, թե՛ մենք աղատ կլիներինք»։ Բացի դրանից, այդ մուժիկները զանազան պատրվակներով շարունակ հետաձգում էին իրենց հետ պայմանավորված անասնանոցի և հացաբույսերի կալսարանի կառուցումն այդ հողամասում ու ձգձգեցին մինչև ձմեռ։

Ճիշտ է, որ Շուրաևն իր վերցրած բանջարանոցներն ուզում էր մաս-մաս բաժանել մուժիկներին։ Նա ըստ երևույթին բոլորովին հակառակ և, թվում էր, դիտմամբ հակառակ կերպով էր հասկացել այն պայմանները, որոնցով տրված էր նրան հողը։

Ճիշտ է, հաճախ խոսելով մուժիկների հետ և բացատրելով նրանց ձեռնարկության ամբողջ շահեկանությունը, Լևին զգում էր, որ մուժիկները լսում են իր ձայնի գեղգեղումը, բայց գիտեն հատատ, որ ինչ էլ ասի ինքը, նրանք խաբել չեն տա իրենց։ Նա առանձնապես զգում էր այդ բանը, երբ խոսում էր

մուժիկներից ամենախելացի՝ Ռեզունովի հետ, և Ռեզունովի աչքերի մեջ նկատում էր մի խաղ, որը պարզ ցույց էր տալիս թե՛ ծաղր Լևինի հանդեպ, թե՛ անկեղծ վստահություն, որ եթե մեկն ու մեկը խաբված լինի, համենայն դեպս ո՛չ ինքը՝ Ռեզունովը։

Բայց չնայած այս բոլորին, Լևինը կարծում էր, որ գործն առաջ էր գնում և որ հաշիվները խիստ պահելով ու պնդելով իր ասածի վրա, կապացուցի նրանց ապագայում այդ տնտեսակարգի օգուտները, և որ այն ժամանակ գործն առաջ կգնա ինքն իրեն։

Այս գործերը, Լևինի ձեռքին մնացած տնտեսության հետ միասին իր գրքի վրա թափած կաբինետային աշխատանքի հետ միատեղ, այնպես էին կլանում նրա ամբողջ ամառը, որ նա համարյա որսի չէր գնում։ Օգոստոսի վերջին նա իմացավ թամբը ետ բերող մարդուց, որ Օբլոնսկիները գնացել են Մոսկվա։ Նա զգում էր, որ չպատասխանելով Դարիա Ալեքսանդրովնայի նամակին, իր անքաղաքավարությամբ, որի մասին չէր կարող հիշել առանց ամոթի զգացման, այրեց իր բոլոր նավերը և այլևս երբեք չի գնա նրանց մոտ։ Ճիշտ այդպես վարվեց նա և Սվիյաժսկու հետ, հեռանալով առանց հրաժեշտի։ Բայց նա նրանց մոտ էլ այլևս երբեք չի գնա։ Այժմ դա նրա համար միևնույնն էր։ Իր տնտեսության նոր կառուցման գործն այնպես էր զբաղեցնում նրան, ինչպես չէր զբաղեցրել երբևիցե իր կյանքում ուրիշ ո՛չ մի բան։ Նա կարդաց Սվիյաժսկու տված գրքերը և բերել տալով այն, ինչ ինքը չուներ, կարդաց այդ առարկային վերաբերող թե՛ քաղաքատնտեսական, թե՛ սոցիալիստական գրքերը, բայց, ինչպես և սպասում էր, չգտավ նրանց մեջ այն, ինչ կապ ուներ իր ձեռնարկած գործի հետ։ Քաղաքատնտեսական գրքերում, օրինակ, Միլլի մեջ, որ նա սկսեց ուսումնասիրել առաջին հերթին մեծ եռանդով և հուսալով, թե ամեն րոպե կարող է գտնել իրեն հետաքրքրող հարցերի լուծումը, նա գտավ եվրոպական տնտեսության դրությունից հանած օրենքները, բայց ո՛չ մի կերպ չէր տեսնում, թե ինչո՛ւ այդ օրենքները, որ կիրառելի չեն Ռուսաստանում, պետք է լինեն ընդհանուր։ Նույն բանն էր նա տեսնում նաև սոցիալիստական գրքերում. դրանք կամ երևակայության հիանալի պատուղներ էին, բայց անկիրառելի, որոնցով հրա-

պուրվում էր դեռ ուսանող ժամանակ, կամ այն դրության ուղղումներ, կարկատաններ էին, որի մեջ դրված էր Եվրոպան, և որի հետ ընդհանուր ոչինչ չուներ երկրագործությունը Ռուսաստանում։ Քաղաքատնտեսությունն ասում էր, թե այն օրենքները, որոնցով զարգացել ու զարգանում էր Եվրոպայի հարստությունը, ընդհանրական և անիերկբա օրենքներ են։ Սոցիալիստական ուսմունքն ասում էր, որ այդ օրենքներով զարգացումը տանում է դեպի կորուստ։ Եվ թե՛ մեկը, թե՛ մյուսը ո՛չ միայն պատասխան, այլև փոքրիկ ակնարկ անգամ չէր տալիս այն մասին, թե ի՛նչ պիտի անեն Լենինը, և բոլոր ռուս մուժիկներն ու երկրագործները՝ իրենց միլիոնավոր աշխատող ձեռքերի և դեսյատիններ հետ, որպեսզի ավելի արդյունավետ լինեն դրանք ընդհանուր բարեկեցության համար։

Մի անգամ արդեն ձեռք զարկելով այդ գործին, նա բարեխղճաբար կարդում էր իր առարկային վերաբերող բոլոր նյութերն ու մտադրվում էր աշնանը գնալ արտասահման՝ ուսումնասիրելու այդ գործը նաև տեղում, որպեսզի այս հարցի կապակցությամբ այլևս իր հետ չպատահի այն, ինչ այնքան հաճախ պատահում էր զանազան հարցերի առնչությամբ։ Երբեմն, հենց որ նա սկսում էր հասկանալ զրուցակցի միտքը և նկարագրել իրենը, հանկարծ ասում էին նրան. «Իսկ Կաուֆմա՞նը, իսկ Ջո՞նսը, իսկ Դյուբուա՞ն, իսկ Միչելի՞ն։ Դուք չեք կարդացել դրանց։ Կարդացեք. նրանք մշակել են այդ հարցը»։

Նա այժմ պարզ տեսնում էր, որ Կաուֆմանն ու Միչելին իրեն ասելու բան չունեն։ Նա գիտեր, թե ի՛նչ է ուզում ինքը։ Նա տեսնում էր, որ Ռուսաստանն ունի հիանալի հողեր, հիանալի բանվորներ և որ հայտնի դեպքերում, ինչպես ճանապարհի կեսին այն մուժիկի մոտ, բանվորները ու հողն արտադրում են շատ, իսկ շատ դեպքերում, երբ եվրոպականի պես է գործադրվում կապիտալը, արտադրում են քիչ. և դա առաջանում է միայն այն բանից, որ բանվորներն ուզում են աշխատել ու աշխատում են լավ իրենց հատուկ եղանակով միայն, և որ այդ հակազդեցությունը պատահական չէ, այլ մշտական է ու իր հիմքերն ունի ժողովրդի ոգու մեջ։ Նա կարծում էր, թե ռուս ժողովուրդը, որ կոչված էր բնակեցնելու և մշակելու հսկայական ազատ տարածություններ, գիտակցաբար հետևում էր դրա համար հարկավոր եղանակներին մինչև

այնքան ժամանակ, քանի դեռ բոլոր հողերը բռնված չեն, և այդ եղանակները բնավ այնպես վատ չեն, ինչպես կարծում են սովորաբար։ Եվ նա ուզում էր այդ բանն ապացուցել տեսականորեն՝ իր գրքում, ու գործնականապես՝ իր տնտեսության մեջ։

XXX

Սեպտեմբերի վերջին շինափայտ տարվեց արտելին հատկացրած հողամասում անասնանոց կառուցելու համար, ու ծախվեց կովերից ստացված յուղը, և բաժանվեց օգուտը։ Տընտեսության մեջ գործնականում աշխատանքը գնում էր հրաշալի կամ գոնե այդպես էր թվում Լենինին։ Ամբողջ գործը տեսականորեն պարզաբանելու և իր աշխատասիրությունը վերջացնելու համար, որը Լենինի տենչերի համեմատ պետք է ո՛չ միայն հեղաշրջում առաջացներ քաղաքատնտեսության մեջ, այլև բոլորովին ոչնչացներ այդ գիտությունը և հիմք դներ նոր գիտության՝ ժողովրդի վերաբերմունքը հողին, պետք էր միայն գնալ արտասահման ու տեղում ուսումնասիրել այն բոլորը, ինչ արված էր այս ուղղությամբ և պետք էր գտնել միայն համոզեցուցիչ ապացույցներ, թե այն բոլորը, ինչ արված է այնտեղ՝ ա՛յն չէ, ինչ հարկավոր է։ Լենինն սպասում էր միայն ցորենը կրելուն, որ դրամ ստանա ու մեկնի արտասահման։ Բայց սկսվեցին անձրևներ, թույլ չտալով հավաքելու դաշտում մնացած հացաբույսերն ու կարտոֆիլը. դադարեցին բոլոր աշխատանքները, նույնիսկ ցորենի տեղափոխումը։ Ճանապարհներին անանցանելի ցեխ էր, հեղեղը տարավ երկու ջրաղաց, և եղանակն ավելի ու ավելի վատանում էր։

Սեպտեմբերի 30-ին առավոտվանից երևաց արևը, և հուսալով, որ լավ եղանակ կլինի, Լենինն սկսեց վճռականապես պատրաստվել ուղևորվելու։ Նա հրամայեց ցորենը լցնել տոպրակների մեջ, կառավարչին ուղարկեց վաճառականի մոտ դրամ բերելու, իսկ ինքը գնաց տնտեսության վերաբերյալ վերջին կարգադրություններն անելու՝ մեկնելուց առաջ։

Այնուամենայնիվ կատարելով բոլոր գործերը, թրջված այն կալյակներից, որոնք կաշվե բաճկոնի վրայից հոսում էին մերթ վկի ետևը, մերթ կոշիկների ճաքերի մեջ, բայց ամենակայ-

տան ու խնդահույզ տրամադրությամբ Լևինը Երեկոյան դեմ վերադարձավ տուն։ Ծղանակը երեկոյան դեմ ավելի ևս վատացավ։ մանրակարկուտն այնպես անողոքաբար էր ծեծկում ամբողջապես թրջված, ականջներն ու գլուխը ցնցող ձիուն, որ նա գնում էր կողքանց, բայց Լևինն իրեն լավ էր զգում կնգուդի մեջ և ուրախ նայում էր շուրջը՝ մերթ պղտոր առվակներին, որ վազում էին աղուրներով, մերթ մերկացած յուրաքանչյուր հյուղից կախված կաթիլներին, մերթ չհալված մանրակարկտի սպիտակ բծին՝ կամրջի տախտակների վրա, մերթ ծփնիթ հյութեղ, դեռ մատ տերևներին, որ թափվել ու թանձր շերտով փռվել էին մերկ ծառի շուրջը։ Չնայած շրջապատի բնության մռայլությանը, նա զգում էր իրեն առանձնապես խնդահույզ։ Հեռավոր գյուղում մուժիկների հետ խոսակցությունները ցույց էին տալիս, որ նրանք սկսում էին վարժվել իր նոր հարաբերություններին։ Պանդոկապետ ծերունին, որի մոտ նա գնաց շորանալու համար, հայտնապես հավանություն էր տալիս Լևինի ծրագրին և ինքն առաջարկում էր մտնել անատոմ գնելու ընկերության մեջ։

«Պետք է միայն համառորեն գնալ դեպի նպատակը և ես կհասնեմ իմիս,— մտածում էր Լևինը,— արժե դրա համար աշխատել և տքնել։ Դա իմ անձնական գործը չէ, այստեղ հարցը վերաբերում է ընդհանուրի բարօրությանը։ Բոլորովին պետք է փոխվի ամբողջ տնտեսությունը, որ գլխավորն է՝ ամբողջ ժողովրդի դրությունը։ Զքավորության փոխարեն՝ ընդհանուր հարստություն, լիություն. թշնամանքի փոխարեն՝ համաձայնություն և շահերի համերաշխություն։ Մի խոսքով, հեղափոխություն առանց արյան, բայց մեծագույն հեղափոխություն, սկզբում մեր գավառի մի փոքրիկ շրջանում, ապա նահանգի, Ռուսաստանի, ամբողջ աշխարհի։ Որովհետև արդարացի միտքը չի կարող պտղաբեր չմնալ։ Այո՛, դա մի այնպիսի նպատակ է, որի համար արժե աշխատել։ Եվ այն, որ դա ես եմ՝ Կոստյա Լևինը, նույն այն մարդը, որ պարահանդես գնաց սև փողկապով և որին մերժեց Շչերբացկայան և որն իր համար նույնպես խեղճ ու ոչնչություն է, դա ոչինչ չի ապացուցում։ Ես հավատացած եմ, որ Ֆրանկլինն իրեն նույնպես զգում էր ոչնչություն և նույնպես վստահ չէր իր վրա, հիշելով իրեն իր ողջ էությամբ։ Դա ոչինչ չի նշանակում։ Հավանորեն,

նա ևս ուներ իր Ագաֆիա Միխայլովնան, որին վստահում էր իր ծրագրերը»։

Այս մտքերով Լևինն արդեն մթության մեջ մոտեցավ տանը։

Կառավարիչը, որ գնացել էր վաճառականի մոտ, եկավ ու բերեց ցորենի արժեքի մի մասը։ Պայմանագիրը պանդոկապետի հետ կնքվել էր, և ճանապարհին կառավարիչն իմացել էր, որ հացաբույսերն ամեն տեղ մնացել էին դաշտում, այնպես որ իր չհավաքած 160 բարդը ոչինչ էր այն բանի համեմատությամբ, ինչ թողել էին ուրիշները։

Ճաշելուց հետո Լևինը նստեց, սովորականի պես գիրքը ձեռքին՝ բազկաթոռի մեջ և կարդալով, շարունակում էր նույն գրքի առնչությամբ մտածել իր առաջիկա ուղևորության մասին։ Այսօր նրան առանձնապես պարզ պատկերանում էր իր գործի ամբողջ նշանակությունը, և իրենք իրենց կազմվում էին նրա ուղեղի մեջ ամբողջ հատվածներ, որ արտահայտում էին նրա մտքի էությունը։ «Դա հարկավոր է գրի առնել,— մտածեց նա։ — Դա պետք է կազմի այն կարճ ներածությունը, որ ավելորդ էի համարում առաջ»։ Նա կանչեց, որպեսզի գնա գրասենյակի մոտ, և Լասկան, որ պառկած էր նրա ոտքերի մոտ, ձգվելով նույնպես վեր կացավ ու նայելով նրան կարծես հարցնում էր՝ ո՛ւր գնալ։ Գրելու ժամանակ չկար, որովհետև եկան պետերը՝ կարգագրի, և Լևինը դուրս գնաց նրանց մոտ նախասենյակ։

Կարգագրից հետո, այսինքն՝ վաղվա օրվա աշխատանքների վերաբերյալ կարգադրություններն անելուց և իր հետ գործ ունեցող մուժիկներին ընդունելուց հետո, Լևինը գնաց առանձնասենյակ ու նստեց աշխատելու։ Լասկան պառկեց սեղանի տակ, Ագաֆիա Միխայլովնան գուլպան ձեռքին՝ նստեց իր տեղը։

Մի որոշ ժամանակ գրելուց հետո Լևինը հանկարծ արտակարգ հստակությամբ մտաբերեց Կիտիին, նրա մերժումը և վերջին հանդիպումը։ Նա վեր կացավ ու սկսեց քայլել սենյակում։

— Էհ, նեղվում եք, ձանձրանում եք,— ասաց նրան Ագաֆիա Միխայլովնան։ — Ա՜յ, ինչի՞ եք նստել տանը, գնացեք տաք ջրեր, քանի որ պատրաստվել եք։

— Վաղը չէ, մյուս օրը գնում եմ արդեն, Ագաֆիա Միխայլովնա։ Պետք է գործը վերջացնել։

— Ախար ի՞նչ գործ ունեք դուք։ Առանց էն էլ հո քիչ բարություն չեք արել մուժիկներին։ Հրեն, բոլորն ասում են. ձեր պարոնը դրա համար շնորհ կստանա ցարից։ Ձարմանք բան. դուք ինչո՞ւ պիտի հոգ տանեք մուժիկների մասին։

— Ես ո՞չ թե նրանց մասին եմ հոգ տանում, ես ի՛նձ համար եմ անում։

Ագաֆիա Միխայլովնան գիտեր Լևինի տնտեսական ծրագրերի ամբողջ մանրամասները։ Լևինը հաճախ բոլոր նրբություններով պատմում էր նրան իր մտքերը և շատ անգամ վիճում էր նրա հետ ու չէր համաձայնվում նրա բացատրություններին։ Բայց այժմ Ագաֆիա Միխայլովնան բոլորովին այլ կերպ հասկացավ այն, ինչ ասաց Լևինը։

— Հայտնի բան է, որ մարդ ամենից ավելի պիտի մտածի իր հոգու մասին,— ասաց պառավը հառաչելով։ — Ա՜յ, Պարֆեն Դենիսիչը՝ շատ էլ անզրագետ էր, բայց այնպես մեռավ, որ երնեկ ամեն մարդ այդպես մեռնի,— ասաց նա նորերս մեռած տան սպասավորի մասին։ — Հաղորդեցին, օծեցին։

— Ես դրա մասին չեմ ասում,— ասաց Լևինը։— Ես ասում եմ, որ անում եմ իմ օգտի համար։ Ինձ ավելի ձեռնտու է, երբ մուժիկները լավ են աշխատում։

— Ի՞նչ կուզեք արեք, եթե նա ծույլ է, վեր կընկնի տեղում՝ մեջքը կոտրածի պես։ Թե որ խիղճ կա, կաշխատի. իսկ թե չկա, բան դուրս չի գա։

— Բայց չէ՞ որ դուք ինքներդ եք ասում, որ Իվանն սկսել է ավելի լավ խնամել անասունը։

— Ես մի բան եմ ասում,— պատասխանեց Ագաֆիա Միխայլովնան, հայտնապես ո՞չ պատահաբար, այլ մտքի խիստ հետևողականությամբ.— պետք է ամուսնանաք դուք, ահա թե ինչ։

Նրան վշտացրեց ու վիրավորեց Ագաֆիա Միխայլովնայի հիշեցումն այն բանի, որի մասին հենց նոր մտածում էր ինքը։ Լևինը խոժոռվեց և չպատասխանելով նրան, նորից նստեց իր աշխատանքին, կրկնելով ինքն իր մեջ այն բոլորը, ինչ մտածում էր այդ աշխատության նշանակության մասին։ Երբեմն միայն նա ականջ էր դնում լռության մեջ Ագաֆիա Միխայլովնայի շյուղերի ձայնին և մտաբերում էր այն, ինչը չէր ուզում մտաբերել ու նորից կնճռոտվում էր։

Ժամը իններին լսվեց զանգակի ձայն և կառքի խուլ ճռճում ցեխերի մեջ։

— Ա՜յ, ահա ձեզ մոտ հյուրեր եկան. չեք ձանձրանա,— ասաց Ագաֆիա Միխայլովնան, վեր կենալով ու դիմելով դեպի դուռը, բայց Լևինն առաջ անցավ նրանից։ Նրա աշխատանքն այժմ առաջ չէր գնում, և նա ուրախ կլիներ, ով էլ լիներ եկող հյուրը։

XXXI

Վազելով ցած մինչև սանդուղքի կեսը, Լևինը լսեց նախասենյակում իրեն ծանոթ հազի ձայն. նա այն պարզ չլսեց իր քայլերի ձայնի պատճառով և հույս ուներ, որ սխալվեց. բայց տեսավ նաև երկար, ոսկրոտ, ծանոթ ֆիգուրը և թվում էր, թե արդեն չի կարելի սխալվել, սակայն, տակավին հույս ուներ, որ ինքը սխալվում է և որ այդ երկարահասակ, մուշտակը հանող ու հաղացող մարդը Նիկոլայ եղբայրը չէ։

Լևինը սիրում էր իր եղբորը, բայց նրա հետ միասին լինելը միշտ տանջանք էր։ Իսկ այժմ, երբ Լևինը գտնվում էր անորոշ, խառնաշփոթ դրության մեջ իր գլուխն եկած մտքի և Ագաֆիա Միխայլովնայի հիշեցման ազդեցության տակ, նրան առանձնապես ծանր էր թվում առաջիկա տեսակցությունը եղբոր հետ։ Փոխանակ ուրախ, առողջ, օտար հյուրի, որը հույս ուներ Լևինը, կզբաղեցներ իրեն իր հոգեկան ներկա անորոշ կացության մեջ, նա պետք է տեսնվեր եղբոր հետ, որը հասկանում է նրան ամբողջովին, որը կհարուցի նրա մեջ ամենամտերմական մտքեր, կստիպի նրան արտահայտվել լիովին։ Իսկ նա չէր ուզում այդ բանը։

Ինքն իր վրա բարկանալով այդ զզվելի զգացման համար, Լևինը վազեց-իջավ նախասենյակ։ Եվ հենց որ մուտիկից տեսավ եղբորը, անմիջապես չքացավ անձնական հիասթափության այդ զգացումը, տեղի տալով խղճահարության։ Նիկոլայ եղբայրն իր նիհարությամբ ու հիվանդությամբ սարսափելի էր առաջ, իսկ այժմ ավելի էր նիհարել, ավելի ուժասպառ էր եղել։ Դա կաշվով պատած կմախք էր։

Նա կանգնել էր նախասենյակում, ցնցելով երկար, լղար

վիզը ու պոկելով նրա վրայից շարֆը, և տարօրինակ խղճալի կերպով ժպտում էր։ Տեսնելով այդ ժպիտը խոնարհ ու հեզ, Լևինն զգաց, որ ցնցումները սեղմում են կոկորդը։

— Ահա ես եկա քեզ մոտ,— ասաց Նիկոլայը խուլ ձայնով, ո՛չ մի վայրկյան աչքերը չհեռացնելով եղբոր դեմքից։ — Ես վաղուց էի ուզում, բայց լավ չէի զգում ինձ։ Իսկ այժմ կազդուրվել եմ շատ,— ասում էր նա, շփելով մորուքն իր մեծ նիհար ափերով։

— Այո՛, այո՛,— պատասխանեց Լևինը։ Եվ նա սոսկաց ավելի, երբ համբուրվելիս զգաց իր շրթունքներով եղբոր մարմնի շորությունը և մոտիկից տեսավ նրա մեծ, տարօրինակ կերպով շողացող աչքերը։

Մի քանի շաբաթ դրանից առաջ Կոնստանտին Լևինը գրել էր եղբորը, թե այն փոքրիկ մասի վաճառքից, որ մնացել էր իրենց տանը դեռ չբաժանված, եղբայրն այժմ ստանալիք ուներ իր բաժինը՝ մոտ 2000 ռուբլի։

Նիկոլայն ասաց, որ այժմ եկել է ստանալու այդ դրամը, և որ գլխավորն է՝ միառժամանակ ապրելու իր բնի մեջ, շփվելու հողի հետ, որպեսզի ուժ հավաքի, ինչպես դյուցազունները, իր առաջիկա գործունեության համար։ Չնայած ավելացած կուզությանը, չնայած իր հասակի համեմատությամբ զարմանալի նիհարությանը, նրա շարժումները սովորականի պես արագ էին ու թափով։ Լևինն առաջնորդեց նրան առանձնասենյակ։

Եղբայրն առանձին խնամքով հագուստը փոխեց, մի բան, որ առաջ չէր անում, սանրեց իր նոսր, ուղիղ մազերը և ժպտալով բարձրացավ վերև։

Նա վերին աստիճանի գուրգուրալից և ուրախ տրամադրության մեջ էր, ինչպես հաճախ լինում էր նա մանկության ժամանակ՝ հիշում էր Լևինը։ Նա հիշատակեց նույնիսկ Սերգեյ Իվանովիչի մասին՝ առանց ոխակալության։ Տեսնելով Ագաֆիա Միխայլովնային, նա կատակեց նրա հետ և հարցնում էր հին սպասավորների մասին։ Պարֆեն Դենիսիչի մահվան լուրը նրա վրա ազդեց անախորժ կերպով։ Նրա դեմքին արտահայտվեց վախի զգացում. բայց նա անմիջապես զգաստացավ։

— Չէ՞ որ նա ծեր էր,— ասաց նա և փոխեց խոսակցու-

թյունը։— Հա՞, կապրեմ քեզ մոտ մեկ-երկու ամիս, ապա՝ գնալի Մոսկվա։ Գիտե՞ս, Մյագկովը պաշտոն խոստացավ ինձ, և ես մտնում եմ ծառայության։ Այժմ ես կյանքս կդասավորեմ բոլորովին այլ կերպ,— շարունակեց նա։— Գիտե՞ս, ես հեռացրի այն կնոջը։

— Մարիա Նիկոլաևնայի՞ն։ Ինչպե՞ս, ինչո՞ւ։

— Ա՜հ, նա գարշելի կին է։ Անհամար անախորժություններ պատճառեց ինձ։— Բայց նա չպատմեց, թե ի՞նչ անախորժություններ։ Նա չկարողացավ ասել, որ Մարիա Նիկոլաևնային վռնդել էր թեյը թույլ լինելու պատճառով, իսկ գլխավորապես նրա համար, որ այդ կինը խնամում էր նրան իբրև հիվանդի։— Առհասարակ այժմ ես ուզում եմ բոլորովին փոխել կյանքիս եղանակը։ Իհարկե, ինչպես և ամենքը, ես էլ հիմարություններ եմ արել, բայց կարողությունը՝ վերջին կարգի բան է, ես չեմ ափսոսում այն։ Միայն առողջություն լինի, իսկ առողջությունս, փառք աստծո, վերականգնվեց։

Լևինը լսում ու մտածում էր և չգիտեր՝ ի՞նչ ասի։ Հավանորեն, Նիկոլայն էլ զգաց նույն բանը. նա սկսեց եղբորը հարցուփորձ անել նրա գործերի մասին։ Եվ Լևինն ուրախ էր իր մասին խոսելու համար, որովհետև կարող էր խոսել առանց ձևանալու։ Նա պատմեց եղբորն իր ծրագրերը և գործողությունները։

Եղբայրը լսում էր, բայց, ըստ երևույթին, չէր հետաքրքրվում գրանով։

Այդ երկու մարդիկ այնպես հարազատ ու մոտ էին իրար, որ ամենաթեթև շարժումը, ձայնի տոնը նրանց երկուսին էլ ասում էր ավելին, քան այն բոլորը, ինչ կարելի էր ասել բառերով։

Այժմ նրանք երկուսն էլ ունեին մի միտք. Նիկոլայի հիվանդությունը և նրա մահվան մոտիկությունը, որ ճնշել էր մնացած ամեն ինչ։ Բայց ո՛չ մեկը, ո՛չ մյուսը չէր համարձակվում խոսել մահվան մասին, այդ իսկ պատճառով՝ բոլորը սուտ էր, ինչ էլ առեին նրանք, եթե չէր արտահայտում այն, ինչը միայն ու միայն զբաղեցնում էր նրանց։ Լևինը երբեք այնպես ուրախ չէր եղել, ինչպես այսօր, որ երեկոն մեծացավ ու պետք էր գնալ քնելու։ Երբեք ո՛չ մի կողմնա-

կի մարդու հետ, ո՛չ մի պաշտոնական այցելության ժամանակ նա չէր եղել այնպես անբնական ու կեղծ, ինչպես այսօր։ Եվ այդ անբնականության գիտակցությունն ու զղջման զգացումը նրան դարձնում էին է՛լ ավելի անբնական։ Նա ուզում էր լաց լինել իր մեռնող սիրելի եղբոր վրա, բայց հարկադրված էր լսել ու մասնակցել այն խոսակցությանը, թե ինչպե՛ս պիտի ապրի եղբայրը։

Որովհետև տանը խոնավ էր, և վառել, տաքացրել էին միայն մի սենյակ, ուստի Լևինը եղբորը պառկեցրեց քնելու իր ննջարանում՝ միջնորմի ետևը։

Եղբայրը պառկեց և քնել էր թե չէ, բայց որպես հիվանդ՝ շուռումուռ էր գալիս, հազում էր և երբ չէր կարողանում հազալ-վերջացնել, փնթփնթում էր ինչ-որ բան։ Երբեմն ծանր հառաչելով բացականչում էր. «Ա՜խ, աստվա՜ծ իմ»։ Երբեմն, երբ խորխը խեղդում էր նրան, նա սրտնեղությամբ ասում էր. «Ա՜, սատանա՜»։ Լևինի քունը երկար ժամանակ չէր տանում, բայց բոլոր մտքերի վերջը մեկ էր՝ մահ։

Մահը, ամեն բանի անխուսափելի վերջը, առաջին անգամ անդիմադարձ ուժով պատկերացավ նրան։ Եվ այդ մահը, որ այստեղ էր, այդ սիրելի եղբոր մեջ էր, որը քնի մեջ հառաչում էր և անտարբերությամբ, ըստ սովորության, տալիս էր մերթ աստծո, մերթ սատանայի անունը, բնավ այնքան հեռու չէր, ինչպես թվում էր նրան առաջ։ Մահը գտնվում էր և իր մեջ, նա զգում էր այդ։ Ո՞չ այսօր, ուրեմն վաղը, ո՛չ վաղը, ուրեմն երեսուն տարի հետո,—մի՞թե միևնույնը չէ։ Իսկ թե ի՛նչ բան էր այդ անխուսափելի մահը, նա ո՛չ միայն չգիտեր, ո՛չ միայն երբեք չէր էլ մտածել դրա մասին, այլև չէր կարողացել ու չէր հանդգնել մտածել այդ մասին։

«Ես աշխատում եմ, ես ուզում եմ ինչ-որ բան անել, բայց մոռացել եմ, որ ամեն ինչ կվերջանա, որ կա մահ»։

Նա մթության մեջ նստել էր մահճակալին, կուչ եկած ու գրկած իր ծնկները և զսպելով շնչառությունը մտքի լարվածությունից, մտածում էր։ Բայց որքան ավելի էր լարում միտքը, այնքան ավելի պարզ էր դառնում նրա համար, թե դա անկասկած այդպես է, թե իրոք ինքը մոռացել, աչքաթող է արել կյանքի մեջ մի փոքրիկ հանգամանք, այսինքն՝ այն, որ կգա մահը և ամեն բան կվերջանա, որ չարժե ոչինչ սկսել, որ ո՛չ մի կերպ չի կարելի օգնել դրան։ Այո՛, դա սարսափելի է, բայց դա այդպես է։

«Սակայն, չէ՞ որ ես դեռ ողջ եմ։ Իսկ ա՞յժմ ի՞նչ պիտի անել, ի՞նչ պիտի անել», մտածում էր նա հուսահատությամբ։ Նա վառեց մոմը և զգույշ վեր կացավ ու մոտեցավ հայելուն և սկսեց նայել իր դեմքն ու մազերը. Այո՛, քունքերին սպիտակ մազեր կային։ Նա բացեց բերանը։ Ետևի ատամներն սկսել էին փչանալ։ Նա մերկացրեց իր մկանուտ թևերը։ Այո՛, ուժ շատ կա։ Բայց Նիկոլենկան ևս, որ շնչում է այնտեղ իր թոքերի մնացորդներով, նույնպես ուներ առողջ մարմին։ Ու հանկարծ նա մտաբերեց, թե ինչպես իրենք, փոքր երեխաներ, միասին պառկում էին քնելու և սպասում էին միայն, որ Ֆյոդոր Բոգդանիչը դռնից դուրս գնա, որպեսզի բարձերը նետեն իրար վրա ու քրքջան, քրքջան անզուսպ, այնպես որ նույնիսկ Ֆյոդոր Բոգդանիչից վախենալու զգացումը չէր կարողանում կանգնեցնել ափերից թափվող ու փրփրացող կյանքի երջանկության գիտակցությունը։ «Իսկ հիմա այդ կորացած դատարկ կուրծքը... և ես, որ չգիտեմ, ինչո՛ւ և ի՛նչ է լինելու ինձ հետ»...

— Կ-հա՜, կ-հա՜։ Ա՜, սատանա՜։ Ի՞նչ ես անում, ինչո՞ւ չես քնում,— կանչեց նրան եղբոր ձայնը։

— Հենց այնպես, չգիտեմ. անքնություն է։

— Իսկ ես լավ էի քնել։ Այժմ ես չեմ քրտնում։ Տե՛ս, շոշափիր շապիկս։ Քրտինք չկա՞։

Լևինը շոշափեց, անցավ միջնորմի ետևը, մոմը հանգցրեց. բայց դեռ երկար ժամանակ չէր քնում։ Հենց նոր, նոր միայն նրա համար մի փոքր պարզվեց այն հարցը, թե ինչպե՛ս ապրել, երբ առաջ եկավ մի նոր անլուծելի հարց՝ մահը։

«Է՜հ, նա մեռնում է, է՜հ, նա կմեռնի գարնան դեմ, է՜, ինչպե՞ս օգնել նրան։ Ես ի՞նչ կարող եմ ասել նրան։ Ես ի՞նչ գիտեմ դրա մասին։ Ես նույնիսկ մոռացել էի, որ դա գոյություն ունի»։

XXXII

Լևինը վաղուց արդեն նկատել էր, երբ մեկը իրեն անհարմար է զգում մարդկանց հետ՝ նրանց ավելորդ զիջողությունից, հեզությունից, շատ շուտով անտանելի է դառնում

նրանց ավելորդ պահանջկոտությունից ու բծախնդրությունից։ Նա զգում էր, որ այդ բանը կպատահի նաև իր եղբոր հետ։ Եվ իսկապես, Նիկոլայ եղբոր հեզությունը չբավեց երկար։ Նա հենց հետևյալ առավոտվանից դարձավ դյուրագրգիռ և փութաջանորեն բծախնդիր էր եղբոր հանդեպ՝ դիտելով նրա ամենահիվանդոտ տեղերին։

Լևինը մեղավոր էր զգում իրեն ու չէր կարողանում շրջել այդ։ Նա զգում էր, որ եթե իրենք երկուսն էլ չձևանային, այլ ասեին այն, ինչը կոչվում է՝ խոսել մտերմաբար, այսինքն՝ ասել միայն այն, ինչ իրենք ճիշտ մտածում ու զգում էին, այն ժամանակ նրանք կնայեին միայն իրար երեսի, և Կոնստանտինը կասեր միայն. «Դու կմեռնես, դու կմեռնես, դու կմեռնես», իսկ Նիկոլայը կպատասխաներ միայն. «Գիտեմ, որ կմեռնեմ, բայց վախենում եմ, վախենում եմ, վախենում եմ»։ Ուրիշ ոչինչ նրանք չէին խոսի, եթե միայն խոսեին մտերմաբար։ Բայց այդպես ապրել չէր կարելի, այդ իսկ պատճառով Կոնստանտինը փորձում էր անել այն, ինչ նա իր ամբողջ կյանքում փորձում էր ու չէր կարողանում անել, և ինչը ըստ նրա դիտողության՝ շատերը կարողանում էին այնպես լավ անել, և առանց որի չի կարելի ապրել. նա փորձում էր ասել ո՛չ այն, ինչ մտածում էր, և շարունակ զգում էր, որ դա կեղծ է դուրս գալիս, որ եղբայրը նրան բռնում է այդ բանում ու ջղայնանում դրանից։

Երրորդ օրը Նիկոլայը դրդեց եղբորը՝ նորից հայտնել իր ծրագիրը և սկսեց ո՛չ միայն դատապարտել, այլև սկսեց դիտմամբ խառնել այն կոմունիզմի հետ։

— Ո՛չ միայն վերցրել ես ուրիշի միտքը, այլև այլանդակել ես այն և ուզում ես ձեռնամուխ լինել անիրագործելիին։

— Չէ՞ որ ես ասում էի քեզ, որ դա ընդհանուր ոչինչ չունի նրա հետ։ Նրանք ժխտում են սեփականության, կապիտալի, ժառանգականության արդարացիությունը, իսկ ես, չբացասելով այդ գլխավոր ստիմուլը (ինքը Լևինը զզվում էր այդպիսի բառեր գործածելուց, բայց այն օրվանից, երբ նա սկսեց հրապուրվել իր աշխատությունով, ակամա սկսեց ավելի հաճախ գործածել ո՛չ ռուսերեն բառեր), ուզում եմ միայն կարգավորել աշխատանքը։

— Բանն էլ հենց այն է, որ դու վերցրել ես ուրիշի միտ-

քը, կտրել ես նրանից այն բոլորը, ինչ կազմում է նրա ուժը, և ուզում ես հավատացնել, իբր դա մի նոր բան է,— ասաց Նիկոլայը, բարկացած ցնցվելով իր փողկապի մեջ։

— Չէ՞ որ իմ միտքն ընդհանուր ոչինչ չունի...

— Այնտեղ,— զայրացած փայլեցնելով աչքերը և հեգնաբար ժպտալով՝ ասում էր Նիկոլայ Լևինը,— այնտեղ գոնե պարզության, աներկբայության, ինչպես ասեմ, երկրաչափական հրապույր։ Կարող է պատահել, դա ուտոպիա է։ Բայց ենթադրենք, թե ամբողջ անցյալից կարելի է շինել abula rasa[1]. չկա սեփականություն, չկա ընտանիք, ուրեմն վերացվում է նաև աշխատանքը, բայց դու ոչինչ չունես...

— Ինչո՞ւ ես դու խառնում. ես երբեք կոմունիստ չեմ եղել։

— Իսկ ես եղել եմ և այն կարծիքին եմ, որ դա վաղաժամ է, բայց խոհական է և ապագա ունի, ինչպես քրիստոնեությունն առաջին դարերում։

— Ես միայն կարծում եմ, որ բանվորական ուժը պետք է քննել բնախուզական տեսակետից, այսինքն՝ ուսումնասիրել այն, ճանաչել նրա հատկությունները և...

— Միանգամայն իզուր։ Այդ ուժն ինքն է գտնում, համաձայն իր զարգացման աստիճանի, գործունեության որոշ եղանակ։ Ամեն տեղ եղել են ստրուկներ, հետո metayers[2]. մեզանում էլ կա կիսարար աշխատանք, կա վարձակալություն, կա բատրակային աշխատանք,— ուրեմն, էլ ի՞նչ ես որոնում դու։

Լևինը հանկարծ տաքացավ այդ խոսքերը լսելիս, որովհետև հոգու խորքում վախենում էր, որ ճիշտ էր դա, ճիշտ է այն, որ նա ուզում էր հավասարակշռություն պահպանել կոմունիզմի և որոշակի ձևերի միջև, ուր-որ դա հազիվ թե հնարավոր է։

— Ես միջոցներ եմ փնտրում աշխատելու արդյունավետ կերպով թե՛ ինձ համար, թե՛ բանվորի համար։ Ես ուզում եմ կազմել...— պատասխանեց նա ջերմորեն։

— Դու ոչինչ չես ուզում կազմել. դու ուղղակի, ինչպես ապրել ես քո ամբողջ կյանքում, ուզում ես Ծրիգինալություն

[1] Մաքուր տախտակ, այսինքն՝ ջնջել ամբողջ անցյալը։
[2] Վարձակալներ։

անել, ցույց տալ, որ դու մուժիկներին շահագործում ես ո՛չ ուղղակի, այլ գաղափարի քողի տակ։

— Է՜հ, դու այդպե՛ս ես կարծում, ուրեմն թո՛ղ ինձ,— պատասխանեց Լևինը, զգալով, որ իր ձախ այտի մկանը ցնցվում է անզուսպ կերպով։

— Դու համոզմունքներ չես ունեցել և չունես, դու ուզում ես միայն մխիթարել քո ինքնասիրությունը։

— Դե՛, լավ, լավ, հանդիստ թող ինձ։

— Եվ կթողնեմ, ու վաղուց էր պետք, և կորիր աչքիցս, ու շատ ափսոսում եմ, որ եկա։

Ինչքան էլ աշխատում էր հետո Լևինը հանգստացնել եղբորը, Նիկոլայը ոչինչ չէր ուզում լսել, ասում էր, թե ավելի լավ է՝ հեռանալ իրարից, և Կոնստանտինը տեսնում էր, որ եղբոր համար ուղղակի անտանելի է դարձել կյանքը։

Նիկոլայն արդեն բոլորովին պատրաստվել էր մեկնելու, երբ Կոնստանտինը նորից եկավ նրա մոտ և անբնական կերպով խնդրում էր ներել, եթե որևէ բանով վիրավորեց նրան։

— Ա՜, մեծահոգություն,— ասաց Նիկոլայը և ժպտաց։— Եթե դու ուզում ես լինել իրավացի, կարող եմ այդ բավականությունը պատճառել քեզ։ Դու իրավացի ես, բայց և այնպես ես կգնամ։

Մեկնելուց անմիջապես առաջ միայն Նիկոլայը համբուրվեց եղբոր հետ և հանկարծ տարօրինակ լրջությամբ նայելով նրան, ասաց.

— Համենայն դեպս՝ բարի հիշիր ինձ, Կոստյա,— և նրա ձայնը դողաց։

Դրանք այն միակ խոսքերն էին, որ ասվեցին անկեղծաբար։ Լևինը հասկացավ, որ այդ խոսքերի տակ ենթադրվում էր. «Դու տեսնում ես ու գիտես, որ ես վատ եմ, և գուցե մենք այլևս չտեսնվենք»։ Լևինը հասկացավ այդ, և արցունքները հորդեցին նրա աչքերից։ Նա մի անգամ էլ համբուրեց եղբորը, բայց ոչինչ չկարողացավ ասել և ի վիճակի չէր ասելու։

Եղբոր հեռանալու երրորդ օրը Լևինն էլ գնաց արտասահման։ Երկաթուղու ճանապարհին պատահելով Շչերբացկուն՝ Կիտիի հորեղբորը տղային, Լևինը սաստիկ զարմացրեց նրան իր մռայլությամբ։

— Ի՞նչ է պատահել քեզ,—հարցրեց նրան Շչերբացկին։

— Է՜հ, ոչինչ, հենց այնպես, աշխարհում ուրախալի քիչ բան կա։

— Ինչպե՞ս թե քիչ։ Ա՜յ, միասին երթանք Փարիզ, փոխանակ ինչ-որ Մյուլուզայի։ Կտեսնեք, թե ինչպե՛ս ուրախ է։

— Ո՛չ, ես արդեն վերջացրի։ Իմ մեռնելու ժամանակն է։

— Ա՜յ քեզ բան,— ծիծաղելով ասաց Շչերբացկին։— Ես նոր միայն պատրաստվել եմ սկսելու։

— Է՜հ, մոտ անցյալում ես էլ այդպես էի կարծում, բայց հիմա գիտեմ, որ շուտով կմեռնեմ։

Լևինն ասում էր այն, ինչ անկեղծորեն մտածում էր վերջերս։ Նա ամեն բանի մեջ տեսնում էր միայն մահ կամ իր մոտեցումը մահվան։ Բայց իր ձեռնարկած գործը նրան ավելի մեծ ուժով էր հետաքրքրում։ Չէ որ պետք է մի կերպ ապրել կյանքի մնացորդը, մինչև կգար մահը։ Խավարը նրա համար քողարկում էր ամեն ինչ. բայց հենց այդ խավարի հետևանքով նա զգում էր, որ միակ ղեկավար թելն այդ խավարի մեջ իր գործն է, և նա վերջին ուժերի լարումով բռնեց նրանից ու բռնած պահում էր։

ՉՈՐՐՈՐԴ ՄԱՍ

1

Կարենին ամուսինները շարունակում էին ապրել մի տան մեջ, հանդիպում էին իրար ամեն օր, բայց բոլորովին օտար էին իրար։ Ալեքսեյ Ալեքսանդրովիչը սկզբունք դարձրեց իր համար՝ ամեն օր տեսնել կնոջը, որպեսզի սպասավորներն իրավունք չունենան ենթադրություններ անելու, բայց խուսափում էր տանը ճաշելուց։ Վրոնսկին երբեք չէր լինում Ալեքսեյ Ալեքսանդրովիչի տանը, սակայն Աննան տեսնում էր նրան տանից դուրս, և ամուսինը գիտեր այդ։

Դրությունը տանջալից էր երեքի համար էլ, և նրանցից յուրաքանչյուրը անկարող կլիներ մի օր անդամ ապրելու այս կացության մեջ, եթե չսպասեր, որ կփոխվի այն և որ դա միայն ժամանակավոր, ցավալի դժվարություն է, որը կանցնի։ Ալեքսեյ Ալեքսանդրովիչն սպասում էր, որ այդ կիրքը կանցնի, ինչպես անցնում է և ամեն բան, որ ամենքը կմոռանան այդ մասին, որ իր անունը կմնա չարատավորված։ Աննան, որից կախված էր այդ դրությունը և որի համար ամենից ավելի տանջալից էր այն, տանում էր դա, որովհետև նա ո՛չ միայն սպասում էր, այլև հաստատ համոզված էր, որ այդ բոլորը շատ շուտով կլուծվի ու կպարզվի։ Նա ամենևին չգիտեր, թե ի՛նչը կլուծի այդ դրությունը, բայց հաստատ համոզված էր, որ այդ ինչը կգա այժմ շատ շուտ։ Վրոնսկին ակամա ենթարկվելով Աննային, նույնպես սպասում էր իրենից անկախ ինչ-որ բանի, որը պետք է պարզեր բոլոր դժվարությունները։

Զմեռվա կեսին Վրոնսկին անցկացրեց շատ ձանձրալի մի

շաբաթ։ Նրան դրել էին Պետերբուրգ եկած օտարերկրացի մի արքայազնի հետ, որին նա պետք է ցույց տար Պետերբուրգի հիշարժան վայրերը։ Վրոնսկին ինքը վայելչատես էր. բացի դրանից, նա տիրապետում էր իրեն արժանավայել-հարգալից պահելու վարպետությանը և ուներ այդպիսի մարդկանց հետ վարվելու վարժություն. հենց այդ պատճառով նրան էին դրել արքայազնի հետ։ Բայց իր պարտավորությունը թվաց նրան շատ ծանր։ Արքայազնը կամենում էր բաց չթողնել ոչ մի բան, որի մասին տանը կարող էին հարցնել նրան. արդյոք այսինչ բանը տեսա՞ր Ռուսաստանում, ասենք, նա ինքն էլ ցանկանում էր վայելել, որքան հնարավոր է, ռուսական զվարճությունները։ Վրոնսկին պարտավոր էր ղեկավարել նրան թե՛ մեկ, թե՛ մյուս բանում։ Առավոտները նրանք գնում էին դիտելու հիշարժան վայրերը, երեկոյան մասնակցում էին ազգային զվարճություններին։ Արքայազնը օժտված էր նույնիսկ արքայազնների համար բացառիկ առողջությամբ. թե՛ մարմնամարզությամբ, թե՛ իր մարմնի վրա տարած լավ խնամքով նա իրեն հասցրել էր այնպիսի ուժի, որ, չնայած այն շվայտություններին, որոնց նա անձնատուր էր լինում բավականությունների միջոցին, թարմ էր, ինչպես հոլանդական կանաչ, մեծ, պլպլան վարունգ։ Արքայազնը շատ էր ճանապարհորդել և այն կարծիքին էր, որ ճանապարհների հաղորդակցության այժմյան հեշտության գլխավոր օգուտներից մեկը կազմում է ազգային զվարճությունների մատչելիությունը։ Նա եղել էր Իսպանիայում և այնտեղ կատարել էր սերենադներ ու մտերմացել մանդոլին նվագող մի իսպանուհու հետ։ Շվեյցարիայում նա սպանել էր մի քարայծ։ Անգլիայում, կարմիր ֆրակ հագած, թռել էր ցանկապատների վրայից և գրազով սպանել 200 փասիան։ Թուրքիայում եղել էր հարեմում, Հընդկաստանում շրջել էր փղով և այժմ Ռուսաստանում ցանկանում էր ճաշակել հատկապես ռուսական բոլոր բավականությունները։

Վրոնսկու համար, որ նրա մոտ մի տեսակ գլխավոր ցերեմոնիմեյստեր էր (արարողապետ), շատ դժվար էր դատաբաշխել տարբեր անձնավորությունների կողմից արքայազնին առաջարկվող ռուսական բոլոր զվարճությունները։ Այդտեղ կային և՛ արագավազ ձիեր, և՛ բլիթներ, և՛ արջի որս, և՛ եռան-

դակ, և՛ գնչուներ, և՛ խրախճանքներ՝ ամաններ ջարդելու ռուսական սովորությամբ։ Եվ արքայազնը վերին աստիճանի հեշտությամբ յուրացրեց ռուսական ոգին. ջարդում էր ամաններով մատուցարանները, նստեցնում էր ծնկին գնչուհիներ և, թվում էր, թե հարցնում էր. ուրիշ էլ ի՞նչ, թե՞ հենց դա է միայն ռուսական ամբողջ ոգին։

Ըստ էության, ռուսական բոլոր զվարճություններից արքայազնին ամենից ավելի դուր էին գալիս ֆրանսուհի դերասանուհիները, բալետի պարուհին և սպիտակ կնիքով շամպայնը։ Վոռնսկին սովոր էր արքայազնների, բայց նրանի՞ց էր արդյոք, որ նա ինքը փոխվել էր վերջերս, թե՞ այդ արքայազնի հետ չափազանց մոտիկանալուց, նրան այդ շաբաթը թվաց սարսափելի ծանր։ Այդ ամբողջ շաբաթ անդադար նա ապրում էր մի զգացում, նման այն մարդու զգացման, որին դրել էին վտանգավոր խելագարի հետ, և որը վախենում էր խելագարից ու նրան մոտիկ լինելու պատճառով միաժամանակ վախենում էր նաև իր խելքի համար։ Վոռնսկին շարունակ անհրաժեշտություն էր զգում ոչ մի վայրկյան չթուլացնելու խիստ պաշտոնական հարգանքի տոնը, որպեսզի ինքը վիրավորված չլինի։ Արքայազնի վարվելաձևն արհամարհական էր այն անձնավորությունների նկատմամբ, որոնք, ի զարմանս Վոռնսկու, իրենց կաշվից դուրս էին գալիս՝ արքայազնին ռուսական զվարճություններ պատճառելու։ Նրա դատողությունները ռուս կանանց մասին, որոնց նա կամենում էր ուսումնասիրել, բազմիցս ստիպում էին Վոռնսկուն կարմրել վրդովմունքից։ Իսկ գլխավոր պատճառը, թե ինչու արքայազնը առանձնապես ծանր էր Վոռնսկու համար, այն էր, որ նրա մեջ տեսնում էր ինքն իրեն։ Եվ այն, ինչ նա տեսնում էր այդ հայելու մեջ, չէր շոյում նրա ինքնասիրությունը։ Դա շատ տրխմար և՛ շատ ինքնավստահ, և՛ շատ առողջ, և՛ շատ մաքրասեր մարդ էր, ուրիշ ոչինչ։ Նա ջենտլմեն էր՝ դա ճիշտ էր, և Վոռնսկին չէր կարող բացասել այդ։ Նա հավասարակշռված էր և ոչ ակնակառույց իրենից բարձրերի նկատմամբ, ազատ ու պարզ էր վերաբերվում իրեն հավասարներին և արհամարհալից բարեսիրտ էր իրենից ցածրերի նկատմամբ։ Վոռնսկին ինքն այդպես էր, և դա համարում էր մեծ արժանիք. բայց արքայազնի նկատմամբ նա ավելի ցածրաստիճան էր, ու այդ արհամար-

հական-բարեսիրտ վերաբերմունքը դեպի ինքը վրդովում էր նրան։

«Տխմար տավարի մի՛ս. մի՞թե ես այդպես եմ», մտածում էր նա։

Ինչպես էլ որ լիներ, երբ Վոռնսկին յոթերորդ օրը հրաժեշտ տվեց արքայազնին՝ սրա Մոսկվա գնալուց առաջ, ու շնորհակալություն ստացավ, երջանիկ էր, որ ազատվեց այդ անհարմար դրությունից և անախորժ հայելուց։ Նա հրաժեշտ տվեց նրան կայարանում, վերադառնալով արջառոսից, որտեղ ամբողջ գիշեր ցուցադրվում էր ռուսական սխրագործությունը։

II

Վոռնսկին վերադառնալով տուն, տեսավ, որ տոմս կա Աննայից։ Նա գրում էր. «Ես հիվանդ եմ ու դժբախտ, չեմ կարող տանից դուրս գալ, բայց և չեմ կարող այլևս չտեսնել ձեզ։ Երեկոյան եկեք։ Ժամը յոթին Ալեքսեյ Ալեքսանդրովիչը գնում է խորհրդի, որտեղ կմնա մինչև ժամը տասը»։ Մտածելով մի բոպե այն տարօրինակության մասին, որ Աննան կանչում է նրան ուղղակի իր մոտ, չնայած ամուսնու պահանջին՝ չընդունել նրան, Վոռնսկին վճռեց գնալ։

Վոռնսկին այդ ձմեռ ստացել էր գնդապետի աստիճան, դուրս էր եկել գնդից և ապրում էր մենակ։ Նախաճաշելուց հետո նա անմիջապես պառկեց բազմոցին, և վերջին օրերս իր տեսած այլանդակ պատկերների հիշողությունները հինգ բոպեում խառնվեցին ու կապվեցին Աննայի և այն մուժիկ-խուզարկուի մասին ունեցած պատկերացման հետ, որ կարևոր դեր էր խաղում արջառոսի ժամանակ, ու քնեց։ Նա զարթնեց խավարի մեջ դողալով վախից, և շտապ վառեց մոմը։ «Ի՞նչ։ Սա ի՞նչ էր։ Ի՞նչ սարսափելի բան տեսա երազիս,— Այո՛, այո՛։ Կարծեմ մուժիկ-խուզարկու. փոքրիկ, կեղտոտ, գզգզված մորուքով, ինչ-որ բան էր անում կռացած և հանկարծ խոսեց ֆրանսերեն, ասելով ինչ-որ տարօրինակ բառեր։ Այո՛, էլ ուրիշ բան չկար երազիս մեջ,— ասաց նա ինքն իրեն։— Բայց ինչո՞ւ այդպես սարսափելի էր»։ Նա նորից վառ կերպով հիշեց մուժիկին և անհասկանալի ֆրանսերեն այն բառերը, որ արտասանում էր այդ մուժիկը, և սարսափը պաղ հոսանքի պես անցավ նրա մեջքով։

«Ի՜նչ տխմար բան», մտածեց Վռոնսկին ու նայեց ժամացույցին։

Արդեն ութից անց էր կես։ Նա զանգահարեց սպասավորին, շտապ հագնվեց ու դուրս եկավ արտաքին սանդուղք, բոլորովին մոռացած երազի մասին և տանջվելով միայն այն գիտակցությամբ, որ ուշացավ։ Մոտենալով Կարենինների տան արտաքին սանդուղքին, նա նայեց ժամացույցին և տեսավ, որ իններից պակաս էր տասը րոպե։ Բարձր, նեղ կառեթը, որին լծված էր մի զույգ գորշ ձի, կանգնած էր գլխավոր մուտքի դռան մոտ։ Նա ճանաչեց Աննայի կառեթը։ «Աննան գնում է ինձ մոտ,—մտածեց Վռոնսկին, և դա ավելի լավ կլիներ։ Ցհաճ է ինձ համար մտնել այս տունը։ Բայց միևնույն է, ես չեմ կարող թաքնվել», մտածեց նա, և մանկությունից յուրացրած այն մարդու վարվելաձևերով, որն ամաչելու բան չունի, Վռոնսկին դուրս եկավ սահնակից ու մոտեցավ դռանը։ Դուռը բացվեց, և բարապանը, ձեռքին պլեդ, մոտ կանչեց կառեթը։ Վռոնսկին, որ սովոր չէր նկատելու մանրամասներ, սակայն նկատեց այժմ զարմացական այն արտահայտությունը, որով բարապանը նայեց նրան։ Դռան մեջ Վռոնսկին համարյա ընդհարվեց Ալեքսեյ Ալեքսանդրովիչի հետ։ Գազեղջյուրն ուղղակի լուսավորում էր անարյուն, ներս ընկած նիհար դեմքը սև գլխարկի տակ և սպիտակ փողկապը, որ փայլեց կուղբի վերարկուի տակից։ Կարենինի անշարժ, աղոտ աչքերը հառվեցին Վռոնսկու երեսին։ Վռոնսկին ողջունեց, և Ալեքսեյ Ալեքսանդրովիչը, ծամծմելով, ձեռքը բարձրացրեց դեպի գոգակը ու անցավ։ Վռոնսկին տեսավ, թե ինչպես նա, առանց ետ նայելու, նստեց կառեթը, լուսամուտից ընդունեց պլեդն ու հեռադիտակը և թաքնվեց տեսողությունից։ Վռոնսկին մտավ նախասենյակ։ Նրա հոնքերը կիտած էին, և աչքերը փայլում էին շար ու հպարտ փայլով։

«Ա՜յ քեզ դրություն,—մտածում էր Վռոնսկին։—Եթե նա պայքարեր, պաշտպաներ իր պատիվը, ես կարող էի գործել, արտահայտել իմ զգացումները. բայց այդ թուլությունը կամ ստորությունը... Նա ինձ դնում է խաբեբայի դրության մեջ, մինչդեռ ես չէի ուզում և չեմ ուզում լինել խաբեբա»։

Վռեդեի այցում Աննայի հետ բացատրվելուց հետո փոխվեցին Վռոնսկու մտքերը։ Նա, ակամա ենթարկվելով Աննայի

թուլությանը, որն ամբողջովին անձնատուր էր լինում Վռոնսկուն և նրանից էր միայն սպասում իր բախտի որոշումը, նախապես հնազանդվելով ամեն բանի, վաղուց այլևս չէր մտածում, թե այդ կապը կարող էր վերջանալ, ինչպես կարծում էր այն ժամանակ։ Նրա փառասիրական ծրագրերը նորից ետ քաշվեցին հետին պլան, և նա զգալով, որ դուրս է եկել գործունեության այն շրջանից, որտեղ ամեն ինչ որոշ էր, ամբողջապես անձնատուր եղավ իր զգացումին, և այդ զգացումն ավելի ու ավելի ուժեղ էր կապում նրան Աննայի հետ։

Դեռ նախասենյակում նա լսեց Աննայի հեռացող քայլերի ձայնը։ Նա հասկացավ, որ Աննան սպասում էր իրեն, ականջ դնելով և այժմ վերադառնում էր ընդունարան։

— Ո՜չ,—ճչաց Աննան, տեսնելով նրան, և իր ձայնի առաջին հնչյունի հետ արցունքներ երևացին աչքերում,— ո՜չ, եթե այդպես շարունակվի, ապա դա տեղի կունենա շատ, շատ ավելի վաղ։

— Ի՞նչը, սիրելիս։

— Ի՞նչը։ Ես սպասում եմ, տանջվում եմ, մի ժամ, երկու ժամ... Ո՜չ, ես չեմ... Ես չեմ կարող գժտվել քեզ հետ։ Հավանորեն, դու չէիր կարող։ Ո՜չ, չեմ անի։

Նա երկու ձեռքը դրեց Վռոնսկու ուսերին և երկար նայում էր նրան հիացական ու միաժամանակ փորձարկող խորը հայացքով։ Նա ուսումնասիրում էր Վռոնսկու դեմքը հրնթացս այն ժամանակի, որ չէր տեսել նրան։ Ինչպես ամեն տեսակցության ժամանակ, նա մտքով համեմատում էր Վռոնսկու մասին իր ունեցած երևակայական պատկերացումը (անհամեմատ ավելի լավ, իրականության մեջ անհնարին) իրական Վռոնսկու հետ։

III

— Դու պատահեցի՞ր նրան,— հարցրեց Աննան, երբ նրանք նստեցին սեղանի մոտ՝ լամպի տակ։—Ահա՜ քեզ պատիժ ուշանալուդ համար։

— Այո՛, բայց ինչպե՞ս եղավ դա։ Չէ՞ որ նա պետք է լիներ խորհրդում։

— Նա եղավ ու վերադարձավ և նորից գնաց ինչ-որ տեղ։

Բայց դա ոչինչ։ Մի՛ խոսիր դրա մասին։ Որտե՞ղ էիր դու էլի արքայազնի հետ։

Աննան գիտեր նրա կյանքի բոլոր մանրամասները։ Նա ուզում էր ասել, որ ամբողջ գիշեր չէր քնել ու քնեց, բայց նայելով Աննայի հուզված և երջանիկ դեմքին, ամաչեց։ Ու նա ասաց, իբր գնացել էր հաշվետվություն ներկայացնելու արքայազնի մեկնելու մասին։

— Բայց այժմ վերջացա՞վ։ Նա գնա՞ց։

— Փառք աստծո, վերջացավ։ Դու չես հավատա, թե ինչպե՞ս անտանելի էր դա ինձ համար։

— Իսկ ինչո՞ւ։ Չէ՞ որ դա ձեր՝ բոլոր երիտասարդ տղամարդկանց, ամենօրյա կյանքն է,— ասաց Աննան, հոնքերը կիտելով ու ձեռնամուխ լինելով սեղանին դրված գործվածքին և առանց նայելու Վրոնսկուն, սկսեց հանել նրա միջից կարթածայր շյուղը։

— Վաղուց է, որ ես թողել եմ այդ կյանքը,— ասաց Վրոնսկին, զարմանալով նրա դեմքի արտահայտության փոփոխության վրա և աշխատելով թափանցել նրա նշանակության մեջ։—Եվ խոստովանում եմ,—ասաց նա, ժպտալով ու բացելով իր խիտ սպիտակ ատամները,—ես այս շաբաթ կարծես հայելու մեջ զննեցի այդ կյանքը, և ինձ համար անախորժ էր այն։

Աննան գործվածքը բռնել էր ձեռքին, բայց չէր գործում, այլ նայում էր Վրոնսկուն տարօրինակ, փայլուն ու անբարյացակամ հայացքով։

— Այսօր առավոտյան Լիզան եկավ ինձ մոտ. նրանք դեռ չեն վախենում ինձ մոտ գալուց, չնայած կոմսուհի Լիդիա Իվանովնային,— վրա բերեց Աննան,— և պատմեց ձեր աթենական գիշերվա մասին։ Ի՞նչ գարշելի բան։

— Ես միայն ուզում էի ասել, որ...

Աննան ընդհատեց նրան.

— Այդ mérèse-ը կա՞ր, որին դու ճանաչում էիր առաջ։

— Ես ուզում էի ասել...

— Ի՞նչ զզվելի եք տղամարդիկդ։ Ինչպե՞ս չեք կարողանում հասկանալ, որ կինը չի կարող դա մոռանալ,— ասում էր Աննան, տաքանալով ավելի ու ավելի և դրանով բացահայտելով իր գրգռված կացության պատճառը։— Մանավանդ այն

կինը, որը չի կարող իմանալ քո կյանքը։ Ի՞նչ գիտեմ ես, ի՞նչ գիտեի ես,— ասում էր նա,— միայն այն, ինչ կասես դու ինքդ։ Իսկ ո՞րտեղից գիտեմ, թե դու ճիշտ ես ասել ինձ...

— Աննա, դու վիրավորում ես ինձ։ Մի՞թե դու չես հավատում ինձ։ Մի՞թե ես չեմ ասել քեզ, թե չունեմ այնպիսի մտքեր, որ թաքցրած լինեմ քեզանից։

— Այո՛, այո՛,— ասաց նա, ըստ երևույթին աշխատելով վանել իրենից խանդոտ մտքերը։— Բայց եթե դու իմանայիր, թե ինչպե՞ս ծանր է ինձ համար։ Ես հավատում եմ, հավատում եմ քեզ... Ուրեմն ի՞նչ էիր ասում դու։

Սակայն Վրոնսկին չկարողացավ մեկեն հիշել այն, ինչ ուզում էր ասել։ Խանդի այդ նոպաները, որ վերջերս ավելի ու ավելի հաճախ էին համակում Աննային, սարսափեցնում էին Վրոնսկուն, և ինչքան էլ նա աշխատում էր ծածկել այդ, սառեցնում էին նրան դեպի Աննան, չնայած նա գիտեր, որ խանդի պատճառն Աննայի սերն է դեպի ինքը։ Քանի՞-քանի անգամ նա ասել էր ինքն իրեն, որ Աննայի սերը երջանկություն է. և ահա Աննան սիրում է նրան, ինչպես կարող է սիրել մի կին, որի համար սերը գերակշռում է կյանքի բոլոր բարիքներից, և նա շատ ավելի հեռու է երջանկությունից այժմ, քան այն ժամանակ, երբ Մոսկվայից գնաց Աննայի ետևից։ Այն ժամանակ նա իրեն համարում էր դժբախտ, բայց բախտն առջևում էր, իսկ այժմ նա զգում էր, որ լավագույն բախտն արդեն մնացել է ետևում։ Աննան բոլորովին այն չէր, ինչպես տեսել էր նրան Վրոնսկին սկզբներում։ Ե՛վ բարոյապես, և՛ ֆիզիկապես փոխվել էր դեպի վատը. նա ամբողջովին լայնացել էր, և երբ խոսում էր դերասանուհու մասին, նրա դեմքին կար շար արտահայտություն, որ այլանդակում էր այդ դեմքը։ Վրոնսկին նայում էր նրան, ինչպես մարդ նայում է իր պոկած ու թոշնած ծաղկին և դժվարությամբ է ճանաչում այն գեղեցկությունը, որի համար նա պոկեց ու ոչնչացրեց այն։ Ու թեպետև Վրոնսկին զգում էր, թե այն ժամանակ, երբ իր սերն ավելի ուժեղ էր, ինքը կարող էր պոկել այդ սերն իր սրտից, եթե շատ ուզենար, բայց հիմա, երբ թվում էր նրան, ինչպես այս բոպեին, թե ինքն այլևս սեր չի տածում դեպի Աննան, համոզված էր, որ իր կապն Աննայի հետ չի կարող խզվել։

— Դե՛, դե՛, ուրեմն ի՞նչ էիր ուզում ասել դու ինձ արքա-

յաշնի մասին։ Ես վոնդեցի, վոնդեցի դևին,— ավելացրեց Աննան։ Նրանք դև էին կոչում խանդը։— Հա, այն ի՞նչ սկսեցիր պատմել արքայազնի մասին։ Ինչո՞ւ քեզ համար այնպես ծանր է եղել։

— Ա՜խ, անտանելի,— ասաց Վռոնսկին, աշխատելով գտնել կորած մտքի թելը։— Արքայազնը չի շահում մոտիկ ծանոթությունից։ Եթե բնորոշելու լինենք նրան, ապա նա լավ սնուցած անասուն է, որպիսիները ցուցահանդեսներում ստանում են առաջին մեդալները, և ուրիշ ոչինչ,— ասում էր նա սրտնեղությամբ, որը հետաքրքրեց Աննային։

— Ո՜չ, ինչպե՜ս թե,— առարկում էր Աննան։— Չէ՞ որ նա շատ բան է տեսել, կրթված է։

— Բոլորովին ուրիշ կրթություն է նրանց կրթությունը։ Նա, երևում է, կրթված է միմիայն նրա համար, որ իրավունք ունենա արհամարհելու կրթությունը, ինչպես արհամարհում են նրանք ամեն ինչ, բացի անասնական զվարճություններից։

— Բայց չէ՞ որ դուք ամենքդ սիրում եք այդ անասնական զվարճությունները,— ասաց Աննան, և Վռոնսկին նորից նկատեց այն մռայլ հայացքը, որը խուսափում էր իրենից։

— Ինչո՞ւ ես դու այդպես պաշտպանում նրան,— ասաց Վռոնսկին ժպտալով։

— Ես չեմ պաշտպանում, ինձ համար բոլորովին միևնույն է, բայց կարծում եմ, եթե դու ինքդ չսիրեիր այդ զվարճությունները, կարող էիր հրաժարվել։ Մինչդեռ քեզ բավականություն է պատճառում նայել Թերեզային Եվայի հագուստով...

— Էլի՜, էլի՜ դևը,— ասաց Վռոնսկին, վերցնելով ու համբուրելով նրա ձեռքը, որ նա դրեց սեղանին։

— Այո՛, բայց ես չեմ կարող։ Դու չգիտես, թե ինչպե՜ս տանջվեցի ես, սպասելով քեզ։ Ես կարծում եմ, որ խանդոտ չեմ։ Ես խանդոտ չեմ. ես հավատում եմ քեզ, երբ դու այստեղ՝ ինձ հետ ես. սակայն, երբ դու ինչ-որ տեղ մենակ վարում ես քո՝ ինձ համար անհասկանալի կյանքը...

Աննան ետ թեքվեց Վռոնսկուց, հանեց վերջապես կարթածայր շյուղը գործվածքից, և ցուցամատի օգնությամբ արագ սկսեցին իրար ետևից շարվել սպիտակ, լամպի լույսի տակ փայլող բրդի օղերը, և ջղայնորեն արագ սկսեցին շուռ գալ բաբակ դաստակը ասեղնագործած թևի մեջ։

— Է՜, ինչպե՞ս, որտե՞ղ դու պատահեցիր Ալեքսեյ Ալեքսանդրովիչին,— հանկարծ անբնականորեն զնգաց Աննայի ձայնը։

— Մենք հանդիպեցինք դռան մեջ։

— Եվ նա այսպե՞ս բարևեց քեզ։

Աննան դեմքը երկարացրեց և կիսով չափ փակելով աչքերը, արագ փոխեց դեմքի արտահայտությունը, ծալեց ձեռքերը, ու Վռոնսկին նրա գեղեցիկ դեմքին տեսավ ճիշտ այն արտահայտությունը, որով Ալեքսեյ Ալեքսանդրովիչը բարևեց նրան։ Նա ժպտաց, իսկ Աննան ուրախ ծիծաղեց կրծքի այն հաճելի ծիծաղով, որը նրա գլխավոր հրապուրանքներից մեկն էր։

— Ես բացարձակապես չեմ հասկանում նրան,— ասաց Վռոնսկին։— Եթե ամառանոցում քո բացատրությունից հետո նա խզեր քեզ հետ, եթե նա մենամարտի կանչեր ինձ. բայց դա ես չեմ հասկանում՝ ինչպե՞ս կարող է նա տանել այս դրությունը։ Նա տանջվում է, դա երևում է։

— Նա,—քմծիծաղով ասաց Աննան,— նա միանգամայն գոհ է։

— Ինչի՞ համար ենք տանջվում մենք ամենքս, երբ ամեն բան կարող էր լինել այնպես լավ։

— Միայն ո՛չ նա։ Մի՞թե ես չեմ ճանաչում նրան, չգիտեմ այն սուտը, որով համակված է նա ամբողջապես... Եթե նա մի բան զգար, մի՞թե կարող էր ապրել այսպես, ինչպես ապրում է ինձ հետ։ Նա ոչինչ չի հասկանում, չի զգում։ Մի՞թե կարող է որևէ բան զգացող մարդն ապրել իր հանցավոր կնոջ հետ միևնույն տան մեջ։ Մի՞թե կարելի է խոսել այդ կնոջ հետ։ Ասել նրան դու։

Եվ նորից Աննան ակամա ներկայացրեց նրան. «Դու, ma chêre, դու, Աննա»։

— Նա տղամարդ չէ, մարդ չէ, նա տիկնիկ է։ Ո՛չ ոք չգիտե, բայց ես գիտեմ։ Օ՜, եթե ես լինեի նրա տեղը, վաղուց կսպանեի, կպատառոտեի, կտոր-կտոր կանեի այդպիսի կնոջը, որպիսին ես եմ, այլ ո՛չ թե կասեի. դու, ma chère, Աննա։ Նա մարդ չէ, մինիստրական մեքենա է։ Նա չի հասկանում, որ ես քո՛ կինն եմ, որ ինքն օտար է, որ ինքն ավելորդ է... Չխոսեմ՞ք, չխոսե՞նք...

— Դու իրավացի չես ու չես, իմ բարեկամ,— ասաց Վոռնսկին, աշխատելով հանգստացնել Աննային։— Բայց միևնույն է, չխոսենք նրա մասին։ Պատմիր ինձ, թե ի՞նչ էիր անում դու։ Ի՞նչ է պատահել քեզ։ Ի՞նչ հիվանդություն է այդ, և ի՞նչ ասաց բժիշկը։

Աննան նայում էր նրան ծաղրական խնդությամբ։ Երևում է, նա գտավ ամուսնու մեջ էլի ծիծաղելի և այլանդակ կողմեր ու սպասում էր ժամանակի, որ արտահայտի դրանք։

Բայց Վոռնսկին շարունակեց.

— Ես գլխի եմ ընկնում, որ դա հիվանդություն չէ, այլ քո հղիությունն է։ Ե՞րբ պիտի լինի։

Ծաղրական փայլը մարեց Աննայի աչքերում, բայց մի այլ ժպիտ՝ Վոռնսկուն անհայտ ինչ-որ բանի իմացության ու խաղաղ թախծի ժպիտը փոխարինեց Աննայի նախկին արտահայտությունը։

— Շուտով, շուտով։ Դու ասում էիր, որ մեր դրությունը տանջալից է, որ պետք է լուծել այն։ Եթե դու իմանայիր, թե որքա՜ն ծանր է այն ինձ համար. ի՞նչ ասես չէի տա, որ կարողանայի ազատ ու համարձակ սիրել քեզ։ Ես չէի տանջվի, քեզ էլ չէի տանջի իմ խանդով... Եվ դա կլինի շուտով, բայց ո՜չ այնպես, ինչպես կարծում ենք մենք։

Եվ մտածելով այն մասին, թե ինչպե՞ս կլինի դա, Աննան թվաց ինքն իրեն այնպես ողորմելի, որ արցունքներ երևացին նրա աչքերում ու նա չկարողացավ շարունակել։ Նա դրեց լամպի տակ մատանիներով ու սպիտակությամբ փայլող իր ձեռքը Վոռնսկու թևին։

— Դա չի լինի այնպես, ինչպես կարծում ենք մենք։ Ես չէի ուզում դա ասել քեզ, բայց դու ստիպեցիր ինձ։ Շուտով, շուտով ամեն բան կլուծվի, ամեն բան կհանդարտվի, և մենք այլևս չենք տանջվի։

— Ես չեմ հասկանում քեզ,— ասաց Վոռնսկին, հասկանալով նրան։

— Դու հարցնում էիր՝ ե՞րբ։ Շուտով։ Ես դրանից ավելի չեմ ապրի։ Մի՛ ընդհատիր։— Եվ Աննան շտապեց ասել։— Ես գիտեմ դա ու գիտեմ հաստատ։ Ես կմեռնեմ և շատ ուրախ եմ, որ կմեռնեմ ու կազատեմ ինձ և ձեզ։

Արցունքները հոսեցին նրա աչքերից. Վոռնսկին կռացավ

նրա ձեռքի վրա, աշխատելով ծածկել իր հուզմունքը, որը ինչպես նա համոզված էր, ո՛չ մի հիմք չուներ, բայց անկարող էր հաղթահարել այն։

— Ա՜յ, այդպես, ա՜յ, այդպես ավելի լավ է,— ասում էր Աննան, սեղմելով ուժեղ շարժումով նրա ձեռքը։— Ահա միակ, միակ բանը, որ մնացել է մեզ։

Վոռնսկին ուշքի եկավ ու բարձրացրեց գլուխը։

— Ի՞նչ անմիտ, դատարկ բան։ Ի՞նչ անիմաստ փո՛ւչ բան ես ասում դու։

— Ո՛չ, ճիշտ բան է դա։

— Ի՞նչ, ի՞նչն է ճիշտ։

— Այն, որ ես կմեռնեմ։ Ես երազ տեսա։

— Երա՞զ,— կրկնեց Վոռնսկին ու վայրկենապես հիշեց իր երազի մուժիկին։

— Այո՛, երազ,— ասաց Աննան։— Ես վաղուց եմ տեսել այդ երազը։ Ես տեսա, որ վազեվազ մտա իմ ննջարանը, մի բան պետք է վերցնեի այնտեղից, մի բան իմանայի. գիտես, ինչպես որ լինում է երազի մեջ,— ասում էր նա, սարսափահար լայն բանալով աչքերը,— և ննջարանում՝ անկյունում դրված էր ինչ-որ բան...

— Ա՜խ, ի՞նչ դատարկ բան։ Ինչպե՞ս կարելի է հավատալ...

Բայց Աննան թույլ չտվեց ընդհատել իրեն։ Այն, ինչ ասում էր նա, չափազանց կարևոր էր իր համար։

— Եվ այդ ինչ-որ բանը շուռ եկավ, ու ես տեսա, որ դա մի մուժիկ էր՝ գզգզված մորուքով, փոքրիկ և սարսափելի։ Ես ուզում էի փախչել, բայց նա կռացավ տոպրակի վրա ու ձեռքերով խառնում, մի բան էր անում այնտեղ...

Աննան ցույց տվեց, թե ինչպե՞ս էր նա խառնում տոպրակի մեջ։ Սարսափ կար Աննայի դեմքին։ Եվ Վոռնսկին, մտաբերելով իր երազը, զգում էր նույնպիսի սարսափ, որով լցվում էր նրա հոգին։

— Նա խառնում էր տոպրակի մեջ և ասում ֆրանսերեն. շուտով-շուտով ու, գիտե՞ս ռեեղծում[1] էր։ «Il faut le battre le fer, le broyer, le pétrir[2]...»։ Եվ վախից ես ուզեցի զարթնել,

[1] Ռ տառը ղ արտասանել։

[2] Պետք է երկաթը ծեծել, շարդել, տրորել։

զարթնեցի... բայց զարթնեցի երազի մեջ։ Ու սկսեցի հարցնել ինքս ինձ, թե ի՞նչ բան է դա։ Եվ Կորնեյն ինձ ասում էր. «Ծննդաբերությամբ, ծննդաբերությամբ կմեռնեք, ծննդաբերությամբ, մերիկ»... Ու ես զարթնեցի։

— Ի՞նչ անմիտ բան, ի՞նչ դատարկ բան,— ասում էր Վոռնսկին, բայց ինքն էլ զգում էր, որ համոզիչ չէր հնչում իր ձայնը։

— Սակայն չխոսենք դրա մասին։ Զանգահարիր, ես կհրամայեմ, որ թեյ տան մեզ։ Դե՞ սպասիր, այժմ ես երկար չեմ...

Բայց Աննան հանկարծ կանգ առավ։ Նրա դեմքի արտահայտությունը վայրկենապես փոխվեց։ Սարսափն ու հուզմունքը հանկարծ փոխարինվեցին խաղաղ, լուրջ և երջանիկ ուշադրության արտահայտությամբ։ Վռոնսկին չէր կարող հասկանալ այդ փոփոխության նշանակությունը։ Աննան զգաց իր մեջ նոր կյանքի շարժումը։

IV

Ալեքսեյ Ալեքսանդրովիչն իր տան սանդուղքների վրա Վռոնսկուն հանդիպելուց հետո գնաց իտալական օպերա, ինչպես և մտադիր էր։ Նա մնաց այնտեղ երկու գործողության ընթացքում և տեսավ բոլոր նրանց, ում պետք էր տեսնել։ Վերադառնալով տուն, ուշադրությամբ նայեց կախարանը և նկատելով, որ զինվորականի վերարկու չկա, սովորականի պես անցավ իր սենյակը։ Բայց հակառակ սովորության՝ նա չպառկեց քնելու և մինչև գիշերվա ժամը երեքը ետ ու առաջ գնում-գալիս էր իր առանձնասենյակում։ Նրան հանգիստ չէր տալիս ցասումի զգացումը կնոջ դեմ, որը չուզեց պահել վայելչության պահանջները և կատարել իր առաջ դրված միակ պայմանը՝ չընդունել իր բնակարանում իր սիրեկանին։ Աննան չկատարեց ամուսնու պահանջը, ուստի Ալեքսեյ Ալեքսանդրովիչը պետք է իրագործի իր սպառնալիքը՝ պահանջի ապահարզան ու խլի որդուն։ Նա գիտեր այդ գործի հետ կապված բոլոր դժվարությունները, բայց նա ասաց, որ կանի այդ և այժմ պետք է կատարեր իր սպառնալիքը։ Կոմսուհի Լիդիա Իվանովնան ակնարկում էր նրան, թե դա լավագույն ելքն էր ստեղծված դրությունից, և վերջերս ապահարզանների պրակտիկան այդ գործը հասցրել էր այնպիսի կատարելագործության, որ Ալեքսեյ Ալեքսանդրովիչը հնարավոր էր համարում հաղթահարել ձևական դժվարությունները։ Բացի դրանից, դժբախտությունը մենակ չի գալիս. այլազգիների կարգուսարքավորման և Զարայսկի նահանգի դաշտերի ոռոգման գործերն այնպիսի անախորժություններ պատճառեցին Ալեքսեյ Ալեքսանդրովիչին ծառայության գծով, որ նա այս վերջին ամբողջ ժամանակ ծայրաստիճան գրգռված էր։

Նա ամբողջ գիշեր չքնեց, և նրա ցասումը, աճելով ինչ-որ հսկայական պրոգրեսիայի կարգով, առավոտյան դեմ հասավ ծայրահեղ չափերի։ Նա շտապ հագնվեց և կարծես տանելով ցասման լիքը բաժակը ու վախենալով, չլինի թե թափի, վախենալով, չլինի թե ցասումի հետ կորցնի այն եռանդը, որ պետք է նրան կնոջ հետ բացատրվելու համար, մտավ նրա սենյակը, երբ իմացավ, որ նա վեր է կացել։

Աննան, որը կարծում էր, թե այնպես լավ ճանաչում է իր ամուսնուն, ապշեց նրա տեսքից, երբ նա ներս մտավ։ Նրա ճակատը մռայլված էր, և աչքերը խոժոռաբար նայում էին իրենց դիմացը, խուսափելով կնոջ հայացքից, պռոշներն ամուր և արհամարհալից սեղմված էին։ Նրա քայլվածքի, շարժումների, ձայնի հնչյունի մեջ կար վճռականություն ու հաստատակամություն, որպիսի բան կինը երբեք չէր տեսել նրա մեջ։ Նա մտավ սենյակ և առանց բարևելու կնոջը, ուղիղ դիմեց դեպի նրա գրասեղանը և վերցնելով բանալիները, բացեց արկղը։

— Ձեզ ի՞նչ է պետք,— ճչաց Աննան։

— Ձեր սիրեկանի նամակները,— ասաց նա։

— Դրանք այստեղ չեն,— ասաց Աննան, փակելով արկղը։ Բայց այդ շարժումից նա հասկացավ, որ ճիշտ գուշակեց և կոպտաբար մեկդի հրելով կնոջ ձեռքը, արագ վերցրեց պորտֆելը, որտեղ, նա գիտեր, կինը դնում էր ամենակարևոր թղթերը։ Աննան ուզում էր խլել պորտֆելը, բայց ամուսինը հրեց նրան։

— Նստեք. ես պետք է խոսեմ ձեզ հետ,— ասաց նա, պորտֆելը դնելով թևի տակ ու արմունկով այնպես լարված սեղմելով այն, որ նրա ուսը բարձրացավ։

Աննան զարմանքով ու երկչոտությամբ լուռ նայում էր նրան։

— Ես ասացի, որ թույլ չեմ տա ձեզ՝ ընդունելու ձեր սիրեկանին մեր տանը։

— Ինձ հարկավոր էր տեսնել նրան, որպեսզի...

Աննան կանգ առավ, չկարողանալով ոչինչ հնարել։

— Ես չեմ մտնում այն մանրամասների մեջ, թե ինչի՛ համար է կինը ուզում տեսնել իր սիրեկանին։

— Ես ուզում էի, ես միայն...— բռնկվելով ասաց Աննան։ Ամուսնու այդ կոպտությունը գրգռեց Աննային ու նրան տվեց համարձակություն։— Մի՞թե դուք չեք զգում, թե որքան հեշտ է ձեզ համար վիրավորել ինձ,— ասաց նա։

— Վիրավորել կարելի է միայն ազնիվ մարդուն և ազնիվ կնոջը, բայց գողին ասել, որ նա գող է, նշանակում է միայն le constatation d'un fait[1]։

— Դաժանության այդ նոր գիծը ես դեռ չգիտեի ձեր մեջ։

— Դուք դաժանությո՞ւն եք անվանում այն, որ ամուսինը տրամադրում է կնոջն ազատություն, տալով նրան իր անվան ազնիվ պատսպարանը՝ պատշաճության պահանջները կատարելու պայմանով միայն։ Դաժանությո՞ւն է դա։

— Դա ավելի վատ է դաժանությունից, դա ստորությո՛ւն է, եթե կուզեք իմանալ,— զայրույթի պոռթկումով ճչաց Աննան և վեր կենալով, ուզում էր դուրս գալ։

— Ո՛չ,— գոռաց նա իր ճղճղան ձայնով, որ հնչեց այժմ սովորականից մի նոտայով բարձր։ Եվ իր մեծ մատներով բռնելով կնոջ ձեռքն այնպես ուժեղ, որ նրա վրա մնացին կարմիր հետքեր ապարանջանից, որը նա սեղմեց, ուժով նստեցրեց Աննային իր տեղը։— Ստորությո՞ւն։ Եթե դուք ուզում եք գործածել այդ բառը, ապա գիտցեք՝ ստորությունն այն է, որ կինը սիրեկանի համար թողնում է ամուսնուն, որդուն և ուտում է ամուսնու հացը։

Աննան խոնարհեց գլուխը։ Նա ոչ միայն չասաց այն, ինչ ասում էր երեկ սիրեկանին, թե նա է իր ամուսինը, իսկ ամուսինն ավելորդ է. նա նույնիսկ չմտածեց այդ մասին։ Աննան

[1] Փաստը հաստատել։

զգաց նրա խոսքերի ամբողջ ճշմարտությունը և միայն ասաց կամաց.

— Դուք չեք կարող նկարագրել իմ դրությունն ավելի վատ, քան ես ինքս եմ հասկանում այն, բայց ինչի՞ համար եք ասում այդ բոլորը։

— Ինչի՞ համար եմ ասում այդ, ինչի՞ համար,— շարունակեց Ալեքսեյ Ալեքսանդրովիչը նույնպես ցասկոտ։— Որպեսզի դուք իմանաք, քանի որ դուք չկատարեցիք իմ կամքը՝ պատշաճության պահանջները պահպանելու վերաբերյալ, ես միջոցներ ձեռք կառնեմ, որպեսզի վերջ տրվի այդ վիճակին։

— Առանց այդ էլ շուտով, շուտով կվերջանա այդ դրությունը,— ասաց Աննան, և նորից արցունքներ շողացին նրա աչքերում, մտածելով մոտիկ, այժմ արդեն ցանկալի մահվան մասին։

— Այն կվերջանա ավելի վաղ, քան կարծում եք դուք ձեր սիրեկանի հետ։ Ձեզ հարկավոր է բավարարել ձեր անասնական կիրքը...

— Ալեքսեյ Ալեքսանդրովիչ, ես ասում եմ, որ ո՛չ միայն մեծահոգություն չէ, այլ կարգին մարդու արարք չէ՝ ծեծել ընկածին։

— Այո՛, դուք մտածում եք միայն ձեր մասին, բայց ձեզ չեն հետաքրքրում այն մարդու տառապանքները, որը եղել է ձեր ամուսինը։ Ձեզ համար միևնույն է, որ խորտակվեց նրա ամբողջ կյանքը, որ նա տալա... տապա... տալապեց։

Ալեքսեյ Ալեքսանդրովիչը խոսում էր այնպես արագ, որ խճճվեց ու ո՛չ մի կերպ չկարողացավ արտասանել այդ բառը։ Նա վերջ ի վերջո այն արտասանեց տալապեց։ Աննայի ծիծաղն եկավ և անմիջապես ամոթահարվեց, որ այդպիսի բոպեին որևէ բան կարող էր ծիծաղելի թվալ իրեն։ Եվ առաջին անգամ նա մի վայրկյան զգաց ամուսնու փոխարեն, մտավ նրա դրության մեջ ու խղճաց նրան։ Բայց ի՞նչ կարող էր նա ասել կամ անել։ Նա կախ գցեց գլուխը և լուռ էր։ Միառժամանակ լուռ էր նաև Ալեքսեյ Ալեքսանդրովիչը և հետո խոսեց արդեն ավելի պակաս ճղճղան ու սառը ձայնով, շեշտելով կամայականորեն ընտրած, առանձին կարևորություն չունեցող խոսքերը։

— Ես եկա ասելու ձեզ...— ասաց նա։

Աննան նայեց նրան։ «Ո՛չ, դա թվաց ինձ,— մտածեց Աննան հիշելով նրա դեմքի արտահայտությունը, երբ նա խճճվեց տալապեց խոսքն արտասանելիս,— ո՛չ, մի՞թե այս պղտոր աչքերով, այս ինքնաբավական հանգստությամբ մարդը կարող է զգալ որևէ բան»։

— Ես չեմ կարող ոչինչ փոխել,—շշնջաց Աննան։

— Ես եկա ասելու ձեզ, որ վաղը գնում եմ Մոսկվա և այլևս չեմ վերադառնա այս տունը, ու դուք իմ որոշման մասին լուր կստանաք փաստաբանից, որին ես կհանձնեմ ապահարզանի գործը։ Իսկ իմ որդին կգնա քրոջս մոտ,— ասաց Ալեքսեյ Ալեքսանդրովիչը, դժվարությամբ հիշելով այն, ինչ ուզում էր ասել որդու մասին։

— Ձեզ Սերյոժան պետք է՝ ինձ ցավ պատճառելու համար,— ասաց Աննան, հոնքերի տակից նայելով ամուսնուն։— Դուք չեք սիրում նրան։ Թողեք Սերյոժային...

— Այո՛, ես կորցրի նույնիսկ սիրո զգացումը որդուս նկատմամբ, որովհետև նրա հետ կապված է իմ զզվանքը դեպի ձեզ, բայց և այնպես ես կվերցնեմ նրան։ Մնաք բարով։

Եվ նա ուզում էր դուրս գնալ, բայց այժմ Աննան պահեց նրան։

— Ալեքսեյ Ալեքսանդրովիչ, թողեք Սերյոժային,— շշնջաց Աննան էլի մի անգամ։— Ես ասելու ուրիշ բան չունեմ։ Թողեք Սերյոժային մինչև իմ... Ես շուտով կազատվեմ, թողեք նրան։

Ալեքսեյ Ալեքսանդրովիչը բռնկվեց և պոկելով թևը կնոջ ձեռքից, լուռ դուրս գնաց սենյակից։

V

Պետերբուրգի հռչակավոր փաստաբանի ընդունարանը լիքն էր, երբ Ալեքսեյ Ալեքսանդրովիչը մտավ այնտեղ։ Երեք տիկիններ՝ պառավ, ջահել և մի վաճառականի կին, երեք պարոններ՝ մի բանկիր-գերմանացի, մատին մատանի, մյուսը՝ մորուքով մի վաճառական և երրորդը՝ բարկացկոտ չինովնիկ՝ համազգեստով, վզին խաչ, հավանորեն վաղուց արդեն սպասում էին։ Փաստաբանի երկու օգնականները գրում էին, նստած սեղանների առաջ, ճոճոացնելով գրիչները։ Գրենական

պիտույքներն առանձնապես լավն էին, որոնց թո՛ւնդ սիրահար էր Ալեքսեյ Ալեքսանդրովիչը։ Նա չէր կարող չնկատել այդ։ Օգնականներից մեկը, առանց վեր կենալու, աչքերը կկոցելով, բարկացած դիմեց նրան։

— Ի՞նչ եք կամենում։

— Գործ ունեմ փաստաբանի հետ։

— Փաստաբանն զբաղված է,— պատասխանեց օգնականը խիստ, գրչով նշելով սպասողներին ու շարունակեց գրել։

— Արդյոք նա չի՞ կարող ժամանակ գտնել,— ասաց Ալեքսեյ Ալեքսանդրովիչը։

— Նա ազատ ժամանակ չունի, նա միշտ զբաղված է։ Բարեհաճեցեք սպասել։

— Այդ դեպքում՝ չէի՞ք կարող արդյոք իմ այցետոմսը տալ նրան,— արժանապատվությամբ ասաց Ալեքսեյ Ալեքսանդրովիչը, տեսնելով, որ անհրաժեշտ է բացել իր անձնածածկումը։

Օգնականը վերցրեց այցետոմսը և հայտնապես հավանություն չտալով նրա բովանդակությանը, ներս մտավ դռնից։

Ալեքսեյ Ալեքսանդրովիչը սկզբունքով համակրում էր հրապարակական դատարանը, բայց նրա որոշ մանրամասների կիրառումն Ռուսաստանում համակրում էր ո՛չ լիովին, իրեն հայտնի բարձրագույն պաշտոնական հարաբերությունների տեսակետից, և դատապարտում էր դրանք, որչափով նա կարող էր դատապարտել բարձրագույնորեն հաստատված որևէ բան։ Նրա ամբողջ կյանքն անց էր կացել վարչական գործունեության մեջ, այս իսկ պատճառով, երբ նա չէր համակրում որևէ բան, հակակրանքը մեղմանում էր յուրաքանչյուր գործի մեջ սխալների անհրաժեշտության և դրանք ուղղելու հնարավորության գիտակցությամբ։ Նոր դատական հիմնարկներում նա հավանություն չէր տալիս այն պայմաններին, որոնց մեջ դրված էր փաստաբանությունը։ Բայց նա մինչև այդ օրը գործ չէր ունեցել փաստաբանության հետ, ուստի, հավանություն չէր տալիս նրան միայն տեսականորեն. իսկ այժմ նրա անհավանությունն է՛լ ավելի ուժեղացավ այն անախորժ տպավորությամբ, որ նա ստացավ փաստաբանի ընդունարանում։

— Այս րոպեին դուրս կգա,— ասաց օգնականը, և իրոք երկու րոպեից հետո դռան մեջ երևաց փաստաբանի հետ

խորհրդակցող ծերունի իրավագետի երկար ու իր՝ փաստաբանի ֆիգուրը։

Փաստաբանը փոքրիկ, ջլապինդ, ճաղատ մարդ էր, սև-շիկավուն մորուքով, բացգույն երկար հոնքերով և թեք ճակատով։ Նա զուգված էր, ինչպես փեսացու, փողկապից ու կրկնակի շղթայից սկսած մինչև լաքե կոշիկները։ Դեմքը խելոք էր, մուժիկի, իսկ զգեստը՝ ֆրանտի և վատ ճաշակի։

— Համեցեք,— ասաց փաստաբանը, դիմելով Ալեքսեյ Ալեքսանդրովիչին։ Եվ մոայլադեմ առաջ գցելով Կարենինին, նա ծածկեց դուռը։— Չէի՞ք կամենա։— Նա նշեց վրան թղթեր դարսած գրասեղանի մոտի բազկաթոռը և ինքը նստեց նախագահական տեղը, տրորելով սպիտակ մազերով պատած կարճ մատներով փոքրիկ ձեռքերը և թեքելով գլուխը մի կողքի։ Բայց հենց որ նա հանգստացավ իր դիրքում, սեղանի վրայով թռավ մի ցեց։ Փաստաբանն այնպիսի արագությամբ, որպիսին չէր կարելի սպասել նրանից, բացեց թևերը, բռնեց ցեցը և նորից ընդունեց իր նախկին դիրքը։

— Նախքան իմ գործի մասին խոսելը,— ասաց Ալեքսեյ Ալեքսանդրովիչը, աչքերով զարմացած հետևելով փաստաբանի շարժումին,— ես պետք է նկատեմ, որ պիտի գաղտնի մնա այն գործը, որի մասին խոսելիք ունեմ ձեզ հետ։

Հազիվ նկատելի ժպիտը շարժեց փաստաբանի կախ ընկած շիկավուն բեղերը։

— Ես փաստաբան չէի լինի, եթե չկարողանայի պահել ինձ վստահած գաղտնիքները։ Բայց եթե դուք կամենում եք հավաստիացում...

Ալեքսեյ Ալեքսանդրովիչը նայեց նրա դեմքին և տեսավ, որ նրա մոխրագույն խելոք աչքերը ծիծաղում են ու կարծես թե արդեն ամեն բան գիտեն։

— Դուք գիտե՞ք իմ ազգանունը,— շարունակեց Ալեքսեյ Ալեքսանդրովիչը։

— Գիտեմ ձեզ ու ձեր օգտակար,— նա նորից բռնեց մի ցեց,— գործունեությունը, ինչպես և յուրաքանչյուր ռուս մարդ,— ասաց փաստաբանը, գլուխը խոնարհելով։

Ալեքսեյ Ալեքսանդրովիչը հառաչեց, սիրտ առնելով։ Բայց մի անգամ արդեն վճռած լինելով իր որոշումն անելու, նա շարունակեց իր ճղճղան ձայնով, առանց վարանելու ու կմկմալու՝ շեշտելով որոշ բառեր։

— Ես դժբախտություն ունեմ,— սկսեց Ալեքսեյ Ալեքսանդրովիչը,— լինելու խաբված ամուսին և ուզում եմ օրինական կերպով խզել իմ կապերը կնոջս հետ, այսինքն՝ բաժանվել, բայց մի պայմանով, որ որդիս չմնա մոր հետ։

Փաստաբանի գորշ աչքերն աշխատում էին չծիծաղել, սակայն նրանք ցատկոտում էին անզուսպ ուրախությունից, և Ալեքսեյ Ալեքսանդրովիչը տեսավ, որ այստեղ այն մարդու ուրախությունը չէր միայն, որն ստանում էր շահեկան պատվեր, այստեղ կար հաղթանակ ու հիացք, կար մի փայլ, նման շարագուշակ այն փայլի, որ ինքը տեսել էր կնոջ աչքերում։

— Դուք ցանկանում եք իմ աջակցությունը՝ ապահարզա՞ն ստանալու համար։

— Այո՛, հենց այդ, բայց պետք է նախազգուշացնեմ ձեզ, որ ես ոչիսկ եմ անում ի չարը գործ դնելու ձեր ուշադրությունը։ Ես եկա միայն նախապես խորհրդակցելու ձեզ հետ։ Ես ցանկանում եմ ապահարզան, բայց ինձ համար կարևոր են ձևերը, որոնցով հնարավոր է այն։ Շատ կարող է պատահել, որ եթե ձևերը չզուգադիպեն իմ պահանջներին, ես հրաժարվեմ հայցից։

— Օ՜, դա միշտ այդպես է, —ասաց փաստաբանը,— և դա միշտ ձեր կամքից է կախված։

Փաստաբանն աչքերը ցած գցեց Ալեքսեյ Ալեքսանդրովիչի ոտքերի վրա, զգալով, որ ինքն իր անզուսպ ուրախությամբ կարող է վիրավորել այցելուին։ Նա նայեց իր քթի տակից թռած-անցած ցեցին և ձեռքը ցնցեց, բայց չբռնեց՝ դեպի Ալեքսեյ Ալեքսանդրովիչը տածած հարգանքի զգացումից։

— Թեպետ մեր օրենսդրություններն այդ առարկայի մասին ընդհանուր գծերով հայտնի են ինձ,— շարունակեց Ալեքսեյ Ալեքսանդրովիչը,— բայց ես կուզենայի իմանալ ընդհանուր այն ձևերը, որոնցով պրակտիկայում կատարվում են այդ կարգի գործերը։

— Դուք ցանկանում եք,— առանց բարձրացնելու գլուխը, պատասխանեց փաստաբանը, ո՛չ առանց բավականության մտնելով իր այցելուի խոսակցության տոնի մեջ,— որպեսզի

ես նկարագրեմ ձեզ այն ուղիները, որոնցով հնարավոր է ձեր ցանկության իրագործումը։

Եվ տեսնելով Ալեքսեյ Ալեքսանդրովիչի գլխի դրական շարժումը, նա շարունակեց երբեմն միայն հարևանցիորեն նայելով Ալեքսեյ Ալեքսանդրովիչի կարմիր բծերով պատած դեմքին։

— Ապահարզանը մեր օրենքներով,— ասաց նա անհավանության թեթև նրբերանգ ցուցադրելով մեր օրենքների վերաբերյալ,— հնարավոր է, ինչպես հայտնի է ձեզ, հետևյալ դեպքերում... Սպասել,— դիմեց նա գլուխը դռնից ներս պարզած օգնականին։ Բայց և այնպես վեր կացավ, ասաց մի քանի խոսք ու նորից նստեց։— Հետևյալ դեպքերում. ամուսինների ֆիզիկական պակասություններ, հետո հնգամյա անհայտ բացակայություն,— ասաց նա, ծալելով մազապատ կարճ մատը։— Ապա շնություն (այդ բառը նա արտասանեց բացահայտ բավականությամբ)։ Ստորաբաժանումները հետևյալներն են (նա շարունակում էր ծալել իր հաստ մատները, թեև դեպքերն ու ստորաբաժանումները ակնհայտորեն չէին կարող որակավորվել միասին). ամուսնու կամ կնոջ ֆիզիկական պակասությունները, հետո ամուսնու կամ կնոջ շնությունը։— Որովհետև բոլոր մատները ծալված էին, նա դրանք բացեց ու շարունակեց.—Դա տեսական հայեցակետն է, բայց ես կարծում եմ, դուք շնորհ եք արել դիմելու ինձ նրա համար, որ իմանաք գործնական կիրառումը։ Այդ իսկ պատճառով, ղեկավարվելով նախադեպերով, ես պետք է զեկուցեմ ձեզ, որ ապահարզանի բոլոր դեպքերը հանգում են հետևյալին. ֆիզիկական պակասություններ չկա՞ն, ինչպես ես եմ հասկանում, չկա նույնպես անհայտ բացակայությո՞ւն...

Ալեքսեյ Ալեքսանդրովիչը գլխով դրական նշան արեց։

— Հանգում են հետևյալին. ամուսիններից մեկի շնությունը և հանցավոր կողմը հանցագործության մեջ բռնելը փոխադարձ համաձայնությամբ, ու, անկախ այդպիսի համաձայնությունից, հանցանքի մեջ ակամա բռնելը։ Պետք է ասեմ, որ վերջին դեպքը սակավ է պատահում պրակտիկայում,— ասաց փաստաբանը և հարևանցիորեն նայելով Ալեքսեյ Ալեքսանդրովիչին, լռեց, որպես ատրճանակներ վաճառող, որն այս կամ այն զենքի առավելությունը նկարագրելուց հետո

սպասում է իր գնորդի ընտրությանը։ Բայց Ալեքսեյ Ալեքսանդրովիչը լուռ էր, այդ պատճառով փաստաբանը շարունակեց,— ամենասովորականն ու պարզը, խոհականը, ես կարծում եմ, փոխադարձ համաձայնությամբ շնությունն է։ Ես ինձ թույլ չէի տա այդպես արտահայտվելու, խոսելով չզարդացած մարդու հետ,— ասաց փաստաբանը,— սակայն ենթադրում եմ, որ մեզ համար հասկանալի է դա։

Բայց Ալեքսեյ Ալեքսանդրովիչն այնպես հուզված էր, որ միանգամից չհասկացավ փոխադարձ համաձայնությամբ շնության խոհականությունը, և այդ տարակուսանքն արտահայտեց իր հայացքով. սակայն փաստաբանն անմիջապես օգնեց նրան.

— Մարդիկ այլևս չեն կարող ապրել միասին՝ ահա փաստը։ Եվ եթե երկուսն էլ այդ բանում համաձայն են, ապա մանրամասներն ու ձևականությունները դառնում են անկարևոր հաղամանք։ Իսկ այսուհանդերձ դա ամենապարզ և ամենաճշգրիտ միջոցն է։

Ալեքսեյ Ալեքսանդրովիչն այժմ լիովին հասկացավ, բայց նա ուներ կրոնական պահանջներ, որոնք խանգարում էին այդ միջոցի կիրառումը։

— Ներկա դեպքում դա հարցից դուրս է,— ասաց նա։— Այստեղ հնարավոր է միայն մի դեպք. հանցանքի մեջ ակամա բռնվելը, հաստատված նամակներով, որ ես ունեմ։

Նամակների մասին հիշատակություն անելիս փաստաբանը սեղմեց շրթունքները և արձակեց բարակ, ցավակցական ու արհամարհական մի հնչյուն։

— Բարեհաճեցեք տեսնել,— ասաց նա։— Այդ կարգի գործերը վճռում է, ինչպես հայտնի է ձեզ, հոգևոր վարչությունը, իսկ հայր ավագ երեցներն այդ կարգի գործերում թունդ սիրահար են ամենափոքրիկ մանրամասների,— ասաց նա ժպիտով, որը ցույց էր տալիս նրա համակրանքը ավագ երեցների ճաշակի վերաբերյալ։— Նամակներն անպայման կարող են հաստատել մասամբ. բայց հանցանքի փաստանշանները պետք է ձեռք բերված լինեն ուղղակի ճանապարհով, այսինքն՝ վկաների միջոցով։ Իսկ առհասարակ, եթե դուք պատիվ անեք ինձ արժանացնելու նվաստիս ձեր վստահությանը, ի՛նձ թողեք այն միջոցների ընտրությունը, որոնք

պետք է գործադրվեն։ Ով ուզում է հետևանք, նա թույլ է տալիս և միջոցներ։

— Եթե այդպես է...— հանկարծ գունաթափվելով սկսեց Ալեքսեյ Ալեքսանդրովիչը, բայց այդ միջոցին փաստաբանը վեր կացավ և նորից մոտեցավ դռանը՝ իրեն ընդհատող իր օգնականին։

— Ասեք այդ կնոջը, որ մենք էժան ապրանք ծախող չենք,— ասաց նա և վերադարձավ Ալեքսեյ Ալեքսանդրովիչի մոտ։

Ետ դառնալով իր տեղը, նա աննկատելի բռնեց էլի մի ցեց։ «Լավ օրի կընկնի իմ ռեպսը մինչև ամառ», մտածեց նա խոժոռվելով։

— Այսպես ուրեմն, դուք կամենում էիք ասել...— ասաց նա։

— Ես իմ որոշումը կհայտնեմ գրավոր,— ասաց Ալեքսեյ Ալեքսանդրովիչը վեր կենալով ու բռնեց սեղանից։ Մի փոքր լուռ կանգնելուց հետո նա ասաց.— Ձեր խոսքերից ես կարող եմ ուրեմն եզրակացնել, որ հնարավոր է ապահարզանը։ Ես կխնդրեի ձեզ հայտնել ինձ նույնպես ձեր պայմանները։

— Ամեն բան հնարավոր է, եթե դուք ինձ վերապահեք գործողությունների լիովին ազատություն,— ասաց փաստաբանը, չպատասխանելով հարցին։— Ե՞րբ կարող եմ հույս ունենալ ստանալու ձեզանից տեղեկություններ,— հարցրեց փաստաբանը, առաջանալով դեպի դուռը և փայլելով թե՛ իր աչքերով, թե՛ լաքե կոշիկներով։

— Մի շաբաթից։ Իսկ ձեր պատասխանն այն մասին, արդյոք հա՞նձն եք առնում դուք այդ գործի միջնորդությունը և ի՞նչ պայմանով, բարի եղեք հաղորդելու ինձ։

— Շատ բարի։

Փաստաբանը հարգալից գլուխ խոնարհեց, դուրս թողնելով դռնից այցելուին, և մնալով մենակ, անձնատուր եղավ իր ուրախ զգացումին։ Նա այնքան ուրախացավ, որ հակառակ իր սկզբունքներին, զիջեց սակարկող տիկնոջը և դադարեց ցեցեր որսալուց, վերջնականապես վճռելով, որ առաջիկա ձրմեռվա համար պետք է կահույքի երեսը փոխել, պատել թավիշով, Սիգոնինի պես։

VI

Ալեքսեյ Ալեքսանդրովիչը փայլուն հաղթանակ տարավ օգոստոսի տասնյոթի հանձնաժողովի նիստին, բայց այդ հաղթանակի հետևանքները փորձանք դարձան նրա գլխին։ Այլազգիների կենցաղն ամեն տեսակետից հետազոտելու նոր հանձնաժողովը կազմվեց և տեղ ուղարկվեց, Ալեքսեյ Ալեքսանդրովիչի հրահրած անսովոր արագությամբ ու եռանդով։ Երեք ամսից հետո ներկայացվեց հաշվետվություն։ Այլազգիների կենցաղը հետազոտվել էր քաղաքական, վարչական, տնտեսական, նյութական, ազգագրական և կրոնական տեսակետներից։ Բոլոր հարցերի վերաբերյալ շարադրվել, տրվել էին հիանալի պատասխաններ, և այնպիսի պատասխաններ, որոնք կասկածի տեղիք չէին տալիս, որովհետև նրանք արդասիքը չէին միշտ սխալների ենթակա մարդկային մտքի, այլ բոլորն էլ արտադրանք էին պաշտոնական գործունեության։ Բոլոր պատասխանները հետևանք էին նահանգապետների և եպիսկոպոսների պաշտոնական տվյալների, տեղեկագրերի, հիմնված գավառապետների ու հոգևոր գործակալների տեղեկագրերի վրա, որոնք իրենց հերթին հիմնված էին գավառակային վարչությունների և ծխատեր քահանաների տեղեկագրերի վրա։ Այս իսկ պատճառով այդ բոլոր պատասխանները կասկածից դուրս էին։ Բոլոր այն հարցերն, օրինակ, թե ինչո՞ւ է լինում անբերրիություն, ինչո՞ւ բնակիչները հավատարիմ են իրենց հավատալիքներին և այլն, հարցեր, որոնք առանց պաշտոնական մեքենայի հարմարության չեն լուծվում և լուծվել չեն կարող դարերով, ստացան պարզ, աներկբա լուծում։ Եվ լուծումը հօգուտ Ալեքսեյ Ալեքսանդրովիչի կարծիքի էր։ Բայց Ստրեմովը, իրեն սաստիկ վիրավորված զգալով վերջին նիստին, հանձնաժողովի տեղեկագրերն ստանալիս գործադրեց Ալեքսեյ Ալեքսանդրովիչի համար անսպասելի տակտիկա։ Ստրեմովը, գրավելով մի քանի ուրիշ անդամների, հանկարծ անցավ Ալեքսեյ Ալեքսանդրովիչի կողմը և ո՛չ միայն ջերմորեն պաշտպանում էր Կարենինի առաջարկած միջոցների կենսագործումը, այլև առաջարկում էր այդ ոգով ծայրահեղ այլ միջոցներ։ Այդ միջոցները, է՛լ ավելի ուժեղացրած Ալեքսեյ Ալեքսանդրովիչի հիմնական մտքի

համեմատությամբ, ընդունվեցին, և այն ժամանակ բացվեց Ստրեմովի տակտիկան։ Այդ միջոցները, հասցրած ծայրահեղության, հանկարծ դուրս եկան այնքան տխմար, որ միաժամանակ թե՛ պետական մարդիկ, թե՛ հասարակական կարծիքը, թե՛ խելոք տիկինները, թե՛ թերթերը՝ բոլորը հարձակվեցին այդ միջոցների վրա, արտահայտելով իրենց վրդովմունքը և՛ այդ միջոցների դեմ, և՛ նրանց հայր համարվող Ալեքսեյ Ալեքսանդրովիչի դեմ։ Իսկ Ստրեմովը քաշվեց մի կողմ, ձևանալով, իբր ինքը միայն կուրորեն հետևել է Կարենինի ծրագրին և հիմա զարմացած ու վրդովված է եղածով։ Այդ հանգամանքը ջլատեց Ալեքսեյ Ալեքսանդրովիչին։ Բայց չնայած քայքայվող առողջության, չնայած ընտանեկան դառնություններին, Ալեքսեյ Ալեքսանդրովիչն անձնատուր չէր լինում։ Հանձնաժողովի մեջ առաջացավ պառակտում։ Անդամներից ոմանք, Ստրեմովի գլխավորությամբ, արդարացնում էին իրենց սխալները նրանով, որ հավատացին Ալեքսեյ Ալեքսանդրովիչի ղեկավարությամբ գործող ու տեղեկագիրը ներկայացնող վերաքննիչ հանձնաժողովին և ասում էին, որ այդ հանձնաժողովի տեղեկագիրը դատարկ բան է ու նշանակում է թուղթ մրոտել միայն։ Ալեքսեյ Ալեքսանդրովիչը, մի խումբ մարդկանց հետ, տեսնելով դրությունների նկատմամբ այդպիսի հեղափոխական վերաբերմունքի վտանգը, շարունակում էր պաշտպանել վերաքննիչ հանձնաժողովի մշակած տվյալները։ Այդ բանի պատճառով բարձր շրջաններում, նույնիսկ հասարակության մեջ, ամեն ինչ խճճվեց, և չնայած որ ամենքին չափազանց հետաքրքրում էր դա, ոչ ոք չէր կարողանում հասկանալ, արդյոք իսկապե՞ս կարիքի մեջ են ու ոչնչանում են այլազգիները, թե՞ ծաղկում են։ Ալեքսեյ Ալեքսանդրովիչի դիրքը դրա հետևանքով և մասամբ նրա կնոջ դավաճանության վերաբերյալ եղած կասկածների պատճառով՝ դարձավ չափազանց խախուտ։ Եվ այս դրությամբ Ալեքսեյ Ալեքսանդրովիչը կայացրեց կարևոր որոշում։ Ի զարմանս հանձնաժողովի, նա հայտարարեց, որ թույլտվություն կխնդրի՝ անձամբ գնալու և գործը տեղում հետազոտելու։ Ու թույլտվություն ստանալով, Ալեքսեյ Ալեքսանդրովիչն ուղևորվեց դեպի հեռավոր նահանգները։

Ալեքսեյ Ալեքսանդրովիչի մեկնումը մեծ աղմուկ հանեց,

մանավանդ որ գնալուց առաջ մի գրությամբ պաշտոնապես վերադարձրեց այն դրամը, որ տասներկու ձիու հաշվով տվել էին նրան՝ նշանակված տեղը գնալու համար։

— Իմ կարծիքով, դա շատ ազնիվ քայլ է,— խոսում էր այդ առթիվ Բետսին իշխանուհի Մյագկայայի հետ։— Ինչո՞ւ դրամ տալ փոստային ձիերի համար, երբ ամենքը գիտեն, որ ամենուր այժմ կան երկաթուղիներ։

Բայց իշխանուհի Մյագկայան համաձայն չէր, և իշխանուհի Տվերսկայայի կարծիքը նույնիսկ գրգռում էր նրան։

— Իհարկե դուք այդպես կխոսեք,— ասաց նա,— երբ ունեք, ես ինչ իմանամ՝ որքա՞ն միլիոններ, իսկ ես շատ եմ սիրում, երբ ամուսինս ամառները գնում է վերստուգման։ Նրա համար առողջարար ու հաճելի է ճանապարհորդելը, իսկ ես, դա արդեն սահմանված է այդպես, այդ դրամներով կառք ու կառապան եմ պահում։

Հեռավոր նահանգները գնալու ճանապարհին Ալեքսեյ Ալեքսանդրովիչը երեք օրով կանգ առավ Մոսկվայում։

Իր գալու հետևյալ օրը նա այցելության գնաց գեներալ-նահանգապետին։ Գազետնի նրբանցքի մոտի խաչմերուկում, որտեղ միշտ խռնվում են կառքերն ու կառապանները, Ալեքսեյ Ալեքսանդրովիչը հանկարծ լսեց իր անունը, կանչված այնպիսի բարձր և ուրախ ձայնով, որ չէր կարող ետ չնայել։ Մայթի անկյունում, նորաձև կարճ վերարկուով, նորաձև կարճ շեղագիր գլխարկով, փայլելով կարմիր շրթունքների միջև սպիտակ ատամների ժպիտով, ուրախ, երիտասարդ, պայծառատեսիլ, կանգնել էր Ստեպան Արկադևիչը, որ վճռականապես ու ստիպողաբար բղավում և պահանջում էր կանգառ։ Նա մի ձեռքով բռնել էր անկյունում կանգ առած կառեթի լուսամուտից, որտեղից դուրս էին ցցված թավշյա գլխարկով մի կնացի գլուխ ու երկու մանկական գլուխներ, և ժպտում ու ձեռքով էր անում փեսային։ Տիկինը ժպտում էր բարի ժպիտով և նույնպես ձեռքով էր անում Ալեքսեյ Ալեքսանդրովիչին։ Դա Դոլլին էր՝ իր երեխաների հետ։

Ալեքսեյ Ալեքսանդրովիչը չէր ուզում ո՛չ ոքի տեսնել Մոսկվայում, մանավանդ իր կնոջ եղբորը։ Նա գլխարկը բարձրացրեց և ուզում էր շարունակել իր ճանապարհը, բայց Ստեպան

Արկադևիչը հրամայեց նրա կառապանին կանգնել և ձյան միջով մոտ վազեց նրան։

— Մի՞թե հանցանք չէ իմաց չտալը։ Վաղո՞ւց է։ Իսկ ես երեկ Դյուսսոյի մոտ էի և տեսա տախտակին՝ «Կարենին». բայց մտքովս անգամ չանցավ, որ այդ դու ես,— ասում էր Ստեպան Արկադևիչը, գլուխը ներս մտցնելով կառեթի լուսամուտից։— Թե չէ՝ կմտնեի։ Որքա՜ն ուրախ եմ քեզ տեսնելուս,— ասում էր նա, ոտը խփելով ոտին, որ թափ տա նրանց վրայից ձյունը։— Մի՞թե հանցանք չէ իմաց չտալը,— կրկնեց նա։

— Ժամանակ չունեի, ես սաստիկ զբաղված եմ,— չոր պատասխանեց Ալեքսեյ Ալեքսանդրովիչը։

— Դե՛, գնանք կնոջս մոտ, նա այնպես ուզում է տեսնել քեզ։

Ալեքսեյ Ալեքսանդրովիչը բացեց պլեդը, որի մեջ փաթաթված էին նրա մրսկան ոտները, և դուրս գալով կառեթից, ձյան միջով մոտեցավ Դարիա Ալեքսանդրովնային։

— Այդ ի՞նչ է, Ալեքսեյ Ալեքսանդրովիչ. ինչի՞ համար եք մեզնից այդպես խուսափում,— ասաց Դոլլին ժպտալով։

— Ես շատ զբաղված էի։ Շատ ուրախ եմ ձեզ տեսնելուս,— ասաց նա այնպիսի տոնով, որից պարզ երևում էր, որ նա վշտացած է այս տեսակցությամբ։— Ինչպե՞ս է ձեր առողջությունը։

— Ասե՛ք, ի՞նչ է անում իմ սիրելի Աննան։

Ալեքսեյ Ալեքսանդրովիչը մրթմրթաց ինչ-որ բան և ուզում էր հեռանալ, բայց Ստեպան Արկադևիչը կանգնեցրեց նրան։

— Ահա՛, թե ի՞նչ կանենք մենք վաղը։ Դոլլի, կանչիր նրան ճաշի. կհրավիրենք Կոզնիշևին ու Պեսցովին, որ նրան հյուրասիրենք Մոսկվայի ինտելիգենցիայով։

— Ուրեմն խնդրեմ, համեցեք,— ասաց Դոլլին,— մենք ձեզ կսպասենք հինգին, ժամը վեցին, եթե ուզում եք։ Ասեք, ի՞նչ է անում իմ սիրելի Աննան։ Շատ վաղուց է, որ...

— Նա առողջ է,— խոժոռվելով բռնչաց Ալեքսեյ Ալեքսանդրովիչը։— Շատ ուրախ եմ,— և դիմեց դեպի իր կառեթը։

— Կգա՞ք,— բղավեց Դոլլին։

Ալեքսեյ Ալեքսանդրովիչն ասաց ինչ-որ բան, որ Դոլլին չկարողացավ լսել գնացող-եկող կառքերի աղմուկի մեջ։

— Ես վաղը կգամ,— բղավեց նրա ետևից Ստեպան Արկադևիչը։

Ալեքսեյ Ալեքսանդրովիչը մտավ կառեթը և խորասուզվեց այնտեղ այնպես, որ ոչ ինքը տեսնի մեկնումեկին, ոչ էլ իրեն տեսնեն։

— Տարօրինակ մարդ,— ասաց Ստեպան Արկադևիչը կնոջը և նայելով ժամացույցին, արեց ինչ-որ շարժում, որ նշանակում էր փաղաքշանք կնոջն ու երեխաներին, և արիաբար գնաց մայթով։

— Ստի՛վա, Ստի՛վա,— բղավեց Դոլլին կարմրելով։

Նա շուտ եկավ։

— Չէ՞ որ պետք է վերարկու գնել Գրիշայի և Տանյայի համար։ Դրամ տուր ինձ։

— Ոչի՛նչ, դու ասա, որ ես կվճարեմ,— և նա գնաց, անհայտացավ, գլխով ուրախ ողջունելով կառքով անցնող իր ծանոթին։

VII

Հետևյալ օրը կիրակի էր։ Ստեպան Արկադևիչը գնաց Մեծ թատրոն՝ բալետի փորձի և տվեց Մաշա Չիբիսովային, նրա հանձնարարությամբ ընդունված լավիկ պարուհուն, նախորդ օրը խոստացած մարջանները ու կուլիսների ետևում՝ թատրոնի ցերեկվա մթության մեջ կարողացավ համբուրել նվերից լուսաշողված նրա սիրունիկ դեմքը։ Բացի մարջանների նվերից, նա պետք է պայմանավորվեր պարուհու հետ տեսակցելու մասին՝ բալետից հետո։ Բացատրելով նրան, որ ինքը չի կարող լինել բալետի սկզբին, Ստեպան Արկադևիչը խոստացավ, որ կգա վերջին արարվածին ու կտանի նրան ընթրիքի։ Թատրոնից նա գնաց Օխոտնի-ռյադը, ճաշի համար ինքը ընտրեց ձուկ ու ծներեկ և ժամը 12-ին արդեն Դյուսսոյի մոտ էր, որտեղ նա պետք է տեսներ երեք հոգու, որոնք իր բախտից իջել էին միևնույն հյուրանոցում, նորերս արտասահմանից վերադարձած Լևինին, իր նոր պետին, որը նոր էր ստացել այդ բարձր պաշտոնը ու վերստուգել էր Մոսկվան, և իր փեսա Կարենինին, որպեսզի նրան անպայման տանի ճաշի։

Ստեպան Արկադևիչը սիրում էր ճաշել, բայց ավելի ևս

ոիրում էր ճաշ տալ, փոքրիկ, սակայն նուրբ ճաշ՝ թե՛ կերակրի ու խմիչքի, թե՛ հյուրերի ընտրության տեսակետից։ Այսօրվա ճաշի ծրագիրը շատ դուր եկավ նրան. կլինեն կենդանի պերկեսներ, ծնեբեկ և la pièce de résistance—սքանչելի, բայց հասարակ ռոստբիֆ, ու համապատասխան գինիներ. դրանք կերակուրներն էին ու խմիչքներ։ Իսկ հյուրերից կլինեն Կիտին ու Լևինը, և որպեսզի դա չնկատվի, կլինեն էլի մորաքրոջ աղջիկը ու երիտասարդ Շչերբացկին, և la pièce de résistance[1] հյուրերից՝ Կոզնիշև Սերգեյը և Ալեքսեյ Ալեքսանդրովիչը։ Սերգեյ Իվանովիչը՝ մոսկվացի ու փիլիսոփա, Ալեքսեյ Ալեքսանդրովիչը՝ պետերբուրգցի ու պրակտիկ մարդ. բացի դրանից, կհրավիրի նաև հայտնի տարօրինակ-էնտուզիաստ Պեսցովին, ազատամիտ, զրուցասեր, երաժիշտ, պատմագետ և հաճելի հիսնամյա պատանի մի մարդ, որ սոուս կամ գարնիր կլինի Կոզնիշևի և Կարենինի հետ։ Նա կգրգռի ու կատարի նրանց։

Անտառի համար դրամը վաճառականից ստացվել և դեռ չէր ծախսվել։ Դոլլին շատ սիրալիր ու բարի էր վերջերս, և այդ ճաշի միտքն ամեն տեսակետից ուրախացնում էր Ստեպան Արկադևիչին։ Նա գտնվում էր վերին աստիճանի ուրախ տրամադրության մեջ։ Կար երկու փոքր-ինչ անախորժ հանգամանք. բայց այդ երկու հանգամանքը թաղվում, կորչում էր բարեսիրտ այն ուրախության ծովում, որ ալեկոծվում էր Ստեպան Արկադևիչի հոգում։ Այդ երկու հանգամանքներից առաջինն այն էր, որ երեկ փողոցում պատահելով Ալեքսեյ Ալեքսանդրովիչին, նա նկատեց, որ փեսան շոր ու խիստ է իր հետ, և զուգադրելով Ալեքսեյ Ալեքսանդրովիչի դեմքի արտահայտությունն ու այն, որ նա չէր եկել իրենց մոտ և իմաց չէր ավել իր մասին, այն լուրերի հետ, որոնք Ստեպան Արկադևիչը լսել էր Աննայի ու Վրոնսկու մասին, նա կռահում էր, որ ինչ-որ անախորժ բան կա ամուսինների միջև։

Դա մի անախորժ պարագա էր։ Մյուս մի փոքր անախորժ բանն այն էր, որ նոր պետը, ինչպես առհասարակ բոլոր նոր պետերը, արդեն ուներ սոսկալի մարդու համբավ, որ վեր է կենում առավոտյան ժամը 6-ին, աշխատում է ձիու պես և

[1] Գլխավոր տեսակը։

այդպիսի աշխատանք է պահանջում նաև իր ստորադրյալներից։ Բացի դրանից, այդ նոր պետը վայելում էր վարվեցողության մեջ արջի համբավ և, լուրերի համաձայն, բոլորովին այլ ուղղության մարդ էր, հակառակ այն ուղղության, որին պատկանում էր առաջին պետը և մինչև այժմ պատկանում էր ինքը՝ Ստեպան Արկադևիչը։ Երեկ Ստեպան Արկադևիչը ծառայության գնաց համազգեստով, և նոր պետը շատ սիրալիր էր ու զրույցի բռնվեց Օբլոնսկու հետ, ինչպես ծանոթի հետ, այդ պատճառով Ստեպան Արկադևիչն իր պարտքն էր համարում այցելել նրան սյուրտուկով։ Այն միտքը, թե նոր պետը կարող է լավ չընդունել նրան, մյուս անախորժ հանգամանքն էր։ Բայց Ստեպան Արկադևիչը բնազդաբար զգում էր, որ ամեն բան կարգի կգա հիանալի կերպով։ «Ամենքն էլ մարդ են, ամենք մարդ է, ինչպես և մենք՝ մեղավորներս. ինչի՞ համար չարանալ ու գժտվել», մտածում էր նա, մտնելով հյուրանոց։

— Բարև, Վասիլի,— ասաց նա, գլխարկը թեք դրած, անցնելով միջանցքով ու դիմելով ծանոթ սպասավորին,— դու բակենբարդնե՞ր ես թողել։ Լևինը 7-րդ համարն է, հա՞։ Խընդրեմ, առաջնորդեա։ Հետո իմացիր, արդյոք կընդունի՞ կոմս Անիչկինը (դա նոր պետն էր)։

— Լսում եմ,— ժպտալով պատասխանեց Վասիլը,— վաղուց է, ինչ շնորհ չեք բերել մեզ մոտ։

— Ես երեկ եղա, մյուս մուտքից։ Սա 7-ո՞րդն է։

Լևինը Տվերի մուժիկի հետ կանգնել էր համարի մեջտեղը և արշինով չափում էր արջի թարմ մորթին, երբ մտավ Ստեպան Արկադևիչը։

— Ա՛, սպանե՞լ եք,— բղավեց Ստեպան Արկադևիչը։— Հիանալի մորթի է։ Է՞գ արջ է։ Բարև, Արխիպ։

Նա սեղմեց մուժիկի ձեռքը և նստեց աթոռին, առանց հանելու վերարկուն ու գլխարկը։

— Դե՛, հանվիր, նստիր,—վերցնելով նրա գլխարկը, ասաց Լևինը։

— Ո՛չ, ժամանակ չունեմ, ես միայն մի վայրկյանով.— պատասխանեց Ստեփան Արկադևիչը։—Նա արձակեց վերարկուի կոճակները, բայց հետո հանեց ու նստեց մի ամբողջ ժամ, խոսելով Լևինի հետ որսի և ամենամտերմական նյութերի մասին։— Դե՛, ասա՛, խնդրեմ, ինչ էիր անում դու արտա-

սահմանում։ Ո՞ւրեղ էիր,—ասաց Ստեփան Արկադևիչը, երբ դուրս գնաց մուժիկը։

— Ես եղա Գերմանիայում, Պրուսիայում, Ֆրանսիայում, Անգլիայում, բայց ո՛չ մայրաքաղաքներում, այլ գործարանային քաղաքներում ու տեսա շատ նոր բան։ Եվ ուրախ եմ, որ եղա։

— Ես գիտեմ բանվորական հարցը կարգավորելու քո միտքը։

— Բոլորովին ոչ։ Ռուսաստանում չի կարող լինել բանվորական հարց։ Ռուսաստանում կա ժողովրդի՝ դեպի հողը ունեցած վերաբերմունքի հարց, որը գոյություն ունի նաև այնտեղ, արտասահմանում, բայց այնտեղ դա փչացածի կարկատումն է, իսկ մեզ մոտ...

Ստեպան Արկադևիչն ուշադրությամբ լսում էր Լևինին։

— Այո՛, այո,—ասում էր նա։—Շատ կարող է պատահել, որ դու իրավացի ես,—ասաց նա,—բայց ես ուրախ եմ, որ դու առույգ տրամադրության ես. և՛ արջի որսի ես գնում, և՛ աշխատում ես, և հրապուրվում, թե չէ՝ Շչերբացկին ասում էր ինձ,—նա պատահել էր քեզ,—իբր դու մի տեսակ տիուր ես, շարունակ խոսում ես մահվան մասին։

— Ի՞նչ կա որ, ես չեմ դադարում մահվան մասին մտածելուց,—ասաց Լևինը։—Ճիշտ որ՝ ժամանակն է մեռնելու։ Եվ որ այս ամենը դատարկ բան է։ Ճիշտ եմ ասում քեզ. չափազանց թանկ եմ գնահատում իմ միտքն ու աշխատանքը, բայց ըստ էության՝ ապա մի մտածիր դրա մասին. չէ՞ որ մեր այս ամբողջ աշխարհը փոքրիկ բորբոս է, որ բուսել է մանրիկ մոլորակի վրա։ Իսկ մենք կարծում ենք, որ մենք կարող ենք ունենալ ինչ-որ մեծ բան՝ մտքեր, գործեր։ Այս բոլորը ավազի հատիկ է։

— Է՛հ, բարեկամ, դա հին բան է, ինչպես ինքն աշխարհը։

— Հին է, բայց գիտե՞ս, երբ մարդ պարզ հասկանում է այդ, կարծես ամեն ինչ դառնում է ոչնչություն։ Երբ մարդ հասկանում է, որ այսօր կամ վաղը պիտի մեռնի ու ոչինչ չի մնալու, ամեն ինչ թվում է այնպես չնչին, և ես շատ կարևոր եմ համարում իմ միտքը, բայց դա ևս դուրս է գալիս նույնպես չնչին, նույնիսկ իրագործվելու դեպքում, ինչպես այս արջին իր որջի մեջ պաշարելը։ Եվ այսպես, ահա մարդ անց

է կացնում իր կյանքը, հրապուրվում է որսորդությամբ, աշխատանքով, որպեսզի միայն չմտածի մահվան մասին։

Ստեփան Արկադևիչը նրբամտորեն ու փաղաքշանքով ժպտում էր, լսելով Լևինին։

— Այո՛, հասկանալի է։ Ահա և դու եկար ինձ մոտ։ Հիշո՞ւմ ես, դու հարձակվում էիր ինձ վրա այն բանի համար, որ ես կյանքում վայելքներ եմ փնտրում։

Մի՛ եղիր այդպես խիստ, օ՜, մորալիստ...

— Ո՛չ, այսուամենայնիվ՝ կյանքի մեջ լավն այն է... Լևինը շփոթվեց։— Է՛հ, չգիտեմ։ Գիտեմ միայն, որ շուտով կմեռնենք։

— Իսկ ինչո՞ւ շուտով։

— Եվ գիտեմ, կյանքի գրավչությունը քիչ է, երբ մարդ մտածում է մահվան մասին, բայց ավելի հանգիստ է։

— Ընդհակառակը, վերջն ավելի ուրախ է։ Է՛հ, սակայն, ժամանակ է գնալու,—ասաց Ստեպան Արկադևիչը, վեր կենալով տասներորդ անգամ։

— Ո՛չ, նստիր, է՛,—ասում էր Լևինը, պահելով նրան։— Հապա ե՞րբ ենք տեսնվելու։ Ես վաղը գնում եմ։

— Է՛հ, ինձ լավ ասողին։ Ես հենց դրա համար եմ եկել... Այսօր անպատճառ կգաս ինձ մոտ ճաշի։ Կլինի քո եղբայրը, կլինի Կարենինը, իմ փեսան։

— Մի՞թե նա այստեղ է,—ասաց Լևինը և ուզում էր հարցնել Կիտիի մասին։ Նա լսել էր, որ Կիտին ձմեռվա սկզբին եղել էր Պետերբուրգում իր քրոջ՝ դիվանագետի կնոջ մոտ, և չգիտեր, արդյոք վերադարձե՞լ է, թե ոչ, բայց միտքը փոխեց ու չհարցրեց։ «Կլինի, թե չի լինի՝ միևնույն է»։

— Ուրեմն կգա՞ս։

— Դե՛, իհարկե։

— Ուրեմն ժամը հինգին և՝ սյուրտուկով։

Եվ Ստեպան Արկադևիչը վեր կացավ ու իջավ ցած՝ իր նոր պետի մոտ։ Բնազդը չխաբեց Ստեպան Արկադևիչին։ Սարսափելի նոր պետը դուրս եկավ վերին աստիճանի քաղցրաբարո մարդ, և Ստեպան Արկադևիչը նախաճաշեց նրա հետ ու նստեց այնքան երկար, որ չորրորդ ժամին միայն մտավ Ալեքսեյ Ալեքսանդրովիչի մոտ։

VIII

Ալեքսեյ Ալեքսանդրովիչը վերադառնալով պատարագից, ամբողջ առավոտն անցկացրեց տանը։ Այդ առավոտ նա երկու գործ ուներ հոգալու. նախ՝ ընդունել և ուղղություն տալ Պետերբուրգ գնացող ու այժմ Մոսկվայում գտնվող այլազգիների պատգամավորությանը. երկրորդ՝ գրել փաստաբանին խոստացած նամակը։ Պատգամավորությունը, թեպետև կանչված Ալեքսեյ Ալեքսանդրովիչի նախաձեռնությամբ, ներկայացնում էր շատ անհարմարություններ, նույնիսկ վտանգ, և Ալեքսեյ Ալեքսանդրովիչը շատ ուրախ էր, որ գտավ նրան Մոսկվայում։ Այդ պատգամավորության անդամները ո՛չ մի հասկացողություն չունեին իրենց դերի և պարտականությունների մասին։ Նրանք միամտաբար հավատացած էին, իբր նրանց գործն այն է, որ նկարագրեն իրենց կարիքներն ու իրերի իսկական դրությունը, խնդրելով կառավարության օգնությունը, և կտրականապես չէին հասկանում, որ իրենց որոշ հայտարարություններն ու պահանջները նպաստում էին թշնամի կուսակցությանը, այդ իսկ պատճառով տապալում էին ամբողջ գործը։ Ալեքսեյ Ալեքսանդրովիչը երկար գլուխ դրեց նրանց հետ, գրեց նրանց համար ծրագիր, որով պիտի ղեկավարվեին նրանք և, արձակելով նրանց, նամակներ գրեց Պետերբուրգ՝ պատգամավորությանն ուղղություն տալու համար։ Այդ գործում նրա գլխավոր օգնականը պիտի լիներ կոմսուհի Լիդիա Իվանովնան։ Կոմսուհին մասնագետ էր պատգամավորությունների գործում, և ոչ ոք այնպես չէր կարող, ինչպես նա, նախապատրաստել ու իսկական ուղղություն տալ պատգամավորություններին։ Վերջացնելով դա, Ալեքսեյ Ալեքսանդրովիչը նամակ գրեց նաև փաստաբանին։ Նա առանց ամենաթեթև տատանման, թույլ տվեց փաստաբանին՝ գործել իր բարեհայեցողությամբ։ Ծրարի մեջ նա դրեց Աննային գրած Վրոնսկու երեք տոմսը, որ գտել էր կնոջից խլած պորտֆելում։

Սկսած այն օրից, երբ Ալեքսեյ Ալեքսանդրովիչը դուրս գնաց տանից՝ ընտանիքի մոտ չվերադառնալու դիտավորությամբ, և սկսած այն օրից, երբ նա եղավ փաստաբանի մոտ ու գեթ մի մարդու ասաց իր մտադրության մասին, մանավանդ, սկսած այն օրից, երբ նա կյանքի այդ գործը դարձրեց թղթի գործ, նա ավելի ու ավելի էր վարժվում իր մտադրությանը և այժմ պարզ տեսնում էր նրա իրագործման հնարավորությունը։

Նա փակում էր փաստաբանին ուղարկելիք ծրարը, երբ լսեց Ստեպան Արկադևիչի ձայնի բարձր հնչյունները։ Ստեպան Արկադևիչը վիճում էր Ալեքսեյ Ալեքսանդրովիչի ծառայի հետ և պնդում էր, որ նա զեկուցի իր մասին։

«Միևնույն է,—մտածեց Ալեքսեյ Ալեքսանդրովիչը,—ավելի լավ. ես հիմա կհայտարարեմ նրա քրոջ նկատմամբ իմ դրության մասին ու կբացատրեմ, թե ինչո՞ւ չեմ կարող ճաշել նրա մոտ»։

— Խնդրի՛ր,—բարձրաձայն ասաց նա, հավաքելով թղթերը և դնելով թղթապանակի մեջ։

— Ա՜յ, տեսնո՞ւմ ես, որ ստում ես դու, նա տանն է,—պատասխանեց Ստեպան Արկադևիչի ձայնը ծառային, որը ներս չէր թողնում նրան, և քայլընթաց հանելով վերարկուն, Օբլոնսկին մտավ սենյակ։—Է՜հ, ես շատ ուրախ եմ, որ տանը գտա քեզ։ Ուրեմն, հուսամ...—ուրախ ասաց Ստեպան Արկադևիչը։

— Ես չեմ կարող զալ,—սառը տոնով ասաց Ալեքսեյ Ալեքսանդրովիչը կանգնած ու չնստեցնելով հույրին։

Ալեքսեյ Ալեքսանդրովիչը մտածում էր անմիջապես կանգնել այն սառը հարաբերությունների շրջանակում, որոնց մեջ ինքը պիտի լիներ իր կնոջ եղբոր հետ, որի (կնոջ) դեմ սկսում էր ապահարզանի գործ, բայց նա հաշվի չառավ բարեսրտության այն ծովը, որ դուրս էր գալիս իր ափերից՝ Ստեպան Արկադևիչի հոգում։

Ստեպան Արկադևիչը լայն բացեց իր փայլուն, պայծառ աչքերը։

— Ինչո՞ւ չես կարող։ Ի՞նչ ես ուզում ասել,—տարակուսանքով ասաց նա ֆրանսերեն։—Ո՛չ, դու արդեն խոստացել ես։ Եվ մենք ամենքս հուսով ենք, որ կգաս։

— Ես ուզում եմ ասել, չեմ կարող լինել ձեզ մոտ, որովհետև պետք է խզվեն ազգակցական այն կապերը, որոնք գոյություն ունեին մեր միջև։

— Ինչպե՞ս թե։ Այսինքն՝ ինչպե՞ս։ Ինչո՞ւ,—ասաց Ստեպան Արկադևիչը ժպտադեմ։

— Որովհետև ես ապահարզանի գործ եմ սկսում ձեր քրոջ՝ իմ կնոջ դեմ։ Պետք է, որ ես...

Բայց Ալեքսեյ Ալեքսանդրովիչը դեռ չվերջացրեց իր խոսքը, երբ Ստեպան Արկադևիչը վարվեց բոլորովին ոչ այնպես, ինչպես սպասում էր նա։ Ստեպան Արկադևիչը «օ՜խ» արավ ու նստեց բազկաթոռի մեջ։

— Ո՜չ, Ալեքսեյ Ալեքսանդրովիչ, ի՞նչ ես ասում դու,— ճչաց Օբլոնսկին, և նրա դեմքին արտահայտվեց տառապանք։

— Այդպես է։

— Ներիր ինձ, ես չեմ կարող, չեմ կարող հավատալ դրան։

Ալեքսեյ Ալեքսանդրովիչը նստեց, զգալով, որ իր խոսքերը չունեցան այն ազդեցությունը, ինչ սպասում էր ինքը, և որ իր համար անհրաժեշտ է բացատրվել և որ ինչպես էլ լինեն իր բացատրությունները, անհրաժագի հետ իր հարաբերությունները կմնան նույնը։

— Այո՛, ես դրված եմ ապահարզան պահանջելու ծանր անհրաժեշտության մեջ,—ասաց նա։

— Մի բան կասեմ ես, Ալեքսեյ Ալեքսանդրովիչ։ Ես ճանաչում եմ քեզ որպես արդարամիտ, հիանալի մարդու, ճանաչում եմ Աննային,—ներիր ինձ, ես չեմ կարող կարծիքս փոխել նրա մասին,—որպես հրաշալի, սքանչելի կնոջ, ուստի, ներիր ինձ, ես չեմ կարող հավատալ այդ բանին։ Այստեղ թյուրիմացություն կա,—ասաց նա։

— Այո՛, եթե միայն դա լիներ թյուրիմացությո՛ւն...

— Թո՛ւյլ տուր, ես հասկանում եմ,—ընդհատեց Ստեպան Արկադևիչը։—Բայց իհա՛րկե... Մի բան՝ չպետք է շտապել։ Չպետք է, չպետք է շտապել։

— Ես չեմ շտապել,—սառը տոնով ասաց Ալեքսեյ Ալեքսանդրովիչը,—բայց չի կարելի ո՛չ ոքի հետ խորհրդակցել այդպիսի գործում։ Ես հաստատապես վճռել եմ։

— Դա սոսկալի բան է,—ասաց Ստեպան Արկադևիչը ծանր հառաչելով։—Ես կանեի մի բան, Ալեքսեյ Ալեքսանդրովիչ։—աղաչում եմ քեզ, արա՛ այդ բանը,— ասաց նա։— Որքան ես հասկացա, գործը դեռ չի սկսված։ Նախքան դու կսկսես այդ գործը, տեսնվիր իմ կնոջ հետ, խոսիր նրա հետ։

նա սիրում է Աննային, իր քրոջ պես, սիրում է քեզ, և նա զարմանալի կին է։ Ի սեր աստծո, խոսիր նրա հետ։ Այդ սիրալիրությունն արա ինձ համար, աղաչում եմ քեզ։

Ալեքսեյ Ալեքսանդրովիչը մտքի մեջ ընկավ, և Ստեպան Արկադևիչը կարեկցությամբ նայում էր նրան, չընդհատելով նրա լռությունը։

— Դու կգա՞ս Դարիա Ալեքսանդրովնայի մոտ։

— Է՜հ, չգիտեմ։ Ես հենց այդ պատճառով չեղա ձեզ մոտ։ Ես կարծում եմ, որ մեր հարաբերությունները պիտի փոխվեն։

— Իսկ ինչո՞ւ։ Ես հիմք չեմ տեսնում։ Թույլ տուր ինձ կարծելու, որ մեր ազգակցական կապերից անկախ, դու տածում ես դեպի ինձ, թեպետ մասամբ, այն բարեկամական զգացումները, որ ես միշտ տածել եմ դեպի քեզ... Եվ անկեղծ հարգանք,— ասաց Ստեպան Արկադևիչը, սեղմելով նրա ձեռքը։—Եթե նույնիսկ արդարացի լինեին քո վատթարագույն ենթադրությունները, ես ինձ վրա չեմ վերցնում ու երբեք չեմ վերցնի՝ այս կամ այն կողմը դատապարտելու իրավունք և պատճառ չեմ տեսնում, թե ինչու պիտի փոխվեն մեր հարաբերությունները։ Բայց հիմա արա այդ բանը, արի կնոջս մոտ։

— Է՜հ, մենք այլ կերպ ենք նայում այդ գործին,—սառը տոնով ասաց Ալեքսեյ Ալեքսանդրովիչը։—Սակայն չխոսենք դրա մասին։

— Ո՜չ, բայց ինչո՞ւ չպիտի գաս։ Թեկուզ այսօր ճաշի։ Կինս սպասում է քեզ։ Խնդրում եմ, արի։ Եվ որ գլխավորն է՝ խոսիր նրա հետ։ Նա զարմանալի կին է։ Ի սե՛ր աստծո, ծընկաչոք աղաչում եմ քեզ։

— Եթե դուք այդպես ուզում եք, կգամ,— հառաչելով ասաց Ալեքսեյ Ալեքսանդրովիչը։

Եվ կամենալով փոխել խոսակցությունը, նա հարցրեց այն մասին, ինչը հետաքրքրում էր նրանց երկուսին՝ Ստեպան Արկադևիչի նոր պետի մասին, տակավին երիտասարդ մի մարդու, որ հանկարծ ստացել էր այդպիսի բարձր պաշտոն։

Ալեքսեյ Ալեքսանդրովիչն առաջ էլ չէր սիրում կոմս Անիչկինին ու միշտ տարակարծիք էր նրա հետ, բայց այժմ չկարողացավ իրեն պահել և զսպել ծառայողների համար հասկանալի ատելությունը մի մարդու, որ պարտություն էր կրել

ծառայության մեջ, դեպի մի մարդ, որ պաշտոնի բարձրացում էր ստացել։

— Է՜, ինչպե՞ս է, տեսա՞ր նրան,— ասաց Ալեքսեյ Ալեքսանդրովիչը թունալի ժպիտով։

— Ինչպե՞ս չէ, նա երեկ եղավ մեր ատյանում։ Թվում է, թե շատ լավ գիտե գործը և խիստ գործունյա մարդ է։

— Այո՛, բայց ո՞ր կողմն է ուղղած նրա գործունեությունը,— ասաց Ալեքսեյ Ալեքսանդրովիչը։— Արդյոք ա՞յն, որ գործ չինի, թե՞ վերաշինի այն, ինչ արված է։ Մեր պետության դժբախտությունը թղթյա ադմինիստրացիան է, որի արժանավոր ներկայացուցիչն է նա։

— Ճիշտն ասած, ես չգիտեմ, թե ի՞նչը նրա մեջ կարելի է դատապարտել։ Ես նրա ուղղությունը չգիտեմ, բայց մի բան կա՝ նա հիանալի տղա է,— պատասխանեց Ստեպան Արկադևիչը։— Ես այս րոպեին նրա մոտ էի, և իրոք, հիանալի տղա է, ու նրան սովորեցրի պատրաստել, գիտե՞ս, այն խմիչքը՝ նարինջներով գինի։ Դա շատ զովացնում է։ Եվ զարմանալի բան, որ նա չգիտեր այդ։ Նա շատ հավանեց։ Ոչ, իրոք նա հրաշալի տղա է։

Ստեպան Արկադևիչը նայեց ժամացույցին։

— Ա՜խ, աստված իմ, արդեն հինգերորդ ժամն է, իսկ ես դեռ պիտի գնամ Դոլգովուշինի մոտ։ Այսպես ուրեմն, խընդրում եմ գաս ճաշի։ Դու չես կարող երևակայել, թե ինչպե՞ս կվշտացնես ինձ ու կնոջս։

Ալեքսեյ Ալեքսանդրովիչը ճանապարհ դրեց աներձագին արդեն բոլորովին ո՛չ այնպես, ինչպես ընդունեց նրան։

— Ես խոստացա, ուրեմն՝ կգամ,— պատասխանեց նա վհատ։

— Հավատա՛ ինձ, որ ես գնահատում եմ այդ և հուսով եմ, որ դու չես զղջա,— պատասխանեց Ստեպան Արկադևիչը ժպտալով։

Եվ քայլընթաց հագնելով վերարկուն, նա ձեռքով դիպավ ծառայի գլխին, ծիծաղեց ու դուրս գնաց։

— Ժամը հինգին և ոյուրտուկով, խնդրեմ,— բղավեց նա էլի մի անգամ, վերադառնալով դեպի դուռը։

IX

Արդեն վեցերորդ ժամն էր, և արդեն հյուրերից մի քանիսը եկել էին, երբ եկավ նաև ինքը՝ հյուրատերը։ Նա ներս մտավ Սերգեյ Իվանովիչ Կոզնիշևի և Պեսցովի հետ, որոնք միաժամանակ հանդիպեցին իրար գլխավոր մուտքի մոտ։ Դրանք Մոսկվայի ինտելիգենցիայի գլխավոր ներկայացուցիչներն էին, ինչպես անվանում էր նրանց Օբլոնսկին։ Երկուսն էլ հարգելի մարդիկ էին՝ թե՛ իրենց բնավորությամբ, թե՛ խելքով։ Նրանք հարգում էին իրար, բայց համարյա ամեն բանում բոլորովին ու անհուսալիորեն համամիտ չէին միմյանց, ո՛չ այն պատճառով, որ պատկանում էին հակադիր ուղղություններին, այլ այն պատճառով հենց, որ միևնույն բանակից էին (թշնամիները նրանց շփոթում էին իրար հետ), բայց այդ բանակում նրանք ունեին իրենց նրբերանգները։ Իսկ որովհետև համաձայության համար չկա ուրիշ ավելի անընդունակ բան, քան տարամտությունը կիսավերացականության մեջ, ուստի նրանք ո՛չ միայն համաձայնության չէին գալիս իրենց կարծիքների մեջ, այլ վաղուց արդեն վարժվել էին, առանց բարկանալու, փոխադարձաբար ծիծաղել միայն իրենց անուղղելի մոլորության վրա։

Նրանք մտնում էին դռնից, խոսելով եղանակի մասին, երբ Ստեպան Արկադևիչը հասավ նրանց։ Ընդունարանում արդեն նստած էին իշխան Ալեքսանդր Դմիտրիևիչը՝ Օբլոնսկու անները, երիտասարդ Շչերբացկին, Տուրովցինը, Կիտին ու Կարենինը։

Ստեպան Արկադևիչն իսկույն տեսավ, որ ընդունարանում առանց իրեն գործը վատ է գնում։ Դարիա Ալեքսանդրովնան իր շքեղ մոխրագույն մետաքսե հագուստով, ակնհայտորեն մտահոգված թե՛ երեխաներով, որոնք պիտք է ճաշին մանկաբենյակում մենակ, թե՛ այն քանով, որ ամուսինը դեռ չկա, չկարողացավ առանց նրան լավ իրար խառնել այդ ամբողջ հասարակությունը։ Ամենքը նստել էին, ինչպես տերտերաղջիկները հյուրատեղում (այդպես էր արտահայտվում ծերունի իշխանը), հայտնապես տարակուսանքի մեջ, թե ինչո՛ւ են իրենք ընկել այստեղ, քամելով բառեր՝ լրելու համար։ Բարեսիրտ Տուրովցինը հայտնապես իրեն զգում էր ո՛չ իր ըն-

ջանում, և հաստ պոռշների ժպիտը, որով նա հանդիպեց Ստեպան Արկադևիչին, ասում էր, կարծես խոսքերով. «Է՜հ, բարեկամ, նստեցրել ես ինձ խելոքների հետ։ Ա՜յ, ինչ եմ ասել՝ խմել և գնալ Château des fleurs[1] դա իմ փեշակն է։ «Ներումն» իշխանը նստել էր լուռ, կողքանց նայելով իր փոքրիկ, փայլուն աչքերով Կարենինին, և Ստեպան Արկադևիչը հասկացավ, որ նա արդեն մտածել է ինչ-որ դիպուկ բառ, որպեսզի դրոշմի այդ պետական մարդուն, որի պատճառով, ինչպես ստերլեյադ ձկան, մարդկանց հյուր են հրավիրում։ Կիտին նայում էր դռանը, հավաքելով իր ուժերը, որ չկարմրի, երբ ներս գա Կոնստանտին Լևինը։ Երիտասարդ Շչերբացկին, որի հետ ծծանոթացրին Կարենինին, աշխատում էր ցույց տալ, որ դա բնավ չէր ճնշում իրեն։ Ինքը Կարենինը, Պետերբուրգի սովորությամբ, տիկինների հետ ճաշելու առթիվ հագել էր ֆրակ ու կապել սպիտակ փողկապ, և Ստեպան Արկադևիչը նրա դեմքից հասկացավ, որ նա եկել է իր տված խոսքը կատարած լինելու համար միայն, ու գտնվելով այդ հասարակության մեջ, կատարում է ծանր պարտականություն։ Սառնության գլխավոր պատճառը հենց նա էր, որ պաղեցրել էր բոլոր հյուրերին՝ մինչև Ստեպան Արկադևիչի գալը։

Մտնելով ընդունարան, Ստեպան Արկադևիչը ներողություն խնդրեց, բացատրեց, թե ուշացավ այն իշխանի պատճառով, որը նրա բոլոր ուշացումների և բացատրությունների քավության մշտական նոխազն էր, ու մի բոպեում ամենքին ծանոթացրեց իրար հետ և Ալեքսեյ Ալեքսանդրովիչին ու Սերգեյ Կոզնիշևին մոտ բերելով միմյանց, տվեց նրանց Լեհաստանի ռուսացման մասին թեման, որին նրանք կպան անմիջապես՝ Պեսցովի հետ միասին։ Ցնցելով Տուրովցինի ուսը, նա ինչ-որ ծիծաղելի բան շշնջաց նրա ականջին և նստեցրեց կնոջ ու իշխանի մոտ։ Հետո Կիտիին ասաց, որ նա շատ սիրուն է այսօր ու Շչերբացկուն ծանոթացրեց Կարենինի հետ։ Մի բոպեում նա այնպես հունցեց այդ հասարակական խմորը, որ ընդունարանը դարձավ կենսախինդ, և աշխույժ հնչեցին ձայները։ Չկար միայն Կոնստանտին Լևինը։ Բայց դա շատ ի դեպ էր, որովհետև, մտնելով սեղանատուն, Ստեպան

[1] «Ծաղիկների ամբոց»—ռեստորանի անուն։

Արկադևիչը սոսկանքով տեսավ, որ պորտվեյնն ու խերես գինին վերցրել են Դեպրեյից, ո՛չ թե Լևեյից, և նա, կարգադրելով կառապանին ուղարկել, որքան հնարավոր է շուտ, Լևեյի մոտ, նորից դիմեց դեպի ընդունարան։

Սեղանատանը նրան պատահեց Կոնստանտին Լևինը։

— Հո չուշացա՞ ես։

— Հապա դու կարո՞ղ ես չուշանալ,—թևանցուկ անելով նրան, ասաց Ստեպան Արկադևիչը։

— Քեզ մոտ մարդ շա՞տ կա։ Ո՞վ ու ո՞վ են,— ակամա կարմրելով հարցրեց Լևինը, ձեռնոցով թափ տալով գլխարկի վրայից ձյունը։

— Բոլորն էլ յուրայիններ են։ Կիտին այստեղ է։ Գնանք, ծանոթացնեմ քեզ Կարենինի հետ։

Ստեպան Արկադևիչը, չնայած իր ազատամտությանը, գիտեր, որ Կարենինի հետ ծանոթությունը չի կարող շոյիչ լինել, ուստի դրանով հյուրասիրում էր իր լավագույն ընկեր-բարեկամներին։ Բայց այդ բոպեին Կոնստանտին Լևինն ի վիճակի չէր զգալու այդ ծանոթության ամբողջ բավականությունը։ Նա չէր տեսել Կիտիին անմոռանալի այն երեկոյից հետո, որտեղ պատահեց Վրոնսկուն, եթե չհաշվենք այն բոպեն, երբ տեսավ նրան մեծ ճանապարհին։ Նա իր հոգու խորքում գիտեր, որ այսօր Կիտիին կտեսնի այստեղ։ Բայց պաշտպանելով իր մեջ մտքի ազատությունը, նա աշխատում էր հավատացնել իրեն, իբր չգիտե այդ։ Իսկ այժմ լսելով, որ Կիտին այստեղ է, հանկարծ զգաց այնպիսի ուրախություն և միաժամանակ այնպիսի վախ, որ նրա շունչը կտրվեց ու չկարողացավ ասել այն, ինչ ուզում էր ասել։

«Ինչպիսի՞ն, ինչպիսի՞ն է նա։ Արդյոք ա՞յն է, ինչպես առաջ էր, թե՞ այն, ինչպես կառեթումն էր։ Իսկ եթե ճի՞շտ էր ասում Դարիա Ալեքսանդրովնան։ Ինչո՞ւ չպիտի ճիշտ ասեր»,— մտածում էր Լևինը։

— Ա՜խ, խնդրեմ, ծանոթացնես ինձ Կարենինի հետ,— դժվարությամբ ասաց նա և հուսահատական-վճռական քայլերով մտավ ընդունարան ու տեսավ Կիտիին։

Կիտին ո՛չ այն էր, ինչ առաջ, ո՛չ էլ այն, ինչպես կառեթում էր, նա բոլորովին ուրիշ էր։

— Նա վախեցած էր, վեհերոտ էր, ամոթահար էր և այդ իսկ

պատճառով ավելի սքանչելի էր։ Նա տեսավ Լևինին հենց այն վայրկյանին, երբ Լևինը մտավ սենյակ։ Նա սպասում էր Լևինին։ Նա ուրախացավ ու շփոթվեց իր ուրախությունից մինչ այն աստիճան, որ մի բոպե, այսինքն՝ այն պահին, երբ Լևինը մոտենում էր տանտիկնոջը ու նորից նայեց իրեն, մտածեց, որ չի դիմանա և լաց կլինի, այդպես թվաց նաև Լևինին, և՛ Դոլիին, որը տեսավ այդ ամենը։ Նա կարմրեց, սփրթնեց, նորից կարմրեց ու մարեց, աննշան ցնցելով շուրթերը, սպասելով Լևինին։ Լևինը մոտեցավ նրան, գլուխ տվեց և լուռ մեկնեց ձեռքը։ Եթե չլիներ շուրթերի թեթև դողոցը և այն թացությունը, որ շողաց աչքերում ու ավելացրեց նրանց փայլը, նրա ժպիտը կլիներ համարյա խաղաղ, երբ նա ասաց.

— Ինչքա՞ն ժամանակ է, մենք չենք տեսնվել,— և նա հուսահատական վճռականությամբ իր սառը ձեռքով սեղմեց Լևինի ձեռքը։

— Դուք ինձ չեք տեսել, իսկ ես տեսա ձեզ,— ասաց Լևինը, փայլելով երջանկության ժպիտով։— Ես տեսա ձեզ, երբ դուք երկաթուղուց գնում էիք Երգուշովո։

— Ե՞րբ,— հարցրեց նա զարմանքով։

— Դուք գնում էիք Երգուշովո,— ասաց Լևինը, զգալով, որ շնչահեղձ է լինում իր հոգին հեղեղող երջանկությունից։ «Եվ ինչպե՞ս էի համարձակվում ես կապել սրտահույզ այդ էակի հետ մտածմունք որևէ ո՛չ անմեղ բանի մասին։ Ու, կարծեմ, ճիշտ է այն, ինչ ասում էր Դարիա Ալեքսանդրովնան», մտածում էր նա։

Ստեպան Արկադևիչը բռնեց Լևինի ձեռքից և տարավ նրան Կարենինի մոտ։

— Թույլ տվեք ծանոթացնել ձեզ։— Նա տվեց նրանց ազգանունները։

— Շատ հաճելի է նորից հանդիպել,— սառնորեն ասաց Ալեքսեյ Ալեքսանդրովիչը, սեղմելով Լևինի ձեռքը։

— Դուք ծանո՞թ եք,— զարմանքով հարցրեց Ստեպան Արկադևիչը։

— Մենք երեք ժամ միասին անցկացրինք վագոնում,— ժպտալով ասաց Լևինը,— բայց դուրս եկանք, ինչպես դիմակահանդեսից, սաստիկ հետաքրքրված,— ե՞ս, համենայն դեպս։

— Ահա՞ թե ինչ։ Խնդրեմ, համեցեք,— ասաց Ստեպան Արկադևիչը, նշելով սեղանատունը։

Տղամարդիկ դուրս եկան սեղանատուն և մոտեցան նախաուտեստի սեղանին, վրան դրած վեց տեսակ օղի և նույնքան տեսակի պանիր՝ արծաթե թիակիկներով ու առանց թիակիկների, ձկնկիթներով, սեյլդկաներով, զանազան պահածոներով ու ափսեներով, միջին ֆրանսիական հացի բարակ պատառներ։

Տղամարդիկ կանգնել էին անուշահոտ օղիների և նախուտեստների մոտ, և Լեհաստանի ռուսացման մասին խոսակցությունը թուլանում էր Սերգեյ Իվանովիչ Կոզնիշևի, Կարենինի ու Պեսցովի միջև, սպասելով ճաշին։

Սերգեյ Իվանովիչը, որ գիտեր և իր մրցակիցը չուներ, ամենավերացական ու լուրջ վեճը վերջացնելու համար անակնկալ ցանել ատտիական աղ [redacted]անով փոխել զրուցակիցների տրամադրությունը, արեց այդ նույնը նաև այժմ։

Ալեքսեյ Ալեքսանդրովիչն ապացուցում էր, թե Լեհաստանի ռուսացումը կարող է կատարվել այն բարձրագույն սկզբունքների հետևանքով միայն, որոնք պետք է մտցնի ռուս ադմինիստրացիան։

Պեսցովը պնդում էր, թե մի ազգ ձուլում է իր հետ մյուսին այն ժամանակ, երբ ինքն ավելի խիտ է բնակեցված։

Կոզնիշևն ընդունում էր թե՛ մեկը, թե՛ մյուսը, բայց սահմանափակումներով։ Իսկ երբ նրանք դուրս էին գնում ընդունարանից, Կոզնիշևը, խոսակցությունը եզրափակելու համար, ասաց ժպտալով.

— Այդ պատճառով օտարազգիներին ռուսացնելու համար կա մի միջոց՝ արտադրել որքան հնարավոր է ավելի շատ երեխաներ։ Դժբախտաբար, ես ու իմ եղբայրը գործում ենք ամենից վատ։ Իսկ դուք, պարոնայք, ամուսնացած մարդիկ, մանավանդ դուք, Ստեպան Արկադևիչ, գործում եք լիովին հայրենասիրաբար։ Դուք քանի՞ն ունեք,— փաղաքշալից ժպիտով դիմեց նա տանտիրոջը՝ դեմ անելով փոքրիկ գավաթը։

Բոլորը ծիծաղեցին, և առանձնապես ուրախ քրքջաց Ստեպան Արկադևիչը։

— Այո՛, գա ամենալավ միջոցն է,— ասաց նա, ծամելով

պանիրն ու լցնելով ինչ-որ առանձնահատուկ օղի իրեն դեմ արած գավաթի մեջ։ Խոսակցությունն իսկապես դադարեց կատակով։

— Այդ պանիրը վատը չէ։ Կհրամայե՞ք,— ասում էր տանտերը։— Մի՞թե դու նորից եղել ես մարմնամարզության,— դիմեց նա Լևինին, ձախ ձեռքով շոշափելով նրա մկանը։ Լևինը ժպտաց, լարեց թևը, և Ստեպան Արկադևիչի մատների տակ, ինչպես կլոր պանիր, բարձրացավ պողպատե բլրակ՝ այուրտուկի բարակ մահուդի տակից։

— Ա՜յ բիցե՜պս. Սամսո՜ն։

— Ես կարծում եմ, պետք է մեծ ուժ ունենալ՝ արջի որսի գնալու համար,— ասաց Ալեքսեյ Ալեքսանդրովիչը, որը չափազանց աղոտ հասկացողություն ուներ որսի մասին, քսելով պանիրը և կտրելով բարակ, ինչպես ոստայն, հացի միջուկը։

Լևինը ժպտաց։

— Ո՜չ մի ուժ։ Ընդհակառակը, երեխան անգամ կարող է արջ սպանել,— ասաց նա, գլխի թեթև ողջույնով տեղի տալով տիկիններին, որոնք տանտիկնոջ հետ մոտենում էին նախուտեստների սեղանին։

— Ինձ ասել են, որ դուք արջ եք սպանել,— ասաց Կիտին, իզուր աշխատելով ու չկարողանալով բռնել պատառաքաղով՝ անհնազանդ, սլկուն սունկը և ցնցելով ժանյակները, որոնց միջից սպիտակին էր տալիս նրա ձեռքը։— Մի՞թե ձեզ մոտ արջեր կան,—ավելացրեց նա, կիսադարձ շուռ տալով դեպի Լևինն իր սքանչելի գլուխը և ժպտալով։

Թվում էր, թե անսովոր ոչինչ չկար այն բանում, ինչ ասաց նա, բայց Լևինի համար բառերով անարտահայտելի ինչպիսի՜ իմաստ կար յուրաքանչյուր հնչյունի, նրա շուրթերի, աչքերի, ձեռքի յուրաքանչյուր շարժման մեջ, երբ նա ասում էր այդ բառերը։ Այդտեղ կար և՛ ներման աղերս, և՛ վստահություն դեպի Լևինը, և՛ փաղաքշանք, նուրբ, վեհերոտ շոյանք, և՛ խոստում, և՛ հույս, և՛ սեր դեպի Լևինը, որին վերջինս չէր կարող չհավատալ ու որը երջանկությամբ խեղդում էր Լևինին։

— Ո՜չ, մենք գնացել էինք Տվերի նահանգ։ Վերադառնալով այնտեղից՝ ես վագոնում պահպանեցի ձեր բոֆրեֆրին,

կամ ձեր բոֆրերի փեսային,— ասաց Լևինը ժպտալով։— Դա ծիծաղելի հանդիպում էր։

Եվ նա ուրախ ու զվարճանքով պատմեց, թե ինչպե՛ս ինքը, ամբողջ գիշերը չքնած, կիսամուշտակով խուժեց Ալեքսեյ Ալեքսանդրովիչի բաժանմունքը։

— Կոնդուկտորը, հակառակ առածի, ուզում էր ինձ դուրս գցել, նայելով զգեստիս. բայց այստեղ ես սկսեցի արտահայտվել բարձր ոճով, և... դուք նույնպես,— ասաց նա, մոռացած Կարենինի անունը ու դիմելով նրան,—սկզբում ուզում էիք նույնպես վռնդել ինձ՝ նայելով կիսամուշտակիս, բայց հետո պաշտպանեցիք, որի համար շատ շնորհապարտ եմ։

— Առհասարակ չափազանց անորոշ են ուղևորների իրավունքները տեղերի ընտրության վերաբերյալ,— ասաց Ալեքսեյ Ալեքսանդրովիչը, թաշկինակով սրբելով իր մատների ծայրերը։

— Ես տեսա, որ դուք տատանվում էիք իմ նկատմամբ,— բարեսրտորեն ժպտալով, ասաց Լևինը, ուստի շտապ սկսեցի խելոք խոսակցություն, որպեսզի կոծկեմ իմ կիսամուշտակը։

Սերգեյ Իվանովիչը շարունակելով զրույցը տանտիկնոջ հետ և մի ականջով լսելով եղբորը, խեթ-խեթ նայեց նրան։ «Ի՞նչ է պատահել այսօր նրան։ Ի՞նչ հաղթական տեսք ունի», մտածեց նա։ Նա չգիտեր, որ Լևինն զգում էր, կարծես թև է առել ինքը։ Լևինը գիտեր, որ Կիտին լսում է իր խոսքերը և որ Կիտիին հաճելի է լսել իրեն։ Եվ նրան զբաղեցնում էր միայն այդ բանը։ Ո՛չ միայն այդ սենյակում, այլև ամբողջ աշխարհում Լևինի համար գոյություն ուներ միայն ինքը, որ ստացել էր իր համար հսկայական կարևորություն ու նշանակություն, և նա՝ Կիտին։ Լևինն զգում էր իրեն մի բարձրության վրա, որից պտտվում էր նրա գլուխը, իսկ այնտեղ ցածրում, ինչ-որ տեղ, հեռո՜ւ-հեռու, գտնվում էին այդ բոլոր բարի, համակրելի Կարենինները, Օբլոնսկիները և համայն աշխարհը։

Բոլորովին աննկատելի կերպով, առանց նայելու նրանց վրա, այլ հենց այնպես, կարծես այլևս ուրիշ տեղ չկար նրս-

տեցնելու, Ստեպան Արկադևիչը նստեցրեց Լևինին ու Կիտիին իրար մոտ։

— Է՜հ, դու նստիր թեկուզ այստեղ,— ասաց նա Լևինին։

Ճաշը նույնպես լավ էր, ինչպես և ամանեղենը, որի սիրահար էր Ստեպան Արկադևիչը։ Սուպ Մարի-Լուիզը հիանալի էր. անբասիր էին փոքրիկ կարկանդակները, որ հալվում էին բերանի մեջ։ Երկու սպասավորներ ու Մատվեյը՝ սպիտակ փողկապներով, անում էին իրենց գործը կերակրի և գինու հետ անկատելի, լռելյայն ու հաջողակ։ Ճաշը հաջող էր նյութեղենի առումով. այն պակաս հաջող չէր նաև ո՛չ նյութեղենի առումով։ Խոսակցությունը՝ մերթ ընդհանուր, մերթ մասնավոր՝ չէր դադարում և ճաշի վերջում այնպես աշխուժացավ, որ տղամարդիկ վեր կացան սեղանից, շարունակելով իրենց զրույցը, և աշխուժացավ նույնիսկ Ալեքսեյ Ալեքսանդրովիչը։

X

Պեսցովը սիրում էր դատել մինչև վերջ ու չբավարարվեց Սերգեյ Իվանովիչի խոսքերով, մանավանդ, որ զգաց իր կարծիքի անարդարությունը։

— Ես երբեք նկատի չունեի,— ասաց նա սուպի ժամանակ, դիմելով Ալեքսեյ Ալեքսանդրովիչին,— ազգաբնակչության խտությունը միայն, այլ նկատի ունեի դա՝ միացած հիմունքների հետ, և ո՛չ սկզբունքների։

— Ինձ թվում է,— առանց շտապելու և թլկուկ պատասխանեց Ալեքսեյ Ալեքսանդրովիչը, որ դա միևնույն բանն է։ Իմ կարծիքով, ներազդել մյուս ժողովրդի վրա կարող է միայն այն ժողովուրդը, որն ունի ավելի բարձր զարգացում, որը...

— Հարցն էլ այն է, հենց,— ընդհատեց իր բասով Պեսցովը, որը միշտ շտապում էր խոսել և, թվում էր, մեկտ իր ամբողջ հոգին դնում էր իր զրույցի մեջ,— թե ինչո՛ւմ ենթադրել ավելի բարձր զարգացումը։ Անգլիացիք, ֆրանսիացիք, գերմանացիք՝ ո՞վ է կանգնած զարգացման ավելի բարձր աստիճանի վրա։ Դրանցից ո՞վ պիտի ազդայնացնի մյուսին։ Մենք տեսնում ենք, որ Հռենոսը ֆրանսիացել է, մինչդեռ գեր-

մանացիները կանգնած չեն ավելի ցածր աստիճանի վրա,— բղավում էր նա։— Այստեղ կա ուրիշ օրենք։

— Ինձ թվում է, որ ազդեցությունը միշտ իսկական կրթության կողմն է,— ասաց Ալեքսեյ Ալեքսանդրովիչը, մի թեթև բարձրացնելով հոնքերը։

— Բայց մենք ինչի՞ մեջ պիտի ենթադրենք իսկական կրթության հատկանիշները,— հարցրեց Պեսցովը։

— Ես կարծում եմ, որ այդ հատկանիշները հայտնի են,— պատասխանեց Ալեքսեյ Ալեքսանդրովիչը։

— Արդյոք նրանք լիովին են հայտնի,— նուրբ ժպիտով միջամտեց Սերգեյ Իվանովիչը։— Այժմ ընդունված է, որ իսկական կրթությունը կարող է լինել միայն զուտ դասականը, բայց մենք տեսնում ենք կատաղի վեճեր այս ու այն կողմից. և չի կարելի բացասել, որ հակառակ բանակը ևս չունի իր ուժեղ փաստարկներն իր օգտին։

— Դուք կլասիկ եք, Սերգեյ Իվանովիչ։ Կհրամայեք կարմիր գինի,— ասաց Ստեպան Արկադևիչը։

— Ես իմ կարծիքը չեմ արտահայտում այս և այն կրթության մասին,— ներողամիտ ժպիտով, ինչպես երեխայի հետ, ասաց Սերգեյ Իվանովիչը, դեմ անելով իր բաժակը,— ես միայն ասում եմ, որ երկու կողմերն էլ ունեն զորեղ փաստարկներ,— շարունակեց նա, դիմելով Ալեքսեյ Ալեքսանդրովիչին։— Ես կլասիկ եմ իմ կրթությամբ, սակայն այդ վեճի մեջ ինքս չեմ կարող գտնել իմ տեղը։ Ես պարզ փաստարկներ չեմ տեսնում, թե ինչո՛ւ դասական գիտություններին գերապատվություն է տրված ռեալականների հանդեպ։

— Բնագիտականներն էլ ունեն նույնքան մանկավարժական-զարգացողական ազդեցություն,— վրա բերեց Պեսցովը։— Վերցրեք թեկուզ պատմությունը միայն, վերցրեք բուսաբանությունը, կենդանաբանությունը՝ իր ընդհանուր օրենքների սիստեմով։

— Ես չեմ կարող լիովին համաձայնել դրան,— պատասխանեց Ալեքսեյ Ալեքսանդրովիչը։— Ինձ թվում է, չի կարելի չընդունել, որ լեզուների ուսումնասիրության պրոցեսն ինքնին առանձնապես բարիբար կերպով է ներազդում հոգեկան զարգացման վրա։ Բացի դրանից, չի կարելի բացասել և այն, որ

դասական գրականագետների ազդեցությունը վերին աստիճանի բարոյական է, մինչդեռ, դժբախտաբար, բնական գիտությունների դասավանդման հետ միանում են այն վնասակար ու կեղծ ուսմունքները, որոնք կազմում են մեր ժամանակի պատուհասը։

Սերգեյ Իվանովիչն ուզում էր մի բան ասել, բայց Պեսցովն իր թավ բասով ընդհատեց նրան։ Նա ջերմորեն սկսեց ապացուցել այդ կարծիքի անիրավացիությունը։ Սերգեյ Իվանովիչը հանգիստ սպասում էր խոսքի, հայտնապես պատրաստի հաղթական առարկությամբ։

— Սակայն,— ասաց Սերգեյ Իվանովիչը, նուրբ ժպիտով ու դիմելով Կարենինին,— չի կարելի չհամաձայնել, որ դժվար է լիովին կշռել այս և այն գիտությունների ամբողջ օգուտն ու վնասը և որ այն հարցը, թե որ գիտությունները գերապատվել, չէր լուծվի այնպես շուտափույթ ու վերջնականապես, եթե դասական կրթության կողմը չլիներ այն առավելությունը, ինչը դուք այս րոպեիս արտահայտեցիք, այսինքն՝ բարոյական — disons le mot[1]— հականիհիլիստական ազդեցությունը։

— Անկասկած։

— Եթե հականիհիլիստական ազդեցության այդ առավելությունը չլիներ դասական գիտությունների կողմը, մենք ավելի կմտածեինք, կկշռադատեինք երկու կողմերի փաստարկները,— նուրբ ժպիտով ասաց Սերգեյ Իվանովիչը,— մենք ազատություն կտայինք այս և այն ուղղությանը։ Բայց այժմ մենք գիտենք, որ դասական կրթության այդ դեղահատերի մեջ է հականիհիլիզմի բուժիչ ուժը և մենք դրանք համարձակ առաջարկում ենք մեր պացիենտներին... իսկ եթե այդ բուժիչ ուժն էլ չկա՞,— եզրափակեց նա, ցանելով ատտիական աղ։

Լսելով Սերգեյ Իվանովիչի ասածը դեղահատերի մասին, բոլորը ծիծաղեցին, առանձնապես բարձր և ուրախ ծիծաղեց Տուրովցինը, վերջապես արժանանալով ծիծաղաշարժ այն բանին, որին հենց սպասում էր նա, ականջ դնելով խոսակցությանը։

Ստեպան Արկադևիչը չխալվեց, հրավիրելով Պեսցովին։

[1] Ասենք այդ խոսքը — իրը կոչենք իր անունով։

Պեսցովի հետ խելոք խոսակցությունը չէր կարող լռել ոչ մի րոպե։ Հենց որ Սերգեյ Իվանովիչը փակեց զրույցն իր կատակով, Պեսցովն անմիջապես սկսեց նորը։

— Չի կարելի համաձայնել նույնիսկ այն բանին,— ասաց նա,— որ կառավարությունն ունենար այդ նպատակը։ Կառավարությունը հայտնապես ղեկավարվում է ընդհանուր նկատառումներով, անտարբեր մնալով այն ազդեցությունների նկատմամբ, որ կարող են ունենալ ձեռնարկվելիք միջոցները։ Օրինակ՝ կանանց կրթության հարցը պետք է համարվեր վնասակար, մինչդեռ կառավարությունը հիմնում է կանանց կուրսեր ու համալսարաններ։

Եվ խոսակցությունն անմիջապես թռավ կանանց կրթության նոր թեմային։

Ալեքսեյ Ալեքսանդրովիչն այն միտքը հայտնեց, թե կանանց կրթությունը սովորաբար շփոթում են կանանց ազատության հարցի հետ, և այդ պատճառով միայն դա կարող է համարվել վնասակար։

— Ես, ընդհակառակը, կարծում եմ, որ այդ երկու հարցերն անխզելի կերպով կապված են իրար հետ,— ասաց Պեսցովը,— դա կեղծ շրջան է։ Կինը զրկված է իրավունքներից կրթության պակասության պատճառով, իսկ կրթության պակասությունն առաջանում է իրավունքների բացակայությունից։ Հարկավոր է չմոռանալ մի բան. կանանց ստրկացումն այնքան մեծ է ու հին, որ մենք հաճախ չենք ուզում հասկանալ այն անդունդը, որը բաժանում է նրանց մեկնից,— ասաց նա։

— Դուք ասացիք՝ իրավունքներ,— ասաց Սերգեյ Իվանովիչը, սպասելով Պեսցովի լռելուն,— երդվյալ հավատարմատարների, ձայնավորների, քաղաքային վարչությունների նախագահների պաշտոններ ստանձնելու իրավունքներ, ծառայողի, պառլամենտի անդամի իրավունքներ...

— Անկասկած։

— Բայց եթե կանայք, որպես հազվագյուտ բացառություն, կարող են ստանձնել այդ պաշտոնները, ապա ինձ թվում է, դուք սխալ գործածեցիք «իրավունքներ» արտահայտությունը։ Ավելի ճիշտ կլիներ ասել՝ պարտականություններ։ Մեզանից յուրաքանչյուրը կհամաձայնի, թե կատարելով որևէ պաշտոն՝

երգվյալ հավատարմատարի, ձայնավորի, հեռագրատան չինովնիկի, մենք զգում ենք, որ կատարում ենք պարտականություն։ Այս իսկ պատճառով, ավելի ճիշտ կլինի ասել, որ կանայք փնտրում են պարտականություններ ու միանգամայն օրինականորեն։ Եվ կարելի է միայն համակրել նրանց այդ ցանկությունը՝ օգնելու տղամարդկանց ընդհանուր աշխատանքին։

— Բոլորովին իրավացի է,— հաստատեց Ալեքսեյ Ալեքսանդրովիչը։ — Ես կարծում եմ, հարցն այն է միայն, արդյոք ընդունա՞կ են նրանք այդ պարտականություններին։

— Հավանորեն, շատ ընդունակ կլինեն,— վրա բերեց Ստեպան Արկադևիչը,— երբ կրթությունը կտարածվի նրանց մեջ։ Մենք դա տեսնում ենք...

— Հապա առա՞ծը,— ասաց իշխանը, վաղուց արդեն ականջ դնելով խոսակցությանը և փայլելով իր փոքրիկ, հեգնալից աչքերով,— աղջիկներիս մոտ կարելի է. մազը երկար...

— Ճիշտ այդպես էին մտածում նաև նեգրերի մասին մինչև նրանց ազատագրությունը,— բարկացած ասաց Պեսցովը։

— Ես տարօրինակ եմ համարում միայն այն, որ կանայք փնտրում են նոր պարտականություններ,— ասաց Սերգեյ Իվանովիչը,— մինչդեռ մենք, դժբախտաբար, տեսնում ենք, որ տղամարդիկ սովորաբար խուսափում են դրանցից։

Պարտականությունները կապված են իրավունքների հետ. իշխանություն, դրամ, պատիվներ՝ հենց դրա՞նք են փնտրում կանայք,— ասաց Պեսցովը։

— Դա միևնույն բանն է, եթե ես փնտրեի ծծմոր իրավունքներ ու վիրավորվեի, որ կանանց վճարում են, իսկ ինձ չեն ուզում վճարել,— ասաց ծերունի իշխանը։

Տուրովցինը բարձրաձայն քրքջաց, և Սերգեյ Իվանովիչն ափսոսաց, որ դա ինքը չասաց։ Նույնիսկ Ալեքսեյ Ալեքսանդրովիչը ժպտաց։

— Այո, բայց տղամարդը չի՛ կարող կերակրել— ասաց Պեսցովը,— իսկ կին էակը...

— Ա՛խ, անգլիացին կերակրել, մեծացրել է իր երեխային նավի վրա,— ասաց ծերունի իշխանը, թույլ տալով իրեն խոսակցության այդ ուղղությունն իր աղջիկների ներկայությամբ։

— Որքան այդպիսի անգլիացիներ, այնքան էլ կլինեն կին չինովնիկներ,— ասաց արդեն Սերգեյ Իվանովիչը։

— Այո՛, բայց ի՞նչ պիտի անի այն աղջիկը, որը ընտանիք չունի,— միջամտեց Ստեպան Արկադևիչը, հիշելով Չիբիսովայի մասին, որին ամբողջ ժամանակ նկատի ուներ նա, համակրելով Պեսցովին ու պաշտպանելով նրան։

— Եթե լավ քննելու լինեք այդ աղջկա պատմությունը, դուք կտեսնեք, որ այդ աղջիկը թողել է ընտանիքը՝ կամ իր, կամ քրոջ, որտեղ նա կարող էր ունենալ կանացի գործ,— անակնկալ միջամտելով խոսակցությանը, ասաց Դարիա Ալեքսանդրովնան գրգռված, հավանորեն գլխի ընկնելով, թե ի՞նչ աղջիկ նկատի ուներ Ստեպան Արկադևիչը։

— Բայց մենք պաշտպանում ենք սկզբունքը, գաղափարը,— հնչեղ բասով առարկում էր Պեսցովը։— Կինն ուզում է ունենալ իրավունք, լինելու անկախ, լինելու կրթված։ Նա նեղված, ճնշված է դրա անհնարինության գիտակցությամբ։

— Իսկ ես նեղված ու ճնշված եմ այն հանգամանքից, որ ինձ ծծմայր չեն ընդունի դաստիարակչական տանը,— նորից ասաց ծերունի իշխանը ի մեծ ուրախություն Տուրովցինի, որը ծիծաղից գցեց ծներեկը սոուսի մեջ՝ հաստ ծայրով։

XI

Բոլորը մասնակցում էին ընդհանուր խոսակցությանը, բացի Կիտիից և Լևինից։ Սկզբում, երբ խոսում էին մի ազգի մյուսի վրա ունեցած ազդեցության մասին, ակամա գալիս էր Լևինի գլուխն այն, ինչ նա կարող էր ասել այդ նյութի մասին, բայց այդ մտքերը, առաջ նրա համար շատ կարևոր, առկայծում էին նրա գլխում ասես երազի մեջ և նրա համար այժմ բնավ հետաքրքրական չէին։ Նրան նույնիսկ տարօրինակ էր թվում, թե ինչո՞ւ նրանք այդպես աշխատում են խոսել այն բանի մասին, որը ոչ ոքի պետք չէ։ Կիտիին նույնպես թվում էր, թե պետք է հետաքրքրական լինի այն, ինչ ասում էին նրանք կանանց իրավունքների և կրթության մասին։ Քա՛նքանի՛ անգամ նա մտածել էր դրա մասին, հիշելով իր արտասահմանյան բարեկամուհի Վարենկային, նրա ծանր ուսախության մասին, քանի՛-քանի՛ անգամ մտածել էր ինքն իրեն,

թե ի՞նչ կլինի իր հետ, եթե չամուսնանա, և քանի՞-քանի՞ անգամ վիճել էր դրա մասին քրոջ հետ։ Բայց հիմա դա բնավ չէր հետաքրքրում նրան։ Նրա և Լևինի միջև տեղի ուներ իրենց խոսակցությունը, բայց իրոք ո՞չ թե խոսակցություն, այլ ինչ-որ խորհրդավոր հաղորդակցություն, որն ամեն րոպե ավելի մոտեցնում, կապում էր նրանց իրար հետ և երկուսի մեջ առաջացնում ցնծագին վախի զգացում այն անհայտության հանդեպ, որի մեջ մուտք էին գործում նրանք։

Սկզբում Լևինը, պատասխանելով Կիտիի հարցին, թե ինչպե՞ս կարող էր տեսնել նրան անցյալ տարի կառեթում, պատմեց, թե ինչպե՞ս ինքը խոտհարքից գնում էր մեծ ճանապարհով ու տեսավ նրան։

— Դա վաղ առավոտյան էր։ Հավանորեն դուք նոր էիք զարթնել։ Ձեր maman քնած էր կառքի անկյունում։ Սքանչելի առավոտ էր։ Ես գնում և մտածում եմ. արյոք ո՞վ է այդ քառաձի կառեթում։ Հիանալի քառաձի կառեթ բոժոժներով, ու մի վայրկյան առկայծեցիք դուք, և ես տեսնում եմ լուսամուտից, դուք նստած եք ահա այդպես ու երկու ձեռքով բռնել եք չեպչիկի ժապավեններից և սաստիկ մտասուզված եք,— ասում էր նա ժպտալով։ — Ինչպե՞ս կուզենայի իմանալ, թե ինչի՞ մասին էիք մտածում այն ժամանակ։ Կարևո՞ր բանի մասին։

«Հո զգզված չե՞մ եղել», մտածեց Կիտին, բայց տեսնելով հիացական այն ժպիտը, որ առաջ բերին Լևինի հիշողության մեջ այդ մանրամասները, նա զգաց, որ, ընդհակառակը, իր թողած տպավորությունը շատ լավ է եղել։ Նա կարմրեց և ուրախ ծիծաղեց։

— Ճիշտն ասած, չեմ հիշում։

— Ի՜նչ լավ է ծիծաղում Տուրովցինը,— ասաց Լևինը, հիացած նայելով նրա թաց աչքերին ու ցնցվող մարմնին։

— Դուք վաղո՞ւց եք ճանաչում նրան,— հարցրեց Կիտին։

— Ո՞վ չի ճանաչում նրան։

— Ու ես տեսնում եմ, դուք կարծում եք, որ նա վատ մարդ է։

— Վատ մարդ չէ, այլ ոչնչություն է։

— Եվ ճիշտ չէ։ Եվ այլևս մի՛ մտածեք այդպես,— ասաց Կիտին։— Ես նույնպես նրա մասին շատ վատ կարծիքի էի։

բայց դա, դա— շատ հաճելի ու զարմանալի բարի մարդ է։ Նա ոսկի սիրտ ունի։

— Ինչպե՞ս կարողացաք ճանաչել նրա սիրտը։

— Մենք նրա հետ մեծ բարեկամներ ենք։ Ես շատ լավ եմ ճանաչում նրան։ Անցյալ ձմեռ, այն օրից քիչ հետո... երբ դուք մեզ մոտ էիք,— ասաց Կիտին հանցավոր ու միաժամանակ հավատ ընծայող ժպիտով,— Դոլլիի բոլոր երեխաները հիվանդացան քութեշով, և Տուրովցինը մի անգամ եկավ նրա մոտ։ Ու, կարո՞ղ եք երևակայել,— ասում էր Կիտին շշուկով,— նա այնպես խղճաց Դոլլիին, որ մնաց և սկսեց օգնել նրան երեխաներին խնամելու գործում։ Այո՛, ու երեք շաբաթ ապրեց նրանց տանը և դայակի պես խնամում էր երեխաներին։

— Ես պատմում եմ Կոնստանտին Դմիտրիչին Տուրովցինի մասին՝ քութեշի ժամանակ,— ասաց Կիտին, թեքվելով դեպի քույրը։

— Այո՛, զարմանալի՛ բան, սքանչելի՛ մարդ,— ասաց Դոլլին, նայելով Տուրովցինին ու հեզորեն ժպտալով նրան, որն զգաց, որ իր մասին են խոսում։ Լևինը մի անգամ էլ նայեց Տուրովցինին և զարմացավ, թե ինչպե՞ս է, որ ինքն առաջ չէր հասկանում այդ մարդու ամբողջ գրավչությունը։

— Ներողություն, ներողություն, այլևս երբեք վատ բան չեմ մտածի մարդկանց մասին,— ուրախ ասաց Լևինը, անկեղծորեն արտահայտելով այն, ինչ զգում էր այժմ։

XII

Կանանց իրավունքների մասին սկսված խոսակցության մեջ կային տիկինների ներկայությամբ փափուկ խնդիրներ՝ իրավունքների անհավասարության մասին ամուսնության հարցում։ Ճաշի ժամանակ Պեսցովը մի քանի անգամ վրա ընկավ այդ հարցերին, բայց Սերգեյ Իվանովիչը և Ստեպան Արկադիչը զգուշությամբ շեղում էին նրան։

Իսկ երբ վեր կացան սեղանից ու կանայք դուրս գնացին, Պեսցովը, չհետևելով նրանց, դիմեց Ալեքսեյ Ալեքսանդրովիչին և սկսեց նկարագրել անհավասարության գլխավոր պատճառը։ Նրա կարծիքով, ամուսինների անհավասարության

էությունն այն էր, որ կնոջ անհավատարմությունը և ամուսնու անհավատարմությունը պատժվում է անհավասար՝ և՛ օրենքով, և՛ հասարակական կարծիքով։

Ստեպան Արկադևիչն արագ մոտեցավ Ալեքսեյ Ալեքսանդրովիչին, առաջարկելով նրան ծխել։

— Մչ, ես չեմ ծխում,— հանգիստ պատասխանեց Ալեքսեյ Ալեքսանդրովիչը և, կարծես թե դիտմամբ կամենալով ցույց տալ, որ ինքը չի վախենում այդ խոսակցությունից, սառը ժպիտով դիմեց Պեսցովին։

— Ես կարծում եմ, որ նման հայեցակետի հիմունքները զոնվում են հենց իրերի էության մեջ,— ասաց նա և ուզում էր անցնել ընդունարան, բայց այստեղ հանկարծ անակնկալ խոսեց Տուրովցինը, դիմելով Ալեքսեյ Ալեքսանդրովիչին։

— Արդյոք լսե՞լ եք դուք Պրյաչնիկովի մասին,— ասաց Տուրովցինը, որ աշխուժացել էր խմած շամպայնից ու վառուց սպասում էր առիթի, որպեսզի խզի իրեն ճնշող լռությունը։— Այսօր ինձ պատմում էին, որ Վասյա Պրյաչնիկովը Տվերում մենամարտել է Կվիտսկու հետ և սպանել է նրան,— ասաց նա թաց ու կարմիր շրթունքների բարի ժպիտով, դիմելով առավելապես գլխավոր հյուրին՝ Ալեքսեյ Ալեքսանդրովիչին։

Ինչպես միշտ թվում է, թե մարդ, կարծես դիտմամբ, հարվածում է հենց ցավոտ տեղը, այնպես էլ այժմ Ստեպան Արկադևիչն զգում էր, որ տարաբախտաբար այսօր ամեն ոլորտ խոսակցությունը դիպչում էր Ալեքսեյ Ալեքսանդրովիչի ցավոտ տեղին։ Նա ուզում էր նորից բացածել փեսային, բայց ինքն Ալեքսեյ Ալեքսանդրովիչը հետաքրքրությամբ հարցրեց.

— Ինչի՞ համար է մենամարտել Պրյաչնիկովը։

— Կնոջ համար։ Տղամարդավարի բան է արել։ Կանչել է մենամարտի և սպանել։

— Ա՛,— անտարբերությամբ ասաց Ալեքսեյ Ալեքսանդրովիչը, և հոնքերը վեր քաշելով, անցավ ընդունարան։

— Որքան ուրա՞խ եմ ես, որ դուք եկաք,— ասաց նրան Դոլլին վախեցած ժպիտով, հանդիպելով նրան միջանցիկ ընդունարանում.— ինձ հարկավոր է խոսել ձեզ հետ։ Նստենք այստեղ։

Ալեքսեյ Ալեքսանդրովիչը, անտարբերության մթնոլորտ արտահայտությամբ, որ տալիս էին նրան վեր բաշած հոնքերը, նստեց Դարիա Ալեքսանդրովնայի կողքին և շինծու ժպտաց։

— Մանավանդ որ,— ասաց նա,— ես ուզում էի ներողություն խնդրել և անմիջապես հեռանալ։ Ես պետք է վաղը մեկնեմ։

Դարիա Ալեքսանդրովնան հաստատ համոզված էր Աննայի անմեղության մեջ և զգում էր, որ ինքը գունատվում է ու զայրույթից դողում են շրթունքներն այդ սառն, անզգա մարդու հանդեպ, որ այդպես հանգիստ մտադիր է կործանելու իր անմեղ բարեկամուհուն։

— Ալեքսեյ Ալեքսանդրովիչ,— ասաց նա, հուսահատական վճռականությամբ նայելով նրա աչքերին,— ես հարցնում էի ձեզ Աննայի մասին, բայց դուք չպատասխանեցիք ինձ։ Ինչպե՞ս է նա։

— Նա, կարծեմ, առողջ է, Դարիա Ալեքսանդրովնա,— առանց նայելու Դոլլիին, պատասխանեց Ալեքսեյ Ալեքսանդրովիչը։

— Ալեքսեյ Ալեքսանդրովիչ, ներեցեք ինձ, ես իրավունք չունեմ... բայց Աննային ես սիրում ու հարգում եմ քրոջ պես. ես խնդրում, աղաչում եմ, ասեք ինձ, ի՞նչ է պատահել ձեր մեջ, դուք ինչո՞ւմ եք մեղադրում նրան։

Ալեքսեյ Ալեքսանդրովիչը կնճռոտվեց և համարյա փակելով աչքերը, կախ գցեց գլուխը։

— Ես կարծում եմ, որ ձեր ամուսինը հայտնել է ձեզ այն պատճառները, թե ինչո՞ւ ես հարկավոր եմ համարում փոխել իմ նախկին վերաբերմունքը դեպի Աննա Արկադևնան,— ասաց նա, չնայելով Դոլլիի աչքերին, այլ զննելով ընդունարանից անցնող Շչերբացկուն։

— Ես չեմ հավատում, չեմ հավատում, չեմ կարող հավատալ դրան,— սեղմելով իր ոսկրոտ ձեռքերը, եռանդուն շարժումով ասաց Դոլլին։ Նա արագ կանգնեց ու ձեռքը դրեց Ալեքսեյ Ալեքսանդրովիչի թևին։— Մնաք կիրակի այստեղ։ Խնդրեմ, պետք այնտեղ։

Դոլլիի հուզմունքն ազդում էր Ալեքսեյ Ալեքսանդրովիչի վրա։ Նա վեր կացավ ու հնազանդությամբ զնաց Դոլլիի հետևից

դասարան-սենյակը։ Նրանք նստեցին սեղանի առաջ, որ պատած էր գրչահատով կտրատած մոմլաթով։

— Ես չեմ հավատում, չեմ հավատում դրան,— ասաց Դոլլին, աշխատելով որսալ նրա՝ իրենից խուսափող հայացքը։

— Չի կարելի չհավատալ փաստերին, Դարիա Ալեքսանդրովնա,— ասաց Կարենինը, շեշտելով փաստերին խոսքը։

— Իսկ ի՞նչ է արել նա,— ասաց Դարիա Ալեքսանդրովնան։— Իսկապես ի՞նչ, ի՞նչ է արել նա։

— Նա արհամարհել, ոտնահարել է իր պարտականությունները և դավաճանել է իր ամուսնուն։ Ահա թե ի՞նչ է արել նա,— ասաց Կարենինը։

— Ո՛չ, ո՛չ, չի՛ կարող պատահել։ Ո՛չ, ի սե՞ր աստծո, դուք սխալվել եք,— ասում էր Դոլլին, ձեռքերով շոշափելով քունքերը և փակելով աչքերը։

Ալեքսեյ Ալեքսանդրովիչը սառնությամբ ժպտաց շրթունքներով միայն, կամենալով ցույց տալ Դոլլիին և իրեն՝ իր համոզմունքի հաստատ լինելը, բայց այդ ջերմ պաշտպանությունը, թեպետև չտատանեց նրան, քոքրում էր նրա վերքը։ Նա խոսեց ավելի մեծ աշխուժությամբ։

— Զարմանալի դժվար է սխալվել, երբ այդ մասին կինն ինքն է հայտարարում ամուսնուն։ Հայտարարում է, որ սխալմունք է ուզ տարվա կյանքն ու որդին, այս բոլորը և որ ինքն ուզում է ապրել նորից,— ասաց նա բարկացած, վսվսացնելով քիթը։

— Աննա և արա՞տ, ես չեմ կարող միացնել դրանք, ես չեմ կարող հավատալ դրան։

— Դարիա Ալեքսանդրովնա,— ասաց Կարենինը, այժմ ուղիղ նայելով Դոլլիի հուզված բարի դեմքին և զգալով, որ իր լեզուն ակամա բացվում է,— ես շա՞տ բան կտայի, եթե կասկածը դեռ հնարավոր լիներ։ Երբ ես կասկածում էի, ծանր էր ինձ համար, բայց ավելի թեթև էր, քան այժմ։ Երբ ես կասկածում էի, հույս կար, բայց հիմա հույս չկա, և այսուամենայնիվ ես կասկածում եմ ամեն բանում։ Ես այնպես կասկածում եմ ամեն բանում, որ ատում եմ որդուս և երբեմն չեմ հավատում, թե դա իմ որդին է։ Ես շատ դժբախտ եմ։

Կարիք չկար, որ նա ասեր այդ։ Դարիա Ալեքսանդրովնան հասկացավ դա, հենց որ Կարենինը նայեց նրա դեմքին։ Եվ

Դոլլին խղճաց նրան, ու տատանվեց Դոլլիի մեջ հավատն իր բարեկամուհու անմեղության վերաբերյալ։

— Ա՜խ, դա սարսափելի է, սարսափե՛լի։ Բայց մի՞թե ճիշտ է, որ դուք վճռել եք ապահարզան տալ։

— Ես վճռեցի ձեռք առնել վերջին միջոցը։ Ես ուրիշ անելիք չունեմ։

— Անելիք չունեք, անելիք չունեք,—շշնջաց Դոլլին, աչքերին այցունքներ։— Ո՛չ, չէ թե անելիք չունեք,— ասաց Դարիա Ալեքսանդրովնան։

— Սոսկալին հենց այն է այդ կարգի դժբախտության մեջ, որ չի կարելի, ինչպես ուրիշ ամեն տեսակ դժբախտության՝ կորստի կամ մահվան դեպքում տանել իր խաչը, այլ այստեղ պետք է գործել,— ասաց Ալեքսեյ Ալեքսանդրովիչը, կարծես հասկանալով Դոլլիի միտքը։— Պետք է դուրս գալ այն նվաստացուցիչ դրությունից, որի մեջ դրված ես, չի կարելի ապրել երեքով։

— Ես հասկանում եմ, ես լավ եմ հասկանում դա,— ասաց Դոլլին ու քաշ գցեց գլուխը։— Նա լռեց, մտածելով իր մասին, իր ընտանեկան վշտի մասին, ու հանկարծ եռանդուն շարժումով բարձրացրեց գլուխը և աղերսող շարժումով ծալեց ձեռքերը։— Բայց կացեք, դուք քրիստոնյա եք։ Մտածեցեք նրա՝ Աննայի մասին, ի՞նչ կլինի նրա հետ, եթե դուք թողնեք նրան։

— Ես մտածել եմ, Դարիա Ալեքսանդրովնա, և շատ եմ մտածել,— ասաց Ալեքսեյ Ալեքսանդրովիչը։ Նրա դեմքը ծածկվեց կարմիր բծերով, և պղտոր աչքերը նայում էին ուղիղ Դարիա Ալեքսանդրովնային։ Դոլլին այժմ արդեն ամբողջ հոգով խղճում էր նրան։— Ես այդ նույն բանն արի այն փաստից հետո, երբ նա ինքը հայտնեց ինձ իմ նախատինքը։ Ես ամեն ինչ թողի առաջվա պես։ Ես ուղղվելու հնարավորություն տվի, ես աշխատում էի փրկել նրան։ Եվ ի՞նչ։ Նա չկատարեց իմ ամենաթեթև պահանջը՝ վայելչության պահպանումը,— ասում էր Ալեքսեյ Ալեքսանդրովիչը տաքանալով։— Փրկել կարելի է այն մարդուն, որը չի ուզում կորչել, բայց եթե ամբողջ բնավորությունն այնպես փչացած է, այլասերված, որ կորուստը թվում է նրան փրկություն, էլ ի՞նչ պետք է անել։

— Ամեն բան, միայն ո՛չ ապահարզան,— պատասխանեց Դարիա Ալեքսանդրովնան։

— Բայց էլ ի՞նչ ամեն բան։

— Ո՛չ, դա սոսկալի է։ Նա կլինի ոչ ոքի կինը, նա կկորչի։

— Իսկ ի՞նչ կարող եմ անել ես,—վեր քաշելով ուսերն ու հոնքերը, ասաց Ալեքսեյ Ալեքսանդրովիչը։ Հիշողությունը կնոջ վերջին վարմունքի մասին այնպես գրգռեց նրան, որ նա նորից դարձավ սառը, ինչպես և խոսակցության սկզբին։— Ես շատ շնորհակալ եմ ձեր կարեկցության համար, բայց ժամանակ է գնալու,— ասաց նա կանգնելով։

— Ո՛չ, կացե՛ք։ Դուք չպետք է կործանեք նրան։ Կացե՛ք, ես ձեզ կասեմ իմ մասին։ Ես ամուսնացա, և ամուսինս խաբում էր ինձ. լցված զայրույթով, խանդով, ես ուզում էի ամեն բան թողնել, ես ուզում էի ինքս... բայց ես ուշքի եկա, և ո՞վ Աննան փրկեց ինձ։ Եվ ահա ես ապրում եմ։ Երեխաներս մեծանում են, ամուսինս վերադառնում է իր ընտանիքի գիրկը և զգում է իր անարդարությունը, դառնում է ավելի մաքուր, ավելի լավ, ու ես ապրում եմ... Ես ներեցի, դուք էլ պետք է ներեք։

Ալեքսեյ Ալեքսանդրովիչը լսում էր, բայց Դոլլիի խոսքերն այլևս չէին ազդում նրա վրա։ Նրա հոգու մեջ նորից բարձրացավ այն օրվա ամբողջ զայրույթը, երբ վճռեց ապահարզան տալ։ Նա սթափվեց ու խոսեց սուր, բարձր ձայնով։

— Ներել ես չեմ կարող, և չեմ ուզում, և համարում եմ դա անիրավ բան։ Ես այդ կնոջ համար արի ամեն ինչ, և նա բոլորը գցեց ցեխի մեջ, ոտնահարեց, որովհետև ցեխը հատուկ է նրան։ Ես չար մարդ չեմ, ես երբեք ոչ ոքի չեմ ատել, բայց նրան ատում եմ իմ հոգու ամբողջ ուժով և չեմ կարող նույնիսկ ներել նրան, որովհետև շատ եմ ատում այն ամբողջ չարիքի համար, որ նա բերել է իմ գլխին,— ասաց Կարենինը, ձայնի մեջ զայրույթի արցունքներ։

— Սիրեցե՛ք ձեզ ատողներին...— ամաչկոտ շշնջաց Դարիա Ալեքսանդրովնան։

Ալեքսեյ Ալեքսանդրովիչն արհամարհալից քմծիծաղեց։ Այդ բանը վաղուց գիտեր նա, բայց դա չէր կարող կիրառվել նրա հետ պատահած դեպքում։

— Սիրեցե՛ք ձեզ ատողներին, իսկ սիրել նրանց, որոնց դու ես ատում, չի կարելի։ Ներեցեք, որ ես վշտացրի ձեզ։

Ամեն մարդ իր վիշտն ունի,— և տիրապետելով իրեն, Ալեքսեյ Ալեքսանդրովիչը հանգիստ հրաժեշտ տվեց ու գնաց։

VIII

Երբ վեր կացան սեղանից, Լևինն ուզում էր գնալ Կիտիի ետևից ընդունարան. բայց վախենում էր, արդյոք նրա համար անախորժ չէ՞ր լինի չափազանց ակնբախ սիրաթովչանքը։ Նա մնաց տղամարդկանց խմբի մեջ, մասնակցելով ընդհանուր խոսակցությանը, և առանց նայելու Կիտիի վրա, զգում էր նրա շարժումները, նրա հայացքներն ու այն տեղը, որտեղ գտնվում էր նա ընդունարանում։

Նա այժմ արդեն և առանց ամենաթեթև ջանքի կատարում էր այն խոստումը, որ արել էր Կիտիին. միշտ բոլոր մարդկանց մասին մտածել լավը և միշտ սիրել ամենքին։ Խոսք բացվեց համայնքի մասին, որի մեջ Պեսցովը տեսնում էր ինչ-որ առանձին սկզբունք, որը նա անվանում էր խմբային սկզբունք։ Լևինը համաձայն չէր ո՛չ Պեսցովին, ո՛չ էլ եղբորը, որ մի տեսակ յուրովի և ընդունում, և՛ չէր ընդունում ռուսական համայնքի նշանակությունը։ Բայց նա խոսում էր նրանց հետ, աշխատելով միայն հաշտեցնել նրանց ու մեղմել առարկությունները։ Նա բնավ չէր հետաքրքրվում այն բանով, ինչ ասում էր ինքը, ավելի ևս չէր հետաքրքրվում նրանց ասածով, բայց ցանկանում էր միայն մի բան, որպեսզի նրանց և ամենքի համար լինի լավ ու հաճելի։ Նա գիտեր այժմ այն, ինչը միակ կարևորն էր։ Եվ այդ միակն սկզբում թվում էր՝ ընդունարանում էր, իսկ հետո սկսեց մոտենալ ու կանգ առավ դռան մոտ։ Առանց շուռ գալու նա զգաց իր վրա ուղղված հայացքը և ժպիտը։ Ու չէր կարող շուռ չգալ։ Կիտին կանգնել էր դռան մեջ՝ Շչերբացկու հետ և նայում էր Լևինին։

— Ես կարծում էի, դուք գնում եք դեպի դաշնամուրը,— ասաց նա, մոտենալով Կիտիին։— Երաժշտություն՝ ահա թե ինչ է պակասում ինձ գյուղում։

— Ո՛չ, մենք եկանք նրա համար միայն, որ կանչենք ձեզ, և շնորհակալություն, որ դուք ինքներդ եկաք,— ասաց Կիտին, վարձատրելով նրան ժպիտով, ասես՝ նվերով։— Ի՞նչ խմաստ ունի վիճելը։ Չէ՞ որ երբեք մեկը մյուսին չի համոզի։

— Այո՛, ճիշտ է,— ասաց Լևինը,— մեծ մասամբ լինում է այնպես, որ մարդ տաք-տաք վիճում է նրա համար միայն, որ ո՛չ մի կերպ չի կարողանում հասկանալ, թե իսկապես ի՞նչ է ուզում ապացուցել հակառակորդը։

Լևինը հաճախ նկատում էր ամենախելոք մարդկանց միջև ծագած վեճերի միջոցին, որ վիթխարի ջանքերից, հսկայական քանակությամբ տրամաբանական նրբություններից ու խոսքերից հետո վիճաբանողները վերջապես գալիս էին այն գիտակցության, թե այն, ինչը նրանք այնքան երկար ժամանակ ճգնում էին ապացուցել իրար, վաղուց ի վեր, հենց վիճաբանության սկզբից հայտնի էր նրանց, բայց նրանք սիրում են տարբեր բաներ և հերքված չլինելու համար չեն ուզում տալ դրանց անունը։ Լևինը հաճախ զգում էր, որ երբեմն վեճի ընթացքում մարդ հասկանում է այն, ինչ սիրում է հակառակորդը, և հանկարծ ինքն էլ սիրում է այդ նույն բանը և անմիջապես համաձայնվում է ու այն ժամանակ ոչնչանում են բոլոր փաստարկները, որպես ո՛չ պետքական. երբեմն էլ ունենում էր հակառակ զգացում. մարդ ասում, վերջացնում է այն, ինչ սիրում է ինքը և ինչի համար մտահյուսում է փաստարկներ, ու եթե պատահում է, որ դա արտահայտում է լավ և անկեղծորեն, հանկարծ հակառակորդը համաձայնվում է ու դադարում վիճելուց։ Հենց այդ էր ուզում ասել նաև Կիտին կնճռոտեց ճակատը, աշխատելով հասկանալ։ Բայց հենց որ Լևինն սկսեց բացատրել, Կիտին արդեն հասկացավ։

— Ես հասկանում եմ. պետք է գիտենալ, թե ինչի՞ համար է նա վիճում, ի՞նչ է նա սիրում, այն ժամանակ կարելի է...

Կիտին լիովին հասկացավ ու արտահայտեց Լևինի վատ արտահայտած միտքը։ Լևինը բերկրալից ժպտաց. նրա համար զարմանալի էր այդ անցումը Պեսցովի և եղբոր հետ խճճված բազմաբառ վեճից դեպի ամենաբարդ մտքերի այդ լակոնիկ ու պարզ, համարյա առանց բառերի, հաղորդումը։

Շչերբացկին հեռացավ նրանցից, և Կիտին, մոտենալով հարդարած թղթախաղի սեղանին, նստեց ու ձեռքն առնելով կավիճը, սկսեց գծել կանաչ մահուդի վրա իրարից հետզհետե հեռացող շրջաններ։

Նրանք վերսկսեցին ճաշի ժամանակ տեղի ունեցած խոսակցությունը՝ սիրո և կանանց զբաղմունքների մասին։ Լևինը համաձայն էր Դարիա Ալեքսանդրովնայի հայտնած մտքին, թե չամուսնացած աղջիկը կարող է իր համար կանացի գործ գտնել ընտանիքի մեջ։ Լևինը դա հաստատում էր այն բանով, որ ո՛չ մի ընտանիք չի կարող կենսավարվել առանց օգնականուհու, որ յուրաքանչյուր աղքատ ու հարուստ ընտանիքում կան և պետք է լինեն դայակներ, վարձու կամ հարազատ։

Ո՛չ,— ասաց Կիտին, կարմրելով, բայց է՛լ ավելի համարձակ նայելով Լևինին ճշմարտաշող աչքերով,— աղջիկը կարող է դրված լինել այնպիսի դրության մեջ, որ չկարողանա առանց նվաստացման մտնել ընտանիքի մեջ, իսկ ինքը...

Լևինը հասկացավ Կիտիին մի ակնարկից։

— Օ՜, իհարկե,— ասաց Լևինը,— այո՛, այո՛, այո՛, դուք իրավացի եք, դուք իրավացի եք։

Եվ նա հասկացավ բոլորը, ինչ ապացուցում էր Պեսցովը ճաշի ժամանակ՝ կանանց ազատության մասին, շնորհիվ այն բանի միայն, որ տեսնում էր Կիտիի սրտում կուսության ու նվաստացման երկյուղ և սիրելով նրան, զգում էր այդ վախն ու նվաստացումը և մեկեն հրաժարվեց իր փաստարկներից։

Տիրեց լռություն։ Կիտին սեղանի վրա գծագրում էր կավիճով։ Նրա աչքերը փայլում էին խաղաղ փայլով։ Ենթարկվելով նրա տրամադրությանը, Լևինը զգում էր իր ամբողջ էության մեջ հետզհետե ուժեղացող երջանկության լարվածություն։

— Ա՜խ, ես խզրզեցի ամբողջ սեղանը,— ասաց Կիտին և ցած դնելով կավիճը, կարծես ուզում էր վեր կենալ։

«Ես ինչպե՞ս մնամ մենակ՝ առանց նրան», սարսափով մտածեց Լևինը և վերցրեց կավիճը։— Կացե՛ք,— ասաց նա, նստելով սեղանի մոտ։— Ես վաղուց ուզում էի մի բան հարցնել ձեզ։

Լևինն ուղիղ նայում էր նրա փաղաքշալից, թեպետև վախեցած աչքերին։

— Խնդրեմ, հարցրեք։

— Ահա՛,— ասաց նա և գրեց սկզբնական տառեր, ե, դ, պ, ի, դ, չ, կ, լ, ա, դ, ն, ե, թ, ա, ժ։ Այդ տառերը նշանակում էին. «երբ դուք պատասխանեցիք ինձ՝ դա չի կարող լինել, արդյոք դա նշանակում էր՝ երբե՞ք, թե՞ այն ժամանակ»։

Բնավ հավանական չէր, որ Կիտին կարող էր հասկանալ այդ բարդ ֆրազը. բայց Լևինը նայեց նրան այնպիսի տեսքով, որ կարծես իր կյանքը կախված է դրանից, արդյոք նա կհասկանա՞ այդ բառերը, թե՞ ոչ։

Կիտին նայեց նրան լուրջ, ապա խոժոռած ճակատը հենեց ձեռքին ու սկսեց կարդալ։ Երբեմն Կիտին նայում էր Լևինին, հայացքով հարցնելով նրան. «Ա՞յն է արդյոք, ինչ կարծում եմ եսս։

— Հասկացա,— ասաց Կիտին կարմրելով։

— Ի՞նչ խոսք է դա,— հարցրեց Լևինը, նշելով և տառը, որ նշանակում է երբեմ։

— Այդ խոսքը նշանակում է երբեմ,— պատասխանեց Կիտին,— բայց դա ճիշտ չէ։

Լևինն արագ ջնջեց գրածը, տվեց կավիճը նրան ու կանգնեց։ Նա գրեց. ա, ժ, ե, չ, կ, ա, կ, պ։

Դոլլին բոլոր ուժերով սփոփվեց այն վշտից, որ պատճառեց նրան Ալեքսեյ Ալեքսանդրովիչի հետ եղած խոսակցությունը, երբ տեսավ այդ երկու ֆիգուրները. Կիտիինը, կավիճը ձեռքին և երկչոտ ու երջանիկ ժպիտով, վարից վեր նայելիս Լևինին, և Լևինի գեղեցիկ ֆիգուրը, կռացած սեղանի վրա, վառվռուն աչքերով, մերթ հառած սեղանին, մերթ սևեռած Կիտիին։ Լևինը հանկարծ փայլեց ուրախությունից, նա հասկացավ։ Դա նշանակում էր. «Այն ժամանակ ես չէի կարող այլ կերպ պատասխանել»։

Նա նայեց Կիտիին հարցական, երկչոտ հայացքով.

— Միայն ա՞յն ժամանակ։

— Այո՛,— պատասխանեց Կիտիի ժպիտը։

— Իսկ այ... Իսկ ա՞յժմ,— հարցրեց Լևինը։

— Դե՛, ուրեմն կարդացեք։ Ես կասեմ այն, ինչ կուզենայի. շա՛տ կուզենայի։— Կիտին գրեց սկզբնական տառերը. ո, ղ, կ, մ, և, ն, ե։ Դա նշանակում էր. «որպեսզի դուք կարողանայիք մոռանալ և ներել եղածը»։

Լևինը լարված, դողդողուն մատներով վերցրեց կավիճը և, կոտրելով այն, գրեց հետևյալի սկզբնական տառերը. «Ես մոռանալու և ներելու բան չունեմ, ես չէի դադարում ձեզ սիրելուց»։

Կիտին նայեց նրան սառած ժպիտով։

— Հասկացա,— ասաց Կիտին շշուկով։

Լևինը նստեց ու գրեց մի երկար ֆրազ։ Կիտին բոլորը հասկացավ և առանց հարցնելու նրան՝ այդպե՞ս է արդյոք, վերցրեց կավիճն ու անմիջապես պատասխանեց։

Լևինը երկար ժամանակ չէր կարողանում հասկանալ այն, ինչ գրեց Կիտին և շուտ-շուտ նայում էր նրա աչքերին։ Երջանկությունը մթագնել էր Լևինի միտքը։ Նա ոչ մի կերպ չէր կարողանում գտնել այն բառերը, որ նկատի ուներ Կիտին։ Բայց Կիտիի սքանչելի, երջանկությունից փայլող աչքերից նա հասկացավ բոլորը, ինչ հարկավոր էր իմանալ։ Եվ նա գրեց երեք տառ։ Վակայն, նա դեռ չէր վերջացրել, երբ Կիտին արդեն սկսեց կարդա՛լ նրա ձեռքի տակից, ինքը վերջացրեց նրա ասելիքը և գրեց պատասխանը՝ այո՛։

— Secretaire եք խաղո՞ւմ,— ասաց ծերունի իշխանը, մոտենալով։— Դե՛, գնա՛նք, եթե դու չես ուզում ուշանալ թատրոնից։

Լևինը վեր կացավ և ուղեկցեց Կիտիին մինչև դուռը։

Նրանց խոսակցության մեջ ասվեց ամեն բան, ասվեց, որ Կիտին սիրում է նրան և կասի հորն ու մորը, որ Լևինը վաղն առավոտյան կգա։

XIV

Երբ Կիտին գնաց, ու Լևինը մնաց մենակ, նա զգաց այնպիսի անհանգստություն առանց Կիտիի և այնպիսի անհամբեր ցանկություն՝ շուտ, շուտ ապրել մինչև վաղվա առավոտը, երբ նորից կտեսնի նրան ու ընդմիշտ կմիանա նրա հետ, որ վախեցավ՝ ինչպես մահից՝ այդ տասնչորս ժամերից, որ ինքը պիտի անցկացներ առանց Կիտիի։ Նրա համար անհրաժեշտ էր լինել և խոսել մեկի հետ, որպեսզի մենակ չմնա, որպեսզի խաբի ժամանակը։ Ստեպան Արկադեիչը կլիներ նրա համար ամենահաճելի զրուցակիցը, բայց նա գնում էր, ինչպես ասում էր, երեկույթի, իսկ իրականում՝ գնում էր բալետ։ Լևինը կարողացավ նրան ասել միայն, որ ինքը երջանիկ է և որ սիրում է նրան (Օբլոնսկուն) և երբեք, երբեք չի մոռանա այն, ինչ նա արեց իր համար։ Ստեպան Արկադեիչի հայացքը և ժպիտը ցույց տվին

Լևինին, որ նա հասկանում էր այդ զգացմունքն այնպես, ինչպես պետք էր։

— Հը՞, ժամանակ չէ՞ մեռնելու,— ասաց Ստեպան Արկադևիչը, քնքշորեն սեղմելով Լևինի ձեռքը։

— Ո՞ՉՇ, ո՞Չ,— ասաց Լևինը։

Դարիա Ալեքսանդրովնան, հրաժեշտ տալով նրան, նույնպես կարծես շնորհավորեց, ասելով,—որքա՞ն ուրախ եմ ես, որ դուք նորից հանդիպեցիք Կիտիի հետ, պետք է թանկ գնահատել հին բարեկամությունը։— Լևինի համար անախորժ էին Դարիա Ալեքսանդրովնայի այդ խոսքերը։ Դոլլին չէր կարող հասկանալ, թե ի՞նչ վեհ ու անմատչելի էր իրեն այս բոլորը, և չպիտի համարձակվեր հիշեցնելու դրա մասին։ Լևինը հրաժեշտ տվեց նրանց, բայց մենակ մնալու համար միացավ եղբորը։

— Ո՞ւր ես գնում դու։

— Նիստի։

— Դե՞, ես էլ քեզ հետ։ Կարելի՞ է։

— Ինչո՞ւ չէ, գնանք,— ժպտալով ասաց Սերգեյ Իվանովիչը։— Ի՞նչ է պատահել քեզ այսօր։

— Ի՞նչ։ Ինձ բա՞խտ է պատահել,— ասաց Լևինը, իջեցնելով կառեթի լուսամուտը, որով գնում էին նրանք։ Քեզ համար ոչի՞նչ, թե չէ՝ խեղդոց է։ Ինձ բա՞խտ է պատահել։ Ինչո՞ւ դու չես ամուսնացել երբեք։

Սերգեյ Իվանովիչը ժպտաց։

— Ես շատ ուրախ եմ, կարծես, նա համակրելի աղ...— սկսեց Սերգեյ Իվանովիչը։

— Մի՛ խոսիր, մի՛, մի՛,— բղավեց Լևինը, երկու ձեռքով բռնելով նրա մուշտակի օձիքից և ափը քաշելով ափի վրա։ «Նա համակրելի աղջիկ է» այնպիսի հասարակ, ստորին խոսքեր էին, այնքա՞ն անհամապատասխան նրա զգացումին։

Սերգեյ Իվանովիչը ծիծաղեց ուրախ ծիծաղով, որ քիչ էր պատահում նրա հետ։

— Է՞հ, այնուամենայնիվ, կարելի է ասել, որ շատ ուրախ եմ դրա համար։

— Դա կարելի է վա՞ղը, վա՞ղը, և ուրիշ ոչի՞նչ։ Ոչինչ, ոչի՞նչ, լռություն,— ասաց Լևինը ու նորից նրա մուշտակի

ափերը քաշելով իրար վրա, ավելացրեց.— Ես քեզ շատ եմ սիրում։ Ուրեմն, ի՞նչ, կա՞րող եմ ներկա լինել նիստին։

— Իհարկե, կարող ես։

— Ինչի՞ մասին է այսօր խոսք լինելու ձեզ մոտ,— հարցնում էր Լևինը, շարունակելով ժպտալ։

Նրանք եկան նիստի։ Լևինը լսում էր, թե ինչպե՛ս քարտուղարը կմկմալով կարդում էր արձանագրությունը, որը հայտնապես ինքն էլ չէր հասկանում, բայց Լևինը տեսնում էր այդ քարտուղարի դեմքից, թե որպիսի հաճելի, բարի և համակրելի մարդ էր։ Դա երևում էր այն բանից, թե ինչպե՛ս շփոթվում ու քաշվում էր նա, կարդալով արձանագրությունը։ Հետո սկսվեցին ճառերը։ Նրանք վիճում էին ինչ-որ գումարներ հատկացնելու և ինչ-որ խողովակներ անցկացնելու մասին, ու Սերգեյ Իվանովիչը խայթեց երկու անդամներին ու հաղթական խոսում էր երկար։ Մի այլ անդամ, գրելով ինչ-որ բան մի թղթի վրա, վախվխեց սկզբում, բայց հետո պատասխանեց նրան շատ թունալի և լավ։ Ու հետո Սվիյաժսկին (նա էլ այդտեղ էր) նույնպես ասաց ինչ-որ բան՝ գեղեցիկ և աղնվաբար։ Լևինը լսում էր նրանց ու պարզ տեսնում, որ ո՛չ այդ հատկացրած գումարները, ո՛չ խողովակները, ոչինչ, ոչինչ կար և որ նրանք բնավ չէին բարկանում, այլ ամենքը բարի, համակրելի մարդիկ էին, ու այդ բոլորը նրանց մեջ տեղի ուներ այնպես լավ, այնպես սիրալիր։ Նրանք ոչ-ոքի չէին խանգարում, և ամենքի համար հաճելի էր։ Լևինի համար ուշագրավն այն էր, որ նրանք բոլորն էլ նրա համար տեսանելի էին ամբողջովին, և փոքրիկ, սկզբում աննկատելի հատկանիշներից ճանաչում էր յուրաքանչյուրի հոգին ու պարզ տեսնում էր, որ նրանք ամենքն էլ բարի էին։ Մանավանդ նրան՝ Լևինին, նրանք ամենքը սաստիկ սիրում էին այսօր։ Դա երևում էր այն բանից, թե ինչպե՛ս էին խոսում նրանք նրա հետ, այնպես գուրգուրանքով, հիացմունքով նայում էին նրան նույնիսկ բոլոր անծանոթ մարդիկ։

— Հը՞, ի՞նչ կասես, գո՞հ ես,— հարցրեց նրան Սերգեյ Իվանովիչը։

— Շատ։ Ես բնավ չէի կարծում, որ դա այդքան հետաքրքրական է, լա՞վ, գեղեցի՞կ։

Սվիյաժսկին մոտեցավ Լևինին ու հրավիրեց նրան իր մոտ թեյի։ Լևինը ո՛չ մի կերպ չէր կարողանում հիշել և հասկանալ, թե ի՛նչ բանի համար ինքը դժգոհ էր Սվիյաժսկուց, ի՛նչ էր ուզում նրանից։ Նա խելոք ու զարմանալի բարի մարդ էր։

— Շատ ուրախ եմ,— ասաց Լևինը։ Եվ հարցրեց կնոջ ու քենու մասին։ Եվ մտքերի տարօրինակ կապակցությամբ, որովհետև նրա երևակայության մեջ Սվիյաժսկու քենու մասին միտքը կապվում էր ամուսնության հետ, նրան թվում էր, թե ուրիշ ոչ ոքի այնպես հարմար չէ պատմել իր երջանկության մասին, քան Սվիյաժսկու կնոջն ու քենուն, և նա շատ ուրախ էր նրանց մոտ գնալու համար։

Սվիյաժսկին հարցուփորձ էր անում նրան՝ նրա գործի մասին գյուղում, ինչպես միշտ, անհնարին համարելով զբաղվել Եվրոպայում որևէ չգտնված բան, և դա այժմ բնավ անախորժ չէր Լևինի համար։ Նա, ընդհակառակը, զգում էր, որ Սվիյաժսկին իրավացի է, որ այդ ամբողջ գործը չնչին բան է, և նկատում էր զարմանալի քնքշություն ու փափկություն, որով Սվիյաժսկին խուսափում էր իր իրավացի լինելն արտահայտելուց։ Սվիյաժսկու կինն ու քենին առանձնապես սիրալիր էին։ Լևինին թվում էր, որ նրանք արդեն բոլորը գիտեն ու համակրում են իրեն, բայց ոչինչ չեն ասում քաղաքավարությունից միայն։ Նա մնաց նրանց մոտ մի ժամ, երկու, երեք ժամ, խոսելով գանազան նյութերի մասին, բայց ենթադրելով միայն այն, ինչով լցված էր իր հոգին և չէր նկատում, որ ինքը սաստիկ ձանձրացրեց նրանց, ու որ վաղուց նրանց քնելու ժամանակն է։ Սվիյաժսկին առաջնորդեց նրան մինչև նախասենյակ, հորանջելով և զարմանալով այն տարօրինակ կացության վրա, որի մեջ գտնվում էր իր բարեկամը։ Երկրորդ ժամն էր։ Լևինը վերադարձավ հյուրանոց ու վախեցավ այն մտքից, թե ինչպե՞ս ինքն այժմ մենակ՝ իր անհամբերությամբ պիտի անցկացնի մնացած տասը ժամը։ Զքնած, հերթապահ ծառան վառեց նրա համար մոմերը և ուզում էր գուրս գնալ, բայց Լևինը կանգնեցրեց նրան։ Այդ ծառան՝ Եգորը, որին առաջ չէր նկատում Լևինը, դուրս եկավ շատ խելոք ու լավ, իսկ որ գլխավորն է՝ բարի մարդ։

— Հը՞, Եգոր, դժվա՞ր է չքնելը։

— Ի՞նչ արած։ Մեր պաշտոնն է այդպես։ Պարոնների մոտ ավելի հանգիստ է. համա այստեղ ավելի հաշիվ կա ծառայելու։

Պարզվեց, որ Եգորն ընտանիք ունի, երեք տղա և կար անող մի աղջիկ, որին նա ուզում էր ամուսնացնել լծասարքի խանութում ծառայող գործակատարի հետ։

Լևինն այդ առթիվ հաղորդեց Եգորին իր միտքը, թե ամուսնության մեջ գլխավոր բանը սերն է, թե սիրո հետ մարդ միշտ երջանիկ կլինի, որովհետև երջանկությունը լինում է միայն իր՝ մարդու մեջ։

Եգորն ուշադրությամբ լսում էր և հավանորեն լիովին հասկացավ Լևինի միտքը, բայց այն հաստատելու նպատակով արեց Լևինի համար անսպասելի դիտողություն, թե երբ ինքն ապրում էր լավ պարոնների մոտ, միշտ գոհ էր եղել իր պարոններից, հիմա էլ միանգամայն գոհ է իր տիրոջից։ Թեև նա ֆրանսիացի է։

«Զարմանալի բարի մարդ է»,— մտածում էր Լևինը։

— Իսկ դու, Եգոր, երբ պսակվեցիր, սիրո՞ւմ էիր կնոջդ։

— Ո՞նց թե, բա չէի՞ սիրում,— պատասխանեց Եգորը։

Եվ Լևինը տեսավ, որ Եգորը նույնպես գտնվում է խանդավառ կացության մեջ ու մտադրություն ունի արտահայտելու իր բոլոր սրտահույզ զգացումները։

— Իմ կյանքը նույնպես զարմանալի է։ Ես փոքրուց...— սկսեց նա, աչքերը վառվռուն, երևի վարակված Լևինի հիացմունքով, ինչպես վարակվում են մարդիկ հորանջով։

Բայց այդ ժամանակ զանգահարեցին. Եգորը դուրս գընաց ու Լևինը մնաց մենակ։ Նա համարյա ոչինչ չէր կերել ճաշի ժամանակ, հրաժարվեց թեյից և ընթրիքից Սվիյաժսկիների մոտ, բայց չէր կարող մտածել ընթրելու մասին։ Անցյալ գիշեր նա չէր քնել, բայց մտածել անգամ չէր կարող քնելու մասին։ Սենյակում ցուրտ էր, սակայն նրան խեղդում էր տոթը։ Նա բացեց երկու օդանցքները և նստեց սեղանին՝ օդանցքների դիմաց։ Զյունապատ կտուրների ետևից երևում էր նախշաերիզ խաչը՝ շղթաներով ու նրանից վեր՝ կառավար համաստեղության բարձրացող եռանկյունին՝ դեղնավուն-պայծառ Կապելլայի հետ։ Նա նայում էր մերթ

խաչին, մերթ աստղին, ներշնչում էր իր մեջ թարմ, պաղ օդը, որ համաչափորեն ներս էր վազում սենյակ, և, ինչպես երազում, հետևում էր իր երևակայության մեջ ծագած պատկերներին ու հիշողություններին։ Չորրորդ ժամին նա լսեց ոտնաձայն միջանցքում և նայեց դռնից դուրս։ Դա նրա ծանոթ թուղթ խաղացող Մյասկինն էր, որ վերադառնում էր ակումբից։ Նա գալիս էր մռայլ, խոժոռված ու հազալով։ «Խեղճ, դժբա՜խտ մարդ», մտածեց Լևինը, և նրա աչքերում արցունքներ երևացին՝ դեպի այդ մարդը տածած սիրո ու խղճահարության զգացումից։ Նա ուզում էր խոսել նրա հետ, մխիթարել նրան, բայց հիշելով, որ ինքը շապկով է միայն, միտքը փոխեց և նորից նստեց օդանցքների դիմաց, որպեսզի լողանա պաղ օդի մեջ ու դիտի այդ հրաշաձև, լռիկ, բայց իր համար իմաստալից խաչը և վեր բարձրացող դեղնավուն պայծառ աստղը։ Ժամը յոթին մոտ աղմկեցին հատակ մաքրողները, զանգահարեցին ինչ-որ ժամասացության համար, ու Լևինն զգաց, որ սկսում է մրսել։ Նա փակեց օդանցքը, լվացվեց և դուրս գնաց փողոց։

XVI

Փողոցները դեռ ամայի էին։ Լևինը գնաց դեպի Շչերբացկիների տունը։ Գլխավոր մուտքի դուռը փակ էր, ամեն ինչ քնած էր։ Նա ետ գնաց, նորից մտավ իր համարը և սուրճ պահանջեց։ Երեկվա ծառան, արդեն ո՛չ Եգորը, սուրճ բերեց նրան։ Լևինն ուզում էր խոսակցության բռնվել նրա հետ, բայց զանգահարեցին ծառային, ու նա դուրս գնաց։ Լևինը փորձեց խմել մի կում սուրճ և բերանը դրեց մի պատառ կալաչ, բայց բերանը վճռականապես չգիտեր, թե ի՞նչ պետք է անել կալաչի հետ։ Լևինը դուրս թքեց կալաչը, հագավ վերարկուն և գնաց նորից ման գալու։ Տասներորդ ժամն էր, երբ նա երկրորդ անգամ մոտեցավ Շչերբացկիների տան արտաքին սանդուղքին։ Տանը նոր էին վեր կենում, և խոհարարը գնում էր պարենի։ Պետք էր անցկացնել դեռ առնվազն երկու ժամ։

Այդ ամբողջ գիշերն ու առավոտը Լևինն ապրում էր բոլորովին անգիտակցաբար և իրեն բոլորովին հանված էր ըզ-

գում նյութեղեն կյանքի պայմաններից։ Նա ոչինչ չէր կերել ամբողջ օրը, չէր քնել երկու գիշեր, մի քանի ժամ շորերը հանած անց էր կացրել ցրտի մեջ և զգում էր իրեն ո՛չ միայն թարմ ու առողջ, ինչպես չէր եղել երբեք, զգում էր իրեն բոլորովին անկախ իր մարմնից, շարժվում էր առանց մկանների ջանքերի և զգում էր, որ կարող է ամեն բան անել։ Նա հավատացած էր, որ կարող է թռչել վեր կամ տունը տեղաշարժել, եթե այդ անելու կարիք լիներ։ Մնացած ժամանակը նա շրջում էր փողոցներում, անդադար նայելով ժամացույցին և դիտելով շուրջը։

Եվ այն, ինչ տեսավ նա այն ժամանակ, հետո արդեն երբեք չտեսավ։ Նրան առանձնապես հուզեցին դպրոց գնացող երեխաները, թուխ կապտավուն աղավնիները, որ կտուրից թռան իջան մայթի վրա, և ալրաշաղ սայկաները, որ անհերևույթ մի ձեռք դրել էր ցուցափեղկում։ Այդ սայկանները, աղավնիներն ու երկու մանուկները գերերկրային էակներ էին։ Այդ բոլորը կատարվեց միաժամանակ. մանուկը մոտ վազեց աղավնուն ու ժպտալով նայեց Լևինին. աղավնին թափահարեց թևերը և թռավ, փայլելով օդում՝ արևի տակ ձյան դողաթրթիռ փոշու միջին, իսկ պատուհանից փչեց թխած հացի հոտ, ու նորից շարվեցին սայկաներ։ Այս բոլորը միասին վերցրած՝ այնպես անսովոր լավ էր, որ Լևինը ծիծաղեց և արտասվեց ուրախությունից։ Կատարելով մեծ պտույտ Գազետնի նրբանցքից մինչև Կիսլովկա, նա կրկին վերադարձավ հյուրանոց և ժամացույցը դնելով դիմացը, նստեց, սպասելով ժամը տասներկուսին։ Հարևան համարում ինչ-որ բան էին խոսում մեքենաների ու խաբեության մասին և հազում էին առավոտյան հազով։ Նրանք չէին հասկանում, որ սլաքն արդեն մոտենում էր տասներկուսին։ Սլաքը մոտեցավ։ Լևինը դուրս եկավ արտաքին սանդուղքների վրա։ Կառապանները հայտնապես գիտեին ամեն ինչ։ Նրանք երջանիկ դեմքերով շրջապատեցին Լևինին, վիճելով իրար հետ և առաջարկելով նրան իրենց ծառայությունը։ Աշխատելով չվիրավորել մյուս կառապաններին ու խոստանալով նրանց հետ էլ գնալ, Լևինը վերցրեց մեկին և հրամայեց գնալ Շչերբացկիների տուն։ Կառապանը սքանչելի էր իր սպիտակ, բաճկոնի տակից դուրս հանած

ու լիքը, կարմիր, ուժեղ վզի վրա ձիգ տված շապկով։ Այդ կառապանի սահնակը բարձր էր, ճարպիկ, որպիսի սահնակով Լևինը հետո արդեն երբեք չէր գնացել, ձին նույնպես լավն էր և աշխատում էր վազել, բայց տեղից չէր շարժվում։ Կառապանը գիտեր Շչերբացկիների տունը և, դեպի իր ուղղորդը տածած առանձնակի հարգանքից կլորացնելով թևերը ու ասելով «պառո՜», ետ քաշեց ձիու երասանը, կանգնեց գլխավոր մուտքի մոտ։ Շչերբացկիների բարապանը հավանորեն գիտեր ամեն բան։ Դա երևում էր նրա աչքերի ժպիտից և խոսելու այն եղանակից, որով նա դիմեց Լևինին.

— Վաղո՜ւց է չեք եղել, Կոնստանտին Դմիտրիևիչ։

Նա ո՛չ միայն ամեն ինչ գիտեր, այլև հայտնապես հրճվում էր ու ջանք թափում, որ ծածկի իր ուրախությունը։ Նայելով նրա պառաված, համակրելի աչքերին, Լևինը հասկացավ նույնիսկ էլի ինչ-որ նոր բան իր երջանկության մեջ։

— Վե՞ր են կացել։

— Համեցեք։ Կուզեք, թողեք այստեղ,— ասաց նա ժրպտալով, երբ Լևինն ուզում էր ետ դառնալ ու վերցնել գլխարկը։ Դա ինքնին նշանակում էր որոշ բան։

— Ո՞ւմ կհրամայեք զեկուցել,— հարցրեց սպասավորը։

Սպասավորը թեև ջահել էր և նոր ծառաներից, ֆրանտ, բայց շատ բարի, լավ մարդ էր և նույնպես հասկանում էր բոլորը։

— Իշխանուհուն... Իշխանին... Իշխանազնուհուն...— ասաց Լևինը։

Առաջին անձնավորությունը, որին նա տեսավ, mademoiselle Linon[1] էր։ Սա գնում էր դահլիճով, և փայլում էին նրա խոպոպիկներն ու դեմքը։ Հենց որ Լևինը խոսեց նրա հետ, հանկարծ դռան ետևից լսվեց զգեստի շրշյուն, և mademoiselle Linon անհայտացավ Լևինի աչքերից ու իր երջանկության մոտիկության բերկրալից սարսափը պատեց նրան։ Mademoiselle Linon շտապեց և թողնելով նրան, գնաց դեպի մյուս դուռը։ Հենց որ նա դուրս գնաց, պարկեշտի վրա լսվեց արագ-արագ թեթև քայլերի ձայն և նրա բախտը, նրա կյանքը, նա ինքը, իրենից ավելի լավ մի բան, այն, ինչ նա փնտրում ու ցանկանում էր այնքան ժամանակ, արագ-արագ մոտենում էր իրեն։ Եվ, Կիտին, չէր քայլում, այլ ինչ-որ անտեսանելի ուժով գալիս էր դեպի Լևինը։

Լևինը տեսնում էր միայն նրա պայծառ, ճշմարտաշող աչքերը, վախեցած սիրո նույն այն ուրախությունից, որ համակում էր նաև Լևինի սիրտը։ Այդ աչքերը լուսավառվում էին ավելի ու ավելի մոտիկ, շլացնելով Լևինի սիրո իրենց լույսով։ Նա կանգնեց Լևինի կողքին, կպչելով նրան։ Նրա ձեռքերը բարձրացան և իջան Լևինի ուսերին։

Նա արեց այն ամենը, ինչ կարող էր. նա մոտ վազեց Լևինին ու ամբողջապես տրվեց նրան, վեհերոտ և ուրախ։ Լևինը գրկեց նրան ու սեղմեց շրթունքները նրա շուրթերին, որոնք որոնում էին Լևինի համբույրը։

Նա ևս չէր քնել ամբողջ գիշեր և ամբողջ առավոտ ըսպասում էր Լևինին։

Մայրն ու հայրն անպայման համաձայն էին և երջանիկ իրենց դստեր բախտավորությամբ։ Կիտին սպասում էր նրան և առաջինը ի՛նքն էր ուզում հայտարարել իր ու նրա երջանկության մասին։ Կիտին պատրաստվում էր մենակ դիմավորելու Լևինին. և՛ ուրախանում էր այդ մտքի համար, և՛ վեհերում, և՛ ամաչում. նա ինքն էլ չգիտեր, թե ինչ էր անում։ Կիտին լսեց նրա քայլերն ու ձայնը և սպասում էր դռան ետևը, մինչև դուրս կգնար mademoiselle Linon, Mademoiselle Linon դուրս գնաց։ Կիտին առանց մտածելու, առանց հարցնելու իրեն, թե ինչպե՛ս և ի՛նչ, մոտեցավ նրան և արեց այն, ինչ պետք է աներ։

— Գնանք մայրիկի մոտ,— ասաց Կիտին, բռնելով նրա ձեռքը։ Նա երկար ժամանակ չէր կարողանում ոչինչ ասել, ո՛չ թե այն պատճառով, որ վախենում էր, չլինի թե բառերով փչացնի իր զգացման վեհությունը, այլ այն պատճառով, որ ամեն անգամ, երբ ուզում էր մի բան ասել, ըզգում էր, որ բառերի փոխարեն իր աչքերից կհորդեն երջանկության արցունքներ։ Նա վերցրեց Կիտիի ձեռքը և համբուրեց։

[1] Օրիորդ Լինոն (ֆրանս.)։

— Մի՞թե դա ճիշտ է,— ասաց նա վերջապես խուլ ձայնով։— Ես չեմ կարող հավատալ, որ դու սիրում ես ինձ։

Կիտին ժպտաց այդ «դու»-ի և այն վեհերոտության համար, որով Լևինը նայում էր նրան։

— Այո՛,— նշանակալից, դանդաղ շշնջաց Կիտին։— Ես այնպես երջանի՞կ եմ։

Կիտին բաց չթողնելով նրա ձեռքը, մտավ ընդունարան։ Իշխանուհին, տեսնելով նրանց, արագ-արագ շնչեց և անմիջապես լաց եղավ, բայց իսկույն էլ ծիծաղեց, և այնպիսի եռանդուն քայլով, Լևինի համար անսպասելի, մոտ վազեց նրանց ու գրկելով Լևինի գլուխը, համբուրեց նրան և նրա այտերը թացեց արցունքներով։

— Այսպես, ամեն բան վերջացած է։ Ես ուրախ եմ։ Սիրի՛ր Կիտիին։ Ես ուրախ եմ... Կիտի։

— Շուտ դասավորվեցիք,— ասաց ծերունի իշխանը, աշխատելով լինել անտարբեր, բայց Լևինը նկատեց, որ նրա աչքերը թաց էին, երբ նա դիմեց իրեն։— Ես վաղուց և միշտ ուզում էի այդ բանը,—ասաց իշխանը, բռնելով Լևինի ձեռքը ու մոտ քաշելով նրան դեպի իրեն։— Ես դեռ այն ժամանակ, երբ այս թեթևսոլիկի խելքին փչեց...

— Հայրի՛կ,— ճչաց Կիտին ու ձեռքերով փակեց նրա բերանը։

— Լա՛վ, լա՛վ, թողնենք այդ,— ասաց նա։— Ես շատ... շատ... ուր... Ա՜խ, ի՞նչ տխմար եմ ես։

Նա գրկեց Կիտիին, համբուրեց նրա դեմքը, ձեռքը, նորից դեմքը ու խաչակնքեց նրան։

Եվ Լևինին համակեց սիրո նոր զգացում դեպի այդ՝ առաջ իր համար օտար մարդը, դեպի ծերունի իշխանը, երբ տեսավ, թե ինչպե՛ս Կիտին երկար ու քնքշությամբ համբուրում էր նրա մոտ ձեռքը։

XVI

Իշխանուհին նստել էր բազկաթոռի մեջ, լուռ ու ժպտադեմ. իշխանը նստեց նրա կողքին։ Կիտին կանգնած էր հոր բազկաթոռի մոտ, տակավին բաց չթողնելով նրա ձեռքը։ Ամենքը լուռ էին։

Իշխանուհին առաջինն ամեն բան անվանեց բառերով և

իր բոլոր մտքերն ու զգացումները փոխանցեց կյանքի հարցերին։ Եվ ամենքին միատեսակ տարօրինակ ու նույնիսկ ցավալի թվաց դա առաջին րոպեին։

— Ե՞րբ արդյոք։ Պետք է օրհնել և հայտարարել։ Իսկ ե՞րբ է լինելու պսակը։ Ի՞նչ ես կարծում դու, Ալեքսանդր։

— Ահա՜ նա,— ասաց ծերունի իշխանը, նշելով Լևինին,— նա՛ է այստեղ գլխավոր դեմքը։

— Ե՞րբ,— ասաց Լևինը կարմրելով։— Վաղը։ Եթե դուք հարցնում եք ինձ, ըստ իս, այսօր օրհնել և վաղը հարսանիք։

— Է՜հ, թողեք անհեթեթությունները, mon chere։

— Ուրեմն, մի շաբաթից։

— Իսկական խելագար։

— Ո՛չ, ինչո՞ւ։

— Այդ ի՞նչ ես ասում,— ուրախ ժպտալով շտապողականության համար, ասաց մայրը։— Հապա օժի՞տը։

«Մի՞թե կլինի օժիտ և այդ տեսակ բաներ,— մտածեց Լևինը սարսափով։— Սակայն մի՞թե կարող է օժիտը և օրհնանքը և այս բոլորը փչացնել իմ երջանկությունը. մի՞թե կարող է։ Ինչ չի կարող փչացնել։— Նա նայեց Կիտիին ու նկատեց, որ նրան բնավ, բնավ չէր վիրավորում օժիտի միտքը։— Հետևաբար դա պետք է», մտածեց նա։

— Չէ՞ որ ես ոչինչ չգիտեմ, ես միայն հայտնեցի իմ ցանկությունը,— ասաց նա, ներողություն խնդրելով։

— Մենք այսպե՛ս կանենք. այժմ կարելի է օրհնել և հայտարարել։ Այդպես։

Իշխանուհին մոտեցավ ամուսնուն, համբուրեց նրան և ուզում էր դուրս գնալ, բայց իշխանը պահեց նրան, գրկեց ու քնքշությամբ, ինչպես երիտասարդ սիրահար, մի քանի անգամ համբուրեց ժպտալով։ Ծերուկները հայտնապես մի վայրկյան շփոթվեցին ու լավ չգիտեին՝ արդյոք իրե՞նք են նորից սիրահարված, թե՞ միայն իրենց աղջիկը։ Երբ իշխանն ու իշխանուհին դուրս գնացին, Լևինը մոտեցավ իր հարսնացուին և բռնեց նրա ձեռքը։ Լևինն այժմ տիրապետեց իրեն ու կարող էր խոսել, և նա շատ բան ուներ ասելու Կիտիին։ Բայց նա ասաց բնավ ո՛չ այն, ինչ պետք է ասեր։

— Ես գիտեի, որ այդպես կլինի։ Ես երբեք հույս չունեի,

բայց հոգուս խորքում վստահ էի միշտ,— ասաց նա։— Ես հավատում եմ, որ դա կանխորոշված էր։

— Հապա ե՞ս— ասաց Կիտին։— Նույնիսկ այն ժամանակ...— Նա կանգ առավ ու նորից շարունակեց, վճռականապես նայելով Լևինին իր ճշմարտաշող աչքերով,— նույնիսկ այն ժամանակ, երբ ես ետ վանեցի ինձնից իմ բախտը։ Ես միշտ սիրում էի միայն ձեզ, բայց ես հրապուրված էի։ Ես պետք է ասեմ։ Դուք կարո՞ղ եք մոռանալ դա։

— Դուցե լավը դա էր։ Դուք պետք է շա՛տ բան ներեք ինձ։ Ես պետք է ասեմ ձեզ...

Դա մեկն էր այն խոստովանքներից, որ նա վճռել էր ասել Կիտիին։ Նա վճռել էր հենց առաջին օրերից ասել իր հարսնացուին երկու բան. նախ, որ ինքն այնպես անարատ չէ, ինչպես Կիտին, և երկրորդ, որ ինքը հավատացյալ չէ։ Դա տանջալից հանգամանք էր, բայց վճռել էր ասել թե՛ մեկը, թե՛ մյուսը։

— Ո՛չ, ո՛չ այժմ, այլ հետո,— ասաց Լևինը։

— Լա՛վ, հետո, բայց անպայման ասեք։ Ես ոչ մի բանից չեմ վախենում։ Ես պետք է ամեն բան իմանամ։ Հիմա վերջացած է։

Լևինը եզրափակեց.

— Վերջացած է, որ դուք ինձ կվերցնեք այնպես, ինչպես ես կամ, չեք հրաժարվի ինձնից։ Այո՞։

— Այո՛, այո՛։

Նրանց խոսակցությունն ընդհատեց mademoiselle Linon, որը, նուրբ, թեպետև շինծու ժպիտով, եկավ շնորհավորելու իր սիրելի սանուհուն։ Նա դեռ դուրս չէր գնացել, երբ շնորհավորանքով եկան սպասավորները։ Հետո եկան ազգականները, և սկսվեց այն երջանիկ խառնաշփոթությունը, որից Լևինը շաղատվեց մինչև իր հարսանիքի օրը։ Լևինը շարունակ անհարմար էր զգում իրեն, ձանձրանում էր, բայց երջանկության լարվածությունն աճում էր, ավելի ու ավելի ուժեղանալով։ Նա շարունակ զգում էր, որ իրենից պահանջվում է շատ բան, ինչ չգիտե ինքը, և անում էր բոլորը, ինչ ասում էին նրան, և այդ բոլորը նրան երջանկություն էր պատճառում։ Նա կարծում էր, որ իր նշանդրեքը ոչնչով նման չի լինի ուրիշ նշանդրեքներին, որ նշանդրեքի սովորական պայմանները կփչացնեն իր առանձնահատուկ երջանկությունը, բայց վերջացավ նրանով, որ նա անում էր նույնը, ինչ ուրիշները, և նրա երջանկությունը դրանից միայն ավելանում էր ու դառնում ավելի ու ավելի առանձնահատուկ, որը չէր ունեցել և չուներ իր նմանը։

— Այժմ մենք կոնֆետ կուտենք,— ասում էր m-lle Linon, և Լևինը գնում էր կոնֆետ գնելու։

— Ե՛ս շատ ուրախ եմ,— ասաց Սվիյաժսկին։— Ես խորհուրդ եմ տալիս ձեզ ծաղկեփնջերը վերցնել Ֆոմինից։

— Հարկավո՞ր է, հա՞։— Եվ նա գնում էր Ֆոմինի մոտ։

Եղբայրն ասում էր, թե պետք է փոխարինաբար դրամ վերցնել, որովհետև շատ ծախսեր կլինեն, նվերներ...

— Նվերներ պե՞տք են, հա՞,— ու նա գնանում էր Ֆուլլդեի մոտ։

Ե՛վ հրուշակագործի մոտ, և՛ Ֆոմինի մոտ, և Ֆուլլդեի մոտ նա տեսավ, որ սպասում էին իրեն, որ ուրախ են իր գալու համար ու նույնպես տոնում են իր երջանկության տոնը, ինչպես և ամենքը, որոնց հետ ինքը գործ ուներ այդ օրերին։ Անսովորն այն էր, որ նրան բոլորը ո՛չ միայն սիրում էին, այլև առաջվա բոլոր անհամակրելի, սառը, անտարբեր մարդիկ հիանում էին նրանով, հնազանդվում էին նրան ամեն բանում, քնքշաբար ու քաղաքավարի էին վերաբերվում նրա զգացմունքին և ճիշտ էին համարում նրա համոզմունքը, որ աշխարհում ամենաերջանիկ մարդն է, որովհետև նրա հարսնացուն գերկատարելություն է։ Միևնույն բանն էր զգում նաև Կիտին։ Երբ կոմսուհի Նորդստոնը թույլ տվեց իրեն ակնարկելու, իբր ինքն ուզում էր ավելի լավ փեսացու, Կիտին այնպես տաքացավ և այնպես համոզված կերպով ապացուցում էր, թե Լևինից ավելի լավ ոչինչ չի կարող լինել աշխարհում, որ կոմսուհի Նորդստոնն ստիպված էր ընդունել այդ բանը և Կիտիի ներկայությամբ այլևս առանց հիացմունքի ժպիտի չէր դիմավորում Լևինին։

Լևինի խոստացած բացատրությունն այն օրերի միակ ծանր գեպքն էր։ Նա խորհրդակցեց ծերունի իշխանի հետ և ստանալով նրա թույլտվությունը, հանձնեց Կիտիին իր հուշատետրը, որտեղ գրված էր այն, ինչ տանջում էր Լևինին։ Նա այդ հուշատետրը գրել էր այն ժամանակ՝ նկատի ունենա-

լով հենց իր ապագա հարսնացուին։ Լևինին տանջում էր երկու բան. իր ո՛չ անմեղությունը և ոչ հավատացյալ լինելը։ Ոչ հավատացյալ լինելու խոստովանանքն անցավ աննկատելի։ Կիտին հավատացյալ էր, երբեք չէր կասկածում կրոնի ճշմարտությունների վերաբերյալ, և Լևինի արտաքուստ անհավատ լինելը նույնիսկ բնավ չդիպավ Կիտիի սրտին։ Կիտին իր սիրով ճանաչում էր Լևինի ամբողջ հոգին ու նրա հոգու մեջ տեսնում էր այն, ինչ ուզում էր ինքը, իսկ եթե հոգու նման կացությունը կոչվում է չհավատացող լինել, դա Կիտիի համար միևնույնն էր։ Մինչդեռ մյուս խոստովանանքը ստիպեց Կիտիին դառնորեն լաց լինել։

Լևինը ո՛չ առանց ներքին պայքարի հանձնեց իր հուշատետրը Կիտիին։ Նա գիտեր, որ իր և Կիտիի միջև չի կարող ու չպիտի լինի ո՛չ մի գաղտնիք, ուստի նա վճռեց, որ այդպես պետք է լինի. բայց նա հաշիվ չտվեց իրեն այն բանում, թե ինչպե՛ս կարող է ազդել դա, նա չտեղափոխվեց իր հարսնացուի մեջ։ Միայն երբ այդ երեկո նա եկավ նրանց մոտ՝ թատրոն գնալուց առաջ, մտավ Կիտիի սենյակը և տեսավ նրա արտասվակեզ, իր պատճառած անուղղելի վշտից դժբախտ, խղճուկ ու սիրելի դեմքը, նա հասկացավ այն անդունդը, որ բաժանում էր իր խայտառակ անցյալը իր հարսնացուի աղավնու մաքրությունից, ու սարսափեց իր արածից։

— Վերցրեք, վերցրե՛ք այդ սոսկալի դրքերը,— ասաց Կիտին, մեկդի հրելով իր առաջ դրված տետրերը։ — Ինչո՞ւ դուք տվիք ինձ դրանք... Բայց ո՛չ, այսպես ավելի լավ է,— ավելացրեց նա, խղճահարությամբ տեսնելով Լևինի հուսահատական դեմքը։ — Սակայն դա սոսկալի է, սոսկալի՛։

Լևինը խոնարհեց գլուխը և լուռ էր։ Նա ոչինչ չկարողացավ ասել։

Դուք չեք ների ինձ,— շշնջաց Լևինը։

— Ո՛չ, ես ներեցի, բայց դա սոսկալի բան է։

Սակայն Լևինի երջանկության զգացումն այնպես մեծ էր, որ այդ խոստովանանքը չխախտեց այն, այլ նրան տվեց միայն նոր նրբերանգ։ Կիտին ներեց նրան, բայց այդ օրից նա է՛լ ավելի անարժան էր համարում իրեն Կիտիին, բարոյապես ավելի խորը խոնարհվեց իր հարսնացուի առաջ և է՛լ ավելի բարձր էր գնահատում իր անարժան բախտը։

XVII

Իր հիշողության մեջ ակամա խորհելով ճաշի ժամանակ ու նրանից հետո տեղի ունեցած խոսակցությունների տպավորությունների մասին, Ալեքսեյ Ալեքսանդրովիչը վերադառնում էր իր մենավոր համարը։ Դարիա Ալեքսանդրովնայի խոսքերը ներման մասին նրան միայն սրտնեղություն պատճառեցին։ Քրիստոնեական օրենքի կիրառումը կամ չկիրառումը իր հետ պատահած դեպքի նկատմամբ չափազանց դժվար հարց էր, որի մասին չէր կարելի խոսել թեթևությամբ, և այդ հարցն Ալեքսեյ Ալեքսանդրովիչը վաղուց արդեն վճռել էր բացասաբար։ Ամբողջ ասած-խոսածից ամենից ավելի տպավորվեցին նրա երևակայության մեջ տխմար, բարի Տուրովցինի խոսքերը— տղամարդավարի բան է արել, կանչել է մենամարտի և սպանել։ Ամենքը հայտնապես համակրում էին այդ բանը, թեպետև ցույց չէին տալիս այդ՝ քաղաքավարությունից դրդված։

«Սակայն դա վերջացած բան է, կարիք չկա մտածելու դրա մասին», ասաց ինքն իրեն Ալեքսեյ Ալեքսանդրովիչը։ Ու մտածելով միայն իր առաջիկա մեկնելու և վերաքննության գործի մասին, նա մտավ իր համարը ու հարցրեց իրեն ուղեկցող բարապանին, թե ո՛րտեղ է իր ծառան։ Բարապանն ասաց, որ ծառան հենց նոր դուրս գնաց։ Ալեքսեյ Ալեքսանդրովիչը հրամայեց թեյ տալ իրեն, նստեց սեղանի մոտ և վերցնելով Ֆրումը, սկսեց կազմել իր ուղևորության երթուղին։

— Երկու հեռագիր,— ասաց վերադարձած սպասավորը, մտնելով սենյակ։ — Ներեցեք, ձերդ գերազանցություն, ես հենց նոր դուրս գնացի։

Ալեքսեյ Ալեքսանդրովիչը վերցրեց հեռագիրը և բացեց։ Առաջին հեռագիրը հաղորդում էր Ստրեմովի նշանակման մասին այն պաշտոնում, որն ուզում էր ստանալ Կարենինը։ Ալեքսեյ Ալեքսանդրովիչը նետեց մի կողմ հեռագիրը և կարմրելով, վերկացավ ու սկսեց քայլել սենյակում. „Quos vult perdere dementat"[1], ասաց նա, quos բառի տակ հասկանալով այն մարդկանց, ովքեր նպաստել էին այդ նշանակ-

[1] «Աստված ում ուզում է կործանել, զրկում է բանականությունից»։

մանը։ Նրան սրտնեղություն էր պատճառում ո՛չ այն, որ ի՛նքը չստացավ այդ տեղը, որ իրեն հայտնապես անտեսեցի՛ն, այլ նրա համար անհասկանալի, զարմանալի էր, թե ինչպե՛ս նրանք չէին տեսնում, որ շատախոս, պոռոտախոս Ստրեմովը ուրիշ ամեն ոքից ավելի պակաս ընդունակ էր այդ պաշտոնին։ Ինչպես չէին տեսնում նրանք, որ այդ նշանակումով կործանում էին իրենց, գցում էին իրենց prestige-ը։

«Էլի դրա պես մի բան», մաղձով մտածեց նա, բացելով երկրորդ հեռագիրը։ Հեռագիրը կնոջից էր։ Կապույտ մատիտով ստորագրությունը՝ «Աննա», առաջինն ընկավ նրա աչքին։ «Մեռնում եմ, խնդրում, աղաչում եմ գալ։ Ներված կմեռնեմ ավելի հանգիստ», կարդաց նա։ Նա արհամարհանքով ժպտաց ու դեն գցեց հեռագիրը։ Որ դա խաբեություն և խորամանկություն էր, դրանում չէր կարող լինել ո՛չ մի կասկած, ինչպես թվում էր նրան առաջին րոպեին։

«Չկա խաբեություն, որի առաջ նա կանգ առներ։ Նա պետք է ծնի։ Գուցե ծննդաբերության հիվանդություն է։ Բայց ի՞նչ նպատակ ունեն նրանք։ Օրինականացնել երեխային, վարկաբեկել ինձ ու խանգարել ապահարզանը, մտածում էր Կարենինը։ — Սակայն այնտեղ ասված է ինչ-որ բան. «մեռնում եմ»...— Նա կրկին կարդաց հեռագիրը. և հանկարծ նրան խոցեց հեռագրի մեջ ասված ուղղակի իմաստը։ — Իսկ եթե ճի՞շտ է դա,— մտածեց նա։ — Եթե ճիշտ է, որ տառապանքների և մահվան մոտիկության րոպեին նա անկեղծաբար գղջում է, ու ես, համարելով դա խաբեություն, չուզենամ գնալ։ Դա կլինի ո՛չ միայն դաժանություն և ամենքը կդատապարտեն ինձ, այլև իմ կողմից հիմարություն կլինի»։

— Պյո՛տր, կառեթ կանգնեցրու։ Ես գնում եմ Պետերբուրգ,— ասաց նա սպասավորին։

Ալեքսեյ Ալեքսանդրովիչը վճռեց, որ կգնա Պետերբուրգ ու կտեսնի կնոջը։ Եթե նրա հիվանդությունը խաբեություն է, կլոր և կմեկնի քաղաքից։ Եթե նա իրոք մահամերձ հիվանդ է և ուզում է տեսնել իրեն մահից առաջ, ապա ինքը կների նրան, եթե գտնի նրան ողջ ու կկատարի իր վերջին պարտքը, եթե տեղ կհասնի չափազանց ուշ։

Ամբողջ ճանապարհին նա այլևս չէր մտածում այն մասին, թե ի՛նչ պետք է անի ինքը։

Հոգնածության և գիշերը վագոնում առաջացած անմաքրության զգացումով, Պետերբուրգի վաղ առավոտվա մութի մեջ Ալեքսեյ Ալեքսանդրովիչը գնում էր ամայի Նևսկի պողոտայով ու նայում էր իր դիմացը, չմտածելով այն մասին, թե ի՛նչ է սպասում իրեն։ Նա չէր կարող մտածել դրա մասին, որովհետև պատկերացնելով այն, ինչ կարող էր լինել, նա չէր կարողանում հեռու վանել իրենից այն ենթադրությունը, թե կնոջ մահը միանգամից կվերացնի իր վիճակի ամբողջ ծանրությունը։ Հացագործները, փակ կրպակները, գիշերային կառապանները, բակապանները, որ ավլում էին մայթերը, աղոտ կերպով ընկնում էին նրա աչքին, և նա դիտում էր այս բոլորը, աշխատելով խեղդել իր մեջ միտքն այն մասին, ի՛նչ է սպասում իրեն և ինչը չի համարձակվում ինքը ցանկալ ու, այսուամենայնիվ, ցանկանում է։ Նա մոտեցավ իր տան արտաքին սանդուղքին։ Կառքը և կառեթը՝ քնած կառապանի հետ կանգնած էին գլխավոր մուտքի մոտ։ Մտնելով նախասենյակ, Ալեքսեյ Ալեքսանդրովիչը կարծես հանեց ուղեղի հեռու անկյունից իր որոշումը և հարմարվեց նրան։ Այնտեղ վճռված էր. «Եթե խաբեություն է, ապա՝ հանգիստ արհամարհանք ու հեռանալ։ Եթե ճիշտ է, ապա՝ պահպանել վայելչության պահանջները»։

Բարապանը դուռը բացեց ավելի շուտ, քան կզանգահարեր Ալեքսեյ Ալեքսանդրովիչը։ Բարապան Պետրովը, այլ կերպ կոչված՝ Կապիտոնիչը, տարօրինակ տեսք ուներ հին սյուրտուկով, առանց փողկապի և մաշիկներով։

— Ինչպե՞ս է տիկինը։

— Երեկ ազատվեց բարեհաջող։

Ալեքսեյ Ալեքսանդրովիչը կանգ առավ ու գունատվեց։ Նա պարզ հասկացավ այժմ, թե ինչպե՛ս սաստիկ ինքն ուզում էր նրա մահը։

— Իսկ առողջությո՞ւնը։

Կորնեյն առավոտյան գոգնոցով սանդուղքներից վազեց ցած։

— Շատ վատ է,— պատասխանեց նա։ — Երեկ հավաքվել էին բժիշկները, հիմա էլ բժիշկն այստեղ է։

— Վերցրո՛ւ իրերը,— ասաց Ալեքսեյ Ալեքսանդրովիչը և

որոշ թեթևություն զգալով իրեն հաղորդած լուրից, թե այսուամենայնիվ մահվան հույս կա, մտավ նախասենյակ։

Կախարանի վրա զինվորականի վերարկու կար։ Ալեքսեյ Ալեքսանդրովիչը նկատեց դա և հարցրեց.

— Ո՞վ է այստեղ։

— Բժիշկը, մանկաբարձուհին ու կոմս Վրոնսկին։

Ալեքսեյ Ալեքսանդրովիչն անցավ ներքին սենյակները։

Ընդունարանում ոչ ոք չկար։ Աննայի սենյակից դուրս եկավ մանկաբարձուհին, լսելով Կարենինի ոտնաձայնը, մանկաբարձուհին գլխին ուներ չեպեց, մանուշակագույն ժապավեններով։

Մանկաբարձուհին մահվան մոտիկության ազատավարությամբ մոտեցավ Ալեքսեյ Ալեքսանդրովիչին և բռնելով նրա ձեռքից, տարավ ննջարան։

— Փառք աստծո, որ դուք եկաք։ Ձեր և միայն ձեր մասին է հարցնում,— ասաց մանկաբարձուհին։

— Դե շուտ, սառո՛ւյց տվեք,— լսվեց ննջարանից բժշկի հրամայական ձայնը։

Ալեքսեյ Ալեքսանդրովիչը անցավ Աննայի առանձնասենյակը։ Նրա սեղանի մոտ, կողքով դեպի թիկնատեղը, ցածր աթոռի վրա նստել էր Վրոնսկին և, դեմքը ձեռքերով ծածկած, լաց էր լինում. նա վեր թռավ տեղից, լսելով բժշկի ձայնը, ձեռքերը հեռացրեց երեսից ու տեսավ Ալեքսեյ Ալեքսանդրովիչին։ Տեսնելով Աննայի ամուսնուն, նա այնպես շփոթվեց, որ նորից նստեց, ներս քաշելով գլուխն ուսերի մեջ, կարծես կամենալով կորչել, անհայտանալ։ բայց նա ուժ գործադրեց իր վրա, վեր կացավ և ասաց.

— Աննա Արկադևնան մեռնում է, բժիշկներն ասացին, որ հույս չկա, և ես ամբողջովին ձեր իշխանության տակ եմ, բայց թույլ տվեք ինձ մնալ այստեղ... սակայն, ինչպես կամենաք, ես...

Ալեքսեյ Ալեքսանդրովիչը տեսնելով Վրոնսկու արցունքները, զգաց վրահասը հոգեկան այն խանգարված կացության, որ առաջանում էր նրա մեջ ուրիշ մարդկանց տառապանքները տեսնելիս, և երեսը շուռ տալով, մինչև վերջ չլսելով Վրոնսկու խոսքերը, շտապ գնաց դեպի դուռը։ Ննջարանից լսվում էր Աննայի ձայնը, որ ասում էր ինչ-որ բան։ Նրա

ձայնն ուրախ էր, աշխույժ, չափազանց որոշակի առոգանությամբ։ Ալեքսեյ Ալեքսանդրովիչը մտավ ննջարան ու մոտեցավ մահճակալին։ Աննան պառկել էր՝ դեմքով շուռ եկած դեպի նա։ Այտերը բոցավառ էին կարմրությամբ, աչքերը փայլում էին, փոքրիկ, սպիտակ ձեռքերը, դուրս գալով կոֆտայի բազկակապերի միջից, խաղում էին վերմակի անկյունի հետ, փաթաթելով այն։ Թվում էր, նա ո՛չ միայն առողջ էր ու թարմ, այլև շատ լավ տրամադրության։ Նա խոսում էր արագ, հնչուն և արտասովոր ճիշտ ու զգալի առոգանությամբ։

— Որովհետև Ալեքսեյը, ես ասում եմ Ալեքսեյ Ալեքսանդրովիչի մասին (բախտի ի՜նչ տարօրինակ, սոսկալի խաղ, որ երկուսն էլ Ալեքսեյ են, այդպես չէ՞)։ Ալեքսեյը չէր մերժի ինձ։ Ես կմոռանայի, նա կներեր... իսկ ինչո՞ւ չի գալիս նա։ Նա բարի է, նա ինքը չգիտե, թե որքա՜ն բարի է։ Ա՜խ, աստված իմ, ի՜նչ անձկություն։ Շուտ տվեք ինձ ջուր։ Ա՜խ, դա նրա համար, իմ աղջկա համար վնասակար կլինի։ Դե, լավ, դե՜, նրա համար ծծմայր բերեք։ Ես համաձայն եմ, դա նույնիսկ ավելի լավ է, Ալեքսեյը կգա, նրա համար ծանր կլինի տեսնել աղջկաս։ Երեխային տվեք ծծմորը։

— Աննա Արկադևնա, նա եկավ։ Ահա՜ նա,— ասում էր մանկաբարձուհին, աշխատելով Աննայի ուշադրությունը դարձնել Ալեքսեյ Ալեքսանդրովիչի վրա։

— Ա՜խ, ինչ անմիտ բան,— շարունակում էր Աննան, չտեսնելով ամուսնուն,— է՜հ, տվեք ինձ նրան՝ աղջկաս, տվեք։ Ալեքսեյը դեռ չի եկել։ Դուք նրա համար եք ասում, որ նա չի ների, որովհետև չեք ճանաչում նրան։ Ո՛չ ոք չէր ճանաչում։ Միայն ես, բայց և այնպես ինձ համար ծանր դարձավ։ Նրա աչքե՜ր, պիտի իմանալ։ Սերյոժայի աչքերն էլ ճիշտ այդպես են, և ես նրանք տեսնել չեմ կարող այդ պատճառով։ Արդյոք ճաշ տվե՞լ եք Սերյոժային։ Ա՜խ, ես գիտեմ, ամենքը կմոռանան։ Նա չէր մոռանա։ Հարկավոր է Սերյոժային տեղափոխել անկյունի սենյակը և Mariette-ին խնդրել, որ քնի նրա հետ։

Հանկարծ Աննան կուչ եկավ, հանդարտեց ու վախի զգացումով, կարծես սպասելով հարվածի, կարծես պաշտ-

պանվելով, բարձրացրեց ձեռքերը դեպի երեսը։ Նա տեսավ ամուսնուն։

— Ո՛չ, ո՛չ,— խոսեց Աննան,— ես չեմ վախենում նրանից, ես վախենում եմ մահից։ Ալեքսեյ, մոտ արի, այստեղ։ Ես շտապում եմ, որովհետև ժամանակ չունեմ, ես երկար չեմ ապրի, հիմա կսկսի տապը, և ես այլևս ոչինչ չեմ հասկանա։ Այժմ ես հասկանում եմ ու հասկանում եմ ամեն ինչ, ես տեսնում եմ բոլորը։

Ալեքսեյ Ալեքսանդրովիչի կնճռոտված դեմքն ընդունեց տառապալից արտահայտություն. նա բռնեց Աննայի ձեռքը և ուզում էր մի բան ասել, բայց ո՛չ մի կերպ չկարողացավ խոսել. նրա վարի շրթունքը դողում էր, սակայն նա տակավին պայքարում էր իր հուզմունքի դեմ և երբեմն միայն նայում էր կնոջը։ Ու ամեն անգամ, երբ նայում էր, տեսնում էր Աննայի աչքերը, որոնք նայում էին նրան այնպիսի գորովալից և հիացական քնքշությամբ, որպիսի բան նա երբեք չէր տեսել նրանց մեջ։

— Սպասի՛ր, դու չգիտես... Կացե՛ք, կացեք...— Աննան կանգ առավ, կարծես մտքերը հավաքելով։— Այո՛,— սկսում էր նա։— Այո՛, այո՛, այո՛։ Ահա թե ի՞նչ էի ուզում ասել։ Մի՛ զարմանա ինձ վրա։ Ես էլի նույնն եմ... Բայց իմ մեջ կա մի այլ կին, ես վախենում եմ նրանից, նա սիրեց այն մարդուն, և ես ուզում էի ատել քեզ ու չկարողացա մոռանալ այն կնոջը, որ կար առաջ։ Այդ կինը ես չեմ։ Այժմ ես իսկականն եմ, ես ամբողջական եմ։ Ես հիմա մեռնում եմ, ես գիտեմ, որ կմեռնեմ, հարցրո՛ւ նրան։ Այժմ էլ ես զգում եմ, ահա՛ նրանք՝ փթանոցները ձեռքերիս, ոտքերիս, մատներիս։ Մատներս, տեսեք, ի՞նչ վիթխարի են։ Բայց այս բոլորը շուտով կվերջանա... Մի բան է պետք ինձ. ներիր դու ինձ, ներիր բոլորովին։ Ես սոսկալի եմ, բայց դայակն ասում էր ինձ. սուրբ նահատակուհի — ինչպե՞ս էր նրա անունը — նա ավելի վատ էր։ Ես էլ կերթամ Հռոմ, այնտեղ անապատներ են, և այն ժամանակ ես ոչ ոքի չեմ խանգարի, միայն կվերցնեմ ինձ հետ Սերյոժային և աղջկաս...— Ո՛չ, դու չես կարող ներել։ Ես գիտեմ, դա չի կարելի ներել։ Ո՛չ, ո՛չ, հեռացիր, դու շատից ավելի լավն ես։ — Աննան իր մի տաք ձեռքով բռնել էր ամուսնու ձեռքը, մյուսով հրում, ետ էր մղում նրան։

Ալեքսեյ Ալեքսանդրովիչի հոգեկան խոովքը ուժեղանում էր ավելի ու ավելի և հասավ մինչ այն աստիճան, որ նա արդեն դադարեց դրա դեմ պայքարելուց. նա հանկարծ զգաց, որ այն, ինչ ինքը համարում է հոգեկան խոովք, ընդհակառակն, հոգու երջանիկ կացություն էր, որ հանկարծ տվեց իրեն նոր, երբեք իր կողմից չզգացված երջանկություն։ Նա չէր կարծում, թե քրիստոնեական այն օրենքը, որին ինքն իր ամբողջ կյանքում ուզում էր հետևել, հրահանգում էր իրեն՝ ներել և սիրել իր թշնամիներին, բայց թշնամիների նկատմամբ սիրո ու ներման զգացումը համակեց նրա հոգին։ Նա ծունկ չոքած և գլուխը դրած Աննայի արմունկին, որը կոֆտայի միջից կըրակի պես այրում էր նրան, հեկեկում էր երեխայի նման։ Աննան գրկեց նրա ճաղատացող գլուխը, ձգվեց դեպի նա և հանդուգն հպարտությամբ վեր բարձրացրեց աչքերը։

— Ահա՛ նա, ես գիտե՛ի։ Այժմ մնաք բարո՛վ ամենքդ, մնաք բարո՛վ... Նորից եկան նրանք, ինչո՞ւ նրանք չեն հեռանում... Օ՜հ, հանեք իմ վրայից այս մուշտակները։

Բժիշկը վերցրեց Աննայի ձեռքերը, զգույշ դրեց բարձին և ծածկեց մինչև ուսերը։ Նա հանգիստ պառկած էր մեջքի վրա և փայլուն հայացքով նայում էր դիմացը։

— Հիշիր մի բան, որ ինձ պետք էր միայն ներումն, և ուրիշ ոչինչ ես չեմ ուզում... Ինչո՞ւ նա չի գալիս,— խոսեց Աննան, դիմելով դեպի դուռը՝ Վրոնսկուն։ — Մո՛տ արի, մոտեցիր։ Ձե՛ռք տուր նրան։

Վրոնսկին մոտեցավ մահճակալի ծայրին և տեսնելով Աննային, նորից դեմքը ծածկեց ձեռքերով։

— Բա՛ց երեսդ, նայի՛ր նրան։ Նա սո՛ւրբ է,— ասաց Աննան։ — Դե՛, բա՛ց, բաց երեսդ,— բարկացած ձայնեց Աննան։— Ալեքսեյ Ալեքսանդրովիչ, բա՛ց նրա դեմքը։ Ես ուզում եմ տեսնել այն։

Ալեքսեյ Ալեքսանդրովիչը վերցրեց Վրոնսկու ձեռքերը ու հեռացրեց երեսից. Վրոնսկու երեսը սարսափելի էր նրան համակած տանջանքի և ամոթի իր արտահայտությամբ։

— Ձե՛ռք տուր նրան։ Ների՛ր նրան։

Ալեքսեյ Ալեքսանդրովիչը ձեռք տվեց նրան, չկարողանալով զսպել արցունքները, որ հոսում էին իր աչքերից։

— Փա՛ռք աստծո, փա՛ռք աստծո,— ձայնեց Աննան,—

Հիմա ամեն բան պատրաստ է։ Միայն մի փոքր ձգեի ոտքերս։ Ա՜յ այսպես, լավ է, հիանալի։ Ի՞նչ անճաշակ ձևով են շինել այդ ծաղիկները, բոլորովին նման չեն մանուշակի,— ասում էր նա, նշելով պաստառները։ — Աստվա՜ծ իմ, աստվա՜ծ իմ։ Ե՞րբ կվերջանա այս։ Տվե՛ք ինձ մորֆին։ Բժիշկ, տվե՛ք ինձ մորֆին, է՞հ։ Օ՜, աստվա՜ծ իմ, աստվա՜ծ իմ։

Եվ նա գալարվեց անկողնում։

Բժիշկը և բժիշկները ասում էին, որ ծննդկանի տենդ է, որի հարյուր դեպքից 99-ը վերջանում է մահով։ Ամբողջ օրը շարունակվեց տաքությունը, զառանցանքը և ուշաթափությունը։ Կես գիշերվա դեմ հիվանդը պառկած էր անզգա և առանց զարկերակի։

Ամեն րոպե սպասում էին նրա վախճանին։

Վրոնսկին գնաց տուն, բայց առավոտյան եկավ իմանալու, և Ալեքսեյ Ալեքսանդրովիչը դիմավորելով նրան նախասենյակում, ասաց. «Մնացեք, գուցե հարցնի ձեզ» և ինքն առաջնորդեց նրան կնոջ առանձնասենյակը։ Առավոտյան դեմ նորից սկսվեց հուզմունքը, մտքի ու խոսքի աշխուժությունը, արագությունը և նորից վերջացավ ուշաթափությամբ։ Երրորդ օրը միևնույնն էր, և բժիշկներն ասացին, որ հույս կա։ Այդ օրը Ալեքսեյ Ալեքսանդրովիչը մտավ առանձնասենյակ, որտեղ նստել էր Վրոնսկին, և փակելով դուռը, նստեց նրա դիմաց։

— Ալեքսեյ Ալեքսանդրովիչ,— ասաց Վրոնսկին, զգալով, որ մոտենում է բացատրությունը,— ես չեմ կարող խոսել, չեմ կարող հասկանալ։ Խնայեցեք ինձ։ Որքան էլ ծանր է ձեզ համար, հավատացեք, որ ինձ համար ավելի սարսափելի է։

Նա ուզում էր վեր կենալ։ Բայց Ալեքսեյ Ալեքսանդրովիչը բռնեց նրա ձեռքը և ասաց.

— Ես խնդրում եմ ձեզ՝ լսել ինձ, դա անհրաժեշտ է։ Ես պետք է բացատրեմ ձեզ իմ զգացումները, զգացումներ, որ ղեկավարել են ու կղեկավարեն ինձ, որպեսզի դուք չմոլորվեք իմ վերաբերյալ։ Դուք գիտեք, որ ես վճռեցի ապահարզան տալ և նույնիսկ սկսեցի այդ գործը։ Չեմ թաքցնի ձեզանից, որ սկսելով այդ գործը, ես տատանման մեջ էի, ես տանջվում

էի. խոստովանում եմ, որ ինձ հետապնդում էր ձեզ ու նրան վրեժխնդիր լինելու ցանկությունը։ Երբ ես ստացա հեռագիրը, ես եկա այստեղ նույն այդ զգացումներով, կասեմ ավելին. ես ցանկանում էի նրա մահը։ Բայց...— նա լռեց, մտասուզվելով, արդյոք, բաց անի՞ նրա առաջ իր զգացումները։— Բայց ես տեսա նրան ու ներեցի։ Եվ ներման բախտը բացեց ինձ համար իմ պարտականությունը։ Ես բոլորովին ներեցի։ Ես ուզում եմ դեմ անել նաև մյուս այսս, ես ուզում եմ տալ շապիկս, երբ հանում են իմ բաճկոնը։ Աղերսում եմ աստծուն միայն, որ նա չխլի ինձանից ներման բախտը։

Արցունքներ էին լճացել նրա աչքերում, և սրանց պայծառ, հանգիստ հայացքը զարմացրեց Վրոնսկուն։

— Ահա իմ դրությունը։ Դուք կարող եք ոտնահարել, տրորել ինձ ցեխի մեջ, դարձնել բարձր հասարակության ծաղրուծանակը, ես չեմ լքի նրան և երբեք հանդիմանության ո՞չ մի խոսք չեմ ասի ձեզ,— շարունակեց Ալեքսեյ Ալեքսանդրովիչը։ — Իմ պարտականությունը պարզ գծագրված է ինձ համար. ես պետք է լինեմ նրա հետ և կլինեմ։ Եթե նա ցանկանա տեսնել ձեզ, ես իմաց կտամ ձեզ, բայց հիմա, ես կարծում եմ, ավելի լավ է, որ դուք հեռանաք։

Նա վեր կացավ ու հեկեկանքներն ընդհատեցին նրա խոսքը։ Վրոնսկին նույնպես վեր կացավ և կռացած, չուղղված դրությամբ, աչքի տակով նայում էր նրան։ Նա չէր հասկանում Ալեքսեյ Ալեքսանդրովիչի զգացումները։ Բայց նա զգում էր, որ դա ինչ-որ բարձր բան է և իր աշխարհայեցողության շրջանում իրեն նույնիսկ անմատչելի բան։

XVIII

Ալեքսեյ Ալեքսանդրովիչի հետ ունեցած խոսակցությունից հետո Վրոնսկին դուրս եկավ Կարենինների տան արտաքին սանդուղքը և կանգ առավ, դժվարությամբ մտաբերելով, թե ո՞րտեղ է ինքը և ո՞ւր պիտի գնա։ Նա զգում էր իրեն ամոթահար, նվաստացած, հանցավոր և իր նվաստացումը սրբելու հնարավորությունից զուրկ։ Նա զգում էր իրեն դուրս նետված այն աղուրից, որով գնում էր մինչև այսօր այնպես հրպարտ ու թեթև։ Այն ամենը, ինչ թվում էր այնքան կայուն,

ամուր, իր կյանքի բոլոր սովորությունները և կանոնագրքերը, հանկարծ դուրս եկան կեղծ ու անպետք, անգործադրելի։ Խարված ամուսինը, որ մինչև այսօր թվում էր ողորմելի էակ, նրա (Վրոնսկու) բախտի պատահական ու մի փոքր կոմիկական խոչընդոտը, հանկարծ կանչվեց հենց նրա՝ Աննայի կողմից, դրվեց նախանձ շարժող բարձրության վրա, և այդ ամուսինը հայտնվեց այդ բարձրության վրա ո՛չ թե որպես չար, կեղծ, ծիծաղելի մարդ, այլ բարի, պարզ ու վեհ։ Դա չէր կարող չզգալ Վրոնսկին։ Դերերը հանկարծ փոխվեցին։ Վրոնսկին զգում էր նրա բարձրացումը և իր ստորացումը, նրա իրավացիությունը և իր անիրավացիությունը։ Նա զգաց, որ ամուսինը մեծահոգի է նաև իր վշտի մեջ, իսկ ինքը ստոր, մանրոգի է իր խաբեության մեջ։ Բայց իր ստորության գիտակցությունն այն մարդու հանդեպ, որին ինքն անիրավաբար արհամարհում էր, կազմում էր, իր վշտի փոքրիկ մասը միայն։ Նա իրեն անասելի դժբախտ էր զգում այժմ այն պատճառով, որ դեպի Աննան տածած իր կիրքը, որը, ինչպես թվում էր նրան, սառում էր վերջերս, այժմ, երբ նա իմացավ, որ ընդմիշտ կորցրեց այդ կնոջը, դարձավ ավելի ուժեղ, քան երբևիցե։ Նա տեսավ Աննային ամբողջապես, հիվանդության ժամանակ ճանաչեց նրա հոգին, և նրան թվում էր, որ ինքը մինչ այդ երբեք չէր սիրել այդ կնոջը։ Եվ այժմ ահա, երբ ինքը ճանաչեց նրան, սիրեց, ինչպես պետք էր սիրել, նվաստացավ այդ կնոջ առաջ և ընդմիշտ կորցրեց նրան, թողնելով նրա մեջ իր մասին ամոթալի հիշողություն միայն։ Ամենից ավելի սոսկալին նրա այն ծիծաղելի, ամոթալի կացությունն էր, երբ Ալեքսեյ Ալեքսանդրովիչը պոկում էր նրա ձեռքերը նրա ամոթահար երեսից։ Նա կանգնել էր Կարենինների սան արտաքին սանդուղքի վրա, որպես կորած մարդ, և չգիտեր, թե ի՛նչ անի։

— Կհրամայեք կա՞ռք կանչել,— հարցրեց բարապանը։

— Այո՛, կառք։

Անքուն անցկացրած երեք գիշերներից հետո վերադառնալով տուն, Վրոնսկին առանց հանվելու, պառկեց երեսի վրա, բազմոցին, ծալելով թևերը և դնելով նրանց վրա գլուխը։ Նրա գլուխը ծանր էր։ Ամենատարօրինակ պատկերացումները, հիշողությունները և մտքերը չափազանց մեծ արագությամբ ու պարզությամբ փոխարինում էին իրար. մերթ զարդեղ էր, որ նա լցնում էր հիվանդի համար և թափում էր գդալի ափերից, մերթ մանկաբարձուհու սպիտակ ձեռքերն էին, մերթ Ալեքսեյ Ալեքսանդրովիչի տարօրինակ դիրքն էր հատակին, մահճակալի առաջ։

«Քնե՛լ, մոռանա՛լ»,— ասաց նա առողջ մարդու հանգիստ վստահությամբ, որ եթե ինքը հոգնել է և ուզում է քնել, ապա անմիջապես կքնի։ Եվ իրոք՝ հենց նույն վայրկյանին նրա գլխում սկսվեց շփոթ, և նա սկսեց խորասուզվել մոռացության անդունդի մեջ։ Անգիտակից կյանքի ծովի ալիքներն սկսեցին արդեն գալարվել նրա գլխի վրա, երբ հանկարծ կարծես էլեկտրականության չափազանց ուժեղ մի լիցք պայթեց նրա մեջ։ Նա այնպես ցնցվեց, որ ամբողջ մարմնով վեր ցատկեց բազմոցի զսպանակների վրա և հենվելով թևերին, վախեցած թռավ տեղից, ծունկ չոքեց։ Նրա աչքերը լայն բացված էին, ասես նա բոլորովին չէր քնել։ Հանկարծ անհայտացան գլխի ծանրությունը և անդամների թլկությունը, որ զգում էր նա մի րոպե առաջ։

«Դուք կարող եք ոտնահարել, տրորել ցեխի մեջ»,— լսեց նա Ալեքսեյ Ալեքսանդրովիչի խոսքերը ու տեսավ նրան իր դիմաց, և տեսավ Աննայի բոցավառ կարմրությամբ ու փայլուն աչքերով դեմքը, որ քնքշությամբ և սիրով նայում էր ո՛չ թե իրեն, այլ Ալեքսեյ Ալեքսանդրովիչին. նա տեսնում էր իր, ինչպես թվում էր իրեն, տխմար ու ծիծաղելի ֆիգուրը, երբ Ալեքսեյ Ալեքսանդրովիչը հեռացրեց նրա ձեռքերը դեմքից։ Նա նորից ձգեց ոտքերը և նախկին դիրքով ընկավ բազմոցին ու փակեց աչքերը։

«Քնե՛լ, քնե՛լ»,— կրկնեց նա ինքն իրեն։ Բայց փակ աչքերով նա ավելի պարզ էր տեսնում Աննայի դեմքն այնպես, ինչպես նրա համար անմոռանալի այն երեկոյան՝ ձիարշավից առաջ էր։

— Այդ բանը չկա և չի լինի, ու Աննան կամենում է զգաջնջել իր հիշողությունից։ Իսկ ես չեմ կարող ապրել առանց դրան։ Հապա ինչպե՛ս մենք հաշտվենք, ինչպե՛ս հաշտվենք,— ասաց նա բարձրաձայն և անգիտակցաբար սկսեց կրկնել այդ բառերը։ Բառերի այդ կրկնումը զսպում էր նոր պատկերների և հիշողությունների առաջ գալը, որոնք խրոն-

վում էին իր գլխում, նա զգում էր այդ։ Բայց բառերի կրկնումը երևակայությունը զսպեց փարճ ժամանակ։ Նորից իրար ետևից չափազանց արագորեն սկսեցին պատկերանալ լավագույն բոպեներ և նրանց հետ միասին նորերս տեղի ունեցած իր նվաստացումը։ «Դեն քաշիր ձեռքերդ», ասում է Աննայի ձայնը։ Նա հեռացնում է ձեռքերը և զգում է իր դեմքի ամոթահար ու տխմար արտահայտությունը։

Նա ամբողջ ժամանակ պառկած էր, աշխատելով քնել, թեև զգում էր, որ քնելու ո՛չ մի հույս չկա, և շարունակ կրկնում էր շշունջով որևէ մտքի հետ կապված պատահական բառեր, ցանկանալով դրանով զսպել նոր պատկերների առաջ գալը։ Նա ականջ դրեց ու լսեց տարօրինակ, խելահեղ շշուկով կրկնվող հետևյալ բառերը. «Չկարողացար գնահատել, չկարողացար օգտվել. չկարողացար գնահատել, չկարողացար օգտվել»։

«Ի՞նչ է այս. թե՛ ես խելագարվում եմ,— ասաց նա ինքն իրեն։— Կարող է պատահել։ Հապա ինչից են մարդիկ խելագարվում, հապա ինչո՞ւ են ինքնասպանություն գործում»,— պատասխանեց նա ինքն իրեն և բացելով աչքերը, զարմանքով տեսավ իր գլխի մոտ Վարյայի՝ եղբոր կնոջ, կարած բարձը։ Նա շոշափեց բարձի ծոպավոր փունջը և փորձեց հիշել Վարյային, այն մասին, երբ ինքը տեսավ նրան վերջին անգամ։ Բայց կողմնակի որևէ բանի մասին մտածելը տանջանք էր նրա համար։ «Ո՛չ, պետք է քնել»։ Նա մոտ քաշեց բարձը և գլուխը սեղմեց նրան, սակայն պետք է ջանք թափել՝ աչքերը փակ պահելու համար։ Նա թռավ տեղից ու նստեց։ «Ինձ համար վերջացած բան է,— ասաց նա ինքն իրեն։— Պետք է մտածել, թե ի՞նչ պիտի անել։ Ի՞նչ մնաց»։ Նրա միտքն արագ վազեց, զննեց կյանքը՝ դեպի Աննան տածած իր սիրուց դուրս։

«Փառասիրությո՞ւն, Սերպուխովսկո՞յ, բարձր հասարակությո՞ւն, արքունի՞ք»,— նա չկարողացավ կանգ առնել ո՛չ մի բանի վրա։ Այս բոլորն իմաստ ուներ առա՛ջ, բայց ա՛յժմ արդեն դա գոյություն չունի։ Նա վեր կացավ բազմոցից, հանեց սյուրտուկը, արձակեց գոտին և բացելով թավամազ կուրծքը, որ շնչի ավելի ազատ, քայլեց սենյակում։ «Այսպե՛ս են խելագարվում,— կրկնեց նա,— և այսպե՛ս են ինքնասպանություն գործում... որպեսզի ամոթ չլինի,— ավելացրեց նա դանդաղ»։

Նա մոտեցավ դռանը և ծածկեց այն, հետո պաղած հայացքով և ամուր իրար սեղմած ատամներով մոտեցավ սեղանին, վերցրեց ատրճանակը, դիտեց այն, շուռ տվեց լցրած փողի կողմը ու մտասուզվեց։ Մոտ երկու բոպե, գլուխը քարշ, դեմքին մտքի լարված ջանքի արտահայտություն, անշարժ կանգնել էր նա, ատրճանակը ձեռքին և մտածում էր։ «Հասկանալի է», ասաց նա ինքն իրեն, կարծես մտքի տրամաբանական, տեղական ու պարզ ընթացքը բերեց-հասցրեց նրան աներկբա եզրակացության։ Իսկ իրապես նրա համար համոզիչ այդ «հասկանալի է» խոսքը հետևանք էր միայն հիշողությունների ու պատկերացումների ճիշտ այն տեսակ շրջանի կրկնության, որի միջից նա անցավ արդեն տասնյակ անգամներ այս մի ժամվա ընթացքում։ Նո՛ւյն հիշողություններն էին ընդմիշտ կորցրած բախտի, նո՛ւյն պատկերացումն էր առաջիկա ամբողջ կյանքի անմտության, նույն գիտակցությունն էր իր նվաստացման։ Նո՛ւյնն էր նաև այդ պատկերացումների և զգացումների հետևողականությունը։

«Հասկանալի է», կրկնեց նա, երբ երրորդ անգամ նրա միտքը անցավ հիշողությունների ու մտածումների միևնույն կախարդված շրջանով, և ատրճանակի բերանը դնելով կրծքի ձախ կողմը, ուժգին ցնցելով ամբողջ ձեռքը, կարծես հանկարծ բռունցք կազմելով, նա քաշեց ատրճանակի ոտը։ Նա չլսեց հրազարկի ձայնը, բայց կրծքին դիպած ուժեղ հարվածը վայր գլորեց նրան։ Նա ուզում էր բռնել սեղանի ափից, վայր գցեց ատրճանակը, օրորվեց ու նստեց հատակին, զարմացած նայելով իր շուրջը։ Նա չէր ճանաչում իր սենյակը, նայելով վարից սեղանի կոր ոտներին, թղթերի զամբյուղին և վագրի մորթուն։ Ընդունարանից եկող ծառայի արագ, ճռճռան քայլերն ստիպեցին նրան ուշքի գալ։ Նա լարեց միտքը և հասկացավ, որ գտնվում է հատակին, ու տեսնելով արյուն վագրի մորթու և իր ձեռքի վրա, հասկացավ, որ ինքնասպանության փորձ է արել։

«Հիմա՛ր բան։ Վրիպեցի», հառաչեց նա, ձեռքի շոշափմամբ փնտրելով ատրճանակը։ Ատրճանակը նրա մոտ էր։ Նա փնտրում էր ավելի հեռուն։ Շարունակելով որոնել, նա ձգ-

վեց դեպի մյուս սեղանը և անկարող լինելով պահել հավասարակշռությունը, ընկավ, արյունաքամ լինելով։

Բակենբարդներով շքեղատես ծառան, որ բաղմիցս զանգատվել էր ծանոթներին, թե իր ջղերը թուլացել են, այնպես վախեցավ, տեսնելով հատակին ընկած պարոնին, որ թողեց նրան արյունաքամ, իսկ ինքը վազեց օգնություն կանչելու։ Մի ժամից եկավ Վարյան, Վրոնսկու եղբոր կինը, և տեղ հասած երեք բժիշկների օգնությամբ, որոնց ետևից նա մարդ ուղարկեց բոլոր ուղղություններով, և որոնք եկան միաժամանակ, վիրավորին պառկեցրին անկողնու մեջ ու մնաց այնտեղ՝ նրան խնամելու համար։

XIX

Ալեքսեյ Ալեքսանդրովիչի գործած սխալն այն էր, որ նա, պատրաստվելով կնոջ հետ տեսակցության, չմտածեց այն պատահականության մասին, որ կնոջ զղջումը կլինի անկեղծ և ինքը կների, իսկ կինը չի՛ մեռնի,— այդ սխալն իր ամբողջ ուժով ծառացավ նրա առաջ Մոսկվայից վերադառնալու օրից երկու ամիս հետո։ Բայց նրա գործած սխալն առաջացավ ո՛չ միայն այն բանից, որ նա չկշռադատեց այդ պատահականությունը, այլև այն բանից, որ նա, մինչև մեռնող կնոջ հետ տեսակցության օրը, չէր ճանաչում իր սիրտը։ Հիվանդ կնոջ անկողնու մոտ նա առաջին անգամ իր կյանքում անձնատուր եղավ սիրաքնքուշ կարեկցության, մի զգացում, որ նրա մեջ առաջացնում էին ուրիշ մարդկանց տառապանքները ու որից նա առաջ ամաչում էր, որպես վնասակար թուլությունից, և՛ կնոջը խղճալու զգացումը, և՛ իր զղջումը, որ ինքը ցանկանում էր նրա մահը, և՛ որ գլխավորն է, ներման ուրախությունն ինքնին, արին այն, որ նա հանկարծ զգաց ո՛չ միայն ազատվելու իր տանջանքներից, այլև հոգեկան հանգիստ, որ առաջ երբեք չէր զգացել։ Նա հանկարծ զգաց, որ այն, ինչը նրա տառապանքների աղբյուրն էր, դարձավ նրա հոգեկան խրնդության աղբյուր. այն, ինչ թվում էր անլուծելի, երբ նա գատապարտում էր, հանդիմանում և ատում էր, դարձավ պարզ ու պայծառ, երբ ներում էր ու սիրում։

Նա ներեց կնոջը և խղճում էր նրան՝ նրա տառապանքների

ու զղջման համար։ Նա ներեց Վրոնսկուն և խղճում էր նրան, մանավանդ այն բանից հետո, երբ լսեց նրա հուսահատության քայլի մասին։ Նա խղճում էր նաև որդուն այժմ ավելի, քան առաջ։ Եվ կշտամբում էր իրեն այժմ այն բանի համար, որ չափազանց քիչ էր զբաղվում նրանով։ Բայց դեպի նորածին փոքրիկ աղջիկը տածում էր ո՛չ միայն խղճահարության, այլև քնքշության ինչ-որ առանձին զգացում։ Սկզբում, դրդված լոկ կարեկցության զգացումից, նա զբաղվեց նորածին, թույլ աղջկանով, որը նրա աղջիկը չէր և որը լքված, աչքաթող էր արված մոր հիվանդության ժամանակ ու հավանորեն կմեռներ, եթե նա խնամք չտաներ փոքրիկի մասին,— և ինքն էլ չնկատեց, թե ինչպե՛ս սիրեց նրան։ Նա օրվա մեջ մի քանի անգամ գնում էր մանկասենյակ և երկար ժամանակ նստում էր այնտեղ, այնպես որ ծծմայրն ու դայակը, որոնք սկզբում քաշվում էին նրանից, վարժվեցին նրան։ Նա երբեմն կես ժամ լուռ նայում էր քնած երեխայի ջրքում-կարմիր, խավոտ ու կնճռոտված դեմքին և հետևում էր խոժոռվող ճակատի շարժումներին ու ծալված մատներով փամփլիկ թաթիկներին, որոնք ափի ետևի մասով տրորում էին աչիկներն ու քթարմատը։ Մանավանդ այդպիսի րոպեներին Ալեքսեյ Ալեքսանդրովիչն զգում էր իրեն բոլորովին հանգիստ ու ինքն իր հետ համաձայն և չէր տեսնում իր դրության մեջ ոչինչ արտասովոր, ոչինչ այնպիսի բան, որ պետք լիներ փոխել։

Բայց որքան ավելի ժամանակ էր անցնում, այնքան ավելի պարզ տեսնում էր նա, որ ինչքան էլ իր համար բնական է այդ դրությունը, իրեն չեն թողնի մնալ այդ կացության մեջ։ Նա զգում էր, որ բացի հոգեկան առաքինի ուժից, որը ղեկավարում էր նրա հոգին, կար նաև մի ուրիշ, կոպիտ, նույքան կամ է՛լ ավելի տիրական ուժ, որը ղեկավարում էր նրա կյանքը, և այդ ուժը չի տա նրան այն խաղաղ հանգիստը, որ կամենում էր նա։ Նա զգում էր, որ ամենքը նայում են իրեն հարցական զարմանքով, որ չէին հասկանում նրան և սպասում էին նրա կողմից ինչ-որ քայլի։ Առանձնապես նա զգում էր կնոջ հետ իր հարաբերությունների անկայունությունն ու անբնականությունը։

Երբ անցավ Աննայի մեջ մահվան մոտիկության հետևանքով առաջացած փափկացումը, Ալեքսեյ Ալեքսանդրովիչն

սկսեց նկատել, որ Աննան վախենում է իրենից, ճնշվում է և չի կարողանում ուղիղ նայել իր աչքերին։ Աննան կարծես մի բան էր ուզում, բայց չէր հանդգնում ասել ամուսնուն և նույնպես, կարծես, նախազգալով, որ իրենց հարաբերությունները չեն կարող շարունակվել, սպասում էր ամուսնու կողմից ինչ-որ քայլի։

Փետրվարի վերջին այնպես պատահեց, որ Աննայի նորածին աղջիկը, նույնպես Աննա անունով, հիվանդացավ, Ալեքսեյ Ալեքսանդրովիչն առավոտյան եղավ մանկանոցում և կարգադրելով մարդ ուղարկել բժշկի ետևից, գնաց մինիստրություն։ Վերջացնելով գործերը, նա վերադարձավ տուն չորսին մոտ։ Մտնելով նախասենյակ, նա տեսավ գեղեցիկ սպասավորին, դրեզներով և արջի թիկնոցով, ձեռքին սպիտակ ռոտոնդա՝ ամերիկյան շան մորթուց։

— Ո՞վ է այստեղ,— հարցրեց Ալեքսեյ Ալեքսանդրովիչը։

— Իշխանուհի Ելիզավետա Ֆյոդորովնա Տվերսկայան,— պատասխանեց ծառան ժպիտով, ինչպես թվաց Ալեքսեյ Ալեքսանդրովիչին։

Այդ ամբողջ ծանր ժամանակվա ընթացքում Ալեքսեյ Ալեքսանդրովիչը նկատում էր, որ բարձր հասարակության իր ծանոթները, մանավանդ կանայք, առանձնապես կարևկից վերաբերմունք էին ցույց տալիս իրեն և իր կնոջը։ Նա նկատում էր այդ բոլոր ծանոթների մեջ դժվարությամբ քողարկված ինչ-որ ուրախություն, ճիշտ այն ուրախությունը, որ տեսավ փաստաբանի աչքերում և այժմ ծառայի աչքերում։ Ամենքը, կարծես թե հիացած էին, կարծես թե աղջիկ էին պսակում։ Երբ պատահում էին նրան, հազիվ թաքցրած ուրախությամբ հարցնում էին նրա կնոջ առողջության մասին։

Իշխանուհի Տվերսկայայի ներկայությունը՝ թե՛ նրա հետ կապված հիշողություններով, թե՛ այն պատճառով, որ Ալեքսեյ Ալեքսանդրովիչն առհասարակ չէր սիրում իշխանուհուն, անախորժ էր նրա համար, ուստի նա ուղղակի գնաց մանկասենյակ։ Առաջին մանկանոցում Սերյոժան, կրծքի վրա պառկած սեղանին ու ոտքերը դրած աթոռին, նկարում էր ինչ-որ բան, ուրախ թլվլալով։ Անգլուհին, որ Աննայի հիվանդության ժամանակ փոխարինել էր Ֆրանսուհուն, նստած երեխայի մոտ, ձեռքին նուրբ ժանյակի գործվածք, շտապ վեր կացավ, ուսերանս արեց ու բոթեց Սերյոժային։

Ալեքսեյ Ալեքսանդրովիչը ձեռքով շոյեց որդու մազերը, պատասխանեց դաստիարակչուհու հարցին՝ կնոջ առողջության մասին և հարցրեց, թե ի՞նչ ասաց բժիշկը baby-ի[1] մասին։

— Բժիշկն ասաց, որ վտանգավոր ոչինչ չկա, և պատվիրեց վաննաներ, պարոն։

— Բայց նա շարունակ տանջվում է,— ասաց Ալեքսեյ Ալեքսանդրովիչը, ականջ դնելով հարևան սենյակից լսվող երեխայի ճչոցին։

— Ես կարծում եմ, ծծմայրն անպետք է, պարոն,— վճռականապես ասաց անգլուհին։

— Ինչո՞ւ եք կարծում,— հարցրեց նա, կանգ առնելով։

— Այդպես էր կոմսուհի Պոլի մոտ, պարոն։ Երեխային բժշկում էին, իսկ պարզվեց, որ երեխան ուղղակի սոված է, ծծմայրը կաթ չուներ, պարոն։

Ալեքսեյ Ալեքսանդրովիչը մտասուզվեց ու, մի քանի վայրկյան կանգնելուց հետո, ներս մտավ մյուս դռնից։ Աղջիկը պառկել էր, գլուխը ետ գցած, ջղաձգվելով ծծմոր ձեռքին, և չէր ուզում ո՛չ ընդունել իրեն առաջարկված փամփլիկ ստինքը, ո՛չ էլ լռել, չնայած իր վրա կռացած ծծմոր և դայակի կրկնակի սվսվոցին։

— Էլի լավ չէ՞,— ասաց Ալեքսեյ Ալեքսանդրովիչը։

— Շատ անհանգիստ է,— շշուկով պատասխանեց դայակը։

— Միսս Էդվարդն ասում է, թե կարող է պատահել, որ ծծմայրը կաթ չունի,— ասաց Կարենինը։

— Ես էլ եմ այդպես կարծում, Ալեքսեյ Ալեքսանդրովիչ։

— Հապա ինչո՞ւ չեք ասում։

— Ո՞ւմ պիտի ասեմ։ Աննա Արկադևնան շարունակ հիվանդ է,— ասաց դայակը դժգոհ։

Դայակը տան պառավ սպասուհին էր։ Եվ նրա այդ պարզ խոսքերի մեջ Ալեքսեյ Ալեքսանդրովիչին ակնարկ թվաց իր դրության մասին։

Երեխան բղավում էր ավելի բարձրաձայն, թուլանալով ու

[1] baby— բեյբի՝ անգլերեն նշանակում է երեխա։

խախտելով։ Դայակը հուսահատաբար թափահարելով ձեռքը, մոտեցավ նրան, վերցրեց ծծմոր ձեռքից և սկսեց օրորել քայլընթաց։

— Պետք է խնդրել բժշկին, որ քննի ծծմորը,— ասաց Ալեքսեյ Ալեքսանդրովիչը։

Տեսքով առողջ, զուգված ծծմայրը, վախեցած, որ իրեն կմերժեն, քթի տակ ինչ-որ բան ասաց և, թաքցնելով մեծ ստինքը, արհամարհալից ժպտաց իր կաթնատվության առթիվ հայտնած կասկածի համար։ Այդ ժպիտի մեջ էլ Ալեքսեյ Ալեքսանդրովիչը տեսավ ծաղր իր վիճակի վրա։

— Դժբա՜խտ երեխա,— ասաց դայակը, սվսվալով երեխայի վրա և շարունակեց քայլել։

Ալեքսեյ Ալեքսանդրովիչը նստեց աթոռին և տառապալից, տխուր դեմքով նայում էր ետ ու առաջ քայլող դայակին։

Երբ վերջապես հանգստացած երեխային դրին խորունկ մահճակալի մեջ, և դայակը, բարձն ուղղելուց հետո, հեռացավ նրանից, Ալեքսեյ Ալեքսանդրովիչը վեր կացավ ու դժվարությամբ քայլելով ոտքի մատների ծայրին, մոտեցավ երեխային։ Մի բոպեի չափ լռեց և նույն տխուր դեմքով նայում էր երեխային, բայց հանկարծ նրա դեմքին գծագրվեց մի ժպիտ, որ շարժեց մազերն ու կաշին նրա ճակատին, և նա նույնպես հանդարտ դուրս եկավ սենյակից։

Սեղանատանը նա զանգահարեց ու հրամայեց ներս եկած ծառային՝ նորից մարդ ուղարկել բժշկի ետևից։ Նա սրտնեղեց կնոջ դեմ այն բանի համար, որ հոգ չէր տանում այդ սքանչելի երեխայի վրա, և Աննայի դեմ ունեցած այդ սրտնեղության զգացումով չուզեց գնալ նրա մոտ, չուզեց նույնպես տեսնել նաև իշխանուհի Բետսիին, բայց կինը կարող էր զարմանալ, թե ինչո՞ւ նա սովորականի պես չմտավ իր մոտ, ուստի նա, ջանք գործ դնելով իր վրա, գնաց դեպի ննջարան։ Փափուկ գորգի վրայով մատենալով դռանը, նա ակամա լսեց այն խոսակցությունը, որ չէր ուզենա լսել։

— Եթե նա քաղաքից չհեռանար, ես կհասկանայի ձեր և նրա մերժումը։ Բայց ձեր ամուսինը պետք է բարձր լինի այդ բանից,— ասում էր Բետսին։

— Ես չեմ ուզում ո՛չ թե ամուսնուս համար, այլ ինձ համար։ Մի՛ ասեք այդ բանը,— պատասխանեց Աննայի հուզված ձայնը։

— Այո՛, բայց դուք չեք կարող չկամենալ հրաժեշտ տալ այն մարդուն, որն ինքնասպանության փորձ է արել ձեր պատճառով...

— Հենց այդ իսկ պատճառով ես չեմ ուզում։

Ալեքսեյ Ալեքսանդրովիչը վախեցած ու հանցավոր արտահայտությամբ կանգ առավ և ուզում էր անկատելի կերպով ետ դառնալ։ Բայց մտածելով, որ դա կլիներ անվայել բան, նա նորից շուռ եկավ ու հազալուց հետո գնաց դեպի ննջարան։ Ձայները լռեցին, և նա ներս մտավ։

Աննան գորշ խալաթով, կլոր գլխին կարճ խուզած, խիտ խոզանակի պես դուրս թափված սև մազերով, նստել էր թախտին։ Ինչպես և ամեն անգամ ամուսնուն տեսնելիս, հանկարծ չքացավ նրա դեմքի աշխուժությունը. նա կախ գցեց գլուխը և անհանգիստ նայեց Բետսիին։ Բետսին, հագնված վերջին ծայրահեղ մոդայով, գլխի վրա ինչ-որ տեղ սավառնող գլխարկով, նման լամպի լուսամփոփի, և թուխ կապույտ զգեստով՝ գունեղ զոլերով լիֆի վրա մի կողմից ու շրջազգեստի վրա մյուս կողմից, նստել էր Աննայի կողքին, ուղիղ պահած իր տափակ, բարձր իրանը, և գլուխը թեքելով, հեգնական ժպիտով դիմավորեց Ալեքսեյ Ալեքսանդրովիչին։

— Ա՜,— ասաց նա, կարծես զարմացած,— ես շատ ուրախ եմ, որ դուք տանն եք։ Դուք ոչ մի տեղ չեք երևում, և ես ձեզ չեմ տեսել Աննայի հիվանդության օրից։ Ես լսել եմ բոլորը՝ ձեր հոգսերը։ Այո՛, դուք զարմանալի ամուսին եք,— ասաց նա նշանակալից ու փաղաքշական տոնով, կարծես, մեծահոգության շքանշան շնորհելով նրան՝ կնոջը ցույց տված վերաբերմունքի համար։

Ալեքսեյ Ալեքսանդրովիչը գլխով սառը ողջունեց և համբուրելով կնոջ ձեռքը, հարցրեց նրա առողջությունը։

— Ինձ թվում է, ավելի լավ է,— ասաց նա, խուսափելով ամուսնու հայացքից։

— Բայց ձեր դեմքը կարծես թե տենդային գույն ունի,— ասաց Ալեքսեյ Ալեքսանդրովիչը, շեշտելով «տենդային» բառը։

— Մենք երկար խոսեցինք Աննայի հետ,— ասաց Բետ-

սին,— ես զգում եմ, որ դա եսականություն է իմ կողմից, և գնում եմ։

Նա կանգնեց, բայց Աննան, հանկարծ կարմրելով, արագ բռնեց նրա ձեռքը։

— Ո՛չ, մի քիչ էլ մնացեք, խնդրեմ։ Ես պետք է ասեմ ձեզ... ո՛չ, ձեզ,— դիմեց նա Ալեքսեյ Ալեքսանդրովիչին, և կարմրությունը պատեց Աննայի վիզն ու ճակատը։— Ես չեմ ուզում ու չեմ կարող գաղտնիք ունենալ ձեզնից,— ասաց նա։

Ալեքսեյ Ալեքսանդրովիչը ճռթճռթացրեց մատները և կախ գցեց գլուխը։

— Բետսին ասում էր, կոմս Վրոնսկին ուզում է գալ մեզ մոտ, որ հրաժեշտ տա Տաշքենդ գնալուց առաջ։— Աննան չէր նայում ամուսնուն և հայտնապես շտապում էր բոլորն ասել, որքան էլ դժվար էր դա իր համար։— Ես ասացի, որ չեմ կարող ընդունել նրան։

— Դուք ասացիք, սիրելի բարեկամս, որ դա կախված է Ալեքսեյ Ալեքսանդրովիչից,— ուղղեց նրան Բետսին։

— Ա՜խ, ո՛չ, ես չեմ կարող ընդունել նրան, և դա ոչնչի չի...— Նա հանկարծ կանգ առավ ու հարցական հայացքով նայեց ամուսնուն (վերջինս չէր նայում կնոջը)։— Մի խոսքով՝ ես չեմ ուզում...

Ալեքսեյ Ալեքսանդրովիչն առաջ շարժվեց և ուզում էր վերցնել կնոջ ձեռքը։

Առաջին շարժումով Աննան ետ քաշեց իր ձեռքը նրա թաց, ուռած արնատար մեծ երակներով ձեռքից, որը որոնում էր կնոջ ձեռքը, բայց, երևի, ուժ գործ դնելով իր վրա, սեղմեց ամուսնու ձեռքը։

— Ես շատ շնորհակալ եմ ձեր վստահության համար, բայց...— ասաց Ալեքսեյ Ալեքսանդրովիչը, հուզմունքով ու սրտնեղությամբ զգալով, թե այն, ինչ ինքը թևթև ու պարզ ձևով կարող էր վճռել ինքն իրեն, չի կարող քննարկել իշխանուհի Տվերսկայայի ներկայությամբ, որը հանդիսանում էր այն կոպիտ ուժի մարմնացումը, որ պիտի ղեկավարեր նրա կյանքը բարձր հասարակության աչքին և խանգարում էր նրան՝ անձնատուր լինելու սիրո ու ներման իր զգացումին։ Նա կանգ առավ, նայելով իշխանուհի Տվերսկայային։

— Է՜հ, մնաք բարով, իմ սքանչելիք,— ասաց Բետսին

վեր կենալով։ Նա համբուրեց Աննային ու դուրս գնաց։ Ալեքսեյ Ալեքսանդրովիչը ճանապարհ դրեց նրան։

— Ալեքսեյ Ալեքսանդրովիչ, ես ճանաչում եմ ձեզ, որպես իսկական մեծահոգի մարդու,— ասաց Բետսին, կանգ առնելով փոքրիկ ընդունարանում և առանձնապես էլի մի անգամ ամուր սեղմելով նրա ձեռքը։— Ես կողմնակի մարդ եմ, բայց ես այնպես սիրում եմ Աննային և հարգում ձեզ, որ թույլ կտամ ինձ՝ խորհուրդ տալ։ Ընդունեցեք նրան։ Ալեքսեյ Վրոնսկին մարմնացած ազնվություն է և նա գնում է Տաշքենդ։

— Շնորհակալություն, իշխանուհի, ձեր կարեկցության ու խորհրդի համար։ Բայց այն հարցը, կարո՞ղ է արդյոք կինս ընդունել, թե չընդունել այս կամ այն մարդուն, կորոշի նա ինքը։

Նա ասաց դա, ըստ իր սովորության, արժանապատվությամբ բարձրացնելով հոնքերը և անմիջապես մտածեց, որ ինչպիսին էլ լինեն խոսքերը, իր դրության մեջ արժանապատվություն չէր կարող լինել։ Եվ դա նա տեսավ այն զուսպ, շար ու ծաղրական ժպիտի մեջ, որով Բետսին նայեց նրան այդ արտահայտությունից հետո։

XX

Ալեքսեյ Ալեքսանդրովիչը գլխով ողջունեց Բետսիին դահլիճում ու գնաց կնոջ մոտ։ Աննան պառկել էր, բայց, լսելով ամուսնու քայլերի ձայնը, շտապ նստեց իր առաջվա դիրքով ու վախեցած նայեց նրան։ Նա տեսավ, որ կինն արտասվել էր։

— Ես շատ շնորհակալ եմ քո՝ ինձ ցույց տված վստահության համար,— հեզորեն կրկնեց նա ռուսերեն՝ Բետսիի ներկայությամբ ֆրանսերեն ասված ֆրազը և նստեց կնոջ մոտ։ Երբ նա խոսում էր ռուսերեն և կնոջն ասում էր «դու», այդ «դու»-ն անզսպորեն զրկում էր Աննային։— Ես խորապես շնորհակալ եմ քո որոշման համար։ Ես էլ այն կարծիքին եմ, թե որովհետև նա մեկնում է քաղաքից, հետևապես ո՛չ մի կարիք չկա, որպեսզի կոմս Վրոնսկին գա այստեղ։ Սակայն...

— Չէ՞ որ ես ասացի արդեն, ուրեմն ի՞նչ կարիք կա կրկնելու,— հանկարծ ընդհատեց ամուսնուն Աննան զրկվածությամբ, որը չկարողացավ զսպել։ «Ոչ մի կարիք չկա,— մտա-

ծեց Աննան,— որպեսզի նա գա հրաժեշտ տալու այն կնոջը, որին նա սիրում է, որի համար ուզում էր մեռնել և կործանեց իրեն, ու որը չի կարող ապրել առանց նրան։ Ո՛չ մի կարիք չկա»։ Աննան սեղմեց շրթունքները և փայլուն աչքերը ցած գցեց ուռած երակներով նրա ձեռքերի վրա, որոնք գանգաղ շփում էին իրար։— Երբեք չխոսենք դրա մասին,— ավելացրեց Աննան ավելի հանդիստ։

— Ես այդ հարցի լուծումը թողեցի քեզ և ես շատ ուրախ եմ տեսնել...— սկսեց Ալեքսեյ Ալեքսանդրովիչը։

— Որ իմ ցանկությունը զուգադիպում է ձերին,— շտապ վերջացրեց Աննան, զրգռված այն բանից, որ նա խոսում է այդպես դանդաղ, մինչդեռ Աննան նախապես գիտեր բոլորը, ի՛նչ պիտի ասեր նա։

— Այո՛,— հաստատեց նա,— և խշխանուհի Տվերսկայան բոլորովին անտեղի է խառնվում ընտանեկան ամենադժվար հարցերին։ Հատկապես նա...

— Ես չեմ հավատում ո՛չ մի բանի, ինչ ասում են Բետսիի մասին,— արագ ասաց Աննան,— ես գիտեմ, որ նա անկեղծ սիրում է ինձ։

Ալեքսեյ Ալեքսանդրովիչը հառաչեց ու լռեց։ Աննան հուզված խաղում էր խալաթի ծոպերի հետ, նայելով ամուսնուն՝ դեպի նա տածած ֆիզիկական զզվանքի այն տանջալից զգացումով, որի համար Աննան կշտամբում էր իրեն, բայց որը չէր կարողանում հաղթահարել։ Աննան այժմ ուզում էր միայն մի բան՝ ազատվել նրա զզվելի դարձած ներկայությունից։

— Ես հենց նոր ուղարկեցի բժշկի ետևից,— ասաց Ալեքսեյ Ալեքսանդրովիչը։

— Ես առողջ եմ. ինչի՞ս է պետք բժիշկը։

— Ո՛չ, փոքրիկը բղավում է, և ասում են, որ ծծմոր կաթը քիչ է։

— Ինչո՞ւ դու թույլ չտվիր ինձ կերակրել, երբ ես աղաչում էի այդ։ Միևնույն է (Ալեքսեյ Ալեքսանդրովիչը հասկացավ, թե ի՛նչ էր նշանակում այդ «միևնույն է» արտահայտությունը), նա երեխա է, և նրան սովամահ կանեն։— Աննան զանգահարեց ու հրամայեց բերել երեխային։— Ես խնդրում էի կերակրել, ինձ թույլ չտվին, իսկ այժմ հանդիմանում են ինձ։

— Ես չեմ հանդիմանում...

— Ո՛չ, դուք հանդիմանում եք։ Աստվա՛ծ իմ, ինչո՛ւ ես չմեռա։— Եվ նա հեկեկաց։— Ներիր ինձ, ես զրգռված եմ, ես իրավացի չեմ,— ասաց Աննան, ուշքի գալով։— Բայց հեռացիր...

«Ո՛չ, այլևս այսպես հնարավոր չէ», վճռականապես մտածեց Ալեքսեյ Ալեքսանդրովիչը, դուրս գնալով կնոջ սենյակից։

Դեռ երբեք, ինչպես այսօր, նրան այդպես բացահայտորեն չէին ներկայացել իր վիճակի անհնարինությունը բարձր հասարակության աչքին ու կնոջ ատելությունը դեպի ինքը և առհասարակ խորհրդավոր այն կոպիտ ուժի հզորությունը, որը, հակառակ նրա հոգեկան տրամադրության, ղեկավարում էր նրա կյանքը ու պահանջում էր կատարել իր կամքը և փոխել վերաբերմունքը կնոջ հանդեպ։ Նա պարզ տեսնում էր, որ ամբողջ բարձր հասարակությունը և կինը պահանջում էին նրանից ինչ-որ բան, բայց ի՛նչ հատկապես, չէր կարողանում հասկանալ։ Նա զգում էր, որ այդ պատճառով իր հոգում բարձրանում է զայրույթի զգացում, որ քայքայում է նրա հանգիստը և սխրագործության ամբողջ արժանիքը։ Նա կարծում էր, որ Աննայի համար լավ կլիներ խզել հարաբերությունները Վրոնսկու հետ, բայց եթե նրանք ամենքն այն կարծիքին են, թե դա անհնարին է, նա պատրաստ էր նորից թույլ տալ այդ հարաբերությունները, միայն թե չխայտառակի իր երեխաներին, չզրկվի նրանցից և չփոխի իր դիրքը։ Ինչքան վատ լիներ դա, բայց ավելի լավ էր, քան խզումը, որի դեպքում կինը կդրվեր անելանելի, նշավակալից վիճակի մեջ, իսկ ինքը կզրկվեր այն բոլորից, ինչ սիրում էր։ Բայց նա իրեն անզոր էր զգում. նա նախապես գիտեր, որ ամենքը դեմ են իրեն և որ նրան չեն թողնի անել այն, ինչը այժմ թվում էր նրան այնպես բնական ու լավ, այլ կոտիպեն անել այն, ինչը վատ է, սակայն նրանց թվում է անհրաժեշտ։

XXI

Դեռ Բետսին դուրս չէր եկել գահլիճից, երբ Ստեպան Արկադևիչը, հենց նոր վերադարձած Ելիսեևից, որտեղ ստացվել էին թարմ ոստրեներ, հանդիպեց նրան դռան մեջ։

— Ա՛, իշխանուհի՛, ահա՛ հաճելի հանդիպում,— ասաց Ստեպան Արկադևիչը։— Իսկ ես ձեզ մոտ էի։

— Մի բոպեով հանդիպում, որովհետև ես գնում եմ,— ասաց Բետսին, ժպտալով ու հագնելով ձեռնոցը։

— Կացեք, իշխանուհի, դեռ մի հագեք ձեռնոցը, թույլ տվեք համբուրել ձեր ձեռքը։ Ո՛չ մի բանի համար ես այնպես շնորհակալ չեմ հին մոդաները վերականգնելու գործում, ինչպես ձեռք համբուրելու համար։— Նա համբուրեց Բետսիի ձեռքը։— Իսկ ե՞րբ կտեսնվենք։

— Դուք արժանի չեք դրան,— պատասխանեց Բետսին ժպտալով։

— Ո՛չ, ես շատ արժանի եմ, որովհետև ես դարձել եմ ամենալուրջ մարդը։ Ես ո՛չ միայն կարգավորում եմ իմ, այլև ուրիշների ընտանեկան գործերը,— ասաց նա դեմքի նշանակալից արտահայտությամբ։

— Ա՛խ, ես շատ ուրախ եմ,— պատասխանեց Բետսին, իսկույն հասկանալով, որ նա ասում է Աննայի մասին։— Եվ վերադառնալով դահլիճ, նրանք կանգնեցին անկյունում։— Նա կսպանի Աննային,— ասաց Բետսին նշանակալից շշուկով։— Այդպես անհնարին է, անհնարին...

— Ես շատ ուրախ եմ, որ դուք այդպես եք կարծում,— ասաց Ստեպան Արկադևիչը, օրորելով գլուխը՝ դեմքի լուրջ և տանջալից-կարեկցական արտահայտությամբ.— ես եկա Պետերբուրգ դրա համար։

— Ամբողջ քաղաքը խոսում է այդ մասին,— ասաց Բետսին։— Դա անհնարին դրություն է։ Աննան հալվում ու հալվում է։ Նա չի հասկանում, որ Աննան մեկն է այն կանանցից, որոնք չեն կարող կատակել, խաղալ իրենց զգացմունքների հետ։ Երկուսից մեկը. կամ նա պետք է Աննային տանի, հեռացնի այստեղից, վարվի եռանդով, կամ պետք է ապահարզան տա։ Մինչդեռ այդ կացությունը խեղդում է խեղճ կնոջը։

— Այո՛, այո՛... ճիշտ է...— հառաչելով ասում էր Օբլոնսկին։— Ես հենց դրա համար եմ եկել։ Այսինքն՝ ո՛չ հատկապես դրա համար... ինձ տվել են սենեկապետի աստիճան, դե՛, պետք էր շնորհակալություն հայտնել։ Բայց որ գլխավորն է՝ պետք է կարգավորել այդ գործը։

— Ուրեմն, թող աստված օգնի ձեզ,— ասաց Բետսին։

Առաջնորդելով իշխանուհի Բետսիին մինչև նախասենյակ, մի անգամ էլ համբուրելով նրա ձեռքը՝ ձեռնոցից բարձր, այնտեղ, ուր խփում է զարկերակը, և ասելով նրան անպարկեշտ մի այնպիսի փուչ բան, որ Բետսին չգիտեր՝ ծիծաղի՞, թե՞ բարկանա, Ստեպան Արկադևիչը գնաց քրոջ մոտ։ Նա տեսավ Աննային արտասվելիս։

Չնայած ուրախությամբ ճղփացող այն տրամադրությանը, որի մեջ գտնվում էր Ստեպան Արկադևիչը, նա անմիջապես բնականաբար անցավ կարեկցող, բանաստեղծական-հուզված այն տոնին, որը հարմար էր քրոջ տրամադրությանը։ Նա հարցրեց Աննայի առողջության և այն մասին, թե ինչպե՞ս է քույրն անցկացրել առավոտը։

— Շատ, շատ վատ։ Ե՛վ ցերեկը, և՛ առավոտը, և՛ բոլոր անցած ու գալիք օրերը,— ասաց Աննան։

— Ինձ թվում է, որ դու անձնատուր ես լինում մռայլ տրամադրության։ Պետք է սթափվել, պետք է բաց աչքերով նայել կյանքին։ Ես գիտեմ, որ ծանր է, բայց...

— Ես լսել եմ, որ կանայք սիրում են մարդկանց նույնիսկ նրանց արատների համար,— հանկարծ սկսեց Աննան,— բայց ես ատում եմ նրան՝ իր առաքինության համար։ Ես չեմ կարող ապրել նրա հետ։ Դու հասկացիր, որ նրա տեսքը ֆիզիկապես ազդում է ինձ վրա, ես համբերությունից դուրս եմ գալիս։ Ես չեմ կարող, չեմ կարող ապրել նրա հետ։ Բայց ի՞նչ պիտի անեմ ես։ Ես դժբախտ էի և կարծում էի, թե չի կարելի լինել ավելի դժբախտ, սակայն ես չէի կարող պատկերացնել այն սոսկալի վիճակը, որ զգում եմ այժմ։ Արդյոք, կհավատա՞ս, իմանալով, որ նա բարի, գերազանց մարդ է, որ ես չարժեմ նրա եղունգը, բայց և այնպես, ես ատում եմ նրան։ Ես ատում եմ նրան իր մեծահոգության համար։ Եվ ինձ ոչինչ չի մնում, բացի...

Նա ուզում էր ասել՝ բացի մահից, բայց Ստեպան Արկադևիչը թույլ չտվեց, որ նա վերջացնի։

— Դու հիվանդ ես ու գրգռված,— ասաց նա.— հավատա ինձ, որ դու սաստիկ չափազանցնում ես։ Այստեղ չկա առանձնապես սոսկալի ոչինչ։

Եվ Ստեպան Արկադևիչը ժպտաց։ Ստեպան Արկադևիչն տեղ ուրիշ ոչ ոք, գործ ունենալով այդպիսի հուսահատության

հետ, թույլ չէր տա իրեն ժպտալ (ժպիտը կթվար կոպիտ), բայց նրա ժպիտի մեջ կար այնքան շատ բարություն և համարյա կանացի քնքշություն, որ այն չէր վիրավորում, այլ մեղմացնում էր ու հանգստացնում։ Նրա խաղաղ ու հանդարտեցնող խոսքերը և ժպիտները ներգործում էին մեղմացուցիչ հանգստարար կերպով, ինչպես նշի յուղ։ Եվ Աննան շուտով զգաց այդ։

— Ո՛չ, Ստիվա,— ասաց նա։— Ես կորած եմ, կորած։ Ավելի վատ, քան կորած։ Ես դեռ կորած չեմ, ես չեմ կարող ասել, որ ամեն բան վերջացած է։ Ընդհակառակը, ես զգում եմ, որ չի վերջացել։ Ես՝ ձգված լար եմ, որը պիտի կտրվի, բայց դեռ չի վերջացել... ու կվերջանա սոսկալի կերպով։

— Ոչի՛նչ, կարելի է կամաց թուլացնել լարը։ Չկա վիճակ, որից ելք չլինի։

— Ես մտածել եմ, շատ եմ մտածել։ Միայն մի...

Նա նորից հասկացավ քրոջ վախեցած հայացքից, որ այդ միակ ելքը, Աննայի կարծիքով, մահն է, և շթողեց, որ վերջացնի։

— Բնավ ո՛չ,— ասաց Օբլոնսկին,— թո՛ւյլ տուր։ Դու չես կարող տեսնել քո դրությունն այնպես, ինչպես ես։ Թույլ տուր ինձ անկեղծաբար հայտնել իմ կարծիքը։— Նա նորից զգույշ ժպտաց իր անուշ ժպիտով։— Ես կսկսեմ սկզբից. դու ամուսնացար մի մարդու հետ, որը քսան տարով մեծ էր քեզանից։ Դու ամուսնացար առանց սիրո կամ չիմանալով, թե ի՛նչ բան է սերը։ Ենթադրենք, որ դա սխալ էր։

— Սոսկալի սխալ,— ասաց Աննան։

— Բայց ես կրկնում եմ, դա կատարված փաստ է։ Հետո դու դժբախտություն ունեցար, ասենք, սիրելու ո՛չ քո ամուսնուն։ Դա դժբախտություն է, սակայն դա ևս կատարված փաստ է։ Եվ քո ամուսինն իմացավ ու ներեց դա։— Նա կանգ էր առնում յուրաքանչյուր խոսքից հետո, սպասելով քրոջ առարկությանը, բայց Աննան ոչինչ չէր պատասխանում։— Դա այդպես է։ Այժմ հարցը հանգում է հետևյալին. կարո՞ղ ես արդյոք շարունակել քո կյանքը ամուսնուդ հետ. արդյոք կամենո՞ւմ ես դու այդ, արդյոք կամենո՞ւմ է նա այդ։

— Ես ոչինչ, ոչինչ չգիտեմ։

— Բայց դու ինքդ ասացիր, որ տանել չես կարող նրան։

— Ո՛չ, ես չասացի։ Ես հրաժարվում եմ։ Ես ոչինչ չգիտեմ ու ոչինչ չեմ հասկանում։

— Այո՛, սակայն թո՛ւյլ տուր...

— Դու չես կարող հասկանալ։ Ես զգում եմ, որ գլխիվայր գլորվում եմ ինչ-որ անդունդ, բայց ես չպիտի աշխատեմ փրկվել։ Ես չեմ կարող։

— Ոչի՛նչ, մենք բան կփռենք տակդ և օդի մեջ կբռնենք քեզ։ Ես հասկանում եմ քեզ, հասկանում եմ, որ դու չես կարող քեզ վրա վերցնել ու հայտնել քո ցանկությունը, քո զգացումը։

— Ես ոչինչ, ոչի՛նչ չեմ կամենում... միայն թե վերջանար այս բոլորը։

— Բայց նա տեսնում է այդ ու գիտե։ Եվ մի՞թե դու կարծում ես, որ նա քեզանից պակաս է ճնշվում այս վիճակից։ Դու տանջվում ես, նա տանջվում է, և ի՞նչ կարող է դուրս գալ դրանից։ Մինչդեռ ապահարզանը լուծում է ամեն բան,— ո՛չ առանց ճիգի հայտնեց Ստեպան Արկադևիչն իր գլխավոր միտքը և նշանակալից նայեց քրոջը։

Աննան ոչինչ չէր պատասխանում ու բացասարար օրորում էր իր խուզած գլուխը։ Բայց քրոջ՝ նախկին գեղեցկությամբ հանկարծ փայլած դեմքի արտահայտությունից Օբլոնսկին տեսավ, որ Աննան չէր ուզում այդ բանը այն պատճառով միայն, որովհետև դա երան թվում էր անհնարին երջանկություն։

— Ես ստոտիկ խղճում եմ ձեզ։ Եվ որքա՜ն երջանիկ կլինեի, եթե կարգավորեի այդ գործը,— ասաց Ստեպան Արկադևիչը, ժպտալով արդեն ավելի համարձակ։— Մի՛ խոսիր, մի՛ ասա ոչինչ։ Եթե միայն աստված կարողություն տա ինձ՝ ասել այնպես, ինչպես ես զգում եմ։ Ես գնում եմ նրա մոտ։

Աննան մտազբաղ փայլուն աչքերով նայեց եղբորը և ոչինչ չասաց։

XXII

Ստեպան Արկադևիչը մի փոքր հանդիսավոր դեմքով, որով նա նստում էր նախագահական բազկաթոռի մեջ իր տյանում, մտավ Ալեքսեյ Ալեքսանդրովիչի առանձնասենյակը։ Ալեքսեյ Ալեքսանդրովիչը, ձեռքերը մեջքին, քայլում էր սենյակի միջով, մտածելով նույն բանի մասին, ինչի մասին

յակում և մտածում նույն բանի մասին, ինչի մասին Ստեպան Արկադևիչը խոսում էր նրա կնոջ հետ։

— Ես չե՞մ խանգարում քեզ,— ասաց Ստեպան Արկադևիչը, զգալով իր համար անսովոր շփոթություն, տեսնելով փեսային։ Այդ շփոթությունը քողարկելու համար նա հանեց հենց նոր գնած ու առանձնահատուկ ձևով բացվող ծխախոտատուփը և հոտոտելով կաշին, վերցրեց մի ծխախոտ։

— Ոչ։ Որևէ գո՞րծ ունես,— դժկամորեն պատասխանեց Ալեքսեյ Ալեքսանդրովիչը։

— Այո՛, ես կուզենայի... ես պիտի խո... այո՛, պիտի խոսեմ,— ասաց Ստեպան Արկադևիչը, զարմանքով զգալով անսովոր երկչոտություն։

Այդ զգացումն այնպես անսպասելի ու տարօրինակ էր, որ Ստեպան Արկադևիչը չհավատաց, թե դա խղճի ձայնն էր, որն ասում էր նրան, թե վատ բան է այն, ինչ մտադիր է անելու։ Ստեպան Արկադևիչը ճիգ գործ դրեց իր վրա և հաղթահարեց իրեն համակած երկչոտությունը։

— Հուսամ, դու հավատում ես դեպի քույրս տածած իմ սիրույն և դեպի քեզ ունեցած իմ անկեղծ անձնվիրության ու հարգանքի զգացումին,— ասաց նա կարմրելով։

Ալեքսեյ Ալեքսանդրովիչը կանգ առավ ու ոչինչ չպատասխանեց, բայց նրա դեմքը զարմացրեց Ստեպան Արկադևիչին՝ իր վրա դրոշմված խոնարհ զոհի արտահայտությամբ։

— Ես մտադիր էի, ես ուզում էի խոսել քրոջս և ձեր փոխադարձ վիճակի մասին,— ասաց Ստեպան Արկադևիչը, տակավին պայքարելով անսովոր կաշկանդվածության դեմ։

Ալեքսեյ Ալեքսանդրովիչը քմծիծաղեց տխուր, նայեց աներձագին և առանց պատասխանելու նրան, մոտեցավ սեղանին, վերցրեց նրա վրայից իր սկսած նամակը ու տվեց աներձագին։

— Ես անդադար մտածում եմ նույն բանի մասին։ Եվ ահա՛ թե ի՞նչ սկսեցի գրել, ենթադրելով, որ ավելի լավ կասեմ գրավոր և որ իմ ներկայությունը գրգռում է քրոջդ,— ասաց նա, տալով նամակը։

Ստեպան Արկադևիչը վերցրեց նամակը, տարակուսալից զարմանքով նայեց իր վրա հառած՝ փեսայի անշարժ, աղոտ աչքերին և սկսեց կարդալ։

«Ես տեսնում եմ, որ իմ ներկայությունը ճնշում է ձեզ։ Որքան էլ ծանր է ինձ համար այդ բանում համոզվելը, այնուամենայնիվ ես տեսնում եմ, որ դա այդպես է և չի կարող լինել ուրիշ կերպ։ Ես չեմ մեղադրում ձեզ, ու աստված է վկա, որ տեսնելով ձեզ ձեր հիվանդության ժամանակ, ես ամբողջ սրտով վճռեցի մոռանալ այն բոլորը, ինչ եղել էր մեր մեջ, և սկսել նոր կյանք։ Ես չեմ զղջում ու երբեք չեմ զղջա այն բանում, ինչ ես արեցի, բայց ես կամենում էի մի բան միայն՝ ձեր բարիքը, ձեր հոգու բարօրությունը, և հիմա տեսնում եմ, որ չհասա դրան։ Ասեք ինձ դուք ինքներդ, ի՞նչը կտա ձեզ իսկական երջանկություն և հանդիստ ձեր հոգուն։ Ես ամբողջովին ենթարկվում եմ ձեր կամքին ու արդարադատության ձեր զգացումին»։

Ստեպան Արկադևիչը ետ տվեց նամակը և նույն տարակուսանքով շարունակում էր նայել փեսային, չիմանալով, թե ի՞նչ ասի։ Այդ լռությունն այնպես անհարմար էր նրանց երկուսի համար էլ, որ Ստեպան Արկադևիչի շրթունքներն սկսեցին հիվանդագին դողդողալ այն միջոցին, երբ նա լուռ էր, աչքերը չհեռացնելով Կարենինից։

— Ահա՛ թե ի՞նչ էի ուզում ասել նրան,— ասաց Ալեքսեյ Ալեքսանդրովիչը շուռ գալով։

— Այո՛, այո՛... — ասաց Ստեպան Արկադևիչը, անկարող լինելով պատասխանելու, որովհետև արցունքները խեղդում էին նրա կոկորդը։— Այո՛, այո՛։ Ես հասկանում եմ ձեզ,— վերջապես ասաց նա։

— Ես կամենում եմ իմանալ, թե ի՞նչ է ուզում նա,— ասաց Ալեքսեյ Ալեքսանդրովիչը։

— Ես վախենում եմ, որ նա ինքն էլ չի հասկանում իր դրությունը։ Նա դատավոր չէ, —տիրապետելով իրեն ասում էր Ստեպան Արկադևիչը։— Նա ճնշված է, իսկապես որ ճնշված է քո մեծահոգությամբ։ Եթե նա կարդա այդ նամակը, նա անզոր կլինի որևէ բան ասելու, նա միայն ավելի ցած կխոնարհի իր գլուխը։

— Այո՛, հապա ի՞նչ անել այս դեպքում, ինչպե՞ս բացատրել... ինչպե՛ս իմանալ նրա ցանկությունը։

— Եթե դու թույլ կտաս ինձ ասելու իմ կարծիքը, ես կասեմ, որ քեզանից է կախված ուղղակի նշելու այն միջոցները,

որոնք կարևոր ես համարում դու, որպեսզի վերջ տրվի այդ վիճակին։

— Հետևաբար, դու այն կարծիքին ես, որ պետք է վերջ տալ այդ վիճակին,— ընդհատեց նրան Ալեքսեյ Ալեքսանդրովիչը։— Բայց ինչպե՞ս,— ավելացրեց նա, ձեռքերով աչքերի առաջ անսովոր շարժում անելով.— ես չեմ տեսնում հնարավոր ո՛չ մի ելք։

— Ամեն դրությունից կա ելք,— ասաց Ստեպան Արկադևիչը, վեր կենալով ու աշխուժանալով։— Կար ժամանակ, երբ դու ուզում էիր խզել... Եթե դու համոզվես հիմա, որ դուք չեք կարող ստեղծել փոխադարձ երջանկություն...

— Երջանկությունը կարելի է հասկանալ տարբեր ձևով։ Բայց ենթադրենք, որ ես համաձայն եմ ամեն բանի, ես ոչինչ չեմ ուզում։ Այս դեպքում ի՞նչ ելք կա մեր դրությունից։

— Եթե դու ուզում ես իմանալ իմ կարծիքը,— ասաց Ստեպան Արկադևիչը նույն մեղմացնող, նուրբ-հաճելի ժպիտով, որով խոսում էր Աննայի հետ։ Բարի ժպիտն այնպես համոզիչ էր, որ Ալեքսեյ Ալեքսանդրովիչն ակամա, զգալով իր թուլությունը և ենթարկվելով նրան, պատրաստ էր հավատալու այն բանին, ինչ կասեր Ստեպան Արկադևիչը։— Աննան երբեք չի ասի այդ։ Բայց հնարավոր է մի բան, նա կարող է ցանկալ մի բան,— շարունակեց Ստեպան Արկադևիչը,— դադարեցնել հարաբերությունները և դրանց հետ կապված բոլոր հիշողությունները։ Իմ կարծիքով, ձեր դրության մեջ անհրաժեշտ է պարզել նոր փոխադարձ հարաբերություններ։ Եվ այդ հարաբերությունները կարող են հաստատվել երկու կողմերի ազատությամբ միայն։

— Ապահարզա՛ն,— զզվանքով ընդհատեց Ալեքսեյ Ալեքսանդրովիչը։

— Այո՛, ես կարծում եմ, ապահարզան, այո՛, ապահարզան,— կարմրելով կրկնեց Ստեպան Արկադևիչը։— Դա ամեն առնչակետից ամենախոհական ելքն է ամուսինների համար, որոնք գտնվում են այնպիսի հարաբերությունների մեջ, ինչպես դուք։ Ինչ ասած, եթե ամուսինները հանգել են այն եզրակացության, որ իրենց համար անհնարին է հանգիստ կյանքը։ Դա միշտ կարող է պատահել։

Ալեքսեյ Ալեքսանդրովիչը ծռեր հառաչեց ու փակեց աչքերը։

— Այստեղ կա մի նկատառում. արդյոք ամուսիններից մեկնումեկը կամենո՞ւմ է նորից ամուսնանալ։ Եթե ո՛չ, այդ դեպքում՝ հարցը շատ պարզ է,— Ասաց Ստեպան Արկադևիչը, ավելի ու ավելի աղատվելով իր ճնշվելու զգացողությունից։

Ալեքսեյ Ալեքսանդրովիչը կնճռոտվելով հուզմունքից, ինքն իրեն ասաց ինչ-որ բան ու ոչինչ չպատասխանեց։ Այն բոլորը, ինչ Ստեպան Արկադևիչին թվում էր այնպես պարզ ու հասարակ, հաղար ու մի անգամ կշռադատել էր Ալեքսեյ Ալեքսանդրովիչը։ Եվ այդ բոլորը նրան ո՛չ միայն չէր թվում շատ հասարակ բան, այլ կատարելապես անհնարին էր թվում։ Ապահարզանը, որի մանրամասները նա արդեն գիտեր, այժմ թվում էր նրան անհնարին, որովհետև սեփական արժանապատվության զգացումը և կրոնի հանդեպ ունեցած հարգանքը թույլ չէին տալիս նրան՝ իր վրա վերցնելու կեղծ շնության մեղադրանքը, ավելի ևս թույլ չէին տալիս, որ ներում ստացած ու սիրված կինը բռնվեր հանցանքի մեջ և խայտառակվեր։ Ապահարզանը թվում էր անհնարին նաև ուրիշ, շատ ավելի կարևոր պատճառներով։

Ի՞նչ կլինի որդու հետ՝ ապահարզանի դեպքում։ Թողնել նրան մոր հետ՝ անհնարին էր։ Բաժանված մայրը կունենա իր ապօրինի ընտանիքը, որտեղ խորթ որդու վիճակը և նրա դաստիարակությունը ամենայն հավանականությամբ վատ կլինեն։ Պահել նրան իր մո՞տ։ Նա գիտեր, որ իր կողմից դա կլիներ վրեժխնդրություն, մինչդեռ նա չէր ուզում այդ։ Սակայն, բացի դրանից, Ալեքսեյ Ալեքսանդրովիչի համար ապահարզանն ամենից ավելի անհնարին էր թվում այն պատճառով, որ համաձայնելով ապահարզանի, նա դրանով կործանում էր Աննային։ Նրա հոգու մեջ էր ընկել Մոսկվայում Դարիա Ալեքսանդրովնայի ասած խոսքն այն մասին, թե վճռելով ապահարզան տալ, նա մտածում է իր մասին ու չի մտածում, որ դրանով անվերադարձորեն կործանում է իր կնոջը։ Եվ նա, կապելով այդ խոսքն իր ներման հետ, երեխաների նկատմամբ իր անձնվիրության հետ, այժմ յուրովի էր հասկանում դա։ Համաձայնել ապահարզանի, ազատություն տալ կնոջը՝ իր հասկացողությամբ նշանակում էր խլել իրենից վերջին

կապը կյանքի հետ, այսինքն՝ երեխաներին, որոնց նա սիրում էր, իսկ Աննայից՝ խլել վերջին հենակետը բարության ճանապարհին ու գցել նրան կորստի մեջ։ Եթե Աննան դառնա բաժանված կին, նա գիտեր, կկապվի Վրոնսկու հետ, և այդ կապը կլինի ապօրինի ու հանցավոր, որովհետև եկեղեցական օրենքի իմաստով՝ կինը չի կարող ամուսնանալ, քանի դեռ ողջ է ամուսինը։ «Նա կկապվի Վրոնսկու հետ, և մեկ-երկու տարուց հետո կամ Վրոնսկին կլքի նրան, կամ նա նոր կապ կհաստատի,— մտածում էր Ալեքսեյ Ալեքսանդրովիչը։— Եվ ես, համաձայնելով ապօրինի ապահարզանի, կլինեմ նրա կորստյան պատճառը»։ Այս բոլորը նա կշռադատել է հարյուրավոր անգամներ ու համոզված էր, որ ապահարզանի գործը ո՛չ միայն հասարակ բան չէր, ինչպես ասում էր իր աներձագը, այլ բոլորովին անհնարին էր։ Նա չէր հավատում Ստեպան Արկադևիչի ո՛չ մի խոսքին. նրա յուրաքանչյուր խոսքի դեմ ուներ հազարավոր հերքումներ, բայց լսում էր նրան, զգալով, որ նրա խոսքերով արտահայտվում է այն ամենահզոր, կոպիտ ուժը, որը ղեկավարում է իր կյանքը և որին պետք է ենթարկվի ինքը։

— Հարցը միայն այն է, թե ինչպե՛ս, ի՛նչ պայմաններով դու համաձայն ես ապահարզան տալու։ Աննան ոչինչ չի ուզում, չի համարձակվում խնդրել քեզ, նա բոլորը թողնում է քո մեծահոգությանը։

«Աստվա՛ծ իմ, աստվա՛ծ իմ. ինչի՞ համար», մտածեց Ալեքսեյ Ալեքսանդրովիչը, մտաբերելով ապահարզանի մանրամասները, որի դեպքում ամուսինն իր վրա էր վերցնում հանցանքը, և այն շարժումով, որով ծածկվում էր Վրոնսկին, ձեռքերով ամոթից ծածկեց երեսը։

— Դու հուզված ես, ես հասկանում եմ այդ։ Բայց եթե դու կշռադատես...

«Եվ աջ այտիդ խփողին դեմ արա ձախը, և բաճկոնդ հանողին տուր շապիկդ», մտածեց Ալեքսեյ Ալեքսանդրովիչը։

— Այո՛, այո՛,—ճչաց նա ծղրտան ձայնով,— ես ինձ վրա եմ վերցնում նախատինքը, տալիս եմ նույնիսկ որդուս, բայց... բայց մի՞թե ավելի լավ չէ թողնել այդ։ Սակայն, արա, ինչ ուզում ես...

Եվ նա, շուռ գալով աներձագից, այնպես, որպեսզի Օբլոնսկին չտեսներ իրեն, նստեց աթոռին՝ պատուհանի մոտ։ Նրա համար դառն էր, նրա համար ամոթ էր, բայց այդ դառնության և ամոթի հետ միասին նա զգում էր ուրախություն ու գորովանք իր հեզության, վեհության հանդեպ։

Ստեպան Արկադևիչը հուզված էր։ Նա լռեց։

— Ալեքսեյ Ալեքսանդրովիչ, հավատա՛ ինձ, որ Աննան կգնահատի քո մեծահոգությունը,—ասաց նա։— Բայց, երևի, դա աստծո կամքն է,— ավելացրեց նա և զգաց, որ անմիտ բան ասաց, ու դժվարությամբ զսպեց ժպիտն իր անմտության վրա։

Ալեքսեյ Ալեքսանդրովիչն ուզում էր մի բան ասել, սակայն արցունքները կանգնեցրին նրան։

— Դա ճակատագրական դժբախտություն է, և պետք է ընդունել այդ։ Այս դժբախտությունը ես համարում եմ կատարված փաստ և աշխատում եմ օգնել թե՛ Աննային, թե՛ քեզ,— ասաց Ստեպան Արկադևիչը։

Երբ Ստեպան Արկադևիչը դուրս եկավ փեսայի սենյակից, զգացված էր, բայց դա չէր խանգարում նրան՝ գոհ լինել այն բանից, որ ինքը հաջողությամբ կատարեց այդ գործը, որովհետև հավատացած էր, որ Ալեքսեյ Ալեքսանդրովիչը չի հրաժարվի իր խոսքից։ Այս բավականությանը խառնվում էր նաև այն, որ նրա մեջ ծագեց այսպիսի միտք, թե երբ այս գործը գլուխ գա, ինքը հարց կտա իր կնոջն ու մոտիկ ծանոթներին. «Ի՞նչ տարբերություն կա իմ և Թագավորի միջև։— Թագավորը ռազվոդ[1] է անում, ու դրանից ոչ ոքի ոչինչ լավ չի լինում, իսկ ես ռազվոդ արի, և երեք հոգու վիճակը միանգամից լավացավ... կամ՝ ի՞նչ նմանություն կա իմ ու Թագավորի միջև։ Երբ... Սակայն, կմտածեմ ավելի լավ», ասաց ինքն իրեն ժըպտալով։

XXIII

Վրոնսկու վերքը վտանգավոր էր, թեպետև սիրտը մնացել էր անվնաս։ Ու մի քանի օր նա գտնվում էր կյանքի և մահվան

[1] Ռուսերեն «ռազվոդ» բառը երկու նշանակություն ունի—ապահարզան և պահակախմբերի ստուգատես, որ մեծ կայազոր ունեցող քաղաքներում, ցարական իրավակարգում, արտակարգ հանդիսավորությամբ կատարում էին բարձրաստիճան զինվորականները։ Այստեղ Օբլոնսկին անում է բառախաղ։

միջև։ Երբ առաջին անգամ ի վիճակի եղավ խոսելու, նրա սենյակում գտնվում էր միայն Վարյան, եղբոր կինը։

— Վա՛րյա,— ասաց նա, խիստ նայելով նրան,— ես կրակեցի ինձ պատահմամբ։ Եվ խնդրեմ, երբեք չխոսես դրա մասին ու ամենքին էլ այդպես ասա։ Թե չէ՝ դա չափազանց հիմար բան է։

Չպատասխանելով նրա խոսքերին, Վարյան կռացավ դեպի նա և բերկրալից ժպիտով նայեց նրա դեմքին։ Աչքերը պայծառ էին, ո՛չ տենդային, բայց նրանց արտահայտությունը խիստ էր։

— Է՜հ, փառք աստծո,— ասաց Վարյան։— Չի՞ ցավում։

— Մի քիչ այստեղ։— Նա նշեց կուրծքը։

— Ուրեմն, թող վերքդ կապեմ։

Լաւ սեղմելով իր լայն այտոսկրերը, նա նայում էր Վարյային, մինչև վերջինս կապում էր վերքը։ Երբ Վարյան վերջացրեց, նա ասաց.

— Ես չեմ զառանցում, խնդրում եմ, այնպես արա, որպեսզի խոսակցություն չլինի այն մասին, թե ես կրակել եմ ինձ գիտմամբ։

— Ո՛չ ոք էլ այդպիսի բան չի ասում։ Միայն ես հույս ունեմ, որ դու այլևս պատահմամբ չես կրակի,— ասաց Վարյան հարցական ժպիտով։

— Երևի չեմ անի, բայց ավելի լավ կլիներ...

Եվ նա ժպտաց մռայլ։

Չնայած այդ խոսքերին ու ժպիտին, որոնք այնպես վախեցրին Վարյային, երբ անցավ բորբոքումը և նա սկսեց կազդուրվել, զգաց, որ բոլորովին ազատվել է իր վշտի մի մասից։ Նա այդ վարմունքով կարծես թե սրբեց իր վրայից ամոթն ու նվաստացումը, որ զգում էր առաջ։ Նա կարող էր այժմ հանգիստ մտածել Ալեքսեյ Ալեքսանդրովիչի մասին։ Նա ընդունում էր նրա ամբողջ մեծահոգությունը և այլևս չէր զգում իրեն նվաստացած։ Բացի դրանից, նա կրկին մտավ կյանքի առաջվա ծիրը։ Նա տեսավ մարդկանց աչքերին առանց ամոթի նայելու հնարավորություն և կարող էր ապրել, զեկավարվելով իր սովորություններով։ Միակ բանը, որ չէր կարողանում պոկել իր սրտից, չնայած անընդհատ պայքարում էր այդ զգացման դեմ, դա հուսահատության հանող ափսոսանքն էր, որ

ընդմիշտ կորցրեց Աննային։ Այն, որ նա այժմ, ամուսնու հանդեպ իր հանցանքը քավելուց հետո, պետք է հրաժարվեր Աննայից ու այսուհետև երբեք չկանգներ զղջացած Աննայի և նրա ամուսնու միջև, հաստատ վճռված էր նրա սրտում, բայց նա չէր կարողանում պոկել իր սրտից ափսոսանքն Աննայի սերը կորցնելու համար, չէր կարողանում ջնջել իր հիշողությունից երջանկության այն րոպեները, որ նա ունեցել էր Աննայի հետ, որ նա այնպես քիչ էր գնահատել այն ժամանակ և որոնք իրենց ամբողջ հրապույրով հետամտում էին նրան այժմ։

Սերպուխովսկոյը նրա համար պաշտոն ստեղծեց Տաշքենդում, ու Վրոնսկին առանց տատանման նշույլի համաձայնեց այդ առաջարկին։ Բայց որքան ավելի էր մոտենում մեկնումի ժամանակը, այնքան ավելի ծանր էր դառնում նրա համար այն զոհաբերությունը, որ անում էր նա հանուն այն բանի, ինչը պետք էր համարում։

Նրա վերքը լավացավ, և նա արդեն տանից դուրս էր գնում, պատրաստություններ տեսնելով Տաշքենդ ուղևորվելու համար։

«Մի անգամ տեսնել նրան և ապա թաղվել, մեռնել», մտածում էր նա ու հրաժեշտի այցելություններ անելով, այդ միտքը հայտնեց Բետսիին։ Նրա այդ դեսպանությամբ Բետսին գնաց Աննայի մոտ և բերեց բացասական պատասխան։

«Ավելի լավ,— մտածեց Վրոնսկին, ստանալով այդ լուրը։— Դա թուլություն էր, որ կոչնչացներ իմ վերջին ուժերը»։

Բայց հետևյալ օրը ինքը Բետսին առավոտյան եկավ նրա մոտ ու հայտարարեց, որ Օբլոնսկու միջոցով ստացել է դրական լուր, որ Ալեքսեյ Ալեքսանդրովիչը տալիս է ապահարզան և որ այդ իսկ պատճառով Վրոնսկին կարող է տեսնել Աննային։

Հոգ չտանելով նույնիսկ այն մասին, որ ճանապարհ դնի Բետսիին, մոռանալով իր բոլոր որոշումները, չհարցնելով, թե ե՛րբ կարելի է, ո՞ւրտեղ է ամուսինը, Վրոնսկին անմիջապես գնաց Կարենիններին մոտ։ Նա վազելով բարձրացավ սանդուղքներով, ոչ ոքի ու ոչինչ չտեսնելով, և արագ քայլերով, հաղիվ զսպելով վազելու ցանկությունը, մտավ Աննայի սենյակ։ Եվ առանց մտածելու, և առանց նկատելու, արդյո՞ք սենյակում

յակում մարդ կա թե չկա, նա գրկեց Աննային ու սկսեց համբույրներով ծածկել նրա դեմքը, ձեռքերն ու պարանոցը։

Աննան պատրաստվում էր այդ տեսակցությանը, մտածում էր, թե ի՞նչ կասի նրան, բայց չկարողացավ ոչինչ ասել. Վրոնսկու կիրքը համակեց նրան։ Աննան ուզում էր մխիթարել նրան, մխիթարել իրեն, բայց արդեն ուշ էր։ Վրոնսկու զգացումը հաղորդվեց Աննային։ Աննայի շուրթերը դողում էին այնպես, որ երկար ժամանակ նա չէր կարողանում ոչինչ ասել։

— Այո՛, դու տիրացար ինձ, և ես քո՛նն եմ,— ասաց Աննան վերջապես, սեղմելով իր կրծքին նրա ձեռքերը։

— Այդպես պետք է լիներ,— ասաց նա։— Քանի մենք ողջ ենք, դա պետք է այդպես լինի։ Այժմ ես գիտեմ դա։

— Ճիշտ է այդ,— ասում էր Աննան, գունատվելով ավելի ու ավելի և գրկելով նրա գլուխը։— Բայց և այնպես սոսկալի մի բան կա դրա մեջ այն բոլորից հետո, ինչ կատարվեց։

— Ամեն ինչ կանցնի, ամեն ինչ կանցնի, մենք կլինենք այնպե՞ս երջանիկ։ Մեր սերը, եթե նա կարողանար ուժեղանալ, կուժեղանար նրանով, որ նրա մեջ կա ինչ-որ սոսկալի բան,— ասաց Վրոնսկին, բարձրացնելով գլուխը և ժպիտով բացելով իր ամուր ատամները։

Ու Աննան չկարողացավ ժպիտով չպատասխանել նրա ո՛չ թե խոսքերին, այլ սիրահարված աչքերին։ Աննան վերցրեց նրա ձեռքը ու նրանով շոյում էր իր սառած այտերը և խուզած մազերը։

— Ես չեմ ճանաչում քեզ այդ կարճ մազերով։ Դու այնպես սիրունացել ես։ Մանչո՞ւկ։ Բայց ի՞նչ գունատ ես դու։

— Այո՛, ես շատ թույլ եմ,— ասաց Աննան ժպտալով։ Եվ նրա շուրթերը նորից դողացին։

— Մենք կգնանք Իտալիա, դու կկազդուրվես,— ասաց նա։

— Մի՞թե հնարավոր է, որ մենք լինենք որպես ամուսիններ, մենակ, քեզ հետ, կազմած մի ընտանիք,— ասաց Աննան, մոտիկից խորազնին նայելով նրա աչքերին։

— Ինձ զարմացնում է միայն, թե ինչպե՛ս կարող էր դա այլ կերպ լինել երբևիցե։

— Ստիվան ասում է, որ նա համաձայն է ամեն բանի, բայց ես չեմ կարող ընդունել նրա մեծահոգությունը,— ասաց

Աննան, մտաղբաղ նայելով Վրոնսկու դեմքի մոտով մի կետի։— Ես չեմ ուզում ապահարզան, ինձ համար այժմ միևնույն է։ Ես չգիտեմ միայն, թե նա ի՞նչ կվճռի Սերյոժայի մասին։

Վրոնսկին ո՛չ մի կերպ չէր կարողանում հասկանալ, թե ինչպե՛ս կարող էր Աննան տեսակցության այդ րոպեին մտածել և հիշել որդու մասին, ապահարզանի մասին։ Մի՞թե միևնույնը չէ։

— Մի՛ խոսիր դրա մասին, մի՛ մտածիր,— ասում էր Վրոնսկին, շուռ տալով նրա ձեռքն իր ձեռքի մեջ և աշխատելով գրավել նրա ուշադրությունը, բայց Աննան համառաբար չէր նայում նրան։

— Ա՜խ, ինչո՞ւ ես չմեռա, ավելի լավ կլիներ,— ասաց Աննան, և առանց հեկեկանքի արցունքները հոսեցին նրա երկու այտերով, բայց նա աշխատում էր ժպտալ, որ չվշտացնի Վրոնսկուն։

Վրոնսկու նախկին հասկացություններով՝ խայտառակ և անհնարին բան կլիներ հրաժարվել հրապուրիչ ու վտանգավոր նշանակումից Տաշքենդ։ Բայց այժմ, առանց մի րոպե միտք անելու, նա հրաժարվեց դրանից և նկատելով իր վարմունքի վերաբերյալ անհավանություն բարձր շրջաններում, անմիջապես հրաժարական տվեց։

Մի ամսից հետո Ալեքսեյ Ալեքսանդրովիչը որդու հետ մենակ մնաց իր բնակարանում։ Իսկ Աննան Վրոնսկու հետ մեկնեց արտասահման, չստանալով ապահարզան ու վճռականապես հրաժարվելով դրանից։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջին մաս 5

Երկրորդ մաս 159

Երրորդ մաս 321

Չորրորդ մաս 478

ԼԵՎ ՆԻԿՈԼԱԵՎԻՉ ՏՈԼՍՏՈՅ

Աննա Կարենինա

Վեպ

Հատոր առաջին

Խմբագիր՝ Դ. Գ. Խաչատրյան
Նկարիչ՝ Ան. Վ. Դասպարյան
Գեղ. խմբագիր՝ Վ. Ա. Հարությունյան
Տեխ. խմբագիր՝ Ա. Ց. Կովկասյան
Վերստուգող սրբագրիչ՝ Ե. Գ. Պոտոյան

ИБ № 825

Հանձնված է շարվածքի 18. 09. 78։ Ստորագրված է տպագրության 1. 03. 79։ Ֆորմատ 84×108¹/₃₂։ Թուղթ տպագրական № 1։ Տառատեսակ՝ «Գրքի սովորական»։ Տպագրություն՝ բարձր։ 31,08 պայմ. տպ. մամ., հրատ. 26,9 մամ.։ Պատվեր 2298։ Տպաքանակ 50 000։ Գինը 2 ռ. 50 կ.։

«Սովետական գրող» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91։

Издательство «Советакан грох» Ереван-9, ул. Теряна, 91.

ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի Հակոբ Մեղապարտի անվան պոլիգրաֆկոմբինատ, Երևան—9, Տերյան 91։

Полиграфкомбинат им. Акопа Мегапарта Госкомитета по делам издательств, полиграфии и книжной торговли Арм. ССР, Ереван 9, ул. Теряна, 91.